Ս. Տ. ՋՈՐՋԱՆ

ՊԱՏ ԹԱՓԱՌՈՐ





ՍՏ. ՋՈՐՅԱՆ

ՊԱՏ ԹԱՓԱՌՈՐ

Չեխ էտյուդ-դարձ

Դասի
2 կոպ



ՊԵՏՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ
1944 թ.

Կազմը և գլխազարդը՝ Հովհաննիսյան Եվգոսի


Խորհրդային հերոսը
Տանկերի արձակողը
Պատերազմի –
Ատրճանակով.

Ստ. Զորյանը

2/V, 45.
Երևան

ст. зорян
ЦАРЬ ПАП
(На армянском языке)
Армгиз, Ереван, 1944





ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Քաղաքամայր վաղաբշապատից Դվին տանող այն մեծ ճանապարհով, որ չինել էր Խոսրով Թագավորը և վարսախների նշանաստյուններով ու ձի հեծնելու պատվանդաններով բարեկարգել Աբշակ Բ–ը, գնում էին երկու հայ դուստն՝ իրենց նվաղարանները կաչվե փոկերով ուսերից կախած: Մեկը միջահասակ տարեց մարդ էր՝ ալեխառն գլխով ու մորուսով, որ Թղաչափից ավելի իջնում էր նրա կրծքին, տալով նրան հանդիստ ու պատկառելի կերպարանք. մյուսը՝ միջակից բարձր հասակով երիտասարդ էր՝ թուխ ու թավ մազերով, բայց աչքերը փակ, և այդ պատճառով քայլում էր իր տարեց ուղեկցին թևանցուկ արած ու հաճախ դայթելով: Երկուսի հագուստները էին, եթե չասենք ցնցոտիներ. մինչև ծնկները հասնող կարճ կապանները, որ պատռված էին շատ տեղերից, և կարկատած վարտիքները, որոնց ծայրերը հավաքել էին բրդե գուլպանների մեջ, տրորված-ճմրթված էին ու փոշոտ, ինչպես և այծակաշուց կարած բարակ ու հին մուկները, ինչ որ ցույց էր տալիս, թե նրանք վաղուց հագուստ չէին հանել կամ երկար ճանապարհ էին կտրել այդ հագուստներով:

— Ջաքարե, չե՞ս հոգնել արդյոք,—հարցրեց երիտասարդ դուստը իր ծեր ուսուցչուհին:—Եթե հոգնել ես՝ հանդիստ առնենք մի սակավ:

— Ոչ, տղաս, տակավին կարող եմ քայլել,—պատասխանեց տարեց դուստը և, իր հաստատումն իր խոսքի, ոտները փոխեց ավելի արագ:—Գնանք քանի լուս է. ապա թե ոչ—մութն ընկնի, քաղաքապուտը կփակվի և մեզ չեն թողնի Դվին: Գիտես որ բոլոր ճանապարհներին պարսից զինվորներ են վխտում. ամենքին չես կարող խոսք հասկացնել և... խաբել: Պատահում են այնպես անպիտանները...

— Այդ ճշմարիտ է, Զաքարե։ Եթե չես հոգնել՝ գնանք առեմն, քանի լուս է...

Եվ երիտասարդ գուսանը նուլնպես արագացրեց քայլերը։

Աշուն էր, ղովաշունչ ու պայծառ մի աշուն, ինչպիսին սովորաբար լինում է Արարատյան դաշտում. անսահման բարձր կապույտ երկնքից արևի տաք շողերի հետ միասին լցնում էին կարծես և օդի պաղպաղկյուն ալիքներ ու աղբրակրի նման վեհաշուք դաշտի վրա։ Ծաղողի այգիները առատ բերքով վառվում էին խայտաբղետ գույներով ու ողկույզներով, իսկ դեղձի ծիրանի, սերկևիլի ու նռան ծառերը նրանց մեջ՝ խնձորով կամ մեկուսի կանգնած, որպես աշնան դրոշներ, փողփողում էին իրենց բազմերանգ տերևներով, որոնց մեջ աչք էին շլացնում վառ կարմիրը, վառ դեղինը և մուգ կանաչը։ Բայց սրանից ավելի աչքի էին ընկնում ծուռ ու թեք փշատենիները, որ խիտ չարքերով տարածվում էին այդիների ու ճանապարհների եզերքով, երբեմն մի դյուղից մինչև մյուսը, և իրենց մոխրագույն վարսերը, ասես դարերի փոշով թաթախած, սրամորի պես կախել էին գրեթե մինչև գետին՝ կարմրադեղին պտուղներով ծանրացած։ Իսկ նրանց տակ՝ գետնի երեսին, կանաչների վրա, չերամի վրած բոժոժների պես, թափված-տարածված էին մանրաքացեստ փշատները, որ թիով կարելի էր հավաքել և շեղջեր կազմել։ Հապա ջրե՛րը... ամբողջ դաշտում՝ բոլոր ճանապարհների ու արահետների կողքով և համարյա բոլոր այգիների միջով անցնում էին աշնան վճիտ առուները, որ մերթ քրքջում ու խոխոջում էին այս ու այն կողմ, բայց մեծ մասամբ ընթանում-գնում էին հեզասահ ու անձայն, ասես պաղատագողի, երբեմն միայն լույծ մեջքերը դաշտնկի պես փայլեցնելով արևի տակ՝ մատնում էին իրենց դոյությունն ու ուղղությունը, և դրանք ամենքն էլ համարյա իրենց երեսին տանում էին ղեղձ, տանձ, ընկույզ, ու փշատ, անվերջ փշատ, որ ծառերից անմիջապես ընկնում էին առուները։

Աշնան առատությունը թափվում էր այգիներում ու ճանապարհների, գնում էր ջրերի հետ, բայց չկար նրանց մեջ այդ պահի սովորական կենդանությունը. չէին երևում այգեկութ առողների աշխույժ խմբեր, չէր լսվում արևատ աղջիկների ու հարսների խաղողաքաղի զրնգուն երգը, չէր լսվում խաղողի այ-

զինվորից տան հնձանները կրող սայլերի ճռինչը և սայլապանների խրախուսական ու վիրավորական խոսքերը եղներին... Ձկար տեղատարակ այն ընդհանուր, համատարած մրջնային եռ ու զեռը, որ տարվա այդ միջոցին լինում է Արարատյան դաշտում:

Տիրում էր, ընդհակառակը, մի չարագուշակ սոսկություն ու լռություն. երբեմն միայն, այն էլ կարծես զղողուն այս կամ այն այգում երևում էր հանկարծ մի ծերունի՝ հին մի կողով ձեռին, կամ մի պառավ՝ զոզնոցի փեչերը բռնած, որ հավաքում էին այս կամ այն պտուղը և իսկույն էլ անհետանում թփերի, ծառերի եռև կամ կավածեփ հնձանների ու տնակների մեջ. իսկ ճանապարհին պատահող չինականներն չտապում էին տեղ հասնել ժամ առաջ, ու քայլում էին այնպես երկյուղած, թվում էր մեկը հետապնդում է նրանց, և միաժամանակ այնպես պղտիկ, որ փորձանքի չհանդիպեն:

Դա այն աշունն էր, երբ պարսից Շապուհ արքայից արքայի զորքերը՝ Զիկ զորավարի և Հայ ուրացող նախարար Մերուժան Արծրունու առաջնորդությամբ, գրավել էին հայոց աշխարհի մեծ մասը և ծանր նստել Արարատյան դաշտում: Հայաստանի դրեթե բոլոր քաղաքները՝ Վան, Բագավան, Կարին, Երվանդաշատ, Վաղարշապատ, Նախճևան, Արտաշատ բռնված էին պարսից զորքերով: Նույնպես և նորակառույց մայրաքաղաք Դվինը լիքն էր պարսից զինվորներով, իսկ նրա բարձր միջնաբերդում հիմա, Պարսկաստանում բանտարկված Արշակ Թագավորի և նրա ավագանիների փոխարեն իշխում էր Մերուժան Արծրունին ինքը, որ հանդիսավորապես երդվել էր Շապուհի առաջ՝ վերացնել հայոց աշխարհից նրան և իրեն տեղի Արշակունիների թագավորությունը, դրա հետ միասին նաև տեղի քրիստոնեությունն ու քրիստոնյաների ազդեցությունը... Եվ այդ ամենը նա կատարում էր սրով ու հրով: Իսկ պարսիկ զինվորները հաղթողի անձնարճակությամբ, քաղաքներում թե գյուղերում, անակնկալ մտնում էին տները և պահանջում ուտելիք, արծաթ, ոսկի կամ հարս ու աղջիկ. ճանապարհներին հանդիպած մարդկանց հագից հանում էին նրանց հագուստները կամ, դռները խորտակելով, մեծամեծ խմբերով մտնում էին այգիները և ոչ այնքան ուտում, որքան ջարդում, տրորում, մանավանդ եթե մտնում

էին ձիերով և սրանց, կչտացնելու նպատակով, թողնում էին վազների արանքն ու ծառերի մեջ:

Ահա ինչո՛ւ ամայություն և ահ ու սարսափ էր տիրում ամեն կողմ:

Բայց չնայած այդ երկյուղին ու սարսափին՝ հայ դուսաննե-րը գնում էին հանդիստ ու ծանրաքայլ և, տարօրինակ բան, հակառակ իրենց արտաքին տխուր վիճակին, նրանք զվարթ էին երևում և ուշիմ, զարմանալի ուշիմ ու շրջահայաց: Մյուս տա-րօրինակ բանն այն էր, որ թխահեր երիտասարդ դուսանը եր-բեմն փակ աչքերը բանում էր կիսով չափ և նայում ճանապար-հի հեռուն խուղարկու մի հայացքով, որ ասես ստուգում էր ինչ-որ բան, և երբ հեռվում նկատում էր մի ստվեր կամ լսում մի ձայն՝ աչքերը նորից փակում էր և անխոս քայլում ծերունուն համընթաց, նրան թևանցուկ արած կամ նրա թևը պինդ բռնած: Իսկ երբ նկատվող մարդը թեքվում էր մի կողմ կամ դալխա-անցնում՝ նա նորից զգուշությամբ բանում էր աչքերը և խո-սակցում ուղեկից ծերունու հետ:

— Դու նկատեցի՞ր, Զաքարե,— ասում էր նա,—որ Վա-ղարշապատի պալատն այրված էր, կաթողիկոսարանը քանդված, նախարարաց տներն ամայի-դատարկ: Տեսնենք ի՞նչ վիճակի են Դվինը, Արտաշատը...

— Լա՛ս, աչքերդ,—չընդհատեց ծերունին:—կարծյոք մարդ է գալիս:

— Փակեցի, Զաքարե, փակեցի,—ասաց երիտասարդն ան-միջապես և աչքերը պինդ փակեց:—Մի բարկանա, Զաքարե. երկու տարի է այս վայրերը չեմ տեսել. ուզում եմ կարոտս առնեմ կամ տեսնեմ դռնե ի՞նչ է փոխված: Ճշմարիտ՝ չեմ կա-րողանում ինձ զսպել:

— Այդ ճշմարիտ է, որ անզուսպ ես, տղա,—նկատեց ծե-րունին սրամտությամբ,— և քո այդ հատկությանդ պատճառով կարող ես մեզ փորձանքի մեջ ձգել մի օր: Դու մոռանում ես, որ կույր դուսան ես: Ուրեմն....

— Նկատողությունդ տեղին է, Զաքարե: Թեև այսքան ճա-նապարհ ենք կտրել, բայց և այնպես չեմ կարողանում ինձ մոռանալ և պահել որպես դուսան: Բնավորությունս է մեղավոր: Անհամբեր եմ: Չեմ կարող անտարբեր, փակ աչքերով

անցնել այս ճանապարհով, որն իմ մանկության ճանապարհն է եղել, ուր ամեն քար ու ծառ ծանոթ է ինձ և հիշեցնում է մեր աշխարհի ազատ, երջանիկ օրերը... Դու մեծ ես, Զաքարե, հեռավոր և մոռացված. ուրեմն և կարողանում ես հանգիստ պահել քեզ: Ես սակայն չեմ կարող. սիրտս այրվում է...

— Բայց դու առայժմ կույր գուսան ես, տղաս: Մանավանդ այստեղ՝ վտանգի մոտ պետք է լինես ավելի առնասիրտ ու համբերող. այդպես միայն կարող ես կատարել քեզ արված հանձնարարությունը: Այս բանը մի մոռանա և աչքերդ...

Երիտասարդը հառաչեց ու լռեց:

Եվ մի առժամ նրանք զնում էին անխոս, ծերունին ցուլին հենվելով, երիտասարդն աչքերը խուփ և երեմն գայթելով:

Բավական ուղ այդպես գնալով՝ երիտասարդը նորից սկսեց.

— Զաքարե, վաղարշապատում կարծես ավելի լավ անցավ, քան Երվանդաշատում, այնպես չէ՞,— ասավ նա ցած ձայնով:— Տեսնենք ինչպես կլինի Դվինում, Արտաշատում: Առաջին հերթին, լհասրկի, Դվինում: Այնտեղ է Մերուժանը, հետևաբար՝ պարսիկների հսկողությունը կլինի ավելի խիստ, այնպես չէ՞:

— Անշուշտ: Բայց ամեն ինչ կախված է աստծո հաջողությունից և քո շնորհքից, տղաս:

— Եվ քո, Զաքարե, և՛ քո. այդ մի մոռանա,—վրա բերավ երիտասարդը երախտագիտությամբ:—Սակայն ինձ հիմա անհանգստացնում է մի միտք. հանկարծ Դվինում չպատահի իմ բնիամիներից մեկը և ճանաչի ինձ...

— Ճանաչի՛,—ընդհատ ծերունին քթի տակ:—Դու հագուստով ու դեմքով այնպես ես փոխված, որ աստանան էլ քեզ ճանաչել չի կարող:

— Դու ևս սրակաս չես, Զաքարե,—ասավ երիտասարդը՝ աստիճանդի թևը ցնցելով:

Երկուսն էլ գոհությամբ ժպտացին:

— Բայց ը՛սսս...

Նրանք հիմա անցնում էին մի դյուղի այգիների արանքով, այսինքն՝ նույն մեծ ճանապարհով, որի երկու կողմը խաղողի ընդարձակ այգիներ էին և փոքրիկ կավածեփ տնակներ, որոնց շատերի առաջ ոչ միայն մարդ, այլ կենդանի անգամ չէր երևում, և փշատենիների ու ընկուզենիների շարքերը, որ աջից ու ձախից

ճանապարհը ելնելով՝ տալիս էին նրան ծառուղու տեսք և, այդպիսով, ճանապարհի չարունակությունը դարձնում անտեսանելի։ Վերջին խոսքերի վրա նրանց ականջին հասավ ձիերի ոտնաձայն, որ թեև, ծառերի պատճառով, առայժմ բան չէր երևում, բայց նրանք զգուշացան անհիշատակ. երիտասարդն աչքերը փակեց խնամքով, իսկ ծերունին տխուր կերպարանք ընդունեց, ձեռնափայտն ավելի հաճախ գետնին զարկելով։

Եկողները, անկասկած, պարսիկներ էին, որովհետև հայերը հիմա ոչ մխայն չէին կարող այդպես ձի քշել Իրենց երկրում, այլև ազատ քայլել անգամ չէին համարձակվում։

Եվ իրոք. չուտով երևացին պարսից հինգ դինվոր՝ բարձրաղիր թաղիքե կավազուն գլխարկներով, ականջների մոտ մազերի փնջեր, երկար թրերը կողքերից կախ, որ վաղքի թափից համաչափ հեռանում ու զարկում էին նրանց ձախ ազդրին և ձիերի կողերին։

Այս տեսնելով՝ ծերունին ակամա սեղմեց երիտասարդի թևը. դա պայմանական նշան էր, թե պարսիկներ են. և երիտասարդը դրանից աչքերն ավելի սեղմեց, որից հաճախացավ նրա կոպերի ու թարթիչների խաղը։

Պարսից դինվորները, գուսաններին նկատելով թե ուրիշ մի պատճառով, ձիերի ընթացքը դանդաղեցրին հանկարծ, իսկ երբ մոտեցան նրանց՝ համարյա կանգնեցրին, և նրանցից մեկը, ըստ երևույթին նրանց գլխավորը, առաջացավ դնդի գուսանները և հարցրեց աղավաղված հայերենով ու ծաղրական ձևով.

— Ո՞վ ես, ո՞ւր գնաս։

— Գուսաններ ենք, աղա,—ասավ Ջաքարեն հանգիստ, դրեթե անտարբեր ձայնով։—Գնում ենք Դվինն՝ նվագելու, երգելու։

— Իրավունք ունի՞,—չարունակեց պարսիկը՝ ձեռի ճիպոտը ծերունու ուսին դիպցնելով։

— Իրավո՞ւնք... Մեր գուսանի իրավունքը սա՛ է, տղաս,—ցույց տվավ ծերունին իր գլխին ու սրինգը և ընկերոջ բամբիռը։—Ո՞վ է տեսել գուսանին իրավունք հարցնեն։ Գուսանի իրավունքը իր երգը, նվագն է, որ ուրախացնում է ամենքին։ Սրի՝ նետես նվագենք քեզ համար։

— Չէ՛, չէ՛: Գնա՛ս, գնա՛ս: Ժամանակ չունես,— ասավ պարսիկը և, ձիու գավակին խփելով, սլացավ առաջ:

Մյուս ձիավորները հետևեցին նրան:

Երբ նրանք հեռացան՝ ծերունին չունչ քաշեց:

— Սրանցից էլ ազատվեցինք: Տեսնե՛նք մինչև Դվին դեռ քանի անգամ պիտի պատահեն նզովյալները:

Փոքր էլ գնալով՝ նրանք հանդիպեցին երկու հայ տարեց չինականի, որ կողովարարձ ավանակներով դուրս եկան մի այգուց և վախեցած նայեցին ճանապարհի երկու կողմը:

Գուսաններին տեսնելով՝ նրանք կանգ առան զարմացած և ճանապարհ ընկան նրանց հետ միասին:

— Առաջ բա՞րի, գուսան եղբայրներ,— հարցրեց նրանցից մեկը, որի հետաքրքիր հայացքն ասում էր, թե ո՞ւր եք գնում արդյոք այս վտանգավոր ժամանակ:

— Դվին, չինական եղբայրներ, քաղաքամայր Դվին, Արտաշատ:

— Դվի՞ն, Արտաշա՞տ,—կրկնեց չինականը տխրությամբ:— Հապա չե՞ք իմանում, որ Դվինը, Արտաշատը լիքն են պարսիկներով:

— Իմանում ենք, չինական եղբայր, իմանում ենք: Բայց ի՞նչ կա. նրանք էլ մարդ են. ի՞նչ պիտի անեն մեզ...

— «Ի՞նչ պիտի անեն»,—ցավագին կրկնեց նույն չինականը:—Ա՛մեն ինչ կարող են անել, գուսան եղբայր, ամեն ինչ: Սհա մի տարի քանի ամիս է մեր ունեցածի տերը չենք. դիշերը քուն չունենք, ցերեկը հանգիստ:

— Ինչո՞ւ,—հարցրեց հանկարծ երխտասարդ գուսանը, որ մինչ այդ լուռ էր:—Չէ՞ որ Մերուժան իշխանն, ասում են, Դվին է և բարի աչքով է նայում ժողովրդին:

Երխտասարդի այս խոսքերի վրա չինականները ոչ թե զարմացած, այլ առես խայթված նայեցին իրար և ապա ոտից-գլուխ չափեցին նրան:

— «Բարի՛»,—քմծիծաղ կրկնեց քիչ առաջ խոսող չինականը:— Այդպես քան մեզ ասիր, գուսան եղբայր, ուրիշի չասես: «Բարի՛»... մեռած ենք, թաղած չենք, դու ասում ես «բարի»:

— Ես այդպես եմ լսել, չինական եղբայր,—ուզեց կարծես արդարանալ երխտասարդ գուսանը:

Սակայն չինականը ներահաճատ նայեց նրան:

— «Լաո՛լ»... Դու այս երկրում չե՞ս ապրում, տղա, որ այդպես բաներ ես խոսում: Դեռ չեմ պատահել մի մարդ, որ Մերուժանի, այդ մոխրապաշտի արածը հավանի կամ լավ համարի: Չէ, գուսան եղբայրներ, այդպես բան դուք մենակ հեթանոսից կլսեք կամ պարսիկից: «Բարի՛»... բոլորիս ստիպում են մոխիր պաշտենք, պարսից զինվորները հանում են մեր հոգին, իսկ դու ասում ես «բարի»,—դարձավ նա նորից երիտասարդ գուսանին և լուռ անապատելի, կարծես ցավի մորմոքը հանդստացնելու:—Հիմա էլ,—շարունակեց նա տնքալով,— չենք թողնում ճանապարհներով շարժվենք կամ գնանք Դվին, Արտաշատ: Հակում են ամեն տեղ, հարց ու փորձում՝ «ո՞րտեղից ես գալիս, ո՞ւր ես գնում, ինչո՞ւ ես գնում»:

— Մի տաս-քսան օր առաջ այսպես չէր,—խոսեց մյուս չինականը, երկար ու նիհար, մազն երեսին չորացած մի մարդ, որ մինչ այդ լուռ, տխուր հետևում էր իր ընկերի և գուսանների խոսակցության:—Հիմա կատաղել են շատ: Չեմ հասկանում ի՞նչ կա, ինչո՞ւ են իրար անցել: Լավ է՝ պարսիկ զինվորները ձեզ թողին: Ասենք գուսաններն ասածու մարդիկ են,— ավելացրեց նա,—շատ կարելի է բան չասեն...

Երիտասարդ գուսանը, որ առաջին չինականի խոսքերից մտածմունքի մեջ էր ընկել, հետաքրքրվեց.

— Ուրեմն՝ կարո՞ղ է պատահել մեզ քաղաք չթողնե՞ն:

— Չեմ կարող ասել, գուսան եղբայր: Ամեն ժամանակներ են հիմա: Ասում են, սուտ է թե ճշմարիտ՝ չեմ իմանում, ականջիս հասել է, որ,—և նիհար չինականը ձայնը բոլորովին իջեցրեց:— Ասում են, դե դուք էլ հայ եք, քրիստոնյա, պարզ ասեմ... Ասում են Մուշեղին ու Պապը կռիվ են սկսել այս մոխրապաշտների դեմ. չե՞ք լսել:

— Այդպես բան կա՞,—զարմացան գուսանները:

— Ասում են, գուսան եղբայրներ, խոսում են: Այդ ի՛նչպես է՝ դուք չեք լսել: Հապա ասում են գուսանն ամեն բան շո՞ւտ է լսում: Ի՞նչպես է չեք իմանում:

Գուսանները հավատացրին, որ ոչինչ չեն լսել, բայց չհիասթափեցրին. երևում էր՝ վաղուց դրսից եկող մարդ էին տեսել, ուստի շատ էին ցանկանում իմանալ, թե ի՛նչ

հա երենց գյուղից դուրս՝ աշխարհում, ի՞նչ են խոսում, ե՞րբ պետք աղատվեն «մոխրակերներից»:

— Եթե Մուշեղի կռիվը ճի՞շտ է, հը՞,— և կարճ չինականը հռհռով, ավելի շուտ տանջալից աչքերի մեջ հույսի կայծեր ցոլացնելով նայեց դուսաններին:

— Չէ, չինական եղբայր, այդպես բան մենք չենք լսել,— նրա հարցումին պատասխանեց երիտասարդ կույր դուսանը:— Բայց եթե դա ճիշտ է՝ լավ չէ մեզ համար, բոլորովին լա՛վ չէ:

— Ի՞նչը լավ չէ,— կանգնեց կարճ չինականը և նայեց կույրի աչքերին:

— Կռիվը,— պատասխանեց երիտասարդ դուսանը:— Նորից երկու կողմից մարդ կսպանվի, նորից չեն ու քաղաքներ կավերվեն: Ավելի լավ է մնա այսպես, ապրենք հանգիստ: Մերուժանն էլ, ղե, պարսիկ չէ, վերջապես, հայ է:

Չինականները զարմացած նայեցին դուսաններին. նրանցից մեկի՝ կարճահասակի աչքերում բարկության նման մի բան առկայծեց:

— «Հա՛յ»... Ինչպես երևում է՝ դուք էլ Մերուժանի նըման մոխիր եք պաշտում,—խոսեց նա դուսպ վրդովմունքով:— Գնացե՛ք, դնացեք...

Եվ ինքը կանգնելով՝ ավանակներին նույնպես կանգնեցրեց, որ նրանք հեռանան: Այդ պահին ցավի ու զայրույթի մի այնպիսի արտահայտություն կար նրա դեմքին, որ թվում էր դուսաններն նրա համար ամենավատն ոխերիմ թշնամիներ են կամ չարագործներ: Իսկ երբ նրանք մի փոքր հեռացան՝ նա գլուխն օրորեց և ասավ ինքն իրեն.

— Իսկ ես ուղում էի մերդ տամ դրանց՝ պատվեմ...

Դուսաններն լսեցին նրա խոսքերը և երկուսն էլ ժպտացին:

— Հավատացին, Զաքարե,—աչքերը բաց արած երիտասարդ դուսանը:—Եթե պարսիկներն էլ այսպես հավատան՝ մենք կմտնենք քաղաք...

— Բայց դու նրանց շատ հուզեցիր, տղաս,—նկատեց Զաքարն:

— Ոչինչ, Զաքարե,—այդ ոչինչ,— ասավ երիտասարդը:— Ես ուղեցի իմանալ, թե ո՛րքան են ատում Մերուժանին: Եվ

տեսար՝ այստեղ էլ նույնն է, ինչպես ամեն տեղ։ Եվ դա լա՛վ է...

Շինականներից բաժանվելով՝ նրանք գնում էին նորից նույն պղտոր և ուշիմ ընթացքով. նորից մարդ չեղած ժամանակ երիտասարդն աչքերը բանում էր կիսով չափ և ուշադիր նայում հուրջը, իսկ մարդ նկատելիս՝ փակում էր և ավելի սինդ բռնում ծերունու թևը։

Բայց երբ հասան մայրաքաղաքը շրջապատող այգիներին՝ նա աչքերը բոլորովին փակեց, որովհետև այդ մասում ավելի հաճախ էին երևում պարսիկ զինվորներ, որ հետևակ կամ ձիով գնում էին այս ու այն կողմ կամ հանկարծ դուրս էին գալիս մի այգուց՝ ձեռներին խաղողի ողկույզներ ու դեղձեր։ Մակայն մի առժամ հետո, երբ Զաքարեն հայտնեց, թե «միջնաբերդը երևաց»—երիտասարդն այլևս չհամբերեց.

— Միջնաբե՞րդը,— ասավ նա զսպված հրճվանքով ու, ամեն զգուշությունն մոռացած, աչքերը նորից բաց արավ և իր առջև տեսավ իրոք ծանոթ միջնաբերդը՝ վերից վար ծառաստանով շրջապատված և բարձր ատամնավոր պարսպով ու բուրգերով զոռևորված։ Ծառերի արանքից երևում էին միայն արքայական պալատի վերին մասը, ճակատը, ապա պալատի քարե լայն սանդուղը, որ ճերմակ աստիճաններով իջնում էր մինչև պարիսպը, և բլրի ամենաբարձր կետում չինված մարմար սյուներով սարալույրը, ուր հաճախ զբոսնում կամ հանդստանում էին թագավորն ու ամազանինները, և որտեղից երևում էր ոչ միայն շուրջը փռված քաղաքն իր տներով ու փողոցներով այլև ամբողջ դաշտը՝ իր խաղող գյուղերով, գետերով ու ճանապարհներով, Թողած դաշտը շրջանակող լեռները, որ երևում էին իրենց ստորոտից սկսած, մանավանդ Մասիսները, որ թվում էին այնքան մոտ, որ կարելի էր նշմարել նրանց բոլոր ճնճխունները։

Երիտասարդը նայում էր անթարթ ագահ աչքերով, և մարդկային ոչ մի ստվեր չէր տեսնում ոչ սյունազարդ ճեմելիքում, ոչ երկար սանդուղի վրա, ու պալատը նրան թվում էր լքված, ամայի, չնայած լսել էր, գիտեր, որ այդտեղ են ապրում պարսից Զիկ զորավարը և Մերուժան Արծրունին՝ իրենց մարդկանցով, համհարզներով։ Եվ նա, զգուշությունը մոռա-

ցած, հայացքը լարեց մի մարդ, մի ստվեր տեսնելու կամ նկատելու մինչ է վտանգած արդյոք, երբ Ծերունին, ըստ սովորության, սեղմեց նրա թևը:

— Բավական է, տղաս:

Երիտասարդը մի սրտաճոր հառաչ արձակեց: Այնքան անսպասելի էր այդ, որ Ծերունին հարցրեց.

— Ինչո՞ւ տխրեցիր, տղաս: Չէ՞ որ արդեն մոտենում ենք քաղաքին:

— Է՛հ,— ասավ երիտասարդը տխրաձայն:—Ես այնտեղ ինչ-որ մեկին եմ փնտրում, որ չգիտեմ ո՞ղջ է, մեռա՞ծ, թե՞ տարվել է դերի: Վաղուց ոչ մի լուր չունեմ նրա մասին...

Այս ասելով՝ նա լռեց և քայլեց ինքնամփոփ ու մթամկնած դեմքով: Թվում էր՝ այդ մեկին հիշելը ալեկոծեց նրան. ինչ-որ մոքեր թե հուշեր հանկարծ պղտորեցին նրա մինչ այդ խաղաղ հոգատան ու հանգիստը:

Ապա, երբ բավական քայլել էր այդպես, նա շարունակեց հուզված.

— Առում ես «անհամբեր»: Ճշմարիտ է, ես նույնիսկ չգիտեմ՝ ինչպես կարող եմ սպասել ինձ, եթե Մերուժանին հանդիպեմ: Ինձ թվում է՝ ես նրան, պիտի սպանեմ, առանձերով կրծեմ կոկորդը կամ խեղդեմ, որ այսքան թշվառություն քաշել տվեց մեզ:

Երիտասարդը լռեց և անխոս շարունակեց ճանապարհը մինչև որ առաջնորդ Ջաքարին հցնջաց.

— Ահա և քաղաքի պարիսպը...

Ծերունին զգաց, որ իր խոսքերից երիտասարդի սիրտը մարմնով մի սարսուռ անցավ, որը, նա չէր կարող ասել՝ վախի՞ց էր, ուրախությունի՞ց թե անհանգստությունից: Սակայն նա աչքերը չբացեց, այլ միայն ասավ կիսաձայն.

— Այստեղ անպայման խնամ կլինեն. բայց գնանք. ի՞նչ լինելու է՝ թող լինի: Դու հո երկյուղ չունե՞ս, Ջաքարե:

— Ինչո՞ւ. ուր դու՝ այնտեղ էլ ես,—ասավ Ջաքարին՝ աչքը չարունակ քաղաքի պարսպին, որ իր աղյուսե աշտարակներով ու աշտարակներով հետզհետե ավելի էր բարձրանում չրջապատող այգիներից, և որի վրա տեղ-տեղ օրորվում էին չորացած ու դեղնած խոտաբույսեր:

Քիչ հետո երևաց և Ավազ կամ վաղարշապատի դուռը՝ դուրգ աշտարակներով, որոնց վրա ծածանվում էին պարսից դրոշներ. ապա երևացին դռան երկաթե դուրգ փեղկերը, որ բացված էին կրնկի վրա. իսկ նրանց մոտ, կամարի տակ, նրա սյուներում, աջ ու ձախ շինած քարե նստարաններին բազմել էին չորս-հինգ պարսիկ զինվոր՝ իրենց կավագույն պլխարկներով, նիզակները պատին դեմ արած, կամ սրունքների արանքում սպահած:

Նրանք երկու խմբի բաժանված՝ ինչ-որ բան էին ուտում և հեռվից-հեռու խոսակցում իրար հետ:

— Ահա և Ավազ դուռը,— չննջաց նորից Զաքարեն և դարձյալ ղեպց, որ այդ խոսքի վրա երիտասարդի մարմնով մի սարսուռ անցավ:

— Պահակները կա՞ն, երևո՞ւմ են,—հարցրեց նա:

— Այո, կան,—պատասխանեց Զաքարեն ու խոսքն էլ լրեց:

Այժմ նրանք առաջ էին գնում ավելի ինքնավստահ քայլերով. Ծերունին որպես վորձ առաջնորդ, երիտասարդն իրրև կույր դուսան՝ առաջնորդի թևը բռնած ու երբեմն գայթելով:

Պահակները, որ սկիզբ էին ուտում և կեղևները կատակով նետում խմբից-խումբ, դուսաններին նկատելով՝ անմիջապես բարեհոգի տեսք ընդունեցին, ինչպես լինում է հաճելի կամ պվարճալի մի բան տեսնելիս:

— Նվագողնե՛ր, նվագողնե՛ր,—ասին նրանք զվարթ ժպիտներով և դուսաններին իրար ցույց տալով:

Բայց և այնպես, երբ դուսաններն բոլորովին մոտեցան, նրանցից մեկը, նիհար. ու երկարավիզ մի զինվոր տեղից վեր կացավ և նիզակը ձեռին եկավ նրանց դեմ:

— Ո՞վ եք. ո՞ւր եք գնում,—ասավ նա՝ ձայնին խստություն տալով:

— Թափառական դուսաններ ենք, տղաս,—ասավ Ծերունին:—Գնում ենք Դվին՝ Շապուհ արքայի զորքերի և իշխան Մերուժանի համար նվագելու:

— Իսկ մեզ համար չի՞ք նվագի,— կատակեց նստած պահակներից մեկը:

— Հրամեցեք,— պատրաստակամություն հայտնեց Զաքարեն.— մեր գործն է՝ նվագել և մարդկանց սրտերն ուրախացնել:

— Չէ՛, չէ՛, գնացեք, գնացեք,—ասավ նույն նոտած կատակող պահակը։—Այստեղ նվագելու տեղ չէ...

Այդ ժամանակ քաղաքապետն դուրից, ավելի շուտ այնտեղից դիտարանից մեկը հարցրեց հրամայական ձայնով.

— Ո՞վ է, ի՞նչ են ուզում։

— Նվագողներ են, պահակապետ, դուսաններ,— պատասխանեց նիզակով պահակը ներքևից վերև նայելով։

— Դուսաննե՛ր. թող անցնեն գնան,—ասավ վերևից սև աչքերով թավամազ պահակապետը և նույնպես սեխի մի մեծ կեղև նետեց ցած, չդիտես իր պահակին թե դուսաններին. խփելու. կեղևը եկավ դիպավ երիտասարդ դուսանի ձեռին, որից նա ցնցվեց ասես օձի հպումից և ուղեց հայհոյել, բայց զսպեց իրեն, և՝ չլնկայց «ալիղծ չներ», որ միայն Զաքարեն լսեց և թիւը անդմեց ամուր։

Երբ նրանք Սվազ դռնից ներս մտան՝ ասես զվարթացան. նրանց համակեց ինչ-որ մի աշխույժ. քայլերնին արագացան, իսկ դեմքներին նկատվեց հաղթական մի բան, որ ասում էր կարծես, թե հասան, վերջապես, իրենց նպատակին. մտան իրենց մայրաքաղաքը. իսկ թե ինչ էր ապասում իրենց՝ այդ մասին կարծես չէին մտածում այլևս։

Բայց անցնելով մի տաս-քսան քայլ՝ նրանք զարմացան քաղաքում տիրող լռության ու ամայության վրա։

— Մի՞թե մարդ չկա, Զաքարե,—հարցրեց երիտասարդը։

— Համարյա,— հառաչեց ծերունին։

Նրանք գնում էին գլխավոր փողոցով, որ տանում էր քաղաքի կենտրոնը՝ հրապարակը, և որը առաջ միշտ եռում էր անց ու դարձից. գնում-գալիս էին ոչ միայն հետիոտն ու հեծյալ քաղաքացիները, այլև ամեն տեսակ կենդանիներ՝ բեռնաբարձ ուղտեր, ջորիներ, ավանակներ... Հիմա պատահում էին միայն պարսիկ զինվորներ, երեխաներ, հատ ու կենտ սպասավորներ... իսկ փողոցի երկու կողմը գտնվող տները թվում էին փակ. նրանցում կենդանություն, շունչ չկար. անգամ շները չէին հաչում։ Մի քանի տների էլ դռները հանված էին, երևում էին և քանդված պատեր, ինչ-որ չկար առաջ։

Շուտով նրանց չրջապատեց հետաքրքիր երեխաների մի փոքրիկ խումբ և ուղեկցեց, զարմացած նայելով նրանց զրծիքներին։

Փոքր անց նրանք արդեն քաղաքի հրապարակումն էին, որի երեք կողմը արհեստավորների կրպակներ էին, չորրորդ կողմը Դվինի մեծ եկեղեցին՝ իր բարձր պարսպով և կամարակապ ու խաչաքանդակ դռնով, իսկ չորս անկյուններում երեք կողմից ոլխող քարաշեն աղբյուրները, որոնց չղթաներով ամրացրած էին պղնձե թասեր՝ ջուր խմելու համար:

Շրջապատված նրեխաներով ու պարսիկ պինվորներով՝ դուռանները երգում էին պարսկերեն երգեր. ավելի շուտ՝ երիտասարդ դուռանը նվագում էր՝ հետն էլ երգում, իսկ նրա առաջնորդ ծերուկին հոգնած ձայնակցում էր նրան իր թավ ձայնով: Ու թե երեխաները և թե պարսիկները հափշտակված լսում էին նրանց. պինվորների աչքերում նույնիսկ կարելի էր նկատել կարոտի ու թախիծի պես մի բան, որ մեղմում էր նրանց՝ նվաճողի ամբարտավան արտահայտությունը:

Գնալով՝ երգ-ու նվագ սիրողների թիվն ավելանում էր նրանց շուրջը. միայն հայ եպիսկոպոսների, վարդապետների ու սարկավագների փոխարեն եկեղեցու բակը մտնող և այնտեղից դուրս եկող պարսիկ երկարաքղանցք ու արագդակ մոգերն ու կրակի այլ պաշտոնյաներն էին խոթ նայում դուռաններին ու ջաղաջը:

Իսկ դուռաններն երգելու հետ միասին կարծես ուսումնասիրում էին իրենց շուրջը, հրապարակի անց ու դարձը—ծերունին բաց աչքերով, երիտասարդը կույր աչքերը կկոցած: Մա որքան էլ խոստացավ քաղաքում աչքերը միշտ փակ պահել, բայց անհամբերությունից թե հետաքրքրությունից չէր կարողանում իրեն դադել և երբեմն երկար թերթերունքները խաղացնելով՝ դիտում էր հրապարակի անց ու դարձը:

Առաջվա համեմատությամբ հրապարակն այնպես դատարկ էր, թվում էր քաղաքում մարդ չկա: Բայց դա խաբուսիկ երեվույթ էր: Ջնայած քանի ամիս էր ինչ պարսիկները գրավել էին քաղաքը, բայց բնակչությունը դեռ չէր հաշտվում այդ դրության հետ և մեծ վախով էր դուրս գալիս հրապարակ: Ամենք դեռ դրավելուց առաջ չատերը հեռացել էին երկրի հյուսիսային գավառները՝ Վարաժնունիք, Գառնի, Գեղարքունիք, Գուգարք և

Ուտիք, մինչև վերին սահմանը հայոց, անգամ մինչև երկրորդ
վրաց: Իսկ մնացածները թաքնվում էին իրենց տների խորքում
կամ քաղաքը շրջապատող այգիներում, որ հարկադրված չէինեն
երկրպագել կրակին: Չնայած պարսիկները՝ ինքը պարսից զոր-
քերի դիմավոր հրամանատար Զիկ զորավարը և հայ իշխան Մե-
ժուժանն էլ առանձին մունետիկների բերանով հայտնել էին բո-
նակիչներին, որ իրենց ազատ ղպան և ազատ շարունակեն իրենց
գործերն ու արհեստները, սակայն շատ քչերն էին նրանց հա-
վատում, ու հրապարակում երևում էին միայն պառավներ ու
ծերունիներ կամ խեղանդամ մարդիկ, որ կարծես մահն արհա-
մարհելով ծերության իրավունքով էին դուրս գալիս փողոց
կամ դնում միմյանց տուն...

Սակայն հիմա դուսաննների նվագն ու երգը՝ որքան տարօ-
րինակ ու զարմանալի, նույնքան էլ մեծ հետաքրքրություն հա-
րուցեց այդ լուռ հրապարակում ու նրա շուրջը, որովհետև վա-
ղուց, պարսիկների մտնելուց հետո, ոչ դուսաններ էին երևա-
ցել, ոչ էլ երգ ու նվագ էր լսվել քաղաքում: Թերևս այդ էր
պատճառը, որ նվագի առաջին հնչյունները հավաքեցին ոչ միայն
երեխաներ, պարսիկ զինվորներ, այլև քաղաքացիներ, որոնց
թիվը դնալով ավելանում էր. անգամ մոտիկ տների դռներից ու
պատերի եռևից զարմացած նվագողներին էին նայում կանայք
ու աղամարդիկ, բայց չէին համարձակվում առաջ գալ... Մի
երգի ամենածորուն տեղը՝ հանկարծ հրճվանքի մի ճիչ լսվեց
հրապարակում, և մազախուիլ ու ցնցոտիազգեստ մեկը պատռեց
հավաքվածների շղթան ու, եղան մի թավամազ պոչ ձեռին,
կանգնեց ծամածուռ շարժուձևերով:

— Դուսա՞ն, դուսա՞ն, որտեղի՞ց բուսան...

Մեծ գետաուի՞ց թե անտառից...

Ասավ նա հստիւի նման բերանը բաց և, հոնքերը բարձրաց-
նելով, դլուխը ծռած նայեց դուսանների երեսին, կարծես փոր-
ձելով ճանաչել նրանց կամ ինչ-որ բան ասել նորից, բայց մե-
կը, տարիքով մի քաղաքացի սաստեց նրան:

Դա Դվինի հայտնի խեղճ «Մեղավոր Մաղքոսն» էր, երիտա-
սարդ ամրակազմ մի մարդ, որ մի վայրկյան լռելուց հետո՝
հանկարծ լաց եղավ բարձրաձայն: Պարսիկ զինվորները մեղմա-
ցած նայեցին նրան և նոր մի երգ պատվիրեցին դուսաններին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ՏՈՒՆԴԱՍՏԱՆՅԱՑ ԳՐԱԴԱՐԱՆ

Եվ մինչ նրանք երգում էին՝ հետաքրքիրների թիվը շատանում էր ավելանալ նրանց չուրջը. գալիս էին ոչ միայն երեխաներ ու պարսիկ գինվորներ, այլև նոր դվինցիներ: Երբ մի-երկու եղանակից հետո գուսաններըը դադար առան՝ դվինցիներից մեկը՝ վիզը կապած մի ծերունի, Զաքարեին մոտենալուց հարցրեց կամաց.

— Որտե՞ղից եք գալիս, գուսան եղբայր:

— Վաղարշապատից,—Զաքարեի փոխարեն պատասխանեց երիտասարդ հուր գուսանը:

— Իսկ ի՞նչ կա Վաղարշապատում,—հետաքրքրվեց նույն ծերունին՝ ձայնն ավելի իջեցնելով, որ պարսիկները իր խոսքը չլսեն:

— Ինչ որ այստեղ, բարեկամ,—պատասխանեց երիտասարդ գուսանն անտարբեր և, բամբիռը նորից ձեռն առնելով, սկսեց պարսկական մի նոր երգ:

Նա մատներով զարկում էր բամբիռի լարերին և հետո էլ երգում, իսկ ծերունին զարմացյալ ձայնակցում էր նրան կամ գալիք զարկում:

Երբ պարսիկ գինվորները, վերջապես, հագեցան ու ամբողջ խմբով թողին-հեռացան՝ Զաքարեն երկու անգամ սեղմեց երիտասարդի թևը, որ պայմանական նշան էր, թե պարսիկ չկա:

Այդ ժամ երիտասարդը երգեց հայերեն. լսելով իրենց ծանոթ եղանակն ու երգը՝ հավաքված դվինցիների հոնքերը սիամա ետ գնացին, դեմքերը պարզվեց և նրանց աչքերում առկայծեց կարծես վաղուց մարած մի բան: Երիտասարդը երգում էր հոգնած, բայց հնչեղ ձայնով:

Հավաքված այդ խայտաբղետ բազմության մեջ կար մի չինի տարիքի մի մարդ, որ համառորեն նայում էր հուր գուսանին, և, թվում էր, ուշադիր գինում է նրան, ուսումնասիրում նրա յուրաքանչյուր շարժումը և ուզում է լավ հիշել նրան: Դա քառասունի մոտ գունատ մարդ էր՝ սև ոլորվող բեխ ու մորուսով և սպիտակ բարակ ձեռներով, որ հազիվ կիսով չափ դուրս էին գալիս նրա հնամաշ կտավյայ լայն թևքերի միջից: Թվում էր՝ դա հողի, արդյոք կամ այլ կոպիտ աշխատանքով պրաղվող մարդ չէ և, ինչպես երևում էր, հավաքվածների մոտ հարգանք է վայելում:

Վերջապես, երբ դուռանը դադարեց և, հոգնած, բամբիռը դրեց ծնկան, այդ մարդը մոտեցավ երիտասարդ դուռանին և կամաչով՝ ձեռը դիպցրեց նրա ձեռին, որ կուչըն ղջա, թե էր հետ են խոսում:

— Դուռան եղբայր,—ասավ նա կարեկից ու ոչ բարձր ձայնով:—Հոգնած և քաղցած կլինեք: Գնանք տունս՝ հաց վայելեցեք և հանգիստ առեք:

— Շնորհակալ եմ, անծանոթ եղբայր, չնորհակալ եմ: Ճշմարիտ է, թե հոգնած ենք և թե քաղցած, բայց հեռո՞ւ է արդյոք քո տունը մեր հոգնած ոտների համար:

— Ոչ, շատ հեռու չէ,—ասավ մարդը նույն զգույշ ձայնով:—Մի երկու կարճ վողոց անցնելուց հետո կլինենք իմ տանս:

Երիտասարդ դուռանի լարված, մատհոդ դեմքը մեկեն պայծառացավ. նա մի ծանոթ թե հարազատ ձայն զգաց կարծես և ասավ.

— Գնա՛նք, անծանոթ եղբայր, գնա՛նք...

Ու տեղից վեր կենալով՝ բամբիռն զգուշությամբ քցեց ուսը և բռնեց ծեր առաջնորդի թևը:

— Ուրեմն հետևեցեք ինձ,—ասավ դվինցին զգուշությամբ և, բարեմտությունից ջոկվելով, առաջ ընկավ՝ կապայի լայն թևքերը ճոճելով:

Դուռաններն հետևեցին նրան և մինչև տուն, որ այնքան էլ մոտ չէր, նրանք այլևս ոչ մի խոսք չփոխանակեցին, որովհետև մարդը դնում էր բավական առաջ ընկած, նույնիսկ առանց ետ նայելու: Իսկ երբ հյուրընկալի եռանից մոտեն նրա բակը և դուռը դրվեն ամուր՝ կուչը դուռանն աչքերը բաց արավ հանկարծ և ժպտերես նայեց հյուրընկալին: Սրան թվաց թե երիտասարդ դուռանի ցնցոտիները չքացան և նրա տեղն կանգնեց մի կայտառ ու կորովի ռազմիկ:

— Հրահա՛տ,— բացականչեց նա:

— Չէ՞ր ասասում, Դազալոն վարպետ, այնպես չէ՞: Ես քո ձայնից լսեցի ճանաչեցի քեզ և զգացի, որ շատ զարմացած ես:

— Զարմացած,— բացականչեց հյուրընկալը, որ Դվինի ոսկերչներից էր:—Ոչ միայն զարմացած եմ, սիրելի Հրահատ, այլ այրվում եմ հետաքրքրությունից: Աստ, խնդրում եմ, ինչ

բան է սա. ի՞նչն է հարկադրել քեզ այդպես կույր դուռան ձեվանալ... դա ի՞նչ է նշանակում:

— Տեսնում եմ իրոք շատ ես հետաքրքրված, Գազավոն վարպետ,—ասավ «կույր» դուռանը մտերմաբար հյուրընկալ ուսը թոթվելով:—Բայց նախ քան քեզ գոհացնելը, այսինքն քո այդ հարցերին պատասխանելը—մեզ կներակրիր, բարեկամ, որ ուժ ունենանք խոսելու: Իմ այս բարի առաջնորդն էլ ազնիվ մարդ է. կարող ես ազատ խոսել մոտը:

— Ներո՛ղ եղիր, Հրահատ եղբայր,—չփոթվեց Գազավոնը,—ես իմ տեսածից այնպես եմ զարմացած, որ մոռացա հյուրընկալության կարգը:—Իսկո՛ւյն, իսկո՛ւյն: Հրամեցեք, հրամեցեք ներս...

Եվ նա իրար անցնելով, անհանգիստ ու հապճեպ՝ հյուրընկալ առաջնորդից տուն, որ գտնվում էր բակի խորքում, դուրդ թթենիների հովանու տակ: Գազավոնի տունը բաղկացած էր երկու թև երեք սենյակից, որոնց մերկ աղքատությունը շատ զարմացրեց հյուրերին. բոլորովին անզարդ ու մերկ էին պատերը, մերկ էին համարյա և նրանց տակ դրված տախտերը, եթե չհաշվենք վրանները փռված դորշ թաղիքները, որոնց ծայրերն իջնում էին մինչև հարթ հատակը, որի վրա, սովորական դրդեղի փոխարեն, նուրնպես փռված էին ճահճախոտից հյուսած հասարակ խսիրները: Մինչ դուռաններդը մի տախտի վրա տեղավորվելով՝ նայում էին տան խեղճությունը, հյուրընկալ Գազավոնն անցավ կից սենյակը, ինչ-որ բան խոսեց այնտեղ անտես մեկի հետ և, շուտով վերադառնալով, նստեց հյուրերի դիմաց, մի այլ տախտի վրա:

— Մեր այս աղքատության վրա մի զարմանա, Հրահատ եղբայր,—ասավ Գազավոնը, նկատելով որ նա զարմացած է տան տեսքով:— Ունեցածներս թաքցրել ենք, որ անօրեն մոխրակերների ձեռը չընկնի: Տնեստուն ընկած կողոպտում են. ինչ հավանում են՝ էլ տիրոջը չի պատկանում... Բայց այս թողնենք. դու այն ասա, Հրահատ եղբայր, որտե՞ղ էիր, ի՞նչպես եկար Դվին և ինչո՞ւ կույր դուռանի ձեռվ... Ախ, ներո՛ղ եղիր, ես խոստացա նախ կերակրել...

Այդ պահին կից սենյակից դուրս եկավ գլխաշալ կապած ոչ տարիքով մի կին՝ լվացվելու պարագաներով:

Առաջ գալով՝ նա անխոս գլուխ տվեց հյուրերին, վոքրիկ ծակոտկեն կոնքը դրեց հատակին և ինքը կանթ ու ծորակ ունեցող երկարավիզ ջրամանից ջուր լցրեց նրանց ձեռներին. և երբ նրանք լվացվեցին ու սրբվեցին՝ նա այդ պարագաները վերցնելով՝ նորից անձայն-անաղմուկ անցավ սենյակը և այնտեղից բերեց երկու ձեռով բռնած փայտե մի կլոր սկուտեղ, որի վրա չափված էին կավե փայլ տված ամաններ և կլոր կարմիր հացեր և պես-պես ուտելիքներ: Սկուտեղը հարդանքով դնելով տախտի վրա, հյուրերի առաջ՝ նա կրկին գլուխ դնաց:

Մինչ հոդնած ու քաղցած հյուրերը ճաշում էին դրաղվում՝ տանտերն ինքը մասնակցելով հացկերույթին, հետաքրքրություններ անհամբեր՝ նայում էր մերթ Հրահատին, մերթ Ջաքարեին, սպասելով կարծես, թե երբ պետք վերջացնեն, որ հարցումներ անի: Նա գիտեր, որ Հրահատը Մուշեղ սպարապետի թիկնապահներից մեկն էր, որ նրա հետ միասին դնացել էր Բիդլիս՝ թագաժառանգ Պապին բերելու, որ թագավորը՝ խարիսխյուքյամբ Պարսկաստանում կալանավորված հոր փոխարեն. հիմա նա հետաքրքիր էր իմանալու, թե ո՞րտեղից է գալիս Հրահատը, ինչո՞ւ է եկել, ի՞նչպես է կույր ձեռացել—գուսան դառել և ո՞վ է արդյոք նրա այդ ծեր առաջնորդը, որ ոչ մի բանով չէր դանազանվում իսկական գուսանից:

Երիտասարդ հյուրն ղդաց այդ և նկատեց ժպտալով.

— Հիմա՛, հիմա՛, Գաղափոն, հիմա կրավարարեմ քեզ:

— Վայելի՛ր, Հրահատ եղբայր, վայելիր, խնդրում եմ: Ես կսպասեմ...

— Ոչ, վարպետ Գաղափոն, տեսնում եմ քո հետաքրքրությունն ավելի մեծ է, քան իմ քաղցը,—տասվ Հրահատը նորից ժպտուն աչքերով տանտիրոջը նայելով և մի փոքր էլ ուտելուց հետո, վերջապես, առաջնորդ Ջաքարեին թողնց այդ սենյակում պատիվ-հանդստանալու, ինքը Գաղափոնի հետ անցավ մյուս սենյակը:

— Դու հանդստացիր, Ջաքար, ես ամենավերջ մի դրուցեմ վարպետ Գաղափոնի հետ: Դու այս ամենը դիտես, ճանճրալի կլինի նորից լսել:

Եվ երբ նրանք անցան կից սենյակը՝ Գաղավոնն այնպիսի բաներ լսեց, որ էլ չկարողացավ իր զարմանքը պահել:

— Ինչ... ճշմարի՞տ... Ուրեմն ստույգ են մեզ հասած լուրերը...

Եվ Հրահատն իրոք պատմում էր զարմանալի բաներ. առաջինը, թե Բիզանդիան Թագաժառանգ Պապին արդեն ճանաչել է Թագավոր և նույնիսկ տվել է օգնական զորք, որ հիմա հայկական զորքերի հետ, որ մի տարի առաջ նահանջելով մնացել էին Սպերքում, Տայքում և Դարանաղյաց գավառում, կռվում են պարսից դեմ, Մուշեղի և Պապի առաջնորդությամբ:

— Իրո՞ք,—հևաց Գաղավոնը:— Եվ կարողանո՞ւմ են հաղթել:

— Եվ կարողանում են, որովհետև պարսիկն այնտեղ մեծ ուժ չունի հիմա. ամեն տեղ պարտվում են և նահանջում: Եվ սպարապետը, որ լսել է, թե ինչպես Շապուհն իր հոր՝ Վասակ սպարապետի մահվիը տիկ է հանել և խոտով լցրած դրել է բանտարկված Թագավորի առաջ, ինքն էլ հիմա որտեղ պարսից զորավար է գերում՝ նույնպես տիկ է հանել տալիս և կռվի ժամանակ ընում պարսից զորքի առաջ, որ տեսնեն, թե հայերն էլ գիտեն վրեժ առնել: «Մեկի փոխարեն տասը, տասի փոխարեն հարյուրը» ասում է սպարապետը:

— Ճշմարի՞տ,—բացականչեց նորից Գաղավոնը զարմացած, հիացած, լսածներին կարծես չհավատալով կամ այդ ամենը հրաշք համարելով:—Իսկ դու, դու ինչո՞ւ ես զորքը թողել-եկել, երբ մերոնք հաղթական են... և ի՞նչպես նկար, և ինչո՞ւ այդպես զուսանակերպ ու կույր ձևացած...

— Սպասի՛ր, Գաղավոն վարպետ, սպասիր դժվար է բոլոր հարցերին պատասխանել մի անգամից,—ժպտաց Հրահատը և պատմեց, թե իրեն ուղարկել է սպարապետը, որ ժողովրդին հայտնի լուրերը գալու և հաղթելու լուրը, որ ամենքն ղեստա լինեն և պատրաստ, իսկ զենքի ընդունակներն անմիջապես քաշվեն լեռները ու անտառները, որ...

— Այդ ինչո՞ւ համար,— լրջացավ Գաղավոնը:

— Նրա համար, վարպետ եղբայր, որ պարսիկները հետապնդելիս՝ գերի չվարեն նրանց կամ չսպանեն: Ուրեմն մերոնք առայժմ պիտի թաքնվեն, որ մեր զորքի ժողովելուն պես՝ օգնու-

քյան հանձին նրան թիկունքից: Այսպես է ամբ ապարատի գործադրությունը:

— Իմաստուն կարգադրություն,—հիացավ ռաֆֆին:—Իսկ հիմա, հիմա որտե՞ղ են մերոնք,—չհամբերեց նա:

— Երբ ևկա, այսինքն՝ մի ամիս առաջ մերոնք դրավեցին Գաբինը և շարժվեցին դեպի Բազրևանդ:

— Ուրեմն դու ևկե՞լ ես պարսիկների միջով,—զարմացավ Գազավոնը:

— Ուրիշ ի՞նչ ճանապարհով կարող էի գալ:

— Բայց չտեսա՞ր:

— Անցա իրրև գյուղ դուման:

— Եվ չկասկածեցի՞ն:

— Նվազարանով դուման նրանց նույնքան հաճելի է, որքան և մեզ:

— Ուրեմն չարունակ կո՞ւյր էիր ճանապարհ և նվագում նրանց համար:

— Ոչ միայն նվագում, այլև երգում, ինչպես տեսար:

— Եվ հայերե՞ն այսօրվա պես:

— Ոչ,նրանց համար միայն պարսկերեն:

— Եվ չվնասեցի՞ն ձեզ:

— Ոչ միայն չվնասեցին, այլև մինչև խոր երեկոն ձայնակցում էին մեզ և պատվիրներ տալիս: Վաղարշապատում նույնիսկ պահանջեցին, որ մենք մնանք իրենց մոտ: Խոստանում էին լավ պահել, կերակրել: Բայց ես հրաժարվեցի, ասելով թե՝ նրանց հարկավոր է, որ նվագում եմ, այլապես սիրտ չունեմ, հայրս մահամերձ է Դվինում—պետք է հասնեմ:

Այս երիտասարդը, որ ինչպես պարզվեց, Մուշեղ ապարանցի թիկնապահներից մեկն էր, իրրև կույր դուման՝ իր ուղեկցի հետ քաղաքից-քաղաք, գյուղից-գյուղ անցնելով՝ հասել էր Դվին: Այդպես նա եղել էր Բազավան, Երվանդաշատ, Վաղարշապատ և շատ ավաններում ու գյուղերում, և ամեն տեղ պատմել էր նրա, երիտասարդ թագավորի գալը, Մուշեղ ապարանցու հաղթությունն ու կարգադրությունը և ամեն տեղից էլ կարողացել էր դուրս գալ անփորձ՝ չնորհիվ գուսանի իր կերպարի ու հանդգնությանը: Նրա ասելով՝ Մուշեղ ապարանցուց, կամենալով ոչնչացնել պարսիկների գրաված գա-

վառների ժողովրդին մոտալուտ ազատությամբ և ղգուշացնել թշնամուց սպասվող վտանգից, առաջարկել էր երիտասարդ զորականներին, թե ո՛վ հանձն կառնի մի այդպիսի անձնազոհ ու պատվաբեր առաքելություն: Պատրաստակամություն հայտնել էին շատերը, բայց սպարապետն ընտրել էր միայն հինգ-վեց հոգի: Դրանցից մեկը Հրահատն էր, որ այդ դերը հանձն էր առել նաև մի այլ նպատակով և սպարապետին խնդրել էր հատկապես՝ իրեն ուղարկել Դվին-Արտաշատ: Մյուսները դնացել էին այլ կողմեր, մի քանիսն էլ Պապի և Մուշեղի նամակները տարել էին լեռնազավառների հայ նախարարներին, որ մխանան պարսից դեմ սկսված կռվին:

Լսելով այս ամենը՝ ոսկերիչ Գազավոնը, համակ հետաքրքրություն դարձած, շարունակում էր իր ուրախ բացականչներն ու հարցումները. նրա հարցասիրությունը նույնիսկ այնտեղ հասավ, որ ուզեց իմանալ, թե ի՛նչ հագուստներ ուներ նոր թագավորը, ի՛նչ սուր է կրում և արդյոք թագ դնո՞ւմ է գլխին թե ոչ, կամ նոր թագուհին հե՞տն է, թե մնացել է Բիզանդիա. կամ որքա՞ն է հոտոմ զորքերի թիվը, կա՞ն նրանց հետ լավ զորավարներ, և որքա՞ն սիրով են մասնակցում կռվին:

Ստանալով այս հարցերի պատասխանը՝ Գազավոնը սակայն չէր բավարարվում և շարունակում էր. «Հետո՞, հետո՞... էլ ի՞նչ նորո՞...

— Մի այլ նորություն էլ ասե՞ք, Գազավոն,—ասավ Հրահատը,—որ իշխան Սպանդարատ Կամսարականը միացել է Պապին ու Մուշեղին և հիմա կռվում է պարսից դեմ:

— Սպանդարատ իշխանը՞,— տեղից վեր թռավ ոսկերիչը՝ այնպես զարմացած, կարծես հրաշք էր լսում:—Այն բանից հե՞տո, երբ Արշակ Թագավորը կոտորեց նրա տոհմը և նրա կալվածները բաժանեց ուրիշ նախարարների՞...

— Այո, միացել է հայրենիքի սիրուն:

Այդ մի քանի խոսքով Գազավոնը լավ չըմբռնեց իշխան Կամսարականի հետ կատարված փոփոխությունը, բայց հետաքրքրությունից մղված հարցրեց.

— Ուրեմն չուտով կազատվե՞նք պարսիկից:

— Այո, շուտո՛վ, Գազավոն, շուտո՛վ,— ասավ Հրահատը ինքնավստահ ու խորհրդավոր:—Ես շատ ուրախ եմ, որ քեզ

հանդիպեցին: Հիմա հարկ է ժողովրդի մեջ տարածել այս ամենը: Որքան հավատարիմ և վստահելի մարդ ունես՝ գործի դիր: Բայց զգույշ, ոչ մի խոսք դուստրի մասին:

— Դու հանդիսատ եղիր, Հրահատ սիրելի: Գազավոնը գիտե իր գործը:

Մի փոքր ևս զրուցելով՝ Գազավոնը դուրս եկավ, թողնելով որ հյուրը հանգստանա:

Դուրսը աշնան մութին արդեն հանդարտ լինում էր նվաճված մայրաքաղաքի վրա և հետզհետե սքողում մինչնաբերդն իր պալատներով, պարիսպներով ու ծառաստանով:

Հրահատը, մենակ մնալով, անցավ Զաքարիի սենյակը և պառկեց տախտի փափուկ թաղիքի վրա և, չնայած հոգնածությանը, չկարողացավ հանգստանալ: Այժմ նրան ուրիշ մտքեր էին հուզում: Սպարապետից խնդրելով՝ ուղարկել իրեն Դվին, Աբռաշատ—նա նպատակ ուներ միաժամանակ տեսնել իր հարսնացուին՝ Նազենիին, որից բաժանվել էր համարյա տարի ու կես առաջ. եթե չտանի— գոնե իմանա, թե արհավիրքի օրերին ո՛ւր է դնացել... Ու ինչպես ամրողջ ճանապարհին, այնպես էլ հիմա՝ Հրահատը չդիտեր ո՛րտեղ կլինի Նազենին՝ դինապործ Զոմայի աղջիկը,— Դվինո՞ւմ արդյոք, քաղաքի պարսպից դուրս գանվող իրենց տո՞ւնակում, թե մոր հետ հեռացել-ապաստանել է մի տեղ, և արդյոք ապահո՞վ տեղ... Նա մեկ ցանկություն ունեցավ հարցնել այդ Գազավոնին, բայց նախ համարձակ չհամարվեց խոսել իր զգացմունքների մասին, երկրորդ՝ համոզված չէր, թե Գազավոնը կարող է ճանաչել դինապործ Զոմայի կնոջն ու աղջկան:

— Առավոտո՛ւ,— հառաչեց նա,— առավոտը կպարզի ամեն ինչ...

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Դվինն, իրավ, այնպես չէր ավերվել նվաճողներից, ինչպես Հայաստանի մյուս քաղաքները, սակայն նրա դխով ավելի շատ ջուր էր անցել վերջին երկու տարում, քան որևէ ուրիշ մի քաղաքի դեմով:

Ամբողջ Բ.–ի հիմնադրած այս երիտասարդ մայրաքաղաքը, որի բարձր միջնաբերդը զարդարված էր չքեղ պալատներով և ամրամնավոր ու բուրգաշատ կրկնակի պարիսպներով, իսկ բուն քաղաքը ճոխացել էր մեծահարուստ նախարարների և քաղաքացիների մեծ ու փոքր շենքերով և որի շուրջը փռված էին փարթամ այգիներ, ծառաստաններ ու մեծատարած անտառներ,— ծանր, շա՛տ ծանր տպավորություն էր անում այդ օրերին: Այժմ նրա միջնաբերդում ու փողոցներում հայ դրանիկ զինվիրների փոխարեն նվաճողի ամբարտավան քայլերով վխտում էին պարսից զորականներ ու զինվորներ, իսկ սակավաթիվ դվինցիները երևում էին սովերների նման, վախվխելով. քաղաքում շատ տներ կամ փակ էին կամ կողոպտված ու դատարկ: Բայց ամենից ծանրը այն մխայությունն ու լռությունն էր, որ տիրում էր քաղաքում:

Մինչդեռ երկու տարի առաջ երիտասարդ քաղաքն ապրում էր մխանդամայն ուրախ ու եռուն մի կյանքով, ինչպես գարնան մեղվախնեթակ: Ծուրաքանչյուր քաղաքացի ուներ իր գործն ու զբաղումը, իսկ նրա քաոսակուսի հրապարակը չրջապատող ցածրիկ կրպակներում առավոտից մինչև երեկո աշխատում էին ամեն արհեստի վարպետներ—ճոներ, որ ոչխարի, գառան մորթիներից և եղջերուի ու այլ կենդանիների կաշիներից պատրաստում էին բազմատեսակ զգեստներ. հանդերձավաճառներ, որ պատրաստում էին պես–պես կապաններ թե՛ քաղաքացիների ու չինովնիների համար և թե՛ մուշտակներ ու թիկնոցներ նախարար-

ներքի ու անպուհների համար. մաշակարներ՝ ամեն ձեի կոշիկներ և հունական սանդալ-հողաթափեր. բրուտներ, որ շինում էին թաղման կալվի ամաններ՝ վիթխարի մեծավոր կարասներից մինչև ջրի փոքրիկ դավաթներն ու գինու կթղանները, որ թրծում էին հենց այդտեղ՝ քուրաների վրա, իսկ թամբագործներն արդեն իրենց արհեստանոցների դռների վրա թամբերի հետ ձիասեն մեծամեծ կեռ մևխերից կախում էին ամեն տեսակ վոժներ, սանձեր, պախուզներ, կաշե գոտիներ և բժժոժներով կապեր, որ կախում էին ուղտերի, ջորիների ու ավանակների վզից՝ երկար ճանապարհներն ուրախ և աշխույժ անցնելու համար: Հրապարակում հատկապես աչքի էին ընկնում գինեգործները, որ կռում-կոխում էին թաղմառեսակ գինքեր՝ նիզակներ, տեգեր, աշտիներ, նրաններ, նաև թաղպաճներ ու դանկապաններ և որսորդական իրեր ու զրնգիքներ... Ու այդ բոլորի աչխատանքը՝ արհձագործների մեծագղորդ աղմուկի հետ միասին լցնում էր հրապարակը մի ժխորով, որ թվում էր ոչնչով չափաք է խանգարվիր և այդպես շարունակվելու է անվերջ: Իսկ ճմևոնները քաղաքի աչխույժն ավելանում էր նրանով, որ թագավորն իր ամբողջ արքունիքով, ավագանիներով և թիկնապահ կամ դրանիկ զորքով վաղորշապատից կամ մի այլ թագավորանիստից տեղափոխվում էր Դվին և ապրում նրա մի քնարերգում մինչև գարնան կեսերը: Ճմևոն անցնում էին հանդեսներով, արհնախաղերով ու որսորդությամբ: Եվ այդ ամենը քաղաքին տոնական կերպարանք:

Շատով ամեն—դա երկու տարի առաջ էր—քաղաքի այդ ուրախ հանդիսավոր վոխվեց տագնապի, երբ սարսից արքայից-արքա Շապուհը խարնությամբ, բարեկամության պատճառ ինքնու համար, Տիրդոն հրավիրեց Մշշակ թագավորին և նրա անհատիկ սպարապետ Վասակին: Հայոց արքունիքն ու ավագանիները, նաև բանիմաց դիվինցիները, ճանաչելով Շապուհի խարդախ բնությունը և լավ իմանալով, որ նա դժգոհ է հայոց թագավորից՝ Բիզանդիային համակիր լինելու համար, լավ բան չէին դուշակում այդ հրավերից:

Եվ նրանք չսխալվեցին: Թագավորն և նրա սպարապետն ճանապարհ հասիվ մի ամիս անց՝ Տիզբոնից եկավ մի նոր

բարձրաստիճան պարսիկ սուրհանդակ՝ իր թիկնապահներով, թե արքայից–արքան սիրով իր մայրաքաղաքն է հրավիրում նաև հայոց տիկնանց–տիկին Փառանձեմ թագուհուն և ավագանի նախարարներին: Արքունիքը, թագուհու դլխավորությամբ, քննեց այդ հրավերը և որոշեց հրաժարվել արքայից–արքայի պատվից: դոնելով որ բարի նպատակով չէ արվում այդ հնորհը:

«Ինչո՞ւ է հանկարծ ժլատ, անբարյացակամ Շապուհն այսպես հյուրասեր դարձել,—ասում էին հայոց ավագանիները ու մեծորյարները:—Մի թե խնդիրներն այդքան բարդ են, որ չի կարող վճռել հայոց թագավորի և նրա սպարապետի հետ, որ հարկ է տեսնում հրավիրել նաև թագուհուն և ազդեցիկ նախարարներին»...

«Գուցե պատիվները տալու համար,— ենթադրում էին ոմանք:—Թերևս ուզում է հայերի համակրանքը թևքել իր կողմը՝ պատիվներով ու պարգևներով»:

«Սակայն այդ պարգևներն ու ընծաները նա կարող էր ուղարկել Դվին և ոչ թե կանչել ծանր ու տաժանելի ճանապարհ կտրելու», առարկում էին մյուսները:

Միակ մարդը, միակ ավագանին, որ կողմնակից էր պարսից արքայի հրավերն ընդունելուն— դա Դղակ Հայր–մարդպետն էր՝ պալատի և թագավորական կալվածների կառավարիչը. նա գտնում էր, որ հայ արքունիքը չպետք է իր հարաբերությունները լարի պարսից հետ, այլ, ընդհակառակը, բոլոր միջոցները պետք է իր գործ դնի՝ բարեկամ մնալ հին և զորավոր այդ հարևանի հետ: Լինելով պարսկասեր և առելով Բիզանդիան ու բիզանդասերներին, մի բան, որ նա չէր թաքցնում ոչ ոքից— Հայր–մարդպետը առիթ չէր խափցրել հայտնել հոնոհաներ ավագանիներին, ասելով թե՝ «մենք սիրով վաղում ենք Բիզանդիա, ուր մեռցնում են հայ հոգին, բայց չենք ուզում դնալ Տիգրան, որից կախված է հայ մարմնի ապահովությունը», և ավելացրեց մոտալ գուշակի նման.

— Ոչ, թագուհի, ես գտնում եմ որ ավելի լավ է գնալ և բարեկամ մնալ պարսից, այլապես ծանր և ողբալի կլինին հետևանքները...

Բայց թագուհին նրան չլսեց, նկատելով որ այդ հրավերի մեջ ինչը չի տեսնում մի լավ բան, այլ ընդհակառակը, դա

իրեն թվում է շատ կասկածելի. հետևաբար հրավերն ընդունե-լը—չնասակար:

Եվ Թաղուհին չէր սխալվում:

Մինչ այդ, Շապուհի հրավերից մի քանի օր հետո, եկավ և հայ սուրհանդակ, ուղարկված մի դերի հայ նախարարի կող-մից, թե Շապուհը մեծ զորք է պատրաստում հայոց աշխարհի վրա հարձակվելու, որ վերջ տա նրա պետականության և մի-գամ ընդմիշտ հանի նրան Բիզանդիայի ազդեցությունից և են-թարկի իրեն. որովհետև նա տանել չէր կարողանում և նրան պար-զապես կատաղեցնում է այն, որ հայերը բավական չէ կրոնով կապվել են իր մշտական թշնամու— Բիզանդիայի հետ, կապվում են և քաղաքականապես: Արյաց արքային, ասում էին, անհանդուրժողականություն է և այն, որ հայ եպիսկոպոսները մեծ խըմ-բերով գնում են Բիզանդիա՝ դիտություն և գենքի արվեստ սովո-րելու: Ծեր արքային վրդովում էր հայերի այդ մոլի հոռոմա-սիրությունը, որին նպաստում էր առանձնապես հայ հոգևորա-կանությունը: Շապուհը դրա մեջ, ասում էին, տեսնում է մեծ վտանգ, թե հայերը ոչ մի կերպ չհամեմատեցնելով ու կապվելով իր հետ, իր թշնամիներին՝ բիզանդացիներին կամաց-կամաց մո-տեցնում են իր երկրի սահմաններին: Դրա ապացույցներից մեկը նա համարում էր այն, որ Արշակը հալածում էր պարսկասեր հայ նախարարներին, զրավում էր նրանց կալվածները կամ հե-ռացնում արքունի ծառայությունից, ինչպես վարվել էր և Մե-րուժան Արծրունու հետ, որ վասպուրականի գավառի մի ընդար-ձակ մասի տերն ու իշխանն էր, մի զորեղ ու ազդեցիկ նախա-րար. սա ոչ մի կերպ չէր ուզում ենթարկվել—հնազանդել Արշա-կին, որ ուզում էր բոլոր նախարարներին կախված պահել իրե-նից՝ իր իշխանությունից, զայրացած էր նա մանավանդ Արշա-կի այն պատճառով, այն նոր քաղաքի, ուր Թագավորի կար-գադրությամբ հավաքվում—բնակվում էին նախարարներից դըժ-գոհ հպատակները—անազատները ու հանցագործները, կալվա-ծական չինականները... Եվ ահա Շապուհը, դրդված մասամբ նաև հայ Թագավորից դժգոհ այդ նախարարների սադրանքնե-րից, որ Հայաստանից փախել և, կրակապաշտության ընդունե-լով, ապաստանել էին պարսից արքունիքում,— ուզում էր մի հարվածով, երկրի իշխանությունը բռնատարկելով կամ դերի

պահելով, լուծել հին այդ խնդիրը և Հայաստանը դնել իր աղեցութեյան ներքո:

Շապուհի այս մտադրութեյունները վաղուց գիտեին հայ ավագանիները և նախարարներից շատերը, բայց հիմա արդեն հայ սուրհանդակի բերած լուրերից հասկացան, որ Արշակ Թագավորն ու Վասակ սպարապետը դերված են պարզապես, ուստի և անմիջապես պատերազմի պատրաստութեյուն տեսան, սպարապետի պաշտոնը հանձնելով Վասակի որդի Մուշեղին, որ թեև երիտասարդ, բայց ամենից խիզախ զորավարն էր հայ զորականների մեջ, Բիզանդիայում կրթված և զինվորական վարժութեյուն ձեռք բերած: Իսկ Փառանձեմ Թագուհին, կարդադրելով պալատի քանկարժեք իրերը և արքունական դանձերի մի մասը թաքցրել մինչև բերդի գաղտնարաններում (նույնը անել և Վաղարշապատում ու Արտաշատում), ինքը արքունական դանձերի մի մասն առած, տասը հազարանոց մի զորագնդով գնաց—ամրացավ կամսարական նախարարների Արտագերս ամրոցում, որ հայոց բերդերի մեջ համարվում էր ամենից անառիկը, չնորհիվ իր դիրքի, որ Արաքսի ափին բարձրացած ժայռոտ լեռան գլխին լինելով՝ իշխում էր ողջ շրջապատի վրա:

Թագուհու և ավագանիների գնալուց հետո— Դվինում կյանքը մարեց կարծես ու սկսվեց մի տագնապալի ու սպասողական վիճակ.—ինչ է լինելու: Մինչև բերդի պալատում մնացել էին միայն երկու ավագանի—Դղակ Հայր-մարզպետը, որ հայտարարեց, թե ինքը, որպես պալատի կառավարիչ, պարտավոր է մնալ պալատը պահպանել ամեն տեսակ վտանգից ու կողոպուտից, և ծեր նախարար Դավիթ Գնունին, որ զառամութեյան պատճառով չկարողացավ հեռանալ, օրըստօրե սպասելով մահվան: Սրանց հետ մնացին իշխարկե շատ սպասավորներ, և հատկապես իր Հայր-մարզպետի սպասավորները, որոնց թիվն անցնում էր հիսունից:

Թագուհու՝ բերդը քաշվելուց հետո սակայն մի քիչ չանցած՝ դվինցիները լուր առան, թե պարսիկները հայոց սահմաններից ներս մտնելով՝ պաշարել են Արտագերսը: Բայց մի քանի ամիս զրոհելով բերդի վրա և բերդապահ զորքի դիմադրութեյան հանդիպելով՝ երբոք ուսնելիքի և կերի համար սկսեցին տագտաուկել անպաշտպան հայ գյուղերն ու քաղաքները: Եվ գրավե-

ցին քաղաքներից չատերը, բայց Դվինը, թեև չուներ մեծ կայսրոր, պաշտպանվում էր դյուղերից եկած չինականների օգնությամբ և չէր թողնում պարսիկներին մոտենալ անդամ պարիսպներին: Սակայն Հայր-մարդպետը համոզեց պաշտպաններին, թե և վերջը ապարդյուն է լինելու նրանց դիմադրությունը պարսից զորքերի դեմ, պետք է բանալ քաղաքի դռները, այլապես նրանք ջնջվելուն մայրաքաղաքը և մեծ կոտորած կանուն ժողովրդյան մեջ»: Նշանավոր ավազանու խոսքերն ունեցան իրենց ազդեցությունը, և հոգնած ժողովուրդը պայման դրեց, թե իրենք քաղաքի դռները կբանան այն ժամանակ միայն, երբ Հայր-մարդպետը երաշխիք առնի պարսիկներից, որ նրանք չեն վնասի քաղաքը և քաղաքացիներին:

Եվ իսկապես միայն այն ժամանակ, երբ Հայր-մարդպետը սպիտակ դրոշով բարձրացավ պարսպի գլուխը և ապահովության երաշխիք առավ պարսիկներից—դվինցիները բացին քաղաքի երկաթյա դռները: Սակայն այն միջոցին, երբ պարսիկները մըտնում էին Ավարդ դռնից—քաղաքի մյուս պարսպադռներից դուրս եկան շատ դվինցիներ իրենց ընտանիքներով և Խոսրովի անտառով հեռացան լեռնագավառները—Գառնի, Վարաժնունիք և Գեղարքունի, ուր տակավին թշնամի չկար և չէր կարող հասնել:

Իսկ մի օր հետո անսպասելի Դվին եկավ Մերուժան Արծրունին ինքը՝ ճերմակ նժույգի վրա, պարսից Զիկ զորավարի հետ, բաղմաթիվ թիկնապահներով շրջապատված ու, Հայր-մարդպետի առաջնորդությամբ, դնաց-բարձրացավ միջնաբերդ: Խոսում էին, որ Հայր-մարդպետը նրան պահում ու պատվում է այնպես, ինչպես թագավորի, և թե Մերուժանն, իր հերթին, շատ բարեհաճ է դեպի նա:

Քաղաք մտնելու հետևյալ օրն իսկ Մերուժանի առաջին գործը եղավ կարգադրել, որ վառեն-ոչնչացնեն եկեղեցիներում եղած քրիստոնեական գարդերն ու սպասները, աղուսաններ հատատեն և քաղաքացիներին առաջարկեն, իսկ թե չհնազանդվեն, հարկադրեն՝ երկրպագել անշեջ կրակին, որ սիտի բոցբոցվեր աղուսանների մեջ: Քաղաքացիները, որ մասամբ հեռացել էին, այդ կարգադրությունը նպաստեց, նորից նոր խմբերով հետևալուն. նրանք հեռանում էին իրենց միայն հայտնի դաղտնի անցքերով դեպի լեռնագավառները կամ պարզապես

հաշվում էին քաղաքի շուրջը տարածվող իրենց այգինները, ուր յուրաքանչյուրն ուներ փոքրիկ մի տնակ կամ կավաշեն մի հնձան: Իսկ մնացողները մնում էին տեերում փակված և վողոց չէին դուրս գալիս, որ չհարկադրվեն երկրպագել կրակին: Եվ քանի դեռ Արտագերսը պաշտպանվում էր՝ դվինցիները անվախ էին և անգիջում: Նրանց մեծ հույս էր ներշնչում մանավանդ այն, որ փառանձեմ Թագուհին ինքը բերդը պաշտպանելով, Մուշեղ սպարապետին ուղարկել էր Բիզանդիա՝ վաղես կայսրից օգնություն խնդրելու և Թագաժառանգ Պապին, որ քանի տարի էր ինչ ուսանում էր հռոմեների մայրաքաղաքում, Հայաստան բերելու:

Սրանք բոլորը լուրեր էին, բայց այս լուրերը ապրեցնում և ոգևորում էին դվինցիներին, թե ուրեմն փրկությունը մոտ է, դիմանան մի փոքր էլ՝ կազատվեն իրենց նեղիչներից: Բայց ահա լսեցին մի օր, թե Մերուժանը Հայր-մարդպետին ուղարկել է Արտագերս՝ Թագուհուն համոզելու, որ անձնատուր լինի: Թագուհին սակայն ինչպես և վայել էր Սյունյաց Նահապետ Անդոք իշխանի դստեր, հանդիմանել էր Հայր-մարդպետին այդ ամոթալի առաքելության ու առաջարկի համար և հեռացրել բերդից:

Այս լուրը, ճիշտ էր թե սխալ, հպարտությամբ լցրեց դվինցիների սիրտը: Սակայն մի քանի օր հետո, չիմացան նրանք ինչ անցավ-դարձավ, եկավ մի նոր տխուր լուր, թե Արտագերսն ընկավ և Թագուհին տարվեց գերի: Կոտրվեց դվինցիների հույսերի սյունը: Նրանք, որ սպասում էին, թե Մուշեղ սպարապետն ահա կգա հայկական ու հունական զորքով և կգչի աոելի պարսիկներին և նույնքան աոելի Մերուժանին— հանկարծ... Ոչ միայն այդ չեղավ, այլև Թագուհին անգամ գերի տարվեց: Խոսում էին, երևի Հայր-մարդպետը մատնեց կամ նպաստեց, որ բերդն ընկավ. իսկ ոմանք պնդում էին, թե անկմանն պատճառը եղել է այն համաճարակ «ևս ցավը», որ մինչ այդ մտած է եղել բերդականների մեջ և կոտորել է մեծ մասին: Ասում էին, որ տասերեք ամսվա դիմադրությունից հետո և այդ ցավի հետևանքով՝ բերդում մնացել էին մի բուռ պաշտպանները Թագուհու հետ միասին և պարսիկները ահա Հայր-մարդպետից իմանալով այդ՝ գրոհել էին բերդի վրա և վերցրել այն համառ

դիմադրությունից հետո, որ ցույց էին տվել այնուամենայնիվ մնացած բերդականները՝ իրենց բարձր դիրքից կոտորելով չատ պարսիկներ, մինչև որ սրանց հեղեղը դուռը ջարդել էր և խուժել ներս... Իսկ մինչ այդ, պատմում էին, որ խիզախ Թագուհին մաքառել էր ամեն տեսակ դժվարության դեմ, անքուն գիշերներ անցնելով ոգևորել էր բերդականներին այն հուսադրիչ լուրերով, որ մի ամբոխ չարունակ սուրհանդակները, գաղտնի ստորերկրյա անցքերով բերում էին Թագուհուն, թե Մուշեղ սպարապետն ու զահաժառանգ Գագը խնդրում են դիմանալ մի փոքր էլ և իրենք օգնության կհասնեն Սպերքի և Տայքի հայ մարտիկներով և բիզանդական մի բանակով։ Եվ բերդականները դիմանում ու դիմադրում էին՝ որքան կարողանում էին, ստեղծում էին բազմամարդ բերդապահ զորքերի երևույթ, ցերեկը մինչնուշ մարդիկ չարունակ բարձրանում էին պարիսպները և ինչում, ու այն տպավորությունն էր ստացվում, թե դա մեծաքանակ մի զորք է՝ միշտ արթուն ու զրաստ և զոհաբերության պատրաստ... Սակայն ոմանք ևնթադրում էին, որ բերդի սահմանապահության այդ դաղտնիքը թշնամուն կարող էր բացել միայն Հայր-մարդպետը, որ ներս մտնելով իբրև բարեկամ, դուրս էր գնացել որպես թշնամի...

Ինչպես էր լսացվել այդ՝ դժվար է ասել, սակայն Հայր-մարդպետի վերադառնալուց հետո, պարսիկները, Մերուժանի և Զիկ զորավարի կարդադրությամբ, զրոհել և վերցրել էին կամարարական նախարարների այդ անառիկ ամրոցը, ուր դեռ, կառուցման օրից, թշնամու ոտ չէր մտել և որի պատերի տակ հպարտորեն հառնայիցիների հետ սպաշվել էր նաև Օդոստոս տիեզերակալի թոռ Գայոս կեսարը։

Ու այնուհետև կատարվել էր աղետներից ծանրագույնը։ Մտնելով բերդը՝ պարսիկները կոտորել էին սակավաթիվ բերդականներին, կողոպտել արքայական դանձերը և ապա գերի տարել մնացած Թագուհուն՝ իր նաժիշտների հետ միասին։

— Դուք գերի պիտի գնաք Պարսկաստան,—ասել էր նրան պարսից զորավարը, մտնելով Թագուհու սենյակը։

— Իսկ ո՞ւմ կարդադրությամբ,— հետաքրքրվել էր խիզախ Թագուհին, չկորցնելով իր զարմանալի տառնասրտությունն ու ինքնությունը։

— Իմ տեր Շապուհ արքայի,—եղել էր պատասխանը։

— Ես ուրիշ բան էլ չէի կարող սպասել ձեր ներկա արքայից, որ խարեությամբ կանչեց իմ թագավոր ամուսնուն և բանտարկեց,—ասել էր թագուհին հպարտ։—Այո, մեր և ձեր տարբերությունն այն է, որ մենք ձեր արքայի գերի ընկած կանանոցը վերադարձնում ենք ձեր երկիրը, իսկ դուք գերի եք առնում մի մենակ թագուհու։

— Դուք միայն թագուհի չեք, տիկին Փառանձեմ, այլև զրկավար,—նկատել էր պարսիկ հրամանատարը։—Դուք այս բերդից մեր դեմ կռվեցիք տասերեք ամիս շարունակ և քիչ մնաց չհասցրիք արյաց արքայի զորքերին...

— Այո, կռվեցի և ոտակավին կշարունակեի կռվել, եթե հանգամանքները ներեին,—ասել էր անվախ թագուհին և անմիջապես ավելացրել.—Կարող եք կատարել ձեր արքայից—արքայի հրամանը...

Եվ հայոց խիզախ թագուհուն տարել էին գերի։

Այս լուրը հպարտության հետ միասին դվինցիներին համակեց խորին տխրությամբ ու հուսահատությամբ։ Շուտով դրան ավելացավ և այն, որ պարսիկները, Արտագերսի անկումից հետո, ասպակացրին իրենց խստությունները թե Դվինում և թե շրջակա գյուղերում։ Առաջ եթե բավականանում էին այդ ինները կողոպտելով, հիմա արդեն, հաղթությունից սանձարձակ, վազողներն ընկած, որտեղ ծուխ էին տեսնում՝ վազում էին մոնում բակը կամ տունն, ենթադրելով որ կերակուր է եփվում, ու եթե իրոք կերակուր էր լինում—կաթսան վերցնում էին կրակի վրայից ու ուտում, իսկ երբ թխվող հացի հոտ էին առնում—խմբերով խուժում էին թոնրատուն և մի կողմից ուտում, մյուս կողմից թխած հացերը հավաքում՝ դնում թևերի տակ ու հեռանում հայհոյելով... կամ՝ կին տեսնելիս՝ վազում էին նրանից, որ իր տան մեջ, իր ընտանիքում անարգեն նրան. դիմադրող տղամարդկանց ծեծում էին կամ սպանում, տեսնելով թե սուրբ տարուշանը հայհոյեց, որովհետև այդպիսի հայհոյանքի համար իրավունք էր տրված սպանել անխնա։ Մյուս կողմից Մերուժանը քաղաքներից ու գյուղերից հավաքում-կալանավորում էր երկրում մնացած հայ եպիսկոպոսներին, վարդապետներին ու քահանաներին և ուղարկում Պարսկաստան, որ

դամասևները դարձնի անդլուխ. որոնում—այրում էր հունարեն դրքեր և ընդվզմացողներին պատժում չարաչար:

Այս խառնությունների հետևանքը եղավ այն, որ քաղաքի ժողովուրդը նորից սկսեց ծածուկ փախչել այգիներն ու անտառը, ուր կար դոնե աղատ շնչելու ապահովություն, իսկ մնացողները հուսահատ հարց էին տալիս իրար, թե ինչ է լինելու արդյոք. Թագավորը բանտարկված, Թագուհին գերի, Թշնամին ներկում. ո՞վ պիտի փրկի երկիրը. վերջը չէ՞ արդյոք հայոց աչխարհի և հայ ազգի:

— Կորա՛ծ ենք, կորա՛ծ, ամեն ինչ վերջացավ. չկա էլ մեկ փրկություն,— ասում էին դվինցիները դառն հուսահատությամբ:

Այդ ծանր օրերին էր ահա, երբ լուր տարածվեց, թե Թագաժառանգ Պասը դարձել է Թագավոր և Մուշեղ սպարապետի հետ միասին հայոց և հոռոմաց զորքերով կռվում է արդեն պարսից դեմ: Դվինցիները կարծես հարություն առան կամ անդամալույծ էին՝ առողջացան և սկսեցին զաղտագողի, առանձնատեղ մռնչին, դիշերները սողեսող գնալ իրար մոտ և չընջալ մեխյանց.

— Ներո՛ւթյուն, կենդանությո՛ւն: Պասը դարձել է Թագավոր և դալիս է Մուշեղ սպարապետի հետ միասին. հայ և հոռոմ զորքերով կռվում են պարսից դեմ: Առել են Կարինը, կռիվ է Բագրևանդի մոտ... Զգո՛ւյշ մոխրապաշտներից, որ չտանեն մեկ դերի... Գնանք անտառը Խոսրովի...

Սկզբում մարդիկ չէին հավատում. թվում էր՝ պարսիկները այդ տարածում են դեսամամբ, որ իրենց փորձեն և կամ կոտրեն կամ դերի վարեն: Այդ կարող էր լինել և Մերուժանի խարդախությունը և դրա համար զգուշացնում էին իրար.

«Ը՛ռա... ամեն բանի չեն հավատա: Եթե դալիս լինեն՝ պարսիկները ու Մերուժանը մեզնից շուտ կիմանան»:

— Բայց ասուդ է ասում են:

— Ո՞վ է ասում:

— Ոսկերիչ Գաղավոնը. նա լսել է դուսաններից, Մուշեղ սպարապետի թիկնապահից...

Ոսկերիչ Գաղավոնը՛... Այդ անունն արդեն հավատ էր ներշնչում, և մարդկանց երևակայությունը վառվում էր. շատերը

այլևս առարկելու բան չգտնելով՝ երազում էին տեսնել սպարապետի այդ թիկնապահին, խոսել հետը, ամեն բան իմանալ անձամբ ու մանրամասն:

Բայց դա, իհարկե, անկարելի էր. ոչ մեկն սպարապետի թիկնապահին, անգամ Գազավոնին դժվար էր գտնել հիմա...

Սակայն Դվինի եկած լուրերը սրաթև թռչնից էլ արագ մի քանի օրվա մեջ հասան ամեն կողմ և ամենքին—ոչ միայն քաղաքում դռնվողներին, այլև այգիներում ու Խորովի անտառում ապաստանած դվինցիներին ու չինականներին:

Եվ ամեն տեղ տալիս էին Գազավոնի անունը, որովհետև նա ոչ միայն լինքը, այլև իր ծանոթներին գործի էր դրել հայրենակիցներին ոգևորելու և զգուշացնելու: Դվինում հատկապես այդ լուրն առաջ բերեց մի տարօրինակ շարժում. ցերեկը հանված մեռած քաղաքը՝ կենդանանում էր գիշերը, երբ բազմաթիվ սուվերներ մագլցում էին այս կամ այն պատը, սողում նեղ փողոցներով և գնում դեպի քաղաքի պարիսպները և, իրենց միայն հայտնի ճանապարհներով, անցնելութանում այգիներում, տպա մոնում անտառ, որ տարածվում էր Մեծամորից մինչև Գառնի, մինչ ակունքները Ազատ գետի, մի խիտ անտառ, որ պարսիկներն առայժմ չէին համարձակվում ոտ դնել, որովհետև մեկերկու անգամ գնացածները ետ չէին դարձել: Անտառը ոչքան ահ էր ազդում պարսիկներին, նույնքան և վստահություն էր դվինցիներին, խոստանալով հանդիստ ու ապահովություն: Ու նրանք գնում էին շարունակ՝ իրար ետևից, մեծամեծ խմբերով. տղամարդկանց այժմ միանում էին և կանայք:

Իսկ լուրերը գնալով աճում էին, բազմապատկվում, ծավալվում.

— Մերոնք գալիս են. հաղթում են: Մտել են Բագրևանդ, կռվում... Մոտենում են Արտաքին...

Թե դրանցից ո՛րն էր ճիշտ, ո՛րը սխալ, ստուգել դժվար էր, և չկար մեկը, որին հարցնեին մի բան, մի խորհուրդ. Հայր-ամրապետը փակվել էր մի ինչ-որ սենյակում ու չէր ելնում քաղաք, իսկ մինչ-որ դեղ ոչ-ոք չէր համարձակվում. սակայն դվինցիները հիմա տեսնում էին այնպիսի նշաններ, որ կարծես հաստատում էին այդ ամենը. նրանց թվում էր, որ պարսիկներ-

րը հիմա մոտալ են և չփոթված. նրանք ձեռնարկեցին նոր խըզ-
տություններ—պահակների թիվն ավելացրին քաղաքաղռների
մոտ ու ճանապարհների վրա, ապա սկսեցին խուզարկել տնե-
րը...

Ու մի օր էլ—պա դուսանի նկած յոթերորդ թե ութերորդ
օրն էր—դվինցիները, ավելի շուտ Դվինի ծերերն ու պառավնե-
րը տեսան, թե ինչպես Մերուժանն իր ճերմակ նժույգի վրա,
զինվորական զգեստ ու զրոյը կապած, պարսիկ թիկնապահներով
շրջապատված իջավ մշկնաբերդից և հրապարակում՝ պարսից մի
զորապետի դլուխ անցնելով՝ դնաց դեպի քաղաքի Սվազ դուռը,
որ տանում էր Վաղարշապատ:

Ինչպես միշտ, այդ պահին էլ նա գեղեցիկ էր իր ճերմակ
ձիու վրա. նրա կեցվածքը— դլուխն ու իրանը ուղիղ պահած—
մնծամտություն էր. թուխ դեմքին վառվռուն սև, խոշոր աչքերը
սիրական հայացք ունեին. գեղեցիկ էին մանավանդ բարձրադիր
հոնքերը, որ տանս ծիծեռնակի թևեր, պարզվել էին լայն ճա-
կատի վրա՝ ոսկեցոլուն սաղավարտի տակ: Այնպես որ նրան նա-
յողը զարմանում էր և չէր հավատում, որ այդպես գեղեցիկ
մարդն այդքան չար է ու դաժան:

Նրա դնալը ոչ-ոք հարկավ չէր համարում վախուստ, որով-
հետև նրա զորքի մի մասը—կայազորը, ինչպես ասում էին,
մնում էր Դվինում: Մշկնաբերդում նա թողել էր, ասում էին,
և իր անձնական իրերը, հազուստներն ու ծառաներին: Ու, լու-
բերի ազդեցության տակ, ենթադրում էին, որ նա հավաքելն
դնում է Մուշեղի դեմ:

— Գնաս՝ նա չգա՞, անիրավ մոխրապաչտ,—թաքուն, նրա
հանից, մուր էին տալիս պառավներն երեսից բակերից ու տնե-
րից:

Իսկ Հայր-Մատրպետը, որ այդ ժամանակ պալատումն էր
և իրեն պահում էր միշտ ծանր ու մնծ, ինչպես Արշակ Թագա-
վորի օրով, նա նույնպես տեսավ Մերուժանի մեկնումը և, ըստ
սովորության, ոչ-ոքի չհարցրեց, թե ո՛ւր է հաճում դնալ
Արծրունյաց տերը կամ ե՞րբ կվերադառնա արդյոք: Նա իր լայն
թիկնոցն ուսերին ու դլխատաց դուրս եկավ այսնաչար ճեմելը-
քը, նայեց նրա հանից և դլուխն օրորեց: Նրա ականջին նույն-
պես հասել էին այն բոլոր լուրերը, ինչ պատում էին քաղա-

քում՝ Պապի և Մուշեղի մասին, և այն, որ պարսից զորքը Կոտայքից, Արագածոտնից և անգամ Արտաշատից դնում էր դեպի Վաղարշապատ ու Երվանդաշատ: Լսել էր նույնպես, որ Մուշեղն ու Պապը կարինում և ապա Բաղրեւանդի գավառում, տարել էին մի քանի լուրջ հաղթություններ, անգամ քշել էին նրանց երկու հարևոր բերդից: Բայց այդ բոլորը համարում էր լուրեր և ապասում էր առուգման: Պալատում մնացած մյուս ծերունի ավագանի Դավիթ Գնունին, որ նույնպես լսել էր այդ ամենը պալատի ծառաների միջոցով, այժմ նույն այնաշար ճեմելիքում, կամ ինչպես ընդունված էր ասել՝ սարալույթում նստած, նայում էր անխոս ճեմող Հայր-մարդպետին և ուզում էր խոսակցել հետը, բայց կարծես .հարմար չէր տեսնում. Նույնը ցանկանում էր Հայր-մարդպետը, սակայն հապաղում էր ասյմ:

Վերջապես, նա չկարողացավ իրեն պահել և հարցրեց.

— Նոր լուրեր լսե՞լ ես, տեր Գնունի:

— Ասում են՝ գալիս են, Հայր-մարդպետ: Այո՛:

— Ասո՛ւմ են, տեր Գնունի, ասո՛ւմ են:

— Ուրեմն լուրե՞ր են միայն: Ստույգ չէ՞, Հայր-մարդպետ:

— Ես նույնպես լսել եմ, տեր Գնունի:

— Իսկ Մերուժանի և պարսից գնա՞լը:

— Գնում են, այո՛:

— Իսկ չգիտես ո՞ւր են գնում և ինչո՞ւ:

— Այդ չեմ կարող ասել, տեր Գնունի: Չգիտեմ:

Ջառամ ծերունին ուղղվեց աչխույժով:

— Իսկ ես գիտեմ, Մարդպետաց տեր: Թվում է ինձ, որ Ձերոնք գալիս են և պարսիկները հետանում են փուքթով: Բոլոր նշաններն այդ են վկայում: Ի՞նչ է քո կարծիքը:

— Կարող է պատահել և այդ,—պատասխանեց Հայր-մարդպետը, ինչպես պատասխանում են երեխային՝ մասամբ խուսափողական և զգույշ, բայց կարծես ուրիշ մտքերով տարված, ինչպես թվաց ծեր Գնունուն, որ այդ միջոցին իր թուլ, արևի չողերից վախեցող աչքերով ուշադիր նայում էր Դղակ մարդպետին, սպասելով նրա լուրջ պատասխանին:

Ու մի առժամ երկուսն էլ լռեցին: Հայր-մարդպետը երկար

Քիևնոցի քաղաքներն անխուսք թողած, որ քալում էին մոդային հասակին, քայլում էր պալատի այդ յունաշատ սարավուքում, Հնոքերը Քիևնոցի տակ մեղքին դրած, մտախոհ ցած նայելով, կարծես համրում էր մոդային քառակուսիները:

Իսկ ծեր Գնունին աչյան արևի ջերմության հաճույքից մասած աչքերը դրներն կկոցած նայում էր պալատի ավազանի կատարչին և նույնպես կարծես որոճում էր ինչ-որ խոհեր, որոնք, թվում էր, նրա սակավարյուն ու նիհար դեմքը մերթ պայծառացնում էին, մերթ մթագնում:

Հանկարծ նրա դեմքին ու մարած աչքերում ճաղաց մի հեզնախառն ծերունական ժպիտ և նա նորից դարձավ Հայր-մարդպետին.

— Իսկ ևթե դան՝ ինչ պիտի անես, տեր մարդպետ,— հարցրեց նա, ընդհատված խոսակցությունը շարունակելու անհնազան ցանկությամբ:

Եվ Հայր-մարդպետը, չդիտես խոհերով տարված՝ լավ չլսեց նրա հարցումը թե լսեց՝ չուզեց կարևորություն տալ, և հարցրեց իր հերթին.

— Ովքե՞ր դան, տեր Գնունի:

— Նոր Թաղավոր Պապը և Մուշեղ սպարապետը,—ձայնը բարձրացնելով՝ որոշակի շեշտով արտասանեց ծերունին, կարծես վիրավորված, որ նա իրեն չէր լսել թե չէր հասկացել:

— Ինչ պիտի անեմ, հարցնում ես,—և. Հայր-մարդպետը կանգ առնելով՝ հեզնանքով նայեց ծերունուն:—Այն, ինչ արել եմ միշտ, տեր Գնունի, ի՛նչ արել եմ միշտ,— կրկնեց նա, տանե նրա համար, որ ծերունին տասածը լավ հասկանա:

— Բայց որ Մերուժանի՞ն...

Ծերունին կարծես ուզում էր տալ «ընդունեցիր և ծառայեցիր», սակայն Հայր-մարդպետը, թվաց, նրա միտքը հասկանալով՝ վրա բերավ խոսքը.

— Ով մտնի այս պալատը, տեր Գնունի, ես կհատավարվեմ... Ես պարտավոր եմ պահել պալատը...

Թեև պատասխանեց, բայց և անմիջապես զղաց, որ դա խելոք պատասխան չէր. և ծերունու հարցումը նկատելի հուզեց նրան ու մտահոգեց: Իսկապես, մտածեց նա, կարող է պատահել երևոսարդ Պապը, որ ինչպես ասում են, թագավոր է ա-

դեն, և Մուշեղը, որին նա չէր սիրում, համարելով նրան չար Մամիկոնյաններից չարագույնի՝ վատակ սպարապետի որդի— վրեժխնդիր լինեն իրենից նրա համար, որ Մերուժանին ընդունել և տեղ է տվել Արշակունիների պալատում: Բայց եթե մի ուրիշը լիներ իր տեղը՝ մի՞թե կարող էր այլ կերպ վարվել... Միևնույն է, Մերուժանը պիտի մոներ այս պալատը և գուցե ավելի վատ վարվեր պալատի հետ, եթե ինքը չլիներ այստեղ... եթե պատահի մի օր խոսք բացի մեկը այդ մասին՝ նա կասի, այո, որ այս պալատն իր չնորհիվ է կանգուն մնացել. չլիներ ինքը՝ Մերուժանը հողին կհավասարեր այն, ինչպես Վաղարշապատի պալատը և ուրիշ շենքեր. մի՞թե այս չի հաստատում ծերունի ավազանի Գնունուն:

Եվ Հայր-մարդպետան անհրաժեշտ համարեց հասկացնել այդ բանը նրան.

— Գիտես, Գնունյաց տեր,—ասավ նա նորից կանգ առնելով ծերունու առաջ,— եթե դու և ես չլինեինք այստեղ, Մերուժանը, որ կատաղած է Արշակունիների և հատկապես Արշակ թագավորի դեմ, քարը քարին չէր թողնի այս պալատում. կկործաններ հիմնահատակ: Կարող եմ ասել, որ իմ և քո ներկայությունը մեղմեց նրա բարկությունը, իսկ ես իմ առանձին դրույթների մեջ դսպեցի նրա չարիքներ գործելու եռանդը: Այս կարող եմ պարծանքով ասել: Նա, երևի, կաներ շատ բաներ չար, եթե պատվով չընդունեինք այստեղ: Նախ կսպաներ ինձ ու քեզ և ապա կավերեր թե քաղաքը և թե Նորշուվի այս գեղեցիկ պալատը: Հասկանո՞ւմ ես, Գնունյաց տեր:

— Այդ ճշմարիտ է, Հայր-մարդպետ,— ձեռները ծնկներին դրած վախեցած երեխայի ձայնով համաձայնեց ծերունին:— Գիտե՛ր, կավերե՛ր: Մերուժանն իժի ծնունդ է: Իր ազգին ուրացողը կանի՛ ամեն բան. կթքի՛ իր ազգի սրբությանց վրա, իր ազգի փառքի վրա... Ճշմարի՛տ է, Մարդպետաց տեր, ճշմարիտ է...

Եվ ծերուկի Գնունին լռեց վրդով, ապա կարծես մոռացումնքի թե ծերունական նիրհի մեջ ընկավ. իսկ Հայր-մարդպետը շարունակեց երթևեկել այնպաղարդ ճեմելիքում: Նա գարճյալ մտածում էր, թե Մերուժանին պալատում ընդունելու համար ոչ-ոք չի կարող իրեն մեղադրել.—պալատն ու քաղաքը

պահել է ինքը և ավերումից փրկել... Եթե չընդուներ—կարո՞ղ էր մենակ դիմադրել պարսից բանակին, զորավարներին և իրեն Մերուժանին: Ոչ, հարկավ: Իսկ եթե մեղադրե՞ն, թե ինքը հանդգնել է ժողովրդին՝ չդիմադրել պարսիկներին և քաղաքի դռները բանալ նրանց առաջ—այդժամ նա կասի, որ փրկել է թե՛ քաղաքը և թե նրա բնակիչներին, չթողնելով, որ խղճուկ կատաղեցնեն պարսիկներին իրենց դիմադրությամբ. այդպես վարվելով, կասի, մտածել է ժողովրդի շահը, որ չկտտվի անհեղի, և քաղաքի շահը ,որ չավերվի ի զուր, քանի որ, միևնույն է, պարսից մեծ բանակի դեմ սակավազեն ու սակավապաշար զինյալները երկար կռվել չէին կարող... Ոչ, այս բանում էլ ոչ-ոք չի կարող մեղադրել նրան: Դիվինը ամուր կործանվեր և պարսիկները կհնդկանի չէին թողնի և ոչ մի դվինցի: Վերջապես, նա կասի, որ եթե Սրատադերսի նման անհաղիկ ամրոցը չդիմացավ պարսից զրոհին—ի՞նչ կարող էր անել կամ ի՞նչպես կարող էր դիմանալ ցրտ ու զորավար չունեցող Դվինը... Թող իմանան, որ առանց Հայր-մարզպետի, Դվինն այժմ կանգուն չէր լինի Սրատադերսի նման:

«Սրատադե՛րս... Սմբատասվան փառանձեմը խրոխտում էր, թե ինքը չի թողնի, որ պարսից ոտքը մտնի ամրոցի շենքը,—շարունակում էր մտածել Հայր-մարզպետը ճամելիքում երթևեկելով:—Իմ դիակի վրայով կմտնե՛ն»... Բայց ի՞նչ եզավ... Բնդոն ընկավ, բերդականները կոտորվեցին և ինքը՝ զուտ քաղաքին տարվից դերի»...

Հիշելով փառանձեմ Թագուհուն՝ Հայր-մարզպետը մտաբերեց և իր անախորժ բացատրությունը նրա հետ... «Հա եթե Պարոն ու Մուշեղն էլ մյդ-մյուս բան է. նրանք դրանից կպոեղծեն ո՛չ մի բան մեղադրանք, այլև... մահապատիժ»: Բայց ո՛վ կարող է վկայել, թե ինչ է ասել ինքը Թագուհուն: Ոչ-ոք: Ո՛վ կարող է ասել, թե ինքը հանդգնել է փառանձեմին իր հունամոլության համար և կամ իր խորհուրդներով զոհել է Մերուժանին... Ոչ-ոք չի տեսել այդ և ոչ-ոք չի կարող վկայել... Եվ, վերջապես, ի՞նչ էլ լինի, Պարոն ու Մուշեղը չեն համարձակվի ձեռք բարձրացնել իր վրա, ամբաստանել իրեն: Նրանք դիտեն, իսկ եթե չդիտեն՝ կհասկանան, թե ի՞նչ ազդեցություն, ի՞նչ կշիռ ունի ինքը և ո՛րքան հարկավոր ու պետք է

երկրի համար, պետության համար՝ այդ խոկ ազդեցությամբ, փորձառությամբ ու կապերով։

Մտածելով որ, Պապը դարձել է թագավոր՝ Հայր-մարդապետը միաժամանակ խորհում էր, թե նա տակավին երիտասարդ է, անփորձ և ինքը թերևս կարող է նրան առնել իր ազդեցության տակ, հանել նրան չար Մամիկոնյանի՝ Մուշեղի հովանավորությունից (եթե միայն այդպիսի բան կա) և իր ղրույցներով հասկացնել նրան հայոց աշխարհի իրական օգուտն ու վնասը և դնել նրան ճշմարիտ ուղու վրա, հեռացնելով հոռոմների կամ հոռոմասեր մարդկանց ազդեցությունից. մանավանդ Ներսեսի և Մուշեղի։ (Հայր-մարդապետը լսել էր նույնպես, որ Ներսես կաթողիկոսին վաղես կայսրն ազատել է աքսորից և թույլատրել հայրենիք վերադառնալու)։

Հայր-մարդապետը տանել չէր կարողանում այս երկու մարդկանց։ Ներսեսը նրան միշտ թվում էր ինքնահավան ու վատասեր, մի մարդ, որ իր անունը հռչակելու համար պատրաստ է անել ամեն ինչ, թեկուզ դրանից տուժի երկիրը, պետությունը. Ներսեսի ջանքերը՝ քրիստոնեությունը երկրում ամրացնելու—նա համարում էր սպարդյուն աշխատանք, համոզված լինելով, որ քրիստոնեությունը՝ խեղճերի այդ կրոնը, երբեք չի արմատավի հայերի մեջ, իսկ եթե արմատավի, հայ ժողովուրդը կկորցնի շատ և շատ բան՝ իր ռազմական կորովը, խիզախությունը և հարևան պարսիկների բարեկամությունը...

Եվ Ներսեսին նա օգտակար մարդ չէր համարում հայ երկրի համար, քանի որ թշնամական դիրք է բռնում պարսից հանդեպ։

Իսկ Մուշեղին, որին Հայր-մարդապետը թեև ճանաչում էր և պիտեր որպես խիզախ երիտասարդ զորական, սակայն այն հանգամանքը, որ նա նախկին սպարապետ Վասակի որդին էր—այդ պատճառով նրան նույնպես տանել չէր կարող։ Վասակը, այդ կարճահասակ ու վախկոտ Մամիկոնյանը, որ քայլում էր գլուխը միշտ բարձր բռնած՝ երկար երևալու ցանկությամբ, ամեն անգամ պալատ գալիս կամ հանդիպելիս՝ արհամարհանքով էր նայում իրեն՝ Հայր-մարդապետին և մի անգամ նույնիսկ, վեճի ժամանակ, ծանր խոսքեր էր ասել նրան... Հիմա, Մուշեղի մասին մտածելով՝ Հայր-մարդապետը կարծում էր, որ «պատուղը ծառից հեռու չի ընկնում», այսինքն՝ Մուշեղը պիտի լիներ հոր

նման կամ... դուցե ավելի վատ... բավական էր, որ Մամիկոնյան էր: Իսկ Հայր-մարդպետն առհասարակ չէր սիրում Մամիկոնյան տոհմի և ոչ մի անդամի՝ լիներ նա հոռոմասեր թե պարսկասեր. միևնույն էր: Ներանք ամենքն էլ, նրա կարծիքով, մի ծառի վիշեր էինք—համառ ու խայթող. թևև խիղախ ու անձնազոհ, բայց միշտ առաջին դիրքի և պատվի սիրահար: Հայր-մարդպետին թվում էր՝ նույնը պիտի լիներ և այդ երիտասարդ Մամիկոնյանը, այդ նոր սպարապետ Մուշեղը, որին ինքը կողմնակից չէր հարկավ այդ բարձր պաշտոնը հանձնելու, բայց որի մասին հիմա ասում էին, թե նեղում և վախուստի է մատնում պարսից զորքը և երբև թե գալիս է ուղիղ Դվին՝ Մերուժանին բռնելու:

«Եթե այդ Մուշեղը հաղթություն տանի,—մտածում էր Հայր-մարդպետը,—պետք է սպասել, թե որքան պիտի գոռոզանա և արհամարհի մյուսներին»...

Այս մտքի վրա Հայր-մարդպետը ծանր մի հոգոց արձակեց և շարունակեց իր համբերթաց անցուդարձը այսնաշեղ սարահովտում, որի մի ծայրում նստած էր ծեր Գնունի Դավիթ իշխանը, որ ինչպես միշտ, օրվա մեծ մասը նիրհում էր իր բազկաթոռի մեջ, ծերությունից անտարբեր դարձած, երբեմն միայն կենդանության ու շահագրգռության նշաններ ցույց տալով դեպի երկրի ու քաղաքի վիճակը...

Մինչդեռ Հայր-մարդպետը չէր կարողանում հանդստանալ իրեն պաշարող մտքերից, որ քանի գնում՝ այնքան ավելի տիրական էին դառնում և համակում նրան: Նա, որ վաթսունի մոտ մարդ էր, թևև նիհարկին, բայց առույգ և ուշիմ, թափանցամիտ ու բազմակողմանի իր շահագրգռություններով, հետաքրքրությամբ, քիչ էր խոսում առհասարակ և իրեն պահում էր այնպես, որ հաճախ թվում էր անհույզ, անտարբեր, հիմա ստիպեց անհանդիստ երևևկելով՝ մտածում էր շարունակ, թե ինչպես արդյոք Պասեր կվերաբերվեր իրեն, եթե գար... Նա լինելով խելացի ու ճարտար մարդ, աշխարհ տեսած և շատ դրություներ խմացող—հարցված էր Սրշակ Բագրատունու կողմից, չնայած երես պարսկասիրությունը հաճելի չէր Սրշակին: Իր տխուր կամ մենավոր ժամերին Սրշակը հաճախ կանչում էր նրան իր առանձնատանը և ժամերով ղրուցում հետը: Եվ մարդպետի միշտ

աչխուժ ու սրամիտ պատումները ցրում էին տխուր մթնոլորտը։

Այսպես էր Սրշակ Բագրատունը... Ինչպես կլիներ որդին,— մտածում էր Հայր-Մարդպետը, ինչպես վերաբերվեր երեն այրերը անոր ու զարգից հետո. Դվինի դիմադրությունն արդելելը, Մերուժանին ու Զիկ զորավարին պատվով ընդունելը և Մերուժանի կողմից Արտաշեսը՝ Բագուհուս մոտ դնալը— պիտի համարեր արդյոք դավաճանություն կամ հանցագործություն, ինչպես կուզեին բացատրել իր թշնամիները, թե կուզեր լսել և իր բացատրությունը...

Ինչպես էլ լիներ՝ Հայր-Մարդպետին թվում էր, որ իր լռության ու ճարտարությունը, որ միշտ հարգված էր Սրշակի կողմից, ոչ միայն կփրկեին երեն մեղադրանքներից, այլև թերևս նոր դռներ բանան իր առջև, նոր հարգանք ու համակրանք ստեղծեն իր շուրջը, ինչպես առաջ, Սրշակի օրով, և ինչպես վերջին ամիսները Մերուժանի մոտ, միայն թե գալը անձամբ երենից պահանջեր այդ դեպքերի բացատրությունը... Սակայն, ի դեպ, նա մի բան ներել չէր կարողանում Մերուժանին, չնայած իր ցուցաբերած ակնհայտ պատրաստակամության ու նվիրվածությանը—Մերուժանը լիովին չէր վստահել նրան, անկեղծ չէր եղել հետը։ Մի օր, հենց վերջերս, երբ Մերուժանը հրավիրել էր նրան ինչ-որ մի առիթով խորհուրդ հարցնելու, Հայր-Մարդպետը հետաքրքրվեց, թե ինչ հիմք ունեն քաղաքում շրջող լուրերը Պապի և Մուշեղի մասին,—զոռոզ Սրծրունին ճեռք թռուկ էր ավել արհամարհանքով։

— Անմիտ բաներ՝ մեր թշնամիների կողմից հորինված։ Մեր տեղեկությանց համաձայն՝ դա տարածել է մի կույր պառաւան, որ կրնավ չուտով և կատանա իր արժանի պատիժը։ Պարսից բանակը,— ավելացրել էր նա,— դեռ այնքան չէր ընկել, որ Պապի նման մի տհաս և մեծամիտ վաստակի որդի մեծամիտ Մուշեղի նման մի անփորձ հաղթի նրան...

Բայց այս խոսքերից երկու օր չանցած՝ Մերուժանն ինքը տհաս այսօր առավոտյան Դվինի մոտ եղած զորքի հետ միասին դընաց ճակատելու Պապի և Մուշեղի դեմ, որ ինչպես ասում էին, առաջանում են չարունակ...

Ուրեմն կա լուրջ մի բան,—մտածում էր Հայր-Մարդպետը,

—և ինչո՞ւ ասել, թե անհայտ մի կույր դուռան է տարածում, երբ պալատի ծառաներն անգամ խոսում են վաղուց, երբ Զիկ զորավարը նույնիսկ դնաց մի չաբաթ առաջ հենց այդ ուղղությամբ...

Եվ Հայր-մարդպետը չէր հասկանում, թե ինչո՛ւ Մերուժանը թաքցրեց իրենից այդ հանգամանքը: Ուրեմն՝ կռիվ էր, իսկ թե ինչո՞վ կվերջանար այդ կռիվը, ո՞վ կհաղթեր—նա դժվարանում էր գուշակել... Ու մտախոհ և ինքնամփոփ, լռչկան ծանր կացութիւն ապրող մի մարդ, շալ թիկնոցի լայն ու երկար քղանցքները մոդայիկ հատակին քաշելով՝ չարունակում էր նա իր երթևեկը Արշակունիների դատարկված պալատի այդ սյունազարդ ճեմելիքում և խորհում անցած ու գալիքի վրա: Մի քանի ամիս առաջ, երբ լսեց, թե Մերուժանը պարսից զորքով գալիս է Դվինի վրա, նա իրեն առանձնապես ծանր չզգաց, ոչ էլ ծանր խոհեր պաշարեցին նրան, որովհետև ճանաչում էր Մերուժանին, և Մերուժանը նրան, ուստի առանձին երկյուղ չէր զգում... Հիմա սակայն բոլորովին այլ էր. թեև ճանաչում էր թե Պապկին, թե Մուշեղին, բայց ապագան նրան թվում էր անառույգ...

Անցյալի մասին մտածելով՝ նա հիշեց, որ փառանձեմ թագուհու հեռանալուց հետո, այսինքն՝ երբ նա վտանգից ազատ լինելու համար զորքով քաշվեց Արտագերս՝ պալատը, Արշակունիների ճոխ ու փարթամ պալատը բոլորովին մերկացավ իր հահերից ու զարդերից, դրանց մի փոքր մասը թագուհին հետը տարավ բերդը, որ հետո, արքունական դանձերի հետ միասին ընկավ պարսից ձեռքը, իսկ մնացածը—այդ բոլոր արծաթեղեն ու ոսկեղեն իրերը, մետաքսեղենն ու կերպասեղենը, նաև հազվագյուտ ու թանկագին զորգերը և շատ այլ բաներ թաքցրին ստորերկրյա գաղտնարաններում, անհայտ-անտես տեղեր, որ քաղաքում ու պալատում մնացած մարդկանցից գիտեր միայն Հայր-մարդպետը և պալատի սպասավորների մի մասը: Սակայն երբ Մերուժանը մտավ Դվին՝ Հայր-մարդպետը սպասավորներին կարգադրեց՝ պալատի գեթ մի փոքր մասը կահավորել պահված իրերով՝ զորգերով, օթոցներով ու կերպաս վարագույրներով, բայց երբեք Արշակունիներին հիշեցնող, նրանց տոհմանիշը կրող առարկաներով... Ու ինքը ընդառաջ գնալով՝

քաղաքի դռների մոտ ընդունել Մերուժանին ու Զիկ զորավարին և առաջնորդել պալատի այն հարկաբաժինը, ուր մի ժամանակ ապրում էր Արշակի ընտրը, ուր նախարարներ ու մարզպաններ էր ընդունում, վճիռներ արձակում, նվերներ առանում, պարգևներ տալիս և, վերջապես, գրուցում էր իր հետ հայոց աշխարհի և մարզպանց գործերից:

Հիմա Հայր-մարզպետին գրաղեցնում էր և այն միտքը, թե երեք Գագն ու Մուշեղը հանկարծ հաղթեն և գան՝ իրենցից պետք է ազատացներ պալատի կահավորումը Մերուժանի և Զիկ զորավարի համար... Այո, երեք խոսք բանան այդ մասին՝ նա գլուխ կտան տ՛յն, ինչ ասավ Գնունի իշխանին, թե այդ ամենը նա արավ նրա համար, որ նրանք՝ Մերուժանը և Զիկ զորավարը դաժանություն չդործադրեն... Այսքանը:

Բայց նա չէր հավատում, թե Գագն ու Մուշեղը (որքան էլ իրենց գործի հետ ունենան հռոմեները) կարողանան հաղթել պարսից հզոր բանակին, որ տիրել էր արդեն հայոց աշխարհի մեծ մասը: Որքան էլ հռոմեներն օգնեն, միևնույն է, մտածում էր նա, չեն կարող պարսից չար գործ բերել: Եվ այդ նոր պատերազմը նա համարում էր Հայաստանի համար նոր դժբախտություն, նոր կոտորած ու նոր ավերանք: Նա այն կարծիքին էր, թե հայերը միշտ բարեկամ պիտի մնան պարսիկներին և երբեք դիմադրած չպիտի լինեն դեպի հռոմեները, որ բարքերով ու սովորություններով օտար են հայերին և ավելի բռնակալ ու դաժան իրենց պահանջների մեջ, ավելի անզուսպ, քան պարսիկները... Միևնույն ժամանակ նա զգում էր, որ հայոց աշխարհի վիճակը վատթարացավ այն օրից, երբ նա ընդունեց քրիստոնեությունը, և այդպիսով պարսիկներին գրգռեց հայերի դեմ, դարձնելով նրանց միշտական թշնամի: Պարսիկները ասում էին, և Հայր-մարզպետն էլ համաձայն էր, որ Բիզանդիան նպատակ ունի տիրել հայ երկիրը և կլանել հայերին... Իսկ պարսիկները, նրա կարծիքով, հին հարևաններ էին՝ բարքերով ու սովորություններով մոտ, ուստի նրանց հետ լեզու գտնելն ավելի դյուրին էր, քան բյուզանդացիների հետ... որոնք, նրա կարծիքով, բերում էին վատ բարքեր, փոփոխություններ, եկեղեցուն տալիս էին մեծամեծ իրավունքներ, որի պետերը միջամտում էին անգամ պետության

գործերին, հանդիմանում իշխաններին և փորձում իրենց կամքը թելադրել մինչև իսկ թագավորներին...

Եվ ընդհանրապես Հայր-մարդպետն անպատիվ բան էր համարում, ինչպես ինքն էր ասում, որ կանացիահանդերձ այդ մարդիկ (այս բանը նա կրկնում էր հաճախ) խելք ու վարք սովորեցնեն իշխան ու ռազմիկ մարդկանց: Մի հարյուր տարի չկար քրիստոնեությունը մտել էր հայոց աշխարհը, բայց եկեղեցիները արդեն ամեն ինչ դրեթե իրենց ձեռքն էին առել, մտածում էր նա հաճախ մեծ արտմտությամբ, ու երկիրը վարում էին իրենց ուղած ձևով, իրենց ուզած կողմը—մինչև դեպի Բիզանդիա, մինչև դեպի Բիզանդիա... հետզհետե ավելի ու ավելի թշնամացնելով պարսիկներին... Ներանք չեն հասկանում, որ պարսիկները բարեհաճ կլինեն դեպի հայերը այն ժամանակ, եթե դրանք թողնեն այդ հոռոմասիրությունը...

Այս բանում, նրա կարծիքով, մեծ հանցանքներ ուներ Ներսես կաթողիկոսը և նրա տեղապահ Եղիշը... Նա ցավում էր, որ նախարարների մեծ մասը նույնպես տարված է այդ հոռոմասիրությամբ, հետևում է այդ հոգևորներին, առանց խորհելու երկրի շահը և օգուտը:

Սակայն Հայր-մարդպետն առանձին դառնությամբ էր հիշում նաև Տրդատ Թագավորին, որ առաջին դիջողություն անողն էր եղել այդ եկեղեցականներին և մեծամեծ հողեր ու կալվածներ էր նվիրել եկեղեցուն, և առհասարակ շատ երես էր տվել այդ մարդկանց, որ հիմա այնքան էին հանդգնել՝ իրենց թույլ էին տալիս ամեն բան...

Դանդաղ քայլում էր Հայր-մարդպետը սարսավորմամ ու մտածում... սակայն ինչ էլ մտածում էր՝ նորից դառնում այն խնդրին, թե ինչպես կվերաբերվեր Պապը իրեն, եթե իրա հաղթեր ու Թագավորեր հոր փոխարեն.—նա սիրտ ենթարկվեր, երևի, Ներսեսին, ու Մուշեղին,— տխրությամբ խորհում էր նա, որովհետև չէր կասկածում, ավելի շուտ համոզված էր, որ նոր Թագավորը չէր կարող այլ ուղղություն, ճանապարհ բռնել, քան Ներսեսն ու Մուշեղը.— դարձյալ Բիզանդիա, դարձյալ Բիզանդիա... Եվ այլ կերպ էլ չէր կարող լինել, մանավանդ այն պատերազմում նրան օգնում են հոռոմները, քանի որ Պապն

ինքը հունական կրթություն ունի և հունական սովորություններ սիրուշտ... Իսկ ինչպես կվերաբերվի իրեն, եթե իմացած լիներ Մերուժանին ընդունելը և իր բանագնացությունը Թադուհու մոտ՝ Արտաշերս...

Մտածելով այս մասին՝ Հայր-մարդպետը կարծում էր, որ Գագիկ իրեն, երևի, չէր մոռացել. չէ՞ որ ինքն է մեծացրել նրան պալատում, նա իր սանն է եղել դրեթե և անշուշտ սիրով կհիշի իրեն:

— Այո, նա պետք է որ լավ հիշի ինձ,—համարյա լսելի ձայնով տռամ Հայր-մարդպետը և հևնվեց ճեմելիքի մարմար սյուներից մեկին: Այդտեղից երևում էին ոչ միայն զուտ Մասիսները ու մյուս ձյունակատար լեռները, այլև Արարատյան ամբողջ դաշտը, որ հարթ-հավասար՝ աչքին այգիներով ու ծառաստաններով ծածկված փռվում էր մինչև լեռների ստորոտը և կարծես հալվում-ձուլվում երկնքի մանիշակագույն մեջում: Այդտեղից երևում էր նաև մինջաթերդի շուրջը տարածվող Դվինը՝ իր բազմատեսակ, մեծ ու փոքր տներով, փողոցներով և պաթիսաններով, որոնց մեջ որոշակի երևում էին կամարաձև քաղաքդռները, մանավանդ Սվաղ դուռը, որ տանում էր Վաղարշապատ:

Իրիկնային մթնաշաղը կամաց-կամաց պատում էր դաշտի հեռուները և ծառաստանները: Իսկ մեծ Մասիսը տակավին, ցածրը պատող իրիկնամուտի աղջամուղջից վեր վայելչանում էր իր հպարտ, ճերմակ գագաթը:

Մի առ ժամ քայլելուց հետո՝ Հայր-մարդպետը կանգ առավ և նայեց դեպի Մասիսները՝ տեսնելու ո՛ր ժամն է արդյոք, որ երեկոյան կարգադրություններն անի պալատի սպասավորներին ու պահակներին:

Եվ այն պահին ահա, երբ Հայր-մարդպետն ուզում էր նայել դեպի մեծ լեռան կատարը՝ նրա ուշադրությունը գրավեց մի օտարոտի երևույթ.—պարսից կայսրերը ամբողջ կազմով քաղաքի դիմաւոր փողոցով ճիավորված գնում էր դեպի Վաղարշապատի դուռը, և գնում էր ոչ թե սովորականի պես հանդիսատ, հաղթական ընթացքով, այլ իրար խառնված ու խուճապած:

Այս բանը զարմացրեց Հայր-մարզպետին։— Ի՞նչ է կատարվում... Պարսից զորքի մեծ մասն արդեն գնացել էր այսօր Մերուժանի և օրեր առաջ Զիկ զորավարի առաջնորդությամբ, հիմա էլ գնում է ուրեմն կայազորը, և այդպես անկարգ ու հապճեպ...

«Մի՞թե փախչում են»... անցավ Հայր մարզպետի գլխով։ «Մի՞թե այսպես շուտ... Ուրե՞մն»... և նա մտքի թելը կտրելով՝ ձեռի շարժումով պալատի բակից իր մոտ կանչեց իր սպասավորներից մեկին, որ նույնպես զարմացած նայում էր այդ տեսարանին։

— Այդ ի՞նչ է, Վրեն, ո՞ւր են աճապարում այդպես։

Սպասավորը հարգանքով մոտեցավ տարավուխի պատին և ներքևից չընջաց.

— Փախչում են, տեր մարզպետ...

Հայր-մարզպետը նրա խոսքի չարունակությունը չլսելով՝ ձեռի նույնպիսի շարժումով կանչեց այդ միջոցին բակով վազող մի պարսիկ պահակ-զինվորի, որ այդ օրը նիզակը ձեռին պահակություն էր անում ընկերների հետ պալատի սանդուղների առաջ։

Պարսիկ զինվորը մի տեսակ չփոթված ու վախով նայեց հայ ավագանուն։

— Մոտ եկ,— ասավ Հայր-մարզպետը։—Այդ ո՞ւր է գնում զորքը...

— Ասում են՝ կռիվը մոտեցել է, տեր, ձեր նոր թագավորը գալիս է,— ասավ նա արագ-արագ նիզակը մեջտեղից բռնած՝ աչքի մեկը առաջ, որովհետև նրա ընկեր պահակներն արդեն վազում էին իրենց նիզակներով դեպի միջնաբերդի պարսպագուռը։

«Ուրե՞մն»... կրկնեց Հայր-մարզպետը մտքում և նրա ներքին շուրթը դողաց հանկարծ։

Այնքան անակնկալ էր այդ ամենը նրա համար, որ նա չէր մացավ ինչ անել.—Մնա՞լ այդտեղ, մտնե՞լ պալատ, թե գնալ պարսից զորքի հետ միասին...

Նրան զբաղեցնող երկընտրանքը, ասկայն, վերջացավ նրանով, որ նա քայլերն ուղղեց դեպի պալատի սրահները, ուր վեր-

ջին ամիսներն ապրում էր Մերուժանը, և որոնք բոլորովին դատարկ էին հիմա. գնացել էին նաև Մերուժանի պարսիկ ապաստավորները, թողնելով նույնիսկ իրենց տիրոջ իրերը—ձմեռային սամույր մուշտակը և մորթե գդակը։

«Ես ոչ մի տեղ էլ չե՛մ գնա. կմնամ այստեղ և կասեմ, որ Արշակունիների պալատը անվնաս պահել եմ նրանց օրինական ժառանգի համար», ասաց նա մտքում և դուրս եկավ օթոցին նստելով, ընկավ մտքերի մեջ։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Երկու օր էր Դվինը սպասողական դրության մեջ էր և հուզված։

Ֆաղաքը և նրա շրջանը դրավող պարսից զորքի հեռանալուց հետո դվինցիները մեկը մյուսի ետևից դուրս եկան իրենց թաքստոցներից՝ տների խորքերից, նկուղներից, խաղողի այգիներից, շատերը նաև Խոսրովի անտառից և մեկնեն լցրին քաղաքը։ Դրանցից մի խումբ առաջին իսկ օրը, չսպասելով որևէ բանի և, չդիտես ո՛րտեղից ձիեր գտած, սրարշավ գնաց Վաղարշապատի ճանապարհով՝ զինված հին ու նոր, երկար ու կարճ նիզակներով, տեգերով, երկաթակոթ տապարներով և այլ զենքերով, որ անհայտ է որտեղից էր նրանց։ Դրանք զինվորներ չէին, այլ մազմազոտ ու անկարգ հագնված քաղաքացիները, հինականները, որոնց հետ գնում էր և Հրահատը՝ երկաբուն մի նիզակ ձեռին և բոլորովին կերպարանափոխված։ Խոսում էին, որ նրանք գնում են իմանալու, թե պարսիկներն ուր գնացին կամ կռիվը որտեղ է, և Հրահատը կարծես առաջնորդում էր նրանց։ Վերջին տաս օրը նա իր ծեր ընկեր Զաքարեի հետ, որպես գուսան, եղել էր Աշտաշատ, եղել էր քանի մի չեներում և ամեն տեղ զգուշացրել, որ «մերոնք գալիս են», պատրաստ լինեն և աչխատեն պարսիկների ձեռը չընկնել։ Իսկ Դվին եկած երկրորդ օրն իսկ նա գուսանի իր հագուստներով գնացել էր Նաղենիենց տուն, բայց նրանց դուռը գտել էր փակ։ Մի պառավ հայտնել էր, թե Նաղենին պարսիկը չեկած՝ հեռացել էր մոր հետ, բայց թե ո՛ւր—չդիտեր։ Հրահատը կամեցավ հարցուփորձել այլ հարևաններին, բայց չերևացին այդ օրը։ Իսկ հիմա, երբ ամենքը դուրս էին գալիս իրենց թաքստոցներից, երբ կարելի էր իմանալ մի բան—նա ձիավոր խմբի հետ չտապեց դեպի Վաղարշապատ։ Նրա հետ էր և Զաքարեն, որ չնայած առաջացած տարիքին, այնպես պինդ էր նստել ձիու մեջքին, կարծես ձուլված լիներ նրան։

Ներանց հետևեցին և ուրիշ փոքր խմբեր, անհատներ՝ ձիեր հեծած կամ մեծ մասամբ հետիոտն, որ մեծ ճանապարհը թողած, ապահովության համար գնում էին այգիների միջով։

Իմանալով ո՛ւր են գնում այդ խմբերը՝ մնացողները խաչակնքում էին նրանց հետևից.— «Տերը զորավիգ, տերը զորավիգ»... Իսկ ոմանք անհանդիստ, անհամբեր բարձրանում էին քաղաքի պարիսպների ու աշտարակների գլուխը և նայում մի բան տեսնելու հուսով։

Մինչ այդ քաղաքացիների թիվը գնում ավելանում էր հրապարակում, գլխավոր փողոցում և Սվաղ դռան մոտ։ Գալիս էին ոչ միայն ամեն տարիքի տղամարդիկ՝ ցուպերին հենած ծերունիներից սկսած մինչև կայտառ պատանիները, որ հանգիստ չէին մնում մի տեղ, այլև ամեն հասակի կանայք, երեխաներ և մերձակա գյուղերից եկած չինականներ, որ եկել էին մի բան լսանելու։ Դրանք բոլորը լուրջ, բայց մեծ մասամբ հուսալատ դեմքերով ողջունում էին իրար և հարցնում.

— Ճշմարիտ է. ուրեմն գալիս են։

— Ասում են. օգնական ասուված։

— Եթե պարսիկը փախավ՝ ուրեմն մերոնք հաղթական են,—ասում էին մարդիկ հրճվանքով։

Բայց լսվում էին և զգույշ ձայներ։

— Գնալ դեռ չի նշանակում փախչել։ Գնացին թերևս ճակատելու, որի ելքը գուշակել դժվար է։ Ուրեմն պետք է սպասել և զգույշ լինել,— ասում էր մի տարեց քաղաքացի։

— Այո, պատերազմի մեջ պատահում է ամեն բան և հնարավոր է ամեն ինչ,—համաձայնում էր նրա խոսակիցը։— Բայց եթե չփախա՞ն, այդ դեպքում կայազորն ինչո՞ւ հեռացավ։ Ինչու վերջին ծառա պարսիկն էլ գնաց։ Տեսան ուրեմն իրենց գերությունն անհույս է, մնալ չեն կարող։

— Այնուամենայնիվ, այդ դեռ չի նշանակում ամեն ինչ վերջացավ։

Մի ուրիշ խմբում խոսում էին այլ բան.

— Մերոնք կհաղթեն, անշուշտ կհաղթեն,—ասում էր սուր աչքերով մի ճերմակ ծերունի։— Այնքան որ հաղթել եկել են, այդտեղ էլ կհաղթեն։ Բազուկներին զորություն,— խաչակնքեց նա երեսը։

— Իսկ եթե, եթե, հեռու մեղանից, չհաղթեն, Մարտիրոս պապի,—անհամարձակ հարցրեց մի երիտասարդ։— Ի՞նչ պիտի անենք։

Մերունին իր փոքրիկ, պսպղուն սուր աչքերով նայեց հարցում անողին և գլուխն օրորեց.

— Այ, եթե քեզ նման քաջառողջները մնան այստեղ, մենք չենք հաղթի, հարկավ չենք հաղթի։ Այդ ճիշտ է։

Երիտասարդը չիկնեց և, ետ քաշվելով, աներևութացավ բազմության մեջ։

Մի այլ տեղ առաջ դնացած և վերադարձածները պատմում էին, որ ճակատամարտը Վաղարշապատի մոտ է, և թե պարսիկները շատ են ու հաղթում են։

— Դու լինքդ տեսա՞ր։

— Ինձ պատմեցին։

— Ամեն պատմածի չեն հավատա...

— Պարսիկները հաղթո՞ւմ,—լսվեց վախեցած մի ձայն։— Ի՞նչ պիտի անենք... Նորից պիտի դնանք անտառ։

— Ըհա... ի՞նչ անտառ... Որ այսպես հաղթում են... Հաղթելին չէին վախչի։

Այդ ժամանակ մեկը ճչաց հրապարակում.

— Ատրուշանը, քրիստոնյայք, ատրուշանը... Փանդեննք մոխրաբուրը։

— Փանդե՛ննք, փանդե՛ննք..

Եվ հանկարծ մարդկանց ու կանանց մի մեծ խումբ սրտվեց հրապարակի բազմությունից ու նետվեց դեպի եկեղեցին։ Նրանց հետևեց մի այնպիսի բազմություն, որ հերթ չէին տալիս իրար՝ պարսպապատնից ներս մտնելու. հրում էին միմյանց, առաջում իրար. յուրաքանչյուրն աշխատում էր նախ ինքը մտնել. շատերը, դռնից մտնելու հույս չունենալով, աշխատում էին բարձրանալ պարիսպը և այնտեղից ընկնել եկեղեցու բակը...

Բայց մինչ դուրսը մարդիկ, կանայք, իրար հրմշտկելով, ջանում էին ներս դնալ, հանկարծ մեկը՝ մազաքաոս մի երիտասարդ, ներսի կողմից բարձրանալով, պոռաց.

— Վերջացավ, դժխեմներ, վերջացավ։ Պիղծ ատրուշանը քանդված է։ Կրակը մարեց, անշեջ կրակը մարեց... Նզովք դեմ նիմազդեղին...

— Կրակը մարեց... Նոմվք,—կրկնեց հրապարակի քաղմութ-
թյունը և չաուերը, զա լավ նշան համարելով, խաչակնքեցին
ներեսները։

Բայց կացությունը տակավին անորոշ էր և անստույգ.
մերթ գալիս էր մեկը և հայտարարում, թե մերոնք հաղթական
են, պարսիկները պարտվում են. ուրախությունն անմիջապես
համակում էր բոլորին. մերթ գալիս էր մի ուրիշը, թե պար-
սից ուժերը շատ են, մերոնք, երևի պարտվում են... և ուրա-
խությունն իսկույն տեղի էր տալիս խոր մի տխրության ու
հառաչանքի.

— Սպասենք, սպասենք տեսնենք...

Սպասման ու անորոշության այդ անհանգստությունը մին-
չև երեկոյից ցած էր բերել և պալատի սպասավորներից չաուերին,
որ քաղաքացիներին խառնված՝ նույնպես մասնակցում էին նը-
րանց խոսակցության՝ բանիմաց մարդկանց հեղինակավոր ար-
ժանապատվությամբ։ Այն ժամանակ, երբ մի տեղ ուրախ-
ուրախ խոսում էին, թե քաղաքում իսպառ պարսիկ չի մնացել
և բոլորը փախել-գնացել են, անդամ պալատից հեռացել են
Մերուժանի ծառաները—այդ միջոցին պալատի սպասավորներից
մեկը, պաղանիք իմացողի լրջությամբ նկատեց, որ նրանք աս-
կայն թողել են Մերուժանի իրերը՝ սամույր մուշտակը և կուռ-
քի մորթուց կարած ձմեռային գդակը... Այս հայտնությունը
ամենց սարսափանքի մեջ ձգեց և տուխթ տվեց նոր ենթադրու-
թյուններին։—Եթե Մերուժանի իրերն ու մուշտակը թողել են,
ուրեմն չեն փախել, որովհետև որքան էլ խուճապահար լինեին՝
Մերուժանի իրերը չէին թողնի՝ անպայման կտաներին։ Այդպես
բանը չեն թողնի...

— Իսկ ինչո՛ւ չենթադրել, որ ահաբեկված են եղել այն-
քան, որ չեն մոռացել դրանց մասին,—առարկում էին մյուսնե-
րը։—Ոչ, փախել են պարզապես...

— Ա՛ռայժմ դղույշ, սպասենք, տեսնենք,—կրկնում էր մի
ծերունի։

Անորոշությունը պարզելու և մի բան իմանալու ցանկու-
թյամբ՝ քաղաքացիները առաջին օրը մի խումբ մարդիկ ուղար-
կեցին Հայր-մարդպետի մոտ, թե ինչ լուր ունի նա և ինչ
պիտի անել առհասարակ. քաղաքի դռները չփակե՞ն արդյոք, որ

պարսիկները նահանջելիս՝ չմտնեն քաղաք և չկողոպտեն: Հայր-մարդպետը պատասխանել էր, թե «պետք է հանդիստ մնալ, դռներ փակելու հարկ չկա»... որովհետև ինքն էլ կասկածների մեջ էր, թե կարող է պատահել պարսիկները հաղթեն և նորից վերադառնան: Բայց չատերը նրա այդ խոսքերը մեկնեցին այնպես, թե Հայր-մարդպետը համոզված է, երևի, որ նրանք էլ չեն գա, հետևաբար դռները փակելու հարկ չի տեսնում:

Բայց անհանգստությունը դրանից չպակասեց. ընդհակառակը, գնալով՝ այն խորացավ, մանավանդ առաջին այդ օրվա գիշերը, երբ, բացի երեխաներից, ոչ մի այլ չքնեց ոչ-ոք, այլև չդնաց իր տուն: Ամենքը հրապարակում, փողոցում թե Ավազդռան մոտ խմբված՝ լարված ջանում էին լսել հեռվից եկող մի ձայն, մի ոտնաձայն, հանդստացնող մի լուր, որ սակայն չեկավ մինչև առավոտ: Իսկ առավոտը քաղաքի այդ բազմության վրա ավելացան նորանոր մարդիկ, կանայք, որ գալիս էին գարձյալ այդիներից, անտառից, գյուղերից մի բան իմանալու կամ յուրայիններին մի լուր, մի հաստատ, ստույգ լուր տանելու... Ու բոլորն ահա հոգնած, քնատ, անհանգիստ սպասում էին նույն կասկածների ու ենթադրությանց մեջ. ըստ որում մեծամասնությունն այն կարծիքի էր, թե պարսիկները իրենց դրությունը վտանգավոր համարելով՝ պարզապես փախել են քաղաքից, այլապես կայազորի մի մասը գոնե կպահեին այստեղ: Նույնն եղել էր մոտիկ գյուղերում և Արտաշատում, որտեղից եկողները պատմում էին, թե պարսիկ չի մնացել, բոլորը փնացին միանգամից... Դա ուրախացնում էր, բայց անհանգստությունը և անորոշությունը չէր վերացնում:

Դրան չէր նպաստում և այն, որ ոսկերիչ Գազալոնը, որ գուսաններին գալու օրվանից եռանդով ծածուկ տարածում էր նրանց բերած լուրերը, իսկ հիմա հրապարակում խմբից-խումբ անցնելով՝ համարձակ, բարձրաձայն պատմում էր ամենքին, թե պարսիկները, այո, փախան, որովհետև Պալն ու Մուշեղը հաղթում են և շուտով, երևի, կգան, նրանց հետ և Ներսես Կաթողիկոսը և Սպանդարատ Կամսարականն իր որդիներով... Նրա ասածները անցնում էին խմբից-խումբ, կրկնվում էին տարբեր ձևերով, ուրախության ու ոգևորության նոր ալիք էին բարձրացնում և, այդպիսով, մարդկանց դարձնում ավելի անհամբեր,

մանավանդ նրանց, որոնք առաջին անգամն էին այդ լուսմ... Իսկ ոմանք այդ ամենը լսելով՝ ուղղակի վազում էին դեպի վաղարշապատի դուռը այնպիսի մի թափով, որ տեսնողին ակամա հարցնում էր.

— Ո՞ւր այդպես, ի՞նչ կա...

— Աստմ են՝ Գապը գալիս է:

Ոմանք էլ, ինչպես առաջին օրը, պարսից զորքի գնալուց հետո, այնպես էլ այսօր վազում–գնում էին դեպի Ամագ դուռը՝ տեսնելու մի բան չի՞ երևում արդյոք, եկողներ չկա՞ն արդյոք: Ուրիշները՝ ավելի երիտասարդներն ու ճարպիկները բարձրանում էին քաղաքի պարիսպները, նրա բարձր աշտապակները և ձեռները ճակատներին հովանի արած՝ դիտում էին Վաղարշապատի ճանապարհը, որտեղից սպասում էին եկողներին: Իսկ ավելի համարձակները, հետաքրքրությունից ու անհամբերությունից մղված, թե ճանապարհով, թե այգիների միջով առաջ էին գնում մի քանի տեսնելու: Սակայն ավելի դենը գնալ առայժմ չէին համարձակվում. ով է իմանում ինչ կարող էր պատահել... այդ երկյուղն առաջանում էր առանձնապես երեկոյից, որ երեկ գնացածները մինչև հիմա, երբ կես օրն անցել էր արդեն, չէին դարձել, ենթադրում էին, որ նրանք կամ բռնվել են պարսիկների կողմից, կամ, լավագույն դեպքում, դեռ տեղ չեն հասել, և կամ սպասում են մի տեղ՝ լուր իմանալու...

Վաղարշապատի ճանապարհը սակայն ամենից լավ երևում էր մինջաբերդից և ավելի լավ՝ այունազարդ ճեմելիքից, որտեղից հիմա, մի այունի հենած, նայում էր Հայր–մարդպետն ինքը: Երևում էին աշնան այգիները կարմրա–դեղին երանգներով, մերթ միակտուր ու անընդմեջ, մերթ փոքրիկ ճանապարհներով ու բաց դաշտերով զատված, և արևի տակ սպիտակին տվող մի ճանապարհ, որ ուղիղ ձգվում էր այդ այգիների միջով և գնում–կորչում հեռաստանում:

Սովորաբար, պարզ օրին նրա վրա երևում էր ամեն մի շարժում և ամեն ինչ—մարդ թե կենդանի. բայց այսօր նա բոլորովին դատարկ էր. չէր նկատվում ոչ եկող, ոչ գնացող. չէր նկատվում մի հատիկ մարդ անգամ... Մի ամայություն, որ երբեք չէր տեսնված այդ ճանապարհին, անգամ ձմռան ամենամանիքների ժամանակ... և այդ ամայությունը՝ զրուցյան

անորոշության հետ միասին՝ զարմացնում էր Հայր-մարդպետին, զարմացնում և անհանգստացնում միևնույն ժամանակ։

— Գոնե մի լուր, մի տեղեկություն,— մտածում էր Հայր-մարդպետը, մինչնաբերդի իր բարձր կետից նայելով մերթ այդ դատարկ ճանապարհին, մերթ քաղաքի մայր եկեղեցուն՝ հրապարակում խռնված բազմության, որի ժխորը հասնում էր նրա ականջին և որը, ինչպես նկատում էր նա, գնում ավելանում էր, մեծանում և դառնում անհամբեր։

— Լավ է որ չեն գալիս ինձ մոտ,—ասում Հայր-մարդպետն ինքն իրեն։— Երևի, գիտեն, որ ես ոչինչ չեմ խմանում կամ մեկը նրանց հասկացրել է, թե ես Մերուժանի... և Հայր-մարդպետը խեթ նայեց իր բազկաթոռում նիրհած ծեր Գնունուն, որի թոռոմած չուրթերը դողում էին, իսկ աչ, թավխանցիկ մաշկով ձեռը երբեմնակի ցնցվում էր այնպես, թվում էր, մեկը հրում է նրան։

Բայց հանկարծ, կարծես օտար մի հայացք զգալով իր վրա, ծերունին գլուխը բարձրացնելով՝ աչքերը բաց արավ և աղոտ նայվածքը հառեց Հայր-մարդպետին.

— Ի՞նչ եղավ, տեր մարդպետ,— հարցրեց նա քնատ ձայնով,—գալի՞ս են... երևո՞ւմ է մի բան...

— Ոչ, տեր Գնունի, ոչինչ չի երևում,—ասավ Հայր-մարդպետն ակամա, զրեթե սրտնեղած, որ ինքը մենակ չէ, որ այդ պահին մեկը խանգարում է իր խոհերը, իր առանձնությունը։

Եվ նորից սկսեց երթևեկել ճեմելիքում, երբեմնակի նայելով վաղարշապատի ճանապարհին։

— Ի՞նչ ես կարծում, Հայր-մարդպետ,— նորից խոսեց ծերունին,— եթե Պապը գա, նրա հետ, երևի, ուրիշ նախարարներ էլ կլինեն, այնպես չէ՞։

— Երևի,— պատասխանեց Հայր-մարդպետը, չդադարեցնելով քայլերը։

— Իսկ թագուհի՞ն, նոր թագուհին, ի՞նչ ես կարծում, հետը կլինի արդյոք, տեր մարդպետ,— չարունակեց ծերունին քանի առած և նորությունների ծարավի մարդու տրամադրությամբ։

— Այդ չեմ կարող ասել, տեր Գնունի։

Ներսունին մի առժամ լռեց և դարձյալ նայեց Հայր-Մարդպետին։

— Գալը, կարծյոք երկու որդի ունի, տեր Մարդպետ, այնպես չէ՞,—կրկին խոսեց նա։

Այս անգամ Հայր-Մարդպետը տնքաց թեթևակի և «այո, կարծյոք» ասավ ներքին մի տհաճությամբ, ձանձրանալով արդեն ծեր նախարարի հարցումներից, որ, նրան թվում էր, միտք չունեին վերջանալու։

Բայց Ծերունին դարձյալ լռեց, որ չզիտես ներհում էր աչքերը բաց, թե մտածում։ Իսկ Հայր-Մարդպետը պարսկական լայն թիկնոցն ուսերին շարունակեց իր մտախոհ անցուդարձը այնուշարի մեջ, երբեմնակի նայելով Վաղարշապատի ճանապարհին, ուր տակավին չէր երևում և ոչ մի սավեր, և քաղաքի հրապարակին ու Սվազ դռանը, ուր հետզհետե մեծանում էր բազմությունը. Հայր-Մարդպետը չէր իմանում ո՞րտեղից են արդյոք նրանք գալիս կուտակվում այդ տեղերում։ Բացի այդ նա տեսնում էր նաև քաղաքի պարիսպները և աներկ տունիքները բարձրացած մարդիկ, որ իր նման հետաքրքիր նայում էին միևնույն ուղղությամբ՝ Վաղարշապատի ճանապարհին։

— Ինչպես երևում է ծանր կռիվներ են,— մտածեց Հայր-Մարդպետը, ենթադրելով, որ եթե որևէ կողմը հաղթական լիներ—անպատճառ մի կամ մի քանի սուրհանդակ կուղարկեր Գվին։

Նույնպիսի ենթադրությունների ու կասկածների մեջ էին նաև հրապարակում հավաքվածները ու քաղաքաղդան մատ խմբված քաղաքացիք, որ չուտ-չուտ հարցնում էին պարսպի վրա գտնվողներին.

— Մարդ երևո՞ւմ է։

— Ոչինչ, ոչինչ չի երևում,— լինում էր հուսահատական պատասխանը։

Վերջապես, կեսօրից շատ ուշ, համարյա իրիկնադեմին, ներք բազմության մի մասը, գլխավորապես դրսեցիները—չինովնիկները պատրաստվում էին ցրվել իրենց գյուղերը, հանկարծ պարսպի վրա գտնվողները ձեռները թափահարելով՝ ձայն տվին.

— Գալի՛ս են... Գալի՛ս են... Հավաքված բազմությունն իրար անցավ, առանց իմաշալու և հասկանալու, թե ովքեր են

պալիս... Լսվեցին ուրախ կանչեր ու մի քանի հոգի քաղաքապետից վազեցին դեպի քաղաքամեջ, դեպի հրապարակ, մայր Եկեղեցու կողմը և դեռ տեղ չհասած՝ պոռացին հեռվից.

— Գալի՛ս են, գալի՛ս են...

Ո՞վքեր էին գալիս—ոչ-ոք չհարցրեց. և հարցնելու կարիք չկար, որովհետև կանչող ձայներն ուրախ էին՝ բոլորը նետվեցին դեպի Սվազ դուռը. մարդկային հորձանքը նոր հուն գտած գետի պես արընթաց գնաց առաջ։

— Գալի՛ս են, գալի՛ս...

Հասնելով քաղաքի դռներին՝ երիտասարդ մարդկանց մեծ մասը և ճկուն պատանիները անմիջապես քարե սանդուղքներով բարձրացան պարիսպները ու քուրդերը՝ եկողներին ավելի լավ տեսնելու։

Եվ իրոք. ճանապարհին երևում էին ձիավորները, բայց ոչ այնքան շատ՝ որքան սպասում էին։ Դրանք երեք հոգի էին ընդամենը, որ ձիերը չափ գցած՝ գալիս էին դեպի քաղաք. բայց առայժմ դժվար էր ասել, թե ովքեր էին—քաղաքից մեկնած երիտասարդ հետաքրքիրները, որ գնացել էին լուր բերելու, Մուշեղ սպարապետի սուրհանդակները, որ առաջ ընկած՝ հայտնել գալիս էին իմացնելու հայոց հաղթությունը, թաղվորի ժամանումը, թե՛ պարթևները, որ հաղթությունից թև առած՝ նորից գառնում էին Դվին՝ անիրավություններ ու սպասի տարածելու։

Թերևս այս մտքերն էին պատճառը, որ ձիավորների երևումը մի ուժամ սաստկացրեց բոլորին համակած անհանգստությունը,— տեսնենք ո՞վքեր են և ի՞նչ են բերում...

Շուտով սակայն հետատեսները պարսպի գլխից նկատեցին, որ եկող ձիավորներից մեկի նիզակի ծայրին ծածանում էր սպարապետական դրոշ—չուրջը կարմիր՝ մեջն սպիտակ խաչ։

Այդ ժամանակ անհանգստությունը փոխվեց ցնծության։

— Մերո՛նք են, մերո՛նք են...

— Մերազնյա՛ն են, մերազնյա՛ն,— կանչում էին կամավոր գետերը պարսպի և աշտարակների գլխից՝ ձեռներն ավելի ուժգին թափահարելով, իրենց ձայնի մեջ դնելով մի վարակիչ ուրախություն։

Եվ իսկապես, այդ ուրախությունը վարակիչ եղավ այն ա-

ասէաեան, որ ուրախութեան այդ կանչերը մի երկվայրկեանում տարածվեցին Ալագ դռնից մինչև հրապարակը, կրկնվեցին հավաքված բազմութեան մեջ, քաղաքի տարբեր փողոցներում, դուրս հանելով տակավին իրենց տներում մնացած մարդկանց, դիմավորելու ծերերին ու պատանիներին, որ ցուլերով կամ առանց ցուլի դեռևուս էին դեպի դլխավոր փողոցը, հրապարակը, որտեղից գալիս էին այդ ուրախ ձայները:

Մի քանի վայրկյանում փողոցամերձ տների կտուրները լցվեցին մարդկանցով ու երեխաներով. փոքրիկ տղաները բարձրացան ծառերը և վերևից ժպտացին իրենց հասակակիցներին:

— Ճանապա՛րհ, ճանապա՛րհ, ես ուզում եմ թաղավորին տեսնեմ,— դառում էր մի անդամալույծ, դիմելով դեպի մեծ փողոցը: Իսկ հայտնի Մեղավոր Մաղքոսը մինչև սրունքները հագիվ հասնող մի ցնցոտի հագած, բազմութիւնը ճեղքելով, առաջ էր վազում եզան ինքնավոր պոչը ձեռին ու կրկնում.

— Թողեք դնամ թագավորին տեսնեմ... Ճանապա՛րհ...

Ու եղան պոչը թափահարում էր բարձրացրած:

Այդ նույն ժամին բազմութեան մեջ լսվեցին և դուսաններէն երգ ու նվագ, չղխտես ինքնաբեր թե մեկի կարգադրութեամբ դուսաները նվագեցին հանկարծ մի քանի տեղ. մի խումբ նվագում էր քաղաքապետան մոտ, մյուսը հրապարակում, երրորդը, կարծես իր երգն ու նվագը ավելի լսելի անելու համար, բարձրացել էր մի տան կտուր, և ամեն տեղ նրանց չքնաղացել էր ուրախագին բազմութիւնը:

Ամենից շատ սակայն հավաքվել էին քաղաքապետան մոտ նվագողների չուրջը, և այնքան շատ, որ դուսաննները չէին երևում. լսվում էր միայն նրանց նվագածութիւնը և երգը.

Երկներ երկին և երկիր...
Երկներ և ծով ծիրանի...
Մուշեղը կգա կարմիր...
Գայլը հագած ծիրանի...

Բազմութիւնը հուզվում, ալեկոծվում էր նրանց չուրջը. յուրաքանչյուր ոք ուզում էր տեսնել դուսաններին կամ պահանջում էր կրկնել երգը.

— Նորի՛ց, դուսան եղբայրներ, նորի՛ց...

— Զայնդ ի հոգիս, երգիչ գուսան։ Զայնդ ի հոգիս...

Գուսանները ոգևորված բարձրացնում էին ձայները և նրանց խզված, նույնիսկ ճաթած ձայները ոգևորում էին մարդկանց, խանդավառում և հարբեցնում գինու պես։

— Ասրե՛ք, գուսան եղբայրներ, ասրե՛ք,— բացականչում էին տարբեր տեղերից մի ժամանակ։

Նույնը տեղի էր ունենում հրապարակում՝ գուսանների մյուս խմբի շուրջը. իսկ կտուրի վրա նվագողներն իրենք էին նայում դեպի քաղաքադուռն շտապող բազմության, որոնցից շատերը կանգ էին առնում մի պահ, նայում նրանց և կանչում ոգևորված.

— Բա՛րձր, գուսան եղբայրներ, բա՛րձր...

Այդ կանչերը, ոգևորության այդ աղմուկը հասան և միջնաբերդ՝ Հայր-մարզպետին, որ երկար զրանցքներով, պարսկական ծիսակ թիկնոցն ուսերին տակավին քայլում էր այունազարդ սրահում կամ կանգնում-հենվում էր մի այունի՝ քաղաքին նայելու։ Լսելով այդ, ինքն ևս տեսողությունը լարած, իր վոքրիկ հեռատես աչքերով աշխատեց առուգել եկողների ժվ լինելը, և սպարապետական դրոշը ճանաչելով՝ կանչեց անմիջապես ապատավորների պետին՝ Վրենին ու հրամայեց.

— Կարգի բերել պալատը, պահած տեղերից հանել պալատի թանկարժեք իրերն ու փուվածքները և զարդարել Թագավորի հարկաբաժինը. զորքեր փուել նույնպես և պալատի սանդուղների վրա և մինչև միջնաբերդի պարիսպը...

Կարգադրեց ամեն ինչ անել ճիշտ այնպես, ինչպես սովոր էին սովորաբար կամ ինչպես ընդունված էր դիմավորել Թագավորին, երբ գալիս էր նա հեռու մի երկրից կամ հազթական պատերազմից։

Անելով այս կարգադրությունը՝ Հայր-մարզպետն ինքը ևս հետո մտավ պալատը, որի իրար խաչաձևող լայն միջանցքների վրա բացվում էին բազմաթիվ հարկաբաժիններ, որոնք իրենց հերթին ունեին վերնահարկեր, ուր բարձրանում էին քարե սանդուղներով, որ լուսավորվում էին վերևից ընկնող լուսամերով։ Հայր-մարզպետը մտավ հատկապես Թագավորական հարկաբաժինը, որի ամենագեղեցիկ սրահներից մեկը ընդունելության կամ ունկնդրության սրահն էր՝ շարքաձեղուն ու տակեղմբեթ

մի դահլիճ, ուր քանդակազարդ էին ոչ միայն կարմրաքար մարդահասակ որմնասյուները, ոչ միայն դրանց վերևից անցնող մի թզաչափ կարմրաքար և ուռուցիկ երիզը, որ գոտևորում էր այդ սրահը, այլև նրա երկվեղկանի փայտե դռները, որ միաժամանակ ոսկեզօծ էին ու լուսանցիկ: Ապա տաճարը—ճաշասրահը, ընդարձակ, շատ ընդարձակ ու երկար մի դահլիճ, ուր արքունական ճաշերին սեղան էին նստում հազարից ավելի բազմական՝ իրենց բարձի ու դիրքի համեմատ: Այնուհետև իրար հաջորդում էին մյուս սրահները և ամենից վերջը դահաստրահը, ուր թագավորը մարդկանց՝ իշխաններին, նախարարներին ու դեսպաններին ընդունում էր մյուս ծիրանին վրան, նստած իր գահին, որ պատած էր ոսկով ու արծաթով, որի թիկունքն ուներ ծաղկանկար զարդաքանդակներ, և որի հանդիստ գույդ բաղկատեղերը վերջանում էին առյուծի բերանաբաց դլուխներով:

Առաջ այս սրահներում կային պես-պես օթոցներ ու բազմոցներ՝ պատած ոսկեթել բեհեզներով, որոնք ասեղնագործում էին պալատի կանայք. կային բազմոցներ ու օթոցներ՝ կերպաներով ու մեծագին գորգերով պատած, մեծ ու փոքր ասեղնագործ բարձերով զարդարուն: Բազմոցները շատ էին առանձնապես տաճարում, որի պատերն ու առաստաղը, բացի այն, որ քանդակազարդ էին և ոսկեզօծ, ունեին նաև պես-պես նկարներ, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում էր մի ամբողջական տեսարան—նվագածուների խմբեր, պարող, կաքավող աղջիկներ, սուսերամարտ սեպուհների բազմություն, ըմբշամարտեր, առյուծների և այլ դազանների խմբեր, նետաձիգ որսորդներ, գունաթափեծուր հավքերի երամներ... Ու բոլոր այս նկարները տաճարում ակնբախ մի նպատակ ունեին—ակնահաճո տեսարաններ պարզևել ճաշող կամ ընթրող բազմության... Այս ամենից զատ՝ մոխ դռները, բացի իրենց գեղարվեստական շինվածից, երկու կողմից զարդարված էին չքեղորեն բանված դիպակներով ու կերպասներով, որ երբեմն ծառայում էին և վարագույրների տեղ:

Այս սրահներից մի քանիսը թեև Հայր-մարդպետը զարդարել էր տվել Մերուժանի և Զիկ ղորավարի համար, բայց և այնպես դրանք հիմա դատարկ էին իրենց կահերի ու զարդերի մեծ մասից, և Հայր-մարդպետը ցանկանում էր, որ նրանք լինեն

ճիշտ այնպես, ինչպես զարդարված էին Աշխակ թագավորի օրով, որ եկող Պասը ամեն բան տեսնի իր տեղում, այնպես, ինչպես տեսել է Բիզանդիա մեկնելուց առաջ, և մխիթարական էլա, թե ինչպես է ինքը՝ Հայր-մարդպետը փրկել այդ ամենը պարսիկների տիրապետության ամիսներին:

— «Այսպես լավ կլինի,— ասավ նա մտքում:— Այս պարագան կխիակի թշնամիներիս բերանը»:

Ապա, Մերուժանի ապրած սենյակներից անցնելիս՝ նրա աչքով ընկան դռուռ Արծրունու սամույր մուշտակը, ձմեռային կլոր գդակը կուպրի մորթուց կարած և մյուս իրերը. նա անմիջապես կարգադրեց՝ տանել դրանք աչքից հեռու մի տեղ: Ու նորից իր լայնաբողնոց պարսկական թիկնոցը ուսին ճեմելիքը դուրս գալով՝ ականջը քաղաքից եկող հեռավոր ձայներին, մոտեցավ ծեր ավագանի Գնունուն և կամացուկ թոթվեց նրա ուսը:

Մերունին ցնցվեց և լույսը քաղված աչքերը հարցական հառեց Հայր-մարդպետի երեսը:

— Նոր թագավորնիս գալիս է, տեր Գնունի,— ասավ մարդպետը:

Մերունու նիհար, անարյուն ձեռները դողացին:

— Ո՞ւր է, ո՞ւր է,— ասավ նա չվոխված:— Բայց ես հաղնված չեմ...

— Տակավին կարող եք, տեր Գնունի. ժամանակ կա, քանի սենեկապետը կարող է մի ակնթարթում հագցնել քեզ,— մխիթարեց նա Մերունուն և առաջ գնալով՝ կանգնեց ճեմելիքի երկու սյունի արանքում ու, ականջը դարձյալ քաղաքից եկող ձայներին, մանր աչքերը կկոցած նայեց նորից Վաղարշապատի ճանապարհին:

Մինչ այդ ճանապարհին նկատված երեք ձիավորները սրարշավ հասան Ավագ դուռը և նրանցից մեկը դեռ ձին չկանգնեցրած կանչեց՝ նիզակի վրա ամրացրած սպարապետական դրոշակը բարձրացնելով.

— Դվինցիներ, ժամանում է մեր նոր թագավոր Պապը. պատրաստ ընդունելու...

Ու երեքը միասին իջան փրփրած ձիերից, որոնց կողերը բարձրանում-իջնում էին, և քրտինքի գոլորշին, միախառնվելով

Նրանց քթածակերից ելնող հոտը չնչառության հետ, ասրած-վում էր վեր։

— Ժուլդները կարծես մխում էին։

Զինավորները, ինչպես երևաց այդ դրոշակից, Մուշեղ ասպետի սուրհանդակներն էին՝ թեթև սաղավարտներ դրած և նիզակներով ու երկար թրերով զինված։ Հավաքված բազմությունն անմիջապես շրջապատեց նրանց իր հետաքրքրությամբ ու հարցերով.

— Կռիվը վերջացա՞լ թե չարունակվում է...

— Պարսիկները ո՞րտեղ են հիմա...

— Մերուժանը, Մերուժանը՞... բռնվա՞ծ է Մերուժանը։

Սուրհանդակները չէին հասցնում պատասխանել հարցերի այն տարափին, որ մարդիկ անվերջ տեղում էին նրանց գլխին։ Մյուս կողմից՝ նրանց պատասխանները, թե թագավորը ողջ է և շուտով կհասնի, թե պարսիկները պարտվեցին վաղարշապատից այն կողմ ու նահանջեցին,—չէր գոհացնում հետաքրքրությունից եռացող մարդկանց ու կանանց բազմությանը, որ ուզում էր իմանալ մանրամասնություններ, հերոսների անուններ, ուզում էր պատժված, ջախջախված տեսնել թշնամուն և լսել կրած վշտերի հատուցումը։ Եվ որովհետև դժվար էր բավարարել բոլորին՝ սուրհանդակներից մեկը, սաղավարտով և արևատու ու քամահար դեմքով նույն երիտասարդը, որ հայտարարեց թագավորի գալուստը, բարձրացավ քաղաքաղոման այուների մեկի պատվանդանը և կանչեց նույն հզնած ու խզված ձայնով։

— Դվինցիներ, իմացեք առայժմ, որ թագավորը ժամանում է. պատրաստ ընդունելու... Մնացյալը հետո...

Այս ասելով՝ երեքը միասին նորից ձիեր հեծան և գնացին դեպի միջնաբերդ, ուր հասան այն ժամանակ, երբ պալատի օգտապահները պալատի բակն ու պարտեզները մաքրած՝ հավաքել գորգեր էին փռում պալատի առնդուղներից մինչև միջնաբերդի պարսպամուտքը, իսկ մի քանիսը պալատի տանիքը թարգմացած, պարսից դրոշը հանելուց հետո, ամրացնում էին հայկական արքայական դրոշը, որի չուրջն ապխտակ էր, մեջը խաչքանիր։

Հայր-մարդպետը սուրհանդակներին ընդունեց այունազարդ սրահավայրում. ծանր ու խոհուն, մանր, որահատյաց աչքերը եր-

քեմն մեկնել մյուսին դարձնելով. իր դիրքին վայել լրջությամբ լսեց նրանց ասածները, ապա հարցրեց.

— Իսկ ե՞րբ պիտի ժամանեն։

— Շուտո՛վ, տեր մարդպետ, շուտո՛վ,— եղավ սուրհանդակների հարցմանը պատասխանը։

— Կերակրել երիտասարդներին և հանդիստ տալ,—կարգադրեց Հայր-մարդպետը հեռվում հարգանքով և հրամաններին պատրաստ կանգնած, սուրհանդակներին այդտեղ առաջնորդած պալատի իր սպասավորներին և ապա, նրանց հեռանալուց հետո, ինքն անցավ իր հարկաբաժինը և սկսեց պատրաստվել։

Փոքր անց նա այդտեղից դուրս եկավ ոչ միայն զգեստավորված, այլև կարծես կերպարանափոխված. իրրև ամեպ նախարար՝ գլխին դրել էր ոսկեղեն խույր, որի վրա արծաթ թելերով հյուսված էր նրա տոհմանիշը՝ մարդպետական հովազը, որով հպարտանում էր նա. ականջներին ամրացրել էր գինդեր, պարանոցին գոմարտակը. քղանցքավոր լայն թիկնոցի վրայից հագել էր զինվորական սեղմ զգեստներ, ինչ որ անում էր սահմանապահ մեծ տոներին ձի նստելիս, և այդ հագուստների մեջ նա ավելի առույգ ու թարմ էր երևում. թևերը ետ ծալած և գոտկատեղը նեղացող բաճկոնի կոճակները ոսկի էին՝ մատուրի ձևով, օձիքն ու թևքերը զարդարված էին բանվածքով և ոսկեդուն մետաքսաթել երիզներով։ Մեջքին կապել էր մի քարակ ոսկի կամար, որ եղուզված էր մարգարիտներով ու մեծագին քարերով, իսկ կամարից կախել էր մի կարճ, ոսկեպատյան թուր՝ ձախ ազդրի վրա. ոտներին նուրբ մուկիկր էին՝ մեկը ևս, մյուսը կարմիր, որ նշան էր թագավորական տոնը և պետությանը մատուցած մեծ ծառայության։

Զանցավ ևս մի քանի վայրկյան նա արդեն իր ահռելի ժողովրդը նստած, պալատի սպասավորների ճիավոր խմբով շրջապատված, դուրս եկավ մինչնարեղի դարպասներից և, ցած իջնելով, գլխավոր փողոցով դիմեց դեպի քաղաքի Ավագ դուռը կամ, ինչպես զինվորներն էին ասում վաղարշապատի դռները։

Թե գլխավոր փողոցում հանդիպող քաղաքացիները, թե Հրապարակում և թե Ավագ դռան մոտ խմբված, ավելի շուտ կուտակված բազմությունները, տեսնելով հանդիսավոր երթով եկող ճիավոր ու զգեստավորված Հայր-մարդպետին՝ բաժանվե-

ցին երկու մասի և լայն ճանապարհ բացին նշանավոր ավազանում և նրա ձիավոր չքախմբի համար, մի չքախումբ, որ դինվորներ ու զորականներ չլինելու պատճառով, բաղկացած էր բացառապես պալատի և Հայր-մարզպետի իր անձնական սպասավորներից: Նրան ճանապարհ տալով՝ բոլորն զգում էին, որ նա՛ է մայրաքաղաքում գտնվող միակ մարդը, որ առաջինը պետք է ընդունի նոր թագավորին և նրա հետ եկողներին:

— Մի քանի ամիս առաջ այսպես դիմավորեց ուրացող Մեբուժանին և տարավ պալատ, հիմա էլ գնում է ընդունելու Պապին,—ասավ մեկը բազմության մեջ իր հարևանի ականջին, իբրև ծածուկ, բայց չուրջը լսեցին:

— Դրա պատասխանատվությունն էլ այդ է,—պատասխանեց հարևանը:— Սակայն մնաց մեզ հետ և ուրիշների պես չփախավ:

— Իսկ գիտես արդյոք ինչի՞ մնաց:

— Երևի՝ պալատը պահելու, որ չկողոպտեն:

— Կարծո՞ւմ ես...

Ոստիկիցներին ընդհատեց նախ մի ուրախ կանչ, որ եկավ պարսպի գլխից, ապա մի երկարատև բազմաձայն բացականչություն, որ լսվեց բազմության առաջին շարքերից, և ժողովուրդն սկսեց եռալ, շարժվել ու ալեկոծվել: Եկողները հավանորեն մոտենում էին և յուրաքանչյուր ոք աշխատում էր առաջ գնալ և հարմար դիրք ու տեղ գրավել: Գլխից ո՛ւմ նախաձեռնությամբ հանկարծ սկսվեց ուժգին մի կոչնահարություն, որ իրմով ծածկեց բոլոր ձայները: Գլխից նաև որտեղից՝ հայնավեցին և մարդիկ, որ սկսեցին կարգ պահել. փողոցն ազատելու համար՝ ժողովրդին քշում էին դեպի փողոցի ափերը. ինչ-որ մարդիկ, չգիտես որտեղից բերած, հայկական դրոշներ էին ամրացնում կամարակապ քաղաքադռան ճակատի երկու կողմը և չոսպնեցնում միմյանց:

— Շուտ, շուտ... մոտենում են արդեն...

Հայր-մարզպետը իր ձևի վրա, իր փայլուն զգեստների մեջ լուրջ, խրոխտ ու պղեցիկ, ձիավոր չքախմբով առաջ էր գնում տակավին մարդկանցով լցված ճանապարհով, և հաղիվ էր դուրս եկել քաղաքադռնից, երբ հանկարծ օդը թնդաց «կեցցեներից» ու «ապրի»-ներից, որ դուրս էին թռչում հարյուրավոր բերաններից՝ թե պարսպի գլխից և թե ներքևից: Ապա այդ

«կեցցեներին» հաջորդեց մի խոր լռություն, որ նշան էր, թե մոտենում են արդեն, և այդ լռության մեջ քաղաքաղոտան աղջիկն ու ներսը դտնվողները լսեցին ձիերի համաչափ, հանգիստ ոտնաձայները.— Տրափ-տրուփ... Տրափ-տրուփ...

Դա ավելի ալեկոծեց բազմությունը, քան «կեցցեները», ու «ապրի»-ները, և մարդիկ ոտնամատների վրա բարձրանալով ու վիզերը երկարելով՝ աչխատեցին ավելի լավ տեսնել եկողներին և այն, թե ինչպես և ինչ ձևով է ընդունելու Հայր-մարզպետը թագավորին:

***

Վայրկյանները անցան՝ մինչև որ պարսպադունից ներս գորքվողներին երևաց, վերջապես, առաջին ձին, ավելի չուտ՝ առաջին ձիերը. դրանք քսանի չափ սաղավարտներով, զրահված, նիզակավորների մի մեծ խումբ: Երիտասարդի սաղավարտի տակից, նրա թուխ և լուրջ դեմքի վրա փայլատակում էին զույգ սև աչքերը՝ համաչափ արծվաքթի երկու կողմը. սակայն կարճ մորուքը թվում էր անխնամ ու խճճված, որովհետև գանգուր էր՝ նման սև խաղողի ողկույզի: Նա չուներ վայրկյանին համապատասխան ուրախ արտահայտություն, թվում էր մտահոգ և նայում էր կարծես ոչ թե քաղաքացիներին, այլ նրանց գլխի վրայով՝ հեռուն. թվում էր ուզում է տեսնել ինչ է կատարվել քաղաքում, մինչնաբերդում, կամ ինչ կա այնտեղ, դուրս նրանցից այն կողմ:

Դվինցիները, իհարկե, իսկույն ճանաչեցին նրան:

Դա երիտասարդ սպարապետ Մուշեղ Մամիկոնյանն էր, որ հոր՝ Վասակի բանտարկությունից հետո վարում էր հայ զորքերի սպարապետությունը: Հանդիպելով ընդառաջ գնացող չքնաղ հագնված Հայր-մարզպետին՝ նա կարծես հաղիվ ընդունեց ներքողչությունը—գլխի թեթև չարժում արավ միայն և չարունակեց

առաջ գնալ ճերմակ նժույգի նույն համաչափ քայլքով և մի խումբ թիկնապահների ուղեկցությամբ, որոնք իրենց պահում էին մի պատկառելի հեռավորության վրա։

Ոսկերիչ Գազալոնը թիկնապահների մեջ Հրահատին ճանաչելով՝ ժպտաց մտերմաբար, ձեռը բարձրացրեց և ուզեց բացականչել «կեցցե ազատագործը», բայց հարևանն արագ բռնեց նրա թևը.

— Մի՛թե կարդը չգիտես. երբ թագավորը գալիս է՝ ազատին «կեցցե» չեն կանչում։

— Ոչ թե կեցցե,— խոսեց մի ուրիշը,— կուզեի գնալ ձեռը համբուրել, որ մեզ ազատեց պարսից ահից ու մահից։

— Այդ հետո, հետո։ Տե՛ս, տե՛ս... Սրանք ո՞վքեր են։

Մուշեղից և նրա թիկնապահներից հետո, բավական հեռու տարածությամբ, գալիս էին երեք ձիավոր։ Մեկը, որ նստած էր սև մի նժույգ, երկար՝ մինչև ուսերը հասնող մազերով և կարճ մորուսով երիտասարդ էր՝ մոմատախտակը կողքից կախ։ Մյուսը, մեջտեղինը, որ նստած էր ոսկեգույն՝ բաշը սև նժույգ, ավելի երիտասարդ էր՝ բիզանդական մուսադուն թիկնոցով և պինդորական թեթև մի սաղավարտով. նրա դեմքն ածիլված էր, իսկ գլխի մազերը երկար և բիզանդական բոլորչի ձևով կտրած։ Ինչ երրորդը՝ կապտավուն բարձր ձիու վրա՝ հեզադեմ, բայց հետաքրքիր հյուսնին անց մարդ էր, որ բոլորի ուշադրությունը գրավեց իր չքնղ հագուստներով, մանիշակագույն թիկնոցով, կրծքի նշաններով և մանավանդ ցցունազարդ ոսկեերիկ գլխարկով, որ դեպի մուտքն իջնող արևի թեք ճառագայթներից փայլում էր թագի պես։

— Սա՞ է Պապը... թագավորը սա՞ է,— հարցնում էին քաղաքացիների մեջ եղած չինականները։

— Չէ, եղբայրս, դա հոռոմների կայսրն է,— նկատեց մեկը բանիմաց ձևով։— Ջի՞ս տեսնում թագը։ Պապը երիտասարդ է։

— Հոռոմների կա՞յսրը,— զարմացավ մարդիկ։— Նա ինչո՞ւ է եկել։

— Թագավորական կարգ է,— ասավ առաջին խոսողը, դարձյալ բանիմաց ձևով։— Պետք է հասցնի իր հայրապաշտքը։

— Լավ։ Իսկ Պապն ո՞ւր է. մի՛թե նա եռևից է գալու...

Ժողովրդի մեծ մասը Պապին չէր ճանաչում, որովհետև առա-

բիներ առաջ նախարարների որդիների հետ դնացել էր Բիզանդիա՝ դիտութիւններ առնելու՝ իսկ ճանաչողները ասում էին, թե նա կղա թագավորական շողշողուն զգեստներ հագած, գլխին արքայական թագ, ուսերին ծիրանի,—այդ պատճառով իսկույն չիմացան, որ հունական չքեղահամդերձ դորավար-դեսպան Տերենտի և մյուս երիտասարդի (որ ի դեպ առնիք Պապի դպիր և ուսանողութեան ընկեր Երեմիա Ամատունին էր) մեջտեղ եկող, բայը ևս ոսկեզուն նժույգը նստած երիտասարդը՝ ինքը Պապն է, որ խոշոր խաժ աչքերի ժպիտով նայում էր ճանապարհի երկու կողմը կիսոված-կուսակիսած բազմութեան: Ջնայած նրա ուրախ ժպիտներին, նրա հոնքամեջը կարծ մի գիծ, ավելի չուտ մի հատ երակ, որ վկայում էր, թե նա մտահոգ է կամ ինչ-որ մտքերով տարված... Բայց նրան չճանաչելն առաջին վայրկյանին էր. չուտով սակայն դվինցիները պատանու ծանոթ դծերը տեսան ու ճանաչեցին երիտասարդի մեջ ու հանկարծ, միանգամից ամեն կողմից հնչեցին բազմաթիվ ձայներ, որ «կեցցե» էին կանչում, Պապի անունը կրկնելով:

— Կեցցե՛, ապրի՛ Պապը... Պապը՛,— թնդում էր բազմութեան գլխավերև ու խլացնում ո՛չ միայն առանձին ձայները, այլև դուսաննների երգն ու նվագը, որ լարել էին քաղաքադուռն մոտ:

Թագավորին ողջունող ձայները կրկնվեցին երկար և դրա հետ միաժամանակ չդիտես որտեղից բերած ծաղիկներ ու կանաչ ճյուղեր նետվեցին նրա ճիու առաջ:

Երիտասարդ թագավորը, որ պարոնոցն ուղիղ նստած էր ճիուն, այդ ձայներից ավելի աչխուժացավ, գլուխը բարձրացրեց և, մեծարանքին ու պատիվներին պատասխանած լինելու համար, աջ ձեռքը, որ զարմանալի սպիտակ էր ու համաչափ, բարձրացրեց և օդում թևթևև մի չարժելով, ողջունեց քաղաքդռան առաջ ալեկոծվող, իրար անցնող բազմութեան, ժպտուն, բայց կարծես մտահոգ դեմքը ղարձնելով այս ու այն կողմ:

Ճերմակ ու համաչափ ճիուն այդ պարզ, անսեթևեթ չարժումը «կեցցենների» նոր փոթորիկ բարձրացրեց, որովհետև բոլորը հիմա պարզ տեսան, թե երեքից որն է Պապը՝ իրենց թագավորը: Ու աչխատելով առաջ գնալ ավելի լավ տեսնելու համար՝ ոմանք «կեցցե» էին կանչում, ոմանք կարճ ապավորու-

թյուններ վոխանակում. ճանաչողները զարմանում էին, որ շատ մեծացել, առնական մարդ է դարձել:

— Բայց տխուր է երևում:

— Դյուրին է թագավոր հայր և թագուհի մայր կորցնելը:

— Կամ ավերված երկրի թագավոր լինելը:

Նոր ճանաչողները գտնում էին, որ բոլորովին նման չէ թխադեմ ու թավամազ հորը, այլ, ավելի շուտ խաժակին ու ֆարսայաշ մորը՝ փառանձեմ թագուհուն և մասամբ մորաքա-ղին՝ Անդոք իշխանին:

Մի ուրիշ խմբում ուրիշ բան էին ասում.

— Տեսնենք հոր նման կլինի՞ թե...

— Դու ասա պարսիկներին գչի և երկրում խաղաղություն հաստատի, մնացածը դյուրին է:

Մի այլ խմբում մեկը բազմության մեջ մի եկեղեցական նկատելով հարցրեց.

— Ասում են Ներսես կաթողիկոսն էլ գալիս է, ճի՞շտ է:

— Այդ լավ է, Նադից կազատվենք:

— Ո՛սս... Հայր-մարդպետը ողջունում է թագավորին:

Մուշեղ սպարապետին ողջունելուց հետո՝ հայր-մարդպետը իր ևս ճիով ու ճիավոր թիկնապահներով անշարժ կանգնել էր քաղաքի դռների առաջ—թագավորին և նրա հետ եկողներին ըն-դունելու, ինչպես կարգն էր, և քաղաքի բանալիները նրան հանձնելու, ինչպես ընդունված էր: Ուստի սպասեց մինչև թա-գավորը մոտենա, և երբ նա մոտեցավ ու իրեն նկատեց, հայր-մարդպետը, տարիքին անհամապատասխան արագությամբ ճիուց ինքնելով՝ կանգնեց ճանապարհի մեջտեղը և կարճ մազերով ճեր-մակ գլուխը վայելչորեն, ծանրորեն խոնարհեց գետի առաջ:

— Ողջույն իմ նոր արքային,—ասավ նա այդպես խոնար-հած, ապա գլուխը վեր բարձրացնելով՝ շարունակեց իր թավ, բայց որոշակի ձայնով.—Ողջունելով քո ցանկալի գալուստը և հաղթական մուտքը՝ քեզ եմ հանձնում, արքա, քո հայրերի աթոռը մայրաքաղաքի բանալիները: Նաև բանալիները մինչև աբե-դի և պալատի...

Ասելով այս կարճ խոսքը՝ հայր-մարդպետը նայեց գետի էքիտասարդ, բայց հոգնած դեմքին, սպասելով որ նա կժպտա

իրեն և այդ ժպիտը շատ բան կարող է ասել ու վերաառել իր կասկածները։

Բայց Թագավորի դեմքի արտահայտությունը չվոխվեց։ Ընդհակառակը, նրա ժպիտը կարծես սառեց։

Այդ միջոցին՝ Հայր-Մարդպետի խոսքերի վրա պալատի սպասավորներից մեկը՝ մի հաղթանդամ տղամարդ՝ արծաթ սկուտեղի վրա Թագավորին ներկայացրեց քաղաքի հինգ դռներ, մկինաքերդի և պալատի բանալիները, որոնցից յուրաքանչյուրը յոթ տարեկան երեխա հազիվ վերցներ—այնքան խոշոր ու ծանր էին այդ երկաթե սև բանալիները։

Գագը դրանց նայեց մի տեսակ տարակուսած, քանի երևույթին՝ դա անսպասելի նորություն էր նրա համար, ուստի և անելիքը կարծես չիմանալով՝ «բարի» ասավ և ձեռը նորից բարձրացնելով՝ առաջ անցավ իր ուղեկիցներով, որից հետո Հայր-Մարդպետը, իր հերթին տարակուսած, սպասեց մինչև նրանք գնան, որ ինքը մնանա եկողների թափորին, որ մեծ մասամբ սպասավորով հայ զորականներ էին, որոնց նույնպես քաղաքացիները չճանաչեցին, բացի մեկից, որի գլխի ու դեմքի մազերն ամբողջ ճերմակ էին. քուխ, սրևառ դեմքին առանձնապես աչքի էին ընկնում թավ, ճերմակ հոնքերը, որ կախվել էին ուշիմ աչքերի վրա, և ճերմակ բեխերը, որ թուխնի սպիտակ թևերի նման դողում էին նրա դեմքին և թվում էր՝ ահա թռչեն պիտի։

Դա հայտնի Անդոք իշխանն էր՝ փառանձեմ Թագուհու հայրը, Սյունյաց Նահապետը, որ իր Թագավոր փեսայի հետ դժվարված՝ դժգոհ հեռացել էր հայրենիքից և կյանքի վերջին տարիներն ապրում էր Բիզանդիայում։ Քնարած իր ծերության՝ նա էլ զինվորական հին հագուստների մեջ էր և մատամբ զրահված։ Նրա հետ էր և որդին՝ Բաբիկը—հոր նման ուսապինդ ու կորովից մի երիտասարդ, որ ձին հոր նման վարելով՝ բազմությանը նայում էր հոնքերի տակից։ Սրանցից բացի մարդիկ ճանաչեցին նաև հազարապետ Կենան Ամատունուն, որ հխունի մոտ առույգ տղամարդ էր՝ նուրբ երիտ դեմքով, որ եզերված էր քուխ, քայց մեջտեղը ճերմակած մորուսով. մեկ մարդը չքախմբի մեջ, որ չուներ զինվորական հագուստներ ու զրահանոց։ Նա կապույտ էր և նախարարական հլոր դդակով։ Մյուսներն անխտիր

դիվիզիոնական հազուստների մեջ էին, սաղավարտով և թերթ պրահված։

Զորականների այս բազմամարդ խումբը, որ կազմում էր Պապի չքախումբը և որը կանդ էր առել փոքր ինչ հեռու, որ թագավորի ընդունելությունը վերջանա Հայր-մարդպետի կողմից— Պապի չարժվելու հետ՝ նրանք նույնպես չարժվեցին Անդոք իշխանի զլխավորությամբ, դեսինը դուխելով իրենց ընտիր նժույգների սմբակներով։

Հայր-մարդպետը ձին պահեց այնքան մինչև նրանք առաջ անցան, որից հետո ինքը միացավ դրանց խմբին։

Ապա երևաց չորս ճերմակ ձի լծած մի երկանիվ կառք՝ շրջապատված ձիավոր եպիսկոպոսների ու վարդապետների մեծ խմբով, որոնց սև հագուստներն ու սև գլխանոցները առոչնչին մի երանգ էին ստեղծում վիճակական այդ թափորի մեջ։ Կառքում նստած էր երկարամորուս մի ծեր հոգևորական՝ մազաղաթի դժգույն դեմքով, որի վրա սակայն վառվում էին երկու խոշոր, արտահայտիչ ու կարեկից աչքեր։

Դա աքսորից վերադարձող Ներսես կաթողիկոսն էր, որին Բիզանդիայում գտնված միջոցին, կրոնական ինչ-որ վեճի պատճառով, հոռոմների անզուսպ վաղես կայսրը աքսորել էր հայ եպիսկոպոսների հետ միասին մի մենավոր ու անբնակ կղզի, ուր նա մնացել էր երեք տարի և հիմա, Պապի և Մուշեղի միջնորդությամբ ազատվելով, վերադառնում էր հայրենիք։ Նա ուժասպառ էր երևում և շատ հյուծված, այդ պատճառով չէր կարողացել ձի նստել և ճանապարհի մեծ մասը կտրել էր ջորիների վրա հարմարեցրած պատգարակով, իսկ Վաղարշապատից սրդին կառքով։ Նրա ճերմակ մեկը՝ սև պարեզոտի լայն թևքի հետ միասին դրված էր պարեզոտով ծածկված ծնկանոցը, մյուսը՝ լայն թևքի հետ թույլ, կարծես անկենդան կախված էր կողքին։

Նրան տեսնելով՝ հախուռն չարժումներով, քաղմուքյունը ճեղքելով, առաջ եկան մի վարդապետ և մի երկու քահանա, ու երբ կաթողիկոսի համբրնթաց կառքը հավասարվեց նրանց, երեքը միասին պատռեցին ձիավոր եպիսկոպոսների շղթան և կառքին մոտենալով՝ երկուսը մի կողմից չերմեռանդ երկյուղով համ-

բուրեցին իրենց քահանայապետի կախ ընկած թևքը, երբորդը՝ պետական քահանան, մյուս կողմից՝ մեռոնաբախտը շալ պարեզոտի քղանցքը բռնելով՝ երկյուղած մոտեցրեց իր շուրթերին:

Կաթողիկոսը, հայացքը աստղածուփքին մեջ, նրանց չնկատեց, բայց զգալով որ ձեռը համբուրեցին և քղանցքը քաշեցին, նա սովոր ու հանդիսավոր շարժումով բարձրացրեց աջը և խաչակնքեց բազմությունը: Այնուհետև նա այդ բանը, մինչև պատյատ հասնելը կրկնեց մի քանի անգամ՝ մեքենայորեն, միշտ կարծելով թե բազմությունն ապատում է ղրան, պետք է զոհացնել նրան. և մի քանի տեղ իրոք պառավներն իրենց փոքրիկ թոռներին, մայրերն իրենց գրկի երեխաներին մոտեցնում էին կաւքին, և խնդրում աղերսաձայն:

— Օրհնի՛ր, հայրապետ, օրհնի՛ր...

Եվ Ներսեսը, աչքերի տենդային հայացքը վեր կամ հեռուն՝ խաչակնքում էր նրանց ծերունական դողդոջ, նիհար, մատղաշ ձեռը պարեզոտի լայն թևքի մեջ վեր բարձրացնելով:

Կաթողիկոսին հետևող հոգևորականների մեջ կար մեկը, որ մանավորապես գրավեց բոլորի ուշադրությունը. դա ալեմորուս ու խստադեմ մի եպիսկոպոս էր, որ հակառակ մյուս ուղեկից հոգևորականների, որ ձի էին հեծած անխոհիր, ինքը նստել էր մի կարճահասակ ու գորշ ավանակ: Ի տես այդ պատկերի՝ ծիծաղի մի զուսպ ալիք անցավ բազմության մեջ:

Դա Բագրևանդի և Արշարունիքի եպիսկոպոս Մաղն էր, որ համարվում էր Ներսեսի տեղապահը, իսկ նրա բացակայությամբ փոխարինում էր նրան: Լինելով խստաբարո ու խստապահանջ եկեղեցական, նա քրիստոնեական կրոնի ու վարդապետության սաճեն մի, թեկուզ թեթև, պարտադանցության ու չեղումի համար պարսավում ու հանդիմանում էր սաճենքին՝ լինելը թագավոր, իշխան թե ռամիկ—միևնույն էր: Սակայն կրոնի ու քրիստոնեական կարգը պահելու կողմից լինելով անբասիր՝ նա սկզբում օբրում էր միևնույն ժամանակ ճոխ հագնվել, մորուքին ոսկի փոշի ցանել և գեղեցիկ, ոսկով ու արծաթով եղուզած սաքով ձի նստել: Այս հանգամանքն ահա մի քանի նախարարներ (որոնց պարսավել էր Մաղը) առիթ դարձրին և իրենց հերթին հանդիմանեցին նրա պճնամոլությունն ու ճիսախրությունը: Այդ օրվանից նա, չքեղ զգեստներից հրաժարվելով, հագնում էր

մոգերն և հասարակ մի պարեզուտ, իսկ ձիու փոխարեն նստում էր ավանակ: Բայց չնայած դրան՝ հոգևորականները պատկառում և վախենում էին նրանից. հիմա էլ չէին համարձակվում իրենց ձիերն առաջ քշել նրա ավանակից, որ երկար ականջները ետ ու առաջ թափահարելով՝ գնում էր կաթողիկոսի կառքի եռևից փուքիկոտ մի ընթացքով, մանրիկ սմբակները աշնան չոր գետնին կտկտացնելով:

Կաթողիկոսի և նրան ուղեկցող հոգևորականության եռևից գալիս էին դարձյալ հեծյալ զինվորականներ՝ մեծ մասամբ սպարազեն ու թեթև սաղավարտներով, իսկ դրանց հետևում էր զինավառ մի զորապետ, որը, ինչպես երևում էր սարդված դրոշից, Թագավորի թիկնապահ գունդն էր: Զինված էին դրանք նետ-աղեղով, աշտեներով և երկարաբուն նիզակներով, որոնց ասյրերը ցորտ ու ճառագայթում էին մայրամուտը դիմող արեւի թեք շողերից, և թվում էր՝ զինվորները կարծես նիզակներ չէին տանում, այլ վառ կերոններ: Երբեմն շողում էին և նրանց պղնձե սաղավարտներն ու զրահները, որ հագել էին հատկապես մայրաքաղաք գալու պատճառով: Դրանց առաջնորդում էր մի եռանդուն դեմքով, լեցուն վզով և քթի ծայրը փոքր ինչ վեր ցցված երիտասարդ, որ սաղավարտը գլխին, թուրը կողքին, հետաքրքիր աչքերով նայում էր բազմության, կարծես ինչ-որ մեկին փնտռելով:

— Սա Մուշկ Սահառունու որդին է, ճանաչեցի,— ասավ մեկը բազմության միջից:—Երևի, հորն է վիճտուում... կարծում է՝ պղծ է:

Դա իրոք անվանի նախարար Մուշկ Սահառունու որդի Բաբին էր, որ չորս հինգ տարի առաջ Գապի և Երեմիա Ամատունու հետ միասին գնացել էր Բիզանդիա ուսանելու, և հիմա Գապի և Երեմիայի հետ վերադարձած՝ վարում էր թիկնապահ գնդի պետի պաշտոն: Ինչպես Երեմիայի, այնպես էլ նրա հայրն ընդհել էր Արտագերսի պաշտպանության օրերին և նա, հավանորեն, այդ չիմանալով, ձիու վրայից աչքերով որոնում էր հորը: Իսկ հեծյալ գունդը հետևում էր նրան համաչափ ընթացքով ու զենքերի փայլով, ծանր նիզակների կոթերն առագաստիներին դրած: Երբ քաղաքացիները մոտենում էին նրան՝ թվում էր նիզակ-

նները սկսին դիպչեն նրա կամարին, բայց զինվորները ժամանակին վարժ շարժումով թեքեցին և այնպես մտան քաղաք։

Ամենից վերջը քաղաք մտավ հունական զինվորների մի փոքր խումբ, որ հագնված էին բոլորովին տարբեր, քան հայ զինվորները։ Դրանք զորավար-դեսպան Տերենտի թիկնապահ զինվորներն էին, որ իրենց հրամանատարի կարգադրությամբ գալիս էին ամենից վերջը։

Երբ բոլորը մտան քաղաք և Թափորը դխասվոր փողոցով շարժվեց դեպի հրապարակ ու մինարեերդ՝ Քվաց Դվինը լցվեց մարդկանցով. բազմությունը—փողոցի երկու կողմից գնում էր Թափորի հետ, յուրաքանչյուրն աշխատելով եկողների մեջ տեսնել մի ծանոթ ու խոսել հետը, իմանալ ինչ է անցել-դարձել մինչև Դվին, ինչպես են հաղթել պարսիկներին և շատ այլ բաներ։ Այդ ցանկությունն ուներ առանձնապես ոսկերիչ Գազալոն, բայց առայժմ ոչինչ չէր հաջողում նրան։

Սահակյան բոլորովին այլ տրամադրությամբ էր համակված Հայր մարզպետն այդ պահին, մխանալով Թաղավորին հետևող զինվորականների խմբին՝ նա այլևս ուշ չդարձրեց ետևից եկողներին, անգամ ճերմակ ձիերով կառքում նստած Ներսեհի վրա և վախ թեթև մի շարժումով ողջունեց Անդոք էշխանին, որոնց գնալ չէր սպասում այս Թափորի հետ և որոնք պարզապես տհաճ թվացին նրան, մանավանդ այն բանից հետո, երբ չհաջողացավ իմանալ Գապի վերաբերմունքը։

Նա սպասում էր, որ Գապն իրեն տեսնելուն պես ոչ միայն կուրախանա, կժպտա սիրալիր, այլև կարոտով կզրկախառնվի հետը։ Սակայն նա՝ Գապը... չժպտաց անգամ։ Ի՞նչ էր նշանակում դա. հոգնա՞ծ էր, չփոթվա՞ծ, թե իր բշնամիները նախապես վատ են տրամադրել նրան,— մտածում էր Հայր-մարզպետը ձիու վրա, Թագավորի չքախմբի հետ գնալով։

Ու այնքան էր նա տարված-կլանված իր այդ մտքերով, որ չնկատեց, թե ինչպես Թափորը քաղաքադռնից մտավ դխասվոր փողոցը, հասավ հրապարակ, ինչպես կաթողիկոսի կառքը, դրան հետևող եպիսկոպոսների ու վարդապետների խմբով զատվեց Թափորից ու թեքվեց դեպի մայր եկեղեցին, ապա ինչպես Թափորը հրապարակը լցված ժողովրդի ուրախ կանչերով, բացականչություններով դիմեց դեպի մինարեերդ։ Նա իր տխուր

խոհերից սթափվեց միայն այն ժամանակ, երբ մէջնաբերդի առաջին պարսպի մոտ առաջ եկավ մի սևազգեստ կին և ճչաց.

— Բա՛ց... պավա՛կս...

Այդի իշխանուհի Սահառունին՝ բարձրահասակ, ոսկեպսակ սևեր հագած մի կին, եկողների մէջ հանկարծ ճանաչեց իր որդուն, որ հինգ տարի առաջ, տակավին պզտիկութեան մեկնել էր Բիւզանդիա ուսանելու և հիմա թեև հասակն առած առնական տղամարդ էր և, զինվորական հագուստների մեջ, սաղավարտով ու վահանով մորուսով,—մայրն այստեղինեայնիվ ճանաչեց նրան ու նետվեց դեպի նրա նժույգը: Որդին նույնպես ճանաչեց մորը, թեև նրա ձայնից կամ աչքերից և անմիջապես ձիուց իջնելով՝ գրկեց նրան, համբուրելով նրա ձեռներն ու կուրծքը:

— Իսկ Պասկն ո՞ւր է, Պասկը,— հևում էր այդի իշխանուհին ուրախության արցունքների միջից:

Սեղմ կինը նույնպես չէր ճանաչել Պասկին, և երբ ցույցավին—նա նույն գորտոլով նետվեց դեպի Պասկը և, խախտելով սահմանի կարգ ու պատշաճավորություն, համբուրեց ձիուց իջնող Պասկի դլուխը, ճակատը, ապա գոռնալով Սմատուսի երիտասարդներին՝ զարհուրացրեց իր մայրական համբույրներին ու հանկարծ.— Իմ որդի, իմ զժբախտ զավկանեա,— խոսեց իշխանուհին կերկեր, ձեռները վեր պարզած:—Ես երանելի ու երջանիկ եմ, որ ձեզ տեսնում եմ նորից... Վրեժխնդիր եղեք, զավակներս, ձեր սպանված հայրերի, ձեր գերված մայրերի ու քույրերի համար...

Նրա վեր պարզած ձեռները գողացին ձայնի հետ միասին, և նա կանգ առավ մի վայրկյան ու՝

— Կայենի նզովքը անօրեն պարսիկի վրա,— ձայնը բարձրացրեց իշխանուհին,— Կայենի նզովքը ուրացող Մերուժանի գլխին:

Նրա ձայնը բեկվեց հանկարծ և արցունքները գլորվեցին աչքերն ի վար:

Ոմանք հուզվեցին սևազգեստ իշխանուհու խրոխտ դիրքից ու խոսքերից: Բայց շատերը զարմացած էին, ամենից ավելի բյուզանդական զորավար-դիսպան Տերենտ կոմսը, որ հազ աչքերը հայվաքած՝ մեծահոգությամբ դիտում էր այդ տեսարանը և

սպասում, թե երբ են առաջ շարժվելու... Մինչդեռ Գալը, տեսնելով այդ դորովալի կնոջ զգացմունքների անկեղծ արտահայտությունը՝ նկատելի հուզվեց: Նա կարծես ավելի ըմբռնող, իսկոյն խաժ աչքերը տխրամած փայլ առան և նրա աչ երեսը խաղաց ջղաձիգ...

Իսկապես նա սպասում էր, թե ահա իր մայրը՝ տիկնանց-տիկին Փառանձեմ Թագուհին նուշնպես կգա ճոխ հագնված և, իր վզին փարվելով, կարտասվի ուրախությունից, ինչպես եղ-խանում Սահառունին... Կուրախանա իր հաղթության համար, իր գալու համար... Ու մինչև պալատ Թանիատ հայացքով ինդում էր մոր դեմքը, որ տարիները բնավ չէին աղաւրտել նրա հիշողության մեջ. հիշում էր մոր համաչափ, գեղեցիկ հասակը, նրա բոցափայլ աչքերը և եռանդուն, տիրական քայլվածքը: Ամբողջ ճանապարհին, անգամ կուխինների մեջ, երբ հայ զինվորը ճակատում էին պարսից դեմ և հաղթելով՝ նահանջի մատնում նրանց,—Գալը մոածում էր, թե որքան սրտառուչ պիտի լինի իր և մոր հանդիպումը: Սակայն մայրը չէր երևում... Սպասում էր, թե նա կլինի, երևի պալատի սանդուղքներից, պալատական կանանցով շրջապատված: Սակայն այստեղ էլ նա չերևաց դարձյալ: Մոր բացակայությունը զարհուրեցրեց Գալին և այնուհետև նա էլ կարծես ոչինչ չէր տեսնում իր շուրջը. նրա նայվածքը որոնում էր միայն մոր դեմքը... Գալին ասել էին, թե Արտաշեսի անկումից հետո՝ Թագուհին Մերուժանի հրամանով, վակված պահվում է Դվինի պալատում, չկամենալով վշտացնել առանց այն էլ վշտահար Երիտասարդին, որի Թագավոր հայրը բանտարկված էր Գարսկաստանի Անհուշ բերդում, երկրի կեսը գրավված էր ու քանդված: Այդ էր պատճառը, որ Գալն անհամբեր որոնում էր մորը, սպասում էր նրան... բայց նա չկար...

Այդ ժամանակ նրա սիրտը կասկած ընկավ, թե մի գուցե մայրը տկար է՝ կրած ապրումներից ու ցնցումներից հետո. Թերևս վիրավոր... որ չի կարողացել գալ իրեն դիմավորելու... Բայց ինչու այդ բանը չեն հայտնում իրեն: Նվ սպասում էր, թե ահա մեկը կմոտենա և կհայտնի մի բան: Ինքը չէր ուզում հարցնել, մոածելով որ այդ հարմար չէ իրեն, գուցե և վայել չէ այդ ժամին: Իսկ երբ պալատի սանդուղներին էլ մոտենալիս

մայրը չերևաց—նա մտածեց, որ մի դուցե նա սուզի մեջ է հոր պատճառով, դուցե կարգին այդ է, որ նա տնից չպետք է դուրս գա...

Սակայն երբ չքախմբի և ուղեկցողների հետ միասին մտավ պալատ—նա, առանց որևէ տեղ կանգ առնելու, անդամ առանց թիկնոցը ցած դնելու, անցավ մյուս սրահները, ապա այլ սրահներ և մտավ հատկապես մոր հարկաբաժինը՝ այն պատրվակով, որ տեսնի թե ինչ վիճակի մեջ են թողել պալատը պարսիկները, Մելուժանը: Եվ ամեն տեղ, ամեն ինչ նրան թվում էր այնպես, ինչպես տեսել էր տարիներ առաջ:

Բայց մայրը չկար...

Եվ այստեղ ահա—դա մոր ննջարանում էր— Պապը այլևս չկարողացավ իրեն պահել ու նրա բերանից հանկարծ դուրս թռավ ճիչի նման մի ձայն.

— Ո՞ւր է մայրս... ո՞ւր է Թագուհին...

Հայր-մարդպետը, որ ակնդետ հետևում էր Պապին և առիթ էր փնտրում նրա հետ խոսելու և հիմա որոշ հեռավորությամբ սրահից-սրահ—գնում էր նրա ետևից,—Պապի այդ տխուր հարցումից հետո ուղեց մոտենալ նրան, բայց Մուշեղ սպարապետը, չզիտես ո՛րտեղից, վրա հասավ անմիջապես Երեմիա Ամատունու հետ և, նրա ձեռքը բռնելով, տարավ մի այլ սրահ ու դուրսը դրեց Հայր-մարդպետի դիմաց: Հայր-մարդպետը զարմացավ, բայց դիմացնել չտվեց: Թե Մուշեղը, թե Երեմիան և թե Բաթը ամրողջ ճանապարհին համոզտացրել էին Պապին, թե լսել են հաստատ, որ Թագուհին փակված է պալատում, հիմա ընդունելության հանդեսի մեջ չէին մոռանում, որ Պապը պալատում անշուշտ հետաքրքրվելու է և հարցումներ է անելու մոր մասին. ուստի և, երբ նա զատվեց իրենցից ու գնաց դեպի Թագուհու հարկաբաժինը— նրանք հասկացան ուր է գնում Պապը և հետևանց զգուշորեն հետևեցին նրան, որ մարդկանցից, բազմությունից հեռու, առանձին հայտնեն նրան դժբախտ իրողությունը և որքան կարող են՝ մխիթարեն: Ու այն ժամանակ ահա, երբ Պապը, մոլոր չգտնելով նրա սրահներում, անդամ քնարանում, ինքնաբերբ բացականչեց.— «Ո՞ւր է մայրս... ո՞ւր է Թագուհին»— Մուշեղն անմիջապես առաջ նետվեց ու փարվեց Պապին:

Այդ րոպեին նա ընավ նման չէր քաղաքաղուանը մոտեցող սառն ու խստահայեց պորտալրի, այլ մի գորովոտ եղբոր, որ պիտի փայփայել և ջերմ խոսքեր ասել։ Ներան հետևեցին Երեմիան ու Բաթը։ Այդ տեսնելով՝ Պապը հասկացավ, որ դժբախտություն է կատարվել և բարեկամները ուզում են մխիթարել իրեն. և նրա աչ կիսադեմը՝ ծնոտից մինչև աչքատակը պողպ ջղաձիգ, մի բան, որ նա ստացել էր հոր քանտարկությանլուրը լսելիս։

— Ուրեմն մորս պատահել է մի այնպիսի դժբախտություն, որ դուք, ինձ խնայելով՝ Թաքցրե՞լ եք,—դարձավ նա Մուշեղին և ընկերներին։

— Այո, Պապ սիրելի,—գրկեց Մուշեղը նրա ուսը։— Մենք չէինք կարող քեզ վշտացնել քո առաջին իսկ քայլերից։ Այդքան վշտերը չափազանց կլինեին ոչ միայն երիտասարդի, այլև փորձ մարդու համար։

— Իսկ իմ պապը՝ Անդոք Իշխանը գիտե՞ այդ։

— Այո, Պապ, նա ևս խնայում էր քեզ, հայրական սիրտը թաքցնելով քեզնից։

— Ի՞նչ է պատահել ուրեմն մորս. պատմեցեք,— ասաց Պապը, և նրա աչ երևսը նորից դողաց։— Ես հիմա ամեն քան կարող եմ լսել՝ այս բոլոր թշվառությունները տեսնելուց հետո։ Պատմեցեք։

Մուշեղը, որ տաս և ավելի տարով մեծ էր Պապից, փորձ մարդու հոգատարությամբ նախ նստեցրեց Պապին սրահում ևղած օթոցներից մեկի վրա և ապա մեղմ ու համառոտ պատմեց, թե ինչ խիզախությամբ է դիմադրել Թագուհին պարսիկներին, ինչպես էր գերվել Արտագերսի անկումից հետո և թե ինչ խոսքեր է ասել Թագուհին իրեն գերող պարսից պորտավարին. «Ես ուրիշ բան էլ չեի կարող ասասել ձեր նենգ արքայից, որ խաբեությամբ կանչեց իմ Թագավոր ամուսնուն և բանտարկեց»... «Այո, մեր և ձեր տարբերությունն այն է, որ մենք ձեր արքայի գերի ընկած կանանոցը պատվով վերադարձնում ենք ձեր երկիրը, իսկ դուք գերի եք տանում մի մենակ Թագուհու»...

Մոր այս և այլ պատասխանները հպարտությամբ լցրին հարծես Պապի սիրտը։

— Այդ խոսքերը պատիվ են բերում իմ մորը,—ասաց-Նա և

Նրա աչքերում չոզացին արցունքները։—Ուրեմն Շապուհը զրկեց ինձ թե հորից և թե մորից,— և մի վոջը լռելուց հետո՝ շարունակեց։—Որքան ցավում եմ, որ չկարողացանք օգնություն հասնել և փրկել նրան գերությունից։ Եթե մի ամիս շուտ հասնեի՛նք... Այո, մենք ուշ հասանք, բարեկամներս,— կրկնեց Պապը խորին արտմատությամբ ու տխրությամբ և հանկարծ ոտքի եղավ մի արտակարգ վճռականությամբ։—Ահա ինչու՛ իշխանուհի Սահատունին մեզ որբ անվանեց և կոչ արավ վրեժխնդիր լինել գերված մայրերի համար։ Այո, մեզ հիմա ուրիշ բան չի մնում, եթե ոչ վրեժխնդիր լինել այս ամենի համար և մեր սուրը պատյան չդնել՝ մինչև որ...

Այդ ժամանակ արագ ներս մտավ կարճ ու պինդ Անդոք իշխանը՝ ճերմակ գլուխը բաց, կարճ թուրը տակավին կողքից կախ։ Նա էլ գիտեր, որ Պապը համոզված է թե մայրը պատանուն է, հիմա սակայն նրան չտեսնելով՝ քնակնատեր պիտի հետաքրքրվեր ուր է,— ու ժամանակին էր ճշմարտությունն ասել նրան. և այդ պետք է աներ ինքը, որպես մորաքույր, պետք է մխիթարեր ու սիրտ տար նրան, թեև իր սիրտն էլ լիքն էր անչյուխ. Թագուհի դստեր անչյունները դատարկ տեսնելով՝ նորոգվել էր նրա վիշտը։ Բայց հազիվ մտել էր շեմքից՝ նկատեց, որ Պապն ամեն ինչ գիտե արդեն։

Մի վայրկյան էլ և Անդոքն ու Պապը իրար նայելով՝ անշուռ գրկեցին միմյանց, ու երկուսի դեմքով էլ արցունքներ վազեցին։

— Պապիկ, ես արդեն իմացա, մորս հասած դժբախտությունը,— առաջինը խոսեց Պապը։—Հպարտ եմ, որ նա եղել է այդքան խելոք...—Նա կանգ առավ՝ տես կոկորդում նոր արցունքներ զգալով և ապա, սթափվելով, շարունակեց հուզված.—Եվ պետք է աշխատեմ ետ չմնալ իմ մորից... Թշնամու դեմ...

— Այո, զավակս, իմ փառահեղ մորը կույր է կանչում մեզ,— ասավ ծեր իշխանը դողդոջ ձայնով, բայց դա կարծես պողպատի դողդոջ էր և ոչ մարդկային ձայնի։— Իմ ծեր սիրտը նույնպես չի հանգստանա մինչև վրեժխնդիր չլինեմ հին գործից...

Անդոք իշխանը Շապուհին ուրիշ կերպ չէր կոչում, բայց երբ «հին գործ» որի հետ նա ընդհարվել էր դեռ այն ժամա-

նակ, երբ ինքը Տիգրանակերտի կառավարիչ էր. Շապուհն ահապին բանակով հռոմեների դեմ գնալիս, Տիգրանակերտին հանձնելով՝ Անդոքից պահանջեց կամ թողնել իր զորքին քաղաքում գիշերելու կամ պաշար ուղարկել բանակի համար: Անդոքը մերժեց թե մեկը, թե մյուսը, չցանկանալով խախտել հայոց աշխարհի չեզոքությունը և բարեկամ հույներին դրդռել հայերի դեմ: Ոհեմ մի վարմունք իր երկիրը սիրող նախարարի կողմից, քայց Շապուհը չներեց իշխան Անդոքի այդ մերժումը և վրեժխնդիր եղավ՝ վերադարձին Տիգրանակերտը կողոպտելով: Անդոքը սակայն անպատիժ չթողեց պարսից արքայի այդ արարքը. մի տարի հետո նա իր հեծելազորով փոթորկի պես անսպասո մոտավ Տիգրոն, քաղաքը հրդեհեց և, արքունական գանձերը վերցնելով, անցավ Սյունիք, այնտեղից Բիզանդիա, որովհետև վեհան՝ Արշակ թագավորը, Շապուհից վախենալով, թե ավելորդ թշնամություն չհարուցելու համար, չկամեցավ, որ նա, այդ համարձակ գործը կատարելուց հետո, մնա Հայաստանում: Եվ նա չմնաց. բայց և չկարողացավ երբեք անտարբեր լինել դեպի իր երկիրն ու նրա աղետները... և հիմա էլ, թեև քաղաքական ու ռազմական կյանքից հեռացած ու ծերացած, նա հույս ուներ, թե նորից կարող է վրեժխնդիր լինել «հին գայլից»: Դրա համար էր նա թողել Բիզանդիայում գնած իր հանգիստ կալվածը և եկել:

— Այո, վրեժ զավակներս. միայն վրեժը կհանգստացնի մեր խոցված սիրտը,— կրկնեց իշխանը, և նրա թավ ճերմակ բեղերը ցնցվեցին՝ փոքրիկ ճերմակ թևերի նման:

Վրեժի ղեգացմունքով էր լցված ոչ միայն ծեր իշխանը, որի կնոջն ու թագուհի դստերը Շապուհը տարել էր գերի, վրեժի ղեգացմունքներով էր տոգորված ոչ միայն Պապը, որի թագավոր հորը բանտարկել էր Շապուհը՝ Անհուշ բերդում, իսկ թագուհի մորը մատնել գերության անարգանքին, վրեժով լցված էր ոչ միայն Մուշեղ սպարապետը, որի մորթազերծ հոր ուրվականը ոտխոտում էր նրան մորթազերծ անել իր ձեռն ընկած յուրաքանչյուր պարսից զորավարի և, խոտ լցնելով, ցուցադրել, վրեժով էին լցված նաև Պապի ուսման և օտարության ընկերներ Երեմիա Ամատունին և Բաթ Սահառունին՝ ոչ միայն իրենց հայրերի համար, որ ընկել էին Արտագերսի պաշտպանության

ժամանակ, այլև ավերված քաղաքների ու գյուղերի և անարգված, սրսռված հայրենակիցների համար: Ընդհանրապես այդ օրերին հայոց աշխարհում չկացած էր մի զգացմունք, որն իրոք ծածկել էր մյուս բոլոր զգացմունքները,—և դա վրեժի զգացմունքն էր, որ համակել էր անգամ քրիստոնեական ներողամտություն քարոզող հայ եկեղեցականներին՝ կաթողիկոսից սկսած մինչև վերջին քահանան—հայ կրոնը, վանքերն ու եկեղեցիները քանդելու, անպատվելու համար... Վրեժ ու հաստություն էր պահանջում իր նեղիչների դեմ և ամբողջ ժողովուրդը, որ ավերվել էր, կորցրել հարազատներին, սեփականությունը—ինչքն ու ստացվածքը և, վեր ջապես, ամենագնահատվորը, վիրավորել ու խոցել էին նրա ամենանվիրական ու ամենասուրբ զգացմունքը— ազգային և մարդկային արժանապատվությունը:

— Այո, միայն վրեժ,—կրկնեց նորից ծեր իշխանը իր թավ, մասամբ ռնգային ձայնով:—Իսկ հիմա պետք է հանգստանալ, զավակներս, առավոտը նախ կան գնալու համար: Ես թեև քնել չեմ կարող, բայց պետք է հանգստանալ...

Մինչ այդ Հայր-մարդապետը, դժգոհ Մուշեղ սպարապետի վարմունքից (նա չհմացավ հաստատ իր դեմ էր այդ թե ոչ), որ դուրը դրեց իր դեմ, նա մի քանի վայրկյան այդ սրահում մնալով՝ անցավ նորից հյուրերի մոտ և, որպես պալատի կառավարիչ ու որպես միակ հյուրընկալը պալատում—սպասավորների պետին կարգադրեց՝ տեղավորել հյուրերին, յուրաքանչյուրին իր աստիճանի ու դիրքի համեմատ, ապա պատվիրեց.

— Իսկ մուրճն ընկնելուն պես՝ վառել պալատի բոլոր կանթեղները և, ի պատիվ նոր թագավորի գալստյան, լուսեր վառել նաև բակում և մինչառավոտի վերին պարսպի երկարությամբ:

Ու ինքը գնաց իր հարկաբաժինը:

Եվ փոքր անց, իրավ, մուրճը հազիվ ընկած՝ պալատի բոլոր սրահներում ու մինչանցքներում վառվեցին թե ձեղուններից կախ ընկած բազմաստեղ ջահերն ու ճրագարանները, թե անկյուններում ու որմնախորշերում դրված հնգաստեղ ու յոթաստեղ կանթեղներն ու աշտանակները, որ վաղուց ի վեր չէին վառվել և այժմ առատ լուսերով երևան էին հանում սրահների թե գեղեցկությունը, թե արատները և թե մանավանդ նրանց որմնանկարները, քանդակները, զարդերն ու կահերը:

Առատ լույսեր վառվեցին նաև ընդարձակ ծառազարդ բակում, պալատի սանդուղների դիմին և այնտազարդ ճեմելիքում, դնելով այդ տեղերում մարդու հասակից բարձր լապտերներ: Դրանք խնամակալ վայտե լայն պատվանդանով երկաթե ձողերի վրա ամրացրած պղնձե խոր ափսեներ էին, որոնց մեջ յուղեր, դվեսավորապես ձեթ լեցնելով՝ հրավառությունն էին սարքում արքունական մեծ տոներին:

Նույնպիսի և ավելի մեծ լույսեր էին վառվում մինչնաբերդի վերին պարսպի ամբողջ երկարությամբ, որ քաղաքից թվում էր կախարդական լույսերի շղթա, որ բոլորում-դառնվորում էր մինչնաբերդը, իսկ ավելի հեռվից այնպես էր թվում, թե քաղաքի դիմին կախվել է հրեղեն մի պսակ. և պատրանքն ավելանում էր նրանով, որ այդ լույսերը բոցավառվելով՝ փողփողում էին շարունակ: Այդտեղ՝ պարսպի ստամնաշարի քանդից մեկ ստամբ և բոլոր աշտարակները հարմարեցված էին լուսավառության համար. այնինքն՝ ուներ պղնձե խոր մի ափսե, ուր, ինչպես և մյուս լապտերների մեջ, յուղ էին լեցնում և վառում տոն օրերին:

Երբ այս ամենը եղավ իր կարգադրության համաձայն՝ Հայր-մարդպետը, տակավին տոնական հանդերձները հագին, մտածեց գնալ Պապի մոտ՝ հարցնել նրա առողջությունը, իմանալ նրա ցանկությունները ու կարգադրությունները պալատի մասին, բայց իսկույն էլ զգաց, որ հարկ չկա հիմա խանգարել նրա հանգիստը, եթե նա իր կարիքն ըղձ՝ կկանչի ինքը... Սակայն բավական մտածելուց հետո՝ նորից զգաց, որ լավագույնն է անձամբ ներկայանալ, մանավանդ որ իր պաշտոնի հանգամանքը թելադրում է այդ. գուցե և նա ունի ինչ-ինչ կարգադրություններ, որ ուրիշ մեկը չի կարող անել... Ու գնալով՝ կարելի էր հարցնել նրա առողջությունը, իսկ եթե լիներ բոլորովին մենակ՝ կարելի էր խոսել մտերմորեն, իբրև իր հայկին տանի հետ և իմանալ, վերջապես, նրա տրամադրությունը, որից և կերևար—լսո՞ւ է իր մտքին որևէ վատ բան թե ոչ...

Հայր-մարդպետին թվում էր, թե անկարելի բան է, որ իր թշնամիները և հատկապես Մուշեղը, այդ նորաթուխ ոսկերչապետը բավական չարախոսած չլինեն իր հասցեին. բայց թե ինչ

չափով՝ նա դժվարանում էր ենթադրել. այդ կարելի էր պարզել Թագավորի վերաբերմունքից ու տրամադրությունից: Այն, որ նա քաղաքադրան մոտ, բանակինեկն ընդունելիս «բարի» աասվ,— դրանից դժվար էր եզրակացնել նրա վերաբերմունքը. այդ մի[illegible]ին նա թերևս այնքան հուզված էր, դուռն և չփոթված, որ չկարողացավ խոսել: Սակայն հիմա, եթե առանձին հանդիպեն և խոսեն—ամեն ինչ, երևի, կպարզվի:

Որքան էլ Հայր-մարդպետը համոզված էր, թե Թագուհու հետ ունեցած իր խոսակցության մասին հազիվ թե մեկը մի բան իմանար, այնուամենայնիվ նրան հետաքրքրում էր Պապի վերաբերմունքը, որից և կպարզվեր լսե՞լ է մի բան թե ոչ: Բացի այդ, նրան թվում էր, որ կարող էին վատաբանած լինել, թե ահա դիտմամբ մնացել է մայրաքաղաքում, թույլ չի տվել դիմադրել պարսիկներին, քաղաքի դռները բացել է նրանց առաջ, Մերուժանին ընդունել է պալատ, նրա կողմից զնացել է Արտաշեր՝ Թագուհուն համոզելու՝ անձնատուր լինել և շատ ուրիշ բաներ...

Հայր-մարդպետն ուզում էր այդ ամենն առուգել Թագավորի տրամադրությամբ, ավելի շուտ վերաբերմունքով: Պապի մի ակնարկից, ակնթարթումից անգամ ինքը կհասկանար, թե ինչեր դիտի նա, ինչեր է լսել, և այնժամ ինքը, խոսք բանալով՝ կպատմեր ամենը, ինչ է անցել-դարձել մայրաքաղաքում, երկրում, կբացատրեր իր մնալու պատճառները, կասեր և այն, թե ինչպես է փրկել քաղաքը ավելորդ ավերումից ու կոտորածից: Իսկ եթե հարկ լինի խոսել նաև Արտաշերի մասին— ինքը կասի, թե ինչպես ստիպված էր անել այդ բարի դիտավորությամբ, բայց Թագուհին, դժբախտաբար, ուժ չուներ պարսից զորության դիմադրավելու...

Ու իր կասկածներից մղված՝ Հայր-մարդպետը վեր կացավ և մի հաստատ վճռականությամբ գնաց դեպի Թագավորի հարկաբաժինը: Բայց երբ նա իր արժանապատվությանը վայել ծանր ու մեծ քայլերով անցնում էր լայն և ճեղուններից կախ ճրագարաններով լուսավորված միջանցքով՝ Թագուհու հարկաբաժնի բաց դռներից տեսավ, որ Պապը տակավին մոր հարկաբաժնում էր և նրա հետ այնտեղ էին զարձյալ Արտակ Ամատունու որդի Երեմիան, ինքը Մուշեղը՝ իր չսիրած այդ ազգա-

պետը և երիտասարդ թագավորի մորաքրոջ կարճ ու պինդ Անդոք իշխանը, որ հուզված զննում-զալիս էր տխուր երիտասարդների առջև ու խոսում ինչ-որ «վրեժի» մասին:

«Ի՞նչ վրեժի մասին է խոսում արդյոք այդ դյուրաբորբ Անդոքը» մտածեց Հայր-մարդպետը կանգ առնելով ու սրահի ծանր վարագույրների եռևից նայելով ծեր իշխանին և, չգիտես ինչու, նրան թվաց թե խոսում են իր մասին կամ խոսել են և Անդոքը հիմա եղրակացություն է անում մի բան:

Կանդնելով ևս մի երկու վայրկյան՝ նա դարձյալ լսեց նույն իշխանի վրեժի խոսքերը. և ապա տեսնելով թագավորի հետ խոսելու ժամը պատեհ չէ՝ նա հանդարտ վերադարձավ պալատի իր հարկաբաժինը, մտածելով, որ առավոտը վիներկայանա թագավորին և նրա հանդիստը հարցնելով՝ կխոսի իրեն հետաքրքրող խնդիրների մասին, եթե հարկավ նա մենակ լինի... Իսկ մինչ այդ, եթե Պապն իր կարիքն ղդա կամ հետը խոսել ցանկանա թող կանչի սենեկապետի միջոցով, ինչպես անում էր հայրը՝ Սրշակ թագավորը:

Երբեք Հայր-մարդպետին իր պաշտոնը—պալատի կառավարչությունը այնքան ծանր, անհաճո չէր թվացել, ինչպես այդ օրը, երբ ստիպված էր դիմավորել և ընդունել չսիրած մարդկանց:

Այդամենը դեռ ոչինչ. նրա համար ծանրագույնն այն կասկածն էր, թե արդյոք ի՛նչ է խոսվել իր մասին, ի՛նչ են մտածում իր մասին և առհասարակ ինչ չարիքներ են նյութվում իր դեմ:

«Այդ բոլորը կպարզվի առավոտը» ասավ նա մտքում, մըտնելով գորգերով ու կերպասներով զարդարած իր սենյակները, ուր նրա սենեկապահները վառել էին արդեն հնգաստեղ ու յոթնաստեղ եռոտանի աշտանակները, որ բեկբեկուն լույսեր էին խաղացնում գորգածածկ պատերի, օթոցների ու կահերի վրա:

Ներս մտնելով՝ Հայր-մարդպետն արձակեց իր սենեկապետին և սկսեց զնալ-գալ գորգապատ այդ սենյակում, մտածելով դարձյալ իր կասկածների մասին... Նա գտնում էր, որ եթե Պապը այս երեկո կանչի իրեն՝ Դվինում կատարվածը, անցածդարձածն իմանալու— նշանակում է լուրջ վտանգ չկա, իսկ եթե ոչ— ուրեմն իմացել է ծանր բաներ...

ժամերը անցան, սակայն Պապից մարդ չեկավ:

Ի՞նչ էր նշանակում դա—հոգնած հանգստանո՞ւմ էր թե պարզ արհամարհանք է, անդիտացում ու դժգոհություն. չի՞ ուզում իրեն տեսնել և հետը խոսել...

Հետզհետե Հայր-մարդպետի դեմքը մթագնեց ու տխրեց, և այնուհետև երկար չէրջում էր այդպես մոայլ ու մտածկոտ: Բայց հանկարծ նրա դեմքը լուսավորվեց ինչ-որ մտքից և նա, կարծես պյուռ արած, ժպտաց ինքնին, նոսր մէրուքն ի վար:

Նա գտել էր արդեն, թե ինքն ինչ պատրվակով կարող է ներկայանալ Պապին, խոսել հետը, և իմանալ այն, ինչ պետք է իրեն:

«Այո, այդպես էլ կանեմ» ասավ նա դրեթե լսելի ձայնով իր կասկածներից հանգստացած:

«Այո, եթե Պապը հոգնած է կամ ինչ-ինչ պատճառներով չի ուզում ինձ հիշել, ես առավոտը կհիշեցնեմ նրան, թե ո՛վ է Հայր-մարդպետը» մտածեց նա և թեթևացած քայլերով դնաց քնելու:

***

Երբ պալատի և մինչնաբերդի լույսերն սկսեցին վառվել և երբ մութը պատեց քաղաքը՝ մինչնաբերդից մի ճկավոր դուրս եկավ քաղաք և ճիշ արագ քշեց դեպի այգիները:

Նա գնում էր այնպիսի թափով և այնպես անհամբեր, որ չէր նայում չուրջը՝ փողոցներին, տներին: Գնում էր սևեռուն մի ընթացքով, երբ մարդ չտապում է անհետաձգելի մի գործի, կամ ինչպես չտապում են հիվանդի օգնության:

Գնում էր առաջ թեքված, աչքերը կարծես մութի խորքը հառած:

Այդպես նա դուրս եկավ քաղաքի փոքր դռնից, պարսպից, որի համարյա պատերի տակից սկսվում էին Դվինի խաղողի այգիները:

Մի փոքր գնալով՝ նա ճիու գլուխը թեքեց մի նեղ փողոց, որ ավելի մութն էր, քան քաղաքի փողոցները. ծառերը երկու կողմից աստիկ մթնեցրել էին նրան, ուստի և ճիավորը չէր կարողանում առաջ գնալ այնպես արագ, ինչպես մինչ այդ, մյուս կողմից՝ ծառերի կտացած ճղները հաճախ դիպչում էին նրա

գլխին, թևերին, կրծքին: Մի առժամ նա ձեռը գլխից վեր պահած աչխատում էր պաշտպանվել, բայց նկատելով դրանք խանդարում են իր ընթացքը՝ նա իջավ ձիուց և առաջ գնաց նրա ցանձը քաշելով, բայց հիմա ավելի լարված ու անհամբեր, քան գնում էր ձիով:

Փողոցը ոչ մեկին մուքին էր, այլև ամայի. ոչ մի անցորդ, ոչ մի մարդ չհանդիպեց նրան:

Բավական տեղ այդպես գնալով ձիու հետ՝ նա, վերջապես, կանգ առավ մի ցածրիկ փայտե դռնակի առջև ու բախեց այն:

Ներսից ոչ մի շարժում, ոչ մի ձայն:

Այդ ձիավորը Հրահատն էր. նա եկել էր իմանալու, թե Նազենին, հայրը և մայրը չէի՞ն վերադարձել արդյոք: Նրան թվում էր, թե քանի որ այդքան մարդ վերադարձել է քաղաք՝ պետք է որ նրանք ևս դարձած լինեն: Դվին գալու երկրորդ օրն էր, ինչպես ասինք, նա գնացանի իր հազուստներով ու նվագարանով, եկել էր և նրանց դուռը գտել փակ. ու չէր եղել մի ուչիմ, իրազեկ հարևան, որ իմանար, թե ո՛ւր են գնացել: Մի պառավ միայն հայտնել էր, որ հեռացել են քաղաքից, բայց թե ո՛ւր, ո՛ր կողմը —չէր կարողացել ասել: Իսկ պարսից քաշվելու օրը Հրահատն Աբոտաչատ էր. մյուս օրը, չտապ հասնելով Դվին, նա նորից էր եկել և դարձյալ Նազենիենց դուռը գտել փակ. բայց այլևս ժամանակ չէր ունեցել հարցումներ անելու, որովհետև դարձյալ հարևաններ չէին երևացել և; մյուս կողմից, պետք էր շտապել պարսիկի ետևից: Իսկ հիմա արդեն ազատ էր և կարող էր որքան ասես, նույնիսկ մինչև առավոտ հետաքրքրվել և հարևաններին հարցուփորձել, եթե մեկն չեն վերադարձել: Ու անհամբեր էր իմանալու վերադարձել են արդյոք:

Բայց երբ իր բախումին պատասխան չեղավ՝ նրա սիրտը կտրկած ընկավ:

Ու բախեց երկրորդ, երրորդ անգամ:

Դարձյալ ոչ մի ձայն, ոչ մի շարժում:

«Գուցե եկել–քնել են Ճանապարհից հոգնած» մտածեց նա և գռնակը հրեց:

Փայտե դուռը կրնկի վրա ետ գնաց և նա, այդ մոնելով,

ձին կապեց մի ծառից ու ինքը, մութի մեջ, թփերի ու ծառերի դիպչելով, գնաց դեպի տնակը, որ գտնվում էր այգու խորքում:

Մի երկու տարի առաջ այդ տնակի լույսը նեղլիկ լուսամուտներից ծառերի տաղարթի միջով ժպտում-ծիծաղում էր նրան, հիմա տակին տնակը բոլորովին մութ էր, բայց և այնպես Հրահատին դարձյալ թվում էր որ նրանք եկել են գնացե և քնել են հոգնած:

Մոտենալով՝ նա մատով զգուշությամբ ծեծեց դուռը, և նրան թվում էր, թե հիմա կլսե գինադործ Զոմայի ծանոթ, թանձր, դուրեկան ձայնը:

Բայց ներսից ոչ մի ձայն, ոչ մի չարժում:

Նա ծեծեց նորից ու նորից:

Դարձյալ լռություն:

Այս անգամ նա չոշափեց դուռը, և նոր միայն նկատեց, որ կողպեք էր կախված նրա վրա:

«Ուրեմն դեռ չկան... երևի, չեն եկել» ասելով նա մտքում և այն է ուզում էր դառնալ՝ հանկարծ մեկը ձայն տվեց մթան միջից.

— Ո՞վ է այդտեղ և ի՞նչ է ուզում...

Ձայնը եկավ մոտիկից, բայց Հրահատը չհմացավ դա այգու ծայրից էր, թե հարևան այգուց, ու թեև ինքը կանչողը չէր երևում, բայց և այնպես Հրահատը պատասխանեց.

— Զոմա հայրիկին եմ հարցնում: Իսկ դու ո՞վ ես, բարեկամ:

— Ես Զոմայի հարևանն եմ,— ասելով տղամարդու մի ստվեր՝ աջակողմից մոտենալով:— Հրամանքդ ո՞վ ես:

— Ես էլ նրա ծանոթ բարեկամը,—պատասխանեց Հրահատը:— Սրանք չե՞ն վերադարձել:

— Սրանք,— տխրությամբ երկարեց մարդը:—Ոչ եղբայրս, տակավին ոչ,— կրկնեց նա հառաչելով:

— Ի՞նչ է պատահել, բարեկամ. դու այնպես տխուր, ծանր ես պատասխանում:

— Տխո՛ւր... Հապա ինչպես, եղբայրս,— չարունակեց մարդն ավելի տխրագին:— Ջե՞ս իմացել մի՞թե պատահածը, դժբախտությունը:

Հրահատն ղժաց, որ երեսը տաքացավ և մարմնով մի սար-սուռ անցավ:

— Ինչ պատահած,— Հրահատի հնչառությունն արագացավ:— Ո՞ւմ է ինչ պատահել:

— Զոմայինն,— ասավ մարդը,— մեր Զոմա վարպետին:

— Զոմայինն երե՞ն, թե ընտանիքին,— հարցրեց Հրահատն անհամբեր:

— Զոմայինն, եղբայրս, Զոմա վարպետին:

Հրահատը թեթևացած չունչ քաշեց մուքի մեջ և հետաքրքրվեց, թե ինչ էր պատահել իսկապես վարպետ Զոմային: Եվ մարդը տխրությամբ պատմեց, թե ինչպես դինապործն սպանվել էր Արտագերսում:

— Այո, եղբայրս: Ով լսում է՝ ցավում է շատ: Լավ մարդ էր, աղնիվ հոգի և հմուտ վարպետ:

— Ափսո՛ս,—ասավ Հրահատը:—Լավ մարդ էր: Իսկ ընտանի՞քը՝ կինը, զուստրը ո՞րտեղ են:

— Ընտանիքը՛,— նորից երկարեց մարդը:— ընտանի՞քը, այսինքն կինն ու զուստրը՝ Նազենին, հոր գնալուց հետո առժամ մնացին քաղաքում, բայց հետո գնացին պարսիկից առաջ:

— Ո՞ւր, որտե՞ղ,— չհամբերեց Հրահատը՝ երեսը դրեթե խոսակցին մոտեցնելով և ծանր շնչելով:

— Այդ չեմ կարող ասել, եղբայրս. ցավոք չեմ կարող ասել:

— Ինչո՞ւ... Գաղտնի՞ք է:

— Ոչ, եղբայրս, ոչ: Ինչո՞ւ գաղտնիք: Չեմ կարող, քանի չգիտեմ:

— Բայց չգիտես ապահով տե՞ղ են գոնե:

— Այդ՝ ասելած դիտի, եղբայրս. ինչ իմանամ:

— Ինչո՞ւ այդպես համառոտ և անորոշ ես խոսում, բարեկամ:

— Հապա ինչպես, քանի որ ինձ անհայտ է նրանց տեղը, վիճակը,— արդարացավ մարդը,— քանի որ դուրս եկողներից, քաղաքից հեռացողներից չատերը, լսելով, ընկել են պարսիկներն ձեռը գերի...

— Գերի՞,— Հրահատի ձայնը բեկվեց հանկարծ և նա հեն-

Ջեց տան պատին ու ապա, կարծես չընկնելու համար, նստեց օթոցի տակ դրած և տարան քարին:

— Գերի՛, — կրկնեց նա ինքն իրեն և լռեց, և մի սառը ձեռ կարծես սեղմեց նրա սիրտը: Նա մոռացավ ամենը, ինչ մտապրել էր, ամեն, թե ինչ ալիսի հարցներ: Ավելի շուտ՝ այդ ամենը թռան-հեռացան և դրանց փոխարեն մնաց մի ծանր մխաք. «գերի՛»... Նա լռեց ու մնաց քարին նստած: Հարևանն ինչ-որ պատմում էր՝ նա չէր լսում. երեկոն մութը թանձրացնում էր այգում, նրա շուրջը, վերև՝ երկինքը ժպտում էր ոսկեցոլուն աստղերով՝ նա չէր տեսնում:

Այդ մի ջոգին նա այլևս ոչինչ չէր տեսնում, ոչինչ չէր լսում: Նրա մտքում և աչքերի առաջ Նազենին էր: Մերթ պատկերացնում էր նրան՝ հայ գերիների բազմության մեջ՝ պարսից պինվորներով շրջապատված, կամ գերության ճանապարհին մենակ, արցունքն աչքերին ու բոկոտն, որ չէր կարողանում քայլել... և պարսիկ զինվորները հրում, չտապեցնում էին նրան նիզակներով... Մերթ՝ էլ զարմանալի պայծառությամբ հիշում էր նրան սահենատորքեր պարապմաններում, հիշում էր նրա բարեկազմ ու բարակիրան հասակը, նրա սպիտակ ճվաձև դեմքը՝ մրահոն, խոշոր ու սևաբիբ աչքերով, և հազուստները սեղմ և արծաթ գոտին, որ բարակ օձի պես պատում էր նրա բարակ մեջքը: Առանձնապես պայծառ պատկերացավ նրան այն պահը, երբ առաջին անգամ հանդիպեց նրան... Ջի նստած անցնում էր ինքը այգիների փողոցով և հանկարծ աղբյուրի մոտ տեսավ սափորը ձեռին մի երբահասակ աղջիկ, որի սլաք թարթիչներով աչքերը մի ակնթարթ, միայն փութանցիկ մի ակնթարթ չողացին իր դեմ վճիտ ու թավշյա նայվածքով և խոնարհվեցին ամոթխած:

Այդ նայվածքն ասես գերեց Հրահատին. նա ակամա կանգնեցրեց ձին աղջկա գեղեցկությամբ զարմացած. կանչնեց ու նայեց նրան, նրա երկար օձապարար զույգ հյուսքերին, որ տարածվել էին աղբյուրի վրա թեքված նրա մեջքին, նայեց նրա բարակ ու նուրբ ձեռներին, որոնց մեկով բռնել էր ջրի սափորը, մյուսով հենվել աղբյուրի քարին: Նորից մի ակնթարթ—Հրահատ հայացքը կրկին հանդիպեց աղջկա աչքերին, որոնց հուզ նայվածքը կարծես գամեց նրան իր տեղում, և Հրահատը զար-

մացած Բն ուրախ, ինքն էլ չիմացավ ինչպես, ժպտաց Նրան ինքնաբեր մի ժպիտով։

Աղջիկը նույնպես ժպտաց, և այդ թեթև, կարճատև ժպիտից Հրահատի սիրտը խայտաց, խաղաց եղավ կրծքի տակ և կարծես գինովցրեց նրա գլուխը։ Ու նա հետևեց աղջկան մինչև նրանց խաղողի այգին, ուր գտնվում էր նրանց տնակը... Այգի մտնելուց առաջ աղջիկը մի անգամ ևս ետ նայեց, նայեց Նրան ու նորից ժպտաց... Այդ ժպիտն այս անգամ նրան գամեց իր տեղում և ալեկոծեց սիրտը... Հետևյալ օրը նա նորից գնաց սպասեց աղբյուրի մոտ... Աղջիկը նորից եկավ սափորը ձեռին. գույգ երկար հյուսքերը շարժվում էին նրա մեջքին երկար ճոճված օձերի նման։ Նա մոտեցավ աղջկան և ժպտաց ու կուր խընդրեց... Այնուհետև նրանք հանդիպում էին նրանց խաղողի այգու ծայրում՝ մեծ մի փշատենու տակ՝ նրա կախ ճղներով քաշված... Ինքը մտնում էր հավասարուկ քանդվածից, գնում-հանդնում փշատենու տակ և սուլում արտուտի նման՝ մեկ-երկու անգամ... Նազենին գալիս էր թռչունի նման թեթև, վիթի նման անձայն քայլերով... Գրկվում էին, համբուրվում... Երանավետ վայրկյաննե՛ր... Գարուն էր—փշատենին հարբեցնող իր բույրն էր տարածում, և նրանք այդ բույրով հագրած՝ համբուրվում էին նորից ու նորից... Երբեմն նստում էին կանաչեքի վրա կամ փշատենու թեքված բնին ու զրուցում... Մնազնեը, որ միշտ հետևում էին աղջկան, որ տնից երկար չբացակայի՝ նկատել և հասկացել էին մի բան, և Նազենուն տրգելեցին երեկոները դուրս գալ այգի, ցերեկը գնալ աղբյուրը կրի... Այդ ժամանակ Հրահատը ներկայացավ նրանց և ասավ. «Ես Ջոմա հայրիկ, սիրում եմ քո Նազենուն... տուր նրան ինձ և ես կլինեմ քեզ որդի հավատարիմ»... Համաձայնեց գինագործ Ջոմանն և ուրախ եղավ, որ իր դառը կինն է առնում սպարապետի քինկնապահը։ Ուրախացավ և Ջոմայի կինը՝ Մարթա մայրիկը, որ բախտավորվում է դուստրը, որ սպարապետի քինկնապահը դառնում է իր փեսան, իր հարազատը...

Վերջին անգամ Հրահատը Նազենուն տեսավ այն օրը, երբ սպարապետի, թագուհու և ավագանիների հետ սիսեի մեկնեց Արտագերս, նրանց հետ և Ջոմա հայրիկը, որպես հմուտ գինագործ։

«Ինձ էլ տար քեզ հետ,— խնդրեց Նազենին,—ես կվախենամ մենակ»:

Բայց Հրահատը չլսեց. չուզեց տանել նրան ռազմի թերան. կարծեց ավելի ապահով կլինի ծնողների տանը, այդու մեջ, և, վերջապես, տակավին չամուսնացած, իրավունք չունի այդ առնելու: Մյուս կողմից՝ չէր կարծում թե պարսիկը կմտնի Դվին: Ու մնաց Նազենին իրենց տանը, մոր մոտ...

Սակայն թե Արտազերսում, թե ամենուրեք մարքում Նազենին էր, աչքերի առաջ նրա պատկերը: Իսկ երբ ապարտպետի հետ մեկնեց Բիզանդիա՝ Հրահատը միայն մի բան էր մտածում —ընտիր մի նվեր տանել Նազենուն, ուրախ մի բան, որ չլիներ Դվինում: Ու գնեց արծաթ մի վարսակալ և արծաթ դինդերը սկանջի... Ու քանի տխուր էր արդեն այդ վարսակալն ու դինդերը նա, նվիրական սրբությամբ պես պահում էր կրծքի վրա, հատուկ մի զգայնությամբ, որ ինքն էր կարել. գնած թե արծուն նա կրծքից չէր հեռացնում այդ նվերները. թվում էր՝ դնի մի տեղ՝ կկորչեն անհետ, և դա կլիներ չարաշուշակ մի բան... Մի ինչ-որ զգացում, ծածուկ մի միտք նրան շշնջում էր կարծես —եթե կորավեն դրանք՝ չի լինի և Նազենին: Ու պահում էր խնամքով... Այդպես էլ, ընծաները ծոցին, դուսանի կերպ մտած և կուլը ձևացած եկավ Դվին, որ այդ նվերները, վերջապես, տա Նազենուն... Բայց Նազենին չկա՛... Հայրը սպանվել է Արտազերսում... Իսկ ո՞ւր է ինքը Նազենին... Տարվե՞լ է արդյոք գերի, թե մոր հետ փրկվել-ապաստանել է մի տեղ...

Այս մտքերի, հուշերի և ինքնամոռացության մեջ էր Հրահատը, երբ կանացի մի ձայն լսեց աջ կողմից:

— Ո՞ւր է, ո՞ւր է,— ասում էր այդ ձայնը, համարձակ առաջ գալով:

— Պատի տակ է, քարին նստած,—պատասխանեց տղամարդու ծանոթ մի ձայն:

— Լավ, դու գնա,— ասավ կնոջ ձայնը:—Դու գնա, ես կմտամ ներս:

Հրահատը նայեց խոտակույթյան կողմը և, որքան էլ մութ էր չուրջը, տեսավ այնուամենայնիվ, որ քիչ առաջ էր հետ խոսող տղամարդու հետ մի կին էր գալիս փուքիկոտ քայլերով:

Հրահատը չակվեց նստած տեղը և սևեռուն նայեց եկոզի դիմքը:

— Դու ո՞վ կլինես, եղբայրս,—տակավին չմոռեցած, մի քանի քայլ հեռվից հարցրեց կինը, և դեռ պատասխան չստացած՝ չարունակեց հետաքրքիր:—Դու սպարապետի թիկնապա՞հն ես:

— Այո,— գլխարկալ Հրահատը, որ կինը ճանաչում է իրեն կամ գիտե իր մասին:

— Լավ է, որ եկել ես, տղաս,— ասավ կինը մի տեսակ ուրախ սրտացավությամբ, ապա կարծես զգալով Հրահատի տագնապանքը՝ ավելացրեց հանգստացնելու եղանակով:— Մի գարմանա, տղաս. ես ամեն ինչ գիտեմ: Ես Նազենու հարևանուհին եմ: Երբ ամուսինս ասավ՝ գինադործի բակը մի երիտասարդ է եկել, հետաքրքրվում է նրանցով՝ ես հասկացա, որ դու կլինես: Մի գարմանա, տղաս: Նազենու մայրը՝ Մարթա մայրիկն ամեն ինչ պատմել է ինձ: Գիտեմ, որ Նազենին և դու սիրում էիք իրար և եթե պատերազմ չլիներ՝ պսակվելիք գիտի: Այնպես չէ՞: Գիտեմ, տղաս, գիտեմ: Մարթա մայրիկն ամենը պատմել է ինձ: Մի ամաչիր: Սիրել, ամուսնանալ՝ ամոթ չէ: Աչխարհի գործ է: Մարթա մայրիկն ուրախ էր, որ իր փեսան գիտի լինես և տխրում էր շատ, որ կռվի մեջ ես: Իսկ Նազենին չուներ ոչ քուն, ոչ հանգիստ: Հարկավ, ինձ չէր ասում ոչինչ, բայց ես տեսնում էի. կնոջ ցավը ես լավ եմ հասկանում: Ջհոսի էլ, աչքերին նայելով՝ կասեմ ինչ է ցավում: Թագավորի պալատ մինչոցին ես փողոցն էի. մտածում էի՝ քեզ տեսնեմ և ասեմ, որ... բայց չտեսա:

— Ի՞նչ գիտի ասելիր,—խոսեց Հրահատը անհամբեր:

— Այն գիտի ասելի, տղաս, որ Նազենին մոր հետ հեռացել է քաղաքից, նրանց չինոտեսես է գուբր: Մարթա մայրիկն ինձ պատվիրել է, որ այս հայտնեմ քեզ:

— Իսկ ո՞ւր են գնացել արդյոք:

— Նրանց գնալու տեղը չգիտեմ ասուլդ, բայց գնացին գնալի կոտայք, դեպի վարաժնունիք...

— Ջհո՞վ, Թե...

— Ոտով, տղաս, ոտով: Այդ ժամանակ ձին ո՞րտեղից կամ

ո՞վ կատր իր ձին: Ամեն մեկն չտապում էր հեռանալ: Ով էր մտածում ձիու մասին:

— Բայց կայի՞ն հետները ծանոթներ, բարեկամներ,— հետաքրքրվեց Հրահատը:

— Հետները չատերը կային. կին, մարդ, աղջիկ: Գնում էին ամեն մեկը մի կողմի վրա:

Հրահատը հանգստացավ կարծես և այնուհետև հետաքրքրվեց, թե լա՞վ էին հագնված արդյոք, պաշար ունեի՞ն:

— Պաշա՞ր: Իհարկե: Մարթա մայրիկը ճանապարհ կբերթո՞ր առանց պաշարի: Բայց չատ բան, իհարկե, չէր կարող տանել, քանի որ...

— Ի՞նչ,— լսվեց Հրահատը:

— Քանի որ տկար էր:

— Ո՞վ էր տկար,—

— Մարթա մայրիկը, տղաս, Մարթա մայրիկը: Տնքտնքում էր մի փոքր: Ուրիշ ոչինչ: Դու նրանց ապրուստի մասին մի մտածիր: Ուր էլ գնան՝ քաղցած չեն մնա:

Հրահատը լուռ մի ուժամ՝ աչքերով տրվված. հետո մեկեն սթափվեց կարծես և հարցրեց.

— Իսկ կարո՞ղ էր պատահել, որ գերի ընկնեին...

— Գերի՞: Ինչո՞ւ պետք է գերի ընկնեին,— հարցին հարցով պատասխանեց կինը: Նրանք Դվինից դուրս եկան այն ժամանակ, երբ պարսիկը դեռ չէր երևացել: Դուրս եկան լինճ հետ միասին: Նրանք գնացին դեպի հոտայք, վարուժնունիք, եսՓառնի: Ոչ, տղաս: Ջեմ կարծում թե գերի ընկած լինեն: Ինչպե՞ս կարող են:

— Իսկ ինչո՞ւ չեկան Փառնի, այլ գնացին Վարուժնունիք:

— Որովհետև այդտեղ, ասում էին, բարեկամ ունեն: Դրա համար,— չարունակեց կինը հանգստացնող ձեշտով:—Դու սիրտդ ուրախ պահիր, տղաս: Գնանք մեզ մոտ՝ տակավ մի բան ճաշակիր, քաղցած կլինես:

— Շնորհակալ եմ, մայրիկ. շնորհակալ եմ,— վերջ կացավ Հրահատը: Դու ստո՞ւյգ գիտես, որ նրանք հասել են Վարուժնունիք:

— Հասնելը չեմ կարող ասել, տղաս: Բայց որ նրանք գնացին դեպի Վարուժնունիք—այդ ստուգ գիտեմ: Այդ մասին հան-

դիսո եղիր: Գնանք՝ սակավ մի բան ճաշակիր, տղաս: Գնանք: Մարթա մայրիկին իմանա քեզ թողել եմ առանց պատվի՝ կնեղա-նա շատ:

Հրահատը նորից չնորհակալություն հայտնեց:

— Ուրիշ անգամ, մայրիկ, ուրիշ անգամ: Այժմ չտապում եմ սպարապետի ծառայության: Ձիս այնտեղ սպասում է ինձ...

Եվ, Նազենու հարևանուհուն հրաժեշտ տալով, նա դնաց դեպի այգու դուռը, ուր կանգնած էր ձին:

Բայց, մինչև ձիուն հասնելը, նա կանգ առավ մի վայրկյան և մտածեց, թե Նազենու համար բերած վարսակալն ու դինդերը չառա՞ այդ կնոջը պահ, որ Նազենին վերադառնալուն պես, ուրախացնի նրան: Սակայն մի վայրկյան հետո դառավ, որ ավելի լավ է ինքն իր ձեռքով հանձնի այդ նվերները Նազենուն, և մյուս կողմից՝ զգում էր, որ առայժմ դրանցից չէր կարող բաժանվել, քանի դեռ Նազենին չկար... առանց դրանց, թվում էր, կմտառանար Նազենուն...

«Ոչ, թող մնան» ասավ նա մտքում և քայլեց առաջ. քայլ ձիու կողմը գնալու փոխարեն, թեքվեց դեպի ծառերը:

Մութի մեջ դանդաղ քայլերով նա հասավ ծեր պշատենուն և նորից կանգ առավ:

Ծառերի տակ, առանձնապես պշատենու տակ խավար էր, անթափանց ու թանձր խավար, որի մեջ ծառերի բները չէին երևում. ու այդին թվում էր խավարով լցված ու ամայի. ո՛չ Նազենին կար և՛ ոչ պշատենին էր բուրում առաջվա պես...

«Հիմա ո՞վ է ճիշտ արդյոք. կի՞նը, թե ամուսինը» մտածում էր Հրահատը քիչ առաջ լսածների մասին: Արդյոք Նազենին մոր հետ վարժնուհի՞ է իսկապես, թե... թե պերի է ընկել մինչև առղ հասնելը... Ով կարող է արդյոք ստուգապես ճանաչել այդ...

«Վարժնուհի՛ն... դերի» կրկնում էր նա մտքում, պշատենու ծուռ բնին նայած:

Գնալով՝ այդին մթնում էր ավելի. ծառերի տերևների վրայով բարակ մի հով էր անցնում և նրանք մութի մեջ սլսլում էին այնպես, ինչպես առաջ. առուն խոխոջում էր, ինչպես առաջ. ամեն ինչ գրեթե նույնն էր, ինչ առաջ, չկար միայն Նազենին, պշատենին չէր բուրում և նրանց տան ճրագը չէր վառվում...

Նազենի՛ն... Արդյոք ո՞րտեղ է հիմա, այս պիշեր,— մտածում էր Հրահատը։— Արդյոք նորից կտեսնե՞ն իրար, թե... թե հավիտյան կմնան անտես...

Եվ նա, որ ուրախ տեսակցություն երազելով՝ ահռելին տարածություն էր կտրել և վտանգների միջով եկել-հասել էր Դվին— չէր կարողանում հաշտվել այդ մտքի հետ— իրար չտեսնելու մտքի հետ, ու մտածում էր մութի մեջ.— Հանկարծ հրաչք պատահեր, ելներ նա ծառերի արանքից և թեթևաքայլ գար փարվեր իրեն, ինչպես առաջ ու նորից զգար նրա ընդհատ հևքը, նրա ջերմ շունչը, նրա զուրկ տամուկ հյուսքերի դալարը մկնքին։

Այս մտածումների մեջ հանկարծ նրան թվաց թե ոտնաձայն լսեց և տերևների խշրտուք։ Սթափվելով՝ որտահև ու սեվեռուն եռ նայեց... Ոչ, այդ հումն էր քամու փոխվածանցնում ծառերի միջով, այդ ծառերի ճղերն էին զարկվում իրար, այդ հառած ընկուզիներն էին ընկնում գետին կամ դուրս ուշահատուկ դեղձերն ու տանձերն էին կաթում...

Նա հառաչեց ու նորից տարվեց իր մտքերով։

Որքան ժամանակ էր մտածում այդպես՝ ինքն էլ չէր կարող ասել, այս անգամ նրան իր մտքերից սթափեցրեց ձին, որ դռվեց գետինը և վրնջաց երկու անգամ, շատ կարճ, կարծես մեծային իր անհանգստությունը հայտնելու համար։

Հրահատը վեր կացավ ծառի բնից։

«Ի՞նչ անել. գնա՞լ վարժնունիք, թե սպասել» մտածում էր գետի ձին գնալով։ Բայց վարժնունիք գնալու համար պետք էր թույլտվություն խնդրել սպարապետից... Սակայն ինչպե՞ս խնդրեր. ինչպե՞ս ասեր, որ գնում է իր Նազենուն փնտրելու, այն ժամանակ, երբ սպարապետը վաղը մեկնելու էր Նախջևան... Մյուս կողմից մտածում էր. բայց արդյոք Նազենին վարժնաւնի՞ք է... Եթե վարժնունիք լինի՝ դանելը դյուրին է... Իսկ եթե լինի գերի՞...

Այս ծանր մտածումների մեջ նա ձին արձակեց ու պուրակ եկավ փողոց։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Ուշ երեկո էր արդեն, երբ Պապը, վերջապես, դնաց իր ննջարանը հանգստանալու: Դա հոր առանձնարանն էր՝ որսի հազվագյուտ մորթեղենով ու՝ պես-պես զենքերով զարդարված մի սրահ, որ այժմ դարձրել էին քնարան, ուր վառվում էին երկու յոթնաստեղ արծաթե աշտանակները, որոնք լուսավորում էին ոչ միայն պատերին եղած բազմատեսակ մորթիները ու զենքերը, այլև փայտե նրբակերտ մի մահճակալ՝ իր մետաքսանկողնով, և դռները՝ կերպաս ու բեհեզ վարագույրներով:

Մտնելով այդտեղ՝ նա հոր սենեկապետ ծեր Աբշամի օգնությամբ հանեց վրայի հանդերձները և մնաց միայն բիզանդական տունիկով ու սանդալներով. և այդպես մի ժամ էր արդեն դնում-գալիս էր մերթ սրահի երկարությամբ, մերթ լայնությամբ ու չէր կարողանում պատկել-հանգստանալ. քնելու ցանկությունն անգամ կարծես փախել էր նրանից: Արդյոք հոգնածությո՞ւնն էր պատճառը, օրվա տպավորությո՞ւնները, թե այն մտքերն ու խոհերը, որ պաշարել ու ճնշում էին նրան ամբողջ օրվա ընթացքում, մանավանդ պալատ մտնելուց հետո, երբ իմացավ մորը պատահած դժբախտությունը:

Տպավորություններից ու խոհերից զատ, հոր սիրած այս առանձնարանը մտնելուց հետո, նրան պաշարեց նաև հուշերի հորձանքը, որ առաջացրեց այդ հաստատուն ու քանդակազարդ սրահը, որ կահավորված էր ճիշտ այնպես, ինչպես հոր ժամանակ, ինչպես երեք-չորս տարի առաջ, երբ ինքը թողել-գնացել էր Բիզանդիա: Հիշում էր, թե ինչպես մայրը՝ ձիգ հասակով, հպարտ կրծքով, հրավառ-խոստումն աչքերով երբ մտնում էր այդտեղ՝ կարծես միանգամից լեցվում ու կենդանանում էր հոր այս առանձնարանը... Եվ Պապը հիմա որ կողմը դառնում էր՝ ամեն ինչ, յուրաքանչյուր մի իր, յուրաքանչյուր առարկա թե

կարասի, գինք թե գորգ—բոլորը, բոլորը հիշեցնում էին թագավոր հորը կամ թագուհի մորը և իր պատանության օրերը... Ու հուշերը, թվում էր նրան, ծագում էին ոչ միայն իր գլխում, այլև առաջանում էին կարծես իրերից, թափվում–կլնում էին առաստաղից, եղնում անկյուններից և կազմում մի հորդ հոլանք, որ հեղեղում էր նրան, առնում իր ոլորտի մեջ և տարուբերում. ու նա մերթ հիշում էր մանկությունը հանգիստ արքունիքում, շրջապատված բոլորի ակրով ու խնամքով, երբ չէր զգում ոչ վիշտ, ոչ հոգս, երբ աշխարհը նրան թվում էր միայն խաղի ու զվարճության վայր՝ հաստատուն ու հավերժական. մերթ հիշում էր իր երիտասարդությունը՝ դարձյալ ուրախ, որսի ու շրջագայության մեջ, ապա և մեկնումը Բյուզանդիա... և միշտ, ամեն տեղ հաճույքներ ու զվարթ շրջապատ ու կայուն, անխախտ մի զգացում, թե աշխարհը և իր հայրենիքը հաստատուն են ու ոչինչ չի վտխի նրան ու հավիտյան կմնա այդպես... Բայց ահա՝ այդ զարդարուն սրահի հաստատուռ պատերը կարծես հեռ էին գնում և նա տեսնում էր հայոց աշխարհը, ավելի շուտ՝ իր անցյալ ճանապարհը— Դարոնդաղյաց երկրից մինչև Կարին, Կարինից մինչև Բագրեւանդ ու Կոգովիտ, այնտեղից մինչև ափերը Ակաքսի՝ մինչև երվանդաշատ ու Վաղարշապատ— քանդված, կողոպտված ու գրեթե ամայի... դաշտերը խոպան, այգինները անմշակ ու ամեն տեղ դիմակները, կմախքացած կին, մարդ, երեխա, որ թափառում են պատառ հացի կարոտ...

«Ինչո՞ւ այսպես եղավ» մտածում էր նա երբեմն նստելով ու որևէ իրի նայելով, երբեմն քայլելով մոզայիկ հատակը ծածկող գորգերի վրայով: Ինչո՞ւ երկիրը հասավ այս դրության: Մի՞թե միայն պարսիկները էին մեղավոր, մի՞թե չէր կարելի կանխել այս ամենը վաղ պաշտպանել... Ո՞վ է մեղավոր... Աստված են՝ հայրս հակառակ է գնացել նախարարներին, կամեցել է նրանց բռնությամբ ենթարկել իրեն, ստեղծել կենտրոնական մի ուժեղ իշխանություն՝ երկիրը հզորացնելու նպատակով, և այդ արել է դաժան միջոցներով, ինչպես օրինակ, կոտորել է Կամսարականների ամբողջ տոհմը... և արդյունքը եղել է այն, որ նախարարների մեծ մասը նրանից զժգոհ՝ լքել է նրան, թողնելով թշնամու և վտանգի հանգեպ մենակ, իսկ ամենք ամբաստա-

նել են նրան Շապուհի առաջ... Այդպես է եղել հայրս. նա չի կարողացել լեզու գտնել չահերով ու դիրքով տարբեր նախարարների հետ... և փոխանակ հասկացնելու միաբան լինելու չափը երկրի համար՝ նա հարձակվել է նրանց վրա, ստիպելով որ կատարեն իր կամքը, իր կարգադրությունները...

«Այդպե՞ս պետք էր անել արդյոք» ասավ Պասը դրեթե չսեւի և, դողդղ վրա կանգ առնելով, հառաչեց. աչառնականների լույսերը նրա մեծ ստվերները խաղացնում էին պատի վրա՝ լինող ու բարձրացող լրենց բոցերի հետ միասին: Իսկ Պասի դեմքն այդ թրթռացող լույսերի ներքո երևում էր մռայլ, հոգնած ու չզաճիզ:

Իսկապես, հիմա, այս երեկո ավելի, քան երբևէ նրա աչ կիսադեմը ցնցվում էր չարունակ, և նա դարձյալ չէր կարող ասել հոգնածությունի՞ց է դա, ծանր տպավորություններից, որ ստացել էր օրեր չարունակ իր երկար ճանապարհին, մորը պատահած դժբախտությունի՞ց, թե հայրենի հարկի տակ դարձնած հուշերի ու մտքերի այն հախուռն հորձանքից, որ երբեք չէր թուլանում, այլ, ընդհակառակը, քանի դնում՝ այնքան ավելի դառնում էր համառ ու տիրական:

Մի երկու անգամ նա փորձ արավ թոթափել իրենից այդ հուշերը՝ վաղվա անելիքների մասին մտածելու— չկարողացավ. այդ մտքերը, որ ասես իրենց սուր մագիլները խրել էին նրա ուղեղի մեջ՝ անհանգստության հետ միասին ցավ էին պատճառում նրան. և նա չարունակում էր մտածել, թե մի՞թե իրոք հայ նախարարները չեն հասկացել կամ չեն հասկանում, թե ո՛րքան կարևոր է միաբանությունը ահեղ ու վտանգավոր իրենց հարևանների դեմ, որ միշտ եղել են՝ թշնամի. մի՞թե նրանք չեն հասկացել, որ հայոց աշխարհի թուլությունը նրա ցրված ուժերի և անմիաբանության մեջ է, որից և միշտ օգտվել է թշնամին, որի պատճառով և նա չի հարգում մեզ, նեղում է մեզ, ավերում է մեզ...

Պասը գիտեր, լսել էր, այժմ էլ տեսնում էր, որ հայ նախարարների մեջ չկար ընդհանուր մի շահ, մտավոր բարձր իդեալություն, որ հասկանալին երկրի, հայրենիքի աղատությունը: Չէր եղել նաև մի իշխանություն, որ այս ամենը հասկացներ նրան. յուրաքանչյուր նախարար անում էր ա՛յն, ինչ ցան-

կալի և ինչ նպատակահարմար էր գտնում իր համար, իր ժողովրդի համար, իր չահի համար... Ամեն նախարար ուներ իր քանակը, և անհամաձայնության դեպքում՝ անջատվում էր կենտրոնից կամ քաղաքական–նեղբլին պատերազմ սկսում։ Իսկ երկրի դեմ արտաքին պատերազմ ծագելիս՝ ավելի իրենց մասին էին մտածում, քան երկրի. վտանգի դեպքում նախ ուզում էին ապահովել իրենց, ու երբեմն կամ հնազանդում էին Բշնամուն կամ մտունությամբ ու կաշառով ապահովում իրենց։ Պարսից ինքնակալները, յալ իմանալով նախարարների այս տրամադրությունը, հաճախ կաշառում էին կամ առատ խոստումներով իրենց կողմը գրավում այս ու այն նախարարին ու բդեշխին և պատակտում երկիրը... Ահա նախարարների այս տարամերժ ձգտումներին էր որ ուզեց վերջ տալ հայրը՝ Արշակ Թագավորը և ձախողեց իր որդիու Արշակավանով... իսկ Բշնամին ավելի ևս համոզվելով, որ նախարարները չունեն իրենց աշխարհի բնդհանուր բարօրության ու չահի հասկացողություններ և տառապում են տարամերժ ու իրարամերժ ձգտումներով՝ այսօր էլ նենգորեն պատվի խոստումներով հրապուրում է ոմանց, մնացիան կարճամիտների և նրանցով հարվածում մեզ... Ի՞նչ է, օրինակ, Միհրուժան Արծրունին... Չկամենալով հնթարկվել իր Թագավորին կամ նրանից դժգոհ մնացել է հայոց աշխարհի ոխերիմ Բշնամուն և օգնում ու աջակցում է, որ նրանք քանդեն ու ավերեն իր մայր երկիրը։

— Ի՞նչ է սա. կուրությո՞ւն, հիմարությո՞ւն թե քինախնդիր կիրք... Իր Թագավորից դժգոհ՝ վրեժխնդիր է լինում իր երկրից և կուիվ հայտարարում քրիստոնեության...

Այստեղ Պապը նորից կանգ առավ և մի տեսակ սթափեղության պզաց, որ Միհրուժանն իր ներկայությամբ, իր շնչով Թունավորել է հայրերի այս պալատը։

— Այո, նա կռվում է չգիտես իր երկրի՞, թե քրիստոնեության դեմ... Եթե վերջինի՞— ինչու հապա չէր մտքատում այն ժամանակ, երբ չէր գժտվել իր Թագավորի հետ... Պարզ է, անշուշտ, որ այդ բոլորը նա անում է Շապուհի խոստումներից չլայացած, նրան հաճելի լինելու, ապագայի պատկերներով ու հեռանկարներով տարված... Ու կրքից կուրացած այդ անպիտանը էլի հասկանում, ներևի, որ փորում է իր ազգի հիմքը, հարվա-

ծում է նրա գոյությունը, արգելելով անգամ հայի սովորությունները, տոները, երգերը, առաջարկելով նրանց փոխարեն պարտականը...

Եվ նա կանգ առնելով՝ անեռուն ու տխուր նայեց մի կետի, որտեղից կարծես պատասխան կամ ինչ-որ մի հայտնություն էր սպասում:

Նրան թվում էր, թե ինքը լավ չի հասկանում այդ մարդու նպատակը. և չնայած նրան ասել-բացատրել էին, թե ինչի է ձգտում Մերուժանը, նրան այնուամենայնիվ թվում էր, թե տակավին կան բաներ որ պարզ չեն...

Այսպես տարակույսների դեպքում ստիպված լինելով խոսակցել կամ իր մտքերը փոխանակել մեկի հետ՝ Պապը հիշեց Երեմիային, որ իր ուսման ընկերն էր Բիզանդիայում, իսկ այժմ իր դպիրը, որ նույնպես գիշերում էր իր հարկաբաժնում: Բիզանդիայում անցրած տարիներին Պապը այնքան էր մտերմացել Երեմիային, որ սովորություն էր դարձրել խոսել, խորհրդակցել նրա հետ իրեն ղրաղեցնող կամ հուզող խնդիրների մասին, ու հա՛մ կանչում էր նրան, կա՛մ ինքն էր գնում մոտը: Հիմա էլ հիշելով նրան՝ մտածեց կանչել նրան, բայց երբ գուռը բանալով՝ տեսավ սենեկապահը նստած-քնած կիպ սենյակում, չուզեց նրան արթնացնել և մտածեց, թե գուցե Երեմիան էլ քնած լինի. այնուամենայնիվ մտածեց՝ անձամբ գնալ տեսնել, թերևս արթուն է, և կարելի է առանց կանչելու խոսել:

Ու զգույշ անցավ այդ փոքրիկ սենյակը, ուր քնած էր ծեր սենեկապետը և, ինչպես կար՝ գլխաբաց ու տունիկով, դուրս եկավ միջանցքը, ուր երեկոյան առաստաղից կախ բազմաճյուղ ճրագարանի փոխարեն վառվում էր հիմա մի եռատանի թուլլ կանթեղ, որ հազիվ էր լուսավորում միջանցքների մի փոքր մասը:

Միջանցքը դուրս գալով՝ նա դրա ծայրին նկատեց երկու պահակ զինվոր, որ քնել էին հատակին նստած մեջքերը պատին դեմ արած և նիզակները երկու ծնկան արանքում բռնած: Նա զգույշ և հուշիկ քայլերով, որ զրանք չզարթնեն և իրեն տունիկով տեսնեն, համարյա գաղտագողի մոտեցավ Երեմիայի սենյակին, որ մի քանի քայլի վրա էր: Եվ առաջին բանը, որ նկատեց Պապը, լուսյակ մի ցոլք էր, որ երևում էր Երեմիայի սենյակից:

Նա ուրախացավ, ինչպես վիրուհյան լույս տեսնող — ուրեմն Երեմիան տակավին քնած չէ, — մոտածեց և այդ միտքն ուրախացրեց նրան և դուռն զգուշորեն բանալով՝ նկատեց, որ Երեմիան դրսում է. առաստ ու նուրբ մաղերը խարտոպներով ուսերին թափված՝ նստել էր նա մի հնգաստեղ աչտանոսկի տապակ, ավելի շուտ՝ սմբողջ իրանով թեքվել-կռացել էր մի հաստանի սեղանի վրա և ներառճնացած, թիկունքը դեպի դուռը՝ գրում էր մազաղաթի մի երկար թերթի վրա, որ երևում էր մի ծայրը ոլորված: Առջևը դրել էր իր մոմատախտակները, որոնք սովորաբար, ճանապարհին թե մարտերի մեջտեղին միշտ նիզիոխ կրում էր նա վողջից կախ և որոնց վրա նշումներ էր անում անգամ ձիու հեծած ժամանակ, խակ երբ որևէ տեղ էին հասնում — նա այդ նշումները մոմատախտակներից արտագրում էր մազաղաթյա թերթերի վրա, ավելի ընդարձակելով դրանք՝ ապագայում գրելիք իր աշխատության համար:

Այժմ էլ Երեմիան այնքան էր տարված այդ աշխատանքով, այնպես էր խորասուզված նրա մեջ, որ լավորովին չէմացավ, թե ինչպես բացվեց իր սենյակի դուռը և ինչպես Պապը մոտեցավ իրեն: Եվ նա իր այդ վիճակից չդթահավեց մինչև որ Պապը ձեռը չդրեց նրա ուսին մի մտերմությամբ, ինչպես սովոր էր դեռ Բիզանդիայում:

— Դու նորից գրո՞ւմ ես, Երեմիա...

— Պա՛պ,— գլուխը բարձրացրեց Երեմիան զարմացած:— Մի՞թե չես քնել: Ես կարծում էի քնած պիտի լինես:

— Քնե՛լ,— ունքաց Պապը տարօրինակ մի ձևով:— Ինչպես քնեմ կամ ինչպես կարող եմ քնել այստեղ, այս տան մեջ, այս պալատում, ուր ամեն ինչ, ամեն մի իր ու առարկա կարծես լեզու առած՝ հիշեցնում են ինձ անցյալը, երբ այնքան ուրախություն կար այստեղ... Հիշեցնում են և մեր ներկան, որ այնքան տխուր է... Էլ ինչպես կարող եմ ես հանգստանալ, քնել և կամ... մենակ մնալ: Այո, մենակությունն անգամ հիմա ծանր է ինձ համար, Երեմիա...

— Դա քնական է, Պապ,— ասավ Երեմիան վշտակից ձայնով:— Թագուհու հետ պատահած դժբախտությունն, անշուշտ...

— Ո՛չ միայն այդ, Երեմիա սիրելի,— ընդհատեց նրան Պապը,— ոչ միայն այդ... Դու տեսար մեր երկրի ամերիկյան մասը, ժողովրդի թշվառությունը... Ինչ պիտի անել այս ամենի համար... Ես ինչպես թափառելու եմ այս ամերիկների վրա... Մեր յակում, մեր մի ջիջգիս ամեն ինչ կարծես քաղաքում է իմ հանդստության դեմ, ամեն ինչ պահանջում է, որ լինեմ վճռական ու մրժիչանդիր... Բայց ես այնքան անզոր եմ զգում ինձ այս ահագին թշվառության առաջ,— ասում Պապը դլուխն իջեցրած դնալ-գալով, որ թվում էր մտածում է բարձրաձայն, քան խոսում, և նրա աչ երեսը նորից խաղում էր ջղաձիգ։— Ասում եմ՝ քնել... ինչպես քնել, երբ... ամեղորդ է թվել,— նա ձեռը բարի տվեց, ասես չար մաքերն իրենից վանելու։— Երեմիա,— շարունակեց նա փոխված ձայնով,— դու և բաթը եղել եք միշտ իմ մտերիմը և ձեր խորհուրդներով միշտ օգնել եք ինձ։ Ասա տեսնեմ՝ ինչ պիտի անենք կամ ինչ կարող ենք անել այս ահավոր թշվառության դեմ, ինչպես ամոքենք...

— Ամենից առաջ՝ դու հանդստացիր, Պապ,— ասավ Երեմիան,— այդ խնդիրների մասին պետք է խոսել հանդիստ, հշտասրտությամբ։ Իսկ առայժմ՝ իմ կարծիքը, եթե հաճելի է քեզ՝ սա է...

Պապը երկար մի հառաչ արձակեց ու նստեց Երեմիայի դիմաց՝ թիկնակով մի եռոտանու վրա, տուներիկ փիշերը ծնկների վրա ուղղելով։

— Խոսիր, Երեմիա. ես լսում եմ, խորհրդի կարիք իմ զգում։

— Պապ, այդ բոլոր խնդիրներից առաջ մենք նախ պիտի մտածենք թշնամուն մեր երկրից վտարելու մասին, ինչպես ծրագրում և անում է Մուշեղը, ինչով զբաղված են հիմա մեր զորավարները՝ Սմբատ Բագրատունին՝ Վասպուրականում, Սպանդարատ Կամսարականն իր տղրինեում...

— Ես այդ գիտեմ, սիրելիդ իմ Երեմիա, գիտեմ, որ առանց թշնամուն երկրից վտարելու չենք կարող զբաղվել մեր վերքերի բուժումով. բայց չենք էլ կարող չմտածել, թե ինչպես պետք է ամոքվի այս թշվառությունը։

— Ժամանակը և հողը, Պապ, կամոքեն ամեն ինչ,— վրա բերավ Երեմիան։

— Ժամանակը և հողը՛... Ինչպես հասկանամ քեզ, սիրելի

Երեմիա,— և Պապը նայեց խոսակցին:— Դու ուզո՞ւմ ես ասել, որ բոլորս ժամանակի ընթացքում կմեռնենք, հողը կմտնենք և ամեն ինչ կամոքվի՞...

— Դու այսօր մռայլ ես տրամադրված, Պապ,— նկատեց Երեմիան՝ բարեկամաբար գլուխն օրորելով:— Ես սուրբ իմաստասիրական այլաբանություն չեմ ասում, այլ պարզապես ուզում եմ ասել այն, որ եթե թշնամուն վտարենք մինչև ձմեռ, դարնանը մեր չինականն ու ռամիկը նորից կհերկեն, կմշակեն իրենց հողերն ու այգինները և հողը նորից կապրեցնի մեզ: Ապավինենք հողին և նա կբուժի մեր վերքերը, մեր հոգին: Հողը և ժամանակը... Մեզ մնում է միայն առնենք նոր պետների առաջը, և դա կանի մեր օրեցօր ավելացող զորքը, որ լցված է վրեժխնդրությամբ, կանեն մեր զորավարները, որ, ինչպես տեսար, ոչինչ չեն խնայում հայրենիքի և քեզ համար:

— Իսկ ի՞նչ կասես, Երեմիա, այդ Մերուժանի մասին, որ այս բոլորի մեջ ամենից շատ է վրդովում ինձ: Ի՞նչ է ուզում նա իր ժողովրդից, ինչո՞ւ է պարսիկներին առաջնորդում մեր երկիրը և օգնում, որ ավերեն այն: Արդյոք դա վիրավորվածի կի՞րք է, թե կուրություն:

— Երկուսը միասին, Պապ, երկուսը միասին: Վաղուց է ասված, որ կիրքը կուրացնում է մարդուն: Այդպես էլ Մերուժանը: Մյուս կողմից նա հուզվում, կատաղում է, թե ինչո՛ւ ժողովուրդը չի հեռևում իրեն, չի ընդունում պարսից կրոնը, դուցե և լեզուն ու բարքերը:

— Պարսից կրոն և լեզո՛ւ,— կրկնեց Պապը մտահոգ:— Իսկ ինչո՞ւ՝ պետք է մի ժողովուրդ յուրացնի ուրիշի կրոնն ու լեզուն, ես այդ չեմ հասկանում: Ինքը Մերուժանը՝ անաչառությունից, չահամոլությունից կարող է ինքնակամ մոռանալ իրեն և նմանվել պարսիկի, ապրել նրա հոգով, նրա սովորություններով, իսկ մի՞ազգ, մի ժողովուրդ ինչո՞ւ պետք է անի այդ:

— Եվ չի կարող անել, Պապ,— վրա բերավ Երեմիան, կարծես նրան հանգստացնելու համար հավանություն տալով նրա մտքին:— Չի կարող անել, որովհետև կապկել կարող են մարդ անհատները, բայց ազգերը՝ երբե՛ք:

— Ինձ էլ այդպես է թվում, Երեմիա. անհատները կարող են նմանվել, բայց ազգերը՝ ոչ: Եվ արժանապատվություն ու-

նեցողը երբեք չէր ձգտել նմանվել ուրիշի. և ի՞նչպես կարելի է ապրել նմանությամբ՝ ես չեմ հասկանում: Դա նշանակում է ինքնուրացություն, որ ամենացածր, ամենաստոր բանն է, որքան մտածել եմ,— և Պապը լռեց, աշխատելով հիշել ինչ-որ մի բան:— Այո, հիշեցի: Քիչ առաջ Մերուժանի մասին մտածելիս՝ այսպիսի մի բան անցավ մտքովս: Բնության մեջ, ինչպես գիտես, ամեն մի բույս ունի իր գույնը, ամեն ծաղիկ իր բույրը, ամեն կենդանի իր ձայնը, ամեն թռչուն իր երգը... Եվ ոչ մեկը դրանցից չէր հրաժարվում բնության ամած այդ հատկություններից... Ինչո՞ւ մենք մեր կամքով պիտի հրաժարվենք մեր գույնից, մեր ձայնից, մեր երգից և կլինենք ուրիշներին: Ո՞վ է անում այս բնության մեջ. ոչ մի ապարած և ոչ մի բույս: Բայց Մերուժանն ուզում է, որ ամբողջ հայ աղգը այդպես վարվի:

— Որովհետև չի հասկանում, որ բնության մեջ և աշխատակ աշխարհում ամեն ինչ ձգտում է ինքնուրույնության, ամեն ինչ ձգտում է լիովին պարզել իր ինքնությունը, ապրել իր ձևով...

— Եվ ինչո՞ւ պետք է մենք ձգտենք, այն էլ կույր, նմանվել ուրիշի, երբ ստեղծված ենք մեր կերպարանքով ու հոգով: Բայց չգիտես ինչու, այս կամ այն մարդը ուզում են կախարդել այդ կարգը և ուրանալ իրենց: Երբ այդ անում է թշնամին, երբ նա կամենում է մեզ զրկել մեր ձայնից ու մեր գույնից,— դա հասկանում ես, բացատրում ես ինչո՞ւ: Բայց երբ մարդ ինքն է ուզում զրկվել ձայնից ու գույնից՝ դա անհասկանալի է ինձ համար: Այդպիսի մարդն իսկույն է ապրում..., Հենց այդպես էլ Մերուժան Արծրունին: Ինքն պատրվում է ուրացությամբ և ուզում է ամբողջ աղգը հետևի իրեն. և երբ ազգը չի հետևում՝ նա պարսից նետերով ու փղերով պատրաստվում է իր ազգի վրա, քե կավերեմ-կջնջեմ քեզ, քանի որ չես ուզանում քեզ, չես հետևում ինձ,—Պապը տնքաց ու լռեց մի վայրկյան, որից հետո շարունակեց տխրությամբ:— Սակայն ինձ տանջում է, երեմիա, այն հանդամանքը, որ Մերուժանը, դժբախտաբար, մենակ չէ, որ ձգտում է ինքնուրացության: Ես նկատել եմ, որ կան նախարարներ ու եկեղեցականներ էլ, որ աշխատում են նմանվել հռոմեներին. ու ոչ միայն իրենք, այլ ցանկանում են,

ոչ ամբողջ հայոց աշխարհը նմանվի հռոմեացիներին: Դու մոռացե՞լ ես այս մասին: Բավական չէ որ պարսիկն ասում է «աղոթեցեք ինձ նման», բիզանդացիք էլ ցանկանում են, որ մենք աղոթենք իրենց նման— մենք էլ մեր հերթին, բաժանվում ենք երկու խմբի հակառակության, որոնցից մեկն ասում է. «մենք աղոթենք պարսիկի նման», մյուսը թե՝ «աղոթենք հռոմի նման»... Ահա մեր դժբախտությունը, Երեմիա: Մի խումբ քաշում է մի կողմ, մի այլ խումբ՝ այլ կողմ, և ասիակաները միայն հենվում են սեփական ոտքի վրա, ինչպես տեսնում եմ... Ինձ այսպիսի երկրում չգիտեմ ինչպես կարելի է թագավորել, Երեմիա...

— Ելք կգտնվի, Պապ,— ասաց Երեմիան,— այդքան մոայլ մի պատկերացնի. մխիթարականն այն է, որ դրանք փոքրաթիվ նախարարներ ու եկեղեցականներ են. մեծ մասն այդպես չէ. Պապ: Կարծում եմ՝ այդպես չէ:

— Ես, սեռաք է խոստովանվեմ, Երեմիա, ժողովրդին չեմ ճանաչում,— շարունակեց Պապը տխրությամբ:— Բայց ընդունում եմ, որ ժողովուրդն ուրիշ կերպ չի կարող լինել: Սակայն ինձ թվում է, առայժմ այդ են խոսում վաստակը, որ մեր ժողովրդի տունը քանդում է ավելի այս կամ այն հայ նախարարը, քան թշնամին: Մինչև հիմա այդպես է եղել: բավական է մեկը, մի նախարար, դժգոհի կամ դժտվի թագավորից՝ խնդրյա ձիավազ գնում է Տիզբոն կամ Բիզանդիոն, թե «եկեք մեր թագավորին կամ իշխանցեք կամ փոխեցեք, նա վատ իշխում է հղացել ձեր դեմ, նա ուզում է կանգնել այս կամ այն կողմը և վնասել ձեզ»: Այդպես վարվեցին Մորուի թագավորի հետ, պապիկ հետ և հորս հետ... Եվ այդ ամենը, այդ ստորը նրա համար, որ ինչ կերջին բավարարում տա, շահի մի քանի կամ ստեղծի դիրք մի չնչին: Ստորնադրյան մարդիկ, որ չեն մոռանում, թե այդ ինքնասիրությանը կամ շահամոլությանը զոհ է գնում ժողովուրդը... Ինչ էր, որ տեսանք Ճանապարհին—ավեր քաղաքներ, գյուղեր, անօթևան, կիսամերկ ու քաղցած մարդիկ... Լավ է, որ աշուն է տակավին... Մի քիչ միայն պարսիկն է մեղավոր այս ամենի համար... Տխուր, շատ տխուր է հայոց աշխարհը, Երեմիա,— ասաց Պապը հուսահատության հառաչով.— Այո, առայժմ միջոցը մեր այս թշվառության դեմ այն է, որ

կամ մարդ է. «Սէրեցի ձեր երկիրն,— ասում է ինձ,— և պետք եմ գտնում հոգալ, որ պարսիկը երբեք չմոռնի նրա ահեղութիւնը»...

Ասում էին նրանք հանդարտ՝ կիսախաւար սենեակում, և կանթեղի բոցկլտուն լուսերը նրանց սուլերները խաղացնում էին հատակի ու պատի վրա: Ու նրանք չէին կարող ասել որքան ժամանակ էին խոսում, երբ հանկարծ ներս մտավ Գապի ուսմունքն և պանդխտութեան մյուս ընկերը, իսկ այժմ նրա թիկնապահ դարձել պետ Բաթ Սահատունին: Ներս մտավ նա թափով, բարձրաձայնութիւնով ու լինքնավստահ, ինչ նրան տալիս էր խրոխտ ու համարձակ մարդու տեսք:

— Ստասկցութեան ձայն լսեցի՝ մտա,— ասավ նա:— Ինչպես է որ այս ժամին չէք քնել. քնե՞ք էլ ինձ՝ նման չեք հանգստանում: Մորս տարա տուն, հանգստացրի, մխիթարեցի որքան կարող էի և հայրիկ կարողացա դալ:

Նա ուզեց պատմել իր և մոր խոսակցութիւնը, բայց հիշելով Գապի վիշտը, մեռքը վոխեց և ասավ.

— Բայց այս ամենը թողնենք:—Դուք ինչո՞ւ չեք ննջում... Սպարապետը հանգանակի է. նա առավոտը մեկնելու է նախճևան, երևի կարգադրութիւններ է անում. արթուն էր երբ անցա բնակարանի մոտով...

— Նա միշտ այդպես է,—ասավ Գապը:— Այսքան ժամանակ ես չգիտեմ ե՛րբ է քնում այդ մարդը, ե՛րբ է հանգստանում: Նա նրան լավ չէի ճանաչում մինչև Բիւրականի դալը: Այնտեղ ոչինչ. խոսում էր, բացատրվում... բայց այն օրվանից երբ պատերազմն սկսվեց պարսից դեմ— ոչ քնում է կարծես, ոչ խոսում...

— Զքնելը չգիտեմ,— ասավ Բաթը,— բայց չխոսելը նա բացատրում եմ այնպես, որ նա մեզ երեխաների տեղ է դնում, Գապ, և չի ուզում ոչ միայն խորհրդակցել, թեկուզ քնց հետ, այլև ասել, թե ինչ է ուզում անել:

— Այդ նրանից է, Բաթ, որ մենք ռազմական դործը իր պես չենք հասկանում, և նա մենակ իրեն է համարում պատասխանատու,— բացատրեց Գապը:— Իսկ դու ինչու նա կանչեցիր:

***

Մինչ ընկերները խոսում էին Մուշեղի մասին՝ նա իրոք տակավին արթուն, առանց հանգիստ առնելու նամակ էր գրում իր քարտուղարին՝ լեռնագավառների նախարարներին և գունդապետին ուղարկելու: Նա չտապում էր, առավոտը վաղ ճանապարհ ընկնի՝ իշխան Կամսարականի զորքերին միանալու, որ դնում էր Նախիջևանի վրա: Այդ ժամանակ նրա մոտ էր Հանապարհին միացած Զենոն Գնունի նախարարը՝ հիսունն անց մի լայնալանջ, ևեծամորուս տղամարդ, որին Մուշեղը կանչել էր հատուկ նպատակով. նա խնդրում էր Գնունի այդ նախարարին՝ մնալ պալատում և իր խորհուրդներով օգնել երիտասարդ թագավորին՝ մինչև պատերազմը կվերջանար և ինքը կվերադարձներ...

— Ես այդ մասին խոսել եմ և հավարտնելուց հետո,— ասում էր Մուշեղը.— կարելի չէ վստահել այդ Հայր-մարդպետին: Պապը տակավին երիտասարդ է անփորձ, սևեռակուռ գործերին անվարժ. իսկ Հայր-մարդպետն ունի այնպիսի լեզու, որ նրան կարող է առնել իր ազդեցության տակ: Մարդպետը հայտնի է իր պարսկասիրությամբ և այն հանգամանքը, որ ինքը մնացել է և Մերուժանին ընդունել այս պալատում՝ քիչ վկայություն չեն նրա պարսկասիրության: Բայց մինչև իր գործը քննելն ու պարզելը— նա շատ բան կարող է վնասացնել: Այնպես որ՝ ես, տեր Գնունի, կուզեի, որ դու Պապին չթողնես մենակ և օգնես քո խորհուրդներով ու փորձով:

— Ես պատրաստ եմ, սիրելիդ իմ Մուշեղ,— խոսեց Զենոն Գնունին՝ մխանգամայն շոյված Մուշեղի քե պատվարկից քե վստահությունից:— Գնունիները միշտ հավատարմությամբ են ծառայել հայրենի գահին: Իմ հորեղբայր Դավիթ Գնունին ծեծրացել է այստեղ. երբ Պապին տեսավ՝ լաց եղավ, որ արժանանում է երբորդ թագավորը տեսնելու: Իսկ ես - Աբշահի օրով, ինչպես գիտես, միշտ այստեղ եմ եղել և միշտ հավատարիմ: Այնպես որ կարող ես հանգիստ լինել: Բայց սակայն ինձ, սպարապետ, ի՞նչպիսի բնավորության տեր է երիտասարդ Պապը:

— Տակավին շատ պարզ, տեր Գնունի: Անգամ չէր ուզում թագավոր լինել: «Ես դրա համար պատրաստ չեմ,— ասում էր,

—Ընտրվք է պետք հատուկ, իսկ ես միայն պետություն եմ ստեղծել... Դեմ կռվելու,— ասում էր,— բայց թագավոր դժվար է լինե՛ համար: Նախ թշնամուն վանելը—հետո»: Չի հասկանում, որ ժողովուրդը որդեւորվում է, երբ թագավոր ունի: Պետք է նրան ուրեմն խնամքի և հսկողության տակ պահել. լցված է վրեժխնդրության ոգով, բայց թագավոր լինելու համար շատ է անփորձ, բռնկվող, պարզասիրտ...

— Հասկացա, ազատարարեա, հասկացա,—ասավ Զենոն Գնունուն բազմախորհուրդ:— Ուրեմն պետք է մեկը, որ նրան կառավարի, և այդ դու պետք է լինես, ազատարարեա...

— Ատացիմ, ուր Գնունի, կվարվես այնպես, ինչպես ես եմ առաջարկում,—ասավ Մուշեղը, այսուամենայնիվ. չոյված Զենոն Գնունու ակնարկից. նա էլ զգում էր՝ միակ մարդը ինքն է, որ կարող է իրեք պահպանել, օգնել և ուղղություն ցույց տալ Գագիկ պետական գործերում:— Իսկ հիմա, ուր Գնունի, կարող ես գնալ ննջել. ես դեռ պետք է խորհեմ բաներ և տպա անցնեմ Գագիկ մոտ...

Զենոն Գնունին վեր կացավ իր ծանր մարմինը և գանդաղությունն հրաժեշտ տվեց ազատարարեային, իսկ սա մի առժամ չարունակելով նամակ գրելը՝ փոքր անց դուրս եկավ իր քնասրահից և գնաց գտնե Գագիկ հարկաբաժինը:

***

Այդ գիշեր, ինչպես սեռանք, անհանգիստ էր և Հայր-մարդպետը, բայց նա այնուամենայնիվ կարողացավ հանգստանալ և քնել. սակայն առավոտը հազիվ լուսը բացված՝ նա հյավ, հագնվեց առանձին մի աշխուժով՝ իր մտադրությունն իրագործելու ցանկությամբ, մի մտադրություն, որը նա համարում էր երջանիկ գյուտ և առիթ՝ թագավորին ներկայանալու, նրա հետ անձամբ-անձին խոսելու և նրա տրամադրությունն ու վերաբերմունքն իմանալու: Հիմա, վերջապես, կպարզվեր, թե Գագիկ որքան վատ բան լսե՛լ է իր մասին և ինչպես է նայում դրան:

Մի քանի վայրկյանով մեջ Հայր-մարդպետն ուրախ-ուրախ հագավ երեկվա տոնական-հանդիսավոր, ավազանու իր զգեստ-

նները, գլխի խիտ մորուքի ցանցատ մազերը խնամքով հարդարված արծաթի հայելու առաջ և ապա կանչելով երկու–երեք սպասավոր, նրանց ուղեկցությամբ դիմեց դեպի արքայական հանդերձարանը կամ, ինչպես ասում էին, «պատմուճանատան տունը», որ գտնվում էր իր հսկողության ու իրավասության տակ։ Այդտեղ կար մի հատուկ ներքնասրահ, ուր պահվում էին թագավորական զանձերը, հանդերձները, թագերն ու զենքերը, որ զարդարված էին թանկագին քարերով ու կիսավածքներով։

Հայր–մարդպետը մեծ խնամքով պատմիչի պահպանից վերցրեց թագավորական մի ընտիր ծիրանի, որ հերթով զգեստ էին ածել Տիրան և Սպշակ թագավորները, վերցրեց նաև մեծ տաքից ու բնհեղից կարած մի կարճաթև պարեգոտ, ապա վոչ–րիկ արծաթապատ սրկիղից հանեց մի նրբատվեստ և շողակներով զարդարուն ոսկեհուռ կամար, մի ուրիշ տեղից առավ ոսկեթել բանված ոսկե կոճակներով բազպաններ, հետո մի այլ մեծ սրկղից վերցրեց արքայական կարմիր կոշիկները, որոնք, ինչպես և արքայական մյուս բոլոր հանդերձներն ու զանձերը, թագուհու հեռանալուց հետո, պահվում էին պալատի գաղտնարաններում և երկու օր առաջ միայն տեղափոխել էին իրենց նախկին տեղը, այսինքն՝ «պատմուճանատան տունը»։

Երբ այդ ամենը պատրաստ էր՝ Հայր–մարդպետն կարգադրությամբ սպասավորները բերին արծաթի սկուտեղներ, որոնց վրա և դասավորել տվեց այս ամենի հետ միասին նաև ոսկե արծաթի դարդմանակ, աշխարհավանդ, հանգույց և արծաթ լանջապանակ, ու սպասավորներից մեկին ուղարկեց իմանալու՝ թագավորն արթնացե՞լ է արդյոք։

Դրական պատասխան ստանալով՝ նա կարգադրեց սպասավորներին.

— Վերցրեք սկուտեղները և հետևեցեք ինձ։

Ու ինքը գոհունակ, կարևոր ու լուրջ գործ կատարողի հպարտությամբ, ծանրաքայլ առաջ ընկավ ու գնաց դեպի թագավորի հարկաբաժինը։

Պալատի բակում պատահող սպասավորները թե մուտքերում առջև գրահով, սաղավարտով, նիզակները ձեռներին կանգնած պահակները զարմանքով, շլացած նայում էին թե ճոխ հագնված Հայր–մարդպետին և թե նրա ետևից մի քանի սկուտեղով սպա–

վող փայլուն հագուստներին, ու բոլորը զբաղված էին ընկնում, որ դա անչուշտ Թագավորի համար է, և խոնարհ ու պատկառանքով ճանապարհ էին տալիս այդ փոքրիկ Թափորին, մանավանդ որ Հայր-Մարդպետը ոչ միայն պալատի կնճռավարիչ էր, այլև ամենից նախարար, ուստի և Թագավորի ու Թագուհու հարկաբաժինները նա աղատորեն գիշեր, ցերեկ մտնում էր առանց նախապես հայտնելու, ինչպես մի հայր իր զավակի առանձնարանը:

Այդպես էլ այժմ, երբ նա մոտեցավ Պապի հարկաբաժնին՝ պահակներն ու ոտասավորները, ետ-ետ գնալով՝ ճանապարհ տվին Հայր-Մարդպետին, և նա ծանր ու հանդիսավոր քայլերով մտավ արքայական սրահները, մտածելով, թե քանի շուտ է, քանի դեռ Թագավորի մոտ մարդիկ չեն եկել՝ կատարի իր մտադրությունը, արքայական հանդերձները մատուցի Պապին և ապա, հետը խոսելով, իմանա այն, ինչ հետաքրքրում է իրեն, այսինքն՝ ստուգի իր կասկածները վերջապես: Ու նրան թվում էր, թե որքան հաճելի անակնկալ կլիներ այդ ամենը Պապի համար և ինչպես նա կզգացվեր իր այդ ուշադրությունից:

Սակայն մի փոքր առաջ գնալով՝ նա կանգ առավ հանկարծ: Այն, ինչ տեսավ և՛ անսպասելի էր և՛ զարմանալի նրա համար: Ընդունարան-սրահում Պապը շրջապատված էր երեկոյան իր բարեկամներով: Արքայադուստր Երեմիան սեղանի մոտ նստած՝ ինչ-որ գրում տալիս էր Պապին ու Մուշեղին ստորագրելու, իսկ Տաթի Սահառունին այդ մագաղաթյա թերթերը ոլորում էր նամակներն ձևով և կնքում Թագավորի ու ոսկերապետի մատանու կնիքներով:

Երևում էր, որ այդ աշխատանքը նրանք վաղուց էին սկսել ու տակավին սիրտ չարունակելին, սեղանի վրա կային դեռևս շատ նամակներ և մագաղաթի թերթեր:

«Հավանորեն սրանք գիշերս չեն քնել» մտածեց Հայր-Մարդպետը, որտեղ չեմքում կանգնելով: Նրա հետ միասին չարք կազմած կանգնեցին և արծաթյա սկուտեղները բարձր բռնած ոտասավորները, զարմանքով նայելով Թագավորին ու շրջապատողներին, որ իրար մոտ հավաքված՝ զբաղված էին հարցեր մեկնուն դարձով:

Առաջինը Պապը նկատեց Հայր-Մարդպետին ու նրա չքնաղությամբ և հարցրեց վարանքով.

— Ի՞նչ էիր կամենում, տեր մարդպետ:

Ոչքան էլ իր ապաստածը չէր, ոչքան էլ վայրկյանը անպատեհ, բայց Հայր-մարդպետն իրեն չկորցրեց. ծանր ու լուրջ, ինչպես սովոր էր և ինչպես պահանջում էր պալատում ընդունված կարգը, նա երկու քայլ առաջ եկավ և, ձեռը կրծքին դնելով՝ թեթև խոնարհում արավ.

— Ներել եմ, արքա, քո թագավորական հանդերձները՝ պարեզոն ու ծիրանին; ոսկե գոտին ու կարմիր կոշիկները, ոսկեհուռ թագը և արծաթ լանջապանակը...

— Այդ բոլորը հետո, տեր մարդպետ, հետո,—ասավ Պապն արագ-արագ, ձեռն օդում չարժելով, կարծես այդ ամենն իրենից հեռացնելու համար և, ինչպես Հայր-մարդպետին թվաց, բոլորովին անտարբեր:

— Սակայն, արքա...

Հայր-մարդպետն ուզում էր ասել, թե թագավորը պալատ մտնելով՝ պետք է ընդունի իր հանդերձները, բայց Պապը ժամանակ չտվեց նրան շարունակելու:

— Հետո, Հայր-մարդպետ. մնան առայժմ... ժամանակ չկա. մենք զբաղված ենք հույժ կարևոր գործով:

Հայր-մարդպետը նորից անհարմար դրության մեջ զգաց իրեն. դարձյալ չկարողացավ խոսել Պապի հետ՝ դոնե իր կասկածները փարատելու չափ:

«Շարունակ անհաջողություն» մտածեց նա և չընկաց սպասավորներին պետին, որ մեծագոյն սկուտեղը ձեռին կանգնած էր բոլորից առաջ.

— Վրեն, սկուտեղները տարեք ետ. բայց ոչ պատմուճանակալնաց տունը, այլ արքայական սրահներից մեկը, մինչև Թագավորն ազատվի զբաղումից...

Ապա նորից նայելով Թագավորի մոտ հավաքվածներին՝ զարմացավ, բոլոր նշաններից նկատելով, որ նրանք դիշերը չեն քնել. այդ էին ասում նրանց դեմքերն ու աչքերը, որ անքնություն ու հոգնածություն էին արտահայտում:

Նրա դիտող աչքերն իրոք չէին սխալվում. ամբողջ դիշերը նրանք նամակներ էին պատրաստել՝ առավոտը վազ տուրհանդակների միջոցով լեռնագավառների նախարարներին և ամրոցապետներին ուղարկելու, ինչպես արել էին տակավին Դարանաղի

գալատը մտած ժամանակ, երբ Մուշեղի ձեռքին շատ փոքրաթիվ զորք կար, ուստի և օգնություն ստանալու համար անհրաժեշտ տեսան ոչ միայն նամակներ ուղարկել մոտիկ գավառների հայ նախարարներին, այլև մարդիկ, ինչպես Մուշեղն էր ասում՝ «լեզու ունեցողները», որ բացատրեն օգնության կարևորությունը և իրենց խոսքով՝ մեկուսի մնացող նախարարներին սպասող վտանգը։ Այսպես, օրինակ, Անդոք իշխանը, չնայած իր ծերությանը, բայց իր մեծ հեղինակությամբ գնաց Տարոն և տեղի նախարար Զարեհին այնպես նկարագրեց դրությունը, որ նա մի քանի հազարի գլուխ անցած՝ շտապեց «Երկրի փրկության գործին մասնակցելու», ինչպես ասել էր Անդոք իշխանը։— Բաթ Սահառունուն ուղարկեցին Տայք՝ Մամիկոնյան Սահակ իշխանի մոտ... Այստեղ էլ Պապի և Մուշեղի նամակը և երիտասարդ Բաթի ճարտար լեզուն այն ազդեցությունն արին, որ ինքնատեր այդ պատրիկը՝ Մամիկոնյան անվանի իշխանը, ոչ միայն օգնություն խոստացավ, այլև հանձն առավ լինել մի գնդի հրամանատար։ Իսկ Մուշեղն ինքը գնաց Սպերք՝ Բագրատունի Սմբատ սպասուից օգնություն խնդրելու՝ թե մարդկանցով, թե պարենով։ Ասենք է դեպ, որ օգնության գնացողները հրահանգ ունեին ասելու, թե հոռոմները մեծ բանակով օգնելու են մեզ»։ «Մեծ բանակը» խոստում էր, և անհայտ էր՝ կկիրականանա՞ր թե ոչ, սակայն այդ հանգամանքը չեշտել անհրաժեշտ էին համարում՝ ժողովրդի տրամադրությունը բարձրացնելու, իսկ թերահավատ կամ տատանվող նախարարներին համոզելու։ Եվ այդպես էլ լինում էր. երբ անտարբեր կամ վախկոտ նախարարներն իմանում էին, թե հոռոմներն օգնում են Պապին ու Մուշեղին— աշխուժանում էին. «Քանի որ հոռոմներն օգնում են՝ հաջողությունը կարելի է ապահովված համարել», և խոստանում էին թե՛ մարդ թե՛ մթերք։

Բայց լինում էին և այնպիսիները, որ կասկածում էին հոռոմների օգնության վրա, ինչպես Սպերքի տեր Բագրատունի Սմբատ սպասելը։

— Բայց չէ՞ որ հոռոմները պարսիկների հետ պայմանագիր ունեն մեզ չօգնելու,—նկատեց նա թափանցող հայացքով նայելով Մուշեղի մանր, բայց կորովաբիբ աչքերին.—Դեռ Հովհաննո

հայրն է կատել այդ պայմանագիրը, որը, որքան գիտեմ, չի փախված մինչև հիմա։

Սակայն Մուշեղն աչքի ջուրես նկատեց, թե ճիշտ է, ինքն էլ գիտի, որ պայմանագիրը կա, բայց վաղես կայսրն այդ անուն է դաղտնի

— Ինչպես կարելի է այդպիսի բան գաղտնի պահել, Մուշեղ,— զարմացած բացականչեց Թավաճյան, լայնալանջ այդ Բագրատունին։— Պարսիկներին դուք քնած եք կարծում թե՞ աչք ու ականջից դուրկ։

— Նրանք մեր կռիվներին կմասնակցեն հայկական դրոշների տակ...

— Հայկական դրոշի տա՞կ,— քմծիծաղ տվեց ասպետը։— Նախ գոռոզ հռոմեները չեն մտնի քո դրոշի տակ։ Երկրորդ. եթե մտնեն էլ՝ դու կարծում ես դա կմնա՞ գաղտնի։

— Հուսով եմ։

— Իսկ պարսկասերները մի՞թե քնած են երկրում։ Լսե՞լ ես Հայր-մարդպետի վարմունքը, թե ինչպես է նա ընդունել Մեքուժանին Դվինում։

— Գիտեմ,— գլուխը կախել էր Մուշեղը։

— Ուրե՞մն։

Թվում էր ասպետի կարուկ և տրամաբանական պատճառաբանությունները պետք էր ընդունել և լռել։ Բայց Մուշեղը չտկվեց և ներքին անհանգստությունից վառվող աչքերը հառեց Բագրատունու երեսը։

— Ուրեմն քո կարծիքով, տեր Բագրատունի, մատնության վախենալով՝ մնանք գերության մեջ և թշնամու որի տակ գլուխ ճկե՞ինք։ Եվ այս բանը կարո՞ղ է հանդուրժել Բագրատունի ազգին տոհմի նահապետին՝ սերտը, որ կռիվ է թշնամիների դեմ մղած անվերջ կռիվներում։ Ես իմ ականջներին չեմ հավատում, որ ինձ հետ խոսում է քաջազն ասպետ Բագրատունին, որի մազերը ճերմակել են կռիվների մեջ և որի անվախությանը միշտ նախանձել եմ ես, որը ինձ համար եղել է հերոսության ու բարձր անձնազոհության տիպար... Եվ, վերջապես, տեր ասպետ, Շապուհն ամեն գավառ գրավելուց հետո, կարծում ես քեզ հանդիստ կթողնի՞ քո խաղաղ Սպերքում. կամ կուզե՞ր ասողանց հայրենիք նստել այստեղ։ ։ Մի մոռանար, որ նա ամենից

ավելի ոխերիմ թշնամի է Բագրատունի և Մամիկոնյան տոհմերին, որ այնքան սպարապետներ ու զորավարներ են տվել Հայոց աշխարհին...

Այստեղ կատարվեց անսպասելին. ծեր զորավարի աչքերը թրջվեցին և նա հանկարծ անխոս ելավ տեղից ու գրկեց Մուշեղին:

— Դու իմ ծեր սիրտը հուզեցիր, Մուշեղ: Քե՛զ իմ հայրենական ոսկին ու բանակը: Տա՛ր և ինձ,— ասավ նա հուզված և չարունակեց տխրությամբ: Ճիշտ է, Աբշակ Թագավորը շատ անիրավություններ գործեց թե իմ և թե մյուս նախարարների դեմ, բայց մե՛ր երկրի համար, քե՛զ համար և երկնատարած Պապի՛ համար, որ հուսամ՝ հոր նման չի լինի,— ևս պատրաստ եմ:

Այդ ամիսներ առաջ էր, պարսիկների դեմ Դարանաղի գյավուից կռիվ սկսելու օրերին, երբ Պապն ու Մուշեղը կարիք էին զգում վոքր ի շատե զորավոր ուժի, նախարարների օգնության և դրա համար շատերին պետք էր համոզել անձամբ: Իսկ հիմա, երբ երկրի մեծագույն մասը ետ էր խլված թշնամուց և ժողովուրդը միացած օգնում էր բանակին, այժմ Թագավորն ու սպարապետը անհրաժեշտ էին համարում նամակներ ուղարկել և ա՛յն նախարարներին, որ չգիտես վախից թե նախկին Թագավորից դժգոհ՝ տակավին անմասն էին մնում կռվին: Այս նախարարներին ուղղած իրենց նամակներում Պապը և Մուշեղը, ի միջի այլոց, գրում էին, թե իզուր է յուրաքանչյուրը քաշվել իր ոստանը և չի մտածում երկրի պաշտպանության մասին, թշնամուն վանելու մասին. «Բայց իմացեք,—գրում էին նրանք,—որ եթե թշնամին մեր երկրում՝ նա կմտածի ձեր բոլորիդ մասին, և եթե ամենքիդ սրի չքաշի կամ գերի չվարի, ձեզ սորուկ կդարձնի ձեր իսկ ոստաններում, եթե չմիանաք այսօր Հայոց աշխարհի մեծ թշնամու դեմ»:

Մոտավորապես նույնպիսի բովանդակություն ունեին և Մուշեղի անձնական նամակները, որ ուղարկում էր նա իր ծանոթ նախարարներին ու իշխաններին, որ ապրում էին Հյուսիսային Հայաստանի լեռնագավառների իրենց անառիկ վայրերում: Մուշեղը նույնպես գրում էր ի միջի այլոց, թե «միացած եղեք, որ հաղթությունը ապահովություն է և պատիվ. պա-

տուքյունը կործանում և տրկուքյուն: Ով ցանկանում է տրուկ լինել կամ կործանվել՝ թող վատաբար նստի իր տանը և սպասի Թշնամուն»... Իսկ վերջում նա ավելացրել էր. «իմացեք՝ ով չգա օդնուքյան՝ նա հետո կատանա իր արդար պատիժը»: Բայց դիտմամբ չէր գրել ո՛ւմ կողմից: Թշնամո՞ւ թե իրեն: Թողել էր, որ նամակ ստացողն ինքը մտածի:

Նամակները պատրաստելուց մի ժամ հետո արդեն ձիավոր սուրհանդակները, Դվինի քաղաքացիներից դուրս գալով՝ սուրում էին ամենատարբեր ուղղուքյամբ, դեպի հայկական լեռնագավառները, տանելով իրենց հետ Պապի և Մուշեղի նամակները նախարարներին, իշխաններին ու սեպուհներին, որ գան միանան Թշնամու դեմ:

Նոր էին նրանք վերջացրել նամակների գործը, երբ ներս մտավ ծերունի Անդոք իշխանը:

— Դեհ, զավակներս, եկա ձեզ հրաժեշտի ողջույն տալու... ժամ է մեկնելու:

Երիտասարդները տեղներից ելան և դլուխ տվին ծեր իշխանին, իսկ Մուշեղն իր նստարանն առաջարկեց նրան.

— Հաճելի նստել, իշխան:

— Ոչ, սիրելի տղաներս, ես վայրկյան անգամ չեմ կարող կորցնել, ուր մնայ նստել: Պետո է չտասել: Ձիերն սպասում են պատրաստ:

Նրա կարճ ու սինդ մարմինն արդեն զոտեպնդված էր ու զրահավորված, որ նրա ծեր կերպարանքին տալիս էր ավելի կորովի և բազմափորձ ռազմիկի տեսք:

Սակայն Սյունյաց Բակուր նահապետի այդ որդին ոչ միայն տեսքով, դործով արդեն փորձված ռազմիկի համբավ ուներ. նա մասնակցել էր շատ արշավանքների և շատ հաղթանակներ էր տարել, այնպես որ նրան դիտեին անգամ Բիզանդիայում. նրան դիտեր Շապուհն ինքը. և հիմա թեև ծեր, վրեժի ու տենչքյան բուռն զդացմունքներ էր կրում իր սրտում, որ տարիքի բերումով, թվում է, պետք է սառած լիներ և աշխարհի չարիքներին հանդեպ անտարբեր... Սակայն նրա համար, որ միշտ հաղթող էր եղել, դյուրին չէր ծերուքյան հասակում տանել այնպիսի վիշտ ու անպատվուքյուն, ինչպես իր կնոջ՝ իշխանուհի Մանանի և իր թագուհի դստեր գերուքյունը... Նա նման էր

զայրակնած արծվի, որ եկել–տեսել է երկար տարիների ընկերուհին սպանված և ճտերը հափշտակված։ Այդպիսի դեպքերում արծիվները կամ ինքնասպանություն են գործում, կամ, եթե նկատում են թշնամուն, կատաղած հարձակվում են վրան և, իրենց մոռացած, մագիլները խրում են նրա մարմինը և ծվատում անխնա... Առաջին օրը, երբ իշխանը լսեց իր հարազատներին պատահած դժբախտությունը, այնպես ցնցվեց այդ հարվածից, որ եղավ մի վայրկյան՝ կամեցավ սուրը խրել իր կուրծքը և վերջ տալ իր կյանքին։ Բայց այդ որոշումը տևեց միայն մի ակնթարթ. հետո, երբ մտածեց, թե դա կարող է միայն ուրախացնել իր թշնամուն՝ «այրուհարբու ծեր գայլին», որ այդ գաժանությունը գործել է մասամբ և իրենից վրեժխնդիր լինելու,—Անդոքը որոշեց չմեռնել, մինչև թշնամուն մի վոխ–հարված չհասցնի, մինչև չանի ա՛յն, ինչ կարող է։ Նրան թվում էր այնուհետև, թե հարազատները՝ կինն ու զուսպը, իրենց գերության մեջ մի մխիթ, մի ցանկություն են ունեցել, որ ինքը վրեժխնդիր կլինի Շապուհից ու նրա զորավարներից և անպատիժ չի թողնի նրանց ոճիրը, ինչպես Տիգրանակերտը կողոպտելու վոխարեն հարձակվեց Տիգրոնի վրա և պարսից արքայի պալատը մոնելով՝ գրավեց–տարավ նրա գանձերը։

«Այո, անպատիժ չի թողնի Անդոքը ձեր անպատվությունը, հարազատներս»,— ասում էր երբեմն ծեր իշխանն իր մտածումների մեջ խոր հոգոցով, երբեմն բարձրաձայն, գրավելով հարեվանների ուշադրությունը, եթե լինում էին մոտը՝ ճանապարհին թե ներսը գտնված ժամանակ։ Մի վայրկյան անդամ գերի հարազատները չէին հեռանում նրա աչքից, իսկ վրեժխնդրության որոշումը՝ մտքից։ Զգուշանում էր միայն, որ Պապը չլսի իր հառաչանքներն ու հոգոցները. իսկ նրա ներկայությամբ ծեր իշխանը, կսկիծը սրտում զսպած, խոսում էր միշտ ղվարթ բաներ՝ թագավոր–թոռան տրամադրությունը բարձր պահելու համար։ Մի անգամ ասկայն Պապը, դեռ ճանապարհին, կարինը նոր անցած, նկատեց մորպապի արտասովոր տխրությունն ու հառաչանքը, որին և հետևեցին նրա սովորական զարճած խոսքերը բարձրաձայն. «Այո, Անդոքն անպատիժ չի թողնի ձեր անպատվությունը, հարազատներս»...

— Այդ ո՞ւմ մասին ես ասում, պապիկ,— հարցրեց Պապը զարմացած ու հետաքրքիր, նայելով Ծերունու աչքերին, որոնցից արցունքի երկու կաթիլ գլորվելով՝ դողդոջ կանգնել-մնացել էին նրա խորշոմած բրոնզադույն այտերի վրա:

Թոռան հարցումից իշխանն իրեն չկորցրեց. նախ սանձը բռնած ձեռի ցուցամատով կամաց թոցրեց արցունքի կաթիլները այտերից, ապա խոսեց հառաչաձայն:

— Ո՞ւմ մասին... Այն բոլորի, Պապ, որոնց սպանել ու դեբել է Շապուհը...

Պապն զգալով, որ դա իր հարցումի ճիշտ պատասխանը չէր, և որ մորապապը խուսափեց ուղիղ պատասխանից, հարեց.

— Սակայն, պապիկ, որքան լսեցի, դու խոսում էիր հարպապանների մասին:

— Այո, զավակս. մի՞թե իմ հարազատները չեն նրանք ամենքը, որ տարվել են գերի՝ թե քո հայրը, թե մեր իշխանները և թե... ամենքը: Ամենքը, Պապ, ամենքը, դի դրանք մեր երկրի զավակներն են, հետևաբար՝ մեր հարազատները:

Պապն այնուամենայնիվ նորից զգաց, որ մորապապը խուսափեց ուղիղ պատասխանից և չասաց այն, ինչ պետք էր. բացի դրանից զգաց նաև, որ ավելի անճնական բան կար նրա վշտի մեջ, քան թացատրում էր, սակայն չուզեց ավելի հետաքննել ծերունուն, որովհետև նրան թվաց, որ մորապապն ինչ-որ բան թաքցնում է իրենից: Իշխանն էլ դոհ մնաց, որ թոռը չսխալեց իրեն բացվելու. նա չէր կարող երիտասարդի վիրավոր սրտին հասցնել մի նոր հարված, որ թերևս ավելի ծանր, չափազանց ծանր լիներ նրա համար:

Այն ժամանակ իշխանն ինքը այդ չէր կարող անել...

Սակայն հիմա, երբ Պապն իմացել էր ամենը՝ առանց իր մասնակցության, ու տեսնելով նաև, որ չէր ընկճվել, այլ ընդհակառակը, արտահայտեց վրեժխնդրության վճռականություն, —այդ հանգամանքն ավելիևս բորբոքեց նրա ծեր սրտում թշնամուն հարվածելու ցանկությունը:

Ահա ինչու ծեր իշխանը չէր կարողանում հանգիստ մնալ: Ներս մտնելով և տեսնելով երիտասարդներին ինչ-որ գրություններով զբաղված՝ նա զարմացավ.

— Ի՞նչ ժամանակ է դրելու, զավակներս... Նախջևանը մոռացե՞լ եք... Նախջևանը...

— Իսկո՛ւյն, իշխան, իսկո՛ւյն, ասավ Մուշեղը։— Ես նույնպես պիտի ճանապարհվեմ հիմա... Ինչպես կարող ենք մոռանալ Նախջևանը, Թշնամու վիրջին բունը, ուր նա այնքան ավար է տարել և գերիներ։

— Այո, այո. մենք չպետք է տանենք այս անպատվությունը։ Հուսամ Շապուհին նորից ցույց կտանք մեր զենքի ուժը։ Շուտ, միայն թե չուտ...

Ծերունի իշխանն ավելի էր չտապում կարծես, քան երիտասարդները. թվում էր նա այրվում է ներքին մի կրակից, որի հուրը ցայտում-աւկայծում էր նրա կլոր, եռանդուն աչքերում։

— Շուտ-չուտ. ուշացումը հավասար է մահվան,— կրկնում էր նա այդ օրը չարունակ, չտապեցնելով բոլորին և ավելի շուտ իրեն. որովհետև նրան թվում էր թե կարող է պատահել պարսիկները մեծ ուժեր հավաքեն Նախջևանում և ընացած հայկական զորագնդերը չկարողանան ճակատել նրանց հետ, թեև հայկական զնդերը ղեկավարում էր փորձված զորավար Սպանդարատ կամսարականը, թեև ինքը՝ իշխան Անդոկն առաջուց Դվինի արքունյաց գավառում տուրհանդակներ էր ուղարկել Սյունիք՝ իր հայրենի երկրից հեծյալ և հետևակ օգնություն բերելու. նա վախենում էր դրանք շուտ գան՝ ինքն այնտեղ չլինի։ Նա բաղձում էր Նախջևանի ճակատամարտը վարել ինքը կամ այդտեղ իր «սյունեցի կարիճներով», ինչպես ինքն էր կոչում իր հայրենակիցներին, պարսիկներին հասցներ մի այնպիսի հարված, որ դեթ մասամբ լուծեր իր հին ու նոր վրեժը Շապուհից... Եվ նա այնքան էր չտապում, որ դեռ երեկ, Դվինի մոնելուց հետո, ուղում էր անմիջապես ճանապարհվել Նախջևան, բայց մնաց Պապին իր վշտի հետ հաշտեցնելու։ Սակայն տնհամբեր էր այն տտիճան, որ դիշերը երկու անգամ եղավ-գնաց թիկնապահների և ձիապանների մոտ, որ ձիերը լավ կերակրեն և պատրաստ լինեն առավոտը վաղ ճանապարհ ընկնելու։

— Ես հիմա մեկնած կլինեի, զավակներս, բայց չուզեցի դնալ առանց ձեզ տեսնելու,— ասավ նա։— Ավելի շուտ էլ չեկա, որ չխանգարեմ ձեր նիննջը,— ավելացրեց նա ու, Պապին

մոտենալով, բռնեց նրա ձեռը, նայեց ուղիղ աչքերին և ասաջ լիսխած ձայնով.

— Պապ սիրելի, այս աշխարհում իմ միակ հարազատը դու ես մնացել և... հայրենիքը: Երկուսիդ համար էլ պատրաստ եմ զոհաբերել կյանքս...

Այդ պինդ, երկաթյա ծերունու աչքերը թրջվեցին, նա ա-բաղարեն չրջվեց, կարծես արցունքները թաքցնելու, որ թուլու-թյան նշան էին նրա աչքում և տղամարդուն ոչ վայել:

— Գտեսնվենք Նախջևանում,— նորից չրջվեց նա, այս ան-պամ խոսքը բոլորովին ուղղելով: —Դու ուրեմն, Մուշեղ, կգաս այստեղից, իսկ ես իմ այունեցիներով սարերից ձյունի պես կիջնեմ նրանց գլխին... Եվ, հուսամ, ծեր Անդոքը ամոթով չի մնա երիտասարդներիդ առաջ: Բոլոր լուրերն ասում են, որ Մերուժանը Նախջևանումն է. պետք է լռնել ուրացողին և կա-պանք բերել Դվին...

Ու մինչ Մուշեղը վերջին սուրհանդակին էր ուղարկում վա-րաժնունյաց գավառը և կարգադրություններ անում՝ մեկնելու պատրաստություն տեսնել— Անդոք իշխանն իր թիկնապահներով և իր որդի Բարիկի հետ ճանապարհ ընկավ դեպի Ուրցաձոր, որ վայոց Զորով և ապա լեռներով դնաց-իջնի Դողթան և այն-տեղ, որոշած կիրճում, միանա իր այունեցիներին և նրանց հետ միասին թիկունքից զրոհի թշնամու վրա, լինչպես ծրագրել էին Մուշեղի հետ միասին դեռ ճանապարհին:

Գալատում եղած մարդիկ, ավազակներըը Անդոք իշխանին ճանապարհ դրին մինչև միջնաբերդի պարսպադուռը, որտեղ նա նորից կրկնեց.

— Շտապեցեք. Նախջևանը, Մերուժանին չմոռանաք,— ասալ նա վերջին անգամ ու ձին քշեց արագ:

Մուշեղը նույնպես չտապում էր ժամ առալ գնալ դեպի Նախջևան՝ ժամանակ չտալու, որ վախչող-նահանջող թշնամին հավաքի ուժեն և հարձակում կազմակերպի:

— Ես նույնպես, իշխան,— ասալ Մուշեղը,— հապաղումը մի այսպիսի վայրկյանի՝ համարում եմ վտանգավոր: Ճիշտ է, լեռների վատահ եմ իշխան կամավորականի փորձառությանը, բայց պայմանավորվել ենք, որ անձամբ լինեմ այնտեղ՝ կռիվ սկսելու կամ քաղաքի վրա գրոհելու համար, որովհետև ենթա-

դրում եմ, որ նահանջող թշնամին սիրուն ամրանա Նախջևանում և դժվարացնի մեր առաջ գնալու գործը:

— Օն, ուրեմն, չտապնք,— մտրակը բարձրացրեց Անդոք իշխանը:— Կամաորակաև իշխանն ավելորդ չսպասի մեզ: Զթողնենք ապնիլ մարդուն մենակ, Մուշեղ: Նա արժանի է լավ վերաբերմունքի, ասավ ծեր իշխանը վերջին անգամ և ձին քշեց առաջ:

Այս իշխան կամաորականը, որի մասին խոսում էին հարգանքով, իր մի վարմունքով մեծ հետաքրքրություն ու զարմանք էր հարուցել: Խոսում էին, թե չնայած այն բանին, որ Արշակ Թագավորը՝ Պապի հայրը, մի քանի տարի առաջ կոտորել էր նրա ամբողջ տոհմը՝ անվանի նախարարներին իրենց ընտանիքներով և, նրանց հարստությունն ու դանձերը գրավելով, նրանց կալվածները բաժանել էր այլ նախարարների, և կամաորական ցեղից միայն ինքը իշխան Սպանդարատն էր հազիվ կարողացել, ընտանիքը փախցնելով, ապաստանել Բիզանդիա,—այսուամենայնիվ, լսելով հայրենիքի գլխին պատած աղետը, հուզվել էր սաստիկ և տրամել, որ օտարության մեջ է այդ ժամին, բայց և այնպես դիմել էր բիզանդական իշխանություններին, խնդրելով որ թույլ տան իրեն բիզանդական կեսարիա քաղաքում և նրա շուրջը բնակվող հայերից հավաքի զինքի ընդունակ մարդիկ և գնա հայրենիքին օգնության: Հույները հարցրել էին նրա խնդիրքը, և նա մի վոքրիկ զորագունդ կազմելով՝ եկել-գրավել էր Դարանաղի Անի բերդը, որ Թշնամու ճեռը չընկնի այդ կարևոր ամրոցը, ուր պահվում էր Թագավորական գանձերի մի մասը: Ինչպես իշխանն ուզում էր շարժվել առաջ, գրավել ևս մի քանի կարևոր ամրություն, բայց այդ միջոցին նրան լուր բերին, թե Պապն արդեն Թագավոր է և, Մուշեղի հետ միասին, գալիս է Բիզանդիայից՝ հայ և հույն զորքով պարսից դեմ ճակատելու և երկիրը նրանցից ազատելու: Իշխանը չուզեց Արշակ Թագավորի դեմ ունեցած թշնամանքը տարածել որդու վրա և միացավ Պապի բանակին: Նրա հետ էին և իր Գագավոն ու Շավարշ որդիները: Լսելով այս՝ Պապն անմիջապես կանչեց իշխան Կամաորականին իր մոտ: Շատ չանցած ներկայացավ բարձրահասակ ու թիկնեղ, սև ու ճերմակ մորուքով այդ իշխանը՝ զինվորական հագուստներով, սաղավարտը դնի

և արծաթապատ թուրը կողքից կախ։ Ներս մտնելով՝ նա թագավորին ողջունելու համար աջը դրեց կրծքին և գլուխն իջեցրեց։ Պասլն արագ ելավ տեղից և գնաց նրան ընդառաջ։

— Իմ հայրն,—ասավ,—իշխան, անիրավ է եղել քո տոհմի դեմ։ Ես ոչ մի բանի դատապարտում, այլև ամաչում եմ այդ արմենի համար։ Այս ամենից հետո, իշխան, քո վեհանձն վարմունքը հուզում է ինձ խորապես և ամենից առաջ, ազնիվ իշխան, կուզեի իմանալ, թե արդյոք ի՞նչն ստիպեց քեզ այդքան վեհանձն լինել։

— Իմ հայրենիքը, արքա,— պատասխանեց իշխանը հանդարտ։—Ճշմարիտ է, ես խորապես վիրավորված եմ քո հորից, քայց ոչ իմ հայրենիքից։ Ավելի պարզ խոսեմ. թագավորն է եղել իմ թշնամին և ոչ թե հայրենիքը։ Ու հիմա, երբ իմ երկիրը կոխել է թշնամին՝ ես չէի կարող նստել ապահով Բիզանդիայում և հանդիսատես լինել, թե ինչպես է պարսիկը մորթում իմ եղբայրներին ու քույրերին։

Այս ասելով՝ իշխանը թուրն արձակեց և, երկու ձեռք վրա դրած, մեկնեց թագավորին, որպես հնազանդության նշան. քայց երիտասարդ թագավորը վերցնելով այն՝ անմիջապես վերադարձրեց իշխանին ասելով.

— Վերցրու՛, իշխան, քո կորիչ սուրը և գործադրիր մեր երկրի թշնամիների դեմ։ Քո վեհանձն վարմունքը պատիվ է քեզ և իմ սիրտը լցնում է երախտագիտությամբ։ Քու նորից, իշխան, կլինես քո հայրենական կալվածների տերն ու հրամայողը...

— Արքա, ես կալվածները չեմ փնտռում այս պատերազմում, այլ հայրենիքի ազատությունն, որի համար մեռնելը պատիվ է ինձ,—ասավ իշխանը թուրը կապելով։— Ես իմ կըրթությամբ մի կատր հաց և պաշտոն կգտնեմ Բիզանդիայում, քայց հայրենիք—երբեք։ Իսկ ինձ պետք է հայրենիք, թեկուզ և տեղ չունենամ այնտեղ...

Պասլն զգացված սեղմեց նրա ձեռը։

Այս տեսարանին ներկա Մուշեղ սպարապետը նույնպես սեղմեց Սպանդարատ իշխանի աջը և ասավ հուզված.

— Իշխան, դու այստեղ կատարեցիր քո առաջին քաջագոր-

ծությունը, մոռանալով քո տոհմին հասած աղետը և քո անձնական վիշտը՝ հայրենիքի սիրուն: Հավատում եմ, որ քո հետագա քայլագործությունները կլինեն ավելի փայլուն:

Այժմ այս իշխան կամսարականը, կռիվներում փորձված մի դրացանակի պես անցած, հետամնդում էր Արաքսի ափերով նահանջող թշնամուն, գնալով դեպի Նախջևան՝ այդ քաղաքն ու դաշտը թշնամիներից մաքրելու, ինչպես Բագրատունի Սմբատ տպետը դիմել էր Աղրպատականի սահմանը՝ ավելի մեծ ուժերով:

Եվ ահա Մուշեղն չտապում էր օր չկորցնել և կարճ ճանապարհով հասնել կամսարականի բանակին, որից նա բաժանվել էր նրա համար, որ Պապին բերի Թողնի մայրաքաղաքում, որ Խոսովուրդը ոգեշնչվի և ինքնաուվստրիից դասնա իր լքած տները և տեսնի, թե երկրում արդեն օրինական իշխանություն կա: Մյուս կողմից՝ դա մի հարդանք էր, որ պարտավոր էր սպարապետը տալ իր թագավորին, ուղեկցելով նրան իր մայրաքաղաքը և այնուհետև նա պիտի չտապեր կամսարականին հասնելու, որպեսզի Նախջևանում սպասվող ճակատամարտն ավարտի հաջողությամբ:

Սակայն հիմա, երբ նա, նամակների առաքումն ավարտելով, կարգադրություն արավ իր թիկնապահներին՝ ճանապարհվելու պատրաստություն տեսնել, առաջ եկավ մի անսպասելի բարդություն: Պապը հայտարարեց, որ սպարապետը չգնա՝ առանց իրեն, որ ինքն ևս որոշել է մասնակցել Նախջևանի ճակատամարտին և չի ուզում ու չի կարող մնալ Դվինում:

— Արքա, դու խախտում ես մեր պայմանը,— ասավ Մուշեղը հովանավորի եղանակով:— Դու պետք է մնաս, որ Խոսովուրդն ապահովություն զգա: Քո ներկայությունն այստեղ ավելի կարևոր է, քան ռազմի դաշտում:

— Ոչ, սպարապետ: Ես մնալ չեմ կարող: Պետք է Մերուժանին ճերբակալ տնել և կապանք բերել Դվին:

— Արքա, դու այդ բանը վստահիր ինձ և քո դրացիներին:

— Ոչ, սպարապետ: Ես ամեն ինչ կարող եմ վստահել քեզ, ամենքիդ. բայց ինքս նույնպես պիտի մասնակցեմ...

Մուշեղի համար անսպասելի էր Պապի այդ կտրուկ եղանա-

կը. նա ուշադիր նայեց երիտասարդ թագավորի խոշոր խաժ աչքերին և զարմացավ նրանց համառ ու վճռական արտահայտությունից, մի բան, որ մինչ այդ չէր նկատել: Նրան զարմացրեց մանավանդ Պապի հոնքամեջը դոյացած դիծը, որ նույնպես համառություն էր արտահայտում:

Այդ ժամանակ բիզանդական դորավար-ղեսպան Տերենտը, որ չքեղ հագնված եկել էր Պապի մոտ և խոսակցություն լսելով՝ կանգ առել, հիմա իր հիպարարո ղեմքով նայում էր մերթ Պապին, մերթ Մուշեղին, աշխատելով կարծես դուշակել, թե ի՛նչ են խոսում նրանք: Մուշեղը նրա այդ հետաքրքրությունը նկատելով՝ բացատրեց, թե խոսքն ի՛նչի մասին է և օգնության կանչեց նրան, որովհետև վաղես կայսրը հավանություն տալով Պապին, որպես հայոց թագավորի, ցանկություն էր հայտնել, որ նրան հեռու պահեն վտանգներից: Լսելով խոսքն ինչին է վերաբերում՝ Տերենտը մոտեցավ Պապին:

— Դու, արքա, պետք է մնաս Դվինում, որ քո անձը է դուր վտանգի չենթարկես և, վերջապես, հանգիստ առնես երկար ճանապարհի և ռազմի օրերի հոգնությունից:

— Ի՛նչ. այն ամենից հետո, ինչ արել են պարսիկները այստեղ, ես հանգիստ նստեմ թագավո՞ր... ու դրանից հետո հարգանք սպասեմ իմ ժողովրդից: Երբե՛ք, կոմս, երբե՛ք:

— Քո զգացմունքները սուրբ են, արքա, և պատիվ են բերում քեզ,—ասաց Տերենտը հեզ տեսքով ու հարգալից ձայնով:—Սակայն ավելի ցանկալի և ավելի օգտակար է, որ դու մնաս այստեղ՝ մայրաքաղաքում: Իմ կայսեր հրամանն է նույնպես, որ պահպանենք քեզ ամբողջ Արմենիայի և նրա ժողովրդի համար: Ես համոզված եմ, որ քաջ զորավարները, ինչպես մինչ այժմ, այնպես էլ այսուհետև պատվով կկատարեն իրենց պարտքը:

— Աղնիվ կոմս,— խոսեց Պապը,— հայոց երկրին կամ, ինչպես դու ես բարեհաճում ասել, Արմենիային, հարկավոր չէ այնպիսի թագավոր, որ հանգիստ նստի իր պալատում, երբ թշնամին տակավին գտնվում է իր հողում: Ես կուզեի իմ զորքի հետ լինել և մասնակցել նրա կռվին՝ թշնամուն վտարելու:

— Սակայն, արքա, այդ ամենը կանեն քո քաջ զորավարները և առաջին հերթին՝ Մուշեղ սպարապետը,— շարունակեց

Տերենտը իր հեղ, համոզիկեր ձայնով, որի մեջ աշխատում էր դնել ընդգծված հարգանքն ու պատիվը:

— Ոչ, սիրելի կոմս,—ելավ Պապը տեղից,— եթե ժողովուրդը չէ, իմ սիրտն ինձ կդատապարտի:

Եվ իզուր անցան բոլոր ջանքերը նրան համոզելու. մինչև իսկ կանչեցին կաթողիկոսին, որ ազդի իր հեղինակությամբ: Եկավ ծեր քահանայապետը իր ճերմակ, երկար մորուսով, արծաթագլուխ գավազանը ձեռին ու, Պապի ձեռը բռնելով՝ նստեցրեց իր դիմաց:

— Ջավակս,—սկսեց նա,—քո կյանքը թանդ է մեզ, քո ներկայությունը կարևոր այստեղ: Լսիր բարիդ կամեցող այրերին և հայրապետիդ խորհուրդը բարի և ճնա քո հայրերի ոստանում...

—.Ոչ, քահանայապետ,— ընդհատեց Պապը:— Անկարող եմ... Վայել չէ ինձ հանդստանալ մինչև թշնամուն չվտարենք Նախջևանից և չդերենք ուրացող Մերուժանին...

Ու արագ ոտքի ելնելով՝ ավելացրեց.

— Ներիր, հայրապետ, որ չեմ կարող անսալ քեզ:

Պապն այս խոսքերն ասավ այնպիսի վճռական շեշտով, որ ծերունի կաթողիկոսն ակամա զարմանքով գլուխը բարձրացրեց. ճերմակող թավ հոնքերի տակից նայելով նրա խոհուն խոշոր աչքերին և հոնքամիջի ուռած երակին, զգաց, որ համոզելու և հորդորանքի խոսքերն ավելորդ են:

«Այն չէ բնավ, ինչ երևում էր,—ասավ նա մտքում:— Համառ է հույժ և... ինքնասած»:

Բոլորին թվում էր, թե Նախջևանից հետո պատերազմը պիտի վերջանար, և դա պիտի լիներ վերջին ճակատամարտը: Թշնամին կանցներ սահմանը և մի առժամանակ հանդիստ կթողներ իրենց: Այդպես էր մտածում Պապը. նա կարծում էր նաև, որ թշնամուն վտարելուց հետո կարելի էր զբաղվել երկրի վերաշինությամբ ու բարեկարգությամբ: Իսկ եթե Նախջևանը մնար պարսիկների ձեռին՝ նրանք ներկայացնելու էին մշտական վտանգ: Պետք էր ուրեմն շուտ գրավել, որ թշնամին օգնություն չստանա: Գրավել և ամրացնել:

Այդ էին ցանկանում ամենքը. այդ էր ցանկանում և Պապը. միայն նա, որ իր ներկայությունն անհրաժեշտ էր գտնում:

Մինչ այդ Հայր-մարդապետը պալատի իր հարկաբաժնի սրահներում շրջելով, երբեմն նրա քարե պատշգամը դուրս գալով՝ լարված հետաքրքրությամբ էր կատարվող բոլոր պատրաստությունները և մտածում, թե ահա երբ ամենքը գնան նախշևան, մանավանդ Մուշեղն ինքը, վերջապես հնարավորություն կունենա Գասպի հետ խոսելու, նրա վերաբերմունքն իմանալու և ասելու այն ամենը, ինչ անհրաժեշտ է, որ իմանա երիտասարդ թագավորն իր երկրի, իր արքունիքի և մայրաքաղաքում կատարվածդեպքերի մասին: Տհաճ էր Հայր-մարդպետի համար, որ Գասպն իրեն շրջապատել է երիտասարդ խորհրդականներով, ինչպես այդ նորելուկ բաթն էր և երկարամազ Երեմիան, որին համարում էին Գասպի քարտուղարը և որը միշտ իր մոմատախտակի հետ էր: Հայր-մարդպետին թվում էր թե այդ Երեմիան ցուցամոլ է և ցուցադրում է իր դիտնականությունը: Վերջապես, Հայր-մարդպետին դուր չէր գալիս և բիզանդական զորավարպետպանը, որ թեև ուներ հեղահամբույր արտաքին, բայց թվում էր վերևից է նայում ամեն ինչի և ամենքին: Երբ Հայր-մարդպետին ներկայացրին նրան՝ մարդպետին թվաց, թե չողչողուն հագուստներով այդ կոմսը արհամարհանքով նայեց իր պարզկան ձևի հագուստին, ղրանից, երևի, ինչ-որ բան կռահելով: «Նա, երևի, կուզեր, որ ես էլ բիզանդական հագուստներ հագնեի և այդ Երեմիայի նման մազերս բոլորակ կտրեի» մտածեց Հայր-մարդպետը, սպասելով շարունակ, թե երբ պիտի ճանաչարհվեն այդ մարդիկ, որ ինքն ազատ խոսի Թագավորի հետ:

Բայց վրդը անց, երբ լսեց, որ Գասպն ևս նրանց հետ մեկնում է Նախշևան, նա այլայլվեց.—մեկնում է՝ առանց իրեն մի խոսք ասելո՞ւ... Երևի, հիմա կկանչի և գոնե կարգադրություններ կանի, մտածեց նա և, տոնական հագուստները կարգի բերելով, սպասեց, թե ահա Գասպի սենեկապետներից մեկը կգա իր եռևելց:

Շուտով, երբ Գասպը իր ոսկեգույն՝ բաշ սև ձիու յդը նստած, իր զեն ու զրահով և թիկնապահներով շրջապատված՝ Մուշեղի հետ միասին դուրս եկավ միջնաբերդից և բռնեց Նախշևանի ճանապարհը, Հայր-մարդպետը մտածեց զարմացած.

«Ուրեմն գնաց առանց մի խոսք ասելու»...

Եվ ծանր կսկիծները նորից պաշարեցին նրան:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Այն խոկ օրը, երբ Պապ Թագավորն իր հքախմբով, ուզեկիցներով ու թիկնապահ զորքով մտավ Դվին, նույն այդ ժամանակ հայոց երկրորդ քանակը, որի մեջ մտնում էին մի քանի հազար այրուձի և նույնքան հետևակ՝ նետաձիգներ, նիզակավորներ ու սակրավորներ,—իշխան կամսարականի գլխավորությամբ ոտ դրեց Շարուրի բարերեր դաշտը, ուր թաքստոցներից դուրս եկած հայ շինականները դիմավորեցին նրանց ցնծությամբ՝ գինվորներին, նրանց ձիերին փարելով, չիմանալով ինչպես արտահայտել իրենց ուրախությունը. ոմանք վազում էին իշխանին ընդառաջ, որ համբուրեն նրա ձեռները, իսկ մի ծերունի՝ զառամ ու դողդոջ կանգնել էր ճանապարհի եզրին ու, եկող գինվորներին գլուխ տալով, կրկնում էր անվերջ.

— Ձեր եկած ճանապարհը համբուրե՞մ... Ձեր եկած ճանապարհը համբուրե՞մ...

Իսկ շինական կանայք՝ մի աչքում ուրախություն, մյուսում արցունք, դիմավորեցին նրանց խաղողով, որ բերել էին ուռազործ սալակներով կամ պարզապես ողկույզները վինջած:

— Ուրիշ լավ ինչ չունենք ձեզ համար,— ասում էին նրանք՝ խաղողը գինվորներին մեկնելով:— Ինչ կար՝ անօրենը տարավ, հերավ, վչացրեց... Ջթողեց ո՛չ հաց, ո՛չ հավ, ո՛չ անասուն...

Զորքը, որ ամիսներ շարունակ կռիվների մեջ էր եղել և վերջին անգամ վաղարշապատի մոտ հաղթություն տանելուց հետո, օր ու գիշեր ճանապարհ էր կտրել նահանջող թշնամուն հետապնդելու, այստեղ կանգ առավ այգեստաններում հանգրստանալու: Ձիերին խմբերով, ընկերների հսկողությամբ թողին այգիների արոտեն թոշնած կանաչների մեջ, իսկ գինվորներն իրենք վազող առուներում լվացվելով, որքան էլ հոգնած, մտան այգիներն ու ցրվեցին խաղողի տախտակներում և ընկուզենիներ-

էր տակ, և այդ հանգամանքը ոչ մի տրտունջ չհարուցեց չինականների մեջ, ինչպես լինում էր ուրիշ ժամանակ։

— Թող ուտեն, ջարդեն, տրորեն, քանի որ ազատեցրեն մեզ անիրավ պարտիկից,— ասում էին գրեթե ամենքը և նույնիսկ ցույց էին տալիս, թե ո՛րտեղ է լավ խաղող մնացել։

Զորքը այս վերջին օր ու գիշերը թեև թշնամու դեմ չէր հանդիպել, բայց իշխանը չարունակ հետախույզներ ու դեսուներ էր ուղարկում՝ առջևն ու շրջապատը վերահսկելու և ստույգ լուրեր բերելու։ Վերջին անգամ բերված լուրերն այն էին ասում, թե թշնամին չի երևում մի հրկու վարստա տարածության վրա։ Դրա հետևանքով և իշխանի կարգադրությամբ՝ զորքն այդտեղ գիշերելով, առավոտը նորից ճանապարհ ընկավ և երեկոյան, դարձյալ առանց թշնամու հանդիպելու, հասավ մի ոչ այնքան բարձրը, լուսամանությունից գրեթե զուրկ սարերի, որոնցից տեղ-տեղերն ապ էին հանում։

Եվ այժմ բանակը, կամովին մեացած և գործիքներով պինդ-ված չինականների հետ միասին, հանգստանում էր այդ սարի լանջին, որ ալիքաձև մանր բլուրներով իջնում էր Նախջևանի դաշտահովիտը, առջևում մի քանի խոշոր բլուրներ ունենալով։

Գիշեր էր, մեկին այն ակնակիր ու մտայլ գիշերներից, երբ ձիվնքում ոչ մի աստղ չի երևում և մի քանի քայլի վրա գտնվող ծառերը թվում են դամոկլերներ, երբ մարդն իր ճանապարհին շարունակ սպասում է փոսեր ու վտանգներ։ Հանապին, որ բռնել էր գրեթե ամբողջ սարալանջը և կողքի ձորակը, համարյա անշարժ էր. զինվորների մեծ մասը քնել էր, որովհետև նախորդ հանդրվանում քնից չէր կշտացել, իսկ ներանք, ո՛վքեր արթուն էին, չշուկով, ասես գաղտագողի, խոսակցում էին իրար հետ։ Այն ինչ սարալանջի ալ կողմը, բանակից փոքր ինչ հեռու, մեծ կենդանություն էր նկատվում. այդտեղ չարունակ երևում էին մարդկային ստվերներ ու կերպարանքներ, որ չտապ-չտապ հետիոտն ու ձիավոր հեռանում էին կամ մոտենում մռութի մեջ հազիվ նշմարվող այդ կետին, որ իրոք մի խոշոր վրան էր, բանակում միակ վրանը, որտեղից հաճախ խոսակցություններ ու առանձին բառեր էին հասնում մոտիկ գտնվող զինվորներին, զրգռելով նրանց հետաքրքրությունը։

Սարալանջի արթուն այդ կետը իշխան Կամսարականի

վրանն էր, ուր գնում–գալիս էին առանձին զորամասերի պետերն ու հրամանատարները՝ առաջիկա անելիքի— հարձակման մասին խորհրդակցելու, իշխանից հրահանգներ խնդրելու կամ պարզապես իմանալու, թե ինչ լուրեր են բերել հետախույզները: Երեկ ցերեկն ստացած լուրերն հայտնի էին բոլորին, այն, որ պարսիկները Ախաքսի երկու ափերին էլ զորքեր ունեն, բայց շատ չեն և, մյուս կողմից, եռանդով պատրաստվում են քաղաքը պաշտպանելու: Հետախույզներից մեկը, վարպետ անունով մի գինվոր, պարսից դյուղացու կերպ մտած և հայերից տուժած ձևանալով, մտել էր քաղաք երկու օր առաջ և իմացել, որ պարսիկներն անհանդիստ են և չփոթված, որովհետև Պարսկաստանի հյուսիսում ինչ–որ մի ազգ («կարծյոք քուշաններ» ասում էր նա) ապստամբել են և պարսիկներն ահա իրենց զորքի մեծ մասը Հայաստանից տարել են քուշանների այդ երկիրը՝ ապստամբությունը ճնշելու: Իսկ Նախջևանում թողել են սովորականից քիչ զորք, որը և բավական են համարում քաղաքը պաշտպանելու համար: Վարպետը պատմում էր նաև, որ քաղաքում հավաքված են մեծ թվով հայ գերիներ, որոնց առաջ բանեցրել են այգիներում, իսկ հիմա աշխատեցնում են պարիսպներն ու պատնեշները նորոգելու վրա: Հետախույզների երկրորդ և երրորդ խմբերը, թեև քաղաք չէին հասել, բայց հաստատում էին գրեթե նույնը. նրանք էլ լսել էին, որ Նախջևանում առաջ շատ զորք է եղել, բայց դրանց մի մասը տարել են քուշանների դեմ:

Այս լուրն ուրախացրեց իշխանին և եղավ նույնիսկ մի վայրկյան, որ նա մտածեց ուղղակի արշավել քաղաքի վրա, թշնամուն հանկարծակիի բերել, բայց հիշեց, որ սպարապետի հետ պայմանավորվել էին՝ գործի չձեռնարկել մինչև նրա գալը, որքան էլ հանգամանքները նպաստավոր լինեին: Մյուս կողմից՝ պիտի սպասեր Անդոք իշխանի սուրհանդակին, որ իմանար, թե նա իր այունեցիներով պատրա՞ստ է արդյոք: Հարձակումը պետք է սկսվեր մի քանի կողմից՝ քիչ զոհեր տալու նպատակով, ամուր հաղթություն ապահովելու համար: Այդ պատճառով իշխանը որոշեց սպասել Մուշեղին, որ պետք է հասներ առավոտյան դեմ, լուսաբացին, և Անդոքի սուրհանդակին, որ սպասվում էր ամեն վայրկյան:

Իսկ մինչ այդ, հենց այս երեկո, իշխանը նոր հետախույ-

ներ ուղարկեց չրջապատը վերստին դիտելու և ստուգելու, թե արդյոք ինչ է երևում մոտակայքում, ճանապարհն աջ և ձախ կողմը, դեսի հովտում: Եվ որքան էլ առաջադրանքը մուքի պատճառով դժվար էր կատարել, բայց յոթ-ութ հոգի աչխուժով ճանապարհ ընկան՝ տեզերով, նիզակներով ու վահաններով զինված:

Սակայն անցել էր ահա երկու-երեք ժամ, դիշերն արդեն կես էր լինում, և դնացած այդ հետախուզիներից չկար ոչ մի լուր:

Իշխանն անհանդիստ էր. բարձրահասակ ու թիկնեղ, զրահներն մեջ դնում-դալիս էր նա կամ, իր վրանի առջև նստելով, ականջը ձայնի, նայում էր դեպի խավարը, դեպի այն կողմը, որտեղից սպասում էր հետախուզիներին: Մուքի մեջ դեռ անքուն խշշոցն էր տարածվում, որ ելնում էր կարծես անդնդից: Եվ դեռ այդ խշշոցը և թե դիշերի անթափանց, թանձր խավարն ավելի էր ծանրացնում նրա անհանգստությունը: Բայց նա այդ մասին հարկավ ոչինչ չէր ասում չրջապատողներին, այլ չարունակ հարցնում էր ինքն իրեն, թե ինչո՞ւ ուշացան և ի՞նչ պատահեց արդյոք. թշնամու ձեռն ընկան թե պարսից ավելի ուժեղ հետախուզ խմբի հանդիպելով՝ սպանվեցին: Ու մոտածում էր միաժամանակ, թե արդյոք իր կողմից սխալ չէր այդչափ բարդ մի առաջադրանքով մարդիկ ուղարկել այս մթանը. կարող էր միայն մեկ հանձնարարություն անել նրանց և թերևս հիմա վերադարձած լինեին: Ի՞նչ անել հիմա, ո՞ւր մնացին, ինչպե՞ս իմանալ,— մոտածում էր իշխանը, չարունակելով իր անցուդարձը անհարթ, խճճուտ գետնի վրա:

Մի ուժամ այդպես քայլելուց հետո՝ նա մեկին կանգ առավ և մի անգամ էլ մուքի խորքը նայելով՝ չընջաց ինքն իրեն, թե արդյոք նոր մարդիկ չուղարկի՞ մի հաստատ բան իմանալու կամ դնացածների հետքը գտնելու, կամ եթե նրանց հետքը չգտնեն՝ գոնե իմանան թե ինչ կա մոտակայքում... Ու այն է ուզում էր մոտը կանչած հրամանատարներից մեկին հանձնարարել՝ նոր հետախուզներ ուղարկելու, երբ քայլերի ձայն առավ ներքևից. ղզաց, որ մուքի մեջ մեկն չոտապում է դեպի ինքը: Նա լռվեց՝ ձեռի մեկը կողքին կանթած, ինչ-որ իշխանի հին սովորություն էր:

Վերջապես, եկողը մոտեցավ. դա Իշխանի երիտասարդ թիկնապահներից մեկն էր—Անձևացոց Իշխանի որդի Գնելը, որին ուղղակես ասում էին Գնել Անձևացի, մի ժիր, նուռնդուտ երիտասարդ, որ Իշխանի որդիների մտերիմն էր և Իշխանի հանձնակատարներից մեկը, որ ոչինչ չէր խնայում իր հրամանատարի հրամայածները ժամանակին կատարելու:

— Գնե՞լ,— զարմացավ Իշխանը՝ սրատես իր հայացքով նրա վազքի մեջ նկատելով արտակարգ մի բան:—Ի՞նչ կա այսպես...

— Տեր Իշխան, հետախույզներից մեկը,— խոսեց երիտասարդը դրեթե հևասպառ,— բերել է կարևոր լուր...

Գնելի ձայնը լսելով՝ վրանից դուրս վազեցին Իշխանի քնաթաթախ որդիները՝ Շավարշն ու Գագավոնը, երկուսն էլ հոր նման բարձրահասակ ու թիկնեղ և միատեսակ հագնված, որ թիկնապահի դեր էին կատարում հոր համար և խնամքով հետևում նրա հանգստին ու ապահովությանը:

Մինչ Գնել կապտամեր լսածը կամ Իշխանը կկարգադրեր հետախույզին բերեն իր մոտ՝ վերջինս ինքը, երկու գինվորի ուղեկցությամբ, առաջ գալով և դեռ հեռվից, մութին ընտել իր աչքերով, հրամանատարին նկատեցով վրանի առաջ, դրեթե գոռոց անսովոր խռպոտ ու տագնապած ձայնով.

— Տեր Իշխան, պարսից զորքը շարժվում է ձախ կողմից, դեպի կողմից... մերոնց մի քանիսին բռնեցին, երկուսն ինձան... երկուսով փախանք...

Ու հազիվ Իշխանին հասած՝ ընկավ ծնկների վրա, չդիմանալով վիրավորվածք, թե հոգնությունից ու վազքից չունչ առնելու:

Այդ տեսնելով՝ Իշխանը, նրա որդիները, Գնել Անձևացին և Իշխանի կարգադրությանն սպասող հրամանատարները չրջապատեցին հետախույզ գինվորին: Սա ոչ թե վիրավորվածք, այլ անչքան թուլ էր երկար վազքից, որ չէր կարողանում կանոնավոր շնչել և իր խոսելու ընդունակությունը պահել էր կարճ վերևի երկու-երեք նախադասությունն ասելու:

Իշխանի կարգադրությամբ նրան տարան վրան և գինի տվին: Սթափվելով՝ նա կրկնեց նույնը, ինչ ասել էր. այն է, որ պարսից զորքը շարժվում է Արաքսի հովտով, որ իրենք հետախույզներն ընկել են մեծ բազմության մեջ և չրջապատվել:

— Զորքը ոտքի հանել և պատրաստ լինել,—ասաց Իշխանը ներկա գտնվող հրամանատարներին և թիկնապահներին:

— Հրամանիդ պատրաստ, Իշխան...

Եվ հրամանատարները փութով գնացին դեպի զորքը, իսկ Իշխանը մոտենալով՝ կռացավ դեռանին՝ թաղիքին մեկնված պինդի վրա.

— Իսկ չա՞տ են նրանք, կարո՞ղ ես ասել,— հետաքրքրվեց նա:

Ջինվորն անհարմար զգաց, որ պառկել է Իշխանի առաջ, նրա վրանում, և ուզեց վեր կենալ, բայց Իշխանը չթողեց.

— Պառկիր, տղա, պառկիր: Եթե կարող ես՝ պատասխանիր իմ հարցերին: Շա՞տ են նրանք,— կրկնեց Իշխանն իր հարցը:

— Մութի մեջ, Իշխան, դժվար էր որոշել...բայց երևում էր՝ քիչ չէին...ամբողջ հովիտը կարծես լիքն է...

Իշխանը գիտեր, որ մութի մեջ վշաշը կարող էր նրան բանակ թվալ: Բայց կարծում էր, որ պարսիկները, հայերի աստղացումն իմանալով, հավանորեն, զորք են հանել քաղաքից և ուզում կարևոր բարձունքներ գրավելու, մի բան, որ կարող էր բարդացնել հայ զորքի գործը: Ի՞նչ պետք էր անել. հիմա, թո՞ւյլ տալ, որ թշնամին հարմար դիրքեր գրավի, թե՞ իսանդարել նրա այդ մտքին: Բայց ինչո՞վ և ինչպե՞ս իսանդարեր հիմա, այս մութին, երբ հինդ-տաս քայլի վրա չէր տեսնվում ոչինչ... Լավ կլիներ իհարկե սպասել լուսաբացին, որ յուրաքանչյուր գինվոր տեսնի ինչ է անում. միայն կողմից դուրս հանելը և Մուշեղը, որ խնդրել էր հարձակում չսկսել առանց իրեն... Բայց չէ՞ որ այդպես շատ ուշ կլիներ. պարսիկները իրենք արդեն կարող էին հարձակում սկսել և իրենց հետևում պահել քաղաքից և այսնեցիների օգնությունից... Պետք էր մի բան անել:

Եվ Իշխանը դարձյալ հետախույզներ ուղարկեց գինվորի բերած տեղեկությունները ստուգելու:

— Ես կսպասեմ, Իշխան, իմ գինվորների հետ,—ասաց եկավ Գնել Անձևացին պատասխանական աշխուժով, ձեռը թրին դրած: Նրա աչքերը բոցկլտում էին մութի մեջ:

Իշխանը վրանի երեքուն լուսով նայից այդ հուզված պատանուն մի տեսակ շփոթված ու կարծես խղճահարվելով, որ նա՝ Գնելը, որին հայրը հանձնել էր իր խնամքին, կարող է

վտանգի ենթարկել կյանքը իր անփորձությամբ, բայց միևնույն ժամանակ չուզենալով կարծես ներկաների մոտ իր հովանավորությունն ընդգծել, հարցրեց.

— Իսկ դու հետախուզության փորձ ունե՞ս:

— Իմ զինվորների մեջ կան այնպիսիները, որ ունեն: Ես էլ, վերջապես, պիտի սովորե՞մ թե ոչ, իշխան:

— Այդ դեպքում պետք է դնալ չատ զգույշ: Գեզ հետ կգա Գաղալոնը կամ Շալվարչը...

Գնելլան մյացան իշխանի երկու որդին էլ, ու մի տասնյակ զինվորների հետ դնացին դեպի մութը: Որքան էլ իշխանի սիրտը տագնապում էր դնացողների համար, բայց վստահ էր, որ նրանց բերած տեղեկությունը կլինի ստույգ:

Ու նորից վրանի առջև կանգնելով, ճոխ ձեռը կողքին կանթած, նայում էր դեպի մութը, այն ուղղությամբ, ուր դնացին որդիները, Գնելը և նրա զինվորները: Նայում էր և միևնույն ժամանակ լսում, թե ինչպես են տատանապատները, հարյուրապետները զորքին արթնացնում և զգուշացնում.

—Ելե՛ք, ելե՛ք, թշնամին երևացել է, թշնամին մոտ է...

Լսվում էր մի չարժում, որին նա ծանոթ էր. բարձրացող զորքի չարժումը—մի խուլ, ընդհանուր մռմռոց, զենքերի ու դրահների ինդոց, ձիերի խրխինջ ու դոփյուն և զսպված հոդ լրտար խառնված: Նա նորից սկսեց դնալ-դալ վրանի առջև, մտածումների մեջ, բայց հուզված քայլերով և չէր կարող իմանալ որքան ժամանակ անցավ, հանկարծ պայմանական սուլոցներ լսեց և ապա մի ձայն, որ ասում էր, թե հետախույզները վերադառնում են:

— Գալի՞ս են... միրայլննե՞ր են:

Իշխանն սթափվեց իր մտածումներից և մի երկու քայլ առավ դնաց:

Իրոք հետախույզներն էին՝ Գնելի և իր երկու որդիների գլխավորությամբ: Սրանք էլ հաստատեցին առաջին հետախույզ զինվորի ասածները, ավելացնելով, թե թշնամին ավելի մոտ է, իրենց հանդիպած դանվող բլուրների այն կողմը, որ հավանորեն մոտվելիր են առավոտյան:

«Ուրեմն նրանք մտադիր են բռնել բլուրները, խանգարել

մեր առաջացումը, որ ամրացնեն քաղաքը» մտածեց իշխանը և գլուխը բարձրացրեց.

— Հարձակվել, պետք է անմիջապես հարձակվել,— ասավ նա մոտը կանգնած ավագ և կրոսեր հրամանատարներին, որ սպասում էին, թե ինչ որոշում կընդունի իշխանը՝ նոր հետախուզության արդյունքը լսելուց հետո։—Ջնայած Մուշեղ սպասպապետն ուղում էր մեզ հետ լինել հարձակվելիս, բայց մեր հապաղումը կարող է ազետներ բերել...

— Մակայն մուքը, իշխան, չի՞ խանգարի,— հարցրեց Գնել Անճևացին զարմացած, որ դիշերով կարելի է հարձակվել, մի բան, որ չէը արվում։

Վրանի առջև գտնվող հրամանատարներն աշխուժացան. երիտասարդ Գնելն մասալ այն, ինչ նրանք ամենքը մտածում էին, բայց չէին համարձակվում խոսել։

— Ջինվորը պետք է թշնամուն տեսնի, որ կարողանա հաջող նետ արձակել, իշխան,— ասավ նրանցից մեկը, վարանելով որ պիտողություն է անում հրամանատարին։

Բայց իշխանն այդ դիտողությունից բնավ չնեղացավ։

— Դու ճշմարիտ ես, բարեկամ,—համաձայնեց իշխանը մեղմորեն։— Բայց մի՞թե ես առաջարկում եմ ելնել նետամարտ։ Ես ասում եմ հարձակվել մի այլ ձևով, որ թույլ չտանք պարսիկին մեր առջև բարձրացող բլուրները բռնելու։

«Բայց կարո՞ղ է այս խավարում հարձակում լինել» փսփսացին մի քանիսը և մեկը հարցրեց հետաքրքրված։

— Իսկ ի՞նչ ձևով, իշխան։

— Հիմա կսխորձենք,— ասավ իշխանը և կարգադրեց մի քանի-երեսուն զինվոր ուղարկել մոտիկ գյուղը՝ ճողեր բերելու։

«Ուրեմն վայտերով պիտի հարձակվի՞նք» նորից հեգնանքով փսփսացին վրանի դռան մոտ կանգնած երիտասարդ հրամանատարները։

Այնուհետև իշխանը կարգադրեց ղորքի պաշարից բերել ձեթ։ Այս կարգադրության վրա ներկաներն մեծ մասը զարմանքով, տարակուսած հայացքներ փոխանակեցին, նույնիսկ իշխանի որդիները չհասկացան հոր միտքը և նույնպես նայեցին իրար, իսկ հրամանատարներից մի երկուսը գնացին իշխանի գարդադրությունը կատարելու։

Մինչ այդ սարալանջում ու ձորաձորում հանգստացող ղոր-քը չարունակում էր պատրաստվել. ուշադիր նայողին թվում էր խավարը շարժվում է, դալարվում և ալեկոծվում մի տարօրի-նակ ձևով: Դա դուրս նրանից էր, որ ամեն կողմից ղրահների ու զենքերի ձայն էր գալիս. այդ զինվորներն էին ղրահներ հագ-նում, զենքեր կապ-ում, և խավարի մեջ տերում էր հագիվ նըշ-մարելի, բայց մեծ եռ ու զեռ:

Զանցալ մի ժամ, երբ՛ հեռից իշխանի վրանին մոտեցան հրամանատարները, միաուռնակ կրկնելով.

— Հրամանդ կատարված է, իշխան. ղորքը կազմ-պատրաստ է:

Նույն ժամին մոտեցան քսանից ավելի զինվորներ՝ վայտե երկար, նիզականման ճողեր դրկած, և մի քանի զինվորներ կռվի ամանեղով, որ լիքն էին ձեթով:

— Պատրաստ է, իշխան,—ասավ զինվորների հետ եկող երի-տասարդ հրամանատարը, վրանը մտնելով, և հետաքրքրված, թե ինչ է անելու իշխանն այդ ճողերն ու ձեթը: Նրա չափ, դուրս ավելի հետաքրքրված էին բլրող զինվորները և վրանի նեղան ու դուրսն եղած զորականները:

Եվ իշխանը, որի աչքից չվրիպեց այդ ընդհանուր հետա-քրքրությունը, իր ձեռնարկության կարծես ավելի խորհրդա-վորություն տալու համար, կարգադրեց.

— Ճողերի դլխին լաթեր ամրացնել, և այդ լաթերի վրա ձեթ լցնելով՝ վառել:

Իշխանի հրամանն անմիջապես կատարվեց: Երբ մի տաս-տասներկու ճող վառեցին զինվորները և ձեռներին բռնած կանգ-նեցին՝ խավարը կարծես կծկվեց—վախս առավ փայլփլուն այդ բոցերից և երևաց իշխանի վրանն իր ամբողջ շրջապատով ու մարդկանցով, վրանի կողքին երևացին իշխանի ու նրա որդինե-րի ձիերը խելացի խոշոր աչքերով, երևացին ղրահով, զազա-վարտ ղրած, նիզակները ձեռներին պահակներ որ մինչ այդ չէին նկատվում:

Երբ վառեցին մի քանի ճող էլ՝ իշխանը հրամայեց.

— Ճողաձորները ցրված առաջ, բանակը եռուից...

Ճողաձորներն առաջ չարժվեցին ջահակիրների նման: Դրանց բոցերից լուսավորից խավարն այս անգամ կարծես պատառոտվում

էր նրանց ամեն մի քայլափոխին, իսկ քիչ հետո, երբ նրանք հեռացան ու ցրվեցին, թվում էր գնում են խավարն լուծքը պատռելու:

Զորքն առանձին մի աշխուժով հետևից ճողոպրվողներին, հետաքրքրված այդ լուրերի փայլով ու խազով, նրանց արտասովոր հանգամանքով: Բոլորն ուզում էին, որ գնում են առջևում ընկած բարձունքները—լուրերը դրավելու, որ թշնամին չթանկ երեսից հետս, բայց և մտածում ու խոսում էին, որ այդ լուրերը, երևի, զարմանալի, թերևս և երկյուղալի ոգու մրուրթյուն կանեն թշնամու վրա: Ու այդ հանգամանքը նրանց զվարճություն էր պատճառում:

— Կրակոցաչներին՝ կրա՛կ,— լսվեց մի զվարթ ձայն:

— Բայց կարող են կարծել մենք ևս զոհվել ենք կրակոցից,— կատակեց մի ուրիշը:

Բայց ավելի զվարթ տրամադրության մեջ էին ճողոպրվածներն իրենք, դրանց թվում և Գևել Անձևացին, որ ոգևորված մի ճոպ էլ տանում էր ինքը. այդ ամենը նրանց հիշեցնում էր մանկական խաղերը ու, չնայած ճողերի ծանրության, ոտքերն առաջ էին գնում աշխուժով, մտածելով, երևի, թե իրենք ճանապարհն են բանում դրբի համար, իրենք են, որ առաջնորդում են նրան. բայց թե ինչ արդյունք էր ստացվելու դրանից—չէին պատկերացնում, ավելի շուտ չէին էլ մտածում այդ մասին: Այն ինչ հրամանատարներից ոմանք այն կարծիքի էին, թե պարսից դրքը հայերին լուսավորված տեսնելով՝ կարող էր մութի մեջից նետեր արձակել և ահագին վնաս տալ:

Հրամանատարներից մեկը՝ Մանեճ անունով մի երիտասարդ, այդ մտքից վախեցած, մոտեցավ իշխանին, որ նույնպես ձի հեծած, երկու որդու հետ միասին պատրաստվում էր առաջ գնալ:

— Տեր կամսարական, արդյոք այդ լուրերը չի՞ն նպատակ, որ պարսիկը նետահարի մեզ,—ասավ նա քաշվելով, որ կասկած է հայտնում իշխանի ձեռնարկության մեջ:

— Մի վախենար, տղաս,—ասավ իշխանը,— հանդգնելը դժվար չէ: Զորավորները կեր են տրքից առաջ: Իսկ ընդհարաձակ այդ մասին կխոսենք լուրերի վրա, տեսնելով լուրերի ազդեցությունը:

Նա լռեց:

Զորքը չարունակեց առաջ գնալ:

Երբ մի ժամ թե ժամ ու կես գնալով՝ ճողավորները, նրանց ետևից և զորքը գնացին—բարձրացան բլուրները—սրանց ստորտում հանկարծ՝ տարբեր տեղերից համարյա միաժամ լսվեցին օտարոտի, աղաղակի նմանող բացականչներ, ապա խառնաձայն մի աղմուկ, և դրա հետ միասին ձիերի ոտնատրոփ, վրնջյուն և իրար զարնվող զրահների ու զենքերի ղնգոց, շրխկոց:

Ամբողջ մեջ պարզորոշ զգացվում էր խուճապ և իրարանցում:

— Պարսիկները վախչում են,— ասավ մեկը, և այդ երկու բառը մի ակնթարթում տարածվեց ու կրկնվեց հազարավոր բերանների և անսպասելի ուրախությամբ համակեց բոլորին՝ թե զինվորներին թե հրամանատարներին: Այլևս չսուզելով՝ դա իսկապես վախո՞ւստ է թե միայն զարմանքից առաջացած իրարանցում՝ ամենքը ճգտում էին առաջ:

Եվ սկսվեց տարօրինակ ու տարերային մի ուևնարան. ճողավորները լինչպես խաղով տարված մանուկներ՝ դիմացինին վախեցնելու—տարտսխեցնելու համար հանկարծ այլանդակ ձայներ ու ոռնոցներ արձակեցին, ոմանք էլ, վառ ճողերն օդում ճոճելով, սկսեցին առաջ վազել... Իսկ զինվորները հետևեցին նրանց յուրերին՝ առանց հրամանատարների կարգադրության սպասելու, տարվելով կարծես բնազդական այն մղումով, թե քանի թշնամին վախչում է՝ ուրեմն վախենում է, պետք է հալածել:

Իսկ պարսիկները իրոք վախչում էին խուճապած: Դա երևում էր ոչ միայն ձիերի ոտնատրոփից և զենքերի ու զրահների հեռացող շաչյունից, այլև այն բանից, որ ներքևից լսվում էին հանդստացնող ձայներ և պարսկերեն հրամաններ.

«Կացեք, կանգնեցեք... Սպասեցեք»...

Բայց ձիերի ոտնատրոփը հեռանում էր հետզհետե, դրա հետ նաև բարմության գետինը դողդողու թնդյունը: Զգացվում էր, որ պարսիկները վախչում են դեպի աջ, ուրեմն դեպի ետը —Ակրաքը: Բայց հայերը չէին կարծում, թե վախչում են իրենցից, համարելով նրանց զերազանց, որոնց դիմադրել չեն կարող, այլ վախչում էին պարզապես արտասովոր այդ տեսարանից, որ հանկարծ առաջացել էր մութ գիշերվա ցրտում, սա-

ընդլի դլխին, որպես հրաշք, որպես էներգնական ահեղ մի երևույթ, որ խորհրդանշում էր, երևի, իրենց համար աղետ ու կորուստ, հայերի համար հաջողություն:

Դա իրոք անօրինակ մի բան էր ոչ միայն նրանց համար, այլև հայերի համար, մի հնար, որ առաջին անգամ դրծադրում էր իշխան Սպանդարատ Կամսարականը: Եվ այդ հնարը իր առաջ բերած հետևանքով— պարսից խուճապային վախառատը ոչ միայն հպարտություն ներշնչեց հայերին, այլև ուժ տվեց նրանց ոտներին. ու նրանք դնացին, ավելի շուտ վազեցին, ոգևորված կարծես լոկ այն մտքից, որ Թշնամին փախչում է:

Մութի մեջ բլուրներից ցած էր հոսում հետևակը՝ մի մասը տեղերով ու վահաններով զինված, մյուս մասը զրահավորված, աղեղներով ու աշտեներով, իսկ բլուրների մեջ ընկած ցածուտներով առաջանում էր հայոց այրուձին, որի հազարավոր սըմբակների տրուիը խաղաղ դիշերվա մեջ թնդացնում էր օդը և այն տպավորությունն էր թողնում, թե այդ հեծելաղորը ոչ թիվ ունի, ոչ վերջ:

Ու այդ առաջացումը, Թշնամու փախուստի հետևանքով, դարձավ տարերային, դարձավ մի տեսակ անդուսպ ու սրընթաց, որ թվում էր անհնար է կանդնեցնել: Այլևս չրջահայեցությունը չէր որ գործում էր, այլ տարերային ընազդը, փախչող Թշնամուն հետապնդելու ընազդը:

Բայց իշխան Կամսարականի նպատակն այդ հետապնդումը չէր: Նա բավական էր համարում այն, որ Թշնամուն չթողնեն դրավել տիրող բարձունքները. բայց հիմա, երբ իր զորքը տարերային թափով ու աղմուկով առաջ էր դնում, նա մտածում էր, որ մութի մեջ այդպես առաջ գնալով՝ իր վաշտերը կարող են ընկնել Թշնամու թերևս ավելի հոծ բազմության մեջ և լույսը բացվելուն պես կշրջապատվեն և կամ, պարսիկներն այսպես նահանջելով, կմտնեն քաղաք և ավելի կուժեղանան պարիսպների ներսում, մի բան, որ բնավ ցանկալի չէր իրեն, և վտանգավոր էր: Չթողնել դրավել տիրող բարձունքները—բավական էր, մնացածը պետք էր թողնել առավոտը: Ու նրան թվում էր, թե ահա հրամանատարները կհասկանան այդ և զորքը կկանգնեցնեն:

Բայց զորքը շարունակում էր հաղթական կանչերով առաջ

գնալ, հետևելով ձողերի փողփողուն լույսերին, որ մութի մեջ մոած, իրարից հետու, ցրիվ չարունակում էին առաջանալ:

Մի քանի ձողեր կես-ճանապարհին հանգան: Բայց նրանց լաթերի վրա նորից ձեթ լցրին ու բոցարձակ դնացին առաջ:

Իշխանը, այդ առաջխաղացումը համարելով անչըջահայեցություն և, տեսնելով զորքը կանգ չի առնում, ինքը ձին կանգնեցրեց և կարգադրեց համհարզներին.

— Հրաման դնդերին՝ որ առաջխաղացումը դադարեցնեն անմիջապես:

— Գատրա՛ատ,— և մի քանի համհարզներ, իշխանի չքախմբից բաժանվելով և տարբեր ուղղությամբ դնալով,—իրենց ձիերով սլացան առաջ ու չքացան խավարում, ինչպես սղատը ջրի խորքը սուզվող ձկները:

Բայց բավական ժամանակ անցավ՝ նրանք չվերադարձան, իսկ զորքի առաջխաղացումը, դուցե և հակառակ հրամանատարների կամքի, չարունակվում էր: Արդյոք նրանից էր, որ թշնամու վախուստը ոգևորել էր զորքին, թե՞ կար և ուրիշ մի հանգամանք, որ իշխանը չգիտեր և անհանգստանում էր:

Սակայն հանկարծ չարժումը կանգ առավ, մի երկու համհարզ վերադարձան, հայտնելով, թե իշխանի կարգադրությունը կատարված է:

— Բոլո՞ր մասերը,— հարցրեց իշխանը կարծես խոժոռ:

— Հրամանդ, իշխան:

Իսկ մինչ այդ աղջամուղջը պարզվում էր հետզհետե. արևվելքում ամպերը շառագունում էին. սարերի եռևը, շատ խորքում կարծես հրդեհ կար և նրա ցոլքից լուսավորվում էին ամպերն ու մոտիկ սարերի կատարները: Եվ իշխանը բլուրի վրա՝ հենած իր երկարատև կապարակ ձին, երկու որդիներով ու համհարզներով շրջապատված, նայում էր և աղատ տեսնում առջևը վռազած զաշտը, ուր լցվել էր իր զորքը՝ թե հետևակը, թե այրուձին: Տեսնում, նշմարում էր միաժամանակ, որ պարսիկները մեծ ճանապարհից խուսափելով, կարծես հետապնդումից ղերծ մնալու համար, մասամբ (հենվելպորը) դնացել էին դեպի Արաքսի հովիտը, մյուս մասը (հետևակը) դեպի դաշտը ցած, հավանորեն այդտեղից քաղաք անցնելու:

Հիմա ամբողջ նրանք առաջ չէին դնում, ոչ էլ անշարժ էին,

այլ, ընդհակառակը, ընդունել էին ապաստղական և զինող դերը։ Նույն դրության մեջ էին և հայերը. երկու կողմն էր քնից քիև նրապից սթափվածն ի պես՝ կարծես զինում էին իրար լուսաբացի ազջամուղջի մեջ։

Զորքերն իրարից հեռու էին հավիլ մի նետընկից տարածություն։

— Ժամանակին կանգ առան,— ասավ իշխանը,— այլապես, առաջ գնալով, թշնամին երկու կողմից կղարկեր մեզ... Հիմա կարող ենք, հարմար դիրքեր ընդունելով, ապասել ապրտպեմին...

Հավիլ խոսքն ավարտած՝ իշխանը բլուրի վրայից նկատեց, որ պարսիկները, Արաքսի կողմն անցած նրանց հեծելազորն ոևիցե առաջ դալ՝ ազեղները պատրաստ և նետեր արձակելով։

Հայերը, հարձակվելու հրաման չունենալով, պատասխանեյին և նույնպես առաջ չարժվեցին։

Պարսիկներն արագացրին իրենց նետաձգությունը։ Իսկ նրանց դրքի մի այլ մասը, դիտեին մի ամբողջ զորագունդ, որ գտնվում էր դաշտի մի կետուս խճճված՝ ոևիցե հանկարծ լայն կորագծով տարածվել դաշտում, նպատակ ունենալով միանալ գետի կողմը գտնված դրքին, որ թե վտակն հայերի առաջը և թե շրջապատեն երեք կողմից։

Այդ շարժումն իշխանին թվաց վտանգավոր և նա, ձին իջմանելով, առանց որևէ խոսք ասելու, իջավ բլուրից. նրան, նույնպես առանց խոսք ասելու, հետևեցին իր որդիներն ու համհարզները։

Սրբ բոլորը միասին հասան սարի առորոտը՝ իշխանը նոր միայն ասավ.

— Այրուձին առա՛ջ։ Զթողնել պարսից ձախ թևը միանալ թևին, իսկ գետակողմի զորքին վանել դեպի Արաքսը։

Աղջամուղջը քանի գնում նոսրանում էր։ Իրար հետևից տես մութի-մշուշի քողեր ու վարագույրներ էին պատռվում, երևան հանելով նորանոր տեսարաններ։ Հովիտը շրջապատող սարերն ու բլուրները հետզհետե երևում էին ավելի որոշակի, իսկ քաղաքն իր պարիսպներով ու ծառաստաններով արդեն թվում էր ավելի մոտ։ Երևում էին պարսպի ոչ միայն բուրգերը, այլև տուտմները։ Երևացին քաղաքի մեջից բարձրացող ծառերը՝

հազամախներն ու սոսինները։ Իսկ պարիսպներից դուրս արդեն տարածվում էին այգիները։

Համհարզներն իշխանի կարգադրությունը սրաբշավ տարան հրամանատարներին. և մի քանի րոպե հետո արդեն հայկական այրուձիու մի մասը սրընթաց գնում էր պարսից շարժվող զորքի առաջը կտրելու և նրանց միացումը խանգարելու։ Ձիերը գնում էին ճզված ու լարված, պոչները քամուն տված, ու կարծես ոչ թե վազում էին, այլ լողում էին օդում...

Եվ այն ժամանակ, երբ հայերը մոտենալով սկսեցին նետաձգությամբ առաջ գնալ՝ պարսից միացումը խանգարելու,— պարսիկները նույնպես առաջ եկան նետաձգությամբ։

Ու սկսվեց մի անսպասելի ճակատամարտ։ Պարսիկները աչխատում էին միանալ յուրայիններին հնար գնալ դեպի քաղաք, հայերը չանքեր էին թափում թույլ չտալ... Սկզբում, քանի դեռ պարսիկները հեռու էին՝ հայերը նետեր էին արձակում, բայց երբ մոտեցան—սրեր հանած՝ սուրացին առաջ։ Պարսիկները նույնն արին։ Ու քանի մի վայրկյանից հետո իշխանը տեսավ, որ երկու կողմն այնպես էին խառնվել, որ դժվար էր տարբերել որոնք են պարսիկները, որոնք հայերը։ Լսվում էին խառնիճաղանճ ձայներ. պարսիկների վայրի ու սուր կանչերին միանում էին հայերի միահամուռ աղաղակները, որոնց հետ միասին սրեր էին չաչում, նիզակներ բարձրանում, վահաններ էին չխկում, որ հաճախ լսանում էին բազմադող աղաղակների մեջ... Բայց միաժամանակ երևում էին, որ մարդիկ են ընկնում ձիերից, կամ ձիերն իրենք, եռևի ոտների վրա ծառս լինելով, քցում էին հեծվորներին, ու դուրս վազում մարդկանց ու կենդանիների մոլեգնած այդ միջավայրից։

Վախենալով, որ հայ զորամասերը նեղվեն՝ Իշխանն անմիջապես հեծյալ մի երկու վաչտ ուղարկեց օգնության, և հիմա արդեն պարզ լուսով տեսավ, թե ինչպես մի երկու տեղ՝ քաղաքի պարիսպների վրա գալարափողեր հնչեցրին. իսկ փողերից հետո պարսից զինվորներն սկսեցին պարիսպները բարձրանալ իրար ետևից և նետեր արձակել դեպի հայ հետևակը, որ գնում էր պարսից կռվողների նահանջի ճանապարհը փակելու,— բայց այդ նետերը, բարեբախտաբար, առայժմ չէին հասնում հայերին...

***

Այդ նույն ժամին հայ զորքի եռանը, նրանց եկած ճանապարհի վրա երևաց հանկարծ ոտից գլուխ զրահված, զինված մի զորամաս, որ արագաշարժ գալիս էր դեպի հայ զորքը:

Դա Մուշեղ սպարապետն էր իր համհարզներով և հեծյալներով:

Նախավերջին հանգրվանում նա հետաոեսությամբ թագավորին՝ նրա թիկնապահներով, թողնելով հանդստանալու, ինքն իր համհարզներով դիշերանց չոտպել էր ճակատը հարդարելու կամ քաղաքի վրա դրոհելու: Բայց իշխանին իրենց որոշած տեղը չհասնելով՝ նա զարմացավ, իսկ երբ, մի փոքր էլ առաջ գնալով, լսեց ճակատամարտն սկսված է, նրա զարմանքը փոխվեց վրդովմունքի, որ իշխան կամսարականն անտեսել էր իր խորհուրդը, այսինքն՝ առաջ էր շարժվել ավելի վաղ, քան պայմանավորվել էին. մյուս կողմից՝ սպարապետը վրդովված էր և նրա համար, որ իշխանն առաջ շարժվելով՝ հարձակում էր սկսել: Ավելի ևս առաջ գալով՝ նա դեռ հեռվից, ճանապարհի ոլորանից դուրս գալով՝ նկատեց, որ կռիվը դաշտի մեջ է, արդեն քաղաքից ոչ հեռու: Այն ինչ՝ հայկական զորամասերը՝ թե հետևակը, թե այրուձին, ըստ նախապես կազմած ծրագրի, որ նշել էր սպարապետը, պիտի հարձակվեին հյուսիս–արևմտյան կողմից, նպատակ ունենալով պարսիկների ուշադրությունը և ուժերը հավաքել այդ կողմը, առեղծելով այն տպավորությունը, թե հայերը մեկայն մի կողմից են հարձակվում... Իսկ մինչ այդ հայկական մի ուժեղ զորաբաժին պիտի մտներ Արաքսի հովիտը և բռներ կամուրջը, պարսից օգնություն ստանալու ճանապարհը փակելու, ապա Անդոք իշխանն իր զորամեցիներով պիտի դրոհեր հետևից՝ երկնչակից և Գողթան լեռներից իջնելով: Եվ հիմա պարզ չէր սպարապետին, թե Անդոքի ուժերը հասե՞լ են արդյոք նշանակված տեղը կամ զորաբաժինը գնացել է կամուրջը բռնելու:

Նրան թվում էր, թե չկա ոչ մեկը, ոչ մյուսը, և հայ զորքը, առանց այս նախադրյալների, մտել է կռվի մեջ: Ու չէր կարողանում բացատրել՝ զանցառությո՞ւն է կատարվել, թե իշխանը գործել է հարկադրված, հանգամանքների ստիպումով:

Երկու դևերն էլ դժգոհ էին բարդանալ և ծանր հետևանքներ ունենալ:

— Այս ի՞նչ են արել, ինչ են արել կրկնում էր սպարապետը վրդովված, նստած իր նշանավոր ճերմակը, որ թուխ աչքեր ուներ և զարմանալի բարակ ոտներ, որ կանգնած ժամանակ իսկ մի վայրկյան հանգիստ չէր պահում—բարձրացնում ու դեսին էր դնում չարունակ:

— Զրահներս ու սաղավարտս,— կարգադրեց սպարապետը, մի հայացքով դաշտը դիտելուց հետո:

Եվ այդ ժամանակ տհա, երբ համհարզները, թիկնապահները, սրընդ մեջ էր և Հրահատը, հագցնում էին նրա և իր ճիու զրահները,— կուվի դաշտից սրարշավ մոտեցավ մի երիտասարդ և, ձիուց ցած թռչելով ու առաջ գալով՝ այլայլված դլուխ տվեց սպարապետին, ձեռը կրծքին դրած և ասավ.

— Տեր սպարապետ, իշխանը կարգադրեց դիմավորել քեզ և հայտնել, որ...

— Որ իմ հրամանը չի կատարվո՞ծ,— տաքացավ սպարապետը:

Երիտասարդը, որ Գնել Անձևացին էր, չփոթվեց մի վայրկյան, բայց անմիջապես, ձգվելով և իրեն հավաքելով, չարունակեց հուզված, բայց կապակից պատմել ինչ եղել էր և ինչպես էր եղել: Զմոռացավ, իհարկե, և բոցավառ ձողերը, որ թիլում էր բոլորոքել էր. նրա երևակայությունը:

Յոսելիս՝ նա հևում էր և նրա լանջապահ զրահը բարձրանում-իջնում էր կրծքի հետ, իսկ խոշոր սև աչքերն ասես հուռում էին հրով:

— Այդպես,—մեղմացավ սպարապետն իր զրահների մեջ և նայեց երիտասարդին մի փորձող հայացքով:— Այդ դեպքում իշխանն ուրիշ կերպ չէր կարող վարվել: Մենք այդ չէինք նախատեսել... Իսկ Անդոք իշխանից ի՞նչ լուր:

— Ոչ մի լուր, ուր սպարապետ,— ձգված պատասխանեց Գնելը:— Նրանից տակավին սուրհանդակ չկա, իսկ մեր սուրհանդակները, որ դնացել են նրան դտնելու՝ դեռ չեն վերադարձել: Իշխանը շատ մտահոգված է...

Սպարապետը դլուխը շարժեց անխոս. նա մտածում էր, որ եթե Անդոքն եկած չլինի իր սյունեցիներով կամ ուշանա գալու՝

այն ժամ ծանր վիճակ կստեղծվի քաղաքի պատերի տակ կռվող հայ ղորքի համար. նա կարող է չարաչար պարտվել, կռվելով միայն մի դծի վրա՝ քաղաքից դուրս եկած և պարիսպների վրա թարձրացած պարսից զորքի հետ դեմ առ դեմ:

— Այսպես չի կարելի,— ասավ սպարապետը:—Ասացեք իշխանին, որ մեր զորքերը չմտնի մի տեղ, ինչ ցրի երեք կողմի վրա, թշնամուն զրաղեցնի երեք կեսում մինչև Անդոքից լուր գալը:

Երիտասարդ Գնելը գլուխ տվեց՝ դարձյալ ձեռը կրծքին դնելով, ապա ճարպիկ մի շարժումով թռավ նժույգի մեջքը և սլացավ առաջ, սպարապետին թողնելով ծանր մտքերի մեջ, որոնք դառնում էին դարձյալ իշխան Անդոքի շուրջը: Նա մտածում էր, թե չլինի հանկարծ ծերունի Անդոքը դեռ իր այսինքնությունն չհասած՝ ընկած լինի պարսից մի հետախուզ խմբի ձեռքը. չէ՞ որ նա շատ քիչ մարդկանցով—ընդամենը մի հինգյակով—դուրս եկավ Դվինից: Սակայն այդ բանը միաժամ անհավատալի էր համարում, լավ իմանալով իշխանի անցնելիք ճանապարհը և նրա հետաոտես զգուշավորությունը: Բայց և այնպես մտահոգիչ էր թվում Անդոքի լռությունն ու անհայտությունը. ոչ մի լուր մտահոգիչ, այլև չարագուշակ: Բայց քանի որ ճակատամարտն սկսված էր՝ պետք էր միջոցներ մտածել:

— Մեզ հետ եկած այրուձին ուղարկեցեք օդնության,— հարդադրեց սպարապետը, և ինքը ամբողջովին զրահավորված՝ հետևակազորդ-կորդակաճոճ սաղավարտը գլխին և նիզակը ձեռին, գրեթե կռվի պատրաստ, առաջ գնաց համհարզների ու թիկնապահների հետ, որոնց մեջ էր և Հրահատը՝ նմանապես զրահավորված, սաղավարտով, նիզակի կոթը առպանդակին: Իր նպատակն Դվինում չգտնելով և ոտոյզ մի տեղեկություն չառնելով, թե ուր է գնացել մոր հետ՝ նա ենթադրում էր, թե կարող է պատահել, որ պարսիկները նրան ու մորը գերի բռնած լինեն Նախջևան, և հիմա հույս ուներ, թե քաղաքը վերցնելուց հետո՝ եթե նազենուն այլտեղ չգտնի էլ, գուցե հայ գերիներից մի քան իմանա նրանց մասին: Ու անհամբեր էր, թե երբ պիտի պրոհեն քաղաքի վրա, և նրա սիրտը մի առաձին թափով էր զարկում այդ պահին... Բայց իրեն չմատնելու համար նա երեսը դարձնում էր ընկերներից և նայում դեպի քաղաք, չմոռա-

նալով բնավ, որ ինքն սպարապետի հետ է, պատրաստ պիտի լինի նրա հրամաններին:

Իսկ սպարապետն այսոչնանալով՝ նկատում էր, որ ճակատամարտը գնալով տաքանում է. տեղ-տեղ պարսից ու հայ զորքերը խառնվել էին իրար այնպես, որ եթե չլիներ հայկական դրոշը՝ նա չէր կարող իմանալ, թե հայ զորք կա այդտեղ: Մի երկու տեղ էլ թշնամի զորքերը՝ իրարից բավական հեռու, մի-մյանց դեմ նետեր էին արձակում այնպիսի արագությամբ, որ օդում նետերի հոսանքը չէր դադարում: Մի այլ տեղ հայ հեռավոկի մի դումարտակ այնքան էր առաջ գնացել, որ ընկել էր ծանր դրության մեջ. մի կողմից նրան նետահարում էին պարսիկը բարձրացած պարսից զինվորները, մյուս կողմից՝ պարսից մի այլ զորամաս սպառնում էր անցնել նրա թիկունքը, բայց հանդիպել էր հայկական այրուձիուն, որ չէր թողնում պարսիկներին առաջ շարժվելու, և ինքն էր աշխատում օգնության հասնել հայ հետևակին... Ու բոլոր այդ զորքերն այնպիսի թափով էին իրար զալիս, որ դրանից աշնան դաշտի չոր գետնից բարձրանում էր այնպիսի փոշի, ավելի շուտ փոշու մի վիթխարի ամպ, որի մեջ կռվողները երբեմն չէին երևում, և սպարապետին թվում էր, թե հայերը պարտվում են: Սակայն նայելով փոշու ուղղությանը՝ նա տեսնում էր, որ փոշին գնում է դեպի քաղաք, և դա քամուց չէր որ տարվում էր այն կողմ, այլ հայերն էին առաջ գնում:

«Ուրեմն մերոնք նեղում են» մտածում էր Մուշեղը, չարունակելով նայել հեռացող փոշուն, որի մեջ երբեմն թրեր էին չողում, երբեմն ձիերի գլուխներ էին ցցվում կամ մարդկային ձեռներ էին բարձրանում առանց թրի և անհետանում... ու մարդկային ահագին այդ զանգվածը փոշու այդ ամպի մեջ կարծես գալարվում էր ու գլորվում և ոչ թե կռվում...

Մինչ այդ արևն արդեն բարձրացավ սարերի հետևից և Նախիջևանի դաշտահովիտը, քաղաքը և նրա շրջակաները ողողեց մի այնպիսի առատ լույսով, ուր ամեն ինչ երևաց զարմանալի որոշությամբ. նախ լեռները, որ ալիք-ալիք, իրար հաջորդելու ճիգով, ձգտում էին վեր ու բարձրացնում իրենց գագաթները, որոնց մեջ իր սրածայր գլխով զետեղվում էր Օձասարը: Բայց աչքն առանձնապես սրտակարող լուսավորից կարծես կռվի դաշ-

ոը, կովողներին, մանավանդ ոսկեզօծեց կովողներին պատող փոշու վիթխարի ամպը, որ բռնում էր դաշտի մի շատ մեծ մասը:

Սպարապետի ուղարկած հեծյալ վաշտը գնում էր սրընթաց, ձիերը չափ քցած և թրերը մերկացրած. նրանք արդեն հասվեհաս էին և սպարապետը հույս ուներ, որ նրանք թարմ ուժերով դժալի օգնություն կհասցնեն անշուշտ. բայց հենց այդ ժամանակ նա նկատեց, թե ինչպես քաղաքի պարսպադռնից դուրս եկավ պարսից հետևակ մի դումարտակ և սրընթաց շտապեց յուրայիններին օգնելու:

Այստեղ սպարապետն զգաց, որ դրությունը պարզապես ծանրանում է հայերի համար, դառնում է վտանգավոր մանավանդ այն պատճառով, որ պարսպի վրայից և աշտարակներից նույնպես նետեր էին արձակում հայերի վրա...

— Պետք է պարսպից ետ քաշել մեր զորքը, որ այնտեղից չվնասեն,— ասավ սպարապետը բարձր, իր լուր իր համհարզներին ու թիկնապահներին, և այն է՝ ուղում էր խթանել ձին, ասավ սուրալ, նկատեց, որ հայկակաև այրուձիու մի մեծ գունդ, գետի հովտից դուրս գալով, սուսերամերկ ու քառասմբակ սլանում է դեպի քաղաք, ավելի շուտ դեպի քաղաքից դուրս եկող պարսից զորքը: Հայկական հեծյալ գունդը ղեկավարում էր երիտասարդ ոռներով կապտավուն ձի նստած մի բարձրիրան ու թիկնեղ տղամարդ, որի սաղավարտն ավելի էր բարձրացնում նրան:

Բոլոր այս նշաններից Մուշեղը ճանաչեց իշխան Համազասպին:

«Այս ո՞րտեղից է գալիս իշխանը» զարմացած մտածեց նա և ուրախացավ, որ հայկական բոլոր ուժերը դեռ կռվի մեջ չեն և մյուս կողմից՝ հիմա կարող են զրությունը փոխել: Սպարապետը չգիտեր և չէր էլ կարող իմանալ (որովհետև իշխանի սուրհանդակ–համհարզ Գնել Անձևացին այդ մասին ոչինչ չասավ); որ իշխանը հեծյալների այդ գումարտակով հալածել էր պարսից մի զորամաս և գետում խեղդել, չտապել էր կամուրջը բռնել, իսկ հիմա գալիս էր ճակատամարտը ղեկավարելու:

Համազասպականի արշավով մոտեցող հեծելազորը նկատեցին և պարսիկները, այսինքն քաղաքից դուրս եկող պարսից զորքը,

որը և իր նետերն ու նիզակները անմիջապես դարձրեց իշխանի հետքալների կողմը:

Այդ ժամանակ կատարվեց անսպասելի մի բան: Իշխանը փոխանակ առաջ գնալու՝ կարգադրեց— ետ դառնալ:

— Ճակատելով ետ, ետ—ասաց նա անսպասելի բարձրագոչ ձայնով, և համհարզները առաջ գնալով՝ կրկնեցին նրա հրամանը.

— Ճակատելով ե՛տ, ե՛տ...

Թեև կռվի կրքով տոգորված զինվորներին հաճելի չէր այդ, բայց ենթարկվեցին իշխանի կարգադրությանն և սկսեցին կռվով ետ գնալ... Իշխանը իր համհարզներին պատվիրեց նույնը տալ և հայկական մյուս դրամասներին: Տեսնելով իր զորքերը չատ են մոտեցել պարսկաններին՝ նա մտածեց նրանց հեռացնել պատնեշներից, որոնց վրա դռնելող պարսից նետաձիգները դժվարեցնում էին հայերի գործը. մինչդեռ նահանջելով՝ կարելի էր հեռանալ թե պարսից նետողներից և թե պարսիկներին գրավել դաշտը ու այնտեղ ճակատել մինչև Անդոքի գալը...

Իսկ սպարապետին այնպես էր թվում, թե հայերը պարզապես նեղվում են և այն է՝ մոտծում էր գնալ իր ներկայությամբ խրախուսել մարտիկներին, ինչպես անում էր միշտ դժվարին ու ծանր վայրկյաններին, բայց հանկարծ ետևից լսեց արշավող ձիերի ոռնատրոփ և թիկնապահներից մեկի ձայնը, որ ասաց:

— Թագավորն եկավ...

Մուշեղի վարճ, դանդուր մորուսով եղերված դեմքին և կլոր սև աչքերում տհաճության պես մի բան առկայծեց:

«Ես նրան թողի, որ վտանգից հեռու լինի և մեզ չխանգարի, բայց... դարձյալ եկավ» ասաց նա մտքում:

Այս ասելով՝ նա այնուամենայնիվ ետ դարձավ և նկատեց Հյուսվորների մի մեծ խումբ, որի առջևից գալիս էր Պապը իր ոսկեզույն, սևաբաշ նժույգի վրա, կարմիր թիկնոցն ուսերին, որ ծածանվում էր արագ վազքից նրա ուսերին հասնող մազերի հետ միասին: Նրան, ինչպես միշտ, ուղեկցում էին սև ձիու վրա արքայատիպ Երեմիա Ամատունին՝ մոմատախտակը կողքից կախած, որը ձիու արագընթաց թափից զարկվում էր նրա մարմնին և դիպչում մերթ ազդրին, մերթ կողքին. բայց Սահա-

ուն՝ մի շառագույն ձիով, որ քայլում էր գլուխը միշտ ալ ծռած, կարծես ծնված էր ծռավիզ, և չքախմբի մյուս անդամները, համհարզներն ու թիկնապահները, թվով մոտ երկու հարյուր հոգի, բոլորն էլ նախարարների որդիները, սեպուհները՝ ամենատարբեր հագուստներով, թիկնոցներով ու զեն ու զարդով:

Երբ մոտեցան՝ սպարապետը, ընդունված կարգի համաձայն, իջավ ձիուց և գլուխ խոնարհեց Թագավորի առաջ: Նույնը արին և նրա համհարզները:

— Ինչո՞ւ հեռացար առանց մեզ և մենակ, սպարապետ,— մոռնալով ասավ Պապը կշտամբանքի ձևով, բայց նրա խոսքի մեջ չկար դժգոհության կամ հանդիմանության մի շեշտ:

— Այդպես վարվիլ հարկադրեց ինձ, արքա, նախ պարտականությունս և ապա քեզ հանգիստ տալու ցանկությունս:

— Եվ դա այսպիսի մի վայրկենի,—ասավ Պապը, և չդիտես նա՞ առաջ անցավ՝ ճակատամարտի դաշտը դիտելու թե ձին տալով նրան— նրա խոսքի շարունակությունը չլսվեց, իսկ Մուշեղն արագ մոտեցավ և կշտամբանքով թախի տվեց իր Սահառունու թևը.

— Ինչո՞ւ չպահեցիք...

— Ջուղեց մնալ, սպարապետ, մանավանդ երբ լսեց, դու ևիվել ես, հրամայեց անմիջապես ձեռնպարհվել:

— Դե, պահեցիք դոնե այստեղ: Քեզ եմ հանձնում այդ, Սահառունի...

— Սիրով, սպարապետ,— հանձն առավ իրը:

Եվ սպարապետը նորից ձին հեծնելով՝ մոտեցավ Թագավորին, որ ակնոցն դիտում էր ճակատամարտը:

— Ինչպես երևում է՝ մերոնք նեղվում են, սպարապետ,— ասավ Պապը մի տեսակ այլայլված:— Եվ դու հանգիստ ես...

«Այս տղան ուզում է ինձ դիտողություն անել» —մտածեց սպարապետը քմծիծաղ, բայց մի բան ասած լինելու համար հարցեց.

— Ես կուզեի, որ դու նույնպես հանգիստ լինես, արքա... Պատերազմ է: Սպասենք առայժմ. իշխան Կամսարականը մի հնար կգտնի... Նա թուլ չի տա, որ պարսիկները հաղթեն իրեն:

Սպարապետը խոսում էր ավելի Թագավորին հանդստաց-

նելու, բայց ինքն ալեկոծվում էր ներսում, մղվում էր առաջ, ինչպես և նրա ճերմակը, բայց և ահագին ճիգ էր գործ դնում իրեն զսպելու, որովհետև գիտեր՝ եթե ինքը շարժվեր, պապը չէր համբերելու, ալիտի հետևեր իրեն, ինչպես արել էր նախորդ կռիվներին:

— Դու ասում ես «սպասենք» սպարապետ, բայց, տես, մերոնք ետ են քաշվում և քաղաքապետից նոր զորք է հնում հարձես,— մատնացույց արավ պապն անհանգիստ:— Գնանք, սպարապետ, մեր մասնակցությունը դուցե ոգի տա նրանց...

— Սպասենք, արքա, իշխանը զբաղեցնում է թշնամուն, մինչև իշխան Անդոքից լուր առնանք և ապա գրոհենք քաղաքի վրա:

— Ուրեմն պապիկը դեռ լուր չի՞ տվել իր մասին,—զարմացավ թագավորը:— Դա ինչ է նշանակում, սպարապետ... Նա խոսքը կիսատ թողեց և ասավ.— Տե՛ս քաղաքապետից նոր նիզակավորներ դուրս եկան...

— Եվ նրանց առաջնորդում է մի կարմիր զորավարն, ավելացրեց Երեմիան:

Իրոք քաղաքապետից դուրս եկավ ձիավորների մի թեթևաշարժ վաշտ, որի առջևից գնում էր սուսերամերկ ու բարձր տաղավարտով մեկը. նրա թե զրահները, թե տաղավարտը և թե թուրը շողշողում էին արևի տակ արտակարգ մի փայլով:

Դա պարսից Զիկ զորավարն էր:

Դուրս գալուն պես նրանք ձիերը չափ քցեցին և վոշու վոթորիկ բարձրացնելով և, իրենք այդ վոշու մեջ մտած, մերկ թրերը ճոճելով վազեցին դեպի իշխան Կամսարականի այրուձին, որ նահանջում էր կռվելով պարսից մի այլ զորախմբի դեմ: Երևում էր, որ պարսիկներն ուզում էին միայն սրերով հարձակվել նրանց վրա:

Պապը, Մուշեղը և նրանց շրջապատողներն այդ նկատեցին մանավանդ այն բանից, երբ սուսերամերկ մի պարսիկ, իր վաշտից զատվելով, ձին արշնթաց քշեց դեպի իշխան Կամսարականը՝ նրան զարկելու ակնհայտ մտադրությամբ: Սակայն մինչև պարսիկը կհասներ իշխանին՝ սրա այրուձիուց պոկվեց մի ձիավոր և իր նժույգին ձուլված սուրաց դեպի նա ու, մի երկայնկյանում հասնելով, սրի մի զարկով նախ հեռու քցեց պար-

սիկի սուրը, մյուսով զետին դլորեց նրան ու նույն թափով ետ պարձավ:

— Ո՞վ էր այդ քաջը,— հարցրեց Պապը, որ ակնդետ հետևում էր այդ տեսարանին:

— Անձևյաց իշխանի որդի Գնելը, աղքա,— ասավ Մուշեղը՝ ձեռը ճանաչելով քիչ առաջ իր մոտ եկած երիտասարդին:

— Գոլում եմ: Արժանի է պարգևի,— ասավ Պապը, չափանակելով նայել, թե ինչպես են առաջանում պարսիկ հեծյալները:

Բայց մինչև տեղ կհասներ այդ հեծյալ զորախումբը—նրանց վրա նետերի տարափ տեղաց իշխանի գնդից հանկարծ բաժանված մի հեծյալ վաշտ, որին առաջնորդում էր զարճյալ նույն Գնել Անձևացին:

Հարձակվելով ու նետեր արձակելով՝ նրա վաշտը հանկարծ ետ քաշվեց, պարսիկների մի մասը տանելով իր ետևից... այսպիսով՝ իշխանի վրա գնացած պարսից զորքը պակասեց. իշխանը շարունակեց իր գնդով ցրված նահանջել ու կռվել. տեսնվում էր, թե ինչպես պարսից հեծվորները ընկնում էին ձիերից՝ մերկ թրերը ձեռներին և ինչպես նրանց ձիերը բեռից ազատվելով, վազում էին դեպի դաշտը կամ ծառս էին լինում և նույնպես ընկնում:

Նույնը կատարվում էր և հայկական հեծելազորի մեջ և հետևակ զորամասերում, որ ճակատում էին դաշտի այս ու այն մասում՝ տեղ-տեղ թշնամուն խառնված տեղ-տեղ իրարից հեռու... Նվ չարունակ լսվում էին աղաղակները, տեսնվում էին թրաձարկեր:

— Ինձ այնպես է թվում, սպարապետ, որ մերոնք պարտվում են, շուրթերը սեղմած ու դունատված ասավ Պապը:— Իզուր չզնացինք...

Սպարապետը լուռ էր. նա նույնպես, ավելի քան Պապը, անհանգիստ էր, բայց դարձյալ զսպում էր իրեն և սպասում, որ շուտով մի բեկում կկատարվի, հայերը կհեղեն պարսիկներին: Սակայն պարսիկները կռվում էին կատաղի և, չնայած մեծ խոչընդոտով ընկնում էին նետահար, բայց և այնպես առաջ էին գալիս ըստ իրենց սովորության վայրենի աղաղակներով, հարհոյանքներ տալով և, թրեր մերկացրած. արշավասուլը մտնում էին հայերի

արանքը՝ կարծես ավելի ահաբեկելու համար, և երբեմն այնպես էին խառնվում իրար ու զարկվում, որ դժվար էր լինում նրանց տարբերել իրարից, և դարձյալ տեսնվում էր միայն ղինաչուղում, ծառս եղած ձիերի գլուխները և այս–այն կողմ տարվող դրոշներ, որ թվում էր ոչ թե պարզում են, այլ վախցնում:

Բայց և այնպես այդ ամենի մեջ նկատվում էր, որ հայերը այժմ թշնամուց նեղվելով՝ նահանջում են պաշտպանվելով:

— Գնանք, սպարապետ: Ես այլևս չեմ կարող սառնասիրտ նայել,— ասավ Պապը, և նրա աչ երեսն սկսեց խաղալ ջղաձիգ:

—Գնանք...

Բայց հազիվ նա արտասանել էր այդ խոսքերը, երբ հանկարծ քաղաքի պարիսպների վրա հնչեց պարսիկների նահանջի փողը, և պարիսպների վրա գնում ղ պարսից դեսերն ու նեռաձիգները սկսեցին իջնել այնտեղից առանձին մի խուճապով:

Դա զարմացրեց սպարապետին, Թադևոսին և նրանց շրջապատող բոլոր թիկնապահներին ու համհարզներին, չբախած բոլոր անղամներին:

«Սա խորամանկությո՞ւն էր պարսիկների կողմից, թե՞ իրոք նահանջի կոչ»—մտածեց սպարապետը և նկատեց իսկույն, որ հայերի դեմ առաջ եկած պարսից հեծելազորը ձիերի գլուխը դարձրեց հանկարծ և նույն արագությամբ, ինչպես եկել էր, իր կարևոր առաջնորդի գլխավորությամբ ետ սլացավ դեպի քաղաքաղուսը: Նրանց հետևեցին, ավելի շուտ փողի ձայնին հնազանդեցին պարսից և մյուս զորամասերը, սակայն կռվելով, պաշտպանվելով:

Դա այնքան անսպասելի էր, որ հայերը մի պահ կանգ առան վարանած, չհասկանալով կարծես այդ հանկարծակի նահանջը:

Երևույթը նույնքան անհասկանալի էր թե սպարապետի և թե նրանց շրջապատողների համար,— արդյոք դա մի կեղծ փախուստ չէ՞ր արված նրա համար, որ հայերին նորից քաշեն քաղաքի մոտ և պարիսպներից նույնպես հարձակվեն:

Այդպես էր մտածում և իշխան Համամբակյանը և ուզում էր հրամայել, որ իր զորքը շատ առաջ չգնա, բայց հանկարծ նա իր բարձրատուռ ձիու վրայից նկատեց, որ պարսից նահանջող մասերը, ավելի առաջ գնացածները մեկեն կանգ առան քաղա–

քաղաքն մտա, դուռն չուզեցին ներս մտնել, որովհետև ներսից այդ դռնով դինվորներ և անզեն մարդիկ էին դուրս վազում խուճապած աղմուկով, և այս անգամ գալիս էին ոչ թե հայերի վրա հարձակվելու, այլ հապճեպ, վուխթով, հետևակ ու ձիավոր իրար խառնված, դիմում էին դեպի գետը, դեպի կամուրջը, որ նախատես բռնել էր արդեն Իշխան Կամսարականի մի զորամասը: Ու գնում էին ոչ միայն իրար խառնված, այլև միմյանց հրհրելով. ձիավորները մտրակով կամ սեզով զարկում էին ճանապարհը կտրողներին, հետևակինելը վազում էին ձիերի արանքով՝ նիզակներն ուսներին դրած կամ դրպնցում ճանապարհ բռնելով...

Ու պարսից նահանջող վաշտերը, որ կանգ էին առել, քաղաք մտնելու մխոքը թողած՝ միացան նրանց:

Այս տեսնելով՝ հայկական վարանած զորքը՝ չարժվեց տեղից և ուրախ աղաղակով վազեց առաջ:

Այրուձիի առջևից գնում էր զարճյալ մի երիտասարդ մերկ սուրը չողացնելով.

— Զա՛րկ, զա՛րկ,— պոռում էր նա իր զրեթե պատանեկական սուր ու բեկվող ձայնով, թուրը ճոճելով, բայց դէմի մաղերը հովին տված: Նրա ամբողջ տեսքը և սուր ճոճելն ու զորքին խրախուսելը լինչ-որ զվարթ, անվախ պատանեկական մի հափշտակություն ուներ և հիշեցնում էր նաև մանկական խաղ, մանավանդ ձայնը, որ կրկնում էր շարունակ՝ «Զա՛րկ, զա՛րկ»...

Մինչ այդ պարսիկները շարունակում էին խուճապած դուրս գալ քաղաքաղռնից և վազել դեպի կամուրջը: Շուտով նրանց երթը պաշտպանելու համար պարսից մի զորամաս եկավ՝ հայերի առաջը բռնելու, որ նրանք չվնասեն գնացողներին:

Իսկ հայերը քաղաքին մոտենալով՝ քաղաքի ներսից լսում էին ավելի մեծ իրարանցման ձայներ, աղաղակներ, զենքերի չաչյուն, զինաթափում և— զարմա՞նք— հայերեն հրամաններ ու հայհոյանքներ:

Ի՞նչ էր պատահել—ոչ-ոք չէր կարող ասել. պարզ էր միայն, որ պարսիկները, լինչ-որ բանից ահաբեկ, հախչում էին դեպի կամուրջը՝ գետի մյուս կողմն անցնելու, չիմանալով տակից, որ կամուրջը վաղուց արդեն բռնել են Կամսարականի հեծյալները:

Ասում են, որ կռվող ղինվորներին ոչ մի բան այնքան չի ոգևորում, ինչպես հակառակորդի փախուստը: Նույնը կատարվեց այստեղ. հայերը տեսնելով պարսիկների անկարգ փախուստը քաղաքից՝ ուրախությունից կանչերով առաջ նետվեցին:

Բայց քաղաքի դռներին չհասած՝ նահանջող պարսիկներն ու հարձակվող հայերի միջև սկսվեց մի կատաղի մարտ, որին մոտենալիս էին երկու կողմի ղինվորները թրերով, նիզակներով, աշտեներով... Հայերն ուզում էին առաջ գնալ և խուժել քաղաք կամ փակել քաղաքադուռը, որ թշնամին մնա դերի, պարսիկները աշխատում էին կտրել հայերի առաջը, որ հնարավորություն ու ժամանակ տան յուրայիններին դուրս գալու և դեպի կամուրջը գնալու... Ու այդ բաղխման մեջ վահաններ էին բարձրանում, սաղավարտներ գլորվում. ընկնում էին մարդիկ, ձիեր. խլար էին ձուլվում դռռոցներ, զենքերի շաչյուն, վիրավորների հեծեծանքներ, ձիերի վրնջյուն ու խռխռոց:

Հայերն առաջ գնալով վախենում էին միայն, որ պարսիկները պարիսպները բարձրանան և այնտեղից վնասեն իրենց. բայց պարսիկներն այլևս պարիսպներ չէին բարձրանում, այլ ընդհակառակը՝ հապճեպ դուրս էին գալիս քաղաքից ու փախչում...

Ինչ էր պատահել՝ ոչ-ոք չէր հասկանում: Արդյոք նրանք զինադրությունն ավելորդ և ապարդյո՞ւն էին համարում—ոչ-ոք չէր կարող ասել:

Բայց փախչում էին. և եթե պաշտպանվում էին՝ կարծես միայն փախչելու համար:

Անցավ մի փոքր էլ և ամեն ինչ պարզվեց:

Դռների մեջ, փախչողների ետևից դուրս եկան հանկարծ ձիավոր այլանեցիներ՝ իրենց առանձնահատուկ սրածայր սև գլխարկներով. նրանք մերկ թրերով հարձակվում էին նահանջող պարսից զորքի վրա մի այնպիսի բարձրագոչ աղաղակով, որ քաղաքադուռը և փախչողներին պաշտպանող պարսից զորքը շրջվեց և նույնպես փախուստի դիմեց...

Եվ այստեղ ահա պարզվեց այն առեղծվածը, որ ոչ-ոք չէր կարողանում բացատրել՝ ոչ Թադավորն ու սպարապետը, որ նայում էին հեռվից, ոչ ինքը խչխան կամսարականը, որ ղեկավարում էր այդ կռիվը, և ոչ հայ զորքը, որ ուզում էր առաջ նետվել՝ փախչողներին սրահար ու նիզակահար անելու...

Երկու ժամ առաջ, այունեցինները, Անդոք իշխանի առաջնորդությամբ Նախջևանի եռևից, ապահով համարված ճողմից դրոհել էին քաղաքի վրա և նույնիսկ պահակ չունեցող դռնից մտել էին քաղաք և սկսել, ինչպես հետո պարզվեց, մի սարսափելի կոտորած:

Իսկ նախ քան այդ եղել էր հետևյալը: Մի քանի օր առաջ այունեցինները Անդոք իշխանի ուղարկած սուրհանդակից իմանալով, որ իրենց ծեր իշխանը պահանջել է՝ պատրաստ լինել և գալ այս ինչ տեղը—նրանք անմիջապես, երեք օրվա պաշարով, հասել էին որոշված վայրը և անտառներում թաքնված սպասել իշխանին, ավելի շուտ նրա նշանին որ իջնեին ցած: Իսկ երբ մի օր հետո հասել էր նրանց իշխանի երկրորդ սուրհանդակը, թե իշխանն սպասում է այս ինչ ձորում՝ Նախջևանի վրա հարձակվելու և թե Դվինից նույնպես մեծ զորք է գալիս,— այունեցինները էլ ժամանակ չկորցրին, ասպազեն ու զինավառ՝ իջան ցած, դեպի հանդիպման վայրը... Եվ մի քանի ժամ հետո Գայլաձորը լցվեց ողջույնի աղաղակներով. համբուրում էին ծեր իշխանի ձեռները, չոյում-շոշափում էին նրա կարմիր, ճաճվատը ճերմակ ձիու կողերն ու գլուխը, դրանով իրենց համակրանքն ու սերը հայտնելով իրենց իշխանին, որ մի քանի տարի էր ինչ օտարության մեջ էր:

— Դե, զավակներս, այլևս ժամանակ չպետք է կորցնել,— ասավ իշխանը մյուս օրն առավոտյան:—Իմ սուրհանդակը լուր բերեց, որ կամսարական իշխանն իր բանակով հասել է Նախջևան և կռվում է արդեն.. Շտապենք օգնության...

Անդոք իշխանի սուրհանդակն իրոք Գիշերանց դուրս գալով՝ նկել էր սպարապետին հայտնելու, թե այունեցինները պատրաստ են և սպասում են նրա կարգադրության՝ «ինչ անել», բայց առավոտ վաղ տեղ հասնելով՝ տեսել էր հայերը կռվում են և, սպարապետին չգտնելով (կարծել էր, որ նա նույնպես մարտի մեջ է), ամեն ինչ համարել էր պարզ և տեսածն այնպես էր ազդել, որ առանց ժամանակ կորցնելու, արշարշավ ետ էր դարձել և իշխան Անդոքին հայտնել, թե ճակատամարտն սկսված է: Եվ ծեր Անդոքն իր ճիվաղոր այունեցիներով սուրացել էր դեպի Նախջևան...

Ահա ինչու սպարապետի սուրհանդակները նրան չէին գտել.

նշանակված տեղը: Իսկ քաղաքին մոտենալով՝ սյունեցիները նկատեցին, որ նրա արևելյան դռան մոտ, պարիսպների վրա պահակներ անգամ չկան: Ու ենթադրելով, որ քաղաքի ամբողջ զորքը պարսիկները տարել են Կամսարականի և սպարապետի դեմ— խորտակեցին երկաթե դուռը, խուժեցին ներս և բռնեցին արևմտյան պարսպի վրա դոնվող զորքի թիկունքը... Նրանց հանկարծամուտը տեսնելով՝ քաղաքում դոնվող պարսից զորքի մի մասը փախավ, մյուս մասն սկսեց դիմադրել կատաղի, իսկ պարսպի վրա եղած նետաձիգները ցած նետվեցին և նույնպես— ոմանք կռվի բռնվեցին սյունեցիների հետ, ոմանք փախան:

Այժմ, երբ իշխան Կամսարականի զորքի մի մասը մտավ քաղաք՝ նրանք փողոցներում տեսան սյունեցիների և պարսիկների դիակները, տեսան վիրավորներ, որ՝ զալարվում էին ծամածռուռ, այլանդակված դեմքերով... Տեսան նաև, թե ինչպես սյունեցիները տներից հանում էին թաքնված պարսիկ զինվորներ ու, գենքերը խլելով, նրանց իսկ սրերով թրատում էին նրանց գլուխը, ուսերը...

Այդ տեսնելով՝ իշխան Կամսարականը, որի աչ և ձախ կողմից գնում էին որդիները ձիերի վրա, զայրացավ, որ անճնտուրք լինող պարսիկների հետ այդպես վատ են վարվում ու, ձին կանգնեցնելով, գոռաց մի խումբ սյունեցիների վրա.

— Դադարեցնե՛լ...

Սյունեցիները, որոնց աչքերից ասես արյուն ու կատաղություն էր թափվում, զարմացած նայեցին իշխանին, կարծես հարցնելով, թե դա ո՛վ է, որ իրենց նկատողություն է անում:

— Իսկ իրենք՝ չան զավակները խնայո՞ւմ են մեզ,— ասաց մեկը հուզված:

Իշխանը նրա ձայնի մեջ զգաց անհնազանդության և արհամարհանքի պես մի բան և ասաղ բարկացած.

— Ձեզ հետ խոսում է իշխան Կամսարականը:

Սյունեցիները սթափվեցին անմիջապես. թողին բռնած պարսիկներին, զննական հարգանքով նայեցին իշխանին ցցունաղարդ սաղավարտին, սև ու խոշոր աչքերին և, շտկվելով, նետվեցին դեպի Իշխանն ու նրա թիկնապահները...

Ու մի քանի վայրկյան սյունեցիներն ու իշխանի զինվորները խնդալավառ դրկում-համբուրում էին իրար, ինչպես կարոտ հա-

քազաքները, թեև առաջին անգամն էին տեսնում իրար: Եվ այդ քուռն խանդավառ հանդիպումը երկար կտևեր, եթե իշխանը չհարցներ.

— Իսկ ո՞ւր է Անդոք իշխանը:

— Իշխան Անդոքը ծանր վիրք ստացավ, տեր.... Ահա այստեղ է...

Կամսարականի դեմքը մթագնեց, նա անքաց ու ձին քշեց այն կողմը, ուր ցույց տվեց այսնեցի պինվորը:

Մի փոքր հրապարակի մնջեղ հավաքվել էին հիսունի չափ նիզակավոր ու աղեղնավոր մարտիկներ, նրանց հետ և Անդոքի որդի Բաբիկը և շրջապատել մի տախտ, որի վրա մեկնված էր ծերունի իշխանը՝ աչքերը փակ. նրա տակ փռված էր վառ դույներով մի գորգ, որ չգիտես որտեղից էին գտել այսնեցիները:

Անդոք իշխանն անշարժ էր. նրա նշանավոր թավ ճերմակ բեխերը՝ ճերմակ ադամնու թևերի նման փռված էին նրա ծնոտների վրա, իսկ թուխ դեմքը արյունոտ էր ալ կողմից:

Կամսարականն իջավ ձիուց և մոտեցավ ծեր ռազմիկին, որ հևում էր անձայն ու անկանոն. նա վիրավորվել էր գլխից, և վիրքը, կամսարականին թվաց, մահացու էր: Տեսնելով մահամերձ իշխանին՝ կամսարականը հասկացավ, թե ինչո՛ւ այսնեցիները գայլի նայվածքներ ունեին:

Բայց հաղիվ նա մոտեցավ և պատրաստվում էր խոսել ծերունու հետ—արագ քառատրոփով այդտեղ եկան Թագավորն ու տպարապետը իրենց շքախմբի, համհարզների ու թիկնապահների ուղեկցությամբ: Քաղաքի դարպասի մոտ նրանք լսել էին Անդոք իշխանի վիրավորվելու լուրը և շտապել էին տեսնել նրան:

Դեռ մի տաս—քսան քայլ հեռու՝ Պապը ձիուց իջնելով, վազից դեպի մորապատը և գրեթե ընկավ նրա կրծքին.

— Իշխան պապի, ես եմ...

Մինչ այդ ոչ—ոք չէր համարձակվում խոսել նրա հետ, համարելով որ նա կորցրել է խոսելու ընդունակությունը, բայց Պապի ձայնը լսելով՝ մահամերձ ծերունին չգիտես ճանաչե՞ց ձայնը, թե պարզապես իրեն ցնցելու հետևանքով—աչքերը բաց արավ հանկարծ և սևեռուն նայեց Թոռան, ապա դժվարու-

քյամբ, կարծես ծանր քարեր էր դլորում կրծքից, ոնքարով առավ, աչքերը նորից փակելով.

— Վերջացա՛վ, Պապ... Նախկինանն ազատ է, բայց... բայց իմ փառանձեմը... չկա...

Նա լռեց մի երկու վայրկյան և նորից, ընդհատողներին խորին լռության մեջ, ասավ՝ հատ-հատ բառերով.

— Ինձ տուր... իմ սյունեցիներին... մեր լեռներում թաղելու...

Պապը նորից կռացավ և երեսը մոտեցրեց մորապատի դեմքին.

— Պապիկ, քեզ պիտի տանեմ Դվին՝ քո վերքը բուժելու:

Մի ուժամ պատասխան չլսվեց. ծերունու աչքերը փակ էին, դեմքը անշարժ. բայց հանկարծ նրա շուրթերը շարժվեցին նորից.

— Ո՛չ,—ընդհատ նա և խոսքը կիսատ մնաց ծերունու բերանում. նրա մարմինը ցնցվեց մեկեն, ճերմակ բեղերը դողացին մի ակնթարթ ու հանդստացան:

Լռություն իջավ կարծես քաղաքի վրա: Շրջապատողները գլուխները խոնարհեցին ծերունու դիակի առաջ, մի քանիսը խոր հոգոց արձակեցին ու խաչակնքեցին երեսները:

Զինվորներից շատերի աչքերում արցունք երևաց: Իսկ սյունեցի հրամանատարներից մեկը մոտեցավ Անդոքին՝ կողքին տարածված նրա ձեռները խաչեց կրծքի վրա և համբուրելով ծերունու աչքը՝ ետ կանգնեց:

Նրա օրինակին հետևեցին Պապը, Անդոքի որդի Բաբիկը, Մուշեղը, իշխան Կամսարականը և այդտեղ գտնվող զինվորները:

Բայց այդ տխուր ու հանդիսավոր վայրկյանին լռությունը խախտեց ձիերի արագընթաց մի նոր ոտնաձայն և մեկը, սլարշավ մոտենալով, գրեթե պոռաց հևասպառ.

— Տե՛ր սպարապետ, այստեղ հայ գերիներ կան բանտարկված...

Իսկ մի ուրիշ ձիավոր, գալով անմիջապես նրա ետևից, ավելացրեց նույնպես հևաձայն.

— Մենք բռնեցինք մի խումբ զորականներ, որոնց մեջ են թնդապետը, Զիկ զորավարը և ուրիշ զորապետներ...

Սպարապետը բարձրացրեց վշտահար գլուխը և իր սև կլոր աչքերով նայեց լուր բերող հարյուրապետներին. մի վայրկյան նրա տխուր աչքերը փոխվեցին դարձան զայրացած արծվի աչքեր:

— Իսկ Մերուժանը չկա՞ դրանց մեջ,— հարցրեց նա:

— Ոչ, տեր սպարապետ:

— Այդ դեպքում՝ դերբիներին ազատել անմիջապես,— հրամայեց նա, և երբ գլուխը թեքելով, նորից նայեց անշարժ մեկնած իշխան Անդոքին՝ ավելացրեց վրդովված.—Իսկ պարսից զորավարներին մորթազերծ անել և... խոտ լցնելով, դնել քաղաքի պարիսպների վրա:

Նա կանգ առավ, նայեց մի ակնթարթ մեռած իշխանին և ապա, հայացքը դարձնելով դեպի կամսարականը՝ ասավ փոխված ձայնով.

— Սպանդարատ իշխան, ծանր է Անդոք իշխանի կորուստը մեզ համար, բայց և մեր գործն անհետաձգելի է: Հեռապնդեցեք, իշխան, փախչող թշնամուն և վանեցեք, խեղդեցեք գետում.

Հետո, մոտենալով իշխանին, կամացուկ շշնջաց նրա ականջին. «Թագավորին ճամբեմ Դվին՝ ես անմիջապես կհետեմ քեզ»...

— Բարի,—ասավ կամսարականը և, համհարզների օգնությամբ, նստելով իր բարձրահասակ կապտորակ ձին, գնաց սպարապետի հրամանը կատարելու:

Նրան հետևեցին որդիները՝ Գագավոնն ու Շավարշը՝ ալ և ձախ կողմերից: Իսկ Հրահատը, առանց սպարապետից թույլտվություն առնելու, բաժանվեց նրա շքախմբից և ձին քշեց այն տեղ, ուր ասում էին հայ գերիներ կան:

«Գուցե Նազենին այնտեղ լինի» մտածեց նա:

***

Հրահատը գնում էր այնպես արագ և այնպես հուզված, որ ձին տակին չէր զգում, ու շտապելուց չէր իմանում ո՛ր կողմն է գնում. բայց որովհետև սպարապետի հրամանը տանող հարյուրապետը գնաց մի ուղղությամբ՝ ինքն էլ հետևեց նրան:

— Հեռո՞ւ են գերինները,—հանելով հարցրեց Հրահատը:

— Ոչ այնքան:

— Կին, աղջիկնե՞ր էլ կան, թե այր մարդիկ են միայն,— շարունակեց Հրահատը:

— Այդ չեմ կարող ասել,—վրա բերավ հարյուրապետը, ձին արագացնելով, որ ժամ առաջ հասնի գերիներին:

Հրահատն աչխատեց նրանից ետ չմնալ:

Սակայն մինչև նրանց տեղ հասնելը՝ հայ զինվորներն ու քաջնված տեղերից դուրս եկած տեղացիները արդեն, դռները չարգելով, արձակել էին գերիներին: Եվ Հրահատը տեղ հասավ այն ժամ, երբ ահագին ախուռանման մի տնից դուրս էին գալիս մաշված, հյուծված ու դունատ, ուրվականների նման մարդիկ. խակ նրա դիմացի մի գետնափորից՝ կանայք, աղջիկներ... ու բոլորն ուրախության լացով ու բացականչով գրկում-գիարվում էին իրար, գրկում գիարվում էին հայ զինվորներին:

— Ձեր եկած ճանապարհը համբուրեմ,—ասում էր մի կին, հերթով գիարվելով հայ զինվորներին, ինչպես մայրը իր հարազատ որդիներին:—Մեր մարմինն ու հոգին վերկեցնք դժոխքից ու տանջանքից:

Մյուսներն իրենց չնորհակալությունը հայտնում էին ձեռ քառնելով, արտահայտիչ հայացքներով կամ պարզապես ուրախության արցունքներով:

Երբ Հրահատը մոտեցավ՝ բակը լցված էր այդ ուրախ ու տխուր թազմությամբ, ինքն էլ չկամացավ ինչպես ինքավ ձիուց ու գնաց առաջ. նրա աչքերն ակամա թրջվեցին և սկսեց շարունակել կրծքին, մանավանդ երբ գերիների մեջ նկատեց կանայք ու աղջիկներ: Նա թրջված, բայց ազատ աչքերով նայեց իրար քաոսնված գերիներին, առանձնապես կանանց ու աղջիկներին, որ վերկվելու ուրախությունից մոռացել էին իրենց սովորական ամոթխածությունը, իրենց կիսամերկ վիճակը, ու կանչում, ձայն էին տալիս միմյանց, լալիս էին ուրախ ձայներով կամ վազում գրկում իրար ու համբուրում:

Դա Հրահատի համար անսովոր մի տեսարան էր. թվում էր՝ մարդիկ խենթացել են գերության մեջ, կամ մահից ազատվելու ինդուրթյունը խախտել է նրանց հոգու հավասարակշռությունը,— այնքան արտասկրդ էր մարդկանց, առավելապես

կանանց ղեպցմունքների արտահայտությունը. շատերը չէին կարողանում կանգնել մի տեղ. ընդարձակ բակում վազում էին այս ու այն կողմ, մեկին դունելու, մեկին փարվելու, համբուրելու կամ լաց լինելու. ամանք մի տեղ կանգնած ճչում–կանչում էին ինչ–որ անուններ, երևի հարազատների անուններ. բայց պատասխան չստանալով՝ լալիս էին՝ ծունկ ու գլուխ ծեծելով, իսկ ամանք լալիս էին անձայն և լացի արցունքի միջից ժպտում:

Այս տեղի էր ունենում մանավորապես կանանց խմբերում, ուր սարից, ղևռատի կանայք ու աղջիկներ խառնված էին իրար:

Հրահատը առաջ գնալով, չդիտես ինչու, զգում էր, թե ահա ալիսի տեսնի Նազենուն և, ով գիտե, ինչ վիճակում, ու չէր կարող ասել, թե ինչ խոսքերով պիտի դիմավորի նրան... Ու թափառ հայացքով կանանց այդ խմբում նա որոնում էր միայն նրա ծանոթ դեմքը, նրա թուխ խոշոր աչքերը, բարձր հասակը. և նրան թվում էր, թե ահա կերևա նա ու լալով–ժպտալով կվազի դեպ իրեն...

Բայց Նազենին կարծես չկար դրանց մեջ... Չկար և. մայրը...

Հրահատը հերթով նայեց կանանց այդ խմբերը և չգտավ նրանց:

Սակայն դա չհանգստացրեց նրան: Ձիու սանձը քաշելով՝ նա մոտեցավ կանանց մի այլ խմբի և հարցրեց.

— Դևլինցիներ կա՞ն ձեր մեջ:

— Կա՛ն, արևս, կա՛ն: Դևլինցիներ էլ կան, արտաչատցիները, վաղարշապատցիները էլ,—պատասխանեց մի պնդակազմ, գեղեցկադեմ կին:— Ամեն տեղից էլ կան, արևս, ամեն տեղից...

Հանկարծ նա ընդհատեց խոսքը և, առաջ վազելով, փաթաթվեց մի նիզակավոր դինվորի ու սկսեց համբուրել նրա երեսը, ճակները:

— Հովսեփս, Հովսեփս, ո՞ւ ես... Աչքերդ՝ սիրեմ, մի՞թե դու ես,— կրկնում էր նա,— մի՞թե դու ես:

— Ես եմ, ես եմ,— ասում էր զինվորը:—Հապա Այծեմիկն ո՞ւր է, Աննա մայրիկ, Այծեմիկը:

— Այծեմիկը՛, Այծեմիկը՛,—սրտախոր հառաչեց կինը ու գլուխն օրորեց:—Այծեմիկիս տարա՛ն, Հովսեփս, տարա՛ծ:—Նրա

ուրախությունը հանկարծ փոխվեց լացի ու հառաչանքի։—Բա-ժանեցին ինձնից ու տարա՛ն... կուրանա՛մ... տարա՛ն...

Հրահատը երեսը շրջեց արագ, որ չտեսնի կարծես այդ կնոջ մորմոքը, և նկատեց, որ ախոռանման տնից տակավին դերձիներ էին դուրս գալիս։ Նա գնաց այն կողմը. դերձիների մեջ կային քահանաներ ու սարկավագներ։

— Հայր սուրբը մնաց, հայր սուրբը,—ասում էր մեկը։

— Բերում են, նրան բերում են,— պատասխանեց մի ուրիշը։

Ու փոքր անց դուրս բերին իսկապես մի ծեր հոգևորականի, որ լայն մորուս ուներ և խոշոր ներշնչված աչքեր։

— Ազատությո՛ւն եղբարց մերոց գերելոց,— ասում էր նա անղնդային ձայնով և ծորուն, աղոթքի եղանակով։— Ազատությո՛ւն եղբարց մերոց գերելոց։ Թուրը հայոց զորավոր... Աղոթեցեք և ցնծացեք, եղբայրներ... Թուրը հայոց զորավոր...

Նրա ձայնից կանայք սկսեցին արտասվել, իսկ տղամարդիկ աշխատում էին զսպել իրենց, որ նուլնը չանեն։

Երբ ծերունուն դուրս բերին և նստեցրին մի քարի՝ նա լռեց ու կարծես հանգստացավ։

Այդ ժամանակ Հրահատը մոտեցավ մի այլ խմբի և հարցրեց.

— Այստեղ ովքե՞ր են դվինցիները։

Պատասխանի փոխարեն մեկը շուրջը նայեց։

— Դվինցինե՞ր,—ասավ նա,— ո՞ւր գնացին դվինցիները...

— Այստեղ են, այստեղ,— կանչեց մեկը քիչ հեռվից, բակի մի անկյունից։

Հրահատը, ձին քշելով, գնաց ձայնի կողմը։

Աղեղն ուսին, կապարճը գոտիկից կախ՝ սաղավարտով մի գինվոր կանգնել էր այդտեղ կանանց ու տղամարդկանց մի մեծ խմբով շրջապատված և ասում էր.

— Մենք եկանք գիշերը, եկանք չահերով... որովհետև իշխանը հրամայեց ճողերով չահեր շինել... և երբ պարսիկը մութի մեջ տեսավ այդ կրակը՝ թողավ վախա՛վ... փախավ մինչև քաղաք... Մենք աստծու օգնությամբ, այսունեցիների օգնությամբ...

— Աստված զորավի՛դ ու պաշտպա՛ն— խաչակնքեց բազմությունը:

Հրահատը մոտեցավ. նա չգիտեր ինչպես և ինչ ձևով հարցներ Նազենու մասին, որ անհարմար չլիներ. ներքին ինչ-որ մի ուժ թույլ չէր տալիս նրան խոսել իր զգացմունքների մասին այդ տառապած, վշտահար բազմության առաջ, մյուս կողմից քաշվում էր բացարձակ անուն տալ. կարող էին հարցնել նա ո՞վ էին է, ինչո՞ւ ես հետաքրքրվում: Բայց նրա բախտից մեկը ճանաչեց նրան:

— Հրահա՛տ, Հրահա՛տ սիրելի,— խմբից բաժանվեց մեկը՝ մի հին տարիքի նիհար, հյուծված մի մարդ:— Դու էլ այստե՞ղ ես: Ես, արևդ սիրեմ, ես... Մեր հոգին փրկեցիք,— ու փարվեց-համբուրեց նրան, ինչպես հարազատ եղբոր:—Մեր Հրահատն է, Հրահատը: Սպարապետի թիկնապահը,— դարձավ նա մյուսներին, որ ուշադիր լսում էին ընկերոջ պատմությունը:

Բայց առանց նրա ասելու էլ մյուս զվիճցիները արդեն ճանաչել էին Հրահատին. մեկն ուզում էր համբուրել նրան, մյուսները ժպտում էին մաշված ժպիտներով, իսկ մի քանիսն էլ ուղղակի փարվեցին նրա թևերին:

— Իսկ սպարապետն ո՞ւր է, սպարապետը, լազուկը սիրեմ,— հարցնում էին նրանք:

— Այստեղ է, այստեղ,— պատասխանեց Հրահատը, հերթով զվիճցիներին նայելով ու մտածելով, թե ո՞րին հարցնի Նազենու մասին կամ ինչպե՞ս հարցնի: Վերջապես, տեսնելով հարմար մեկը չկա, նա ասավ:— Ձեր մեջ ուրիշ զվիճցիներ չկա՞ն:

— Այդ է՝ մենք ենք և մի քանի կանայք ու աղջիկներ, որ այնտեղ են:

— Որտե՞ղ,— հարցրեց Հրահատը անհամբերատ շուրջը նայելով:

— Այնտեղ, մատաղ,— ցույց տվեց առաջինը նրան ճանաչողը:— Դու ո՞ւմն ես փնտրում, ո՞ւմն ես ուզում...

Հրահատն այնպես տարվեց մյուս կանանց տեսնելու ցանկությամբ, որ էլ չպատասխանեց իրեն արված հարցումին և, ձին քաշելով, գնաց ցույց տված ուղղությամբ:

Հասնելով քիչ հեռու խմբված կանանց, որ իրար հազուստ-

Ներ էին կարդի բերում, նա բարևելով՝ հարցրեց, թե դվինցի են արդյոք:

— Դվինցի, իսկական դվինցի, եղբայրս,— պատասխանեց մազերը դվահաչորի տակից խուխվ դուրս թափված մի կին՝ արցունքի չերեներն այտերի վրա:—Պարսիկի աչքը խավարի. հանեց մեզ քաղաքից մեր ու բերեց...

Մինչ կինը խոսում էր՝ Հրահատը մի հայացքով նայեց բոլորին: Նազենին չկար և դրանից մեջ:

— Կա՞ն այստեղ դվինցի ուրիշ կանայք էլ, թե մեկդ եք,—հարցրեց նա:

— Մենք ենք, եղբայրս, մեկն մենք,— ասաց կինը:— Առաջ դվինցիներ կային՝ տարան: Մի տաս օր առաջ տարան անօրեները:

Հրահատը հևաց. նրա շունչը բռնվեց կարծես:

— Կանա՞յք էին, թե այր մարդիկ,— հարցրեց նա:

— Կանայք էլ, այրեր էլ. դու ո՞ւմ ես հարցնում, եղբայրս:

— Ե՞ս,— և Հրահատը հապաղեց, չիմանալով ո՞ւմ անունը տալ:

— Դու ասա, ես բոլոր դվինցիներին ճանաչում եմ,— խոսեց կինը, նրա վարանումը տեսնելով:

— Ինձ խնդրել են իմանալ՝ զինապուրծ Զոմայի կինն ու աղջիկը դերիների մեջ չե՞ն արդյոք,— ասաց նա չկենելով:

— Զինապուրծ Զոմայի՞,— չմոմատց կինը ասես հիշելու համար:

— Այո, աղջկա անունը Նազենի է, եթե ճանաչո՞ւմ ես:

— Նազենի՞,— երկարեց նա երկմտության մեջ:— Այդպես մի անուն կար, եղբայրս, բայց չգիտեմ նա ո՛ւմ աղջիկն էր... Այդպես մեկը կար չէ՞,— դիմեց նա ընկերուհիներին:

— Ես նրանց ճանաչում եմ,— առաջ եկավ մի կին:— Դու նրանց ինչը՞ կլինես:

— Ե՞ս,— Հրահատի շունչը նորից բռնվեց կարծես:— Ես նրանց բարեկամն եմ:

— Բարեկա՞մը: Ոչ, նրանք այստեղ չեն, նրանք գերի չեն:

— Մոռա՞յդ դիտես,—և Հրահատը շունչ քաշեց թեթևացած:

— Ստո՛ւյդ, ստո՛ւյդ: Նրանք Դվինից հեռացան, երբ պարսիկը դեռ քաղաք չէր մտել:

Հրահատն ուժգին ալեկոծվեց.

— Ճշմարի՞տ:

— Ճշմարիտ, եղբայրս, ինչպես քեզ տեսնում եմ: Նրանք գնացին...

— Բայց ո՞ւր, ո՞ր կողմը:

— Այդ արդեն չեմ կարող ասել, եղբայրս: Իմ աչքով տեսա, որ նրանք հրապարակով անցան-գնացին: Ինչպես քեզ տեսնում եմ...

— Իսկ այդ ե՞րբ էր,— ընդհատեց Հրահատը անհամբեր:

— Ե՞րբ,— կինը երկարեց մտածումների մեջ, հիշելու ճիգով:— Ամիսն ու օրը չեմ կարող ասել,— ավելացրեց նա,— բայց այն ժամանակ էր, երբ ասին՝ պարսիկը գալիս է Դվինի վրա:

— Դու հաստա՞տ ես, քույրս:

— Հաստատ, իմ աչքերովս տեսա: Ինչպե՞ս քեզ տեսնեմ...

Հրահատը նորից մի խոր շունչ քաշեց.

— Իսկ չե՞ս կարող ասել ո՛ր կողմը գնացին,— կրկնեց նա:

— Որ կողմը՞: Այդ չեմ կարող ասել: Գնացին, երևի, Մոսլույի անտառը կամ գուցե Գառնի, գուցե Վարաժնունիք: Գուցե ավելի հեռու...

— Իսկ այդ ժամ ճանապարհներն ազա՞տ էին, վառնդ չկա՞ր,— շարունակեց Հրահատը սևեռուն կնոջ աչքերին նայելով, կարծես նրանց մեջ իր հարցի պատասխանը կարդալու:

— Այդ արդեն չեմ կարող ասել, եղբայրս: Պատահել է շատերին ճանապարհներին են բռնել-բերել գերի, ինչպես ինձ...

Հրահատը, որ մինչ այդ հանգստացել էր կարծես, թե Նալենին մոր հետ հեռացել է, երևի, ապահով մի վայր, կնոջ վերջին խոսքերի վրա մռայլվեց հանկարծ: Ուրեմն կարող է պատահել ընկած լինի գերի՛...

Ու մի քանի վայրկյան նա մնաց անշարժ կանգնած՝ գերի կանանց նայելով, ապա անխոս քայլ արավ ու դնաց, ձին եռանից քաշելով:

Այդ վայրկյանին նա, ինչպես Դվինում՝ Նազենու «դերությունը» լսած մի րոպեին՝ ոչինչ չէր տեսնում և ոչինչ չէր

դղում: Նրա մտքի և աչքերի առջև դարձյալ Նազենին էր: Հիշում էր նրան ամենատարբեր պարագաներում՝ մերթ տանը, մերթ այգում. նա հիշեց մանավանդ այն պահը, երբ ինքը, հրաժեշտ տալուց հետո, հեռանալիս հանկարծ ետ նայեց ու տեսավ, որ Նազենին կանգնել էր այգու դռան շրջանակի մեջ ու նայում էր իր հանդից մի դիրքով ու նայվածքով, որ արտահայտում էր թե վախ, թե ցավ և թե. տաղնապ: Այդ նայվածքն այնպես հուզեց Հրահատին, որ նա ակամա, ասես ինչ-որ բանից մղված, ետ դարձավ:

— Դու տխո՞ւր ես, Նազենի,— հարցրեց Հրահատը:

— Այո,— հառաչեց Նազենին և աչքերը խոնարհեց:

Հրահատը նկատեց, թե ինչպես արցունքի երկու հոսք սկսվեցին նրա աչքերից ու ընկան ցած:

— Դու լալի՞ս ես, Նազենի,— մոտեցավ Հրահատը նրան,— և ինչո՞ւ... Վախենո՞ւմ ես... Ասա՛, մի քաշվի:

Նազենին դանդաղում էր. թվում էր նա տատանվում է կամ չի համարձակվում ասել այն, ինչ մտածում է: Բայց, վերջապես, նա ճիգ արավ և ասավ.

— Հանկարծ պատերազմը երկարի, դու գնաս հեռու և... և մենք չտեսնենք իրար:

— Այդ չի կարող լինել,— ասավ Հրահատը աչխուժ, բայց ներքուստ անվստահ:— Ոչ, Նազենի, պատերազմը երկար չի տևի,— ուզեց մխիթարել Հրահատը:

Բայց Նազենին նորից հառաչեց անխոս:

— Դու ավելի տխրեցի՛ր, Նազենի...

— Ջգիտեմ,—հոգոց արձակեց Նազենին,— սիրտս անհանգիստ է շատ... Թվում է՝ սա մեր վերջին տեսությունն է:

— Եվ ինչո՞ւ. ինչո՞ւ ես կարծում այդպես:

Նազենին գլուխը կախեց կրծքին, և նորից արցունքի կաթիլներ ընկան նրա աչքերից:

— Ինքս էլ չգիտեմ ինչո՞ւ... Սիրտս վկայում է, Հրահատ,—ասավ նա, առաջին անգամ տալով իր անունը,— սիրտս վկայում է,որ մենք կարող ենք կորցնել միմյանց և... և այլևս չտեսնել...

— Ոչ, Նազենի, ոչ. այդ չի կարող լինել,— հուսադրեց Հրահատը նրան, ինքն էլ սակայն համոզված չլինելով, որ դա

չի կարող պատահել։— Պատերազմը կվերջանա շուտ և մենք պատկի կերթանք։

Նազենին լռում էր՝ աչքերը գետնին հառած։

— Մոսիը, Նազենի, ինչո՞ւ ես լռում,— հետաքրքրվեց Հրահատը։— Մոսիը. ի՞նչ կուզես ուրեմն, որ անեմ։ Ինչպե՞ս վարվեմ...

— Տա՛ր և ինձ քեզ հետ,— թաց աչքերը բարձրացրեց Նազենին։—Ես վախենում եմ։

Հրահատը զարմացավ։

— Ինչի՞ց... Ինչի՞ց ես վախենում, Նազենի։

— Որ կորցնենք իրար ու...

Եվ Նազենին, խոսքը կիսատ, լաց եղավ։

Հիշելով այս ամենը՝ Հրահատը հառաչեց։

«Իրոք այդպես էլ եղավ,— մոածեց նա։— Նազենու սիրտը վկայում էր ճշմարտապես. ու ինչպես ասավ՝ այնպես էլ եղավ։ Մենք կորցրինք իրար... Բայց մի՞թե, իրավ, այլևս չենք տեսնելու միմյանց»...

Զինադործ Զոհան սպանվել է, այդ հաստատ էր. բայց ո՞ւր էին Նազենին ու մայրը։ Տարվի՞ էին գերի, թե վրկվել-ապաստանել էին մի տեղ— չէր պարզվում տակավին, չգիտեր ոչ-ոք։ Այն, ինչ քիչ առաջ ասավ գերի կինը, նույնն ասին և հարևանները Դվինում... իսկապես ո՞ւր են արդյոք...

Եվ անորոշությունը հուսահատություն էր բերում Հրահատին, նա տանջվում էր, մանավանդ, երբ կրծքի վրա ղեում էր պրպանում պահած վարսակալն ու դինդերը։ Այդպես էլ այժմ. մի առժամ ձին քաշելով՝ նա գնում էր ու չէր նկատում կողքից անցնող զինվորներին, զորականներին. երբ, վերջապես, հասավ մի նեղ փողոց՝ նա ձեռն ինքնաբերբ տարավ ծոցը և չոչափեց պրպանում պահած վարսակալն ու դինդերը, որ Նազենուն ընծա էր բերել Բիզանդիայից։

Շոշափելով ծոցապրպանը՝ նա հառաչեց, և արցունքի երկու կաթիլ հանկարծ ցայտեցին նրա աչքերից ու դողացին այտերի վրա։

— Հրահա՛տ,— հանկարծ դիմացից եկավ մի հեծյալ զորական։— Ի՞նչ է պատահել... դու լալի՞ս ես...

Հարցնողը սպարապետի թիկնապահներից մեկն էր— Հրահատի ընկեր Ատոմը։

***

Մեծ դժվարությամբ Մուշեղին հաջողվեց համոզել Պապին, որ վերադառնա Դվին, պարզից հետապնդումը թողնելով իրենց։ Եվ Պապը վերադարձավ, ուխտասլով մորաքույր Անդոք լշխանի մահը, ցավելով՝ շատ, որ Մերուժանին չբռնեցին։ Բայց և այնպես Նախջևանի հաղթությունն այնքան ոգևորեց նրան, որ երբ վերադառնում էր իր վոքրիկ շքախմբով, ճանապարհին մտածում էր շարունակ՝ վերադարձին հաղթության խրախճանք տալ Դվինի ժողովրդին։ Որքան էլ մորաքրոջ մահը ծանր վիշտ էր պատճառել նրան, սակայն նա առանձին մի սիրով էր մտածում այդ ուրախության մասին, որպես անհրաժեշտ մի բանի, որ պետք է սփոփեր ժողովրդին և ղգացնել տար Թե Նախջևանի ճակատամարտով վերջանում է պատերազմը, թշնամին ամեն տեղ ջախջախված է սահմանից դուրս, պետք է ուրեմն կարգի բերել քաղաքները, քանդված շենները, ճանապարհները, կամուրջները, ապա... Թագուհու հարկաբաժինը, նրա առանձին օթևանները պետք է զարդարել ընտիր կահերով և հատուկ մարդիկ ուղարկել՝ Թագուհուն ու որդիներին բերելու, քանի դեռ ձմեռը վրա չէր հասել...

Բայց մեծ եղավ նրա զարմանքը, երբ Դվինի պալատը հասնելով՝ տեսավ Թագուհին եկել է որդիների հետ։ Նրան ուղեկցել էր մի սմբոլղ շքախումբ՝ Թագուհու հոր՝ իշխան Բագարատ Տայեցու զինավորությամբ։ Այդ շքախմբի մեջ շատ սեպուհների հետ միասին եկել էին նաև Երեմիայի և Բաթի Կնանայք, որ նույնպես մնացել էին Տայքում, սպասելով պատերազմի վախճանին։ Նրանց հետ եկել էին դպրայիներ, դաստիարակներ և նաժիշտների մի մեծ խումբ, որ միանգամից կարծես լցրել էին մինչ այդ սակավ թվացող պալատը։ Որքան էլ Թագուհու հայրը՝ Բագարատ իշխանն աշխատել էր համոզել դստերը, որ մնա մինչև պատերազմի լիակատար վախճանը, Զարմանդուխտ Թագուհին չէր համաձայնել. չուզել էր օր առաջ հանդել Դվին և Պապին չթողնել մենակ։ Լավ իմանալով Պապի «դյուրաբորբ բնույթը»,

ինչպես նա էր ասում, մտածել էր, որ կենտրոնի հանկարծ կռիվների մեջ և կվտանգվի երեն, ուստի աճապարել էր նրան այդ սեսակ վտանգներից ետ պահելու:

Պապը որքան զարմացավ, նույնքան և ուրախացավ, որ նախկինի հաղթությանը հաջորդեց մի այսպիսի հաճելի անակնկալ: Առաջինը նրան դիմավորեցին որդիները՝ Արշակն ու Վաղարշակը, վեց-ութ տարեկան երեք նման տղաներ, որոնց Պապը համբուրեց դեռևս ձիուց /բարձրացնելով, ու նրան թվաց, որ որդիները նկատելի մեծացել են մի քանի ամսվա մեջ... ապա երեսց Թագուհին, որի ձվաձև դեմքը քամահարվել էր հանապարհին, սակայն սև խոշոր աչքերը՝ երկար թարթիչներով մնացել էին նույնը. նույնն էր և միջահասակ կազմվածքը, քայլվածքը:

— Ի՞նչպես հավանեցիր Դվինը, քո հարկաբաժինը,—առաջին ողջագուրանքից հետո հարցրեց Պապը:

— Ես շատ դոհ եմ,— ասավ Թագուհին,— մեզ լավ ընդունեց Հայր-Եպիսկոպոսը:— Ի՞նչ հիանալի մարդ է, Պապ: Ամեն կերպ օգնեց, որ մեզ լավ զգանք: Ի՞նչ սքանչելի մարդ,—կրկնեց նա.— Եթե այստեղ բոլորն այդպես լինեն՝ ես ինձ երջանիկ կզգամ...

Պապը չպատասխանեց, ավելի շուտ խոսքը փոխեց.

— Հիմա, Զորմանդուխտ սիրելի, հուսամ, կապրեն՞ք խաղաղ,— ասավ նա:— Պատերազմը պիտի համարել ավարտված: Մեր զորքերը թշնամուն ամեն տեղ վանեցին դեպի սահմանը: Կուզեի նախնյաց ձևով հաղթության խրախճան տալ ժողովրդին. Բո՛ղ փոքր մի մոռանան կրած արհավիրքը... Հալածն ես այս մտքին...

— Մխանգամայն, Պապ: Անպայման,— ասավ Թագուհին:

Ու մի քանի օր նա զբաղված էր այդ «հաղթության խրախճանքի» մտքով, նույնիսկ խորհրդակցում էր հազարապետ Ամատունու հետ, թե ինչպես և ինչ ձևով պետք է անել այդ, երբ մի օր ներս մտավ սենեկապետ Ծերունի Արշամը:

— Տեր արքա, բացրևաղիից սուրհանդակ:

Սովորաբար սուրհանդակին ընդունում էր դիվանապետը կամ հազարապետը, բայց այս անգամ եկողը ցանկություն էր հայտնել՝ տեսնել Թագավորին կամ սպարապետին՝ շատ հարեւոր

մի նամակ հանձնելու և կարևոր լուրեր հայտնելու. որովհետև սպարապետը Դվինն չէր՝ կամեցել էր տեսնել Թագավորին։

Հազիվ սենեկապետը դուրս էր գնացել՝ ներս մտավ արևից ու քամուց այրված–կոչտացած մի երիտասարդ, որ որքան էլ վրայից մաքրել էր ճանապարհի փոշին, բայց դա երևում էր տակավին նրա կարճ վերնազգեստի և մուչիների ծալքերում։

Ներս մտնելով, նա, ձեռը կրծքին դրած, գլուխ խոնարհեց նախ Թագավորին, ապա այդտեղ նստած Թագուհուն, հետո, երկու քայլ անելով՝ ոլորած ու կնքած մի նամակ տվեց Թագավորին։

— Դարոնք ամրոցի տեր բերդակալից, արքա,— ասավ նա չդիտես չտապելուց թե ամաչելու հուզումից ծանր հևալով. նրա կուրծքը բարձրանում–իջնում էր։

Մինչ Պապը կարդում էր նամակը՝ հուզումն ու տպչնապը հազիվ պահելով, Թագուհին մերթ նայում էր ամուսնուն, մերթ երիտասարդ սուրհանդակին, կամենալով կարծես դուշակել, թե ինչ կարող է լինել այդ նամակի բովանդակությունը, նամակ, որ ուղարկված էր այդպես շտապ, և մի վայրից, որ ա՛յնքան մոտ էր սահմանին։

Երբ Պապը նամակն ավարտեց՝ նա այլայլունեց. նրա դեմքի մկաններըը խաղացին, լինչպես միշտ հուզված պահերին։ Թագուհին այդ նկատեց անմիջապես և նույնպես այլայլվեց. ուզեց հարցնել լի՛նչ է գրում բերդակալը, բայց Պապը ժամանակ չտվեց, ղիմելով սուրհանդակին.

— Ուրիշ լի՛նչ կարող էիր ասել։

— Իմ տեր բերդակալն, արքա, հրամայել է– լինձ հայտնել սպարապետին, թե ինչպես վարվի ինքը, եթե պարսիկներն անցնեն սահմանը։ Բայց քանի որ տեր սպարապետը գտնվում է Նախիջևանում, այդ հրամանը խնդրում եմ քեզնից, արքա։

— Ուրեմն՝ պարսիկները նորի՞ց,— հևաց Թագուհին, չկարողանալով պահել իր անհանգստությունը։

— Այո, Զարմանդուխտ, երկյուղալի ոչինչ չկա,— ասավ Պապը ձայնի հանգստացնող շեշտով։—Այդ Մերուժանն է նորից ուզում վրդովել մեր հանդիստը...

Պապը չուզեց ասել ավելին՝ Թագուհուն չանհանգստացնելու համար. չուզեց ասել այն ամենը, ինչ գրում էր բերդա-

կալը, թե ստույգ լուրերի համաձայն, Շապուհը, չկարողանալով տանել վերջին ամիսների պարտությունը՝ նոր զորք է հավաքում սահմանի վրա, նոր հարձակում սկսելու, որ սպասվում է օրեցօր։ Այն ինչ հայ զորքը շատ թակալ է այդտեղ՝ թշնամու մեծ ուժերին դիմադրելու։

Պապը չուզեց ասել այս ամենը Թագուհուն, սակայն նկատելով նրա հուզումը՝ մի կողմից աշխատեց հանգստացնել նրան, մյուս կողմից հրամայեց սուրհանդակներ ուղարկել Նախջևան՝ սպարապետին և իշխան Կամսարականին, նոր լուրը հայտնելու և նրանց կանչելու, երբ եկավ մի երկրորդ սուրհանդակ—այս անգամ Վասպուրականում գտնվող Բագրատունի Սմբատ ասպետի կողմից, բնորոշող նույն տեղեկությունը, թե Շապուհը վերջին պարտություններից կատաղած՝ նոր զորք է կապել և մտադիր է շուտով Մերուժան Արծրունու հետ՝ Հեր և Ջարևանդ գավառներից—Հայաստանի այդ մատչելի դռներից—մտնել Բագրևանդ և մինչև ձմեռը տիրել Հայաստանը և Մերուժանին կարգել թագավոր։

— Ուրեմն Շապուհը որոշել է մեզ հանգիստ չտալ,— մտածում էր Պապը, սպասելով Մուշեղ սպարապետին։— Իսկ մենք կանենք այն, ինչ կարող ենք և պարտավոր ենք։

Եվ մի քանի օր հետո հայ զորքը վաղարշապատով անցնում էր Բագրևանդ. քաղաքի բնակիչները, վողոցները լցված, դիտում էին զորքի երթը։

Առջևից գնում էին իշխան Կամսարականի հեծյալները (Նախջևանի սահմանների պաշտպանությունը սպարապետը հանձնել էր այսունեցիներին և Անդոքի որդի Բաթիկին) իրենց անձնյա հրամանատարի և նրա երկու որդու առաջնորդությամբ. ապա գնում էր հետևակը՝ նիզակներով, աշտեներով և նետաղեղներով զինված. զարճյալ հեծյալ ու հետևակ, հեծյալներ ու հետևակ՝ նույն ձևով զինված, որ առաջ էին գնում հողը դոփելով, զենքերի ղրնդոցով, երկարաձիգ անվերջ շարքերով։ Թվում էր զորք չի անցնում, այլ վեր է կացել ամբողջ մի ժողովուրդ, որ ճվով, ոտով գնում է երկիրը պաշտպանելու։ Տեգերի, նիզակների մի խիտ, անվերջ անտառ էր անցնում, արևի տակ շողացնելով իր սուր սայրերը։

Անցան այդպես արքունական գնդերը, ապա իրենց տոհմանիքը կրող դրոշներով ու գնդերով եկան–անցան շատ նախարարներ, ինչպես կենդան Ամատունին, Դարա–Սյունին, Աղամ և Արգամ Գնթունիները, վարաժնունյաց տերը, Վանանդա իշխան Սեթը և շատ ուրիշները:

Զորքից հետո եկավ և Թագավորը՝ Մուշեղ ոսկրապետի և ավագանիների հետ միասին. նրանց հետ էր և բյուզանդական դրաված Տերենոը՝ իր արտասուրը հագուստով, իր թիկնապահների փոքրիկ խմբով: Դրանիկ գունդը գնում էր- Բաթ Սահառունեան դլուխ ունենալով, որի կոլքին իր նժույգն էր վարում աքքայադպիր Երեմիան՝ այս անգամ մարտական սեղմ հագուստների մեջ և բյուզանդական մի կլոր գլխարկով, որի ոսկից դուրս էին թափվում նրա սև գանգուրները:

Երեկոյան դեմ զորքին մխացավ և կաթողիկոսը իր տաներկու եպիսկոպոսներով ու տասերկու սարկավագներով:

Ամենից վերջը զորքին հետևեցին պաշարակիր ջորիները, ուղտերը՝ բեռնված ամեն տեսակի ուտելիքներով, վրաններով և այլ պարագաներով, որոնց հետ գնում էին և կանայք ու ծերունիները, որ համառ էին վերք կապելու և ապաքինելու գործին: Դրանց մեջ էին Հրահատի նախկին առաջնորդ ծերունի Զաքարեն և ոսկերիչ Գազավոնը:

Վաղարշապատի բնակիչները, նրանց հետ և բոլոր վանականները դուրս թափված՝ փողոցի ափերից ու կտուրներից նայում էին գնացող զորքի ետևից և նրանցից չատերը, առանձնապես պառավները, աղոթում էին և արտասվում.

— Տե՛ր ամենակալ, քո աջը հասնի... Դո՛ւ օգնես աչխարհիս հայոց...

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Գիշեր էր. լուսնի անրջային լույսով ողողված էր Զիրավի ընդարձակ դաշտը. նրա երեք կողմը՝ հեռուներում լեռները մի ապահով շրջան կազմած ասես հսկում էին նրան, և դաշտը դրանով կարծես հանդիստ՝ մեղկորեն փռվել էր և կաթնալուսի ու կաթնամշուշի մեջ քնել անդորր: Ցերեկը նրա վրա երևացող թվուտները, ալիքաձև բլուրներն ու թմբերը և առհասարակ նրա կնճիռները հիմա՝ լուսնի լուսերի տակ թվում էին հարթված, աննկատելի. անգամ գետը՝ հայոց սրբազան Արածանին հաղիվ էր նշմարվում իր ափերի մորով ու չամբուտներով, որ խշշում էին գետի երկու կողմը և խլացնում նրա ջրերի ձայնը: Աչնան գոլ շնչով համակված թեթև մի հով էր անցնում ու վրդովում եղեգների նինջը, և նրանց այդ համատարած, ծավալվող խշշոցն ավելի էր խորացնում գիշերվա ընդհանուր անդորրը:

Դաշտի վրա սևին էին տալիս մեյան մի քանի գյուղեր, բայց նրանց մեջ կենդանություն, չունչ չէր երևում—նրանք դատարկ էին ու լքված. սակայն դաշտին սովոր աչքը այս գիշեր՝ լուսնի լուսով կարող էր տեսնել նոր անսովոր տեսարաններ: Արածանու աջ ափը, որ առաջ, մինչև երեկ՝ մշտ դատարկ էր ու ամայի—հիմա ծածկված էր վրաններով, անթիվ ճերմակ ու գորշ վրաններով, որ բռնել էին ահագին մի տարածություն ու հասել մինչև բլուրների ու սարերի ստորոտները:

Բայց այստեղ էլ համատարած անշարժություն ու լռություն էր, որ սակայն նման չէր գյուղերի անկենդան լռությանը. այդ քունն էր իր թևերը տարածել վրաններվի վրա, բայց ոչ ամենքի... Մի քանի վրանի մոտ, առանձնապես ծայրավրաններվի առաջ նրանում էին նիզակներով ու չողուն զրահներով պահակներ,

որ թվում էին լուսնով հմայված, կամ հսկայական պոչի վրա կանգնած ձկները, որ իրենց թեփուկները փայլեցնում էին լուսնի տակ: Երևում էին նաև վրաններն ի շրջապիծը հսկող պահակները՝ նույնպես զրահավոր ու սպառազեն, բայց դրեթե նույնպես լուռ ու անշարժ: Վրանների մոտ ու փոքր ինչ նրանցից հեռու երևում էին և ձիեր, անհամար ձիեր, որ նույնպես հանդիստ էին առնում և երբեմն վինչացնում՝ կարծես քնի մեջ:

Դա հայոց բանակն էր, որ երեք օր անընդհատ, թեթև դադարներով, ճանապարհ կտրելուց հետո, հանգստանում էր հիմա խոր քնի մեջ: Այդտեղ էին ոչ միայն արքունական հետևազորն ու այրուձին, այլև նախարարական զնդերը, որ բանակել էին մեկը մյուսից փոքր ինչ հեռու, և որոնց յուրաքանչյուրի մոտ աչքի էր ընկնում նախարարական վրանն իր ընդարձակությամբ ու պահակներով: Բայց ավելի աչքի էին ընկնում երեք մեծ վրան, որոնցից երկուսին հսկում էին արթուն, բայց անշարժ զրահավոր պահակներ, երրորդին՝ երկարաքղանցք ու սևազգեստ մարդիկ՝ սարկավագներ ու արեղաներ: Դրանցից առաջինը՝ ընդարձակն ու մեծը Պապի վրանն էր, երկրորդը՝ Մուշեղինը, իսկ երրորդը՝ Ներսես կաթողիկոսինը:

Թե արքունական բանակում և թե նախարարական զնդերում յուրաքանչյուր զինվոր քնել էր իր զենքերը կողքին դրած, որ պահապահողերն հնչեցնելուն պես ոտքի ելնեն պատրաստ: Նրանց տեսքն ու գայթակղիչ քնաճայնը պահակների մեջ առաջ էին բերում մի այնպիսի նախանձ ասես թե վարակ, որ քիչ էր մնում իրենք էլ զենքերը ցած նետեն ու փուվեն գետին, բայց պարտքի գիտակցությունը զսպում էր նրանց և նրանք կանգնած տեղերում ննջում էին միայն, չկարողանալով հաղթահարել ու վանել իրենց քունը կամ երբեմն կարճ տարածության վրա քայլեր անելով՝ նայում էին հաճախ այն կողմը, որտեղից սպասվում էր Թշնամին. ոչինչ չտեսնելով սակայն լուսնի լուսով լցված դիշերի մեջ, բայց շատ բան պատկերացնելով այնտեղ՝ նորից էին նայում դեպի դաշտի հեռուն՝ տեսնելու կամ լսելու, թե Թշնամի չի՞ երևում արդյոք:

Սակայն կաթնագույն լույսի մեջ, որքան կտրում էր մարդու աչքը, ոչինչ չէր երևում, անգամ ոչինչ չէր լսվում, ոչինչ չէր

չարժվում: Միայն մի բան էր խանգարում գիշերվա անդորրը— Եղեգների մեջ ընկած խշշոցը, որ գալիս էր հեռվից՝ Արածանիի կողմից: Բայց այդ խշշոցն էլ երբեմն դադարում էր ու լսվում էր միայն վրաններում և նրանց առջև պահակների հանգիստ քնաձայնը: Երկինքն արդեն այնքան խաղաղ էր, աստղերն այնքան պայծառ ու ցոլուն, որ տարօրինակ էր թվում մի այդպիսի խաղաղ ու լույս գիշեր թշնամու, պատերազմի, արյունհեղության հնարավորությունը: Եվ գիշերը գնալով՝ ավելի էր խորացնում լռությունը և ավելի բորբոքում պահակների քնելու ցանկությունը:

Բայց առաջին հայացքից համատարած թվացող այդ քունն ու լռությունը երևութական էր: Եթե մեկն անցներ վրաններն մոտով և ականջ դներ՝ նա շատ տեղ կլսեր զուսպ ու զգույշ ձայներ, որ խոսակցում էին ամենատարբեր նյութերի վրա, բայց ավելի վաղվան ճակատամարտի մասին: Ոմքան էլ հոգնած, բայց մտքերը, մանավանդ վաղվան կռվին վերաբերող մտքերը ոմանց չէին թողնում քնել: Կային մարդիկ էլ, որ բաց աչքով մութի մեջ մտորում էին միայն:

Այդպես, օրինակ, արթուն՝ անհանգիստ մտքերի մեջ էր երիտասարդ Գնել Անձևացին: Նրա անմիջական զորավար Համասարական իշխանն իր հեծելազորով և որդիներով, սպարապետի կարգադրությամբ, գնացել էր կարևոր մի հանձնարարություն կատարելու և իր զորքի մի մասը՝ հետևակին իր զորապետներով թողել էր սպարապետի տրամադրության ներքո: Դրանց հետ մնացել էր և Գնել Անձևացին, որ հիմա մտածում էր, թե ինչպես պիտի կռվեն առանց իշխանի՝ Թաղավորի ու սպարապետի աչքի առաջ: Նրան թվում էր՝ ինչ էլ անեն— Թաղավորն ու սպարապետը պիտի տեսնեն, և արդյոք կհավանե՞ն իրենց արածը, թե՞... Ու մտածում էր՝ եթե սխալ մի բան աներ ինքը— իշխանը կարող էր հասկանալ ու ներել, բայց ի՞նչ կասեր սպարապետը, ի՞նչ կասեր Թաղավորը... մանավանդ Թաղավորը... Հանկարծ նկատողություն անեն կամ հանդիմանեն զինվորների առաջ, զորքի առաջ:

Գնելը գիտեր, նրան ասել էին Թաղավորի խոսքերը, որ գոյել էր իրեն Նախջևանի ճակատամարտում ցույց տված խի-

պախուրյան համար: Եվ հիմա մտածում էր, որ եթե մի բանով աչքի չընկնի, գոնե չխայտառակվի:

«Ախ, այնպես լիներ՝ սխալ չանեի» մտածում էր նա և, պինվորների քնաճայնը լսելով՝ նախանձում էր նրանց, որ չեն մտածում ֆիզիկա մասին, չեն անհանգստանում իր նման:

«Տեր, դու օգնիր» հառաչեց նա:

— Գնե՞լ: Արթո՞ւն ես,— հարցրեց վրանում պառկած հարյուրապետներից մեկը:

— Այո, տեր սեպուհ,— ասաց Գնելը, ձայնից ճանաչելով խոսողին:

— Ինչո՞ւ: Վաղվան ճակատամարտի՞ց ես վախենում:

— Այդ ի՞նչից ենթադրեցիր,— զարմացավ Գնելը:

— Տնքում ես, հառաչում:

— Սխալվում ես, սեպուհ տեր,... ինձ ուրիշ մտքեր են զբաղեցնում:

— Ի՞նչ մտքեր:

— Մտքեր զանազան:

Գնելն զգաց, որ հարյուրապետը ժպտաց մութի մեջ:

— Երկյուղն ավելորդ է, Գնել սիրելի,—չարունակեց հարյուրապետը:— Մի օր պիտի մեռնենք՝ այս պատերազմում չէ, մի այլ պատերազմում: Շատ մտածես՝ հիվել չես կարող: Ամեհամարհիր մահը և մի մտածիր: Այդպես ավելի հանդիստ կլինես:

Գնելը չգիտեր ինչպես հասկացնի, որ ինքը մահվան մասին չէ մտածում: Բայց, զգում էր, եթե անկեղծ ասեր իր մտածմունքը, հարյուրապետը պիտի ծիծաղեր, ուստի և լռեց:

Մի այլ վրանում մի քանի նախարար հավաքված խոսակցում էին հանդարտ.

— Տեր Գնթունի, լուրջ հավատո՞ւմ ես, որ հռոմեներն օգնեն մեզ,—հարցնում էր վանանդա իշխանն Սեթը դեմը նստած Գնթունի Արշամ նախարարին, որի լուսավորված ճերմակ գլուխը թվում էր մարմար արձանի մաս:

— Օգնե՛լ... Թերևս,— ասում էր ծեր Գնթունին դանդաղ արտաբերելով բառերը և հերթով նայելով վրանում նստած նախարարներին:— Օտարի օգնության հույսը նման է ամպի. կարող է անձրև տալ և չտալ: Նրանք գուցե օգնեն այնպես, որ

մենք գնանք առաջ, իսկ նրանք հետևեն մեզ... Բայց ես այնպես եմ կարծում, որ մենք պետք է ապավինենք մեզ... միայն մեզ...

— Սակայն պարտիկը չատ է, մենք սակավ. կարո՞ղ ենք մենակ,— մրմնջաց վաթսունոցյաց տեր Զարեհը՝ մի եռանդուռ երիտասարդ, որ ուզում էր ոչ այնքան առարկել, որքան ծեր, հեղինակավոր նախարարի խոսքերով ամրապնդել իր հույսերը:— կարո՞ղ ենք, տեր Գնթունի:

— Հույս առաված,— նորից դանդաղ պատասխանեց ծերունին:— Դիմագրավում են ոչ միայն զենքով ու զորքով, այլ և իմաստությամբ: Սպարապետի նախաձեռնած միջոցները երթե հաջողվեն...— Նա լռեց և նայեց վրանից դուրս:— Բայց ճակատամարտն, անշուշտ կլինի օրհասական,— ասավ նա թավական լռելուց հետո, մարգարեական մի եղանակով ու մի աչնպիսի խուլ ձայնով, որ այնուհետև ամեն խոսք թվում էր ավելորդ:

Համարյա նույնպիսի մտքեր էին զբաղեցնում Գագիկ ու սրբազյաղկիր Երեմիային, որ երկուսով մենակ էին արքունական վրանում, որին հսկում էին ավելի մեծ թվով պահակներ, քան որևէ այլ վրանի:

— Երեմիա, ինձ այնպես է թվում, թե վաղը վճռվելու է հայոց աշխարհի բախտը,— ասում էր Գագը:— Կա՛մ ապրենք պիտի, կամ մեռնենք...

— Կապրենք,— ասավ Երեմիան հանգիստ:— Առաջին անգամը չէ, Գագ, որ հայոց աշխարհը երնում է կռվի: Երթե երնում է, ուրեմն և ունի ապրելու կամք: Կռվով է ապրում աշխարհում ամեն արարած: Երթե մարմինը զաղարում է դիմադրել ցավին՝ նա մեռնում է... Ո՛վ կռվում է, Գագ, նա չի մեռնում:

— Դու իրավացի ես, Երեմիա. կռվով է ապրում ամեն արարած,— կրկնեց Գագը մտախոհ:— Սակայն այս պիշերն այնպես երկար է թվում ինձ... Ես կուզեի լուսանալը շուտ և...

Գագը բառնցքը խփեց ծնկանն ու լռեց մտախոհ:

Բայց այդ պիշեր բոլոր վրաններից ավելի աչքի էր ընկնում մի վրան, որի առջև կապված էր մի ճերմակ ձի, իսկ ներսը վառվում էր յուղի մի ճրագ, որի ցոլքերն անդրադարձնում էին բարձր դրված մի կրծքազրահ, ցցունաղարդ մի սաղավարտ և պողպատածայր մի նիզակ, որ հենած էր առջևիններին. սպա

այդ ճրագը լուսավորում էր եռոտանու վրա նստած մի մոտ-հոգ դեմք, որ եղերված էր դանդրամազ թուխ մորուսով և որի խոր ու խոհուն աչքերը հաճախ դառնում էին դեպի վրանի մուտքը, բայց այնտեղ ոչինչ չտեսնելով՝ նորից ընդունում էին մտորուն, սպասողական արտահայտություն:

Դա հայոց զորքերի սպարապետ Մուշեղ Մամիկոնյանն էր: Նա նույնպես խորհում էր վաղվա ճակատամարտի մասին, սակայն նրա մտքերը նման չէին մյուսների մտածումներին: Նա ստույգ տեղեկություններ էր առել, որ պարսիկները դալիս են մեծ բանակով, փղերի մեծ վաշտերով, և որ նրանք դտնվում են դաշտի արևելյան կողմը եղերող բլուրների մոտ ու կարող է պատահել գիշերն առաջանան: Դեռ երեկ, իմանալով պարսիկների տեղը և կռահելով նրանց մտադրությունը, թև ուղարկեց Ձգտում, նա իշխան Կամսարականին և Բագրատունի Սմբատ սպասին պատվիրեց, որ իրենց հեծելազորով գնան դուդահեր ուղղությամբ դաշտը շրջապատող լեռների ետևից և բռնեն պարսից բանակի աջ ու ձախ թևերը, աշխատելով, եթե հնար է, անցնել նրանց թիկունքը և, իրար միանալով, օղակել թշնամուն: Սպարապետն իր այդ կարգադրությունը Կամսարականին արտալ անձամբ, իսկ դրանիկ գնդի հրամանատար Բաթ Սահառունուն՝ թիկնապահների մի խմբով ուղարկեց Սմբատ սպասի մոտ, որ գալու էր Վասպուրականից:

Կես գիշերից անց էր արդեն. նրա չուրջը ամենքը քնել էին, անգամ պահակներից ոմանք ննջում էինք նիզակներին հենած. բայց նա քնել չէր կարող, և դա ոչ թե նրա համար, որ զգում էր, թե ամբողջի համար պատասխանատու է լինքը, ոչ էլ այն պատճառով, թե գնդերի հրամանատարները ամեն վայրկյան կարող էին գալ մոտը՝ ասլ կամ այն կարգադրությունը խնդրելու, ասլ այն պատճառով, որ սովոր չէր քնել ճակատամարտից առաջ. իսկ նա համոզված էր, որ վաղը ճակատամարտ է լինելու, հետևաբար պետք էր շատ բան կշռադատել, շատ հնարամտություն ու հավանականություն քննել: Եվ այդ բանը նա սովոր էր անել մենակ, առանձնության մեջ. դրա համար էլ նա թիկնապահներին արձակել էր քնելու, նույնպես կարգադրել էր բոլոր հրամանատարներին՝ հանգիստ առնել և լուսաբացին պատ-

բաստ լինել ճակատամարտի, իսկ ինքը մենակ մնալով՝ այժմ խորհում էր վաղվան անելիքը:

Սակայն մի ուժամ այդպես անշարժ խորհելուց հետո՝ նա հանկարծ ոտքի ելավ և դուրս եկավ վրանից: Հազիվ էր ոտքը դուրս դրել՝ մի զինված կերպարանք ելավ նրա առաջ:

— Տեր իմ,— ասավ կերպարանքը մոտենալով:

— Հրահա՞ս: Ինչո՞ւ քնած չես,— հարցրեց սպարապետը:

— Դուրս եկա ձիերին նայելու, տեր:

— Իսկ ձիապաննե՞րը:

— Նրանք քնած են:

— Դնա հանդիստ առ և դու,— ասավ սպարապետն առաջ գնալով:

Հրահասը ճիշտ չէր ասում, թե դուրս է եկել ձիերին նայելու. նա պարզապես չէր կարողանում քնել, որովհետև լուսնյակ գիշերը նրան նորից հիշեցրել էր իր Նազենուն: Նա, որ հույս ուներ, թե նախկինանով պատերազմը պիտի վերջանար և ինքը կկրթար նրան որոնելու կամ նա մոր հետ կդառնար Դվին, բայց դղում էր, որ պարսիկները նորից խանգարեցին ամեն ինչ և իր հույսերը, Նազենուն տեսնելու հույսերը՝ կարող են ընդմիշտ կորչել: Եվ նրա սիրտը հիմա լիքն էր մի տխրությամբ ու դառնությամբ, որ ոչ մխայն թույլ չէին տալիս նրան քնել, այլև նստել միակ վրանում. ու նա այդ ամենի հետ՝ մի տեսլություն, մի խոր տեսլություն էր դղում դեպի պարսիկները, դեպի Մելուժանը, որ անջատեցին իրեն իր սիրածից և պատճառ դարձան նրա անհայտության: «Ո՞ւր պիտի լիներ արդյոք, տեր աստված,— մտածում էր նա Նազենու մասին, ու որքան էլ մխքը տանջում էր՝ չէր կարողանում հավանական մի տեղ երևակայել նրան. ուստի և միաժամանակ խորհում էր, որ ամեն պատահարի հետ կարող էր հաշտվել՝ միայն թե նա ողջ լիներ և պարսիկները գերի տարած չլինեին: Թող ողջ լիներ, թեկուզ ինքը զրկվեր նրանից, բայց գերի չլիներ, պարսիկի ձեռ չընկներ... Նախ Նազենին պիտի տանջվեր, մտածում էր նա, երկրորդ՝ մեծ անպատվություն ու ցավ կլիներ իր համար, անբուժելի մի ցավ:

«Ինչ կուզի լինի, ուր կուզն գնացած լինի, թեկուզ և սոսնանացած, միայն թե գերի չլինի» մտածում էր և հառաչե-

լով տնքում հիվանդի պես, հիշելով իր տեսակցությունները նրա հետ լուսնյակ գիշերներին՝ Դվինում, երանց այգում, ծեր փշատենու հովանու ներքո:

Հիշում էր այն երանավետ իրիկնային պահերը Նազենու հետ՝ երանց այգում, ուր այնքան սովերներ կային, անդորը և զգլխիչ բուրմունքներ: Երբ Նազենին եղնիկի պես թեթևաքայլ գալիս էր դեպի մթամած փշատենին՝ նրա սև աչքերը մութի մեջ կարծես ցոլում, բոցկլտում էին աստղերի պես, իսկ երբ գալիս փարվում էր իրեն՝ գուդդ հյուսքերը՝ գուդդ ճապուկ ու տամուկ օձերի նման գալարվում էին նրա ճկուն թիկունքին, և Հրահատն զգում էր մի բուրմունք, արբեցնող մի բուրմունք, որ չէր կարող տալ փշատենուց. է այդ, նրա մազերից թե շրթներից՝ այնքան արբեցնող ու հոգեպարար էր այդ բուրմունքը: Ապա հիշում էր, թե ինչպես Նազենու փոքրիկ ձեռները, բռնված թռչնակների պես գողում էին իր կոշտ ձեռների մեջ, և նա հևում էր ու տաք շունչը դիպչում էր մերթ իր ականջին, մերթ երեսին...

Որքան էլ սակայն Հրահատը ատրվում էր հուշերով, չուտով սակայն մի հազ, մի ոռնաձայն, ձիու մի վնչոց սթափեցնում էր նրան ինքնամոռաց իր վիճակից և հիշեցնում, որ գտնվում է ռազմի դաշտում, բանակում, սպարապետի մոտ. և նա տխրում, մոայլվում էր խիստ ու հառաչում. «Պիղծ մոխրապաշտներ» ասում էր նա պարսիկների հասցեին, մտածելով, որ եթե Նախշևանից հետո նրանք չգային այս կողմ—Նազենին հիմա վերադարձած կլիներ մոր հետ. իսկ եթե վերադարձած չլիներ՝ ինքը կերթար նրան փնտռելու և արդեն գուցե գտած լիներ, եթե մխայ... եթե մխայ զերի չէ... Այժմ սակայն նրան թվում էր, որ Նազենին ու մայրը, եթե վերադառնալու ցանկություն անգամ ունենային՝ պարսից այս նոր ներխուժման լուրն առնելով՝ այլևս չեն գառնա Դվին. կվախենան և չեն դառնա... Իսկ եթե ճակատամարտն այս վերջանա հաղթությամբ՝ այն ժամ էլ գուցե ուշ լինի վերադառնալու համար. ճյունը կփակի լեռնային ճանապարհները և նրանք չեն կարող լեռնազավառներից իջնել Դվին:

«Իսկ եթե հաղթություն չլինի՞... եթե չլինի՞»,—պլուկս էր բարձրացնում կասկածը նրա սրտում, և նա մոտածում

էր, որ եթե հաղթություն չլինի՝ այն ժամ ոչ մեկն նրանք չեն դառնա... այնժամ... ինքն էլ չի դառնա Դվին...

«Տեր, տո՛ւր մեզ հաղթություն, տո՛ւր մեզ հաղթություն, որ ողջանդամ դառնամ Դվին և դառնամ Նազենուն» ասում էր նա և մտածում, որ հայ զորքը եթե Դարանդաղից մինչև Նախջևան կարողացավ հաղթական լինել և վանել պարսիկներին՝ մի՞թե այս անգամ պիտի պարտվի և ամեն ինչ նորից պիտի կորչի, ոչնչանա՞...

Այս մտքերի մեջ էր Հրահատը, երբ հանկարծ սպարապետը դուրս եկավ վրանից: Նա մի վայրկյան անհամբեր զղաց, որ մոռացել էր նրան և տարվել հուշերով: Բայց սթափվելով և սպարապետի կարգադրությամբ դեպի վրանը գնալով՝ նա նորից անձնատուր եղավ իր մտքերին.

«Ախ, միայն թե զերբ չլինի, միայն թե զերբ չլինի» ասավ նա մտքում, մոռնալով վրանի այն թևակը, ուր քնած էին սպարապետի մյուս թիկնապահները: Ինչ մեջ ամենից բարձր մըջմշում էր իր ընկեր Աստոմը՝ նախանձելի մի հանգստությամբ ու անհոգությամբ:

Ընկերոջ անհոգությանը նախանձելով՝ ինքն էլ մեկնվեց իր թաղիքի վրա և, ձեռը դլխի տակ դնելով, սկսեց երազել:

Իսկ սպարապետը մինչ այդ առաջ գնալով՝ նայեց առջևը փռված վրաններին, որ անվերջ շարքերով տարածվում էին ամեն կողմ, ու թվում էր բոլորը քնած են խաղաղ, լուռն ու փոփուկ լույսերի տակ:

«Հուսալքյացը հեռու է տակավին» մտածեց նա երկնքին նայելով և սպա սկսեց հանդարտ դառնալ վրանի առջև: Նա զբաղարաց էր, իսկ ուսերին ջոկել էր այն տավտակեան կարճ թիկնոցը, որ միշտ կրում էր արշավանքների գնալիս. քայլելիս թիկնոցի քղանցները ետ էին գնում և երևան հանում նրա կարճ թուրը, որ կախված էր ազդրի վրա: Նա քայլում էր և երբեմն հանգչում ու նայում վրաններին կամ ամբողջ դիմը, դաշտն հեռուն, ուր թշնամին էր: Մինչ այս՝ նա մի երկու անգամ էլ դուրս էր եկել վրանից, նայել հեռուն, երկնքին, ականջ դրել Արածանիի ջրերին և առհասարակ ձայներին, բայց եղնդների խշշոցից, ձիերի փնչոցից և պահակների քայլափոխից զատ՝ չէր լսել ոչինչ: Թեև նա պահակախմբեր էր կարգել դեռ երեկո-

րութեամբ, որ ամեն ինչ ժամանակին կարող էին իմացնել իրենց, բայց անձամբ ուզում էր տեսնել ինչ–որ, տեսնել Թշնամու շարժում չի՞ նկատվում արդյոք... Ու թեև ոչինչ չէր երևում, բայց նա գիտեր, բոլոր նշաններից զգում–տեսնում էր, որ ճակատամարտն անխուսափելի է վաղը և մտածում էր ափսոս, թե արդյոք պիտի կարողանա՞ն իր զորքերը դիմադրավել այդ ահից ամեհի բանակին, որ ուներ անթիվ հետևակը, զրահապատ թվով այրուձի և փղեր, մարտական փղերի ահավոր վաշտեր... Սալարապետը գիտեր, որ պարսիկներին օգնում են նաև Լեհաց Շնորհիր և աղվանից Ուռնայր թագավորները իրենց հեծյալ զնդե–ղով... Եվ նա մտահոգ մտածում էր, թե արդյոք պիտի կարո–ղանա՞ իր բանակը դիմադրավել այդ ամենին, թե պիտի նա–հանջի ու...

Նա չէր ուզում մտածել ավելին. բայց նրան դիմադրավելու հույս էր տալիս այն հանգամանքը, որ իր երկու զորավարը՝ իշխան Կամսարականն ու Բագրատունի Սմբատ սպասը իրենց գնդերով հանկարծակի պիտի զարկեն Թշնամու թևերից, դուցե և թիկունքից, եթե հարկավ հաջողությամբ կատարեն իր հանձ–նարարությունը: Մյուս կողմից նրան հույս էր ներշնչում այն, որ հայերին օգնելու համար Կարինից եկել էր բյուզանդական մի վհատանակիր գունդ, որ բանակել էր հայ բանակատեղից հեռու գետափին, որ առավոտը գար միանար հայերին: Սակայն Մուշեղն ուզում էր, որ հայոց գնդերն իրենք տանեն հաղթու–թյունը և պարսկական չմնան հոռոմներին, և դրա համար նա մտածում էր շատ բան, որ պիտի գործադրեր, երբ իմանար Թշնամու գնալիք ուղղությունը... Այդ միջոցներից մի երկուսը նա արդեն գործադրել էր, իսկ մյուսները, նայած հանգամանք–ներին, պիտի կիրառեր ճակատամարտի պահին: Կարևոր միջոցներից մեկն այն էր, որ իր երկու նշանավոր զորավարին ուղարկել էր լայն շրջանցումով, լեռների ետևից գնալ–գալ Թշնամու աջ և ձախ թևերը, իսկ երկրորդը—մի հարյուր երի–տասարդ ուղարկել էր... փղերի դեմ...

Ու հիմա Իր վրանի առջև անցուդարձ անելով՝ Մուշեղը մերթ մտածում էր կամսարականի ու Սմբատ սպասի մասին, մերթ փղերի վրա ուղարկված երիտասարդների վրա, թե ժա–մանակին տեղ կհասանե՞ն արդյոք և կկարողանա՞ն կատարել իրենց

հանճնաժողովը, մանավանդ երկաթագործները, որոնց վիճակն ավելի վտանգավոր կարող էր լինել, որքան արած գործը օգտակար... Հիշտ չէր մոռնալ պարսից փղերի վաշտերին և կատարել այն, ինչ անհրաժեշտ էր... Սակայն դա մի անճնաղոհություն էր, որ կարող էր վրկել շատ բան... Բայց կհաջողե՞ր արդյոք— այն էր խնդիրը...

Պարսից մարտական փղերը... Սպարապետը վորճով գիտեր, որ հայ զինվորներին ամեն բանից ավելի ահ էին ազդում այդ փղերը. թշնամին նույնպես դիտեր այդ, և երբ մի փոքր նեղն էր ընկնում՝ փղերի վաշտերը թողնում էր հայերի վրա, երբ տեղն ի հարկե դաշտ էր լինում, ու երբ փղերը մոռնում էին հակառակորդ բանակին կամ մտնում իրար մեջ՝ մի կողմից փղերն իրենք էին ոտորում, մյուս կողմից՝ նրանց մեջքին ամրացրած արկղանման ամրոցիկում գտնվող նետաձիգները, իրենք դրահներով պաշտպանված, նետերի տարափ էին թափում ոչ ու ձախ: Եվ որպեսզի մարտական այդ փղերին դարձնեն ավելի ահարկու՝ պարսիկները նրանց գլխին՝ ճակատներից վեր ամրացնում էին երկար ցցուններ՝ վեհասրներից կամ այլ բանից պատրաստած: Ամենից կատաղին սակայն հնդկական փղերն էին, որոնք կռվի մեջ մտնում էին կուշտ տարերքի պես. իրենց ճանապարհի վրա ոտնատակ էին տալիս ամեն ինչ ու ոտորում ամեն բան. և որպեսզի դրանք լինեն ավելի կատաղի՝ պարսիկները հարբեցնում էին դրանց գինով, որին խառնում էին պղպեղ և այլ դրդռիչ նյութեր: Հարբելով՝ հրեշավոր կենդանիները իրոք կատաղում էին, և օճմանան կենթիները վիր բարձրացրած, մատա վարդագույն բերանները լայն բացած, ատրճինակ մռլտոցներ արձակելով վազում էին, ոչ թե վազում, այլ սարից պոկված ժայռի նման առաջ էին նետվում. իրենց ծանր մարմիններն ամբողջ թափով և ընկնում թշնամի բանակի վրա: Ավելի մեծ ավերածություն ուշ ջարդ պատճառելու համար՝ պարսիկները սրում էին նրանց ժանիքները կամ դրանց վրա անց էին կացնում երկաթե սուր ծայրակալներ, որով նրանք անպայման պատատոտում էին հանդիպող մարդուն ու ձիուն, իսկ կենդանին արդեն տեսնում էր իր գործը.— ձիավորին կամ հետևակ զինվորին վերցնում էին ու տալիս գետնով:

Եվ այդ էր պատճառը, որ ոչ միայն զինվորները, ձիերն էլ

սարսափում էին այդ ահավոր կենդանիներից: Երբ նրանց բլրաչափ մարմինները՝ վազքից թաղ առած գալիս էին ղորքի վրա—զինվորներն զգում էին, որ փրկություն չկա, խակ ձիերի մարմնով սարսուռ էր անցնում. նրանք ինչացնում էին դեռինը դուվելով ու փորձ անում կամ փախչել կամ, չդիտես ինչու, առաջ վազել... Առաջանում էր մեծ խուճապ: Պատահում էր սմբողջ գունդը, ենթարկվելով ահաբեկման, փախչում էին դեպի բլուրները, եթե դրանք մոտ էին լինում... խակ եթե բլուրներ չէին լինում՝ փղերը հետևում էին նրանց և, հասնելով, հարվածում կնճիթներով ջոկ, ժանիքներով ջոկ, խակ հաճախ պարզապես ոտնատակ տալով՝ տրորում էին... Եթե պատահում էր իրենց պաշտպանող զինվորները նիզակով կամ սվինով վիրավորում էին գազաններին— սրանք դրանից ավելի էին գազազում, մանավանդ եթե հարբած էին լինում: Այդ ժամանակ նրանց կանգնեցնելու համար հարկ էր լինում գնալ նրանց դեմ տեղերով կամ պարտեռներով:

Ահա ինչու Մուշեղ սպարապետը ճակատամարտից առաջ, հենց երեկ՝ կարևոր համարեց հարյուրի չափ երիտասարդներ ուղարկել փղերի դեմ, մտածելով՝ թերևս կարողանան մեղմել փղերի վտանգը: Երբ նա թիկնապահներով շրջապատված՝ իր ճերմակ ձիու վրա մոտեցավ հավաքված զորքին և փղերի ավերածությունը հիշեցնելով, խոսեց նրանց վտանգը կանխելու մասին, թե հարկավոր են խիզախներ, որ անցնեն թշնամու թիկունքը, այնտեղ, ուր այդ գազաններն են լինում և նրանց դարձնեն անվնաս, որ նրանք չկարողանան առաջ շարժվել և վնաս պատճառել, շարքերից մի ձայն հարցրեց.— «Քանի՞ հոգի է պետք, սպարապետ»...— «Մի հարյուրյակ բավական է»... Զորքի մեջ մի տարօրինակ իրարանցում ընկավ. Մուշեղին թվում, եթե իր առաջարկը դժգոհություն առաջացրեց.— հեչ պետք չէր հարկավ թշնամու թիկունքն անցնել և փղերի հետ գործ ունենալ... բայց սպարապետի տպավորությունը սխալ էր. մարդիկ իրար հրհրում էին առաջ անցնելու...

Լինում են ժամանակներ, երբ մարդիկ պատրաստ են մեռնել, քան ապրել անպատիվ, կամ վրեժի զգացմունքն այնպես է տրում նրանց, որ արհամարհում են ամեն ինչ, անգամ իրենց կյանքը: Զորքի մեջ չկար մի մարդ, որ ատելություն չլիներ պար-

սիկներից և զոհ տված չլինեք մի հարստատ, ու ամենքին հասկացել էր մի զգացում, թե մահով պիտի ազատեն երկիրը և իրենն անացած հարազատներին... Այդ էր պատճառը, որ կարճ ժամանակում տարբեր խմբերից առաջ եկան ոչ թե հարյուր, այլ երկու հարյուրից ավելի երիտասարդներ, խնդրելով՝ իրենց ուղարկել այդ գործի համար: Այդ երիտասարդների մեջ էր նաև Գալունի անունով մի ղինվալառ երիտասարդ, ավելի շուտ մի պատանի, որդին հայտնի կարճեն Գալունի նախարարի, որ սպանվել էր Արտաշեսյան անկման ժամանակ: Նա ևս խնդրեց, որ իրեն նույնպես ուղարկեն փղերի-դեմ: Ոչքան էլ առարկեցին, թե նա փոքր է, բայց պատանին լսել անգամ չուզեց և պնդեց իրենը:

— Ես ոչ միայն ցանկանում, այլ խնդրում եմ, սպարապետ:

— Դու տակավին փոքր ես,— ասավ Մուշեղը,— քո ժամանակը չէ, երիտասարդ, չափվելու փղերի հետ:

— Տարիքը չէ որոշում հերոսությունը, սպարապետ: Ես իմ մեջ զգում եմ այնքան ուժ և առնություն, որ կարող եմ...

Ու այնպես պնդեց, որ նրան էլ տվին համապատասխան զրահ ու դանակ և ճամբեցին մյուսների հետ: Հրաժեշտը արտասուալի եղավ. շատերը զինացողների հետ համբուրվում էին այնպես, կարծես վերջին անգամն էին տեսնվում: Եվ իրոք այդ գործը ոչ միայն խիզախություն էր պահանջում, այլև պարզ անձնազոհություն. փղից ազատվողը կարող էր ընկնել պարսից զինվորների ձեռը: Դրա համար նրանց նայում էին իբրև նահատակների... իսկ սպարապետը չկարողանալով արցունքները զսպել, հրաժեշտին ասավ միայն.

— Բարի ճանապարհ, զավակներս: Հայրենիքը չի մոռանա ձեր զոհաբերությունը:

— Մենք պատրաստ ենք մեռնել, սպարապետ, միայն թե օգնած լինենք հայրենիքին,— խոսեց երիտասարդ Գալունին, և նրա ձայնն սպարապետի ականջում ղողանջեց երիտասարդական ողջ ավյունով. ու այդ ձայնից զգացված՝ սպարապետը հուզումից չկարողացավ խոսել և, Գալունուն գրկելով, համբուրեց նրա ճակատը:

— Հանձին այս պատանու՝ համբուրում եմ բոլորիդ,— ասավ նա ու խաչակնքեց նրանց, հաջողություն մաղթելով:

Հիշելով վիրերի դեմ դնացած երիտասարդներին և առանձնապես պատանի Պալունուն՝ սպարապետը մի ջերմ զորով էր ցդում դնալ նրանց և մտածում, որ անճնաղոհության այդ ոգին կա, անշուշտ, ամբողջ բանակի մեջ, և այդ ոգին, երևի, շատ բան կարող է անել: Դրա հետ միաժամանակ սպարապետը անցուդարձ անելով հաճախ նայում էր դարձյալ դեպ արևելք, նայում էր լուսնին և մտածում... Դեռ երեկ, հետախույզների բերած լուրերի հիման վրա, սպարապետը, Կամսարականի և Սմբատ Բագրատունու դնդերն ուղարկելուց հետո, այն կարծիքը կազմեց, թե այլևս չպետք է առաջ դնալ, այլ, ընդհակառակը, պետք է բանակ դնել Արածանու այս կողմը և սպասել թշնամուն: Դրա առավելությունը նա համարում էր այն, ինչպես և Պապկեն բացատրեց, որ եթե պարսիկները դան դնան անցնեն՝ իրենք նոր միայն կհարձակվեն ու մի մասին կխեղդեն դետում, մյուս մասին կշրջապատեն ու կգերեն: Նա նույնիսկ դտնում էր որ եթե անգամ թշնամին չուզի անցնել դետի այս կողմը, պետք էր մի կողմից հարձակվել՝ դետն անցնել, և երբ պարսիկները նույնպես կսկսեին իրենց հարձակումը, պետք էր վախուստ կևլճել և թշնամուն դրավել դետի այս կողմը, որ Կամսարական Իշխանն ու Բագրատունի Սմբատը կարողանան ավելի աղատ ու տնաբրել անցնել թշնամու թիկունքը: Այս ծրագրին համաձայն Նրան զորավարներից չատերը: Պապը նույնպես հավանություն տվավ այդ նախագծին, սակայն կասկած հայտնեց, թե արդյոք բոլորն այնպես կլինի, ինչպես ծրագրում են իշխանները. չի՞ կարող պատահել արդյոք, որ պարսիկները անցնեն մեր թիկունքը կամ կտրեն թեևանց կատարող մեր դնդերը:

— Ոչ, արքա,— նկատեց սպարապետը համոզված,—մենք դրանց առաջացումը կիմանանք անմիջապես. պահակներ են կարգված բոլոր անցքերի և հնարավոր ճանապարհների վրա: Բացի այդ՝ մեր զորավարները ավելի լավ գիտեն մեր երկիրը:

— Մի մոռանա սակայն, սպարապետ, որ Մերուժան անիծյալը նույնպես գիտի մեր երկիրը,— ասավ Պապը:— Դու, անշուշտ, լինելիք լավ գիտես ռազմի գործը, սպարապետ, բայց զուրկ ղիր զգուշությունդ ամբողջ:

Մուշեղը խոստացավ: Եվ հիմա հիշելով օրվա դեպքերը՝ նա չարունակ անհանգստանում էր, թե ե՛րբ պիտի լուսանա:

Սակայն լույսը տակավին թվում էր հեռու: Լիալուսինը դեռ երկինքում, աստղերի մեջ, բայց իր շուրջն ու ճանապարհին աստղերը գունաթափում ու նսեմացնելով՝ հանդարտ գնում-թեքվում էր դեպի արևմուտք և շարունակում կամթնադույն առատ լույս սփռել թե անծայր դաշտի, թե լեռների և թե հայոց վրաններվրա:

Ջանգյալ, վերջապես, մի ժամ՝ նա աննկուն թացավ լեռների նոճ, կաթնես սուրվից ինչ-որ անդունդ, որից խակուլն մութ ամպերը բարձրացան ու վխվխցին ամբողջ դաշտի վրա, խակ քիչ հետո խավարը, հանկարծահաս մի խավար տարածվեց ամեն կողմ ու աքաղից ամեն ինչ: Ջէլին երևում այլևս ոչ լեռները, ոչ վրանները, ոչ ղրահոսվոր պահակները: լսվում էր միայն եղեգների խշշոցը և դարձյալ ձիերի երբեմնակի ինչոցները բակում:

Այնուհետև որքան ժամանակ անցավ—դժվար է ասել—հանկարծ բանակում լսվեց սարսռելնակ մի երգեցողություն, որ թվում էր պակաս է մութի խորքից· սպարապետը, մտքերով տարված, առանձնապես չանդրադարձավ դրան, բայց պահակներից ու զինվորներից շատերը լսեցին այն ու՝ ականջ դրին յարված: Երգը մնում ծորում ու հետզհետե ծավալվում էր մութի մեջ և չվիտես որտեղից էր գալիս— երկնքից էր իջնում, գետնից էր բարձրանում, թե եղեգնուտն էին շշուկ...Բայց այդ երգը ծանոթ էր թվում, և օդը կարծես լցվում էր նրանով, որ հնչում էր ամեն կողմ, հանդարտ ու մխրճնակ... Ինչ-որ մի տխուր մելամաղձոտ ու անդրաշխարհային, թե պերճկրային մի բան կար այդ երգի մեջ, որ հնչում էր ա՛յնքան մոտ... Արթնացած զինվորները լսում էին ուշադիր, և երգը դնալով ծավալվում էր ու գառնում ակրական, և քանի գնում՝ հնչում էր ավելի խորհրդավոր ու գարմանալի... և այդ պատճառով արթնացած զինվորները շատ զարթեցնում էին քնած ընկերներին, կամ, մի պահ ականջ գնելով, դուրս էին գալիս վրաններից և խումբ-խումբ գնում դեպի երգը, տեսնելու ա՛վքեր են երգում այդ:

Այսպես արթնանալով ու ամեն կողմից դեպի երգը գնալով՝ զինվորները, վերջապես, տեսան վրաններից քիչ հեռու, դաշտի մեջ, սևահանդերձ մարդկանց մի մեծ խումբ, որ կարծես գիշերային ուրուներ թե տեսիլներ, մի մեծ շրջան բոլորած՝ երգում

էին երեսները դեպի արևելք և երբեմն ծնրադրում հանդիսատես դեռնամած ու սրտազեղ ողջույններ էին հղում աղավոտյան լուսաստղին, որ բոլոր աստղերից մեծ և պայծառ շառավիղներով փողփողում էր արևելքում:

Դրանք հայոց բանակի հետ եկած հայ եկեղեցականներն էին՝ եպիսկոպոսները, վարդապետներն ու սարկավագները, որ Ներսես կաթողիկոսի գլխավորությամբ ազոթում էին, որ երկինքը հաղթություն շնորհի հայոց բանակին, նրա զորավարներին ու թագավորին՝ անօրեններն վրա...

Կարճ մի ջոցում այնքան ղինվոր հավաքվեց նրանց չուրջը, որ հոգևորականները այլևս չէին երևում և ուշ եկող ղինվորներն արդեն ստիպված էին բարձրանալ ոտի ծայրերի վրա կամ ճեղքել շրջապատողների չղթան, որ մի քան տեսնեն:

Որքան տևեց այդ բացօթյա մաղթանքը՝ դժվար է ասել, բայց նա ավարտվելու վրա էր, երբ հայոց բանակատեղի հյուս կողմից դալարափողերը հնչեցին առավոտյան մթնշաղում, զարթնեցնելով տակավին քնած ղինվորներին, ու բոլոր վրաններում ու նրանց շուրջն սկսվեց արտակարգ, համատարած մի չարժում. մարդիկ ղրահներ էին հագնում, զենքեր կապում, սպասավոր դնում կամ ոտի վրա ուտում էին երեկոյից պատրաստած պաշարները, ոմանք թամբում էին ձիերը, ոմանք կարդի էին բերում իրենց զենքերը, այնպես որ ընդհանուր այդ եռուզեռի մի ջոցին աշնան կինչ օդը լցվեց խոսոցով, ղրնդոցով ու չխկոցով: Իսկ մինչ այդ լուսյակը թաղվեց դանդաղորեն, և Ներսեսը, մաղթանքը վերջացնելով, ձեռի ոսկի խաչով խաչակնքեց հավաքված ղինվորներին, իր բարձր հասակով ու ճերմակ միրուքով հանդարտ ու հանդիսավոր դառնալով սահեն կողմ, այդ ևս հանկարծ առավոտի կինչ օդի և հավաքված ղինվորների լռության մեջ լսվեց նրա ծեր ձայնը.

— Ողորմյա, տեր, ազգիս հայոց, ողորմյա և հաղթություն պարգևյա բանակին նրա, ապաթայեակին և զորավարաց մերոց:

Կաթողիկոսի խոսքերին անմիջապես ձայնակցեցին եպիսկոպոսներն ու վարդապետները խմբական երկարաձիգ ձայնով.

— Տեր ողորմյա՛... Տեր, ողորմյա՛... Ողորմյա՛...

Նրանց այդ ծորուն ու պաղատագին երգեցողությունը մերթ

բարձրանում էր ասես մինչև երկինք, մերթ լինում էր ծնրադիր աղոտասփռան աղերսանքի պես և գնում տարածվում հեռուները:

Իսկ երբ այդ աղերսաձայն երգը լռեց՝ Ներսեսը բարձրացրեց ձեռի ոսկե խաչը:

— Զավակներս, սուրբ այս խաչով,— ծերունի կաթողիկոսը բարձրացրեց խոշոր, հրաբորբ աչքերն ու ձեռի ոսկե խաչը, և լռությունը կարծես խորացավ ու ավելի անշշուկ դարձավ.— սուրբ այս խաչով դիմում եմ ձեզ. պաշտպանեցեք մեր հողը և հայրենիքը սուրբ, որ հողով և հայրենիքով ենք մենք կենդանի: Թշնամին՝ պարսիկը գալիս է երբև վազր անապատի— ելեք առյուծներ. սողում է երբև օձ՝ եղեք ջախջախող կրունկներ: Զթողնեք, որ նա պղծի ձեր հայրերի չխրխմները և ձեր հարկը սուրբ: Երդվեցեք, որ...

Ծերունի կաթողիկոսի խոսքի չարունակությունը խլացավ բարձր թնդացող կանչերի մեջ.

— «Երդվո՛ւմ ենք... ե՛նք»...

Մինչ կաթողիկոսը խոսում էր՝ առավոտը հետզհետե բացվում էր ավելի. ինչ-որ մանր թռչուններ ճկճկոցով չղխտես որտեղից ուր էին թռչում, երկինքը շառագունում էր ավելի ու ավելի, և ուշ մնացած աստղերն այդ լույսից կարծես հալվում էին մուգ կապույտի մեջ, ու առավոտի ջինջ օդում երևում էին պարսիկների կողմը գանվող լեռները, որ ասես քնաթաթախ բարձրացնում էին իրենց գլուխները մեկը մյուսի ետևից՝ տեսնելու ինչ է կատարվում գաշտում ու հեռուներում:

Եվ առավոտի լույսի տակ գաշտը գնալով ընդարձակվում էր. թվում էր լեռները ետ-ետ են գնում և հովիտը մեծանում է, վիհում, բանալով իր մերկությունն ու աչնան աղքատ բուսականությունը. տեղ-տեղ որոշ երևում էին թփուտներ, որ գույն մացառներ էին կամ վայրի խոտեր, ճահճային եղեգներ: Բայց դրանք չէին խանգարում գաշտի միապաղաղ հարթությունը, որ գնում-տարածվում էր դեպի լեռները և կամաց-կամաց ազատվում նրա ծածկող կաթնամառն չամանդազից: Բայց և այնպես պարսից զորքը դեռ չէր երևում:

Իսկ հայոց բանակը չարունակում էր հագնվել ու զինվել, և զինվորները, պատրաստվելով, չարունակ նայում էին դեպ

արևելք, ուր առավոտի պայծառ նշաններից բացի, երևում էր ծխանման մի բան, որ բարձրանում ու հալվում էր օդում: Դա պարսից բանակից բարձրացող ծուխ էր թե փոշի—դժվար էր որոշել, բայց հեռատես զինվորներն այնտեղ նկատում էին և վրաններ և մարդկային շարժում. նրանցից ոմանք ասում էին, թե տեսնում են նույնիսկ զարդարված փղեր:

Սպարապետի կարգադրությամբ՝ ուժեղ զրահավորված նետավորներն ու նիզակավոր այրուձիու մի մասը խմբվում էր կենտրոնում, որ գործելու էր իր սպարապետի ղեկավարությամբ: Իսկ աջ ու ձախ թևերում հավաքվում էին նույնպես թե այրուձի, թե աղեղնավոր ու նիզակավոր գնդեր՝ երիտասարդ ու տարիքավոր զորավարների, նախարարների գլխավորությամբ, որոնք նախապես տրված հրամանի համաձայն իրենց գնդերը տանում էին այնտեղ, ուր պետք է բռնեին: Գնում էին դասավորվում, վերադասավորվում կամ, շարքեր կազմած, առաջ շարժվում՝ դիրքեր բռնելու կամ գնում էին Արածանու եզերնուտներում պահվելու:

Այս պատրաստությունը հեռվից դիտում էին Պապը, Մուշեղը և Հունական բանակից նոր եկած Տերենտն իրենց թիկնապահներով, համհարներով, նաև Ներսես կաթողիկոսն իր եպիսկոպոսներով ու վարդապետներով շրջապատված:

Եվ այն վայրկյանին ահա, երբ սպարապետը պատրաստվում էր վերջին կարգադրությունն անելու, թե ո՛ր գունդը կամ վաշտը ո՛րտեղ բռնի, հայերը զիմացի, այնինքն արևելյան հորիզոնի վրա նկատեցին բարձրացող փոշու մի ամպ, որ սկզբում չատերին թվեց ծուխ և՛ մշուշ: Բայց հետատեսները ճանաչեցին, թե դա պարսից բանակն է շարժվում, նրա ճանապարհի փոշին է:

Եվ իրոք. հազար երկաց այդ բանակը, լինելու ամպակուտակ մի մռայլ ղանդված ձևով բարձրացող հեղեղ. մի մռայլ հորձանք. նախ երևաց այրուձին՝ անհամար ոտների ու դրոշներ շարժումով, ապա գունդագունդ հետևակը և ամենից վերջը՝ փղերի վաշտերը, որ չնայած հետևակի հետևն էին, բայց ավելի լավ էին երևում, քան հետևակի զինվորները, որ սրածայր գլխարկների, նիզակների և աղեղների մեջ կորցրել էին մարդկային կերպարանքն ու տեսքը. բացի այդ՝ փղերի մեջքին

կապված ամրոցիկներն այնքան բարձր էին, որ թվում էին ինայուն բուրգեր:

Եկան նրանք, եկան մեծահոլմանք՝ ամբողջ դաշտի ծայրը բռնած, եկան ու հանկարծ սկսեցին բաժանվել կողմերի վրա և այդպես առաջանալ:

Նրանք առաջ էին գալիս սարերային ու մեծապանգված շարժումով, և այնքան առաջ եկան, որ երկու թշնամի բանակները հիմա կարող էին իրար տեսնել: Պարսից բանակը շարժվելով՝ սակայն չէր առաջանում ուղիղ գծով, այլ ինչպես նրանց այրուձին, տարածվում էր դաշտի լայնքով ու նույնպես դասավորվում: Օդն այնքան մաքուր էր և թափանցիկ, որ կարելի էր տեսնել ոչ միայն մարդկանց, այլև նրանց դեմքերը: Պարսից ձիավոր խմբերը մոտենում էին իրար, բաժանվում. երբեմն այս կամ այն խմբից սրկվում էր մի ձիավոր ու, եռանդ փոշի բարձրացնելով, սլանում էր հեռվում գտնվող մի ուրիշ զորախմբի մոտ: Դրանք հավանորեն համհարզները էին, որ կարգադրություններ էին տանում այս ու այն զորամասին:

Տեսնելով պարսից բանակի հետ եկող փղերի վաշտերը՝ կատաղեցին ու ղրույցները լռեցին հայոց բանակում. դինվորները ոչ միայն լռջացան, այլև մռայլ ու խոժոռ տեսք ընդունեցին: Բոլորի դեմքը կարծես արտահայտում էր մի հարց. «ի՞նչ է լինելու»... Սակայն դրա հետ միասին կար և մի վճռականություն. ինչ էլ լինի՝ տեղի չտալ, կռվել մինչև վերջը և կամ մեռնել, կամ թշնամուն վանել հայրենի երկրից: Ու չարունակում էին դասավորվել ոչ միայն կենտրոնում, այլև թևերում, թևեր, որոնք, Մուշեղի կարծիքով, թշնամու մեջ պետք է ատեղծեին այն պատրանքը, թե ղրանք են հայերի իսկական ալ և ձախ թևերը, որ թշնամին չենթադրի անգամ, թե կարող են լինել ուրիշ թևեր կամ զորքեր, որ անցած լինեն սարերի հետևը...

Նույնպիսի դասավորություն և պատրաստություն նկատվում էր և պարսից բանակում: Օրը բացվելու հետ, վայրկյան առ վայրկյան ավելի որոշակի էին երևում պարսից գնդերը— այրուձին, հետևակը, որ առաջ գալով՝ կարծես ավելի Հարթակ դիրքեր էին բռնում:

Սպարապետը, համհարզների միջոցով գնդերին իր կարգա-

դրությունները անելուց հետո, երբ մոտավ վրանը զրահները հագնելու՝ հայոց բանակում նկատեցին, որ պարսից կողմից երեք ձիավոր սրարշավ գալիս են դեպի գետը: Դա զարմացրեց, մանավանդ որ եկողներից մեկի ձեռին սեսան ճերմակ դրոշ:

Այդ նկատեց և Հրահատը, և նկատելուն պես՝ վազեց Մուշեղի մոտ:

— Տեր սպարապետ, պարսից կողմից դեպի մեզ, դեպի պետն են գալիս երեք ձիավոր՝ ճերմակ դրոշ պարզած:

Սպարապետը կարծես չհավատաց իր Թիկնապահի խոսքերին և զարմացած, անխոս մոտեցավ վրանի դռան. իրոք— պարսից բանակից անջատված այս կողմն էին գալիս երեք ձիավոր, և նրանցից մեկի ձեռին ծածանում էր մի ճերմակ դրոշ:

— Զորս հոգով գնացեք տիրչև ափը և իմացեք ո՞վքեր են և ի՞նչ են ուզում,— կարգադրեց նա վրանի առջև սպասող Թիկնապահներին:

— Հրամանքդ,— պլսեխ ավին Թիկնապահները և չորսը մեսին, դրանց հետ և Հրահատը ձիերը քշեցին դեպի գետը:

Նրանք ափ հասան այն ժամանակ, երբ եկողները արդեն մոտեցել էին գետին և ձիերին նստած կանգնել մյուս ափին, քսան երեսուբին դիմավորողներին սպասելով:

Դրանք պարսկական լայն ու երկար Թիկնոցներով և մեսաոեսակ սրածայր գդակներով մարդիկ էին, որոնցից համեմատաբար երիտասարդն աչքառուս էր դրոշակը բռնել այնպես, որ հայերը լավ սեսնեն: Հայ Թիկնապահների պարսկերեն այն հարցին, թե ինչ են ցանկանում՝ նրանք պատասխանեցին հայերեն.

— Շապուհ արքայից-արքայի բանագնացներն ենք, կամենում ենք խոսել հայոց Թագավորի կամ սպարապետի հետ:

Պարսից բանագնացը խոսում էր մաքուր հայերեն, ոչ թե պարսկերեն, այլ հայերեն... Այս բանը զարմացրեց Մուշեղի Թիկնապահներին, և նրանցից մեկը, ձին արշավասույր քշելով, գնաց նրանց առաջարկին սպարապետին հայտնելու:

— Հայերե՞ն: Ասում ես՝ խոսում է հայերե՞ն,— զարմացավ Մուշեղը Թիկնապահին լսելուց հետո:— Ի՞նչ հանելուկ է դա: Մի նոր խաբեությո՞ւն Շապուհի կողմից...

Որքան էլ սարսռելի էր այդ, բայց Մուշեղն, առանց

ժամանակ կորցնելու, չտապնց անձամբ Թագավորին հայտնելու, որ պատվիրակները են եկել և ուզում են խոսել արքայի հետ:

— Թեև այդ տեսակ բանագնացները ոչ մի արդյունք չեն տալիս, բայց հարգանք ընդունված կարգը,—ասաց Պապը, որ այդ ժամ նույնպես իր զրահները էր հագնում կռվին մասնակցելու նպատակով:— Հրամայեցեք— տեսնենք ինչ նոր խարդախություն է առաջարկում խորամանկ Շապուհը: Հավանորեն ուզում է ինձ ևս խաբեությամբ տանել Անհուշ բերդը կամ բանագնացներով զբաղեցնել մեզ և ինքը հարձակվել:

Այս ասելով՝ Թագավորն այնուամենայնիվ խնդրեց Մուշեղին՝ պատրաստ լինել և զգոնաս, ու այդ ժամանակ սպարապետը պատվիրեց Թիկնապահներին, որ բանագնացներին թույլ տան անցնել դեպի և, աչքերնին կապած, բերեն Թագավորի վրանը:

Կես ժամ հետո Շապուհի բանագնացներն արդեն Պապի վրանում էին: Երբ նրանց աչքերի կապը վերցրին՝ Թագավորն ու Մուշեղը համարյա միասին բացականչեցին.

— Մհհենդակ իշխա՞ն...

Դա Աբշամ Թագավորի ալազանիներից մեկն էր, որին համարում էին սպանված, բայց որն իրոք դերի էր ընկել Արտաշերսում և տարվել Պարսկաստան:

— Դու ևս հայրենիքի դավաճա՞ն,— ասաց Պապը խորին արհամարհությամբ, իսկ Մուշեղը միայն գլուխն օրորեց հևալով:

— Մի խոցոտեք իմ վերքավոր սիրտը, արքա, և դու Մուշեղ,— խոսեց Մհհենդակ իշխանը հայերեն:— Մի՞թե չգիտեք, որ ես մի դժբախտ դերի եմ և ոչ հայկատակ դավաճան: Իսկ եթե հիմա եկել եմ ձեզ մոտ որպես բանագնաց, այդ լոկ Շապուհի կամքով... Բայց այս մասին հետո,— ավելացրեց նա և շարունակեց պարսկերեն:—Ես իմ ընկերների հետ առաքված եմ արքայից-արքա Շապուհի կողմից, որ առաջարկեմ ձեզ, արքա, հետևյալը, եթե բարեհաճես լսել:

— Եթե, իշխան,— խոսեց Պապը՝ աչքերը միայն Մհհենդակին ուղղելով,— քո վոխարեն Շապուհն ուղարկած լիներ մեկ ուրիշի՝ ես նրան, առանց լսելու, կղարձնեի ետ, բայց չէի կամենալ վիրավորել քո ծերությունը, քի՛ղ, որ հարգել եմ մանկությանս օրերից: Խոսի՛ր, իշխան:

Եվ Մհհենդակ իշխանը պարսկերեն, որ հետո եկածները

կասկած չունենան, երևի, իր ասածների մասին, հայտնեց, թե Շապուհն առաջարկում է, որ եթե Պապը հրաժարվի Բիզանդիայի բարեկամությունից, ինքը նրան կտա և՛ թագ և՛ իշխանություն ոչ միայն Հոր հողերի վրա, այլև շատ երկրների, որ հայրը չէր կարող տիրել իր անհատատ ու անհավատարիմ բնավորությամբ:

— Հակառակ դեպքում,— շարունակեց Մեհենդակ իշխանը՝ փոխն ի փոխ նայելով հուզված Պապին և զուսպ ու մռայլ Մուշեղին,— հակառակ դեպքում, ասում է, քարը չեմ թողնի քարի վրա և...— այստեղ ծերունի իշխանը ակնհայտ ճիգ դրեց իր վրա և հարեց հուզված.— քեզ ևս... կբռնեմ և կուղարկեմ հորդ մոտ:

Պապը, որ իշխանին լսում էր անխոս հուղումով, նրա վերջին խոսքերի վրա ժպտաց հանկարծ և հպարտորեն քմծիծաղ.

— Կուղարկի հորս մո՛տ... Ուրիշ ի՞նչ է խոստանում ծեր աղվեսը:

Պապի այս խոսքերից պարսիկ բանագնացները ճչվեցին և հպարտ վիրավորանքով նայեցին հայոց թագավորին, իսկ Մեհենդակ իշխանն ավելացրեց միայն.

— Ես ասացի քոլորը, արքա...

— Բոլո՞րը: Բարի՛... Բայց կուզեի իմանալ, թե այդ որքա՞ն թագ ու գահ ունի Շապուհը, որ և ինձ է խոստանում և Մերուժանին: Որտեղի՞ց է այդ առատաձեռնությունը և ինչո՞ւ համար:

Ծերունի Մեհենդակը այդ խոսքերից տարակուսած, ավելի չուտ չիմանալով ի՛նչ պատասխանել, նայեց հետի պարսիկներին, իսկ նրանք իրենց հերթին նայեցին Մեհենդակին:

— Սակայն այս ամենը թողնենք, իշխան: Հիմա ես եմ ուզում հարցնել քեզ: Եթե դու լինելիր իմ տեղը՝ կընդունեի՞ր Շապուհի այդ առաջարկը: Բացի այն, որ նա բանտարկել է քո հորը, գերի է վարել թագուհի մորս և շատ նախարարների, այդ թվում և քեզ. նա, որ ավերել է մեր երկիրը, հրդեհել է քաղաքներ ու ավաններ. նա, որ չի ուզում տեսնել մեր ժողովրդի ուրախ օրը, անկախ կյանքը,— կարելի՞ է արդյոք հավատալ նրան և մարդկային լեզվով խոսել մի այդպիսի գազանի հետ,—

ձայնը հանկարծ բարձրացրեց Պապը, կարծես չկարողանալով այլևս զսպել իրեն,— մի զազանի, որ միայն խաբել պիտի:

— Սրքա՛ր,— ձգվեց նորից պարսիկներից մեկը վիրավորված:—Դու անպատվում ես արյաց արքայից արքային:

— Ես այդպես եմ կամենում,— ասաց Պապը:— Կարող եք իմ խոսքերը հայտնել ձեր արքային,— ավելացրեց նա և նորից դարձավ Մեհենդակ իշխանին:— Ես, իշխան, դիտմամբ խոսում եմ պարսկերեն, որ քեզ հետ եկած այս մարդիկ լսանան և իմ խոսքը տանեն իրենց ննջեց արքային: Թող լինենք մենք վոջը, թուլ, տկար, բայց մենք նրա հետ մարդկային լեզվով չենք խոսի... Եվ դու, իշխան,—շարունակեց նա հայերեն,—ի՞նչպես հաբողացար խորվել նրա խոսքերից և այդ առաջարկով գալ մեզ մոտ:

— Միայն իմ հայրենիքին օգտակար լինելու համար, արքա,—արդարացավ ծերունի իշխանը:— Ես չէի ցանկա նոր ավերածներ ու կոտորածներ տեսնել: Մի մոռանար, արքա, որ նա ուժեղ է. նրա հետ է և Լևկաց Շերդիկը, և աղվանից Ուռնայրը..

— Շերդիկը՛ և Ուռնայրը՛,— չհամբերեց և ծանր. տնքաց Մուշեղը,— երկու գայլ, որ ընկերացել են բռնենուն՝ նրանից բաժին ստանալու ակնկալությամբ:

Լռություն իջավ վրանում. պարսիկ բանագնացներն իրենց թուխ խոշոր աչքերով, հպարտ վիրավորված նայում էին Պապին ու Մուշեղին, որ զրահների մեջ էին արդեն և երկուսն էլ հագիվ էին զսպում իրենց զայրույթը: Պարսիկների նայվածքներում սակայն կար նաև մի երկյուղ, թե չլինի հանկարծ դրանք իրենց բարկությունը, Շապուհի դեմ ունեցած ոխը թափեն իրենց գլխին, սպանելով կամ կապելով-պահելով: Ու լռությունը նրանց թվում էր չարագուշակ:

— Գուցե մի լեզու գտնես, արքա,— նորից, զգուշությամբ խոսեց Մեհենդակ իշխանը հայերեն,—և երկիրն ազատես նոր աղետից:

— Դա իզուր կլինի իշխան,— խոսեց Պապը հուզված:—Ես ասացի, որ մենք նրա հետ մարդկային լեզվով չենք խոսի, այլ նետով և նիզակով: Իմ ժողովուրդը և իմ նախարարները հիմա մի ցանկություն ունեն՝ պաշտպանել ոչ միայն իրենց երկիրը

Շապուհից, այլև վրեժխնդիր լինել նրան այն բոլոր դաղանությունների համար, որ գործել է նա իմ երկրում: Եթե անգամ ես ցանկանամ հաշտվել Շապուհի հետ, իմ ժողովուրդը չի հաշտվի՝ այնքան է լցված վրեժի զգացմունքներով:

— Բայց, արքա, ես՝ ոչ իբրև Շապուհի բանագնաց, այլ իբրև հայ, որի համար թանգ է իր հայրենիքը, իր սրբություններն ու կրոնը, պետք է ասեմ, որ նա շատ է ուժեղ. կավերվի մեր երկիրը...

— Ուրեմն դու, Իշխան, առաջարկում ես ինձ՝ անձնատուր լինել Շապուհի՞ն,— ձայնը նորից բարձրացրեց Պապը:— Մի մոռանա, Իշխան, որ անձնատուր լինողը երբեք չի կարող պաշտպանել ոչ իր իրավունքները, ոչ իր կյանքը: Իրավունքները, Իշխան, պաշտպանում են սրով և անձնազոհությամբ:

Ծերունի Մեհենդակը զարմացած նայեց Պապին, որի ալ դեմքն այդ րոպեին խաղում էր ջղաձիգ, աչքերը վառվում էին մի ինչ-որ անբնական հրով, իսկ Մուշեղն իրեն դսպելու համար շուրթները սեղմում էր և հևում, տնքում մխայն:

— Դու երևի զարմանում ես, Իշխան, իմ խոսքերի վրա,— ծերունու հայացքը նկատելով՝ ասաց Պապը:— Մի զարմանար, այլ իմացիր, որ եթե նա հզոր երկրի տեր է, իմ ժողովուրդն էլ ունի իր հզոր առելությունը Շապուհի հանդեպ: Ա՛հավասիկ Մուշեղը, որի հորը, խաբեությամբ կանչելով, մորթազերծ է տրել Շապուհը, կարո՞ղ է հավատալ Շապուհին և անձնատուր լինել նրան: Երբե՛ք: Ու այդպես ամենքը: Բոլորին հիմա վառում է վրեժի զգացմունքը: Ոչ, Իշխան, դնա այդպես էլ ասա, որ մենք զերադասում ենք մեռնել ազատ, քան ապրել Շապուհի ճնշքի տակ՝ որպես ստրուկ:

— Զգացմունքները, արքա, հաճախ, վատ խորհրդատու են,—ղգուշությամբ նկատեց Իշխանը:— Այնտեղ, ուր պետք է գործել սառը...

— Մի մոռանա, Իշխան,— կտրուկ ընդհատեց նրան Պապը, զգացմունքներն են դառնում անխորտակ ուժ կռվի մեջ և ոչ թե սառը դատողությունը:

— Ես վախենում եմ, արքա, սխալվես:

— Ես չեմ վախենում, Իշխան, և մինչև իսկ քեզ առաջարկում եմ չգնալ, այլ մնալ մեզ մոտ:

— Ոչ, արքա, ես երդվել եմ՝ քո պատասխանը տանել պարսից արքային. կարծում եմ՝ դու չէիր ցանկանա, որ ես անպատվել-վնաս և վարկաբեկեմ հայ իշխանի անունը, մանավանդ որ իմ ընտանիքը նույնպես պերճ է այնտեղ:

— Այդ արդեն թողնում եմ քեզ և քո խղճին, իշխան,— ասավ Պապը, տեղից ելնելով, որ նշան էր, թե բանակցությունը վերջացավ:

Եվ երբ բանապետներին, ներանց աչքերը նորից կապելով, դուրս տարան, Պապը դարձավ Մուշեղին:

— Սպարապետ, երբ բանապետ իշխանն ու ընկերները անցնեն գետը և հասնեն պարսից բանակը, հարձակումն սկսի՛ր...

***

Բայց նախ քան հարձակումն սկսելը՝ անհրաժեշտ եղավ լուծել մի դժվարին խնդիր— նորից համոզել Պապին, որ հեռու մնա պատերազմից, այսինքն՝ անմիջապես չմասնակցի հարձակմանը, ինչ որ սակայն ցանկանում էր նա և որի համար պատրաստվել էր արդեն. նա զրահներ հագած, սաղավարտ դրած, արծաթ թուրը կապած դուրս էր եկել վրանից՝ նստելու իր նժույգը, որի ոսկե սանձը բռնած պահում էին երկու զրահնիկ գինվոր: Պապը չէր ուզում մնալ դիտողի դերում և մերժում էր սպարապետի և մյուս զորավարների, իր դիրը Երեմիայի «հեռու մնալու» խնդրանքը ու պնդում էր, որ ինքը եկել է կռվելու և ոչ թե դիտելու, մանավանդ Շապուհի այդ առաջարկից հետո, որ իրեն դնում է «հացկատակ անպիտան տեղ»: Իսկ Մուշեղը, Երեմիան և ավագանիներից շատերը, իմանալով նրա դյուրաբորբ բնույթը, վախենում էին, թե նա ձին քշի ուղիղ թշնամիների մեջ և... չանում էին ետ պահել նրան այդ մտքից, օրինակ բերելով Ներսես հայրապետին, որ իր եպիսկոպոսներով ու վարդապետներով բարձրացել էր արդեն Նպատ լեռը՝ աղոթելու և պատերազմն այնտեղից դիտելու: Իսկ Պապը չէր համաձայնում:

— Ինչպե՞ս: Ի՞նչ կասեն իմ զինվորները. չե՞ն անվանի ինձ վախկոտ և փոքրոգի, եթե ես քաշվեմ սարը և կաթողիկոսի հետ մնամ ապահով հեռվում: Դուք ուզո՞ւմ եք, որ ես աբեղայի դեր կատարե՞մ...

Այդ ժամանակ ձիով, թիկնապահները եւս, մոտեցավ բիզանդական դեսպան-զորավար Տերենտը՝ նուիրական զրահներ հագած և փայլուն ցցունազարդ մի սաղավարտ դրած: Իմանալով ի՛նչչի չուրջն է դառնում խոսակցությունը, նա իջավ ձիուց և իր դեմքի հեզ, բարյացակամ արտահայտությամբ ու համոզիչ ձայնով բացատրեց Թագավորին, թե որքան դժվար կլինի, եթե նա մտնի կռվի մեջ. նախ բոլորը պիտի մոռանան Թագավորի անձի մասին, որ նրան վտանգ չսպառնա, երկրորդ՝ պիտի կարծեն, թե իրենց դիվավարող ու ժամանակին օգնություն հասցնող չկա:

— Երրորդ,— շարունակեց Տերենտը՝ ձայնին ավելի մեղմություն ու բարություն տալով,— երրորդ, արքա, ես կայսեր հրամանն ունեմ ձեր անձը պաշտպանելու ամեն տեսակ վտանգից, ուր մնաց մի այսպիսի մեծ փորձությունից, ինչպիսին պատերազմն է: Ես խնդրում եմ՝ ինձ պարտազանց պաշտոնյա չդարձնես իմ կայսեր առաջ, մանավանդ որ Արմինիայի և քո զորքի շահը, արքա, պահանջում է, որ դու մնաս ճակատամարտից հեռու, դեկավարողի դերում... Դու պետք է լինես մի բարձրության վրա, դիտես ճակատամարտը և դեկավարես այն քո արքայական հրամաններով:

— Ես կարծում եմ, հարդելի կոմս, հեռու մնալուց ավելի պատվաբեր է, որ ես լինեմ իմ զորավարների ու զորքի հետ:

— Ես գնահատում եմ քո զգացմունքները, արքա, սակայն դու քեզ պետք է պահես Արմինիայի համար, քո զորքը դեկավարելու և խրախուսելու համար:

Այս խոսքե՞րն աղդեցին արդյոք, թե ինքը Թագավորը հշտադատելով խնդիրն ամեն կողմից՝ համաձայնեց, վերջապես, ետ դարձնալ և այնտեղից դիտել ու դեկավարել ճակատամարտը: Նպատ լեռան վրա՝ նրա շանջի մի դուպավոր վայրումն էր արդեն Ներսեհան իր եպիսկոպոսներով ու վարդապետներով... Այդտեղ գնաց և Պապը՝ Տերենտի և իր շքախմբի անդամներից մի քանիսի հետ, որոնց մեջ էին Զենոն Գնունին, Կենան Ամատունին, Ներ Աղամ Գնթունին և իր քարտուղար Երեմիան՝ պինվորական հագուստով և մոմատախտակով:

Թագավորի գնալուց հետո էր, որ Մուշեղը կարգադրեց զորքը դասավորել մարտական կարգով, նախապես արված հրա-

հանդի համաձայն, իսկ ինքը մոտավ վրանը և թիկնապահները Հյուհատի ու Աոոմի օգնությամբ լրիվ հագավ իր սպարազենական զինն ու զարդը, դվինին դրավ սպարապետական գլուխկոնական սաղավարտը՝ պատվանշանի հետ, ու քիչ հետո նա, ձկնթեփիլի պես փայլող զրահների մեջ, վրանից դուրս գալով, առանց թիկնապահների կամ ձիապանի օգնության, թռավ իր ճերմակի մեջքը, որին հագցրել էին մի արծաթ լանջակալ, որի վրա կային ցից և սուր մեխեր, որ թշնամուն դիպչելիս՝ պիտի ծակծկեին, խոցոտեին նրան կամ նրա ձիուն: Չի նստելուց հետո՝ նա ձեռն առավ իր երկար տեգը, որ պատրաստ պահում էր իր թիկնապահներից մեկը:

Մինչ այդ նրա թիկնապահները ու համհարզները նույնպես զրահավորվել և զինվել էին, և երբ նա դուրս եկավ ու ձի նստեց, սրանք խմբվեցին նրա շուրջը՝ հրամանների պատրաստ: Բայց սպարապետը նրանց ոչինչ չասավ, նա աշտանակեց ձին, և նրա ճերմակին առջևի ոտները խաղացնելով, սուրաց առաջ: Պետք է ասել՝ այդ ձին չէր հանդուրժում, որ ուրիշ մեկը իրենից առաջ անցներ կամ հավասարվեր իրեն: Սովորությունից էր դա, թե ձին էլ ուներ իր անախտությունը— դժվար է ասել, բայց նա զարմանալի լավ էր զգում իրեն, երբ գնում էր բոլորի առջևից.— նրա աչքերն ուրախության ճառագայթներ էին թափում, իսկ ոտներն այնպես էր վեր ու դեր անում, կարծես մեջքին ծանրություն չէր կրում. գնում էր առնպարելով ու թեթև, առջևը փոս կամ առու տեսնելիս՝ թռչումանցնում էր լողուն մի թռիչքով, այնպես թեթև, որ հեծվորը չէր զգում նրա թռիչքը, իսկ ընդհանրապես գնում-վազում էր այնպես, թվում էր ցուցադրում է իրեն կամ պարծենում իր հեծվորով: Իսկ Մուշեղն ինքը շատ էր գնահատում նրան և երբեք չէր անում մի բան նրա կամքին հակառակ: Բազրևանդ գալիս, օրինակ, տեսնելով ձին չարունակ ձգտում է առաջել թափավորի ձիուն և ոչ մի հնար չկա նրա այդ ցանկությունը զսպելու՝ նա թուլտվությունը խնդրեց թագավորից՝ առաջ անցնել կարգադրություն անելու. այդ սակ նրա համար, որ ճերմակը չնեղվի և իրեն ազատ զգա. մինչդեռ շատ կուզեր լինել թագավորի հետ՝ նրա կողքին, ինչ վայել էր մի սպարապետի, և որոշ խնդիրներ պարզել նրան. բայց ձիու սերը և այն

անպատեհությունը, որ կարող էր առաջ գալ ձերմակի բնավորությունից, սակայն նրան զատվել թագավորի չքախմբից՝ ձիուն ազատություն տալու համար:

Հիմա էլ, երբ սպարապետը գնում էր բանակի դասավորությունը դիտելու, նրա ձերմակին խնկույն բաժանվեց թիկնապահների խմբից ու առաջ ընկավ: Դա անմիջապես բարձրացրեց սպարապետի տրամադրությունը, ինչպես միշտ ձին հեծնելիս:

Մուշեղն ուզում էր առայժմ հեռվից դիտել բանակի դասավորությունը և սուզվել, թե արդյոք ամեն բան կատարվա՞ծ է իր հրահանգի համաձայն: Բայց նախ քան տեղ հասնելը՝ նայեց սարսից կողմը, ուր զորքերը տակավին շարունակում էին դասավորվել: այժմ արդեն սրոշակի երևում էր նրանց այրուձին, հետևակը և հեռվում, բոլորի ետևը՝ փղերի վաշտերը:

«Եթե նրանց բոլոր ուժերն այս հովտի մեջ են, պետք է հուսալ, որ իշխան Կամսարականը և Սմբատ սպարապետը հաջողությամբ կկատարեն իրենց հանձնարարությունը» մտածեց Մուշեղը, ապա առաջանալով՝ հասավ բլրաձև մի բարձրության: Ձերմակը, հասկանալով կարծես տիրոջ կամքը, մի երկու թռիչքով ելավ-կանգնեց այդ բլրի վրա: Այդտեղ սպարապետը, ձիավոր մի արձան, ձեռը ճակատին դնելով, դիտեց իր զորքերի դասավորությունը.— կենտրոնը, ինչպես ասել էր, կխաչքյան էր. կազմել հովտի մեջտեղը՝ Արածանիի դիմաց, նրա հոսանքի երկարությամբ. իսկ նրա աջ և ձախ կողմերը, հայ հետևակը, փոքր մասերով, տարածվում էր դեպի հովտի ծայրերը՝ բռնող բլուրները (որոնցից հետո սկսվում էին արդեն լեռները), ապա հեռվում՝ լեռների լանջի վրա կազմում էին այն երևութական թևերը, որ ծրագրել էր նա և հրահանգել երեկոյան:

«Ամեն ինչ կարծես կարգին է» մտմտաց նա, գոհ, որ իր կարողությունը կատարված է ճշտորեն, ապա ձիու գլուխը դարձնելով՝ իր թիկնապահ Հրահատին, որ լավ դիտեր հունարեն, ուղարկեց հունաց, կամ ինչպես իրենք էին ասում, հռոմեների Աղդե զորավարի մոտ, խնդրելու, որ իրենց զորքը վահանափակ կազմի հայ զորքի ետև՝ հոգնածներին ու վիրավորներին պատսպարելու: Ռազմական այդ եղանակը Մուշեղն առաջին անգամն էր գործադրում, լավ իմանալով, թե հոգնած զինվորին

որքան անհրաժեշտ է հանդիսատը, կամ վիրավորվի համար պաշտպանված տեղում վերք կապելը: Այսպես երկու ձիավոր սուրհանդակ ուղարկեց դեռ երեկ գնացած կամսարականին և վաստրականից եկած Սմբատ Բագրատունուն հայտնելու, թե հարձակումն սկսվելու է շուտով, թող էրենք ևս շտապեն:

— Այդպես էլ կասեք՝ թող շտապեն հարմար տեղերը բռնելու,— ասավ նա երիտասարդ սուրհանդակներին և, բլուրից իջնելով, ձին քշեց դեպի Նպատ սարը:

Այս անդամ նա գնում էր Թագավորի մոտ՝ նրա վերջին կարգադրությունն ու բարեմաղթությունն առնելու, ինչպես ընդունված էր:

Նպատ սարի լանջին, դոգավոր մի փոքրիկ տարածության վրա խփված էր Ներսեսի վրանը, որ հիմա շրջապատված էր նրա ուխ, երկար հանդերձներ հագած եպիսկոպոսներով ու վարդապետներով. իսկ այդ վրանից փոքր հեռու՝ Թագավորի շուրջը խմբված էին նախարարները, իշխանները, թիկնապահները, թվով հիսուն-վաթսուն հոգի, որոնց մեջ էր և հունաց դեսպան Տերենտը, ինչպես միշտ զինվորական հագուստների մեջ և զարդարված, արքայազուկը Երեմիան, նախարարները, կենսնան Ամատունին և Աղամ Գնթունին, բոլորն էլ զրահազգեստ, սաղավարտազլուխ ու սպառազեն, այնպես որ երբ սպարապետը, սարը բարձրանալով, նայում էր նրանց կողմը՝ նրա աչքերը շլանում էին, որովհետև նոր բարձրացող արևը խաղում էր նրանց զրահների ու զենքերի վրա անդրադարձիկ ու հրեղեն ճաճանչներով:

Երբ, վերջապես, Մուշեղն իր ձերմակի վրա հասավ սարի այդ դոգավոր տեղը՝ նա արագ իջավ ձիուց, սանձը տվեց թիկնապահներից մեկին և, ծանրաքայլ Թագավորին մոտենալով, խոնարհեց ու դրեց Պապի առաջ:

— Ճակատամարտն սկսելուց առաջ, արքա, ես ուզում եմ կատարել ավանդական կարգը,— ասավ նա լուրջ ու խոժոռ,— ընդունված է, որ Թագավորն իրավունք տա ճակատամարտն սկսելու և հաջողություն մաղթի իր սպարապետին, կապելով նրա թուրը:

— Մենք հարկավ ուրիշ բանի համար չենք եկել այստեղ, սպարապետ, այլ ճակատելու. և եթե կարգ է՝ ես սիրով կկատարեմ այդ կարգը: Թույլ եմ տալիս անմիջապես ճակատել,—

տասավ Պապը և հանկարծ մոայլվեց։— Բայց զգուշացնում եմ, սպարապետ, որ այս անգամ չլինի սկզբից պատմություն, ինչպիսին եղել է Շապուհի կանանոցի հետ, որ վերցրել ես գերի և ապա թողել, որ ազատ վերադառնան... Ո՛ր մեծահռչակ-քյան սակայն Շապուհը պատասխանեց նրանով, որ գերի վարեց իմ թագուհի մորը և մեր շատ նախարարների կանանց։ Հիշիր, սպարապետ, և իմացիր, որ Թշնամու հետ պետք է վարվել երբեք Թշնամի և լինել անխնա, ինչպես նա է անխնա...

Այս ասելիս՝ Պապի դեմքը խաղաց ջղաձիգ. ինչպես երևում է՝ նա շատ էր հուզված և վրեժի զգացմունքներն ալեկոծում էին նրան ճակատամարտն սկսելու այդ պահին։ Սակայն Թագավորի այդ հիշեցումից Մուշեղը հանդիմանության պես մի բան զգաց։

«Ներողություն է անում ինձ» մտածեց նա և, Թագավորի հուզված դեմքին նայելով, ասավ մեղմաբար.

— Ինձ, արքա, Մամիկոնյան սպարապետիս, չէր վայելի գերի վերցնել կանանց, քանի որ մենք կռվում ենք զինված ազատամարտիկանց դեմ, բայց ոչ անզեն կանանց։ Թեկուզ և լինեն նրանք Շապուհի կանայք, դարձյալ կին են՝ մայր, քույր և Թուլ...

— Մոռանում ես սակայն, սպարապետս,— ընդհատեց նրան Թագավորը՝ ակնհայտ դժգոհությամբ,— մոռանում ես, թե ինչպես նրանք վարվեցին քո Թագուհու, քո երկրի կանանց հետ։

— Մենք, արքա, չենմանվենք բարբարոսներին։ Մեր Թշնամին ոչ թե կանայք են, այլ պարսից զորքը...

Այս ասելով սպարապետը լռեց մի պահ, ապա նայելով Թագավորի խոշոր խաժ-աչքերին՝ շարունակեց.

— Եթե իմ Թագավորը կասկածում է իր սպարապետի հավատարմության՝ ես, արքա..

Պապը ջղային մի շարժում արավ ձախով. նրա դեմքով մի ստվեր անցավ և նա կարծես զգաստացավ՝ վարի շուրթն առավ ատակ դնելով։

— Ես միայն զգուշացնում եմ քեզ, սպարապետ. ես չուզեցի քնավ վիրավորել քո արժանապատվությունը և մանավանդ վասկածի առնել քո հավատարմությունը, լավ իմանալով, որ Շապուհը որքան դաժան է եղել իմ հոր հետ, նույնքան տմարդի

է վարվել քո ապարապետ հոր հետ... Բայց իմ պարտքն է զգուշացնել:

— Ես, արքա, քեզ մոտ կլինեմ և կմեռնեմ քեզ հետ, ինչպես իմ նախնիները մեռել են քո նախնիների հետ, ինչպես իմ հայրը քո հոր հետ... Բայց չարախոսներին դուռ ականջ մի դիր:

Մուշեղի խոսքերն ասվեցին մի սրտմտությամբ, որից թագավորն այլայլունեց, զգալով կարծես, որ անզգուշաբար վիրավորել էր ապարապետին: Ու թվաց շրջապատողներին, թե նա այդ քավելու համար արձակեց իր թուրը և մեկնեց ապարապետին:

«Ինչ ավելորդ բան» մտածեց Մուշեղը:

— Շնորհակալ եմ, արքա,— ասավ նա,— քո վստահության ու շնորհի համար: Բայց թող իմ արքան չվիրավորվի, ես կզործեմ իմ սրով...

Ներսունի կաթողիկոսը, որ այդ խոսակցության ընթացքում աննկատելի առաջացել էր մի երկու եպիսկոպոսի հետ, մոտեցավ ապարապետին և՝

— Մեր լույս հավատը,— ասավ,— զորավիզ լինի քեզ, ապարապետ, և բաղուկդ կորուկ...

Ու ծերունու իր չոր ձեռքով մի ջամատը ծալած ջերմեռանդ խաչակնքեց նրան:

Ապարապետը թեև դժկամ լռնարհում արավ կաթողիկոսին, բայց նրա մտքն զբաղված էր Պապով. նա չէր դատապարտում Թաղավորին, հասկանում էր նրա տրամադրությունը, որ հայր և մայր կորցնելուց և ավեր երկիր տեսնելուց հետո, պետք է լիներ այդպես անդիջում ու խիստ: «Բայց և այնպես տղայի քնավորություն ունի, անհավասարակշիռ է» մտածեց նա, ապակյա խոհուն էլ ընդհատեց մտածմունքը, որովհետև սրից իջնելիս՝ նկատեց, որ սրերից բանակում դասավորություն ավարտվելու մոտ է. նրանց բանակներն այլևս չէին շարժվում, մեյան հատհատ կամ դույզ-դույզ ձիավորներ էին անցնում-դնում մի զրահագնդից մյուսը: Դա նշան էր, որ պատրաստություն են տեսնում հարձակվելու:

Այդ տեսնելով՝ Մուշեղն արագացրեց ձիու ընթացքը, և մի քանի րոպեից արդեն՝ նա իր ձերմակով, քիվնապահները ետևից, անցնում էր կենտրոնի բանակի առջևից: Շարքերը լուռ

էին. ոչ մի չշուկ, ոչ մի չունչ: Մուշեղին թվում էր, թե այդ անշարժ բազմությունը սպասում է իր վերջին հրամանին, որ շարժվի և սուրա առաջ:

Բայց սպարապետն առայժմ անխոս, ամբողջովին զբաղված մեջ, բարձր սաղավարտը գլխին, իր ձեռնափի վրա ուղիղ նըստած, անցնում էր մարտի պատրաստ զորագնդերի առջևից, իր համհարցներով ու սուրհանդակներով, որոնք միշտ ակնդետ սպասում էին նրա հրամանին և կարգադրության, որ այդ հասցնեն ո՛ւր հարկն է: Նրա շքախումբը կազմում էին տասից-քսան հոգի, ամենքն հարկավ ձիավոր, անվանի նախարարների որդիներ՝ բոլորն էլ շքեղ զրահներ հագած ու զենքեր կապած:

Հասնելով առաջին զորագնդին, որի հրամանատարները կապա-պատրաստ կանգնած էին իրենց հարյուրակների առջև, Մուշեղը, առանց ձիու ընթացքը դանդաղեցնելու, զրահավոր բազուկը բարձրացնելով բացականչեց.

— Ապրե՛ն իմ քաջերը...

Գունդը, որ բաղկացած էր գլխավորապես աղեղնավոր այրուձիուց և ջոջքաթիվ վահանավոր ու նիզակավոր հետևակից, որպես արձագանք կարծես՝ որոտաց.

— Ապրի՛ սպարապետը:

Այդ ձայները դեռ չէին մարել օդում՝ Մուշեղն իր շքախմբով երկրորդ զորագնդի մոտ էր արդեն, որ նույնպես բազկացած էր հեծյալներից և գլխավոր հետևակից: Այդտեղ էլ սպարապետը նույն ձևով բարձրացրեց բազուկը, նույն ողջույնը տըվեց և նույն պատասխանն ստացավ: Նույնը կրկնվեց և երրորդ զորագնդի մոտ, որից հետո Մուշեղը ետ դարձավ և եկավ-կանգնեց երեք զորագնդի կենտրոնում: Բոլոր հայցքները, հազարավոր հայացքներ ուղված էին նրան. ամենքը շնչազուրկ սպասում էին, թե ահա սպարապետն առաջ գնալու հրաման կ տալու: Բայց հրամանի փոխարեն նա ձեռը նորից բարձրացրեց և ասաց.

— Իմ քաջեր և եղբայրներ. ես ձեր դեմքերին նկատում եմ արդեն այնպիսի վճռականություն և ձեր աչքերում կրեժի այնպիսի զգացմունք, որ ավելորդ եմ համարում ասել, թե ինչպես պիտի վարվենք մեր թշնամու հետ... Թշնամի, որի սրերի ծայրին դեռ չի չորացել մեր հարազատների արյունը... Մեր նահա-

տակինները վրեժ են պահանջում, և ես դիտեմ, որ դուք եկել եք վրեժխնդիր լինելու և հաղթելու: Այդպե՞ս է:

— Հաղթելո՛ւ... Հաղթելո՛ւ... որոտացին զորքերը:

— Օ՛ն ուրեմն, կատարեցեք ձեր խղճը,—ասավ սպարապետը իր անհաղթելիս ձիրմակի սանձը քաշելով:— Իմացեք, որ Շահսուհն ուզում է ոչնչացնել մեզ և տեր դառնալ մեր երկրին: Մեր պապերն ու հայրերը պահել-պահպանել են այս երկիրը ձեզ համար, դուք էլ պաշտպանեցեք ձեր որդիների համար: Զվախենաք, չսարսափեք թշնամու բազմությունից և նրա սրի դեմ թիկունք չդարձնեք. ով քաջությամբ առաջ է անցնում՝ նա իր ժողովրդի մեջ քաջի անուն է ժառանգում,— ձայնը բարձրացնելով վերջացրեց սպարապետը և ձին չարժեց հեռանալու: Նրան հետևեց ձայների մի թնդյուն: Զորքը կանչում էր «տպրի սպարապետը», որ արձագանքներով կրկնվում էր բոլոր դնդերի կողմից՝ «տպրի, տպրի», որին հետևեց ապա ծանր մի լռություն, մի լռություն, որի մեջ լսվում էր արդեն Արածանիի ջրերի ընթացքը և մեծ խորհրդի հետ զգացվում էր և մեծ անհանգստություն:

Սակայն այդ լռությունը երկար չտևեց. առաջինը խղեց այն սպարապետն ինքը. նրա ձիրմակը սովոր լինելով նման կանչերից հետո չարժվել, ոտները վոխեց ոևահոդի վրա թեթև չարժումներով, բայց ամուր գետին դնելով, որով կարծես հաստատում էր սիրով խոսքերը:

Մուշեղն իր զրահների մեջ վայելով հետանում էր անխոս, մկայն ձեռը բարձրացրած, որ նշան էր թե խրախուսանքի, թե հրամանի և թե չնորհակալության: Մամիկոնյան իշխանն, իր նախահայրերի նման, մանկուց զատտխարակվել էր ռազմական ոդով, սիրում էր այդ գործը, սիրում էր իր զինվորներին և վարձով գիտեր, որ յուրաքանչյուր զինվոր սիրում է ուշադրություն և խրախուսանք: Եվ ինքը չէր զլանում նրանց ոչ մեկը, ոչ մյուսը:

— Ապրե՛ն իմ քաջերը,— գոչեց նա վերջին անգամ և նշան տվեց հարձակվելու:

Բայց նախ քան զորքը կչարժվեր՝ պղնձյա զալարափողերն առավոտն Թարմ օդում հնչեցին հարձակման եղանակը, և նիզակավոր, աղեղնավոր ու զրահանդերձ զանգվածն առաջ չարժվեց:

Նույնը, նույն պահին կատարվեց Ջերալի դաշտի մյուս ծայրում:

Գարօխինները լսելով, երևի, հայկական փողերի ձայնը, իրենք նույնպես, առնս դրան ապաստելով, հնչեցրին իրենց փողերը, և նրանց զորքը նույնպես շարժվեց, առաջին հերթին հեծելազորը:

Արևն էլ, կարծես այդ փողերի ձայնին էր սպասում, այդ իսկ ժամին դլուխը հանեց հանկարծ պարսից բանակի ետևը գտնվող լերկ սարերի թիկունքից, և նրա առաջին շողերի հետ ամբողջ շրջակայքը՝ լեռներն ու Ջերալի լայնատարած դաշտը, որքան էլ ամայի ու լքված, մեկեն կենդանացավ, փայլեց ու շողշողաց, և այն միջոցին, երբ պարսից դնդերը տակավին սարերի սուվերի մեջ էին, հայոց զորքերը Արածանիի այս կողմը շողում էին զենքերի ու դրահների փայլից, և ամբողջ շատ էին երևում, քան իրապես կային. այս ու այն բլուրը, հարթ տարածության կամ սարալանջի մի որևէ մասը փայլփլում շողում էին դրահազգեստ ու սպառազեն հայ զորքից, մանավանդ հույն զորքից, որ այդ ժամանակ հայերի հետ երկար մի գծով վահանափակ էին պատրաստում՝ հոգնածներին ու վիրավորներին պատսպարելու:

Արևը սարի գլխից նայելիս, երևի, պիտի զարմանար այդ տեսարանով. նա, որ ամեն օր ծագելիս, տեսնում էր միայն ոչխարի հոտեր, տավարի հանդիստ նախիր, իրենց հողը հերկող խաղաղ շինականներ կամ բզեզներ, որ վազվզում էին իրենց մանր հոգսերի ետևից, հիմա դաշտը լցրել էին զարմանալի բազմություններ, որ այդտեղից վանել էին նրա խաղաղ բնակիչներին և պատրաստում էին ոչնչացնել իրար մի մոլեգին վճռակամությամբ ու կատաղությամբ:

Երկու կողմից էլ, առաջին հերթին, շարժվեցին հեծյալ զնդերը. ինչպես ծայր առած հեղեղներ կամ շղթայազերծ մարմնացած երկու փոթորիկ՝ նրանք թափով սուրում գնում էին իրար դեմ, դեպի Արածանին, որ նույնպես անտարբեր հոսում էր իր կանաչ ափերի մեջ, որ տեղ-տեղ ծածկված էին բարձր, մարդու հասակից երկու անգամ բարձր եղեգներով:

Հայերը, լսանալով, որ պարսիկները հակառակորդին ահաբեկելու նպատակով, սիրում են հարձակվել դոռում-զոչյունով, շարունակ հնչեցնում էին իրենց բազմաձայն փողերը,

բայց և այնպես՝ երկու կողմից էլ լսվում էին ռազմի բարձրաձոչ աղաղակները, որ խլացնում էին թե փողերի և թե զեռչ ձայները:

Պարսից այրուձին առաջ էր գալիս մեծ արագությամբ. ձիավորների այդ հեղեղը, փոշու ամպեր բարձրացնելով, խոզան արտերի միջով, սրարշավ գալիս էր դեպի դեռը, հավանորեն այն անցնելու և հայերի վրա գրոհելու:

Հայերը նույնպես գնում էին նույն արագությամբ՝ աղեղները պատրաստ, որ նետեր արձակեն, և նիզակներն առաջ պարզած, որ խրեն մոտեցող թշնամու կուրծքը:

Իրար դեմ սուրացող այս գնդերի ետևից երկու կողմից էլ առաջ էին գալիս ուրիշ հեծյալ ու հետևակ վաշտեր, ջոկատները և զորախմբեր, որ պարտականություն ունեին մյուսներին օգնության հասնելու. պարսից կողմից եկող այդ վաշտերը զրահավորված էին այնպես, որ թվում էր խոցելի տեղ չունեն իրենց մարմնի վրա, իսկ սաղավարտներից լինող դիմկալներն այնպես էին ծածկում նրանց երեսը, որ նրանց ողջ մարմինը թվում էր երկաթի մեջ և եկող նետերը նրանց վիրավորել կարող էին միայն այն տեղից, որտեղից՝ այսինքն երկու փոքրիկ անցքից նայում էին աչքերը, և այնտեղից, որտեղից քթածակերը չնչում էին դժվարությամբ:

Այնուհետև՝ դրանցից փոքր հեռու, բայց գրեթե նույն դծում, որպես պահեստի թե օգնական ուժ, մեծ տարածության վրա հանդարտ կանգնած էին պարսից հետևակ նետաձիգ, նիզակավոր գնդերը, կարծես ոչ այնքան կռվին մասնակցելու, որքան առաջիններին փոխարինելու կամ օգնության հասնելու: Իսկ բոլորի ետևը կանգնած էին ծանրամարմին ու ահագին փղերը ձեթով կամ այլ յուղերով օծված: Պարսիկները փղերի այդ վաշտերը դիտմամբ պահում էին ետևում, որ երբ թշնամին համարձակ առաջ գա, իրենք ետ քաշվեն— փղերին թողնեն նրանց վրա:

Եվ պարսից այս փռված–տարածված ու զինված բազմությունը տարբեր տեղերից ու դիրքից նայում էր քամու պես առաջ սուրացող իր հեծելազորին ու նրանց դեմ եկող հայկական աչքաձիսն, որոնց բլուրի վրայից դեկավարում էր մի ճերմակ ձիավոր:

Հայոց այրուձիու ետևից նույնպես չարժվում էին հետևակ գնդեր: Կային զորագնդեր ու վաշտեր էլ, որ մնում էին անշարժ-կանգնած՝ հատուկ հրամանի սպասելով: Սրանց ետևն արդեն նույնպես անշարժ կանգնած էին հունաց զորքերը՝ ոտից-գլուխ զրահավորված, որ գրոշների հետ մեռաքայա վիշապներ էին կրում. կանխավ արված կարգադրության համաձայն՝ նրանք արդեն վահանափակ էին կազմել, այսինքն՝ երկար վահանները քունել կամ դրել էին կողքերին, ու բավական երկար մի տարածության վրա ոտացվել էր երկար վահանների մի պատնեշ. պարսից ետևից՝ արևելքից բարձրացող արևն ուղիղ խփում էր թե այդ վահաններին և թե հույն զինվորների զրահներին ու սաղավարտներին, և այդ ամենի շլացուցիչ փայլը և սղնձապատ վահանների ցոլքը վայրաոտակում էր լեռների վրա և հուրհրատում:

Իսկ այս բոլորի ետև, բոլորից հեռու և բոլորից բարձր՝ նպատ լեռան գոգավոր լանջին կանգնած՝ դաշտը և նրա վրա շարժվող զորքերը դիտում էր Պապն ինքը՝ զրահավորված, սպառազինված, շրջապատված իր հքախմբով ու մոտիկներով: Պապը լուռ էր. նա լարված, ակնդետ դիտում էր դաշտի մերթ մոտը, մերթ հեռուն, և նրան թվում էր, թե Զիրավի դաշտն ամբողջ եռում է մարդկանցով, շարժման մեջ է, անգամ բլուրները կարծես մասնակցում էին այդ շարժմանը, իսկ երկու կողմից դեպի դեսը գնացող հեծյալ գնդերը ճիերը քշում էին այնպես արընթաց, որ կարծես ճիավորներ չէին, այլ արձակված վիթխարի նետեր, նետերի հոծ վոտաններ, որ սլանում էին լարը ձեմ, և Պապին թվում էր թե լսում է նրանց աղմուկի ձայները... Բայց դա նրանց ձայների լոկ արձագանքն էր, որ թնդում էր լեռներում: Եվ Պապն անխոս, բայց հուզված հետևում էր, թե ինչ է լինելու. տեսնում էր, թե ինչպես հակառակորդ հեծյալ գնդերը հետզհետե մոտենում են իրար՝ նետեր ու նիզակներ պատրաստ բռնած. մնում էր մի երկու նետընկեց տարածություն, որ բախվեն իրար... Բայց մինչ այդ նրանց տակավին քաժանում էր Ս.րածանին, և Պապը հաշվում էր, թե ո՛ր զորքն ավելի շուտ կհասնի գետին—հայոց այրուձի՞ն, թե պարսից. և հասնելով՝ կհամարձակվի՞ն արդյոք անցնել գետը, թե ափից նետեր կարձակեն իրար վրա:

Առաջինը գետին հասավ հայոց այրուձին ու, առանց կանգ առնելու, սկսեց, ջուրն ապիտակեցնելով, անցնել գետը. տեղ-տեղ ջուրը հասնում էր ձիերի ոչ միայն փորատակերին, այլև կռնակներին ու մեջքին, Թրջում էր անպատմ հնձվորների ծնկները ու թամբերը, և այդ պատճառով շատերը չոքում կամ կանգնում էին թամբերի վրա, ու այդպես շատ-շատ անցնում էրար հասկ, մղված կարծես այն մտքից, թե եթե իրենք չանցնեն՝ Թշնամին կանցնի և այն ժամանակ ամեն ինչ կկորչի... Մինչդեռ դա պատճառ էր տարօրինակ. նրան թվում էր, որ գետը լավ պահանջ էր, որով կարելի էր Թշնամուց պաշտպանվել. իսկ անցնելով՝ հայերը պարզապես վտանգում էին իրենց: Եվ Պապը զարմանում էր, թե ինչո՛ւ է Մուշեղը թույլ տալիս այդպիսի բան: Քանի որ պարսիկները դալիս են, ինքը դուր է անցնում: Լավ է սպասել և ևկողին չարդել...

«Մի՞թե Մուշեղը չի հասկանում, որ դա վտանգավոր է» ասում էր նա մտքում և անհանգիստ հետևում գետն անցնող հայ հնձելազորին, որոնց մի մասը այս ափին խմբված հերթի էր սպասում ջուրը մտնելու, իսկ մյուս մասը, գետը մտած ու Թրջված, դուրս էր գալիս մյուս ափը:

Մինչ հայերն այսպես զանազան տեղերից անցնում էին գետը —պարսիկները, առանց դանդաղեցնելու իրենց ընթացքը, առաջանում էին քամու պես սլարշավ, և Պապին Թվում էր, թե նրանք պոհ են հայերի ընձեռած պատեհությունից, որ իրենց կամքով անցնում են գետը... Մյուս կողմից՝ Պապին Թվում էր, թե պարսիկները, երևի, ճանաչել են Մուշեղին իր ճերմակ ձիով՝ կամ գուցե, նրան ընդունելով Թագավորի տեղ, ցանկանում են ջարդել ու ցրել կենտրոնը, ինչ նրանց սովորությունն էր առհասարակ, և սպարապետին կամ Թագավորին գերելով՝ որոշել ճակատամարտի բախտը: Նրանք, ըստ իրենց ռազմական սովորության և կերպի, միշտ ձգտում էին խոցել ամենակարևոր կետը—կենտրոնը և, հանկարծակի բերելով, չշմայնել Թշնամուն:

Այդ նկատվում էր և այժմ:

Տեսնելով այդ՝ Պապը մոածում էր, թե արդյոք սպարապետը սխալ չդործեց, երբ երեկ հրամայեց, որ Սմբատ ասպետի և Իշխան Համատարականի գնդերը լեռնանց չարժում կատարեն՝

պարսից թիկունքն անցնելու։ Մինչև նրանց անցնելը՝ կարող է պատահել պարսիկները հանկարծ նեղեն հայ զորքին և այլևս ուշ լինի թևերից կամ թիկունքից եկողների օգնությունը։ Եվ նրան թվում էր, որ բավական էր հայերը բռնեին դեպի այս ափը՝ նետահար կանեին եկող պարսիկներին այն ափում, իսկ գետն անցնողներին՝ կվերջացնեին այս կողմը։ Միաժամ նա կարծում էր որ հայերը մեծ խմբերով են անցնում դեպի այն ափը։ Դա նրան թվում էր վտանգավոր։

— Ձե՞ս կարծում, որ մերոնք չատ են անցնում դեպը,— հարցրեց նա մոտը կանգնած Երեմիային։

— Սպասենք-տեսնենք արքա,— հանդիստ պատասխանեց արքայադպիրը։— Սպարապետը, երևի, հատուկ նպատակով է անում այդ։

Պապն էլ չխոսեց. նա նորից լարված ակնդետ հետևում էր զորքի՝ հեծյալների անցումին, և նրան թվում էր դարձյալ, որ անցնողների թիվը չատ է. այդքան լուռ են անցնում։

Այնինչ Մուշեղն այդ պահին չորացած սեղերով ծածկված մի երկարուկ բլուրի վրա, համհարզներով շրջապատված, հանդիստ դիտում էր իր հեծելազորի անցումը դեպի։ Թվում էր նույնիսկ չատ առույգ տրամադրության մեջ էր և թշնամու վտանգն առանձին արխություն էր ներշնչել նրան. սուրհանդակների միջոցով շարունակ— չուտ-չուտ կարգադրություններ էր հղում, որ արագորեն անցնեն դեպը։ Եվ չատ ճիշտով պատանիները, այդ կարգադրություններից ոգևորված, իրենց ձիերով նետվում էին ջուրը՝ չուտով մյուս ափը դուրս գալու...

Իսկ մյուս ափը եկողներն արդեն, առանց կանգ առնելու, ջրաթաթավ ձիերով շարունակում էին առաջ գնալ և... երբ զորքերն սկսեցին առաջ շարժվել՝ մարդկանց աղմուկից ու ձենքերի շաչյունից բաղմաթիվ թռչուններ բարձրացան եղեգնուտներից և զարմացած թե զայրացած կռինչներով ու ծվոցով սկսեցին պտտվել դաշտի վրա։

Դեռ մի նետընկեց տարածություն ավելի կար իրար դեմ եկող այդ հեծյալ գնդերի միջև, երբ նետաձգությունն սկսվեց երկու կողմից... Սլաքներ ու վիքիններ էին, որ գնում էին իրար դեմ ու ընկնում, գնում էին ճանապարհին զարկվում իրար ու ընկնում... Եվ չնայած արձակած նետերը նպատակին չէին ծա-

ռայում, ընկնում էին հակառակորդին չհասած, բայց երկուսով շարունակում էին նետաձգությունը. ու որքան առաջ էին գնում՝ այնքան ավելի կարծես ոգևորվում էին ու ամուր սլաքների տարափը: Թվում էր ոչ այնքան նպատակ ունենին վնասել իրար, որքան պաշտպանվել, թույլ չտալ մոտենալու. Թվում էր արձակում են վախից և ինքնապաշտպանության բնազդից դրդված կամ նրա համար, որ պարտավոր էին արձակել: Ու այդ ոչ թե մի տեղ էր, մի խմբի կողմից, այլ այդպես անում էին թե դանապան տեղից դեսն անցած հայ հեծյալ վաշտերը և թե դաշտի երեսին ցրված ևկող պարսիկները:

Ու վայրկյան առ վայրկյան հակառակորդներին բաժանող տարածությունը կարճանում էր:

Եվս մի քանի քայլ և ահա ընկավ առաջին զոհը. դա մի հայ զինվոր էր, որ ձիու գլուխը թողած՝ վազում էր բոլորի առջևից: Նա ընկավ կողքի վրա թեքվելով և նրա տակի ձին, կարծես բոլից ազատ զգալով իրեն թե թափով տարված, շարունակեց առանց հեծվորի վազել դեպի արարշավ ևկող պարսիկները. սակայն կես ճանապարհին նա էլ ընկավ՝ նետը ճակատը խրված...

Առաջին այս զոհերին հետևեցին ուրիշները. ընկնում էին թե հայերից, թե պարսիկների կողմից. ընկնում էին գինվորներ, ձիեր... Կարծես հեռվից նայողին թվում էր հանաք էին անում. վազում էին և հանկարծ ձիուց ընկնում ցած. կամ թե կախվում էին ձիու ասպանդակից ու ձին տանում էր նրանց. պատահում էին և ձիեր, որ առանց հեծվորի վազում էին մի կողմից վրա՝ ասես գլուխ փրկելու: Լինում էին և այնպիսիները, որ վրնջալով խառնվում էին իրենց վաշտի ձիերին և մի առժամ գնում նրանց հետ կամ, գլուխ դարձնելով, հետ փախչում, իրենց հետ տանելով և ուրիշ ձիեր, որոնց հեծվորները չէին կարողանում պահել-պահել:

Բայց նետերի տարափը գնալով սաստկանում էր երկու կողմից. գետին էին տապալվում մարդիկ, ձիեր և հաճախ այնպես էր լինում, որ նետերն իրար դիպչելով՝ զրնգում էին ու մխաին ընկնում ցած կամ փոխում իրենց ուղղությունը: Այժմ արդեն կռվում էին ոչ թե վաշտերով, այլ քաոսաթիվ խմբերը բաժանված, գետի ուղղությամբ դաշտում ցրված:

Առաջին իսկ ժամին պարզվեց, որ պարսից ճնշումը ուժեղ էր. նրանք թե մեծաթիվ էին և թե ավելի վարժ. կռվում էին ավելի սառնասիրտ և առաջանում հաստատուն:

Մի առժամ հայերը խիզախորեն դիմադրում էին նրանց և թույլ չէին տալիս առաջ գալու. կանդնեցնում էին կարծես նրանց գրոհը: Սակայն երբ դեմ գալու երկրորդ ժամին արդեն հայերի մի վաշտի զորքերը ցնցվեցին հանկարծ ու նրանք ընկրկեցին՝ սկզբում երեսները դեպի թշնամին հա-հա դնալով, ապա ձիերի գլուխը դարձրին և իրենք, նրանց վրա չրջվելով, նետեր արձակելով, ձիերը քշեցին դեպի գետը:

Եվ դա բավական եղավ որ հայոց մյուս հնձյալ վաշտերը նույնպես նահանջեն, մանավանդ կային մարդիկ, որ կանչում էին՝ «Նահանջե՛լ, նահանջե՛լ»... ու նահանջում էին նույն ինքնապաշտպանության ձևով, մի նահանջ, որ չուտով փոխվեց սարերային մի խուճապի: Հայ հնձյալների մեծ մասը ձիերի վրա կուացած փախչում էին դեպի գետը և, ջուրը մտնելով, ուրախ դուրս պալիս այս ափը. շատ քչերն էին, որ նահանջելով դիմադրում էին, ցանկանալով կարծես դանդաղեցնել պարսից ճնշումը... Բայց դա չէր օգնում. պարսից այրուձին շարունակում էր լայն գծով առաջանալ և նետահարել հայերի նահանջող վաշտերը:

Եվ այս հանգամանքն առանձնապես անհանգստացրեց Համակատամարտը դիտող Պապին. նա չէր իմանում կնճռե նա՞հանջ է թե փախուստ, և մտածում էր՝ մի՞թե ճակատամարտի առաջին իսկ ժամին Մուշեղը կարող է հաղթությունը զիջել թշնամուն. մի՞թե ինքն ստիպված պիտի լինի խնդրել Տերենտին, որ հուսի զորքով օգնության հասնի իրեն...

Եվ լարված հետևելով խուճապող հայ զորքին՝ նա մի կողմից զարմանում էր Մուշեղի վրա, մյուս կողմից՝ ամաչում էր նայել Տերենտին:

«Ի՞նչ կմտածի սա մեր մասին, տեր աստված, ի՞նչ կմտածի եթե իսկապես փախուստ լինի սա... Պարսից առաջին իսկ հարձակմանը նահանջել՝ խայտառակություն կլինի, խայտառակություն» կրկնում էր Պապը մտքում և հևիհև հետևում, թե ինչպես ցրիվ եկած հայ այրուձին նետվում էր գետը և լողալով անցնում այս ափը. տեսնում էր, թե ինչպես ոմանք՝ ուշ մեռ-

դողներն լինկնում էին նեռահար և նրանց ողջ մնացած ձիերը վազում-մոնում էին գետը՝ կարծես թշնամի նեռից փրկվելու: Մի անգամ էլ, երբ նեռը ձիուց ջցեց մի հեծվորի և նրա ձին քառատրակ վազելով մոտավ գետը՝ Պապն էլ չհամբերեց.

— Ա՛յս ի՞նչ է, Երեմիա, ասավ նա մոտը կանգնած արքայապետին,— դիտավորյալ նահանջ է, թե վախուստ:

— Սպասենք, արքա, սպասենք. Մուշեղը, երևի, մի բան կանի. նա հեչտությամբ տեղի չի տա. հիմա երևի օգնություն կուղարկի:

— Բայց պարսիկները արագությամբ առաջանում են,— ասավ Պապը հուզված:— Ահա մերոնք նորից նետվեցին գետը, և ոչ-ոք չի չտապում նրանց օգնության: Ոչ, պետք է մարդ ուղարկել Մուշեղին հասկացնելու, որ միջոցներ խորհի, չտապ... Ահա, դարձյալ...

Նորից, իրոք, մի ուրիշ հեծյալ վաչա խուճապով նետվեց դեպի գետը, իսկ պարսիկները հետևեցին նրանց՝ ձիեր քշելով ու նետեր արձակելով...

Այս տեսարանները հուզված դիտում էին ոչ միայն Պապը, այլև նրա չքախմբի յուրաքանչյուր անդամը, իսկ Ներսեհն այդ ժամին բոլորից առանձնացած՝ իր ևս պարեգոտով ծունկի էր եկել մի փոքրիկ հարթ տարածության վրա և ոսկեհատ ձեռները ճեղմակ մորուսի հետ վեր բարձրացրած՝ աղոթում էր անխոս, որ տերը դթա հայերին այդ անհավատար ու ապստամբ կռվում, իսկ նրա եպիսկոպոսներն ու վարդապետները մի փոքր հեռու կանգնած՝ դիտում էին իրենց հայրապետին և խոսում կամաց.

— Լավ անդ է ընտրել վեհը: Զորքը որ կողմից էլ ետ նայի՝ կտեսնի, որ նա աղոթում է իր համար և դա կոգևորի նրան,— ասում էր մի եպիսկոպոս:

— Եթե այդպես է բոլորս աղոթենք,— առաջարկեց մի մեծամասնին եպիսկոպոս:— Ի՞նչ է լինում, չհմ հասկանում. ահա նորից մերոնք ետ եկան:

— Աղոթե՛նք, աղոթե՛նք,— ասավ մի ուրիշը ծունկի գալով:— Աղոթենք հայոց աշխարհի և նրա զենքի-զորքի հաջողության համար:

Եվ հոգևորականների մեծ մասը եպիսկոպոս թե սարկավագ ծունկի եկան իրենց հայրապետի օրհնակով և սկսեցին աղոթել անձայն:

Հայ հեծյալների խուճապային այդ նահանջը դիտում էր և սպարապետն իր բլրի վրայից՝ իր ճերմակին նստած, թիկնապահներով չրջապատված, բայց նրա թուխ դեմքի և ոչ մի մկանը նեքին հուզում չէր արտահայտում: Ընդհակառակը. թվում էր անգամ գոհ է, որ պարսից ուժերը՝ այրուձին, նրա ետևից և հետևակը գալիս են դեպի իր զորքի կենտրոնը, մոտենում են դեսին, ու մոածում էր, որ լավ կլինի չուտով անցնեն գետը... Նա ոչ միայն մոածում, այլ նախապես ինքն էր ծրագրել և պատվիրել գետն անցնող իր հեծվաշտերի պետերին—սրարշավ գնալ դեպի թշնամին, մասնակապես դիմադրել նրա առաջխաղացման,—որ նրանք մեծ ուժեր նետեն այս կողմը, իսկ երբ թշնամին կմոտենար—նահանջ կեղծել, սուտ մի վախուստ, որ պարսիկներին ոգևորեր, թե հայերը վախան, ու անցնեին գետը...

Մուշեղի ծրագրով՝ պետք էր թուլ տալ անցնեն՝ որքան կարող են և առհասարակ առաջ քաշել պարսից զորությունը... և երբ բավական եկած կլինեին և գետն անցած—պետք էր նո դառնալ և նորից հարձակվել թշնամու վրա... Այդ ժամին ահա պետական եղեգնուտներում պահված հայ նետաձիգ հետևակները նույնպես պիտի խառնվեին ճակատամարտին, իսկ վռոնների ետևից եկող Մամբատ սպասեր և իշխան Կամսարականի գնդերը պիտի զարկեին թշնամու թևերին կամ, եթե պարսից զորքը չատ առաջ եկած լիներ, անցնեին նրա թիկունքը:

Մուշեղը մոածում էր, որ ծրագրի առաջին մասը կատարվում էր.— հայերը դիմադրություն ու նահանջ կեղծելով՝ թշնամուն գրավում էին արդեն դեպի կենտրոնը. պարսից հեծելազորի ետևից, սրա աջող առաջխաղացումն ու հայերի նահանջը տեսնելով՝ գալիս էին պարսից ուրիշ գնդեր էլ:

— Սպարապետ տեր, պարսիկներն առաջանում են,— ասաց համհարզներից մեկը:

— Թող առաջանան, թո՛ղ...

— Սակայն...

— Դա բարի է, տղաս,— հանգստացրեց նա խոսողին:—Դու

դնա հայոնիր եղեգնուտներում պահված աղեղնավորներին, որ պատրաստ լինեն:

Մի փոքր միջոց էլ և պարսից հեծելազորը, նետեր արձակելով, սկսեց դեսն անցնել մի քանի տեղից, ջրերի ձայնին խառնելով մեծագոչ ու հաղթական աղաղակները, ինչպես անում էին միշտ հակառակորդին ահաբեկելու:

Երբ պարսիկները, այսինքն նրանց այրուձին անցել էր բավական թվով՝ մի քանի վաշտերով, հանկարծ սպարապետը ձին քշեց բլուրից ցած և, թուրն օդում շողացնելով, կանչեց կանգնած հայ զորքերին, որ թվում էր անտարբեր դիտում էին կռիվը.

— Օն, հառա՛ջ... հառա՛ջ...

Ու ինքը ձերմակը քշեց առաջ, դեպի նահանջող հայ զորքը, հայ այրուձին, որն իր սպարապետին տեսնելով՝ թրջված ու աղեղազին կանգ առավ ու ետ դարձավ անմիջապես, իսկ գետի եղեգնուտներից դուրս եկան այնտեղ պահված զորախմբերը՝ նիզակավոր ու աղեղնավոր հետևակները և... ճակատամարտն սկսվեց:

Գետի այս ափում՝ ընդարձակ մի տարածության վրա նետաձգություն էր, նիզակների ու տեգերի փայլատակումները, վահանների չխկոց, հայ և պարսիկ զինվորների սպառնալիքն կանչերը... Մի տեղ կռվում էին հայ հետևակներն ու պարսից ձիավորները իրար եկած, և պարսից կավազույն կլոր գլխարկները և հայերի կարճ գդակները խառնվել էին իրար: Մի այլ տեղ իրար էին եկել հակառակորդ հեծյալները, և այնքան մոտ էին, որ աղեղները թողած, նիզակներ ու տեգեր էին բռնեցնում միմյանց դեմ. երրորդ մի տեղում՝ հայ հետևակները եղեգնուտից նետեր էին արձակում պարսից ձիավորների վրա, որ անընդհատ շարունակում էին անցնել գետը. չորրորդ մի տեղում... բայց որ մի տեղն ասես— այնքան շատ էին զրահանք... ավելի շուտ մերթ այստեղ, մերթ այնտեղ— զանազան տեղեր ծառս եղած ձիերի հետ միասին բարձրանում էին արեր ու շողում մարդկանց դիմաց... և մարդիկ ընկնում էին ծանր տնքոցներով, հառաչանքով ու հայհոյանքով. ընկնում էին երբեմն և ձիեր, տակովին անելով իրենց հեծվորին, եթե նա ճարպիկ մի ոստյունով չէր ցատկում մի կողմ ու պաշտպանվում

նիզակով. երբեմն երևում էր և հեծվորը մեջքին ընկած մի ձի, որ վազում էր կովողների միջով մի տեսակ կողքը պահած ու ղլուխը ծռած, կարծես հեծվորի անբնական դիրքը տեսնելու համար. դուցե և ղղում էր մեռնողին ու փախչում էր նրանից սպասվելու:

Եվ արքունի բանակը դղրդում էր հիմա ահեղ ձայներով. հնչում էին պղնձե փողեր, եղջերափողեր, թնդում էին բրոնզե ու երկաթե ծնծղաներ, փողփողում նշանապրոշներ ու արևը, արևը...

Եվ ընդհանուր, համատարած այդ աղմուկի, վիճաչտումի ու նետաձգումների մեջ մերթ ընդ մերթ լսելի էին լինում հայ և պարսիկ զորավարների հրամանները.

— Ջա՛րկ... դեպ ա՛ջ... հառա՛ջ, օ՛ն, հառա՛ջ...

Այս ամենը կատարվում էր դեսի այս կողմը. իսկ մյուս կողմը՝ բոլորովին այլ պատկեր էր. այնտեղից՝ դեսի մյուս կողմից՝ ամբարտաճանչները քանդված հեղեղի պես սրընթաց գալիս էր պարսից մնացած այրուձին, նրա հետևից վազում էր, ուղղակի վազում էր հետևակը՝ յուրայիններին օդնության հասնելու և հայերին խորտակելու:

Ու այս ամենը վերևից, լեռան լանջից տեսնում էր Պապը, ոչ միայն տեսնում, այլև կարծես լսում էր զարկվողների անասելի բարձր կոկորդային աղաղակները, լայնալիճ ալեղների շկահյունը, վերավոր ու կատաղած երիվարների վրնջյունը, որ տարածվում էր լայնատարած դաշտի վրա, ուր սպանվարանների ու սուսերները երևնց վայրով մրցում էին միմյանց հետ, երբեմն մեկը մյուսին նահանգնելով:

Տեսնում էր այս ամենը Պապը և դարձյալ հուզված մտածում, թե արդյոք Մուշեղը ոխակ չէ՞որձնց, որ մեծ թվով պարսիկների հնարավորության ավեց այս կողմն անցնելու:

Նայելով այդ ամենին և, չհասկանալով Մուշեղի արածը, Պապը միտժամ մտածում էր, որ այսօր այստեղ՝ Զերանում վճռվելու է հայոց աշխարհի բախտը և, ով դիտե, քանի-քանի՛ կյանքեր, երիտասարդ կյանքեր պիտի պոհվեն այս մարտում, և արդյոք պիտի հաջողեն...

Իսկապես այդ ժամ Պապի սրտում երկու զգացմունք էին պայքարում իրար դեմ. մերթ ցավում էր, որ այդքան երիտա-

մարդներ պիտի սպանվեին, մեռնեին, մերթ էլ դռնում էր, որ այդպես էլ պիտի լինի, ուրիշ ելք չկա. պետք է ճակատել ու մեռնել, ճակատել, այլապես չի կարելի վանել պարսից զորքը, չի կարելի ազատել, փրկել հայրենիքը... Երրորդ կողմից՝ նրան անհանգստացնում էր այն, որ ինքը հեռու է մարտից, և այդ կապում է վատ անդրադառնալ զորքի տրամադրության վրա. չգնա՞ արդյոք և անձամբ, մոտիկից խրախուսի նրանց, անձամբ օրինակ տա ճակատելու, որ ոչ ոք ետ չմնա, որ ոչ-ոք չվախենա, ոչ մեկի ձեռը չդողա... Եվ նա Պլուտարքոսի գրքերից հիշում էր, որ շատ արքաներ անձամբ են մասնակցել ճակատամարտերին, և մասնակցելով՝ հաճախ չահել են մարտը... Քանի մի վայրկյան նա տարվում էր այդ մտքերով, ապա նորից հուզված դիտում ճակատամարտի դաշտը կամ երբեմն փակում աչքերը, որ չտեսնի քամնելի սիսարանները:

Մի այդպիսի վիճակից հետո, երբ նա աչքերը նորից բաց արավ ու նայեց հեռուն՝ նրա առջև պարզվեց տարօրինակ ու անսովոր մի տեսարան: Գետի այն կողմը, նուշնիկի թավուտներ հեռու, պարսից առաջապահ բանակի հետևակայրում էր մի զարմանալի բան, ավելի մոլեգին, քան դեպի այս կողմը:

Պարսից բանակի հետևում առանձին-առանձին վայրերով կանդնած փղերը հանկարծ խառնվել էին իրար. նրանցից շատերը մեկ-մեկ կամ զույգ-զույգ տեղներից պոկված, երեսը ահա-դեն, ահարկու բլուր մարմիններով վազում էին դեպի առաջ կամ աջ և ձախ ու, կնճիթներն օձի նման դարձրելով, հարձակվում, ոտնատակ էին տալիս այն ամենը, ինչ պատահում էր իրենց ճանապարհին: Իսկ նրանց ճանապարհին, նրանց առջև մինչև Արածանի պարսից զորքն էր—հետևակ ու այրուձի— ոչ իր սպառազինքը չզգացնելով անընդհատ գալիս էր դեպի դեպ:

Եվ Պապին թվում էր, որ պարսիկները փղերին բաց են թողել, որպեսզի մխանգամից, արագորեն որոշեն ճակատամարտի բախտը, այսինքն՝ ջարդեն հայերին և հաղթանակը չհեն:

— Վա՛տ եղավ,— առաջնորդը սեղմեց Պապը,—վա՛տ եղավ: Իսկ Սմբատ սպասեն ու կամաորակները չհասան: Մինչև նրանց գալը՝ ամեն ինչ կվերջանա, երևի...

Համարյա նույն կարծիքի էին Պապի մոտ կանգնած բոլոր ավագանիները ու մեծորյարները, այդ թվում և զորավար

Տերենտը, որ երբեմն գլուխն օրորում էր անխոս ու զուսպ։ Միայն ծերունի Ադամ Գնթունին էր, որ ծեր սրատես աչքերը հեռուն սևեռած ասում էր ինքն իրեն.

— Սա կարծյոք այլ բան է. փղերն ուղիղ առաջ չեն գալիս...

Առաջինը Պապը չէր հավկալ և ոչ էլ նրան չրջապատողները, որ նկատեցին արճակված փղերին. դրանցից ավելի շուտ այդ տեսել էին պարսիկները իրենք, որ «փղե՛րը, փղե՛րը» կանչելով՝ աշխատում էին հեռանալ նրանց ճանապարհից, որ նրանք ուղիղ գնան հայերի վրա։

Փղերը սակայն հայերի վրա գնալու փոխարեն՝ մոնում էին պարսից զորքի մեջ, դուխում, ոտնատակ էին տալիս ով պատահում էր, հարվածում էին կնճիթով ու ժանիքներով և կամ խելագարի պես պտտվում մի ևևնույն տեղը կամ տուրում մի կողմ, ուր ո՛չ մարդ կար, ո՛չ անասուն, ո՛չ արգելք։

Պարսից զորավարները զարմացած էին, որ փղերին թողել էին անժամանակ և այդպես տարօրինակ.— փղերի մեջքի ամրոցիկներում զինվորներ չկային, չատերի վրից վարողները։ Պարսիկներին զարմացնում էր մանավանդ այն, որ փղերը մոռացել են մարտական ամեն կարգ և վազում են ոչ թե ուղիղ գծով դեպի թշնամին, այլ տարօրինակ պտույտներ էին գործում և հարձակվում պատահած յուրայինի–պարսիկի վրա. և նրանց թվում էր, որ փղերին կա՛մ շատ պղպեղախառն զինի են խմեցրել կա՛մ վարողները դուցե վիրավորվել են, որ նրանք այդպես պտույտներ են գործում արտասովոր ու վայրենի մռլտոցներով... Ինչպես մարմնացած զարհուրանք՝ իրենց ահագին մարմիններով նրանք կործանում էին ապառնում բոլորին, ով դրտնվում էր նրանց ճանապարհին. մարդիկ սարսափում էին մանավանդ նրանց կնճիթներից ու ժանիքներին հագցրած սրածայր երկաթներից։

Եվ այս ամենն այնքան օտարոտի էր պարսիկների համար, որ նրանք չգիտեին լինչ անել և երևում էր, որ աշխատում են գոնե փախչել–հեռանալ նրանց ճանապարհից. իսկ եթե այս կամ այն փղի վրա մնացել էր մի վարող՝ նա էլ սարսափահար ջանում էր իր երկարակոթ դանակը խրել նրա գլուխը պարանոցին միացնող տեղը, որովհետև նրան թվում էր, անշուշտ, որ փիղը

կատաղած է, իսկ այդպիսի դեպքում՝ կարդադրված էր նրանց սպանել, որ չատ մարդ չվնասեն։

Բայց նրանք արդեն վնասում էին՝ կատաղի մի մոլուցքով ընկնելով հանդիպողի վրա։

Փղերից մեկն, օրինակ, հասնելով զինվորներին՝ կնճիթով այնպես դարկեց մի հեծյալի, որ նա ձիուց ընկավ տաս քայլ հեռու, իսկ ձին դլորելով՝ ոտի տակ տվեց ու անցավ։ Մի ուրիշը կնճիթով դետնից վերցրեց մի հետևակ զինվոր ու վայրկ պես նետեց մի կողմ...

Եվ այդպես՝ կարճ ժամում դետի այն կողմը տարածվող հարթությունը լցվեց այդ կատաղած վիթխարի գաղաններով, որ խուլ, բայց ահավոր մռնոցով վազում էին այս ու այն կողմ և հողը թնդացնում իրենց ծանր ու ահագին ոտների տակ։

— Ի՞նչ է պատահել սրանց,— զարմանում էին պարսիկները։

— Ի՞նչ է կատարվում,—տարակուսում էին Պապն ու նրան չքնաղապատողները, մտածելով՝ դա հայ երիտասարդների գո՞րծն էր արդյոք, թե փղերը թողել էին պարսիկներն իրենք։

Իսկ Մուշեղն ու նրա համհարզները, և առհասարակ հայերից չատերը, չէին զարմանում, որովհետև գիտեին, համոզված էին, որ դա այն հարյուր հայ երիտասարդների գործը պիտի լիներ։

Եվ նրանք չէին սխալվում։

Այն հարյուր անճնազոհ երիտասարդները, որ երեկ առավոտ հանճն առան ծպտյալ, պարսկական հագուստով անցնել պարսից բանակի ետև՝ սպարապետի առաջադրանքը կատարելու,—սկզբում (ինչպես հետո պատմում էին վերապրածողները), քանի դեռ անընկատելի էին՝ ճանապարհի մեծ մասը ճեպով կտրեցին—անցան սարերի ետևից, իսկ երբ արդեն կարող էին նկատվել պարսից կողմից՝ բաժանվեցին մի քանի խմբի և, դետնին պառկելով, փորող հասան պարսից թիկունքը՝ շատ դժվարին կածաններով, քարերի ու կոշտերի վրայով... ապա, երբ հասել էին դրեթե՝ պատահեց մի հեղեղատ, ավելի չուտ՝ փոքրիկ մի ճորտակ, որով մի ժամանակ հեղեղաջուր էր հոսել,— չունչ առան մի առժամ, ականջ դնելով հեռվից եկող ռազմի փողերին, կանչերին ու աղաղակներին, որից և ենթադրեցին, թե ճակատա-

մարան սկսվել է արդեն, ուրեմն և պարսից ամբողջ ուշն ու միաքը կլինի հայոց բանակի կողմը. ու, ճորակից դուրս գալով, մի քանիսը փորձեցին դիտել մարտադաշտը: Սակայն այնտեղ ամեն ինչ այնպես էր խառնված, այնպիսի իրարանցում էր, որ դժվար էր մի բան տեսնել. բայց նկատեցին դրանն այն, ինչ հարկավոր էր իրենց և ձեռնտու. նկատեցին նախ, որ պարսիկների ուշը կլանված էր դաշտում տեղի ունեցող կռվով, ոչ մի այն մարդկանց, այլև վրերի, որ խմբերով՝ մեջքերին հաշիվներով ամրոցիկները կապած՝ կանդնած էին բոլորովին ետին գծում:

Երիտասարդները այս պարագան լսած՝ ամենայնի նպատակավոր համարելով իրենց ձեռնարկի համար՝ նորից, թեև պարսից հագուստների մեջ, բայց ղզուշությունից զրկված, սողեսող առաջացան դեպի վրերը, որ պատնեշի պես կանգնել-մնացել էին իրենց՝ սյուների չափ, ծառերի բների նմանող ոտների վրա:

Սողում էին նրանք՝ աչքները այդ ոտներին ևեռած, և այդ ոտներից դատ ուրիշ բան չէին տեսնում, անգամ չէին լսում կռվի աղմուկը և ճակատողների կանչերը, որ գալիս էին հետվից:

Գրեթե հավիտենություն թվաց նրանց մինչև որ, այդպես սողալով, երբեմն վեր կենալով ու կուզիկուզ առաջ վազելով, տարբեր տեղերից հասան վրիվարի ոտների շարքերին ու, նորից գետին փռվելով, շունչ առան մի առժամ. ապա ղաշունաճև դանակները, զոռիններից հանելով, սողացին մի փոքր էլ ու գործի անցան՝ յուրաքանչյուր խումբ մի վրա շարքի ետև...

Ու այդ կատարեցին բոլորը գրեթե միաժամանակ: Եվ առաջին վրերը, որ ատացավ, երևի, առաջին հարվածը, այսինքն՝ դպաց սուր դանակի հարվածն իր արունքի վրա— չլսված մի մռլտոցով ծառս եղավ Հանկարծ, լինչպես դալված մի վրիվարի ու նետվեց առաջ: Դրան հետևեց երկրորդը, երրորդը, չորրորդը... Եղան և այնպիսինները, որ նա ընկրկելով՝ տրորեցին իրենց ոտը հարվածողին:

Բայց այդպիսինները քիչ էին: Մեծ մասը, սուր հարվածառնալով, աշխատում էին առաջ գնալ կամ փախչել անմիջապես, երևի նրա համար, որ երկրորդն էլ չտառնան կամ դուրս ոպատավեն հարվածի ցավից... Ու այդպես վիճան չատերը, ան-

զամ նրանք, որ դեռ հարված չէին առացել, բայց ենթարկվելով անառանական այն բնազդին, թե քանի որ ընկերը գնում է՝ ինքն էլ պետք է գնա. կամ պարզապես ենթարկվելով ընդհանուր խուճապին, դուցե և կարծելով, թե վազելու ժամանակն է արդեն,—որպես մարտական փղեր՝ վաղեցին իրենց պարտքը կատարելու:

Մակայն չպետք է կարծել թե համարձակ այս երիտասարդների պոթը դյուրին անցավ կամ թեթև եղավ. ներանցից ոմանք, որքան էլ զգուշ ու չրջահայաց, ընկան փղերի ոտների տակ և, ջարդված քներ առանալով, չկարողացան հեռանալ: Եղան և մեռնողներ, ինչպես պատանի Հմայակ Պալունին, որ սպարապետի կոչին՝ առաջինը դուրս նկավ դրաշարքից և իր պատրաստակամությունը հայտնեց փղերի վրա պնդելու: Սա ոգևորված իրեն տրված հանձնարարությամբ՝ մի փղի ոտի ջղերը կտրելուց և այլ փղին վախցնելուց հետո, մոտիկ նկատեց մեռած քայլ ոտկնծով ծածկոցով զարդարված մի փիղ, որի վրա կար նաև հաշվափակերով կապած նպրնջագույն կերպաս ամպհովանիով մի ամրոցիկ. կարծելով դրա մեջ նստած պիտի լինի կարևոր մի դրաշար կամ նշանավոր մի մեծորյար,—Պալունին արագորեն ոտքաց դնալի նա. ապա զգուշորեն մոտալ փղի փորի տակ ու զաչուխաչափ դանակը խրեց այնտեղ, ուր ենթադրում էր փղի սիրտը, մտածելով ,թե փղիը կընկնի կողքի վրա, ամրոցիկում նստողը կամ քնողը կգլորվի և ինքն այդժամ կարող է վերջացնել նրան, քանի որ բոլորի ուշը կլանել էր ճակատամարտը և փղերի մոտ համարյա մարդ չկար, եթե չհաշվենք հատ ու կենտ վարորդներին, որ նույնպես իրենց մոտացած կամ առաջ վազող փղերի ձայնից չփոթված՝ դիտում էին ճակատամարտը կամ թե ուզում էին հասկանալ ինչու փղերը հանկարծ նետվեցին առաջ: Բայց հաջիվ նա զաչուխը խրել էր. փղի սիրտը—փիղն ահա աղեկտուր մի մռլտոցով, որ նման էր հարված ոտացած չան կլանչի, առաջ գնալու փոխարեն նստեց իրեն հարվածողի վրա...

Եվ պատանի Պալունին ձայն անգամ չկարողացավ հանել:

Ընկերներից մի երկուսը միայն տեսան այդ և մինչև իսկ լսեցին կարծես, թե ինչպես ճարճատեցին նրա ոսկորները փղի ծանրության տակ:

Եվ այդպես մի քանիսն ապանվեցին փղերի ոտների տակ, մի քանիսը մահացու վիրավոր ընկան նրանց ոտի հարվածներից, չկարողանալով ժամանակին սողալով ետ դառնալ: Բայց նրանց մեծ մասն աչքուամենայնիվ սողալով ու թաքնվելով, թաքնվելով ու սողալով գնացին—հասան անվտանգ տեղերը՝ լեռները տանող բլուրներին, որտեղից կարելի էր տեսնել կռվի դաշտը. ու նրանք, որքան էլ հոգնած, բայց հետաքրքրությունից բարձրացան այդ բլուրները և տեսան, թե ինչպես վիրավոր փղերը կատաղած արշավում են դաշտում կամ պարզապես խելագար պտույտներ գրգծում: Կային փղեր էլ որ ջիղը կտրած ոտները կախ քցած կանգնել ու կնճիթով փորձում էին շոշափել այդ ոտը, իմանալու թե ինչ է պատահել իրենց... բայց մեծ մասամբ, արշավում էին այս ու այն կողմ գլորվող ժայռաբլուրների նման, և պարսից զորքերն աշխատում էին խուսափել նրանցից՝ դեպի մոտիկ բլուրներն ու բարձունքները գնալով...

Տեսնելով իրենց արածի հաջող արդյունքը՝ երիտասարդները կարծես մոռացան ամեն վախ ու հոգնություն և համակվեցին մի անդիմադրելի ուրախությամբ ու հպարտանքով:

— Հրաշալի՛ է,—ասում մեկը սրտախոր բավականությամբ:

—Արդյոք տեսնում են մերոնք փղերի այս պարն սքանչելի:

— Ես կուզեի ամենից առաջ տեսնեին Թադավորն ու սպարապետը:

— Ախտոս Պալունին... որքան կուրախանար,— ավելացրեց մի ուրիշը տխուր:

Խոսում էին նրանք և հափշտակված նայում՝ հեռուում կատաղած փղերի վազքին... Եվ այդ փղերը մի քանի հատ չէին, այլ հարյուր, երկու հարյուր, գուցե չորս հարյուր հատ, որ իրենց վիթխարի մասքլուր մարմիններով նետում էին ամեն կողմ ուր մարդ էին տեսնում. նրանց այդ վարմունքի մեջ կար տարերային ու աչխարհասատան մի բան, որ թվում էր սխոի կործաններ ամեն ինչ... Դրա համար էլ, երևի, պարսից զինվորները նետեր էին արձակում նրանց վրա, նշան բռնելով հատկապես նրբանց աչքերը, որտեղից ավելի շուտ էին խեղճանում նրանք. ոմանք էլ աչտեներ ու տեգեր էին նետում նրանց առաջին ոտների վրա, որ վիրավորվելով՝ չկարողանան վազել ու մարդիանց վնասել:

Բայց վիզերը չարունակում էին մոլեգնել...

Այն հանդամանքը, որ վիզերն առաջ չէին դալիս մարտական չարքերով ու վազքով, այլ պտտվում էին պարսից զորքի շրջանում, նրանք եթե մեկ-երկուսն առաջ դալով՝ հասնում էին մինչև դեռն ու նո դառնում, դրանից արդեն քարձր տեղեր գտնվող հայ գինվորներն ու զորավարները, մանավանդ Պապն իր շրջապատողներով հասկացան, վերջապես, կատարվածի էությունն ու պատճառը, և հիմա հրճվանքի մեջ էին, որ պարսիկների դլուխն ու հաշիվը խառնվել էր այդպես անակնկալ:

— Ինչ հաճելի տեսարան, կոմս,— ասում էր ուրախացած Պապը Տերենտ զորավարին:— Տեսեք, գնում են իրենց գինվորների վրա, տրորում են իրենց գինվորներին:

— Այո, արքա, պարսից բանակի ամենամեծ ուժն ու զորությունը դրանք են և, կարելի է, ասել, դարձան անվտանգ: Ասում են՝ չունը տերոջը չի կծում: Ահավասիկ...

— Եվ Շապուհը միշտ դրանցով էր հաղթում թշնամիներին,— ավելացրեց Պապը:— Հիմա տեսնենք... Ահա մեկն էլ գլորվեց. երևի զարկեցին...

— Թող կատորեն իրար,— ասավ չքախմբի անդամներից մեկը:

Մինչ Թագավորն ու Տերենտը, ճակատամարտի դաշտին նայելով, խոսում էին՝ Երեմիան նրանց հետև մոմատախտակի վրա ինչ-որ նշումներ էր անում իր արծաթ ստիլով, որ մոմատախտակի հետ բերել է Բիզանդիայից:

— Ցուցամոլությամբ է զբաղվում մի այսպիսի պահի,— ասավ ավագանիներից մեկը հարևանին, Երեմիային մատնացույց անելով:

***

Նույն այդ պահին, երբ կատաղած վիզերն ընկել էին իրենց՝ պարսից զորքի մեջ և զորքն աշխատում էր ազատվել նրանցից, սպանելով ու անվտանգ դարձնելով, երբ հայոց և պարսից զորապետերը դեռ այս կողմը ճակատում էին իրար դեմ՝ քրտուելով, նիզակահարելով ու նետընկեց անելով մեկմյանց մի կատաղի գուսպարի մեջ, այդ նույն պահին պարսից զորքի աջ և

ահյակ Թևերին, մասամբ և Թիկունքին երևացին նոր զորքեր, որ իջնում էին սարերից, իջնում էին մրջյունների պես ցրված ու սևին տալով։

Երբ այդ բանը մատնացույց արին Պապին՝ նրան պաշարեց մի նոր հուզում, ոչ միայն նրան, այլև չքախմբի բոլոր անդամներին. Թե Տերենտին և Թե Ներսեսին ու իր եպիսկոպոսներին Թվաց, Թե դրանք պարսից նոր ուժեր են, գալիս են օգնության։ Ու հուսահատության պես մի բան սողաց նրանց սիրտը, Թե այդ նոր ուժերն անշուշտ պատերազմի բախտը կվճռեն հօգուտ պարսից։

— Այս լավ չեղավ,—նկատից անհանգստացավ Պապը։—Մի՛Թե Մմբատ սպասեր և իշխան կամսարականն ուշացան։

Նրա խոսքը Թևանցի գնացած Սմբատ Բագրատունու և իշխան Կամսարականի հնձյալ գնդերի մասին էր, որոնց վրա այնքան հույսեր էին դրել Թե սպարապետը և Թե Պապն ինքը։

— Խայդ, արքա, դուցե մեր զորաշղթերը լինեն,—նկատեց Երեմիան։

— Հազիվ Թե,—կասկածեց Պապը,— ե՞րբ հասցնեցին այդքան հեռու գնալ։ Դա համարյա պարսից Թիկունքն է։

— Ինձ նույնպես, արքա, Թվում է պարսիկները չեն,— մեջ Յամանց ծերունի նախարար Սդամ Գնթունին, որ հայտնի էր իր սրատես աչքերով։— Նրանք, նայեցեք, ավելի շուտ էտ են գնում, քան առաջ են գալիս։ Ինձ Թվում է՝ մերոնք են, գնում են պարսից Թիկունքն անցնելու։ Ահա, նկատեցեք, պարսիկները անհանգստացան, նրանք զարմացած են... Ահա ձիավորներ սլաքավեցին դեպի սարից իջնողները... Ահա՛ և նետեր են արձակում...

Եվ, իրոք, պարսիկները, գնալ այն կողմը դանվող պարսիկները, նկատելով սարերի լանջով իջնող հնձյալ զորքերը, մոռացան կարծես վրեժխնդրին, մոռացան գնալ այս կողմը տեղի ունեցող ճակատամարտը և իրենց ուշն ամբողջ դարձրին սարից իջնողների կողմը, որոնց զրահները, սպառազինքն ու նիզակների ծայրերը երբեմն-երբեմն փայլատակում ու ցոլում էին արևի տակ, և որոնք իջնում էին, ոմանց ասելով, աղեղները պատրաստ բռնած և, հավանորեն, աղաղակում էին, չէիտես պարսիկներին օրհնաբերով, նրանց խաբելո՞ւ, որ յուրայինն են, Թե

Նրանց վախեցնելու, շվոքելու և նրանց ուշն իրենց լմբ դրա-վելու նպատակով, որովհետև օդի մեջ եղած աղմուկների վրա ավելացավ լեռներից լսվող մի ինչ-որ խուլ բան էլ:

Դրանք իսկապես Սմբատ Բագրատունու և Սպանդարատ Կամսարականի զնդերն էին, որ դուզահեռ սարերից միաժամանակ իջնում էին հապճեպ:

Շատ չանցավ, երբ նրանք արդեն, իջնելով տարբեր կողմերից՝ աջ և ձախ սարերից, բռնեցին տիրող բարձունքները՝ երկու կողմի բարձր սարերից գաղված բլուրներն ու լեռնասուերը կամ, ինչպես ժողովուրդն է ասում, լեռնամասները:

Ջանցավ մի փոքր ժամանակ էլ՝ այդ թևերում ու թիկունքի որոշ մի մասում բացվեցին նոր ճակատները: Պարսից պահեստի զորքերը, որ մասամբ գնում էին դեպի գետը՝ յուրայիններին օգնելու, մասամբ կանգնած էին երեսները դեպի հայերը, հիմա ստիպվեցին դառնալ դեպի եկողները և թիկունքներն անել դեպի գետը: Սակայն թե չրջապատված էին—սխալ կլիներ, բայց նրանք այժմ հարկադրված էին ճակատել համարյա բոլոր կողմերի վրա: Մի կողմից ստիպված էին սանձահարել, վերջ տալ կատաղած հարյուրավոր վիզերի մոլեգնությանը, մյուս կողմից՝ ճակատել հայոց նոր ուժերի դեմ, որ ավելի բարենպաստ դիրք ունեին, քան իրենք:

Ու հիմա Ջիրավի դաշտի բոլոր կողմերում, ավելի մեծ տարածության վրա, մի քանի վարստաի չրջագծով բախումները, ընդհարումներ էին—նետաձգություն, նիզակակռիվ ու թրաշողում. մարդիկ սլաքներ, տեգեր, աշտեներ էին նետում իրար վրա, ձիերի վրա: Մի տեղ ձիավորները արշավասույր գնում էին հակառակորդի հենյալ կամ հետևակ խմբերի վրա՝ նիզակներ ու վահաններ ցոլացնելով արևի տակ, մի այլ տեղ զրահավորված հակառակորդ հետևակները ծնկաչոք կամ կանգնած՝ նետերի անընդմեջ հեղեղ էին ուղղում միմյանց դեմ, կարծես օդի միջով երկարուկ ճկների կամ օձերի վտառ էր անցնում:

Մարդկանց համակել էր տարերային մի կատաղություն, և նրանք մերթ առաջ էին վազում՝ ահեղագոչ աղաղակներով, մերթ ետ էին ընկրկում կռացած, մերթ բարձրանում էին իրենց հասակից վեր ու ընկնում... Ու ամբողջ դաշտը զալարվում էր մարդկային մարմիններով, լցված էր մարդկային ճիչերով, աղ-

մուկներով, ընկնողների, վիրավորների հեծեծանքներով ու մեռնողների հառաչանքներով:

Սակայն կռիվն ավելի սաստիկ էր գետի այս կողմը, որ դնալով բորբոքվում էր՝ ծայր կատաղության հասնելով:

Մուշեղ սպարապետը ծրագրելով իր կեղծ վախուստ-հետևանքը՝ չէր կարծում թե պարսից այդքան մեծ ուժեր կընդունեն անցնել գետը: Նրան թվում էր՝ կանցնի մի քանի վաշտ—դրանց կջարդեն, մինչև Սմբատ սպասատն ու իշխան կամսարականը կանցնեն նրանց թիկունքը և շփոթությունը կատարյալ կլինի պարսից բանակում, ու ինքն այս կողմից դեռևս անցնելով՝ կդրոհի նրանց վրա, ապա ամեն կողմից կշրջապատեն թշնամուն ու կջարդեն հարմար դիրքերից:

Բայց գետն անցել էր պարսից զորքի համարյա կեսը, և հայոց բանակը հիմա ստիպված էր դիմադրել այդ ահագին ուժին: Ու ճակատամարտն այստեղ գնալով սաստկանում էր այն աստիճան, որ զորքերը խառնվում էին իրար. ոչ թե բանակներ էին ճակատում միմյանց դեմ, այլ բազմաթիվ խմբեր, անհատներ իրար եկած՝ աշխատում էին ոչնչացնել միմյանց... Ու մարդկային զանգվածն ալիք էր տալիս այս ու այն կողմ, մերթ բարձրանում, մերթ իջնում, փայլեցնելով իր զրահներն ու զինքերը, կարծես առասպելական մի բազմագլուխ ու վիթխարի կենդանի, որ մեջքին սուր փշեր ունի և փայլուն թեփուկներ: Մերթ էլ մարդկային այդ ահռելի զանգվածը շաժանվում էր երկու մասի և հակառակորդ զորքի մեջն բացվում էր մի յայն անջրպետ, կարծես խորունկ մի գետ, որը, թվում էր, փորձում, բայց չէին համարձակվում անցնել... Սակայն բավական էր լինում, որ մեկն առաջ նետվեր—խիզախեր այդ քայլն անելու— օրինակը դառնում էր վարակիչ. հակառակորդները նորից խառնվում էին իրար, և նրանց աղմուկը, ճիչն ու ոռնոցը հասնում էր այնպիսի չափերի, որ մարդիկ իրենց իսկ ձայնը չէին լսում չնայած գոռում էին թոքերի ողջ ուժով:

Պարսիկները գրոհում էին խիզախորեն, միշտ աղմուկով ու հայհոյանքով, արհամարհելով հայերին, իսկ հայերը դիմադրում ու հարձակվում էին կատաղի համառությամբ, լցված վրեժի և առելության զգացմունքներով, աշխատելով խոցել, սպանել եկողին և թույլ չտալ առաջ. և նետեր ու սրեր էր որ

դիպչում էին կռվողներն զրահներին, վահաններին ու սաղավարտներին, ինչու և բարձրանում էր պղինձների ղնգոց, մեռածների կրճտյուն ու շաչյուն:

Եվ պատերազմը դղրդում էր իր մոլուցքի մեջ:

Մուշեղ սպարապետը՝ ձերմակը նստած, շրջապատին իշխող իր բլուրի վրայից նորից սուրհանդակներ էր վազեցնում այս ու այն կողմ, որ օգնություն հասցնեն կռվողներին ու նեղն ընկածներին, որ վիրավորներին ուղարկեն հունաց զորքերի կազմած վահանափակը, կամ երբեմն խրախուսում էր տատանվող ու անվճռական զինվորներին, որպես զինակից՝ սուրը հանած առաջ նետվելով, և որպես հրամանատար՝ որոտալից մի ձայնով, որ չէր կարելի անտես առնել—այնքան հուժկու էր այդ ձայնը և խրոխտ, որ մարդ զարմանում էր թե ո՛րտեղից է այդ փոքրիկ մարմնի մեջ այդ ուժգին ձայնը:

Եղավ մի պահ, որ հայ զինվորները՝ սպարապետի բլուրի կողմը զանվող թևում բռնվեցին բնազդական մի վախով թե ինքնապաշտպանության զգացումով և փորձեցին կարծես վախտուտի դիմել, բայց այդժամ իր բլուրից ցած ճոխացավ սպարապետն իր համհարզներով:

— Վախկոտնե՛ր,— գոռաց նա ահեղաձայն,— ինչ զորքն իմ դիակի վրայով կարող է նահանջել...Նահանջեցեք իմ դիակի վրայով, որ չտեսնեմ ձեր փախուստը... Հառա՛ջ, հետևեցեք ինձ,— բարձրացրեց նա մերկացրած սուրը:

Ու կատաղվեց անսպասելին:

Նահանջող հայ զորաթևը նորից երեսը դարձրեց դեպի թշնամին ու առաջ նետվեց հարձակվելու:

Մուշեղը ուղորություն ուներ երբեմն՝ ճակատամարտի եռուն պահին իր զինվորներին խրախուսելու համար, կանգնել իր ձերմակի մեջքին ու գոչել. «Անվախ առա՛ջ. ձեզ հետ է ձեր սպարապետը»... Ու զինվորները երբ լսում էին նրա ծանոթ թավ ձայնը և, փութանցիկ մի հայացք նետելով հետ, տեսնում էին իրենց զորավարին ձերմակ նժույգի վրա կանգնած, ոգևորվում էին և համարձակ նետվում առաջ:

Սպարապետի անվախությունը կորով էր ներշնչում նրանց, և նրանք գնում էին անձնազոհության:

Այդպես եղավ և այժմ, մանավանդ երբ լսեցին, որ Սմբատ

բազրատունին ու իշխան կամսարականն անցնում են թշնամու թիկունքը:

— Համարձակ առա՛ջ: Սմբատ սպասան անցել է թշնամու թիկունքը, իշխան կամսարականը նեղում է նրանց ալ թևը,— ասում էին ձիավոր հարյուրապետներն ու վազում առաջ:

Տեսնելով փախչողների ետ դառնալը՝ պարսիկները կարծես վարանեցին մի պահ, բայց իսկույն էլ չդիմանալով հարձակումը:

Ու հակառակորդները նորից իրար եկան. նորից նետաձգություն, թրաշողում ու նիզակաբախում... Իսկ Մուշեղն իր ձերմակով անցնում էր զնդից-զունդ ու՝ մերթ աներևույթանում նրանց արանքում, մերթ՝ սուսերամերկ ու պրահահանդերձ՝ չողում էր հանկարծ, ինչպես ճերմակ մի կայծակ՝ նորից անսպասելի դառնալու համար, մերթ կանգնում էր նժույգի վրա՝ կորդակաճաճ սաղավարտով ու զրահով, ինչպես ռազմի դայլայլած մի ոգի.

— Օ՛ն... Անվախ առա՛ջ... Զարկ համարձակ...

Նրա թիկնապահները, ճարպիկ ձիավարելով, սրերը հանած հետևում էին նրան, իսկ Հրահատը միաժամ և պոռում էր դեմքի մկաններըը լարած.

— Համարձակ առա՛ջ... առաջ... Սմբատ սպասան անցել է թշնամու թիկունքը, իշխան կամսարականը ջարդում է նրանց... Հառա՛ջ...

Նրա զայրույթին ուժ էր տալիս կարծես մոտիկ գտնվող պարսիկների տեսքը, որոնց յուրաքանչյուրին նա համարում էր առևանգող, ավազակ և անձնական թշնամի:

Նկատելով մի խումբ հեծյալ պարսիկների, որ առաջանում էին անվախ, նիզակները պարզած՝ Հրահատի սրտում մի կատաղություն բռնկեց հանկարծ. անպատվություն զգաց կարծես, որ նրանք այդպես համարձակ գալիս են իրենց վրա և, դիմավորներին «հառաջ», «ինձ հետ» պոռալով՝ նետվեց առաջ... և դիմավորները տեսան, թե ինչպես նա, սուրը բարձրացրած, ձին քշելով՝ հարձակվեց առաջին իսկ հանդիպած պարսիկի վրա և մի հարվածով գլորեց նրան ձիուց, վիրավորեց երկրորդին, բայց երրորդի վրա զնալիս՝ ինքն ընկավ երկու կողմից ճկող երկու պարսիկի հարվածներից:

— Հրահատն ընկավ, Հրահատը՛,— ճչաց նրա եռևից գնացող զինվորներից մեկը ու ձին լարեց նրա կողմը:

Այդ տեսնելով՝ նրա ընկերը հեծյալներն արագացրին իրենց նժույգների ընթացքը և դուռհեցին պարսիկների վրա, նրա համար կարծես, որ պարսիկներին չթողնեն ընկած Հրահատին ձիերով տրորելու:

Ու սկսվեց մի կատաղի նիզակաբախում ու սրահարվ: Երկու կողմն էլ համառ էին և անդիջում: Բայց քանի մի վայրկյան հետո, երբ նոր հայ հեծելակներ հասան և պարսիկներն ընկրկեցին,— զինվորները, ձիերից իջնելով, ծանր վիրավորված Հրահատին դուրս բերին մարտի շրջանից և ապա, սպարապետի հարդադրությամբ, պատգարակով տարան հունաց վահանափակը:

Պատգարակի մեջ Հրահատն անշարժ էր, աչքերը փակ և միայն շնչում էր ծանր ու ընդհատ... Թվում էր՝ ուզում է աչքերը բանալ, բայց չէր կարողանում. կոպերը ծանրացել էին կապարի պես. զգում էր սակայն, որ մարդիկ ինչ— որ բան են անում իր հետ, թե ինչ—այդ չէր հասկանում, բայց մտովի տեսնում էր սպարապետին՝ ձերմակի վրա և Նաղենուն՝ աղրյուրի մոտ, որ նայում էր իր թուխ ու հուր աչքերով:

Երբ Հրահատին հասցրին վահանափակ—բուժարարները ու վիրակապները կռացած կամ նստած վերքեր էին լվանում, վերքեր էին կապում կամ, տանջալի ցավերը պատճառելով, նեռեր էին հանում զինվորների մարմնից: Իսկ երբ Հրահատի պատգարակը գետին դրին՝ մի ծերունի վիրակապ մոտեցավ նրա վերքը տեսնելու. բայց հազիվ մոտեցել էր՝ հառաչեց ու ընկավ ծնկների վրա.

— Հրահատ սիրելի. դո՞ւ ևս վիրավոր...

Ու դժրովանքով ցնցեց նրան, որ խոսի:

Բայց Հրահատն անշարժ էր և աչքերը փակ:

— Տեր աստված, ուշակորո՞ւյս է, թե մեռած,— ասաւ նա ձեռը դնելով Հրահատի սրտին:

Այդ ծերունի վիրակապը Զաքարեն էր:

Այդ ժամանակ, երբ գետի այս կողմը բանակները նորից խառնվեցին իրար և սպարապետն ինքը մտավ ճակատողների մեջ, պատն ավելի անհանգստացավ սարի վրա: Տեսնելով, թե ինչպես էր Մուշեղը մերթ խրախուսում զինվորներին, մերթ

մխրճվում Երանոյ չարքերն ու անհետանում, նա հուզվում էր, թե չլինի Մուշեղը հանկարծ վնասվի կամ գերի ընկնի: Ու մինչ չքախմբի անդամները հուզված հետաքրքրությամբ դիտում էին կռիվը՝ Պապը ցանկություն հայտնեց գնալ-մասնակցել, մոռնկից խրախուսել զինվորներին, բայց չըջապատողները դարձյալ չթողնին, մանավանդ դեսպան Տերենտը, նախարար Գնթունին և Երեմիան:

— Դու պետք է պահես քո անձը, արքա, այդպես էլ կարելի՝ ..

— Բայց որքան պատվաբեր է, որ իմ զորքը ճակատի թշնամու դեմ, իմ հրամանատարները լինեն սրի ու հրի մեջ, իսկ ես միամիտ դիտող:

— Այդպես է կարգը, արքա,— ասում էր Տերենտը իր հեղ, համոզիչ ձայնով ու բարեկամաբար:— Արքաները պետք է ղեկավարեն:

— Եվ կռիվն հարկ եղած դեպքում,— հարեց Պապը:— Հիշեցեք Պլուտարքոսը, կոմս:

— Շատ հաղվադեպ, արքա. այն ժամանակ մխայն, երբ լքված զորքին անհրաժեշտ է լինում խրախուսել անձնական օրինակով: Իսկ քո զորքը ճակատում է թևերին:

— Բայց թշնամին մեծաթիվ է, կոմս: Ինչո՞ւ, ի դեպ, հույն զորքը չի գալիս օգնության,— ասավ նա, ինչ վաղուց մտածում, բայց չէր ուզում ասել. սակայն այժմ ասավ ակամա, և թեթևացավ:

— Պետք ասայժմ վահանափակ են կազմել, արքա: Եթե հարկ լինի՝ չեն զլանա, անշուշտ, կվճռեց օգնությունը:

Պապին չբավարարեց դեսպանի հանդիման ու քաղաքավար տված պատասխանը. նրա հոնքամիջը մի խոր կնճիռ դրոյցավ դրանից և նա հրեցը նորից զարձրեց դեպի կռվի դաշտը՝ զարձյալ հուզված ու անհանգիստ, որ ինքն այնտեղ չէ: Իսկ նրան չարունակ թվում էր, որ եթե ինքն այնտեղ լինի—ճակատամարտն այլ ընթացք կստանա և շուտ էլ կվերջանա: Սկզբում, երբ ճակատամարտը դեռ չէր սկսվել, Պապը, ճիշտ է, ցանկանում էր մասնակցել, մտածելով մղված այն մտքից որ պարզապես անհարմար էր համարում հեռու լինել զորքից մի այդպիսի օրհասական պահի, երբ պետք էր խրախուսել, ոգևորել նրանց և

լարել Թշնամու դեմ, սակայն հիմա այլ էր նրա ձգտումը. տեսնելով, որ հայ զորքը դեմ է այս կողմը դեպքուն ճիգ է գործ դնում Թշնամուն ետ մղելու և բանն այնտեղ է հասել, որ սպարապետն ինքը մի քանի անգամ է եղել ճակատամարտին,— նրան թվում էր, թե հայ զորքը պարտվում է, ուստի իր մոտիկությունն ու խրախույսը կարող է օգնել զորքին և թերևս վճռել կռվի ելքը... Մյուս կողմից՝ դիտելով ճակատամարտի ահավոր դաշտը, ուր վիրավորվում, սպանվում ու ընկնում էին իր զինվորները,— նրան թվում էր, թե այդ ամենը կատարվում էր իր համար, թե մարդիկ վիրավորվում ու սպանվում են միայն իր համար, որ ինքը մնա թագավոր, որ հող նման չընկնի պարսից ձեռքը... իսկ ինքը դավաճանում է նրանց, մնալով այդ ապահով հեռվում, անգամ չմոտենալով կռվի վայրին...

Մի քանի րոպե նա մոայլ, ակնդետ նայում էր, թե ինչպես են իր զինվորները խոյանում Թշնամու վրա, ինչպես են քրտնում, նիզակահարվում գլխից, ուսից կամ կողքից և ընկնում,— նա մխաժամ չնչում, հևում էր ծանր մի տնքոցով, ապա հանկարծ այլայլված առաջ գնաց մի երկու քայլ՝ թրի դաստակը բռնած, նորից կանգ առավ ու, փոքր անց, չքամթի անդամները դարմանքով տեսան, թե ինչպես նա հանկարծ պոկվեց տեղից և, ծնողների տնից. փախչող պատանու նման, վազեց դեպ իր ձին, որ քանի մի քայլ ներքև բռնած—պահում էր դրանիկներից մեկը՝ մյուս մեծորյարների ձիերի հետ միասին: Ձիուն հասնելն ու նրան հեծնելը մի ակնթարթ տևեց ու այն տեսան, որ թագավորն իր ոսկեզուն ճիով արագ լինում էր ցած:

Շքախմբի անդամները չփոթված, համեմատական եկած էրար անցան. ծերունի Սդամ Գնթունին և Տերենտ կոմսը միայն չկորցրին իրենց սառնասրտությունը:

— Փրկեցեք թագավորին,— ասաց նա վշտացած, որ Պապը չէր լսել իրեն:— Ձիուններք կռվի մեջ մտնի...

Սակայն ուշ էր արդեն: Պապը հիմա սարի ստորոտումն էր: Նա գնում էր ձիու վրա կուացած, մերկ թուրը չողացնելով ու թիկնոցը ծածանելով:

Նա ճակատամարտի վայրը հասավ այն ժամին՝ երբ հայոց զորքը, իր սպարապետից խրախուսված, առաջ էր նետվել և յորված, ոտքուվով, ղեկքի բոլոր տեսակները գործադրելով՝

ջանում էր թշնամուն քշել դեպի գետը: Իսկ թշնամին, երբ գետի մոտիկությունն ու նրա վտանգն զգալով, ավելի էր համառում: Եվ հայերն ավելի էին աղմկում ու խրախուսում իրար, իսկ մեկը նրանց մեջ բամբ ձայնով չարունակ գոռում էր պարսկերեն.

— Հառա՛ջ, հառա՛ջ... Հոռոմներն ահա գալիս են մեզ օգնելո՛ւ...

Ապա, դրանով կարծես չբավարարվելով, ավելացնում էր դարձյալ պարսկերեն, դիմելով պարսիկներին.

— Դուք պաշարված էք, պարսիկներ: Մեր իշխաններն անցել են ձեր թիկունքը... Հոռոմները գալիս են մեզ օգնելու...

Այս խոսքերը, որ ասվում էին շատ բարձր ու թավ ձայնով, կարծես ազդեցություն ունեցան. պարսից շարքերն ինչ-որ չփոթություն ընկավ. նրանք ընկրկեցին, ու սկսվեց նահանջի պես մի բան:

Գուցե դա խարեություն էր՝ հայերին գետի այն կողմը քաշելու նպատակով: Համենայն դեպս նրանք կռվում էին առանց երես դարձնելու և կռվելով ետ-ետ գնում: Նրանց մի մասը կռվում էր, դիմադրում, մյուս մասը՝ ետևում փորձում էր անցնել գետը: Հեծյալներին հաջողվում էր այդ, որովհետև ձիերը նրանց հանում էին մյուս ափը. ինչ վերաբերում է հետևակին՝ նրանք չգիտեին ինչ անել. ծանծաղ տեղ ընտրելու ժամանակ չկար, ուստի և նետվում էին գետը՝ լողալով անցնելու. բայց զրահներն ու զենքերը թե ծանր էին և թե նեղում էին նրանց շարժումները: Գալիս՝ անցել էին ծանծաղուտներով, ձիերով, բայց որովհետև չատերը կորցրել էին ձիերը և անցնում էին առաջին պատահած տեղով ու չէին ենթադրում, թե խոր կլինի, և դրա հետ միասին, զենքով ու զրահներով լողալն անսովոր լինելով, չատերը չէին կարողանում լողալ և խեղդվում էին:

Մուշեղը, տեսնելով որ իր միջամտությունն օգնեց զորքի ոգին բարձրացնելու, բավականությամբ ետ կանգնեց կռվողներից, որ ձին քշի՝ վերևում կռվողներին ևս խրախուսելու, այդ միջոցին նկատեց, թե ինչպես մի խումբ հեծյալ երիտասարդներ, ձիերը չափ քցած, սարի կողմից վազում էին մի թիկնոցավոր հեծյալի ետևից և խնդրում, որ նա կանգ առնի, առաջ

չգնա... Բայց ոսկեգույն ձիավորը կարծես նրանց չէր լսում և դեպի ճակատամարտն էր սուրում քաոսամթագ: Նրա ոսկեգույն բաշը ևս նժույգից, սաղավարտից ու կարմիր թիկնոցից Մուշեղն անմիջապես ճանաչեց Թագավորին և, իր ճերմակը կանգնեցնելով ու ամեն կարգ, պատշաճավորությունն մոռացած, իր թավ խրոխտ ձայնով գոռաց, ինչպես կգոռան մի տղայի վրա.

— Պա՛պ, կանգնի՛ր... Պա՛պ...

Բայց Պապն իր ձիու վրա առաջ թեքված, մերկ սուրը ձեռին սլանում էր դեպի կուվողները և, չգիտես, ձիու թափը տարա՞վ նրան, թե նա ինքը ցանկացավ այդ, գնաց աներևույթացավ կուվողների մեջ:

Ինչպես Թագավորին հետապնդող երիտասարդները, այնպես էլ սպարապետը ձին քշեց նրա ետևից գայրացած մի հոր նման, որ գնում է պատժելու իր անհնազանդ որդուն:— «Սա ի՞նչ է ուզում, սա ինչո՞ւ եկավ» կրկնում էր նա մտքում վրդով, որ իր հոգսի վրա ավելացավ նրան հետևելու-պահելու հոգսն էլ:

Մուշեղը զարմանում էր, որ չքախմբի բազմաթիվ անդամները, թիկնապահները չեն կարողացել պահել նրան և թույլ են տվել դա այս արյունահեղ մարտի մեջ... Աչքերով որոնելով Պապի թիկնոցը՝ Մուշեղը, նիզակը հարվածելու պատրաստ, իր ճերմակը քշեց նրա գնացած ուղղությամբ:

Սև նժույգ հեծած մի երիտասարդ, որ նույնպես այդ կողմն էր շտապում, սպարապետին տեսնելով, բացականչեց.

— Թագավորը, սպարապետ, Թագավորը...— Ու վառվող աչքերով, համակ հավիշտակություն ու անհանգստություն արտահայտող դեմքով՝ նա ձին քշեց սպարապետի առջևից, կարծես հրավիրելով նրան հետևել իրեն:

Եվ սպարապետը, Պապի հետքը կորցրած լինելով, հետևեց այդ երիտասարդին... Ու քիչ հետո հեռվում, հայ զինվորների արանքում նկատեց Պապին, որ սուրը բարձրացրած գնում էր դեպի մի պարսիկ հեծվոր, իսկ մի ուրիշ պարսիկ ձիավոր, նկատելով նրա արտակարգ զրահներն ու հագուստը, խոյանում էր դեպի Պապը և այն է՝ մոտենում էր սուրը գլխից բարձրացրած ու պիտի զարկեր— սպարապետի առջևից գնացած ևս

Ձիավոր երիտասարդը վրա հասավ ձիու ամբողջ թափով և իր սուրը կողքից իջեցրեց պարսիկի դաստակին:

Պարսիկի սուրը կտրված ձեռի հետ ընկավ գետին:

Եվ այդ ժամանակ ահա, երբ չուրջը խառնաձայն աղաղակները, գոչյունները, զենքերի շաչյունը ականջ էին խլացնում, սպարապետը հասավ Պապին և դուրս բերեց նրան կռվից այն երիտասարդի օգնությամբ, որ մի հարվածով կտրեց պարսիկի ձեռը: Մինչ այդ թագավորն էսևից սրարշավ վազող երիտասարդ հեծվորները նույնպես մոտեցան Պապին և խնդրեցին հեռանալ:

— Արքա... խնդրո՛ւմ ենք... արքա...

Սպարապետը սառուկ հուզված էր, նրա փոքրիկ սև աչքերը թարկություն էին արտահայտում, բայց նա կարծես զսպում էր իրեն: Իսկ երբ մի փոքր հեռացան կռվի շրջագծից՝ նա ձերմակը կանգնեցրեց Պապի առաջ ու՝

— Ինչո՞ւ եկար այստեղ,— պոռաց սրտնեղ:— Հեռացիր, Պապ, խնդրում եմ...

Ու դառնալով ձիավոր երիտասարդներին՝ ասավ.

— Տարեք Թագավորին...

Պապը, որ դեռ հևում էր թրով հարձակվելու թափից, զարմացավ սպարապետի խոսքերի վրա և կարողացավ միայն ասել

— Ո՞վ կարող է արգելել ինձ՝ իմ թշնամիների դեմ կռվելու:

— Ես,— և սպարապետը կորովալիր նայեց Պապին:— Ես, որ պատասխանատու եմ քեզ համար: Հեռացիր մի խոնդալիր ինձ, Պապ: Շնորհակալ եղիր այն երիտասարդից, որ փրկեց քեզ...

Պապը չեղ նայեց սպարապետին և, չզիտես՝ հուզումից թե թարկությունից, խոսք չգտավ ասելու, և քիչ հետո միայն, երբ չունչ առնելով հարցրեց.

— Իսկ ո՞վ էր այն երիտասարդը, որ կտրեց ինձ հարվածել պատրաստող ձեռը:

— Գնել Անձևացին,— ասավ ձիավոր երիտասարդներից մեկը:

— Գնել Անձևացին: Ես այդ անունը հիշում եմ: Կանչեցե՛ք նրան,— կարգադրեց Պապը:

Գնել Անձևացին, այն երիտասարդը, որ խանդավառ վազել էր Պապի եռևից և սպարապետին հրավիրել էրեն հետևելու, հիմա բոլորից զատված՝ հեռու կանգնել և համեստ, բայց հավստիացած ու անձնազոհության պատրաստ աչքերով նայում էր Պապին, չհամարձակվելով մոտենալ: Իսկ երբ լսեց թագավորի այդ կարգադրությունը՝ նա շինեց փոքրիկ պղկա պես ու առաջ եկավ անհամարձակ:

Պապը սիրով նայեց նրա ղրահներին, դվխի սաղավարտին և ասավ.

— Տո՛ւր ձեռքդ, երիտասարդ:

Գնելն ամաչելով մեկնեց աջը: Թագավորը բռնեց այն և ձիու վրա թեքվելով՝ համբուրեց նրա ճակատը:

— Շնորհակալ եմ, երիտասարդ: Սա երկրորդ հերոսություն է, որ անում ես դու: Նախկինանում և այսոր: Այսօրվանից դու կլինես իմ ղրանիկ գնդի սեռի օգնականը:

Գնելը, անելիքը չիմանալով, աչքերը ցած խոնարհեց, չիկնեց նորից, ցանկացավ առաջ նետվել և, ընդունված կարգի համաձայն, համբուրել թագավորի ձեռը, բայց ամաչեց և զսպեց իր սերը:

Այդ պահին էր ահա, որ երկու սուրհանդակ միաժամանակ լուր բերին, թե իշխան Կամսարականը, չրջապատելով լեհաց հեծելազորը, ջարդել ու ցրել էր նրան լեռան ստորոտում, իսկ նրանց Շեղդիր թագավորին բռնելով՝ ապանել էր, ասելով. «Դու լինչ ունես այստեղ, ավատասեր լեռնական: Քանի որ չես ուզում սպրել քո լեռներում, գերեզման պիտի ուրիմիս հայոց դաշտում»... Ու հրամայել էր սպանել և դլուխը տանել թագավորին կամ սպարապետին:

— Եվ սպանեցի՞ն,— հարցրեց Մուշեղը հետաքրքրված:

— Այո, ուր սպարապետ,— պատասխանեց սուրհանդակներից մեկը:

— Իսկ ո՞ւր է դլուխը:

Մյուս սուրհանդակը ձիու թամբին ամրացրած պարկից հանեց սուր մորուսով մի երիտասարդ դլուխ և մոգեբից բռնած պահից սպարապետի դիմաց:

Այդ գլխի երեսը, ճակատը և ականջի մեկն այլայլուն էր, և մորուսի պատճառով կտրած վիզը չէր երևում:

— Շնորհակալություն իշխան կամսարականին,— ասավ Մուշեղը սուրհանդակին և մտածեց. «իսկ ինչ է անում արդյոք Սմբատ սպասալարը»:

Նա մտածում էր Սմբատ Բագրատունու մասին: Սպարապետը չասելի նման, հեռվից տեսել էր նրա սարից իջնող զորքը, բայց տակավին լուր չուներ նրանցից. այնինչ Բագրատունին հրահանգի համաձայն, Վասպուրականի կողմից չարժվելով, իր հեծելազորը անտես, միայն իրեն հայտնի ճանապարհներով, սրբի եռակից տանելով դեպի պարսիկների թիկունքը՝ դրավեբռնեց տիրող բարձունքները, որտեղից և սկսեց նետաձգությամբ տարածվել դեպի պարսիկների թիկունքը:

Եվ դա պարսից բանակում, վերքերից կատաղած փղերի ստեղծած խուճապի հետ միասին առաջացրեց նոր իրարանցում ու տագնապ:

Ինչպես երևում էր՝ պարսիկները հայերից չէին սպասում մի այդպիսի համարձակություն, թե նրանք կարող են անցնել իրենց թիկունքը և բռնել այդպիսի կարևոր դիրքեր: Սակայն Սմբատ սպասերը, շատ լավ էր ճանաչում իր երկրի ելքերն ու մուտքերը. նա գիտեր անդամ այն կածանները, որոնցով միայն այծերն էին անցնում: Վերջապես, նրան և նրա զորքին կարճ ու անվտանգ ճանապարհ էին ցույց տալիս տեղի հայ հինականները, որ իմանալով նա, Վասպուրականն ազատելուց հետո, գնում է նորից պարսից դեմ՝ Զիրավում ճակատելու, հեծյալ և հետևակ խմբերով միացան նրան:

Բագրատունու հեծելազորը դրավելով պարսից թիկունքում գտնվող բարձունքներից մի երկուսը՝ դեմ առ դեմ էր եկել պարսից հետևակին, որ անակնկալի եկած՝ պաշտպանվում էր հիմա մեջքը դեպի դեռն արած, դեսը, որի մյուս կողմը կըռվում էր նրանց թե առջևին և թե հետևակի մեկ մասը: Իսկ այդ հետևակի մի այլ մասը և հեծելազորի այլ վաշտեր կռվի էին բռնվել հակառակ կողմի սարերից իջնող իշխան Կամսարականի հեծելազորի հետ, որ նույնպես տիրող դիրքեր ուներ և ձգտում էր կարծես կտրել թիկունքի այն բաց տարածությունը, որ ընկած էր երկու լեռնաշղթայի միջև:

Պարսից հեռավոր բազրատունու զորքի դեմ ոչ մի բան պաշտպանվում էր համարձակ, այլև փորձում էր գրոհել ու գրավել նրան այդ բարձունքներից. սակայն նրանք մի կողմից դեռ վախենում էին կատաղած փղերից, որոնցից շատերը դեռ շրջում էին դաշտում վայրենի թափով և ամեհի ձայներ հանելով:

Բայց նոր սկսված այդ կռիվը երկար չտևեց. պարսիկները, հավանորեն, զգալով, թե երկու կողմից եկող բանակները կարող են հանկարծ միանալ և կտրել թիկունքը, հետևաբար և նահանջի ճանապարհը, շուտով փոխեցին իրենց ընթացքը. սկսեցին ետ գնալ՝ ոչ թե դեպի դեսը, որտեղից անցնող թրջված ճիալորները արդեն հասնում էին նրանց (և հավանորեն հաղորդում, թե ինչ է կատարվում այդտեղ), ոչ էլ դեպի դաշտը, ուր փղերն էին, այլ սկսեցին թեքվել դեպի աջ, դեպի այն ճանապարհը, որ տակավին ազատ էր, բայց քիչ հետո կարող էր բռնել Ադամարականի հեծելազորը: Ու շտապում էին, ինչպես պարզ երևում էր, իրենք բռնել այդ բաց տարածությունը, թույլ չտալու, որ հայերն օղակեն իրենց:

Բազրատունու հեծելազորի դեմ ճակատող պարսից հետևակ գունդը, որի հետ կային և մի քանի հեծյալ վաշտեր, դեկավարում էր հեռվում կանգնած մի ևս ճիավոր, որ շրջապատված էր հեծյալ համհարզների ու թիկնապահների մեծ խմբով: Դա զրահավորված, գեղեցիկ իրանով մի տղամարդ էր, որ նիզակով ցուցմունքներ էր անում և հեծյալ սուրհանդակներ ուղարկում հլումող պարսիկների մոտ կամ, երբեմն առաջ գալով խրախուսում էր կռվողներին, ձին քշելով մի տեղից մյուսը:

Թե ո՞վ, ի՞նչ զորավար էր դա, որ անվախ և հմուտ դեկավարում էր իր զորքի դիմադրությունը՝ սկզբից ոչ-ոք չէր կարող ասել, թեկուզ և ծանոթ լիներ նրան, որովհետև զրահների մեջ, դիմակալով սաղավարտով դժվար էր ճանաչել նրան: Բայց քիչ հետո բազրատունու զինվորներից մեկը ճչաց հանկարծ.

— Մերուժանն է.. Մերուժանը... Եկե՛ք...

Եվ ուզեց ձին քշել դեպի նա, հրավիրելով ընկերներին, որ հետևեն իրեն. սակայն ընկերները թույլ չտվին նրան մի այսպիսի անմտություն, թույլ չտվին վատնել ենթարկել իրեն, որովհետև Մերուժանին հասնելու համար՝ պետք է անցներ

պարսից կռվող զորքի մեջով. և այն էլ հարց է, ասում էին, դա Մերուժա՞նն է, թե մի ուրիշը:

— Դա Մերուժանը չէ,— նկատեց մեկը:

— Նա է, նա է, ասում եմ, —վրդովում էր պինվորը նյարդային հուզումով ու ձայնը բարձրացնելով:—Ես ձիուց ու նըստելու ձևից եմ ճանաչում. նա թամբի վրա պինդ չի նստում, երաստանը միշտ բարձր է պահում... Նա է...

Բայց նրան այլևս ոչ-ոք չէր լսում, որովհետև բոլորի ուշը գրավել էր պարսից դնդում կատարվող մի երևույթ. նրանք չդիտես երբնց խոթված ուժերը լայն դծով ցրելու համար, որ շատ զոհեր չտան վերևից եկող նետերին, թե՞ դուրս ավելի հարմար դիրքեր բռնելու նպատակով,— չարունակեցին գնալ դեպի աջ, դեպի երբնց ելած ճանապարհը, թվում էր շրջապատվելուց վախենալով:

Եվ դա կարծես սկզեց այդտեղ սկսած ճակատամարտի ելքը:

Այդ տեղաշարժը թուլացրեց պարսից դիմադրությունը. նրանք սկսեցին գնալ դեպի աջ ու բռնել բաց մնացած տարածությունը, բայց շուտով պարզվեց, որ դա առերևույթ բան էր. նրանց հանդիստ սկսած տեղաշարժը փոխվեց մի խուճապային նահանջի. հետևակը գնում էր վազելով, մեկմյանց հրհրելով ու ստաջ ընկնելով, հեծյալները սրարշավ, երբեմն իրենց ձիերը հետևակի շարքերը մտցնելով, որ կարճ անցնեն:

Թվում էր բոլորին համակել է մի մտահոգություն, տերակն մի երկյուղ— չկտրվել, ազատվել շրջապատվելուց և դեմը չընկնել հայերի ձեռը:

Ու վազում էին՝ ոմանք նետեր արձակելով, չատերը վահանները թիկունքներին դրած, որ պաշտպանվեն նետերից:

Իսկ հայոց զորքը՝ Բագրատունու և Կամսարականի գնդերը ձգտում էին իրագործել իրենց առաջադրած նպատակը— կտրել պարսիկների նահանջի հանապարհը՝ երկու կողմից, լեռներից ձիերով արագորեն առաջանալով, որքան հնարավոր էր ալիքաձև լեռնատափերով: Բայց տեսնելով, երևի, որ դա այլևս անկարելի է (պարսիկները բավական առաջ էին անցել) Բագրատունին իր մոտ կանչեց երիտասարդ զորավար Բաթ Սահառունուն և ուղարկեց նրան սպարապետին հայտնելու, որ նա չտապի օգնություն հասցնել իրեն, որովհետև որոշել է կա՛մ կտրել պարսիկ-

նրանք նահանջի ճանապարհը կա՛մ իր հնձելազորով հետապնդել պահպանողներին:

— Աստ սպարապետին,— ավելացրեց Սմբատ ասպետը, բաթի թևը բռնելով, (այդ նրա սովորությունն էր, երբ ուզում էր որ ասածը լավ հասկանան մարդիկ),— որ չխնայի ոչ ոքի և աչք չդարձնի պարսիկները կեղծ աղմուկին, որ նրանք կբարձրացնեն՝ նրան շփոթելու: Իսկ այնուհետև, սիրելիս, եթե կարողացար հասնել, ես հույս ունեմ, որ կհասանես, սպարապետին կամ թագավորին հայտնիր, որ ես, առանց կանգ առնելու, գնալու եմ մինչև սահմանը: Թող, այստեղ գործը վերջացնելուց հետո, օգնության հասնեն ինձ...

Եվ Սմբատ ասպետը, որ վաթսունի մոտ արծվաքիթ, նոսր մորուսով և թափանցող աչքերով լեցուն մի տղամարդ էր, բաթին ձեռ վրայից քաշեց դեպի իրեն, համբուրեց ու բարի ճանապարհ մաղթեց, որից հետո աշտանակեց ձիուն ու արշավեց-գնաց կուվով առաջ գնացող զորքի հետից:

Ու մինչ իշխան Կամսարականը դիմացի լեռնաստորոտներում կռվում էր համառ դիմադրող պարսիկների հետ և ձգտում բռնել նրանց հունի տարածությունը, բագրատունու հեծյալները, լեռնամատներով առաջ գնալով ու նետեր արձակելով, աշխատում էին կտրել նահանջող պարսիկների ճանապարհը, իսկ եթե դա չհաջողի՝ նրանց մի մասին կտրել առջևից վախչողներից: Սակայն բագրատունու հեծյալների ընթացքը դժվարացնում էին այդ իսկ լեռնամատները, որովհետև նրանք չարունակ ստիպված էին ալիքաձև այդ բլուրներից իջնել ձորակները, երբեմն ձորերը, ապա նորից բարձրանալ, և դա երկարում էր նրանց ճանապարհը:

Այն ինչ պարսիկները հետ էին քաշվում դաշտի հարթ ճանապարհով, ուսաի և ավելի շուտ հասան այն տեղը, որ կարող էր վտակվել-կտրվել հայ զորքի կողմից, ու այդտեղից արդեն չարունակեցին արագ նահանջել:

Պարսից հեռևակները վախչում էին մեծ դժվարությամբ. նրանց երկար քղանցքները ծածանում էին արագ վազքից և երբեմն դժվարացնում նրանց ընթացքը. պակաս ծանր չէր նրանց սպառազենքը— վահանը, նիզակը, աղեղը, կապարճը, որ կրում էր համարյա յուրաքանչյուր պարսից զինվոր: Սակայն նրանց

այրուձին դնում էր սրընթաց և երթևեկ, իրենց հետևակի ճանապարհն ապահովելու համար, կանգնում էին ու նետեր արձակում հետապնդող հայերի վրա:

Եվ դրանց ղեկավարում էր նույն դիմկալով ու ձիգ իրանով զորականը:

Երբ նյարդային, հուզված զինվորը, դրան տեսնելով նորից կանչեց «Մերուժանն է, Մերուժանը»— Բագրատունու զինվորներից ոմանք, վերջապես, հասուկ ուշ դարձրին այդ դիմկալով զորականի վրա, և ոչ-ոք չհավատաց, որ դա Մերուժանը լինի, իսկ նրանցից մեկն այսուամենայնիվ, ձին քշելով, մոտեցավ Սմբատ սպասեին և հայտնեց.

— Տեր իմ, ասում են, որ այդ հրամաններ տվող զորականը ուրացող Մերուժանն է:

— Մերուժա՞նը,— զարմացավ Սմբատ սպասեը, որ ինքը չէր ճանաչել նրան:— Սպասիր, տղա: Ես նրան ճանաչում եմ: Որքան էլ ծպտված լինի՝ ես կճանաչեմ անիծյալին: Սպասի՛ր...— և նա, ձին կանգնեցնելով, ուշադիր նայեց պարսից զորախումբը ղեկավարող այդ զորականին: Նա դիտեր, որ Սրծրունի իշխանը ձին նստում է այնպես, որ երբեմն չի կըպչում կամ թե հազիվ է կպչում: Ու քանի մի վայրկյան նայելով՝ նա չկարողացավ զսպել չզիտես բարկությունը թե զարմանքը ու բացականչեց.—Նա՛ է: Նզովյալ ուրացողն ինքն է...

Նրա դեմքը մռայլվեց մի վայրկյան, ապա, կարծես անելիքը որոշելով, հրամայեց.

— Զոկատով գնալ և շրջապատել... ձերբակալ անել ողջ-վնաս... Զսպանել, այլ ձերբակալ անել ողջանդամ,— կրկնեց նա:

Նրա հեծյալներից մի զոկատ պոկվեց ու սուրաց սարի լանջով:

— Նահատակվենք թեկուզ, բայց բռնենք,— պոռաց հեծվորներից մեկը:

Եվ Սմբատ սպասեը ձիու վրա, կարծես ամեն ինչ մոռացած, սևեռուն հետևեց իր այդ զոկատի ընթացքին, որ սլանում էր մրրկի արագությամբ, թրերը մերկացրած: Նրանց այդ ընթացքից և մերկացրած թրերից ակներև էր, որ նրանք նպատակ են դրել՝ կտրել-անցնել ինչ գնով էլ լինի:

Եվ մինչ նետաձիգները նետեր էին արձակում նրանց դեմը գտնվող պարսիկների վրա, որ ճանապարհ ապահովեն նրանց համար, զոհատը «հառաչ» աղաղակելով՝ սուրաց դեպի թշնամին:

Եվ մինչ բագրատունու մյուս զոհատները կռվում էին պարսիկների ցրված մյուս խմբերի դեմ, աշխատելով բռնել նրանց նահանջի ճանապարհը, այդ զոհատը, ճեղքելով պարսից նետողների մի նոսր պատվարը, գնաց հեռվից շրջապատեց զորականին իր թիկնապահներով... Բարեբախտաբար նրա թիկնապահները շատ էին:

Նրանք, տեսնելով առաջացող հայ հեծյալներին, ավելի ղեկավարեցան և լարվեցին: Բայց դիմակալով զորականն ինքը, այդ նկատելով, ձին շարժեց տեղից և, նիզակը համարձակ աջ ու ձախ տանելով ու հայ հեծյալներին հարվածելով, անմիջապես ճեղքեց շրջապատողների շղթան և թիկնապահների հետ առաջ գնաց քառատրակ: Նա կարծես հասկացավ, որ իրեն ողջ բռնել են ուզում, ուստի և մեծ համարձակությամբ ճեղքեց օղակը:

Հայ զոհատայինները հետապնդեցին նրան, ինչպես հետապնդում են փախչող գաղանի:

Սմբատ սպասատը, իր բարձրությունից նկատելով զորականի փախուստը, այլևս չհամբերեց, գայրացած խթանեց ձիուդը և սլացավ ցած նրա հետ և նրա թիկնապահներն ու շուրջն եղած զինվորները՝ աղեղներն ու նիզակները պատրաստ բռնած:

Իսկ զոհատի զինվորները՝ գայրացած, որ որսը փախավ իրենց ձեռքից, սուրացին աղեղների պես լարված, ձիերի վրա կռացած, գրեթե նրանց բաշին կպած: Ոմանք հասնելով՝ զորկեցին զորականի թիկնապահներից մեկ-երկուսին, մյուսները, նիզուդները չափ քցած, առաջ անցան, փախան:

Զորականի շուրջը մնացին մի քանի հոգի, որ ասես չէին ուզում լքել իրենց պետին և գնում էին նրան համընթաց ու նրա եռվից, բայց շուտով դրանցից մի քանիսը նույնպես ընկան հետապնդողների հարվածներից, և զորականը մնաց մեկ-երկուսի հետ:

Սկզբում նա գնում էր ճանապարհով, բայց շուտով, զգալով կարծես, որ հետապնդողները մոտենում են, նա ճանապարհը թողեց ու, անապատ արագությամբ, նետվեց դեպի դաշտը, որ

հույս ուներ, որևէ թե փափուկ հողով դժվար կլիներ հետապնդել...

Եվ, իրոք, դժվար էր. ձիերի ոտները խրվում էին փխրուն վարելահողը և, բարձրանալիս, ահագին փոշի հանում: Իսկ գոբակիանը առջևից գնալով ու այն էլ մեծ արագությամբ, այնպիսի փոշի էր բարձրացնում, որ ինքն ու ձին հազիվ էին երևում:

Նա գնում էր ասես առանց թափը դանդաղեցնելու:

— Կանգնի՛ր, կա՛յ,— գոռում էին նրա հետևից հայ գինվորները հայերեն ու պարսկերեն:— Դա՛ց, ասում թե ոչ նետահար կանե՛նք... Նետահա՛ր...

Գորակիանը չէ՞ր լսում, թե չէր ուզում լսել, շարունակում էր սլանալ նույն թափով:

Այդ ժամանակ հայ գինվորները, դայրույթից կատաղելով, ավելի լարեցին նժույգները:

Հետևից թվում էր ձիերը չեն սլանում, այլ սաստկի քամի է մրրկում դաշտի մեջ, այնպես փոշի էր, որ մարդ ու ձի կորել էին մեջը:

Նորից եղավ մի վայրկյան, որ հայ գինվորներին թվաց, թե հասնում են, թե արդեն մոտ են որսին. մի գինվոր նույնիսկ ձին հավ քցած արդեն հավասարվել էր նրա նժույգին, երբ գորակիանը նորից ետ դարձավ և նկատի մի երկու վարժ հարվածով վանեց–հետապնդողներին ու, մի փոքր առաջ գնալով, նորից թողեց ձիու սլտակը, թողնելով որ թափը հետապնդողներին տանի առաջ, իսկ ինքը սլացավ այլ կողմ:

Բայց հետևից եկող Սմբատ ասպետի որոտալից ձայնը կարծես նոր թափ հաղորդեց հայ գինվորներին.

— Հասնե՛լ և ձերբակալե՛լ...

Հետապնդողների նժույգներն ավելի փոթորկեցին. նրանք կարծես չէին վազում, այլ ճախրում էին թևաբաց ու սանձակոտոր, ու նորից կորան իրենց բարձրացրած փոշու մեջ:

Հեծյալ հայ գինվորներից մեկը, տեսնելով որ նրան բռնելը դժվարանում է և որ գորակիանն իր այդ խուսափելու հնարքներով անվերջ կարող է պտտել իրենց դաշտի մեջ և հոգնեցնել,— չհամբերեց. նիզակը թափով նետեց դեպի գորակիանի ձին և... պատահեց անսպասելի մի բան...

Նիզակը գնաց-խրվեց զորականի ձիու հետին ոտի փափկամիսը և մնաց ցցված:

Զորականի ձիուդը վնչաց ու կանգ առավ և, մինչև հայ զինվորները կհասնեին, նա քնկավ կողքի:

Բայց մինչ այդ՝ զորականը թռավ ու փորձեց փախչել:

Սակայն առաջ գնացած հայ զինվորներից մեկը՝ ձիուց նետվեց ցած ու բռնեց նրան, գրկելով նրա իրանը ձեռների հետ միասին, ինչպես ծառի բունն են գրկում, չթողնելով, որ նա նիզակը շարժի և միևնույն ժամանակ ուշ չդարձնելով նրա ոտքայինների, որ աշխատում էր հասցնել նա իր ոտներին ու սրունքներին:

Դա տևեց մի երկվայրկյան. հուսով վրա հասան մյուս զինվորները էլ և, երար հետևից ձիերից իջնելով, վազեցին դեպի նա. մեկը քաշեց վրայից նրա թիկնոցը, մյուսը՝ դիմակալով պինձե սաղավարտը ու բոլորը միասին բացականչեցին՝ կարծես միմոնների խմացնելու.

— Նա՛ է, նա՛ է... Ռուբոյոն է...

Եվ երբ Սմբատ սպասեը տեղ հասավ՝ նրանք արդեն, զորականի չուրջը խմբված թքտում էին և հարսխնդում.

— Արծրունյաց տերն է... Շապուհի սորուկը:

Իսկ մի զինվոր, նույն նկարագրային զինվորը, Սմբատ սպասեոմն ընդառաջ գալով, գոչում էր հուզված, գրգռված ձայնով, ինչպես քիչ առաջ մարտի ժամանակ:

— Մերուժանն է, տեր սպասե... Ասում էի՝ չէին հավատում... Մերուժանն է...

Մոտենալով՝ Սմբատ սպասեը թիկնապահների օգնությամբ, իջավ ձիուց, նրանցից մեկին մոտ կանչեց և, դույց տալով մոտիկ շամբուտից բարձրացող ծուխը, ինչ-որ բան ասավ նրան և ապա դանդաղ ու խոժոռ քայլեց դեպի Մերուժանը, որի թեմերն այդ պահին իր զինվորներից մեկը կապում էր նրա հետևը այնպիսի մի եռանդով և ատամներն այնպես սեղմած, ասես կենդանի-մարմնացած վրեժխնդրություն լիներ: Իսկ մնացած զինվորները, որ օղակ էին կազմել նրա չուրջը, շարունակում էին հարսխնդալ.

— Հը՛, Արծրունյաց տեր, լա՞վ է, հաճո է...

Այդ տեսնելով՝ Սմբատ ասպետը բարկացավ չարախինդ հեզնանքով։

— Զինվորնե՛ր, մի՛ տանջեք արյաց արքայի զորավարին։ Այսօր նրան պատվելու և պսակելու օրն է,— ավելացրեց նա ավելի մոտենալով իր գրահների չխկոցով ուղիղակը ձեռին, հետո կարծես զարշանքի մի զգացմունք զսպելով, որից նրա կանոնավոր դեմքը ծամածռվեց, դարձավ իրեն Մերուժանին, որի արշեն բաց գեղեցիկ գլուխն ու գեղեցիկ դեմքը նրան թվացին ամենապյուղակը։— Այսպես ուրեմն, Արծրունյաց տեր, հայրենիքին մատուցած քո բարձր ծառայությանց համար դու այսօր պիտի արժանանաս պատվի և պսակի։ Դու, որ բազում անգամ քո երկիրն առաջնորդեցիր պարսից բանակը և կրակապաշտ պարսիկներից չարժանացար և ոչ մի պատվի։ Շապուհը խոստացավ քեզ հայոց թագը և չտվեց. բայց ես ավելի առատաձեռն կլինեմ, Մերուժան։ Ես՝ Բագրատունի թագադիր ասպետս, հիմա քո ցանկացած ձևով կթագադրեմ քեզ...

Այս ասելով՝ նա երեսը շրջեց ու, քանի մի քայլ հեռանալով, նայեց եղեգնուտի մեջից բարձրացող ծխին։ Նա մի առժամ նայում էր այդ ծխին ու սպասում։ Նրա զինվորները նույնպես սպասում էին, թե ի՛նչ է լինելու, ի՛նչ է անելու Սմբատ ասպետը կամ ի՛նչ էր նշանակում «պսակել, թագադրել»։

Անցավ բավական ժամանակ մինչև որ Մերուժանին ճանաչող և Սմբատ ասպետի հանձնարարությամբ հեռացած զինվորը վերադարձավ վազելազ, բերելով մի երկար չխկացած նետ-երկաթ, որի կոթը բռնել էր թաղիքի կտորով։

— Ոլորի՛ր պատկաձև,— կարգադրեց Բագրատունին հևացող զինվորին։

Զինվորը մի վայրկյան չհմացավ ինչ անել, հետո, կարծես սթափվելով, երկաթի ծայրը դեմ արավ մի քարի և զգուշությամբ կռացրեց այնքան, որ ստացվեց կլոր մի չրջանակ, ծայրը մոտեցավ կոթին։

Գևոնին նստած Մերուժանի գեղեցիկ դեմքով մի սարսափ անցավ. նա նույնիսկ ցնցվեց, կամենալով կարծես մինչև կապած ձեռներն ազատել։

— Դա պատիվ չէ բերում քեզ, Սմբատ ասպետ, դատաստան տեսնել ձեռները կապած իշխանի հետ,— ասավ Մերուժանը։

— Պատի՛վ,— խնդաց Բագրատունին,— իսկ քեզ պատիվ էր թվում, որ այսպիսի չիկացած երկաթով վառում էին քո հայրենիքը... Հանգստացիր, Մերուժան, ես քեզ ուզում եմ մի-այն պատվել քո արած գործերի համար,— ասավ նա և, չիկացած երկաթ օղը առնելով զինվորի ձեռից, զեմքը ծամածռելով, դրեց Մերուժանի ձեղեցիկ գլխին, ասելով.— Ահա Արծրունյաց իշխան Մերուժան, խաբեբա Շապուհի փոխարեն ես, լըրև Բագրատունի թագադիր ասպետ, օծում եմ քեզ՝ քո սիրած կրակապաշտական ձևով...

Եվ մազերի խանձահոտի հետ տարածվեց— բարձրացավ մի զարհուրելի ճնճղերահոտ: Բագրատունին, երեսը շրջելով, դնաց դնալի իր նժույգը, իսկ Մերուժանի մոտ մնացած զինվորները, նրան նիզակահարելով, քցեցին մոտիկ ճահիճը:

Նրան ճահիճը քցելիս՝ զինվորներից մեկին ուզեց հանել ոսկե ակնապարդ մատանին, բայց մի ուրիշը պոռաց նրա վրա.

— Չվերցնե՛լ ոչինչ: Պի՛ղծ է դրա ամեն ինչը:

Եվ զինվորը ետ կանգնեց:

Մերուժանին այսպես պատժելուց հետո՝ Սմբատ ասպետը, եր մնացած իր զինվորներով ու համհարզներով, շարունակեց ճանապարհը՝ պարսիկներին հետապնդող իր հեծելազորին հասնելու:

***

Իսկ Զևրավի դաշտում մնացած հայոց և պարսից զորքերը կռիվը դեռ շարունակում էին առաջվա կատաղությամբ, գետի երկու կողմն էլ, իրար խառնված, մի խառնաղանճ ու խայտաբղետ բազմությամբ, որ դժվար էր ջոկել ո՛րն է հայրը, ո՛րը, պարսիկը:

Երբ զրանիկ դնդի երիտասարդ հրամանատար Բաթ Սահառունին՝ իր կապտավուն նժույգը նստած, երկու զինվորի ուղեկցությամբ, լեռնամատերով գնում էր Սմբատ ասպետի հանձնարարությունը կատարելու՝ նրա կարգադրությունը սպարապետին հայտնելու,— դաշտին իշխող իր բարձրությունից տեսնում էր, թե ինչպես երկու բանակներն, իրար խառնված, գետի երկու կողմը կռվում էին մոլեգին աղաղակներով, որոնցից դժվար

էր մի բան հասկանալ. դրանք ավելի շուտ մարդկային գերագույն կատաղության աղաղակները էին, որ տարածվում էին հեռուները և արձագանքում լեռներում: Բացի այդ՝ նա ամեն քայլափոխին տեսնում էր դիակներ ու վիրավորներ, որ ընկել էին նետահար կամ նիզակահար. շատերն ընկած էին նետերը կրծքին կամ մարմնի այլ տեղը խրված. ոմանց, ըստ երևույթին, ջարդել էին վիզերը—այնպես այլանդակված էին... Պատահում էին և ձիուց ընկածներ, որոնց գլուխը մնացել էր մարմնի տակ կամ, ընկնելու թափից, խրվել էր վարած անահողի մեջ... Բաթը տեսավ և ընկած ձիեր՝ շատերը նիզակահար ու անշնչացած, մի մասը հոգևարքի մեջ: Առանձնապես ծանր տպավորություն արավ մի ձի, որ կողքի ընկած՝ գլուխը թափահարում էր այս ու այն կողմ և փորձում բարձրացնել վիրավոր, ծանր մարմինը, բայց չկարողանալով՝ հուսահատ գլուխը նորից ձգում էր գետին, ինչպես վիրավոր կամ ծանր հիվանդ մարդ: Երբեմն էլ Սահառունուն հանդիպում էին ընկած վիզեր՝ իրենց բլրաչափ մարմիններով, ժանիքներն արյունոտ կամ հողի մեջ խրած: Այնքան այլանդակ էին նրանց մինչադուխ անճոռնի մարմինները և այնքան տարօրինակ, որ Բաթին թվում էր, թե դրանք վիթխարի մկներ են, որ դուրս են եկել դաշտը չրջապատող լեռներից և անընդհատ ավերել սովից ու ծարավից: Բայց ամենից շատ Բաթի ուշը գրավում էին ձիերը, հեծվորներին կորցրած ձիերը, որ թամբերով կամ շատերը թամբերը կորցրած, սանձերը քաշ տալով, մի կատաղի ու կարծես վշտի խրխինջով վազում էին այս ու այն ուղղությամբ, երբեմն, ամբողջ խմբեր հյազմած, սուրում էին դաշտի լայնքով ու երկայնքով կամ պտտվում մի փոքր տարածության վրա: Թվում էր՝ որոնում կանչում են իրենց տերերին ու չեն գտնում: Երբեմն նրանք ոչ թե վազում, այլ սլանում էին հողմի պես՝ բաշերը քամուն տված ու քաոատորոփ, և երբ մարդ էին տեսնում կամ ընկեր ձիերի դիակներ, և կամ մոտենում էին կռվի վայրին՝ ատրաժվում էին կարծես ու նորից ամբողջ խմբով ետ դառնում՝ փոշեհան վազքով ու վայրի վրնջյուններով: Եվ նրանց ահարկու այդ խմբից, զուգեր և նրանց օտարոտի վրնջյունից՝ պատահող դինվորները մի կողմն էին քաշվում՝ նրանց ոտի տակ չընկնելու համար:

Նրանց հանդիպումը Սահառունուն նույնպես ահ էր ազդում

Ե նա, իր երկու զինվորի ուղեկցությամբ, հետու էր պահում իրեն դաշտից, զգուշանալով նրանց տարերային վազքից. թվում էր՝ կարող են մոռենալ և իր ճիուն նույնպես առնել իրենց խելագար խմբի մեջ ու տանել... Նա դնում էր ու չարունակ նայում այն տեղերը, ուր մի երկու ժամ առաջ բռնել ու պարսից դեմ կռվում էր իշխան Կամսարականի հեծելապետը:

Բայց նրանք հիմա չէին երևում:

«Ո՞ւր գնացին արդյոք, ո՞րտեղ են» մտածում էր Բաքը, աչքերով նրանց փնտռելով: Չլինի՞ նրանք էլ փախցրին պարսից դռնապը և հիմա հետապնդում են բլուրների այն կողմը, թե՞ բոլորն ընկան անհավասար կռվում, և խմբերով, խելագար վրնջյունով վազող այս ճիերը նրանց նժույգներն են...

Նա թեև գնում էր ճակատող զորախմբերից բավական հեռու, բայց չարունակ լսում էր նրանց աղաղակները ու գոչյունները, տեսնում էր նրանց մերկացրած, արևի տակ փայլփլող սրերն ու նիզակները, հեծյալների խոյացած ճիերը... ու մտածում էր, թե չլինի դրանք Կամսարականի հեծյալներն են, որ նիկել-մխացել են կռվողներին...

Նա որոշեց մի կերպ հմանալ Կամսարականի և նրա զորքի տեղը. ու քիչ հետո մոտիկ մի խումբ հայ զինվորներ նկատելով մի բլուրի մոտ՝ նա ճին քշեց նրանց կողմը և դեռ հեռվից տեսավ, որ դրանք պտել էին Շապուհի պատկերը տախտակի վրա ձևափած. ոմանք ուզում էին նիզակով ջարդել այն, մյուսները չէին թողնում, թե պետք է անշնաս տանել սպարապետին:

Վեճը վճռեց Բաքը, համաձայնելով վերջիններին հետ:

— Այո, պետք է տանել սպարապետին, և նա ձեզ կվարձատրի դրա համար,—ասավ նա և հարցրեց, թե չգիտե՞ն արդյոք որտեղ է Կամսարականի գունդը:

— Կամսարակա՞նի,— զլուխները օրորեցին զինվորները:— Այ դուցե նրանք իմանան,— ցույց տվին զինվորները ճակատողներից հետու, լեռան կողմը գտնվող ճիավորների ու հետևակի մի մեծ խումբ:

Բաքն աշտանակեց նժույգը և գնաց դեպի զինվորների այդ խառնված բազմությունը, իսկ երբ հասավ՝ զարմացած կանգնեց ճին, սանձը պինդ ձգելով.—զինվորների բազմության մեջ

կանգնած էր զրահավոր Մուշեղ սպարապետն իր ձերմակին նստած:

Դառնալով հայացքներում նկատվող հարգալից հետաքրքրությունից, որով զինվորները չրջապատել էին Մուշեղին, Բաթեն զգաց, որ այդտեղ արտակարգ մի բան կա:

Եվ նա չէր սխալվում:

Ավելի մոտենալով՝ նա ճիու վրայից տեսավ, որ Մուշեղի առջև կանգնած՝ նրան էր նայում նույնպես թանգ զրահներ հագած, բայց փոշոտ թիկնոցով, օտարոտի գլխանոցով մի երիտասարդ զորական:

— Սա ո՞վ է,— հարցրեց Բաթը մոտիկ կանգնած մի հնձյալ հայ զինվորի:

— Աղվանից թագավոր Ուռնայրը, տեր,— պատասխանեց զինվորը՝ ձին հարգանքով թեքելով, որ ճանապարհ տա նրան:

— Ի՞նչ է, ուզում, կամ ի՞նչ է ասում:

— Ինդրում է խնայել իր կյանքը և թողնել ազատ:

Բաթեն էլ չկարողացավ հետաքրքրությունը զսպել. անմիջապես իջավ թամբից, ձին հանձնեց իր զինվորներից մեկին և, խիտ խմբված զինվորների միջով արանք գանալով, անցավ առաջին շարքը՝ աղվանից թագավորին անձամբ լսելու և տեսնելու, թե ինչ կերպարանքի տեր է Շապուհի այդ դաշնակիցը, որ հայերին, երևի, այնքան է ատում, որ անձամբ եկել է կռվի դաշտը:

Երբ Բաթեն առաջացավ՝ լսեց, թե ինչպես սպարապետը բարկացած հարցնում էր գերի ընկած այդ թագավորին:

— Իսկ ի՞նչն ստիպեց քեզ գալ հայերի վրա. մի՞թե աղքատ էս և կողոպուտ ես փնտռում:

Ուռնայրի թուխ դեմքը, որ եղերված էր ածուխի պես սև մազերով, թե աչքերը, որոնց հովանավորում էին տղրուկանման սև հոնքեր, թե հատ կարմիր շուրթերը, որ թվում էին յուղով օծված, այդ բոլորը մեխակն դողում և վախ էին արտահայտում, երբ նա սկսեց խոսել.

— Դու հարցնում ես ինչն ստիպեց մասնակցել այս կռվին: Հիմարություն, սպարապետ: Պարզապես՝ հիմարություն: Եվ եթե դու խնայես իմ կյանքը, որի համար և խնդրում եմ,— հանկարծ այդ ծիրանակիր երիտասարդ թագավորը ծունկի

ևկամ,— ես խոստանում եմ՝ ցմահ լինել քեզ հավատարիմ։ Ճմա՛հ,— շեշտեց նա և ավելացրեց ավելի բեկված ձայնով.— Ես ունեմ մանկահասակ երեխաներ...

Նա էլ չդարձնակեց և հոնքերի տակից նայեց Մուշեղին մի հայացքով, որ կարծես սպասում էր, թե սպարապետն ահա թուրը կիջեցնի իր գլխին։

Բայց սպարապետի ղեմքը ծամածուվեց տհաճությամբ և նա կորովաբեր աչքերը հառեց Ուռնայրի երեսը։

— Թշվառակա՛ն, պարծեցել ես Շապուհի առաջ՝ ոչնչացնել հայ զորքը և գերել հայոց Թագավորին։ Ահա՛ քեզ գերել,— և Մուշեղը նիզակի կոթը խփեց նրա գլխին։— Գնա՛,— ասավ նա սրտնեղած և ապա, դառնալով նրան բռնող ու իր մոտ բերող զինվորներին, կարգադրեց.—Թողեք գնա և ասրի իր անարգ կյանքով։

Այս ասելով՝ նա նիզակի կոթով նորից խփեց ոտի կանգնող Ուռնայրին և ավելացրեց՝ բառերը հատ-հատ շեշտելով.

— Պիտի փորձեմ քեզ, Ուռնա՛յր Թագավոր։ Պարտապանց եղար—ուր էլ լինես—կհատուցես քո գլխով։ Հիշի՛ր՝ գլխատարած կլինես։

Ու էլ չսպասելով և չնայելով աղվանից Թագավորի քծնական խոնարհումներին՝ Մուշեղը ձին քշեց դեպի հայկական այրուձին, որ սարսխների եռևից անցել էին դեռը և ճակատամարտը շարունակում էին դաշտի մեջ։

Սպարապետին հետևեցին և նրա համհարզները՝ իրենց նժույգներին աշտանակելով։

Դեպքին ներկա զինվորները զարմացան Մուշեղի այդ վարմունքի վրա. ի՞նչպես կարելի էր Թողնել այդպիսի թշնամու։ Հաղիվ ձեռք էր ընկել նշանավոր, բարձրաստիճան մեկը և հանկա՛րծ... Մուշեղը Թողնում է նրան...

Զարմացած, ավելի շուտ վրդովված էին Ուռնայրին բռնող և սպարապետի մոտ բերող զինվորները։

— Մեր սպարապետը լավ չարավ,— ասում էր մեկն ուրիշսանքով։

— Ես գնում եմ նրա գլուխը կտրեմ և տանեմ Թագավորին,—բռնկվեց մի ուրիշը։

Ներան սաստեցին.

— Սպարապետի գործին չեն խառնվի: Զգո՛ւշ...

Բաթ Սահառունին նույնպես զարմացած էր այդ բանից, այնքան զարմացած, որ մոռացավ ո՛ւր և ինչի ուղարկված լինելը, և երբ հիշեց՝ շտապ հեծավ ձին և սրարշավ գնաց–հասավ Մուշեղին և հայտնեց Սմբատ սպասեի հանձնարարությունը:

— Շատ լավ,— ասավ սպարապետը,— ես այդ էլ սպասում էի Սմբատ սպասեից: Նրան օգնություն կուղարկվի: Իշխան Կամսարականը հիմա կպատրվի և իր հեծելազորով կհետևի նրան...

— Մի՞թե Կամսարական իշխանն այստեղ՝ կուվի մեջ է,— զարմացավ Բաթը և ուզեց խոսել, թե ինչպես կորելի էր հավատալ Ուռնայրին ու աղատ թողնել նրան, բայց գոսավ, որ դա ամենևին է, սպարապետը երբեք անկեղծ չի կարող լինել. իր հետ, իսկ նրա արածն անպայման կասկածելի է...

«Ինչ որ մի գաղտնիք կա այստեղ» մտածում էր Բաթը, հետևելով սպարապետին, որ, համհարզներով շրջապատված, իր ձերմակի վրա դնում էր դիմացի սարի սորոտում կուվողներին խրախուսելու:

Բայց մինչև նրանց տեղ հասնելը՝ կուվի ելքը արդեն կորոշվեց. պարսից զորքերի մի մասը, ճեղքելով շրջապատող հայերի օղակը, փախուստի դիմեց, որին սակայն հետապնդեցին հայ հեծյալները. իսկ պարսիկների մյուս մասը մնաց շրջապատված, ու սակավին շարունակում էր դիմադրել... ինչպես դիմադրում էին դաշտի տարբեր կողմերում շրջապատվածները:

Սակայն այդ ամենին, և առհասարակ ճակատամարտին վերջ գրեց մայր մտնող արևը, որ ամբողջ օրը աչքը բաց պահած լուսավորում–նայում էր ճակատամարտի դաշտը, կարծես հետաքրքրված նրա տեսարաններով ու ելքով: Ուստի նրա մայր մտնելու հետ կռիվն էլ դադարեց:

***

Երբ Պետն իմացավ հաղթության լուրը և Մերուժանի մահը՝ ուրախությունից նրա աչքերում արտասուք երևաց: Իսկ երբ նրան հայտնեցին, թե Մուշեղն ազատ է արձակել գինվորներին թանած Աղվանից Ուռնայր թագավորին՝ նրա ուրախությունը փոխվեց զարմանքի և զայրույթի:

«Ի՞նչով բացատրել, որ կամսարականը սպանել է Լեկայ Շերբելին, իսկ Մուշեղն արձակել է Ուռնայրին»— մտածում էր Պապը և չէր կարողանում ըմբռնել այդ օտարոտի վարմունքի պատճառը: Դա նրան վրդովում էր մանավանդ այն պատճառով, որ Մուշեղն այդ արել էր իր նախազգուշացումից հետո:

— Կանչեցե՛ք խոհուն սպարապետին այստեղ,— հրամայեց նա:

Շքախմբի դրանիկներից մեկը սրարշավ գնաց Մուշեղին կանչելու:

Եվ չանցավ մի ժամ՝ Մուշեղն արդեն թագավորի մոտ էր:

Պապը բարկությունից կուծում էր շուրթերը և ակներև էր իսանում ինչպես ինքն իր խոսքը, բայց, վերջապես, հուզումը պահելով առավ.

— Դու, սպարապետ, չկատարեցիր քո խոստումը: Ընդդեմ իմ լուրջ նախազգուշացումին՝ դու նորից...—Պապը կանգ առավ:—Այն ժամ պատճառաբանեցիր, թե կանայք էին, հայոց սպարապետը չի կռվում կանանց դեմ... Հիմա՞... Աղվանից թագավորն ինչ էր. բարեկա՞մ էր, որ ճանապարհ դրիր ողջանդամ...

Ու Պապը հայացքը սպարապետի դեմքին՝ սպասեց նրա պատասխանին, համոզված, որ նա պատասխան չի գտնի և արդարացում չունի:

Մուշեղն անմիջապես չպատասխանեց: Պապի հանդիմանական խոսքից հետո՝ նա լռեց մի երկու վայրկյան էլ, ապա նայելով թագավորին ու նրան չորջապատողներին, տասվ հառաչեց.

— Ես, արքա, սպանեցի իմ նմաններին, բայց քեզ նման մի հրեշտակող արքա՝ բարեկամություն խոստացավ ինձ և կյանք խնդրեց ինձնից և իմ ձեռքը չբարձրացավ նրա վրա, որովհետև նա քեզ նման հրեշտակող էր և թագավոր...

Պապն էլ չկողեց նա շարունակի: Մոռեցավ և հուզված համբուրեց Մուշեղին:

— Դու որ բարեկամության համար խնայել ես օտար թագավորին, ապա որքան պիտի հարգես քո թագավորին...

«Երեխա՛» ասավ Մուշեղը մտքում ու քիչ հետո հրամայեց տվյալ օգնություն ուղարկել Սմբատ Բագրատունուն՝ պատրաստվելու հետապնդելու:

Եվ հոգնած մի երեկո իջավ Զիրավի դաշտում:

Լուսինը նորից դուրս եկավ սարերի ետևից և հովիտը լցրեց իր կաթնագույն լույսով, արծաթազօծեց Արածանու ջրերը, որ հոսում էին իրենց ափերին խշշացող եղեգների միջով մի այնպիսի հանդարտ, հանդիսավոր ընթացքով, որ կարծես ոչինչ չէր կատարվել Զիրավի դաշտում:

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

Աշնանամերջի պայծառ օր էր։

Դվինի փողոցներում անսովոր իրարանցում էր։ Մարդիկ, երեխաները, անգամ կանայք վազում էին դեպի հրապարակը և շուռպեցնում իրար։

— Շո՛ւտ–շո՛ւտ... Սկսվել է... արդեն սկսվե՞լ է...

Վազողների մեջ էր և Դվինի խենթ Մեղավոր Մաղքոսը՝ հեզան մազափունջ պոչը ձեռին, իր մաշված վերնազգեստով, որի փեշերի ծալեններից շորս–շորս ծեծում էին նրա մերկ սրունքները։

— Ո՞ւր, Մաղքոս, ո՞ւր ես աճապարում,— հարցնում էին պատահող երեխաներն ու քաղաքացիները։

— Թագավորը կանչել է,—կանգնում և լուրջ պատասխանում էր Մաղքոսը մազախուխվ գլուխը դարձնելով հարցնողի կողմը։

— Իսկ ինչո՞ւ է կանչել, Մաղքոս,— հետաքրքրվում էին մարդիկ։

— Պատիվ տալու,— ասում էր Մաղքոսը լուրջ և նորից շարունակում վազել վերնազգեստի ծալենները քամուն տված։

Իսկ քաղաքի հրապարակը, ուր շտապում էին մարդիկ, լինում էր այդ միջոցին ուրախ նվագից, մարդկային ուրախ կանչերից, որ միահյուսված բարձրանում–ծփում էին Դվինի գլխին և դնում–տարածվում դուցե ավելի հեռուները, —այնքան բարձրազոչ էին դրանք։

Այդ էր պատճառը թերևս, որ ամենքն ուզում էին իմանալ, թե ինչ է նշանակում այդ, ինչ ձայներ են, ինչ թինդյուն, ինչ ժխոր։ Ու հետաքրքրված գնում էին ոչ միայն երեխաները ու անգործ հետաքրքիրները, այլև անգամ լուրջ մարդիկ՝ արհեստավորներ, քաղաքացիներ, մինչև իսկ քաղաքում գտնվող չինականները, բայց ամենից շատ իհարկե երեխաները՝ առանձին

ճիշտ ու ճավղով, ինչպես սարյակների խմբեր: Ու բոլորն անշափ հետաքրքրված: Իսկ երբ հասնում էին հրապարակ՝ ամենքը մի պահ կանգ էին առնում զարմացած աստակարդ մի տեսարանի առջև:

Դվինի սալարկված մեծ հրապարակը, որի մի կողմը մայր եկեղեցին էր, մյուս կողմերում արհեստանոցներ ու խանութներ, և որի չորս անկյուններում՝ քարաշեն չորս աղբյուրներից շողշողալով ջրեր էին հոսում, այդ մեծ հրապարակը լեցուն էր հիմա խայտաբղետ մի բազմությամբ, որ շարվել ու դառնում էր տախտակներից շինված երկար-երկար սեղանների շուրջը մի անլուռելի խոսոցով ու ազմուկով... իսկ սեղանների վրա աստատրին թափված էին ամեն տեսակ ուտելիքներ՝ ձերմակ հացեր, եփած ու խորոված մսեր, կաթի գավերով, սափորներով ու վայտե թակուչկինեղով դինիներ, և մրգեր, ամեն տեսակ մրգեր...

Նորեկ դիտողներին անտանելի էր թվում մանավանդ այն, որ հրապարակի հեռու անկյուններում՝ հրապարիների առաջ քարերով ատրված վառ օջախների վրա մի քանի հսկայական կաթսաներով, որոնց դոլորշին ծխի հետ բարձրանում ու հալվում էր խրախճողների գլխավերև... Իսկ խրախճողների թիվն ա՛յնքան շատ էր, որ սեղանները հազիվ էին տեղում, և այդ ամենքն ապառում էին ձեռները քշտած բազմաթիվ կանայք ու մարդիկ, որ վայտե ու պղնձե սկուտեղներով բերում էին հացն, մսի և դինու նորանոր պաշարներ ու բաժիններ. բերում էին և, մեծ դժվարությամբ արանք բանալով, դնում սեղանների վրա, որոնց յուրաքանչյուրի գլխին նվագում-երգում էր դուսաններից մի խումբ այն ուրախ եղանակներն ու երգերը, որ լինում էին սովորաբար ժողովրդական մեծ հռոների ժամանակ, հարսանիքներին:

Այդ պահն էր կարգալրել: Հինգ օր առաջ նա իր չքախմբով Զիրակի հաղթական ճակատամարտից վերադառնալով՝ հաղթական էշխան Ամատունուն պատվիրից «հաղթության խրախճանք» տալ ժողովրդին՝ նվագով ու երգերով հանդերձ:

— Հրամանդ բարի, արքա,— համաճայնեց հազարապետը.— այդ ոչովհետև արքունի պահեստներն ու պաշարները հարուստ

չէին պատերազմի հետևանքով՝ նա, իր հերթին, կանչեց անվանի մեծահարուստ վաճառական Տիրոցին, որ նոր էր վերադարձել իր վախտավայրից—Այունէքից, և խնդրեց օգնել:

Լսելով իշխան Ամատունուն՝ Տիրոցը ձեռը դրեց կրծքին:

— Սիրահոժար, հազարապետ տեր: Պատրաստ եմ՝ հազթությանն ի պատիվ:

Այս Տիրոցը, որ Բիզանդիայում հայտնի էր Տիրոս-արմեն անունով, քարավաններով ապրանքներ էր տանում Հայաստանից Բիզանդիա կամ Ասորիք և այդտեղից բերում սես-սես կերպասներ, ակնեղեն, ոսկեղեն զարդեր՝ արքունիքի և իշխանների համար, նաև բրդե ու քաթանե կտորներ, դուն-դուն հուլունքներ, մանյակներ, ապարանջաններ և հագուստից կախելու արծաթե զարդեր՝ քաղաքացիների ու չինականների համար... Այս պատճառով երկրում մեծ ժողովրդականություն ուներ այդ Տիրոցն իր հարստությամբ ու քարեմտությամբ: Նա ընդունված էր և հոգևորականների մոտ. երբեմն հայ եպիսկոպոսների նամակներն օգնում էին նրա առևտրին, և վոխարենը նա վանքերի համար բերում էր խաչեր, ապառներ, աշտանակներ ու քշոցներ, խակ եպիսկոպոսների համար ընտիր դիպակներ կամ զարդարուն շուրջառներ: Նա, դեռ պատերազմը չսկսած, երբ իմացավ, որ պարսիկները անցել են հայոց սահմանը, իր չարժական գույքի մեծ մասը բարձել տվեց ուղտերին և տարավ այունէք, իսկ մնացած ապրանքը պահել տվեց Հատուկ, պատերազմի վտանգների համար պատրաստած ստորերկրյա թաքստոցներում, որոնց մուտքը ինքը դիտեր և իր գործակատարներից մի քանիսը:

Եվ ահա, երբ Տիրոցը հազարապետ իշխան Ամատունուց իմացավ թագավորի ցանկությունը՝ նա ցրեցնի և դինու իր պահեստները ղրեց հազարապետի տրամադրության տակ և կարդացրեց, որ իր հոտերից երեք հարյուր մեծ ու վոքր անասուններ բերեն Դվին՝ «հաղթության ի պատիվ»:

Եվ ահա ժողովուրդը «հաղթության խրախճանքն» էր կատարում:

Սակայն առաջին օրը չէր, որ ժողովուրդն ուրախանում էր:

Զիրավի հաղթության լուրը թագավորից շուտ էր հասել Դվին, և մարդիկ նախ՝ անից հետո, այդ մեծ հաղթության

լուրն առնելով, ավելի էին ոգեշնդվել և սկսել ավելի մեծ եռանդով նորոգել իրենց տները, իսկ լեռնագավառները փախած ժողովրդի մեծ մասը մի քանի օրում վերադարձավ ճիերով, սայլերով, բերելով տարած թանկարժեք իրերը, անասուններ, երեխաներ... Ու քաղաքը լցվեց ուրախությամբ և վերաշինության եռանդուն աշխատանքով... Պարսիկներն ամենքան հապճեպ էին հեռացել քաղաքից, որ չէին կարողացել տանել նրա բոլոր պաշարները, որ դվինցիները, ըստ հին սովորության, վառոդի հոտ առնելով, թաղել էին գետնի տակ—ամորերկրյա պահոցներում, փոսերում, հորերում... Վերադառնալով՝ նրանք այդ ամենը հանում էին այժմ, դրա հետ և իրենց պղնձներն ու երկաթեղենը, նաև կավե մեծամեծ ամաններում, փոքրիկ կարասներում պահած տնային մանր իրերը, որ չէին կարողացել փախցնել հետները... մի խոսքով՝ բանում էին բոլոր ծածուկ պահեստները տներում, բակերում ու այգիներում: Իսկ մայրաքաղաքի արհեստավորները՝ մաշկակարները, ճոնները, հյուսները, դարբիններն ու բրուտները, որ իրենց արհեստանոցները վիակելով՝ վախել էին կամ ահուդողով աշխատում էին տներում ու այգիներում, նորից բացել էին արհեստանոցները. մի տեղ հիմա դարբնի մուրճն էր աղմկում, մի ուրիշ տեղ հյուսնի ուրագը ուրախ տաշեղն էր թափում—ցրում... այնպես որ մի քանի օրվա մեջ նախկին մեռյալ քաղաքը մտել էր այնպիսի եռ ու զեռի մեջ, ինչպիսին լինում է ավերված մրջնոցում, երբ մեն մի մրջյուն հոգում է վերականգնել իրենց ընդհանուր բունը, որ քանդել է վուշը պատահարը:

Նույնը կատարվում էր նաև Դվինի չուրջն ու հեռուն տարածվող գյուղերում, ուր չինականները դեռ պատերազմից առաջ, քաղաքացիների նման պարսից գալն իմանալով, իրենց տավարն ու ոչխարը քշել էին Գեղամա և Գուգարաց լեռները և ապրում էին իրենց անասուններն ի տվածով: Այժմ սակայն բոլորը կարծես ամեն նեղություն մոռացած՝ վերադառնում էին իրենց անասուններով և գետնահորերից հանում թաքցրած ցորենն ու բրինձը, և հիմա կապույտ ու խաղաղ ծուխ էր բարձրանում նրանց երթիկներից, ու հեռվից նայողին այնպես էր թվում, թե կարծես ոչինչ չի պատահել այդ գյուղերին—ամենքան

հաչու ու հին էր աչնան խաղաղ բարդիների արանքից բարձրացող այդ ծուխը:

Եվ ընդհանուր այս ուրախության մեջ, երբ հանկարծ տարածվեց, թե թագավորը հաղթության խրախճանք է տալիս մայրաքաղաքի ժողովրդին (մի բան, որ վաղուց չէին արել հարց թագավորները),— դա ոչ միայն բարձրացրեց ուրախության տիրքը, այլև հետաքրքրեց ամենքին:

Ու մարդիկ սկսա կեր ու խումի մեջ էին. առավոտից հրապարակը լցվել էր բազմությամբ. չքավոր քաղաքացիներ, զինվորներ, քաղաքում մնացած չվճռականներ դուսաններն երգի ու նվագի տակ ոտի վրա ուտում էին սեղանների բարիքը արտակարգ, անհագ մի ախորժակով, ավելի շուտ սպահության համար, երբեմն իրար առջևից համեղ պատառներ քաշելով, կամ գավաթներն առատ գինի լցնելով, որ սկզբում խմում էին մեծ մասամբ անխոս, ապակով դեպքում միայն հարևանին բարեմաղթություն տալով: Կային այնպիսիներն էլ, որ արդեն գինով՝ ճայնակցում էին դուսաններն երգին, կամ նրանց նվագից ոգևորված բացականչություններ էին անում հաբրաձներին հատուկ անիմաստ շարժումներով.

— Ջայդ ի հոգիս, ճայդ ի՞ հոգիս, դուսան եղբայր...

— Գինի՛ դուսաններին,— առում էր մի ուրիշը,— գինի՛ դուսաններին:

Իսկ հրապարակի ափերից, տների կտուրներից կամ բացվածքներից այդ սենին նայում էին երեխաներ, կանայք ու աղտոտ մարդիկ, որ ունևոր լինելով հարմար չէին տեսնում մասնակցել ամբոխի խրախճանքին: Նրանց թվում էր, թե թագավորն այդ արել է միայն աղքատների համար, ուստի բավարարվում էին միայն դիտելով, ոլորտս դիլարճալի մի տեսարան, ու միաժամանակ զարմանում էին, թե որտեղից հավաքվեց այդ բազմությունը —այդքիններից եկավ, թե գետնի տակից բուսավ, ու բոլորին թվում էր, թե հիմա քաղաքում ավելի շատ մարդ կա, քան երբևէ, որովհետև կերուխումից այնպիսի ժխոր էր բարձրացել հրապարակում, ասես քաղաքն ամբողջ լիքն էր ժողովրդով: Մյուս կողմից՝ դուսանները նվագում ու երգում էին այնպիսի եռանդով, թվում էր մրցում էին միմյանց հետ: Բայց ժխորը երբեմն այնքան էր աստիճանում, որ նվագն ու երգը խլանում էին նրա մեջ: Երբեմն էլ սակայն խրախճող այդ բազմությունն

այնպես էլ լուում, կարծես մարդ չկար։ այդ լինում էր այն պահերին միայն, երբ սեղանների վրա դնում էին գինիների նոր տեսակներ ու պատվեր կամ մսերով լիք սկուտեղներ։ Բայց դա տևում էր միայն մի վայրկյան և ժխորը նորից բարձրանում էր ավելի ուժգին ու հախուռն։

Մեղավոր Մաղքոսը, միանալով խրախճողներին, եղան մարգարտյա պուչը ձեռին՝ խմբից-խումբ, սեղանից-սեղան անցնելով ասում էր.

— Բողորեքյան հյուր եք. վայելեցեք և օրհնեցեք։

Այդտեղ էր և խայտաճամուկ շորեր հագած և սրածայր ու ինջավոր գլխարկ դրած մի խեղկատակ, որ ծամածռում շարժուկներով նույնպես անցնում էր սեղանից սեղան և անագում հարբածներին կամ նրանց, ովքեր դեռ չէին հարբել։ Իսկ երբ մեկն ու մեկը նրա ծաղրից բարկացած՝ վրա էր գնում ոպառնալի, նա խոսքը փոխում էր անմիջապես ու ծաղրում պարսիկներին, որ փախչում են հիմա Մուշեղի, կամաորականի ու բազրատունու առաջ։

Պարսիկն եկավ գիլավոր,
Ուզեց ուտի ինձ ու քեզ,
փախավ գնաց վիրավոր,
Էլ չի ուտի ինձ ու քեզ...

Երգում էր ինքնահնար իր երգը՝ իր հորինած մի եղանակով, որի մեջ ավելի ծղրտոց կար, քան մեղեդի։ Երգում էր և երբեմն էլ պարում իր եղանակին համաչափ։

Արդյոք նրա այդ պարը վարակե՞ց մարդկանց, թե գինին ու դուսանների նվագը համակեցին նրանց պարելու տրամադրությամբ՝ հանկարծ, կերուխումը դեռ չավարտած, մի քանի տեղ միաժամանակ սկսվեցին պարեր։ Պարել սկսեց նախ մի երիտասարդ սեղաններին արանքում. ձեռները գլխից վեր բռնած նա, դեմքը դուրս տալով, անցավ սեղանների արանքով, ճանապարհին բռնելով պատահողի թևը կամ գլխարկը, որ հետևեն իրեն։ Բայց մարդիկ խուսափում էին նրանից՝ քանի ոք ուտելով էին զբաղված։ Մեկը, վերջապես, իր նման մի երիտասարդ, միացավ նրան և երկուսով պարելով, կարծես ճկունությամբ իրար հետ մրցելով, հասան դուսանների մի խմբի և շարունակեցին պարը

նրանց առաջ՝ սեղանակիցներն ու կանչերն ու խրախուսական ձայները տակ։

Ինչ հետո կողքի սեղանի մոտ կանգնած—ուսող դինվորներից մի քանիսը, նրանց օրինակելով, սկսեցին պարել առանձին, ապա ուրիշները, դարձյալ ուրիշները, և կարճ միջոցում երգի ներգին հետ միասին, ուսողների հետ միասին հրապարակը ծփաց ու տարուբերվեց պարողներով։ Պարում էին թե՛ մենապարը, թե խմբապարը, և ծափերի հետ միասին լսվում էին կանչերը ու «կեցցե», «ապրի»... իսկ մի տաքացած արհեստավոր պռոստմ էր կոկորդի ամբողջ ուժով, կամենալով, երևի, լսելի լինել բոլորին.

— Ամե՛նք դինի, համե՛նք դինի, Թող անուշ լինի՛...

Ու ժխորը դարձյալ ալեկոծվում էր մի առժամ, ինչպես հանկարծահաս աղմկալի մի հորձանք, որ լռեցնում է բոլոր մանր ձայները, կլանում էր թե երգն ու նվագը և թե առանձին ձայները։ բայց հանկարծ լռվնում էր— խաղաղում, ասես հրապարակում մարդ չլիներ. սակայն դա տևում էր մի վայրկյան միայն։ Եվ ահա, մեկը նորից բացականչում էր.

— Դինի՛, համե՛նք դինի, Թո՛ղ անուշ լինի...

Իսկ մի ուրիշը պռոստմ էր գավաթը դլխից բարձր պահած.

— Ամե՛նք ի փառս մեր Թագավորի, որ խաղաղության մեջ մեզ պահի...

— Եվ ուրախության անապատ...

Եվ գավաթները զարկվում էին իրար, փրնդիռ ու դարմ Թողում էին միասին, իսկ պարողները դռփում էին սալահատակը, պտտում ստոջ ու դառնում մոլեգին։

***

Այդ ձայները, որ օտարոտի եղևէջներով տարածվում էին քաղաքի վրա, առաջին հերթին հասնում էր, իհարկե, հրապարակի վրա դտնվող վանքը, ուր այդ ժամանակ պաշտամունք էր կատարվում։ Փախստավայրերից վերադարձած հոգևորականները և ինքը կաթողիկոսն տեղատահ Ա՛ստղը օրը երեք անգամ պաշտամունք էին կատարում՝ «պղծված տաճարը մաքրելու և նախկին սրբությունը վերականդնելուց»։ Բացի այդ՝ նրանք օրը երեք անգամ տաճարի պատերն ու հատակը, բեմը և սեմը սրսկում էին օրհնած ջրով, որ կրակատաշտ հեթանոսներն և նրանց մո-

ղերի ոտների փոշին, անմաքուր շունչը չդանան ու վերանան խաղաո։ Եվ այն ժամանակ ահա, երբ խոտաբարո Ղազ նավիկոպոսը և նրա վարդապետները երեկոյան պաշտամունքը կատարած դուրս էին գալիս տաճարից—նրանց զարմացրեց հրապարակի աղմուկը և այդ աղմուկի մեջ առանձին կանչերը.—

— Դինի՛, դինի՛, խմենք դինի, թո՛ղ աշխարհը հայոց ուրախ լինի...

Ղազ արքազանը դեմքը կնճռեց ու կանգ առավ բակի մեջտեղը. նրա հետ, նրան չրջապատած, կանգ առան և վարդապետները... Լավում էր աղմուկների ու խոսքի ժխոր, որի մեջ արինգների ու վանդիտների մերթ բարձր, մերթ մեղմ նվագը և տարբեր ելևէջներով երգեր, իրար խառնված, ոլորվում էին այդ աղմուկի մեջ, կարծես ելք վնտռելով... Ընդհանրապես օդում կանգնած էր մի խուլ, սպառնական մռմռոց, որ տոնճարին այդքան մոտիկ ուհաճ ու չարաղուշակ թվաց վարդապետներին: Նրանք դիտեին, որ ժողովրդի այդ խրախճանքը կարգապրել է թագավորը և դեմ չէին, որ ժողովուրդն ուրախանա, բայց այստեղ, եկեղեցուն այդքան մոտիկ և այս ձևով— դինիներով, երգերով ու կանչով—տհաճ էր և անտեղի: Կեսօրին այդ հնչուխումը հանդարտ էր և պատշաճի սահմաններում, իսկ հիմա՝ երեկոյան դեմ—սմբոխը, նրանց թվում էր, դարձել է սանձարձակ. դինին կարծես մոռացնել էր տվել ամեն չափ ու հարդանք: Մանավանդ անտեղի էին նրանց այդ երգերը, դուսանների երգերը, որ արտիլված էին վաղուց և հիշեցնում էին հեթանոսական ժամանակները:

Մի առժամ Ղազ արքազանը, չրջապատված իր վարդապետներով, սարկավագներով ու երեցներով, մոայլ լսեց այդ ամենը, ապա ասալ խորին սրտմտությամբ.

— Մեթե՞ չկար ուրիշ մի վայր, որ խրախճանքը բերել են տուբր եկեղեցու մոտ... Դա արված է կարծես քրիստոնեից պայթակղության համար,— ավելացրեց նա դլուխն օրորելով:

— Եվ մեթե՞ չէր կարելի փոքր ինչ վայելուչ,— միջամտեց մի վարդապետ, որին հայր Ստղոմոն էին ասում և որը բոլորից բարձրահասակ էր ու նիհար և ուներ զարմանալի սև մորուս, որի մազերը փայլում էին այնպես, կարծես յուղով օծած:

Այդ ժամանակ ժխորը նորից հորճանք տվեց. լսվեցին նոր բարձր կանչեր. «Դինի՛, դինի՛, նոր դինի...»:

Իսկ ուրիշ ձայներ պահանջում էին.

— Երկեցնք, դուռաննե՛ր, նվագեցնք, Թող աշխարհը հայոց ուրախ լինի...

— Ուրա՛խ, ուրա՛խ...

Դրանց հետևեցին և ուրիշ ծաղրական ձայներ.

— Կամաց, կամաց. վարդապետները կիմանան և կինգովին մեզ...

— Թող իմանան և նույնպես խմեն, որ աշխարհը հայոց ուրախ լինի:

Սրբատան Հայրը դունատվեց վերջին խոսքերից և նրա ճակատը դողացին: Վարդապետները նկատեցին այդ, և նրանցից մեկին սաստիկ զայրացած.

— Հնթանո՛ս խոսքեր:

— Ծաղր են անում սուրբ եկեղեցու սպասավորներին,— ամբաստանեց բարձրահասակ ու նիհար Հայր Սողոմոնը:

Նրանք նորից լռեցին և, լրտեսից հազիվ զգալով ու եկող ճայներին ականջ դնելով, նայեցին սրբատանին, որն զգալով ամենքն էլ նրան են նայում և լրտեսից սպասում մի ուրիշ կամ մի խոսք՝ խոսեց հուզված.

— Ժողովուրդը տալիս է բաքսով և մոռանում Քրիստոսի պատվիրանը: Դնանք ժողովրդի մեջ, եղբայրնե՛ր: Եկեղեցու սպասավորներիս առնենք՝ նա լսթյան և կհրաժարվի էլ վարմունքից հնթանալ...

Ու առաջինը Հայր սրբատանն էր քայլեցած քայլից դեպի դուռը. նրան հետևեցին վարդապետները, սարկավագները ու երեցները՝ թվով աս-տասնեվեցու հասնող, նույնպես զայրացած, բայց երեսից մինչ կրունկները հասնող սև պարեգոտների մեջ հեզ ու խոնարհ անոք ընդունած: Նրանք քայլեցին մի վճռակամությամբ, կարծես դնում էին սուրբ և անհետաձգելի մի պաշտոն կատարելու, դնում էին քրիստոնեական կարգից դուրս եկած ժողովրդին հանդստացնելու և կարգի հրավիրելու:

Ճիշ ահա, երբ նրանք դուռը բացին ու էրար հառեց դուրս եկան անհամոզված ու անխոս՝ հրապարակի աղոքը զարմացրեց նրանց: Պարապի նեղուից նրանք ձայներ ու կանչեր էին լսել մեծ, բայց չէին կարող տեսնել, թե ինչ է կատարվում ամբողջ հրապարակում, նրա անկյուններում և մեջտեղը բացած բազմաթիվ փոքրիկ անդամներին չուրջը. և երբ տեսան այդ ան-

զանները չէին պատած խրախճող ու պարող բազմությունը— նրանց թվաց թե տարերային հեթանոսական անպատկառ մի տեսիլք.— ուտող բերաններ, ծամող ծնոտներ և խենթ պարեր... Նրանք կանգ առան կարծես ավելի լավ տեսնելու, և դուռաններին լսելով՝ ավելի մոայլվեցին. այդ քահանաների երգիչները երգում էին այն առեղծվածային երգերը, որ իրենք երգելում էին ոչ միայն եկեղեցիների բակերում, այլ առհասարակ ամեն տեղ, որովհետև դրանք հին հեթանոսական երգեր էին, որոնց համար և դուռաններին տանել չէին կարողանում— պատժում էին, որ մի շատ թարմ էին պահում այդ կաքավի և թվերյաց երգերը, տարածելով ժողովրդի մեջ:

— Նզովյալներ,— չհամբերեց դյուրաբորբ հայր Սողոմոնը, նայելով եպիսկոպոսին՝ նրա հավանությունն առնելու ակնկայությամբ:— Եվ ո՛ւղիղ եկեղեցու մոտ...

Ծաղ սրբազանը լուռ էր. նա չուրթերը սեղմած դիտում էր հրապարակը լեցված մարդկանց մոլեգին ուրախությունը, որին, ի զարմանս նրա, մասնակցում էին և կանայք: Սեղաններից մի-մի մոտ՝ կարմրած, խանդավառ դեմքով տղամարդիկ ու կանայք դառնում էին մի վոթորկալի չուրջպարով, որին մասնակցում էին և դինվորներ, ու բոլորը միասին դոչ-դոչում էին, քրքջում, ասես ամեն հնազանդություն ու պատկառանք մոռացած... Եվ այդ պարողները մի տեղ չէին, այլ շատ տեղեր... Նրանք դառնում էին այնպես աչխուժ ու արագ, որ ամբողջ հրապարակը կարծես ալեկոծվում էր խայտաբղետ ծլվանքով... Իսկ ուտողնե՞րը... ամանք սեղանին կպած ագահորեն չարժում էին իրենց ծնոտները, մյուսներն ուտում էին սեղանից-սեղան անցնելով, մեմլանց մի-մի ուրիշ առաջարկելով կամ գինու զավաթներն իրար դարկելով. ու այդ բոլորը մեծ աղմուկով, բարձր մի ծիծաղով, որ Ծաղ սրբազանը չէր հիշում, թե տեսած լինի մի տեղ, բայց գիտեր, որ այդպես են ուրախացել հեթանոսները իրենց տոներին:

Ի լուռն այս ամենի՝ թե Ծաղ սրբազանը և թե նրա շուրջը համբած վարդապետները բազմության մեջ նկատեցին Մեզնիվոր Մաղքոսին՝ հզան մազափունջը ձեռին և խայտաճամուկ հագնված, մինչ ածուրը երկար զլակով խեղկատակին, որ ծամածուռ շարժուններ էր անում՝ լեզուն հանելով:

Դա ավելի տհաճություն պատճառեց նրանց:

Սակայն եղավ ավելի վատը։

Եկեղեցատակը, տեսնելով եկեղեցու պատի տակ խմբված վարդապետներին՝ հանկարծ ծուլ եղավ, ցատկեց մի կանգուն վեր ու ճչաց.

— Վարդապետնե՛րը, վարդապետնե՛րը... Գինի՛ վարդապետներին...

Նրան ձայնակցեց անմիջապես Մեղավոր Մաղքոսը՝ եզան ոտքը բարձրացնելով.

— Գինի՛ վարդապետներին...

— Դնա՛նք, հայրեր։ Մեր տեղը չէ այստեղ,— ասավ Խաղը և նեղուստ հուզված, բայց արտաքուստ հանդիստ ետ դարձավ նա և իր վարդապետներով, սարկավագների ու երեցների հետ մտավ վանքի բակը։

Լսվեց թե ինչպես դուռը փակվեց ներսից։

Բայց ներս գնալով էլ՝ նրանք չարունակ լսում էին այդ հարբած ձայները, երգերն ու նվագը և չխոթված գնում մի-մյանց մոտ, վրդով ախանջ գնում կամ դլուխները օրորում մոայլած։

— Անպատկառ բարքեր, հեթանոս բարքեր...

Ամենից ավելի հուզված էր կարծես հայր Սողոմոնը, որ չէր կարողանում բարկությունից մի տեղ կանգնել կամ նստել։ Երկար ժամանակ մեկուսի շրջելուց հետո նա, վերջապես, գնաց-մտավ Խաղ արքեպիսկոպոսին։

— Մի՞թե սիրտ է թողնել այս, հայր սրբազան...

— Ի՞նչ ես կամենում, հայր Սողոմոն,— և Խաղ եպիսկոպոսը անշարժ բիբերը հառեց հուզված վարդապետի երեսը, մտքերի մեջ կարծես չհասկանալով նրա խոսքերի իմաստը։

— Աննախադեպ է թողնել այս, հայր սրբազան...

— Այո, հայր Սողոմոն, բայց ի՞նչ կարող ենք անել հիմա։

— Ի՞նչ,—վարանեց հայր Սողոմոնը այդ պատասխանից։— Դու, հարկավ, կենձնից առավել գիտես, հայր սրբազան։ Առել և տանել թագավորին, որ գոնե չկրկնվեն գործերն այս հեթանոս։

— Սակայն նա արքա է, հայր Սողոմոն, և նոր... և Խաղը տաքես մտքերով տարված չդադարեց իր խոսքը, ու նրա ուխտարին հայր Սողոմոնը վրա բերավ.

— Եվ պատանի տհաս...

— Ա՛յո, և պատանի տհաս,— կրկնեց Խոջը դալճյալ մաքսի մեջ ու լռեց:

Հայր Սողոմոնը նույնպես լռեց, սպասելով արքազանի հեղինակավոր խոսքին: Տեսնելով սակայն նա դանդաղում է, թե չի ուզում խոսել՝ ինքն սկսեց նորից.

— Խոսիր հետը, արքազան, և մի թողնիր անել գործերը դատաստիկիչ:

— Համգիստ եղիր, Սողոմոն հայր, կխորհենք անհրաժեշտը...

Թե ինչ էր լինելու այդ անհրաժեշտը՝ նա չասավ: Հայր Սողոմոնից ավելի հուզված էր Խոջ արքազանը, սակայն նա չէր ուզում ինքը խոսել Թադավորի հետ, առանց կաթողիկոսին հայտնելու. մյուս կողմից՝ նրան թվում էր, որ եթե ինքը խոսեր՝ կասեր խոսքեր խիստ, ուստի բարկոք էր համարում, որ վեհը խոսեր, մանավանդ չէր ուզում կարգը խախտել... Եթե Ներսեսը չլիներ երկրում՝ կխոսեր ինքը, բայց քանի որ նա վաղարշապատ է—լավ է խոսի նա... Սակայն Պապի կռմռած այդ «հաղթության խրախճանքը» նա համարում էր վատ նշան: Նա դրանից եզրակացնում էր, որ Թադավորը կամ չի հավատում եկեղեցին կամ դործում է անխոհեմաբար, այլապես կհարցներ վեհի կամ իր խորհուրդը...

«Պետք է սանձահարել այդ սրտին,—ասավ Խոջը մտքում:—Սանձահարել՝ քանի շուտ է և չթողնել, որ անել այսուհետև գործեր անխոհեմ և սխալ»...

***

Դուրսը, սակայն, չնայած երեկո էր արդեն, խրախճանքը շարունակվում էր նույն թափով ու եռանդով: Իսկ երբ մութը իջավ քաղաքի վրա՝ հրապարակը և խրախճանքի տեղամասերը լուսավորելու համար, ինչպես անում էին մեծ տոներին մխիթարեցիները, վառեցին երկաթե ու փայտե եռոտանի պատվանդանների վրա դրված լապտերները: Այդ ինքն՝ երկար ձողերի ծայրերին ամրացրած անոթներն էին, որ լցված էին յուղով. և որովհետև դրանց քիվը քիչ էր՝ վառեցին նաև յուղոտած լաթեր նույնպիսի ձողերի վրա ամրացած: Բայց և այնպես դրանց լուսերը շատ տկար էին թվում հրապարակի մեծությունը լուսավորելու համար:

Ընայած դրան՝ ուրախությունը չնվազեց: Ընդհակառակը՝ լույսերը ցնծության նոր ալիք բարձրացրին և արթնացրին նոր ախորժակ. դուռաններն իրենց երդն ու նվագը շարունակեցին նոր եռանդով, մարդիկ ներսից ձայնակցեցին ավելի համարձակ, իսկ պարողները հիմա դարձան ավելի մեծ թափով ու աշխուժով, ոգևորված լույսերից ու բազմության ծափերից: Եվ այդ ուրախ-ցնծագին ձայներն ու կանչերը այժմ ավելի էին տարածվում քաղաքի վրա և գնում հեռուները՝ ասելու, որ երեկվա սխալը, դժբախտ մայրաքաղաքն ուրախանում է, որ կյանքը թեև անվերջ տառապանքների չղթա է, բայց ունի և այնպիսի ուրախ վայրկյաններ, որ մոռացնել է տալիս այս տառապանքները և մարդկանց հաշտեցնում կյանքի հետ:

Այդ ուրախության ձայները հասնում էին հարկավ և մինչև նաբերդը, ուր Պապը հիմա՝ պալատի այնուհայտ ճեմելիքից նայում էր հրապարակի այդ կեցուխառմին, որն իր փողփոդուլյուններով հիշեցնում էր նրան բիզանդական տոները: Պապի հետ էին թագուհին և պալատականների մի մասը— հազարապետ իշխան Ամատունին, Զենոն Գնունին և դևը ու կլոր Օթա Ապահունին, Բաթը, ավջայադպիր Երեմիան և մի քանի այլ նախարարներ ու պալատական տիկիններ, դրանց թվում և Բաթբ մայրը՝ պառավ ունազգեստ իշխանուհի Սահատունին իր հարսի և Երեմիայի հետ: Բոլորն ուրախ էին և զովում էին Թագավորի այդ նախաձեռնությունը, որ պիտի ուրախացներ ժողովրդին և մոռացնել տար նրա կրած սարսափները:

— Դու լավ ես սկսում, որքա, քո թագավորությունը,— ասում էր հազարապետ իշխան Ամատունին:— Ուրախության այս հանդիսը ժողովուրդը չի մոռանա...

— Ճշմարիտ է,— ասին Զենոն Գնունին ու դևը Օթա Ապահունին միասին:

— կարծո՞ւմ եք,— ասավ Պապը:

— Այնշուշա եմ,— բոլորի փոխարեն պատասխանեց Զենոն Գնունին:

Բայց Պապն էլ չխոսեց. նա մտածում էր, թե ալդյոք ժողովուրդն անկարգություն չի՞ անի հանկարծ և վարկաբեկի իր նախաձեռնությունը:

— Միայն թե անկարգություն չլինի,— ասավ Պապը:

— Նրբեր ապահով, որքա,— հավաստիացրեց իշխան Ամա-

տունին:— Ուրախությունը չարիք չի բերի: Բայց և այնպես՝ տրված է բոլորը՝ կանխելու ամեն անհարգություն:

Պապը նորից լուռ նայելով հրապարակին: Նրա դեմքը խաղաղ էր և հանգիստ: Իսկապես՝ նա գոհ էր, որ վաղուց մտադրածն իրագործեց, և ժողովուրդն ուրախանում է: Նրան թվում էր, որ ուրախության մեջ մարդիկ, հիրավի, հաղիվ թե անվարություն անեն:

Սակայն նրա մտքերը գնում էին ավելի հեռուն: Մտածում էր՝ հնարավո՞ր է արդյոք այնպես անել, որ ժողովուրդը միշտ ուրախության մեջ լինի... արտաքին վտանգը, ահը և սարսափը վերանան երկրից... Ու գտնում էր, որ դրա համար հարկավոր է խաղաղություն, տևական խաղաղությո՛ւն. . Բայց ինչպե՞ս հասնել այդ խաղաղության: Հնարավո՞ր է արդյոք այդպիսի խաղաղություն հայոց աշխարհում... Եվ նրան թվում էր, որ դա հնարավոր կլինի այն դեպքում, եթե երկիրն ունենա մեծ բանակ, հավաքական մի զորություն, որ դիմապրավի բոլոր թշնամիներին, մի զորություն որ... Բայց արդյոք հնարավո՞ր է դա: Ըստեղի՞ց ստեղծել մի այդպիսի զորություն որ ժողովուրդը միշտ խաղաղության և ուրախության մեջ ապրի...

Ծանր խնդիր էր... Պետք էր այդ մասին խորհել, և խորհել երկար:

Բայց որքան էլ նա ուզում էր խորհել այդ մասին ավելի երկար, չուտով սակայն նրան սթափեցնում, իր մտածումներից հանում էին կամ հրջապատողների խոսակցությունները կամ հրապարակից եկող ձայները, և նա լսելով հեռվից եկող այդ խուլ բվվոցն ու հատ-հատ կանչերը՝ դարձյալ մտածում էր, որ չուվ եղավ այդ խրախճանքը. դա կսիրտին ժողովրդին, մոռացնել կտա ապրած տխուր ու ծանր օրերը և ապրելու նոր ուժ կհաղորդի նրան:

Պապին թվում էր նաև, որ այդ խրախճանքից գոհ կմնան ոչ միայն նրանք, որ մասնակցում են խրախճանքին, այլ, երևի, ամենքը, ովքեր կլսեն իր այդ ձեռնարկի մասին:

Այն ինչ այդ իսկ ժամին Պապ եպիսկոպոսը, իր միաբանության հետ լսելով հրապարակից այդ կանչերը, ծափերը, ներքին ուրախությունը, նախ զարմանում էր, որ Պապը չի հասկանում, թե «խրախճանքը դիվնեխումով վայել չէ քրիստոնեից», և երկրորդ՝

ժշտանում էր, որ Պապը թուլատրել է մի այդպիսի քրիստոս-
ընդունի դրժե: Ու երբեմն ասում էր լսելի ձայնով.

— Վա՛յ քեզ աշխարհ, դի թագավորդ մանուկ է...

Եվ վարդապետները, կարծես նրան օրինակելով, կրկնում
էին.

«Վա՛յ քեզ, հայոց աշխարհ, վայ քեզ»...

Ու նրանց մեծ մասին թվում էր, թե հրապարակային այդ
խրախճանքով, դուսանական ցուփ երգերով ու անզուսպ մոլի պա-
հերով հեթանոսությունը դլուխ է բարձրացնում և անբարոյու-
թյունը մտնում է քաղաք: Իսկ Պապ որբազանը մի ժամանակ
մտածում էր՝ վայն իսկ մեկնել Վաղարշապատ և այս ամենի
մասին խոսել Վեհի հետ, որ նա կարգ և խաստություն սովո-
րեցնի Պապին:

***

Խրախճանքի այդ երեկոն մեծ անհանգստության մեջ էր
և Հայր-մարդպետը. սյունաշար ճեմելիքում նա ևս պալատա-
կանների մեջ էր, բայց յուրջ և դուստ, ինչպես վայել է առաջին
սվաղանուն: Նայելով հրապարակի լուսերին ու կերուխումքին՝
նա մտածում էր, թե ե՞րբ պետք է, վերջապես, Պապը մենակ
լինի, որ ինքը կարողանա խոսել հետը: Մեկնումն ժամանակ
մտածում էր՝ իր ասելիքների հետ միասին Պապի հետ խոսել և
հրապարակի այդ պվարճության մասին և խրախուսել. նա
գիտում էր, որ դա հարկավ դուր չի գա վարդապետներին, սա-
կայն ինքը պիտի խրախուսի և հեծուկս հոգևորականներին, որ
ամեն ինչ ուզում են չորացնել և դարձնել տխուր ծես: Ու-սպա-
սում էր հարմար վայրկյանի, երբ Պապը մենակ կլիներ, բայ-
դոլին մենակ: Նա մի քանի օր էր պատրաստվում էր խոսել
Պապի հետ, բայց չէր աջողվում. Զիրավից վերադառնալուց
հետո՝ Թագավորը մեծ զբաղված էր կամ պալատականներով
շրջապատված, հետո էլ դարձյալ նրան մենակ չէին թողնում,
և նա ներսում բարկանում էր հազարապետ Ամատունու և Ձե-
նոն Գնունու վրա, որ ամեհղորդ հաճոյախոսություններ էին ա-
նում Պապին: Մյուս կողմից Հայր-մարդպետն ուրախ էր, որ
Մուշեղ սպարապետը չկար. Զիրավի ճակատամարտից հետո նա
մոտցել էր բանակներն առաջնորդելու, և ինքը հիմա ազատորեն

կարող էր խոսել նաև նրա մասին: Նա գտնում էր, որ Պապինը պետք էր հանել այդ չար Մամիկոնյանի ազդեցությունից, եթե իհարկե այդ ազդեցությունը կար. պետք էր հասկացնել նրան շատ բան, քանի որ երիտասարդ է և տակավին չի ճանաչում իր ժողովրդին, իր նախարարներին, չգիտի սնոտիական դրծերը վարելու և մարդկանց հետ վարվելու կերպը: Հայր-մարդապետը, որպես հին և փորձ պալատական ավազանի, նույնիսկ իր պաշտոնից էր համարում նրան բացատրել շատ բան... Բայց առաջին հերթին նա ուզում էր իմանալ, վերջապես, Պապի վերաբերմունքը դեպի Երեն և վարատեռ իր կասկածները: Մնում էր միայն, որ նա մենակ լինի և լսի Երեն...

Եվ այս երեկո վերջապես հաջողվեց այդ: Զարմանդուխտ Թագուհին չգիտես հոգնեց հրապարակին նայելուց թե լարակ հագնված՝ չգիմացավ ուշ աշնան երեկոյի զովությանը, ցուրտը պատճառ բերելով՝ սիկիննեների հետ գնաց պալատ:

— Դուք ևս կարող եք գնալ,— ասավ Պապը պալատականներին:— Ես կուզեի մի առժամ մնալ մեխայնակ...

Նախարարները և մյուս պալատականները՝ հազարապետ Սմատունու գլխավորությամբ դուրս խոնարհեցին և գնացին մեխանին:

Մնաց Հայր-մարդապետը. մեկուսի կանգնած:

— Արդյոք չե՞մ խանգարի, արքա, քո մենությունը՝ մի երկու վայրկյան այստեղ մնալով,— ասավ Հայր-մարդապետը, մոռնալով բազկաթոռում նստած Թագավորին, աչխատելով նրա չարժումներից գուշակել նրա վերաբերմունքը:

— Բնավ,— ասավ Պապը:— Ունե՞ս ինչ ասելու:

— Այո, արքա, եթե կհաճես լսել:

— Խոսիր, Հայր-մարդպետ,— գլխով արավ Պապը:

— Այո, ես վաղուց ցանկանում էի խոսել քեզ հետ, արքա,— ասաց Հայր-մարդպետը,— և խոսել առանձին:

— Խոսիր, Հայր-մարդպետ,— ասավ Պապը:— Եվ ինչի՞ մասին է քո խոսքը,— հարցրեց նա անմիջապես վարանքով և, ինչպես Հայր-մարդպետին թվաց, ոչ-պատրաստակամ:

— Այսօր անցած-դարձածի, արքա:

— Անցած դարձածի՞,— կրկնեց Թագավորը մի տեսակ զարմացած:

— Այո, նրան կհաճեն, կուզեի պատմել, թե ինչ կատարվեց մայրաքաղաքում, երբ ես թագուհի մորը հեռացավ այստեղից:

Պապը գլուխը թեքելով՝ մի աչքով նայեց իր նախկին դատակին:

— Ես այդ ամենը գիտեմ, Հայր-մարդպետ,— ասավ նա պատասխան,— Մերուժանը եկավ և դու Դվինի դռները բացիր եղած ատաջ, ընդունեցիր հարգանքով և առաջնորդեցիր Արշակունիների այս պալատը, որ տակավին թշնամու ոտ չէր տեսել...

Հայր-մարդպետը դունատվեց և ակամա հենվեց մի ոտից մյուսի վրա:

— Բայց, որքա, քանի որ այդպես է, թույլ տուր բացատրել և դու կտեսնես որ ինձ դրպատրել են իմ թշնամիները...

— Կարիք չկա, Հայր-մարդպետ: Ես չեմ ուզում լսել և ոչ մի բացատրություն: Կուզեի միայն, որ դու, այդ ամենից հետո՝ հեռանաս Արշակունիների պալատից: Եվ որպես իմ նախկին դայակ՝ ես ուրիշ կերպ չեմ կարող վարվել քեզ հետ. չեմ կարող լինել ավելի խիստ... Հեռացիր, Հայր-մարդպետ, ուր կուզես: Այսքանը:

— Բայց, որքա, եթե դուրս եմ ծանր մեղք՝ պատժիր ինձ:

— Ես չեմ ուզում պղտորել այսօրվա մեր ուրախությունը: Հեռացիր, Հայր-մարդպետ, քանի... շուտ է...

Հայր-մարդպետն ուզեց ինչ-որ բան ասել նորից, բայց թագավորն այդ նկատելով՝ հարեց.

— Ես վերջացրի...

Ու, տեղից վեր կենալով, ուղղվեց դեպի պալատ:

Հայր-մարդպետը մնաց մենակ:

«Ամեն ինչ գիտի» մտածեց նա. «ամեն ինչ հայտնի են... Բայց նա չի՛ կարող ինձ սպանել. չի՛ համարձակվի: Հայր-մարդպետին սպանելը դյուրին գործ չէ»—ասավ նա մտքում և նույնպես գնաց դեպի պալատի իր հարկաբաժինը, զարմանալով, որ այնքան երկար սպասումից հետո՝ այդպես կարճ վերջացավ իր զրույցը թագավորի հետ:

Երբ մյուս օրը պալատում տարածվեց Հայր-մարդպետին հեռացնելու լուրը՝ պալատականները հետաքրքրությունից իրար

անցան և ուզեցին իմանալ, թե ի՛նչ խոսակցություն է արդյոք նախորդել դրան, ի՛նչ է ասել Պապը, ի՛նչ է պատասխանել Հայր-մարդպետը:

Ու մինչ բոլորը ենթադրություններն ու տարակուսանքի մեջ էին՝ դրանիկ գնդի սեփ դյուրաբոլորք Բաթ Սահառունին չհամբերեց համբերել և ուղիղ գնաց Թագավորի մոտ ու դեռ չհարցուփորձ ասավ հետևյալը.

— Քո հայրը, Պապ, այդպես չէր վարվի դավաճանի հետ: Եթե չսպաներ՝ չէր էլ թողնի անպատիժ:

Պապը հասկացավ խոսքն ո՛ւմ մասին է և ասավ.

— Ես չեմ ուզում, Բաթ, ձեռներս ներկել իմ դայակի արյունով և այն էլ իմ թագավորության առաջին օրերին:

— Արյո՞ւն: Բայց չէ՞ որ, արքա, ամեն մի սեփուհյուն արյունով է կանգնում և ամուր:

— Ինչո՞ւ: Մեծ չի կարող լինել և առանց արյուն:

— Ո՛չ, արքա: Հիշիր պատմությունը և կտեսնես, որ այդպես է ժամանակագրած. և այդ Հայր-մարդպետը նույնքան վտանգավոր մարդ է, որքան Մերուժանը: Պետք է պատժել նրան իր հանցանքների համար:

— Թագավորներն իրենց խոսքը հետ չեն վերցնում, Բաթ: Թևկուզ և Հայր-մարդպետը դառնա կրակ, ի՞նչ կարող է անել մեզ...

— Շա՛տ բան:

— Օրինա՞կ:

— Նա ազդեցիկ նախարար է: Կերթա իր կալվածները և դժգոհ նախարարներին կլարի քո դեմ, քո իշխանության դեմ, քո գահի դեմ...

— Նա այդ չի կարող անել, Բաթ,— նկատեց Պապը հանդգնած:— Դու միշտ կպատվածամիտ ես և ամեն բանում տեսնում ես մեկին վատը:

— Տա աստված, որ սխալվեմ,— ասավ Բաթը:

Հետևյալ օրը, լույսը դեռ չբացված, Հայր-մարդպետը իր ծառաների հետ մեկնեցավ, մի մեծ ապահովամբ կազմած, դուրս եկավ Դվինից:

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Զիրավի ճակատագրական հաղիվ մի ամիս անց եկավ առաջին ձյունը, որ ծածկեց ոչ միայն սարերը, այլև դաշտերը, ցածուտները, ամեն ինչ դարձնելով միատեսակ ճերմակ, այնպես որ մի դիշերվա մեջ քաղաքները, դյուղերը, այգիներն ու ճանապարհները կարծես կորան այդ համատարած սպիտակության մեջ: Իսկ ձյուներից մի քանի օր հետո բարձրացան առնաչունչ քամիները...

Ու սկսվեց հայկական լեռնաշխարհի իսկական ձմեռը՝ ըրտաքերով ու ձյունամրրիկներով, որ վիժելով ամենատարբեր ուղղությամբ՝ լեռնակատարների և այլ բարձունքների ձյուները սրբելով ու հոսան անելով բերում-լեցնում էին ձորերը, կիրճերն ու խանդակները, ստեղծելով այնպիսի վտիտուկ խորություններ, որ ընկնողը հավիտյան կարող էր կորչել մեջը: Բուքերին ուղեկցում կամ հաջորդում էին դաժան առնամանիքները, որ ավելի ոստկանում էին պարզկա գիշերները, երբ եղյամը ծաղկում էր ծառերը և բրդե թելի անհամար կտորների նման խաղում օդի մեջ. առավոտները չենները՝ աների մոտ տեսնում էին սառած-ընկած ագռավներ, ճնճղուկներ ու կաչաղակներ— Հայաստանի ձմեռային միակ թռչունները, որ երեխաները վերցնում-խաղացնում էին տաք գոմերում կամ օթանների ուրախ-օջախների մոտ: Իսկ առուները ու գետերը այնպիսի սառույց կապեցին, որ անասուններին չինականները սոխպված ջրում էին տանեք:

Սակայն, չնայած ձմրան այդ ամուսկությանն, Մուշեղ ոպատրաստեը պատժիչ զորագունդ վերցրած՝ անցնում էր գավառից-գավառ և պատուհասելով՝ հնազանդեցնում այն նախարարներին ու բեկերին, որ ապստամբել էին Աբշահի կենտրոնական իշխանության դեմ, հաճակրելով Մերուժանին, կամ չէին ցանկա-

ցել մասնակցել երկրի պաշտպանության գործին, արձագանք չտալով էր և Պապի հրավերին: Այսպես առաջին հերթին, Զիբալվից հետո շարունակելով իր արշավանքը դեպի պարսից սահման, նա գլխատեց Ատրպատականի հայ բդեշխին, Նուշիրական աշխարհի կառավարչին, առանց կռվի հնազանդեցրեց Կորդիքն ու Մարաց երկիրը, հարկեր դնելով՝ պատանդներ վերցրեց տեղի հայ նախարարներից, որ այլևս չհամարձակվեն անջատվել իրեն երկրից վտանգի ժամանակ և «խորհել միայն իրենց գլուխը փրկելու մասին», ինչպես գրում էր նա Պապին ուղղած իր նամակում: Կատարելով այդ պատժիչ արշավանքները՝ Մուշեղը ձմրան այդ սառնամանիքներին երբեմն ուրհանդակներ էր ուղարկում Պապին՝ հայտնելու, թե ինչ է արել և ինչ է մտադիր անել այնուհետև: Մի նամակում նա հայտնում էր, թե որոշել է «Հայոց աշխարհից դուրս չթողնել և ոչ մի կորի հող, և ապատել բոլորին, ովքեր ձերի են եղել»... Հայաստանի արևելյան սահմանները կարգի դնելուց հետո՝ նա մտադիր էր անցնել Սյունիք, ապա Աղվանից երկիրը, որ գրավել էր հայկական Ուտի, Շակաշենի, Գարդմանաձոր և Կողբ գավառները, և Կուր գետը նորից դարձնել հայոց սահմանը: Նամակից երևում էր, որ նա առանձնապես վրդովված ու զայրացած էր Գուգարաց բդեշխի դեմ, որ Արտաշերսի ինքնապաշտպանության ծանր օրերին՝ երեն հայտարարել էր անկախ, իսկ Պապի և իր հրավերին՝ մասնակցել երկրի պաշտպանության գործին՝ պատասխանել էր մերժումով: Եվ այս առթիվ, Պապին գրած նամակում, Մուշեղը հայտնում էր, թե ինքը չի հանգստանա՝ մինչև որ «չգլխատի Գուգարաց վատասրտի բդեշխին և որձակոտոր չանի նրա ընտանիքը»: Նույնպիսի պատիժ նա խոստանում էր Աղնձիքի բդեշխին և Մոկաց տերոջը: Իսկ Փայտակարան քաղաքի համար ծրագրել էր սրճպիսի մի պատիժ, որ նա հավիտյան մոռանա; թե ինչ է տոհմածանուցությունը և հայրենիքն անօգնական թողնելը:

Նամակներից մեկում՝ Մուշեղն, ի միջի այլոց, իր դժգոհությունն էր հայտնում, թե Պապն ի զուր է ազատ արձակել Հայր-մարզպետին, որ սիրտ դնա և մտքեր պղտորի իր կալվածներում և հարևաններին շրջանում: Եվ հատկացնում էր, որ այսուհետև այդպիսի բաներ չանի առանց իր խորհրդի:

Մինչ Մուշեղ սպարապետն զբաղված էր այս գործերով, Պապը, հակառակ իր խոստումին, թե պետք է զբաղվի ավերված երկրի բարեկարգությամբ, սկսեց ապրել բոլորովին այլ կյանքով—ուրախ և զբոսանքներով. ձի նստած իր դպիր Երեմիայի և Խաչ Սահառունու ուղեկցությամբ մերթ գնում էր քիչ-նապահ կամ զրանիկ զորքի մոտ, որի պետի օգնական երիտասարդ Գնել Աղձևացին նրան դիմավորում էր միշտ դեռատի աղջկա պես շիկնելով և անճնաղոհության պատրաստ. մերթ այգիում էր Արտաշատի հին զինագործարանը, որը իր կարգադրությամբ զինք էր պատրաստում այն հաշվով, որ «Հայոց աշխարհի մեն մի տղամարդ ունենա մի զենք», բայց մեծ մասամբ, առավելապես գնում էր ձմեռային որսի՝ երբեմն ծածուկ ու ծպտյալ, երբեմն բացահայտ,— աղվես, քարայծ, փորսող կամ դալլեր որսալու, որոնցով լի էր այդ ժամանակ Ոսպրովի անտառը, մանավանդ Գառնիի լեռնուտներում: Գնում էին հատուկ պրագտված ձիերով, աղեղներ ու սրեր առած, թասիններով, բազուկներով: Նրանց հետ լինում էին խուճապարարներ, որ տեղահան էին անում գազաններին, կենդանիներին ու թռչուններին. կային և հմուտ թակարդ գնողներ: Բայց Պապը որսի գնում էր երբեմն առանց այս ամենի, անգամ առանց շների... Գնում էին արագաթև փառակոն չեմակներով կամ մեծատոհմած դաշտերը: Բանը նրան ընկերանում էր սիրով, իսկ Երեմիան ակամա, թեև այդ ցույց չէր տալիս հարկավ. որքան էլ նա զբաղված էր Քինանդիայից բերած իր մագաղաթյա մատյաններով, մասնավորապես սիրած Տակիտոսով ու Պլուտարքոսով և ինքնուրույն մի շարադրանքով—պատմությամբ, այստահենալով, երբ Պապը հրավիրում էր նրան որսի կամ զբոսի, նա թեև դժգոհում էր նեղսում, բայց չէր կարողանում հրաժարվել կամ մերժել արքայի հրավերը: Մյուս կողմից՝ իր Երեմիայի համար էլ հետաքրքրական էին այդ հրջագայությունները. տեսնում էր վայրեր, որ վաղուց չէր տեսել, կամ վայրեր, որ անծանոթ էին իրեն և հանկարծ իր առջև բանում էին զարմանալի գեղեցկություններ... Որքան էլ Երեմիան սիրում էր իր մատյանները և մատենագրությունը, բայց ինքն էլ երիտասարդ, ուներ կյանքն ապրելու և վայելելու մի թաքուն տենչ: Աահնք որսի և զբոսի ժամա-

նակ էլ նա մոքով համաձայն իր մատյաններին հետ էր. մերթ մտովի պատկերացնում էր իր գրելիքը պատրաստ, մերթ հուշ-կամ հռոմայեցի հերոսով ոգևորվում էր այնպես, որ ճանապարհին հաճախ ձին Պապի ձիու կողքից քշելով՝ պատմում էր մեկի կամ մյուսի կյանքն ու գործը, և Պապը լսում է սիրով, երբեմն հետաքրքրությամբ:

Պինդ ու տաք հանդիպած՝ նրանք գնում էին ոչ միայն խոտովի անտառը, այլև շատ հեռուները, այնպես որ գիշերը երբեմն չէին կարողանում վերադառնալ Դվին և ստիպված գիշերում էին այս կամ այն չենում՝ գյուղապետի տանը կամ որևէ վանքում՝ վանահորը հյուր, բայց միշտ ծպատյալ, իբրև ճանապարհը մոլորած ուղևոր կամ որսորդ սեպուհներ... Պապին կարծես հաճույք էր պատճառում, որ իրեն չեն ճանաչում, ու խոսում էր շինականների հետ այս կամ այն նյութի շուրջը, երբեմն խոսք էր բանում նոր թագավորի վրա, խոհանալու, թե ոսմիկ ժողովուրդն ի՛նչ կարծիքներ ունի իր մասին: Եվ կարծիքները թեև լինում էին շատ զգույշ, բայց և շատ հակասական: Մի տեղ, օրինակ, վանքապատկան շինականներից դժգոհություն լսելով վանքի դեմ, նա հարցրեց, թե ինչո՞ւ չեն դիմում նոր թագավորին, որ իրենց օգնի:

— Ի՛, տեր սեպուհ,— պատասխանեց ծեր մի շինական,— թագավորն ի՞նչ կարա անի. նա դեռ պատանի է անկորով:

— Իսկ դուք չդիմած, ի՞նչ գիտեք՝ չի կարող,— շարունակեց Պապը:— Գնացե՛ք—պատմեք, դուցե օգնի:

— Միևնույն է, տեր սեպուհ,— պլուխն օրորեց նույն ծերունին,—ոչ մի թագավոր մեզ դեռ չի օգնած: Սա նմանապես...

Պապը մոայլեց և լռեց:

Մի ուրիշ անգամ, հեռու գնացած լինելով և ճանաքի հանդիպելով՝ նրանք ստիպված եղան մոնել մի շինականի տուն՝ գիշերելու: Եվ դա սկզբում գլուխճալի թվաց Պապին, որ թագավորը պիտի մնա շինականի տանը, ուր ոչ-ոք չի ճանաչի իրեն և կխոսի երկար: Բայց որովհետև պաշարակիր գինվորներին կորցրել էին և քաղցած էին՝ ուստի նախ հաց խնդրեցին: Սակայն տանտերն անմիջապես չհատուցեցին նրանց խնդիրը. նրանք նախ քաշվեցին տան կիսախավար մի անկյուն, երկար փսփսացին, հետո

մարդը դուրս գնաց և փոքր ինչ քերեց կորեկի մի հաց և դրեց նրանց առաջ՝ ձեթի ճրագի մոտ։

— Ինչո՞ւ ուշացար, նո՛ր էլը թխում,— ծլծալեց Բաթը։

— Ոչ, տեր սեպուհ, հարևանների մոտ ձեզ վայել հաց չկար,— պատասխանեց չինականը։ Իսկ տան երեխաները այդ ժամանակ շրջան բոլորած՝ ագահ աչքերով նայում էին հացին։ Պապը մի կտոր տվեց նրանց. երեխաները այդ կտորը խլեցին իրար ձեռքից։ Այդ տեսնելով՝ Պապը տվեց նրանց ամբողջ հացը և դուրս եկավ խրճիթից՝ առանց մի խոսք ասելու։ Այս դեպքը Պապի ուրախությունը հանկարծ փոխարկեց ծանր մի տխրության և այնուհետև երկար ժամանակ նա լուռ էր։

Այսպես՝ եթե ձմեռները որսի և ձրոսի դնում էր տաս օրը մեկ և ոչ հետու տարածություններ, բայց գաղտնը բացվելու հետ, երբ ամեն ինչ կանաչեց ու ծաղկեց և օրերը տաքացան հասնելի՝ Պապը հաճախեցրեց իր շրջապտությունները, դնելով ավելի հետուները, մինչև Մասսի և Արագածի ստորոտները, ուր հովիվներն արածում էին հոտերը. մինչև Վարաժնունիք, ուր թոռլ անտառներում վայրի կենդանիները շրջում էին իրենց նոր ածին ձագերով. մինչև Գեղամա ծովը, ուր ձկնորսներն ուռկաններով ձուկ էին որսում ջուրը մտած։ Եվ այն ամենը, ինչ դյուները ծածկելով թաքցնում էին, դարսունը մերկացրել-դարձրել էր ավելի տեսանելի. բնության գեղեցկության հետ հիմա ամեն կողմ երևում էին աղքատ դյուղերը, դյուղերը, ուր մարդիկ, կանայք, երեխաներ դաշտերն ելած աշխատում էին հողի վրա; կամ նորածիլ բույսեր հավաքում ուտելու, չատերը կիսամերկ, բոկոտն, ցնցոտիների մեջ, նիհար, կմախքացած։

Սովորաբար մարդ որսից, ձրոսից՝ վերադառնում է ուրախ տրամադրության, բայց Պապը ուր էլ գնում էր՝ վերադառնում էր թախծոտ ու մտահոգ, երբեմն մռայլ. և պատահում էր մեկ-երկու օր մարդ չէր ընդունում։

Պալատականները տեսնելով Պապի այդ օտարոտի տրամադրությունները՝ զարմանում էին նրա մեջ կատարված փոփոխության վրա. և այն ամենը, ինչ ծրագրում ու ցանկանում էր անել Զիրավից առաջ և հետո—այդ ամենը հիմա մոռացել էր կարծես և զարձել տարօրինակ ինքնամփոփ։

Նվ դա այնքան տարօրինակ էր թվում, որ պալատի կառավարիչ Զինոն Գնունին երբեմն ասում էր իր բարեկամ արքունի սխոռապետ Օտա Ապահունի նախարարին.

— Զարմանալի է, տեր Ապահունի, պատի ընթացքը: Ընկերացել է այդ զրոսասեր պատանիներին ու ոչ նստում է պալատում, ոչ զբաղվում է խնդիրներով: Պետք է, կարծում եմ, սթափեցնել նրան: Զգիտեմ՝ խոսե՞նք հետը, թե դրենք՝ սպարապետը դա: Միայն նա կարող է ազատ և համարձակ ասել այն, ինչ պետք է:

— Սպարապետը՛,— երկարեց Օտա Ապահունի նախարարը, մի զեր-կլոր մարդ, որի դլուխն ուսերին կպած էր կարծես առանց վզի և որը խոսելիս միշտ հևում էր բերանը բաց:— Սպարապետը, հարկավ, տեր Գնունի... Սպարապետը կարող է, բայց լավադույն է՝ սպասենք սակավ մի. կարող ենք խանգարել սպարապետին...

— Սպասենք,— հառաչում էր պալատի կառավարիչ Զինոն Գնունին՝ երկար մտրուսը չփելով:

Իսկ հազարապետ Կենան Ամատունին, որ նույնպես տեսնում էր այդ ամենը, սակայն երբեք պահում էր աչնպես, ասես ոչինչ չէր նկատում, զբաղված երկրի ներքին դործերով:

Բայց Թագավորի տարօրինակ վարքով անհանդիստ էր այժմ Վաղարշապատում նստող Ներսեսը, որ որքան էլ ծեր ու տկար, դեռ աշնանից, Ջիրավի հաղթությունից անմիջապես հետո, սկսել էր նորոդել տալ պարսիկներից վնասված եկեղեցիներն ու մենաստանները, բանալ խափանված կուսանոցներն ու անկելանոցները, հավաքել ցրված միաբանությունները և ուժեղացնել: Այս աշխատանքը դեկավարում էր դլխավորապես Դվինի եպիսկոպոս, կաթողիկոսի տեղակալ Մաղը, որ իր հերմակ սմանակի վրա նստած, մի քանի վարդապետների ուղեկցությամբ, անցնելով դավառից-դավառ, հավաքում էր չինականներին՝ նորոդմանն այդ աշխատանքները դլուխ բերելու. իսկ վերաբացված միաբանություններն ու անկելանոցները կերակրելու համար հատուկ մարդապետներ ու սարկավագներ էին չրջում բեռնակիր չորիներով՝ անցած տարվա տապանորդն ու պտղին հավաքելու...

Ներսեսը չգիտեր, որ երիտասարդ, կամ ինչպես ինքն էր

տում՝ «մանուկ թագավորը» անձնատուր է եղել որսի և զբոսի —որոշեց անձամբ—առանձին խոսել հետը և ցույց տալ նրան ճշմարիտ ուղին և թագավորին վայել վարքը: Ու մի անգամ դուրնանը, մի եպիսկոպոսի միջոցով Պապին կանչեց իր մոտ՝ Վաղարշապատ: Բայց Պապը, որսի մեկնած լինելով, չգնաց: Այդ ժամանակ Ներսեսը զայրացած լինքը եկավ Դվին և, Պապին պալատում դտնելով, սկսեց խրատել նրան հայրաբար, թե ինչպես պետք է պահել իրեն պալատում և դուրսը, ինչպես պետք է վարվել ազնվական մարդկանց հետ՝ նրանց հպատակությունն ու հարգանքը վայելելու, եկեղեցականների հետ՝ նրանց աղոթքին ու օրհնությանն արժանանալու, և ռամիկների հետ, որ ապերասան չդառնան, ճիշտ այնպես, ինչպես խոսել-պրոցեդուրան էլ Բիզանդիայից վերադառնալիս՝ Ճանապարհին: Խոսում էր նուրբ մեղմ, խրատական եղանակով, ոսկրոտ ձեռը մերթ Պապի ուսին կամ ծնկանը խփելով, իսկ վերջում խոսքը բացեց այն «խրախճանքի» մասին, որ Պապը տվել էր Դվինի բնակչության և պատիվ Ձերավի հաղթության: Դրա մեջ կաթողիկոսը տեսնում էր հեթանոսական «եղանակ, որ հարիր չէ քրիստոնեության»:

— Այդպիսի դեպքերում, զավակս, չէր խանգարի, որ խորհըրդակցես քո հայրապետի հետ, և - նա, հարկավ, չի զլանա մատնանշել քեզ ճշմարիտ ուղին և կարյաց չափ օգնել քեզ երկիրը կառավարելու ծանր դործում: Բնավ մի ամաչի՝ դիմել խորհրդի և օգնության, զի պետությունն կառավարելը պարզ չ դժվարին և փորձ կարուտ: Այդ, դու իրրև անփորձ պատանի...

Լսում էր Պապը և լռում. բայց ներսեստ նա զարմանում էր և մինչև իսկ զայրանում, որ կաթողիկոսն իր հետ խոսում է իրրև անփորձ տղայի հետ, «հաղթության խրախճանքը» համարում է անթույլատրելի: Եղավ մի վայրկյան, որ նա մի չարժուման արավ խոսելու և ուղեց պատասխանել խիստ, բայց զսպեց իրեն, հարգելով Ներսեսի ծերությունը. մյուս կողմից չկամեցավ իր թագավորության առաջին իսկ օրերին ընդհարվել նրա հետ մի այդպիսի դիտողության համար և մի այդպիսի վոքր առիթով:

Սակայն երբ Ներսեսն սկսեց հանդիմանել հայրաբար թե նա ապրում է անհոդ կյանքով, Պապը հուզվեց, կարմրեց նկատելի և՝

— Կարծո՞ւմ ես, հայրապետ,— ասում է Անհոգը...

— Ակներև է, զավակս, երբ...

— Կուզեի, հայրապետ, լինել իրոք անհոգ, բայց...

Եվ Պապը մոայլվեց և լռեց, չկամենալով կարծես չարունակել:

Երբ կաթողիկոսը գնաց իր եպիսկոպոսներով շրջապատված պալատի բոլոր ավազանիներն ու նախարարները այն տպավորությունն ստացան, թե Պապը հիմա կսթափվի և կթողնի իր որդու ու ղբոսը և կզբաղվի պետության գործերով:

Բայց Պապը կարծես ոչինչ համարեց քահանայապետի հորդորները և չարունակեց իր շրջագայությունները մեջ ծպտյալ, մերթ բացահայտ, սակայն մշտ մոայլ ու ինքնամփսի, որ զարմացնում էր շատերին, մանավանդ մեծ մատհոդությունն էր պատճառում դեռատի Զարմանդուխտ թագուհուն, որ առաջին օրերը առանձին նշանակություն չէր տալիս ամուսնու դրոսանքներին, բայց երբ դրանք զարձան հաճախակի, և Պապի սկսեց բացակայել նաև գիշերները, երբեմն մեկ-երկու օրով, նա, մենակ ձանձրանալով տակավին ոչ մտերիմ պարտատիրական իշխանուհիներին ու նաժիշտներին շրջանում, սկսեց մոածել, թե ինչն է արդյոք պատճառը, որ Պապը շարունակ հեռանում է պալատից: Ուրիշների նման նա չէր կարծում, թե Բարբն ու Երեմիան կարող էին ազդել նրա վրա: որովհետև ճանաչում էր Պապի ուսման այդ ընկերներին. ուրեմն ի՞նչն էր պատճառը— ոգին և դրոսանքի սե՞րը, թե... Թագուհին մոածում էր անդամ, թե Պապը գուցե դադարել է իրեն սիրելուց, գուցե ուրիշ անող դտել է մեկին, մի իշխանի կամ նախարարի դուստր կամ կվե իր բացակայությամբ և հիմա այդպես որսի պատրվակով գնում է հաճախ այցելության և իրեն թողնում մենակ: Քանի անդամ նա որոշեց խոսել Պապի հետ, բայց մի կողմից չէր համաձակվում, հաճախ չէր սեռնում Պապին հուզել իր հարցումներով, մանավանդ որ Պապը մշտ մոտահոգ էր լինում կամ մոայլ, ուստի ոպասում էր, որ այդ ամենը պարզվի կողմնակի ճանապարհով: Բայց մի օր, երբ Պապը համեմատաբար հանդիստ տրամադրության մեջ էր՝ նա հետաքրքրվեց.

— Պապ, ինչո՞ւ այդպես մոտահոգ ես միշտ. և ինչո՞ւ ես

այդքան հաճախ հեռանում պալատից և ինձ թողնում մենակ։ Չի՞ կարելի արդյոք, որ երբեմն ինձ էլ տանես քեզ հետ։

— Օչ, Զարմանդուխտ սիրելի. չի կարելի,— պատասխանեց Պապը տխուր։

— Ինչո՞ւ,— զարմացավ Թագուհին, ուշադիր նայելով աչքերին։

— Որովհետև այն վայրերը, ուր ես եմ գնում՝ հարմար չեն քեզ։

— Իսկ ի՞նչ վայրեր են դրանք, Պապ, երբ կարելի է քեզ նայել,— հարցրեց Թագուհին անվստահ, բայց կատակածով։

— Պաղտնիք չէ, սիրելի Զարմանդուխտ. որսատեղեր, զինադրծարան...

— Զինադրծարա՞ն... բայց ինչո՞ւ ասես-ասես՝ մի՞թե նորից պատերազմ է լինելու, Պապ։

— Կարող է պատահել,— խուսափող պատասխան տվեց Պապը։

— կարո՞ղ է... Օչ, Պապ, եթե այդպես լինելը, եթե նորից պատերազմի վտանգ լինելը՝ դու չարունակ որսի չէիր գնա և Դքսուհիներ երկրի պաշտպանության գործով... Օչ, Պապ, ինձ թվում է՝ դու մի վիշտ, ծանր մի հոգս ունես և ի զուր թաքցնում ես ինձնից և...

— Թողնենք այդ, Զարմանդուխտ,— ընդհատեց Պապը Թագուհուն,— դու հանգիստ եղիր. հույս ունեմ՝ այսուհետ քեզ բաժանվել և քեզ մենակ չթողնել...

Եվ Պապը Թագուհու ուսերը գրկեց մի այնպիսի ջերմությամբ ու զորովով, որ նա իրեն սիրված զգաց, այնքան սիրված, որ չուզեց այլևս հետաքննել՝ բան խմանալու. և Պապը, որ, իրոք, ծանր մտքերով էր զբաղված, չուզեց Թագուհուն հայտնել իր այդ խոհերը, այն ամենը, ինչ հուզում էին նրան և հանգիստ չէին տալիս Զիրամից հետո... Դեռ օտարության մեջ՝ Բիզանդիայում, ուսման տարիներին իր ուսման և օտարության ընկերներ Բաթ Սահատունու և Երեմիա Ամատունու հետ միասին նա կարոտով էր հիշում հայրենիքը, թե երբ սիրուհի վերադառնա նրան օգտակար լինելու, բիզանդական լավ սովորությունները հայրենիք տանելու... Թեև մտածում ու ծրագրում

էին այսպես, բայց նրանց թվում էր, թե չկա երկնից հայրենիքից ավելի լավ, գեղեցիկ ու բարեկարգ երկիր... ու նրանց էին նրա գով սարերը, ճոխ այգիները, հայրենի երգեր, ուրախություններ, տոներ... Բայց երբ վերադարձան—տեսան միայն թշվառություն, քնավեր ու կիսաքաղց մի բազմություն, որ տակ չէր գտնում իր երկրում դլուխ դնելու. և ոչ միայն ուրախություն ու երդ չկար, այլ հուսահատություն ու սուգ էր ամենուեղ... իսկ քաղաքները կիսավեր, դյուղերի մեծ մասը քանդված, ամայի... Եվ ծանր, ծանր մի տխրություն իջավ նրանց վրա.— ինչ էին ապառում և ինչ տեսան... Եվ ի տես այդ բոլորի՝ չքացավ նրանց մտքից այն ամենը, ինչ ծրագրել էին օտարության մեջ, այն ամենը, ինչ սովորել էին և ուսանել... Ու այդ բոլորին փոխարինելու եկավ մի նոր, ամեն ինչ մոռացնող, առավել ուժգին ու բուռն մի զգացմունք— վրեժի զգացմունքը... Պետք էր վրեժխնդիրը լինել այն ամենի համար, ինչ գործել էին պարսիկները հայոց աշխարհում— ավեր, կոտորած տարածելով և ժողովրդին գերեվարելով: Այս ամենից զատ՝ պանդխտության երեք ընկերներն էլ պատերազմի մի տարվա մեջ կորցրել էին իրենց ծնողներին ու շատ հարազատների... Եվ նրանց վրա տխրության ու վրեժի հետ, ծանրացավ մեծագույն մի հոգս— վանել Թշնամուն հայրենի երկրի սահմաններից և տեղծել ժողովրդի համար հանդիստ ու ապահով մի կյանք:

Այդ խնդիրներից առաջինը՝ կատարվեց. Թշնամին վտարվեց հայոց աշխարհի սահմաններից, իշխան Կամսարականն ու Սմբատ սպասալարը ապահովում էին հայ երկրի սահմանները, իսկ Մուշեղ սպարապետը պատժում էր պարսպազանց բռնչխնդրին և տղատոմբ, անհնազանդ նախարարներին...

Սակայն հիմա ինչ էր ուզում Պապը. Թագուհին գգում էր, որ նրան զբաղեցնում են կարծես այլ խնդիրներ, թեև անձնական մի վիշտ կամ վշտեր, որոնց մասին, սակայն, չէր ուզում կարծես խոսել: Բայց Թագուհին կարծում էր, որ իր այս ղրույցից հետո Պապը կթափվի և այլևս չի բացակայի, մանավանդ որ ինքն ասավ, թե հույս ունի «այսուհետև մենակ չթողնել նրան»...

Եվ Զարմանդուխտ թագուհին ուրախ էր, որ դռնե արդ կլինի—չարունակ չի բացակայի պալատից:

Բայց երկու օր անց՝ Պապը նորից գնաց որսի, դարձյալ երեմիայի ու Բաթի հետ, և Զարմանդուխտ թագուհին հիմա սկսվի, քան երբևէ զղաց որ Պապն ունի ինչ որ մի վիշտ, որ հանգիստ չի տալիս նրան և նա ինքնամոռացությունն է փնտրում պալատից դուրս, այդ չրջագայություններին մեջ:

Եվ ահա մի օր էլ, երբ թագուհին պատրաստվում էր սրտին լուրջ խոսել Պապի հետ, և դրա համար մտավ դահլիճ, որ ժամ Պապը կարգադրեց անհետ պատին.

— կանչի՛ր հազարապետին:

Փոքր անց ներս մտավ անպաճև մորուսով վայելչակազմ կենան Սմատունին և իր հազարապետական արժանապատվությանը լրջությամբ գլուխ տվեց թագավորին ու թագուհուն:

— Հրամայիր, արքա,—ասավ նա:

— Տեր հազարապետ, այսօր իսկ սուրհանդակներ ուղարկիր բոլոր նահանգապետներին Դվին հրավիրելու: Եվ թող առաջիկա ամսի կեսին լինեն այստեղ:

Հազարապետը հետաքրքրված, բայց այդ հետաքրքրությունը զսպելու ճիգով նայեց թագավորին.

— Իսկ ի՞նչպես անվանել կանչելու պատճառը, արքա,— հարցրեց նա և իր այդ հարցումը արդարացնելու համար կարծես բացատրեց.— Որպեսզի յուրաքանչյուրը կհետաքրքրվի, անշուշտ, և կուզի իմանալ սուրհանդակից, թե ինչո՛ւ համար են հրավիրվում:

— Կիմանան, երբ գան, հազարապետ:

Որքան էլ հազարապետին հետաքրքիր էր իմանալ նահանգապետերին հրավիրելու պատճառը, սակայն թագավորի պատասխանից մանավանդ այն ասելու եղանակից զգաց, որ Պապը, հավանորեն, վաղաժամ է համարում հայտնել այդ կամ թերևս ուզում է գաղտնիք պահել, ուստի նա ևս եղրակացրեց, որ Պապը փոփոխում է և դառնում բոլոր իշխանավորներին ևս ինքնամփոփ ու ծածկամիտ. միաժամանակ նա մտածեց, որ Պապը թերևս չի վստահում ասել առաջին, գուցե և այնպիսի խնդիր է, որ հպատակ է իմանա ոչ ոք:

Եվ հազարապետը նորից գլուխ տվեց:

— Բարի,— ասավ նա, փոքր ինչ մոխրված ձայնով, կարծես թագավորի անվստահությունից վիրավորված,— ես այսօր և՛ք, այլև, սուրհանդակներ կուղարկեմ նախարարական բոլոր ամրոցներն ու դաստակերտները, որ գան իշխանամոտդուքի:

— Այդպես, հազարապետ,— ասավ Պապը մի տեսակ հանդգնացած ու զոհ:— Այժմ կարող ես դնալ:

Հազարապետը գլուխ խոնեցրեց և հեռացավ վիրավորվածի քայլերով:

Երբ պալատականներն իմացան իշխանամոտդուքի մասին՝ նրանք նույնպես զարմացան և սկսեցին ենթադրություններ, թե դա ինչի՞ համար է արդյոք:

***

Զանցավ երկու թե երեք շաբաթ, պապունը իր հայրական սիրտումի մեջ էր ապրեն, երբ իրար եռանից սկսեցին նամակներ դալ Դվին՝ ամենքը թանկ հագնված՝ արծաթապնակ, ընտիր արծաթասար նժույգների վրա, շքեղապատված ոսկեձ ֆեսավոր թիկնապահներով, ոսկեձ սեպուհներով, որ մեծ մասամբ իրենց որդիներն էին կամ առհամակիցները: Գալիս էին նրանք իշխաններին վայել արժանապատվությամբ, ձիերի հանդիսավոր քայլքով և քանի մի վայրկյան սմբակներով աղմկելով հրապարակի սալահատակը՝ արագ անցնում էին դեպի միջնաբերդ, և դրանից ոսկանց եռանից երբեմն վազում էր Մեղաջոր Մաղքոսը՝ մազոտունջ պոչը ձեռին. ու երբ նրանց հասցնում էր միջնաբերդի պարտապետուը՝ նորից վերադառնում էր հրապարակ և հայտարարում.

— Եկավ Աբշարունյաց տերը և դնաց միջնաբերդ... Բոլորը դնում են պատատում հացելու, խոհ ինձ արգելում են...

Նախարարների գալը հարուցանում էր ոչ միայն Մեղաջոր Մաղքոսի, այլև քաղաքացիների, մանավանդ հրապարակի չուրջն ապրող արհեստավորների հետաքրքրությունն ու զարմանքը:

— Ի՞նչ կա այսպես. ինչո՞ւ են հավաքվում նախարարները,— հարցնում էին նրանք իրար: Եվ որովհետև ոչ-ոք համարձակ

քան չէր ասում՝ գնում էին հայտնի ճիտասարք պատրաստող Պողոս վարպետի մոտ, որ ամեն բանի լրագիտ լինելու համբավ ուներ։— Իսկ դու խմանաս, Պողոս վարպետ, ինչո՞ւ են հափաքվում նախարարները։ Պատերազմ է լինելու, թե ղինախաղ...

— Ըմբռնել չեմ կարող, հարևաններս,— ասում էր Պողոս վարպետը հեղինակավոր ձայնով, նայելով չբախմբռվ եկող կամ գնալ մլչնաբերդը հեռացող նախարարներին։— Չեմ կարող ասել՝ պատերազմ թե ղինախաղ։ Համենայն դեպս՝ քանի որ քիչ առաջ անցավ Դիմաքսենից նահապետը—նշանակում է կա, անշուշտ, կարևոր մի-բան,— ավելացնում էր նա խորհրդավոր։— Նույնը պիտի ասեմ Զյունական նախարարների մասին։ Նրանք էլ նկան հայր ու որդի միասին։ Ծանր մի բան կա, անշուշտ...

Եվ հետաքրքրությունը գնալով մեծանում էր նախ այդ անտրտունջության պատճառով, երկրորդ, որ նախարարները դեռ չտեսնակում էին դալ և անխոս, մտահոգ անցնել գնալի մլչնաքիրդ։

Այդ երկու-երեք օրվա մեջ արդեն եկել և մլչնաբերդի արքունի մեծ հյուրատունը լցնանել էին Ծոփաց Մար և Նեբրոնի նախարարները, Հաշտենից Դաբ և Գնունի նախարարները, Գողթանի Աստմ իշխանը, Զորոց աշխարհի տեր Գորուբը, Աբեգենից տերը՝ իր երեք որդիների հետ... Եկել էին նրբատեսիլ ու երիտասարդ վահևունիները, սև ու ոսկրուտ Խոռխոռունիները, խայտաբղետ ու կլորադեմ Գնթունիները, Բասենի երիտասարդ իշխան Մանակը, Ծիծռունյաց Շահենը (տոհմի նահապետ Մեհենդակի մոխրանկն, որ գերի էր)։ Եկել էին Տրունիները, Պալունիները, Անգեղ տան մեծը և, վերջապես, Համեռունյաց տան նահապետը՝ իշխան Մանասյանը, մի պատկառելի ծերունի, որի ձյունաճերմակ բեղերը հասնում էին մինչև ականջները, իսկ աչքերը փայլում էին երիտասարդական աչխուժով։ Եկել էին և ուրիշ շատերը, բայց մի կողմից դալիս էին դարձյալ և հյուրատան ասպնջական կամ նրա բնդարձակ սրահում հանդիպելով իրար՝ ողջագուրվում էին իրրև նախածանոթներ և, առաջին հերթին, հետաքրքրվում միմյանց առողջությամբ։

— Հուսամ քաջառողջ ես, տեր Վահևուն, և զերդաստանդ հաճ։

— Շնորհապարտ եմ, տեր Գնթունի. հուսամ՝ նույնպես բարեհաճող վիճակի մեջ ես՝ զավակներով հանդերձ:

Սիրալիր հարցուփորձից ու շնորհակալիքից հետո անմիջապես հետաքրքրվում էին իմանալ, թե ինչո՛ւ են հրավիրված:

— Հայտնի՛ է արդյոք թե ինչո՛ւ է կանչել մեզ թագավորը:

— Ես իրազեկ չեմ, տեր Զյունական, թևրևս Գնթունյաց տերը կամ մի ուրիշը իմանա:

Եվ հետաքրքրված անցնում էին մեկը մյուսին հարցնելու հրավերի նպատակը: Ամենից ավելի հետաքրքիր էին երիտասարդները՝ Բասենի իշխան Մանակը, Զյունական նախարարի որդի Վրենը և Կորդիքի իշխան Գրիգորիսը: Առաջին երկուսը մի քանի տարի դիմելուց հետո՝ մտեցան Ծերունի Աղամ Գնթունուն, որ թիկնեղ ու բարձրագլուխ կանգնել էր մի խմբի մեջ. նրա ելևէջը ոչ միայն իշխում էր բոլորին, այլև աչքի էր ընկնում իր առատ ու ճերմակ մազերով:

Երիտասարդները, նրան մոտենալով, դլուխ իջեցրին:

— Ողջույն չատ, տեր Գնթունի,— ասին նրանք զրեթե միասին:— կարո՞ղ ենք անհանգստացնել քեզ մի հարցումով:

— Խոսեք, զավակներս:

— Թևրևս դիտես, տեր Գնթունի: Ինչո՞ւ է թագավորը հրավիրել նախարարաց այս միաժողովը:

— Ես նույնպես տարակույսների մեջ եմ,— պատասխանեց:

— Հազարապետը կիմանա՞, անշուշտ:

— Հազարապետը՛,— երկարեց Ծերունին:—Ես արդեն հանդիպել եմ նրան: Զգիտե՛:

— Գուցե պալատի կառավարիչ Զենոն Գնունի՞ն:

— Անիրազեկ է նա ևս:

— Իսկ Օտտո Ապահունի՞ն:

— Եթե Զենոնը չգիտե, Օտտոն ևս առավել:

— Ո՞վ դիտե ուրեմն:

— Հավանորեն արքայադուստր Երեմիան կամ Բաթ Սահատունին, թագավորի մերձավորները:

— Սպասենք ուրեմն:

— Այո, պիտի սպասենք,— եզրակացրեց Ծերունի Գնթունին:

Բայց ամենից շատ հրավերի նպատակը պարզելուն հետաքրքիր էր Կորդիլի իշխան Գրիգորիսը՝ քառասուն տարեկան մի խիստ ամրապինդ ու դյուրաշարժ տղամարդ, որի խոշոր նայող աչքերը հովանավորվում էին թանձրամազ հոնքերով: Նա մեկի բանն իմնելով, մեկի հյուրասիրությունը մոռնալով կամ ակամայ էր դնում՝ մի բան լսելու կամ հարցնում էր հանդիպածին մի ժողովի նպատակը: Զգիտես ինչո՛ւ, նրան թվում էր, թե այդ հրավերի նպատակը ավելի շուտ ծերունիները կիմանան, ուստի և ամենից մոտենում էր տարիք նախարարներին: Երբ Աբեղենիկ տերը և Աղամ Գնթունին նրան չհավատացրին՝ նա մոտեցավ Համնունյաց նահապետին:

— Ներ Համնունի, դու գիտես, անշուշտ, ինչո՞ւ ենք հրավիրված:

— Ոչ, տղաս: Դժբախտաբար՝ ոչ:

— Զարմանալի՛ է շատ,— հուզվեց նա:— Ո՞վ կիմանա ուրիշն... և ինչո՞ւ է գաղտնիք պահվում՝ չեմ հասկանում:

— Մի հուզվի, տղաս. կիմանանք շուտով: Աչխարհում և ոչ մի բան գաղտնիք չի մնում: Համբերություն: Համբերության առաջ բացվում են բոլոր գաղտնիքները:

— Սակայն միրավորական է, տեր Համնունի, որ ժամանելուց հետո էլ, երկու օր այստեղ ապրելուց հետո էլ չգիտենք ինչո՛ւ ենք կանչված:

— Ունես ի՞նչ կասկած,— ձեռը Գրիգորիսի ուսին դրավ ծերունի Համնունին՝ կարծես նրան մոերմության հրավիրելու, թաց լրջի հանդատացնելու համար:

— Ոչ, տեր Համնունի,— կասկածներ չունեմ,—ասավ Գրիգորիսը հանգիստ ձայնով,— սակայն հետաքրքիր եմ շատ:

Մի այլ խմբում, որ հավաքվել էր հյուրատան առաջ, ծառերի մոտ, մենկն ասում էր.

— Ինձ թվում է, ախպերք, թագավորը մեզ կանչել է կամ ձիարշավի կամ որսի:

— Այդ պարապային-կատվելը, որ դան որսի հմուտներ, վարժ ձիավարներ և ոչ թե նախարարաց տների նահապետները,—նկատեց Հաչտենից Գնիթի նախարարը՝ մի դվարթ, ծիծաղաղեմ տղամարդ, որ խոսելիս՝ հերթով նայում էր բոլոր խոսակիցնե-

բին։— Կարծում եմ, եթե լիներ ուրախ լինչ կհայտներին. թաքցնելու պատճառ չէր լինի։

— Գանի որ չի ասվում, պիտի ենթադրել ուրեմն պատրաստվի վտանգ, կամ նման մի բան,— միջամտեց Ջորջ աչխարհի տեր Գորուխը կատակածով։

— Պատերազմի վտանգը, Գորուխ իշխան,— նորից նկատեց Հաչեենից Գնելիը— կխմացվեր առանց խոսքի անգամ։— Պատերազմը դաղտնիքներ ունի, բայց ինքը դաղտնիք չի մնում... չի կարող մնալ։

— Ուրեմն՝ պիտի կարծել—Թագավորը մեղ կանչել է պատրիկների։

— Դա էլ, թվում է, մեկը կխմանար. հարկ չկա ծածուկ պահելու։

— Սակայն այստեղ խորին դաղտնիք է,— ծիծաղեց մեկը։

— Համենայն դեպս պետք է կարծել,— ասավ Գնելիը,— որ հրավերը բարենպատակ է։

— Տա՛ ասոված, տա՛ ասոված,— կրկնեցին մի քանի ձայներ միասին։

Նախարարները խմբերի բաժանված խոսում էին այսպես, կատակներ, ենթադրություններ էին անում, երբ հանկարծ նկատի պալատական արարողապետի օդնականը և, դլուխ իջեցնելով, ողջունեց հյուրերին։

— Տիարք նախարարներ, այսօր կեսօրից ետո, բոլորդ հրավիրվում եք պալատ՝ իշխանաժողովի,— ասավ նա պաշտոնական որոշ ձայնով, բառերը հատ-հատ չեշտելով, որ լավ իմանան, երևի, և լավ հիշեն։ Եվ երբ նա վերջացրեց՝ մեկը, մի երիտասարդ նախարար հարցրեց.

— Իսկ ի՞նչ է քննելու միաժողովը։

Հարցն անսպասելի էր արարողապետի համար. նա հապաղեց մի պահ և ապա հարեց նույն որոշ ու պաշտոնական եղանակով.

— Այդ կասվի միաժողովին, տիարք։

Այս պատասխանից հետո ոչ մեկն այլևս հարց չտվեց։ Պատշաճ չէր։ Երբ չեն ասում՝ ուրեմն հարմար չէ հարցնել։ Մինչև կեսօր հեռու չէ։ Կարելի է սպասել։

Եվ ամենքը ցրվեցին իրենց օթևանները՝ օշնանուշ լվացվե-

լու, վայելուչ հագնվելու՝ միաժողովի գնալու համար, հետաքրքրված, մինչև իսկ անհամբեր։ Անհամբեր էին առանձնապես երիտասարդները. ամենքն ուզում էին լսանավել թե ի՛նչվի և ի՛նչ խնդիրների համար է իշխանաժողովը։ Դա առաջին դեպքն էր, որ Պապը կանչում էր նախարարներին, ուստի և շատերը, բայց աչն, որ ուզում էին լսանավել հրավերի նպատակը, ցանկանում էին տեսնել ու լսել նաև Թագավորին իրեն անձամբ, որովհետև ոմանք դեռ չէին տեսել նրան։ Այդ ցանկությունն ավելի ևեծ էր նախարարների հետ եկած որդիների մեջ, որ փափագում և խնդրում էին հայրերին՝ թույլ տալ ներկա լինել իշխանաժողովին։

— Պատշաճ չէ, պավակս։ Միաժողովին կանչվում են տոհմերի նահապետները։ Կարող են լինել դաղտնիքներ և խնդիրներ, որ Թագավորը չցանկանա պարզել երիտասարդներիդ առաջ։ Հասկանալի՞ է։ Թագավորին կարելի է տեսնել ուրիշ մի տեղ,— համոզում էին հայրերը։— Թագավորը հավանորեն կելնի պալատից կամ ձեզ բոլորիդ կընդունի առանձին։ Մնացեք հանգիստ, դիանդրենք, որ ձեզ ընդունի։

Եվ մի-երկու ժամ հետո արդեն ընդարձակ դահավորակը լցված էր հրավիրված նախարարներով։ Ոմանք նստել էին պատերի տակ շարված բիզանդական բազմոցներին, ոմանք պարսկական օթոցներին և հայկական բարձերի վրա։ Կային և ոտի վրա կանգնածներ, որ տակավին տեղ չէին բռնել։ Շշուկ ու չչունչ էր սրահում։ Ծոռակցում էին հարևան-հարևանին հետ, հին, բարեկամներն իրար հետ, և այնպես զգույշ ու կամացուկ, որ ձայնները, խոսքերը չհասանեն ուրիշ մեկին, կողմնակի լսողի։

Դահավորակը, բացի պատուհաններից, լուսավորված էր նաև առատաղի լուսյիջոյցից ընկնող լույսերով,— այնպես որ, հավաքվածները երևում էին իրենց նախարարական ամբողջ արժանապատվով. նրանցից ոմանք գլուխներին դրել էին զմրուխտով, մարգարիտով և այլ թանկագին զոհարներով զարդարուն խոյրեր, որին միացած էր ստանձնապես զոհարազարդ բանված վարսակալ՝ աշխարհավանդ հանգուցյալ. շատերը ականջներին ունեին թանկագին օղեր, իսկ կուրծքները զարդարված էր ապիղակ, դամբրատակ կամ լանջապանակ կոչվող կրծակալներով. ոմանք

հավել էին երկար ոսկեթել պատմուճան, իսկ դրա վրա առել էին թանկագին կերպաս մի վերարկու, որի լայն օձիքը պատած էր սամույրով: Ոտներին գուլպագուլն կոշիկներ էին՝ իրենց պատվի աստիճանի պատշաճ գույներով, որոնք պատած էր ոսկեթել ասեղնագործ զանկապաններով: Մատներին ունեին սկանառու մեծարժեք մատանիներ, որ ընդհանրապես դրած էին աջում և իրրև կնիք, ուր փորագրված էր լինում նրանց տոհմանիշը՝ վարազ, խոյ, արծիվ և այլ կենդանիներ: Մեջքներին կապել էին սկանառու ոսկեպատ կամ արծաթ կամարներ, որոնց փաթաթած էին նմանապես արծաթապատ կամ ոսկեպատ սրերը: Քոլորի մեջ, սակայն, իրենց հանդերձանքով և վայելչագեղությամբ աչքի էին ընկնում Վահևունի նախարարները. հաղի կապմածքով՝ Գնթունի Աղամ և Արդամ իշխանները, պատկառելիությամբ՝ Անգեղ տանուտերը և Հաղինույցց ծեր նահապետը. իրենց ճկունությամբ ու սիրալիրությամբ Զյունական նախարարը, Բասենի իշխան Մանակը և Վարաժնունյաց Զարեհը, որ տանձին մոերմությամբ չէին հեռանում միմյանցից:

Երբ սպասման մեջ խոտակցությունը դարձել էր համատարած՝ հանկարծ սրահի հրկիզեղկանի դուռը բացվեց հանիկարծ և ներսից արարողապետը՝ ճաղատ գլխով մի տարեց մարդ, ճերմակ պատմուճանով: Աղոթ գալով՝ նա, առանց դուխ տալու, ձեռը բարձրացրեց սրապ.

— Տիարք նախարարներ, թագավորը գալիս է:

Խոտակցությունն անմիջապես դադարեց, կարծես սրով ծորեն. ամենքն աթոռիվեցին, պչաստացան և ակամա սկսեցին կարգի բերել իրենց, որ թափթփված ու անկարգ, անվայել չիներևան. ոմանք ուղղում էին պատմուճաններն ու կապանները, ոմանք մարտակալները կամ գումարտակները: Կային այնպիսիներն էլ, որ հարդարում էին երկար մորուսանները կրծքերի վրա:

Մինչ չատերն զբաղված էին դրանով՝ ճաղատ արարողապետը նորից ետ դարձավ և աներևույթացավ մյուս սրահում:

Զանցավ մի քանի վայրկյան, իրրև, երևայ թագավորը՝ ծիրանին ուսերին, գլուխը բաց. նրա խարտյաշ բոլորակ կտրած մազերը հասնում էին մինչև ականջատակները:

Նա գալիս էր արագ, համաչափ քայլերով, նրա եռանից պա-

յուսախաննելը, որոնց մեջ սմենքը ճանաչեցին Զենոն Գնունուն, Օտա Ալահունուն, ուրբաթյաղպիր Երեմիային, Սահատունուն և մյուսներին:

Թագավորին տեսնելով՝ բոլորը մեկեն ելան տեղերից՝ բազմոցներից, օթոցներից ու բարձերից և սուր իջնեցին՝ գլուխները թևերնուն խոնարհած:

— Ողջույն ուրբաթին,— լուռթյան մեջ լսվեց հանկարծ Ծեղունի Հասիտունու ձայնը ոտքեն ավագներեց նախարարի:— Հայոց նախարարները ողջունում են քեզ, արքա:

— Ողջույն նախարարներին Հայոց,— կանչ առավ Պապը մի վայրկյան, ձեռը բարձրացնելով, ապա նույն ընթացքով գնաց գահի կողմը:

— Ողջո՛ւյն, արքա, ողջո՛ւյն... սպրի Թագավորը,— էրինձին մյուսները պատշաճ ձայներով ու ծռումներով:

Պապը սրտ ձայներով ուղեկցված՝ առաջ եկավ և, պատմությանն էրկու ստումճանը բարձրանալով, նստեց գահի վրա, ապա ձեռով նշան տրավ, որ նախարարները նույնպես նստեն:

Բոլորը հարդանքով, էրենց դիրքի և աստիճանի համեմատ տեղ բռնեցին, բացի չքախոհի անդամները, որոնցից մի քանիսը կանգնեցին գահի չուրջը. ալ կողմը՝ Զենոն Գնունին՝ Օտա Ալահունու հետ, հարս կողմը՝ հազարապետ Կենան Սմատունին՝ Բակի Սահատունու հետ, իսկ արքայադպիր Երեմիան՝ մի դյուռնած մագաղաթ ձեռին կանգնեց գահի առաջին աստիճանի մոտ:

Երբ ողջույնի ծեսը վերջացավ և ամենքը բռնեցին էրենց տեղը՝ Պապը, ալ բնավ գահի բազուկին հենելով, խաժ աչքերի ջնդհանուր մի հայացք գցեց հավաքվածների վրա, կամենալով տեսնել կարծես, թե բոլո՞րն են ներկա, կամ ճանաչել ներանց մեջ իր ծանոթներին: Եվ երբ նայել էր բավական՝ ուղղվեց ու նստեց շիտակ:

— Ձեր նախարարներ և իշխաններ,— ասավ նա, և հատուցեց մի ողջույն:

Բոլորը բարվեցին՝ նայվածքները նրա դեմքին:

— Ձեր նախարարներ,— շարունակեց Պապն այս անգամ ավելի վստահ,— գիտեմ, որ իմ հրավեքին ժամանել եք փութով:

Հետևելով մեր նախնյաց օրինակին՝ ես ձեզ կանչել եմ մեր աչխարհի համար հույժ կարևոր խորհրդի:

— Կարևոր խորհրդի,— չընջաց Կորդվքի Գրիգորիսը իր հաւնանքին, որ Մուրացան նախարարն էր:

— Ըհա,— արհամարհական Գրիգորիսին դիպցրեց Մուրացանը:

— Իսկ առայժմ արքայադպիրը կկարդա ձեզ մեր հրամանը, որին կուզեի դուք ամենքդ լինեք իրազեկ,— ասաւ Թագավորը՝ նորից մի ընդհանուր հայացք նետելով նախարարների վրա:— Կարդա՛ Երեմիա,— դարձաւ նա արքայադպրին:

Բոլորը լարվեցին, իսկ ծերուններից մի քանիսը ձեռները բռնեցին ականջների տակը, որ լավ և լրիվ լսեն:

Երեմիան նախ ճակատին իջած մազերը ետ տարաւ, ապա բաց արաւ ոլորած մագաղաթը ու սրահի լռութեան մեջ հնչեց նրա կիրթ ձայնը.

«Իմ հայրը, որ անարդար և հանիրավի հարքունիս էր դրավել նախարարներից ոմանց կալվածները, ազարակները և կապտել նրանց տոհմական իրաւունքները, մենք այսու, լսելով մեր խղճի և արդարամտութեան ձայնը, վերադարձնում ենք առյն այդ կալվածները յուրյանց տերերին և վերականգնում նրանց իրաւունքները տոհմական: Առաջին հերթին վերադարձնում ենք Շիրակն և Արշարունիքը իրենց վաղեմի սիրոջը՝ Կամսարական Սպանդարատ իշխանին, որ քաջարի իր գործով նպաստեց մեր հաղթութեան Նախջևանի և Ձիրավի ճակատամարտերում: Ապա, բարձր դնահատելով բազրատունի Սմբատ սպասուի հերոսութիւնը՝ վերադարձնում ենք նրա հայրական Դարոնք ամրոցը և Բագավանը»...

Կարդում էր Երեմիան պարզ աւտդանութեամբ, չեշտելով ու ընդգծելով, որ յուրաքանչիւր բառ լսելի լինի և հասկացվի, և նախարարները լուռ էին հետաքրքրված, ոմանք վիզները երկարած, ոմանք զարմացած, ոմանք դոհունակ ժպիտով: Կամսարականն և Բագրատունու անուններից հետո լսվեցին զուսպ, բայց որոշ՝ «արժանի է», «արժանի է»... Ու նորից լռելով՝ լարվեցին:

Այնուհետև Երեմիան կարդաց մի քանի այլ՝ ոչ խոշոր կամ

ոչ այնքան անվանի նախարարների անուններ, որոնց կալվածները նույնպես վերադարձնում էր Թագավորը և վերականգնում իրենց իրավունքների մեջ:

Մինչ Երեմիան կարդում էր՝ Պապը մի թևով դահին հենած, մյուս ձեռով ծերանիի ինչը ծնկան վրա բռնած՝ կկոցած, բայց սուր նայում էր դարձյալ պատերի տակ շարված ծեր, երիտասարդ նախարարներին մի հայացքով, ասես ուզում էր տեսնել, թե ի՛նչ տպավորություն է անում հրամանը. և տեսնում էր, որ սկզբում, երբ ամենքը միաւեսակ լուրջ էին, ընթերցման ընթացքում աշխույժի եկան հետզհետե, սլայծառացան, ամենք գոհունակ տեսք ստացան: Մի երկու ծեր նախարար մինչև իսկ ձեռները տարան դեպ աչքերը և սրբեցին չորացող արցունքի կաթիլները, իսկ ծեր Ադամ Գնթունին, որ ավելի մոտ էր նըստած Երեմիային, բարձրաձայն չունչ քաշեց հանգստացած:

— Արժանի՛ են, տըքա, արժանի՛ են,— չհամբերեց նա:

Երբ Երեմիան վերջացրեց՝ Պապը նորից ուղղվեց գահի վրա:

— Ի՞նչ կասեք, տեր նախարարներ,— խոսեց նա թախտաւ մի նայվածքով բոլոր կողմերը նայելով:

— Արդար եք վարվում, տըքա,— խոսեց Հավնունյաց Մանասպ նահապետը զգացված ձայնով:— Կամաւորական իշխանը, Սմբատ ասպետը և մյուսները արժանի են, տըքա:

— Այո՛, այո՛, արժանի են,—լսվեցին հավանության ձայներ տրահի տարբեր կողմերից:— Արժանի՛ են...

Եվ այդ պահին գոհունակություն կար դրեթե բոլոր դեմքերի վրա և բոլոր ձայների մեջ: Օգտվելով բարձրացած ձայներից՝ ոսկանք խոսքեր փոխանակեցին հարևանների հետ.

— Ուրեմն հորը հակառակ է գնում,—ասավ վահեունի իշխանը:

— Բնական է և պռվելի,— չընկալց Ծոփաց Մարը:

— Ե՛վ խելացի,— վրա բերավ չչուկով Հաչտեենից Գնելը:

Խոսում էին և ուրիշները, բայց անլսելի, սակայն այնպես հանգստացած, որ թվում էր, միաժողովը հաճարում էին արդեն վերջացած. բոլորի տպավորությունն այն էր, թե Թագավորը դրա համար էլ կանչել է իրենց, որ հայտնի կամ զգացնի, թե

ինքը չէր հետևելու հորը, որ նախապարոնները առաջվա նման առանց մոտարկությամբ կամ քշնամական աչքով չնային պահին ու արքունիքին և մտանդի ժամին թագավորին չթողնեն մենակ, ինչպես վարվել էին հոր՝ Արշակի հետ:

Եվ մեկ-երկու խոսք փոխանակելով՝ բոլորը դրեթե գոհ տպատում էին թագավորի վերջաբանին:

Սակայն, տպատածի հակառակ, Պապը նորից չտիրվելով և ձնհնեղն իրար բերելով՝ շարունակեց, կարծես ամեն գործնականն էլ չէ՞ր:

— Այնու հետև, տեր նախարարներ, կանչել եմ ձեզ առաջին մեր, որ օգնեք ինձ մեր երկրի համար հույժ կարևոր մի գործում...

Նա մի վայրկյան հապաղեց և ձեռք տարավ դեպի ճակատը, կարծես ամեն ինչը հիշելու: Նախարարներից ոմանք տարակուսած նայեցին միմյանց և դժգոհությամբ ծունկ ու արմունկ էրար գալցնելով՝ հրաժարվելին ուշադիր լինել. խոկ Բասենի Մանուկին տոսով հարեանների.

«Ատում է՝ օգնեք»...

Ու բոլորը նորից լարվեցին լսանելու, թե ինչ գործում, ինչ բանով պիտի օգնեն թագավորին: Ոչ միայն նախարարները, պալատականներն էլ հետաքրքրված էին. երևում էր, որ նրանց համար նույնպես նոր և անսպասելի էր այն, ինչ պիտի ասեր Պապը: Նոր էր մանավանդ խոսելու մտերիմ եղանակը, որով ասում «օգնեք ինձ»... Ի՞նչ օգնության մասին էր խոսքը, կարծես մտածում էր յուրաքանչյուրը և նայում թագավորի դեմքին, շուրթերին, ապասելով նրա խոսքի շարունակությանը:

— Դուք արդեն վերահասու եղաք, թե մեր ուժը միաբան ինչպես դիմադրեց Քշնամուն մարտի դաշտում, ճակատամարտների մեջ, որի ընթրհիլ և մենք այսօր ապրում ենք խաղաղության մեջ, առանց թագավորն ապուշ:—Արդ, չե՞ք կարծում, տեր նախարարներ, որ մենք այսուհետ պետք է ունենանք մի այդպիսի զորություն մշտական:

Թագավորի միտքը կարծես պարզ չեղավ չատերի համար— նրանց դիմքի արտահայտությունը չփոխվեց, ոմանք էլ միայն

նած նայելին դիմացինները, և միայն ծերունի Հայկազնին ասաց.

— Հարկա՛վ, տըքա, հարկա՛վ:

Պապը կարծես նկատեց ընդհանուր այդ վերաբերմունքը, կամ գուցե տեղյակ արձագանք չգտավ իր խոսքը, չարունակեց.

— Այո, ես կարծում եմ՝ ամենքիդ ցանկալի պիտի լինի խաղաղությունը, և որպեսզի ամենքս ապրենք խաղաղության մեջ, մեր հարևան ազգերը, մեզ հարկի տակ՝ մենք պետք է ունենանք մի զորություն միշտակեր...

Թադեոսը նորից կանգ առավ ասելս բառերը մտածելու և նորից սեղմեց դահի բազուկը:

— Ինձ այդ Բիզանդիոնում է ասել, բայց հասկանալ չեմ, — չհնչաց մեկը հարևաններն էլ և աչքերը ուղղեցին նրա վրա:

— Մի զորություն, ասեր նախնիները, — կրկնեց Պապը, կամենալս մտածած բառերը չգտնելով, — մի այնպիսի զորություն, որ վաղեմի ժամանակ միշտ ապավինենք նրան: Ես խորհում եմ, որ դուք ամենքդ պիտի օգնեք ինձ մի այդպիսի զորություն առնչծելու, որ հարկ եղած ժամին դեմ դնենք թշնամուն, որ միշտ ծարավի է մեր հողին, մեր ինչքին և մեր արյան... Հասա՝ չեք պիտա ձեր օգնությունը ինձ այս հույժ կարևոր գործում:

Եվ Պապը նորից նայեց երիտասարդ ու ծեր լշխանների, որոնք նրան թվացին տարակույսների մեջ, թեպետև իր ասածը լավ չհասկանալով, ուստի և նա կարևոր համարեց բացատրել կարծես.

— Դուք գիտեք, որ պատերազմներից հետո մեր բանակը, որքան բանակը դարձել է սակավամարդ: Հետևաբար՝ մենք հնարավորություն կլինենք մեր աշխարհի առաջ, եթե բանակը մեր թողնենք այսպես քնած ու ուկար, անկարող նոր արհավիրքների հանդեպ. ուստի կարծում ենք՝ պետք է չտուժելով զորացնել այդ բանակը և դարձնել միշտակեր...

— Ճարի՛ է, տըքա, — խոսեց մտերիմ բարձրն նստած ճերմակավուսս Աղամ Գնթունին: — Պետք է, անշուշտ, զորացնել զորությունը հայոց:

— Պե՛տք է, պե՛տք է,— լսվեցին մի քանի ձայներ, որոնց մեջ չտեսերը ճանաչեցին Հալմունյաց Ծեր հարապետի թալ և Զյունական նախարարի զրնգուն ձայնը:

Իսկ երբ այդ ձայները լռեցին՝ մեկը հարցրեց սրահի ծայրից.

— Բայց ինչո՞վ պետք է զորացնել, արքա, և ո՞րտեղից:

— Եվ սա այդ իսկ պատճառով հրավիրել եմ ձեզ,— ասավ Պասլը, հայացքով վիճաբանով, բայց չզոհեցրով հարցնողին:—Դուք ասում եք «հա՛րկ է, պե՛տք է»: Այդ ճշմարիտ է,— չարունակեց նա:— Ո՛վ խորհում է հայրենիքի բարիքը՝ նա պետք է խոսի այդպես: Ես գոհ եմ, որ դուք խորհում եք ձեր Թագավորի նման: Մեր բանակը պետք է զորացվի և յուրաքանչյուրը պետք է ատաղ լինեք դրան:

— Իսկ ի՞նչով պետք է լինի մեր օգնությունն, արքա,— լռակեց կրկին մինչ այդ խանդավառ ժպիտով Թագավորի խոսքին ուշով հետևող Ծերունի Ադամ Գնթունին, ցույց, որ Թագավորը պետք է խրենց օգնության:

Թագավորի խաժ աչքերը կանգ առան Ծերունու վրա և աչքառուժացան:

— Ինչո՞վ: Զորքով, ուր Գնթունի: Ցուրաքանչյուրդ ձեր կարգով չուտ կատ պինվոր ձի և պարեն, որ կազմենք զորք մշտական՝ պատերազմ վտանգների համար: Ես կուզեի խորհեք այս մասին, հասկանաք մեր աշխարհի օգուտը և անեք ցանկալին: Անտարակույս եմ, որ ամենքդ սիրով պիտի ընդունեք ձեր արքայի առաջարկը:

Ինչպիսին այնքան նոր էր և անսովոր, որ լռություն իջավ սրահում. անգամ Ծեր Գնթունին և մյուս խանդավառ նախարարները մտածմունքի մեջ ընկան: Հիմա կարծես լիովին հասկացան Թագավորի միտքը. ուրեմն նա իրենցից պահանջում է զորք, ձիեր և պարեն՝ մշտական արքունի բանակ ունենալու համար: Մի բան, որ չէր ասել և ոչ մի Թագավոր: Ու բոլորը մտածմունքի մեջ՝ լռեցին. միայն Հալմունյաց տերը, որ եկել էր կարճի լեռների վրա գտնվող իր ամրոցից, վեր կացավ:

— Գո յանկություններ, արքա, զորացնել մեր զորությունը՝ հավանելի է ինձ: Բոլորեքյան, կարծում եմ, պիտի հավանեն և

Աբելին ուսաջարկը քո և կատարեն սիրահոժար: Ես իմ կողմից հայտնում եմ այսու՝ իմ բոլոր մարդիկը քեզ, արքա, երթևեկը քեզ... Եթե չլիներ քո բանակը՝ ես այսօր կլինեի անտուն և անհող մուրացիկ: Դու վերադարձրիր մեր ինչքը, մեր պատիվը և ստոդկությունը...

Նա վերջացրեց և ձեռը տարավ դեպի աչքերը:

— Ես նուչնաիս, արքա,— ուի կանչնեց Զյունական նախարարը,— պատրաստ եմ մեր երկրի ապահովության ու խաղաղության համար: Իմ դարպասի մարդիկը, իմ ձիերի ջոկերը քեզ. միայն թե դու երկիրը մեր պահիր խաղաղության մեջ, որ այլևս թշնամի չտեսնենք մեր երկրում, չտեսնենք նոր ավերածներ...

Նա վերջացրեց ու շուրջը նայեց: Բայց նրա և Համնունի նախարարի օրինակին հետևող չեղավ. լռություն մնաց անշարժ: Պապը նկատելով այդ՝ ասավ.

— Խորհեցեք ուրեմն, տեր նախարարներ: Խորհեցեք, և իմանանք, որ պետք է անել այլ հույժ շուտափույթ, որ թշնամիների հարձակման դեպքում՝ անպատ ու տկար չմնանք, ինչպես եղել ենք մինչ... Խորհեցեք, տեր նախարարներ, մեր աշխարհի բարիքը,— կրկնեց նա դահից ելնելով ու ձեռը բարձրացնելով:— Հաջողություն և ողջույն շատ:

Ու դահի պատվանդանից իջնելով՝ նա հանդարտ քայլերով գիմեց դեպ այն դուռը, որտեղից մտել էր. չքախմբի անդամները հետևեցին նրան, բացի Զենոն Գնունուց, որ առաջ գալով, սիրուքն ուղիղ կրծքի վրա և ասավ ծանր ու հանդիսաւ իր ձայնով.

— Տիարք նախարարներ, թագավորը ձեզ հրավիրում է այսօր արքունի տաճարում ճաշելու:

Բայց մինչև ճաշ դեռ ժամանակ կար, ուստի նախարարները խումբ-խումբ դուրս եկան մեծ սրահը, որ կոչվում էր սպասասրահ՝ մի ընդարձակ բարձրաձեղուն դահլիճ, որի հատակը ծածկված էր գունավոր գորգերով, իսկ պատուհանից կախված էին մի քանի ճրագարաններ, անկյուններում, պատերի տակ, օթոցների ու բազմոցների տրանքում դրված էին բազմաս-

ունչ աշտանակները: Թագավորին ներկայանալ ցանկացողներն այդտեղ էին սպասում նրա ընդունելության:

Դուրս գալով այդ սրահը՝ նախարարները բաժանվեցին խմբերի՝ յուրաքանչյուրն իր համախոհի ու բարեկամի հետ. ոմանք տրտնջում էին, ոմանք զարմացած: Թագավորի խոսքը, ասվելու հետ առաջացրել էր բոլորի համար: Այդ երևում էր նրանց դեմքերից, շարժ ու ձևից, նայվածքից. ոմանք ժպտում էին չփոթված, ոմանք մտահոգ, ոմանք լուրջ, ոմանք ուշադիր նայում էին իրար՝ հասկանալու թագավորի խոսքի տարբերությունը:

Մի առժամ ծանր լռություն էր, սպա այս ու այն կողմ ծայր առան չշուկներ, որոնց մեջ լսվում էին երբեմն հատ-հատ խոսքեր: Իսկ եթե մեկը փորձեր մոտենալ այս կամ այն խմբին՝ նա կլսեր և ամբողջ խոսակցություն:

— Տեր Գնեթունի, հաճո՞ եղավ քեզ արքայի խոսքը,— ասում էր սևամորուս մի երիտասարդ՝ վարժապետ տեր Զաքարեին իր երկրակից հայեան ճերմակահեր ծերունուն՝ նրա հեղինակավոր կարծիքն իմանալու:

Ծերունի նախարարը պատասխանեց առանց վարանելու, բայց քաղաքականությամբ, բառերը ծանր արտասանելով:

— Արքան, հարկավ, ճշմարիտ է: Երկիրը պետք է ունենա զորություն՝ աղետները, թշնամյաց հարձակումները կանխելու կամ դիմագրավելու: Բայց դեռ պետք է հիմնավոր խորհել այդ մասին: Հիմնավոր,— կրկնեց նա չեշտելով:

Մի այլ խմբում Հաչտենից նախարար Գնեթը, հխտունն անց մի զվարթ մարդ կամացուկ, զրնգուն չշուկով ասում էր ծերունի Հայմուսեին.— Տեր, դու ասացիր, որ պատրաստ ես կատարել թագավորի ցանկությունը, բայց, լրջիր, ի միճակի ենք այդ անելու:

— Եվ ինչո՛ւ չէ,— պատասխանեց ծերունին բարձրաձայն:— Եթե լավ խորհենք՝ կտեսնենք որ կարող ենք և պետք է անենք:

— Սակայն ինչո՞վ պաշտպանենք մեր ամրոցները, եթե, ասենք Հայմուսեի, մեր զինվորը, երիվարները ոտնք,— ձայնն իջեցրեց

Պնելիքը, հասկացնելու ծերունուն, որ բարձր չխոսե, իրենց շուր-
ջը մարդիկ կարող են հավաքվել:

Բայց Համլուսնին խոսելու եղանակը չփոխեց.

— Սակայն, ասաս, Թագավորն իր անձի համար չէ ուզում
քո պինվորը,— ասավ նա թավ ձեղերը հարթելով դեմքին:—Նա
ուզում է հայոց աշխարհի պաշտպանության համար, իմ, քո և
մյուսների պաշտպանության համար, դրսի թշնամու դեմ, ու-
ժերը խաղաղ պահելու համար: Այդպե՞ս է:

— Ես առայժմ խորհում եմ,— խուսափողական պատասխան
ավեց Պնելիքը:— Ուզում եմ հասկանալ և պարզել ինձ, թե ինչ
կարող ենք անել:

— Իսկ ես վաղուց պարզել եմ, ասաս, և հասկացել. եթե
չլիներ ազգանվեր բանակը՝ ես այսօր և ոչ մի կայն այստեղ չէի
լինի, այլ կլինեի մի անհող և անտուն մուրացիկ: Պետք է պա-
րտավոր լինել ազգային և պարտպանել բանակը նրա...

— Բայց մենք ինքներս ինչո՞վ պիտի պաշտպանվենք, եթե
Հանկարծ թշնամին մի օր հարձակվի մեզ վրա,— խոսակցու-
թյանը միջամտեց մինչ այդ անխոս կանգնած Տրունի նախարա-
րը՝ մի կարճահասակ ու նիհար մարդ:

— Թագավորը պինվոր ուզում է բոլորիս պաշտպանելու հա-
մար,— վրա բերավ Համլուսնին:

— Նա խոսում էր, ասել, արտաքին թշնամու մասին,—ասավ
Տրունին:— Իսկ եթե հարևանը հարձակվի վրաս, ասենք անա-
սունները, ճիերս...

— Այդ ևս չի թողնի:

Մինչ սմինքը իմաստուն խոսում էին, դատաստա-
նում վայելչասեռ Վահևունիներն ու Ծոփաց Մարզ և նրան
նախարարները հանդարտ չէին դահլիճում՝ լուռ, ինքնամ-
փոփ, իսկ մի քանիսը հետաքրքիր անցնում էին իմաստուն-խոսող
ականջ դնում խոսողներին, ինչպես Ոչխունյաց Շահենը, Կորդի-
քի ազգ Գրիգորիսը և Զյունական Վրենը: Թագավորի անսովոր
առաջարկը հուզել էր բոլորին. շատերը դեռ չէին սթափվել
կարծես, չէին հասել մինչև ասել. մինչև հիմա նրանք զորք ու ճիի
տակ էին պատերազմների ժամանակ. այժմ Թագավորն ուզում
էր և խաղաղ օրերին... Այդ ինչպես կլիներ... Այդ դեպքում ո՞վ

պետի պաշտպանները իրենց կալվածները: Ոմանք այդ ակնարկում էին, բայց չատերը լռում էին: Ջէ՞ր նշանակում դա պինաթափ լինել և սևիսկան ամբողջ պրուբյունը հանձնել Թագավորին... Ջինվորի հետ մեասին նաև նժույգներ ու պարեն...

Թագավորի առաջարկը ոչ միայն անսովոր, այլև ծանր էր թվում շատ: Այդ էր պատճառը թերևս, որ խոսում էին վերապահությամբ, դդուշությամբ — սեռք է խորհել...

— Թագավորը, հարկավ, բարի է մտածում, բայց սեռք է խորհել...

Գույն դեռ երկար խոսեին և խորհեին նախարարները, բայց չտասով նորից երևաց ճաղատ արարողապետը և նրանց հրավիրեց ուքանի տաճարը՝ ճաշելու:

Ճաշելո՛ւ... երբեք Թագավորի ճաշի հրավերն այդքան ծանր չէր եղել նախարարների համար, ինչպես այժմ: Սրտով յուրաքանչյուրը հրճվում էր այդ հրավերից, բայց այժմ դա կարծես տագնապություն չարաշ: Ոչ մեկն առաջին ուրախություն չտասհայտեց. բոլորն զբաղված էին իրենց մտքերով, և ոչ-ոք, բացի ծեր Հավնունուց, կարծես չգիտեր ինչպես պետք է լուծի իր առջև դրված խնդիրը: Բայց դնացին:

— Ես մինչև իսկ չեմ ուզում գալ ճաշի,— ասավ կորդիքի տեր Գրիգորեսը:

— Հարմար չէ, բացակայությունդ կնկատեն: Գնանք,— խրախուսող տվեց նրան Մուրացան նախարարը:

Եվ երկուսով հետևեցին նախարարներին:

***

Այդ երեկո՝ արքայական ճոխ ճաշկերույթից հետո, որին ներկա էր և Թագավորն իր ավագանիներով, և հետևյալ օրը վաղ առավոտ, երբ պատրաստ քնած էր դեռ— նախարարներն տեսակցին ցրվել:

Առաջին օրը, ճաշից անմիջապես հետո, երկու նախարար իրենց թիկնապահներով դուրս եկան միջնաբերդից և դիմեցին դեպի Արտաքը: Նրանք երկուսն էլ մեջին տարիքի մարդիկ էին՝ թագաններ հագած, մորթե նուրբ գդակներ դրած, կարճ սրերը գոտիներից կախած: Թիկնապահները, ապասավորները, ընդուն-

ված կարգի համաձայն, հետևում էին նրանց մի պատիվավոր հետևորդության վրա, որ չխանգարեն տերերի զրույցը:

Իսկ տերերը խոսում էին մռայլ և հուզված:

Դրանք Կորդիլի Դրիգորիս և Մուրացան Արտավազդ նախարարներն էին: Ձիերը (որոնցից մեկը կարմիր էր, մյուսը սև), կողք-կողքի վարելով՝ նրանք խոսում էին թագավորի առաջարկի մասին:

— Որքան էլ ես այն կարծիքի եմ, ասր Արտավազդ, թե թագավորները բարի գործի համար չեն կանչում, բայց այս անգամ խորհում էի, թե Պապի հրավերը, երևի, բարենպաստակ է, — ասում է Կորդիլի Դրիգորիս նախարարը:—Սակայն սխալվեցի: Ուզում է կարմիր մշտական բանակ, և ինչո՞ւ դրա համար կանչում է մեզ. թող կարմիր արքունի չինականներից և սպանողից: Ինչո՞ւ դինվորը մեղնից է ուզում: Հասկանո՞ւմ ես ինչո՞ւ:

— Որ բանակն ավելի մեծ լինի՝ որքան հասկացա,—պատասխանեց Մուրացան նախարարը:

— Ոչ, Արտավազդ սիրելի,—ընդդիմացավ Կորդիլի Դրիգորիսը,— նրա պահանջը, կարծում եմ, քոլորովին այլ նպատակ ունի:

— Ի՞նչ նպատակ,— հետաքրքրվեց Արտավազդը:

— Այն, որ մեզ աղքատացնի, թուլացնի և ենթարկի իրեն: Այսօր ուզում է դինվոր, ձի, մյուս կպահանջի, որ մենք ևս ծառայենք իրեն: Ո՛չ, սիրելի իմ, ես այդ ամենից լավ բան չեմ սպասում...

Նա լռեց հուզված. և մի ուժեղ նրանք գնում էին անխոս. ձիերի ոտնաձայնն էր լսվում միայն շրջապատի լռության մեջ: Ամեն ինչ՝ հասկանալով տերերը, միտում հանդարտվել այնպես հանկարծ էին, կարծես հավիտենական խաղաղություն էր իջել նրանց վրա: Բայց Դրիգորիս նախարարը չէր հանդուրժում. նա չուռ-չուռ նայում էր Արտավազդ նախարարի անվրդով, լինքնամփոփ դեմքին և գլուխը տարուբերում: Իսկ Արտավազդ նախարարը, թվում էր, խաղաղ մտքերի մեջ էր:

— Մյուս կողմից՝ նկատեցիր քաղաքականությո՞ւնը,— լռությունը խզեց Դրիգորիս նախարարը:

— Ո՞ւմ խորամանկությունը,— մտորումների մեջ հարցրեց Արտավազդը:

— Պապի: Թագավորի:

— Թագավորի՞,— զարմացավ Մուրացան Արտավազդը:

— Դու մի զարմանա, Արտավազդ սիրելի: Ես քեզ հետ խոսում եմ պապդ և ապատ, և հուսամ, որ մեր խոսքերը կմնան մեր սրտերում: Այո, Թագավորը պարզ խորամանկություն, խոշ է անում մեզ հետ:

— Այո՞նքան:

— Այն, որ հայրը՝ Ագշակը բունությամբ, Ագշակավան հմնելով էր ուզում թուլացնել մեզ՝ նախապատմներիս, սա այդ անում է, ավելի շուտ՝ անել փորձում է մեղմությամբ ու սիրով: Սակայն այդ մեղմության տակ ես տեսնում եմ աւյուծի ճանկերը: Նա մեզ ուրախացրեց, թե ահամասիկ վերադարձնում եմ հորս խլած կալվածները իրենց տերերին, թե ես հակառակ եմ հորս ընթացքին, բայց մեզնից պահանջում է դրբք, ձի և պարեն: Ուրեմն էլ ի՞նչ կմնար մեզ, եթե տանք նրան դրբք, ձի և պարեն: Հարցնում եմ քեզ: Սա խորամանկությո՞ւն է, թե ոչ:

— Մտածելու բան է,— ասավ Արտավազդն ղժուշչ:

— Առանց մտածելու՝ պարզ է, Արտավազդ սիրելի:

— Ի՛նչ ասիքան:

— Ոչ ասիքա՞ն,— տաքացավ Գրիգորիս նախարարը, ձին ավելի մոտ քշելով:— Մի՛թե պարզ չէ, որ նա ուզում է մեր ձեռնտվությամբ նստել մեր գլխին և ապատ վրաժխել իր հավատարմությամբ կամ, իրրև խաղապարանոց հոր սրտի, քամահրել մեզ: Չէ,— տնքաց նա,— մի պատանի ուզում է ստիպել անել մեզ: Առանց այդ էլ տկարացած ենք: Ձիրավում նա կորցրի երկուհարյուր մարդ. չատ չենքերում վար են անում կանայք:

— Բայց Թագավորն այսօր իսկ չէր ուզում գինվորը:

— Երբ էլ ուզի՝ մխենուշն է: Եթե մենք գինվոր տանք, չենք կարող այլևս մեզ պաշտպանել ոչ հարևանից, ոչ օտարից: Եթե մեր ամրոցի վրա հարձակում լինի՝ Թագավորը չէ դա մեզ պաշտպանելու:

— Բայց հիշում ես ծերունի Հայկունու խոսքը:

— Հայկունին կատող է այդպես խոսել... Ձյունականը

նույնիսկ. նրանք ցանկանում են բաբելացիներից թագավորից, և շատ բան չունեն կորցնելու, եթե ոտն...

— Բայց մի՞թե ճշմարիտ չէ՞, որ թագավորը վերին երկիրը պատրաստ է զոհաբերելու:

— Սակայն ուզում է զոհաբերությանը մեջ ունենալ մեզ,— նկատեց հուզված Դրիդոլիոն նախարարը և լուռ նորից մոռացված. ապա լուռ հետո դարձավ հարևանին.— Հիմա դու ի՞նչ ես խորհում. պիտի կատարե՞ս թագավորի առաջարկը:

— Առայժմ պետք է խորհել, Դրիդոլիոն: Թագավորն ասավ «խորհեցեք»:

— Դա ճիշ էր, Արտավազդ սիրելի,— ձեռն օդում թափահարեց Դրիդոլիոնը:— Ես կարծում եմ՝ մենք չենք կարող կատարել արքայի այդ պահանջը: Դա նշանակում է՝ ավերել մեզ և Պասկին զրաստնել—դնել մեր գլխին: Ես զոհ եղնիկ չեմ դուրս, որովհետև առանց խորհելու պատրաստ է Պասկի միտքը: Մենք չպետք է համաձայնենք: Ես զոհ չեմ կարող:

— Այդ դու ճշմարիտ ես ասում, Դրիդոլիոն:

— Այո, պիտի հրաժարվեմ յացարձակ:

— Բայց չի՞ս կարծում, որ հիշարուցես թագավորի բարկությունը: Մի մոտահար, որ Մուշեղը մի դուռ առած պատուհասում է բոլոր պարտապանցներին:

— Եթե մենք ու ամենքս հակառակենք համախորհուրդ՝ միասին ու միաբան, մեզ չի կարող ստիպել և ոչ մի Մուշեղ և ոչ մի Պատ: Եթե անգամ նախարարաց մի մասը ներհակի՝ պատր չի համարձակի անել ինչ...

— Ուրեմն՝ պիտի մտկարերել, ասը իմ, որ դու դեմ ես թագավորի առաջարկին:

— Այո, միանպատակ և ըստ ամենայնի,— չեշտեց Դրիդոքիոն կտրուկ:— Ես կգերադասեմ անցնել Պարսկաստան քան Բիզանդիա, քան զորք տալ Պասկին:

— Իսկ ինչու չհայտնեցի՞ր կարծիքդ այնտեղ,—հետաքրքրվեց Արտավազդ նախարարը՝ չէզ, մորթող հոյսերով նայելով իրանակցին:

— Դու ծաղրո՞ւմ ես ինձ, ասը Մուրացան, խոսել նրա ճանճիկների մեջ, նրա թնկարդում: Տակավին գլուխ ունեմ ուսերիս և

գլխումս վնելք: Բայց ահա բարձրանամ իմ լեռները՝ ես կխոսեմ ազատ, ինչպես հիմա քեզ հետ, և կասեմ ամենքին, որ Պապի այդ մխքը մի նպատակ ունի՝ ընկճել մեզ, թուլացնել մեզ և հրամայել մեզ: Եվ դա չպետք է թույլ տալ:

— Բայց մենակ ի՞նչ կարելի է անել:

— Պետք է խոսել և ուրիշներին հետ: Ես ես կխոսեմ...

— Բայց վաստա՞հ ես, որ կլսեն:

— Անշուշտ եմ, որ ոչ մի նախարար չի ցանկա զրկվել իր իրավունքներից և մեռնել կամովին...

Ներանք նորից լռեցին և առաջ գնացին ձիերի թքթքոցով:

Երեկոն իջնում էր. ձորերն արդեն մթամած տեսք էին առնում և մոայլվում: Երեկոյի վերջին լույսերը, ասես վերահաս մութից վախենալով, ապաստանում էին լեռնագագաթների վրա:

Ներանք արագացրին ձիերի ընթացքը:

Մեկ-երկու օր հետո մինչնաբերդում չմնաց և ոչ մի նախարար: Ոմանք գնացին իրենց ոստաններըը, ոմանք՝ բարեկամ նախարարներին հյուր՝ թագավորի առաջարկի մասին խորհելու, իսկ ոմանք մնացին քաղաքում:

— Հիմա ես հասկացա, թե ինչո՛ւ Պապը երկար ժամանակ մոայլ էր,— ասավ Զենոն Գնունին Օտա Սպահունուն և հազարապետ կենան Մամուռնուն այն ժամանակ, երբ նախարարները ցրվեցին:— Նրան դրաղեցնում էր ուրիշն մշտական մեծ բանակ ունենալու հոգսը: Սակայն տեսանենք կընդունա՞ն նախարարները թագավորին, կընդունե՞ն նրա առաջարկը:

— Ես նկատեցի՝ չատերին հաճո չեղավ,— ասավ Օտան հևալով:— Դյուրին չէ սեփական դինվորներն ու ձիերը տան թագավորին: Անսովոր է, տեր իմ:

— Բայց թագավորը չի ստիպում, նա խնդրում է,— նկատեց Զենոնը:

— Այդպիսի բան խնդրելով չեն կատարի,— գլուխն օրորեց հազարապետը:

— Հրամայե՛ր՝ կընդդիմանային, ինչպես Արշակի օրով,— ասավ նորից Զենոն Գնունին:

— Իսկ հիմա հավատո՞ւմ ես, որ ընդառաջեն,— աչքը կկոցեց հազարապետը:

— Սպասենք-տեսնենք,— ասավ Զենոնը առարկությամբ:— Դժվարին գործ է սկսում Թաքավորը:

— Իսկ ես,— հևաց Օտան,—ես վախենում եմ դրանից վատ բաներ ծագեն, տեր Ամատունի և տեր Գնունի: Վախենում եմ: Թաղավորի միտքը բարի է, բայց նախարարները չեն հժտրի:

— Ինչո՞ւ,— հետաքրքրվեցին հազարապետն ու պալատի կառավարիչը միասին, նրա պատճառաբանությունն իմանալու ցանկությամբ:

— Ինչո՞ւ... Բացատրել չեմ կարող, բայց զգում եմ, որ չեն հժտրի: Սակայն տա աստված, որ սխալվեմ... Ես կուզեի սխալված լինել...

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Վաղ առավոտ էր. Ավարտյան դաշտի այն պայծառ առավոտներից մինը, երբ օդը արևածագից առաջ՝ մերթ լեռնային աղբյուրների հով է բերում, մերթ ցողաթաթախ ծաղիկների բուրմունք և տաքության չնչի հետ պղպջվում է ախորժ թարմություն. երբ արաբեւ ծիծեռնակներն աշխույժ ծվվոցով, հրճվանքից առնս խելագար, օդը ճեղքելով՝ ճախրում ու սլանում են առեն ուղղություններ, ալեհեղով առնս մեղմյանց ու մորդիանց չգիտես մայր արևի ելքը, թե նոր կենսարեր օրվա գալուստը. և երբ, վերջապես, մարդ երեն այնպես թեթև ու դիարթ է զգում, որ մոռանում է առեն հոգս և նրա ողջ էությունը համակում է կյանքի սերը:

Մի այդպիսի դիարթ, քնքնամուտ առտամաքրության մեջ էր այդ առավոտ արքայազնը Երեմիա Ամատունին. պատրաստվում էր նա իր սեղյակներից մեկի բաց լուսամուտի առջև նստած՝ նոր բարակ ու երկար մի պարեզոտ հագին, հոգևորականների պարեզոտներից մի փոքր տարբեր, ուրներին հատող թոնե մատիրը բոլորովին ցրիվ, որ ինչպես երևում էր, տակավին չէր հարթարել ըստ սովորության, կոացած գլուխ էր առջևը փռած մագաղաթի վրա, գրում էր զարմանալի հոգածու և զգույշ չարժումներով: Այդ նրա ամենօրյա գրաղումն էր առավոտները, երբ ազատ էր դիվանական հոգսերից: Այդ աշխատանքը, որ նա կատարում էր մեծ խնամքով, որպես արքեպիսկոպոսություն, և այնպես, որ ոչ-ոք չիմանա և չիմանալու, դրա համար գրքերն լուսաբացին արթնանալով՝ կատարում էր ուսանող ժամանակվա ընթացքին սովորած մարդանքը, լվացվում սառը ջրով և ապա, սեղանի առջև նստելով, գրում էր աչքան, մինչև որ արևը դարձնում էր ջնից: Նա մագաղաթի վրա դրելեքը՝ նախ

երծաթի ստիլոյով գրում էր մոմատախտակի վրա, ուղղում, չըտ-
հում, աշխատելով կազմել ճիշտ ու խիտ նախադասութիւններ,
որ քիչ բառով շատ բան ասեր և խոսքը քիչ տեղ բռներ, ապա
երբ նախադասութիւնը պատհացնում էր իրեն, մելանով գրում
էր այն մաղաղաթի վրա, որ նստած էր հիմնաւորը, ասես գրում
էր դարերի համար:... Եվ նա, իրոք, այդ պիտակցութիւնն
էլ ուներ, թե գրում է դարերի համար: Իսկ նա գրում էր,
ինչպես լինէին էր ասում, հայոց աշխարհի գլխով անցած պատա-
հարները, իր տեսած և լսած հիշատակութեան արժանի դեպքե-
րը— դրանց դալոց սերունդներին սովանդելու նպատակով. և,
քանի իր որոշած կարդի, գրում էր օրը մեկ կամ կես էլ, ու
երբեմն այնպես էր տարվում այդ աշխատանքով, որ մոռանում
էր ոչ միայն դիվանատունն ընդհատ ժամը, այլև առավոտյան
հացը: Սկզբում նա ցանկանում էր իր այդ աշխատանքն անել
ծածուկ, որ ոչ-ոք չիմանա. բայց ահա մի օր, այդ ինքնամոռա-
ցութեան պատճառով, նրա գաղտնիքը բացվեց: Պապը, որ սո-
վոր էր ուսանող ժամանակվա պես այցելել Երեմիային ու Բա-
թին նրանց բնակարաններում՝ որ ժամին էլ լիներ, մի առավոտ
հանկարծ մտավ Երեմիայի կացարանը և տեսավ նրան խորա-
սուզված աշխատելիս: Երբ զարմացած հարցրեց, թե ինչ է
գրում,— Երեմիան, որ այլևս չէր կարող թաքցնել, չիմացավ
ինչո՛ւ, հուզվեց, թեև հարցնողը օտար մեկը չէր, այլ իր ուսա-
նողության ու պանդխտության ընկերը— Պապը:

— Մեր երկրի անցքերը, որքա՛, ինչ հոտում Տակիտոսը,
հուշն Պլուտարքոսը...

— Խրախուսո՛ւմ եմ, խրախուսո՛ւմ եմ, Երեմիա,— ասավ
Պապը,— դա կլինի հույժ պիտանի մեր հեռանորդների հա-
մար... Եվ այդ օրվանից ահա Երեմիան, Պապի խոսքերից
խրախուսված՝ իր պատմութեան վրա աշխատում էր ավելի սի-
րով ու եռանդով: Այժմ նա գրում էր Զիրավի ճակատամարտի
անցքերը և ջանում էր դրել այնպես հստակ, ինչպես Պլուտար-
քոս և Տակիտոս, որոնց գրքերը, որ մի քանի այլ, իր սիրած
գրքերի հետ բերել էր Բիզանդիոնից, համարում էր անհատանե-
լի օրինակ մատենագրութեան: Երբեմն էլ այնպես էր տարվում,
որ քաղի առավոտվա այդ ժամերից, նա իր պատմութեանը

նվիրում էր և դիշերվա մի–երկու ժամը, աշխատելով մոմերի ու կանթեղի բեկբեկուն լույսերի տակ... Պալատի սպասավորները, նրա դիշերային այդ աշխատանքը տեսնելով, զարմանում էին և կասկածներ հայտնում նրա ուղեղի մասին, երբ Երեմիան դրեթիս խոսում էր հաճախ ինքն իրեն, անց ու դարձ անելով իր մենա–րանում, և այն տպավորությունն էր թողնում լիսամուխի մեջ, ասես խոսում էր աներևույթ ոգիների հետ: Հաստատակ մարդկանց զարմացնում էր ոչ միայն այդ, այլև այն, երբ նա մոմատախտակը կողքից կախ, անցնում էր ոտով կամ ձեռով. հետաքրքրվում էին իմանալ, թե ի՛նչ է դա, որ այդպես խնամքով կախում է կողքին, որովհետև նրանք սովոր էին, որ ուղամարդը կողքից կախե սուր, աշտե, նրան կամ կապարճ, իսկ երբ նկատում էին, որ դա ձեռն առնելով՝ վրան գրում է արծաթի կամ պղնձե դրչով—զարմանում էին ավելի. մի՞թե գրելու բանը կախում են կողքից, և մտածում էին, թե արդյոք կախարդանքով չի զբաղվում նա: Այնպես որ Երեմիան արդեն տարօրինակ մարդու համբավ ուներ ոչ միայն պալատի սպասավորների աչքում, այլև քաղաքացիների և նախարարների: Բայց և այնպես ամենքը հարգում էին նրան՝ որ Ամատունյաց նշանավոր տոհմից էր, երկրորդ, որ չորս–հինգ տարի Պաշի հետ եղել էր Բիլանդկունում և «հմուտ էր իմաստասիրաց և փիլիսոփայից գրոց»:

Նախարարների միաժողովից անցել էր արդեն երկու թե երեք շաբաթ, և Երեմիան չարունակ աշխատում էր իր պատմութեան վրա, ու դժո էր, որ Պաշն այլևս չի խանգարում իրեն՝ որսի և զբոսի տանելով, ու ինքն այժմ կարող է աշխատել որքան կամենա:

«Վերջացավ, Պաշը հիմա կհանդստանա, կմնա Դիլին, կզբաղվի պետական գործերով և էլ չի ընդհատի ինձ»,— հաճախ մտածում էր նա աշխատանքի պահին և գրում էր առանձին մի խանդով:

Այս առավոտ էլ ահա Երեմիան աշխատում էր դրել–ավարտել իր պատմության մի դրվագը, ավելի շուտ նրա վերջին խոսքերը, երբ անսպաս ներս մտավ Պաշը՝ կարճ, ասիղնագործ թևերով դիպակ պատմուճանը հագին, որ գոտեպնդված էր մե–

տաքան մէ գոտիով, որէ խոշոր ծոպերը կախված էին ձախ ուլերէ վրա։ Նա ներս մտավ տարօրինակ մէ քայլվածքով, որէց նկատիան հասկացավ, որ նա հուզված է. բայց երբ նա ուրախ էր և սովորականից աշխուժ։

— Ես քեզ նորից խանգարեցի, Երեմիա,— ասավ նա ժըպտալով և մէ ձայնով, որէ մեջ հանդատություն կար։

Երեմիան թեև տհաճություն զգաց, որ խանգարվեց աշխատանքի ամենալարված պահին, սակայն նայելով Պապէ ուրախ դեմքին և լսելով նրա զվարթ ձայնը, գրիչը դրեց սեղանին և մատաղաթը հրեց մէ կողմ։

— Այդ ոչինչ, Պապ, սակայն...

— Ես նորից պետք է քեզ ընդհատեմ, Երեմիա,— ասավ Պապը, առնա չլսելով կամ ուշադրության չարժանացրով Երեմիայէ առածը,— և այս անգամ դուցե երկար։

— Այդ ոչինչ, Պապ, ես կաշխատեմ երեկոյան կամ...

— Իմ խոսքը ժամերէ մասին չէ, Երեմիա,— ընդհատեց Պապը,— ես ուզում եմ մէ առժամ հեռանանք այստեղից... Գնանք նորից մէ զբոսանքի։

«Ուրեմն ես սխալվում էի, թե իշխանաժողովից հետո կհանգըստանա», մտածեց Երեմիան. «Զբոսանքի՞ն... նորից զբոսանքի, և դուցե երկար» ասրսաւեց նա, լսելով այլևս թաղալորէ խոնքէ շարունակությունը, մտածելով միայն, թե ակսածը նորից պետէ թողնէ, ոգևորությունը նորից պետէ սառէ...

Սակայն նրա այդ վարանքն ու տհաճությունը ըստ երևույթին չվրդովեց Պապէ սուր հայացքից. նա մոտեցավ Երեմիային և իր խոշոր սպիտակ աջը դրեց նրա ուսին։

— Դու նեղվիր, Երեմիա, որ նեղություն, դուցե և տհաճություն եմ պատճառում քեզ։ Սակայն այս զբոսանքին անհրաժեշտ է։ Գիտես, որ երկիրը, մեր աշխարհը լավ չգիտեմ և ժողովուրդ չեմ ճանաչում, և ինձ ուղեկցել կարող ես դու և Բաքը։ Գնանք. և կարծում եմ՝ քեզ համար նույնպես հետաքրքրական կլինի— նոր վայրեր, նոր հանդիպումներ...

Ինչպես միշտ՝ այս անգամ էլ Երեմիան ստիպված էր համաձայնել, քանի որ մերժել չէր կարող, թեև գուցեր, շատ գու-

զեր, որ կատղանար մեռնել։ Բայց դա երբեք հնարավոր չէր, մանավանդ հիմա, երբ նկատում էր, որ Պապին համակել է ուրախ և հանգիստ մի տրամադրություն, ուստի և կատակով հարցրեց, թե արդյոք Զարմանդուխտ Թագուհին դեմ չի՞ լինի, որ պալատում մնում է մենակ։ Նա մի անգամ լսել էր Թագուհու դժգոհությունը, թե Պապն իր բարեկամների հետ չարունակ գնում է որսի կամ զբոսի և իրեն թողնում է մենակ, և հիմա, Թագուհուն հիշելով, ցանկանում էր կարծես իմանալ մի բան կամ հաակացնել, որ այդ չբլաագությանն օրերը կարճ տևեն։

Բայց Պապին կարծես հաճելի չեզավ այդ հարցը։

— Մի՞թե Թագուհին քեզ գժգոհություն է հայտնել մեր զբոսանքների համար,— հետաքրքրվեց նա։

— Ես այդ մտքով չասի, Պապ,— ուղղեց Երեմիան։— Թագուհին ինձ ոչինչ չի հայտնել։ Ես միայն ենթադրում եմ, որ Թագուհին իրեն կարող է մենակ զգալ դեռևս անծանոթ պալատականների չրջանում...

Պապը սևեռուն նայեց Երեմիային։

— Դու այդ ճշմարիտ ես ասում։ Հարկավ, Թագուհու համար, ծանր է մենակ։ Նա ինձ ասել է այդ մասին... Բայց ես կարծում եմ երկար չի տևի մեր չրջագայությունը։ Մի տաս օր, երևի... Սակայն՝ նախապես դժվար է ասել... Ուրեմն՝ գնում ենք վաղը՝ լուսյոը դեռ չբացված...

— Վաղը՛,— ասաց Երեմիան ակամա և զարմացած։

— Վաղը՛,— կրկնեց Պապը։— Իսկ առայժմ կարող ես չարունակել պատմությունդ,— ասաց նա և դուրս գնաց արագ, ինչպես եկել էր։

Երեմիան մենակ մնալով՝ ընկավ մտքերի մեջ։

«Նորից ընդհատվեց» մտածեց նա իր պատմության մասին, և նրան թվաց, որ այն, ինչ ծրագրում էր, թե այսուհետև հանգիստ կդրի իր պատմությունը, այլևս չի հաջողվելու, և, երևի, երբեք էլ չկարողանա ավարտել, եթե այսպես չարունակ ընդհատվի։ Հազիվ մտել էր պատմության հունի մեջ—նորից չբլաագություն, և այն էլ ոչ թե մեկ-երկու օրով, այլ տաս... գուցե և քսան... Գոնե որանից հետո հանգստանար Պապը և թույլ տա նստել և ավարտել իր պատմությունը։

Երևի այն միտքը մտաբերեց էր, թե պետք է, վերջապես, Պապին դադարեցնել. պետական գործերով լցրեց զբաղվելու։ Հավի է, որ ուրիշ չ, բայց պետք է գործ անել,— ասաց նա մտքում և պարեզոտի փչելը հավաքելով՝ նորից նստեց, որ ավարտվող գլխի վերջին բառերը գրի, սակայն չկարողացավ։ Մտածելով, որ վաղը պիտի գնա գրասենյակ, ընկերությանն— առելը դողում էր նրա ձեռքին, ուստի թողեց, վախենալով սխալներ անելուց։ Մյուս կողմից՝ նրան զբաղեցրեց պատրաստվելու միտքը. պետք էր կնոջը հայտնել այդ մասին, որ գոհ չէր լինում նման գրասենյակներից. պետք էր դիվանախան մի քանի կարգադրություններ անել իր օգնականի թեկնածուների. ուստի և մոմատախտակները հավաքելով և պատի նշումի տեղավորելով, նա դուրս եկավ առանձնասենյակից։

***

Եվ մյուս օրը, իսկապես, տակավին լույսը չբացված, երբ պատառը և Դվինը քնած էին խոր քնով, նրանք լսեն միջնաբերդից և հյուսիսային դռնով գնացին դեպի Կոտայք, այս անգամ էլ, ինչպես հաճախ, ծպտյալ։ Այդպես էր ցանկացել Պապը, և Երեմիային թվում էր, որ Պապը, առաջվա պես, ուզում է վայելել ոչ միայն ծպտյալ լինելու հաճույքը, այլ թերևս կա մի ուրիշ բան, որ ինքը չի հասկանում, հետո կպարզվի։ Նրանց հետ էին և մի խումբ զինվորներ՝ նույնպես զգեստավորված, որպես թիկնապահներ՝ Գնել Անձևացու գլխավորությամբ, բայց գնալու էին ոչ անմիջապես նրանց հետ, այլ սիսեռ հետևակին հետևից։ Դրանք նրանց հետ ջորիներով բերում էին վրաններ և ուտեստի պաշար։

Պապն, ըստ սովորության, որսորդական հագուստների մեջ էր, վրան բևեռանգական մի թիկնոց, որ ձիու վրա ծածկում էր մինչև նրա սրունքները։ Համարյա նույնպիսի հագուստների մեջ էին Բաբին ու Երեմիան, եթե նկատի չառնենք նրանց մուկերը, որ բոլորովին տարբեր գույնի էին։ Ու այդ հագուստների մեջ երեքը միասին նման էին նախարարների զրոսասեր որդիների, որ հաճույքի համար զբաղվում են որսորդությամբ, վարժվում նե-

ստեղծության մեջ կամ ճիարշավում: Եվ Պապի տրամաբանությունը, ինչպես Երեմիան նկատեց, ուրախ էր, ինչպես երեկ:

Եվ առհասարակ այս շրջագայությունն առաջին իսկ օրից նման չէր մյուսներին. արդյոք ընտրած նոր ճանապարհի պատճառով, թե ամառվա հետևանքով, երբ երթևեկություն շատ է լինում, նրանք ամեն քայլափոխի հանդիպում էին չինականների, որ բեռնաքարշ ավանակներով, սայլերով գնում էին Դվինի, Արտաշատ ու Վաղարշապատ կամ դառնում էին այդ տեղերից:

Առաջին օրը սակայն չեղավ հիշատակության արժանի մի բան, եթե չհաշվենք այն, որ Բաթը նեստահարեց մի ավլես, որը համարվեց լավ նշան հաջողակ ճանապարհորդության, և այն, որ դիշերը քնեցին վրանների տակ— դով, աստեղազարդ երկնքի ներքո: Իսկ մյուս օրը հասան մի կուսանոցի, բարձր առանձնավոր պարիսպ ունեցող մի մենաստանի, որի շուրջը՝ արձակ դաշտում աշխատում էին բազմաթիվ անազգեստ կանայք —քաղհան էին անում, առուներով ջուր էին տանում կամ ջրաղհանը տանում թափում էին մի տեղ—լորայր վրա:

Կույսերը հագել էին թխագույն երկար միատեսակ հագուստներ, որոնց կրծքի և գոդի վրա՝ գոտին առաջացնում էր բազմաթիվ ծալքեր. իսկ ինքը գոտին այնքան լայն ծայրեր ուներ, որ քայլելիս ծածանում էր այս ու այն կողմ: Ոմանք դրանց վրա քցել էին նախորդ, որ առաջակողմը թողնում էր բաց: Բոլորը գլուխներին կապել էին փակեղ, որ ծածկում էր ճակատը՝ ականջների հետ միասին, և հագուցված էին կղակի քով:

Ինչպես պարզվեց՝ դրանք բոլորն էլ դեռատի կույսեր էին, որ աշխատում էին լրևնց մենաստանի բանջարանոցում՝ տարեքով կույսերի ղեկավարությամբ. նրանց մեջ կային և ամուսնացածները, որ հազիվ լինեին տաս—տասներկու տարեկան, և լրևնց այդ ևս երկար հագուստի մեջ ու ևս գլխաչոր կապած՝ նրանք այնքան խղճալի էին թվում... Պապին շատ զարմացրեց, թե ինչու այդ մանկահասակ աղջիկներին կտրել են լրևնց անից, ծնողներից, խաղընկերներից և բերել այս ամայի վայրը... Եվ երբ նա ճին քշեց դեպի առանձնավոր պարսպի դուռը՝ իմանալու, թե ինչպես է կոչվում այդ մենաստանը,— մուտքի առաջ մի ևազգեստ,

տարեց կույս, որ Էլիֆապուղի պես յուղոտ սև աչքեր ուներ, իր ահագին մարմնով կանգնեց նրա առաջին:

— Ի՞նչ է ցանկանում տեր սեպուհը,— ասավ նա ցուրտ, արգելք լզացնող ձայնով:

— Կարելի՞ է տեսնել մենաստանը,— ասավ Պապը:

— Սա կուսանոց է, տեր սեպուհ, այրերին իրավունք չէ նրա մոնել,— պատասխանեց պառավ կույսը տղամարդու կոշտ ձայնով:— Այդ կարելի է միայն բարեպաշտոն մայրապետի թույլտվությամբ: Ձո անունը և տոհմանունը չնորհիր ինձ՝ մայրապետին հայտնելու, եթե թույլատրի:

— Քանի որ արգելված է՝ ուրեմն և չենք...—ասավ Պապը, մտածելով, որ իր անունը չի կարող հայտնել, իսկ մի ուրիշի անուն—տոհմանուն—հարմար չէր: Սակայն կարևոր համարեց տվեյացնել:— Սակայն ինչո՞ւ համար եք այսքան դեռատի աղջիկներ հավաքել այդ մենաստանում. ավելի լավ չէ՞ պնան դրանք խաղան ընկերուհիների հետ կամ ամուսնանան:

Պառավ կույսը, որ մայրապետի օգնականն էր գուցե, նախ դունատվեց, ապա բռնկեց հանկարծ. արյունը տվեց երեսը և նա ասավ զայրացած, Էլիֆապուղի նմանող աչքերը լորբոքած.

— Զավակ լորի՛ր խոսքդ, տեր սեպուհ, և մի խայտնվիր սատծու սահմանած կարգերին: Հեռացիր քանի շուտ է, որ աստված ընդդեմ քո խոսքերը չլսի մեկը և չհասցնի ներսես հայրապետին...

Պապն անմիջապես նկատեց, որ այդ պառավ կույսի առերեսվության հեղության և սև հագուստների տակ թաքնված է մի որատամ հովազ, ուստի վախենալով, որ նա կարող է աղմուկ բարձրացնել և հեռամուտ լինել իր ո՛վ լինելն իմանալու,— բարվոք համարեց հեռանալ:

— Գնա՛նք, որանք մեզ սպասնում են ներսեսով...

Այս արկածը բավական զվարճություն պատճառեց ընկերներին.

— Եթե ասեինք «Բագավոր է», նրա կթողնե՞ին այդչա՛ք,— հետաքրքրվեց Երեմիան:

— Նախ՝ չէին հավատա, երկրորդ կարող էին բռնել և ուղարկել ներսեսի մոտ,— կատակեց Բաթը:

— Եվ նա ինձ կը տաժե՛ր՝ գլխիս պատաներ կը դնեմ, — ձիծաղեց Պապը, որ սիրելի էր ու սառահում։

Ու մի առժամ գնում էին նրանք ուրախ կատակներ անելով։ Կուսանոցից հետո նրանք անցնում էին մի ճանապարհով, որի երկու կողմը պատահում էին շեներ ու ավաններ. հանդիպող շինականների մեծ մասը հագած էին ինքնագործ բրդե հագուստներ, ինքնագործ ոտնամաններ ու գլխարկներ... Մեկ-մեկ միայն պատահում էին մարդիկ, որ հագված էին լինում բիզանդական կտորներից կարած զգեստները— դրանք գյուղապետներն էին լինում կամ նախարարների ազգականներ։ Ավելի վատ էին բնակարանները— գետնափոր և կիսագետնափոր տներ, որ ավելի նման էին խլուրդի բներին, որտեղից հողը դուրս էին տվել և մտել մեջը։

Պապը, որ մինչ այդ՝ կուսանոցից հետո ղվարթ տրամադրության մեջ խոսում-կատակում էր, հանկարծ լռեց. ու երկար ժամանակ չէր խոսում՝ ձին միակուսակ քշելով։ Երեմիային թվում էր, նա ինչ-որ հիշողությունների մեջ է. թերևս հիշել է նորից հոր և մոր սպանությունը, նրանց չարաչար մահը, որ մեծ տխրություն էին բերում նրան առհասարակ։ Եվ այդպիսի դեպքերում Երեմիան իր պարտքն էր համարում սթափեցնել նրան և սփոփել։ Հիմա էլ ենթադրելով նույնպիսի վիշտ է պաշարել նրան՝ Երեմիան ձին քշեց-հավասարեց նրա ձիուն։

— Ինչո՞ւ լռեցիր, Պապ։ Վիրավորվեցի՞ր մայրապետի խոսքերից։

Պատասխանի փոխարեն՝ Պապը ձին կանգնեցրեց։

— Սա ի՜նչ թշվառություն է, Երեմիա,— խոսեց նա մեծ հերմակ ձեռը դեպի մոտիկ շենը մեկնելով։— Սա՞ է մեր աշխարհը... Սա՞ է ժողովուրդը հայոց... և ես պիտի թագավորեմ այս աղքատության ու գետնափորների վրա՞... Ինչո՞ւ է այսպես։ Երբ պարսիկի գրաված մասերում հանդիպում էի թշվառության՝ թվում էր պատերազմի քնական հետևանք։ Բայց այստեղ պարսիկ չէր մտել, ինչո՞ւ է այսպես... Ի՞նչն է սրա պատճառը։

— Պատերազմը,— եղավ Երեմիայի պատասխանը,— պատե-

զոպանը, Պապ բան, հուսանք, որ հոգու կամքի և կիսաշրջան ամեն ինչ: Նոր կենսագիրն ու աստվածը:

— Հոգը, արդյո՞ք միայն հոգը,— կրկնեց Պապը մտածմունքի մեջ ու լռեց:

Ու մի առժամ նա ձին քշում էր մտայլ ու մելամաղձոտ. թվում է խանգարվեց նրա զբոսանքը, որ ձեռնարկել էր հաճույքի համար: Սակայն երիտասարդական աշխույժը, որ չի կարելի մարել ինչ մտքերով էլ լինի, նորից արթնացավ նրա մեջ մի զարմանալի հնարքով, որ շատ հազվադեպ թափվում էր ժայռի կատարից՝ գովքերյուն ու ջրափոշի ցրելով իր շուրջը, և մի կամուրջի հնարքով, որ վիճականներից նորոգում էին վարար գետի վրա:

— Հաճելի է, երբ տեսնում ես կատարում են և նորոգում,— ասաց Պապը:

— Կյանքն այդպես է. մինչ քանդվում է և մինչ նորոգվում,— վրա բերավ Երեմիան:

— Բայց կա կյանք էլ, որ երբեք չի նորոգվում,— ավելացրեց Բաթը:

Պապը, Երեմիան ու Բաթը՝ իրենց ձիերի վրա դնում էին մյուս առվից, իսկ նրանց ետևից, բավական հեռավորության վրա, գալիս էին Թիկնապահ գինվորները և սպասավորները՝ պաշարակիր ջորիների հետ միասին: Շատ տեղերում նրանց ընդունում էին նախարարների զորքերի տեղ, որ ճամբորդում են իրենց ամրոցներից հեռացած կամ գնում հյուր են գնում մի որևէ նախարարի: Մի երկու տեղ լինել-որ նախարարների սահմանապահները մոտեցան և հարգանքով հարցրին, թե ո՛վքեր են և ո՛ւր են գնում: Երբ Պապը և ուղեկիցները նրանց տալիս էին անորոշ պատասխաններ՝ պահապանները խնդրում էին ոտքը տալ, որովհետև պատասխանատու են մերոջ առաջ, որ հետաքրքիր են իմանալ, թե ո՛վ է անցել իր կալվածով:

— Սխալականներ ենք,— ասում էր Պապը, և այդ մեծ զվարճությունն էր պատճառում նրան, որ իրենց չեն ճանաչում:

Իսկ հանդիպող շինականները նրանց ճանապարհին սեպուհներ համարելով, մեկն գլուխ էին խոնարհում ու շարունակում իրենց ճանապարհը:

Ճանապարհին մի քանի տեղ նրանք հանդիպեցին նաև վարպետների ու արհեստների, որ իրենց սև կապանների երկար քղանցքները հավաքած՝ ճիեր նստած գնում կամ դառնում էին բեռնաբարձ դրաստներն ու ջորիները կամ առջևից կամետևից։

— Աստված պահապան,— ասում էին նրանք, խնչակնքելով երիտասարդներին։— Տեր սեպուհները, երևի, բարեհաճում են որսի գնալ։

— Այո, հայրիկը,— պատասխանում էր միշտ Երեմիան։

Մի տեղ էլ նա, որ ավելի հարցասեր էր և հետաքրքիր, ձին կանգնեցրեց.

— Իսկ դուք ո՞րտեղից այդպիսի բեռներով։

— Տասանորդ է, տեր սեպուհ։

— Շեներից և գյուղերից։

— Այո, տեր սեպուհ։

— Ինչո՞ւ այդքան շատ։

— Պատերազմի պատճառով երկու տարվա տասանորդը չհնձ հավաքած։

— Իսկ պատերազմից հետո չինականներն ունե՞ն ինչ,— շարունակեց Երեմիան։

— Ճիշտ է, միանգամից դժվարանում են, տեր սեպուհ, դխաթավանք է լինում, ասկյան, ասանում ենք։ Դուք մեր չինականներին, երևի, չեք ճանաչում. նրանք իրենց հարստությունը միշտ թագնում են հողի տակ։ Երբ հրաժարվում են՝ մեր ատրկավագները փնտռում-գտնում են նրանց հորերը։ Մենք այդ գիտենք, մեզ չեն կարող խաբել... Նրանք երբեմն չհնձ հասկանում, որ վանքի տասանորդը չի կարելի չտալ...

— Իսկ այդ տավարն ինչ է։

— Դա էլ խզբև պտղի։

Գտպը, որ լսում էր այդ խոսակցությունը, զարմացած հարցրեց Երեմիային.

— Չինականները եկեղեցուն նույնպես տո՞ւրք են տալիս։

— Ոչ միայն տուրք՝ տասանորդ ու պտղի, այլև, եթե վանքապատկան հողերի վրա են ապրում, յոթից երկու օր աշխատում են վանքի համար։ Այսօրվա կուսանոցը որ տեսանք՝ այն-

հում են չինականները. ոչ մի կույր ո՛չ կարող է վարել, ո՛չ ցանել:

Պապը մտածմունքի մեջ ընկավ. Նա առաջին անգամն էր լսում այդ ամենը, մինչ այդ նա չգիտեր, որ չինականն այդքան տուրք է վճարում եկեղեցուն: Նա կարծել էր, որ հոգևորականները լրնդք են հերկում հողը կամ լրենց անհրաժեշտը գնում..., մյուս կողմից՝ նա զարմացավ, որ հոգևորականները երկու տոլմա տուրքը հավաքում են մխանգամից, այն էլ պատերազմից հետո, երբ չինականները գաղթել էին, վնասվել, լրենք ևս կաթոտության մեջ էին:

— Եվ ի՞նչ են անում այդքանը,— զլուխն օրորեց Պապը:

— Ուտում են, Պապ,— ասավ Բաթը քմծիծաղ,— և անկեղանացները պահում, ուր հավաքում են ծույլերը՝ անաշխատ ապրելու և կերակրվելու:

Պապը նորից զլուխն օրորեց.

— Իսկ Ներսեսն ինձ հանդիմանում էր, թե հաղթության առթիվ ժողովրդին հաց և ուրախություն տալը հեթանոսություն է:

Նրանք խոսելով՝ չարունակեցին ճանապարհը. ձիերը վրնշացնելով առաջ էին գնում թարմ օդից աչխուժացած, թեթևս զգալով և ծաղիկներին բուրմունք, որ սփռված էր ամեն կողմ և նրանք շնչում էին լայն ռունգերով, երբեմն լճամը թերանալով խաղացնելով, որ հանարվում է լավ սլացմատղության արտահայտություն:

Եվ այսպես չորս-հինգ օր նրանք գնում էին աղքատ գյուղերի միջով, ուր չինականները կամ քանդված պատեր էին դնում՝ հանդիստ ու անշտապ, կամ կտուրները նորոգում և կամ նիհար ու ճակատագրին հնազանդ շարված էին լինում պատերի տակ... Ու ճանապարհը ոլորվում էր անվերջ, մերթ մտնում էր մի ձոր, ուր վրիրած աղմուկով վազում էր լեռնային մի գետակ, մերթ գալիս էր դաշտ մի լեռնաշղթա, ուր ծփում էին հասկավորված արտերը, կամ մտնում էր անտառ, ուր երբեմն նրանց ճանապարհին հայտնվում էին եղնիկներ, որ գլուխները հետ թեքած՝ սլանում էին նետի պես ու չքանում. նապաստակները, որ ֆրթմոցով դուրս էին թռչում խոտերի ու թփերի միջից

ժամանակներն ու ամեն ինչ ասենքը, մայր աստված՝ նեռավոտ էր. թե չլսեր, ինչպես ղ բառերը կուլ էր տալիս: Մի ա՛ տեղ կրաչուն էր չորփոցով ընկնում դեռը, և, ինքը անց, մի այլ տեղ, գլուխը ջրից հանելով՝ նայում ճամբորդներին: Իսկ թռչուններն ամեն գաղմ լցնում էին բազմահունչ ձայներով, որ ասես պաչտոն էին կատարում կամ մրցում էին միմյանց հետ:

Եվ այսպես Պապն իր ուղեկիցներն հետ դրուցելով, երբեմն հանդիպած առնելով՝ գնում էին առաջ, գիշերում էին բացօթյա կամ վրաններն մեջ, ուտում էին ուր պատահում էր, և ինչին ու երեմիան պղում էին, ոչ միայն պղում, այլև տեռնում էին, որ չրջապատյությունը բարերար աղդեցություն է անում Պապի վրա, ուստի և ենթադրում էին, որ նրան տանջող հոգսերն անցել էին, քան երեւույթին, ու երեմն կատակում էին:

Հինգերորդ թե չորրորդ օրը, երբ նրանց ճանապարհը մի ձորից դուրս գալով մտավ մի հովիտ, ուր վրան էին թարմ մարգագետիններ՝ նրանք ճանապարհի հեռվում նկատեցին մի օտարոտի տեսարան, որ զարմանքի հետ միասին ղվարճություն պատճառեց նրանց:

Ուղիղ ճանապարհի մեջտեղը կանգնել էր սև պարեղոտով մի հոգևորական և ձեռները տարածել առջևը ծունկի եկած մարդու գլխաշերև: Իսկ նրանց կողքին կանգնած մնում էր թամբած մի ձի: Հոգևորականը ձեռի մեկը մերթ դնում էր ծունկի եկած մարդու գլխին և, հայացքը տարածության մեջ, աղոթում կարծես: Պապին թվաց, որ նա օրհնում է մարդուն:

— Այդպես տարօրինակ օրհնություն ես չեմ տեսել,— ասավ Երեմիան:

Բայց մինչև նրանք կհասնեին՝ հոգևորականը, երևի, վարդապետ, աղոթքն ավարտեց և, ծնկաչոք մարդը դեռ տեղից չելած, ձին նստեց հապճեպ, ու քշեց այն ուղղությամբ, որով գնում էին Պապը և իր ուղեկիցները: Իսկ ծունկի եկած մարդը, տեղից վեր թռչելով, մնաց ճանապարհի մեջ՝ նույն տեղը կնճռոտնած, զարմացած թե վախեցած՝ ճիաավորի հետևից նայելով:

— Այդ ի՞նչ էր անում հայր սուրբը,— հետաքրքրվեց հարցասեր Երեմիան՝ մարդուն մոտենալով, որ թրջված էր գլխից մինչև ոտները:— Աղոթում էր քեզ առողջացնելո՞ւ, թե...

— Ո՛չ, ազնիվ սեպուհ,— խոսեց չվախած ու չվոխված մարդը, որ թրջված էր գլխից մինչև. ոտները:— Սուրը հայրն ինձ ձեռնադրեց երեց:

— Ի՞նչպես: Ձանապարհի՞ մեջ:

— Այո, տեր սեպուհ: Ես նույնպես անհարմար գտա ճանապարհի մեջ, բայց չէսեց և ձեռնադրեց,— ասավ մարդը, ոչնչանքները սրբելով, որ դժվար էր լիմանալ ուրախությունից էլ թրջում նրա աչքերը թե հավումից:

— Բայց ինչո՞ւ ես լալիս, մարդ,— ճվով մոտեցավ նրան Պապը, հետաքրքրված թե նրա արտասուքներով և թե նրա թրջված վիճակով:

— Հապա լինչպես չլամ, տեր սեպուհ, հայր սուրբը ճիս տարավ իբրև ձեռնադրության վարձ:

— Եթե համաձայնել ես՝ հիմա խղուր ես լալիս:

— Ոչ, ազնիվ սեպուհ, ես չէի համաձայնում,—չարունակեց մարդը կիրկիր ձայնով:— Ես գնում էի ճվով՝ նա հանդիպեց հենց այստեղ և ասավ. «իջի՛ր, գավակս»: «Ինչո՞ւ» հարցրի: «Իջի՛ր,— կրկնեց,— իջի՛ր: Ասածու կամքն է՝ այդպես. նա ինձ, հրամայում է, որ քեզ ձեռնադրեմ, իբրև արժանավորի. իջի՛ր»... «Բայց ես մկրտված չեմ, հայր» ասի, որ սպասավեմ... Բայց նա ինձ ասածու և Քրիստոսի անունով իջեցրեց ճիուց. «Ես քեզ Թե՛ կմկրտեմ և Թե՛ կձեռնադրեմ»... Ու ինձ ծունկի բերելով՝ կողքից կախած ջրամանի ջուրը լցրեց գլխիս— մկրտեց և ձեռնադրեց: Ու հետո «ճիդ ձեռնադրության վարձը» ասելով՝ հեծավ–գնաց:

Լսելով այս կցկտուր պատմությունը՝ Պապը ժպտաց քմծիծաղ և հարցրեց:— Հիմա ի՞նչ ես անելու,— դարձավ նա այդ թրջված–մոլորված մարդուն, որ հազիվ երեսուն տարեկան լիներ:

Բայց Պապի կարեկից հարցումը սկսել հասկանալով՝ նա պատասխանեց միամիտ և մխիթարական ժամանակ ճակատագրին հնազանդ.

— Ուրիշ ի՞նչ կարող եմ անել, տեր սեպուհ: Քանի որ ձեռնադրել է՝ պետք է ուրեմն երթալ պաշտոն կատարեմ մեր շինում. հրաժարվել չեմ կարող... ասում է ասովածը կպատմի:

Պաղն ուզում էր ասել՝ դրան մի լսիր, դնա և պրաղվիր քո գործով, այլպես է հրամայում քո թագավորը, սակայն հիշեց, որ ինքը ծպտյալ է, ուստի վրա բերավ մխոյն.

— Գնա՛, մարդ, դնա պրաղվիր քո սովորական գործով և պահիր ընտանիքդ:

— Ոչ, ինչ եք ասում, տեր սեպուհ. նա ձեռնադրել է. ստացած կպատժի: Նա ասավ, որ չուտով պիտի գա մեր չինը՝ վարքս ստուգելու:

Մարդու այս պատասխանի վրա՝ Պաղն ու Երեմիան լուռ նայեցին և գլուխները օրորեցին: Նկատելով որ նա նույնքան սիրտամիտ է, որքան խարդախ է եղել նրան ձեռնադրող վարդապետը,— նրանք այլևս ոչինչ չասին այդ խաբված չինականին և շարունակեցին ճանապարհը, հասնելով Բաթին, որ մնացել էր թիկնապահների ու սպասավորների հետ:

— Ինչպես երևում է՝ Ներսեսը հայոց աշխարհն ուզում է լեցնել քահանաներով ու վարդապետներով,— ասաց Պաղը:—Եմ ինչո՞ւ համար:

— Հավանորեն քրիստոնեությունն ամրապնդելու,— նկատեց Երեմիան:

— Ավելի շուտ իր իշխանությունը ամրապնդելու,— ասաց Պաղը,— և այդ երևում է ամեն տեղ,— ավելացրեց նա,—հիշելով, որ իրենց ճանապարհորդությունների ընթացքում այնքան չինականների էին հանդիպում, որքան վարդապետների, սարկավագների ու արեղանների, որ ձի ու ջորի նստած խմբերով կամ մենակ գնում էին այս ու այն կողմ, և որին հարցնում էիր «ո՞ւր», պատասխանը լինում էր.— վանք, վկայարան, մենաստան կամ տաճառնորդ հավաքելու:

Պաղն ու Երեմիան մի առժամ առաջ գնալով՝ նայեցին. Բաթին ու պահակախումբը տակավին չէին երևում. այդ ժամանակ նրանք որոշեցին՝ մի փոքր էլ գնալ, հասնել առջևը երևացող ծառին և սպասել նրանց:

Սակայն դեռ այդ ծառին չհասած՝ նրանք մոտիկ մի տեղից նվագի ձայն լսեցին. թե ո՛րտեղից էր գալիս նվագածությունը— դժվար էր որոշել, բայց նա գալիս էր բարձր մի տեղից՝ մարդահասկին ուրախ կանչերի հետ միախառնված, ինչպես լինում է

հարսանիքներում: Փոքր ինչ էլ առաջ դնալով՝ նկատեցին, որ անտառի պատնկից մի դվխալաց մարդ է վազում դեպի իրենց, վազում է այն խոկ կողմից, որտեղից գալիս էր նվագի ձայնը: Եվ որովհետև վազողը ձեռքով էր անում կանգնելու կամ թերևս դեպի իրեն դնալու—Պապն ու Երեմիան ձիերը կանգնեցրին՝ խնամալու, թե ի՛նչ է ուզում այդ դվխալաց մարդը և թե հարցնելու իրենց հետաքրքրող այդ նվագի մասին:

Վազողը, որ մի երիտասարդ սպասավոր էր, ըստ երևույթին, հնազանդ մոտեցավ և խոնարհումներ արավ ձիավորներին:

— Ողջո՛ւյն, տեր սեպուհներ: Իմ տեր իշխանը խնդրում է ձեզ՝ չնորհ անել իրեն և մասնակից լինել ուրախության իր խրախճանքին:

— Ինչ ո՞վ է քո տեր իշխանը,— հարցրեց Պապը:

— Զորափորի տեր իշխան Հմայակը... խնդրում է հարգել...

— Բայց մենք չտապում ենք:

— Ոչ, տեր սեպուհ, դուք չեք կարող դնալ,— ասավ մարդը համառաբանակ:— Նա իրեն չատ վշտացած ու անպատվված կզդա, եթե մերժեք: Նա հրամայել է, որ յուրաքանչյուր ուղևորի տանենք իր մոտ, իր այսօրվա տեղանքին մասնակից անելու: Հիմա, մեհեանում է, եթե գնաք էլ, իմ տիրոջ մարդիկ կանգնած են ճանապարհի վրա. նրանք ձեզ չեն թողնի. կբռնեն և կբերեն այստեղ: Այդպես է հրամայված: Գնա՛նք, տեր սեպուհներ, գնա՛նք: Իմ տերը չի թողնում մի անցորդ, որ չպատվի. այնպես էլ ձեզ չի թողնի՝ առանց մի պատառ հաց ուտեցնելու կամ դինի խմեցնելու:

Իշխանի սպասավորի չատախոսության մեջ Պապին հետաքրքրից հատկապես այն, թե ո՛վ է նրա տերն արդյոք, ի՛նչ իշխան է դա, որ յուրաքանչյուր անց ու դարձողի պատվում է իր տեղանքից. և թե ի՛նչ ճոխ տեղան պիտի լիներ դա, որ կարողանում է կերակրել յուրաքանչյուր անցորդի:

— Գնանք,— ասավ Պապը հետաքրքրված, և Երեմիայի հետ ձիասին ձիերը քշեցին դեպի անտառի այն մասը, որտեղից լսվում էր նվագածությունը:

Եվ նրա հասան՝ նրանց առջև բացվեց մի զարմանալի տեսարան,— անտառի ընդավեստ մի բաց տաում, վիթխարի բազմատարած հաճարենու տակ փռված հին գորգեր, գորգերի վրա նրբին, եղերքը ծաղկած ահագին ոչ սփռոց, որի շուրջը նստած հին տասից ավելի տղամարդ, բոլորն էլ գրեթե միջին տարիքի, բոլորն էլ արդեն գինով, ինչպես այդ երևում էր նրանց ծանր նայվածքներից և ծանր, անհարկի շարժումներից: Կար շրջանում մեջ և սև կերպաս պարեգոտով մի եպիսկոպոս, հիսունի մոտ մի մարդ, որ ուզում էր երգել դլուխը տարուբերելով, բայց բերանից ձայն չէր դուրս գալիս, ավելի ճիշտ— ձայնը կարծես հրաժարվում էր դուրս գալ. այն ինչ՝ նա ցանկանում էր անպայման ձայնակցել սեղանի մի ծայրում՝ առանձին գորգի վրա ծնկաչոք նստած գուսաններին, որոնցից մեկը մի տիկ գրկած և այտերն ուռեցրած՝ փչում էր այդ տիկը, մատները նրա վրա ամրացրած ձակոտկեն արինդի վրա խազացնելով, մյուսը նվագում էր լարավոր մի գործիքի վրա, իսկ նրանց կողքին մի երրորդը խփում էր զանգուլակներով զարդարված ծնծղան ու մեջընդմեջ երգում գուսանական մի երգ:

Սփռոցի վրա թափված բազմատեսակ ուտելիքների մեջ աչքի էին ընկնում գինով լի թաղոյինները ու գավերը և ոչխարի խորոված կիսաններ՝ մեծ սկուտեղների վրա դրած... Նստողներից քանի մի քայլ հեռու կրակ էր ճարճատում ուրախ աղմուկով, որի վրա, ուղիղ բացերի դիմաց, ոտները հեռու, ծայրերը մխացրած կապած՝ կանգնած էին երեք հսկայական ձող, և դրանց այդ հանդուցյալից չգիտցով կախված մի ոչխար էր խորովվում. բոցերը, կարծես ծարավ օձեր, մաղլցում լիզում էին ոչխարի կողերը, զալարվելով իջնում՝ նորից բարձրանալու համար, և խորովվող այդ մսի ճենճերահոտը բռնել էր մեջտեղը:

Նոր հյուրերի՝ Գագի և Երեմիայի մտնելուն նկատելով՝ նվագողները կարծես ավելի աշխուժացան, իսկ երգիչը թվաց ավելի բարձրացրեց ձայնը: Մի քալաստողի, թխկնել, ածիլած դեմքով ու տլորած բեխերով զանգրահեր տղամարդ՝ մեջքին արծաթ կամար, կամարից փոքր մի թուր կախած՝ ոսկեզօծ պատյանի մեջ; որ ինչպես հետո պարզվեց—սեղանի տերն ինքը, կապույտ թևքերը, ետ ծալերով, երամ տեղից, վերամբ ողջունեց

հյուրերին, ապա մոտենալով օդնեց նրանց ձիերից իջնելու։ Ինքն երբ իջավ՝ նրանց թևերը մտնելով, կարծես վաղածանոթ մտերիմներին, տարավ դեպի սիրտը և դեռ չնստեցրած՝ առաջարկեց մի-մի դավաթ գինի։

— Այսօր իմ հերթական խրախճանքն է, սիրտս հնար սիրելի, — ասավ նա դինով ճաշով։— Մասնակից եղեք և խմեցեք այս ծաղիկհոտ, անուշակաև գինին... Եվ դուք բոլորդ, հյուրեր պատվելի...

Եվ նա սեղանից երկու դավաթ գինի վերցնելով՝ մատուցեց նախ հյուրերին։

Պապն ու Երեմիան խմեցին։ Սեղանակիցները նույնպես՝ դավաթները իրար զարկելով։ Եպիսկոպոսը նմանապես, բացի պատանիներից, որ չարունակում էին իրենց նվագը։

— Հիմա նստել հաճեցեք, խնդրում եմ,— ասավ սեղանի տեր իշխանը, և հյուրերին բազմեցնելով՝ ինքն էլ նստեց իր նախկին տեղը՝ իր ձեռքով մի պատառներ կտրելով հյուրերի համար։

Հապիլ նստել էին՝ եպիսկոպոսը, որ պարարտամարմին մարդ էր՝ ան ու ճերմակ մազերով, հանկարծ, երբ բոլորը նստել էին, մի ուրախ, բայց անարդի բացականչ արձակելով՝ տեղից ձգվեց դեպի ոչ և չորեքթաթ մոտեցավ սեղանի տեր իշխանին, որ հյուրերը նվաճելուց խանդավառ՝ նորից լեցնում էր պատարկ դավաթները։

— Ես ո՛ւզում եմ, տեր իշխան, ո՛ւզում եմ,— ասավ նա չորեքթաթ կանդնելով իշխանի կողքին։— Ես ուզում եմ, ցնորք մեղքերդ տանեմ...

Երիտասարդ իշխանը, թողնելով դինի լցնելը, արծաթ դրամներ դրեց նրա մեջքին։ Եպիսկոպոս հայրը վերցրեց դրանք, ապա նույն չորեքթաթ ձևով մոտեցավ մեկ ուրիշի.— Ես ո՛ւզում եմ, տեր, ո՛ւզում եմ. տուր մեղքերդ տանեմ քավարան։

Այս հյուրն էլ, որ արտաքինով նման էր իշխանին, նույնպես դրամներ դրեց եպիսկոպոսի վրա, և սա նորից վերցրեց արծաթ դրամները, ապա հերթով մոտեցավ մյուսներին։ Սրանք էլ, ամենքը գինով ու հարբած, զվարթ ծիծաղով դրամ կամ հացի, մսի կտորներ էին դնում նրա մեջքին ու քրքջում։ Իսկ

երբ հերթը հասավ Պապին՝ Երեմիան նկատեց, թե ինչպես նրա դեմքը խաղաց և հոնքամեջը խոր մի կնճիռ դրոյցավ. «Հանկարծ չբռնվի» մտածեց: Բայց եպիսկոպոսն օտարոտի առաջարկին Պապը պատասխանեց՝ բարկությունը հազիվ զսպելով.

— Իսկ եթե ոչինչ չունե՞մ...

— Այնժամ՝ տուր կալվածատիրը, երիտասարդ սեպուհ, կալվածատիրը, որ թողություն լինի մեղքերիդ:

Պապը հասկացավ նրա միտքը. եպիսկոպոսը ցանկանում էր կալվածները ստանալ նվեր. նա լսել էր, որ եպիսկոպոսներից ոմանք կրոնական զանազան հնարներով՝ հանդերձյալ վատ կյանքի ապառնալիքով կամ լուսե բարեխոսության խոստումով՝ նախարարներից ու իշխաններից առանում են կալվածատրեր, որոնցով նրանց ընծրվում էր հարուստ դյուղեր՝ իր շինականներով և հողերով: Եվ այդ հիշելով՝ Պապը եպիսկոպոսի երկրորդ դիմումին պատասխանեց.

— Իսկ եթե ոչ կալվածք ունեմ և ոչ հող,— ասավ նորից իրեն զսպելով, բայց այս անգամ Պապի ձայնը դողաց այնպես, որից Երեմիան լուրջ անհանգստացավ:

— Այն ժամ... այն ժամ դո՛ւն սեպուհ չես,— մեծ դժվարությամբ շունչը հարթած, արդի պես չորեքթաթ եպիսկոպոսը և նստեց՝ ուղիղ Պապի երեսին նայելով:—Ուրեմն դուն սեպուհ չե՞ս հա... դո՛ւն սեպուհ չես... Սակայն դեմքով և հոգեստով նման ես սեպուհի. ուրեմն և կարող ես կալվածատիր տալ. այնպես չէ՞...

Այս անգամ, Պապի դեմքը դողաց ավելի, քան առաջ, և մինչ Երեմիան նկատեց այդ—Պապն ձեռքը զարկեց իր ծնկանը և պոռաց.

— Բավակա՛ն է՝ Լուի՛զ, տխմար սևազգեստ...

Երեմիան զունատվեց և քաշեց Պապի թևը:

— Մենք ծպտյալ ենք, Պապ,— չշնչաց նա:— Ծպտյալ ենք Պապ:

Պապը թեև սթափվեց դրանից, բայց չարունակեց հուզված.

— Ոչ, հայր եպիսկոպոս, ես սեպուհ չե՛մ, ճիշտ է: Ես մի թշվառ ճանապարհորդ եմ. ոչ կալվածք ունեմ և ոչ իշխանություն. հասկացա՞ր... Գնա խնդրիր ուրիշներից:

Ու մինչ բազմականները խնջույքի զինով մասնակիցները, անդամ դուռանները, իրենց նվազն ընդհատելով, զարմացած նայում էին այդ տարօրինակ հյուրի խաղուն դեմքին ու խոշոր թաց աչքերին՝ Պապն արագ ելավ տեղից և, չնկատակություն հայտնելով սեղանի տեր իշխանին, չտապեց հեռանալ:

— Ներսեսը խելացի մարդ է, ինչո՞ւ է թույլ տալիս, որ այս տնաոակ մարդիկ լինեն Քրիստոսի պաշտոնյա,— խոսեց Պապը, երբ բավական հեռացել էին այդ անտառային բացօթյա խրնջույքից:

— Ներելակի՛,— երկարեց Երեմիան:— Բայց նա իր խելքը չի կարող բաժանել տհասներին: Խելքը ցորեն չէ, որ ցանեն և բուծանեն: Տակիտոսն ասում է. «Մի խելացի մարդուն ընկնում է բյուր տհասը, կամ բյուր տհասին վրա հասիվ բարձրանում է մի խելացի»:

— Սակայն ինձ զարմացնում է, թե ինչո՞ւ այդ եպիսկոպոսը դիմում է այդ օրհնակ ստոր միջոցի՝ վող և կալվածներ ստանալու համար,— շարունակեց Պապը հուզված:

— Այդ մասին կարող եմ ասել, որ ապաշնորհները սիրում են անաշխատ կյանք և ուրեմն ընդունակ են ստորության:

— Երեմիա, դու ասում ես բաները, որ ինձ քնած չեն մխիթարում և չեն պարզում, թե ինչո՞ւ այսպես պետք է լինի: Փոքր առաջ հանդիպեցինք մեկին, որ ստա ձեռնադրություն կատարելով՝ հավիշտակեց միամիտ չինականի ձին, այստեղ եպիսկոպոսն անասուն դարձած՝ դրամ է հավաքում և կալվածագրեր խընդրում: Սրանք ի՞նչ երևույթներ են: Կա՞ այս երկրում իշխանություն, թե ոչ: Պետք է այդ արարքները պատժվե՞ն, թե խրատեսվեն...

Մինչ Երեմիան կպատասխաներ՝ Պապը ձին խթանեց և արագ դուրս եկավ այն ճանապարհը, ուր Բաթը թիկնապահ զինվորների հետ կանգնել նայում էր իր կողմը: Պապը տաճկավին հուզված էր. նա առանց մի խոսք ասելու՝ չարունակեց առաջ գնալ:

Մյուսները հետևեցին նրան, զարմացած նրա տարօրինակության վրա, իսկ Երեմիան մտածում էր՝ լավ էր որ Պապը չքացվեց և չպարզեց իր ով լինելը...

***

Վերջին այս դիպքը պատահեց Զորուխորում, իսկ մի քանի օր անպատահար դնաչով, երանք մտան Նիզ գավառը, և այստեղ, ուր Նիզ գավառի սահմանը վերջանում է և ճանապարհը նկատելի թեքվում է դեպի Արարատյան դաշտը, պատահեց մի այլ բան, որ նոր հուզում պատճառեց Պապին, և նա չկարողացավ այլևս պահել լրին և, հակառակ Երեմիայի, դուցե և իր յանկութեան, դուրս եկավ իր ծպտյալ վիճակից:

Պապը, նրա հետ և Երեմիան ու Բաթը, ձիերը կոպ-կոպի քշելիս՝ նկատեցին չորս ձիավոր սարկավագներ, որ առաջներն որած տանում էին ձեռնները պարաններով կապկպած մի քանի չինականներ: Իրար կապած այդ չինականները դնում էին ոտով, մեկը մյուսի հետից, թերևս նրա համար, որ չխանգարեն միմյանց ընթացքը:

Ձիավոր վարդապետներ և կապված գյուղացիներ—պատկերը ոչ մեկին օտարոտի թվաց, այլև հետաքրքրից ճանապարհորդներին, և առաջինը Պապը ձին քշեց՝ իմանալու, թե ինչ բան է այդ:

— Ինչ մարդիկ են սրանք և ո՞ւր են տանում,— դիմեց նա հնձյալ սարկավագներին:

Առաջ եկավ սարկավագներից մեկը, որ ձին հարմար նստելու համար ու երկար հանդերձի վերջերը հավաքել-ամրացրել էր հետը, մի ուժեղ և հոնքերի տակից նայող տղամարդ, որ տանը իմրիշ լիներ հոգևորականի հագուստով:

— Պարտապանց չինականներ են, տեր սեպուհ,— ասավ նա բասք մի ձայնով, որ միանգամայն ներդաշնակում էր նրա սլընդակազմ մարմնին, և մի հայացքով, որով կարծես հավանություն էր ակնկալում դիմացինից:

— Եվ ո՞ւր են տանում,— չարունակեց Պապը, աչքաթեղով կարծես ավելորդ բառ չասել:

— Բանտարկելու, տեր, ի խրատ և յօրինակ այլոց:

— Եվ ինչո՞ւ համար:

— Նրա համար, տեր սեպուհ, որ չեն ուզում ո՛չ վանքի տուրքը վճարել և ոչ աշխատել վանքի համար: «Զինչ կարող

տում են անդրամները: Իսկ եթե որևէ վանքապատկան չվնասվածը չաշխատի վանքի համար՝ ո՞վ պիտի աշխատի, տեր...

— Իսկ ո՞վ է այդ կարգադրել՝ թանաքվիկ,—հնազանդվելից Պապը՝ բերանը սեղմելով:

— Դանիել սրբազանը:

— Ո՞վ է այդ Դանիել սրբազանը:

— Մեր վանահայրը, տեր...

Պապի հարցումներից Բաֆֆին ու Երեմիան դժգոհեցին, որ նրա ձայնը բնկվում է և նա կարող է հուզվել, ուստի մոտեցան արտը: Բայց մինչ կմոտենային՝ նա ձին մի երիտ քայլ ևս բշեց առաջ ու հանկարծ՝

— Կանգնեցնեք,— հրամայեց՝ ձայնը բարձրացնելով:

Սարկավագները լուռ նայեցին:

— Եվ ինչո՞ւ համար, տեր սևպուհ...

— Սրճակիլ կալանավորների կապերը և թողնել երթևեկ անելը,— ասավ Պապը՝ ձայնն ավելի բարձրացնելով:

— Բայց, տեր,— առաջ դալով ասավ ըմբշանման սարկավագը՝ ինքնավստահ և չհնազանդելու մի շեշտով,— ի՞նչպես կարելի է:

— Սրճակի՛լ,— կրկնեց Պապն արդեն զայրացած:

— Բայց, տեր, մենք այդ չենք կարող,— անվրդով կանգնեց ձեծամարմին սարկավագը:— Դու լսուր ես միջամտում քեզ չվերաբերող գործին: Վախեցի՛ր Դանիել սրբազանի բարկությունից:

— Սրճակեցնե՛ք այս մարդկանց: Ձևով հրամայում է ձեր Բաղավորը,— գոռաց Պապը, չկարողանալով ավելին դասել երեսին, մոռանալով որ ծպտյալ է:

Այդ խոսքերը կարծես մոգական ազդեցություն ունեցան. չվոխություն ու զարմանք տիրեց ամենքին, ինչպես սարկավագներին, այնպես էլ կալանավոր չինականների. և մինչ չինականները քարացել էին, չհամանալով ինչ անել—սարկավագները ամբիոնից ձիերից և ծունկի եկան՝ երեսներն ի վայր:

— Ների՛ր, արքա... ների՛ր, տեր արքա...

— Ինձ երկրպագություն պետք չէ. սրճակեցնե՛ք այս չինականներին և դուք էլ գնացե՛ք ձեր մենաստանը,— ասավ Պապը հարուկ, բայց առաձնները սեղմելով, որ ավելի խոսքեր չասի:

Սարկավագները երկմտության մեջ մոտեցան չինականներին, մտածելով, երևի, թե նրանց արձակելով՝ չի պատասխան պիտի տան իրենց եպիսկոպոսներին. իսկ չինականները, որ նրանց կասկերն արձակում էին, չսրմացած նայում էին Պաղին, չհավատալով, կարծես, որ դա Թադավորը է, որովհետև հագնված էր շատ հասարակ—ալքատ նախարարի կամ իշխանի որդու նման: Մյուս կողմից նրանց աչքերում երևում էին ընդհակառակության պես մի բան, որ սակայն չէին կարողանում արտահայտել: Զարմանքի՞ց էր դա, թե անվստահությունից—դժվար էր կռահել: Իսկ երբ Երեմիան, նրանց այդ վարանումը տեսնելով, մոտեցավ և ասավ. «Թադավորը ձեզ արձակում է, գնացեք ձեր տները»...—չինականները սթափվեցին և նրանցից մեկը, բրդոտ գլխով ու երևով տարեց մի մարդ, երկուսակվելով խոնարհումներ արավ նախ Պաղին, ապա Երեմիային:

— Երկա՛ր կյանք, տեր, երկա՛ր կյանք...

Մյուսները, այսինքն՝ մնացած հինգ հոգին հետևեցին նրա օրինակին, չհամարձակվելով տակավին հեռանալ, մինչև որ Պաղն ինքը չտրավ:

— Գնացեք ձեր շեները և...—նա էլ չշարունակեց, խոսքը կիսատ թողած՝ դարձավ սարկավագներին, որ իրենց ձեռքի տանձը բռնած՝ կանգնած էին գլխիկոր:— Իսկ դուք գնացեք ձեր մենաստանը և հայտնեցեք ձեր հայր սրբազանին, թե չինականներին արձակեցիք Թագավորի հրամանով:

Սարկավագները, նախ քան հեռանալը, դարձյալ խոնարհումներ արին, բայց դարձյալ մի կասկածով, թե հասարակ սուտի նման հագնված այդ երիտասարդը իրոք Թագավո՞րն է, թե ինքնակոչ մեկը, որ կատակ արավ նրանց հետ, վախեցնելով Թագավորի անունով:

— Գնանք,— ասավ Պաղը, ու երկար ժամանակ նա ձին քշում էր անխոս, հետո սկսեց խոսել, կարծես շարունակելով ընդհատված մի զրույց:— Իշխանություն են անում ամենքը, անգամ սարկավագներն ու վանահայրերը... Էլ ո՞նչ է մնում ինձ: Մնում է, որ ես էլ գնամ եկեղեցու հայրերի մոտ և խնդրեմ, որ ինձ էլ կատարեն... Այնպես չէ՞. նրանք ամեն ինչ

անձն, իսկ ես կոչվիմ Թադեոս... Թադեո՞ս հայոց,— կրկնեց նա մի տարօրինակ չարախնդությամբ ու լռեց:

Բաբին ու Երեմիան նկատեցին, որ նա ոչ միայն հուզված է, այլև վրդովված. նրան կարծես համակել էր տարօրինակ մի դյակացում, երբ մարդ չի իմանում՝ երազո՞ւմ է թե արթուն. կարծես մոռացել է ո՛րտեղ և ինչ է անում, ո՛ւր է գնում: Այդ նկատելով՝ Բաբին ու Երեմիան դուռան, որ ճանապարհը չարուշտկելն ավելորդ է և անօգուտ, ու միասին առաջարկեցին՝ վերադառնալ Դվին:

— Դառնանք,— համաձայնեց Պաղը,— ինքս ցանկանում էի առաջարկել...

Եվ չսպասելով թիկնապահների մոտենալուն, ձիերը քշեցին դեպի մայրաքաղաք:

Մյուս օրը՝ արևկոյան դեմ նրանք վերջնաթաթախ մոտեցան: Զարմանդուխտ Թագուհին, Պաղին տեսնելով, զարմանքից աչքերը հառեց արքա-ամուսնու երեսը. չլրջազայությունից ու պրոտոկոլից նա փոխանակ վերադառնալու ուրախ-զվարթ, լինչպես լինում էր երբեմն, եկել էր՝ հուզված ու մռայլ, այնպես, որ նրա հայացքը կանգ չէր առնում և ոչ մի բանի վրա:

— Ի՞նչ է պատահել, Պապ,— չհամբերից նա:

— Առանձին ոչինչ:

— Սակայն դու հուզված ես:

— Ավելի չուտ հոգնած, Զարմանդուխտ,— և Պապը արագ անցավ իր առանձնասենյակը:

Իսկ մոտը անց կանչեց հաղարապետին ու Երեմյային և հարցրեց.

— Գրել մի հրաման՝ չեներում, ավաններում ու քաղաքներում կարդալու, թե այսուհետ վերացվում է եկեղեցուն, վանքերին ու մենաստաններին տրվող տուրքն ու պտղին:

— Վերացնել վանքերին տրվող տուրքերը՛,— զարմանքից քարակ հոնքերը վեր քաշեց հաղարապետը, նայելով Թագավորին մի հայացքով, կարծես իր առջև տեսնում էր մի նոր, ուրիշ մարդ:

— Ինչո՞ւ ղարմացար, հաղարապետ,—ասավ Պապը, նկատելով նրա արտակարգ տարակուսանքը:— Ի՞նչ ունի այդ թշվառ, ալեւրված չինականը, որ սա եկիղեցուն:

— Բայց դա կարէդ է, արքա, սահմանված վաղուց լ վիր, տակավին երանելի Տրդատ թագավորի օրից:

— Սակայն դա այսօր ծանր է չինականի համար... նա լ վիճակի չէ...

Հազարապետը մի վայրկյան դլուխը կախեց և ապա նայից թագավորի հուզված դեմքին:

— Իսկ ի՞նչով պիտի ապրեն վանքերն ու միաբանությունները, արքա...

— Թող իրենք վաստակեն իրենց հացը,— ձայնը բարձրացրեց Պապը, դլուխը թափահարելով:

Լռություն իջավ: Երեմիան նկատելով Պապը հուզված է՝ չուզեց միջամտել. մյուս կողմից՝ նրա հայացքներից երևում էր, որ նա համամիտ է թագավորին. այն ինչ հազարապետը՝ ճակատը տրտրելով նայեց հատակին, լուեց մեկ-երկու վայրկյան, ապա նորից բարձրացրեց դլուխը:

— Կդժդոհի՛ն, արքա,— ասավ նա մտահոդ,—և այդ ամենը կարող է ծանր հետևանքներ ունենալ:

— Դու ինձ սպառնո՞ւմ ես, հաղարապետ, թե վախեցնում:

— Այո՛ն, արքա. ես միայն երկյուղ ունեմ, որ հսկիւր հայրերը չհնազանդին և...

— Եվ ուրեմն, հազարապետ,— ընդհատեց Պապը նրան,— խորհուրդ ես տալիս, որ ե՞ս հնազանդեմ նրանց: Եթե կարելի է տուրքեր հավաքել պատերազմից տուժած չինականներից՝ ես կարող եմ հավաքել բանակ պահելու, որ երկրի սահմանները ապահովեմ թշնամիներից, իսկ հոգևորականները ոչ երկիր են պահում, ոչ սահմաններ ապահովում... Թող ապրեն իրենց հոդերով, որ նուլնպես շատ է: Եվ անհասկանալի է ինձ, թե ինչո՛ւ այդքան շատ են հոգևորականներն ու քահանաները մեր երկրում: Ինձ թվում է՝ յուրաքանչյուր չինում բավ է մի քահանա, իսկ աբեղաների վերը, տուրքեր հավաքելու ժողովներին, կարող են մտնել բանակ... և նպաստել երկրի ապահովությանը... Պետք է այս ևս դրել հրամանում,— տաքացավ Պապը:

Հաղարապետը զարմանքից հառաչեց ակամա:

— Այդ արդեն չափազանց կլինի, արքա,— ասավ նա մեղմորեն ու սրտացավ եղանակով:

Եվ հաղարապետի խոսելու այդ եղանակը կարծես ազդեց թագավորի վրա, և նա ասավ.

— Այդ դեպքում, Երեմիա, դրիր առաջս այն, ինչ ասեցիր:

— Պատ, հանկարծ խոսեց Ջարմանդուխտ թագուհին, որ թագավոր ամուսնու վատ տրամադրությունը տեսնելով՝ աննկատելի մոտ էր գահատրահ և դունատ կանգնել նրա երկրպագ դառն մոտ:— Պապ,— կրկնեց նա երկյուղով լի ձայնով ու առաջ գալով,— դուք նախ խոսեիր Ներսես հայրապետի հետ, ապա նոր հրամանն արձակեիր:

— Ասելու կարիք չեմ զգում, թագուհիս,— պատասխանեց Պապը կարուկ:— Ամեն ինչ պարզ է: Գնա, Երեմիա...

Եվ Երեմիան դնաց դրելու:

Մյուս օրը մազաղաթի վրա գրված հրամանը՝ թագավորի կարմիր առուցագրությամբ, սուրհանդակները տարան հայոց աշխարհի չհներում, ամրոններում ու քաղաքներում կարդալու:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Ամառային այդ երեկո կատաղի մի քամի էր մրրկում վաղաշատուում. իսկ նրա մայր եկեղեցու բակում տիրում էր մի տրտնջոց հուզում ու իրարանցում: Երեկոյան ժամերգությունն ավարտվել էր. հոգևորականները վոքրիկ խմբերով դուրս էին գալիս ընդարձակ ոալարկած բակը, բայց ըստ սովորության չէին շտապում լրջից խուսերը, այլ մնայլ ու հուզված խոսակցելով սպասում էին մյուսներին դուրս գալուն և գարձյալ ինչ-որ բանի, չնայած անախորժ քամուն, որ ոչ միայն ալեկոծում էր բակի ծառերը, այլև ահռելին վոշի երկինք հանելով, բերում-թափում էր մարդկանց դեմքին կամ, չարախինդ պտույտներ գործելով, չեզնում էր այն մարդկանց աչքերն ու բերանը:

Այդ վոշին... Պատից վերջին սրբանկարից վաղարշապատը տուժեց Հայաստանի բոլոր քաղաքներից ավելի, նախ որովհետև մայրաքաղաք, որ առաճին բարեկարգության ու վարքամության էր հասել հռոմեական դատախազության ու ճաշակի տեր Տրդատ մեծի օրով, երկրորդ՝ որպես քրիստոնեական կրոնի և եկեղեցու կենտրոն, ուր նստում էին հայոց կաթողիկոսները, պատրիկները և նրանց մեացած չարանախանձ հայ նախարար Մերուժան Արծրունին՝ իրենց ամբողջ կատաղությունն ու թույնը թափել էին Արշակունիների այդ մեծահամբավ ոստանի պեսին, հողին էին հավասարել Տրդատի կառուցած հռահռկ պալատը, նրան հարակից շենքերը, ավերել էին պալատական մեծարժան սենյակների դահլիճները, որ հեռվից՝ նեղդաշնակ մի կրասիծով շրջապատում էին արքունի շենքերն ու պարտեզները. ավերել էին մեծ իջևանատները, որոնք ընդունում էին արևելքից և արևմուտքից եկած խոշոր կարավանները, որ բեռնաբարձ բերում էին կերպաս, մետաքս և ամեն տեսակ զարդեր ու իրեր և մնում

ամիանելով՝ մինչև այդ ապրանքների վաճառքը և նորից ճանապարհ էին ընկնում, տանելով իրենց հետ Հայաստանի բուրդը, մեղրը, պղինձը և ոսկին: Պարսիկները չէին խնայել և քաղաքացիների լքած շատ մեծ ու փոքր տներ, մատնելով նրանց հրի ու սրի: Բայց նրանք հատուկ, առանձին մոլեգնությամբ վնասանքանդել էին Եկեղեցական շենքերը. սակայն որքան էլ ճգնել էին՝ չէին կարողացել խորտակել մայր եկեղեցին. նա իր քարտաշն, հոտառնտ պատերով դիմադրել էր նրանց, և նրանք, անկարող լինելով փլել նրան, այրել էին փայտաշեն դռներն ու տանիքը:

Բայց և այնպես ավերածությունը մեծ էր քաղաքում, ա՛յնքան մեծ, որ երբ Թեթև մի քամի էր բարձրանում,— ավերակների կավափոշին երկինք էր հառնում և հատատ չերտով ծածկում տանն ինչ. անդամ խաղողի այգինները, պարտեզների ծառերը ոչ միայն կորցնում էին իրենց կանաչ տեսքը, այլև բնանավորվում էին փոշով, մինչև որ մի նոր անձրև լվանում-մաքրում էր նրանց... Եվ այդ ժամանակ բարեպարգությունից ու շենքերից զրկված մայրաքաղաքը հազար տարվա ավերակի տպավորություն էր անում: Սակայն պետք է ասել և այն, որ վաղարշապատը, ճիշտ է, մայրաքաղաք էր, բայց միակը չէր: Իսկապես Հայաստանը չուներ մի մշտական ու անխախտ մայրաքաղաք. նայած տարվա եղանակին կամ քաղաքական հանգամանքներին՝ հայ թագավորները նստում էին այնտեղ, ուր հարմար էին տեսնում: Տրդատ մեծից հետո նրա որդի Խոսրով երկրորդն, օրենսդիր, իր համար չգիտց մի պատշաճ չինեց Դվինի բլուրի վրա և պատշաճ շենքեր, ու տարվա մեծ մասն անցնում էր այնտեղ, մտադրելով որ այդ նոր մայրաքաղաքը նա շրջապատել էր խաղողի նորատունկ այգիներով և բազմատեսակ ծառերի մի անտառով, որ ալեծածան ու ծփուն կանաչությամբ տարածվում էր Ազատ դեսի հռանքն ի վեր և նրա խորաձորով ու շրջակա բլուրներով ձգվում-գնում էր մինչև Մազաղ գավառը, մինչև Կոտայք և մինչև հովտաւն Գառնի: Խոսրովի հաջորդը՝ նրա որդի Տիրանը, մինչև կուրանալն ու թագավորելը նստում էր մերթ Դվինի, մերթ վաղարշապատ, մերթ Արտաշատ: Սրա որդի Արշակն արդեն նստում էր մինչև խոր դյուղաքաղաքներում և այդտեղից

կառավարում երկիրը: Իսկ Բիզանդիայից նոր վերադարձող Պապը և նրան ուղեկցող իշխանները, տեսնելով վաղաժամ այդ ավերանքը— դեռատես համարեցին անվնաս մնացած Դվինը՝ իր ընդարձակ ու դեղեցիկ պալատով: Ներսեհին նույնպես խորհուրդ տվին, որ սա ևս իր նիստը տեղափոխի Դվին, ուր անվնաս ու կանգուն էին մնացել թե եկեղեցական շենքերը և թե եկեղեցին, որ պարսիկները դարձրել էին մզկիթ: Սակայն Ներսեհը կաթողիկոսը չհամաձայնեց թողնել կաթողիկե մայր եկեղեցին և իր հայրերի ամենազոհական նստավայրը: Նա անմիջապես, կարճ մի ընդհատում, նորոգել տվեց ոչ միայն երկհարկանի վեհարանը, եկեղեցական շենքերն ու վանականների խցերը, այլև եկեղեցու դռները ու տանիքը, ավելի հատատուն, քան առաջ էր, և եկեղեցական զարդերն ու սրահները, որ թաքցրել էին սպահով տեղեր, հանեցին և նորից բարեզարդեցին նրան:

Եվ հիմա այդտեղ՝ մայր եկեղեցում ամեն առավոտ և երեկո ժամերգություն էր լինում և պաշտամունք, որին երբեմն ինքնակալում էր և Ներսեհ կաթողիկոսը—Ներսեհն ինքը: ու ժամերգությունից հետո բոլորը՝ արեղա, սարկավագ, վարդապետ թե եպիսկոպոս դանդաղաքայլ, յուրաքանչյուրն իր աստիճանի արժանապատվություններ պահած, քաշվում էին երեսից խուցերը՝ հանգստանալու կամ ձեթի կանթեղի լույսով սուրբ գիրքը կարդալու՝ քրիստոնեական վարդապետության մեջ հմտանալու համար:

Բայց այդ երեկո, ամառվա այդ քամոտ երեկոյին, երբ հանկարծ սկսված քամին փոշու ամպեր էր բարձրացնում վարդաշատ ավերակներից և, փողոցներում պտտելով, տարտնջում էր քաղաքի ու այգիների վրա, այդ խավ ժամին ամենապարապատար ու բարձրաչեն մայր եկեղեցու ընդարձակ սալարկած բակը լցվում էր հուզված հոգևորականներով. ոմանք երեսի և պարեդառները զգել էին զոտիներով, ոմանք թողել արձակ, ոմանք դրել էին սրածայր կնգուղ, ոմանք առանց կնգուղի էին՝ դվխաբաց ու երկարամազ: Չնայած պաշտամունքը վաղուց էր ավարտվել եկեղեցում, չնայած անախորժ, փոշաբեր քամուն— ներանք բակում ցրված և մեծ ու փոքր խմբերի բաժանված, քա-

մաց ալեկոծվող ծառերի տակ խոսակցում էին հուզված, արտահայտվող հուզված ձայնով ու շարժումներով և անսովոր մտայղ ու տրտում դեմքերով: Կարելի է ասել՝ այդտեղ էր մայր եկեղեցու ողջ միաբանությունը՝ իր լոլոր եպիսկոպոսներով, վարդապետներով, աբեղաներով ու սարկավագներով, ինչպես օրինակ, պարթևահասակ, ծաղկած մորուսով ու ալիքներով Հակոբ եպիսկոպոսը, որ հայտնի էր որպես բանիբուն քարոզիչ, ներթափոր եղկալար ձայնով վարդապետը, Գրիգորիս Թարգմանիչը, որ ասորերենից կատարած թարգմանությունների համար կոչվում էր և Ասորի, Բարսեղ երգեցողը, Զենոբ զորավարը (այդպես կոչվում էր, որովհետև իրոք եղել էր զորավար, բայց մենաստան մտնելուց հետո էլ պահպանում էին նրա հին կոչումը), Անտոն կարնեցի գուշակողը, Ասովածատուր Մաժոխը, Հովսեփ խոտաճարակը, Մարտիրոս Մոսակերը, Հովհաննես «երկար» և Հովհաննես «կոշիկ» վարդապետները, այդտեղ էին անգամ Քրիստափոր մոռանապետ վարդապետը, որ սովորաբար ժամերգության խոկ չէր մասնակցում, և Սիմոն հացաբերը, որ այդ ժամին երբեք դուրս չէր գալիս միաբանության սեղանատնից: Եվ շատ, շատ ուրիշներ:

Սովորական միաբաններին թիվն ավելացել էր ուրիշ մենատաններից եկած հոդևորականներով, որոնց մեջ աչքի էր ընկնում Մարուքե ճգնավորը, մի նիհար ու երկար, մազեղեն հագած տղամարդ, որ ապրում էր Արագի լեռան մի քարայրում և հետը մաճ էր ածում այծի մազերից հյուսած մի պարկ, որի մեջ պահում էր իր ուտելիքը՝ պտուղներ և արմավ. Մինաս միայնակյացը, որի մասին ասում էին, թե վին տեսնելիս երեսը ծածկում է մինչև նրա անցնելը. Մեղրիկ վարդապետը, որ ամբողջ կյանքը չորացարակ էր՝ ապրում էր միայն հացով ու ջրով, և շատ ուրիշ միայնակյացներ ու ճգնավորներ, բոլորն էլ նիհար, չգուտ, արևից ու քամուց կարծես կարծրացած: Ճգնավորների մեծ մասը միահանդերձ էր—ունեին մազեղեն մի քուրձ կամ հին մի պարեզոտ՝ գյուղական՝ գետնատրոր չալից կարած, որ իր հղչոտությամբ քիչ էր տարբերվում քուրձից: Սրանցից ոմանք հագել էին հաստ պարանե գոտիներ և այնպես պինդ էին պրկել մեջքները, որ տում էին զոպում է ուտելու ախորժակը, հետև-

վաթար և կանկուխյուններըը, որ երբեմն վերք էր առաջացնում դոտկատեղում: Սրանք ոչ միայն սակավակեր էին և ժուժկալ, այլև մարմնական ուրախության այս գործը վեր էին ածում մասավոր տանջանքի, յուրաքանչյուր պատառի հետ հեչում էին մահն ու դատաստանը, և դրանց սարսափն ներքո խեղդում կերակրի ախորժակը և կամ պատառների թվով աղոթք էին ասում կարճ, որ «անպարապ լինեն աղոթից»: Նրանցից ոմանք երեկոյան նվիրում էին նուշնիկ «քաղցի, ծարավի և բանջարաճաշակ կենաց» այսինքն ուտում էին միայն բանջարեղեն կամ սրմանիք:

Իսկ վանքերում ապրողները, ընդհակառակը, նրանցից տարբերվում էին թե երևոյթ հագուստներով և թե մանավանդ տեսքով: Սրանք ճգնավորների նման միահանդերձ չէին և, բացի այն, որ ունեին ամառանի և ձմեռանի հագուստներ, հագել էին մեծ մասամբ սև, ոմանք նաև շատ աղնիվ կտորներից պարեզոններ, որ հասնում էր ծնկներից վար. ոմանց պարեզոնները թեղանիքով էին, ոմանցը՝ անթեղան. ոմանք կապել էին թանկագին մետաքս կամ կաշի գոտիներ, ոմանք թողել արձակ և վրաներն առել կերպաս կամ հասարակ մեհնոց, և այդ թիկնոցները կամ չուրջառները կոճկել էին արծաթե ու ոսկե ճարմանդներով: Եպիսկոպոսներից ու վարդապետներից շատերը դրել էին խաչանիշ կնդուղներ, իսկ սարկավագները միայն սև կլոր գդակներ: Եպիսկոպոսներից ու վարդապետներից ոմանք դեմեցկության համար մորուքները հյուսել էին երկճյուղ՝ ատրակոն ձևով. կային և այնպիսիները, որ միայն մի հյուս էին արել և թողել կուրծքի վրա: Բայց մեծ մասամբ թողել էին լայն մորուքներ, որ ծածկում էր նրանց կուրծքը և հիմա ծածանում էր քամուց:

Բակը հետզհետե լցվում էր և խոսակցությունը քանի գնում դառնում էր աղմկալի: Ամենից բարձր խոսում էր մի բարձրահասակ, նիհար, հրաբորբ աչքերով ու սև մորուսով վարդապետ հոգևորականների մի մեծ խմբում, որ հավաքված էր ծառերի տակ:

— Ես լինքս, սուրբ հայրեր, ես լինքս ականատես և ականջալուր եղա, թե ինչպես չինական ամբոխը հրճվում էր կոկոզաշիով՝ այդ հրամանի առթիվ: «Էլ տառապորդ, պտղի չկա՛,

չկա՞» չարախնդում էին իմ երեսին նվովից արմատները, սուրբ հայրեր: «Շուտով թագավորը վանքերի հողերն էլ պիտի առ մեզ, չուտով» ասում էին իրար ու չարախնդում դալրճյալ: Իսկ չինական պատավ կանայք կանչում էին մեր սարկավագների հասից. «Բրխատոսի ավազակներ, մալուխ փախցնողներ»... Ա,հա մեր մանուկ թագավորի գործը... Մի՞թե սուրբ հայրապետը տակավին չէ լսած այս...

Նա վերջացնելով՝ խոր մի հառաչ արձակեց և գլուխը թեքից դնով աջ ուսը. երևում էր հեռու տեղից է եկել, հոգնած է և հանգստության մեկի հուղված:

Երբ նա վերջացրեց՝ ամեն կողմից լսվեցին ախուր և վրդով ձայներ.

— Վա՛յ մեզ, վա՛յ մեզ. աերը բարկացել է մեզ վրա, տհաս մի թագավոր տալով մեզ:

Մի ուրիշ մեծ խումբ, որ քամուց և փոշուց պատսպարվել էր վանքի պատերի տակ, տարեց վարդապետներն ու եպիսկոպոսները նույնպես խոսում էին Պապի մասին, իսկ աբեղաները ու սարկավագները, չհամարձակվելով մոտենալ մեծերի այդ խմբին՝ լսում էին նրանց հեռվից հարդանքով ու պատկառանքով:

— Այո, սուրբ հայրեր, պատուղը ծառից հեռու չի ընկնում, —ասում էր Դավիթ եպիսկոպոսը, ամենքի կողմից հարգված մի ծերունի, որ տեսել էր Տլրան և Աբշակ թագավորների հպատակությունը և մինչև դժգոհ էր նրանցից:

— Բայց սա իր հորից էլ անցավ, հայր սրբազան,— նկատեց նրան մորուսով, ծաղկատար դեմքով մի կարճ վարդապետ, որ խոսակիցներին լավ տեսնելու համար գլուխը պահում էր շարունակ ետ թեքած:— Նրանք դեմ էին գնում Քրիստոսի եկեղեցուն և այն կարգին, երբեմն անում էին սուրբ հայրապետին, բայց սա, սա... մեղա ասողած, սա արդեն չար է մտածում և ուզում է ամենքիս զրկել հացից հանապազօրյա...

— Ոչ մխայն այդ, սուրբ հայր, ոչ մխայն այդ,— առաջ եկավ հյուսած մորուսով մի երկար վարդապետ՝ բարակ ծղրտան ձայնով, գլխի կնդուղը քամուց ծռված և մեկնոցի վեճերը հաճախած:— Պապը նոր մի Հուլիանոս է. նա ցանկանում է, երևի,

քրիստոնեության փոխարեն հեթանոսություն. այո, հեթանոսություն; սուրբ հայրեր, հեթանոսություն սկզբ և պարիր...

Հավաքվածները երեսները խաչակնքեցին անխտա եռանդով:

— Հայր սուրբը ճշմարիտ է նկատում,— նորից միջամտեց ծայրահասակ դեմքով կարճ վարդապետը՝ դլուխը մի չոր ևս պահած:— Այդ երեսց այն իրախճանքի օրը, երբ ամբոխը Դվինի հրապարակում աղմկում ու պարում էր արբշիռ, և եկեղեցու հայրերին սոխում էին գինի խմել և պարել իր հետ, իսկ դահիճները երգում էին հեթանոսական պաղչոտ ու չամբչոտ երգեր: Այո, հայրեր, երբ լսացար այս՝ ասացի՝ «Այս մի նոր Հուլիանոս է: Ելի, սհատխանիկ, այս հրամանը: Դրա՞ նպատակը ո՛չ այլ ինչ է, բայց եթե...

— Մենք սահմանին չդիտենք ինչ նպատակ ունի թագավորը,— ընդհատեց վարդապետին Դավիթ եպիսկոպոսը սխալ մի ձայնով.— Միակն այս հրամանը ոչինչ լավ չէ գուշակում, հայրեր:

— Հրամանն առայսուցում է միայն տհասություն,— հարեց մի դեր, կլոր եպիսկոպոս, որ նոր մտածել և վրդովված լսում էր խոսողներին: Դա Վահանդի Կյուրեղ եպիսկոպոսն էր, որ մի սաստիկ էր, ինչ նիհել էր վանք, բայց մնկնելը հետաձգել էր թագավորի հրամանը լսելով:— Ես տհաս եմ ասում, որովհետև մեր թագավորը, արձակելով այդ հրամանը, չի մոածել, որ դեմ է դնում Տրդատ մեծի օրենքին, որ հողերը կալվածներ է շնորհել եկեղեցուն, տուրքեր է սահմանել նրա համար՝ որպես հենասական ապրյուր գոյության:

— Այո, այո, ճշմարիտ է ասում արբազան հայրը,— համաձայնեց Դավիթ եպիսկոպոսը:— Մեր թագավորն այնքան երիտասարդ է, որ չի մոածել այդ մասին: Պալատում էլ, երևի, չկան մարդիկ լանիմաց, որ հասկացնեն հետևանքները սպասելի...

— Կան, արբազան հայր, կան—նորից միջամտեց ծայրահասակ դեմքով կարճ վարդապետը:— Դու չդիտես, երևի, որ նրա մոտ կան երկու խմաստուն ու բանիմաց պատանիներ, որ ուսանել են իրը Բիզանդիոնում, բայց...— Նա լռեց եչանակալից, որից երևում էր, որ չի ուզում ավելորդ խոսքեր ասել:

— Դու, սուրբ հայր, նկատի ունես Բաթ Սահաուոնո՞ւն և Ներեմիա Ամաուոնո՞ւն,— հարցրեց մի անվստահ ձայն նոքին շարքից:

— Այո՛, այո՛, Ներանք, Ներանք,—աշխուժացավ նորից կարճ մարդապետը:— Բիլանդիոնում ուրիշ բան չենն կարողացել ուսանել, բացի մոլորություններ: Ներանք են ահավասիկ, որ Թագավորի հետ համախորհուրդ տվել են այդ հրամանը:

— Սպարապետը լիներ այստեղ՝ նա չէր համարձակվի անել այդ,— ասավ մի նոր ձայն:

— Հարկավ, հարկավ: Սպարապետը խելացի է և հեռատես,— հավանություն տվին մի քանի ձայներ:

Հավաքվածներից բավական հեռու, ծառերի խորքում, մութի մեջ խոսակցում էր մարդապետների մի այլ խումբ, բայց մյուսների պես ոչ թե բարձր, այլ կիսաձայն, կարծես գաղտնի:

— Թագավորն իրավացի է,— ասում էր մեկը:— Դանիել Նոսկիսոպոսը ազահ է և չար: Նրա ազահությունն է պատճառը, որ Թագավորն արձակել է այդ հրամանը:

— Նա չի հասկանում, որ Քրիստոսի աշակերտները կարիք չունեն կալվածի, աշխարհային,— ասում էր մի ուրիշը:—Մենք պետք է ազոթենք միայն՝ մեր հոգու և ժողովրդի փրկության համար...

Մի երրորդ խմբում, որ հավաքված էր մեծ ընկուզենու տակ, խոսում էին Թագավորի վերջին ընթացքության մասին, թե ինչպես նա ընկերների հետ ծպտյալ մտել է կուսանոց և հանդիմանել մայրապետին:

— Իսկ ինչո՞ւ, ինչո՞ւ համար,— հետաքրքրվում էին շատերը միասին:

— Ինչո՞ւ համար: Ասեմ պարզ և անթաքույց: Ցանկացել է դիշերել կուսանոցում իր ընկերների և զինվորների հետ:

— Ի՞նչ խայտառակություն... Ամո՛թ և խայտառակություն...

— Թագավոր և այդպիսի վարմունք: Մեղա՛, մեղա՛,— խաչակնքեցին համարյա բոլորը:

— Եվ նկատեցեք, հայրեր, ծպտյալ,— ընդգծեց պատմողը

առանձին մի խորհրդավորությամբ,— ծպտյալ, որ ծածկի իր արարքը քաոսնելի: Հասկանո՞ւմ եք: Ծպտյալ...

— Վա՛յ քեզ հայոց աշխարհ, վա՛յ քեզ,— հառաչելով տընքաց մի քոլոթովին ծեր, կիսակույր եպիսկոպոս, որ չհոդնելու համար մեջքը հենել էր ընկուզենու բնին և լսելիքը լարած անշարժ լռում էր խոսողներին:— Վա՛յ քեզ...

Մի վայրկյան ծանր լռություն լինյավ, որ թվում էր խոսակցությունը վերջացավ ալլևս, բայց հանկարծ լսվեց մի անհամարձակ ձայն, որ դիմեց կուսանոցի մասին պատմող վարդապետին:

— Սակայն, հայր Գեորգոս, ես քոլոթովին այլ բան եմ լսած այդ կուսանոցի մասին: Ասում են, չգիտեմ որքան պատշաճ է պատմել,— ընդհատեց նա շուրջը նայելով, կարծես վստահ չլինելով որ իր ասածը կլսեն:

— Ասա՛, ասա՛, հայր Հուսիկ,— ասավ այն վարդապետը, որ պատմում էր Թագավորի ծպտյալ արարքը:— Ասա՛, ես սիրով կլսեմ:

— Լսել եմ, որ Թագավորը ծպտյալ մոտեցել է կուսանոցին և խնդրել, թե կարելի՞ է տեսնել մենաստանը: Մայրապետը բարկացել է հույժ և ջրել, չիմանալով, որ դա Թագավորն է: Ու այն ժամ Գայլն ասել է, թե լինչո՛ւ համար են այս դեռատի աղջիկներին հավաքել այստեղ. պետք է ջոդնել, ասել է, դնանց, ամուսնանան և ընտանիք կազմեն: Այսպես...

— Սրբապի՛ղծ խոսքեր... սրբապի՛ղծ խոսքեր,— լսվեցին ամեն կողմից:

— Եվ այդ ժամ ահա,— աչխուժացավ ամաչկոտ հայր Հուսիկը,— այդ ժամ ահա մայրապետը բարկանում է և ասում: «Հեռացիր, որ քո ասույածընդդեմ խոսքերը չհասնեն Քահանայապետի ականջը»... Ու դրանից նեղացած, ասում են, հրամայել է արձակել, որ վերացնեն տաճանորդն ու պաղին:

— Խուլած երեխայի վարմունք,— նկատեց մեկը:

— Նեղացել է մայրապետից, վրեժ է առնում հայրապետից,— ձայնակցեց մի ուրիշը հեգնոտ:— Անխրատ վարք...

— Ոչ մեկն հայրապետից,— ուղղեց մի երրորդը,— ամբողջ եկեղեցուց և նրա սպասավորներից:

Ու մի առժամ խռովակիցներից յուրաքանչյուրը վրդովված իր կարծիքն էր հայտնում դեպքի մասին, դատապարտելով Թադեվոսի վարմունքը:

Բայց այդ միջոցին մեկը հարցրեց.

— Սակայն, հայր Պետրոս, այդ լինչպես խմացան, կամ մայրապետն ի՞նչպես խմացավ, որ ծպտյալը Թադեվոսն է եղել:

— Այդ մայրապետի գաղտնիքն է,— ասավ հայր Պետրոսը և լռեց: Իսկ մյուսները ենթադրեցին, որ մայրապետն իր մարդկանց ուղարկել է նրա ետևից՝ նրա ո՛վ լինելը պարզելու, և պարզել է, երևի:

— Բայց արդյոք հայրապետը գիտի՞ այս ամենը,— հետաքրքրվեց մեկը նորից:

— Հայրապետը չգիտեմ, բայց հայրապետի դպիրը հայր Փավստոսը գիտի: Ինչ առաջ Դանիել սրբազանն ամենը պատմեց նրան, թե ինչպես իր սարկավագներին թույլ չէր տվել առաքյալի շինականներին բերել վանք:

— Ա՛ա,— լսվեցին բացականչություններ:— Դանիել սրբազանն այստե՞ղ է:

— Ուրեմն եկել է արդեն:

Դանիել եպիսկոպոսը Արաքածոտնի ս. Հաչ մենաստանի վանահայրն էր, որ հայտնի էր իր խստակրոն կենցաղով. իր հոդևոր կոչման առաջին տարիները նա օրերով մնում էր ծարավ, սոված, միշտ խարազանազգեստ, երբեմն ոտնկայս ու անքուն: Ուտում էր միայն բուսեղեն ու պասեղեն, կենդանի արարածի միսն ուտելը համարելով գազանություն. սկզբում իր աշակերտներին էլ սովորեցնում էր նույնը: Բայց նա ավելի հայտնի էր նրանով, որ լինելով ասկավաթիվ վաղ դրացի հոգևորականներից մեկը՝ վերջին տարիները չէր կարդում և ոչ մի գիրք, դրտնելով թե դրքերը մոլորության մեջ են գցում մարդկանց և նրանց հոգին լեցնում կասկածով ու ավելորդ մտքերով.— Միակ միտքն ինքը սատանա է կամ սատանայի ծնունդ,— ասում էր նա:— Նոր մտքեր ունենալ՝ նշանակում է նոր տանջանք, նոր մեղք: Եվ գտնում էր, որ պետք է ոչնչացնել միտքը, որովհետև դրանից են ծագում բոլոր չարիքները: Նա կարծում էր՝ եթե մարդը չունենար միտք— կլիներ երջանիկ արարած: Ինչ վերա-

բերում է դրքերին՝ նա կարծում էր, որ աստծու խոսքը չի կարող լինել գրքի մեջ. նա կա և պիտի լինի յուրաքանչյուր մարդու սրտում, և ով պահում է աստծու պատվիրանները, աղոթում է, պատում և խեղդում իր ցանկությունները— նա կհասկանա աստծու խոսքը: Այսպես էր նա հայտնի առաջնորդը, երբ հոգևորական կյանք էր վարում, բայց երբ նշանակվեց ս. Աչի վանահայր եպիսկոպոս՝ նա միանգամից փոխեց իր հոգևորական կենցաղը: Ճիշտ է, հագնում էր մազեղեն, խստակենաց էր ու պահանջկոտ իր միաբանության մեջ, բայց մենաստանը և նրա բնակիչներին լավ պահելու համար անում էր ամենը՝ ինչ հնարավոր է: Ամենից առաջ նա էր հավաքում իր վանքին հատանելիք ցորենը, մրգերն ու մյուս տուրքերը այն հողերից, որոնք կապված էին իր մենաստանին: Որքան առաջներում խիստ էր իր նկատմամբ, հիմա նույն խստությունը գործադրում էր իր մենաստանում: Պարտապանց հոգևորականին, լիներ սարկավագ, աբեղա թե վարդապետ, պատժում էր հացից զրկելով, իսկ տուրքերից ու պտղից հրաժարվող կամ ուշացնող հինականներին մինչև բռնատարկում էր, որ չարհամարհեն աստծու մարդկանց, որոնք միշտ նրանց մասին են հոգում ու աղոթում:

Ս.յս Դանիել եպիսկոպոսն էր ահա, որ իր մենաստանից եկել էր կաթողիկոսին դանդատվելու, թե ինչպես թագավորն արձակել է պարտապանց հինականներին և թե ինչպես սարկավագներն ու աբեղանները վախենում են հիմա գնալ հինները՝ տասանորդ ու պտղի հավաքելու: Նա մինչև վանքի բակը մտնելը չէր իմացել թագավորի հրամանի մասին: Նոր միայն լսած լինելով այդ՝ նա հիմա իր երկար հասակով, վարդապետների ու եպիսկոպոսների մի խմբի մեջ կանդնած խոսում էր այդ կարգադրության մասին:

— Մեր մեղքերը շատ են, սուրբ հայրեր,— ասում էր նա խիստ չոր ու խզված ձայնով,— և թագավորը հիմա նոր մեղքեր է բարդում մեր հոգուն: Նա չի հասկանում, որ ամբողջ հայոց աշխարհը մենք ենք պահում մեր աղոթքներով ու ճգնությամբ: Եթե հինականի բերքը լավ է, անասունը չի սատակում ցավից և ինքն աղատ է երկնքի պատուհասից—դրա համար նա մեզ, մեր աղոթքներին է պարտական: Եվ եթե դրա

համար տալիս է տառանորդ մի չնչին կամ պողպ— մեծ չնո՞ր է մէջը: Շենականը սիրով կատարում է իր պարտքը առածու և եկեղեցու առաջ, բայց Թադավորն ահա իր հրամանով դալիս է արդելելու: Ինչո՞ւ, հարցնես, ինչո՞ւ...

— Հապա այն, արքային, որ ասել է «Հոգևորականը զործ չունի հողի հետ, նա Թող ադոթի իր հոգու համար»,— ասավ մեկը զայրացած:

— Ասել է ավելի վատ բան, Թե «առողջ մարդը պետք է զինվոր լինի և ոչ Թե արևցա»,— խոսեց մի ուրիշը:

— Միայն այդ չէ,— շարունակեց առաջինը:— Ես լսել եմ, որ Թադավորն ասել է՝ Թող եկեղեցին ապրի իր կալվածներով, իսկ տուրքերով պետք է պահել բանակը:

— Իսկ ես լսել եմ, որ նա ուզում է հարքունիս զրավել նաև եկեղեցու կալվածները, որ եկեղեցին խոպան զրկվի հասույթներից և քրիստոնեությունը վերանա ինքնին:

Եվ հանկարծ բոլորը խաչակնքեցին.

— Մեղա՛, մեղա՛...

Ու ամենքը խոսեցին միասին:

— Որտեղի՞ց են արդյոք այդ անիրավ, չար մտքերը...

— Երևի հեթանոս հուն մատենադիրներից:

— Ահավասիկ գրքի վնասը,— ունքաց Դանիել արքայանը:— Ոչ, հայրեր արքայան: Գրքերն, իրոք, մոլորեցնում են մտքերը և ավելացնում հանցանքները: Միայն, իհարկե, սուրբ գիրքն է, որ մաքրում է հոգին,— ավելացրեց նա անմիջապես, մտածելով և վախենալով, որ իրեն կմեղադրեն սուրբ գիրքը չհիշելու համար, ինչպես եղել էր մի քանի անգամ:

— Իսկ Պապն, ասում են, սուրբ գիրք չի կարդում՝ երբեք, այլ Բիզանդիոնից բերած հեթանոս գրքեր միայն,— ունքաց մի ուրիշը:

— Ինչպես և իր զավիր Երեմիան:

— Եվ Բաթ Սահառունին: Լսել եմ, որ գրանք երեքը միասին նստում են ու կարդում հեթանոս գրքեր՝ հունաց և լատինաց լեզվով:

Ամբի մեջ և նրա շուրջն եղած վարդապետներն ու ստվարաձեռները նորից խաչակնքեցին խմբով.— «Մեղա՛, մեղա՛...»

Իսկ մի ծերունի վարդապետ բացականչեց տխրությամբ. «Օ՛խ, օ՛խ, հայրեր, ինձ թվում է՝ քանդվում է աշխարհը հայոց... Մի՞թե հայրապետը չէ լսել այս ամենը...

— Պետք է հայտնել հայրապետին, պետք է հայտնել,— կրկնեցին մի քանի ձայներ:

— Ես դրա համար էլ ժամանել եմ, հայրեր,— ասավ Դանիել արքեպիսկոպոսը և ուզեց շարունակել, բայց հանկարծ տաճարի մի խրարանցում ընկավ մի խառնաշփոթության մեջ:

— Ծաղ արքազանը եկա՛վ, Ծաղ արքազանը եկա՛վ,— կանչեցին ոմանք ու վազեցին դեպի պարսպաշուրջը:

Այդ անունը լսելով՝ շատ աթեղաներ, սարկավագները, նույնիսկ տարեց վարդապետներ պոկվեցին տեղներից ու դնացին Ծաղ եպիսկոպոսին դիմավորելու և լսելու, թե ինչ կասի նա Թագավորի հրամանի մասին, որովհետև գիտեին նրա խիստ բնավորությունը և Թագավորներին հանդիմանող համարձակությունը. մյուս կողմից՝ չէ՞ որ նա իշխանավոր էր, կաթողիկոսի մշտական տեղապահը, Դվինի և Բագրևանդի եպիսկոպոսը: Հետաքրքրական է ինչ էր մտածում Թագավորի հրամանի մասին: Լսել էին, որ Ձիրավի ճակատամարտից հետո Պապի «հաղթության խրախճանքի» Դվինում շատ էր զայրացրել նրան, նույնիսկ այն աստիճան, որ Ներսեսից պահանջել էր հանդիմանել Թագավորին, սակայն կաթողիկոսը բարվոք էր համարել «մեղմ խրատն ու զգուշացումը»: Հետաքրքրական էր, թե հիմա ինչ կասեր Ծաղ արքազանը:

Երբ նրա գալուստը լսողներն ամեն կողմից շտապեցին դեպի պարսպաշուրջը՝ տեսան, իրոք, հայր Ծաղը գալիս է՝ մի քանի սարկավագներով ու վարդապետներով շրջապատված, որ տեղ գնալիս սովորաբար ուղեկցում էին նրան ձի նստած: Դրանց մեջ էր և բարձրահասակ Սողոմոն հայր սուրբը: Մինչ ուղեկիցները ձիավորված էին, Ծաղ արքազանն, ըստ սովորության, ավանակի վրա էր, հասարակ հագված ու մոայլ. մոայլություն էր կաթում նրա խիտ, երկարամազ հոնքերից ու տակավին սև երանգը պահած մորուսից, որ հորդ հոսանքով ծածկում էր նրա կուրծքը, բայց հիմա կարծես փոշոտ էր հագուստների նման: Սովորաբար ոչ-ոքի թույլ չէր տրվում ձիու կամ ավա-

նակի վրա մանել եկեղեցու պարիսպներից ներս, բայց Խաղը, լրջին տեղապահ, վայելում էր այդ արտոնությունը դեռ այն օրից, երբ ներսեսի աքսորի ժամանակ ինքն էր վարում կաթողիկոսական գործերը:

Հասնելով բակի մեջտեղը՝ Խաղը, առանց դեմքի արտահայտությունը փոխելու, անխոս, իր սարկավագների օգնությամբ ձիուց ավանակից և պարեզոտն ուղղեց... Մինչ նա կարգի կբերեր իրեն՝ ցուլին հենած մի ծեր վարդապետ համարձակ մոտեցավ նրան և հետաքրքրվեց.

— Հայր տեղապահ, Խաղ սրբազան, ինչո՞ս արդյոք մեզ հասած նոր դժբախտությունը:

— Գիտե՛մ,— ասքաց Խաղ սրբազանն այնպես խորն ու երկար, որ ամենքը նրա այդ մի հատիկ բառի մեջ զգացին թե վիշտ, թե զայրույթ և թե վճռականություն:—Գիտեմ,—կրկնեց նա քայլեր անելով:

— Իսկ ի՞նչ պիտի անենք, սրբազան հայր,— շարունակեց հետաքրքրվել մխամիտ ծերունին ապավեն ու նեցուկ փնտռողի նման, դիմելով իր հեղինակությանը:— Ի՞նչ պիտի անենք:

— Ի՞նչ,— ուղղվեց հանկարծ Խաղ սրբազանը, և այդ վայրկյանին նրա աչքերը ցոլացին բռնկած կայծերի պես:— Այն, ինչ պարտավոր ենք անել...

Նրա ձայնը խրոխտ էր և վճռական— թվաց նա դիտմամբ բարձր ասավ, որ ամենքը լսեն: Եվ, իրոք, նրա խոսքը կարծես ոգեշնչեց շատերին, ու ամենք ձայնակցեցին անմիջապես:

— Ճշմարիտ է ասում սրբազան հայրը, ճշմարիտ է ասում:

— Պիտո է ստիպել, որ Թագավորը ետ վերցնի իր հրամանը:

— Բայց Թագավորը կլսի՞ արդյոք,— կասկած հայտնեց մի ձայն:

— Մի՞թե Թագավորը ետ կվերցնի իր հրամանը,— հարեց մի ուրիշը:

— Եվ ինչո՞ւ ոչ,— լսվեց մի այլ ձայն:

— Բայց պիտո է խոսել հայրապետի հետ, պիտո է լռանել...

— Խոսիր, հայր սրբազան, խոսիր Երանելիի հետ,— խնդրեցին այլ ձայներ:

Այդպես այս ձայներով ուղեկցված դնաց դեպի վեհարան: Նրան միացան անվանի եպիսկոպոսներ ու ավագ վարդապետները՝ Ներսես Հայրապետի մոտ գնալու: Ու սրանց հետևից բավի հոգևորականների համարյա մեծ մասը մինչև վեհարանի մուտքը, հետաքրքրված, թե արդյոք ինչ պիտի խոսեն ու որոշեն Հայրապետն ու եպիսկոպոսները այդ ծանր խնդրի մասին:

***

Մինչ բակում տեղի էին ունենում այս խոսակցությունները ու լուրանցումը,—վեհարանում, որ բավի հետու ծայրումն էր, կաթողիկոսի դպիր կամ ինչպես իրենք վանականներն էին ասում, դպրապետ Փավստոս հայր սուրբը զեկուցանում էր ծերունի հայրապետին՝ Պապ թագավորի հրամանի մասին այն ընդարձակ սրահում, ուր դրված էր կաթողիկոսի դահը և որին միաբաններն ասում էին և տաճար: Դա, քառասուն–հինուն կանգուն երկարությամբ և երեսուն կանգուն լայնությամբ դահլիճ էր՝ բարձր առաստաղով, պատերի մեջ նիշեր, ուր դրված էին մարմարե փոքրիկ պատվանդաններ՝ վրանները արծաթ կամ ոսկի խնկամաններ ու մագաղաթյա մատյաններ: Կային և մեծ պատմեջ պահարաններ՝ մեռաքս կամ թավիշ վարագույրներով ծածկված: Սակայն այդ սրահը, ուր կաթողիկոսն ընդունում էր ոչ միայն հոգևորականներին, այլև թագավորների, իշխանների ու դեսպանների— շատ պարզ էր, չուներ հատուկ պարկեր ու շքեղություն: Եվ դա ոչ թե նրա համար, որ եկեղեցին աղքատ էր կամ ճաշակից զուրկ. ընդհակառակը՝ եկեղեցին ավելի հարուստ էր, քան արքունիքը. այլ այն պատճառով, որ մի կողմից Երան մասամբ կողոպտել էին պարսիկները, մյուս կողմից կաթողիկոսն ինքը, աքսորից վերադառնալուց հետո, չէր ցանկանում ապրել նախկին շքեղության ու փափկության մեջ կամ շրջապատել իրեն շլացուցիչ կահերով ու կարասիներով: Տաճարի ընդարձակ մոզաիկ հատակին փռված էր միայն մի լայնաձակ գորգ, պատերի երկարությամբ դրված էին պարզ գահավո-

բակներ՝ գորգերով ծածկված, և եռոտանի խորաքանդակ նշուշկներ ու աքոռներ՝ թիկնակով ու բազկատեղերով։ Կային այլտեղ նաև եռոտանի պղնձե հնգաստեղ, յոթնաստեղ կանթեղներ՝ պատերի տակ ու անկյուններում դրված և պղնձաճաշյլ ջահեր առաստաղից կախ, որ վառում էին հազվադեպ, մեծ դուքն առներին կամ երբ արտակարգ այցելություն էր լինում գիշեր ժամանակ՝ օտարերկրյա դեսպան էր գալիս կամ նվիրատու։

Հիմա, երբ արդեն երեկո էր և սրահում դրեթե կիսամութ՝ նեղսը և ոչ մի կանթեղ չէր վառվում տակավին, և Փաշան հայր սուրբը աչքերն ի գուր կկոցելով և թեթևակի խռնոտհումներ անելով՝ հուզված, բայց հեղ ձայնով զեկուցանում էր հայրապետին այն ամենը, ինչ լսել էր այդ օրը։ Եվ Ներսեսը նստած էր գահին, որ մեծ ու խոր մի բազկաթոռ էր՝ թիկնակին ու նստավայրը գորգապատ, բաղուկներն ու եզրերը ասղաքով և ձկան ատամներով եզրազած։ Ներսեսն այդտեղ նստում էր ոչ միայն պաշտոնական ընդունելությունների ժամերին, այլև իր դպիրի կամ որևէ եպիսկոպոսի զրույցը լսելիս, և դա ոչ թե իշխանասիրության հետևանքով, այլ նրա համար, որովհետև այդ գահը ուներ հենվելու և թիկն տալու մեծ հարմարություն, քանի որ ցանկալի էր նրա ծեր, հոգնած մարմնին, մանավանդ ոտների տակ՝ գորգի վրա դրված էր գորգերես մի բարձ, որ հանգստացնում էր նրա շուտ հոգնող ոտները։ Բազկաթոռի ետև, կաթողիկոսի գլխավերև՝ պատի վրա կախված էր մի մեծ ամբ Հայոց խաչ՝ վրան բարձրաքանդակ Հիսուսը, արվեստի մի նուրբ գործ, որ Հայոնի վաճառական Տիրոցը, ղեռ Ներսեսի աքսորից առաջ, Բիզանդիոնից բերել էր կաթողիկոսին նվեր՝ մի թանկարժեք ու հին քահանայապետական շուրջառի հետ միասին, որ նա քյոռմ էր ուսերին, երբ մեծ տոներին իջնում էր եկեղեցի պաշտամունքի, շրջապատված եպիսկոպոսների ու վարդապետների մեծ մի խմբով, որ առաջնորդում էին նրան բուրվառելով ու երգելով։

Հիմա նա միայն կապույտ դիպակե պարեգոտով էր, մեջքին նուրբ շալ գոտի, գլխին մետաքսյա կլոր մի գդակ, որ ծածկում էր նրա լերկ գագաթը, կողքերից թողնելով ճերմակ մազերի ինքեր։

Ջնարած նիհար, ոսկրոտ ու տկար մարմինը հենել էր գահի

Քիկնակին, չնայած մաշված, մազաղաթյա դեմքն արտահայտում էր մեծ հոգնածություն, բայց նրա սև և տակավին խոշոր աչքերը վառվում էին առանձին մի հրով, մի չտհատ քաջքերը ու լարված: Իսկ մորուսը նման էր մի ջրվեժի, որ ճերմակ ալիքներով ծածկում էր նրա թուլ կուրծքը և քիչ էր մնում հասներ շալ գոտուն, որով պնդել էր նա մեջքը: Փավստոս հայր տուրքը կամ դպրապետ Փավստոսը Ներսեսի ճիշտ հակապատկերն էր— կարճահասակ, Սոկրատի նման մեծ ճակատ, կլոր դեմք, նոսր կարճ մորուս, կլոր կարճ քիթ և մատ կոպերի մեջ թաքնվող փոքրիկ աչքեր, որ թվում էին անուշադիր ու անհետաքրքիր. բայց դա խաբուսիկ տպավորություն էր. հայր Փավստոսն, ընդհակառակը, զարմանալի արագաես ու արագահայաց էր. հիանալի նշմարում էր ամեն ինչ և լսում ամեն բան և կարևորները գրի առնում իր համար և պահում ծածուկ, «զալոց սերունդներին ավանդելու մտոք», ինչպես ասում էր ինքը: Լինելով վաթողիկոսի դպրապետը՝ նա քանի մի անգամ նրա հետ եղել էր Բիզանդիոնում, ծանոթ էր հունական դպրության, արվեստին և ընդունված պատշաճավորությանը:

Եվ հիմա պատմելով Թագավորի հրամանի մասին, նա, չնայած հուզված, զարմանալի չափավորություն էր պահպանում իր շարժուձևերի մեջ և շարունակ ակնածությամբ նայում կաթողիկոսի դեմքին՝ տեսնելու, թե ինչ վրդովմունք է առաջացնելու պապի անխոհեմ վարմունքը:

Ներսեսը լսում էր հանգիստ, սև սաթի համբույրի հատիկները ծնկան վրա համբելով, ճերմակ խաղաղ ու բարի մորուսը կրծքին, բայց հետո, երբ վերահասու եղավ բանի էությանն, այսինքն՝ երբ հայր Փավստոսը պատմեց, թե հրամանի համաձայն արգելվում են եկեղեցական տուրքերը—տասանորդն ու պտուղին— Ներսեսը ճգվեց-ուղղվեց և երկու ձեռով բռնեց գահի բազուկները, նրա հրացող աչքերն ավելի խոշորացան կարծես, և հայր Փավստոսին թվաց, թե նա պիտի բռնկվի ահա և նզովի Թագավորի արարքը, սակայն Ներսեսը իր ոսկրոտ մատներով գահի բազուկները սեղմելով ասավ միայն.

— Այդպես... այդպես...— Ու լռեց՝ հայացքը տարածության մեջ, ապա հարցրեց հանդարտ.— Այնուհետև՞...

— Այնուհետև, Երանելի,— շարունակեց հայր Փավստոսը մոքրիկ աչքերը բացախիելով, ակնհայտ զարմացած, որ կաթողիկոսը սպասածի հակառակ անտարբեր եղավ,— այնուհետև, պետտո է ասեմ վեհիդ, որ Թագավորը մեր՝ Զիրավի հաղթության հնթանոսական խրախճանքից հետո ծրագրում է գործեր դիվանին, որ անհնարինս է հանդուրժել: Մոլեկան և անբարիշտ են այդ խորհուրդները, քան դի, ամենայն մարդ, լսելով դրանք պետտո է թուլանա քրիստոնեական հավատից... Լուրեր եմ առնում, օրինակ, որ նա երիտասարդ նախարարաց շրջանում ավելորդ է համարել կուսանոցները, անկելանոցները, թե իբր ամենայն մարդ պետտո է աշխատի և պտղաբերի և զավակաց տեր լինի... Ու հողերն, ասում է, ոչ պետտո են եկեղեցո, դի ոչ մի եկեղեցական ոչ վարում է և ոչ ցանում...

Հայր Փավստոսը լուեց՝ աչքերը նորից բացախիելով, սպասելով, որ հիմա արդեն, այդ ամենից հետո, Երանելին չի կարող անտարբեր լինել և պետտ բռնկի, նզովի Թագավորի վարմունքն ու խոսքերը, բայց այս անգամ էլ վեհը մնաց հանգիստ:

— Ճշմարիտ է, հայր Փավստոս,— ասաց նա համբուրիչը նորից ձեռն առնելով և խաղաղ մի ձայնով, որ կրկին զարմացրեց հայր պատմաբանին:— Թագավորը ճշմարիտ է ասել, որ վարդապետ ու եպիսկոպոս չեն վարում ու չեն ցանում: Այդ ճշմարիտ է: Բայց նա չդիտե, որ դրանք վնասում են մարդկային խոպան հողինները և ցանում են ասածո սերմերը թեղմնավոր:

— Հարկավ, հայրապետ, հարկավ,— խոնարհում արագ հայր Փավստոսը՝ դուրդ ձեռները կրծքին դնելով:— Սակայն, Երանելի, նա ասել է և այն, թե քանի որ եկեղեցականները քարոզում են՝ թե մարդ պետտ է ասպրի «քանիվ տյառն», Թող ուրեմն, ասել է «ապրեն քանիվ տյառն» և հողերը թողնեն նրանց, ովքեր ասպրում են «հացիվ տյառն»... Զարդ խորհուրդներ և անբարիշտ մտքեր, հայրապետ,— հառաչեց հայր Փավստոսը Ձեռը լուեց, սպասելով վեհի վերաբերմունքին:

Եվ Ներսեհան, իրոք, չհապաղեց իր վերաբերմամբ:

— Այո, մտքեր, մտքեր, որ կարող է ասել միայն ղեռահասը, հայր Փավստոս,— սկսեց կաթողիկոսը հանդարտ:— Թագավորը մեր, հայր Փավստոս, տակավին մանուկ է և դյուրա-

քորը. չունի տակավին իր դերքին ու աստիճանին վայել հանդարտաբարո վարք ու խոհեմություն: Նա կարծում է տակավին ուղեցույցի և խրատի: Հարկ է ինձ հաճախակի լինել նրա մոտ կամ կանչել նրան այստեղ: Վանա պի սլաստում նա չունի խորհրդատուններ լրջախոհ: Նրա չուրջը դեռահասներ են նույնպես: Հարկ է հաճախ խոսել հետը և չթողնել անխրատ:

— Իրավացի է հայրապետը,— նորից խոնարհում արտել հայր Փավստոսը՝ մանր աչքերը բացախիելով:—Ականջալուր եղա նույնպես; որ երբ Պասկն այդ դեռահասների հետ զնացել է գյուղերը չրջելու, զարմացել է հույժ, որ յուրաքանչյուր գյուղ ունի մեկից ավելի քահանա, և ասել է՝ «չատ է այսքանը... Կաթողիկոսն ուղում է, երևի, երկիրը լեցնել քահանաներով ու աբեղաներով»...

Այդ խոսքերից Ներսեսի սև խոշոր աչքերը կծկվեցին և նա գլուխն օրորեց այնպես, որ ջրվեժանման մորուսը ծալծլվեց կրծքին:

— Պետք չէ ունկն դնել ամեն մի խոսքի, հայր Փավստոս: Դու այր ես գիտուն. հարկ է քեզ լինել զգաստ, երկայնամիտ և հոգով բարձր...

Հայր Փավստոսի կլորիկ դեմքը գունատվեց կաթողիկոսի հանդարտ, բայց ծանր նկատողությունից. նա կարծես աչ մխայն անհարմար զգաց, այլև վիրավորվեց:

— Իրավունք տուր ասել, Երանելի, որ այդ ամենը լուրեր չեն ստահոդ, այլ հասել են ինձ ականջալուր մարդուց:

Եվ հայր Փավստոսը պատմեց, որ այդ ամենը լսել է մի ատրուշավագից, ավելացրեց և քաներ, որ կաթողիկոսն անուշադիր՝ չուզեց սակայն հետաքրքրվել, հարցուփորձել ինչպես անում էր այդ դեպքերում և, չգիտես գիտակցաբար թե ակամա՝ փոխեց զրույցի նյութը, հարցնելով, թե ղրել է արդյոք հայր Փավստոսն իր պատվիրածը:

— Անշուշտ, հայրապետ, անշուշտ,— պատասխանեց հայր Փավստոսը տակավին վիրավորված իր քահանայապետի անուշադրությունից. նա փոքրիկ, երեսի մոխ մեջ կորած աչքերը թարթելով քորեց ճակատն, ասես ոսկորից դուրկ քիթը, մի քան, որ անում էր հուզված պահերին: Ներսեսն իսկապես հուզում է

զարմացնում էր այն, որ կաթողիկոսը ոչ մի խոսություն չարտահայտեց Պապի հրամանի և մյուս անբարիշտ մտքերի առթիվ: Ի՞նչ էր մտածում հայրապետը—նա չկարողացավ լսմանալ. ամենայն այն հանգամանքը, որ նա լուեց և չուզեց շարունակել՝ դա նշան էր համարում, որ հայրապետը հուզված էր: Փորձով գիտեր, որ վեհը չէր սիրում խոսել չափած և իրեն հուզող նյութերի մասին: Այն ինչ՝ հայր Փավստոսն ուզում էր ասել դեռ, թե Պապի հրամանից որքան են հուզված եպիսկոպոսները ու վարդապետները,— հանկարծ ներս մտավ կաթողիկոսի սենեկապետ Հուսիկ սարկավագը՝ մաղերն ուսերին թափած, երկար պարեզոտով մի երիտասարդ և խոնարհում արավ.

— Տեր տնղատահ Մագ սրբազանը, վանանդա եպիսկոպոս Կյուրեղ սրբազանը, Դանիել վանահայրը և այլ սրբազան հայրեր ու ավագ վարդապետներ ցանկանում են վեհիդ տեսությունը,— ասավ սարկավագը և ձեռը կրծքին՝ խոնարհում արավ նորից՝ գլուխն արագ թափ տալով:

— Հրավիրի՛ր,— ասավ Ներսեսը և ուղղվեց գահի վրա, ընդունելով ավելի ճիգ դիրք և խաղաղ արտահայտություն: Իսկ հայր Փավստոսը անցավ կանգնեց գահի աջ կողմը և մնաց անշարժ, ինչպես անում էր միշտ ընդունելության ժամերին:

Փոքր անց իրար հաևից հանդարտ քայլերով ներս մտան եպիսկոպոսներ ու տարեց վարդապետներ: Այնքան գալիս էր ոսկրոտ կազմվածքով, ճիպ, կարծես ժպտալու անընդունակ դեմքով և խստահայաց աչքերով Մագ եպիսկոպոսը. թեև քարերը պարզ էին, պարզամտականությունը քիչ, մեկը մի քան մտածելիս՝ պնում էր ասելու, բայց և այնպես թեպետ տեղապահ՝ նա վեհարան գալիս՝ ներս չէր մտնի առանց նախապես իմացնելու, թե կհաճի արդյոք վեհն ընդունել իրեն—այնքան էր նա հարգում կարգը և սահմանում ևկեղեցու պետից: Մագի հաևից ներս մտավ կարճ ու կլոր մի եպիսկոպոս, որի անունն էլ կլոր էր՝ թե դեմքը, որ ուռած այտեր ուներ, թե ձեռները ու ոտները, որ կարճ էին և դարձյալ աչքն էին ընկնում իրենց հլուությամբ: Դա, վանանդի Կյուրեղ եպիսկոպոսն էր, որ հայտնի էր հումարենի իմացությամբ ու ճարտարախոսությամբ: Ապա ևկավ նիհար ու բարձրահասակ Դանիել եպիսկոպոսը՝

առանց կնգուղի, խոխով ճերմակ մազերով և պարեգոտի կուրծքը բաց, որի տակից երևում էր մազեղեն քուրձը: Դրան հետևում էին Սբշարունյաց հեզահայաց Դավիթ եպիսկոպոսը, ծաղկած մօրուսով Հակոբ քարոզչէը, Զենոբ զորավարը, Հովսեփ խոտաճաբակը, Մարտիրոս Մասկեցը և մյուսները՝ բոլորը սևերի մեջ ու կնգուղներ դրած:

Ներս մտնելով՝ բոլորը, ընդունված կարգի համաձայն, մնացին կանգնած սրահի դռան մոտ՝ Ղազը երկար ճեռները ուղիղ դեպի ծնկները թողած, Կյուրեղը կարճ հաստկլիկ ճեռները կլոր փորին դրած, Դանիել սրբազանը՝ հատու հատարակ զալապանին հենած, և այդպես մյուսները. թվում էր ահա ջերմեռանդ մի աղոթք պիտի ասեն կամ իրենց Հովվապետի օրհնությունը հայցեն: Բայց բավական եղավ, որ Ներսեսն իր ճերմակ ու չոր ձեռի չարժումով հրավիրի նստելու՝ նրանց դեմքերի արտահայտությունը փոխվեց իսկույն. նրանք ընդունեցին ավելի վշտահար տեսք, որի տակ երևում էր սակայն անհանգստություն և զսպված բարկություն:

Եվ երբ բոլոր այդ քաոսասուն-հիսուն հոգին աստիճան ու նստատեղին զահավորակների, օթոցների ու նզուրների վրա՝ նրանց սև զգեստներից կիսամութ սրահը մթնեց այն աստիճան, որ հայր Փամփառոը կանչեց սենեկապետ Հուսիկ սարկավագին, կանթեղներն ու ջահերը վառելու: Եվ երբ սա վառած մեղրամոմը ձեռին սկսեց վառել աշտանակները, մկանթեղներն ու ջահերը, Ղազն սկսեց խոր մի հառաչանքով.

— Մենք եկել ենք, հայրապետ, խնդրելու, թե ի՞նչ կարգադրություն է անում քո սրբությունը Թագավորի հրամանի առթիվ:

Եվ նա մերթ հուզվելով, մերթ զայրանալով պատմեց Պապի հրամանի մասին:— Սա, հայրապետ, այս պատանին, ներկիր ինձ, ներանելի, ես ուրիշ կերպ չեմ կարող արտահայտվել, ուզում է առավածապիղծ գործերով անցնել իր նախորդներից... Եթե նրանք անում էին հեթանոսական գործեր կամ չէին անում եկեղեցու սուրբ հայրերին, նրանց իրատանները, սա արդեն, հայրապետ, հանգչում է ձեռք բարձրացնել եկեղեցու սուրբ իրավունքների վրա... Օ՛, երկին, օ, ողորմած,— Ղազի ձայնը դո-

դաց հուզումից և միայն կարողացավ ավելացնել.— Պետք է նզովել նրան, նզովե՛լ, հայրապետ, որ ...

Ձայրույթից նրա ձայնը խզվեց և նա լռեց...

Սակայն նրա խոսքն անմիջապես շարունակեց վանանդէ եպիսկոպոս Կյուրեղը, կարծես ընկեր եպիսկոպոսին օգնելու համար, բայց լինքն ևս հուզումից թե դիրքությունից նեղվելով.

— Այն, ինչ ուզում է անել Պապը, հայրապետ,— վեր կացավ նա կլորիկ փափուկ ձեռները կլորիկ փորին դնելով և մբարակ ձայնով, որ չէր համապատասխանում նրա թավ մորուսին և թվում էր շուտով պիտի փոխվի կանացի ձայնի կամ լացի:— Ես կարծում եմ, հայրապետ, պետք է անմիջապես հանդիմանես նրան և նրա անհանճար հրամանը, որ չհամարձակվի իրագործել... Իսկ եթե չհրաժարվի չար մտքերից և չանսա քեզ և քո խրատները, հայրապետ, պետք է անմիջապես նամակ գրել հունաց կայսեր՝ վաղես Ավգուստոսին կամ կեսարիայի սրբազան միտրոպոլիտին, որ սանձահարեն անբարեչտին...

— Ճշմարիտ է,— ասավ Պապը, առաջինը հավանություն տալով նրա առաջարկին, ապա իրենց համամտությունը հայտնեցին ուրիշ մի երկուսը՝ միմյանց ձայնակցելով.

— Ճշմարիտ, ճշմարիտ է ասում Կյուրեղ սրբազանը...

Ներսեսը, որ անշարժ լսում էր մեջքը դահի թիկնակին տված և խոշոր հրաբորբ աչքերը երբեմն դարձնելով նայում էր նղուկներին, օթոցների վրա շարված և պատերի տակ ու գոնաները խմբված իր՝ տարիքով, ճերմակահեր եպիսկոպոսներին ու վարդապետներին, որոնց արտակարգ դեպքը՝ Թագավորի հրամանը— հուզելով բերել էր իր մոտ— նրանց վերջին բացականչություններից սթափվեց կարծես. նախ՝ խոշոր աչքերը լայն բանալով՝ մեջքը հեռացրեց գահի թիկնակից, իրանը վոքը ինչ թեքեց առաջ և խոհուն, հանդարտ մի նայվածքով նայեց հավաքված-ներին:

Բոլորը լռեցին ու շունչները պահած, խոնարհ, հարգալից ու ակնդետ սպասեցին, թե ինչ պիտի ասի հայրապետը, ինչ վճիռ կընդունի, ինչ հրահանգ կտա իրենց, որովհետև ամենքն էլ զգում էին, որ խնդիրը վերաբերում է ոչ միայն եկեղեցուն, որ չի կարող ապրել առանց հասույթների, այլև իրենցից յուրաքանչյուրին

առանձին: Եվ կաթողիկոսի թափանցող աչքերի հայացքն այնպես էր, որ ամեն մեկին զգում էր, որ նայում է իրեն. նայում է և հերմակ մորուսի մազափնջերը ձգում, որ չղխոս խորհում էր ֆեն ուսումնասիրում հավաքվածներին:

— Ուրեմն, հայրեր,— խոսեց նա թավ, խաղաղ ձայնով ու պարձյալ բոլորին նայելով,— դուք առաջարկում եք, որ Պապի, մեր մանուկ թագավորի մի հրամանի համար ես նզովեմ նրան իմ դիմեմ հունաց կայսեր միջամտության ու կեսարիայի սրբոցդան միտրոպոլիտին, այնպե՞ս է:

— Այո, այո, հայրապետ,— լսվեցին հուղված, բայց հարցական ձայներ:

— Իսկ լավ խորհե՞լ եք, թե ի՛նչ եք առաջարկում ինձ:

— Այո, հայրապետ: Զկա ուրիշ մի ճանապարհ:

— Ուրեմն դուք կարծո՞ւմ եք, որ ես կարող եմ իմ թագավորին վատաբանել և ամբաստանել ուրիշ մի կայսեր առաջ, որքան էլ դա լինի անբարիշտ ու մոլորյալ: Ո՛չ, հայրեր սրբազան, հանկարծ ձայնը բարձրացրեց նա և նրա ճերմակ մորուսը դողաց կրծքին:—Ո՛չ... Մտածո՞ւմ եք ի՛նչ եք ասում: Բանխմաց հայրը իր որդուն ինքն է խրատում և ոչ թե օտարին է կանչում: Դիմել դասե՞ր... Ոչ, ես այդ չեմ կարող անել, քանզի իմ հիվանդ ոչխարն ինձ համար ավելի լավ է, քան ոտրիչի առյուծը: Դու ինչանակե՝ մեր հիվանդ գառը տանք ուրիշի առյուծին կեր:

— Սակայն նա, հայրապետ, գառ չէ և ոչ էլ հիվանդ,— խոսեց Ղազը տաքացած, բայց խոնարհությամբ ու հարգանքով:—Նա արդեն ցուլ է հզրակիր և վագր սրածանկ...

Ղազի խոսքերի վրա ոմանք հավանության չարժումներ արին իրենց տեղերում, բայց մնծամասնությունը մնաց լուռ՝ խոնարհություն, ակնածանք ու հետաքրքրություն դարձած. կային այնպիսիները էլ, որ չվոխված ու զարմացած էին կաթողիկոսի խոսքերից. «ուրեմն նա պաշտպանո՞ւմ է Պապին» վարդագույում էր նրանց դեմքերին:

Մինչ այդ Ներսեսը նորից ուղղվեց գահի վրա, ՝ այս անգամ թևերը դնելով գահի բազուկներին ու վառ աչքերը դարձյալ դեպի բացած՝ հերթով նայեց բոլորին:

— Ո՛չ, հայրեր: Ո՛չ, Ղազ սրբազան,—խոսեց նա չեչտով ու

հովինակավոր,—նա ցուլ էէ, այլ ոչխար մոլորյալ: Մեր պարտքն է. ոչ, Քրիստոսի պարտքն է՝ աստվածային խոսքով հասկացնել նրան այն ամենը, ինչ տակավին մութ է նրա համար: Մի՛թե մեզ պահանջում է աստվածային խոսքը, որ նրա լույսը և քրիստոնեի պարտքը պարզենք նրան... Դուք կարծում եք ձեր հայրապետը չի՞ կարող համոզել նրան՝ իր սխալ քայլի մեջ: Ես իմ պարտքը պիտի համարեմ խոսել նրա հետ և հասկացնել, որ նա մոլար ճանապարհի է: Ես աստծու հրեղեն խոսքով կվերադառնամ նրա սխալները: Ձեր վրդովը վաղաժամ է, ձեր պահանջը՝ դնեմ վաղես կայսեր՝ անպատվաբեր:

Բոլորը լսում էին լարված, ոմանք ակնկոր կամ դլխիկոր: Նրանց հախուռն հուզմունքը կաթողիկոսի խոսքերից մարեց, տատամսկոտեց:

Եվ երբ նա վերջացրեց՝ մի քանի վայրկյան լռություն էր տիրում:

— Սակայն, Երանելի,— այդ լռության մեջ հնչեց հանկարծ վանանդի եպիսկոպոս Կյուրեղի ձայնը:— Պապն արդեն հրամանն է ուղարկել ամեն՝ ինն ու քաղաք, թե վերացնում է տաճարնորդն ու պաղին, պատճառ բերելով, թե պատերազմից աղքատացած հինականն ի վիճակի չէ այդ տարու: Նրա սուրհանդակները արդեն անցնում են դյուղից-դյուղ և կարդում այդ հրամանը...

— Եվ ցանկություն ունի միաժամանակ վիճել սրբության հետևած աստվածահաճո հաստատությունները,—հարեց տաքացած Խադը ընկեր եպիսկոպոսին ընդհատելով,—նաև կուսանոցները, և տալ կույսերին պղծության...: Ահավասիկ որպիսի չար մտքեր է հղանում նա, հայրապետ... Եվ դու, տեր, մի՛թե վստահ ես, որ խոսքով, լոկ խոսքով, ետ կանգնի իր ցնորական մտքերից...

— Չար է, հայրապետ, խորհուրդը Պապի,— Խադին ձայնակցեց Արշարունյաց եպիսկոպոս Դավիթը, որ խոսակցության ամբողջ ընթացքում նստել էէր կապուտանում:—Նա ուզում է կտրել հայը մեր հանապազօրյա, որ մենք լքինք աստծո եկեղեցիները, վանքերը, և ինքը հեթանոսություն հաստատի կրկին, ինչպես Հուլիանոսը չար...

Մինչ Դավիթ եպիսկոպոսը խոսում էր՝ Ներսեսը նորից հանդիստ նայում էր իր հուզված, պայթյացած եպիսկոպոսներին ու վարպետներին, դռների մոտ ու պատերի տակ չարվածքանդնած և մյուս սրահից հետաքրքրությամբ նայող վարպետներին ու աշակերտներին և, թվում էր, ավելորդ է համարում նրանց հուզմունքը:

Դավիթ եպիսկոպոսից հետո խոսաց մի ուրիշն էլ, ապա երկրորդը, երրորդը՝ նույն հուզված եղանակով ու շարժումներով, բայց ինքը Ներսեսը մնաց հանդիստ, և երբ վերջացրին՝ նա սառց նույն խաղաղ ձայնով.

— Ես այնուամենայնիվ, հայրեր, չեմ կարծում թե մանուկ Պասը իրապրծի՞ իր մտադրությունը: Եվ չեմ կարծում նույնպես, որ Պասին այդպիսի մոքեր ունենա չար. Ներսե, երևի, ներշնչում են՝ շուրջը եղած պատանիները, այդ հավիշտակվոր տղաները, որ ինչպես բոլոր պատանիք, կարճ մտածում են՝ երկար կոլում:

— Ճշմարիտ է ասում հայրապետը, ճշմարի՛տ է...

Դուրսը մութը թանձրացել էր արդեն, իսկ Ներսեսը՝ վեհարանի ընդարձակ դահլիճում մոմերի և կանթեղների եռերուն լույսերից սակավները երկարելով ու կարճոնալով՝ վառում էին պատերի վրա, և հավաքվածների դեմքերը մերթ լուսավորվում էին, մերթ մթնում: Լսելով հայրապետի հեղինակավոր խոսքը՝ ամենք զարմանում և հուզվում էին նրա մեղմությունից, ամենք լռում էին հույսերով և հանդուրժում, որ թագավորի հրամանը չի իրագործվի, որ նա՝ Ներսեսը— ամենակարողը, այդքանի անհրաժեշտը, պատշաճը, որ Պասը նո վերցնի իր հրամանը և մինչև իսկ ղրկում է դա հայրապետի մոտ և թագուհին խնդրի իր անխոհեմ քայլի համար, իսկ ամենք պատրաստ լինում էին, որ նա, ինչպես էլ լինի, վերացնի, ոչնչացնի հիվեցուն ու քրիստոնեությանը սպառնացող վտանգը:

Բոլորից հետո վեր կացավ խորենացագետ Դանիել եպիսկոպոսը, որ շուրջ պատճառով հնամաշ պարկոցը քցել էր ուսերին, որի տակից երևում էր ամբողջապես նրա մաղերեն քուրձը: Այդպես՝ նա թվում էր մի ծեր սատիր:

— Դու ասացիր, հայրապետ, որ Պասը չի իրագործի իր

հրամանը,— ասալ նա լուռ ձայնով։—Սակայն նա արդեն խիստ խրատվել է. և առաջին հարվածը հասել է ինձ...

Ներսեսը կարծես սթափվեց այդ խոսքերից և ուշադիր նայեց նրան։

— Երկու օր առաջ,— շարունակեց նա բարձր ձայնով,— Թագավորն արձակել է իմ արկածախնդրների կազմակերպած հանդեսին պատրաստվելու, ասելով թե մենք հոգևորականների իրավունք չունենանք քինախնդրների վրա, մեր վանքապատական հանգամանքների վրա... Սա ինչ կնշանակի, հայրապետ։ Ինչպիսակի այն, որ ես, մյուսը, մենք ամենքս պղրենք ճշմարտության, խաբեպատրաստվեստ, սրբվելով ու ծոմապահությամբ և չունենանք իրավունք ապրելու։ Եթե բանս այս լամանան հինավուրձները՝ ուրիշն վերջ մեր գոյության, վերջ քրիստոնեության։ Վատ օրինակ և աստվածընդդիմ հրամանի։

— Ճշմարիտ է ասում հայր Դանիելը,— լսվեցին հավանության մի քանի ձայներ թե նստարանների կողմից, թե կանգնածների միջից։

Որովհետև օդը չատ ծանրացել էր գահընկեցիկ կաթողիկոսի դեմ ատելությամբ կանգնած դպրապետ հայր Փավստոսը ուզելէ բայց արագ կորցրե լուսամուտը և անհնարապետ հուսկ ապրիլյան մոտ հանչելով՝ կարդացրեց՝ ավելացնել կանթեղները յուղը և վրան լեցնել արտասուն խնկափոշի, ինչպես անում էին միշտ ծանր օդի դեպքում, որը սրահը քեղնում էր անուշ բուրմունքով, մի բան, որ շատ հաճելի էր լինում Ներսես կաթողիկոսին։

Երբ Դանիել եպիսկոպոսը վերջացրեց և իր խոսքերով նորից հուզեց մարդերը, կաթողիկոսը, որ ինքը նույնպես հուզված էր և վրդով, բայց զսպում էր իրեն, չկամենալով մատնել իր հուզմունքը, որ վատ կլիներ իր կարծիքով, ուստի նորից բարձրաց հանդարտ մեղմել կրքերը, ու վերջացրեց այսպես.

— Հիշեցեք, հայրեր, ասածս որդու խոսքը. «Մի կալ հանապատ չարին»։ Հուզմունքն ու վրդովմունքը կարի վատ խորհրդատուներ են։ Թողնք ձեր հայրապետին՝ խոսել Թագավորի հետ և կարգադրել այնպես, ինչպես հարկն է։ Առայժմ գնացեք խաղաղությամբ...

Եվ նա, գահի վրա նստած, աջը բարձրացնելով՝ երեք մատով խաչակնքեց նրանց:

Երբ եպիսկոպոսներն ու վարդապետները լրիվ եռանդից, ավագության խիստ կարգ պահպանած դուրս եկան, նրանց հետ և հայր Փավստոսը,— Ծերունի կաթողիկոսը տնքալով վեր կացավ իր գահից և սկսեց բարկացած քայլել սրահում. նրա ընկած դայրույթը մի ակնթարթից կարծես ապստամբություն առացավ:

— Անմի՛տ, տհա՛ս և խակ պատանի: Դու չես մտածում, թե ո՛ւմ դեմ ես ելանում քո՛ւնկար ուժով...

***

Երբ եպիսկոպոսներն ու վարդապետները գան վեհարանից՝ դուրսը կատարյալ մութ էր. երկինքում չէր շողում և ոչ մի աստղ: Քամին ընկել էր և երկինքը ծածկվել էր թանձր ամպերով: Դուրս գալով՝ բոլորը բակում մնացածների հետ, ցրվեցին իրենց խցերը, ձեռ մատը գրտեսնդված այն հավատով, թե Երանելին կանխ ինչ պետք է և իր մեծ ազդեցությամբ ու հեղինակությամբ թեմուզ-Տեմուրին կդադարեցնի իր հրամանը: Սակայն երկու վանքի պատվիրակների միաբանությունից՝ չգնացին դեպի խցերը, այլ համաձայնելով մութի մեջ առաջանալով՝ մոտեցան եկեղեցուն և կանգնեցին նրա պատի տակ, սպասելով որ ամենքը հեռանան: Մի ստվեր, որ հետևում էր նրանց՝ նույնպես կանգնեց եկեղեցու պատի տակ, բայց նրանցից բավական հեռու և, չնկատվելու համար, մեջքը դեմ արավ պատին:

— Գնացին, բոլորը գնացին,— ասավ նրանցից մեկը խզված կիսաշշուկով:—Այլևեղ մեզ ոչ-ոք չի տեսնի, սրբազան: Ես այնքան հուզված եմ վեհի հանդիստ ու անվրդով վերաբերմունքից, որ չեմ կարող իմ զայրույթը պահել: Ինչպես երևում է՝ աքսորը կոտրել է նրա կամքը, ծերացել է հույժ և այլևս չի դիտակցում, թե ինչ պետք է պատրաստվում եկեղեցու համար:

— Այո, ծերացել է, դժբախտաբար: Եկեղեցին ու քրիստոնեությունը փրկելու համար պետք են կտրուկ միջոցներ այդ տղայի դեմ... Երբ վեհը խոսում էր՝ ես զգում էի, որ նա ոչինչ չի կարող անել այլևս: Մնում է՝ ինքներս մտածենք մեր եկեղեցու մասին:

— Ի՞նչ կարելի է անել ուրեմն,— հարցրեց առաջին խոսողը նույն խռված ձայնով:

— Ես մտածում եմ, որ մի միջոց կա միայն այդ ամենի դեմ:

— Ո՞րն է այդ, սրբազան: Ասա, խնդրում եմ. ես ամենքս անհամբեր եմ:

— Տերենոզը, հայր սրբազան, կոմս Տերենոզը...

— Տերենոզը՞,— զարմացած կրկնեց խռված ձայն ունեցողը: Բայց մի՞թե նա կարող է ազդել Թագավորի վրա:

Նրանք ձայնները ավելի իջեցրին, փսփսացին մի երկու վայրկյան (որ պատճառն կպած ականջը ոչինչ չհամարյալ ոչինչ), ապա քայլերին առաջ և խռված ձայնը նորից ասաց.

— Թող Դանիել եպիսկոպոսն էլ գա մեզ հետ:

— Ոչ, սրբազան, նա խելոք է, կարող է ավելորդ բաներ խոսել Տերենոզի մոտ. և մյուս կողմից՝ տհաճ է իր մազեղենով: Մենք երկուսով բավական ենք: Դու վարժ ես հունարենին, կպատմես ամենը և...

Սամերը, որ նորից սկսել էր հետևել նրանց, դարձյալ չլսեց նրանց խոսքի շարունակությունը, բայց ձայներից արդեն ճանաչեց նրանց:

Դրանք Մաղ սրբազանը և Վանանդի եպիսկոպոս Կյուրեղն էին:

Մի քանի քայլից հետո նրանք, ոտնաձայն լսելով, կանգ առան մխաին ու նա նայեցին:

— Ո՞վ է,— հարցրեց Մաղը խիստ:

Սամերն առաջ եկավ մուքի մեջ և կռացավ Մաղի առաջ:

— Ների՛ր, սրբազան, ես լսեցի ձեր խորհուրդը և... ուզում եմ առաջարկել իմ միջոցը: Ես նույնպես զայրացած եմ Թագավորի...

— Ո՞վ ես դու,— ձայնը կոկորդում խեղդելով՝ խստությամբ հարցրեց Մաղը:

— Մաղաքիա սարկավագը,— ասավ Սամերը նորից երկուսակի լելով:— Հրամայի՛ր, սրբազան, ես պատրաստ եմ... ես վարժ եմ նենտաճդությանը մեջ... Չէ՞ որ Թագավորը հաճախ գնում է որսի...

— Լավ՛ը, թշվառական,— սաստեց Յաղը նույն խեղդված ձայնով, որ հատիվ էր հնչում:— Մենք չենք ուզում սիրասպան լինել, հասկանո՞ւմ ես: Եթե ցանկանում ես արև տեսնել՝ պիտի լռես: Հետացիր և լռիր:

Սարկավագն ուղղվեց, որ հեռանա, և նույնիսկ մի քայլ արավ:

— Կա՛ց. Ել այստեղ,— կանչեց Յաղը:— Գնա տաս ձիերը պատրաստեն և ուղեկցիր մեզ Դվին:

— Պատրաստ եմ, սրբազան հայր:

Երկու ժամ հետո երեք հեծյալ Վաղարշապատի Արեգ դռնից դուրս գալով, գնում էին դեպի Դվին:

Երեքն էլ Յազ և Կյուրիղ եպիսկոպոսներն էին և Մաղաքիա սարկավագը:

***

Դվինը քնած էր, մանավանդ նրա ծայրամասերը խորին անդորրի մեջ էին: Կենտրոնական փողոցներում միայն շրջում էին թիկնապահ դիշերապահները, բայց այնպես դղրդյուն, կարծես վախենում էին իրենց քայլվածքով խռովել քաղաքի անդորրը: Կես դիշեր էր արդեն, և քաղաքի լուսները հանգած էին վաղուց, բացի միջնաբերդից, ուր վայր ընկած աստղերի պես առկայծում ու թափթփում էին մենավոր ճրագներ: Դրանք պալատի միջնաբերդի պարսպապատներից հսկող պահակախմբերի լուսերն էին, որ ամբողջ գիշեր վառվում էին մինչև առավոտ: Սակայն այդ ժամին մի ուրիշ ճենապոր լույս էլ երևում էր քաղաքի մեջ, նրա գիմաց վաղորդյան վրա պտտվող մի երկհարկանի տան լուսամուտում, որ վաղքին չնորհալի լուսավորում էր փողոցը:

Դա քրիստոնեական դպրավար—դևատան Տերենտե բնակարանն էր, որ ծանոթ էր յուրաքանչյուր դվինցու: Բոլորը գիտեին, որ վանահոտիան Տիրացու այդ գիշերվիկ չենք հատկացրել են գիտությունների համար. նրանք գիտեին և այն, որ այդ լուսը գիշերները վառվում է այն ժամանակ միայն, երբ գևատանը լինում է Դվինում: Իսկ կամ Տերենտե մշտապես Դվինում չէր ապրում... նա մերթ բնակում էր Կարնո, ուր ապ-

րում էր բնղանդական արևելյան բանակը Զերավից հետո, մինչ Սալերքում, ուր գտնվում էր այդ բանակի մի մասը, մերը դա-
սից էր Դիլին, նույնծ քաղաքական հանգամանքներին և տարվա
եղանակին: Ձմեռվա և աշնան ամիսներին, օրինակ, նա գերա-
պատում էր Դիլինը, ամառը զովասուն կարծելը, ուր կայլին և նրա
համար հաճելի, բուժիչ ջերմուկներ... Հիմա սակայն, թեև
ամառային տաք եղանակ էր, բայց կոմսը մի քանի օրով նկել
էր Դիլին՝ ինչ-որ կարևոր խնդիրների ամբիվ Պասլի հետ ու-
սումնասիրելու: Եվ արդեն երրորդ թե չորրորդ օրն էր նա Դիլին էր
ու մենակ... երևելիները առանձնապես նա մենակ էր լինում,
մեծ չհաշվելով տասն չափ հուշն ոստառավորներին, որ միշտ այս,
նրա բացակայության ժամանակ էլ, մնում էին այդ տանը, որ-
պես խոհարար, որպես պահակներ ու հավաքարարներ, և այն
քիչ-նշանավոր հուշն գինվորներին, որ ուղեկցում էին նրան կարճ-
նից Դիլին: Ինչ վերաբերում է նրա լուսին, որ բայց, արիական
տչքի պես դիշերները նայում էր Դիլինի մի հարկանի ու երկ-
հարկանի տներին,— գիլինցիները չէին հասկանում, իհարկե,
ինչ նպատակով է արվում դա. արդյո՞ք իր պահակ-դիշերապահ-
ների համար, որ հերթով չորում էին նրա տան առջև, թե նրա
համար, որ մարդիկ խմանան բնղանդական դեսպանն այստեղ է
և չհամարձակվելն ոտքակոխել այդ տան տուրք: Ինչ էլ լիներ ու-
միայն՝ գիլինցիները զգոհ չէին դրանից:

Այս երեկո սակայն, ուշ ժամին, դեսպանը մենակ աչքա-
տում էր իր առանձնասրահում. նա գինվորական զգեստները հա-
նած՝ միայն թեթև մի առնիկով, որ պնդել էր ծոպավոր մի
գոտիով, պրեխան, ավելի շատ մոխրագույն մազերը բաց՝
գրած էր սեղանի առջև նստած, որի վրա դրված եռատոկ մի մո-
մակալի վառվում էին մոմեր և լուսավորում խնամքով շարված
մոմատախտակներ, գրչածև դրիչներ, որ իրենք կոչում էին
ստիլ, մագաղաթի քերքեր, եղեղոտական հատոր, ոլորուն թղթե-
թեր, նաև մի նամակ՝ բզնդանդական կայսեր կնիքով դրոշմած:
Մի ուրիշ, ավելի մեծ, բաժնատուկ աշտանակ վառվում էր ան-
յսկի մեջտեղը, լուսավորելով անկյակի վրայի կտավերը, վրանում
գտնվածները և գոնեքը ծածկող ծանրագին ծալքավոր վար-
գույթները, որ հասնում ու քսվում էին հատակին:

կոմս Տերենալը կենտրոնացած, լարված ինչ-որ բան էր դիտում-չակում մոմատախտակների վրա, ապա նույն պրի առնում առջևը վուած եգիպտական հաստ մագաղաթանման թղթի վրա, ջանալով որ գրածը լինի մաքուր, խնամով և միաժամանակ հատակ... Նա, թվում էր, ոչ թե գրում է, այլ սրբազան մի արարողություն է կատարում—այնքան զգուշություն ու ակնածանք կար նրա շարժումների մեջ գեպի թուղթը, որի վրա գրում էր...

Իսկ նա հասարակ բան չէր գրում, այլ հերթական նամակ-զեկուցում իր կայսեր՝ Հայաստանի, կամ, ինչպես ինքն էր ասում, Արմենիայի գործերի մասին: Նամակը հազիվ կես էր եղել. չուտում էր այս երեկո վերջացնել և...վազը սուրհանդակի, երկու օր առաջ եկած կայսերական սուրհանդակի միջոցով ուղարկել Բիզանդիոն, դրա հետ և մի նամակ իր ընտանիքին, որ նույնպես ապրում էր բիզանդական մայրաքաղաքում: Բայց գործը կարծես դժվար էր առաջ գնում. չէին ստացվում յուրաքանչյուր իր խոսքի պատասխանատվության երկյուղից, որ դգում էր կայսեր առաջ, թեև ոճի և լեզվի նկատմամբ բծախնդիր լինելով՝ նա գրում էր դանդաղ, երկարորեն մտածելով, և ամեն մի պարբերությունը ավարտելիս՝ նամակը կարդում էր նորից:

«Օդոստոս, ինքնակալ վազես կայսեր՝
Իր հավատարիմ ծառա կոմս Տերենտից խոնարհ
ողջույն.

«Ասուվածային կեսար.

«Նախորդ նամակովս գրել էի, թե Բազրևանդի հաղթությունից հետո ինչ վիճակ է տիրում Արմենիայում և ինչով է զբաղված Պալ Թազավորը, այդ՝ առաքլության և տակավին չհամախտրակշռված երիտասարդ իշխանավորը: Դրանից հետո աչքի ընկնող քաղաքական-ռազմական լուրջ, մեծ գործեր չկան: Նկատում եմ միայն, որ պատերազմից հետո, ընդհանրապես մի տարի-ութ ամսվա ընթացքում արմենները աշխատում են ավերականգնում են ավերված-վնասված քաղաքներն ու գյուղերը, կամուրջներն ու ճանապարհները, ոռոգելիները և ջրմուղները, իսկ զորանից

արդեն առանձնապես մեծ հոգ են տանում խաղողի այգիների ու ցանքսերի վրա, որոնք առատ բերք են տալիս այս երկրում և բնակչության աննդի գլխավոր աղբյուրն են կազմում... Միայն բանվել՝ աշխատում էին կպղպջալ և զրանալ: Մյուս կողմից՝ Մուշեղ սպարապետը, ինչպես արդեն գրել եմ, մի հմուտ ստրատեգ և թշնամիների ու դավաճանների հանդեպ անողոք մարդ, երկրին միացնում է Ամմենիայից գրավված կամ պարսից սպրանքով Ամմենիայից անջատված հայ գավառները, ըստ որում կոլոր հայ նախարարներից, կոմիտասահներից ու բդեշխներից պահանջում է՝ թողնել մենաստանները և անվերապահ ենթարկվել կենտրոնական իշխանության, այսինքն՝ Պասլին և իրեն: Պահանջում է նա, որ պատերազմի դեպքում տան զինվոր, ձիեր և մթերք, մի բան, որ էլին արել մինչև հիմա: Նույնը անում է Պասլը: Վերջերս նախարարների մեծամասնությամբ գումարել և առաջարկել, որ զինվոր ու ձիեր տան իրեն: Նկատելի է, որ արմենները հավատում են իրենց երկիրը, որ հարևոր, լուրջ ուժ և զորություն կազմեն և այլևս կարիք չզգան ուրիշի օգնության, հետևաբար և մեր: Պատմում են, թե որքան ստուգ է, առայժմ դժվար է հաստատել, որ այս մտքով էլ ստրատեգ Մուշեղը խոսել է Գուգարք կոչված գավառում, որ մի լեռնային երկիր է՝ անառիկ ամրոցներով և սահմանակից Իբերիային: Ի դեպ է ասել, որ այս երկրի կառավարչին, որ արմենների և պարսից լեզվով կոչվում է բդեշխ, ստրատեգ Մուշեղը ենթարկել է մահապատժի, որպես դավաճանի, որ պարսից վոսանգի օրերին անջատվել է Ամմենիայից, չցանկանալով զորքով ու մթերքով օգնել թագավորին: Ասում են՝ այս Մուշեղը որոշել է անպատիժ չթողնել և ոչ մի դավաճան, ոչ մի մատնիչ, ոչ մի հանցագործ իր երկրում: Նա առայժմ մեզ նվիրված մարդ է երևում. հալածում է և պարսկասեր նախարարներին, թեև, ինչպես գրել էի, արձակեց դևերի ընկած աղվանից Ուռնայր թագավորին, իսկ դրանից առաջ արձակել էր Շատուհի կանանոցը... Սա, հարկավ, չի թեև նրա քաղաքական համոզումներից կամ հետևամտածությունից, բնավ, այլ նրա հնազանդ ավելորդապաշտությունից, թե թագավորները չի կարելի մնասել, ձեռ քաշճրացնել նրանց վրա, թե նրանք աստվածընտիր են: Մուշեղը թեև բիզանդական կրթություն

ունի՝ Պապի նման, լայց չի հասկանում, որ այդ բաները բարբարոսների համար չեն ասված: Սակայն այս պատճառով՝ նա մեծ համարում ու հարգանք է վայելում պարսից արքունիքում: Դա, կարծում եմ, դվխավորապես Շապուհի կանանոցն արձակելու շնորհիվ... Ի դեպ է ասել, աստվածային, որ պարսից ինքնակալները իրենց դերի ընկած կանանոցը երկու անգամ են ետ ստացել պատմության մեջ—Դարեհ Կոդոմանոսը Ալեքսանդր Մակեդոնացուց, Շապուհը Մուշելից... Գարդ է, որ Մուշելն այս բարձր առաքինության օրինակը վերցրել է մեր նախահայր Ալեքսանդրից:

Ինչու կոդմից, աստվածային, Պապ Թագավորը, թվում է, սկսում է ուժեղ Արմենիա ստեղծելու ցնորքներով: Մի երկու անգամ նա, ինձ հետ խոսելիս, ակնարկել է, թե Արմենիայի սահմանները իրենց նախկին թագավորների օրով եղել են ավելի ընդարձակ...

Գաղտնիքներին Արմենիայից վտարելուց հետո և իրենց անհաջող դավադրները հավաքելուց հետո՝ Պապը հիմա այնքան ապահով է պրում իրեն, որ մի օր հարցրեց ինձ, թե երբ պետք է մեր զորքերով բռնեցինք պարսից տաճկաստանի մի ջոգին՝ իրենց արմենների թիկունքն ապահովելու նպատակով և, միևս կողմից, թույլ չտալու, որ պարսիկները տանեն մեր սահմաններին: Այժմ, ասկայն, Պապ Թագավորը, զգալով իրենց քաղաքները, ցանկանում է, իրևի, որ մենք մարդինք այս քաղաքները և դավառները: Այս խնդրի առթիվ իմ կարծիքն այն է, աստվածային, որ մենք առայժմ չպետք է հեռանանք այս քաղաքներից մինչև վերջնական չպարզվի Պապ Թագավորի դերը և պարսից մտադրությունները: Ուզում եմ ասել, որ Պապն առանալով իր քաղաքները՝ կարող է անցնել հանկարծ պարսից կողմը կամ պարսիկները, եթե փորձեն դալ մեզ վրա—այս քաղաքները հարմար դերք ունեն նրանց դիմադրելու և, վերջապես, մեր օժանդակությունը Արմենիային՝ պարսից հարձակման ժամանակ մի հատուցում պիտի առնան՝ թե ոչ: Պապ Թագավորը քաղաքների այդ պահանջը պատճառաբանեց նրանով, թե պատերազմն արդեն վերջացել է, հույս ունի, որ մեր զոր-

քերը հեռա կհեռանան Կարինից, Սեբաստիայից և Մծբինից, որովհետև, ասում է նա, այդ քաղաքների հայ ժողովուրդը, պատերազմից առաջ, դժվարանում է հաղալ հույն դրքերի ծախքերը: Ես նրան պատասխանեցի, թե մենք ծախսերից կխնայենք ժողովրդին, բայց քաղաքները թողնելու համար պետք է հարցնեմ իմ առաջնորդների կարծիքը: Նաև ավելացրի, թե կարող է պատահել՝ պարսիկները նոր հարձակում գործեն— բարվոք է մենք մոտ լինենք Ալմանիայի պաշտպանելուն»...

Նամակի վերջին այս խոսքերի վրա բակի դուռը ծեծեցին հանկարծ:

— Թը՛խկ. թը՛խ-թխկ... երեք անգամ:

Կոմսը զարմացած ընդհատեց նամակը.— Ո՞վ կարող է լինել այս ուշ ժամին. բյուզանդական դրքից՝ Կարինից եկած սուրհանդա՞կ, թե Պապ Թադեոսի կողմից առաքված մեկը,— մտածեց նա, բայց նկատեց էլ հիշեց, որ հայ Թադեոսը կողմից գալիս են միայն ցնծալիը: Այսուամենայնիվ նա՝ հետաքրքրությունից տեղից վեր կացավ և մնաց սեղանի մոտ կանգնած, սպասելով, թե ի՞նչ լուր կբերի սենեկապետը:

Եվ նա երկար չսպասեց. սենեկապետը, որ տարիքով հույն էր, ներս գալով՝ վարպետորեն ճեռով բռնած կանգնեց նախ դռան մոտ, ղուխ տվեց զարմացած կոմսին, ապա ներս-դուրս եղավ խնդրողի պես, կարծես ինքը մի հանցանք է գործում, հայտնեց ախորժանքը.

— Անժամանակ և օտարոտի այցելուներ, վեհափայլ:

— Առանց նախատանքի, Աֆտոտոս,— սրտնեղեց կոմսը:— Ո՞վքեր են:

— Երկու հայ եպիսկոպոս և մի ուրիշ: Ցանկանում են տեսնել ձեր վեհապետությունը: Ճիշտ է, դուք պատուիրել էիք՝ ոչ-ոք չթողնել ձեզ, բայց, նրանք այնպես խնդրեցին... Ես, կարծեմ, ասացի, որ իմ տերն զբաղված է, բայց նրանք պնդում են, թե կարևոր ու անհետաձգելի գործ ունեն... Համառ...

Սենեկապետը չդիտեր ինչպես շարունակել և մեղավոր աչքերով նայում էր կոմսին:

— Եպիսկոպոսնե՞ր... Կարևոր, անհետաձգելի գո՞րծ,— ավելի զարմացավ կոմսը: Նա այնքան զարմացավ նույնիսկ, որ

կարծես մոռացավ անգամ սպասավորի ներկայությունը և մի քանի անգամ կրկնեց «եպիսկոպոսները»։— Այս ուշ ժամին։ Ի՞նչ կարող է լինել և ի՞նչը կարող է այդ եկեղեցականներին բերել ինձ մոտ...։

Նրա զարմանքն այնքան մեծ էր, որ չկարողացավ անմիջապես պատասխանել սենեկապետին, որը սոխակված եղավ հարցնել.

— Ի՞նչ է հրամայում իմ վսեմ տերը։

«Այցելությունն այնքան արտակարգ է, որ մերժել չեմ կարող։ Թերևս եկել են միտրոպոլիտ Ներսեսի կողմից» մտածեց նա և դարձավ ծեր սենեկապետին.

— Հրավիրի՛ր,— ասավ, և սկսեց չարակ ճերմակ մատներով հարդարել գլխի մոխրագույն մազերն ու հագուստները, և այդ ժամանակ միայն նկատեց, որ տունիկով էր։ Բայց փոխել այլևս անհնար էր։

Մինչ նա մտածում էր այդ մասին՝ դուռն վրա կախված ծանր վարագույրները ետ գնացին, ավելի շուտ սենեկապետը վարագույրի մեկը ետ տարավ բռնած և ներս մտան կնդուղներ դրած, սև վայլուն պարեդտոններ հագած երկու եկեղեցական— մեկը չոր-չոր ու բարձրահասակ Ծաղիկ էր՝ կոշտամազ սև ու ճերմակ մորուսով, մյուսը՝ կարճ ու կլոր մարմնով և կլոր երեսով Վանանդի եպիսկոպոսը՝ սևամորուս Կյուրեղը։ Նրանց հետ, ավելի շուտ նրանց ետևից ներս մտավ մի իշխան, որին եպիսկոպոսներն անվանում էին Արտակ։

— Ողջույն և օրհնություն մեծազոր կայսեր դեսպան-զորավարին,—ներս մտնելուն պես ասավ Կյուրեղ եպիսկոպոսը, որպես այդ պատգամավորության պարտպետն, հունարեն լեզվով, որին նա տիրում էր լիովին, ապրած և ուսած լինելով, Բիզանդիոնում։

Դեսպանը տակավին զարմացած, տակավին դեմքին անմիջապես հեղության արտահայտություն տալով, ընդառաջեց հյուրերին, հատուկ մի խոնարհումով՝ միայն գլուխն իջեցնելով բարեվելով նախ եպիսկոպոսներին, ապա հայ իշխանին, առանձին մի լրջությամբ և ուշադրությամբ նայելով նրա թուխ դեմքին ու ոչ բիզանդական հագուստներին։

— Շնորհ արեք,— ասավ նա, նորից հեթով նայելով հյուրերին, կամենալով կարծես դուշակել նրանց գալու նպատակը այս ուշ ժամին: Եվ նստեցնելով նրանց փայտուկ օթոցների վրա, ինքը, տունիկի փեշերը ծնկներին քաշելով ու ներողություն խնդրելով, որ այդ հագուստով է ընդունում նրանց, տեղավորվեց իր աթոռի վրա, սեղանի առջև: Ու նստելով՝ նա, խոսակցությունն սկսելուց առաջ, մի ձեռով սեղանի վրայի նամակները, մատիտաթն ու եգիպտական պապիրուսները հրեց մի կողմ, իսկ կիսատ նամակը և կայսեր կնիքը կրող նամակը ծածկեց մատիտաթի մի կտորով, որ հյուրերը չկարծեն թե երեն, խանգարում են և կարծես ասելով, թե ինքը պատրաստ է նրանց լսել:

— Բարևհաճեցեք, սրբազան հայրեր և հարգելի իշխան,— ասավ Տերենտը հեզ, խոնարհ ու պատրաստակամ, նորից հեթով նայելով հյուրերին:— Ի՞նչով կարող եմ ծառայել:

— Ամենակարող տերը թող երկարի աղնիվ կոմսի կյանքը,— սկսեց հայր Կյուրեղը,— մենք եկել ենք ձեր վսեմության մոտ՝ մի խորհուրդ հարցնելու, որ, հույս ունենք, չենք մերժի:

— Պատրաստ եմ ծառայել ձեզ իմ կարողության չափով,— ասավ Տերենտը և, ձեռը կրծքին դնելով՝ վեհանձն խոնարհում արավ եպիսկոպոսներին և սիրալիր նայեց հայ իշխանին:

— Մենք ձեզ երկար չենք ղբաղեցնի, աղնիվ կոմս,— շարունակեց հայր Կյուրեղը, դեսպանի խոնարհումից չոյված:— Մենք եկել ենք մեր եկեղեցուն և առհասարակ հոգևորականությանն սպառնացող մի վտանգի մասին խոսելու:

Տերենտը զարմանքից դլուխը բարձրացրեց, իր խելացի ու խաղաղ աչքերով նայեց հայր Կյուրեղին և կարծես դալճալ համակ ուշադրություն ու հետաքրքրություն:

— Վտանգ եկեղեցո՞ւն և հոգևորականությա՞ն:

— Այո, աղնիվ կոմս,— և Կյուրեղ սրբազանը պատմեց Պապի հրամանի մասին, որը, ասավ, մեծ հուզում է առաջացրել հոգևորականության մեջ:

Դեսպանը զարմացավ.

— Մի՞թե,— ասավ նա մտածումների մեջ:—Չէի իմացել... Դա նորություն է:— Ու անմիջապես էլ կարծես սթափվելով՝

ավելացրեց.— Սակայն, սրբազան հայրեր, ինչո՞վ կարող եմ ես օգտակար լինել ձեզ այդ գործում. չէ՞ որ դա Պապ Թադեոսի իրավունքն է: Մի՞թե ես կարող եմ միջամտել...

— Ներող եղիր, աղնիվ կոմս, չէ՞ սա ընդհանուր քրիստոնեական խնդիրը է,— նկատեց Կյուրեղ սրբազանը:— Եթե Պապ Թադեոսն իրագործի այդ՝ մեր եկեղեցին կզրկվի իր հաստատ–ներից և այլևս չի կարող դոյություն ունենալ, որպես եկեղեցի, որպես քրիստոնեական վարդապետության օջախ:

— Այո՛,— մատը հպեց Կյուրեղի ծնկանը խնամակցությունն ուշադիր լսող Խադը:— Ահա՝ ժողովուրդը կվերադառնա հեթա–նոսության:

Կյուրեղը ձարթմանեց Խադի խոսքերը:

— Բայց մի՞թե Պապ Թադեոսը կուզեր, որ հայ ժողովուր–դը դառնա հեթանոս,— զարմացավ Նորից Տերենոզը:

— Նա, աղնիվ կոմս, երևի այդ էլ ցանկանում է,— խոսեց Եպիսկոպոսների հետ եկած իշխանը, որ մինչ այդ անխոս սպա–սում էր, որ եպիսկոպոսները պարզեն գործի էությունը:— Պապը, հավանորեն, այդպիսի մտադրություն ունի, որովհետև նա ոչնչով չէ արդեն պաշտոններ տալ պարսկասեր նախարարներին, և մյուս կողմից՝ չի պատժում այն պարսկասերներին, որոնք հան–ցանքներ ունեն անցած պատերազմում, ինչպես, օրինակ, պահլ խնամակալ և պալատի կառավարիչ Հայր–մարզպանին:

— Այո,— դվխով արավ Տերենոզը քաղաքավարությամբ,— այո... Բայց որքան դիտեմ՝ Թադեոսը նրան արդեն հեռացրել է պալատից:

— Հեռացրել, այո, բայց ոչ պատժել,— շարունակեց իշ–խանը կարմրելով ու տաքանալով:— Դա արել է, հարկավ, որոշ նպատակով...

Կոմսը հետաքրքրված, թայց աչքաթեղով որ այդ կոպիտ չերևա, նայեց իշխանին մի հայացքով, որի մեջ պարզ կարդաց–վում էր «ի՞նչ նպատակ» հարցը:

— Խնդրեմ՝ շարունակեք,— դվխով արավ նա:

Եվ իշխանը պարզեց իր միտքը.

— Դա, երևի, այն նպատակով, որ հաճելի լինի պարսիկ–

նրբին, և մյուս կողմից՝ պաշտոն է տալիս պարսկաստանցիների շրջիններին:

Տերենոզը զարձյալ քաղաքավար հետաքրքրությամբ նայեց իշխանին:

Եվ իշխանը կարծես այդ հետաքրքրությունը դոհացնելու համար՝ ավելացրեց.

— Ինչպես, օրինակ, Գնել Անձևացուն, որի հայրը տարտիաներ էր:

— Գնել Անձևացի ասի՞ք, այո՞,— հարցրեց կոմսը:

— Այո, կոմս. Գնել Անձևացի...

— Սակայն, իշխան, որքան դիտեմ՝ այդ երիտասարդը խզախարեն կռվում էր պարսիկների դեմ և Զիրավում վիրքեց Բաղդասարի կյանքը... Ես նրան ճանաչում եմ. նա մի ամազիտ, բայց քաջ երիտասարդ է; այնպես չէ՞:

Եպիսկոպոսները զարմացած իրար նայեցին, որ դեսպանն այդքան բան դիտի հայ կյանքից ու ենթադրեցին, որ Ջան Հոսեֆն անելիություններ ունի կամ երևից նման այցելուներ: Քի անհարմար դրացին: Իսկ կյուրնել արքեպիսկոպոսը մինչև խոր ջիջոհ նայեց իշխանին, որ խոսակցության ընթացքը չհղոց և առաջ վազեց:

Տերենոզը սակայն այդ անհարմար լռությունն զգացնել չտալու համար կարծես՝ նկատեց մի ոչնչի-հաճելի քաղաքավարությամբ ու ժպտալով.

— Աշխարհում ամեն ինչ պատահում է, սրբազան հայրեր և հարգելի իշխան: Բայց որքան ես ճանաչում եմ, դեսպան ձեր հարգելի Պաղտ Թաղավորին՝ նա հազիվ թե, նեղեցնեք ինձ, այդպիսի մի բան ցանկանա,— ասաց նա նույնքան մի հեզությամբ, դրսից ոչ ոնի վրա թևելով, բայց իրոք ցանկանալով նոր փոսաներ իմանալ:— Ինձ թվում է՝ նա չի ուզի և չի ցանկանա թշնամանալ Բյուզանդիայի հետ, քանի որ Թաղավորելու նկատ մեր Օդոստոս կայսեր օգնությամբ: Մյուս կողմից՝ նա իմացած կարող է անել այդ կամ մտածել պարսից կողմն անցնելու, երբ նրա հորը Շապուհն սպանեց Անհուշ բերդում, իսկ Թաղուհի մորը՝ անարգելով նահատակեցին պարսից ամրոցում առաջ... Արդ, մի թե այս ամենից հետո...

Երիտասարդ իշխանը կարմրեց կոմսի այդ խոսքերից, բայց զրպարտիչ չերևալու համար, դուցե և իրեն արդարացնելու նպատակով ավելացրեց անմիջապես.

— Այն հանգամանքը, կոմս, որ նա մի քանի տարի կտրված է եղել ծնողներից, ինձ թվում է որդիական սերը մեծ դեր չի խաղում նրա վարմունքի մեջ:

Իշխանն այս ասելուն պես՝ ինքն էլ դոհ չմնաց իր պատասխանից և վարի շուրթի մի անկյունը կծելով՝ լռեց անհարմար, իսկ Կյուրեղ սրբազանը թե՛ իմաստակությանը նախկին ընթացքը տալու և թե՛ իշխանին անհարմար կացությունից հանելու նպատակով.կարծես՝ բացատրեց.

— Այդ ճիշտ է, ազնիվ կոմս, ճիշտ է, որ նրա ծնողներին մոռցրեց Շապուհը, բայց այն, ինչ անում է, այսինքն՝ այն հրամանը, որ արձակել է— ուղղված է եկեղեցու դեմ, նրա դոյության դեմ, հետևաբար քրիստոնեության դեմ, ուրեմն և Բիզանդիայի դեմ, որովհետև Բիզանդիան է քրիստոնեության իսկական որբանը:

Տերենտը ձլձլեն իջեցրեց մի վայրկյան:

— Մթթե Պապ թագավորը կարող է թշնամի լինել իմ երկրին,— ասաւլ նա տխրությամբ,— կամ վատ բան ցանկալ նրան, երբ իմ երկիրը.... Սակայն ես այդպիսի քայլ դեռ չեմ նկատել...

Կյուրեղ եպիսկոպոսի դեմքով մի սուլը անցավ. նա ցավեց, որ երիտասարդ իշխանը խոսակցության այդ ընթացքն էր տվել. բայց ոտիկաղի դեպպանը չկարծի, թե իրենք մատնիչ են կամ զրպարտիչ՝ փորձով համարեց նկատել.

— Մեր գալու նպատակն, ազնիվ կոմս, այդ չէր, հարկավ. դա եղավ միջանկյալ մի բան: Մենք ուզում ենք, որ դուք իմանաք, մի խորհուրդ տաք մեզ, թե ինչպես վարվենք մեր թագավորի հետ, եթե նա իր հրամանը լ կատար ածի և առհասարակ աշխատի իրագործել իր մտադրությունները, այն է՝ զրավել եկեղեցու հողերը, փակել կուսանոցները և...

«Հիանալի նյութ նամակի համար» մտածում էր Տերենտը, նայելով Կյուրեղի փափկիկ ձեռներին և կլոր լեցուն, մերթ-ընդ եղերված դեմքին, որն ասես ավելի էր կլորանում, երբ նա խո-

ում էր: Իսկ նա ձայնին դրեթե աղաչական խազ հաղորդելով՝ խնդրում էր, որ կոմսը մի խորհուրդ տա իրենց կամ գուցե ինքը խոսի Պապի հետ և համոզի, որ այդ բանը չանի, որովհետև նա, թեև երիտասարդ լինելով, չի գիտակցում դրա հետևանքները...

Այստեղ Խաղը նորից մատով սեղմեց կյուրեղի ծունկը:

— Ասա՛, սրբազան, եթե ձեզ համար դժվար է,— ասավ նա լսելի, բայց կամաց,— եթե իր համար դժվար է, թեև մեծաղոր կայսրն ինքը միջամտի այս բանին և առաջն առնի այն աղետների որ կարող են պատճել հայ եկեղեցու դեմին...

Կյուրեղ եպիսկոպոսը նորից թարգմանեց Խաղի մտքերը, չսկսելով ու կսկսելով, որ ավելի վայելուչ լինի հոնարեն:

Թարգմանությունը լսելով՝ դեսպանը հարգանքով նայեց Խաղին:

— Իմ տեր կայսրը, սրբազան հայրեր, սիրում է Արմենիան,— ասավ նա մեղմ, հաճելի ու հեզ ձայնով և միաժամանակ իր խոշոր ու խելացի աչքերով հերթով հայրերին նայելով,— և միշտ ցանկանում է թե նրա ժողովրդի և թե եկեղեցու բարօրությունը: Ուստի և իմ տեր կայսրը, հարկավ, ոչինչ չէր խնայի Արմենիայի համար. սակայն հավատացած եմ, որ Պապ թագավորն այնքան պատառ է, որ թույլ չի տա սխալ քայլեր...

— Բայց նա իրեն շրջապատել է այնպիսի երիտասարդներով,— նորից խոսեց էշխանը,— որոնք բնավ չեն կարող լավ և օգտակար խորհուրդներ տալ նրան:

— Ես ճանաչում եմ այդ երիտասարդներին, հարգելի էշխան,— ասավ Տերենտը,— և պետք է ասեմ՝ վատ տպավորություն չունեմ նրանցից: Նրանք, թվում է, խելացի երիտասարդներ են, բիզանդիայում կրթված:

— Օ՛, ազնիվ կոմս, դուք նրանց լավ չեք ճանաչում, երևի: Նրանք ինչ-որ ցանկություններ ունեն: Ուզում են մեզանում առեղծել այնպիսի բաներ, որ չկան ուրիշ երկրում:

Տերենտը ներսատ ճանճռանում էր արդեն, բայց այդ ցույց չէր տալիս հարկավ: Նրան հետաքրքրում էին վիսատեր և վիսատեր... Բայց տեսնելով հյուրերն այդպիսի օրինակներ չեն բերում, այլ սասում են ընդհանուր անորոշ խոսքեր, հարցրեց.

— Հետաքրքրական է, ինչ բաներ, օրինակ, որ ուրիշ երկրներում չկան,— և Տերենսը ժպտաց մի ժպիտով, որ կարծես ասում էր, թե ինչ կարող է ստեղծել Արմենիան, որ չլինի մի այլ տեղ, կամ կարծես հեգնում էր երիտասարդ իշխանի միամտությունը, որ կարծում էր, թե պապի խորհրդականները կարող են մի չտեսնված բան ստեղծել:

— Այնպես, հովե՛ր, հարգելի կոմս, հովե՛ր,— մի ջամաեց նորից Կյուրեղ եպիսկոպոսը, իշխանին դժվարությունից հանելու:— Փաստեր կան, բայց մենք ձեզ հոգնեցրինք արդեն: Այն ապավորությունը չստանաք, ազնիվ կոմս, թե մենք եկել ենք մեր թագավորին և նրա մերձավորներին վատաբանելու: Բնավ: Մեր ցանկությունն է՝ իմանալ ձեր խորհուրդը մեր թագավորի հրամանի մասին: Իսկ մյուս անգամ, եթե առիթ լինի, կխոսենք և այլ խնդիրների մասին:

— Ինչո՞ւ մեկայն առիթ,— ասավ Տերենսը:— Խնդրեմ. իմ տան դռները միշտ բաց են ձեզ համար: Ես, սրբազան հայրեր, միշտ Արմենիայի բարեկամն եմ և բարձր եմ համարում նրա հոգևոր դասը: Ես կխորհեմ ձեր ասածների վրա և կանեմ անհրաժեշտը: Խնդրեմ, երբ կցանկանաք, իմ դռները բաց են...

Եվ Տերենսը հարգալից գլուխ տվեց եպիսկոպոսներին:

— Մենք այդ պիտենալով էր որ եկանք ձեզ մոտ, ազնիվ կոմս: Գիտենք, այո, որ դուք մեր աշխարհի և եկեղեցու բարեկամն եք, հարգելի կոմս... Գիտենք նաև, թե ինչ ջերմեռանդությամբ եք դուք հաճախում մայրաքաղաքիս եկեղեցին...

Այդ ճիշտ էր. երբ Տերենսը Դվինն էր լինում՝ նա չարաչար երեկոները թե կիրակի օրերը գնում էր հայոց եկեղեցին և, առաջին շարքում կանգնած, աղոթում ու խաչակնքում էր ջերմեռանդորեն, գրավելով ժողովրդի ուշադրությունն ու համակրանքը: Եվ այս հանգամանքը շոյում էր հայ հոգևորականների ինքնասիրությունն ու կրոնական զգացմունքները:

Մի փոքր էլ կողմնակի նյութերի վրա խոսելով՝ եպիսկոպոսները, նրանց հետ և երիտասարդ իշխանը վեր կացան և հրաժեշտ տվին դեսպանին:

— Ուրեմն, ազնիվ կոմս,— ասավ Կյուրեղը կլորիկ փայլ-

լիկ ձեռը տանտիրոջը մեկնելով,— չկարծեք թե մենք մեր թա-պավոլի դեմ...

— Հարկավ, սրբազան հայր, հարկավ. ես գիտեմ, որ ձեր մատահոգությունը քրիստոնեությունն է, սակայն հայ եկեղեցին և նրա շահը,— խոնարհ գլուխ տվեց Տերենտը: Թույլ տվեք ինձ մի հարց:

— Հրամեցեք, պընիվ կոմս:

— Ինչպես է ներսես միտրոպոլիտը: Ես վաղուց նրան չեմ տեսել:

— Շնորհակալ ենք, հարգելի կոմս: Ծերության պատճառով մեզ մոտ նիզ տակար է, բայց միշտ արթուն և աղոթաբար:

— Ինդրում եմ՝ իմ խոնարհ հարգանքը հաղորդեք ներսես միտրոպոլիտին:

— Սիրով, կոմս, մեծ սիրով,— ասավ կյուրեղը և ուղղվեց դեպի դուռը:

Հյուրերի գնալուց հետո՝ կոմսը, ձեռները չփնելով, մի ուժամ անցավ սենյակի երկայնքով, երկար ժամանակ միևնույն դիրքում պահած ոտները բացելու և հյուրերի հայտնած նորություններին վրա խորհելու: Գապի հրամանի մասին լսել էր անցողակի, նրա բովանդակությունը լավ չէր իմացել, ուստի և հյուրերի ասածը նորություն էր նրա համար. Գապը վերացնում է եկեղեցուն տրվող տուրքերը... տուրքեր՝ առանց որի եկեղեցին, իրոք, չէր կարող ապրել... Մտադիր է խլել և եկեղեցուն պատկանող հողերն ու կալվածները...

— Ա.հա ինչե՛ր են պարզվում... Իսկ ես կարծում էի, թե այդ Գապը մի համեստ և սահմանափակ խելքի տեր է: Տուրքեր վերացնել... հողեր գրավել... այդ իր գործն է... Բայց որ պաշտոններ է տալիս պարսկասերներին կամ նեստորականին դեպի նպատակ հանգամանքները— դրանք անշուշտ, մի բան նշանակում են: Բաց և պետք է ստուգել այդ ամենը... Գուցե և սրանք, տուրքերի հրամանից վշտացած, մեղադրանքներ են բարդում, որ ես չիմացնեմ կայսեր բարկությունը: Ոչ, պետք է նախ ստուգել...

Ա.յսպես կոմսը նկատելով մոմերից մեկը մխում է՝ մոտեցավ և պատրույգն ուղղեց երկու մատով:

«Բայց կարո՞ղ էին այդ պատկառելի եպիսկոպոսներն առանց հմտքի հայտնել այդպիսի բաներ»— ասաւ կոմսը մտքում և շարունակեց քայլել։

Երբ արդեն բաւական անցել-դարձել էր՝ նա նորից մոտեցաւ տեղանին, բացեց մազաղաթով ծածկւած թղթերն ու նամակները և նստեց կայսերն ուղարկվող նամակն ամփոփելու, որ վաղը հանձնի սուրհանդակին։

Սակայն շարունակելու համար նա նորից կարդաց դրածը և ապա, մոմատախտակի վրա շարադրելով ու չոկելով, կայսեր նամակում դրեց հետևյալը.

«Այնուհետև, աստվածային, կարևոր եմ համարում հայտնել, որ վերջին օրերը Պապ Թագավորն արձակել է մի հրաման, որով չինականներին ազատում է տասանորդ տուրքերից, որ տալիս էին նրանք եկեղեցուն ու մենաստաններին, մի բան, որ սահմանված է եղել դեռ մի դար առաջ, իրենց Տրդատ Թագավորի կողմից։ Սկզբում լսել էի, որ Պապ Թագավորն այդ անում է պատերազմից աղքատացած, քայքայված չինականների վիճակը թեթևացնելու, սակայն հետո, այսօր իսկ, հայոց եկեղեցու շատ անվանի եպիսկոպոսներն ինձ պատմեցին, որ դա արվում է իբրև եկեղեցին թուլացնելու, քրիստոնեությունը հետզհետե երկրից վերացնելու և նորից հեթանոսության անցնելու նպատակով։ Նրանք այս բացատրեցին ավելի պարզ. թե Պապ Թագավորը մտադիր է այսպիսով կտրվել Բիզանդիայից և անցնել պարսից կողմը, և որովհետև մեր և իրենց միջև ամենից ուժեղ կապը կրոնականն է, ապա Պապն առաջին հերթին, նրանց ասելով, ցանկանում է վերացնել այդ կապը։ Այս, հարկավ, անհավանական չէ, եթե մանավանդ նկատի ունենանք Շապուհի խորամանկությունները, որ ամեն կերպ կաշխատի Արմենիան պահել իր ազդեցության տակ, բայց այս պարագան առայժմ կարող է ասուգման։

Այնուհետև, օգոստափառ տեր, խնդրում են Պապի ինչ-որ ծրագրերների մասին, թե նա մտադիր է վերակել կուսանոցները, ներգաս միտրոպոլիտի հիմնած անկելանոցները, այն ամենը, ինչ, ասում են, կապ ունի քրիստոնեության հետ։

Այս մասին առայժմ խոսում են միայն. թե ոչքան արտաքուստ են—չեմ կարող ասել։ Ես, անշուշտ, իմ պարտքը պիտի

համարեմ՝ ստուգել և ճշտել: Բայց մի ուրիշ նորություն, որ կուզեի հաղորդել, Օգոստափառ, հետևյալն է.— Ասում են՝ Պապն սկսել է պաշտոններ տալ պարսկաստեր նախարարներին և նրանց որդիներին: Սա նույնպես, հարկավ, կարոտ է ստուգման: Եթե ճշտվի՝ ուրեմն Պապի տրամադրության մեջ կա լուրջ փոփոխություն: Մի բան հաստատ է սակայն, որ նշանավոր ավազանի Հայր-Մարդպետին, որ շատ հանցանքներ ունի որպես պարսկասեր,— Պապը հեռացրել է պալատից՝ առանց պատճառ... Սա, անշուշտ, մի բան նշանակում է: Մեզ բանիվ՝ հետևելու և ստուգելու շատ բան կա: Հույս ունեմ հետևյալ նամակում՝ դրել ավելի ստուգված ու ճշտված լուրեր»:

Վերջացնելով՝ կոմսը մի խոր շունչ քաշեց, կարծես թեթևացավ ահռելի մի բեռից, ապա զգուշությամբ ստորագրեց.

«Օգոստոս կայսեր խոնարհ ծառա, արևելյան բանակի զորավար՝

Կոմս Տերենտ»:

Այս անելուց հետո՝ կոմսը զգուշությամբ հենվեց աթոռի թիկնակին և ծալի զարկեց:

Դուռն ծանրաձայն վարագույրների արանքից ներս մտավ ծեր սենեկապետը:

— Լսիր, Անաստաս,— կոմսը թեքեց դեղնցիկ գլուխը, և առանց սենեկապետին նայելու, աստված չեշտելով.— երբ այդ արմեն եպիսկոպոսները գան՝ ընդունիր հարգանքով, եթե անդամ ես այստեղ չլինեմ:

Սենեկապետը գլուխն խոնարհեց հարգանքով:

— Պատրաստ եմ հրամանիդ, վեհեմ տեր:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Տուրքերի հրամանը, իրրև նորություն, իրրև ավանդական կարգը խախտող մի երևույթ, մեծ հետաքրքրություն առաջ բերեց երկրում. դրա մասին էին խոսում ոչ միայն հուզված հոգևորականներն իրենց վանքերում ու մենաստաններում, այլև իշխաններն ու նախարարներն իրենց ամրոցներում ու դղյակներում, ճիշտ է, առայժմ մեծ վերապահությամբ ու զգուշությամբ. դրա մասին էին խոսում նաև քաղաքներում ու շենքերում, և այլ մասին եղած խոսքերն ու կարծիքները շատ էին տարբեր ու հակասական: Շինականները կարծում էին, որ դա կթեթևացնի իրենց վիճակը, եթե միայն իրականություն դառնար, բայց կասկածում էին, որ հոգևորականներն ու Ներսեսը թույլ տան այդ բանը: Նույնպիսի թերահավատ կարծիքներ էին լինում և քաղաքներում ու նախարարական դղյակներում, և ամենքը, թե՛ շինական ու ռամիկ և թե՛ եկեղեցական ու նախարար՝ հետաքրքիր սպասում էին, թե ի՛նչ կլինի վերջը:

Բայց ամենից ավելի Պապն էր հետաքրքրված. նրան հետաքրքրում էր իր հրամանի ոտավորությունը, և ուզում էր լսանալ անպայման, օրը–օրին լսանալ, թե ի՛նչ են խոսում, ի՛նչ կարծիքներ են հայտնվում այդ մասին:

— Ի՞նչ են խոսում,— հարցնում էր նա դրամիկ գնդի պետ Բաթի Սահառունուն, որ միշտ դուրան էր լինում և հաճախ դրսի լուրերը հաղորդում էր թագավորին:

— Սմեն տեղ շատ հետաքրքրված են, Պապ,— ասում էր Բաթը:— Սակայն չեն կարծում, որ այդպես մնա:

— Եվ ո՞վքեր են այդպես կարծում:

— Շենականները ու ռամիկները, օրինակ, ասում են, թե թագավորը, լավ բան է արել, բայց կասկածում են որ դա մնա:

Եվ ինչո՞ւ են կաթծում, որ չէ մնա:

Բաթը պատասխանում էր, ինչ որ լսել էր:

— Մի ծերունի, օրինակ, որին հանդիպեցի ղրանիկ գնդի մոտ գնալիս,— ասավ նա մի անգամ,—իմ աչն հարցին, թե ինչո՞ւ չի մնա՝ պատասխանեց, թե վարդապետները չեն թողնի: Դամ կհամոզեն,— ասաց,— Թագավորին, որ այդպես բան չանի և դամ՝ կանիծեն ու կանեն իրենց ուզածը... Ես ասացի, որ Թագավորը թույլ չի տա: «Բայց Թագավորին կլսե՞ն որ, տեր սեպուհ» ասավ: «Չլսեն, ասացի, Թագավորը կպատժի»... Ծերունին ժպտաց և գլուխն օրորեց.— «Բայց կարո՞ղ է, տեր սեպուհ»... «Իսկ ինչո՞ւ չի կարող» հարցրի նորից:— «Ի՞նչ իմանամ, տեր սեպուհ,— ասավ,— երկուսասող է, կխաբեն ու չեն թողնի»...

— Կխաբե՞ն,— կրկնեց Պապը քմծիծաղ:— Աչուհի՞տև...

— Եվ ամեն տեղ համարյա նույն թերահավատ կարծիքներն եմ լսում, Պապ: Դամ թե՝ ասում են.— եկեղեցին էլ ինչո՞վ կարող է տարբել, եթե չինականները տասանորդ ու պտղի չտան: Չէ՞ որ, ասում են, առանց եկեղեցու կնունք, թաղում ու ծեսեր չեն լինի...

— Կնունք ու թաղո՞ւմ,— ասավ Պապը լնքն իրեն:

— Այո,— ժպտաց Բաթը:— Իսկ եկեղեցականները, վարդապետները քաղաքներում, երեցները շեներում տարածում են և ժողովրդին համոզում, թե թագավորն այդ անում է, որ քրիստոնեությունը վերացնի, տուրքերն լնքն առնա և վայելի պատյատակների հետ:

— Իսկ ժողովուրդը հավատո՞ւմ է դրան:

— Այդ, դժվար է ասել, Պապ: Ժողովուրդն զգույշ է և ծանծկամիտ:

— Իսկ ի՞նչ են խոսում նախապարները,— հատուկ հետաքրքրվեց Պապը:

Բաթին ուսերը վեր քաշեց:

— Բոլորի մասին չեմ կարող ասել, Պապ: Լսել եմ, որ նույնպես հետաքրքրված են, խոսում են զգույշ և կարծես սպասում, թե ինչ է լինելու:

— Այդպես,— ասավ Պապը մտախոհ, բայց իսկապես վշտա-

ցած: Նա վշտանում էր և վիրավորվում, որ ժողովուրդը մի կողմից այդքան նշանակություն է տալիս հզևորականությանը, մյուս կողմից՝ չի հասկանում իր օգուտը: Բայց նա այդ մասին առայժմ՝ չէր խոսում ոչ-ոքի հետ, մանավանդ ոչինչ չէր ասում Թագուհուն՝ նրան չհուզելու և ավելորդ մտահոգություններ չպատճառելու, լավ իմանալով որ Թագուհին շատ դյուրազգաց է և նույնիսկ վախկոտ: Բայց ինչպես որոտի արձագանքները լսվում են անգամ փակ տեղերում, այնպես էլ այդ հրամանի մասին եղած զրույցները հասան պալատ՝ Թագուհու հարկաբաժինը:

Եվ ահա մի օր, հրամանի երրորդ թե չորրորդ օրը, երբ Չարմանդուխտ Թագուհին՝ ամառային թեթև առեղնաշորթ ու ոսկեթել բիզանդական տունիկով, պալատի իր հարկաբաժնի մի սրահի բաց լուսամուտի առջև նստած, մի քանի իշխանուհիների հետ նայում էր իր զույգ որդիներին—Արշակին ու Վաղարշակին, որ ծառերի տակ խաղում էին պալատական իշխանների երեխաների հետ—Թագուհու սպասուհիներից մեկը՝ պառավ Հասանեթը, իշխանուհիների ներկայությամբ (որ մինչ այդ Թագուհուն զբաղեցնում էին լրեներց պատմություններով), խոսք բացեց, թե ինչ են խոսում Թագավորի հրամանի մասին:

— Գիտես, Թագուհիս, քաղաքում խոսում էին այդ մասին, և գոհ են, ասալ այդ պառավ սպասուհին, որ օրվա մեծ մասն անցնում էր պալատում և երբեմն միջնաբերդից իջնում էր քաղաք՝ իր ծանոթներին ու բարեկամներին տեսնելու:

Թագուհին, որ բոլորովին անծանոթ էր ժողովրդի կյանքին ու կարիքներին, միշտ գոհունակությամբ էր լսում՝ պառավ սպասուհու պատմածները: Նա, որպես նորեկ, որպես մեկը, որ չէր եղել Արարատյան երկրում, մեծ հետաքրքրությամբ էր լսում առհասարակ սպասուհիների, նաժիշտների և պալատական կանանց պատմությունները երկրի, ժողովրդի և մեծամեծների մասին, երբեմն մինչև խոկ հարցումներ էր անում տեղերի ու այն իշխանների և նախարարների մասին, որ գալիս էին պալատ:

— Ո՞ւրեմն այդ հրամանն, ասում ես, ուրախացրե՞լ է ընդհանուց,— հետաքրքրվեց Թագուհին:

— Շա՛տ, Թագուհիս: Իհարկե պիտի ուրախանային. չէ՞ որ

իրենց բերանից պիտի կտրեին և տասանորդ ու պտղի տային։ Իսկ ո՛վ չէր տալիս՝ պիտի աշխատեր եկեղեցու համար։ Էլ ինչ-պես չուրախանային։ Ասում են՝ դեռ ոչ մի թագավոր այդպես բան չի արել։

— Եթե այդպես է՝ շատ ուրախ եմ,—աչխուժացավ Թագուհին և, թևքվելով, լուսամուտից նայեց երեխաներին։— Իսկ դժդոհնե՞ր, դժդոհներ չկա՞ն— հարցրեց նա։

— Դժդոհնե՞ր։ Է՛հ, ամեն բանի մեջ էլ դժդոհներ լինում են, Թագուհիս. իհարկե, կան։ Լսեցի, որ վարդապետներն ու երեցները շատ դժդոհ են։ Ասում են՝ դեռ ոչ մի թագավոր այսպիսի բան չէր արել եկեղեցու դեմ։ Ի՞նչով պետք է, ասում է, ապրեն մենաստաններն ու վանքերը, եպիսկոպոսները, վարդապետները, եթե...

Սպասուհին սև գլխակապն ուղղելով՝ լռեց խոսքը չավարտած, ականջներն զսպելով իրեն, որ ավելորդ բաներ չասի։ Այդ նկատեց ուշիմ Թագուհին և ավելի հետաքրքրվեց.

— Ուրիշ ի՞նչ են ասում, Հասանեթ. ինչպես երևում է դու շատ բան գիտես։

— Ուրի՞շ... Չեմ ուզում Թագուհուս սիրտը պղտորել։ Ի՞նչ կուզեն ասեն. նշանակություն չունի, Թագուհիս։

Թագուհու հետաքրքրությունն ավելի զրգռվեց։

— Դու ինձնից ոչինչ մի թաքցնի, Հասանեթ։ Ասա՛, ինչ լսել ես։ Ինձ այնպես է թվում՝ մի բան գիտես և թաքցնում ես։

— Ես, Թագուհիս, ոչինչ չեմ ուզում թաքցնել քեզնից, բայց վախենում եմ պղտորել քո մաքուր սիրտը և վշտացնել քո-ղուբ։

— Ընդհակառակը, Հասանեթ. դու ինձ կվշտացնես, եթե որևէ բան թաքցնես ինձնից,— խոսեց Թագուհին բեկված մի ձայնով, որից երևում էր, թե զգում է, որ սպասուհին մի բան գիտի։— Ասա՛ ինչ լսել ես, ասա՛. ես կլսեմ հանգիստ։

— Ասա, Հասանեթ, ասա,— միջամտեցին իշխանուհիները, որ նույնպես հետաքրքրված էին և ցանկանում էին լսել։

— Որպեսզի չնեղանաս, Թագուհիս, ասեմ. բայց խնդրում եմ՝ կարևորություն չտաս. լսել եմ մի խոսք, ստույգ բան չէ,— և խոսքը կիսատ՝ նա հապաղեց մտածումների մեջ։

— Ինչո՞ր և մի քաշվիր,— կրկնեց Թագուհին:

— Ասում են՝ իբր թե Ներսես Հայրապետն ինքը գայլացած է... Ուզում է, ասում են, նամակ գրել հռոմայց կայսեր և միտրոպոլիտին...

Թագուհին զունատվեց և ձեռը դրավ սրտին:

— Այդ քեզ ո՞վ ասավ, Հասաննէ,— հարցրեց նա փոքր հեռու խուլ ձայնով և ահագացած ընչաուրքյամբ:

— Բայց ա ասույդ բան չէ, Թագուհիս. ինձ պատմեց եղբայրս, որ լսել էր քաղաքի չուվայում,— շարունակեց պատասխանը, բայց նկատելով Թագուհու հուզված դեմքը՝ անմիջապես ավելացրեց:— Դա ոչնչես խոսք է: Հռոմեների կայսրն ու միտրոպոլիտը ինչո՛ւ պիտի խառնվեն մեր գործերին...

Բայց Զաբամանդուխտ Թագուհին նրան այլևս չէր լսում: Նա, թվում էր, իր մտքերի մեջ խորասուզված և կարծես վերացած: Մի երկվայրկյան այդպես անխոս նստելուց հետո՝ նա ելավ հանկարծ և, իշխանուհիներին գլխի թեթև մի շարժումով հրաժեշտ տալով, անցավ իր առանձնարանը՝ մի հավաք ու լուսավոր սրահ, որի պատերն ու առաստաղը պալատական նկարիչ Բաթիքը զարդարել էր իր երևակայության ու չնորհքի բոլոր կարողությամբ՝ պատերը պես-պես կանաչով, ծաղիկներով ու թռչուններով, իսկ առաստաղը աստեղազարդ գմբեթի նման: Բացի այդ ամենը՝ սրահը զարդարված էր գոշգերով ու ոսկեջօծ հայելիով. դռները ծածկում էին արծաթ ճողերից կախված ծանրածալ վարագույրներ, որոնց ծոպերը քաշում էին հատակին: Կային Բիզանդիայից բերած արծաթե հայելիներ և ոսկի, արծաթե ամաններ, օրվակներ՝ զանազան անուշահոտ յուղերով. ոսկե, արծաթե մոմակալներ ու աշտանակներ, եռոտանի կանթեղներ և առիքից կախ մի ջահ, որ չորում էր ոսկու և արծաթի շղթայով: Արևելյան պատին ևս Բաղիշի վրա ամրացված էր մի նրբահյուս արծաթ խաչ, որ աչքի էր ընկնում ամենից շուտ: Սակայն Թագուհու հայացքը կանգ չառավ այդ իրերից և ոչ մեկի վրա: Նրա մտքերը դառնում էին սպասուհու առածներքն շուրջը, մանավանդ վերջին հաղորդածը, թե կաթողիկոսը գայլացած է և ուզում է նամակ գրել հռոմեների կայսեր և միտրոպոլիտին...

Նամակ կայսեր և միտրոպոլիտին... Հարկավ՝ Պապի գլխի... Թագուհու մարմնով սարսուռ էր անցնում. «Մի՞թե դա հնարավոր է ճշմարիտ լինել... մի՞թե կաթոլիկոսն այդպիսի բան կանի» մոածում էր նա տագնապած, ավելի շուտ՝ սարսափած, որովհետև նրան թվում էր, որ եթե կայսրն ու միտրոպոլիտն այդպիսի մի նամակ առանան—նրանք անշուշտ չեն կիսայրանան: Որքան էլ չհետաքրքրվեն Հայաստանով ու հայերի գործերով, բայց եկեղեցուն վիրաբերող հարցերին անտարբեր չեն նայի և մանավանդ կպայքարեն Պապի դեմ և գուցե... Նա չէր համարձակում կարծես մոածել ավելին, որովհետև նրան թվում էր, թե դրանից, այդ դժդոհությունից անդամ կարող է պատերազմ ծագել... Պատերա՛զմ... Նորից պատերազմ... Հիմա էլ հոռմեները դեմ... Չեր մոածած, մի՞թե կարող է դա ճիշտ լինել, մի՞թե...

Երկար մոածում էր մենակ Թագուհին իր առանձնասենյակում, երբ հանկարծ նեթո մոավ Պապը՝ ամառայրին իր բարակ ու քայլաթև յունիկով, որի փիչերը հասնում էին մինչև ծնկները և որի մեջքն, ըստ ընդունված սովորության, պնդած էր մետաքսե կարմիր դոտիով: Առաջին իսկ հայացքից նկատելով որ Թագուհին հուզված է և ախուր, մոածեց, որ հարցազանների հետևանքը, երևի, կարող է արթնացրել նրա մեջ կամ հիշել է մի բան:

— Դու դարձյալ մենա՞կ ես, Զարմանդուխտ,— հարցրեց Պապը մի ձայնով, որի մեջ կար թե մեղմ հանդիմանություն և թե քնքշանք:

— Այո, Պապ,— հառաչեց Թագուհին:

— Ինչո՞ւ: Ես քեզ խնդրել եմ, որ պալատական տիկիններով, իշխանուհիներով հետ լինես, զրուցես, զբաղվես, որ չձանձրանաս մենակ:

Թագուհին նորից հառաչեց անխոս:

— Գիտեմ, Զարմանդուխտ, այսօրվա տապյոմի օրագիրը քեզ: Երևի նորից հիշել ես Տայքը, հարցազանների համ Բիզանդիոնը, ուր այնքան զվարճություններ կային: Ես էլ, տեսնում ես, մինչև զբաղված, ազատ ժամ քիչ ունեմ... պիտի ներողամիտ լինես...

— Ոչ, Պապ, իզուր ես կարծում, թե ես տխուր եմ այսօրվ:

բոլորովին. օրերս անցնում են մեկտ զբաղումների մեջ, երեխաների հետ, իշխանուհիների և պալատական կանանց շրջապատում, որոնք շատ սիրալիր ու պատրաստակամ են իմ հանդեպ, մանավանդ վասկանուշն ու Շուշանիկը (առաջինը հաթի կլինի էր, երկրորդը Երեմիայի): Ես գանգատվելու կամ դժգոհելու առիթ չունեմ, Պապ: Սակայն...

Եվ Թագուհին, կարծես չիմանալով ինչպես շարունակել, կանգ առավ:

— Բայց և այնպես այսօր շատ տխուր ես երևում, Զարմանդուխտ:

— Իմ տխրության պատճառն այսօր այլ է, Պապ: Սա, երեկ կուզես, ոչ թե տխրություն է, այլ անհանգստություն...

Պապն ուշադիր նայեց Թագուհու աչքերին, որոնց մեջ նա նշմարեց թախիծ և վախ:

— Անհանգստությո՞ւն: Ինչո՞ւ և ինչի՞ համար: Ի՞նչ է անհանգստացնում քեզ, Զարմանդուխտ սիրելի: Սա՛, երեկ գաղտնիք չէ:

— Ոչ, Պապ,— գլուխը բարձրացնելով իր երկնագույն աչքերով Թագավոր-մոմունն նայեց Թագուհուն:— Ես գաղտնիքներ չունեմ և չեմ կարող ունենալ, մանավանդ քեզնից: Իմ անհանգստությունը քո մասին է: Ես անհանգստացած եմ քեզ համար:

Պապը նորից զարմացած նայեց Թագուհուն:

— Ի՞նձ համար: Ինչո՞ւ,— ժպտաց նա:— Ես ինձ հիվանդ չեմ զգում և, փառք աստծո, թշնամիներին քշել ենք մեր երկրից, Մուշեղ սպարապետն արդեն վերջացնում էր մեր երկրից անջատված մասերը միացնելու գործը և, հույս ունեմ, աշխատանքն ամեն բան լավ կլինի: Ես, կարծեմ, թշնամիներ չունեմ և, ընդհակառակը, շրջապատված եմ բարեկամներով և չեմ կարող ասել, թե ժողովուրդը դժգոհ է ինձնից...

— Ժողովուրդը, այո,— խոսեց Թագուհին դարձյալ մտահոգ ձայնով,— մանավանդ ռամիկները՝ չինական ու արհեստավոր: Ես այդ գիտեմ. քանի որ դու նրանց թևթևացնում ես տուրքերից, ուրախ հացկերույթ տվիր քաղաքացիներին.— Գրանք, հարիսայ, գոհ են...

— Լավ, Զարմանդուխտ, եթե այդպես է, հապա ինչո՞ւ ես անհանգիստ լինձ համար,— տարակուսեց Թագավորը:

— Բայց ես չասացի բոլորը, Պապ: Կան և շատ դժգոհներ:

— Ովքե՞ր, օրինակ:

— Մի քիչ դու մոռացել ես հոգևորականներին, Ներսեհին:

— Ոչ, Զարմանդուխտ, չեմ մոռացել: Նրանք հարկավ, չեն կարող դոհ լինել լինձնից, մանավանդ տուրքերի հրամանից հետո: Ես այդ գիտեմ; և ուրիշ բան էլ չեմ ազատում նրանցից:

— Բայց ոչ միայն դոհ չեն, Պապ, այլև... Ես վախենում եմ ասել, ինչ լսել եմ, Պապ:

— Վախենո՞ւմ ես,— տարակուսած ժպտաց Պապը:— Ո՛ւմից: Լինձնի՞ց... Վախենալու կարիք չկա: Համարձակ կարող ես ասել, ինչ լսել ես... Նրանք, հավանորեն, նեղվում են լինձ, դուցե և համարում հեթանոս, որ կորում եմ եկեղեցու և վանքերի եկամուտը...

— Ոչ, Պապ, ավելի՛ վատ: Ինձ ասին, որ նրանք...— Եվ Թագուհին տագնապած ձայնով ու չարժումներով պատմեց լսածը, թե կաթողիկոսը զայրացած է և պատրաստվում է Պապի հրամանը առիթով նամակ գրել հոռոմաց կայսեր և կեսարիայի մետրոպոլիտին:— Ի՞նչ կլինի, Պապ, եթե իսկապես գրի, կամ դուցե արդեն գրել է,— վերջացրեց Թագուհին և նորից վախով նայեց ամուսնու դեմքին:

Բայց Պապը հանգիստ էր. այդ երևում էր մանավանդ նրանից, որ նրա աչ կիսադեմը, որ ներքին խռովքից ցնցվում էր միշտ, հիմա բոլորովին անշարժ էր:

— Այդ դու որտեղի՞ց իմացար, Զարմանդուխտ,— աչքերով ծիծաղից Պապը:

— Մեր պառավ Հասանեթը պատմեց: Նա է լսել... Դու մի ափսոսարհի այդ, Պապ: Ես վախենում եմ... կայսրը կարող է քարկոծել...

Պապը նորից ժպտաց:

— Միամի՛տ խոսքեր... Կայսրն այդպիսի բաների չի կարող միջամտել: Դա ասում և տարածում են հոգևորականները իրենք, որ մեզ վախեցնեն, Զարմանդուխտ: Վաղեսը կարծես ուրիշ գործ և պրպտում չունի, որ հետաքրքրվի, թե մենք ինչ ենք անում,

այստեղ: Թագուհիս, վաղեսին հետաքրքրում է միայն այն, որ մենք բարեհամ ու դաշնակից մնանք իրեն. իսկ թե ի՞նչեր կանենք մեր երկրի ներսում կամ չենք սոխ՝ դա նրան բնավ չի զբաղեցնում: Հասկանալի՞ է: Եվ ոչ էլ կեռատիայի միտրոպոլիան իրավունք ունի խառնվելու մեր գործերին:

— Բայց, Պապ, եթե Ներսեսը դրի և խնդրի, որ միջամտե՞ն:

— Նախ, Զարմանդուխտ սիրելի, այդ բանը չի կարող լինել,— Պապը նստեց Թագուհու դիմաց և մեծ սպիտակ ձեռնոցը դրավ ծնկներին: Իսկ եթե գրի և նրանք փորձեն միջամտել՝ մենք կպատասխանենք, ինչպես հարկն է:

— Իսկ չի կարող պատահե՞լ, Պապ, որ նրանք պահանջեն, որ դու հրամանդ ետ վերցնես. կամ պնդեն, թե այդպիսի բան մի անի, դա եկեղեցուն վնաս է... կամ, ես մինչև խոկ վախենում եմ մտածել, պատերազմ սկսեն քո դեմ...

— Իզուր ես խոչհում այդպիսի բաներ, Զարմանդուխտ: Ինչո՛ւ:

— Զգիտեմ, Պապ. ինձ թվում է՝ ամեն բան կարող է պատահել, և առաջին հերթին հոգևորականները կարող են թշնամանալ քեզ և...

— Եվ ի՞նչ:

— Եվ վնասել:

— Դու կարող ես հանգիստ լինել, Թագուհիս: Այդ չի կարող պատահել: Իսկ թշնամությունից չպետք է վախենալ: Պարսից Շապուհ թագավորը նույնպես թշնամի է մեզ, ուրեմն վախենանք և չանե՞նք ոչինչ:

— Ինձ թվում է, Պապ, Ներսեհին թշնամին ավելի վտանգավոր է լինում, քան արտաքինը: Արտաքինը հայտնի է՝ կպատրաստես, կուվել նրա դեմ, բայց Ներսեհը, որ թաքնված է լինում... Ի՞նչ կարելի է անել... Մի խոսքով, ես քաղաքագետ չեմ, Պապ, և այդ հարաբերություններից շատ բան չեմ հասկանում: Միայն վախենում եմ և, խնդրում եմ, զգուշացիր, խնայիր քեզ, զավակներիդ և... և ինձ:

Թագուհու ձայնը կերկերաց և նա քիչ մնաց հեկեկար:

Այս անգամ Պապը հուզված վեր կացավ տեղից:

— Դու խղուր ծանր մտքերով քեզ մի հուզի, Թագուհիս: Դա ավելորդ է: Դու պետք է իմանաս՝ քանի որ ես կոչված եմ այս երկրում թագավորելու, պետք է անեմ այն, ինչ թելադրում է իմ խիղճը, երկրի կարիքը և պետության շահը: Մի՞թե դու հուզվեր որ ես քաղցած, պատերազմներից ավերված ռամիկներին, չինականներին ստիպեի հարկ ու տուրք տալ եկեղեցուն, որ պարապ ու ծույլ մարդիկ ուտեն և ոչինչ չանեն... Եթե չեմ կարող օգնել դրանց, գոնե թույլ չտամ, որ ծանրացնեն նրանց վիճակը:

Թագուհին ակնրությամբ նայեց Պապին. նրա կրոնական զգացմունքները կարծես վիրավորվեցին:

— Պապ, ինչո՞ւ այդպես խոսս: Չէ՞ որ նրանք աստծու մարդիկ են: Իրենց զրկել են աշխարհի բոլոր վայելքներից և իրենց անձը նվիրել աստծուն, ժողովրդին, երկրին, աղոթքի...

Նա ուզում էր ասել նաև ինչ-որ կարևոր մի բան, բայց հանկարծ սրահի դուռը բացվեց և երևաց Թագուհու պառավ դայակի գլուխը:

— Թագուհիս, կաթողիկոսը գալիս է պալատ,— ասավ նա հևասպառ, շնչակտուր ձայնով, որ ցույց էր տալիս, թե չտապել է այդ կարևոր լուրն անմիջապես իր Թագուհուն հայտնելու և դրանով նրան ուրախացնելու թե նախազգուշացնելու:

Եվ այդ ասելով՝ նա ուզում էր մտնել ներս, բայց, Թագավորին նկատելով, ետ-ետ գնաց, ամաչելուց գլուխը կախելով և ձեռն ակամա բերանին դնելով:

Սակայն Թագուհին այդ լուրից փոխանակ ուրախանալու, աստիճ չփոթվեց. նա տլտսյալած մոտեցավ Պապին և, նրա խոշոր սպիտակ ձեռները բռնելով և ուղիղ նրա խոժ աչքերին նայելով, խնդրեց.

— Պապ, աղաչո՛ւմ եմ, մեղմ և զիջող եղիր հետը: Վարվիր այնպես, որ չբարկանա: Ես վախենո՛ւմ եմ... նրա նոզվքից...

***

Ներսեսի այցելությունը սովորաբար մեծ հետաքրքրություն ու խրախանքում էր առաջ բերում պալատում. գուցե այն պատճառով, որ պալատ գալիս էր մշտ վարդապետներով ու վալեր-

կոպտաներով շրջապատված, խորհրդավոր ու պատկառազդու՝ մի խմբով. մանավանդ ներշնչող էր նրա արտաքինը, բարձրահասակ, ճերմակամորուս, վեհատես ու մարդարեաձեմ, ոսկե խաչով զարդարված գավազանը ձեռին: Այնպես որ ամենքը ոչ միայն պատկառում, այլև խոնարհվում էին նրա առաջ, մանավանդ նրա հրացայտ խոշոր աչքերի թափանցող հայացքի առաջ:

Կարգ էր, որ միջնարերդի դռներին հսկող զրահակիր նիզակավոր պահակները ոչ մի իշխանի կամ նախարարի առջև խնդրո դուռ չէին բանում՝ մինչև չառնեին պալատի կառավարիչ-նախարարի կարգադրությունը, բայց Ներսեսի առջև բանում էին ակնածանքով, դեռ չմոռեցած, որովհետև նա հոդևոր պետ էր, ազգեցիկ. նրան նույնիսկ համարում էին թագավորին հովանավորող և ճշմարիտ ուղի ցույց տվող: «Եթե Ներսեսը չլինի՝ Գագը, երիտասարդ մարդ, ինչ կարող է անել: Ներսեսն է, որ խելք, իմաստություն է սովորեցնում նրան»,—այս կարծիքն էին ոչ միայն չինականն ևս նախարար, արհեստավոր ևս իշխան, այլ և ինքը Ներսեսը, որ Դվինն գալիս էր ոչ միայն իբրև հոգևոր պետ ու հայրապետ, այլև իբրև մեծ իր պարտքն էր համարում խրատներ տալ երիտասարդ թագավորին, ևս ինչպես պետք է իրեն պահի, ինչպես վարվի, շրջահայաց լինի և խորհրդակից մեծերի հետ. չգործի միայն սրտով, այլև սաւը դատողությամբ: Նա սովորաբար Գագի հետ խոսում էր իբրև անփորձ պատանու հետ. մեղմորեն հանդիմանում էր նրա այս կամ այն քայլը և միշտ հրավիրում զգուշության ու չափավորության, որ իր արածներից չառաջանան վնասներ ու անախորժություններ: Պետք է ասել, որ երիտասարդ թագավորին հաճելի չէին լինում այդ խրատները. նա նեղվում էր դրանցից, նրա ինքնասիրությունը վիրավորվում էր և նա թեթևացած չունչ էր քաշում միայն նրա գնալուց հետո: Այդ տեսակցությունների ժամանակ Գագը նկատում էր, որ Ներսեսն ավելի մոտածում է իր եկեղեցիների ու հիմնած անկելանոցների մասին, քան պետության, որ նա մի նպատակ ունի—եկեղեցու իշխանությունը բարձր պահել և տարածել բոլորի վրա և անգամ իրեն՝ թագավորի վրա:

— Նա ուզում է՝ բոլորս վարդապետ պատնանք և ենթարկվենք իրեն,— վտանգից բաթը կաթողիկոսի մի ազգեցություն-

նից հետո, երբ Ներսեսն արքայադպիր Երեմիային առաջարկից մտնել վանք, ձեռնադրվել վարդապետ և իր գերությամբ օգտակար լինել եկեղեցուն: Երեմիան պատասխանեց. «Դա հեռու ապագայի խնդիր է, հայրապետ»: Նրա այս պատասխանը Պապին ու Բաթին շատ դուր եկավ, և նրանք երբեմն, հաճախ հետևելով այդ, ծիծաղում էին երկար:

Ներսեսը պալատ գալիս էր գլխավորապես այն դեպքերում, երբ խնդիրը վերաբերում էր եկեղեցուն, կրոնին և իր հեղինակությանը: Եվ սրանն անգամ նրա գալը, ինչպես ասինք, մեծ հետաքրքրություն էր հարուցում:

Այդ միջոցին, երբ Թագուհին խնդրում էր Պապին՝ հարդանքով ընդունել կաթողիկոսին և պատվով ու հարգանքով ճանապարհ դնել,— այդ պահին ամբողջ պալատն արդեն մեծ լրբրանգման մեջ էր. սպասավորներից սկսած մինչև ավագանիները. նաժիշտներից մինչև իշխանուհիները անհանգիստ հետաքրքրված, անցնում էին սրահից-սրահ, վազում էին դեպի փոքրիկ, նեղ լուսամուտները, կամ վերի հարկից քարե ոլոր աստիճաններով իջնում էին վարի հարկը և գնում դուրս՝ Ներսեսի գալը տեսնելու: Մի մեծ խումբ արդեն այնպարզ ճեմելիքը բռնած՝ նայում էր դեպ միջնաբերդ եկող ճանապարհը, որով շարժվում էր ծերունի կաթողիկոսի կառքը՝ շրջապատված ձիավոր եպիսկոպոսներով ու վարդապետներով, սև մարդկանց մի ահագին թափոր: Իսկ պալատի միջանցքներում ու բակում շարունակ լսվում էր, թե ինչպես մարդիկ շշուկով ու վախով հաղորդում էին լուրը.

— Վեհը ժամանում է... Հայրապետը գալիս է...

Իսկ ոմանք չհոթվածծ հարցնում էին. «Իսկ ինչի՞ է գալիս: Գիտե՞ք»: Եվ շատերը ենթադրում էին, որ նա գալիս է, հավանորեն, Թագավորին հանդիմանելու տուրքերի հրամանի համար, և նախատեսում էին, որ Պապը չի դիմանա նրա խոսքերին ու ներկայությանը և տեղի կտա:

— Պապն, անշուշտ, կսմաչի հայրապետից,— ասում էր նախարար Զենոն Գնունին իշխան Օտա Ապահունուն:— Թագավորը երկար չմտածեց և այդ հրամանն արձակեց: Գոնե խորհրդակցեր մեզ հետ:

— Ախո՛ս, եթե սպարապետն այստեղ լիներ՝ Պապն այդքանը չէր անի,— նկատեց Օտա Ապահունին:— Եվ այսպիսի դրություն չէր ստեղծվի: Արշակից հետո կաթողիկոսն ու արքունիքն հաղիվ հաշտվել էին և ահա նորից...

— Ը՛սս, Օտա իշխան, պատերն էլ ականջ ունեն այստեղ,— ղուշացրեց իր բարեկամին Զենոն Գնունին:

— Ինչպես չխոսեմ, երբ հիմա էլ, ասում են, իր տղաների հետ մտածում է եկեղեցու հողերն առնել և տալ չինականներին,—չարունակեց կարճ ու դեղ Օտա իշխանը հևալով:—Գոնե Մուշեղ սպարապետը շուտ դար, որ այս բոլորի առաջն առներ...

— Ը՛սս, իշխան Օտա: Գնանք հայրապետին դիմավորելու,—ասաց Զենոն Գնունին:— Պետք է խմացնել նաև մյուս ավագանիներին և իշխաններին:

Ներսեսի դալն իմանալով՝ Պապը դնաց դահլիճ: Ավելի շուտ՝ Երեմիան ու Բաթը որոնեցին Պապին և կանչեցին դահլիճ: Պապը, նրանց օգնությամբ վրան առավ արքայական ծխրանին, ականջներից ցած իջնող,ծայրերում խոպոպ կազմող մազերը հարդարեց ու մնաց դահլիճի մեջտեղը կանգնած, կարծես ինչ անելը չիմանալով: Բայց, լրոք, նա չփոթված էր. մտածում էր, որ Ներսեսը գալիս է անշուշտ իր հրամանի մասին խոսելու. ի՞նչպես պիտի պահեր իրեն և ի՞նչպես պիտի խոսեր այդ ծերունու հետ. նա միշտ հարգանք ու պատկառանք էր զգում դեպի նրա գեղինակությունն ու անձը և նրա՝ ներկայությամբ նույնիսկ ընչվում էր ու չէր կարողանում խոսել ամեն ինչի մասին. վնսկ հիմա պիտի բացատրվեր մի այնպիսի խնդրի շուրջ, որ անկասկած պետք է շատ հուզած լիներ ծերունուն:

— Ուրեմն գալիս է,— ասաց նա Երեմիային ու Բաթին և, իր չփոթմունքը թաքցնելու համար կարծես, ժպտաց:— Երևի, նորից պիտի սկսի խրատել...

Երեմիան, որ նույնպես չփոթված էր և լավ բան չէր սպասում այդ այցելությունից, ասաց մխայն. «Տեսնենք»: Իսկ Բաթը հարեց անտարբեր.

— Թող գա, առանձին կարևորություն չպետք է տալ, Պապ: Երկրի բազավորը դու ես և ոչ թե նա...

— Այսուամենայնիվ՝ դուք մնացեք այստեղ,— ասաց Պապը

Երեմիային և Բաթին, որ ուղում էին դուրս գնալ դիմավորելու, և նրանց այնպես թվաց, թե Պաղը չի ուզում մենակ լինել Ներսեսի հետ, ինչպես պատահել էր մեկ-երկու անգամ, վախենալով, երևի, թե մենակ կճնշվի, այլ ցանկանում է, հավանորեն, լինել պաշտոնական, լավ իմանալով որ նա գալիս է անշուշտ իր հրամանի, տուրքերի հրամանի մասին խոսելու:

Մի երկվայրկյան հետո գահասրահի լայն ոսկեզուն դռները բացվեցին և մյուս սրահում երևաց առաջ եկող պարթևահասակ, ոսկրոտ ու նիհար ծերունի կաթողիկոսը՝ երկար, ճերմակ մորուսը կրծքին, ոսկեզուն խաչը վեղարի ճակատին և ոսկեխաչով գավազանը ձեռին, որ նրա իշխանության նշանն էր: Նրան հարգանքով ու ակնածանքով ուղեկցում էին ավագանիներից՝ հազարապետ Ամատունին, սալարի կառավարիչ Զենոն Գնունին, թանձրամարմին Օտա Ապահունին և մյուսները՝ եպիսկոպոսների ու վարդապետների հետ խառնված: Մոտենալով գահասրահի դռներին նրան հետևող հոդևորականների մեծ մասը մնաց հափևան սրահում, և կաթողիկոսի հետ ներս մտան միայն ավագանիները և վեց բարձրահասակ ու առողջ եպիսկոպոս (որոնց մեջ էր և հայտնի Հակոբ քարոզիչը, Գրիգորիս Լուսորին, Զենոբ գրագիրը) և չորս վարդապետ, որոնցից մեկն իր քարտուղար կամ դպրապետ Փավստոսն էր: Շրջապատողների մեջ Ներսեսն իր դանդաղ ու սիրտ ընթացքով, իր անշտապ ու ազնվական շարժուձևերով թվում էր մի ծերունի մարգարե: Դեմքի մազադաթյա մաշիկը թվում էր փղոսկրից ճաքճքած, բայց աչքերը, սև խոշոր աչքերը, որ վառվում էին խոհուն ու տենդոտ մի փայլով, կարծես լուսավորում էին այդ դեմքը և նրան տալիս մի վեհ ու ազնիվ արտահայտություն: Հաղիվ նա՝ գավազանը հատակին թխկացնելով, դռնից ներս էր մտել, երբ Պաղը, ընդունված կարգի համաձայն, կարծես փորձելց ընդառաջ գնալու, ասկայն Ներսեսը ձեռը բարձրացրեց և երեք մատով խաչակնքեց Թագավորին, գահասրահը և նրա մեջ եղած մարդկանց:

Բոլորը ղլուխ խոնարհեցին:

Դրանից հետո ծերունին նստեց գահի դեմը դրված մեծ ու փափուկ բազկաթոռին՝ ոսկեզուն երկար գավազանը տալով իր

պիէր Փավստոսին, որ կանդնեց նրա աջ կողմը՝ նիզակաձոր սահակ զինվորի նման ուղիղ, ճիգ և անշարժ: Ու մինչ Պապը հյնստեր գահի վրա— Ներսեսն իր խոշոր աչքերի թափանցող հայացքով, կարծես ակամա, նայեց հավաքված ավագանիններին, նաև Բաթին ու Երեմիային, որ կանգնած էին գահի աջ և ձախ կողմը և որոնց նա ճանաչում էր ճանապարհից՝ Բիզանդիայից Հայաստան վերադառնալիս:

Նայեց և հայացքն անմիջապես դարձրեց այլ կողմ:

Պապին թվաց, թե Ներսեսը գոհ չէ, երևի, որ իրեն ընդունում է այդ երիտասարդների ներկայությամբ և ինքն, իր հերթին, նայելով հավաքվածներին, չգիտես քաղաքավարության համար թե չիմանալով ինչից սկսի խոսակցությունը, ասավ.

— Բարի է, անշուշտ, հայրապետի գալուստը...

Ներսեսը նայեց ուղիղ Պապին և՝

— Հայրապետի գալուստը չի կարող չար լինել, արքա,— ասավ նա հանդարտ,—բայց ես կուզեի մինակս խոսել քեզ հետ՝ իմ դպիր հայր Փավստոսի ներկայությամբ,— ավելացրեց նա նույնպես հանդարտ, բայց առարկություն չվերցնող ձայնով:

«Ուրեմն սկսվում է» մտածեց Պապը և ակամա նայեց Երեմիային ու Բաթին մի հայացքով, որն ասում էր կարծես, թե պետք է ենթարկվել, պետք է ծերունու ցանկությունը կատարել, որքան էլ դա իրեն հաճելի չէ: Առաջինը դուրս ելան Ներսեսին ուղեկցող եպիսկոպոսներն ու վարդապետները՝ հարգանքով ու հնազանդ, նրանց հետևեցին պալատի ավագանիները՝ հազարապետ Ամատունու գլխավորությամբ. դրանց հետ դուրս եկան և Երեմիան ու Բաթը: Սակայն Պապին չատ անախորժ էր, որ իր բարեկամները գնացին, իսկ նիհար ու մանրաչ Փավստոս վարդապետը մնաց: Այս նոսրամորուս վարդապետն այնքան տհաճ էր նրան, որ ուզեց ասել, թե ինքն էլ կուզեր, որ մենակ լիներին, բոլորովին մենակ, բայց գտավ անհարմար. այդ իրեն վայել չէր՝ որպես հյուրընկալի և արքայի. չարժեր այդքան մանրախնդիր լինել: Մյուս կողմից՝ աշխատեց զսպել իր ատելությունը դեպի այդ թխադեմ ու կարճ վարդապետը, որ սոլորություն ուներ մարդկանց նայել աչքերը բացախնելով:

Երբ ամենքը դուրս գնացին՝ Ներսեսը մի առժամ լուռ, հան-

դաբրա նայեց Պապին. թվում էր ոչ թե նայում, այլ ուզում է թափանցել դեմքացինի ներսը և, հանդստանալով, միաժամանակ խորհել իր անելիքը:

Սակայն այդ լռությունը տհաճ էր Պապի համար և նա, կամենալով մի բանով խզել այն, հարցրեց.

— Ինչպե՞ս է հայրապետի առողջությունը:

Սասավ և խակույն զգաց, որ ավելորդ էր և անբնական. դա քաղաքավարական մի ձև էր, որ ուզեց գործադրել Պապը, բայց և անմիջապես զգաց, որ դրա ժամանակը չէր և կաթողիկոսին այդ, երևի, չէր էլ հետաքրքրում:

Ներսեսը սովորաբար Պապի հետ խոսում էր եբրև պատանու հետ, որին պետք է խրատել կամ բան հասկացնել: Այս անգամ էլ սկսեց նույն եղանակով:

— Դու այս ի՞նչ հրաման ես արձակել, Պապ,— ասավ նա իր սև խոշոր աչքերը թագավորի վրա սևեռած և, չսպասելով Պրա պատասխանին, շարունակեց հանդարտ, առանց ձայնը բարձրացնելու:— Եվ մի՞թե չգիտես, որ վանքերն ու մենաստանները ժողովրդյան համար են և ուրեմն պիտի ապրեն նրա հաստուքյուներով:

— Բայց, հայրապետ...

— Սպասիր,— ձեռը թեթևակի բարձրացրեց Ներսեսը, որ Պապն իրեն չընդհատի:— Մի այդպիսի գործ անելուց առաջ դու պետք է լավ կշռադատեիր, դավակս, ապա հարցնեիր քո հայրապետի կարծիքը, քանի որ դու տակավին չունես կյանքի փորձ և վատ գի լինդիրը շատ նուրբ է և եկեղեցուն...

— Բայց, հայրապետ,— նորից փորձեց խոսել Պապը, սակայն կաթողիկոսը դարձյալ ընդհատեց նրան.

— Սպասիր. սպասիր և լսիր, թե ի՛նչ է ասում քո հայրապետը:—Այդ հրամանով դու վնասում ես ոչ միայն մեր եկեղեցուն, քրիստոնեության սուրբ գործին, այլև հայոց աշխարհին...

— Բայց մի՞թե, հայրապետ,— գահի վրա առաջ թեքվելով՝ ընդհատեց Պապը կաթողիկոսին,—մի՞թե քրիստոնեությունը կվնասվի եթե մեր եկեղեցին մտածի հինականների մասին:

— Նա այդպես էլ անում է, Պապ, այդպես էլ անում է,— հանգիստ, առանց հուզվելու նկատեց Ներսեսը։—Նա մտածում է բոլորի մասին, թե ռամիկի, թե չինականի, թե նախարարի և թե թագավորի մասին։

— Սակայն չինականներից բոլի տուրք հավաքել այն ժամանակ, երբ նրանք ավերվել են պատերազմից և երկու տարի չեն ցանել իրենց հողերը։

— Եկեղեցին նույնպես ավերվել է, զավակս, և նրա սպասավորները կարիք ունեն աննղի, որ նորոգեն ամենը և կատարեն իրենց սուրբ պաշտոնն աստծո առջև։

— Բայց տանել չինականի վերջին պատառը, հայրապետդա որքան հարմար է աստծու պաշտոնյային։ Չէ՞ որ ամեն մի երկիր կանդուն է իր չինականով։

— Դու ճշմարիտ ես, Պապ,— համաձայնեց կաթողիկոսը, դարմացած այդ նոր մտքերի վրա և ուշադիր հետևելով թագավորի աչ երեսին, որ սկսեց խաղալ նրա վերջին խոսքերի հետ միասին։

— Նրանք, որ մշակում են հողը և հաց տալիս երկրին,— շարունակեց Պապը հուզվելով, բայց իսկույն էլ ամաչեց, որ ձայնը բարձրացնում է և այդպիսի պարզ բաներ է ասում։—Ես քեզ չեմ ասում, հայրապետ։ Դու այդ դիտես բոլորից լավ։ Բայց ինչո՞ւ քո եպիսկոպոսները, վարդապետները...

— Բոլորին չես կարող իմաստուն դարձնել, Պապ, հոտի մեջ լինում են և տկար ոչխարներ։ Եվ, վերջապես, նրանցից չի կարելի պահանջել աշխարհային խելք և իմաստություն։ Նրանք աստծո պաշտոնյաներ են. նրանք պիտի ճգնեն և աղոթեն։

— Այդ դեպքում ի՞նչ են անում հողը, կալվածները, և այդքան շատ։

— Այդ հողերը եկեղեցուն և վանքերին նվիրել է Տրդատ թագավորը, որ դրանց հասույթով ապրեն եկեղեցականները։

— Ապա ինչո՞ւ սուրբ հայրերն իրենք չեն վարում և չեն ցանում։

Ներսեսը ժպտաց ներողամիտ։

— Երկրայինը չափազ է բեռ լինի աստծու պաշտոնյաներին, զավակս։

— Իսկ տաճանորդը և պաղին նույնպես երկրային են, հայրապետ:

— Դա անհրաժեշտ է, որ նրանք կենդան մնան և աղոթեն եկեղեցի ու ժողովրդի համար, նրա բարօրության համար: Նրանք լինելոց մարմինը և հոգին նվիրել են աստծուն:

Յոսելիս՝ Ներսեսի դեմքն ավելի վեհ տեսք էր ընդունել և հրամայող արտահայտություն: Թվում էր՝ ոչ թե թագավորի հետ է խոսում, այլ պարտազանց մի որդու, որ չէր հասկանում աստծո ու պատիժը: Կար նրա հայացքում և ներողամտության պես մի բան, թե ինքը կարող է ոչնչ վրակել նրա սխալների հանդեպ, եթե նա դիտակցի իր այդ սխալները:

Լսում էր Պապը կաթողիկոսին և նրան թվում էր, թե Ներսեսը, չնայած իր իմաստության համբավին, բարձր խելքին, ասում էր ինչ-որ հակասական ու անհարիր բաներ: Բայց, նկատելով նրա ծերության, չէր ուզում վիճել հետը և ցույց տալ նրա աստծնների անհետևողականությունը: Ու լռեց, ապասելով նրա խոսքի շարունակությանը: Իսկ Ներսեսը մի տավտյրկյան մտածելով՝ նորից դարձավ թագավորին.

— Արձակելով այդ հրամանը՝ մոռացե՞լ ես, Պապ, թե ինչով և ինչպես պիտի ապրեն վանական միաբանությունները, կուսանոցները, անկելանոցները, քահանաները:

— Քանի որ սկսել ենք, հայրապետ, թույլ տուր հարցնել, թե ինչո՞ւ համար են այդքան միաբանությունները, կուսանոցները, անկելանոցները: Մի՞թե չի կարելի արձակել դրանց մի մասը:

— Ինչպես կարելի է, Պապ. ինչպես կարելի է,— նորից ժպտաց Ներսեսը ներողամիտ:

— Ինչո՞ւ ոչ, հայրապետ: Կուսաերն, օրինակ, դեռատի կուսները թող ամուսնանան. իսկ անկելանոցներում, որքան լսել եմ, հավաքվում են տասնվեցտասն ձրիակեր անաչխատները...

— Ասվածընդդեմ խոսքեր մի ասի, Պապ,— նկատեց Ներսեսը:

— Ես խորհում եմ, հայրապետ, որ այնքան շատ մարդ է հավաքված եկեղեցու շուրջը, որ այդ ամենին կերակրելը դժվարին է:

— Աստված չի կորցնի իր սպասավորներին,—պատասխանեց Ներսեսը,— երկիրն ունի կարիք քարոզիչների և հովիվների:

— Բայց մի՞թե այդքան շատ:

— Առատությունն աստծու պարգևն է:

Պաղլին թվում էր, թե կաթողիկոսը հրաժարվում է պատասխանել ուղիղ դրված հարցերին: Ուստի որպեսզի ուղղակի պատասխան լսի՝ նա հարցրեց.

— Իսկ կուսանոցները: Ինչո՞ւ համար են այդ կուսանոցները, որոնց մեջ, որքան գիտեմ, ոչ քարոզիչներ են պատրաստվում, ոչ հովիվներ: Մի՞ղք չէ արդյոք կյանքից ու վայելքից զրկել այդքան դեռատի աղջիկներ և մատնել նրանց ճգնության ու մխանճության: Մի՞թե այդ հասակում նրանք կարող էին այնքան մեղք գործել, որ կարոտեին ապաշխարելու:

— Անարատ հոգիները պետք է կտրվեն աշխարհային մեղքերից, որ արժանի լինեն աստծո շնորհին: Դու այս պետք է լավ իմանայիր, Պապ:

— Բայց չէ՞, որ, հայրապետ, մարդը ծնվում է աշխարհը վայելելու, ուրյդ կազմելու և սերունդ թողնելու: Ինչո՞ւ ամենքը կարող են այդպես լինել՝ թե բնության մեջ, թե մարդկային կյանքում, և միայն մի քանի հարյուր, մի քանի հազար դեռատի աղջիկ պիտի զրկվեն աշխարհի վայելքներից և...

— Մեր տեր Հիսուս-Քրիստոսը նույնպես չվայելեց կյանքը և ուրյդ չկազմեց: Մի՞թե չգիտես, որ կույսերը Քրիստոսի հարսնացուներն են անարատ. անարատ, ինչպես գարնան ցողը և երկնքի աստղը... և այդ մաքրությամբ նրանք արժանի կլինեն դրախտին:

Պապը նայեց կաթողիկոսի մարդաբեական դեմքին, հրաբորբ խոշոր աչքերին, և զարճյալ նրան մութ ու անհասկանալի թվացին նրա խոսքերը, և նա, առանց երկար խորհելու, ասես մղվելով լոկ երիտասարդության թախիծ՝ հարցրեց:

— Իսկ ո՞վ պետք է զինվորներ հասցնի երկրի համար:

— Դրա համար կան մայրեր:

— Թող այդ մայրերի թիվը լինի շատ:

Ներսեսը ներողամիտ, բայց դառնությամբ ժպտաց:

— Ցավում եմ, Պապ, որ այդ պարզ բաները պիտի բա-

ցատրեմ քեզ: Բայց, ի դեպ, լսած եմ, որ դու եղել ես մի հղումաժողում և ասել ես խոսքեր, որ չատ է զարմացրել մայրապետներին և բոլոր լսողաց: Քո երիտասարդությունը տակավին փորձ չէ և դու պետո է մշակես թագավորին վայել վարմունք...

«Սկսվեց խրատաբանությունը» մտածեց Պապը, միաժամանակ զարմանալով, որ իր և ընկերների ծպտյալ շրջագայությունը իմացվել է և հասել մինչև խոկ Ներսեսին: «Ուրեմն հետևողներ են եղել մեզ» ասավ նա մտքում և հարցրեց.

— Իսկ ո՞րն է իմ վատ վարմունքը, հայրապետ:

— Այն, որ քրիստոնեությունը տակավին երկրում չամրապնդված՝ դու այդպիսի հրամաններ ես տալիս և այդպիսի խոսքեր ես խոսում: Քո արածներից կստացվի այն տպավորությունը, որ դու դեմ ես քրիստոնեության, և այդ կարող է բարկացնել կեսարիայի սրբազան միտրոպոլիտին:

Պապը զարմացավ.

— Ի՞նչ առնչություն ունի, հայրապետ, հռոմների միտրոպոլիտը իմ արածների հետ:

— Չէ՞ որ նա՛ է մեր քրիստոնեական եկեղեցու մեծագույն պետը, Պապ:

— Թող լինի: Բայց ինչո՞ւ պիտի միջամտի մեր աշխարհի գործերին:

— Այն գործերին, որոնք վերաբերում են եկեղեցուն, Պապ:

Պապի աչ դեմքը խաղաց:

— Ուրեմն, հայրապետ, դու ցանկանում ես, որ ես ենթարկվեմ հռոմաց պատրիարքին: Այն ժամանակ ես էլ ինչո՞ւ եմ կոչվում հայոց թագավոր: Թող ուրեմն հռոմների պատրիարքը դա և նստի այս գահին,— ձայնը բարձրացրեց Պապը և հանկարծ, տեղից վեր թռչելով, մատնացույց արավ գահը:

Ներսեսը ժպտաց հանդարտ, ներողամտաբար:

— Դու լինճ լավ չես հասկանում, Պապ: Ես խոսում եմ եկեղեցու գործերի մասին. իսկ դրանք ընդհանուր են թե մեզ և թե հռոմաց համար:

— Ընդհանո՛ւր... Ուրեմն դու ևս, հայրապետ, կարո՞ղ ես խառնվել հռոմաց երկրի և եկեղեցու գործերին. կարող ե՞ս կարգադրություն անել նրանց մասին:

— Դու խնդիրը չես հասկանում, Պապ։ Մենք, հարիավ, չենք կարող։ Բայց նա պետք է միջամտի և հետաքրքրվի, քանզի նա է դլուխը եկեղեցու։ Մենք ենթակա ենք նրան, ինչպես քո հոտերը քեզ...

— Սակայն մի՞թե մեր եկեղեցին չի կարող լինել անկախ և ինքը անօրինել իր գործերը...

— Այդ թողնենք, Պապ,— արագ ընդհատեց Ներսեսը նրան, իբրև չհասկացող պատանու։— Դու այդ չես հասկանում։ Ես եկել եմ խոսելու քո հրամանի մասին։ Մտածե՞լ ես արդյոք, որ դրանով վատ օրինակ ես տալիս չինականաց և դրդում ես նրանց վատ բնազդները, ախորժակը։ Այսօր այդ, վաղը նրանք կուզեն այլ բաներ. տանենք վանքի հողերը, որ սուրբ Տրդատը նվիրաբերել է եկեղեցուն։

— Եթե հարկ լինի, հայրապետ, պետք է տալ և հողերը,— վրա բերավ Պապը։— Նախ մտածենք մեր աշխարհի ապահովության մասին։ Չինականը, հայրապետ, չի ապրի առանց հողի և մենք կզրկվենք երկրի պաշտպան զորքից։ Հող ունեցողը կպաշտպանի այն, չունեցողը՝ ոչ... Մյուս կողմից, հայրապետ, դու կամենո՞ւմ ես, որ ես աղքատ ժողովրդի վրա իշխեմ, իսկ դու՝ կուշտ։ Ոչ, ես կուզեի, որ բոլորը լինեն կուշտ։ Ես ինչպես կարող եմ քաղցած ժողովրդից պահանջել, որ նա պետությանն պաշտպանի... Հիշում ես, հայրապետ, դու ինձ համոզում էիր, որ վերցնեմ իշխանությունը, և խոստանում էիր օգնել ինձ։ Բայց ահա՝ մտածում ես միայն քո եկեղեցականների մասին, ինչպես և ամեն մի նախարար քաշում է իր կողմը և ոչ-ոք չի մտածում պետության, երկրի մասին։ Բոլորը մի հոգս ունեն՝ լավ ապրեն և փառք վայելեն, իսկ պետությունը՝ թող ապրի, ինչպես կուզի...

— Սխալվում ես, Պապ։ Եկեղեցին նույնպես մտածում է իր հոտի մասին։ Հոտը մերն է, ինչպես կարող ենք չմտածել նրա մասին։

— Հոտը միայն ձերը չէ, հայրապետ։ Այդ հոտը և թագավորինն է։ Նախ թագավորինը։ Առանց դրան չկա թագավոր։ Հետևաբար՝ ես նույնպես ունեմ իրավունք մտածելու իմ հոտի

մասին,— ձայնը նորից բարձրացրեց Պապը, և նրա աչ երեսը նորից խաղաց:

Թագավորի ձայնի բարձրացման հետ՝ զահասրահի երկրորդ փոքրիկ փայտե դուռը, որի վրա քանդակված էր թևատարած մի արծիվ, կամացուկ ետ գնաց հանկարծ և երևաց Զարմանդուխտ թագուհին՝ իր ասեղնագործ ու ոսկեթել հագուստով, որ նրա ալացիկ լրանը զրկելով՝ հասնում էր մինչև նրա ոտների ծայրը: Նրա դեմքը չատագույն էր և բարձր կուրծքը ելևէջում էր ծանր մի հևքից: Ներսեսի գալը լսելով՝ նա ահաբեկ թողեց ամեն ինչ և եկավ-կանգնեց զահասրահի այդ երկրորդ դռան առջև ու լարված կլանում էր ներսից լսվող ամեն մի բառ: Նրան թվում էր, որ այդ տեսակցությունը հանդիսատ բան չի լինելու, ու պատրաստ սպասում էր, որ եթե խոսակցությունը բարդանա՝ մանի ներս և այդպիսով կանխի փոթորիկը: Եվ ահա Պապի ձայնի բարձրացումը լսելով՝ նա չհամբերեց: Նրան թվաց ակսվում է ու ներս մտավ հուզված:

Նրա երևումը մի վայրկյան ընդհատեց Թագավորի ու Ներսեսի խոսակցությունը, և թագուհին— համակ ակնածանք ու երկյուղածություն—մոտեցավ կաթողիկոսին: Ներսեսն իր ոսկրոտ, չոր աջը մեկնեց նրան: Թագուհին համբուրեց աչն և ասավ մեղմաձայն.

— Օրհնի՛ր, հայրապետ:

— Օրհնյա՛լ լինես, թագուհի,— ասավ Ներսեսը գրեթե անտարբեր և, չոր, ծերությունից արդեն չծալվող մատներով նրան խաչակնքելով: Իսկ երբ թագուհին, ետ գնալով, նստեց տաղնապով համակված ու չատագունած, նա չարունակեց.— Մտածիր, Պապ, որ դրանով կարի վատ օրինակ ես տալիս և կարող ես բարկացնել ոչ միայն ինձ՝ քո հայրապետին, այլև արքայան մխիթարիտին, այլ և կայսեր: Նրանք չեն կարող տեսնել, որ մեր եկեղեցին զրկվում է հասույթից: Դրանով հոգևոր բոլոր հայրերին դու հանում ես քո դեմ, մի բան, որ ես չէի ցանկանա: Վերջապես, հիշիր, Պապ, որ այդ ամենը եկեղեցին ինքը չի սահմանել, այլ մեծ Տրդատ թագավորն է տվել մեզ այդ հողերը և եկամուտները: Հիշիր Աչտիշատի ժողովի որոշումները և զգուշացիր, Պապ,— հանկարծ ձայնը բարձրաց-

րեց Ներսեսը ծեր գլուխը թախտահարելով։— Զղուշացի՛ր, Հուլիանոսը նույնպես եկեղեցու դեմ էլավ և նզովվեց երեք հարյուր յոթանասուն եպիսկոպոսի կողմից, և ասուված պատժեց նրան։

— Բայց մի՞թե ես, հայրապետ,— ձայնն ավելի բարձրացրեց Պաղը,— եկեղեցու կամ քրիստոնեության դեմ եմ, երբ ասում եմ, թե չինականը պատերազմից հետո ի վիճակի չէ հարկ վճարելու։ Ես կարծում եմ, որ Քրիստոսն ինքը, որ տնանկների ու աղքատների պաշտպան է եղել՝ այդ թույլ չի տա։

Ներսեսի մարզարեական դեմքը կծկվեց հանկարծ և նա ոտքի կանգնեց ամբողջ հասակով. ճերմակ մորուսը դողում էր նրա կրծքին, խոշոր, ոսկեպատյալ աչքերը կարծես հուր էին ցայտում. թվում էր պատ է մտել մի զայրացած մարգարե։

— Ուրեմն դու դատապարտում ես ինձ, Պապ. դու, որ այդքան անկորճ ես։ Իմացիր, որ դու խոսում ես հայոց աշխարհի հայրապետի հետ, որ քեզնից ավելի լավ է հասկանում իր երկրի և հոտի կարիքը, բարիքը։

Թագուհին, որ նույնպես ոտի էր կանգնել, վախեցած նայում էր Պապին, որ սկզբում, քերանի անկյուններում հեզնանքի նման մի ժպիտ, նայեց կաթողիկոսին, հետո վեր կացավ այնպես հանկարծ, որ անշարժ փալատոսը աչքերը թարթեց զարմացած։

— Ես հարգում եմ ծերությունդ, հայրապետ, և չեմ ուզում ասել ավելին,— ասավ Պապը ակներև զսպելով իրեն։— Բայց իմացիր, որ եթե դու հայրապետ ես, ես խրտվիլակ չեմ այստեղ նստած, որ տեսնեմ եկեղեցու հայրերի սանձարձակությունը և լռեմ։ Ես թագավոր եմ և պատասխանատու իմ ժողովրդի համար, իմ երկրի համար, նրա պատիվության համար։ Իսկ դու ինձ սպառնում ես նզովքով ու անեծքով։ Ա՛րա՛ ինչ կամենում ես... Դու ինձ վախեցնում ես հունաց մխիթարոլիտով ու կայսրով. բայց մի՞թե ես նրանց դեմ եմ գործում... Ես մտածում եմ իմ ժողովրդի մասին։ Եթե դա հանցա՞նք է...

— Զղուշացի՛ր, պատանի, զգուշացի՛ր,— հանկարծ մատը թափ տվեց Ներսեսը Պապի վրա։— Զգուշացի՛ր...— և զայրացած շրջվեց դեպի դուռը։

Հայր փալատոսը, որ լսում էր աչքերը կիսախուփ ու լար-

ված, մեկեն սթափվեց և զարմացած, գավազանը ձեռին, բռնեց Ներսեսի թևը և ուղեկցեց նրան մինչև մյուս՝ մեծ սրահը, ուր Հայկազունները անմիջապես շրջապատեցին հուզումից դողացող Կաթողիկոսին և տարան դուրս:

Իսկ Զարմանդուխտ Թագուհին, որ վերջին ամբողջ տեսարանի ընթացքում կանգնել էր դունատ ու ձեռներն իրար կցած, հանկարծ նետվեց դեպի Պապը և՝

— Այս ի՞նչ արիր, Պապ,— ասավ սարսափած:— Այս ի՞նչ արիր... Չէ՞ որ խնդրեցի դպույշ լինես և խնայես քեզ և մեզ... Հայց դու... Այս ի՞նչ արիր,— կրկնեց Թագուհին և, ձեռը ճակատին դնելով, անսպասելի արագ դուրս վազեց եկած փոքրիկ դռնով:

Փոքր անց՝ նա իր առանձնարանում աղոթում էր ծնկաչոք նաշված Հիսուսի և զույգ խնկամաններով առաջ, որոնց անուշ ոսկեն առաստաղն բարձրանում ու տարածվում էր լուսավոր դահում, սքողելով պատերի ու առաստաղի նկարները:

Իսկ Պապը մենակ մնալով, ծխրանին ուսերից ընկած բաճացած անց ու զարձ էր անում և խոսում ինքն իրեն.— Բոլորը անկանում են, որ ես ենթարկվեմ, լսեմ իրենց և չհամարձակվեմ մի ինքնուրույն քայլ անել... Մուշեղն ինձ միշտ տղայի տեղ է դնում և երբեմն այնպես է վերաբերվում՝ կարծես անպարակ մի պատանի եմ, որին հարկավոր է դաստիարակություն անել, ահ Ներսեսն ուղում է միշտ խրատել ինձ և ճշմարիտ ուղի ուղղ տալ... Նույնիսկ Տերենտը ցանկանում է, որ լսեմ իր տրհուրդները... Ուրեմն ես խրոմի՞լակ եմ այստեղ, պիտի լսե՞մ բան-նրան, թե կոչված եմ այս դժբախտ երկրում մի ինքնուրույն գործ անելու:

Պապը դեռ չէր մոռացել, թե ինչպես Մուշեղը բարկացած չեց իրեն Զելտավի դաշտում՝ կռվին մասնակցելու համար: Դրա համառոտ թերևս այն էր, որ Մուշեղը չէր ուղում ինքը վտանի ենթարկվի, մտածում էր թերևս իր՝ Պապի ապահովության մասին. սակայն ի՞նչ էր նշանակում Հայր-մարդպետին արճակել ու առթիվ դրած նրա դժգոհությունը, որ նման էր հանդիմանության:

«Ամենին,— մտածում էր Պապը,— դա կարծես հրաման է,

որ չհանդգնեմ նման գործեր անել՝ առանց իրեն»: Եվ Պապին լռում էր, թե դրանցից յուրաքանչյուրն ուզում է խնամակալ դառնա իր դլխին, կամ ինքը չիսառնվի պետության գործերին, ինչ նրանք իր անունով անեն՝ ինչ ուզում են... Իսկ ի՞նքը—ո՞վ է, ի՞նչ է ինքը... Ինչո՞ւ համար է ինքը... Ինչո՞ւ համար է ստացել կրթություն, ինչո՞ւ համար է ժառանգել հոր գահը ...որ ուրիշներն իր անունով գործե՞ն և ինքը նայի՞... Ինչ ողբալի և նվաստ կացություն... Լինել ամեն բանի համար պատասխանատու և չունենալ իրավունք ինքնուրույն, ազատ գործելու:

— Ներսեսն ինձ սպառնում է մխիթարվելով ու կայսրով,— խոսում էր Պապը, շարունակելով իր անցուդարձը:— Ուրեմն՝ իմ մեն մի քայլն անելիս—ես պետք է հիշեմ հոռոմաց մխիթարին և վաղես կայսեր... Ուրեմն ես իմ երկրում մի բան անելու և խոսելու համար՝ պետք է մոռանամ, թե սա անախորժ չի՞ թվա հոռոմաց մխիթարին և բիզանդական կայսեր... Ոչ, ես պարտավոր եմ անել այն, ինչ համարում եմ կարևոր, արդար ու անհրաժեշտ. թող ի՛նչ կուզեն մոռանան Ներսեսը և հոռնաց մխիթարը... Եթե ոճիր եմ գործում՝ թող իմ ժողովուրդը դատապարտի ինձ, եթե կատարում եմ աստվածընդունի գործ՝ թող աստված դատի... և ընդհանրապես՝ թող սերունդները դատեն ինձ...

Եվ Պապը, այս խոսքի վրա, հիշեց Ներսեսի քարոզչարի փալատոսին, այդ ճաղատ դլխով ու մանր աչքերով վարդապետին, որ իրենց խոնակցության ողջ ընթացքում չարունակ ինտող ու թափանցիկ հայացքով նայում էր իրեն:

Մինչ պալատի ավազանիները չվոթված, իսկ պալատում սպրդողները հետաքրքրված ճանապարհ էին դնում հուզված կաթողիկոսին և նրան ուղեկցող հոդևորականներին՝ երեմիան ու բաթը վերադարձան գտհասրահ և աշխատեցին հանդստացնել Պապին, մոռացնել տալ այդ խոսակցությունը: Բայց Պապը լռըրթքվում էր ավելի, մանավանդ այն մտքից, թե ինքն իր թագավորության մեջ անգամ ազատ չէ մի ինքնուրույն քայլ անելու:

— Հասկանո՞ւմ եք. ես պիտի միշտ նկատի ունենամ, թե ի՛նչ կմտածի հոռոմների մխիթարը... Այդ է ստացվում Ներսեսի խոսքերից...

— Կարեւորություն մի տալ, Պապ, այդ ծերունու խոսքերին, —ասավ Բաթը:

Իսկ Երեմիան՝ թագավորին հանդստացնելու համար հայտնեց, թե թագուհին տաղնապած է կատարվածից, լավ կլինի անձամբ գնա և նրան հանդստացնի: Եվ Պապն այդ լսելով, մեղմացավ կարծես, նրա բարկությունը իջավ և նա շտապեց թագուհու մոտ:

Դահավորակում մնացին միայն ընկերները:

— Իշխանությունը սովորաբար բթացնում է անգամ ամենաազնիվ մարդկանց սրտերը և լռեցնում է խղճի ձայնը: Թեկուզ պետական անհրաժեշտություն է թելադրում այդպես,— ասավ Երեմիան:— Բայց Պապը տակավին չատ դեռատի է... պատանու պես:

— Եվ դու կարծում ես՝ դա լա՞վ է,—վրնա բերավ Բաթը:— Վա՛տ է: Պետական մարդը, մանավանդ թագավորը պետք է լինի սառը, մտածող. այլապես՝ նա չպետք է խորհի սրտով կամ խղճով, այլ գլխով, Երեմիա, գլխո՛վ: Պետք է խիստ լինել թշնամիներին հանդեպ, չպետք է վախենա արյունից և մանավանդ չպետք է լինի դյուրահավատ: Իսկ մեր Պապը վախենում է արյուն թափել և զարմանալի դյուրահավատ է: Նա, օրինակ, անվերապահ հավատում է Մուշեղին, այդ դառոզ Մամիկոնյանին: Մինչդեռ Մուշեղը երբեք չի հավանի Պապի արածները, և նա Պապին նայում է իբրև անմորճ տղայի...

— Այնուամենայնիվ, Բաթ, Մուշեղը սիրում է հայրենիքը, քաջ է, և ամեն բան անում է նրա բարեկեցության համար:

— Անում է, Երեմիա, իր փառասիրության համար, իր իշխանասիրությանը գոհացում տալու համար, այո, իր համար, Մամիկոնյան ցեղի պատվի համար:

— Վատ չէ, Բաթ, եթե անձնականը զուգադիպում է հայրենիքի բարիքին,— նկատեց Երեմիան:

— Տեսնենք. ես այնուամենայնիվ կասկածում եմ այդ Մամիկոնյանին,— ասավ Բաթը՝ աչքի մեկը փակելով:— Իսկ Պապն իրոք շատ է զգայուն: Նա չպետք է վախենա արյունից, որովհետև արյունն իրավունք է և կյանք: Թափիր քո և թշնամուդ արյունը և դու կունենաս թե իրավունք և թե կյանք:

— Տարօրինակ մաքեր,— ասավ Երեմիան։— Ես համաձայն չեմ քեզ։

— Լա՛վ,— վեր կացավ Բաթը,— մենք դեռ կվիճենք։

Այդ նույն ժամին պալատի մի ուրիշ բաժնում— ընդունարանի մի անկյունում նախարար Զենոն Գնունին տխրադեմ ու կամաց ասում էր դեր Օտա Ապահունուն.

— Պապը լավ չարավ, որ զայրացրեց Ներսեսին։ Նկատեցի՞ր, թե որքան հուզված էր հայրապետը։ Ի՞նչ է լինելու, տեր աստված։ Ով գիտե, ինչե՞ր ծագեն սրանից։

— Այո, տեր Գնունի, այո,— հառաչեց Օտա Ապահունին։— Ախո՛ս սպարապետն այստեղ չէ։ Ախո՛ս հեռու է։

— Ես այս ամենը գրելու եմ նրան և խնդրեմ, որ գա։

— Գրի՛ր, տեր Գնունի, գրի՛ր,— նորից հառաչեց Օտա Ապահունին։— Չկա սրանից ավելի ծանր ժամանակ։— Գրի՛ր, քող ժամանակ չուտափո՛ւթ...

***

Ուշ երեկո էր։ Վաղարշապատի վանքի բակում անշշուկ խաղաղություն էր և մութ։ Սակայն այդ մութն ավելի զգալի էր դարձնում մի նիհար լույս, որ երևում էր առանձնացած մի խցում, որտեղից լսվում էր տարօրինակ մի ձայն, որ մերթ հնչեցնում էր խաղաղ տևական թխկոց, մերթ երկանքի խուլ աղոց։ Դա մի խուց էր, որի լույսը մինչև ուշ էր հանգչում և որի մասով վանականները անցնում էին հարգանքով և զգուշությամբ։ Այդտեղ ապրում էր մի տարեց վարդապետ, որին բոլորը կոչում էին «հայր բուժարար» կամ «հայր Սահակ»։ Այս հայր Սահակը նշանավոր էր նրանով, որ զբաղվում էր բժշկությամբ։ Նրա խուցը, որ բնավ նման չէր մյուս միաբանների խցերին, երեք պատերի վրա ուներ տախտակյա մի չարք դարակներ, նիշեր ու խորշեր, որոնց վրա և որոնց մեջ շարված էին հայր Սահակի գրքերը— հունական ու ասորական «բժշկարանները» և մանավանդ նրա պատրաստած դեղերը, նաև ամեն տեսակ խոտերի ու ծաղիկների չոր փնջեր։ Այդ նիշերում ու դարակների վրա էր դնում նա դեղեր պատրաստելու իր գործիքները—պղնձյա հավանգը, տափակ ու կլոր ողորկ քարեր, և քարե ու փայտե փոքրիկ գլան-

ներ, որոնցով նա մանրում ու փոշիացնում էր չոր բույսերն ու միջատները, խառնելով դրանք ինչ-որ քարերից ու արմատներից ստացած փոշիների հետ, որոնց մասին խոսում էին հունաց և սարոյց բժիշկարանները: Հայր Սահակը բուսական ու կենդանական այդ նյութերից պատրաստում էր ամեն տեսակ դեղեր, սպեղանիներ թե արտաքին թե ներքին ցավերի դեմ: Օրինակ, Միհրդատի խոտ կոչված բույսից (տերիակ) պատրաստում էր մի դեղ, որ փրկարար էր համարվում ինչպես օձի ու կարիճի խայթելու դեմ, այնպես էլ կատաղած շան կծելու և խոցերի դեմ: Միաժամանակ նրանով բուժում էր թե գլխացավ, թե հազ և թե աուհատարակ մարմնի թուլություն ու արյունհոսություն, բայց միայն տղամարդկանց, որովհետև Միհրդատի խոտը չէր հրահանգվում տալ կանանց և երեխաներին: Ուրիշ հատուկ բույսից չինում էր մի դեղ, որ զսպում էր ինչպես գլուխի դաղանների մոլեգնությունը, նույնպես և սեռական կիրքը: Ուներ հազար, որ երբ շոգին ուտում էին՝ զովացնում էր և վերացնում փորի ապրությունը, բայց վնասում էր ձմեռը: Ուներ թունավոր լատուկ, քնարեր խաշխաշ և լշտակ, որ համարվում էր բոլոր բույսերի թագավորը. սա ուներ մարդու մարմնի նման արմատ, որ գետնից հանելիս, ասում էին, արձակում է վախեցած մարդու նման սարսափելի մի ճիչ: Սրանից հայր Սահակը պատրաստում էր ամենաթուժիչ դեղերը: Վերջապես, հայր Սահակն ուներ և ամեն տեսակ բույսեր, քնարեր հարեր և ցավեր մատուցնել սվող դեղահատներ: Այս ամենից բացի՝ նա պատրաստում էր և շատ անուշահոտություններ, մանավանդ նարդոսից, որ տան օրերին սրսկում էին եկեղեցու ներսում ու գավթում, կամ խնկի հետ միասին դրած ածում անուշ բուրմունք ստանալու համար:

Այս ամենի պատճառով հայր Սահակի համբավը տարածված էր ամեն կողմ: Նրա դեղերից օգտվում էին ոչ միայն վանականները, այլև շատ քաղաքացիներ, հինականները: Անգամ նախարարական տները դիմում էին նրան, և նա ոչ-ոքի չէր մերժում իր օգնությունը, հասնում էր ամենքին ու ամեն տեղ:

Բայց, հակառակ այս ամենին, հայր Սահակը, ասում էին, մարդ չի թողնում մոնել իր խուցը, որովհետև այն համոզման

ունեը, թե եկույներն իրենց չնչով կարող են վնասել ղեղերին, կամ ղեղ վերցնելով՝ վնասել իրենց, թունավորել:

Եվ, պետք է ասել, մխիթարության բոլոր անդամները հավատում ու պատկառով էին վերաբերվում հայր Սահակի դիտությանը, որովհետև քաղում շատերին նա բուժում էր ոչ միայն իր ղեղերով, այլև իր խորհուրդներով: Ներսես Հայրապետականը նույնպես շատ էր հարգում հայր Սահակին իր «բանկրուն դիտության» համար և հարկ եղած դեպքում դիմում էր նրա խորհրդին ու օգնության, մանավանդ վերջերս, երբ, Բիզանդիայից դալուց հետո, ավելի հաճախ էր կանչում նրան, որովհետև ապտորում անցրած տարինները որքան զորացրել էին նրա ոգին, նույնքան էլ թուլացրել-ոկարացրել էին մարմինը, և նա հաճախ ունենում էր սրտի թուլության նոպաներ: Եվ հայր Սահակը իր ղեղերով մխչո օգնության էր հասնում կաթողիկոսին, որ, չնայած աստղջանալուն, ամեն անգամ ասում էր. «Մխենուշն է, հայր Սահակ, երևի, այս սրտից էլ պիտի առանամ իմ մահը»... Որքան էլ հայր Սահակը հուսադրում էր նրան, Ներսեսը պնդում էր իրենը:

— Ոչ, սուրբ հայր, ոչ. ես զդում եմ հատատարեն և...

Եվ ահա այդ երեկո,— վեհի Դվինից դառնալու երկրորդ կամ երրորդ օրը,— երբ Սահակ հայր-բուժարարը գորդի վրա նստած, հունական և ասորական մագաղաթյա բուժարանները բաց առջևը դրած, կանթեղի ու մոմերի լույսով ինչ-որ ղեղ էր պատրաստում՝ հուզված աճապարանքով ներս մտավ հայր Փավստոսը և ասավ հևասպառ.

— Շտապիր, հայր Սահակ, Երանելին նորից վատ է զդում: Շտապի՛ր...

— Նորից, երևի, սրտի նոպա,— ասավ հայր Սահակը և, ոտային կապայի վրա լայն պարեզոտը հագնելով և խցի դուռն ամուր փակելով, շտապեց վեհարան, ուր Ներսեսն, իրոք, իր ննջարանում, լինչպես մխչո այդպիսի դեպքերում, ընկողմանած էր մի փափուկ ու խոր բազկաթոռում, ճերմակ մորուսը կրծքին ցրված և չոր, ոսկրոտ ձեռը կրծքին դրած:

Երբ հայր Սահակը հասլ-չտապ, բայց հարդանքով ու հոդածությամբ մոտեցավ նրան— Ներսեսն աստլ նվաղ ձայնով:

— Սիրտս է, հայր Սահակ... վերատին սիրտս... Բայց թվում է՝ դուք է ամեն դեղ ու բուժում, դի սիրտն իմ հոգնած է արդեն և անկարող է երևում ծառայել մարմնին իմ:

Եվ, այս առնելով, նա ոսկրոտ, բարակ ձեռով եւ տատասկ մեռաքայա պարեդուրը, նրա տակի մյուս պզեսաները և ցույց տված սիրտը, այսինքն՝ այն տեղը, ուր մաշկը կտած էր նեհատ մարմնի ոսկորներին և ուր երակները կապուտակել էին նկանակի չափ: Հայր Սահակը մտաենալով՝ ձեռը երկնայրկյան պահեց նրա սրտի վրա, ապա բունեց հիվանդի զարկերակը: Երբ լրեն հայտնի որոշ ժամանակ լսել էր՝ մտահոգ նայեց հայր Փավլոսին և դլուխն օրորեց, ապա Ներսեսին առաջարկեց հանգստացնել «դեղ մը»:

Հայրապետը մերժեց մեղմ խոսքով.

— Բավ է տպրել ինձ, հայր Սահակ: Ես ծեր եմ արդեն և դեղերն ի դուր են...

Ջնայած ուշ երեկո էր արդեն, բայց մի քանի վայրկյանում կաթողիկոսի հիվանդության լուրը տարածվեց մհարանության մեջ և բոլորին համարյա խցերից դուրս բերեց եկեղեցու սալարկած բակը: Ծեր և ավագ եպիսկոպոսները քարձրացան վեհարան, ուր նրանք «ընդանելու» ննջարանին կից սրահներում սպասում էին, թե ինչ կասեն կամ ինչ կպարզվի վեհի հիվանդության մասին: Իսկ երիտասարդ և ոչ երիտասարդ վարդապետները, արեղաները ու սարկավագները խմբերով բաժանված խոսակցում էին բակում և զանազան ենթադրություններ անում կաթողիկոսի հիվանդության մասին: Նրանք երկրորդ թե երրորդ օրն էր անհամբեր ուղում էին լսանալ, թե հայրապետի այցելությունը Դվին՝ թագավորին ինչ արդյունք է տվել. արդյոք վեհը հանդիմանե՞լ է թագավորին, թե թագավորն անուատել է նրա խրատները— ոչ-ոք չգիտեր, որովհետև պալատից դառնալիս Ներսեսը ոչ մի խոսք չէր փոխանակել ոչ ուղեկից եպիսկոպոսների հետ և ոչ իսկ իր քարտուղար հայր Փավլոսի հետ, ու բոլորը մեծ հետաքրքրությամբ երկու օր էր ահա սպասում էին այդ ուխտակցության արդյունքին, սակայն դրա նիսխարեն այսօր առան վեհի ծանր հիվանդության լուրը: Եվ գա գարմացրեց ամենքին այն աստիճան, որ դուրս եկան խմանալու ինչ է պա-

ծահել արդյոք, և անհանգիստ հարցումներով չէր ձգձգում էին վիհարանից դուրս եկող ամեն մեկին, և նրանցից ստացած պատասխանները, որ տխուր էին, անմիջապես անցնում էին բերնեբերան: Նվ չգիտես ինչպես և ո՛ւմ կողմից՝ հանկարծ բակի բազմության մեջ տարածվեց մի լուռ, մի ծանր միտք, որ կրկնում էին դղրդյուն ձայնով.

— Թունավորո՞վ... Ասում են՝ հայրապետը թունավորված է...

— Ուրեմն թագավո՞րը...

— Ըհաս. կամա՛ց...

— Եթե ճշմարտություն է՝ ինչո՞ւ լռեմ,— մռութի մեջ լսվեց մեկի ձայնը:

— Ըհաս: Զգո՛ւյշ... Շատ բան կասեն. ինչ ժամանակ ո՛րն է ճշմարիտ, ո՛րը սխալ ու մոլորիչ,— ասաց մի ուրիշը:

Ու նորից ձայները լռեցին, փոխվեցին չշունչի, որ սակայն լսվում էր բակի տարբեր կողմերից՝ թե ծառերի տերևների միջից, թե եկեղեցու և թե վիհարանի պատերի տակից: Բայց թե ի՛նչ էին խոսում մխրճանները—դժվար էր իմանալ: Պարզ էր, որ ամենքն անհանգիստ էին և սպասողական լռության:

— Հայր Սահա՛կը... հայր բուժարա՛րը,—հանկարծ տարածվեց բակում:

Վիհարանից, իրոք, դուրս եկավ հայր Սահակը՝ տխուր, չգիտես նրա համար, որ «ներանելինն» մերժել էր առաջարկած իր միջոցը, թե նրա համար, որ վեհի դրությունը ծանր էր: Այսպես թե այնպես՝ հայր բուժարարին տեսնելով՝ վարդապետների ու արքեպների բազմությունը ամեն կողմից դարձավ նրա վրա.

— Ճշմարի՞տ է, հայր Սահակ, որ Ներանելին թունավորված է,— հարցրեց մեկը:

— Թագավորի կողմից,— ավելացրեց մի ուրիշը:

— Ըհա՛ս,— ասաց մի ձայն,— թո՛ղ լռենք հայր Սահակին:

— Ինչո՞ւ չհարցնել, երբ ասում են թունավորված է,— կրկնեց առաջին ձայնը:— Արդյոք մահադեղ չի՞ն տվել վեհին, հայր Սահակ:

Հայր Սահակը զարմացած նայեց բազմությանն:

— Որտեղից այդ մխաքը տխմար և ավելորդ։ Նա չէ թունավորված, այլ սերան է ծեր և հույժ տկար...

— Ճշմարի՛տը, հայր Սահակ, ճշմարի՛տը խոսիր, զի դու միշտ ես ճշմարտախոս,— խոսեց մի նոր ձայն։

Հավաքվեցին դարձյալ և ավելի սեղմ շրջապատեցին հայր Սահակին։

— Թննեցի վնհին իմ գիտությամբ, սուրբ հայրեր, և կրկնում եմ՝ դուս, որ սերան է հիվանդ։ Ես վաղուց զգուշացրել էի Երանելիին, որ-կառք կամ երիվար չնստի, զի սերը նրա տկար է հույժ...

Լսվեցին նախ թերահավատ անքոցներ, ապա մի խուլ դղրդոհություն ու մռմռոց, և այդ բոլորի մեջ հանկարծ խոսեց մի հուզված ձայն.

— Դու ճշմարիտ չես, հայր բուժարար։ Ձի՛ վայել այդպես... Մենք դիտենք արդեն, որ հայրապետը թունավորված է խաղալորի կողմից...

— Թունավորվա՛ծ... թունավորո՛ւմ,— կրկնեցին այս-այն կողմից, ու հավաքված ամբողջ բազմության մեջ ծայր առավ մի խուլ արտունչ։ Ու հանկարծ այդ ընդհանուր մռմռոցի մեջ լսվեց մի բարձր ձայն.

— Տեսնո՞ւմ եք, սուրբ հայրեր. նա, որ եկեղեցին դրկում է իր հասույթից, դրկում է մեզ և՛ մեր հայրապետից,— խոսում էր մի բարձրահասակ հոգևորական, որի մորուքը մինչ մեջ ճուլվել էր ու ղեմսուին, բայց ղեմքի վրա փայլող աչքերը կարծես կայծեր էին ցայտում բիբերից։

Դա Ալաշածոնի խարազանազգեստ Դանիել եպիսկոպոսն էր, նա՛, որի սարկավագներից Պաղն ազատել էր կապկպած չինականներին և որը տակավին իր մենաստանը չէր գնացել, սպասելով վնհի կարգադրության, այսինքն՝ մինչև Ներսեսը Գլխին դնալով՝ հանդիմաններ Պաղին և վերացնել տար նրա հրամանը։ Դանի օր էր նրա բարկությունը չէր իջնում և այսօր էլ ամենից հուզված ու բարձրաձայն խոսողը նա էր։

Անվանի եպիսկոպոսի խոսքերն ավելի բորբոքեցին հուզված սրտերը և մութի մեջ նորից կրկնվեցին այն ամենը, ինչ ասում էին վերևում. այո, Պաղն այդ անում է Քրիստոսի սուրբ հավա-

ոը վերացնի հայոց աշխարհից, և որովհետև երանելին չէր թողնի— պապը թունավորել է նրան, որ ավելի հեշտ լինի քրիստոնեության վերացումը: Եվ այն, ինչ քիչ առաջ զգուշանում էին ասել կամ ասում էին շշուկով, հիմա կրկնում էին բարձրաձայն ու համարձակ. «Թունավորում... Թագավորը թունավորել է Վահեին»...

— Բայց հայր բուժարարը, հայր Սահակն ասում է թունավորում չէ, այլ ախտաբույն սրտի,— ասաց մեկը: Սակայն նրա ձայնը անհետացավ կորավ ավելի բարձր ձայների մեջ, որ ասասում էին և ասում.

— Հայր Սահակը չդիտե՞ ամեն բան... Հայր Սահակը չի՞ ուտել... Հայր բուժարարը, վերջապես, չի՞ ուզում կամ չի կարող ասել ամենը...

Խոսում էին զայրացած, բայց ոչ բարձր, որ իրենց ձայնը չհասնի վեհարան և չխանգարի Վահի հանգիստը: Խոսում էին և, վեհարանի մուտքին նայելով, սպասում, թե ինչ լուր կբերի հայրապետի առողջության մասին: Բոլորը, սակայն, սարսափում էին մի մտքից—եթե հանկարծ Վահը վախճանի... Եվ մտքերն այնքան հուզված էին, որ շատերը վախենում էին գնալ իրենց լուացերը. թվում էր իրենց հետ այնտեղ մտնում է անեղնուկի մեկը, մի սարսափելի ոգի... ու դուրս էին գալիս նորից բակը՝ մարդկանց մոտ—թե վախի ապրումներից ազատվելու և թե հայրապետի վիճակի մասին բան լսելու. բոլոր լուրերը սակայն սխալ էին. «Լավ չէ զգում»... «Ցունչը նվազած է»... «Ուշակորույս է»... «Պետք է սպասել ամեն ողորմության»...

Եվ այսպես ժամերը անցան: Ուշացած լուսինը դուրս եկավ հորիզոնից և լուսավորեց վանքը, բակն ու ծառերը և սալվեղներ ինչպես սովոր է կողմ: Բոլորը տաղնապով ու անհամբեր նայում էին վեհարանի մեծ դռանը և սպասում. և ահա մի դուրս եկող թերում էր նույն անհույս լուրերը, որ արտահայտում էին երբևիցե մի քառով. «ծանր է»:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Մի քանի օր չարունակ պալատում խոսում էին Թագավորի և Ներսեսի տեսակցության անհաջող վախճանի մասին, և պոռնում էին, որ դա վատանպատակ հետևանքներ կարող է ունենալ:

— Ծանր, շատ ցավալի դժոխքյուն,— ասում էին սոսկալ:— Թագավորը պետք է զիջել:

— Եվ այժմ Ներսեսն այդպես էլ թողնել,—կասկածում էին մյուսները:

— Այո, նա որ հանդիմանում ու դատապարտում էր Արշակ Թագավորին, երբեսաստղ Պապին արդեն քնալ էլ նեղել՝ նրա հրամանը,— ավելացնում էին ուրիշները:

Եվ այդ մասին խոսում էին ոչ միայն ավազանիները, պալատական կանայք, այլև սպասավորները, որոնց միջոցով այդ ամենը շուտով տարածվեց և քաղաքում, առաջին հերթին, Խոսրիկ, Հրապարակի արհեստավորների մեջ, որ բոլորովին ուրիշ մեկնություն ու բացատրություն էին տալիս այդ տեսակցությանը:

— Ներսեսը պահանջել է,—ասում էր բանվոցաց մարզու հնլինակությամբ Պողոս վարպետը,— որ Պապը նոր հրամաններ չհանի, որպեսզի սրճենքը նորից տասանորդ ու պտղի վճարին ենթարկեն, բայց Պապը էլ համաձայնել, և կաթողիկոսը հեռացել է նեղացած:

— Իսկ ես, Պողոս վարպետ, լսել եմ, որ Թագավորը կաթողիկոսին դուրս է արել պալատից:

— Այդ էլ կարող լինել,— այդ էլ կարող լինել,— կասկածներին մյուսները,— ի՞նչպես կարող է Թագավորը վիճին:

— Ինձ ասել է պալատի սպասավորներից մեկը:

— Իսկ ինձ ասել է մի սարկավագ,— նկատեց մի այլ վարպետ:

Եվ զարմանքը անհանգստության ու երկյուղի հետ համակեց բոլորին:

— Հազիվ խաղաղել էր երկիրը՝ նորից...

— Ի՞նչ է լինելու սրա վերջը՝ չգիտես:

Եվ ամենքը կատարվածին տալով կուռի կերպարանք՝ լավ բան չէին դուշակում դրանից:

Այդ տեսակցության լուրը մեկ-երկու օրվա մեջ հասավ և նախարարական մոտիկ դղյակները, ամեն տեղ էլ առաջ բերելով միատեսակ հետաքրքրություն ու զարմանք: Ոմանք, այդ լսելով, կարծում էին, որ Ներսեսն իր հեղինակությամբ կտրել է վնասել Պապին. շատերը տարակույսների մեջ էին և չգիտեին ինչ կարելի է անել նրանց հաշտեցնելու. ոմանք էլ ուրախ էին, որ այդպիսի բան ծագեց. Պապի գլուխը կխառնվի և նա կմոռանա իրենցից պինդը ու ձի պահանջել. կային այնպիսիները էլ, որ դռնում էին, որ դա իրենց չի վերաբերում, որ իրենց չի վայելի միջամտել Թադավորի և կաթողիկոսի «գործերին»: Այսպես էին մտածում առանձնապես երիտասարդ նախարարները, ինչպես օրինակ, Վարաժնունյաց տերը, Վանանդա իշխան Սեթը, Զյունական նախարարը և մյուս երիտասարդ իշխանները: Սակայն այդպես չվերաբերվեցին Գնթունիները և մյուս տարեց նախարարները, որ այդ լուրը լսելով չոտապեցին Դվին: Այդ լուրն առանձնապես անհանգստացրեց Ծերունի Համազասպ իշխանին. նա էլ անմիջապես, թիկնապահներով մի փոքրիկ խմբով եկավ Դվին, որ համոզի Թադավորին՝ համաձայնության դալ Ներսեսի հետ:

— Որքան էլ իրավացի է Պապը,— ասում էր նա,—բայց չպետք է հարաբերությունները լարել: Համերաշխություն, մեր հարկավոր է համերաշխություն... Չթողնենք, որ համերաշխությունը խախտվի երկրում... Պապը երիտասարդ է, պետք է նրան խորհուրդ տալ...—ասում էր նա՝ իրենից շուտ Դվին եկած Գնթունիներին և մյուս անվանի նախարարներին:— Պետք, տեր նախարարներ, ինչ կարող ենք...

Մինչ դուրսը և պալատում խոսում էին ամենատարբեր բո-

նը—Զարմանդուխտ թագուհին մեծ ապշանքի մեջ էր. նրան թվում էր չարունակ, թե Ներսեսը երբեք ներողամիտ չի լինի և իր եկեղեցականների հետ այնպիսի մի բան կանի, որ ոչ միայն Պապի հրամանը վերացնի, այլև Պապին վնասի: Կզբնեն, երևի, հոռոմց կայսեր կամ մետրոպոլիտին և թույլ չեն տա, որ Պապը երդպղծի իր հրամանը,— մտածում էր նա հաճախ տխրությամբ ու վախով:— կամ Ներսեսը, Պապից վշտացած, որ չլսեց իրեն, նզովածքը կուղարկի թագավորին և արքայական տանը, նրա զերդաստանին, ինչպես արել էին երբեմն կաթողիկոսներ ու եպիսկոպոսներ: Նա լսել էր, օրինակ, Դանիել եպիսկոպոսի նզովքը Տիրան թագավորի հասցեին. մի ահավոր նզովք, որը նրա կարծելով պատճառ էր եղել թագավորի կուրացման և դահընկեցության:

Մտածելով այդ նզովքի մասին՝ ջերմեռանդ թագուհին սարսափում էր. նրա սիրտը դողում էր այդ մոտալ հեռանկարից, ուստի և օրը երկու–երեք անգամ աղոթում էր իր մենախցում՝ պատի արձաթյա խաչի առջև, կամենալով դժբախտությունը կանխել կամ հեռացնել այն իր աղոթքներով. և աղոթում էր, որ չարքերը չնչացնեն Պապի շուրջը, որ դուռ ու ներողամտություն լինի Ներսեսի և մյուսների վրա, որ չկզբնեն նրանք Պապին և նրա հրամանի մասին չգրեն կայսեր կամ մետրոպոլիտին:

Աղոթելով՝ նա և մտածում էր, թե ո՛վ կարող է միջնորդել և հաշտեցնել Պապի ու Ներսեսի այդ տարաձայնությունը, որ ծագից այսպես անակնկալ... Թագուհուն թվում էր, որ դրա պատճառը, անշուշտ, Պապն է. եթե նա լսեր իրեն ու հաղորդակցեր և այդ հրամանը չարձակեր—չէր լինի և այս ամենը... Ու այժմ նա կարծում էր, որ ամենից առաջ պետք է Պապին համոզել, որ չկոչ դարձնի իր հրամանը: Նա գտնում էր, որ դժբախտությունից ազատվելու միակ միջոցը կլիներ դա, ոչտհետև չէր կարծում, թե հոգևորականները, մանավանդ Ներսեսը, լռեն կամ թույլ տան, որ այդ հրամանն իրականացվի. նա կարծում էր, որ եթե Պապը համաձայնի— Ներսեսն ու նրա եպիսկոպոսները կամ նզովածքը կուղարկեն անպատճառ կամ կդիմեն հոռոմց կայսեր ու մետրոպոլիտին... Եվ նա չգիտեր ինչ անել. համոզված էր, որ Պապը չի լսի իրեն և մտածում էր,

քեզ ա՛լ կարող է խոսել հետը և հարցնել, որ նա ունի՞ նա իր հրամանը և ապրիսոմ, նրա կարծիքով, կվերանար ամեն տարաձայնություն ու թշնամություն: Սկզբում նա ցանկանում էր խոսել Երեմիայի և Բաքի հետ, որ նրանք ազդեն Պասլի վրա, բայց հետո դադարեց, որ դա անօգուտ է. Պասլը նրանց չէր լսի իրեն գոնե նրանք էլ համամիտ լինեին Պասլին, ուստի մտածեց, որ ոչ մի դեպի համար թեկուզ ամենից հարմար լինի իշխանուհի Սահատունին, որին հարգում էր Պասլը մոր նման և ականջ էր դնում նրանից: Մտքով այս ընտրությունը կատարելով՝ Թագուհին անմիջապես պայմանի ուղարկեց պատասխան իշխանուհուն կանչելու:

Եվ երբ, մոտը անց, իշխանուհին եկավ, ինչպես միշտ, ոտից-գլուխ սևերի հագած՝ Թագուհին ջերմորեն վարվեց նրան:

— Իշխանուհի՛...— ասաց նա արտասուաձայն, հեկեկանքը հազիվ զսպելով ,—ես, իշխանուհի, մենակ եմ այստեղ և անզոր, կանչում եմ՝ օգնիր ինձ: Ես մայր չունեմ այստեղ. հոգիր ինձ մայր... հոգիր ինձ մայր...

— Ինչո՞վ կարող եմ օգնել քեզ, Թագուհիս,— ասաց իշխանուհին հանդարտ ու դորովաձայն:—Ասա՛, ես պատրաստ եմ քեզ համար, Թագուհիս: Նախ՝ նստիր և հանգստացիր...

— Ես, իշխանուհի, մնձ հրկյուղի մեջ եմ,—սկսեց Թագուհին նստելով և իշխանուհուն նստեցնելով:— Վախենում եմ՝ Նեքտոնը և եկեղեցականները վնասեն Պասլին, նամակներ գրելով Հայաստ և մխիթարյաններին և նրանց պայքարը հարուցեն Պասլի դեմ: Վախենում եմ, իշխանուհի, օգնիր ինձ:

— Ինչպե՞ս կարող եմ օգնել, Թագուհիս,— կրկնեց իշխանուհին կարեկցող արտահայտությամբ, չիմանալով և զարմանալով, թե ինչ կարող է անել ինքը այդ բարդ գործերի և հարաբերությունների մեջ:— Ինչպե՞ս...

— Իբրև մնձ, իբրև մայր, խոսիր Պասլի հետ, որ նա հանգնի իր մտադրություններից և չեղնի հոգևորականների դեմ: Ասա՛, իշխանուհի, խնդրո՛ւմ եմ...

Իշխանուհին չիմանալով իսկապես կարող է խոսելով մի արդյունքի հասնել թե ոչ՝ այսպիսի՛ նեղայնիվ ասաց.

— Հանգիստ հոգիր, Թագուհիս. ես կխոսեմ, անպայման կխոսեմ... Դու իզուր մի՛ վշտանար...

Բայց Թագուհին չհանգստացավ։ Իշխանուհու դուրս գնալուց հետո՝ նա նույնը խնդրեց հենց նոր պալատ եկած ծերունի Իշխան Հայհնունուց. համոզել Պապին, որ հրաժարվի սկսած գործից։

— Ես դրա համար էլ եկել եմ, Թագուհի,— ասաց ծերունին։— Իմ պարտքը պետք է համարեմ խոսել և համոզել արքային, որ համերաշխությունը չխախտվի երկրում...

Թագուհին այս տաղնապի մեջ անցրեց շուրջ քե հինգ օր, և մի առավոտ էլ, երբ դարձյալ ապատում էր նղուվազքի՝ լուր եկավ, թե կաթողիկոսը մեռել է...

Լուրն անմիջապես տարածվեց մինչնաբերդում ու քաղաքում։

— Ներսեսը վախճանել է... Վախճանել է վեհը...

Վախճանե՛լ... Սկզբում, լուրն առնելուն պես, Թագուհին կարծես թեթևություն զգաց, որ աղետն ուրեմն անցավ, որ այլևս չի լինելու այն, ինչից վախենում էր կամ ինչ սպասում էր, բայց միտքը անց նա սարսափեց այդ մտքից։— Վախճանե՛լ... Այժմ այդ մտքը նրան թվաց ավելի մեծ դժբախտություն, ավելի սպասվող... Ուրեմն Ներսեսը մեռավ առանց Պապին նեղելու։... Եվ Թագուհուն թվում էր, թե Ներսեսն այժմ իր մտքով կարող է ավելի մեռցնել Պապին, քան ողջ ժամանակ. չէ՞ որ մեռնողներն այն աշխարհում կարող են անել այն, ինչ ցանկանում են, և այն, ինչ չեն անի ողջ ժամանակ... Իսկ Ներսեսի նման մեծ մեռնողը կարող է անել ավելին... կարող է վրեժխնդիր լինել Պապից և նղուվել նրան և իրենց բոլորին՝ հավիտյանս հավիտենից...

Այս բոլը լսելուն պես Զարմանդուխտ Թագուհու առաջին գործն եղավ անցնել իր մենարանը և աղոթել նորից...

Իսկ Պապը, որ միայն անակնկալ մի բան զգաց այդ մտքից, կարգադրեց անմիջապես պատրաստություն տեսնել վաղարշապատ մեկնելու։

Եվ երբ ամեն ինչ պատրաստ էր՝ նա ճանապարհ ընկավ իր շքախմբով։

Այս անգամ, բացի հազարապետ Ամատունուց, պատրաստվել էին ուղեկցել Զնունի Գնունուց, Օտտա Ապահունուց, նրա շքախմբի մեջ էին նաև Հայհնունյաց տեր ծերունի Մանասսը, Գնթունի

Ադամ և Ալդամ նախաբարները, Զիրավի հերոս իշխան կամսարականը, որ երկու օրով միայն ևիել էր պարսից սահմանից։ Սա գոհ լինելով թագավորի ճնռնարկումներից և դրանք համարելով «հույժ կարևոր և դովելի», ինչպես ասել էր մի քանի տեղ, հիմա, Ներսեսի անակնկալ մահով զարմացած, մտածում էր, որ այդ մահը կարող է խանգարել Պապի սկսած գործը։ Եքսխմբի հետ էր, իհարկե, արքայադուլիը Երնմիան, դրանիկ գնդի պետ Բաթ Սահառունին և նրա օգնական Գնել-Անձևացին՝ փոքրիկ մի պահակախմբով, և դարձյալ իշխաններ ու սեպուհներ՝ առանց սովորական զին ու զարդի, բայց, ինչպես միշտ, թանգ ու չքնդ հագնված։

Սուրևից գնում էր Պապը՝ բաշը սև ոսկեզուն նժույգի վրա, որը չգիտես ինչու, հանդիստ չէր գնում և խաղում էր տիրոջ տակին՝ գլուխը շարունակ այս ու այն կողմ թեքելով, առջևի ոտները խաղացնելով, ինչ որ Պապին թվում էր տհաճ ու անպատշաճ։ Պապը սև թիկնոցով էր, որ ճարմանդել էր աջ ուսի վրա. նա մոայլ էր, մինչդեռ ժամանակ թվում էր չփոթված ու պարմացած. շուռ-շուռ ձիգ էր տալիս ձիու սանձը՝ չգիտես հուզումից թե նրա համար, որ ձին վերջ տա իր խաղերին։ Սակայն նրա կուշտ ու կայտառ նժույգը դրանից կարծես ավելի էր աչխուժանում և ավելի էր խաղացնում ոտները ու սև բաշով հղկված ոսկեզուն պարանոցը։

Ամբողջ ճանապարհին Պապը ոչ մի խոսք չփոխանակեց. չքախմբի անդամները նույնպես չէին խոսում. Պապի տրամադրությունը կարծես վարակել էր բոլորին։ Իսկ երբ հասան, վերջապես, վանքի պարսպադուռը, ամենքը, ինչպես ընդունված էր, իջան նժույգներից և ոտքով մտան բակը։

Բոլորի առջևից քայլում էր Պապը՝ արքայական կարմիր կոշիկներով, երկար սև թիկնոցով. իսկ նրա ետևից գնում էին չքախմբի անդամները՝ ավագության ու պաշտոնի կարգով։

Երբ նրանք չորս պարսպադռնից մտան ներս՝ վանքի ընդարձակ սալարկած բակը ծփում էր սևահանդերձ բազմությամբ։ Հավաքված էին այդտեղ ոչ միայն միաբանության անդամները, ևիել էին նաև դրսի եպիսկոպոսները, վարդապետները, քահանաները. կային լեռնային իրենց անձավներից իջած խարազանազգեստ

հղնավորներ, որ ոչխարի երակ սրած երկու մորթի էին քցել նիհար ու ոսկրոտ ուսերին: Երեսում էին և մայրասեռներ ու պատառ կուրծքը՝ վրաններըը նախորդ առած, գլուխները սև վիճակի մեջ, որ ծածկում էր նրանց հակատը ականջների հետ միասին և ամուր ապուցված էր ծնոտի մոտ:

Տեսնելով Թագավորին իր չքախմբով՝ հոգևորականների բազմությունը բաժանվեց երկու մասի՝ եկողներին ճանապարհ տալու. նրանցից ամանք թվում էին զարմացած, ամանք կարծես վախեցած, իսկ մեծամասնությունը՝ Թագավորին և նրա ուղեկիցներին նայում էին զուսպ և անշարժ: Կային այնպիսիներն էլ, որ մոայլ էին, նայում էին հոնքերի տակից: Երբ Թագավորը հասավ բակի կենտրոնը՝ հանկարծ չդունչի պես մի բան անցավ բազմության մեջ, և Երեմիան, որ չքախմբի համարյա վերջումն էր, լսեց, թե ինչպես մի վարդապետ չդնջաց իր հարևանին.

— Եկել է իր մեղքը քաղարիւն աչխարհն և մարդկանց առաջ...

— Եվ ինչպես չքմեղ է ձևանում,— ասավ մի ուրիշը:

Երեմիան չիմացավ ո՛ւմ են ակնարկում, սակայն նկատեց, որ վարդապետների, արեղաների ու սարկավագների մի մասը ո՛չ այնքան հետաքրքրված, որքան հուզված ու մոայլ է նայում Թագավորին և նրա չքախմբին, և մյուս կողմից էր տեսնում հարգանքի և պատվի սովորական արտահայտություն, որ ցույց էին տալիս Թագավորին:

Նույնը նկատեց և Գասպը:

Սակայն այդ հանդիսամանքը թե՛ Երեմիան, թե՛ Գասպը վերապրեցին կաթողիկոսի մահվամբ առաջացած չվոթության ու աղմուկի: Այսպիսի դեպքերում՝ սուդի ժամանակ, երևի, պատվիրներ չեն տալիս,— մտածեցին նրանք գրեթե միաժամանակ:

Մի վոքր էլ առաջանալով՝ ճանապարհի վրա Գասպը նկատեց մի ծերունի վարդապետ, որ կարծես զայրացած, ամբողջ շուռ լցրին բացած աչքերով ու լարված դեմքով նայում էր իրեն՝ Գասպին և կարծես ուզում էր առաջ գալ՝ նրան բան ասելու, բայց ուրիշ վարդապետներ նրա թևերը բռնած՝ չէին թողնում և աշխատում էին պահել նրան իր տեղում, նույնիսկ նա քաշել, իսկ նա դուրսբերությունից թե արտևեղությունից ինչ-որ բան էր մռմռում ու. ձգվում էր՝ չդիտես գոռալո՞ւ թե առաջ գալու:

«Ի՞նչ է ուզում արդյոք» մտածեց Պասլը, նրա ծամածռված ու ցասկոտ դեմքը տեսնելով և, այլևս կարևորություն չտալով, առաջ գնաց: «Հավանորեն խենթ է» ասավ նա մտքում:

«Երևի մխարաններից դանդաղ ունի Թագավորին՝ չեն քոշնում մոռենա» մտածեցին չքախմբի անդամներից չատերը և անտարբեր չարունակեցին իրենց ընթացքը դեպի վեհարան:

Սակայն Երեմիան, որ դնում էր դարձյալ չքախմբի ետևից՝ լսեց, որ այդ վարդապետն ասավ ինչ-որ սպառնագին խոսքեր, որից նա որոշ լսեց միայն «Նեռի ծնունդ» և «հեթանոս» բառերը: Դրանք կարծես ուղղված էին չքախմբի անդամներից մեկին, բայց թե ո՛ւմ — նա դարձյալ չէր կարող իմանալ:

Սակայն Երեմիան, որ դնում դարձյալ չքախմբի հետևից, էր և չքախմբի մյուս անդամները, և նույնպես կարևորություն չըտվին: Դրանք լսեց նաև Պասլը, ու դարձյալ մտածեց, որ խենթին է խոսում, երևի, և նույնպես կարևորություն չտալով՝ իր հանդիսավոր քայլերով անցավ հոգևորականների բացած ճանապարհով, ավելի շուտ նրանց երկու սև պատանեչի միջով, ու գնաց դեպի վեհարան:

Մուտքի դռան մոտ կամքված վարդապետները նույնպես ընդունված պատիվն ու հարգանքը չտվին Թագավորին, նրանցից մեկը նույնիսկ երեսը չըշնց նրանից: Այս ամենը դարձյալ Պասլը վերագրեց հոգևորականության սուդին: Այսպիսի դեպքերում, երևի, ընդունված չէ հարգանք ու պատիվ մատուցել,— մտածեց նա քարե աստիճաններով, չքախմբի առջևից, վեհարանի վերնահարկը բարձրանալով:

Վեհարանի մեծ սրահը, ուր երբեմն եկեղեցական ժողովներ էին գումարվում, լցված էր սև հագած հոգևորականներով և խնկի հոտով ու ծխով, նաև հագեցած էր առանձնահատուկ մի բանով, որ զղացվում էր միայն մեռելատանը: Սրահի մեջտեղը՝ դրդեերով ծածկված մի տախտակամած բարձրության վրա դրված էր Ներսեսի դին՝ մեռաքան կտորներով ծածկված, որից ազատ էր մնացել նրա մազաղաթյա խոշոր դեմքը և ճերմակ մորուսը: Սև կնգուղներ դրած չորս եպիսկոպոսներ՝ այդ տախտակամածի անկյուններում կանգնած՝ դեմ առ դեմ աղոթք էին շշնջում, արծաթյա բուրվառներ քցելով: Սրահում դանվող

մյուս եպիսկոպոսներն ու վարդապետները նույնպես, պատճառ ունենալ կասկածած, անխտա ազդում էին կարծես. դրանց մեջ էլ և Պապը, որ Թագավորին նկատելուն պես երեսը շրջեց. և հայր Փափազը, որ Թագավորին իր չքախմբի հետ տեսնելով՝ մտածեց. «Հիշատակության արժանի դեպք: Պետք է դրել մատենիս մեջ, որ եկել է չքմեղ ձևանալու, թե ինքը չէ պատճառը այս մահվան...»:

Թագավորն եռանդ վիճարան մատն մի քանի եպիսկոպոս, դրանց հետ և Կյուրեղը:

Մինչ այդ Թագավորը ներս մտնելով՝ իր չքախմբի հետ, Զենոն Գնունու խորհրդով, կանգնեց ննջեցյալի դագաղի դիմաց՝ աչքերը խոնարհած, ինչպես կարգն էր: Այդպես աչքերը խոնարհեցին թե իշխան Կամսարականը, թե հազարապետ իշխան Վահտունին, թե Զենոն Գնունին և թե բոլոր մնացած նախարարներն ու սեպուհները, բացի երեմիայից, որ ուզում էր տեսնել ինչ կա պատհում, կյանքում առաջին անգամը լինելով այդպիսի մի տեղ: Ու բոլորը մնացին այդպես կանգնած բավական ժամանակ, երբ եպիսկոպոսներից մեկը բարձրաձայն կարդաց վարդկանին հատուկ պատարագի մի աղոթք, շուտով նրան միացան և մյուս եպիսկոպոսներն ու վարդապետները իրենց տեղերից, ու պատհը լցվեց ճիչ, ծորուն և ոչ երկրային երգեցողությամբ և քցվող բուրվառներից եկող անուշահոտությունները, որ կարծես օդն ավելի թանձրացնելով՝ թմրություն էին առաջացնում:

«Ով կսպասեր այսպիսի հանկարծակի մահ,— մտածում էր Պապը, նայելով ոսկեսռակամածը ծածկող դագաղին.— Շատ անսպասելի եղավ: Եթե նմանապի ալիսի մեռներ՝ ես չէի վշտացնի նրան: Բայց ավելի շուտ ինքը բարկացավ և սպառնաց ինձ կայսրով ու միտրոպոլիտով... Բայց, ասում են, նա վաղուց տկար էր»:

Փոքր անց Զենոն Գնունին նրա կողքին չհնջաց, թե կարդը ավարտվեր, և Պապը, երբ շրջվեց, որ նա դառնա դուրս գալու՝ նորից տեսավ այն ծերունի վարդապետին, որին ինքը նեղացրել և որին բակում բռնել՝ չէին թողնում առաջ գա. հիմա նա իջնում էր եկած հոգևորականության մեջ՝ նույն սպասավորված դեմքով ու տենդավառ աչքերով նայում էր իրեն՝ Պա-

պին և դարձյալ ճգտում էր առաջ, բայց երկտասարդ վարդապետներն ու սարկավագները չէին թողնում: Սակայն այդ միջոցին, երբ Գասպը մի քանի քայլ արավ դեպի սրահի դուռը և հոգևորականները նորից ետ-ետ գնալով՝ ճանապարհ տվին նրան, այդ բորբոքված վարդապետը հանկարծ սրտկից իրեն բռնողների ձեռից և դղրդված մորուսով ու խոխլ մազերով առաջ եկավ և, Գասպի ճանապարհին կանգնելով և իր անհամեմատ աչքերով ուղիղ Գասպին նայելով, մռնչաց. ոչ թե խոսեց, այլ պարզապես մռնչաց երեք անգամ.

— Մարդասպա՛ն... վհուասպա՛ն... հայրասպետասպա՛ն...

Գասպը զարմացած կանգ առավ և նայեց այդ դղրդված ծերունու ոսոխոտերը աչքերին:

— Դու այդ ո՞ւմ ես ասում,— հարցրեց նա:

— Քե՛զ, քե՛զ, դևերի թագավոր: Ինչո՞ւ սպանեցիր սուրբ հայրապետին:

— Ես՞նթ է,— ասավ Գասպը կիսաձայն, ուռնալով, թե ինչպես թողի Սահատունին և գնալ Անձևացին առաջ նեռավեցին Եղան Տանձասարհից հեռացնելու:

Բայց մինչ սրանք կհասանեին նրան՝ դուռն մոտ հավաքված վարդապետներն ու սարկավագները բռնեցին ծերունու թևերից ու մեջքից և տարան դուրս:

Իմանում էր թե ինչպես նրան դժվարությամբ կշեղնում էին քարե աստիճաններով և թե ինչպես նա դուռում էր գայրացած.

— Թողե՛ք ինձ, թողե՛ք... Լդմանդատեմ Խաղ և Կյուրեղ արքայանին: Թողեք... Նա պրկում է մեզ տուրքից, որ ամենքս մեռնենք, մեռնենք, եղբայրներ...

«Հիմա ինչու հայհոյ է մարդապատան ասում» մտածեց Գասպը, լսելով ծերունու հևացող և հեռվում մարող խոսքերը:

Բայց չնայած նրա հանդիստ մտքերին ու սրտաբինին՝ երբ դեմքը այնուամենայնիվ չդաճձռվեց մի վայրկյան: Իսկ Երեմիան սրահից դուրս գալիս լսեց, թե ինչպես Կյուրեղ եպիսկոպոսն ասում էր մի երկու վարդապետի.

— Գնացեք, ասացեք դրան և մի թողնեք ասի խոսքեր ասելու և չտա իմ անունս...

Շատունակությունը Երեմիան չլսեց:

Մինչ այդ, երբ Գասպը վհուասպանից դուրս գալով անցնում

ջը քակում հավաքված հետաքրքիր հոգևորականների մեջ պատահելի մեկով՝ նրան թվում էր, թե ահա սևահանդերձ այդ բազմությունը մեծ ճամակի պես կարող է հարձակվել իր վրա նույն այդ խոսքերով, ինչ ասում խեղճակերպ ծերունին: Նա տյառեղ մխայն զգաց, թե ո՛րքան աղղված ու հուզված են հոգևորականները իր կարգադրությունից: Նա երբեք հոգևորականների այդչափ մեծ բազմություն չէր տեսել, և զգաց, որ նրանք մեծ ուժ են, ավելի են, քան նախարարներն ու իշխանները, և ավելի համերաշխ, քան սրանք: Չուզց մի ժամանակ, թե ինչո՛ւ իրեն ընդունեցին սառն ու թշնամաբար, և այստեղ նրա գլխով մի կասկած անցավ, թե արդյոք սրանք հոգևորականների այս բազմությունը չէ՞ հրահանգել խեղճ ծերունուն այդ խոսքերը, արդյոք դա մի ցույց, մի դժգոհություն կամ մեղադրանք չէ՞...

Վանքից վերադառնալիս երկինքը մռայլ էր, ծածկված քանձր ու սևամած ամպերով. ինչ-որ տեղ որոտ կար և դղրդոց, որին հետևում էին կուրացուցիչ փայլակներ ու ապա կայծակների հրեղեն, կոտրված գծեր էին խաղում ամպերի մեջ ու ամպերի վրա:

Շքախումբը գնում էր անխոս. ձիերի բարձրացրած կարմրագեղին փոշին մլում էր ճանապարհին ու տարվում քամուց: Շտապում էին անձրևի տակ չընկնել: Բայց երբ մոտեցան քաղաքին՝ անձրևն սկսեց սև կաթերով նախշել ճանապարհը:

«Մարդասպա՛ն»... կրկնում էր Պապը մտքում՝ վերադարձի ամբողջ ճանապարհին և այդ բառն ու այն արտասանող ծերունին չէին հեռանում նրա մտքից: Բայց նա լուռ էր. մինչև Դվին, մինչև պալատ նա չխոսեց ոչ-ոքի հետ: Շքախմբի անդամները նույնպես զգում էին կատարվածի անսխորժությունը և չգիտեին ինչ ասեն՝ նրան մխիթարած լինելու համար: Եվ Պապն այդ նկատում էր, որ մարդիկ անհարմար են զգում, ու ոչինչ չէր ասում: Իսկ պալատ հասնելով՝ նա քաշվեց իր առանձնարանը՝ մտածելով լսած խոսքերի վրա:— Ի՞նչն է դրդել արդյոք այդ ծերունի վարդապետին մի այդպիսի եղրակացություն անելու: Անշուշտ՝ տուրքերի հրամանը... Այո, նրանք հուզված են, նույնիսկ կատաղած, որ վերացրել եմ տասանորդը, պատճին...

Նրանք սովոր են ապրել ծուլ ու ձրիակեր, և ահա՝ հոխանակ իրենց հողերը մշակելու և ավելի համեստ ապրելու— հուզվել-կատաղել են թագավորի դեմ...

«Մարդասպա՞ն»... Պապին թվում էր, թե ծերունի վանականին, անշուշտ, հոգևորականներն են թելադրել այդ խոսքերը՝ իր երեսին տալու, նպատակ ունենալով, երևի, վախեցնել իրեն, որ հրաժարվի, ետ կանգնի սկսած գործից:

— Ո՛չ, դուք այդ չեք տեսնի,—ասում Պապն ինքն իրեն:— Դժվար է ձեզ համար զրկվել հասույթներից, իրավունքից... Դուք, որ մինչև հիմա իշխել եք ժողովրդին, ուզում եք իշխել և թագավորին ու արքունիքին...

Տակավին ճանապարհի զգեստներով Պապը գնում-գալիս էր իր առանձնարանում և խորհում ու խոսում ինքնին, երբ հանկարծ սրընթաց ու այլայլված ներս մտավ Զարմանդուխտ թագուհին:

— Ի՞նչ դժբախտություն, Պապ... Ես քեզ ա՛յնքան խնդրեցի զգույշ լինել այդ հոգևորականների հետ... և ահա՛... մարդը մեռել է իր մահով, քեզ համարում են... մարդասպան, քուճավորող... Ի՞նչ հայր և հարևաս մարդիկ, Պապ... Զգուշացի՛ր նրանցից, խնդրում եմ, զգուշացի՛ր... Գոնե հիմա թող այդ սուրբերի ու հողերի խնդիրը... Թող ստանան և ուտեն, Պապ. թո՛ղ ուտեն, ինչպես միշտ... Թող ամենը մնա այնպես, ինչպես եղել է, Պապ...

Թագուհին խոսում էր և ձեռները սրտում անհանդիստ, խնդ նրա վախեցած աչքերում աղերսանք կար և խնդրանք:

— Դու մի հուզվիր, Զարմանդուխտ,— փորձեց հանգստացնել նրան Պապը մեղմ ձայնով:— Դու այս բաներից ոչինչ չես հասկանում: Առայժմ իմացիր այսքանը, որ նրանք ցանկանում են զրպարտել ինձ, վախեցնել ինձ, որ ես հրաժարվեմ իմ հրամանից և թուլանամ իմ որոշումների մեջ: Հասկանալի՞ է:

— Բայց, Պապ, ի՞նչ կլինի, ի՞նչ կասեն, եթե ժողովրդի մեջ հանկարծ տարածվի այդ զրպարտությունը: Ի՞նչ կլինի, եթե հանկարծ հոռոմաց մխիթարապետն ու կայսրն իմանան... Եվ թագուհին ձեռները դրեց քունքերին ու գլուխն օրորեց վախեցած:— Թո՛ղ, Պապ, ավելի լավ է՝ թո՛ղ այս ամենը, ինչ ասես ես,— խոսեց թագուհին նորից՝ արդեն աղաչական ձայնով:—

Այդ բոլորը կարող է ալիտաբեր լինել: Թո՛ղ: Ինձ քեզ և մեզ, Պապ...

— Դու լսում ես անհանգստանա, Զարմանդուխտ,— ասում Պապը, թագուհուն մոտենալով:— Այդ ամենը կպարզվի և էրեմնք կամաչեն...

— Բայց, Պապ, նրանք այնքա՜ն շատ են. կտարածեն ամեն տեղ և ո՛վ գիտե ապացույցի հակառակը:

— Գիտեմ, թագուհիս, դնա հանգստացիր,— ասում Պապը փոխված ձայնով:— Կանեմ այնպես, որ դու քեզ բոլորովին հանգիստ զգաս:

— Ճշմարի՞տ, Պապ. իրա՞վ, ուրախացավ թագուհին, որ Պապը, վերջապես զգաստացավ, սթափվեց:— Թո՛ղ, այո, մնա, ինչպես եղել է: Թող այդ հոգևորականներն անեն, ինչ ուզում են, միայն թե մեզ հանգիստ թողնեն և չվնասեն:

— Այո, հանգիստ. կանեմ այնպես, որ բոլորովին հանգիստ թողնեն, Զարմանդուխտ, բոլորովի՛ն հանգիստ...

Պապն խոսքերից և խոսելու մեղմ եղանակից թագուհու տագնապը կարծես չքացավ և նա հեռացավ խաղաղ, բայց և այնպես ամեն հնարավոր չարիք ու աղետ խափանելու համար՝ նորից ծխեց արծաթ խնկամանները և աղոթքի կանգնեց նրանց առաջ:

«Թուևավորե՛լ,— մտածում էր Պապը:— Ո՞ւմ համար է այս ասուրը. և մի՞թե մարդիկ պիտի հավատան դրան»...

Ու մի վայրկյան Պապի մոքով անցավ, թե, երևի, էրեմնք թուևավորել են, որ հանցանք բարդեն իր վրա և դրանով իսկ ստիպեն կանգնեցնել իր սկսած գործը և հուզեն ժողովրդին իր դեմ:

«Թող և ասեն և տարածեն»,— ասավ նա մոքում:

Հազիվ թագուհին դուրս էր գնացել, երբ ներս մտան ընտ-էխան ու Բաթը և սկսեցին մխիթարել Պապին, որ առանձին կատ-րեւոություն չտա վանքի միջադեպին. նրանք կարծում են, որ Պապը դրանից ոչ կազդվի, ով էլ կտխրի:

— Տխրե՛լ, ինչո՞ւ,— զարմացավ Պապը:— Ես միայն զար-քացած եմ, որովհետև ինձ թվում է, որ այդ ամենը խորամանկ

Եպիսկոպոսների և վարդապետների դործն է: Ցանկացել են այդ միջոցով ազդել վրաս, վախեցնել գուցե, որ ես ետ կանգնեմ իմ հրամանից և մտադրություններից: Այո, այն բոլորը, ինչ ասում էր այդ խենթանման ծերունին, կարծում եմ, իր մտքերը չէին. նրան ներշնչել էին: Նրանք ցանկանում են ինձ վատաբանել, վարկաբեկել, որ ես չհամարձակվեմ որևէ քան անել իրենց դեմ... Բայց այդ նրանց չի՛ աջողվի... չի՛ աջողվի...

Գապը խոսում էր հուզմունքով, վրդովմունքով. որքան էլ ընկերները աշխատում էին հանդստացնել նրան, բայց երկար ժամանակ չէր կարողանում հանդստանալ...

Եվ չնայած իր հուզմունքին, վիրավորանքին ու քարկոթյան՝ Գապն այնուհանդերձ գնաց Ներսեսի թաղմանը, որ եղավ մեկ-երկու օր հետո: Որքան էլ թագուհին և ուրիշները դեմ էին, թե կարող է նոր ինսիխի անախորժ միջադեպ տեղի ունենալ և հուղարկավորության ժամանակ, բայց նա գնաց, կարծես նպատակ ունենալով նորից փորձելու, ստուգելու իր ենթադրությունը, և մյուս կողմից՝ մտածում էր, որ եթե չգնա, պիտի կարծեն վախեցավ և չեկավ, և երրորդ, որպես թագավոր, իրեն պարտավոր էր զգում ներկա լինել կաթողիկոսի թաղմանը:

Բայց այս անգամ չեղավ ոչ մի անախորժ դեպք: Հոգևորականներից ոմանք, նրան նայելով, ինչ-որ խոսքեր էին շշնջում իրար, բայց բացարձակ ոչ մի խոսք կամ ակնարկ: Հայր Փալաստոսը մեկին մոմոտում էր ինքնին. «Այս ամենը պիտո է գրել մատենիս մեջ»...

Հուղարկավորությանը ներկա էր և կոմս Տերենտը՝ իր բարի դեմքի վշտահար արտահայտությամբ: Նա քրիզանդական բարձր պինվորականի իր հագուստներով և զեն ու զարդով միանգամայն զատվում էր հայ զորավարներից, իշխաններից ու նախարարներից: Ջնայած շատ բան նրան անհասկանալի և օտարոտի էր թվում, բայց նա մնաց մինչև թաղման վերջը և նույն օրը երեկոյան իր կայսեր գրեց մի նամակ, ուր ի շարս այլ բաների, շարադրեց հետևյալը.

«Այսօր թաղեցին հայոց միտրապոլիտ Ներսեսին: Ասում են, որ նրան թունավորել է Պապ թագավորը՝ իր մտադրությունները դյուրությամբ իրագործելու համար, այսինքն՝ քրիստոնեու-

թյունը թուլացնելու և աստիճանաբար պարսիկների կողմն անցնելու նպատակով: Բայց կան կարծիքներ, որ հերքում են սույնը: Ես դրանք այն կարծիքին եմ, ասում ածային, որ Արմենիայում լուրջ խմորումներ կան և լուրջ դեպքեր են հասունանում: Ես, հարկավ, պիտի հետևեմ, թե ո՛ւր է թեքվում Պապը կամ ի՛նչ է նրա նպատակը... իսկ առայժմ այստեղի հերթական խնդիրն է, թե ո՛ւմ կընտրեն կամ ինչանակեն մխորոպոլիտ Ներսեսի փոխարեն: Եվ դրանից շատ բան կպարզվի»...

***

Այդ օրերին տեղի ունեցավ մի դեպք, որ արժե հիշատակել այստեղ:

Ներսեսի թաղման երկրորդ օրը հատուկ պինված մարդկանցով պալատ եկան երկու նախարար և ցանկություն հայտնեցին, որ Թադավորն ընդունի իրենց՝ կարևոր մի գործի համար: Նրանք իրենց անվանեցին «Վասպուրականից եկած նախարարներ», որ եկել են Թադավորին շնորհավորելու. թե ինչո՞ւ համար, այդ նրանք չասին:

Եվ Պապը, չնայած հոգնած ու վատ տրամադրության մեջ, սակայն այդ խորհրդավորությամբ հետաքրքրված, թե ի՛նչ են շնորհավորելու, մասամբ էլ դուցե ցրվելու համար՝ կարգադրեց հրավիրել նրանց դահասրահ: Եվ ինքը ոչ թե գահ նստեց, ինչ որ անում էր մինչ ընդունելության ժամանակ, այլ արքայական ճերմակ թիկնոցն ուսերին ու դվինաբաց նստեց գահի ներքև դրված բազկաթոռներից մեկին: Եվ որովհետև դա համդիսավոր ընդունելություն չէր՝ նրա մոտ էին ավագանիներից մի քանիսը՝ Ջևոնդ Գնունին, Օտա Ապահունին և Բաբիկ ու Երեմիան:

Եկողները մինչև տարիքի առողջ տղամարդիկ էին: Նկատվում էր անմիջապես, որ ճանապարհի ուրվն ու քամին այրել է նրանց դեմքը, այդ պատճառով նրանց աչքերն ավելի փայլուն էին երևում և հետաքրքիր: Երկուսն էլ հագնված էին միատեսակ շալ կապաններ. մեջքներին ունեին արծաթ կամար և կարճ թուր: Երկուսն էլ միահասակ էին և գրեթե իրար նման, տարբերությունն այն էր, որ մեկը մորուսավ էր, մյուսը անմորուս:

Ներս մտնելով՝ երկուսն էլ աջ ձեռները կրծքներին դրին ու գլուխ խոնարհեցին մի երկվայրկյանի չափ: Ապա երկուսն էլ գլուխները բարձրացրին ու ասին հերթով:

— Աղճնյաց նախարար Արտակ,— ասաւ մորուսավորը:

— Մոկաց նախարարի որդի Արսեն,— հարեց անմորուսը

Եվ նորից երկուսը միասին ձեռները կրծքներին դնելով՝ խոնարհում արին ու սպասեցին Թագավորի թույլտվության, որ խոսեն:

— Խոսեք, տեր նախարարներ,— ասաւ Պապը, հերթով նայելով այդ թխադեմ և կորովի մարդկանց:— Ի՞նչ բարի լուրեր ունեք կամ ի՞նչ առելիքներ:

— Արքա, մեզ ուղարկել է Մարդպետաց հայր Դղակը,— սկսեց մորուքավոր նախարարը, աչխատելով մեղմել իր կոշտ ու թաւ ձայնը:

— Հայր-մարդպե՞տը,—զարմացաւ Պապը. վաղուց նա մոռացել էր կարծես այդ հայտնի ավագանու գոյությունը:— Որտե՞ղ է Հայր-մարդպետը:

— Վասպուրականի իր կալվածում, արքա,— պատասխանեց նորից մորուսավորը:— Նա մեզ պատվիրել է ասել, արքա, որ ամբողջ սրտով ողջունում է քեզ և չնորհավորում է քո նոր ձեռնարկը:

— Ի՞նչ ձեռնարկի մասին է խոսքը,— հետաքրքրվեց Թագավորը:

— Չո հրամանը, արքա, եկեղեցու տուրքերի մասին,— աչխուժով բացատրեց Աղճնյաց մորուսավոր նախարարը և չարունակեց եռանդով.— Շնորհավորելով՝ նա միաժամանակ իր պատրաստակամությունն ու ծառայությունն է առաջարկում քեզ, արքա:

Պապը, չուրթերը սեղմած, ուշադիր նայեց եկվոր նախարարներին, ապա իր պալատականներին: Նրա հայացքից երևում էր, որ նա լավ չէր ըմբռնում նրանց խոսքերի իմաստը, ուստի և հարցրեց.

— Այնուհետև:

— Այնուհետև, տեր արքա, մենք չատ ուրախացանք, որ ճշմարիտ ուղին գտնվեց, վերջապես: Պետք է ասենահարել,

ասյո, այդ կանոգիահանդիսակ եկեղեցականներին և հրաժարվելով Բիլանդիայից՝ բարեկամանալ մեր մշտական, դարավոր հարևան տատ սից, որի հետ ունենք ընդհատուր շատ բան...

— Եվ որոնք ավելի հարազատ են մեզ, քան հոռոմները,— ասվեցրեց անմորուսը:

— Ա,յո, արքա, և ավելի հարազատ, քան հոռոմները, որովհետև, արքա, եթե պարսիկները ցանկանում են մեր բարեկամությունը միայն, ապա բիլանդացիք ուզում են մեր հոգին և մեր երկիրը:

— Եվ սովորություններով էլ խորթ են մեզ,— նորից ավելացրեց անմորուսը:

— Ա,յո, արքա, և սովորություններով էլ խորթ են մեզ,— կրկնեց մորուսավոր նախարարը մոռացված դասի նման:— Հոռոմները մշտ արհամարհանքով են նայում մեզ և ծաղրում են մեր սովորությունները, և կողոպտում են մեր երկիրը, տանելով մեր բուրդը, երկաթն ու մեղրը, մեր ձիերն ու անասունները...

Չարմացած թագավորը, աշխատելով թաքցնել իր զարմանքն ու տարակուսանքը, չարունակում էր ուշադիր նայել եկվոր նախարարներին և երբեմն իր պալատականներին:

— Ա,յնուհետև,— հետաքրքրվեց նա նորից, կամենալով պարզել, վերջապես, թե ինչ է այդ մարդկանց նպատակը:

— Ա,յնուհետև, արքա, մենք կրկին ողջունում ու չնորհավորում ենք... ողջունում ու. չնորհավորում ենք նաև Հայրմարդպետի կողմից՝ քո հրամանը և քո քայլը պարսից կողմն անցնելու...

Թագավորը կարծես ամեն ինչ հասկացավ հիմա և հանկարծ ուժ կանգնեց ջղաձգվող դեմքով:

— Սպասե՛ր, տեր նախարար, սպասե՛ր,— ձեռը բարձրացրեց նա:— Ձեզ ո՞վ ասավ, թե ես պարսից կողմն եմ անցնում և վերացնում եմ քրիստոնեությունը:

Եկվոր նախարարները ապշած նայեցին թագավորին:

— Մենք այդ եղրակացրինք քո հրամանից, արքա,— խոսեց այժմ անմորուս նախարարը:— Եվ, բացի այդ, մեզ հասան լուրեր, որ դու, արքա, պատրաստվում ես վերացնել հոռոմները

այդ մոլի հավատը... ու Հայր-մարդպետը մեզ ուղարկեց՝ ազատելու քեզ և չնորհավորել...

Եվ նա, ձեռը կրծքին դնելով, խոնարհում արավ թագավորին:

Բայց Պապն այլևս չկարողացավ պահել իր սառնասրտությունը և երկու քայլ անելով՝ մոտեցավ Հայր-մարդպետի պատգամավորներին:

— Դուք եկել եք, ձեր նախարարները, ինձ չնորհավորելու,— ասավ նա, հուզումը հազիվ պսպելով:— Բայց ձեր չնորհավորանքը ես չեմ կարող ընդունել...

Նա լռեց մի վայրկյան՝ բերանը սլինդ վիակելով, ապա շարունակեց.

— Դուք տասա եք՝ հոռոմները տանում են մեր ձիերը, եղկաթը, մեղրը... Այդ ճիշտ է. կողոպտում են... Բայց դուք մոռացել եք, որ պարսիկները այդ ամենի հետ տանում են և ձեր հանանց, ձեր աղջիկներին, եղբայրներին և, վերջապես,— ձայնը բարձրացրեց Պապը ոտը հատակին զարկելով,— տանում են ձեր նախարարներին, բանտարկում ու սպանում են ձեր թագավորին, պերճ են վարում ձեր թագուհուն, ձեր իշխաններին... և դուք ուզում եք՝ անցնեմ նրանց կողմը և մոռանամ այն բոլոր չարիքները, ինչ հասցրել են նրանք իմ երկրին: Դուք այդ չպետք է ողջունեք, ձեր նախարարներ, այլ պիտի ողջունեք և օգնեք, որ ես չանցնեմ և ոչ մի կողմ, որ մեր երկիրը պահենք իր անժամանակությունյան մեջ, իր ազատ, ինքնուրույն կյանքով, իր սահմանների մեջ, եթե չեք ուզում դերի դառնալ մեկին կամ մյուսին:

Պապը խոսում էր հուզված, նախարարները լսում էին գլխիկոր ու դունատված, այնքան շուտ՝ հանկարծակի եկած:

— Դե ուրեմն, գնացե՛ք, հեռացեք ձեր երկիրը և մոռացեք ձեր մտքերը... Գնացե՛ք և ասեք Հայր-մարդպետին՝ թող չխառնվի իրեն չվերաբերող գործերի: Եվ թող չստիպի ինձ վոխել իմ արքայական խոսքը... Հասկանալի՞ է... Գնացե՛ք...

Նախարարները խոնարհում արին ու դուրս եկան իրար հետևից, չվոխված, չիմանալով Պապը դատապարտո՞ւմ է իրենց թե Հայր-մարդպետին:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Տարօրինակ կինչ առաջուններից մեկն էր. արևի պայծառ շողերից ցնծում էին դաշտերն ու բլուրները, գողաթռուռ կանաչներն ու հացարտւյտերը, և օդը՝ անապական ու մաքուր խաղում էր այդ ամենի վրա հազիվ նշմարելի, վճիտ, գնայուն ջրերի պես:

Մամիկոնյաններն ոտանը՝ Ողական ամրոցը պաշարել էր. սահակևները բացել էին երկաթապատ ու բևեռապինդ պարսպադռները, և սպասավորներն այժմ եռանդով մաքրում ու կարգի էին բերում ամրոցի բակը, սալահատակ ուղիները, որ պատերի տակով կամ, բակը խաչաձևելով, գնում էին ամրոցի մի ծայրից մյուսը. ամանք ջրում էին ծառաստանի ծաղիկները, ամանք աշխատում էին խոհանոցում, ամանք ջուր էին կրում պարտեզներով և պղնձե ծանր կժերով, կամ ձիեր ու անասուններ էին տանում դաշտը. և այդ ամենն անում էին որքան կարելի է աղմուկ ու ղժուշշ, կարծես նրա համար, որ քնածները չարթնանան:

Եվ այդ ժամին ահա մի պատանի սպասավոր երկու ձևուռ մի կլոր մատուցարան բռնած՝ գնում էր դեպի պարտակի բուրգերից մեկը, որի բաց դռնից երևում էին վեր բարձրացող քարե աստիճանները: Մատուցարանի վրա դրված էին տարբեր մեծության բաներ, ըստ երևույթին՝ ամանեներ, որ ծածկված էին բարակ մի քողով: Պատանին, որ գլխարաց էր ու քեթև հագնված, ամենայն խնամքով այդ մատուցարանը բռնած բուրգի դռնակից մտավ ներս և քարե աստիճաններով բարձրացավ վեր: Սանդուղքն անվերջ ոլորվում էր պարուրաձև ու երևում վեր: Երբ պատանին բարձրացել էր բավական և հասել մի դռնակի՝ նայ, անկասդող վիճելով ձեռներն ազատել՝ թեքվեց և, ուսով հրելով, բացարալ դուռը:

Դուռն անմիջապես բացվեց, և պատանին, ներս մտնելով, ժպտաց ներսը գտնվող երկու երիտասարդներին, ապա մատուցանեը դնելով մի եռոտանի պատվանդանի վրա՝ վերցրեց նրա վրայի քողը. երևացին հաց, կարագ, միս և յուղով պատրաստած մի թխվածք, որից տակավին գոլորշի էր բարձրանում:

— Տաք-տաք բերի, որ համով լինի,— ասավ պատանին՝ նորից մտերմաբար ժպտալով:— Մեծ տիկինը հարցնում է, եղբայրը, ի՞նչպես է առողջությունդ:

— Լավ, սիրելիս,— ասավ երիտասարդը:— Շնորհակալությունս հայտնիր մեծ տիկնոջը:

— Բարի,— ասավ պատանին, նորից ժպտաց և դուրս գնաց հղնիկի արագությամբ:

Այդ պատանին Մուշեղ սպարապետի մոր՝ Կատրանիդե մեծ տիկնոջ սպասավորն էր, որ օրը երեք անգամ մատուցարանով ուտելիք էր բերում այդ բուրգը: Իսկ բուրգի այդ դույզ նեղ լուսամուտ ունեցող սենյակում գտնվող երիտասարդներից մեկը Հրահատն էր, մյուսը նրա ընկեր Աւոմը, որ երեք օր էր ինչ ամրոց էր եկել սպարապետի ու նրա շքախմբի հետ, և ամեն առավոտ այցելում էր Հրահատին:

— Ուրեմն այդպես,— ասավ Աւոմը պատանու գնալուց հետո, շարունակելով իրենց ընդհատված զրույցը:— Կուզեիր նորից գնալ Դվին և տեսնել Նազենիին:

— Այո, եթե միայն այնտեղ է,— ասավ Հրահատը տխրաձայն:— Եթե միայն եկած լինի:

— Իսկ քեզ բոլորովին կազդուրվա՞ծ ես դղում արդյոք:

— Ինչպես տեսնում ես,— պատասխանեց Հրահատը:— Սմանից ավելի ես կազդուրված եմ: Պարանոցիս վերքը սպիացել է վաղուց, կողերս նույնպես... Ձեր գալուց հետո ինձ դղում եմ ավելի կազդուրված...

Այն օրից, երբ Հրահատը վիրավորվեց և, վահանափակ տարվելով՝ վերքերը կապեցին, նրան, սպարապետի կարգադրությամբ, նախ պահեցին մի գյուղում, ապա, մի շաբաթ անց, բերին Ողական բուժվելու: Ներան խնամում էր ամրոցի ծերունազարդ Աթանաս բուժարարը, որ իր արհեստի մեջ համարվում էր քաղմահմուտ մարդ: Իսկ Հրահատի վերքերը շատ ծանր էին.

որի մի հարված սասցել էր ուսին ու պարանոցին միաժամանակ, նիզակի երկու վերք աջ կողին. բացի այդ՝ ձիուց ընկնելիս՝ դուրս էր ընկել աջ ձեռը: Ճանապարհին՝ մինչև Ողական, նա մի քանի անգամ ուշագնաց եղավ ցավերից, թեև սանում էին ջրինելին կապած պատգարակով. մի երկու անգամ վերքերը բացվեցին և շատ արյուն կորցրեց, այնպես որ ուղեկցողները հույս չունեին, թե կարող են ողջ տեղ հասցնել նրան:

Սակայն, Ողական բերվելով, ծերունի Աթանասի համառության շնորհիվ նրա ձեռը տեղն ընկավ, վերքերն սկսեցին բուժվել և մի քանի ամսվա մեջ պարանոցի վերքն սկսեց ապխտանալ, իսկ աջ կողի նիզակավերքերը երկար ժամանակ պահանջեցին: Երկուքերեք ամիս նա ստիպված էր պառկել մեկայն մի կողքի վրա, որ վերքերը բուժվեին, և առաջին օրերը բուժարար ծերունին նրան մենակ չէր թողնում:

Առաջին այդ օրերին առհասարակ նրա վիճակը ծանր էր. հաճախ նրա ջերմը բարձրանում էր այն աստիճան, որ նա մնում էր կես ուշակորույս դրության մեջ: Այդպիսի դեպքերում ծեր Աթանասը նրա մոտից չէր հեռանում և երբեմն լսում էր, թե ինչպես է նա ջերմի մեջ խոսում լինչ իրեն: Մերթ ղռում էր իրեն կարծես ոտքի դաշտում և ասում էր. «Հառա՛ջ—հառա՛ջ... Զա՛րկ—զա՛րկ անվախ»... Մերթ էլ ասում էր անհասկանալի բաներ: Մի երկու անգամ էլ ծերունին լսեց, թե ինչպես հիվանդն ասում էր.

— Սպասիր, Նազենի, սպասիր: Ես քեզ համար ընծաներ եմ բերել, ընտիր ընծաներ՝ գինիներ, վարսակներ... կա՛ց, Նազենի, կուզիր այս վարսակները...

Եվ որովհետև Նազենու անունը կրկնվում էր հաճախ՝ ծերունին մի օր հարցրեց Հրահատին, երբ սա հանդիստ էր.

— Նազենին ո՞վ է, տղաս,— աչքերով ժպտաց բուժարարը:

— Նազենի՞ն,— զարմացավ երիտասարդը հետաքրքրված, յայն բացած աչքերով նայելով ծերունուն:— Նազենի՞ն: Որտե՞ղ է: Գիտե՞ս նրա տանն ինչ, բուժարար հայրիկ:

— Դու երազիդ մեջ խոսում էիր հետը, տղաս:

— Երազի՞ս... հառաչեց Հրահատը և լռեց:

Տեսնելով իր հարցումը թե այդ անունը տխրություն պատ-

ճառեց հիվանդին, բուժարարն այլևս չասաց ոչինչ, բայց չդուրս եկավ մենակ չթողնել նրան, մինչև որ նա իրեն լավ զգաց, իսկ այնուհետև օրը երկու անգամ այցելում էր նրան՝ վիրակապերը փոխելու կամ նրա ախորժությունը փարատելու։

— Վատը անցավ, տղաս, շուտով կապաքինվես և կելնես,— հուսադրում էր նա՝ երբեմն ծերունական չոր-ոակրոտ, բայց դրդրոմալի ձեռով նրա դլուխը շոյելով։

Այդ օրերին Հրահատն այցելում էր և սպարապետի մայրը՝ կատրանիդե մեծ տիկինը, վասակ սպարապետի այրին, որ ամուսնու մահից հետո իրեն նվիրել էր օրթեր և վիրավորներ խնամելու դործին։ Նա՛ էր, որ օրը երեք անդամ, ինչպես այսօր, ընտիր խորտիկներ էր ուղարկում վիրավոր Հրահատի համար և միշտ հետաքրքրվում նրա ապաքինության ընթացքով։

— Պիտի չտխրես, զավակս, որ շուտ ապաքինվես,— ասում էր նա ամեն այցելության, և նրա կաթնագույն, կաթի երեսի պես ճնճռոտ դեմքն արտահայտում էր հուսադրում ու դորովանք։— Անենք այնպես, որ Մուշեղս դա՝ քեզ ելած տեղին։

Հրահատին մի երկու անդամ տես եկավ և սպարապետի կինը՝ Աշխեն տիկինը, որ նույնպես շուտով առողջանալու հույս էր ներշնչում և խորհուրդ տալիս շատ չմտածել։

— Դու ապաքինիր շուտ, ամրոցի լավագույն աղջիկը պիտի ամուսնացնեմ քեզ հետ,— կատակում էր նա։—Ել ինչ պիտի լինեմ քո հինգամայրը։

Տիկինը չէր խմանում, որ իր բարի ցանկությամբ ծանր հարված է հասցնում խեղճ երիտասարդի սրտին, որ նախ քան խոսելը հառաչում էր ակամա։

— Շնորհակալ եմ, տիկին,— ասում էր Հրահատը ակնածությամբ, հիշելով Նաղենուն, որ երբեք չէր հեռանում նրա մտքից։

Իսկ Հրահատն իրոք շատ տխուր էր, և դա ոչ միայն նրա համար, որ վիրավոր էր և անկողնին դերի, այլ նրա համար, որ չդիտեր, թե ո՛ւր մնաց և ի՛նչ եղավ իր Նաղենին։ Գեռ Զիրավում նա կարծում էր, թե հաղթությունից հետո կվերադառնա Դվին և, վերջապես, կառնի նրան. բայց այժմ՝ հարկադրված էր պառկել և սպասել, թե երբ պետք է բուժվեն վերքերը։ Ո-

քանի դնում նա ավելի էր անհանգստանում Նազենու համար, որովհետև նրան թվում էր, թե նա արդեն վերադարձած պիտի լինի (նրա մխայն դերը չէ) և, իրեն ապահովով ու լուր չտանելով, պիտի տանջվի չարունակ, կարծելով երևի, ապտնվել է Զիրավում: Ուստի և Հրահատը չարունակ մտածում էր իր մասին մի լուր ուղարկել Դվին: Բայց ի՞նչպես ուղարկեր—չգիտեր. մոտը չկար մտերիմ մեկը, որին հայտներ իր ցանկությունը, ոչ էլ հնարավորություն ուներ անձնական դուրս գալու... Ու տրխրում էր ծանր մտածումներից... Չնայած լավ խնամքին՝ նրա թախիծը չէր անցնում. և նա օրեր էր հաշվում, թե ե՛րբ պիտի ապաքինվի և գնա, վերջապես, Դվին... Նրան թվում էր, որ Նազենին ու մայրը արդեն եկած կլինեն, ուստի և հաճախ մտովի պատկերացնում էր զինագործ Զոմայի պարիսպը քանդված այլևս, նրա ցածրիկ տնակը, որից խաղաղ կապույտ ծուխ էր բարձրանում և, ծառերի սաղարթի արանքով, գնում-հալվում վեր: Իսկ տնակի առջև միշտ երևում էր նրան Նազենին՝ կամ սխտոր ու սոխը ճանապարհին կամ մատրուն այգում չքջջկլիս:

Պատկերացնելով այս և սրա նման բաներ՝ Հրահատն ինքն իրեն սփոփում էր և տարվում մտայլ մտքերով: Սակայն մի՞շտ էլ ուրախ տեսության հեռանկարը գալիս էր մի ուժեղ մռայլություն տալու այդ սխուր մտածումները: Իսկ այդ ուրախ տեսությունը պատկերանում էր նրան դարձյալ զինագործ Զոմայի ընտանիքում: Առաջին ողջագուրանքին հաջորդում էին բիզանդիայից բերած ընծաները. տեսնում էր Հրահատը, թե ինչպես է ուրախանում Նազենին այդ զարդերի համար. ա՛յնքան, որ խոսքերը դիմեղերը կախում է ականջներից, վարսակալն ամրացնում է գլխին և ասում.— «Շնորհակալ եմ: Այսպիսի զարդեր միայն իշխանուհիները ունեն»...

— Այո,— շշնջում էր Հրահատն ինքնին:— Միայն իշխանուհիները: Բերի, որ դու ևս չմնաս իշխանուհիներից:

Ու ինքն իր հետ խոսելով (հիվանդության միջոցին նա սովորություն էր դարձրել խոսել ինքն իր հետ) նա Նազենուն պատկերացնում էր այդ ոսկեզույն վարսակալով և շողարձակ դիմեղերով, որ, թվում էր, ավելի էին գեղեցկացնում նրան:

— Միայն թե եկած լինի, տեր աստված, եկած,— ասում է նա երազներից սթափվելուց հետո, երբ նկատում էր ու՛ր լինելը:— Միայն թե եկած լինի... գերի չլինի...

Բայց այդ սթափումը տևում էր շատ կարճ. նրա երևակայությունը սկսում էր պատկերացնել նրան արդեն տանը, այգում... Դա թերևս նրանից էր, որ այդ պատկերացումն ամիսներ էր նրան: Պատահում էր՝ հաճախ տեսնում էր նրան երազում և խոսում հետը կամ դարձյալ Բիզանդիայից բերած զարդերը տալիս էր նրան... Նազենին վերցնում էր այդ զարդերը, դուքսում և հեռանում կամ պարզապես անհետանում նրա աչքից... Այդ ժամ Հրահատը զարթնում էր քրտինքի մեջ, անելանելի լուսթյան ու մթության մեջ և տխրում:

Այդպիսի պահերին նրա սիրտը նեղվում էր այնպես, որ դանկուբյուն էր ունենում դուրս դալ բակը, դաշտը կամ դոնե սենյակի լուսամուտից նայել հեռուները: Սակայն ծեր բուժարքեն առայժմ չէր թուլատրում վեր կենալ, և նա իր տխրությունը փարատում էր երազներով. երբեմն էլ նրա տխրությունը փարատում էր ինքը ծեր բուժարարն իր զրույցներով, կամ մեծ տիկինն իր այցելություններով, իսկ ամենից շատ հացաբեր պատանի սպասավորը, որ մեխամոխ պատմում էր ինչ անցնում-դառնում էր ամբողում կամ ինչ լուր կա սպարապետից, կամ որտեղ է սպարապետը... մերթ Ատրպատականն, ուր պատժել է նա կառավարչին, մերթ գնացել է Տմորիք, մերթ չոապել է Ալձնիք...

Լսում էր Հրահատը և տխրում, որ ինքն սպարապետի հետ չէ, ինչպես եղել էր միշտ...

Այդ օրերին իսկապես նա կարոտում էր ոչ միայն Նազենուն, այլև սպարապետին և գինքի ընկերներին՝ սպարապետի թիկնապահներին: Գանի ամիս էր նրանց չէր տեսել. «Գոնե Ատոմը գար»— մտածում էր նա: Հիմա ինքը ոչինչ չէր թաքցնի նրանից, կպատմեր իր սերը Նրան և կխնդրեր, որ մի լուր հասցներ Դվին՝ Նազենուն:

— Ա՛խ, գոնե Ատոմը գար,— կրկնում էր նա երբեմն:— Միայն նա կարող է մի լուր, մի նամակ հասցնել Նազենուն:

Բայց Ատոմը չկար. և Հրահատը տխրում էր, չիմանալով ո՛ւմ հանձնարարել մի այդպիսի լուր կամ նամակ: Բուժարա-

րին չէր կարող. պատանի սպասավորը որքան պատրաստակամ նույնքան և անփորձ էր. ու առհասարակ դժվար էր իմանալ ո՛վ է դնում Դվին... և այս հանգամանքը տխրեցնում էր Հրահատին. նա տխրում էր մանավանդ, երբ լուսամուտից լսում էր ամրոցի աղջիկների ձայնը. նորոգվում էր նրա սրտի վերքը, և նա բուռն ցանկություն էր ունենում իջնել ցած, նստել մի ձի և սլանալ Դվին՝ նրան տեսնելու, եթե եկել է, իսկ եթե չի եկել —դոնե մի բան իմանա... Նրան շարունակ թվում էր, թե մեկն իր ներսում—նա չէր կարող ասել խիղճը, թե ուրիշ մի ձայն— պատպատում է իրեն՝ անտարբերության համար, որ այդքան քիչ է հոգում Նազենու մասին... Այնուամենայնիվ նա երբեմն ա՛յնքան էր անհանգստանում, որ չնայած բուժարարի արգելքին՝ մի երկու անգամ բուրգի իր լուսամուտից նայից առջևը փռված դաշտերին, ուր երևում էին մխային խաղաղ մարգերը, արտերը, վանգուր թխուտներ և բարակ մի ճանապարհ, որ ձգվում. դնում էր դեպ Այրարատ: Ու երբեմն նրան թվում էր կամ պարզապես պատրանքի մեջ էր ընկնում, թե հանկարծ Նազենին կարող է գալ այդտեղից: Վերադառնալով Դվին և, իմանալով վիրավոր է ինքը, նա չի համբերում և գալիս է տեսության. «Մենակ իմարդին, չի կարող. նա կգա, անշուշտ, մոր հետ» մտածում էր Հրահատը: Երբեմն էլ նրան թվում էր, թե ահա այսօր կամ վաղը կերևա Աստոմը և ամեն քան լավ կլինի. նրա միջոցով լուր կուղարկի Նազենուն կամ լուր կստանա...

Բայց չիար ոչ մեկը, ոչ մյուսը:

Վերջապես, մի օր էլ, երբ նրա վերքերը բուժվեցին ու ախտացան և բուժարարը թույլատրեց նրան շրջել սենյակում և երբեմն դուրս գալ բակը՝ Նազենուն տեսնելու ցանկությունը կարծես ավելի բորբոքվեց նրա մեջ, ու նա խնդրեց մի օր մեծ տիկնոջը, թե կարո՞ղ է գնալ Դվին:

— Ինչո՞ւ, տղաս,— հետաքրքրվեց մեծ տիկինը:— Դեռ ապաիկր, ապաքինիր մարմինդ. Մուշեղն կգա շուտով, լավ էն՝ դա և քեզ այստեղ չտեսնի: Արդեն լուր առնենք, ու Թշտունյաց աշխարհից անցել է Աղձնիք... Թե՞ դուցե վատ ինք խնամում քեզ... Եթե զգում ես ինչի կարիք՝ ասա, տղաս:

Հրահատն ամաչեց:

— Շնորհակալ եմ, մեծ տիկին. ոչ մի բանի կարիք չեմ զգում:

— Հապա ինչո՞ւ ախուր ես: Թե պարապուքյո՞ւնն է հոգնեցնում քեզ:

— Այո, մեծ տիկին:

— Այդ ոչինչ, աղաս: Շուտով Մուշեղս կգա և քեզ կտանի հետը:

Եվ մի օր էլ, իսկապես, պատանի սպասավորը հայտնեց, թե սպարապետը գալիս է ամրոցում հանգստանալու:

— Իրա՞վ,— ուրախացավ Հրահատը:

— Երեկոյան սուրհանդակ եկավ...

Եվ Հրահատն սկսեց անհամբեր սպասել սպարապետի և ընկերների գալուն. իր բարձր սենյակի լուսամուտից հաճախ նայում էր Ողական եկող բոլոր ճանապարհներին և սպասում... ու ահա մի օր էլ, երբ իր բուրգից տեսավ, թե ինչպես ամրոցապահ զինվորները ձիերով դնացին ընդառաջ, նա անմիջապես վազեց ցած և, հակառակ բուժարարի զգուշացման, ձի նստեց ու գնացավ նրանց ետևից:

Ճանապարհն արտերի միջով ձգվում-գնում էր հեռուն: Դալց տակավին ոչինչ չէր երևում. թեթև մի փոշի անդամ չէր մատնում եկողների գալը: Սակայն բավական հետո՝ ճանապարհի ոլորանից հանկարծ դուրս եկավ հեծյալ մարդկանց մի մեծ խումբ, որ գալիս էր հանդիսաքայլ, և բոլորն առջևից մի ճերմակ ձիավոր:

— Սպարապետը՛,— ասավ Հրահատն ինքնաբերաբար և նրա աչքերը թրջվեցին ակամա:

Դա, իրոք, սպարապետի ճերմակին էր, որ իր տիրոջը բերում էր հպարտորեն, ոտներն ու գլուխը, ըստ սովորության, խաղացնելով. կարծես ճանապարհ չէր կտրել և ծանրություն չկար վրան-այնքան աշխույժ և ուրախ էր նա. թերևս ծանոթ վայրերի տեսքն էր զվարթացրել նրան:

Եկողներին տեսնելով՝ Հրահատը լարեց ձին ու սլացավ առաջ և, փոքր անց, ինքն էլ չիմացավ ինչպես հասավ նրանց, ինչպես ցած նետվեց ձիուց և, ինչպես սպարապետին մոտենալով, բռնեց նրա աջը ու համբուրեց:

— Հրահա՞տ: Դու արդեն ողջ-առողջ,— զարմացավ ապարատիստը և, Հրահատին իրեն քաշելով, համբուրեց նրա ճակատը:— Ուրախ եմ, որ քեզ ապաքինած եմ տեսնում:

Ապա Հրահատին դրկեցին-ողջագուրեցին ընկեր-թիկնապահները, որից հետո եկողների և դիմավորողների թափորը շարժվից առաջ:

Ամբողջ ընակչությունն արդեն դուրս էր թափվել իր հարազատին ընդունելու: Այդտեղ էին ոչ միայն ծեր, պառավ և երիտասարդ ապաստավորները, այլև Մամիկոնյան լազմաթիվ էշխանիկներ, էշխանուհիներ՝ տարեց կանայք, դեռատի օրիորդներ. ինքը կատարանիդն մեծ սիկինը դուրս էր եկել իր կացարանի քարե մեծ պատշգամը, նուիրեն արել էր և Աշխեն սիկինն իր նաժիշտների հետ:

Ամբողջ ամբոցը, նրա պարապատումն ու քուրդերը զարդարված էին Մամիկոնյան տոհմանիշը կրող դրոշներով: Սպասավորներից շատերը ձեռին ծաղկեփնջեր էին, կանաչ ճյուղեր և... Լեռնականներ... Երբ մոտեցան՝ դրանք ամեն կողմից ծաղիկներ ու կանաչ ճեռուցին ապարատիստի ճիու ոտների տակ. ոմանք լալիս էին ուրախությունից, ոմանք ուրախ գոռում էին ապարատիստի ու նրա թիկնապահների շուրջը:

Երբ ընդունելության պահը վերջացավ և ապարատիստը գնաց իր օթևանը՝ Հրահատը Աստմիկ ճեռքից բռնած տարավ նրան քուրդի իր սենյակը:

— Պիտի մնամ քեզ գնալու ես մի նոր վայր,— հարցրեց նա:

— Առայժմ պիտի մնանք կարծեմ:

— Իսկ Դվին չե՞ք գնալու:

— Տեսնենք,— ասավ Աստմիկը,— իսկ ինչո՞ւ ես հարցնում:

— Երբ գնաք՝ կուզեի, որ ինձ էլ տանեք ձեզ հետ,— ասավ Հրահատը և չիմացավ կարծես ինչպես շարունակել:

Իհարկե, նա խոսում էր և հետո էլ մտածում՝ Աստմիկին ասի՞ արդյոք ինչո՞ւ է հետաքրքրվում, ինչո՞ւ է ուզում Դվին գնալ, թե չասի:

Եվ նա, որ հիվանդ օրերին շարունակ մտածում էր Աստմիկ առջև լացել իր սիրտը և պատմել նրան իր մերը—հիմա, երբ

Աստղը նստած էր իր առջև՝ դժվարանում էր այդ անել. ի՞նչպես կարելի է, չի՞ ծիծաղի արդյոք: Ուզում էր խորհուրդ հարցնել, թե ի՞նչպես լուր ուղարկի Դվին կամ ի՞նչպես թուլլտվություն խնդրի սպարապետից՝ Դվին գնալու, բայց դրա համար նույնպես պետք է բացեր նրան իր գաղտնիքը: Հրահատն ու Աստղը սպարապետի առաջին թիկնապահներն էին, որ կապված էին մի քանի տարվա ընկերությամբ. բայց չնայած դրան՝ Հրահատն իր որտի գաղտնիքը չէր հայտնել նրան, ու հիմա դժվարանում էր: Մի ինչ-որ անբնմատրելի բան խանգարում էր նրան այդ անելու:

Սակայն մի քանի օր հետո այդ գաղտնիքը բացվեց ինքնին:

Հիվանդության օրերին նա, ինչպես հայտնի է, առիթ էր ունեցել խոսել ինքն իր հետ կամ երազում խոսել Նազենու հետ: Եվ ահա մի անգամ այդպես խոսելիս հասավ Աստղը, ինքնաբաց դռնակից ներս մտնելով:

— Այդ ի՞նչ էիր խոսում, Հրահատ,— հարցրեց նա:— Նազենին ո՞վ է:

Հրահատն սթափվեց.

— Ես՞... Ի՞նչ եմ խոսել...

— Է, սիրելիս, էլ մի թաքցնի: Ես արդեն գիտեմ,— չարունակեց Աստղը խորամանկ ժպտալով և լեզուն տրաքացնելով:

— Ի՞նչ գիտես...

— Այն, որ դու սիրահարված ես ամրոցի գեղեցկուհիներից մեկի վրա, որի անունը Նազենի է... Այդպես չէ՞:

Հրահատն ակամա ժպտաց և փարվեց ընկերոջը:

— Մինչև այժմ, Աստղ սիրելի, թաքցրել եմ, բայց հիմա պիտի ասեմ... իրրև մոտ և մտերիմ ընկերդ... Նկատող եղիր, որ...

Եվ նա պատմեց իր սերը, դրա հետ և իր կասկածները Նազենու անհայտության մասին:

— Այսպես ուրեմն,— ավարտեց նա:— Հիմա կուզեի տեսնել նրան կամ լսանալ ո՛ւր է և ո՛րտեղ: Տուր ինձ մի խորհուրդ, սիրելի Աստղ: Ի՞նչպես անեմ...

— Խորհուրդը հեշտ է,— ժպտաց Աստղը չարաճճի:— Սակայն ասա՝ վաղո՞ւց է այդ սերը:

— Գեղնից հետո թաքցնի այդ էլ: Երեք տարի է:

— Վաղուց նկատում էի, որ ծածուկ մի բան ունես: Հիմա հասկացա, թե ինչո՛ւ գուսանի կերպ մտած գնացիր Դվին՝ պարսից բանակի միջով. հասկացա՝ թե ինչու էիր լալիս Նախճևանում: Այդպե՞ս է: Ճշմարի՞տ է:

— Ճշմարիտ է,— գլխով արավ Հրահատը:

Եվ այժմ, սպասավոր պատանու գալուց առաջ, նրանք խոսում էին այդ մասին, իսկ նրա գնալուց հետո չարունակեցին ավելի հանգիստ: Հրահատը խորհուրդ էր հարցնում ընկերից, թե ինչպես դիմի սպարապետին, որ նա թողնի իրեն Դվին: Բայց միաժամանակ կասկածում էր, թե կթողնի՞ արդյոք:

— Եթե կաղդուրված ես՝ անշուշտ կթողնի: Բայց կհարցնի, երևի, ինչո՞ւ համար: Պետք է, ուրեմն, ասես ինչո՞ւ համար:

— Ինչպե՞ս,— զարմացավ Հրահատը:— Ասեմ, որ գնում եմ... Ոչ, այդ չեմ կարող, Աստո սիրելի... ինչպես կարելի է... Չեմ կարող:

— Եթե չես կարող, ուրեմն՝ պիտի հորինես մի բան: Մոտածիր և հորինիր մի բան:

— Բայց խաբել սպարապետին:

— Սիրո համար կարելի է,— ծիծաղեց Աստոը:— Անցյալ անգամ այդպես չարի՞ր:

— Բայց այն անգամ ես գնայի սպարապետի հանձնարարությամբ:

— Միևնույն է, թող հիմա էլ հանձնարարի մի բան,—նորից ծիծաղեց Աստոը:— Այդպես ուրեմն. իմ խորհուրդն է՝ հորինիր մի բան:

Եվ մինչ Հրահատը մտածում էր, թե ինչպես և ինչ պատրվակով թուլտուլություն խնդրի սպարապետից՝ մի ամսով Դվին դնալու,— Աստոին կանչեցին սպարապետի մոտ:

— Ինչ կա,— հետաքրքրվեց նա:

— Չգիտեմ,— ասավ կանչողը, սպարապետի սպասավորներից մեկը,— պարսից սահմանից սուրհանդակ է եկել նրա մոտ:

— Սուրհանդա՞կ,— ասավ Աստոը կասկածով:— Ինչ է նշանակում այդ:

Հայրենի ոստանը գալով՝ սպարապետը զվարթ չէր, ինչպես լինում էր սովորաբար ընտանիքի մոտ վերադառնալիս. նա

տխուր էր և մտահոգ։ Թիկնապահները ենթադրում էին, թե պատճառը, երևի, այն նամակներն էին, որ նա ստացել է Դվինից. նամակները, որոնք կարդալիս՝ նա մռայլվել էր և լուռ։ Գուցե և կային ուրիշ պատճառներ՝ նրանք չգիտեին։ Սակայն նրանց առաջին ենթադրությունը սխալ չէր։ Մուշեղը, իրոք, Դվինից ստացել էր նամակներ, որոնցով հայտնում էին, թե Պապը վերացրել է վանական տուրքերը, մտադիր է դրամել և նրանց հողերը. թե Ներսեսը վախճանվել է և հիմա անցանկալի վիճակ է։ Դրում էր Ջենոն Գնունին։

Սպարապետն այդ նամակներն ստացել էր ուշացած։ Եվ այժմ մտադիր էր, մի քանի օր Ողականում մնալուց հետո և որոշ գործեր կարգի դնելուց հետո, մեկնել Դվին և այդ ամենի համար բացատրություն պահանջել Թագավորից։— Նախարարներից դրբ պահանջելը՝ նա չէր համարում վնասակար քան, ասկսյն դարմանում էր, որ Պապը չէ սպասել իր վերադարձին, կամ՝ դրա համար չէ հարցրել իր կարծիքը։ Տուրքերի վերացումը հանդարտում էր շատ լուրջ խնդիր, իսկ վանական հողերի դրամումը՝ բարդ մի գործ... Համենայն դեպս՝ մտածում էր մի քանի օրից մեկնել Դվին, և այդ մասին մի օր նույնիսկ ակնարկել էր Աստղին։

Եվ հիմա, երբ Աստղը գնում էր սպարապետի մոտ, նրան թվում էր, թե երևի Դվին են մեկնելու արդեն, և սպարապետը կանչում է պատրաստություն տեսնելու։ Բայց պարսից սահմանից եկած սուրհանդակը փոքր ինչ չփոթեց նրան։

Ու գնաց, Հրահատին նույնպես թողնելով կասկածների մեջ, որ սկսեց մտածել, թե ինչո՞ւ պետք է եկած լինի այդ սուրհանդակը պարսից սահմանից, ի՞նչ նոր բան կարող է լինել այնտեղ։ Սակայն նրա կասկածները ցրեց Աստղն ինքը, որ շուտով վերադարձավ և հայտնեց, թե սպարապետը գնում է պարսից սահմանը և կարգադրել է, որ թիկնապահները պատրաստվեն իրեն հետևելու։

— Մի քանի օր է՝ եկել է՝ նորից,— զարմացավ Հրահատը։

— Այո՛, նորից։

— Իսկ ի՞նչ կա, ինչո՞ւ համար,—հետաքրքրվեց Հրահատը։

— Աստված՝ Հայր-մայրպետն իրեն վատ է պահում։

— Հայր-մարդպետը՛... Իսկ ի՞նչ է անում։ Ա՛ստամբուխյո՞ւն, թե...

— Ոչինչ չգիտեմ առայժմ,— ասաց Աստղը։— Այսքանը միայն լսեցի, որ իրեն վատ է պահում։ Պատրաստվենք ուրեմն... Դու կարո՞ղ ես...

— Իհարկե,— պատասխանեց Հրահատը ուրախ, որ կարող է, վերջապես, ձի նստել և միանալ ընկերներին։

***

Հայր-մարդպետը... Այս անվանն ավազանին և ազնվիկ նախարարը պալատից հեռանալիս՝ հետը վերցրեց իր բոլոր ծառաներին, իր ձիերն ու զորինները, արծաթ սամոնդենը, զենքերը, դրոշներն ու կերպասեղենը, որ ձեռք էր բերել իր պաշտոնավարության համարյա երեսուն տարվա ընթացքում, և այդ կարավանով ճանապարհ ընկավ դեպի իր կալվածները, որ գտնվում էին Վասպուրականում և հանում էին մինչև պարսից սահմանը, ուր ապրում էին նրա հարազատ եղբայրները։ Ամբողջ ճանապարհին նա լուռ էր և մռայլ. թվում էր ծանր խոհերի մեջ. և հակառակ իր սովորության, որ սիրում էր երբեմն կատակել ծառաների հետ, ոչ մի ավելորդ խոսք չէր խանգարում նրանց հետ, որոնք, երևից հերթին, պաշտում սիրում արամադրությունը, չէին համարձակում ոչ միայն խոսել հետը, այլ և խանգարել նրա խոհերը. այդպես էր պահում երևն անգամ նրա անմեկնապահ Հավանիը, որ ամեն մոտ և ապատ էր պղտում երևն սիրուց հետո։ Նրանք ամենքը ոչ միայն հասկացել, այլև զգացել էին, որ Հայր-մարդպետը հեռացվել է պալատից՝ Թագավորի կողմից, զգացել էին, որ նա այլևս չունի այն համարումն ու պատիվը, ինչ ուներ Արշակ Թագավորի օրոք։ Նկատել էին, որ Մերուժանի Դվինում եղած ժամանակ՝ նա երևն ավելի ապատ և ուրախ էր պղտում, քան պապի գալուց հետո, երբ նա չարունակ մատհոդ էր և ախտը։ Ինչ էր անցել-դարձել՝ նրանք չգիտեին հարկավ և չէին կարող իմանալ, բայց բոլոր երևից մատչելի նշաններից եղրակացնում էին, որ Հայր-մարդպետի աստղը թեքվել է, որ նա իջել է իր դիրքից և այլևս չի բարձրանա... և ուրախ-

արդեն վաթսունի մոտ ծերունի է—կերթա մի քանի տարի կապրի իր կալվածում ու այնտեղ էլ կմեռնի, թողնելով իրենց անտեր կամ իր ազգականների քմահաճույքին։

— Մենք էլ առաջվան օրերն ու կյանքը չենք ունենա,—ասում էին նրանք տխրությամբ, հիշելով պալատի շքեղությունը, ամառա կյանքը, ճաշերը, առնները, հանդիսաներն ու այցելությունները։— Վերջացա՛վ...

Այդպես չէր մոածում, սակայն, Հայր-մարդպետն ինքը. թեև տխուր ու ընկճված, բայց գոնում էր, որ պետական մարդկանց կյանքը փոփոխական է. այսօր ընկածը՝ վաղը կարող է նորից բարձրանալ և տիրանալ ավելի բարձր դիրքի, քան առաջ. ու հուսահատությունը չէր պաշարում նրան, այլ բոլորովին ուրիշ մտքեր ու անելիքներ։ Ճիշտ է, մինչև ճանապարհի կեսը և ավելի՝ ընկճված էր, որովհետև մոտածում էր մեկին անցածի և վերջին տխուր միջադեպի մասին, այն, որ թագավորն արձակելով իրեն՝ չուզեց անգամ լսել իր բացատրությունը. սակայն նույն այդ ճանապարհի կեսից հետո նա սկսեց մոտածել ապագայի վրա. անցածը անցած էր, պետք էր նորից սկսել...

Եվ գալով իր կալվածքը, որ բռնում էր ահագին մի տարածություն, մեջն առած երեսունից ավելի գյուղեր, փարթամ անտառներ ու արոտատեղեր, նա մի քանի օր միայն զբաղվեց յուբաչինների ու կալվածքի գործերով, ապա հետաքրքրվեց, թե նախարարներից ո՛վքեր են ապրում մոտակայքում։ Իմանալով նրանց անունն ու նստավայրը՝ նա, գալու երրորդ թե չորրորդ օրը, ձի նստած, մի խումբ զինված թիկնապահ ծառաների ուղեկցությամբ, դնաց հարևան նախարարներին այցելելու կամ, իր ասելով, ծանոթանալու։

Պատահում էր՝ այդ այցելություններից նա վերադառնում էր նույն օրը ուշ երեկոյան կամ դիշերը, բայց պատահում էր նաև, որ մնում էր մեկ-երկու օր, երբեմն ավելի։ Շուտով սակայն, երբ համարյա ծանոթացել էր բոլորին՝ նա դադարեցրեց իր այցելությունները, և այնուհետև այդ հարևան նախարարներն էին գալիս նրան այցելելու, երբեմն մենակ, երբեմն մի քանիսը միասին, բայց մեծ գինված թիկնապահներով ու ծառաներով, և հյուրասիրվում էին, երկար խոսում առանձին ու մուքին հեռա-

նում լրիվ ծառանալի հետ: Թե ի՞նչ էին խոսում՝ դա ծածուկ էր մնում Հայր-մարդպետի եղբայրներից, նրանց ընտանիքից ու իր ծառաներից: Հայր-մարդպետը շատ զղուշ էր այդ կողմից: Բացի նկատելի էր մի բան, որ նրա առաջին օրերի տարտամ տրամադրությունը փոխվում էր հետզհետե. նա աշխուժանում էր և նույնիսկ զվարթանում: Այն ինչ առաջին օրերը նա շատ անհանգիստ էր ու մռայլ. հեռացվելու վիրավորանքը նա չէր մոռանում և չէր կարողանում հաշտվել այդ փաստի հետ, թեև լրիվ ու խոր մոածելով՝ զգում էր, որ Թեթև ազատվեց Պապից ու Մուշեղից, նրանց զայրույթից: Նրան թվում էր, որ Պապն իրեն հեռացրեց, հալածանքին, նրա համար, որ դվինցիներին չէր թողել դիմադրել և Մերուժանին ընդունել էր պալատում... Ու մոածում էր, որ լավ է նրանք չդիտեին ամենը, մանավանդ փառանձեմ Թադուհու հետ ունեցած ընդհարումը Արտաշեսի ներկայությամբ... Օ՜օ՜, եթե այդ բաները իմանային— իրեն ապատում չէր լինի... Եվ նա ուրախ էր, որ այդ չդիտեին և ինքը Թեթև ազատվեց:

Սակայն այնուհանդերձ նրա հոգին տխուր էր. ի՞նչ էր ինքը հիմա—աներժված, պատվից ու վաստքից ընկած հասարակ մի մարդ... Նա կարող էր ապրել, հարկավ, Պապից էլ լավ, քայց... որպես տոկ մի կալվածատեր նախարարի, որ այլևս պատիվ, լրտավանք ու ճարն չէր կարող ունենալ երկրի գործերում: Մյուս կողմից՝ իրեն հեռացնելու համբավը պիտի տարածվեր դռվատից-դռվատ, և ամեն տեղ կարող էին երես թեքել նրանից. դրան պիտի նպաստեր, անշուշտ, Մուշեղն ինքը՝ իր ոխերիմ թշնամին... «Մամիկոնյան այդ ամբարտավանը, ասում էր նա, որ հայոց աշխարհի միակ պատասխանը համարում էր իր տունը և իրեն, որ կարծում է, թե հայոց վերկությունը Բիզանդիայի հետ լինելու մեջ է... Թյուրիմաց մոածությո՜ւն»... Լսելով Մուշեղը վատաբանականում պատժել ու դվխասել է մի քանի պարսկասեր նախարարի և առաջ բերել լուրջ դժգոհություններ՝ Հայր-մարդպետը թե վրդովվեց և թե ուրախացավ:

«Եվ մի՞թե պետք է թողնել այսպես,— մոածեց նա հուզված.— մի՞թե պետք է ապրենք հոռոմների տեսլի բարքերով, ճնշվարկվենք պռոտ Մուշեղին ու անփորձ Պապին, որ գործիք է

այդ Մուշեղի ու Դանայէլազդեստ Ներսեսի ձեռքին»: Ու սկսեց ուշադիր—նայողով այցելել նախարարական տները, առանձնապես դժդոհ նախարարներին, որ մեծ թիվ էին կազմում Վասպուրական—նում, որովհետև շատ էին և պարսկասերները, որոնք այժմ առերես մեծ ընդունում էին բիզանդական բարեկամությունը, բայց ներքուստ մնում էին պարսկասեր և շարունակ դանգատ—վում էին Մուշեղից, որ անիրավ եղավ և պատժեց այս կամ այն նախարարին:

Դանիելով համախոհներ ու համակիրներ՝ Հայր—Մարդպետան սկսեց քննադատել Մուշեղի և Պապի ընթացքը, որ, նրա կարծի—քով, գլխովին տարվել էին բիզանդական կարգերով ու սովո—րություններով, որ նրանք երկիրը կործանում են Բիզանդիայի կողմն անցնելով, խափանում են հայերի և պարսից հին բարեկա—մությունը և, ընդհակառակը, դրա փոխարեն ստեղծում ու հրահրում մի թշնամություն, որ վնասակար է հայոց աշխարհի համար:

— Բրիստոնեություն՛ն,— ասում էր նա հեգնանքով,— լինի՛ է պետք այդ քրիստոնեությունը, երբ դա թշնամացնում է երկու հարևան ազգերի: Քարոզում է սեր, եղբայրություն, բայց ստեղծում է ատելություն ու թշնամություն,— ասում էր Նա Լուսն այցելող նախարարներին:— Մեր և պարսից թշնամությունը դժբախտաբար ստեղծվել է այն օրից, երբ այդ Քրիստոսի կրոնն ասվածը մուտք է գործել մեր մեջ:

Եվ ամբողջ ձմեռն անցավ այդ այցելություններով ու զրույցներով: Սակայն գարնանը նրանց դժգոհությունն ու վրդ—վդոմունքը առանձապատկվեց, երբ լուր եկավ, թե Պապը նախա—րարներից պահանջում է զինվորներ ու ձիեր արքունի բանակը մեծացնելու և զորացնելու: Այդ օրերին հարևան նախարարներն ամեն հաճախեցրին իրենց երթևեկը: Այժմ գալիս էին ոչ միայն նրանք, որ լինում էին միշտ, այլև նրանք, որ երբեք չէին եկել, ու քաղաքը հուզված, վրդով, անգամ զայրացած խոսում էին թագավորի պահանջի մասին: Եվ Հայր—Մարդպետի սենեկապետ Հովսեփը, որ պաշտոնի բերումով միշտ կից սենյակումն էր լի—նում, սկզբում ակամա, հետո հետաքրքրված լսում էր նրանց

դարավոր պրոյեկտները. այժմ նրանք խոսում էին ոչ աստղիկ պես ծածուկ, այլ բացահայտ ու բարձրաձայն.

— Ես, մեր նախարարներ, խորհում եմ, որ Պապի նպատակը ոչ թե երկրի խաղաղությունն է, այլ մեզ թուլացնելը,— ասում էր Սպճնիքի նախարարներից մեկը:

— Այո, ըստ երևույթին, Պապը ցանկանում է՝ ազգաստացնել մեզ, դրկել մեզ ուժից, որ այնուհետև ինչ ցանկանա՝ այն էլ անի մեզ հետ,— ասաց մի այլ նախարար:—Ուզում է դրկել մեզ պատվից ու արժանապատվությունից:

— Ճիշտ ու ճշմարիտ,— համաձայնեց Հայր-մարդպետը:— Զինվոր տալով՝ նշանակում է լինքներս մնանք առանց դինամիկան ուժի և ևնթարկենք մեզ Պապի ողորմածության: Նշանակում է՝ մենք էլ ոամիկի և չինականի պես դառնանք հարկատու: Այդ չի կարող լինել, մեր նախարարներ:—Այդ չենք կարող թույլ տալ...

— Բայց, ասում են, կան նախարարներ, որ ցանկանում են, համաձայն են թագավորին տալ թե զինվոր, թե ձիեր:

— Դրանք արդեն ստրուկներ են և ոչ թե նախարարներ,— կտրեց Հայր-մարդպետը դայրացած:

Մի անգամ էլ, երբ նրա մոտ հավաքվել էին շատ ժողովրդի նախարարներ, նրա սեննեկապահ Հովսեփը լսեց, թե ինչպես Հայր-մարդպետը ասում էր հուզված:

— Ամենիվ մեր նախարարներ, Մուշեղն ու Պապը, նաև Նեղոնան իր եկեղեցականներով, շլացած բյուզանդական ոսկով ու փառքի խոստումներով մեր երկիրը, մեր դժբախտ երկիրը ստեղծում են դեպի կործանում: Ուզում են վերացնել հին կարգն ու սովքը, վերացնել նախարարաց սուրբ իրավունքները, ամեն բան առնել իրենց ձեռքը և մեզ՝ նախարարականս հին տոհմերի ժառանգներիս դարձնել իրենց ծառան ու ստրուկը: Կարելի՞ է հանդուրժել այսպիսի բան:

— Ոչ, հազար անգամ ոչ,— ասին նախարարները:— Ամեն լավ է վատությունից աշխարհն անջատվի, քան ևնթարկվի նրանց:

— Այո, մենք կարող ենք բոլորովին այնջատվել, սեր նախարարներ, եթե միաբան լինենք, և այս բանում հօգնի մեզ

Ճապաւհը, միայն թե նրա օգնութեանը դիմենք, եթե հարմար առիթը գա:

Այնուհետև Հովսեփը լսեց, թե ինչպես բոլորը միաձայն որոշեցին, որ Հայր-մարդպետան ինքը բանակցի պարսից հետ և խոստանա նրանց ամեն բան, միայն թե վասպուրականի աշխարհը հանի Պապի, Մուշեղի և Ներսեհի «եռապետութենից», ինչպես արտահայտվեց մեկը:

Հայր-մարդպետը համաձայն առավ այդ բանակցութեանը և մյուս օրն, իրոք, մի քանի հավատարիմ ծառայի ուղեկցութեամբ ճանապարհվեց դեպի պարսից սահմանը: Բայց ուղիղ չդնաց, հարկավ, սահմանապահութեան, որովհետև հայ սահմանապահները կարող էին նկատել իրեն և ձերբակալել, այլ նախապես ծառայներից մեկին՝ հատուկ մի նամակով՝ ուղարկեց պարսից սահմանապահ զորքի պետի մոտ, խնդրելով, թե կարևոր մի գործով համար ցանկանում է տեսակցել նրա հետ:

Եվ մի քանի օր հետո այդ տեսակցութեանը եղավ պարսից հողի վրա: Հայր-մարդպետին ճանաչում էին պարսից արքունիքում, ճանաչում էին ինչպես ավազակները, այնպես էլ զորավարները, որ երբեմն եկել էին Հայաստան: Պարզվեց, որ սահմանապահ զորքի պետը նույնպես դիտեր Հայր-մարդպետին: Նա սիրով ընդունեց նրան և պատվով ճանապարհ դրեց. բայց թե ինչ խոսեցին, ինչ բանակցութեաններ վարեցին՝ այդ ոչ-ոք չիմացավ: Վերադարձին տակայն, հայոց հողի վրա արձեն, հայ սահմանապահները նկատեցին և ճանաչեցին Հայր-մարդպետին, բայց չհամարձակվեցին որևէ բան ասել կամ կասկած ունենալ, թե նա անթույլատրելի մի բան արած լինի. իմացան միայն լուրից պետին, թե տեսան այսպիսի մի բան: Սահմանապահ զորքի պետը՝ Արտակ անունով մի քաջարի զորականի՝ ինքը նույնպես դժվարացավ հարցուփորձել ծեր ավազանուն, թե ո՛ր տեղից է դալիս կամ ինչո՛ւ է անցել սահմանը. դժվարացավ նաև նկատել, թե նա անթույլատրելի մի բան արած լինի. սակայն իր պարտքը համարեց լուր տալ այդ մասին Մուշեղ սպարապետին, որ այդ ժամանակ գտնվում էր Աղձնիքում:

Սպարապետը լսելով սահմանապահ զորքի պետի տուրհանդակներից.

— Ես ուրիշ բան էլ չէի ասասում նրանից,— ասավ և, մըտքում Պապին դատապարտելով, կորդադրեց հատուկ հսկողություն սահմանել Հայր-մարդպետի վրա և լուրջ մի բան նկատելուն պես՝ իմացնել իրեն:

— Այսինքն՝ քու լուր տուր հարցնել, սպարապետ, ի՞նչպես հասկանամ «լուրջ բանը»,— հարցրեց սուրհանդակը:

— Այն, որ եթե նա փորձի անցնել սահմանը կամ ինքն ընդունի սահմանն անցած մեկին, լինի դա հայ թե պարսիկ, ձերբակալել անել անմիջապես:

— Իրեն նուչյոպե՞ս ձերբակալ անել:

— Այո, եթե փորձի սահմանն անցնել:

Երբ սուրհանդակը գնաց՝ Մուշեղը մտածեց, թե ահա անձորձ Պապը ինչպիսի վտանգավոր մարդ է թողել աղատ ու անպատիժ, մի մարդ, ասկայն, որ ահագին անուն ու հեղինակություն ունի թե հայերի մեջ և թե պարսից արքունիքում, մարդ, որ կարող է շատ բան փչացնել, և նրան չես կարող հասարակ մարդու նման բռնել ու դլխատել, որ շատ կապեր ու կողմնակիցներ ունի պատուբախանում. կարող են ծագել ներքին պատմիջյան բարդություններ ու կռիվներ, որից և կարող է օդտվել Պարսկաստանը: Մանավանդ նա ինքը չէր ուզում իր ձեռքերը թաթախել այդ մարդու արյան մեջ, չունենալով վերջին հանցանքի ստույգ ապացույցները:

Սակայն այդ ժամանակ Հայր-մարդպետի տրամադրության մեջ կատարվեց մի փոփոխություն, ավելի շուտ ուրախացավ նենգապես, երբ իմացավ Պապի նոր հրամանի լուրը: Ամարատյան հրկիզից հետո իր մտերիմներից մեկը, որ օր ու գիշեր ճանապարհ էր կտրել ձիեր փոխելով՝ լուր բերեց, թե Պապը մեծ թշնամություն է սկսել եկեղեցու և հոգևորականության հետ, կարդադրել է հարկումներ դրամել եկեղեցու յոթ հողից հինդը և վերացնում է եկեղեցուն տրվող տուրքերը:

— Վերջապե՛ս, վերջապե՛ս,— բացականչեց Հայր-մարդպետը տարիքին անհամապատասխան աչխուժով:— Ես միշտ ասում էի, թե այդ կանացիահոգեորձ մարդկանց չպետք է երես տալ. չպետք է թողնել, որ նրանք իրենց թաթերը տարածեն մինչև արքունիք, վտանգեն մեր ու պարսից հարաբերությունները:

վերջապես, խելացի մի բան... Հիմա նկատում եմ, որ Պապը կարող է երկիր կառավարել...

Ու մի երկու օր հրճվանքի մեջ էր. մտածում էր, որ Պապը գտել է արդարությունը, ուղիղ ճանապարհը, և այդ վերապրում էր այն բանին, որ Մուշեղը հեռու է նրանից, իր վնասակար ազդեցությունը չի գործադրել երիտասարդ թագավորի վրա: Եվ Հայր-մարդապետն այդ ուրախության մեջ՝ իր առջև բացված էր տեսնում մի վարդագույն հեռանկար, ուր ամեն բան նորից այնպես էր լինելու, ինչպես տարիներ առաջ, և նորից, իր հեճուկս թշնամիների, կարող է վերստանալ իր դիրքն ու աղդեցությունը արքունիքում:

Պապի նոր ընթացքն այնքան ուրախացրեց նրան, որ երկու օր հետո կանչեց իր համախոհ նախարարներից մի երկուսին՝ Աղձնյաց նախարար Ատոռիկին և Մոկաց նախարար Կարնեի որդի Արտեմին և ուղարկեց Պապին շնորհավորելու և իր ուրախությունը հայտնելու այդ լիամասուն գործի համար:

— Միաժամանակ հայտնեցեք թագավորին,— ասավ նա,— որ ես միշտ պատրաստ եմ ծառայել նրան և օգնել ամեն բանում, անգամ հաշտեցնել պարսից հետ՝ բարի դրացիական հարաբերություններ վերահաստատելու, ինչպես եղել է առաջ:

Բանագնաց նախարարներին ճամփելուց հետո Հայր-մարդապետն արտասովոր ջերմեռանդությամբ էր մտածում, որ Պապը նորից կհիշի իրեն ու կդգա իր կարիքը ու, հավանորեն, այդ խոկ նախարարների միջոցով հրավեր կուղարկի իրեն, և ինքը, հարկավ, անհապաղ կվերադառնա պալատ... Այս մտքերի հետ միասին՝ նա տոգորվում էր նոր հույսերով ու ծրագրերով, թե ինչպես ավելի ակարճ ճանապարհով իրականացնի իր նպատակները, թե ինչպես երիտասարդ Պապին՝ վերահաստատել հայկական հին սովորույթները, ետես դարձնել տանել Բիզանդիայից, հռոմեներից, հետզհետե մոռանալ ու բոլորովին մոռացնել պարսից, հետզհետե մոռացնել հին թշնամությունները և Հիմք դնել մի նոր բարեկամության: Նա մտածում էր, որ եթե Պապը կանչի իրեն՝ ինքը կհամոզի նրան և թույլ չի տա քայքայել նախարարներին, ինչպես որ ինքն է, որ զինվոր ու ճիճեր վերցնելն ավելորդ է: Եվ, վերջապես, երբ պարսից հետ լինեն, մեծ բանակի կարիք

չկա: Պարսիկները երբեք կայաշոտանին հոտոմներից: Սակայն Հայր-մարդապետին ավելի ուշադրության էր այն, թե ինչպես ինքը, այլատյաց վերաբառնալով, վրեժխնդիր կլինի իր թշնամիներից և, առաջին հերթին, Մուշեղ սպարապետից, այդ դառը Մամիկոնյանից, որ երեն արհամարհելով՝ անգամ չի ուզում խոսել հետը, որ այնքան մոլի հոտոմասեր է...

Այս մտքերով ու հեռանկարներով տարված պահերին՝ Հայր-մարդապետը, չնայած իր առաջացած տարիքին, ունենում էր ուրախության ու ոգևորության այնպիսի վայրկյաններ, որ երբեմն մոքում կամ կվճռաճայն առում էր ինքն երեն:

«Այո, Հայր-մարդապետը նորից կվերադառնա Արշակունիների պալատը և նորից կշրջի մարմար սյունաշար ճեմելիքում՝ իր հետևակ իր թշնամիների»...

Ուրախության այդ պահերին նա մի երկու անգամ խոսեց իր ծառաներից մի քանիսի հետ.— Այսաեղ, երեխ, ձանձրանում եք, այնպե՞ս չէ: Ոչինչ. սպասեք մի փոքր էլ, նորից ամեն ինչ առաջվա պես կլինի...

Ծառաները, առանց այդ խոսքն էլ, տեսնում էին երեսից տիրոջ կերպարանափոխությունը, և թեև չէին հասկանում պատճառը, բայց զգում էին, որ մի լավ բան է կատարվում Հայր-մարդապետի կյանքում, ու հետաքրքիր էին իմանալ, թե ի՞նչ է այդ: Եվ Հայր-մարդապետն էր դարձյալ, որ հակառակ իր սովորական ծածկամտության, մի օր ասավ իր սենեկապահ Հովսեփին.

— Մի փոքր էլ, Հովսեփ, և մենք նորից կվերնենք Դվինում, պալատի մեր նախկին բնակարանում:

— Ուրե՞մն թագավորն իմ տերոջը նորից կանչել է պալատ,— անհամարձակ հարցրեց սենեկապետը:

— Տակավին՝ ոչ, Հովսեփ. բայց չուտով կկանչի,— պատասխանեց Հայր-մարդապետը բազմախորհուրդ ու լուռ:

Երբ ծառաները իմացան, որ չուտով վերադառնալու են պալատ՝ ուրախությունից այլևս չէին զգում կալվածքի կյանքի ձիօրինակ տաղտուկը ու սպասում էին, թե երեսը երբ տիրոջ հրամայքի մեկնելու պատրաստություն տեսնել:

Սակայն այդ ամենը կախված էր Դվին մեկնած նախարար-

ների վերադարձից, այսինքն՝ թե ի՛նչ լուր կամ ի՛նչ հրամանք կբերեն նրանք:

Բայց մինչ այդ նախարարների վերադարձը՝ Հայր-մարդպետը ճի նստած, դարձյալ թիկնապահ ծառաների ուղեկցությամբ, նորից իր բարեկամ Տիրիթ նախարարի հետ գնաց պարսից սահմանակեաի հետ տեսակցելու, ավելի շուտ հայտնելու, թե ինչ ահռելի փոփոխություններ են կատարվում Հայաստանում, ինչ հրամանի է սվել Պապը, մի հրամանի, որ դեմ է միանգամայն թե եկեղեցուն և թե բիզանդացիներին: Նա ցանկանում էր, որ այս ամենը վաղօրոք հասնի պարսից արքունիքը...

Հայր-մարդպետը և ուղեկիցները ճիերը քշում էին հասկավորված արտերի միջով, մի ճանապարհով, որ տանում էր դեպի անտառը, որը թանձրանում էր նրանց դիմաց: Իսկ հեռվից, բավական հեռվից նրանց հետևում էին երկու ուրիշ հետևակ, որ չէին աչքի չընկնել:

Դրանք հայ սահմանապահ պետի մարդիկն էին, որոնց նա, Մուշեղ սպարապետի կարդադրությամբ հրամայել էր հետևել Հայր-մարդպետին և տեսնել, թե ո՛վքեր են դարձյալ Հայր-մարդպետի մոտ կամ ո՛ւր է գնում նա:

Եվ չափազանց ավելի նրանք, չինականի կեղտոտ մոտ, հետևում էին, բայց նկատում էին միայն նախարարները, որ դալիս էին նրա մոտ, մնում էին մի դիշեր, կամ հեռանում նույն օրը: Սակայն այսօր նկատեցին արտասովոր մի բան, որ ծառաները պատրաստում են ճիեր, շներ... ու քիչ հետո իրենց դարսանից նկատեցին, թե ինչպես Հայր-մարդպետի ծառաներից մեկը դուրս բերեց որսորդական պարագաներ, և բոլորը միասին դուրս եկան ճիավորված ու բռնեցին դաշտի ճանապարհը՝ հետներն առած գինված ծառաներ և շատ շներ, որոնցից մի քանիսը գնում էին ճիերից առաջ ընկած: Բոլոր նշաններից երևում էր, որ գնում էին մոտիկ, սահմանի վրա տարածվող անտառը որսի:

Մի առժամանակ նրանք գնում էին այդ ճանապարհով, բայց հանկարծ ճանապարհն իջավ մի թիստ ձորակ, և բոլորը մտան այդ ձորակը և գնացին ձորն ի վեր, որ տանում էր դարձյալ դեպի անտառը: Շներըը խայտալով կամ այս ու այն կողմ որս վնտռելով՝ հետևում կամ վազում էին նրանց առջևից:

Սահմանապահները նույնպես իջան այդ թխաշատ ձորակը և անտես հետևեցին նրանց: Հայր-մարդպետը և իր ուղեկիցները դնում էին ձիեր հնձած և կանոնավոր մի չավիղ բռնած, իսկ հազուստափոխ սահմանապահները ոտով, անշեղորեն վեր ու վար անելով, որ բաց տեղերով չքայլեն և չնկատվեն, կամ թիեղի նաև թաքնվելով, մինչև որ նրանք հասան անտառ: Այդտեղ՝ անտառումն արդեն հետևելն ավելի դյուրին էր: Բայց, տարօրինակ բան, այստեղ Հայր-մարդպետն իր բարեկամներով մի փոքր առաջ դնալով, Վանդ առան խիտ, հովանավոր ծառերի մի չրջափակում և ձիերից իջան:

Հետամտող սահմանապահներին թվում էր, թե նրանք, երևի, որսի պատրաստություն են տեսնելու. բայց, որքան կարողանում էին նկատել ծառերի արանքով, նրանք այդպիսի բան չարին, այլ, ընդհակառակը, Հայր-մարդպետն ու Տիրիթ նախարարը նստեցին հանգստանալու, իսկ նրանց ծառաները մնացին հետու կանգնած. բոլոր նշաններից երևում էր, որ նրանք հոկող պահակներին դեր էին կատարում. զգաստ և ուշադիր նայում էին իրենց շուրջը և ոչ մի այլ գործի չէին ձեռնարկում:

Այդ հետաքրքրեց սահմանապահներին և նրանք բավական հետու,— այնքան հետու, որ կարելի էր ամեն ինչ տեսնել և ամեն չարժում նկատել,— դարձան մոտ ու սպասեցին: Անցավ համարյա մի ժամ. ոչինչ չփոխվեց. Հայր-մարդպետն ու իր մարդիկ մնացին նույն տեղը և համարյա նույն դիրքում: Անցավ երկրորդ ժամը՝ նույնը:

Հետամտող սահմանապահները ձանձրանում էին թաքստոցներում և մոածում էին, որ այլևս, երևի, ոչինչ չի լինի, երբ հանկարծ ձիերի փսփսուկ ոտնաձայնի լսվեց անտառի այն կողմից, ուր նստած էր Հայր-մարդպետը:

Սահմանապահները լարեցին իրենց լսողությունը և աչքաժպացած նայեցին ոտնաձայնի կողմը: Նույնն արին և Հայր-մարդպետը, Տիրիթ նախարարը և նրանց մարդիկ, որ պահակություն էին անում:

Անցավ բավական ժամանակ. ձիերի ոտնաձայնը դնալով մոտենում էր, բայց չավիղը պատող ծառերի խտությանն պատճառով դեռ ոչինչ չէր երևում. և այն ժամանակ ահա, երբ

Եկողները այնքան մոտ էին թվում, որ ձիերի փռնչոցը լսվում էր անոտաւի լուռ թյան մեջ—Տիրիթի նախարարը տեղից վեր կացավ և մի քանի քայլ արավ եկողների կողմը: Զանգալ մի քանի վայրկյան՝ երևաց, վերջապես, առաջին ձիու գլուխը, ապա և հետևյալը. դա այն ձիավոր ծառան էր, որ մենակ ձորով գնաց դեպի պարսից սահմանը: Նրա հետևից երևաց մի ուրիշ ձիավոր՝ էտրիվ ձի նստած, թիկնոցով, կարճ սրածայր գդակով և անասորու մի տարեց պարսիկ. նրա հետևից երևացին երեք ձիավոր պարսիկ էլ, բայց ավելի պարզ և հասարակ հագնված, նետաղեղ ու սրերով զինված: Երևում էր, որ դրանք առաջինի թիկնապահներն էին, երեքն էլ երիտասարդ: Տիրիթը տարեց պարսկին տեսնելով՝ ընդառաջ գնաց և, բարևելով, առաջնորդեց նրան Հայր-մարդպետի մոտ. իսկ պահակները ձիերից իջնելով, մնացին հետու կանգնած:

Այնուհետև դարան մտած հայ սահմանապահները տեսան, թե ինչպես մեծավոր պարսիկը՝ հարդանքով ու ակնածանքով մոտեցավ Հայր-մարդպետին, խոնարհ գլուխ տվեց և՝ Տիրիթի հետ միասին նստեց, որից հետո նրանք սկսեցին զրուցել՝ առանձին սիրալիրությամբ ու զգուշությամբ. երևում էր, թե ինչպես մի քանի խոսքից հետո՝ ժամանակ առ ժամանակ նրանք նայում էին երեցոց չարչը: Թե ինչ էին խոսում, դժվար էր իմանալ, հարկավ, բայց հայ սահմանապահներին թվում էր, թե Հայր-մարդպետը, երևի, ցանկանում է անցնել սահմանը և տալով Պարսկաստանում, և հիմա հավանորեն պայմանավորվում է դրա համար: Բնական զգուշանալով, որ նա կարող է սահմանն անցնել, հայ սահմանապահներից մեկը գնաց սահմանապահ զորամասի պետին իմացնելու, որ սահմանի վրա հակողությունն ուժեղացնեն. նա իրավունք ուներ Հայր-մարդպետին ձերբակալելու և նո բերելու...

Բայց դա ավելորդ զգուշություն էր. Հայր-մարդպետը սահմանն անցնելու միտք չուներ. նա կարծես մտադրություն իսկ չուներ: Կարճ տեսակցությունից հետո պարսիկները նո գնացին, իսկ Հայր-մարդպետը Տիրիթի հետ միասին, իրենց թիկնապահներով ու որսաշների ոհմակով վերադարձան՝ առանց նույնիսկ տեղի միտք անելու:

Սահմանապահ զորամասի պետը լսելով կատարվածը, նույն պահին անմիջապես երկու սուրհանդակի մի-մի նամակ ուղարկեց սպարապետին, դրելով այն ամենը, ինչ տեղի էր ունեցել, և միաժամանակ կարգադրություն խնդրեց, թե ինչպես վարվի Հայր-մարդպետի հետ, քանի որ անկասկած է նրա գաղտնի տեսակցությունը թշնամու հետ:

***

Չանցավ երեք օր, կարդադրության վոխարեն Մուշեղն ինքը եկավ իր շքախմբով և գնաց ուղիղ Հայր-մարդպետի կալվածը: Սպարապետի գալը մեծ հետաքրքրություն ու զարմանք հարուցեց: Կալվածի բնակիչները՝ բոլորը, անգամ Հայր-մարդպետի եղբայրներն ու հարսները դուրս թափվեցին սպարապետին տեսնելու, նրա գալու նպատակն իմանալու: Դուրս չեկավ միայն Հայր-մարդպետը:

«Ինչո՞ւ պետք է եկած լինի այդ գոռող Մամիկոնյանը,— մտածեց նա անային մեռաքս կապարով անց ու դարձ անելով իր ընդարձակ սրահում, որ հահավորված էր փափուկ օթոցներով ու գորգերով:— Իմացել է, երևի, սլարսից զորավարի հետ իմ տեսակցությունը և եկել է գուցե ինձ ձերբակալ անելու... Բայց՝ հազիվ. դրա համար նա ինքը չէր գա. կուղարկեր ուրիշ մարդիկ... Եկել է, հավանորեն, զգուշացնելու, որ այդպիսի բան չանեմ... Ոչ, նա այդ էլ չէր անի»...

Եվ Հայր-մարդպետը զարմացած էր ու տարակույսների մեջ: Բայց և այնպես, երբ նրա սենեկապետ Հովսեփը հայտնեց, թե սպարապետը գալիս է իր մոտ— նա, հյուրասիրության կարգը պահպանած լինելու համար, վրան առավ սպարսից ձևի շալ պատմուճանը և գնաց անակնկալ ու անախորժ այցելուին ընդառաջ, և հենց տան աստիճանների գլխին նրանք հանդիպեցին:

— Մարդպետաց տեր, ես եկել եմ մեր տեր Թագավորի կողմից,— ասավ Մուշեղը՝ դինվորական թեթև բարևից հետո:

— Թագավորի՞,— ակամա կրկնեց Հայր-մարդպետը, գլուխն ինչինչ նշանակությամբ ի հարցանս Թագավորի:—Հուսամ՝ բարի է:

— Անշուշտ,— չեչտեց սպարապետը:

— Իսկ ինչո՞վ եմ արժանացել իմ տեր թագավորի ուշադրությա՞ն,—հարցրեց նա կարծես կասկածով, բայց միաժամանակ մտածելով իր ուղարկած պատգամավորների հաջողության մասին:

— Թե ինչով՝ այդ տակավին ինձ հայտնի չէ, տեր մարդպետ,— ասաց Մուշեղը զուսպ և որոշ:— Սակայն, մեր տեր թագավորն ինձ հրամայել է՝ հայտնել, որ ինքը շատ կարևոր մի գործով կանչում է քեզ Դվին:

«Կարևոր գործով» մտմտաց Հայր-մարդպետը ու կասկածով նայեց Մուշեղին, ապա տեսնելով նրա դեմքը լուրջ ու անշարժ՝ մեկնեն ժպիտ նման մի բան երևաց նրա շուրթերի վրա:

«Լհը» ասաց Հայր-մարդպետը ինքն իր մեջ, մտածելով, որ իր արած քայլն իզուր չի անցել. այսինքն՝ ուղարկած նախապատրաստական միջոցով հայտնած չնորհավորանքներն ու ծառայության պատրաստակամությունը արել են իրենց ազդեցությունը թագավորի վրա: Թեպետ նա համոզված էր այդ բանում, բայց և այնպես հարցրեց.

— Իսկ ինչո՞ւ համար է արդյոք տեր թագավորը կանչում ինձ, սպարապետ, եթե միայն հայտնի է քեզ:

— Թե ինչո՛ւ համար՝ ինձ հայտնի չէ, դժբախտաբար,— պատասխանեց Մուշեղը, խուսափելով նայել Հայր-մարդպետի ծաղկատար դեմքին և դեղնավուն գինող աչքերին, որոնց մեջ նա մի ակնթարթում տեսավ չարախնդության ու հաղթանակի կայծեր:— Մեր տեր թագավորը ինձ հրամայել է պատվով ուղարկել քեզ Դվին, և ես պարտականություն ունեմ հատուկ պատվո պահակախմբով ճանապարհել քեզ: Այսքանը: Բայց կողմնակի կերպով,— չարունակեց սպարապետը արդեն ոչ պաշտոնական ձևով, այլ կարծես թեթև մի գաղտնիք հայտնելու պես,— կողմնակի կերպով ինձ հայտնի է միայն, որ թագավորը մտադիր է քեզ կարևոր մի առաքելությամբ ուղարկել պարսից արքունիքը՝ Շապուհի մոտ... Ավելին չգիտեմ...

Հայր-մարդպետի ծաղկատար դեմքը լուսավորվեց միանգամից:

«Այդպես կհարկադրվես գալ ոտս, չար օձի ծնունդ,— ասաց Հայր-մարդպետը մտքում, նայելով Մուշեղի փոքր ու պինդ

մարմնին և հիշելով, թե որքան արհամարհական վերաբերում ուներ նա իր հանդեպ՝ թե առաջներում և թե Բիղանդիայից դառնալուց հետո։— Ես դեռ կատիկեմ քեզ՝ սողալ ոտներիս տակ հայրս Մամիկոնյան,— շարունակից մտածել Հայր-մարզպետը. բայց և այնպես արտաքին, ընդունված քաղաքավարություն պահած լինելու համար՝ նորից հետաքրքրվեց.

— Իսկ ե՞րբ պետք է մեկնել, տեր սպարապետ։

— Որքան շուտ՝ այնքան լավ, տեր մարզպետ,— ասավ սպարապետը, դարձյալ խուսափելով նայել նրա աչքերին։— Ինչպես ասի՝ իմ թիկնապահներից մի քանիսը կուղեկցեն քեզ մինչև Դվին։

— Շնորհակալ եմ, տեր սպարապետ։ Ես սակայն կարող էի մեկնել իմ ծառաների, իմ սեպհական թիկնապահների ուղեկցությամբ,— ասավ նա, կասկածելով, թե ինչո՞ւ սպարապետը իր թիկնապահներին է ղնում հետը։

Սակայն սպարապետի պատասխանը ցրեց նրա կասկածը։

— Ոչ, Հայր-մարզպետ, ինձ կարգադրված է պատվով ճանապարհ դնել քեզ, և ես պարտավոր եմ,— կրկնեց Մուշեղը։— Պատրաստվեցեք ուրեմն վաղը կամ մյուս օրը մեկնելու, եթե չկան, հարկավ, արգելափակ հանգամանքներ։

— Ես կաշխատեմ արբունքյամբ կատարել իմ թագավորի կամքը,— ասավ Հայր-մարզպետը և թեթև մի գլուխ խոնարհեց, որ ամենի վերաբերում էր թագավորին, քան սպարապետին։

Եվ երկրորդ օրն, իրոք, Հայր-մարզպետը ճանապարհ ընկավ դեպի Դվին։ Նրան, ինչպես միշտ որևէ տեղ գնալիս, ուղեկցում էին իր թիկնապահ-ծառաներից տասը հոգի, այս անգամ նաև Մուշեղ սպարապետի թիկնապահներից վեցը, որոնցից մեկը Հրահատը՝ արտակարգ ուրախ տրամադրությամբ. նախ, որ գընում է Դվին և շուտով կտեսնի իր Նաղենուն, երկրորդ, որ տանում է սպարապետի նամակը, որ նա կարգադրել էր «պահել աչքի լուսի պես և հանձնել անձամբ արքայի ձեռը»։ Եվ նա ուրախ էր, որ պիտի մոներ պալատ, ուր չէր եղել, և մանավանդ պիտի խոսեր թագավորի հետ՝ նամակն անձամբ նրան տալով։ Թեպետև այդ նամակը նա, չկորցնելու համար, կարել էր հագուստի ներսի

կողմը՝ սրտի վրա, բայց հաճախ, ուղեկիցներից անտես, շրջափում էր այն, ստուգելու՝ իր տե՞ղն է արդյոք, թե ընկել-կորել է։

Հայր-մարդապետի թափորը գնում էր դեպի Ծաղկոտն գավառը տանող ճանապարհով, որ ամենակարճն էր, թեև փոքր ինչ դժվար։ Հայր-մարդապետն այդ ընտրել էր շուտ տեղ հասնելու համար. և առաջին օրը նրանց ձախ կողմը Բզնունյաց աշնան ծուխն էր վեր-վեռում մանրակոհակ, մյուս կողմը այգեստաններն էին տարածվում խայտաբղետ գույներով, աշնան շռայլությամբ, որ ողողված էին արևի առատ լույսերով։ Եվ չգիտես քնության Տոխ ու խաղաղ տեսարանները թե աշնան պայծառ արևն էր պատճառը, որ Հայր-մարդապետին թվում էր, թե ինքը վերադառնում է տուն, իր հարազատ օթևանը. ու դրանից նրա տրամադրությունը բարձր էր. ուրախությունից մանր ու կանաչ աչքերը խաղում էին դեմքին, և ուզում էր օր առաջ հասնել Դվին և իմանալ, թե ինչեր են անցել-դարձել իր բացակայության ամիսներին. ուզում էր տեսնել, շուտով տեսնել, թե ինչպես իր թշնամիները կամաչեն ու կկարմրեն։ Նա լսել էր, որ իր հեռանալուց հետո՝ պալատի կառավարչի իր պաշտոնը կատարում է Զենոն Գնունին, ապարատեսի այդ մտերիմը, որին Հայր-մարդապետը չէր սիրում նույնպես։ Եվ նա չէր կասկածում, որ պալատ հասնելուն պես Պասն այդ պաշտոնը նորից կառաջարկի իրեն և առհասարակ կվերականգնի իր բոլոր իրավունքները։

«Եթե կանչել է՝ ուրեմն պարզ է»,— ասում էր նա մտքում և, ձին քշելով՝ շտապեցնում էր ծառաներին։ Թվում էր՝ երեք օրվա ճանապարհն ուզում է անցնել մեկ օրում, առանց հանգիստ առնելու, առանց սնվելու։

Եվ, իրոք, երեք օրվա ճանապարհը նրանք կտրեցին երկու օրում, դիշերները անգամ երկար չմնալով իջևանները, մի հանգամանք, որ կրկնակի ուրախացնում էր Հրահատին. նախ, որ սիրտը այրող նամակը շուտ կհասցներ արքային. երկրորդ, թերևս մի լուր, մի նոր բան իմանար իր Նազենու մասին. և երրորդ՝ նրան հետաքրքրում էր, անչափ հետաքրքրում էր այն, որ ինքը նորից տեսնելու է Թագավորին և մանավանդ խո-

անելու է հետը, մի բան, որ չէր եղել նրա կյանքում: Տեսել էր շատ անգամ, բայց խոսել առաջին անգամը պիտի լիներ: Սակայն, ամենից շատ նա մտածում էր, իհարկե, իր Նազենու մասին. որտե՞ղ է արդյոք և ի՞նչ է անում, ապահո՞վ է թե վտանգի մեջ և պիտի վճռակվի՞ արդյոք երբևիցե տեսնել նրան, մտածում էր նա շարունակ, բայց հենց որ հիշում կամ շոշափում էր սրտի վրա կարած նամակը՝ նա սթափվում էր և նամակի հոգսը նորից կլանում էր նրա բոլոր մտքերը, մոռացնել տալով ամեն ինչ:

Վերջապես, երկրորդ օրվա երեկոյին, երբ հասան Դվին և Հայր-մարդպետն իջևանեց մի[illegible] ընդարձակ հյուրատունը, Հրահատը, վրան-գլուխը կապտի բերելով, մի քանի անգամ լվացվելով ու սանրվելով մտածեց՝ նախ թագավորի՞ մոտ գնա՝ նամակը հանձնելու, թե այգինները՝ Նազենուն տեսնելու: Ու վճռեց՝ կատարել նախ սպարապետի հանձնարարությունը: Եվ չուռպեց պալատ: Երբ հայտնեց, թե սպարապետից նամակ է բերել թագավորին և պետք է հանձնի անձամբ՝ նրան անմիջապես երկար մի[illegible]ներով ու սրահներով առաջնորդեցին թագավորի մոտ:

Հրահատի սիրտը բաբախում էր. նա չդիտեր ինչպես պետք է սահի երեն և ինչպես պետք է խոսի թագավորի հետ: Գիտեր միայն, որ առաջ ու առաջ պետք է ողջունի նրան և ապա նամակը հանձնի:

Եվ ահա երբ առաջնորդեցին նրան մի սրահ՝ նա պալատականների մեջ խնդուքն ճանաչեց թագավորին՝ թե դեմքից և թե հագուստներից ու, ձեռը կրծքին դնելով, խոնարհում արավ, ապա նամակը մեկնեց նրան.

— Սպարապետից, արքա:

— Դու ո՞վ ես,— և Պապը, նամակը վերցնելով, ուշադիր նայեց Հրահատին:

— Մուշեղ սպարապետի սուրհանդակը, արքա,— պատասխանեց Հրահատը չիկնելով:

Պալատականները, որոնց մեջ էր այդ ժամանակ հազարապետը, Զենոն Գնունին, Բաթը և ուրիշները հետաքրքրված նայեցին իրար և ապա Հրահատին, նրա բերած նամակին. նրանք

դիտելին, որ սպարապետի նամակը մինչ այնուամենայնիվ կարևոր դեպքերի մասին, ուստի և, մինչ Պապը կարդում էր նամակը, լարված սպասում էին իմանալու, թե ինչ է գրում արդյոք Մուշեղը՝ նոր մի վտանգի, թե իր կատարած խիստ պատիժների մասին: Այն ինչ Պապը, նամակը կարդալով, լրջանում էր հետզհետե և, երբ վերջացրեց, նա դունատվեց և բռունցքը դարկեց ծնկանը:

Սպարապետը գրում էր, թե Հայր-մարդպետը դալով իր կալվածը՝ զբաղված էր շարունակ դժգոհ նախարարներին կալմակերպելով, իսկ վերջերս սահմանադլխին տեսակցություններ էր ունենում պարսից զորավարների հետ: Անելով Հայր-մարդպետի վարքի պատմությունը՝ Մուշեղն իր նամակը վերջացնում էր այսպես.

«Մեր աչխարհի մյուս դավաճաններին ես պատժեցի, արքա, բայց սրան ուղարկում եմ քեզ, նախ՝ որպես զի դայակի, որ դրա դատաստանը դու տեսնես. երկրորդ՝ Թագավորի խոսքով արձակված հանցագործնին ես իրավունք չեմ համարում պատժել»...

— Իսկ ո՞րտեղ է հիմա այդ Հայր-մարդպետը,— դարձավ Հրահատին Թագավորը բարկացած և ջղաձգվող դեմքով:

— Այստեղ, մինչնաբերդում, արքա,— պատասխանեց Հրահատը, զարմանալով Թագավորի ձայնի և դեմքի փոփոխության վրա:

Պալատականները, որ զուսպ հետաքրքրությամբ հետևում էին նամակի ընթերցմանը՝ Հայր-մարդպետի անունը զարմանք առաջ բերեց նրանց մեջ:— Հայր-մարդպետը այստե՞ղ... ինչո՞ւ է եկել... ինչո՞ւ է Պապը հուզվում... Նրանք լարված սպասեցին Պապի հարց ու փորձի ավարտին, որ իմանան մինչ է կատարվել իսկապես: Եվ Պապը շատ հուզված լինելով այդ թե խնդիրն իր համար պարզված համարելով՝ շուտ կտրեց.

— Դու ազատ ես,— ասավ նա Հրահատին ու լռեց:

Եվ Հրահատը չփոթված, անելիքն իսկապես չիմանալով՝ դլուխ իջեցրեց ու ետ-ետ գնաց, երեսը մինչ դեպի Թագավորը, որ նրան թվաց շատ տխուր, մինչև իսկ զայրացած:

Պապը կարդալով սպարապետի նամակը՝ մի ուժամ մնաց

անխոս կանգնած, ապա կարծես ակամա մի երկու քայլ արավ մոտ չվան: Նա ապրատելու նամակի բովանդակությանը չէր կասկածում, քանի որ Հայր-մարդապետը հայտնի էր իր պարկասկերությամբ. հայտնի էր, որ երկու տարի առաջ նա Դվինի բնակչությանը և կայազորին չէր թողել կռվել կամ պաշտպանվել պարսից դեմ, դավաճան Մերուժանին ընդունել էր Արշակունիների պալատում և, վերջապես, իր ուղարկած նախարարներին միջոցով հայտնում էր, թե ինքը պատրաստ է թագավորին հաշտեցնել պարսից հետ... Թեկուզ և Պապը վերապահությամբ վերաբերվեր սպարապետի նամակին՝ այս ամենն արդեն կասկած չէին թողնում, որ Հայր-մարդապետն, իրոք, վտանգավոր ու անհանդիստ մարդ է. ո՛վ դիտե ինչեր է խոսել պարսից հետ... Մյուս կողմից Պապին զբաղեցնում էր Հայր-մարդապետի դատաստանի խնդիրը. չէ՞ որ ինքը խոսք է տվել անվնաս թողնել նրան... Հիմա՞. տված խո՞սք, թե պետության անվտանգությունը...

Եվ Պապը, վերջապես, հուզված պատմեց նամակի բովանդակությունը ու հարցրեց, թե ի՞նչպես վարվել հիմա այդ մարդու հետ:

— Ես, արքա, ուրիշ բան էլ չէի սպասում նրանից,— ասավ Բաթը:— Այդ մարդն ինձ համար եղել է Մերուժանի չափ վտանգավոր, հետևաբար և պետք է արժանանա խստագույն պատժի, օրպես դավաճան:

Մյուս պալատականները լուռ էին. նրանք թվում էր տատանվում էին և սպասում թագավորի վճռին. իսկ թագավորը դեռ խորհում էր երթևեկելով և իր վճիռը չէր արձակում: Վերջապես նա ասավ՝ կանգ առնելով:

— Սակայն ես խոսք եմ տվել ինձ՝ իմ ձեռները չթաթախել նրա արյան մեջ:

— Դու չավատանց ազնիվ ես, արքա,— նորից խոսեց Բաթը:— Ճիշտ է, դու խոսք ես տվել ինքդ քեզ, որ արքայական խոսքով ազատ էիր արձակել նրան, բայց նա դործել է նոր... հանցանքներ ոչ միայն քո դեմ, այլև մեր երկրի, դժգոհ նախարարներին կազմակերպելով քո դեմ, բանակցելով մեր թշնամու հետ:

— Այդ բոլորը ես հասկանում եմ, Բաթ,— ասավ Գասը։— Սակայն ես չէի ուզում, որ իմ իշխանությունը արյունով սկսվեր...

— Արյունը հիմքն է իշխանության, արքա,— վրա բերավ Բաթը,— առանց արյան կանգուն չէ և ոչ մի պետություն։ Եթե մեկը հանցանք է գործել պետության դեմ, երկրի դեմ...

— Այո, ով հանցանք է գործել երկրի դեմ,— ասավ Գասը,— պետք է պատժվի։ Իմ դեմ գործված հանցանքը՝ ես կարող եմ ներել, բայց երկրի դեմ գործված հանցանքը— ո՛չ։ Անենք, ինչ պահանջում է մեր երկրի, մեր աշխարհի չահը...

***

Երբ Հրահատը երկար միջանցքներից անցնելուց հետո դուրս եկավ արևոտ բակը՝ նա, առանց ընկերների մոտ գնալու, ձին հեծավ ու քշեց դեպի այգիները, դեպի Նաղենիենց տունը։

Ինչպես միշտ Դվինի, այնպես էլ հիմա նա մտածում էր, թե ինչպես, ինչ խոսքերով պիտի մխիթարի նրա մորը՝ վարպետ Զոհաբի մահվան առթիվ։ Նա գնում էր մեծ արագությամբ՝ երբեմն ձիուն խթաններով ու առաջ թեքվելով. և այդ արագության ու աճապարանքի մեջ մի երկու անգամ չուշադրացավ կրծքազրպանում, թեև տակ կարած-պահած նվերները։ Հավաստիանալով, որ դրանք իրենց տեղն են՝ նա ավելի էր արագացնում ձիու ընթացքը։

Անցյալ աշնանից միշտ հիմա կարծես ոչինչ չէր փոխվել. սմեն ինչ նույնն էր. նեղ փողոցը, կավածեփ տները, այգիների վավաշեն պատերը. ճանապարհի երկու կողմից ծառերը ոչ մի թարմ հովանի էին անում, այլև պտուղներով ծանրացած կաղնիկ էին այն աստիճան, որ նրանց ճղները քավում կամ դիպչում էին ձիավոր Հրահատի գլխին, ուսերին, կրծքին։

Վերջապես, մի քանի նեղ ու փոշոտ փողոց անցնելուց հետո՝ երևաց նրան ծանոթ պատը իր դռնակով. և որովհետև դռնակը բաց էր՝ նրա սիրտը ճիշտ մեկեն ու նա ինքնաբեր ապրազարեց ձին, և. այնուհետև, ինքն էլ չիմացավ ինչպես, դրունակին հասնելով, իջավ ձիուց և, նրա սանձը բռնած, մտավ ներս։ Ու առաջին բանը, որ նկատեց այգում՝ երկու ոչխար և

մի հարթ էին, որ ձգտում էին ոլորների սրանքում: Հրահատն առանելով՝ նրանք մի վայրկյան խլշած, կարծես զարմացած, նայեցին նրան, ձիուն և շարունակեցին իրենց ճրոտը: Իսկ Հրահատը, դրանց նկատելով, ուրախացավ. ուրեմն եկել են իրենց անասուններն հետ միասին,— մտածեց նա, սպասելով, թե հիմա կամ նազենին կերևա, կամ մայրը... Մի փոքր էլ առաջ գնալով՝ նա այդտ խորքում տեսավ և Ջոմայի տնակը, բայց... դուռը փակ: Հրահատի աչքովն ընկավ նրա մեծ կողպեքը, որ տեսել էր անցյալ տարի:

«Մի՞թե դեռ չեն եկել,— մտածեց նա,— թե եկել են՝ հիմա տանը չեն... Եթե չեն եկել՝ հապա ո՞ւմն են այս հորթն ու ոչխարները»...

Դարձյալ մի քանի քայլ առաջանալով՝ նկատեց, որ բակը լիքն է ամեն տեսակ աղբով, նույնիսկ անցած տարվա տերևներով. ըստ երևույթին՝ այդ բակը վաղուց ավելի երես չէր տեսել. ամենը, ինչ ընկել էր՝ մնացել էր ընկած, ինչ թափվել էր՝ մնացել էր նույն տեղը. անգամ պատի ծեփը, անձրևաջրից խմորելով, թափվել էր մի քանի տեղ. կավածեփի մի մեծ չերտ դռան դվլից ընկել էր հենց մուտքի առաջ և մնացել այդտեղ...

«Ուրեմն չե՛ն եկել... չկա՛ն»... ու հանկարծ մեկը կարծես խփեց Հրահատի ծնկներին, և նա ծանր մի թուլություն զգաց ամենքում... իսկ մի վայրկյան հետո նա, ձին թողած, նստած էր դռան առջևի քարե–նստարանին:

«Ի՞նչ է նշանակում, որ մինչև այժմ չեն եկել,— մտածում էր նա:— Որքան էլ հեռու գնացած լինեին՝ մի՞թե ութ ամսվա մեջ չէին կարող գալ... Ուրեմն...

Եվ նա ենթադրեց այն, ինչ ենթադրում էր միշտ, թե քանի որ չկան՝ ուրեմն կարող են գերի լինել: Գերի... դժվար էր նրա համար մտածել այդ, հաշտվել այդ մտքի հետ, ամենայն տոլոր նշանները նրան թերում էին այդ եզրակացության:— Բայց դուցե և ծանր հիվանդ է ու չի կարող գալ կամ... կամ գուցե ամուսնացել է գնացած տեղում և մնացել այնտեղ... Ամուսնացե՛լ—հառիվ թե... Ներանք ինչպես կարող էին թողնել իրենց տունը, այդքան ու մնալ այնտեղ: Մայրը գոնե կգար, մայրը... Նա չէր թողնի իր տունը, այդքան...

... Եվ մի առժամ Հրահատը մոքերի մեջ՝ նստած էր անշարժ, ձերբ հանկարծ նրան սթափնեցրեց իր ձիու խրխինքը, որով նա կարծես լինչ-որ բան էր ուզում հասկացնել... Ու մինչ Հրահատը կանդրադառնար դրան՝ նկատեց, որ մի տարեց կին— չղիտես ձիու վրնջյունի վրա թե ինքնաբերը—գալիս էր դեպ իրեն հանդարտ քայլերով և ուշադիր իրեն ու ձիուն զննելով:

Հրահատը ճանաչեց նրան: Նազենիենց հարևանուհին էր:

— Հա՛,— ասաց նա մոտենալով և անուրախ մի ձայնով:— Այդ դո՞ւ ես, տղաս: Բարով ես եկել: Ի՞նչ է պատահել. չես երևում: Մոռացել ես Նազենուն, թե դիտես մի բան,— արագ-արագ հարցրեց կինը, ու էլ պատասխանի չսպասելով՝ չարունակեց.— Հապա մի չես հարցնում, թե ո՛ւր են Նազենին ու Մարթա մայրիկը: Նրանք չեն գալիս, տղաս, գոնե, ասում եմ, Հրահատը երևա: Դու էլ չես գալիս...

Հրահատն ուզում էր ասել, որ ինքը վիրավոր էր և դրա համար չէր կարող երևալ. ուզում էր հարցնել նաև, թե նա գիտի մի բան Նազենու և նրա մոր մասին, բայց պատավը ժամանակ չէր տալիս նրան խոսելու:

— Բայց դու հույսդ մի կտրի: Նրանք կգան, անպատճան կգան:

— Ինչ որտե՞ղ են, մայրիկ, գիտե՞ս մի բան,— հարցրեց վիրջապես Հրահատը:

— Հաստատ չդիտեմ, տղաս, ո՛րտեղ են: Բայց ասատում եմ, որ գան: Մեր հարևաններից մեկը գարնանը գնացել էր Զորոխոր: Ճանապարհին՝ կուլսերի մեջ տեսել էր մի աղջիկ: Ասում է շատ նման էր Նազենուն: Ուզեցել է մոտենալ-խոսել—չի աջողել:

— Ուրեմն Նազենին գերի չէ՞,— վեր թռավ Հրահատը:— Ուրեմն ո՞ղջ է:

— Հարկավ, տղաս, հարկավ, ողջ է: Ի՞նչ կարող էր պատահել նրան...

— Ճշմարի՞տ:

— Եթե չես հավատում, արի կուզես տանեմ քեզ այդ հարևանի մոտ: Նա ամեն բան կպատմի քեզ: Գնանք, տղաս, գնանք:

Եվ պատավը, ինչպես անում են կատաղած երեխային, հրահանգ ձևով բանալով՝ սպրալ նրան դեպի այդու դուռը։

Կատաղած ձին, տիրոջ հեռանալը տեսնելով, գլուխը բարձրացնելով՝ վրնջաց նրա ետևից։

***

Մինչ այդ Հայր-մարդպետը մի կնկաբերդի հյուրատան մի անկյունում, ճանապարհի հագուստները փոխած, իր մեռաքս կապան և վայրուկ մուշկերը հագած, արծաթ կարճ թուրը կողքից կախ՝ սպասում էր, թե ի՞րը պետք է թագավորը կանչի երեն։ Ու զարմանում էր, որ ժամերն են անցնում, բայց երեն հիշող, այցելող չկա, կամ հատուկ պատիվներ չեն լինում, ինչ արվում էր այդպիսի դեպքերում, երբ թագավորը կանչում էր անվանի մի նախարարի։

Սակայն այդ ամենից զատ՝ նա ավելի խորհում էր իր նոր պաշտոնի և գործունեության մասին, թե ինչ ծրագիր պիտի ունենա պատրաստ այսուհետև, ու գտնում էր, որ իր առաջին գործը պիտի լինի՝ Պապին համոզել— բարեկամանալ պարսից հետ և երկրից վտարել հոռոմասեռներին, առաջին հերթին Մուշեղ սպարապետին, այդ հանդուգն մարդուն, որ այնքան պարսկասեր նախարար կոտորեց... Լսելով Նեղոսեսի մահը՝ Հայր-մարդպետը գտնում էր, թե քանի որ այլևս չկա իր քաղաքականության ամենամեծ խոչընդոտը—դա կդյուրացնի իր գործը։

Երկար խորհելուց հետո, սակայն, տեսնելով ժամանակը ուշ է և երեն չեն կանչում թագավորի մոտ՝ նա մտածեց, թե թագավորը, երևի, ցանկանում է, որ ինքն առայժմ հանգստանա ճանապարհի հոգնածությունից, իսկ առավոտը կընդունի ավելի յայլ պայմաններում...

Առավոտը, սակայն, երբ նրան կանչեցին թագավորի մոտ՝ նա նորից խնամով հագնվեց, կապեց իր բոլոր զեն ու զարդը, որ վայելուչ ներկայանա արքային։ Բայց, սենյակից դուրս գալով, հաղիվ մի քանի քայլ էր արել միջանցքում, հանկարծ լսեր մարդիկ,— նա չհամացավ ովքեր,—նրա գլուխն անցրին մի մեծ-ընդարձակ պարկ, որի մեջ Հայր-մարդպետն անելություն-

ցավ կարծես. և որովհետև այդ պարկին անմիջապես սեղմեցին ու պաթռնով կապեցին նրա մեջքին ու ոտների մոտ—նա զրկվեց ոչ միայն զենք հանելու, այլև ձեռները շարժելու հնարավորությունից:

Նա հասկացավ ամեն ինչ և դառաց ամեհի մի ձայնով.

— Ինչպես եք համարձակվում, սիրելքոր ստրուկներ: Հեռո՛ւ... Տարեք ինձ իմ թագավորի մոտ... Թող նա անի իմ դատաստանը...

— Մենք կատարում ենք թագավորի հրամանը,—եղավ պատասխանը...

Եվ Հայր-մարդապետին տարան պալատի տակ գտնվող պատժարանը:

Երկու օր հետո կոմս Տերենտը լսելով Հայր-մարդապետի մահը— շատ զարմացավ: Նա, որ կասկածում էր արդեն, թե Պաղը պատրաստվում է անցնել պարսից կողմը՝ այդ մահապատժից հետո, պարսկասեր նախարարների այդ նշանավոր պատգլխի սպանությունից հետո չէր հասկանում ինչ է կատարվում Ջրմենիայում և ինչ է ուզում Պաղը:

«Եթե երես է թեքում մեզնից, ապա և պարսից կողմնակիցը չէ,— մտածում էր նա:— Ուրեմն ի՞նչ է ցանկանում Պաղը»...

ԳԼՈՒԽ ՅՈՔԵՐՈՐԴ

Որքան էլ Պապը ցանկանում էր հանդիստ ու խաղաղ լինի կյանքը իր թագավորության մեջ, բայց շարունակ կատարվում էին դեպքեր, որ առիթ էին տալիս հուզումների և խռովակցության: Այդպես եղավ և Հայր-մարդպետի մահը: Ոմանք գտնում էին, որ պատիժը տեղին էր. «Ծեր աղվեսին» այդպես էլ հարկավոր էր, որովհետև, ասում էին, չնայած թագավորը ներեց նրա հանցանքները, բայց նա, հանդիստ մնալու փոխարեն, ուզում էր ապստամբեցնել Վասպուրականը և, պարսից միանալով, հարվածել երկրի ամբողջության, շարունակել Մերուժանի գործը: Բայց կային մարդիկ էլ, որ գտնում էին, թե Հայր-մարզպետը առանձին բան չի արած, Պապը նրան պատժել է հին մեզքերի համար և ավելի շուտ իր իշխանությունը զգացնել տալու համար, որ մյուս նախարարները չհամարձակվեն հակառակել իր կամքին և ժամանակին տան իր պահանջած զինվորներն ու ձիերը:

— Չէ, թագավորը կատակ չի անում: Նա արդեն եղջյուրներ է ցույց տալիս,—ասում էին նախարարներն իրար ջրջանում:— Եթե նա չվնասեց Հայր-մարզպետի նման անվանի և ազդեցիկ նախարարին ու ավազանուն, չի՞ նշանակում այսուհետև մյուսներին:

Սակայն կային այնպիսիները էլ, որ այդ ամենը համարում էին Պապի չարության հետևանք: Այս կարծիքի էին մասնավորապես հոգևորականները:

— Չէ, ասում էին նրանք, պետն ուզում է վերացնել երկրի մեծերին և լինքը մնալ իր տղաների հետ: Ներսեհին թունավորեց, հիմա էլ Հայր-մարզպետին...

Չնայած վանականները Հայր-մարզպետին չէին սիրում, բայց նրա անունը հիմա հիշում էին Ներսեհի հետ և դատապարտում Պապի վարմունքը:

Ներսեսի մահվան հետ կապված դրույթները դեռ չվերջացած՝ հոգևորականության մեջ սկսվեց մի նոր դժգոհություն։ Այս անգամ պատճառն այն էր, որ Պապը, առանց հոգևորականության կամքը հարցնելու, կաթողիկոսական թափուր գահը տեղապահ էր նշանակել Մանազկերտի եպիսկոպոս Հուսիկին, որ Ալբանոսյան հայտնի տոհմից էր։ Շատերը հուզված էին, որ թագավորը միջամտում է եկեղեցու գործերին, իսկ ոմանք էլ զգուշված էին, որ նա, անտեսել է Խաղին, որ Ներսեսի մշտական տեղապահն էր և իրավունքով նա պիտի լիներ այդ պաշտոնի մեջ։

— Ի՞նչ գործ ունի Ալբանոսյան Հուսիկը տեղապահության պաշտոնում։ Սա Ներսես հայրապետի կամքին հակառակ է։

— Մյուս կողմից՝ նա ասորական կրթության տեր է։ Նա չի կարող մեզ բարեկամ պահել Բիզանդիայի հետ,— ավելացնում էին մյուսները։

— Բայց տեղապահը ժամանակավոր է,—հանդատացնում էին ծանրաբարոները, որ չէին ցանկանում աղմուկ լինել և դժգոհությունն ծագել։

— Ոչ,— առարկում էին առաջինները։— Սա մի բան նշանակում է։ Ինչ գիտեք վաղը սրան էլ կաթողիկոս չի նշանակի։

— Ֆանկ որ Ներսես վեհի որդի Սահակը կա՝ հաղիվ թե մի ուրիշին նշանակեն կաթողիկոս։ Նա պետք է փոխարինի հորը։ Այդպես է կարգը...

Հիմա կատարվել է կարգից դուրս բան, և շատերը հուզված էին. հուզված էին մանավանդ այն պատճառով, որ լուրեր էին շրջում, թե Պապը մտադիր է այդ Հուսիկ եպիսկոպոսին նշանակել կաթողիկոս, որպես կրթված, գրոց, գիտության լավատեղյակ և լեզուներ իմացող հոգևորական։

Եվ ահա մի օր Վաղարշապատի վանքի բակում մի խումբ վանականներ դարճյալ խոսում էին հուզված.

— Ինչո՞ւ Պապը չի հրավիրում Սահակին. չէ՞ որ նա է միակ ժառանգը Լուսավորչի տոհմի,— ասում էր մի վարդապետ։

— Նա տակավին երիտասարդ է և աչքառուկան։

— Ներսեսը ոչ միայն աչքառուկան էր, այլև գինվորական, բայց նրան ընտրեցին, որովհետև տոհմի միակ ժառանգը նա էր։

— Եթե Սահակին չընտրեն, Այրանոսյան Հուսիկին, միևնույն է, կեսարիայի միտրոպոլիտը չի օծի կաթողիկոս: Մենք կդրենք, որ չօծի,— նկատեց մի դժգոհ եպիսկոպոս:

— Առում են՝ Ամատ արքաղանն սրդեն, տեսնելով իրեն դրկեցին տեղապահության և լսելով Հուսիկին համաձայն են կաթողիկոսության թեկնածու, նզովագիր է ուղարկել Թագավորին, թե թույլ չի տա, որ հանեց միտրոպոլիտը Հուսիկին օծի կաթողիկոս:

— Եվ ճշմարիտ է վարվել Ամատ արքաղանը,— միջամտեց մի դյուրագրգիռ վարդապետ:— Թագավորն իրավունք չունի խախտել ընդունված կարգը, փոխել կաթողիկոսի տոհմական իշխանության սահմանածը: Ով դեմ է այդ ամենին, նա դեմ է քրիստոնեության, մեր կրոնին, եկեղեցուն:

— Եղբայրներ, ես ասել եմ և կրկնում եմ, որ Պապը հեթանոս է,— բարձրաձայն ասաց մի նիհար, փոքրիկ, արագաչարժ աչքերով եպիսկոպոս:

— Եթե Պապն իրենն անի, մենք էլ կանենք մեր ցանկացածը,— առաջ եկավ քարոզիչ Հովսեփ եպիսկոպոսը:

— Այսի՞նքն:

— Կդրենք կեսարիայի միտրոպոլիտին, որ Հուսիկին, որպեսզի Լուսավորչի տոհմից և ասորական կրթության տեր մարդու՝ չօծի:

— Ճիշտ ու ճշմարիտ, հայր Հովսեփ, և չի օծի: Հիանալի միտք:

Այդ ժամ խոսողներին մոտեցավ մի վարդապետ, որ ըստ երևույթին լսել էր այս ամենը, ու սկսեց հանդարտ.

— Դուք ասում եք, ուրեմն հայրեր, թե կդրենք միտրոպոլիտին և մասամբ նորին: Բայց ինչ կասեք, եթե Պապը չուղի նրան կեսարիա ուղարկել և... մասամբ նորին...

— Ինչպե՞ս, ուրեմն նա Հուսիկին չի ուզում կաթողիկոսացնել,— ուրախացավ մեկը: Նրա հետ զարմացած և ուրախացած խոսողին նայեցին մյուսները:— Նրան չի ցանկանո՞ւմ:

— Ցանկանում է, հայրեր, ցանկանում է: Բայց լսելով՝ չի կամենում կեսարիա ուղարկել և... մասամբ նորին:

— Անհասկանալի է,— ասավ ուղևորներից մեկը։— Հապա ո՞վ պետք է նրան ձեռնադրի և օծի։

— Ո՞վ։ Դուք, հայրեր, դուք և... մասամբ նորին։

Հավաքվածների զարմանքը կրկնապատկվեց։ Ներանք ավելի մոտեցան խոսողին։

— Ինչպես մեծ... խոսիր հանգամանորեն, սուրբ հայր։ Այդ ինչպես կարող է լինել։

— Շատ պարզ,— դանդաղորեն վրա բերավ հանդարտ վարդապետը։— Ասում են՝ Պապը ցանկանում է, որ մեր եպիսկոպոսներն իրենք օծեն կաթողիկոսին և մասամբ նորին... և նա ժպտաց քմծիծաղ։

— Դու ծիծաղո՞ւմ ես, սուրբ հայր,— խոսեցին մի քանի հոգի միասին։— Այդ ինչպես կարող է լինել... Այդպես կարդ չկա...

— Մեր կաթողիկոսներն օծվում են միշտ ու միայն կեսարիայում։

— Իսկ հիմա, ասում են, մտադիր է պահանջել, որ օծենք այստեղ, շարունակեց հանդարտ վարդապետը և միտքը չլրացրած՝ ավելացրեց։— Եվ մասամբ նորին...

— Այստե՞ղ... և զարմանքի հետ միասին լսվեցին քրթմնջոցներ։— «Այստե՞ղ... ո՞վ է տեսել այդպես բան»։

Իսկ քիչ հետո մեկը հարցրեց մտահոգ.

— Մե՞նք... մենք ինչպես կարող ենք օծել. մի՞թե թագավորն այդ չգիտե։

— Գիտե, հարկավ. բայց ասել է, թե ո՛րքան է հարմար, որ մի երկիր ունենա այսքան եպիսկոպոս և իր կաթողիկոսին ուղարկի օտար երկիր օծելու։ Եվ ասել է նաև,— շարունակեց հանդարտ վարդապետը ոխուր հեգնանքով,— թե պատահե՞լ է արդյոք, որ հոռոմներն իրենց միտրոպոլիտին ուղարկեն մեր երկիրը՝ այստեղ օծելու։ «Չի՝ պատահել» ասել են նրան։ «Եվ ուրեմն,— ասել է թագավորը,— ինչպես հոռոմներն են օծում իրենց միտրոպոլիտներին, այնպես էլ դուք օծեք ձեր կաթողիկոսին»։ Սա, ասել է, պատվաբեր է ձեզ համար...

— Այդ ճշմարիտ է,— ասավ մի եպիսկոպոս,— բայց կարդ

չէ: Չէ՞ որ հռոմեների միտրոպոլիտ եպիսկոպոսը և մյուս հռոմ եպիսկոպոսները կնզովեն մեզ, որ խախտում ենք կարգը:

— Սրբազան հայր, մենք քրիստոնյա ենք,— նկատեց մի վարդապետ,— որտեղ և օծենք մեր քահանայապետին՝ մեզ համար միևնույն է:

— Բնա՛վ ոչ, հայր սուրբ, բնավ միևնույն չէ,— միջամտեց մի ուրիշը վրդով:— Մի՞թե մեր օծած կաթողիկոսը կարող է ունենալ այն հեղինակությունը, ինչ կեսարիայում՝ միտրոպոլիտի կողմից օծվածը:

— Կամ ժողովուրդը մեր օծածին կհավատա՞,— լսվեց մի նոր ձայն, որ գալիս էր հեռվից շարքերից:— Ոչ, եղբայրներ, ոչ, սուրբ հայրեր: Ո՛չ...

Լռություն լինցավ, որի մեջ մեկը հարցրեց հանկարծ.

— Բայց ի՞նչն է պատճառը, սուրբ հայր, որ Թազավորը չի ցանկանում մեր կաթողիկոսը օծվի Կեսարիայում:

— Կարևո՛ր հարց, կարևո՛ր հարց,— կրկնեցին վարդապետները:— Ի՞նչն է պատճառը իսկապես:

Հանդարտ վարդապետը ձեռը բարձրացրեց, որ լռեն, և ինքը դլուխն իջեցնելով՝ ասավ պաղատնիք հաղորդողի ձայնով.

— Ես ինձ, հայրեր, չդիտեմ բուն պատճառը, բայց լսած եմ՝ պատճառն այն է կարծյոք, որ հռոմեները չեն հեռանում մեր քաղաքներից: Թազավորն ասել է, կարծյոք, թե «Հռոմեները նստել են մեր քաղաքներում ու չեն հեռանում, իսկ դուք ուզում եք գնալ նրանց ո՞տը, թե օծեցեք մեզ համար քահանայապետ»...Եվ դա համարել է տարկահոդություն,— շշուկով, ձեռը բերանին դնելով ավարտեց նա:

— Իսկ ես լսել եմ, սուրբ հայր,— նույնպիսի շշուկով սկսեց մի կարճ հոդվածական,— լսել եմ, որ Թազավորն ասել է, թե մեր եկեղեցականները չեն հասկանում, որ կպած մնալով բյուզանդական եկեղեցուն՝ հարուցանելու են պարսից թշնամությունը և մի օր կուզ են գնալու ամենակուլ հռոմեներին...

— Տեր ամենակա՛լ,— խաչակնքեցին բոլորը միասին:— Վատնդավոր խոսքեր... Վատնդավոր մտքեր...

Թե որքան ճիշտ էին Թազավորին վերագրվող այդ խոսքերը կամ նրա մտադրությունը, թե կաթողիկոսին պետք է օծել

Հայաստանում,— հայտնի չէր, բայց դա այնպես զարմացրեց և հուզեց բոլորին, որ ոչ–ոք համարյա չգնաց իր խուցը, ինչպես տուրքերի հրամանը լսած երեկոյան: Նորից խմբերի բաժանված՝ երկար դատում, երբեմն և դատապարտում էին Թագավորի տարօրինակ մոտադրությունը: Իսկ երբ ցրվեցին խցերը՝ բավական ժամանակ չէին կարողանում քնել: Դա մի այնպիսի նորություն էր, որ ոչ–ոք չէր հաշտվում դրա հետ և թվում էր, եթե այդպես լինի՝ աշխարհի կարգը կփոխվի, քրիստոնեությունը կտուժի սաստկապես: Ի՞նչպես կարող են իրենք կաթողիկոս օծել և իրենց օծածը կարո՞ղ է արդյոք ընդունելի լինել... Ի՞նչ է ուզում, վերջապես, Պապ Թագավորն իրենցից.— եկեղեցու տուրքերը վերացրեց, հիմա էլ ուզում է կտրել մեզ բիզանդական եկեղեցուց և Բիզանդիայից,— ասում էին նրանք և զարմացած և վրդովված:

Սակայն ամենից ավելի հուզված էր Ծաղը, որ անձնապես վիրավորված ու ստորացված էր զգում իրեն, որ իր փոխարեն տեղապահ է կարգված Հուսիկը. հուզված էր և նրա բարեկամ վանահայր Կյուրեղ եպիսկոպոսը, որ իբրև հաջորդող դեպքերի պատճառով չէր ուզում դնաչ իր թեմը և ապատում էր, թե ի՛նչ ընթացք կստանան այդ ամենը. նրան թվում էր, թե մեծ մի վտանգ է սպառնում եկեղեցուն և կաթողիկոսական գահին:

Մի երեկո նրանք երկուսով տխուր նստել էին Դվինի եպիսկոպոսարանում և երկար խոսում էին Պապի վերջին մոտադրության մասին:

— Վա՛յ քեզ քաղաք, որ Թագավորդ մանուկ է,— կրկնեց Կյուրեղը, Ծաղ եպիսկոպոսի սիրած դարձվածքը:— Վա՛յ քեզ...

— Ո՛չ թե մանուկ, այլ դև և դիվահար կատաղի,— վրա բերավ Ծաղը:— Մոքով բարբարոս, դործով տարտարոս: Նախարարներից զինվոր ու ձի է պահանջում, եկեղեցուց խլում է նրա տուրքերը, իրավունքները... Դիվայինդործե՛ր... Սա անցավ արդեն չարածնունդ հորից և չարանենգ պապից: Նրանք երկուսն էլ կրեցին իրենց պատիժը արժանի, կգա աստուծով և հերթը սրա...

Ու երբ երեկոն անցավ բավական, երբ միխարանության անդամները հեռացան, Ծաղ եպիսկոպոսը մնաց մենակ իր խցում և սկսեց մտածել Պապ Թագավորի մասին: Ինչպե՞ս պիտի վարվի նա նրա հետ, ինչպե՞ս պիտի ընդունի նրա հրամանները, ինչպե՞ս պիտի կատարի նրա կամքը:

դամնները ննջեցին լրենց խցերում և անց ու դարձը խաղաղեց քաղաքում՝ նրանք դուրս նման նրկուսով և մուքի մեջ լրենց քայլերն ուղղեցին դեպի դրացավար Տերենտի տունը: Այդ պահին նրանց հուզում էին խնդիրները, որ թվում էր, թե միայն Տերենտը կարող էր հասկանալ ու բացատրել: Նրանց կարծիքով՝ Հայաստանում էլ չկար մի մարդ, որ մատահոդվեր եկեղեցու բանտով— դա թերևս միայն Տերենտը լիներ, և Պապը, որ ուրիշ մեկին չէր ուզում լսել,— դեսպանին կլսեր, իսկ եթե դեսպանին չլսեր— կլսեր, անշուշտ, կայսեր և անճնապատատան դործեր չէր անի... Անցյալ անգամ դեսպանը սիրով լսեց լրենց, բայց մինչև այսօր արդյունք չեղավ: Այս անգամ, սակայն, թվում էր նրանց, որ Տերենտն անտարբեր չէր կարող լինել և կաներ վճռական քայլեր:

Հաղիվ նրանք դուրս էին եկել և մի քանի քայլ արել դեպի դուռը, երբ մեկը, պատերին քսվելով, հետևեց նրանց:

Ոտնաձայն լսելով՝ Խաղ արքաղանը կանգ առավ ու ետ նայեց.

— Ո՞վ է,— հարցրեց նա փոխված, խուլ ձայնով:

Մեկ երկար ստվերը մոտեցավ երկուսի քայլերով:

— Ես եմ, արքաղան. Մաղաքիա սարկավագ:

— Եվ ո՞ւր ես գնում,— ասավ Խաղը բարկացած:

— Գալիս եմ քո հետևից, արքաղան:

— Եվ ինչո՞ւ:

— Քեզ հետ խոսել եմ ուզում, արքաղան:

— Եվ ինչո՞ւ այսպես անժամանակ, երբ բարի են դիտավորություններդ:

— Բարի են, արքաղան,— մուքի մեջ խոնարհում արավ սարկավագը:—Ուզում եմ, արքաղան, նախապես թողություն տաս իմ մեղավոր հոգուն, քանզեռ վստահ եմ, որ չարին վերացնելը մեզ չպիտի համարվի,— ասավ սարկավագն արագ-արագ, կարծես տենդի մեջ:

— Ի՞նչ չար, ի՞նչ վերացնել, սարկավագ:

— Թագավորին, արքաղան, վերացնել թագավորին, որ վերանան եկեղեցուն սպառնացող աղետները, չարիքները, վերջանան,— հևաց սարկավագը:

Խաղը մուքի մեջ ոտը զարկեց գետնին:

— Գնա՛, սարկավագ, և խաղաղությամբ ննջիր քո խցում,— ձայնը կոկորդում սեղմելով՝ ասավ Խաղը:— Եվ սպանության այդ խորհուրդը՝ վանքիդ քո սրտից:

— Անկարող եմ, հայր սրբազան, անկարող եմ, ինչպես և դու:

— Լավը, սարկավագ, ես այդպիսի խորհուրդ չունեմ,— ցած, բայց սպառնալից նկատեց Խաղը:— Գնա՛ և ննջիր քո խցում, մեղսավոր հոգի:

— Չեմ կարող ննջել, սրբազան, ինչպես և դու: Հանգիստ չունեմ, ինչպես և դու, մինչև որ...

— Լավը և հեռացիր, սարկավագ,— ասաց Խաղը՝ իր ձայնը նորից խեղդելով:

Սարկավագը կուչ եկավ կանգնած տեղում և ապա վիզը ծռեց աղերսանքով:

— Թույլ տուր գոնե ուղեկցել քեզ, սրբազան, մինչև դեսպանի տունը,— ասավ նա ընկճված:

— Ո՞րտեղից գիտես, որ ես գնում եմ դեսպանի տուն,— բարկացավ Խաղը:— Այդ ո՞վ ասավ քեզ:

— Հոգի՛ն սուրբը, սրբազան, հոգի՛ն սուրբը...

— Լավ՛ը, անկրավ, և մի համարձակվիր լրտեսել ինձ,— ավելի տաքացավ Խաղը:—Հեռացի՛ր և ծնրադիր աղոթքով ապաշխարիր քո խցում:

Այս առթով՝ նա հրեց սարկավագին և դուրս եկավ փողոց, ուր կյուրեղ եպիսկոպոսն սպասում էր նրան անհամբեր:

Եվ նրանք ճանապարհ ընկան:

Ինչպես միշտ Տերենտի լուսամուտում դրված վառվում էր ճրագը, որ աղոտ լուսավորում էր փողոցի մի հերտը և մուտքի դուռը:

Կոմսը տակավին արթուն նստած էր իր զարդասրուն ընդարձակ սրահում:

Ինչպես առաջ, այս անգամ էլ Տերենտը հայ անվանի եպիսկոպոսներին ընդունեց հարգանքով և ընդգծված ակնածանքով համբուրեց երկուսի աջն էլ և փափուկ օթոցի վրա նստեցնելով, ինքը տեղավորվեց նրանց դիմաց, ինչպես խոնարհ ու մեղապարտ մի հավատացյալ իր խոստովանահայրերի առաջ:

— Ինչով կարող եմ ծառայել իմ սրբազան հայրերին,— ասավ նա՝ նորից առանձին-առանձին գլուխ իջեցնելով եպիսկոպոսներին:— Ուրախ եմ, որ արժանացել եմ ձեր այցելության պատվին... Ինչով կարող եմ...

— Շատ բանով, տեր դեսպան, շատ բանով,— սկսեց վանահայրը Կյուրեղ եպիսկոպոսը իր վարժ հունարենով:—Նեղություն ենք պատճառում ձեզ մեր անժամանակ այցելությամբ, բայց ի՛նչքան բաներ կան և դժվարին խնդիրներ, որ կուզենինք դուք դեթ որոշ չափով վարատեք մեր կասկածները:

— Պատրաստ եմ, սրբազան հայրեր,— դարձյալ ինոնարհում արավ Տերենտը,—պատրաստ եմ իմ ուժերի ներածին չափ...

Կյուրեղն իր պատմությունն սկսեց Ներսեսի մահից, ասելով, որ այդ դժբախտ դեպքը, ինչպես պարզվեց, թունավորման հետևանք էր:

— Ես այդ լսել եմ, սրբազան հայր,— ասավ Տերենտը:— Բայց մի ժամանակ ինձ հայտնեցին, թե թունավորման ապացույց չկա: Դժվար է հաստատել, ատամ են, մեռավ թունավորումից և ոչ բնական մահով:

— Այդ հետո կապացուցվի, ազնիվ կոմս,— շարունակեց Կյուրեղ եպիսկոպոսը, ցավելով, որ դեսպանը չի հավատում իր խոսքերին և առհասարակ թունավորման վարկածին:— Հետագա իմ տեղեկությունները, հույս ունեմ կապացուցեն այդ: Այ, օրինակ, չդիտեմ ձեզ հայտնի է թե ոչ, մեր թագավոր Պապը կաթողիկոսի օրինավոր և ընտրված տեղապահին, որ սրբազան Մաղն էր,— այստեղ Կյուրեղ եպիսկոպոս իր փափկիկ ձեռը հարգանքով մեկնեց դեպի Մաղը, որ այդ տեսնելով՝ վիրավորված տեսք ընդունեց, չնայած դեսպանը նորից գլուխ տվեց նրան:— Փոխեց: Այո, փոխեց. և հիմա էլ կամենում է կաթողիկոս նշանակել մեկին, որ Լուսավորչի տոհմից չէ և բնազանցական կրթություն չունի, մի բան, որ դեմ է ավանդության և վիրավորական մեզ համար: Այո, վիրավորական, հարգելի կոմս, քանզի մենք սովոր ենք՝ ինքներս ընտրել մեր կաթողիկոսը, կամ՝ այդ կարող է անել մեր կենտրոնական ելանելի մխիթարյոլորը, բայց ոչ հայոց թագավորը... Եվ հետո, հարգելի

զրավար, կարևորը, որի համար և կուզեի ձեր կարծիքն իմանալ, նա մտադիր է խախտել վաղուց ընդունված մի կարգ, որ վերաբերում է մեզ բոլորիս...

Եվ Կյուրեղը վշտացած լռեց:

— Այդ ի՞նչ կարգ է, հայր սրբազան,— հարցրեց Տերենտը հետաքրքրված:

— Դուք գիտեք, որ հնուց ի վեր, մեր քահանայապետ Լուսավորիչից սկսած, մեր կաթողիկոսներին ձեռնադրում և օծում է կեսարիայի միտրոպոլիտը: Բայց մեր թագավորն ուզում է խախտել այդ կարգը և կաթողիկոսին օծել տալ այստեղ... հայ եպիսկոպոսների ձեռքով...

Վերջին խոսքերի վրա կոմս Տերենտն աւղղվեց նստած տեղը. նրա դեմքն ավելի լրջացավ:

— Այդ ի՞նչպես: Առանց միտրոպոլիտի՞,— չկարողացավ իր ապշահարությունը պահել նա:— Բայց չէ՞ որ, կարծեմ, միայն նա՛ է իրավասու օծել,— և չկամենալով կարծես ասել ավելին՝ կրկնեց.— այդ ի՞նչպես...

— Այդպես, հարգելի կոմս,—աչխուժացավ Կյուրեղ սրբազանը, նկատելով որ շահագրգռեց դեսպանին:— Բավական չէր եկեղեցին զրկեց իր տուրքերից, բավական չէր երանելի Ներսեսի թունավորումը, հիմա էլ այս բռնությունը, եկեղեցու և հոգևորականության իրավունքների այս բիրտ խախտումը:

— Իսկ դա արդեն որոշվա՞ծ բան է, սրբազան հայրեր, թե՞ միայն խոսք է և կամ ի՞նչ նպատակ ունի այդ, ես, ճշմարիտ, լավ չեմ հասկանում,— հարցրեց Տերենտը անկողմնակալ ու չհզոք մարդու հետաքրքրությամբ, բայց մի քաղաքավարության համար, որ սառը չթվա հյուրերին:

— Ասա՛,— մատը Կյուրեղի ծնկանը խփեց Մադը,— ասա՛ կոմսին, որ մեր թագավորից սպասելի է...

Տերենտն այդ նկատելով՝ հարցրեց.

— Ի՞նչ է ասում սրբազան հայրը:

Կյուրեղը թարգմանեց: Տերենտը մտածմունքի մեջ ընկավ:

— Բայց, ներեցեք ինձ, սրբազան հայրեր,— ասավ նա մի վայրկյան լռելուց հետո իր կապույտ աչքերի հեզ արտահայտությամբ հերթով եպիսկոպոսներին նայելով:—Ես, ճշմարիտ,

ցավ չեմ հասկանում, թե այդպիսով ի՞նչ նպատակ է հետապնդում Պապ Թադավորը:

— Նպատակ... Մի՞թե պարզ չէ, ազնիվ կոմս,— հառաչեց Կյուրեղ սրբազանը մորուսը բռնելով:— Մի՞թե պարզ չէ, որ Պապը ցանկանում է այդպիսով կտրվել Բիզանդիայից և անցնել պարսից կողմը...

— Այդպե՞ս,— զարմացավ Տերենտ կոմսը, հոնքերը մեկին բարձրացնելով:— Եվ մի՞թե Պապ Թադավորն իրոք կցանկանար այդ... և ինչո՞ւ պիտի ցանկանա՝ դժվարանում եմ հասկանալ...

Եվ Տերենտը նորից հերթով նայեց հայ եպիսկոպոսներին:

— Այդ թեև մեկին ինքն է հասկանում,— ասավ Կյուրեղը բազմախորհուրդ:

Ու մի առժամ լռություն իջավ:

— Եվ դա՝ կեսարիա չուղարկելը որոշված, վճռա՞ծ է արդեն,— հարցրեց Տերենտը փոքր լռելուց հետո:

— Այդպես է երևում, տեր կոմս:

Նորից լռություն:

— Իսկ այդ Հուսիկ եպիսկոպոսը մի՞թե պարսկասեր է, քրիստոնյա լինելով հանդերձ,—կրկին լռությունը խզեց Տերենտը հետաքրքրված:

— Եթե պարսկասեր չէ, կոմս, բիզանդասեր էլ չէ. նա աստղական կրթություն ունի:

Նորից լռեցին: Բայց Կյուրեղ սրբազանը, այդ անհարմար լռությանը վերջ տալու համար, կարծես, հարցրեց, թե կոմսը ասելիքն ավելի մնա՞ Դվինում, թե մեկնելու է իր ամառային նստավայրը:

— Առայժմ այստեղ եմ, սրբազան հայր,— պլուկն տվեց Տերենտը:

Այնուհետև նրանք խոսեցին կես ժամի չափ զանազան խընդիրների շուրջը, ապա Տերենտը նրանց հյուրասիրեց թեթև ընթրիքով:

Հրաժեշտին Պաղն ասավ Կյուրեղին:

— Ասա կոմսին, որ հուսամ թե այս ամենի մասին վիմացնի Կեսարիայի սրբազնազուն միտրոպոլիտին:

Կյուրեղը թարգմանեց։

— Անշուշտ, սրբազան հայրեր, անշուշտ...

— Ասա՛,— շարունակից Պապը,— ասա՛ որ եթե մենք կորչենք Բիզանդիայից և Կեսարիայից՝ կորած է քրիստոնեությունը մեր երկրում։ Ասա՛, որ քրիստոնեությունը փրկելու համար ենք եկել քեզ մոտ։

Կյուրեղը նորից թարգմանեց։

— Հասկանալի է, սրբազան հայրեր, հասկանալի է, ասում է Տերենտը։

— Եվ դեսպանը, ինչպես առաջին անգամը, խնդրեց նրանց այցելել Երուսաղեմ և քրիստոնյայի, ու ճանապարհ դրեց նրանց մինչև մուտքի դուռը՝ մեծ հոգածությամբ ու խոնարհություններ անելով։

Իսկ երբ նրանք գնացին՝ Տերենտը մտածեց, թե որքա՜ն արդյոք ճիշտ են լսածները Պապի մոտդրության մասին։ Ի՞նչ է մտածում իսկապես Պապը, որ նոր կաթողիկոսին չի ուզում ուղարկել Կեսարիա... Վախենու՞մ է արդյոք, թե այդ եպիսկոպոսին, երբև ոչ Լուսավորչի տոհմից, մխիթարությունը չի օծի... Դա ավելորդ երկյուղ է,— մտածում էր նա։— Մխիթարյանի և ամբողջ Բիզանդիայի համար միևնույն է, թե ո՛վ է նա և ո՛ւմ տոհմից. միայն թե նա ենթարկվի մեր՝ բիզանդական եկեղեցուն... Իսկ եթե չուզարկելն արվում է այն նպատակով, որ Հայաստանը կտրի Բիզանդիայից և անցնի պարսից կողմը, ինչպես ասում են... Բայց այդ դեպքում՝ հարկ չկա կաթողիկոս օծել... Իսկ եթե Պապը ցանկանում է կաթողիկոս օծել, ուրեմն նա դեմ չէ քրիստոնեության կամ նոր մի Հուլիանոս չէ, որ ցանկանում է քրիստոնեությունը վերացնել Արմենիայից, ինչպես անցյալ անգամ պնդում էին այս արմեն եպիսկոպոսները, և ինչպես դրեցի ես կայսեր ուղարկած իմ նամակում,— խորհում էր Տերենտը եռանդով անց ու դարձ անելով։

Եվ մինչ նրա սպասյալը Անաստասը հավաքում էր ընթրիքի պարագաները՝ դժգոհ, որ արմեն եպիսկոպոսները խանգարեցին իր հանգիստը,— կոմսը մերթ քայլելով, մերթ կանգնած շարունակում էր մտածել լսածների մասին։ Նա դժվարանում էր հասկանալ, թե ի՛նչ է ուզում Պապն իր այդ նոր քայլով։

«Դա արվում է թերևս այն նպատակով,— մտածում էր նա,— որ մեզ հասկացնի կամ զգացնել տա, որ մեր զորքերը հանենք Ամմենիայի քաղաքներից ու գավառներից, այլապես կվտի իր երկրի կապերը մեզ հետ... Չէ՞ որ մի քանի անգամ նա հետաքրքրվել է, թե ե՞րբ են հեռանում մեր զորքերը, որ ինքը միջոցներ ձեռք առնի այդ քաղաքների համար... Եվ հիմա, քանի որ մենք չենք հեռանում այդ քաղաքներից,— նա մտածել է, հավանորեն, զգաստացնել մեզ այդ եղանակով... «Քանի որ իմ քաղաքները չեն մաքրում՝ ես էլ ահա կաթողիկոսը կեսարիա չեմ ուղարկի—կօծեմ այստեղ»... Թե՞ ունի բոլորովին այլ նպատակ...

Եվ Տերենտը չէր կարողանում հասկանալ, թե ի՛նչ է ուզում խնկապես Պապը, ի՛նչ է նրա նպատակը:

«Ավելի լավ է թերևս վաղը գնալ նրա մոտ, խոսել հետը, դուցե և մի բան պարզվի» մտածեց նա ու մեկնվեց հռոմեական բազմոցի վրա՝ հանգստանալու:

Եվ մյուս օրն խնկապես նա գնաց պալատ:

Ինչպես միշտ սիրալիր մտավ դահավարահ, հարցրեց թագավորի առողջությունը, ապա զգուշությամբ խոսք բաց արավ նորկաթողիկոսի վրա, թե լսել է, որ «ներհուն անձ է՝ կրթությամբ ճոխացած», և կուզեր իմանալ, ե՞րբ է արդյոք նա մեկնելու կեսարիա՝ օծվելու, որ համապատասխան կարգադրություններ աներ՝ արժանավայել ընդունելություն ցույց տալու:

— Ես, իբրև Ամմենիայի բարեկամ, արքա, կուզեի, որ նրա բոլոր ներկայիչներին հարգանք մատուցվի, որովհետև այս երկիրն իր հերոսությամբ արժանի է դրան:

— Շնորհակալություն, հարգելի կոմս, ձեր լավ զգացմունքների համար,— ասաւ Պապը:— Ես գիտեմ, որ դուք մեկնեղել եք իմ երկրի և իմ բարեկամը, բայց և, իբրև բարեկամ, ձեզ պիտի հայտնեմ, որ մեր կաթողիկոսն այս անգամ չպետք է դնա կեսարիա օծվելու:

Կոմս Տերենտն ընդունեց զարմացած-հետաքրքրվող դեմք:

— Ի՞նչպես, արքա. դուցե կա՞ն դժվարություններ. պատրաստ եմ հարթել:

— Դուք բարի եք, ազնիվ կոմս,— ասավ Պապը։— Մենք պարզապես չենք ցանկանում նեղություն տալ Կեսարիայի արքեպիսկոպոսին։ Մենք, ինչպես գիտեք, ունենք շատ եռանդուն հովանավորներ, որ կարող են նույն կարգը կատարել այստեղ, բարվոք համարելով ծախքերը և նեղություն չպատճառել ձեզ, այսինքն՝ ձեր պետությանը, կոմս։

— Օ՛օ՛, արքա, եթե ծախքերի խնդիր է, դրա մասին մի մտածեք։ Մեր Օգոստոս կայսրն այնքան բարյացակամ է դեպի Քրմենիան և դեպի ձեզ, որ այդ ծախքերը ոչինչ... դրա մասին չարժե անգամ մտածել...

— Սակայն, ծախքերը չեն միայն, կոմս. եպիսկոպոսը ձեր է, չի կարող երկար տաժանելի ճանապարհ կտրել, մանավանդ չուտով ձմեռ կլինի այդ կողմերում,— ասավ Պապը։—Եվ մյուս կողմից, հարգելի կոմս, նկատի առանք, որ նոր կաթողիկոսն այստեղ ունի շատ անելիքներ անհետաձգելի. նա կարգավորելու է եկեղեցու և հոգևորականության գործերը...

Եվ Պապը լուսամուտից նայեց դուրս ու, խոսակցության նյութը կարծես փոխելու նպատակով, հարցրեց.

— Իսկ ի՞նչպես է ողորմած կայսեր առողջությունը, կոմս։

— Շատ լավ, արքա։ Իր վերջին նամակում աստվածային հևսարը սիրալիր բարևներ է ուղարկում քեզ— հատկապես եկա հայտնելու— և ցանկանում է քեզ, արքա, առողջություն և կատարյալ հաջողություն...

Պապը գլուխը խոնարհեց ի նշան շնորհակալության։

Նույնը արին գահատրահում դտնվող պալատականները՝ հարթապետ Ամատունին, Զենոն Գնունին, Օտա Ապահունին և մյուսները, ինչպես ընդունված էր։

— Նույնը, ավելի մեծ չափով ցանկանում եմ Օգոստոս կայսեր,— ասավ Պապը և թեթև մի լռությունից հետո՝ հարցրեց։ Ի դեպ, ազնիվ կոմս, կայսրն ստացե՞լ է արդյոք քո նամակը մեր քաղաքների մասին... բիզանդական գործերը մեր քաղաքներից հանելու մասին։

Հարցն այնքան անակնկալ էր Տերենտի համար, որ նա մի ակնթարթ զարմացած նայեց Թագավորին և իսկույն էլ լրջացավ։

— Ես ենթադրում եմ, արքա, տակավին ոչ, քանի որ

աստվածայինն իր նամակում չէր հիշում այդ մասին: Թերևս զոլիրներն են մոռացել ժամանակին հայտնել կամ զուցե ստացել է՝ խորհում է մի ցանկալի լուծում: Համենայն դեպս՝ հույս ունեմ շուտով մեզ ուրախացնող լուր առանալ: Եվ, ինչպես ամեն դեպքում, այս անգամ էլ անմիջապես լուսազիկ կղարձնեմ քեզ: Իսկ առայժմ, ապքա, Թուլլ տուր մի հարց. ե՞րբ է լինելու կաթոլիկոսի օծումը:

— Հավանորեն առաջիկա ամիսներին...

— Ես կարծում եմ՝ մեծ վիշտ կլինի մեր սրբազան մխթարպոլիտի համար, որ չի մասնակցելու այդ սուրբ ծեսին և չի առնելու իր եղբայրակցին,— առավ Տերենսը՝ տխրությանն արտահայտությունը դեմքի վրա և ձայնի մեջ:

— Որոշ ժամանակ հետո կաթողիկոսը, հարկավ, կարող է գնալ մխիթարպոլիտին այցելության, և այնժամ կտեսնեն իրար, —ժպտաց Պապը:

Դեսպանի դեմքով մի ստվեր անցավ, իսկ հրաժեշտին՝ շատերին թվաց թե նա վիրավորված տեսք ուներ:

Այդ նկատեց և Պապը, ու դեսպանի գնալուց հետո ասավ.

— Ինքը լավ մարդ է, բայց ի՞նչու է ուզում, որ կախում ունենանք Բիզանդիայից. ինչո՞ւ է կարծում, թե մեր գործերը ինքներս չենք կարող տնօրինել...

Պալատականներից մի քանիսը գլխով հավանություն տվին Բազավորի խոսքերին, իսկ պալատի կառավարիչ Ջենոն Գնունին, որ ամբողջ ժամանակ լուռ էր, քիչ հետո միջանցքում հառաչելով ասում էր դիրուկ Օտա Ապահունուն:

— Տեսա՞ր, լսեցի՞ր, տեր Ապահունի, ի՞նչ ասավ Պապը:

— Այո, այո,— ունքաց դիրուկ Ապահունին:— Ախտա՛ս սպասուհուն այստեղ չէ, տեր Գնունի: Ուշացա՛վ:

— Դժբախտաբար... Հավանորեն, նա Ողականից անցել է ուրիշ կողմ, այլապես ստացած կլիներ նամակս: Բայց այս տղայի վարմունքն անցնում է ամեն չափ ու սահման: Քանդում է բոլոր կապերն ու կարգերը...

— Դու նորի՛ց գրիր, տեր Գնունի, սրանից ծանր ժամանակ չկա: Գրի՛ր և սուրհանդակ ուղարկիր՝ Թող աճապարի,— դիրուքությունից հևալով՝ խորհուրդ տվեց Օտա Ապահունին՝ արքունի

ախոռապետը։— Մի՛ն նա, մի՛ն սպարապետը կարող է խելք և իմաստություն սովորեցնել այս երիտասարդին...

— Ը՛հաս, տեր Աստվածնի, պալատում պատերն էլ ականջ են ունենում...

***

Մի քանի օր հետո երասխաձորով՝ դեպի Երվանդակերտ վազող ճանապարհով՝ մի խումբ հեծվորներ էին սլանում քրտինքից բնական դույները կորցրած ձիուդների վրա։

Ամառային արևը տաքացնում էր ձորի սևաթույր ժայռերը և Արաքսի ջրերը, որ տեղ-տեղ հոսում էին չոզից թուլացած, կարծես ուժահատ, իսկ տեղ-տեղ վազում էին սրընթաց աղմուկով, ասես փախչում էին արևի շիկացած նետերից։ Վերև՝ երկընքի խոր կապույտ դաշտերում չրջում էին ճերմակ, փրփուրի նման ճերմակ ու թեթև ամպեր, որոնք ոչ մի տավեր չէին քցում ճանապարհի վրա, և հեծվորները նույնպես վազում էին կարծես մի զով տեղ հասնելու։

Առջևից գնում էր մի ճերմակ ձիավոր, նրա ետևից մի տաս դինված մարդ՝ տարբեր դույների ձիերի վրա. և բոլորը գնում էին այնպիսի արագությամբ, որ դժվար էր որոշել նրանց դեմքը, մանավանդ ճանաչել նրանց. բայց փորձ աչքը կարող էր հասկանալ, որ առջևից գնացողը մեծազնյա անձնավորություն է, իսկ նրան հետևողները՝ նրա թիկնապահները. ավելի փորձվածը կարող էր նկատել նաև, որ առջևից թեթևորեն սուրացող ճերմակը նման է Մուշեղ սպարապետի օրագնաց ձիուն։ Եվ նա չէր սխալվի։ Որովհետև դա իրոք Մուշեղ սպարապետն էր իր թիկնապահներով։ Նա չտապում էր Դվինն. չտապում էր մի զարմանալի անհամբերությամբ ու հուզումով։

Մի քանի օր առաջ իր չրջապատության մի լրտեսից՝ սպարսից ութհազանի մոտ նա ստացավ իր հավատարիմ ու մտերիմ Ջենոն Գնունու նամակը, ուր նա այլ բաների թվում հայտնում էր, թե Պապը հիմա էլ, հակառակ եկեղեցականների կամքի, Մաղի վոխարեն տեղապահ է նշանակել Մանազկերտի եպ. Հուսիկին, որին և մտադիր է դարձնել կաթողիկոս...

«Շատ լավ. տեր սպարապետ, ես էլ կարողանամ կանխել այս դժբախտությունը,— ըսում էր սպա Զենոն Գնունին։—Արտաքին աղտաներից հետո՝ նեղքին այս անհեթեթ գործերը կարող են մեծապես վնասել մեր երկիրը և մեզ։ Եկեղեցականները արդեն շատ հուզված են, նախարարների մի մասը դժգոհ»...

Սպարապետը նույն Զենոնի համակիներից տեղյակ էր տուրքերի մասին, և կարծում էր, որ Դվինի վերադառնալով՝ կկրճի այդ խնդիրը. դիտեր նաև կաթողիկոսի մահը, բայց չէր կարողացել հասնել նրա թաղմանը. Թունավորման վարկածը նրան կասկածելի էր թվում. սակայն հիմա, երբ նամակից իմացել էր, թե պապը մտադիր է կաթողիկոս օծել տալ ոչ թե կաստրխայում, այլ Հայաստանում և այն էլ ազգական կրթության տեր Հուսիկին,— նա տարակույսների մեջ ընկավ և հուզվեց։

Կարդալով այս նամակը՝ սպարապետը մյուս օրն ևեթ թիկնապահների հետ հանդիպարհ ընկավ Դվին։ Նա գնում էր սրարշավ, առանց ետ նայելու՝ թիկնապահներն իրեն հասնում են, թե՞ ոչ. գնում էր մի մոլեգին հապճեպությամբ, երբ կամենում են աղեռը կանխել, կամ հասնել—փրկել, ինչ կարող են։

«Ինչո՞ւ է այդպես վարվել այդ տղան, ո՞վ է արդյոք ներշնչել նրան այդ անմիտ խորհուրդը,— մտածում էր շարունակ Մուշեղը թափավորի մասին և մխիթարություն ժամանակ գտնում, որ Պապն անտեսել է իրեն, առանց իր հետ խորհրդակցելու արել է այդպիսի քայլեր ու կարգադրություններ։ Ու նրան թվում էր, որ Պապն այդ ամենն արած պիտի լինի Բիզանդիայից նկած իր ուսման ընկերներ Բաթ Սահառունու և Երեմիա Սահառունու խորհրդով ու սադրանքով, մանավանդ վերջինի, որ շատ մտքեր է քաղում հունական ու հռոմեական դրքերից, և որին շատերն անվանում են սոփեստուս, փիլիսոփա...

«Տղաներ, անմիտ տղաներ»— կրկնում էր նա մտքում Պապի և ընկերների մասին։— Չեն հասկանում, որ այդ անկշռադատ գործերով կարող են բարկացնել բիզանդական կայսեր և մեծապատվին»...

Ու այդ մտքերից անհանգիստ՝ Մուշեղը ինքնաթեր մտածում էր իր առանց այդ էլ արագ սլացող ձիերմակին և սուրում առաջ։ Թիկնապահները ձիերն իրենց դեսուդեն թողած՝ հալիվ էին

հանում նրան և զարմացած մտածում էին չարունակ, թե արդյոք ինչ է պատահել լրենց սպարապետին: Ձերավից հետո նրան չէին տեսել այդպես հուզված ու զայրացած, և միևնույն ժամանակ այդքան ինքնամփոփ ու մռայլ. և կարծում էին, թե ահա մի տեղ, վերջապես, մի որևէ կայսրում, իշխանում նա «վրացվի» և կասի, թե ո՛ւր են գնում և ինչո՛ւ... Սպարապետը սակայն առանց խոսելու, չարունակ սլանում էր առաջ. կայարաններում թեթև մի հանգիստ ու վեր էր տալիս ձիերին, ուղեկիցներին և վերստին ճանապարհ ընկնում նույն փութկոտ ու մտահոգ տնքոցով, չուտով տեղ հասնելու ցանկությամբ: Եվ, իրավ. նա չտապում էր, որ կարողանա կանխել Պապի նոր արարքները, նոր անհեթեթ գործերն ու հրամանները կամ, գոնե, առաջին հերթին, թույլ չտա Հուսիվիի օծումը, մի բան, որ բնավ ցանկալի չէր լրեն. ցանկալի չէր կարող լինել և բիզանդական միտրոպոլիտին և դուցե կայսեր... Նա կարծում էր, որ Բիզանդիան հողերի ու տուրքերի խնդրով թեև չհետաքրքրվեր, բայց կաթողիկոսի նշանակումով ու օծումով, կշահադրգռվեր ավելի, քան անհրաժեշտ էր:

«Անմի՛տ, կարճամի՛տ տղաներ» կրկնում էր նա և մտածում, որ այդ ամենի համար Պապին հանդիմանելը քիչ է: «Ի՞նչ է մտածել, որ այդպիսի քայլ է արել: Ինչպես է համարձակվել»...

Եվ սպարապետը ոչ մի հավանական ենթադրություն ու բացատրություն չէր կարողանում գտնել, բացի «անմտությունը», ուստի և հիմա չտապում էր կանխել այն:

Բայց երկրորդ օրը հասնելով Դվին՝ նա առանց ճանապարհի հոգսաստները փոխելու, ինչպես ընդունված էր կամ ինչպես անում էր միշտ թագավորին ներկայանալիս, ճանապարհի փոշոտ թիկնոցով ու մուկերով գնաց պալատ՝ և ուղիղ դահլիճ:

Բայց առաջին իսկ ընդունարանում՝ արարողապետը նրան տեսնելով՝ վեր թռավ զարմացած և, հարգանքով գլուխ խոնարհելով, հայտնեց, թե թագավորը զահլիճում չէ:

— Կանչի՛ր անմիջապես,— հրամայեց Մուշեղը և ինքն անցավ զահլիճ:

Աբարողամեսը սպարապետի տեսքից ու հրամայող ձայնից պարհուրած՝ նորից խոնարհում արավ և չքացավ։

Գահասրահում էլ Մուշեղն անհանգիստ էր. ուրիշ ժամանակ նա պյուտեղ մտնում էր պատկառանքով ու հարգանքով, ինչպես սովոր էր պատանի հասակից. բայց հիմա գնում-գալիս էր սրճակ-համարճակ, լայն քայլերով, հուզված և կարծես չէր նկատում ոչ ոսկեզօծ գահն իր պատվանդանով, ո՛չ նրա առջև փռված գեղանկար գորգը, ո՛չ պատերի տակ շարված խորացանգակ և ոսկով ու արծաթով դրվագծված նգուչրներն ու բազկաթոռները, ո՛չ էլ գահասրահի վրա բացվող քանդակազարդ երեք դռները... Չէր նայում առհասարակ ոչ մի կողմ, ոչ մի գործի... նա սպասում էր միայն, որ արտահայտի իր մտքերը, թափի իր բարկությունը և... բացատրություն պահանջի թագավորից կատարվածի առթիվ, որովհետև այդ ամենի համար նա երկրի և ժողովրդի առաջ պատասխանատու համարում էր ոչ միայն թագավորին, այլ գլխավորապես իրեն, քանի որ նա համոզված էր, թե ամենքը՝ նախարար թե հոգևորականն, օտար թե հարազատ պիտի մեղադրեն իրեն, թե Պապը, տակավին երիտասարդ, չհասկացավ և արամ այդ բոլորը, իսկ ինչ էր մտածում հասյա ինքը՝ երկրի սպարապետը, որ հասուն մարդ էր և դրեթե թագավորի հասակակից։

«Անմի՛ա, կարճամի՛ա տղաներ»,— դարձյալ կրկնում էր նա մտքում և փոշոտ մուխլերով ծաղկանկար գորգը տրորելով՝ գնում-գալիս էր շարունակ, թիկնոցն ուսից թեքված, արծաթասպառ սուրը կողքից կախ։

Զանցյալ մի փոքր ժամանակ՝ հանկարծ բացվեց գահասրահի խորքի դուռը և այդտեղից թեթև քայլերով ներս մտավ Պապը՝ դվխաբաց, մոտազուրկ տունիկով ու սանդալներով. նրա հետևից և Բաբին ու Երեմիան՝ նույնպես դվխաբաց։

— Բարի գալուստ, սպարապետ,— ասավ Պապն ուրախ-ուրախ, մեծ ճերմակ ձեռներն առաջ տարածելով, որ գրկի Մուշեղին. բայց նրա մռայլ դեմքը տեսնելով՝ կանգ առավ զարմացած։— Ի՞նչ բարի լուր մեր աշխարհի սահմաններից։ Հույս ունեմ ժամանել ես ամեն վարձանքից ազատ և անվտանգ...

Լսելով այդ ուրախ ձայնը և տեսնելով երեքին միասին՝

Մուշեղը, որքան էլ հավատարակչված ու պատրաստ մարդ, մոտացավ ընդունված կարգը՝ թագավորի ողջույնը և ասավ.

— Ես, արքա, եկել եմ միայն իմանալու, թե ինչքեր են կատարվում այստեղ,— ասավ նա մոտալ, միայն թագավորին նայելով, մյուսներին չարժանացնելով թեթև ակնարկի անգամ:

— Ի՞նչն է հուզել քեզ, սպարապետ,— հարցրեց Պապն հանդիսատես և ուշադիր:

— Այն, որ այստեղ գործեր են կատարվում առանց իմ գիտության:

— Դու հուզված ես, սպարապետ,— ասավ Պապը, ղեկավարելով նրա օտարոտի տրամադրությունը.— Նստի՛ր, սպարապետ, նախ նստի՛ր... Եվ Պապն ինքը նստեց առաջին պատահած նստարանին, իսկ Բաբն ու Երեմիան նստեցին վոքր ինչ հեռու՝ պատի տակ:

— Ես կարող եմ խոսել և կանգնած, արքա,— վրա բերավ սպարապետը նույն մոտալ ու ժպտուն չեչտով:

— Սակայն, սպարապետ, երկար բացակայությունից հետո, ես կուզեի խոսել քեզ հետ ավելի սիրով և մտերմաբար, և եթե ցանկալի է քեզ՝ կարող եմ գոհացում տալ քո հարցումներին քոլոր: Ի՞նչն է արդյոք վրդովել քեզ իմ արածներից, սպարապետ:

Սպարապետը կանգնած՝ գլուխը բարձր նայեց Պապի դեմքին:

— Ընդհանրապես այդպիսի կարևոր ճեռնարկումներ անելիս, արքա, դու պետք է խորհրդակցեիր քո սպարապետի հետ, որ կյանքը դրել է իր հայրենիքի և թագավորի համար:

— Բայց մի՞թե որևէ անարդար բան եմ արել ես, սպարապետ, եթե թեթևացրել եմ չինականների տուրքերը: Մի՞թե կուզեիր դու, որ չինականը վճարեր այնքան տուրք, որ ձեռ է իր ուժից, մանավանդ պատերազմի ավերանքներից հետո...

— Սակայն, արքա, դրա հետևա՞նքը,— չհամբերեց սպարապետը մի ոտից հենվելով մյուսին:

— Ես, սպարապետ, գտա, որ այդպես ավելի արդար է: Իսկ հետևանքը... Ի՞նչ կարող է լինել հետևանքը. տրտունջ, դժգոհություն հողևորականների՞ց... Թո՛ղ լինի...

«Ավելի համարձակ է դարձել և ինքնավստահ» մտածեց Մու-

շնդը, զարմանալով այդ փոփոխության վրա, բայց և վերաբերվեց, որ երեկվա պարկեշտ երիտասարդ Պապը իր հետ խոսում է այնպես ինքնավստահ ու համարձակ, առանց ակնածելու, քան սովոր էր: Բայց և այնպես չարունակեց իր հեղինակության վրա վստահ:

— Սակայն դու խախտել ես գաղտնի կարգը, օրենքը, Պապ: Դու թշնամացնում ես քեզ ամբողջ հոգևորականությունը:

— Ոչ ամբողջը, սպարապետ: Ով Բրխատոսի աշակերտ է համարում իրեն՝ նա չի կարող դժգոհ լինել ինձնից:

«Բոլորովին փոխվել է» նորից մտածեց Մուշեղը և չարունակեց.

— Իսկ այս կաթողիկոսի օծումը, Պապ: Ինչ է սա: Մտածե՞լ ես արդյոք, թե ժրքան վատ ազդեցություն կթողնի բիզանդիայում: Մի՞թե անհրաժեշտ էր խորհրդակցել այս ամենի մասին՝ Ծանոր հեռանալիքներից խուսափելու համար...

Պապն անխոս ու շեշտ նայեց սպարապետի քամահարված ու ֆետխ դեմքին, որի վրա կարծկլտում էին նրա մանր ու կլոր աչքերը:

— Մի՞թե, սպարապետ, իմ երկրում այս կամ այն գործը ձեռնարկելու համար ես շարունակ պիտի մտածեմ ինչ կասեն բիզանդացիք, և ոչինչ չանեմ վախից...

— Սակայն, արքա,— ուզեց առարկել սպարապետը վիրավորված, բայց Պապը չլսեց նրան և չարունակեց ձայնը բարձրացնելով.

— Եթե դու, սպարապետ, կարծում ես, որ հայոց թագավորը չարունակ պիտի ուրիշի, օտարների կարծիքով առաջնորդվի, ես միայն կարող եմ զարմանալ, որ Մամիկոնյան քաջ տոհմի ներկայացչին այդպիսի ստրկանապատումություն է քարոզում իր թագավորին:

«Ոչ, սա բոլորովին փոխվել է,— զարձյալ մտածեց Մուշեղը,— հիմա ինքն է դիտողություն անում ինձ, և կարծես անխնամատ բաներ չի ասում»:

— Ես այդ չեմ ասում, արքա,— նկատեց նա հուզված,— այստեղ կան հանգամանքներ, որ պետք է նկատի առնենք:

Եվ սպարապետը նստեց ինքնաբերաբար:

— Ի՞նչ հանգամանքները, սպարապետ,— հարցրեց Պապը՝ նստած տեղը ետ դնալով և նորից ուշադիր ու չեչա Մուշեղի կլոր խելացի աչքերին նայելով:

— Բիզանդիայի բարեկամությունը, Պապ, որ միայն բան չէ մեզ համար:

— Բայց մի՞թե ես թշնամություն եմ դրծել Բիզանդիայի դեմ:

— Այդպես պիտի բացատրեն, արքա. քանի որ դու կաթողիկոսին օծել ես տալիս այստեղ և չես ուղարկում Կեսարիա, ինչպես կարգն է:

— Ուրեմն՝ քո կարծիքով, սպարապետ, ես դրծել եմ հանցանք կամ զանցառություն՞,— ասավ Պապը հոնքերն իրար բերելով:— Սակայն կուզեի իմանալ, սպարապետ, ես այստեղ Բագավո՞ր եմ, թե ոչ:

Սպարապետը կարծես անակնկալի եկավ. նա ակամա նայեց պատի տակ նստած Բաթին ու Երեմիային և ապա Պապին:

— Չարկավ, արքա, այդ մասին տարակույս չկա...

— Ուրեմն կարո՞ղ եմ և դրծել ինքնուրույն:

— Բայց, դարձյալ ասեմ, արքա, կան հանգամանքներ...

— Որ ես հարցնեմ հունաց միտրոպոլիտի կարծի՞քը,— վրա բերավ Պապը տաքացած, դլուխը Բաթով առաջ բերելով:

— Ոչ թե կարծիքը, արքա՝ այլ չափազ է վիրավորել նրանց և պետք է անել այնպես, որ չծագեն բարդություններ:

— Իսկ նրանք միշտ կարող են վիրավորել մեզ,— ասավ Երեմիան կիսաձայն, ինքն իրեն, առանց խոսակցությանը միջամտելու:

Սակայն սպարապետը լսեց այդ ու դարձավ Երեմիային.

— Վայել չէ քեզ, երիտասարդ, ընդհատել ինձ, երբ ես խոսում եմ արքայի հետ,— ասավ նա բարկացած ու խոտոհայաց:— Հանգուցյալ հայրդ կարդի և պատշաճի օրինակ էր...

Երեմիան կարմրեց, ձեռը երկար մազերին տանելով՝ ուզեց ասել մի բան, բայց Բաթը նրա թևը քաշեց՝ կարծես արգելելու, որ նա չպատասխանի սպարապետին, սակայն ինքը վեր կացավ տեղից, մի քայլ առաջ եկավ ու՝

— Սպարապետ,— ասաց,— մի՞թե մի կաթոլիկուհի օծումով խախտվում է բարեհամբույրը հոտառաց հետ:

— Քեզ նուիրեցնես, երիտասարդ, վայել չէ ընդհատել ինձ,— նկատեց Մուշեղը նույն խստությամբ և, դլուխն արագ դարձնելով, մտածեց, որ անշուշտ դրանք են նկատել թագավորին այն սարսրանքը, որ Պատը կատարել էր իր բացակայության մեջտեղին: Ու շարունակեց՝ այլևս չնայելով նրանց կողմը, սակայն շատ ինկնաբն անելով նրանց:— Սահելքս այն է, Պատ, որ այդ հույժ պատասխանատու, կարևոր քայլերն անելիս՝ դու պետք է խորհրդակցիլը ավելի վորձ և քանիսից մարդոց հետ... Իմ մտահոգությունը մեր երկրի հանդստությունն ու ապահովությունն է:

— Բայց՝ մի՞թե, սպարապետ, ես ատելի եմ ավել անապահովության: Դու կարծես հանդիմանում ես ինձ,— ծռերից տալով Պատը:

— Ես ասում եմ այն, ինչ որ պդում եմ, արքա: Քո արածները կարող են խախտել մեր և հոտառաց բարեհամբույրը:

Պատն անմիջապես չպատասխանեց. նա շուրթերն իրար հպած նախ սևեռուն նայեց սպարապետին, նրա վրդը, ևս խաղալի ոգևորյալ պես դանդաղ մորուսին, ևս, խիտ հոնքերի տակից նայող սուր կրակոտ աչքերին և ապա նստած տեղն ասաջ ձգվեց ամբողջ իրանով:

— Ասա, խնդրեմ, սպարապետ, հոտառներն մխիթարիչ ես այս երկրի թագավորը, թե ես,— հետց նա:— Եթե դա է, ես կարող եմ հեռանալ, թո՛ղ նա գա և նստի այս գահին:

Սպարապետը զարմացավ վրդյի այդ ընթացքից. նա՝ այդ չէր սպասում. նրան թվում էր, որ Պատին չվիրավորեց, բայց ինչո՛ւ նա հուզվեց... Մի՞թե ինքը դիպավ նրա ինքնասիրությանը: Ուստի, կարծես իրեն արդարացնելու և նրան հանդրստացնելու համար ասավ.

— Ես քո և մեր երկրի ապահովության մասին եմ մտածում, արքա: Ես անձնական շահ չեմ փնտռում, այլ այն, որ քիչ խնամքներ ունենանք:

— Այդպես. ուրեմն թշնամի չունենալու համար չանե՞նք ոչինչ: Ես դնահատում եմ քո անձնազոհ հայրենասիրությունը,

ապարատներ, քո ռազմական խելագարությունը, քո կորուիը և հուսահատությունը մեր հայրենիքի թշնամիների դեմ, բայց չէ՞ որ այդ ամենը նրա համար է, ապարատներ, որ մենք ապրենք ազատ, ինքնուրույն և ոչ թե կախում ունենանք հռոմեների միապետությունից... Դու մոռացում ես մեր երկրի ապահովության մասին, ապարատներ, իսկ ես մոռացում եմ նաև նրա արժանապատվության մասին: Եթե վատ եմ անում՝ դատապարտիր ինձ, ապարատներ: Ասա, որ մենք մեզ չպետք է հարգենք, որպեսզի ուրիշներն էլ հարգեն մեզ: Ասա որ ես սխալվել եմ, ասա, որ մեր երկիրը չպետք է ապրի ինքնուրույն կյանքով, չպետք է ունենա արժանապատվություն, իր ներքին գործերը ինքը չպետք է կարգադրի,—և ես կհնազանդեմ այս դահը...—Պապի ձայնը փոխվեց և դարձավ կերկերուն:— Ասա, խոսիր, ապարատներ: Ասա, վերջապես, խրոմիլոմի եմ ես, թե թագավոր...

Մուշեղի սառը, մոայլ դեմքը կամաց-կամաց փոխվեց և իրեն հայացքը մեղմացավ:

«Բոլորովին փոխվել է և նուշնիկ դարձել է կարծես պերճախոս» ասավ նա մտքում ու մոռացավ, որ պապն արդեն դուրս է եկել իր ազդեցությունից և ընկել, երևի, ուրիշների ազդեցության տակ. որտե՞ղից են նրան այս նոր մտքերը...

— Պապ, ես չուզեցի քեզ վիրավորել,— ասավ նա փափուկ ձայնով, մի ձայնով, որով մխիթարել էր նրան մոր դերեզմանատան լռության ժամանակ:— Ես ուզում եմ միայն չըջահատկություն. ուրիշ չունենք Բիզանդիայի թշնամության...

— Բայց, ապարատներ, մի՞թե մենք պարսից դեմ կռվում ենք հռոմին կուլ գնալու համար,— խոսեց Պապը ցավագին ձայնով ու գլուխը շարժելով:— Մենք կռվում ենք մեր երկիրը, նրա արժանապատվությունը պահելու համար, բայց ոչ որպես կամ նրան ենթարկվելու: Ոչ պարսիկ, ոչ հռոմ, ապարատներ:

— Սակայն աշխարհում առանց քարեկամի չի կարելի ապրել, Պապ,— վրա բերավ Մուշեղն առարկություն չհանդուրժող ձայնով:— Մեզ նեցուկ է պետք:

— Ոչ, ապարատներ, ուրիշը չի կարող մեզ նեցուկ լինել: Նրա արժեքը էլ չունի օտար նեցուկը. դա լինում է միայն ժամանակավոր և վտանգավոր: Ահավասիկ՝ հռոմեները եկան մեզ

օդնելու պատրվակով և երկու տարի է նստել են մեր քաղաքներում ու գյուղատներում և չեն հեռանում: Ահա քեզ նենգություն: Մի՞թե դու էլ, սպարապետ, մեր պարզամիտ հոգևորականներից չսանձվել պես կուզենար, որ դրանից հետո տարկանանք մենք բյուզանդիայի և մեր քաղաքները պահանջելու փոխարեն՝ եպիսկոպոս ուղարկենք, թե օծեցնք: Ո՛չ, սպարապետ. ո՛չ պարսիկ, ո՛չ հոռոմ. մեզ հարկավոր է հաստատուն նենգություն:

— Եվ ո՞րն է այդ նենգությունը,— դյուրթը բարձրացրեց և ուղիղ Պապին նայեց Մուշեղը:

— Մե՛նք պետք է լինենք մեր նենգությունը, սպարապետ, մե՛նք: Ստեղծենք մեր նեղբին նենգությունը... Դու գիտես, որ մենք ապրում ենք երկու մեծ տրանքում կամ ավելի ճիշտը՝ երկու գաղտնի բաց երախի առաջ, որ ուզում են կլանել մեզ—ուրեմն այնպես անենք, որ այդ մերը շարունակ չսպառնան մեզ և այդ երախները չկլանեն մեզ... Պապը կանգ առավ մի վայրկյան և շարունակեց հևալով.— Ես քշնամությունն չեմ քարոզում, սպարապետ, ես ուզում եմ դորացնենք մեր բազուկը, որ հարևաններն էլ հարգեն մեզ: Կարճ՝ ես ուզում եմ, որ միշտ օգնության ակնկալող չլինենք և ընդօրինակող ստրուկ... Այլապես ինչ ենք մենք. նախարարների մի մասն աչքը պարսից կողմն է, մյուս մասի աչքը՝ բյուզանդիայի, և մի բան պատահելիս՝ վազում-ապավինում են սրան կամ նրան և ամրացնում նրանց պարիսպը: Հիմա էլ՝ չսոերը մեր տունը թողած՝ ուզում են չինել հոռոմների տունը, ամրացնել նրանց պարիսպները կամ պարիսպ դառնալ նրանց համար: Ոչ, սպարապետ, մենք պետք է չինենք մեր բերդը, պետք է ամրացնենք մեր պարիսպները և ապավինենք ինքներս մեզ... Այդ չեն գիտակցում մեր հոգևոր հայրերը... Բայց դու, որ գենքը ձեռքդ միացնում ես մեր երկրի անջատված մասերը, պատժելով հայրենադավ իշխաններին, օգնիր մեր սահմանն բերդը չինելու, որ մե՛նք լինենք մեր նեցուկը... Դու այդ պարտավոր ես, սպարապետ, որովհետև հիշո՞ւմ ես, երբ Հիսոր ինձ բյուզանդիայից բերելու, դու խոստացար, որ ամեն բանում պիտի օգնես ինձ... Հիմա ասա, սպարապետ, ապրենք ինքնուրո՞ւյն, մեր դեմքո՞վ, թե կուլ գնանք բյուզանդիային և

զառանցանք բխեցնեցի... Դե, լռենք, Մուշեղ ապարապետ... Այսո՛, ինչ որ մտածում ես...

Մուշեղը, որ անշարժ, երկմտոտած լսում էր Պապկին, անմիջապես չպատասխանեց. նա իր խոհուն աչքերի հայացքը հառեց նախ պեպի լուսամուտը, ապա գահին նայելով՝ ասավ տանջարար.

— Դուռ մե՛ծ կոխել ես սկսում, արքա, և քո վեմ կհանես չառնչվին:

— Երևի նրանց, ո՛վքեր նեցուկ են վինտում ուրիշների մոտ,— վրա բերավ Պապկը սրամտությամբ:— Բայց մի՞թե մեզ համար այդքան դժվար է լինել ինքնուրույն, որպես ձգտում է ամեն ազատած, ամեն բույս ու կենդանի:

— Պետք է խորհել այդ մասին, արքա, պետք է ընդհատայց լինել,— ասավ ապարապետը և ոտքի կանգնեց:—Պետք է խորհել...

Ու, կարծես ավելորդ բան չասելու համար, նա հրաժեշտ տվավ ու ծանր քայլերով դուրս եկավ գահատարահից:

Ջենոն Գնունին, որ իր բարեկամ Օսոս Ապահունու հետ մեծ սրահում անհամբեր սպասում էր տեսակցության վախճանին և կարծում էր թե ապարապետն իր բարձր հեղինակությամբ, հասարակ ու խելոտ խոսքերով կհանդիմանի Պապկին, և թագավորը ներողություն կխնդրի նրանից և, նրա սիրտն առնելու համար՝ մինչև դուռը ճանապարհ կդնի նրան, սակայն մեծ եղավ նրա զարմանքը, երբ ապարապետը դուրս եկավ մինակ, մտախոհ ու ծանրաքայլ:

— Հույս ունեմ, տեր ապարապետ, սիրով լսեց քեզ և իր սխալներն ընդունեց,— հարցրեց Ջենոն Գնունին կիսաձայն:

Ապարապետն աջխոտ ձևով թափ թվեց մկանը:

Ջենոն Գնունին այն մարդկանցից էր, որ դիմացինի մեն մի չարժումից հասկանում էր նրա տրամադրությունը և ըստ այնմ որոշում շարունակել խոսակցությունը թե ոչ: Այդպես՝ էլ այս անգամ. նա այլևս ոչինչ չհարցրեց ապարապետին ու հետաքրքրվել հետևից նրան մինչև պալատի մեծ դուռը: Իսկ երբ ապարապետն արդեն դուրս էր գալիս պալատից՝ նա ասավ նույն ցածր ձայնով.

— Տեր սպարապետ, քո զոհն իմանալով՝ մի քանի եպիսկոպոս ուզում են խոսել քեզ հետ:

— Ինչի՞ մասին,— ակամա հարցրեց սպարապետը:

— Եկեղեցու իրավունքների. հողերի, տուրքերի, նոր կաթոլիկության օձման... Ուզում են՝ համոզես Թագավորին, որ...

Սպարապետն անմիջապես չպատասխանեց: Բայց մի քանի քայլ առաջ գնալով՝ մևևին կանգ առավ և, առանց Զենոն Գնունուն նայելու, ասավ կարուկ.

— Ամեն ինչ նրանց, տեր Գնունի, որ ես դիվանագետ եմ. չեմ խառնվում Թագավորի կարգադրությանց մեջ: Ես միայն իմ երկրի սահմանները պիտի պաշտպանեմ և կռվեմ նրա թշնամիների դեմ...

Զենոն Գնունին սպարապետի այս խոսքերից լավ չհամարեց՝ միտացա՞ծ էր նա Թագավորից, էլ՞ ուզում իրոք խառնվել այդ գործերի մեջ; Թե դժգոհ՝ ապստամբություն էր խորհում Թագավորի դեմ...

Իսկ Պատն այդ մեջտեղին պահապահում առում էր Բաթին և նրեմխային.

— Ես կուզի սպարապետը չվշտանար և չհուսվեր ավելորդ, այլ հասկանար, թե ինչ է պահանջում մեր երկրի շահը և անվտանգությունը... Ես նրան դուցե լավ չդատարկեցի:

— Բայց որտեղ կուզի՞ր հասկանալ,— կասկածանց Բաթը:

— Չեմ կարծում, թե սպարապետը կամենա, որ հուսմնները նստեն մեր քաղաքներում, իսկ մենք սիրաչահենք նրանց և սպասկանանք... Սպարապետը կարծում է, թե ես թշնամություն եմ սկսում Բիլանդիայի դեմ... Ամենևին: Նա մոռանում է, որ թշնամություն սկսել է Բիլանդիան մեր դեմ, որ չի հեռանում մեր քաղաքներից: Սա ավելի մեծ թշնամություն է, քան պարսիկները, և մենք պետք է պահանջենք մեր քաղաքները...

ՎԵՐՋԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԻ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Գարնան մութ մի երեկո էր իջել Դվինի վրա, և երեկոյի հետ միասին սկսվել էր մի մոլեգին քամի, որ դիվահարի պես սուլյանները էր գործում մայրաքաղաքի փողոցներում ու հրապարակներում. մերթ վնգռում էր այս-այն կողմ կամ սուլում չարաբաստիկ, ապա կարծես հեռվում մի ոհմ պատած՝ սուրում էր հեռուն։ Թվում էր ամեն ինչ վերջացավ և քաղաքում կտիրի հիմա ուվերակատ անդորրը. բայց քանի մի վայրկյան հետո՝ գազազած քամին նորից էր սկսում իր պոռչտանները, իր վնգռոցն ու սուլոցը և քաղաքը նորից լցնում աղմուկով։ Եվ քամու այդ տարբերային հևքից, չառաչումներից մթնշաղերդի լույսերը թվում էր մերթ հանգչում են, մերթ վառվում պայծառ. իսկ բյուզանդական դեսպանի լույսը, լուսամուտում դրած լույսը դողում ու թարթում էր չարունակ։

Ինքը կամս Տերենտը հուզված երթևեկում էր իր առանձնասենյակում և հաճախ վարի շուրթը ընում էր ատամների տակ ու դլուխն օրորում կամ նորը ճնռով բռնում ճերմակող մերուքը։ Նրա բարեհամբույր դեմքը փոխվել էր և դարձել լարված, այլայլված. մերթ երկյուղ էր ելևում նրա դեմքին, մերթ բարկություն, անգամ զայրույթ։ Բայլերը նունպես անհանդիստ էին և անհաստատ։ Երբ կատաղած քամին ժամանակ առ ժամանակ ցնցում էր նրա լուսամուտի փեղկերը՝ նա ներքինին ասում էր բարկացած.

— Ո՛ւհ, այս երկրի քամին նույնքան բարբարոս է, որքան և նրա ժողովուրդը։

Կոմսը լուրջ հուզված էր, և նրա այդ տրամադրությունը հարկավ. առանց պատճառի չէր։ Բանն այն էր, որ հենց այսօր երեկոյան դեմ իր սուրհանդակի և նրա հետ եկած

Սրդե դրամավարի միջոցով ստացել էր միաժամանակ երկու հանդիմանական նամակ՝ մեկը կայսրից, մյուսը կեսարէ-ացի մեծ արքեպիսկոպոսից կամ, ինչպես իրենք՝ հռոմե-ները էին ասում՝ մետրոպոլիտից։ Եվ երկու նամակն էլ պրեթե նույն բովանդակությունն ունեին. երկուսն էլ հանդի-մանում էին կոմսի թուլությունը, որ չէր կարողացել պատ-ժադրելի պահել իր ձեռքերի մեջ և թույլ էր տվել (այսպես էլ դրված էր—քuյլ ես տվել) «հանդուգն դործեր կատարելուց»։ Վերջին խոսքերը մանավանդ ծանր էին ազդել կոմսի վրա, և նա հուզված երթևեկում էր կարծես այդ խոսքերը մոռանալու համար. բայց որքան շատ էր դնում—պալիս՝ այնքան ավելի էր հուդվում.

«Թույլ եմ տվե՞լ... Թո՛ւյլ եմ տվել»...

Մի առժամ այդպես շրջելուց հետո՝ Տերենտը սխուր մո-տեցավ սեղանին և նայեց այնտեղ փռված կայսեր կարմրագիր նամակին, որ դրված էր նուրբ մազաղաթի վրա։ Քանիերորդ անդամն էր արդեն նա կարդում իր այդ նամակը և դեռ չէր կա-րողանում կարծես ըմբռնել նրա բովանդակությունը, իր հան-ցանքը՝ այնքան անակնկալ էր այդ նամակը նրա համար։ Ուստի, կարծես ավելի լավ հասկանալու համար, նա նամակը կարդաց նորից.

«Ինքնակալ Վալես Օգոստոս՝ մեծազոր կայսր հռո-մայեցիների՝ իր ծառա Տերենտ կոմսին ողջույն.

«Քո նամակից, մասամբ և կողմնակի աղբյուրներից՝ յա-յտնվել և արտաուբյամբ իմացանք Արմենիայի Պատ քաղաքում տատամսական ապստամբները և դայրացանք հուժ։

«Դու ի՞նչպես թույլ տվիր, որ այդ պատանին դուրս գա քո ազդեցությունից և հանդգնի այնչափ, որ նոր կարգեր մացնի իր երկիրը՝ քրիստոնեության հավատին հակառակ։ Իմացանք, որ նա հալածում է եկեղեցին և նրա սպասավորներին և արդելում, որ իրենց եպիսկոպոսապետը ձեռնադրվի մեր մեծ մետրոպոլիտից։ Ներա այս վարմունքներից պետք եղածպես, որ նա դաշնակցություն է խորհում մեր դեմ, հող է պատրաստում պարսից կողմն անցնելու։ Ներա այդ ցանկությունը նս կատարում

ամ և այն բանից, որ նա առաջարկում է հանել մեր ղրքերը Ամմինխայի քաղաքներից: Ուզում է դառնալ մեծ թագավոր... Բանից որ դու, կոմս, Թուլլ տվիր դրան այդ ամենը կամ անկարող եղար սանձահարել—դրան ուղարկիր ինձ մոտ՝ Տարսոն, ասելով թե ես հրավիրում եմ և ցանկանում եմ խոսել իր հետ հաստատակաց օգուտի մասին:

Տուր իմ կողմից նրան պղնձի և ասա՝ Թող չտապի, քանի ես գոնվում եմ Տարսոն:

Իմ նամակի վերջին տողերը կարդա նրան և ցույց տուր, եթե կցանկանա»...

Տևրենսը նորից չէր կարողանում վերահասու լինել, թե ո՛րն է իր դանցառությունը, իր մեղքը, մանավանդ միտրոպոլիտի առջև, որ իր հերթին գրում էր.

«Մեր որդի՝ ազնիվ Տևրենս կոմսին
հայրապետական օրհնություն.

«Դու նրան մեկ ճշմարիտ քրիստոնյա տղի դեսպանը ի Ամմինխա—մեկն մեր Օգոստոս կայսեր աչքն ու ականջը չես բարբարոսների այդ երկրում, այլ և բիզանդական սուրբ եկեղեցու, որի փառքն ու պատիվը պաշտպանելը, կոմս, քո ազնիվ պարտքը պիտի լիներ, անտարակույս, միշտ և հանապատ: Մինչդեռ դու, ժլատաբար, թերացար հավատի գործի մեջ և Թուլլ տվիր, որ մի պատանի խանգարի մեր հավատի գործը բարբարոսների այդ երկրում: Ինչպես Թուլլ տվիր, որ արմենները նրանց կաթողիկոսը ձեռնադրեն այդտեղ՝ առանց մեզ դալու: Մի քանի դրանք կարծում են, որ նրանց ձեռնադրած կաթողիկոսը կունենա իշխանություն նրանց երկրում և ձայն քրիստոնյա հայրապետների մեջ: Ո՛չ երբեք: Մենք դեմ ենք պատ Թագավորին, որ վերացնում ենք կաթողիկոսի իշխանությունը և չենք տալիս նրան եպիսկոպոս ձեռնադրելու իրավունք: Նա կարող է օրհնել միայն իր՝ արմեններին ուղարկի հացի սեղանը: Եվ այդքան: Հիմա Թող վայելեն նրանց կաթողիկոսին»...

Տևրենսը պարզանում էր, որ ինչպես կայսրը, այնպես էլ միտրոպոլիտն իրեն մեղադրում են բաների մեջ, որոնց ինքը

ուշադրության է առել մինչ. չէ՞ որ ինքը Պապի ձեռնարկումների, նպատակադրությունների, նույնիսկ մոտիվացիաների մասին ժամանակին զրել է կայսեր և հրահանգ առացել՝ ուշով հետևել «սոմիններների թագավորի վարքին», և այն ամենը, ինչ պատմել էին արմեն նախիպատանները, բաներ, որ թվում էին զուրկ չեն հիմքից: Նա զրել էր այդ ամենը, անգամ այն ենթադրությունը թե Պապը թագադրվել է Ներսեսին, ինչ-որ նրան էլ թվում անգամ հավանական. նա պարզապես գտնում էր, ինչպես և ասում էին ամենք, որ Ներսեսը մեռել է նրան կոլվելուց կամ արյունհոսությունից: Այդ ամենից, հարկավ, դեռ չէին երևում Պապի նպատակները, բայց ինքը զրեց, թե Պապը կարծես պարզական սրամտություն ունի: Իսկ այժմ, երբ Պապը Ներսեսի փոխարեն նոր կաթողիկոս նշանակելով՝ նրան էլը ուղարկել կեսարիա ձեռնադրելու,— Տիրենտին թվում էր, որ Պապը, ոչ թե նպատակ ունի քրիստոնեությունը վերացնել հայոց աշխարհից կամ, ինչպես նա էր ասում, Արմենիայից, այլ ընդհակառակը ցանկանում էր իր թագուն ձգտումը— կործել Բիզանդիայից ասացած կրոնական, որին սիրտ հետևելը, երևի, Տիրենտի կարծիքով, քաղաքական խաղում... Այս պարզագան թերևս ինքը լավ չէր հասկացել, որ ժամանակին զրեր կայսեր:

Եվ նա նորից երթևեկելով մտածում էր, թե Պապի այդ ընթացքը պարսիկների կամ պարսկասեր արմենների գործունեության արդյունք չէ՞ արդյոք: Նրան թվում էր, որ Արմենիայում պարսկասեր նախարարները տակավին շատ են և, չնայած Հայր-մոգպետի սպանության, գործում են և թագավորին, երևի, ունեն իրենց ազդեցության տակ... մինչդեռ ինքը պետք է նրան պահեր իր ազդեցության ներքո, մտածում էր Տիրենտը, և դա համարում էր իր սխալը... Սակայն նա միշտ կարծել էր, թե քանի բիզանդական զորքը նստած է հայ գավառներում ու քաղաքներում— Պապը չի համարձակի ինքնուրույն քայլեր անել, սրսրամերժ ձգտումներ ունենալ: Բայց ահա, մտածում էր Տիրենտը, եթե իր նենգությամբ, համաբյա հունոց հակոզության առաջ Պապն անում էր այսպիսի համարձակ գործեր—ինքն է ձեռնադրել սուիս կաթողիկոս... հապա եթե իրենց զորքերը հեռանան այդ գավառներից՝ նա կդառնա

ավելի հանդուգն և... կարող է անցնել երեկվա իր թշնամու Շապուհի կողմը:

— Ապերա՛խտ արմեններ,— ասավ նա լսելի ձայնով՝ զարմանալով, որ հայերը չեն ուզում ենթարկվել Բիզանդիայի հովանավորությանը:— Պապը հետաքրքրվում է, թե ի՞նչը նրանց դատարկելու իրենց քաղաքները... Հապա ա՛յն օգնությունը, որ ցույց տվինք Չիրավում...

Քամին զնապով մոլեգնում էր դուրսը, ծեծում էր տան դռներն ու լուսամուտները և սուլում, աղմկում պարսիկի ծառերի մեջ. և դա Տերենտին կարծես ավելի էր հուզում: Կայսեր նամակը, այսինքն՝ նրա նկատողությունը՝ Տերենտին հանել էր իր ռազմական հավատարմակրությունից և նա, ինքն իր մեջ զգալով, որ կայսրն իրավացի չէ, վրդովվում ու զայրանում էր Պապի դեմ, որ ստիպ էր գործել կայսեր հանդիմանության:

«Եթե Պապն ուզում է իր քաղաքները,— դա արդեն անհատականություն և հանդգնություն է Պապի կողմից»... ասում էր նա մտքում,— և կարծում էր, որ թե Պապ Քաղավորը և թե բոլոր արմենները պետք է չնորհակալ լինեն, որ իրենք՝ բիզանդացիք՝ մնացել են հայոց քաղաքներում, որովհետև իրենց ահեղ պարսիկները չեն համարձակվի դալ հայերի վրա: Իսկ եթե Պապը ցանկանում է, որ իրենք հեռանան այդտեղից՝ նշանակում է նրանք այլևս երկյուղ չունեն պարսիկներից... Հետևաբար, պարզ է,— եզրակացնում էր Տերենտը,— Պապը, հավանորեն, ապահովության երաշխիք է ստացել Շապուհից:

— Ապերա՛խտ արմեն,— ասավ նա նորից լսելի ձայնով Պապի հասցեին:— Ապերա՛խտ,— կրկնեց նա և մտածեց, թե քանի իրենից ուրիշ ո՛վքեր կային տեղևակություններ հաղորդել կայսեր. արդյո՞ք իրենց հետո զորավարներից մեկը, թե դաշնակից արմեն եպիսկոպոսներ կամ նախարարներ, որ իրենից դժգոհ՝ դիմել են անմիջապես կայսեր... Եվ նա զգում էր, որ դա արված է, երևի, իրեն վարկաբեկելու համար: Բայց մի՞թե ինքը լիակատար թերացել է իր պատասխանատվության մեջ. չէ՞ որ միշտ հետևել, իմացել է ամեն ինչ և ժամանակին հաղորդել կայսեր... Բայց դրանք, այդ նոր նամակագրություններն են, հավա-

նարեն, դրվեց կայսեր բարկությունն իր վրա,— մտածում էր նա և շարունակում իր երթևեկը:

Ու քանիսերորդ ժամանակ նա գնում—գալիս էր այդպես հուզված մտածելով ու ինքն իրեն խոսելով, երբ հանկարծ դուռը ծեծեցին դղրդյունով:

Տերենտը նախ նամակաները դրեց իրենց պատյանը ու ծածկեց, ապա մտեցավ դուռը քողարկող, մինչ հատուկը հասնող վարպետ յունեցին և փոքր ինչ ետ տանելով՝ ասաց.

— Բարեհաճեք, ղորամայր...

Ներս մտավ Տերենտի հյուրը՝ բարձրահասակ, ուսերը հասու ու լայն, իրանը բարակ մի ղորականի, որ հխտունի մոտ, հին հռոմայեցիների պես դեմքն ածխված, քունքերը ճերմակ, գլուխը ճաղատ ոլորամարդ էր՝ կապույտ, խոշոր աչքերով, որ չարունակ դառնում էին իրենց բներում և ուզում էին կարծես անմիջապես դիտել—ուսումնասիրել շրջապատը:

— Հույս ունեմ՝ կայսրը բարի նամակ է գրել, կոմս,— հարցրեց նա ներս մտնելուն պես:

Դա ղորամայր Աղրիպն էր, որ այսօր երեկոյան դեմ եկել էր Տարենից, ուր և նստում էր իրրև բիզանդական զորքերի, հայկական զորամասերում գտնվող զորքերի հրամանատար և Տերենտ կոմսի օգնական: Իմանալով սուրհանդակը կայսեր նամակը բերում է կոմսին և, մյուս կողմից, լսելով Արմենիայում կատարվող դեպքերի մասին, նա հետաքրքրված եկել էր քիչ առաջ տեղեկություններ և թե կայսեր նամակի բովանդակություն իմանալու: Այն ինչ Տերենտը կասկածում էր, որ հենց այդ Աղրիպն կարող է լինել կայսեր տեղեկատու աղբյուրներից մեկը, որ հիմա եկել է տեսնելու, թե ի՞նչ տպավորություն է թողնում կայսեր նամակն իր վրա:

— Նախ՝ նստիր, բարեկամս,— ասավ Տերենտը, ցույց տալով բազկաթոռը:— Կայսեր նամակն, անշուշտ, բարի խորհուրդներ է պարունակում մեր պետության համար: Եվ ես շատ ուրախ եմ այդ նամակով...

— Հաճելի՛ է,— ասավ Աղրիպն նստելով ու սրահը դիտելով:— Բայց, ներիր ինձ, հարգելի կոմս,— հանկարծ խոսքը փոխեց նա:— Ինչ ասած, երբ եկանք, ձեր տնից դուրս եկան արմեն

հովվապետները: Դրանք ի՞նչ մարդիկ էին... անկեղծ ասեմ՝ ես շատ զարմացա դրանց այստեղ տեսնելով: Այսինքն՝ մի տեսակ տարօրինակ թվաց...

Քմծիծաղն ինս մի բան անցավ Տերենտի դեմքով:

— Իրավունք ունես, բարեկամս,— ասավ նա, նստելով ու ոտը ոտին գցելով:— Այո, լուրջ տարօրինակ ժողովուրդ են այս արմենները. մի կողմից հանդուրժել չեն կարող օտարի իշխանությունը, անում են ամենը, տալիս են ամեն տեսակ դրնդ ազատ, անկախ ինքնուրույն լինելու համար, բայց մյուս կողմից՝ չեն հարգում և չեն սիրում իրենց հարազատ իշխանությունը, և ուզում են, որ իրենց վեճերը միշտ օտարները լուծեն: Կարող եմ ավելին ասել՝ երբեմն անձնական վիրավորանքի համար պատրաստ են թքել թե իրենց իշխանության և թե իրենց երկրի վրա... Պարզ ասեմ. դրանք նկել՝ նորից պանդատվում էին իրենց թագավորից, թե սահմանափակում է նկիզեցու իրավունքները, ուզում է դրավել նրա հողերը, վանկել կուսանոցները և չգիտեմ ինչ...

— Հետաքրքրական է հույժ,— և դրամավար Ադրեի խոշոր աչքերը անհագուրեն շարժվեցին իրենց բներում:— Այդ Պապը մի նոր Հուլիանոս չէ՞ արդյոք:

— Ո՛չ, դրամավար, ո՛չ: Սակայն այս Պապն էլ տարօրինակ է. մի կողմից սահմանափակում է նկիզեցու իրավունքները, մյուս կողմից՝ կարգադրում է կաթոլիկոս ձեռնադրեն իրենց եպիսկոպոսները: Մի կողմից թևթևացնում է վիճականներին տուրքերը, մյուս կողմից թուլ է տալիս ուրախանան հնթանոական ձևով: Այս Պապը, որքան կարողացել եմ հասկանալ՝ Հուլիանոսի նման չէ բնավ. նա դեմ չէ քրիստոնեության. ո՛չ: Ամեն շուտ՝ ուզում է ամեն բանով լինել ինքնուրույն: Օրինակ. հողերը գրավելը...

— Բայց դա, այդ հողերը գրավելը, կոմս, ձեզ չի՞ հիշեցնում Դրակքոս եղբայրներին,—նկատեց Ադրեն:—Այդտեղ ավելի համարձակություն եմ տեսնում, քան ինքնուրույն բան:

— Թերևս, դրամավար. թերևս այդ ամենն անում է դանազան գրքերի ու մտքերի ազդեցության տակ: Լսել եմ, որ Գլուստրքոս է կարդում: Արմեն Թոդալոր և Գլուստրքո՛ս...

Աստված ենք ուզում է վարվել Ներսեսի հիմնած անկեղծությունը: Բն ծուլիկի ապաստարան է. ուզում է չինելում խոշոր քահանա, մյուսներին դարձնել ալոսական պաշտոնյա կամ ասնել դրքի մեջ:

— Դա, իմ կարծիքով, վատ չէ, կոմս— ժպտաց Ադոլֆ Բրանդենբուրգ մի անուշ ներողամտու:— Մինչև խոշ խելացի է կարծես... վատ չի լինի մենք էլ օրինակ վերցնենք. մեզ մոտ էլ շատ են քահանաները..

— Բո մեջ խոսում է պինվորականը, բարեկամս: Բայց այդ Թոշնենք,— վրա բերավ Տերենտը մեղմորեն, կարծելով Թե Ադոլֆ զրպարտեց այդ կորին է քաշում իր մտքերն իմանալու:— Այդ ամենը իրանց ներքին գործն է. ինչ կուզեն՝ Թող անեն այս բարբարոսներն իրենց երկրում, իրենց հողի ու քահանաների հետ: Սակայն կա մի խնդիր, որի հանդեպ ես չեմ կարող անտարբեր լինել: Քանիերորդ անգամն է ահա դրանք—այդ աբմեն հոգևորականները— պատմում են, որ Պապն այդ ամենը անում է պարսից կորմն անցնելու նպատակով: Այստեղ արդեն, կրկնում եմ, ես չեմ կարող անտարբեր լինել. զորավար: Մեր երկրի շահերը պահանջում են, որ ես այս խնդրում շատ արթուն լինեմ: Ինձ հայտնված են առույգ փաստեր Պապի ձգտումների, նպատակների մասին: Ինձ թվում է՝ անհամեմատական չէ, որ Պապն այդ ամենն անում է իրոք պարսից կորմն անցնելու, որովհետև արևմուտքի մեջ կան շատ պարտկաներ նախապատրաստել Պապը նրանց ազդեցության տակ է, Թեև պատանի ավելց մի անհայտ կատարել պարտկան ու ազդեցիկ նախարար, բնչպես նշանավոր Հայր-մատրպետն էր, որ առաջ էր Բլզանդիան և բլզանդացիներիս: Ճիշտ է, ես առույգած փաստեր չունեմ, բայց իրը դրանց մի քանի եպիսկոպոսներ ու նախարարներ մխաբերան նույնն են ասում՝ ես չեմ կարող լուրջ նշանակություն չտալ և նույնիսկ այդ մասին չհայտնել իմ կարծիքը:

Զորավար Ադոլֆն իր խոշոր դյութաշարժ աչքերը հառեց Տերենտի երեսը:

— Սակայն, կոմս, ներիր ինձ. դու ասիր, որ դրանք դժգոհներ Չեն, դուցե և ամբաստանում են իրենց Թագավորին: Կարելի՞ է ապստամբ վտահել դրանց, քանի որ դու ինքդ գտնում ես,

քե դրանք անձնական վիրավորանքի համար պատրաստ են թքել քե իրենց երկրի և քե թագավորի վրա:

— Այդպես է, այո: Բայց պարսից կողմն անցնելու միտքն ինձ թվում է հավանական, և սխա ինչո՛ւ: Այն հանգամանքը, որ տրանք իրենք ձեռնադրեցին իրենց կաթողիկոսին՝ սա, անշուշտ, մի բան նշանակում է: Այսօր նկեղեցու կապը կտրել, վաղը քաղաքական... և հեռանալ մեզնից... Իսկ եթե մի անգամ հեռացան՝ այլևս դժվար կլինի մոտեցնել... կանցնեն մեր թշնամիների կողմը և կտրող են մեծամեծ վնասներ հասցնել մեզ: Միևնույն ատյան երկիրը, ինչպես մեր Օգոստոս կայսրն է դիտում, ինչպես դու ևս պիտես, զորավար, եթե ռազմագիտական տեսակետով և եթե մանավանդ հասույթի կողմից անհրաժեշտ է մեզ: Ունեն բնտիր ձիեր, սնասուններ, ցորեն, երկաթ, մեղր և արծաթի հանքեր:

— Հարուստ երկիր է, անշուշտ, չպետք է թողնել մեր ձեռից,— համաձայնեց Արտեմ զորավարը:— Բայց ինձ թվում է, Հռոմո, այդ դժգոհներին էլ շատ չպետք է հավատանք:

— Դրանք հարկավ սպնիլ մարդիկ չեն, զորավար: Մեր միջոցներով ուզում են, երևի, վրեժխնդիրը լինել Պապին իրենց կրած վիրավորանքների համար: Բայց խնդիրն այն է, զորավար, որ այդ Պապն առաջարկում է, այսինքն՝ պարզ չէ առաջարկում կամ պահանջում, այլ հետաքրքրվում է, թե ե՞րբ ենք մեք զորքերը հանելու իր քաղաքներից: Ինձ թվում է, որ եթե մենք հեռանանք՝ նա կանխ ամենայն համարձակ բաներ: Գիշյաներ դամքն է, որ մեր զորքերը մնան Արմենիայի այդ քաղաքներում: Հարկավ, Պապին զայրույթ և երկիրը մեր ազդեցության ներքո պահելու: Իսկ դու, զորավար, կարծում եմ, դեմ չես այս բանին:

— Եթե կայսրն այդպես է ցանկանում,— ծանր խոնարհում տալով Արտեն:

— Իսկ դու, հայ ամիրան, ճանճրանո՞ւմ ևս օտարության մեջ, զորավար:

— Պիտի խոստովանեմ՝ այո: Բայց քանի որ անհրաժեշտ է Բիւանդիայի համար և այս անհամեստ արմենները բարեկամ պահելու համար...

— Ճշմարիտ ասիր, զորավար: Հույժ անհանդիստ ժողովուրդ է. վտանգի մեջ անգամ շարունակ խոսում են՝ իրավունքի և ազատության մասին, իրենց երկրի արժանապատվության մասին: Սակայն չեն հասկանում, որ մեր բարեկամությունն ու հովանավորությունը միայն կարող է փրկել նրանց: Իսկ Պապը, լսել եմ, այն կարծիքի է, թե Արմենիան այնքան հափահաս է, որ կարող է ապրել առանց դայակի:

— Թվում է՝ խելոք և համարձակ մարդ է այդ երիտասարդը,— դլուխը տարուբերեց Աղդե զորավարը:

— Այո, զորավար, պիտի խոստովանեմ՝ խելոք և համարձակ,— ասաց Տերենտը անկեղծությամբ չեշտով:— Ապրում է շարունակ ուժեղ Արմենիա ստեղծելու երազով: Հիմա էլ, լսում եմ, մեկ-մեկ կանչում էր իր երկրի իշխաններին ու նախարարներին և պարտավորեցնում զինվոր ու ձիեր տան մշտական մեծ բանակ պահելու համար: Լավ է, որ բոլորը համաձայն չեն... Իսկ եթե համաձայնեն՝ կարող են, իսկապես, մեծ ուժ կազմել... Ուզում է ունենալ ուժեղ Արմենիա, լինել բոլորովքին ինքնուրույն և, երևի, արհամարհել մեր բարեկամությունը: Բայց հիմա տեսնենք ի՞նչ կասի կայսեր հրավերի առթիվ:

Աղդե զորավարի խոշոր աչքերը զարմանքից կարծես մեծ թուան իրենց բնեղում:

— Ի՞նչ հրավեր, կոմս: Մի՞թե կայսրը հրավիրում է Պապին:

— Այո, զորավար,— ժպտաց Տերենտը,— ես մոռացա սկզբից ասել այդ:

— Դե, ուրեմն, կոմս, ամեն ինչ պարզ է. և՛ ձեր երկյուղն ի զուր:

Այսուհետ Տերենտն ու զորավար Աղդեն բազմանշանակ նայեցին իրար, հասկանալով, երևի, թե ինչ է նշանակում այդ հրավերը. նրանք պիտեին իրենց կայսեր քաղաքականության նպատակները:

— Սակայն չէիտեմ, զորավար, կհամաձայնի՞ պնալ թե ոչ,— փոքր անց կասկած հայտնեց Տերենտը:— Հանկարծ չհամաձայնի:

— Կհամաձայնի՛,— ժպտաց Աղդեն,— արևելցիները մի չա

չոյվում են կայսեր ուշադրությունից: Սա էլ անպայման կչոյվի և կերթա:

— Դու այնքան էլ միամիտ մի կարծիր այդ Պապին, զորավար: Նա կրթվել է մեզ մոտ. ծանոթ է մեր բարքերին. կարող է գլխի ընկնել և հրաժարվել:

— Հազիվ թե, կոմս, հանդգնի հրաժարվել կայսեր հրավիրից,— շարունակեց Աղդեն,— և վերջապես, վստահ եմ, դուք կհամոզեք ձեր պերճախոսությամբ: Ծույլ կոաք, վերջապես, կայսեր նամակը...

— Իսկ եթե՞...

— Այդ մասին կարելի է խոսել նրա պատասխանից հետո, կոմս,— ասավ Աղդեն և շարունակեց հեռաքրքրված:—Մի բան, կոմս, եմ լավ չհասկացա. ինչո՞ւ են արմենները մեզնից դժգոհ...

— Որ երեկոց քաղաքները չենք ազատում, կարծում եմ:

— Իսկ պարսից դեմ օգնելը, նրանց կարծիքով, ձրի պիտի լինե՞լ...

— Այդքանը չեն հասկանում, զորավար:

Եվ մինչև ուշ երեկո Բիզանդիայի այդ երկու զորավարը խոսում էին հայերի և առանձնապես Պապ թագավորի մասին: Մեկը՝ Տերենտը դատապարտում էր նրա հանդգնությունը և ապիկարությունը, որ պահանջում է իր քաղաքներից հանել հոռոմ զորքը. մյուսը, այնուամենայնիվ, երբեմն հիանում էր նրա խիզախության վրա:

— Այսպես թե այնպես, զորավար,— վերջացրեց Տերենտը՝ ձեռները չփելով,— վաղը կորոշվի նրա ճակատագիրը...

***

Հետևյալ օրը Պապի ընդունելության օրն էր:

Պալատում կյանքն սկսվում էր սովորաբար վաղ առավոտից. դրեթե ամենից առաջ զարթնում էր արքայադուստր Երեմիա Ամատունին և լվացվելով ու երկար մազերը սանրելով նստում էր իր մատյանի առաջ. ապա գործի էին անցնում պալատի հարյուրավոր ծառաներն ու նաժիշտները, որ մաքրում, կարգի էին բերում բոլոր սրահները, խորաններն, միջանցքները, վարի ու

ինչպէս հարկերն իրար միացնող ողորկապատ քարե սանդուղները, պատնաղարդ քարե պատշգամները ու անցքերը, թակերը, հովանոցները և առհասարակ մինչնաքերդի պարսպէ ամբողջ մեջտեղը լեցնող չինքերն ու բոլոր տարածութիւնները։ Նոյնը անում էին ծառախնամներն ու ծաղկոցապահները՝ պալատի շուրջը տարածվող ծաղկոցներում և մինչնաքերդի լանջերն ու բլուրքը բռնող ծառաստաններում։ Ապա մինչնաքերդում իրար ետևից բացվում էին «տուն դիվանի», «տուն զանձուց», «տուն ապարիսաց», «տուն պահնորդաց», «տուն պատմուճանակաց»... բացվում էին համբարտանոցները, խոհեվանոցները, և դործակալները, տաճարապետները, հանդերձապետներն ու գինեպետները սկսում էին իրենց աշխատանքն ու կարդադրութիւնները.— գիշերայինքնատ ու հոդնած պահակներին փոխարինում էին նոր, շողշողուն զրահներով ու նիզակներով պահակները թե մինչնաքերդի պոնելի մոտ և թե պալատի մուտքերի առաջ։ Բակով անցնելիս նրանք, պահակապետից ծածուկ, աչքով էին անում ճանապարհին պատահող կամ պատշգամներում երևացող նաժիշտներին, որ ժպտալով խոկուն շրջվում էին մի ձեռով երեսները ծածկելով. իսկ պահակները փոխարինելով իրենց ընկերներին, անշարժանում էին նիզակները ուղիղ բռնած, կարծես մարդիկ չէին նեին, այլ ճուլված արձաններ, մանավանդ պալատի մուտքերի առաջ, ուր ամեն վայրկեան կարող էին երևալ նախարարներ ու իշխաններ, անդամ ինքը թագավորը։

Իսկ թագավորի ընդունելութիւնն սկսվում էր ուղիղ կեսօրին, երբ պապը ծիրանին ուսերին և կարմիր կոշիկները հագին դալիս էր գահասրահ. ասենք նա ընդունում էր ո՛րտեղ պատահում էր և ե՛րբ պատահում էր. բայց պաշտոնական ընդունելութիւնները լինում էին շաբաթը երկու անգամ՝ երբեմն պալատական ավագանիների ներկայութեամբ, երբեմն առանց նրանց, բայց միշտ դպիրը հետը, որ նրա աչ կողմը կանգնած՝ կարդում էր խնդրագիրը կամ նշում կարգադրութիւնները և հրամանները։

Սակայն այդ օրն ընդունելութեանը ներկա էին շատ ավագանիներ ու նախարարներ՝ հազարապետ Ամատունու գլխաւորութեամբ. նրանք լայն թեզանիքով տարբեր գունի պատմու-

ճաններ հագած նստել էին իրենց բարձերի վրա, ոմանք նաև թիկնոցով նգուլրների ու բազկաթոռների: Շատերի ներկայության պատճառը մի խորհրդակցություն էր, որ վերաբերում էր սահմանապահ զորքի թիվն ավելացնելուն: Խորհրդակցությունը նոր էր վերջացել, երբ ներս մտավ արարողապետը և գլուխ խնդրեց գահին նստած թագավորին:

— Եկել են, արքա, պատգամավորները Մանանսաղի, Դարանագի, նաև կարինի գավառներից, և ինդրում են քո տեսությունը:

— Հրավիրիր,— ասավ թագավորը:

Դրանից հետո գահատարահի ոսկեզօծ երկփեղկ դռները բացվեցին և կից գահլիճից՝ իրար հետևից ներս մտան յոթ հոգի՝ ավագության կարգով, բոլորը հագած միատեսակ մոուագույն կապաններ, որ հասնում էին մինչև նրանց ծնկները, կապած միատեսակ լայնե գոտիներ, որոնց ծայրերը կախվում էին նրանց ձախ կողքերին: Ամենից առաջ ներս մտավ մի կարճ ու սլինդ ծերունի՝ բոլորովին ճերմակ գլխով ու մորուսով, այնուհետև մորուսներն աստիճանաբար սևանում էին: Մեկը մյուսի հետևից ներս գալով՝ նրանք գուլդ ձեռները լորներին դրած՝ երկուսակվելով խոնարհումներ արին այնպես, միանման ու միատեսակ, կարծես մեկը հատուկ մարզել էր նրանց այդ արվեստի մեջ: Երբ ամենքը ներս մտան և շարք կանգնեցին՝ երեսները դեպի թագավորը, կարճ ու ճերմակ ծերունին, ըստ երևույթին նրանց գլխավորն ու առաջնորդը՝ գլանած մի մագաղաթ ձեռին, երկու քայլ առաջ եկավ, մոտեցավ գահի աստիճանին և, ավելի մեծ մի խոնարհում անելով, որ քիչ էր մնում գլուխը գիպչեր պատվանդանի աստիճանին, առանց դիրքը փոխելու, կռացած՝ գլանած մագաղաթը մեկնեց թագավորին, և երբ գրաց գրությունն առնվեց ձեռից՝ նա, կամաց ուղղվելով, մնաց նույն տեղը կանգնած, աչքերը թագավորին հառած: Իսկ գասլը մագաղաթն առնելով՝ արձակեց նրա մետաքսյա ժապավենը, գլանը բանալով՝ վերից վար նայեց նրան, ապա սրտեց աչ կողմը կանգնած արքայատիպիր Երեմիային.

— Կարդա՛...

Պատգամավորությունը բիզանդական գրքերի նստած գա-

վտանգից էր. դրանք երկրորդական աղվամականներ էին եւ մի երկու վաճառական: Իրենց գրության մեջ նրանք բոլոր քաղաքացիներին՝ թե մեծի և թե փոքրի կողմից (ինչպես դրում էին) «պերսում էին աղերսագին ու արտասվանոք» ազատել իրենց «հուսոմ պոլքերի նեղությունից ու չարչարանքից դժնի»:

— «Մեծ է մեր տառապանքն, արքա,— կարդում էր Երեմիան,— մեր կյանքն անապահով, մեր ինչքը վտանգված, իսկ հոտոմն անողորմ... Ապրում ենք հարատև տագնապի ու երկյուղի մեջ»...

Գրությունը շարունակվում էր այսպես և վերջանում.

— Փրկիր մեզ, արքա...

Երբ Երեմիան ավարտեց պերսագրի ընթերցումը՝ Թագավորը խաժ աչքերը կկոցած նայեց նախ չարքոլ նստած ավագանիներին, կարծես ստուգելու, թե ինչ ազդեցություն թողեց գրությունը, ապա վարի շուրթը ատամի տակ դնելով՝ դարձավ պահվ պատվանդանի մոտ մեկուսի կանգնած ծերունուն՝ պատասխանատվության դեմ ավելորդին, որ ընթերցման ամբողջ ընթացքում իր ծերունական ուշիմ աչքերով նայում էր մերթ գրությունը կարդացող արքայազորդուն, մերթ Թագավորին:

— Ունե՞ս ինչ ավելացնելու,— հարցրեց Պապը նրան:

Ծերունին ձեռքը կրծքին դնելով՝ նորից խոնարհում արավ:

— Մեր ողջ ասելիքն, արքա, գրված է այնտեղ,— նա ձեռը պարզեց դեպի Երեմիան, նրա ձեռի գրությունը:— Մենք եկել ենք աղերսելու, որ ազատես մեզ հոտոմներից, վե, արքա, հնազոր չէ ապրել նրանց նեղության մեջ: Բավական չէ նստում են անեծում մեր, ուտում են հացը մեր և պահանջում ապուրներ պես-պես, այլև դիշերներ ծեծում են մեր դռները և սոխում ծառայել իրենց...

Ծերունու ձայնը կերկերաց. նա լռեց մի վայրկյան, նայեց նորից Երեմիային ու Թագավորին և շարունակեց հուզված.

— Ծպղրում են անդամ մեր հացը, մեր ապուրները ու սովորությունները, արքա: Մեր հարսներ, աղջիկներ չեն կարող փողոց ելնել, հոտոմ զինվորները, ներիր, արքա, ծերունուս համարձակությունը, դարպասում են նրանց... Երբ այս մասին հայտնեցինք հոտոմ դրոշավորին. «Կչափազանցնեք,— ասեց,— մեր

զինվորներ պաշտպանում են ձեզ պարսիկներից՝ փոքր մի նեղությունից մի վշտանաք... Ազատիր, արքա, մեզ հոռոմների պաշտպանությունից...

Ծերունու ձայնը բեկվեց և նրա աչքերում արցունք երևաց։ Այդ ժամանակ, կարծես ծերունուն օգնելու համար, նրա եռևից անհամբեր մի քայլ արավ ու առաջ նկավ մի այլ սպասուհամարտ.

— Ոտնակոխում են, արքա, մեր պատիվը և պատիվը,— խոսեց նա թավ ձայնով։— Առում են՝ մենք ձեզ փրկում ենք պարսիկից, սեռաք է կատարեք, ուրեմն, ինչ պահանջում ենք։ Իսկ նրանք պահանջում են անկարելին, անհնարինը։ Կարելի չէ տալ, արքա։ Փրկություն ենք աղերսում։

Ավարտելով իր համառոտ խոսքը՝ այդ մարդը ձիուը կրծքին խանարհում արավ ավելի երկար, քան ընդունված էր. նրան հետևեցին և մյուս պատգամավորները, բացի առջևում կանգնած ճերմակ ծերունուց, որ խոր նայեց վերջին խոսողին՝ դժգոհ, որ ընդհատեց նրան։

— Ուրիշ ի՞նչ,— հարցրեց թագավորը, ուշադիր նայելով այդ հուզված կարճ ու պինդ ծերունուն։

— Այսքանը, արքա,— նորից գլուխ խոնեցրեց ծերունին։

Նկավ դժվար վայրկյանը Պապի համար. նա զգում էր, որ սեռաք է դոհացնող մի պատասխան տա պատգամավորությանը, բայց չգիտեր ինչ ասել։ Ասեր, թե չուտով կազատի նրանց հոռոմներից—անկարելի էր, որովհետև դեռ պետք էր խոսել ու բանակցել. ասեր՝ չի կարող օգնել կամ ազատել—նույնպես չէր կարելի, ուստի և խոստացավ «խորհել աղերսագրի մասին և անել անհրաժեշտը, ապա կարգադրեց՝ կերակրել և հանգիստ տալ պատգամավորությանը «արքունի հյուրատունը»։ Իսկ երբ պատգամավորները խոնարհումով ու շարքով, երեսները դեպի թագավորը ետ-ետ գնացին և դահավարահի երկաթեղկանի դուռը ծածկվեց նանց հետևից, Պապը նայեց բարձերին նստած նախարարներին, առանձնապես Ազամ Գնթունուն և ծեր Դավիթ Գնթունուն, որ նստած իսկ հենվել էր ձեռնափայտին։

— Ի՞նչ կասեք, տեր նախարարներ, ի՞նչ խորհուրդ կտաք մեզ,—խոսեց թագավորը՝ մռայհոգ ու փոխված ձայնով։—Հի-

չում ևՙք, տակավին Զլրավից հետո, երբ ես կամենում էի խոսել այդ գավառները հոռոմ զորքից մաքրելու մասին, դուք ասացիք «վաղաժամ է, իրենք հոռոմները կքաշվեն»... Անցավ վեց ամիս՝ ես կրկին հարց հարուցի, դուք նորից խորհուրդ տվիք «սպասենք ասկավ մի»... Սպասեցինք: Բայց երկրորդ տարին է ահա նրանք չեն շարժվում: Մի տարի չանցած՝ ես այնուամենայնիվ Տերենտին հիշեցրի այդ մասին: Նա խոստացավ դրել կայսեր, և դարձյալ ոչինչ: Իսկ մի այլ անգամ, երբ խոսք եղավ այդ մասին՝ Տերենտը հայտնեց, թե լուր ունեն, որ պարսիկները նոր հարձակում են պատրաստում Արմենիայի վրա, ուստի կայսրը բարկ է հանարում զորքը թողնել՝ Արմենիային օգնելու... Սակայն,— պապը լայն շունչ քաշեց,—թվում է ինձ, ես նախապարտներ, որ հոռոմները մտադիր չեն հեռանալ մեր քաղաքներից ու գավառներից: Հիմա, իբրև վարձ մարդիկ, ովքեր ինձ մի խորհուրդ՝ ի՞նչպես վարվել...

Ու պապը կրկին ընդհանուր հայացքով նայեց բոլորին:

Վայրկյանը ծանր էր և լուրջ. յուրաքանչյուրն այնպես էր զգում, թե թագավորը նայում է իրեն և իրենից է սպասում այդ խնդրի լուծումը: Այդ զգաց հատկապես կարծես Զենոն Գնունին և անհանգիստ մի շարժում արավ:

— Ես, արքա,— սկսեց նա հանդարտ ձայնով,— կցանկանայի, որ երկու մեծ պետություն միմյանց անհաշտացնենք մեզ, և...

Բայց պապը անսպասելի հուզված ընդհատեց նրան:

— Խոսքը մեր գավառների մասին է, տեր Գնունի: Մենք անիրավ պահանջ չենք անում: Ջի՞ որ նրանք եկան օգնության պատրվակով և, ոչինչ չարած, նստեցին Կարինի, Մանանալի, ու Դարանալի գավառներում, թողած Ուռհայ և մյուս քաղաքները որ դարձյալ բարեկամության անունով բռնել են իմ հոր օրով: Նստեցին և այլևս չեն ուզում հեռանալ: Երբ վերջերս մեկ-երկու հիշեցրել եմ Տերենտին՝ նա ինձ ասել է անորոշ պատասխաններ, թեև ինքը համամիտ է ինձ, համակրում է մեզ...

— Ինձ թվում է, արքա,— խոսեց նորից Զենոնը, հարգանքով սպասելով որ թագավորը վերջացնի,— թվում է որ խնդիրը պետք է լուծել խաղաղ ճանապարհով:

— Կարծեմ մինչև հիմա ուրիշ կերպ չենք վարվել,— վրա բերավ Պապը։— Չենքի չենք դիմել։

— Ես ուզում եմ ասել՝ պետք է մոտածել ապրելիկ պատճառաբանություններ։

— Տեր Գնունի, ես Տերենտին ասել եմ, որ ժողովուրդը նեղվում է, հոտում զոլքի ծախքերից։ Մի՞թե սա և այս պատգամավորության պատճառաբանությունները պակա՞ս ապրելիկ են։ Սակայն ինձ թվում է, որ նրանք պարզապես չեն ուզում հեռանալ. այդ գավառները թերևս համարում են իրենց օդնության վարձը—քմծիծաղեց Պապը,— այն, որ կանգնեցին մեր թիկունքում, ասելով թե՝ նեղվենք՝ կգանք օդնության... Եվ չեկան, տեսնելով հազիվ ենք չափվում պարսից զերազանց ուժերի հետ։ Ուրեմն ինչ խորհուրդ ես տալիս, տեր Գնունի. համբերե՞նք և սպասե՞նք...

Տիրեց ծանր լռություն։ Բոլորը նորից նայեցին Չենոնի կողմը։

Բայց նախ քան Չենոնը կպատասխաներ՝ վեր կացավ նրա բարեկամ Օտա Ապահունին՝ անվիզ գլուխն ուսերի մեջ և սասալ դիրքությունից չնչարգել ձայնով.

— Արքա, թույլ տուր նկատել, որ տեր Գնունին ճշմարիտ է ասում։ Պետք է այնպես անել, որ թշնամությունն չծագի։ Թողնենք՝ հեռանան իրենց կամքով։ Տեր Գնունին բարի խորհուրդ է տալիս, արքա։ Պետք է լուծել խաղաղ ճանապարհով և դիջողաբար...

Այդքանը բավական հղավ. պալատականներից ոմանք, որ այդ կարծիքի էին, բայց լռում էին, աչխուժացան հանկարծ.

— Այո, դիջողաբար, արքա, դիջողաբար,— լավեցին մի քանի անհամարձակ ձայներ։

Պապը զարմացած, վիզը երկարած նայեց այդ ձայների կողմը. նրա դեմքում մի սոսկալի անցավ, աչ աչքը խաղաց, և նա հանկարծ վեր կացավ դահից այնպես ընդոստա, որ ծիրանին ընկավ ուսերից։

— Դիջողաբար,— հևաց նա։— Դիջողաբար... Դյուրին է ասել։ Դուք, որ մի կտոր հողի համար ահագին ինովություն ու արյունհեղություն եք սկսում և երբեք չեք դիջում մեկը

մյուսից, ուզո՞ւմ եք որ ես քաղաքներ ու գավառներ դիզեմ հռոմեացիների, իմ ժողովուրդը տամ նրանց, երբ մենք ունենք պետություն և իշխանություն... Ձեր նախարարական արժանապատվությունը թույլ կտա՞ արդյոք, որ ես վայելեմ այդպես. թե՞ ուզում եք, որ ծիծաղելի դառնամ պատմիչների, հռոմեացիների և ձեր առաջ: Այո, և ձեր, որ ամեն տեղ պատմեք ու չարտահնդաք, թե Պապը հայրենիքը ծախում է, որ այդ գնով նստի գահի վրա: Ո՛չ, այս գահն ինձ պետք չէ այդ գնով...— Պապը կանգ առավ հուզումից հևալով. նրա մեծ ափխտակ ճակատը դողում էին:— Զիլոդաբա՛ր... Ո՛չ, ինձ այդ գնով գահ ու թագ հարկավոր չէ,— կրկնեց նա և հանկարծ թագը դրավ քիսած ծերանալի վրա և իջավ չարունակելով.—հարկավոր չէ, երբ իմ երկրի հողի մի մասը պիտի գանվի հռոմեացիների ձեռին: Ես չեմ պահանջում՝ գնալ կռվել: Ես ձեզնից միայն խորհուրդ եմ հարցնում, իսկ դուք՝ «զիլոդաբա՛ր»...

Ավագանիները տարակուսյալ, ոմանք նաև երկյուղով, լսեցին Օտա Ապահունին, նայեցին իրար, իսկ երբ թագավորը վերջացրեց և ամենքը մնացին լուռ՝ ձայն խնդրեց ծերունի սվատանի Դավիթ Գնունին և ասավ առանց բարձից ելնելու՝

— Հանգստացիր, արքա: Պատերազմել հռոմեացիների դեմ՝ չենք կարող մենք, քան դի նրանք մեծ են, մենք փոքր և քան դի մենք արդեն ունենք մի մեծ թշնամի՝ Պարսկաստանը. երկրորդ ստեղծելը վտանգավոր է: Բայց խնդիրը պետք է և կարելի է լուծել խաղաղ ճանապարհով: Այո, արքա... այս է ասում ինձ երկարամյա փորձը,—ասավ նա անգամ ձեռնամխայտը հատակին դիպցնելով, կարծես ասածները հաստատելու ցանկությամբ:

— Բայց ինձ ասում են «զիլոդաբա՛ր»,— լռդհատուց նրան թագավորը, կարծելով թե դա մեծ մասն կարծիքն է:— Ով ուզում է «զիլոդաբար»— թող ինքը նստի այս գահին և վարվի «զիլոդաբար»: Ես չէի ցանկանա թագավորել այդ գավառների վրա... Ոչ, տեր նախարարներ... ես դեռ չեմ ընկճել, ստորացել այդքան...

Զենոն Գնունին և Օտա Ապահունին գլուխները իջեցրին. Օտայի հևքն արագացավ:

— Հանգստացիր, արքա,— նորից խոսեց ծերունի Գնուն:— Մենք մեր կամքով, հարկավ, ոչինչ չենք գիջի հռոմեացիներին, բայց կան բանակցելու ձևեր, եղանակներ: Պետք է փորձել...

Բաթ Սահառունին, որ ամբողջ ժամանակ անհանգիստ նըստած, խոշոր հարաշարժ աչքերով խոսողներին էր նայում ու վեր կենալու և մի բան ասելու փորձեր անում, հանկարծ ելավ տեղից կապած սուրն ուղղելով:

— Ես լսեցի, արքա, սատրապամալորներին և չեմ կարող հանդիստ նստել. թույլ տուր՝ մի քանի խոսք: Անպատվություն է, որ մեր գավառներն ու քաղաքներն այսքան ժամանակ մնան հռոմեների ձեռին: Գալ երբև բարեկամ ու դաշնակից և նստել որպես թշնամի... Սա ոչ միայն անարդար է, վիրավորական, այլև արհամարհանք է, արքա, և անպատվություն: Այդպես չի կարող վարվել բարեկամ պետությունը: Զղիտեմ՝ սա համարում են իրենց տուտ օդնության վարձը, թե չար մի դիտավորությամբ են նստում մեր քաղաքներում ու չինեերում... Ես նեղսրտությունն եմ խնդրում; արքա, որ չեմ կարող հանդիստ խոսել. ես ա՛յնքան հուզված եմ պատգամավորների պատմածներից...

— Ի՞նչ ես առաջարկում, տեր Սահառունի,— հարցրեց Պապը՝ նրան ընդմիջելով:

— Ես առաջարկ չունեմ, արքա, ես խնդրում եմ՝ իրավունք. թաւդ տուր ինձ մեր գնդերով դնալ-վերցնել մեր քաղաքները: Այնտեղ, ուր չի պղտում խոսքը, պետք է հանդես գա զենքը: Ահա իմ խնդրանքն, արքա:

Լսվեցին հավանության շարժումներ և ձայներ:— Իրավ է, իրավ է...

— Քո ճգտումը, Բաթ, պղնիվ է,— ասավ Պապը,— բայց այդ քայլն անելու համար պետք է հարցնել սպարապետի կարծիքը... սպարապետի, որ, ավաղ, այստեղ չէ,— ավելացրեց Պապը, իմանալով, որ սպարապետը դեմ է այդ միջոցին՝ պատերազմի առիթ չտալու համար:

— Տեր սպարապետը, արքա, որքան գիտեմ, ինքնհուրդ չի տալիս գենքի դիմելու: Մամիկոնենից տերը հույս ունի ամեն ինչ հարթել խաղաղությամբ: Բայց քո պատիվը, արքա, մեր աշ-

խարհի պատիվը պահանջում է, որ մենք՝ հայ զորականներս հանգիստ չնայենք այս բանին: Ինչ էլ լուծվում խաղաղ միջոցով, պիտի լուծել զենքով,—կրկնեց նա:—Արժանապատվության խնդիր է: Եվ, վերջապես, մենք չենք ուզում դրավել ուրիշի հողը, այլ աղատել մեր քաղաքները, մեր եղբայրներին...

Բաթը դեռ չէր ավարտել, երբ հանկարծ դահլիճի դուռը բացվեց և սպարապետը, ներս մտնելով, հայտարարեց հանդիսավոր հարգանքով.

— Բիզանդական զորավար-դեսպան Տերենտ կոմսը:

Ամբողջ ներկաները զարմացած իրար նայեցին:

— Պատեհ ժամին եկավ,— ասավ մեկը:— Ահավասիկ լավ առիթ, սրքա: Պետք է խոսել քաղաքների մասին:

— Եվ կտրուկ,— ավելացրեց մի ուրիշը:

Իսկ Բաթը ձեռը թափ տվեց:

— Ես այլ մարդուն չեմ սիրում, սրքա,— ասավ նա հուզված:— Զգեստ է հավատալ նրան և նրա խոստումներին:

— Դարձյա՞լ նստեցիր կասկածիդ նժույգը,— նկատեց Պապը՝ Բաթին դառնալով:— Նա մեզ ավելի բարեկամ է, Բաթ, քան բոլոր հռոմեները միասին: Հրամիրիր,— կարգադրեց Պապը սպարապետին:

Բայց ոա նախ քան դուրս գալը՝ մոտեցավ դահլին, ընկած ծխանին վերցրեց քցեց Թագավորի ուսերին, իսկ Թագը երկու ձեռքով վերցնելով խնամքով դրեց նրա գլխին, «Քուչլ տուր, սրքա» ասելով. ապա դուրս գնաց արագ:

***

Փոքր անց դահլիճի դռները նորից բացվեցին և ներս մտավ կոմս Տերենտը՝ մանրչափազուն մետաքս թիկնոցով, մազերը բուրավետ յուղով օծած, ինչպես ընդունված էր, և գիմքի ու աչքերի հեղահամբույր մի արտահայտությամբ:

Դռնից երկու քայլ առաջ գալով՝ նա կանգ առավ մեկեն և աջ ձեռը թիկնոցի տակից հանելով՝ բարձրացրեց ողջույնի համար, գլուխ տվեց առանց կռանալու, ինչպես սովոր էին հայ նախարարներն ու իշխանները, ապա նորից առաջ եկավ դեպի

դահը և կրկին թեթև մի գլուխ խոնարհեց նախ Պապին, հետո հոգևորների վրա նստոտած նախարարներին:

— Քեզ ուրախ լուր, արքա,— սկսեց Տերենտը կանգնած և հանդիսավոր:— Իմ մեծազոր Օգոստոս կայսրը ողջունում է քեզ, արքա, և հրավիրում է քեզ եղբայրական խորհրդակցության՝ հատարակաց օգուտի համար: Եվ ես մեծազուն ուրախությամբ եկա այս բարի լուրը քեզ ավետելու:

Ավարտելով իր կարճ խոսքը՝ Տերենտը նայեց գահատարհում գտնվող նախարարներին՝ տեսնելու համար կարծես, թե ինչ տպավորություն է թողնում կայսեր հրավերը:

Պապը, ոտի կանգնելով, շնորհակալություն հայտնեց այդ «մեծ պատվի համար, որին արժանացնում է իրեն Բիզանդիայի մեծազոր կայսրը» և ապա, դեսպանին հրավիրելով նըստել, մտերմաբար հայտնեց, թե ինչի մասին էին խոսում քիչ առաջ:

— Իմ նախարարները, կոմս, հետաքրքիր են իմանալ, թե ի՞րը են հեռանում ձեր զորքերը մեր քաղաքներից, որովհետև, ինչպես լսում ենք, ժողովուրդը շատ է նեղվում զորքից...— ասաց նա, ուշադիր նայելով Տերենտի հեզահամբույր դեմքին:

«Ինչո՞ւ այսպես անմիջապես» մտածեց Չենոն Գնունին, զարմանալով Պապի վրա. «Ի՜նչ անքաղաքավարություն»...

— Ահավասիկ, արքա, շատ լավ է,— խոսեց կոմսը մեղմ ու մտերիմ,— երբ հաճես գնալ տեսակցության՝ այդ խնդիրը ինքդ կլուծես կայսեր հետ: Եվ դա նույնիսկ խնդիր չէ, արքա. մեր զորքերի մնալն այդ քաղաքներում լոկ զգուշություն է պարսից բացահայտ սխուամների դեմ:

Նախարարները դոհությամբ նայեցին իրար. բացի Բաթից, որ տակավին հուզված էր, անձամբ կարմրած, և բացի Օտա Ապահունուց, որ հետամ էր չնչարդել:

— Դու գիտես, արքա, որ ես միշտ գրել եմ կայսեր, թե անհրաժեշտ է լուծել այդ խնդիրը,— շարունակեց Տերենտը նույն մտերմական եղանակով,— սակայն ինչ-ինչ նկատառումներ խանգարել են, երևի... հավանորեն՝ պարսից բացահայտ սխուամները, կրկնեց Տերենտը, նայելով այս անգամ ավագանիներին:— Ես միշտ եղել եմ, արքա, Արմենիայի բարեկամը և

կյանքանայի նրա բարիքը... Ես համաձայն եմ, որ ժողովուրդը կարող է նեղվել մեր գործերի ներկայությունից, կարող ենք լինել և դժգոհությունները, բայց այդ բոլորը պարսիկների պատճառով,— նա նորից նայեց նախարարներին և ապա դաձալ պատին:— Ահա և լավ առիթ, արքա. երբ գնաս և անձամբ խոսես կայսեր հետ՝ ամեն բան, հարկավ, կլուծվի բարեհաջող... ես սինչուշտ եմ:

— Այսպես, աղնիվ կոմս. սակայն դու չասիր, թե ինչո՛ւ համար է հրավիրում ինձ իմ մեծ բարեկամ Վաղես կայսրը:

— Ահավասիկ, արքա. Թուլլ տուր կարդալ,— և Տերենտը ամուր կանդնելով՝ թիկնոցի տակից հանեց կայսեր գլանաձև ու ժապավենակապ նամակը ու, հարգանքով ճակատին դնելով, կարդաց. «Հայտնիր իմ եղբայր Պապ Թագավորին, որ կայսրը հրավիրում է իրեն և ցանկանում է խոսել հասարակաց օգուտի մասին: Տուր իմ կողմից նրան ողջույն և ասա՝ Թող չտապի: քանի ես դանվում եմ Տարսոնում»...

Սպասաղանիներից մի քանիսը բավականությամբ իրար նայեցին: Իսկ Տերենտը, ընթերցումն ավարտելով, նորից գլանեց կայսեր նամակը, մտածկրեց ճակատին և նորից դրեց թիկնոցի ներսի գրպանը, ինքնանցիկ մի հայացք նետելով ներկաների վրա, կամենալով նորից իմանալ կարծես թե ինչ տպավորություն թողեց կայսեր հրավերը:

— Եվ հիմա, արքա,— շարունակեց նա այդ բոլորից հետո,—կուզեի իմանալ, թե ե՞րբ ի վիճակի կլինես գնալու, որպեսզի յուր ուղարկեմ իմ կայսեր:

Սովորաբար, երբ Տերենտը կայսեր նամակները մատին հայտնում էր Պապին, թե կայսրն առանձնապես ողջունում է նրան, Պապը միշտ ուրախ էր լինում այդ ուշադրությունից, այս անգամ սակայն Տերենտը, ուրախությանի փոխարեն, Պապի դեմքին մտահոգություն նկատելով, ավելացրեց.

— Երևակայում եմ, արքա, որքան հաճո է լինելու այդ տեղակությունը և մանավանդ արդյունավետ՝ Արմենիայի համար:

— Ջեմ կասկածում,— ասավ Պապը մտախոհ:

— Հույս ունեմ մեկնելու օրվա մասին ինձ կհայտնվի վա-

ղօրոք, արքա, որ ես անեմ պարտ ու պատշաճը՝ քո ընդունելությեան համար:

— Շնորհակալություն, ազնիվ կոմս,— ասավ Պապը:— Ես առայժմ կմտածեմ, թե ե՛րբ է հարմար և ե՛րբ կարելի է մեկնել:

— Հույս ունեմ, արքա, դա կլինի շուտ, քանի դեռ կայսրը դանվում է Տարսոն:

— Կարծում եմ, հարգելի կոմս,—պլխով արավ Պապը, նայելով շարքով նստած ավագանիներին, որոնք թվում էր դոհ էին կայսեր արած պատվի համար. մեկի դեմքին մինչևիսկ կարդաց այն միտքը, թե մենք այստեղ խզուր խոսում, վիճում ենք դավառների մասին, մինչդեռ այդ խնդիրն ահա լուծվում է կայսեր մի հրավերով:

Երբ Տերենտը բծղանդական քաղաքավարությամբ հրաժեշտ տվեց ու գնաց՝ ավագանիներից մեկը նկատեց.

— Քաղաքների խնդիրը հիմա կլուծվի ինքնին. կայսրն ինքը կվարդապետի զորքը հանել մեր քաղաքներից և ավարտ:

— Ես նույնպես կարծում եմ,— ասավ մի ուրիշը:

Իսկ Պապը նայում էր նրանց և մտածում, թե արդյոք վաղեմն ինչո՞ւ է հրավիրում իրեն, և այն էլ ոչ թե Բիզանդիոն՝ այլ... Տարսոն. և պե՞տք է արդյոք ընդունել այդ հրավերը, թե հրաժարվել...

«Բայց կարելի՞ է հրաժարվել,— ասավ նա մտքում,— կարելի՞ է չընդունել կայսեր հրավերը»... Մյուս կողմից նրան հետաքրքրում էր, թե ինչն է արդյոք այդ հրավերի առիթը: Սկզբում, եղավ մի վայրկյան, որ նա կարծես ուրախացավ կայսեր այդ ուշադրությունից, սակայն մտածելով հրավերի անորոշության վրա և մանավանդ այն մասին, որ հրավերն իրեն չէր ուղղված՝ նա ընկավ երկմտության մեջ. նոր պատերազմ է ծրագրում արդյոք կայսրը և ուզում է իրեն ապահովել հայոց աշխարհի դաշնակցությամբ, թե կան այլ խնդիրներ... Բայց ի՞նչ խնդիրներ կարող են լինել դրանք, որ կայսրը դիմել է այսպիսի արտակարգ միջոցի—հրավիրում է Տարսոն...

Ու երկու-երեք օր Պապը չէր կարողանում վճռել իր դնալու խնդիրը. մանավանդ հիշելով սկսած գործերը, նորոգումները, որ առանց իր ղեկավարության ու մասնակցության կարող էին

դանդաղել կամ մնալ կիսատ—նա տատանվում էր. առանձնապես ճանապարհի երկարությունն ու դժվարությունները հաճելի ոչինչ չէին խոստանում: Նա մտածում էր, որ հրավերի նպատակը դոնե որոշ լիներ՝ թերևս դա մեղմեր շատ անախորժությունները: Սակայն, խնդրին այլ կողմից նայելով՝ դժում էր, որ հրաժարվել մի այդպիսի հրավերից՝ դժվար կլիներ. նախ անհարմար էր, երկրորդ՝ հրաժարումը պետք է ունենար լուրջ պատճառ... Թերևս, մտածում էր Պապը, իր մեկնումը կարելի է հետաձգել որոշ պատճառաբանությամբ, մինչև կիմացվեր հրավերի բուն առիթը... Բայց այս մտքի վրա նա երկար կանգ չէր առնում և դարձյալ խորհում էր, թե եթե այդ հրավերը մի շատ կարևոր խնդրի համար է՝ ինչո՞ւ հապա կայսրն ինքը հոտուկ նամակով չի դիմել երեն (ինչպես ընդունված է թագավորների մեջ), այլ հրավիրում է դեսպանի միջոցով:

Այնուամենայնիվ հրավերը հրավեր էր, կարելի էր թերևս և դեսպանի միջոցով, ու հրաժարվել դժվար էր, իսկ հետաքրքրը, ներան թվում էր, կդիմավեր քաղաքավարի հրաժարում, մի բան, որից կարող էին ծագել անախորժություններ, մանավանդ վաղեմի նման կատակածոտ ու չար մարդը կարող էր անել վատ հետևություններ: Եվ եթե պետք էր ընդունել այդ հրավերն ու մեկնել—դա կարելի էր անել միայն և միայն քաղաքների հարցը խաղաղությամբ լուծելու համար: Իր այս մտածումների միջոցին Պապը մեկ-երկու անգամ հիշեց Մուշեղին և ցավեց, որ նա իր մոտ չէր. թերևս նա մի ցանկալի խորհուրդ տար: Բայց սպարապետը, ինչպես լսել էր, վիրավորվել էր իրենից, որ առանց նրա դիտության՝ վերացրել էր եկեղեցական տուրքերը, արդելել էր կաթողիկոսին կեսարիա գնալ, և վերջին տեսակցությունից հետո այլևս չէր գալիս Դվին. կատարում էր սպարապետական իր պաշտոնը բարեխղճորեն՝ գնում էր սահմանները, բերդերը, լինում էր զորքի մոտ, բայց չէր գալիս պարտ, ասելով թե՝ ինքը միայն զինվորական է: Այժմ Պապին հետաքրքրում էր նրա կարծիքը... Այնուհանդերձ Պապը խորհրդակցեց մի քանի պալատականների ու ավագանիների հետ, որոնց մեջ էին Ատամ Գնթունին, իր վերստացած կալվածներից եկած իշխան Սպանդարատ Կամսարականը, Զենոն Գնունին, Բաթը և

ուրքայատպիր Երեմիան: Մի երկուսը՝ Գնթունին և Զենոն Գնունին հրավերը համարում էին մեծ պատիվ և պատրաստ էին, որ պետք է ընդունել և գնալ, մանավանդ որ այդ այցելությամբ կարելի էր լուծել քաղաքների խնդիրը: Մյուսները, ինչպես Քչիան կամասարականը, Երեմիան և ուրիշները տարակուսում էին, թե ռուսպողական ի՞նչ կա արդյոք, որ կայսրը հրավիրում է հատկապես Տարսոն. եթե կան խնդիրներ՝ կարող էր հրավերի հետ միասին հայտնել դեսպանի միջոցով, եթե կարևոր չէ համարել հատուկ նամակ գրելը:

Բայց թե առաջինները և թե երկրորդները գալիս էին միևնույն եզրակացության, թե կայսեր հրավերը չընդունելը կամ հետաձգելը կմեկնաբանվի վատ մտքով, պետք է գնալ: Միայն Բաբին էր, որ դեմ էր: Նա ասում էր.

— Ինձ թվում է՝ կայսրը բարենպատակ գործի համար չէ կանչում: Լիներ բարենպատակ՝ կհայտներ Տերենտի միջոցով: Հետևաբար գնալու կարիք չկա:

Երբ նրան հարցրին ինչո՞ւ— նա բացատրել չկարողացավ:

— Ես զգում եմ միայն, որ չպետք է գնալ,— ասում էր նա, —և այդ Տերենտ կոմսին էլ չպետք է հավատալ...

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Պայծառ կեսօր էր: Եվրատի ողորկ ափերով մի մեծ քարավան էր գնում դեպի հարավ, ավելի շուտ մի մեծ ասպահուժք՝ հագարի հասնող ձիավորներով, որոնց մեծ մասը զինվորներ էին՝ նիզակներով, տեգերով զինված, շատերը թրեր կամ նրանց կապած, մի մասն աղեղներն ուսներին և կապարճները կողքերից կախ: Ու գնում էին նրանք թեև մասերի բաժանված, բայց տարածությամբ իրարից հեռու, բայց համաչափ ու հանդիսավոր ընթացքով: Աչքի էին ընկնում ոչ միայն նրանց զենքերը, այլև հագուստները, որ նոր էին և մաքուր: Կային նույնիսկ խմբեր, որ հագնված էին անգամ չքեղ. ունեին մետաքս հագուստներ, թավշյա թիկնոցներ և արծաթե ու ոսկե զարդեր. նրանց ձիերն անգամ տարբերվում էին մյուս խմբերից իրենց հարուստ սարքով. ունեին արծաթապատ, ակնազարդ պախուրցներ ու կրծքակալներ, կարմիր կաշվե սանձեր ու թամբեր և ոսկեզուն ծոպերով կեղտոտ ծածկոցներ, որ հասնում էին մինչև նրանց վորտատակերը:

Քարավանի հետ միասին, նրա ետևից գնում էին բազմատեսակ իրերով ու հակերով բեռնված ձիեր, ջորիներ և ուղտեր՝ պարզարված գույնզգույն սանձերով, գույնզգույն թելերի վինջրով ու բուժուժներով, որոնց նվագուն ու ծորուն հնչյունները միախառնվելով գետի չուռաչին՝ լեցնում էին գարնան վետ-վետող օդը և դաշտերի կանաչ տարածությունը: Այս բոլորի վերջում գնում էին երեք հսկայական փիղ, որ իրենց մեջքերին տանում էին ոսկեթել ծոպերով ու կեղտոտ վարագույրներով զարդարուն համրոցիկներ, որոնց մեջ Հնդկաստանում և Պարսկաստանում՝ սովորաբար նստում են իշխանուհիները՝ թե հանդիսատ ճամփոր-

դելու և թե հետաքրքիր ամբոխի հայացքից անտես մնալու համար: Սակայն դրանք դատարկ էին հույս:

Մերթ դետին մոտենալով, մերթ նրանից հեռանալով՝ այդ մեծ քարավանը հարթ ճանապարհը բռնած՝ ոլորվում ու գնում էր երկարաձիգ մի շղթա կազմած: Եվ քարավանի թե հանդիստ, հանդիսավոր ընթացքը, թե մարդկանց նոր, անգամ չքեղ հագուստները և թե բեռնակիր անասունների բուժուժների ուրախ կարկաչը չէին վկայում, թե ասպահումբը ճամփորդմի է շտապում, թեև նրա առջևից գնում էին հեծյալ նետաձիգներ՝ իրենց դրոշակներով, նիզակավորներ ու տեգավորներ: Այդ երևում էր և այն բանից, որ ասպահմբի մարդկանց դեմքին չէր նկատվում ծանր մտահոգություն կամ վրեժի ու ցասման արտահայտություն, ինչ ունենում են կռիվ գնացողները: Ընդհակառակը, թե դինվորները, թե չքեղ հագնված խմբերը և թե քարավանը վարող մարդիկ ուրախ-զվարթ խոսակցում էին միմյանց հետ, կատակներ անում, ծիծաղում երբեմն և իրենց ձիերի թամբերին ամրացրած պարկերից ուտելիք հանում-ուտում կամ առաջարկում իրար: Ու բոլորը թվում էին անհոգ, տոնահանդես գնացողների տրամադրության մեջ, և մասամբ այդ էր պատճառը, երևի, որ շատերն առանձին մի հետաքրքրությամբ դիտում էին թե իրենց շուրջն երևացող բարձրաբերձ լեռները, թե զմրուխտին տվող կանաչ դաշտերը և թե Եփրատի հորդացած գարնան ջրերը, որ խշշում կամ շառաչում էին նրանց ճանապարհին զուգահեռ, տեղ-տեղ աղմկաձայն քարավաղներ կազմելով, որոշ տեղեր էլ ափերից դուրս գալով և ընդարձակ ճահճուտներ ու եղեգնուտներ ստեղծելով:

Այդ եղեգնուտները՛... ամենից զարմանալին ճամփորդների համար այդ եղեգնուտներն էին, որ երբեմն բռնում էին ահագին տարածություններ ափերի երկարությամբ, ուր հին ու նոր, չոր ու կանաչ եղեգները խառնվել էին իրար և այնքան բարձրացել, որ ձիավորը կարող էր կորչել մեջը: Բայց հիմա այդ եղեգնուտները, և առհասարակ գետափի թփուտները լիքն էին բազմատեսակ մանր թռչուններով, որոնք ամեն վայրկյան մեծ ու փոքր խմբերով կամ զույգերով եղեգնուտից վեր բարձրանալով՝ սլանում էին պանդխտի կողմեր՝ չգիտես բների կառուցման

համար նյութեր բերելու թե նորելուկ ձագերին կեր ժողովելու։ Իսկ այդ եղնդուտներից վեր, երբեմն շատ բարձր սավառնաթև արտույտներ էին դուրս ցցվում, անդղներ և չղլիտես էլ ինչ ոլշատիչ թռչուններ, որ երբեմն, այդ բարձրությունից մեկեն նետվում էին ցած եղեղնուտը, և փոքր անց լրջենց մատիլների մեջ ծվծվացնելով վեր էին բարձրացնում մի որևէ անզոր թռչնակ... Այդ պահերին՝ Ռշտունուտի մոտով անցնող նետաձիգներից մեկը, երկուսը կամ մի քանիսը միասին լարում էին իրենց աղեղները և հաճախ հանդուգն ոլշատչին իր որսի հետ քյում նորից ցած՝ եղեղնուտը, որտեղից հանկարծ վեր էր բարձրանում վախվորած, ահաբեկ թռչունների նոր խմբեր, կարծելով, երևի, նոր ասպատակ մոտավ իրենց հանրապետությունը—պետք է ուրեմն կա՞մ պահվել կամ փախչել։

Նետաձիգներին մեծ զվա ուրթյուն էին պատճառում և վայրի բադերը, որ երամ կապած էջնում էին այդ եղեղնուտների վրայով կամ մեծ խմբերով լողում էին Եփրատի հանդարտ տեղերում։ Նրանց տեսնելով՝ աղեղնավորները չէին կարողանում դասել իրենց և մրցելու համար, թե մի նետով քանիսը կզարկեն —մահացու նետերն ուղղում էին ջրերով տարվող բադերին, որ այդ պահին իրենց, երևի, զգում էին, երանավետ երջանկության մեջ։

Որսի այդ զվարճությունը համակում էր ոչ միայն զինվորներին, այլև չքեղ հագնված այն խմբին, որ թվում էր գլուխն է այդ քարավանի։ Երբեմն նրանցից մեկը կամ երկուսը, զինվորներից աղեղներն առնելով, նշան էին բռնում օդապար ոլշատիչներին կամ ջրերով ճամփորդող թևավորներին։

Եվ այսպես ճանապարհը ձգվում, ոլորվում էր առաջ մերթ հարթավայրով, մերթ լճերի—մոնում էր քարավանատուն ու քարավանորդ մի ձոր, որտեղից երևում էր երկնքի միայն մի վարդագույն շերտ. կամ այդտեղից դուրս գալով՝ մխրճվում էր թավուտ բուսերով լցված անտառը, ուր վիթխարի, թավամազարթ ծառերն իրար գրկած հովանու տակ էին առնում նրանց մինչև մի նոր հարթավայր կամ մի նոր ձոր... Ու ամեն տեղ՝ այ և ձախ երևում էին ծառատառաններում կրակած կամ լեռնակողերին կպած գյուղերը, որոնց գոյությունը մատնում էին երդիկներից բարձրա-

ցող խաղաղ ծխի սյուները կամ չնճրի հաչը, որովհետև բնակիչները, երևի, զարնան աշխատանքով զբաղված, չէին երևում:

Ու քարավանը դարձյալ մերթ գետին մոտենալով, մերթ հեռանալով, բայց միշտ նրան զուգահեռ գնում էր առաջ, խմբերի բաժանված, նիզակավորներն ու աղեղնավորները առջևից, հեծյալ հազնվածների խումբը մեջտեղը, իսկ բեռնակիր ու վրանակիր սնահասունները ետևից, որոնց վրա, իբրև արքունի պահակներ հսկում էին ուղտերն իրենց օրորոցն, բարձր դլուխներով ու խոշոր աչքերի անհուն հայացքներով:

Այդ քարավանը կամ առպախումբը Պապ Թագավորի Թիկնապահ գունդն էր, որի ուղեկցությամբ նա գնում էր Տարսոն, բիզանդական Վաղես կայսեր հետ տեսակցելու: Նրան շրջապատում էր թանգ ու գեղեցիկ հազնված իր շքախումբը, որի մեջ մտնում էին պալատի կառավարիչ Զենոն Գնունին, դեր Օսոս Ապահունին, նախարար Տաճատ Տրունին, մի քանի այլ անվանի նախարարներ և, վերջապես, Թիկնապահ գնդի սպետ Բաթ Սահառունին, արքայադստեր Երեմիա Ամատունին՝ հայոց աշխարհի պատմության իր կիսատ ձեռագիրը կաշեպարկի մեջ դրած, որ որտեղ հնար լիներ՝ այնտեղ աշխատեր. Թիկնապահ գնդի սպեի օդնական երիտասարդ Գնել Անձևացին, նաև Մուշեղ սպարապետի Թիկնապահ Հրահատը, որին սպարապետը, իշխանիվ Թագավորի, ուղարկեց որպես ճանապարհը գիտցողի, և շատ ուրիշները. դրանց հետ նաև Թագավորին ու նրա շքախմբին սպասարկող մարդիկ՝ վրանապետներ, դինապետներ և սեղանապարներ, որ մի տեղ իջևանելիս կամ հանգստանալիս անմիջապես վրան էին խփում, անկողին փռում, սեղան էին բանում կամ հագուստներ ու ձիեր կարգի բերում:

Պապը գնում էր ակամա: Տերենտի միջոցով Տարսոն գնալու հրավեր ստանալով՝ նա երկար տատանվում էր գնալ թե ոչ, ու գնալը հետաձգում էր այս կամ այն պատճառով, բայց երբ հատուկ հրավեր եկավ և կայսրից, նա կարզադրեց պատրաստություն տեսնել ճանապարհվելու: Երկար մտածելով՝ նա գտավ, թե իր հզոր հարևանի հետ բարի դրացիական հարաբերություն պահպանելու համար, որ թշնամի աչքով չնայի իր երկրին և դավեր չնյութի նրա շուրջը, և վերջապես, հայկական գավառ-

նեին ու քաղաքները աղատելու համար,— պետք էր ընդունել կայսեր հրամանը և կատարել այդ այցելությունը, չնայած անախորտ էին մնում շատ դրծերը:

Որոշված էր, որ Թագավորի հետ, բացի չքախմբի անդամներից, գնար պետի երեք հարյուր թիկնապահ զինվոր՝ ճանապարհի համապատասխան հարմարանքներով:— պաշարով, վրաններով, բեռնակիր ուղտերով, ջորիներով ու ձիերով:

Իմանալով Թագավորի այս որոշումը՝ թե նա մտադիր է Բյուզանդիա գնալ միայն երեք հարյուր զինվորով, մի առավոտ Բաթը հանկարծ՝ մեծ թափով, ինչպես միայն նա էր անում, մտավ պալատ և՝ ուղիղ Թագավորի մոտ:

— Պապ, ես թեև դեմ եմ այս ճանապարհորդության, դեմ եմ, որ այսքան անպատիվ բաներից հետո դու այցելես հոռոմների կայսեր,— ասավ նա արագ-արագ, հուզումը հազիվ զսպելով,—սակայն չեմ կարող համաձայնել, որ դու Տարսոն գնաս միայն 300 թիկնապահով: Ճանաչելով հոռոմների նենգ բնույթը՝ ես առաջարկում եմ, մինչև իսկ պնդում եմ՝ վերցնել մի հազարանոց գունդ, ընտիր զինվորներ ու զորականներ և լավ սպառազինված, որովհետև...— Նա կանգ առավ և արագ շունչ քաշեց,— որովհետև ճանապարհը հեռու է և հոռոմներից ոչ այնքան սպասում:

— Ուզում ես ասել՝ հյուրասիրությունը կփոխեն դավադրությա՞ն,— ժպտաց Պապը:

— Մենք հոռոմների հետ գործ ունենք, արքա:

— Դու շատ կասկածամիտ ես, Բաթ:

— Ինձ երկյուղ է ներշնչում մեր քաղաքների պատմությունը, Պապ, և այն, ինչ կատարեց Շապուհը քո հոր՝ Ա.րշակ Թագավորի հետ:

— Այդքան կասկածամիտ չպետք է լինել, Բաթ,— պլուխն օրօրեց Պապը:— Մի մոռանար, որ կայսրը մեզ բարեկամն է ուղել մեր նեղ օրերին: Հույս ունեմ՝ իմ բացատրությունից հետո նա կհասկանա ամենը և կկարգադրի մաքրել մեր քաղաքներն ու դավառները:

— Ես այնուամենայնիվ, Պապ, հավատ չունեմ դեպի այդ

հոռմները և, դրա համար, ներիր, իմ անհամեստ և համարձակ առաջարկը:

— Խոսիր, բաթ:

— Ես ուզում եմ, Պապ, թիկնապահ դնդի հետ տանես նաև ինձ, ու անպայման մի հազար մարդ: Ես կուզեի ոչ միայն ապահով օրերին, այլև վտանգների ժամանակ լինել քեզ հետ, իմ արքայի հետ:

Պապին հուզից իր բարեկամի անշահախնդիր անձնվիրության այդ արտահայտությունը, և նա ոչ միայն համաձայնություն տվեց, այլև պահանջեց, որ նա լինի ուղևորության կարգադրիչը, և նույնպես պատրաստվի արշավ:

— Ես առանձին պատրաստվելիք չունեմ, Պապ. իմ սուրն է, որ վրան է. ինչ վերաբերում է իշխանուհի մորս և իմ իշխանուհի տիկնոջս՝ նրանք կմնան պալատում՝ Զարմանդուխտ թագուհու մոտ, ինչպես միշտ:

Երբ ամեն ինչ պատրաստ էր մեկնելու համար՝ Պապին հայտնեցին, թե Մուշեղ սպարապետը ժամանել է:

— Սպարապետո՞ւ,— ուրախացավ Պապը:— Հրավիրել անմիջապես:

— Սակայն, արքա, նա այժմ արքունի հյուրատանն է,— ասաց սենեկապետը,— դուցե և հանգիստ է առնում երկար ճանապարհի հոգնությունից:

— Իսկ ե՞րբ ժամանեց:

— Քանի մի ժամ առաջ, արքա:

Պապը մի վայրկյան մտածեց և ասավ.

— Այդ դեպքում հայտնիր նրան, որ թագավորն ուզում է այցելել իրեն:

— Բարի, արքա,— և սենեկապետը գլուխ խոնարհելով՝ դուրս գնաց:

Այն օրվանից, երբ Պապը բացատրվեց նրա հետ եկեղեցականի տուրքերի և մի քանի այլ խնդիրների առթիվ, Մուշեղն առաջին անգամ էր գալիս Դվին: Ուսում էին, որ նա այնքան է վշտացած թագավորից, որ չի ուզում մտնել Դվին և մասնակցել պալատական կյանքին: Պապը մինչև այդ լսել էր, թե նա իրեն համարում է ոսոկ մի զորական և ուրիշ որևէ բանի չի ուզում

խառնվել, ուստի և վաղուց ցանկանում էր տեսնել նրան և բացատրել, որ ի զուր է վշտացել, որ ինքը երբեք նպատակ չէր ունեցել անտեսել նրան, բայց աւելի չէր լինում, և հիմա խմանալով նրա գալուստը՝ Պապն, առանց սպասելու, մխայն Երեմիայի ուղեկցությամբ գնաց հյուրատուն: Հանդիպումը եղավ սրտագին: Մինչ Մուշեղը, նոր մխայն իմանալով թագավորի այցելության մասին, դուրս կգար նրան դիմավորելու, Պապը թիկնոցով ու գլխաբաց մտավ հյուրատան այն սրահը, ուր Մուշեղն էր:

— Սպարապե՞տ,— ասավ նա ու, ձեռները պարզած, գնաց առաջ:

— Պա՛պ,— բացականչեց Մուշեղը, և մի ակնթարթում նրանք փարվեցին իրար:

— Ինչպես եղավ, որ, վերջապես, հիշեցիր մեզ, Մուշեղ սպարապետ, առաջինը խոսեց Պապը:

— Ես մոքով միշտ քեզ հետ եմ եղել, արքա,—ասավ Մուշեղը ծանր չեչտելով,— իսկ այժմ իմանալով՝ մեկնելու ես Բյուզանդիա՝ եկա... անհրաժեշտ համարեցի գալ...

Իրոք Մուշեղը, թեև Պապից վշտացած, որ անտեսել էր իրեն և առանց իր հետ խորհրդակցելու, վճռացրել էր եկեղեցական տուրքերը, արգելել էր կաթողիկոսին գնալ Կեսարիա, սակայն իմանալով, որ նա պիտի մեկնի Տարոն՝ կայսեր հետ տեսակցելու—չտապալել էր գալ և խորհուրդներ տալ երիտասարդ Պապին, թե ինչպես պետք է պահել իրեն կայսեր մոտ, նրա հետ խոսելիս, որ անպատեհություններ չծագեն:

Սպարապետի խոսքերից հետո Պապն ուրախ նայեց նրա գլուխը ու խոհուն աչքերին և նորից բռնեց նրա ձեռը, ինչպես մեծի և կարուտած բարեկամի:

— Ուրախ եմ, սպարապետ, որ եկել ես,— ասավ Պապը նորից:— Այո, ընդունելով կայսեր հրավերը՝ մտադիր եմ մեկնել Տարոն: Ի՞նչ խորհուրդներ կտաս ինձ: Մեկնել արդյո՞ք թե ոչ:

— Անշուշտ, արքա: Մերժել կայսեր հրավերը՝ հարմար չէ: Պետք է գնալ: Սակայն ինձ հայտնի չէ ինչ խնդիրների համար է հրավիրում կայսրը:

Երբ Պապը բացատրեց, թե հրավերի նպատակը պարզ չէ

հոռոմները և, դրա համար, ներիր, իմ անհամեստ և համարձակ առաջարկը:

— Խոսիր, բաթ:

— Ես ուզում եմ, Պապ, թիկնապահ դնդի հետ տանես նաև ինձ, ու անպատճան մի հազար մարդ: Ես կուզեի ոչ միայն ապահով օրերին, այլև վտանգների ժամանակ լինել քեզ հետ, իմ արքայի հետ:

Պապին հուզեց իր բարեկամի անշահախնդիր անձնվիրության այդ արտահայտությունը, և նա ոչ միայն համաձայնություն տվեց, այլև պահանջեց, որ նա լինի ուղևորության կարգադրիչը, և նույնպես պատրաստվի արշավ:

— Ես առանձին պատրաստվելիք չունեմ, Պապ. իմ սուրն է, որ վրան է. ինչ վերաբերում է իշխանուհի մորս և իմ իշխանուհի տիկնոջս՝ նրանք կմնան պալատում՝ Զարմանդուխտ թագուհու մոտ, ինչպես միշտ:

Երբ ամեն ինչ պատրաստ էր մեկնելու համար՝ Պապին հայտնեցին, թե Մուշեղ սպարապետը ժամանել է:

— Սպարապետը՞,— ուրախացավ Պապը:— Հրավիրել անմիջապես:

— Սակայն, արքա, նա այժմ արքունի հյուրատունն է,— ասաց սենեկապետը,— դուցե և հանդիստ է առնում երկար ճանապարհի հոգնությունից:

— Իսկ ե՞րբ ժամանեց:

— Քանի մի ժամ առաջ, արքա:

Պապը մի վայրկյան մտածեց և ասավ.

— Այդ դեպքում հայտնիր նրան, որ թագավորն ուզում է այցելել իրեն:

— Բարի, արքա,— և սենեկապետը գլուխ խոնարհելով՝ դուրս գնաց:

Այն օրվանից, երբ Պապը բացատրվեց նրա հետ եկեղեցական տուրքերի և մի քանի այլ խնդիրների առթիվ, Մուշեղն առաջին անգամ էր գալիս Դվին: Ուսում էին, որ նա այնքան է վշտացած թագավորից, որ չի ուզում մտնել Դվին և մասնակցել պալատական կյանքին: Պապը մինչև իսկ լսել էր, թե նա իրեն համարում է սոսկ մի զորական և ուրիշ որևէ բանի չի ուզում

խառնվել, ուստի և վաղուց ցանկանում էր տեսնել նրան և բացատրել, որ ի զուր է վշտացել, որ ինքը երբեք նպատակ չէր ունեցել անտեսել նրան, բայց աւելի չէր լինում, և հիմա իմանալով նրա դալուստը՝ Պապն, առանց սպասելու, միայն երեմիայն ուղեկցությամբ գնաց հյուրատուն: Հանդիպումը եղավ սրահում: Մինչ Մուշեղը, նոր միայն իմանալով թագավորի այցելության մասին, դուրս կգար նրան դիմավորելու, Պապը թիկնոցով ու գլխարաց մտավ հյուրատան այն սրահը, ուր Մուշեղն էր:

— Սպարապե՞տ,— ասավ նա ու, ձեռները պարզած, գնաց առաջ:

— Պա՛պ,— բացականչեց Մուշեղը, և մի ակնթարթում նրանք փոխվեցին իրար:

— Ինչպես եղավ, որ, վերջապես, հիշեցիր մեզ, Մուշեղ սպարապետ, առաջինը խոսեց Պապը:

— Ես մտքով միշտ քեզ հետ եմ եղել, արքա,—ասավ Մուշեղը ծանր չեչտելով,— իսկ այժմ իմանալով՝ մեկնելու ես Բիւզանդիա՝ եկա... անհրաժեշտ համարեցի գալ...

Իրոք Մուշեղը, թեև Պապից վշտացած, որ անտեսել էր իրեն և առանց իր հետ խորհրդակցելու, վերացրել էր եկեղեցական տուրքերը, արգելել էր կաթողիկոսին գնալ Կեսարիա, սակայն իմանալով, որ նա պիտի մեկնի Տարոն՝ կայսեր հետ տեսակցելու—չտասել էր գալ և խորհուրդներ տալ երիտասարդ Պապին, թե ինչպես պետք է պահեր իրեն կայսեր մոտ, նրա հետ խոսելիս, որ անպատեհություններ չծագեն:

Սպարապետի խոսքերից հետո Պապն ուրախ նայեց նրա երեսը ու խոհուն աչքերին և նորից բռնեց նրա ձեռը, ինչպես մեծն և կարոտած բարեկամի:

— Ուրախ եմ, սպարապետ, որ եկել ես,— ասավ Պապը նորից:— Այո, ընդունելով կայսեր հրավերը՝ մտադիր եմ մեկնել Տարոն: Ի՞նչ խորհուրդներ կտաս ինձ: Մեկնել արդյո՞ք թե ոչ:

— Անշուշտ, արքա: Մերժել կայսեր հրավերը՝ հարմար չէ: Պետք է գնալ: Սակայն ինձ հայտնի չէ ինչ խնդիրների համար է հրավիրում կայսրը:

Երբ Պապը բացատրեց, թե հրավերի նպատակը պարզ չէ

և կայսրը կանչում է «խորհրդակցել հասարակաց օգուտի համար»,— Մուշեղը մտածեց մի պահ և ասավ.

— Ուրեմն հարկ է, արքա, լինել ծայր զգույշ:

— Զգո՛ւյշ... Սակայն ես, սպարապետ, առաջարկելու եմ մաքրել մեր քաղաքները, որ բռնել են արտքան ժամանակ:

— Իարկի է, արքա: Սակայն այդ պետք է անել նուրբ մի ձևով: Պետք է խնդրել, որ ինքն անհարմար զգա:

— Ինչո՞ւ խնդրել, սպարապետ, երբ պարտավոր են ազատել,— հուղվեց Գասը:— Դու գիտե՞ս, որ ժողովուրդը սաստիկ նեղվում է հոռոմ զորքից: Ես մտածում եմ նույնիսկ ասել, թե պարսիկները ծաղրում են մեզ, որ եկել ենք իրրև բարեկամ և նստել որպես թշնամի...

Մուշեղը նորից մտածեց մի պահ և ասավ.

— Դու, արքա, անշուշտ, իրավացի ես քո պահանջի մեջ: Սակայն ճշմարտությունը կայսեր պետք է ասել այնպես, որ նա համաձայն, բայց չքննամանա: Պետք է, կրկնում եմ, լինել զգույշ: Հարկավ, պետք է ասել, որ ժողովրդի համար ծանր է հոռոմ զորքի հոգսը և այլն... Բայց այն ձևով, որ անհարմար չզգա իրեն... Իսկ եթե, արքա, առաջարկի՞ մասնակցել նոր պատերազմի՝ պարսից կամ այլ տերության դեմ,— հետաքրքրվեց Մուշեղը, որին ըստ երևույթին այդ խնդիրն ավելի էր հետաքրքրում և թերևս ավելի ծանր թվում, քան այլ բան:

— Ես այդ մասին խորհել եմ, սպարապետ—ասաց Գասը,— և որոշել եմ հրաժարվել, պատճառաբանելով, որ մեր երկիրը չատ է հյուծված երկարատև պատերազմից, պարսից կողոպտանիքից: Կարող եմ ասել, այն, որ կորուստների հետևանքով, երկիրը չունի մշակող ձեռքեր և տակավին չի ապաքինել իր վերքերը:

— Այդպես,— գլխով հավանություն տվեց Մուշեղը:— Բայց դարձյալ զգույշ, արքա, որովհետև վաղեսը նույնքան խորամանկ է ու նենգ, որքան և Շապուհը... Համարիր, որ գնում ես գազանի մոտ. հարկ է ուրեմն լինել աչալուրջ և չզրպտել նրան:

Այնուհետև նրանք խոսեցին մի քանի այլ խնդիրների մասին, որից հետո Գասը վերադարձավ պալատ, գոհ, որ քաղաքների հարցում սպարապետը համամիտ է իրեն:

Մեկնելուց առաջ իշխան Կամսարականը և Սմբատ սպասեը նույնպես հավանություն տվին քաղաքների պահանջին:

— Դու իրավացի ես, արքա, պետք է պահանջել, որ մաքրեն մեր քաղաքները,— ասավ Կամսարականը,— և հիշեցնել, որ այլապես եթե այդ չարվի կխախտվի մեր ցանկալի բարեկամությունը:

— Եվ ասա, արքա,— ավելացրեց Սմբատ սպասեը,— ասա, որ իմ նախարարները դրամի մեջ թշնամություն են տեսնում բիզանդիայի կողմից, և շատ վշտացած են: Եվ, իրոք, դա մեծ անպատվություն է մեզ համար: Պարսիկներից պաշտպանենք՝ հռոմեներին տալու համար: Այդ չպետք է լինի,— հուզվեց նա:

Իսկ Զարմանդուխտ թագուհին իր հարկաբաժնում վերջին՝ մեկնելու ժամին վարվեց թագավոր ամուսնուն և նույնպես խնդրեց զգույշ լինել:

— Մանավանդ կայսեր հետ խոսելիս,— ասավ նա:— Եթե քաղաքների խնդրում հակառակեն՝ մի պնդիր, Պապ: Երբ կուզեն՝ թող այն ժամանակ էլ քաշվեն:

Պապը զարմացած նայեց թագուհուն:

— Ինչո՞ւ ես ասում, Զարմանդուխտ,— գլուխը տարուբերեց նա:— Մի՞թե ես եկել եմ թագավորելու նրա համար, որ մեր քաղաքները և ժողովրդի մի մասը նվիրեմ հռոմեներին, և ինչո՞ւ: Քաղաքները թողնեմ նրանց, որ կոչվեմ հայոց թագավոր: Մի՞թե կուզեիր, որ ես լինեի այդքան ստոր վարանոտ, Զարմանդուխտ: Ոչ: Ես կա՛մ պիտի վերադարձնեմ այդ գավառները կա՛մ... թող ընկնեմ...

— Ինչի՞ր ես ասում, Պապ,— վախեցած բացականչեց թագուհին, աչքերը լայն բանալով:— Ի՞նչ մտքեր են դրանք:

— Ուրիշ ելք ու ճանապարհ չեմ տեսնում:

— Բայց մի՞թե հնարավոր չէ խոսել խաղաղ և բացատրել...

— Ըստ երևույթին խաղաղ խոսքերն ու բացատրությունները չեն ազդում... Նրանց բոլոր խոստումները եղել են խաբեություն... Եղել են մեր գավառներն ու քաղաքները գրավելու համար: Ու ստացվում է այն տպավորությունը, թե ես քաղաքները կաշառ եմ առել...

Պապն այնքան հուզված էր՝ թվում էր երկար սխտի խոսի, բայց լռեց անմիջապես. և թագուհու վերջին խոսքը եղավ.

— Զգո՛ւյշ, Պապ: Ինդրում եմ այնտեղ այդ լեզվով չխոսես...

Նախարարների ու պալատականների մի մասը թագավորին ուղեկցեցին մինչև Վաղարշապատ, որտեղից ոմանք վերադարձան, իսկ մյուսները շարունակեցին մինչև Երվանդակերտ, մինչև կամրջաձոր և ավելի հեռու:

Կոմս Տերենտը նույնպես, ճի նստած, իր թիկնապահներով Պապին ուղեկցեց մինչև Վաղարշապատ, ուր հրաժեշտին՝ հաջողության բարեմաղթության հետ միասին, ասավ բարեկամաբար.

— Պահանջիր, արքա, պահանջիր քո դավառներն ու քաղաքները ազատեն: Քո պնդումից շատ բան է կախված: Կայսրը քեզ կլսի իրրև հյուրի և, անշուշտ, կանի ամենը: Ես անհրաժեշտը պրել եմ:

Եվ նորից հրաժեշտ առավ դլխի երկար խոնարհումով:

Ինչպես Զիրավի կռվից առաջ, այնպես էլ այս անդամ՝ թագավորի մեկնելու օրը Զարմանդուխտ թագուհին, չբավականանալով պալատական կանանց և իշխանուհիների մխիթարական-հուսադրական խոսքերով, նորից կանչել տվեց պատրաստ Մանանին, որ գուշակություններ անի թռչունների և անասունների հիմքոտիքի վրա:

Իսկ ժողովրդի մեջ Պապի այդ մեկնումն առիթ տվեց տարբեր զրույցների ու ենթադրությունների. ոմանք ասում էին, թե կայսրը Պապին կանչել է, երևի, պատիվներ տալու, որ կարողացավ պարսիկներին վտարել իր երկրի սահմաններից, և իրենց դաշնակցություն ավելի ամրապնդելու: Կային մարդիկ էլ, որ կարծում էին, թե կարող է պատահել կայսրը, Պապին ավելի մոտեցնելու համար, իր քույրերից մեկը կնության տա նրան: Այսպիսի ենթադրություններ անում էին ոչ միայն ռամիկները, այլև իշխաններ ու նախարարներ: Այն ինչ հոգևորականներից շատերը իրենց մենաստաններում ու եկեղեցիների բակերում հայտնում էին ամենատարբեր կարծիքներ, որոնց ընդհանուր իմաստն այն էր, թե կայսրը Պապին կանչել է, երևի, հանդիմանելու, որ այլևս չհամարձակվի վնասել քրիստոնեական եկեղե-

ցուն ու նրա ոգեշնչողներին, այլ ընդհակառակը, օգնել, որ հիմնեցին ավելի պայծառատես։ Կային կարծողներ էլ, թե կայսրը, հավանորեն, նրանից բացատրություն է պահանջելու տուրքերի հրամանի և Ներսեսի մահվան համար։

Իսկ Պատ և Կյուրեղ եպիսկոպոսները ժպտում էին բազմախորհուրդ քմծիծաղով։

Սակայն ողջ Հայաստանում մնայն մի մարդ դիտեր, թե իսկական կայսրն ինչու է հրավիրել Պապին. բայց նա լռում էր։

Այդ մարդը բյուզանդական արևելյան բանակի գլխավոր զորավար Տիրենտա կոմսն էր։

Եվ Պապը հիմա գնում էր Տարոն իր շքախմբով ու մոտ հազար ձիավորով, որոնց համար, ինչպես ասինք, պաշար, կեր, վրաններ էին տանում բազմաթիվ ջորիներ, ճիեր և ուղտեր։ Այդ բեռների մեջ էին մեծագին ընծաներ, որ Պապը տանում էր կայսեր և կայսրուհու համար,— ոսկեզօծուն ու ոսկեգիր մի զավազան կայսեր համար, ակնեղով ու մարգարիտներով զարդարած ոսկի մի կամար կայսրուհու համար, նաև հայկական սեւ ու ճերմակ նժույգներ, որոնց աչքերի մեջ աստղեր էին խաղում և ամբակներից աստղեր թռչում, ու երեք պարսկական մեծ փիղ, որ ավար էին վերցրել Զիլրավի ճակատամարտում։

Գնում էր Պապը իր բաշը սև ոսկեզօծ նժույգի վրա, մուգ մոսպուծն թիկնոցն ուսերին, իր երկար ու մեծ քարավանի գրեթե մեջտեղը, շքախմբի անդամներով շրջապատված, ու երբեմն խոսակցում էր նրանց հետ, շրջապատն ու գետը դիտելով։ Ինչ էլ խոսում էր սակայն՝ նրա մտքում չարունակ դառնում էր այն հարցը, թե արդյոք կայսրն ինչո՞ւ համար է կանչել իրեն... Բայց ի՞նչ էլ լիներ այդ հրավերի նպատակը՝ Պապն այդ ուղևորության մեջ իր համար տեսնում էր մի նպատակ—քաղաքների խնդիրը։ Թեև սպարապետն ու ավազանիները խորհուրդ էին տվել զգույշ լինել, իսկ Թագուհին խնդրել-աղաչել էր՝ բոլորովին չէսոսել, Պապը սակայն առայժմ ուրիշ նպատակ չէր տեսնում իր համար։

— Պիտի խոսել, Թող իրենք ամաչեն,— ասում էր նա երբեմն մտքում, երբեմն ուղեկիցներին,— պիտի խոսել և առաջարկել, որ իրենց զորքը հանեն այդ տեղերից։

Կրակի վրա յուղ էր լցնում բաթը:

— Այո, Պապ, ոչ միայն առաջարկել, այլ՛ոք է պահանջել: Եթե կայսրն ուրիշ խնդիր չունի, դա մեզ համար մեծ խնդիր է: Պատվի, արժանապատվության խնդիր:

Սակայն Զենոն Գնունին, որին Մուշեղ սպարապետը հատկապես ուղարկել էր Պապին չափավորելու և անպատեհ բաներ չանելու, իր պարտքն էր համարում միջամտել.

— Հարկավ, արքա, կարելի է խոսել, բայց... լավագույնն է՝ զգուշաբար, մեղմաբար...

Իսկ Երեմիան չուս-չուս կողքից կախած մոմատախտակը ձեռն առնելով՝ նշումներ էր անում, որ առաջիկա խնդրանում դրվի մագաղաթի վրա, կամ երբեմն ասում.

— Զգուշություն կա հավասար է վախի: Պետք է պահել արժանապատվություն:

Բայց Պապն ավելի խորհում էր, քան խոսում. նրան զբաղեցնում էին հազար ու մի ենթադրություններ ու խնդիրներ:

Որքան էլ նա ճանապարհ ընկավ ակամա, անհրաժեշտությունից դրդված, որքան էլ ափսոսում էր, որ գործերը մնում են կիսատ, բայց երբ դուրս եկավ բաց ու երկար ճանապարհը, երբ իր ոսկեգույն ձիով, չքախմբով ու քարավանով ընկավ գարնան ճոխ բնությանն ընդառաջ և տեսավ հեռուհեռու, նորանոր տեսարաններով բացվող բարձրադաշտ, երբեմն ձյունազարդ լեռների սարերը և՝ չնչից գարնան թարմ, արբեցուցիչ բույրերն ու օդը,—նա կարծես մոռացավ դրեթե այն ամենը, ինչ թողել էր եռևում, և մնաց միայն մի սևեռուն միտք, որ ինքը գնում է Բիզանդիա՝ կայսեր մոտ, և քաղաքների խնդիրը, որ պիտք էր լուծել:

Երվանդակերտ քաղաքից մինչև առաջ բասեն և ավելի դեպի՝ մինչև Կարին գավառի սահմանը նրա քարավանը գնում էր դրեթե Արաքսի ափերով, մերթ նրանից թեթև հեղվելով, մերթ մոտենալով, բայց նրա ձայնը մշտ իրենց ականջում: Այնուհետև մի քանի օր նրանց ուղեկցում էր խաղաղ Արածանին, իսկ հիմա Եփրատը իր մեծաշառաչ ջրերով:

Այս ամենը թեև մոռացնել էին տվել Պապին թողածը, բայց մշտ հիշեցնում էին գնալու տեղը և այն խնդիրը, որ պիտի

պաշտոնները: Ու դրա համար ասես հաճախ տարվում էր խոհեմով: Եվ չքախմբի երևոտասարդ անդամները նրա մտքերը ցրելու և նրան զբաղեցնելու համար կարծես կատակներ էին անում, նետեր արձակում օդում ու ջրում նկատվող թռչուններին վրա կամ նրա ուշադրությունը հրավիրում այս կամ այն բացառիկ տեսարանի վրա. Եփրատի հատակից վեր ցցված քարերին, որ կանդնել-անցացել էին այնպես ջրաթաթախ, ասես հենց նոր էին դուրս եկել ջրի տակից՝ լուս աշխարհին նայելու, սակայն ալիքները շարունակ ծեծկում էին նրանց լանջն ու գլուխը, չթողնելով աչք բացեն և կարդին լավ տեսնեն... Բայց ավելի զբաղեցնում էին վարթամ բուսականությամբ ու եղեգնուտներով, մեծատարած ու թարմ եղեգնուտներով, որոնց մեջից բամառնակ թռչունների խմբեր էին բարձրանում-գնում այս ու այն կողմ, կամ այդ տեղերից գալիս էին այնտեղ թաքնվելու, որովհետև թևատարած ու սրատես գիշատիչները—ուրուրը, ցինը, անգղն ու բազեն ամեն վայրկյան սպառնում էին նրանց, կատաղի թևարախումներով ընկնելով այս կամ այն թռչնախմբի մեջ:

Մի այդպիսի տեսարանի ժամանակ Պապն ասավ Երեմիային:

— Ամեն տեղ նույնն է. ուժեղը միշտ հալածում է փոքրին, զորավորը անպորին, և սրանք ստիպված են դիմել ինքնապաշտպանության...

Երեմիան զգաց, որ Պապն ավելի շուտ արտահայտում է իրեն զբաղեցնող խոհերը և ասավ.

— Այո. բայց խելացի և խիզախ ինքնապաշտպանությունը կարող է խորտակել շատ զորավորների:

Չնայած տակավին գարուն էր, բայց հայոց աշխարհի այդ մասում՝ շոգն սկսել էր արդեն, և չնայած Եփրատի բերած զովության, ուղևորները զգում էին տաքը և արևի այրող ճառագայթները, ու քանի լինում էին հարավ—տաքն այնքան ավելի զգալի էր դառնում:

Վերջապես, ճանապարհորդության հինգերորդ թե վեցերորդ օրը հասան Եփրատի այն տեղը, որտեղից սովորաբար անցնում էին գետը՝ Կիլիկիա գնալու:

Թագավորն իր չքախմբով, զինվորներն իրենց ձիերով ու

պաշարակիր անասուններով դեռն անցան ձնպմայով—դերանա-կապ լաստերով ու նավակներով չինաց կամրջով. ամանք անցան և քնկեքով, այսինքն փչած տիկերի վրա ահմանված այն լաստերով, որոնցով հայ առևտրականները Հայաստանից Եփրատով ու Տիգրիսով ամեն տեսակ ապրանք էին տանում Բաբելոն և Ասորեստան՝ վաճառելու կամ փոխանակելու:

Անցումը տևեց առավոտից մինչև կեսօր: Առանձնապես դժվար եղավ փղերի անցումը. վիթխարի այդ կենդանիները, որ ավելի խոշոր էին թվում լրենց մեջքերին բարձրացած ամրոցիկներով՝ ջրից կարծես վախենալով՝ սկզբում համառում էին մոտենալ դեռին, իսկ երբ մոտեցան՝ չէին ուզում ոտ դնել լաստերի վրա. համառում էին և ինչ-որ տարօրինակ ու տարերային մռնչոցներ արձակում, և դրանով թե մոահոդում և թե զվարճություն էին պատճառում զինվորներին, որ նրանց շրջապատած՝ ուզում էին շուտ տեղափոխել դրանց մյուս ափը, որ ետ չմնան ընկերներից:

Տեսնելով փղերի այդ համառությունը՝ նրանց վրին նստեցին փորձ մարդիկ և գործադրեցին, վերջապես, այն միջոցը, որին դիմում էին ծայրահեղ դեպքերում. այսինքն՝ մուրճերով խփեցին գլուխը վրին մխացնող այն տեղը, որ համարվում է նրանց զգայնության կենտրոնը և որին լծած հարվածները հնազանդեցնում են նրանց և ենթարկում մարդու կամքին: Առաջին մեկերկու հարվածներն ստիպեցին նրանց դնալ դեպի ջուրը և բարձրանալ լաստանավերը. դրան օգնեց մասամբ և այն, որ երկու հոգի ձիգ էին տալիս նրանց պարանոցը քցած հաստ պարաններով:

Վերջապես, երբ ամեն ինչ փոխադրել էին՝ հանգիստ առան մյուս ափում, ճաշեցին առանց վրաններ բանալու և ճանապարհը շարունակեցին նույն ձևով ու նույն կարգով՝ այն տարբերությամբ միայն, որ Հրահատի հետ միասին՝ նիզակավորների առջևից գնում էր և Գնել Անձևացին մի հուժկու պաշտոնյայի հետ միասին, որ սահմանի իշխանության կողմից եկել էր նրանց առաջնորդելու: Նիզակավորների այդ առաջին խմբին հետևում էին աղեղնավորները, տեգավորները, ապա թաղավորն իր շքախմբով, որի ետևից գալիս էին դարձյալ նիզակավոր ու աղեղնավոր զինվորներ՝ տարբեր խմբերով, և սպասավոր մարդիկ,

որ վարում էին թե պաշարակիր ուղտերն ու ջորիները և թե կայանը համար նվիր տարվող փղերն ու նժույգները:

***

Մի քանի օր դնալուց հետո՝ մի կեսօրի, պայծառ արևի ժամանակ ուղևորները հորիզոնի վրա նկատեցին նախ վեր ցցված դմբեթահարթ տանիքները, ապա նրանց առջև փուվեց ընդարձակ մի քաղաք՝ ծառաստաններով շրջապատված:

— Տարսո՛ն... Տարսո՛ն,— բացականչեցին առջևից դնացող պինդորներն ուրախ-ուրախ, որ հասնում են, վերջապես, այն նշանավոր, մեծահամբավ քաղաքը, որ սիրտ տեսնելին առաջին անդամ և ուր սիրտ հանգստանալին երկար ճանապարհի հոգնությունից:

Նույնն ղպացին և թագավորի չքախմբի անդամները: Իսկ Պաղը, երբ լսեց այդ անունը, մոայլվեց հանկարծ. և ոչ-ոք չհասկացավ ինչո՛ւ...

Տարսոնի տեսքը, սակայն, ամենից ավելի հետաքրքրեց Երեմիային, որ դեռ ճանապարհի սկզբից մտադրել էր ուշադիր և լավ դիտել քաղաքն ու նրա շրջապատը, որ մի օր թերևս դրեր թագավորի այդ ճանապարհորդությունը, ինչպես արել էին հույն և հռոմայեցի մատենագիրները: Նա ընդհանրապես դիտեր, թե Տարսոնը, որ հիմա բիզանդական նշանավոր քաղաքներից մեկն էր, դարերի ընթացքում ունեցել էր զարմանալի փոփոխական կյանք ու ճակատագիր: Դիտեր, որ նրան, ավանդության համաձայն, հիմնադրել էր ասորական Սեննեքերիմ թագավորը, սակա մոտ երկու հարյուր տարի հետո Ալեքսանդր Մեծը գրավել էր հելլենական քաղաք իր լեզվով ու մշակույթով, իսկ Սելևկյանների օրով նա ճոխացել էր ոչ միայն շենքերով, այլև առևտրով, արվեստներով, ուսումներով, և այդ ժամանակ, շատ կարճ միջոցում, Տարսոնը տվել էր այնպիսի գիտնականներ, ինչպես Աթենոդոր եղբայրները, ստոյիկյան Նեստորը, Աքեդեմոսը, քերական Դիոդորը, Դիոնիսոս կատաղիները և շատ ուրիշները: Երեմիան դիտեր նաև այն, որ այնուհետև Պոմպեի օրով՝ Տարսոնն առաջին անգամ ընկավ Հռոմի իշխանության տակ, որ Հուլիոս Կեսարն ընդարձակեց

նրան, քնակիչներին անվանելով հռոմայեցիներ, իսկ Անտոնիոսը նրան ազատեց հարկից, որ բարեղարդվի:

Հեռվից քաղաքին նայելով՝ Երեմիան հիշում էր նմանապես Տարսոնի հետ կապված այն պատմությունը, որ նա կարդացել էր ինչ-որ մի մատյանում: Այստեղ՝ Տարսոնում այդ նույն Անտոնիոսը Արևելքում չտեսնված փառահեղ ընդունելություն էր ցույց տվել եգիպտական կլեոպատրա թագուհուն՝ ծիրանագույն առագաստավոր նավով Կյուդնոսի ջրերով բերելով նրան մինչև քաղաք. ըստ որում նավակը ոսկեզօծ էր եղել, թիակները արծաթապատ: Արևելյան չքեղություններով զարդարված և անուշահոտ օծանելիքներով օծված՝ առտեղափայլ հաղուստով թագուհին եկել էր համբերու Հռոմի հզոր եռապետին, որ այդ ժամանակները մեծ հաղթանակներ էր տարել Արևելքում, և երկուսը միասին՝ իրենց զորության և գերագույն մեծության ամբողջ փայլի մեջ նավել էին դեպի Տարսոնի անտառները՝ չինավիայտ ընտրելու այն փառավոր նավատորմի կառուցման համար, որով փոքր ինչ հետո սկսք է հաղթանակիր Օկտավիանոսը՝ Ակտիումի ծովամարտում:

Վերջապես, Տարսոնը նշանավոր էր նրանով, որ այդտեղ էր թաղված պարսից դեմ ձեռնարկած արշավանքի միջոցին մեռած Հուլիանոս Ուրացողը և նրա հաջորդ Հովիանոս կայսրը, որ առորացուցիչ մի պայմանագիր էր կնքել պարսից հետ՝ չգնալ այնուհետև նրանց դեմ և մահավանդ երբեք չպաշտպանել Հայաստանին:

Երեմիան հիշում էր, գիտեր, որ այդտեղ, Տարսոնում է ծնվել Պողոս առաքյալը, որ քրիստոնեության կատաղի հալածողից դարձել էր նրա առաքյալների պետը և միայն իր հզոր խոսքի սրով նվաճել էր Հռոմն ու աշխարհը:

Ուրիշ նշանավոր շատ դեպքեր էին կապված Տարսոնի հետ, սակայն հիմա նա հուշակված էր, որպես բիզանդական կայսրության մի քաղաք. բայց նա սոսկ քաղաք չէր, այլ մի տեսակ փոքր Ասիայի մայրաքաղաք, ուր հաճախ գալիս ապրում էին երկրի ինքնակալները, երբ հարկ էր լինում լուծել Արևելքի հետ կապված խնդիրները, և ուր հաճախ հավաքվում էր բազմա-

լինում մի ամբոխ՝ առևտրի, խաղերի, զվարճության ու կրքությունների համար:

Թերևս այդ էր պատճառը, որ Երեմիային ավելի էր հետաքրքրում նոր Տարսոնը, ու որքան մոտենում էին քաղաքին և որքան ավելի որոշվում էին քաղաքի պարիսպները և այդ պարիսպներից ու ծառաստաններից բարձրացող տների ուրվագծերը, նրանում լարվում էր այնքան ավելի և այնպես էր նայում շուրջն ու հետևում, կարծես ուզում էր բաց չթողնել և ոչ մի բան: Սակայն նոր քաղաքը տեսնելուն հետաքրքիր էին ամենքը՝ թե զինվորները, թե չքախմբի անդամները, բայց տակավին չատ բան չէին կարող տեսնել պարսպի հետև: Իսկ առայժմ ճանապարհի երկու կողմը երևում էին թզենիների, ձիթենիների, նարինջի և կիտրոնի պարտեզներ, նաև թխենիների շարքեր, իսկ դրանց տրանքում բամբակի, քնջութի և հացաբույսերի ցանքեր: Շուտով երևաց և մի կիսաքանդ օտարոտի շենք, որ առաջնորդ հուդան իր պարտքը համարեց ծանոթացնել.

— Հռոմեական ժամանակի ջրմուղ է, որին տեղացիները, սակայն, բերդ են ասում: Իսկ քաղաքի իսկական բերդը ահագնակի նա՛ է,— և հուդան մատնացույց արավ քաղաքի հարավարևելյան կողմը մի կատուցվածք, որ կրկնակի պարիսպ ուներ բարձր ու ատամնավոր. բերդն ինքը նույնպես ուներ ատամնավոր գլուխ, որ բարձրանում էր արևելյան թագի նման:

Ապա մի բլրի լանջի երևաց կիսաքարտորակ մի շենք. հուդան ասելով, դա հին լքված կրկես էր կամ մարզարան, որից հետո ճամպրուղները նկատեցին դեռ մեծ կամուրջը, որի վրա խմբված էին ձիավորներ:

«Սրանք, երևի, եկել են մեզ դիմավորելու» մտածեց Երեմիան և ինքնաբեր աշխատեց կարգի բերել իր հագուստները, դիխարկը, կողքին կախած մոմատախտակը:

Նույնն արին և չքախմբի մյուս անդամները, առանձնապես Ջենոն Գնուևին, որ մեծ խնամով հարթեց արծաթազօծ մորուսը կրծքին, իսկ դեր Օտա Ապահունին ճզմեց իր նժույգի վրա, որ մի փոքր դոնե բարեձև երևա, և այդպես մյուսները: Մինչև իսկ զինվորները աշխատում էին վայելուչ տեսքով և լավ կեցվածքով մտնել քաղաք:

— Կա՞յսրն էլ պիտի գա դիմավորելու, թե դա կարդ չէ,— խոսում էին զինվորները հետաքրքրված:

— Կարծյոք՝ կարգ չէ,— նկատեց մեկը:

— Իսկ ես լսել եմ, որ այսպիսի ժամանակ կայսրն էլ, կայսրուհին էլ գալիս են դիմավորելու,— միջամտեց մի ուրիշը:

«Կայսրը, երևի, չի գա. բայց բոլոր պալատականները կգնեն անշուշտ»— զինվորների խոսակցությունը լսելով մտածեց Երեմիան, որ Բիզանդիոնում ապրելով՝ նկատել էր եղել մի քանի այդպիսի ընդունելության:

Այդ ժամանակ Բաթը, որ իրրև կարավանի կարգադրիչ, հրամաններ էր տալիս առջևից գնացող զինվորներին ու նրանց պետին, որ կարգ պահած ու հանդիսավոր քայլքով մտնեն քաղաք, ձիու դլուխը շրջեց հանկարծ, մոտեցավ Պապին ու, ձին հավասարելով նրա նժույգին, թեքվեց դեպի թագավորը.

— Ես չգիտեմ, արքա, ամենքս մի տե՞ղ պիտի ապրենք, թե կտանեն մեզ տարբեր տներ:

— Եվ հարցնում ես ինչո՞ւ,— հետաքրքրվեց Պապը:

— Ես կարծում եմ, արքա, նպատակահարմար է լինել մի-ասին, մի տեղ, մի թաղամասում: Իսկ եթե այդպես չանեն՝ խնդրենք, որ այդպես լինի:

— Դու զարմանալ կասկածներ ունես, Բաթ,— հարցրեց թագավորը շքախմբի մոտիկ անդամներին նայելով ու ժպտալով:

— Այո, պետք խոստովանեմ,— և Բաթի առնական դեմքով մի ստվեր անցավ:

— Իզուր մի անհանգստանա դրա համար,— ասավ Պապը և լռեց, որ Բաթը.ելմացավ մտածումներով տարված լինելու պատճառով, թե այդ խնդիրն անկարևոր համարելով: Այն ինչ Պապին թվում էր, թե հյուրը չի կարող պայման դնել հյուրընկալի առաջ. կարգ է, որ հյուրը պետք է ենթարկվի հյուրընկալին, նրա պայմաններին ու չի կարող ավելորդ պահանջներ անել: Մյուս կողմից Պապին տարօրինակ էր թվում Բաթին իր կասկածներով, և նա կարծում էր, որ չափազանց զգուշությունն այդ մարդուն զարմնում է կասկածամիտ: Կարելի է լինել զգույշ, բայց այդչափ—ավելորդ է:

Սակայն Բաթն այնուամենայնիվ չհանգստացավ: Նա ձին

քշեց նորից դեպի առաջ՝ թափորի առջևից գնացող զինվորները, որ կարգի մեջ պահի նրանց և ինքը գնա նրանց առջևից։ Զգլուխս ինչու՝ նրան թվում էր, թե երենց պիտի դիմավորեն վոդեր ելնելով, պատվավոր պահակազորով, բայց մոռենալով՝ կամուրջի վրա նկատեց մի խումբ հեծյալներ և նոսր մի բազմություն կամուրջի այն կողմը։ Ընայած արև էր, պայծառ օր, բայց նա զինվորներ ու մանավանդ փողեր չնկատեց։ Իսկ երբ մոտեցան կամրջին՝ հավաքված բազմությունից երեք չքեղահանդերձ հեծյալներ կամրջի սալաքարերը կըփկըփացնելով՝ եկան համարյա մինչև կամրջի ծայրը և, գլխարկներ վերցնելով, դլուխ խնդրին Պապին ու նրա չքախմբի անդամներին։ Սպա նրանցից մեկը ձիու վրա առաջ եկավ մի երկու քայլ ու կանգ առավ՝ ձեռը բարձրացնելով.

— Կայսեր անունից ողջունում եմ քո գալուստը, արքա Արմենիայի, բիզանդական այս հին քաղաքը,— ասավ այդ կուշտ դեմքով ու զեղեցիկ հագնված երիտասարդը, որի արտաքինից և նշաններից թե Պապը թե չքախմբի անդամները հասկացան, որ դա պալատական է։

Եվ, իրոք, ինչպես հետո պարզվեց, դա Վաղես կայսեր ներկայիչն էր—Վենետոս կոմսը, որ չնայած երիտասարդ հասակին՝ կայսեր խորհրդականներից մեկն էր և նրա անձնական քարտուղարը։ Դիմավորողներից երկրորդը քաղաքի բերդապետը կամ. կայազորի պետն էր՝ մի տարեց ճաղատ և լեցուն զորական՝ թրով ու զինվորական նշաններով. երրորդը քաղաքապետն էր՝ բարձրահասակ, սպիտակ դեմքով ու լայն ճակատով մի հոյն, որ հոդնած մարդու տպավորություն էր անում։ Սա թագավորին ողջունելով, ընդունված սովորության համաձայն, նրան մատուցեց ալ ու հաց՝ մի փոքրիկ արծաթե սկուտեղի վրա։

Իսկ կամուրջի այն կողմը հավաքված այլազան բազմությունը, որի մեջ կային տարբեր ազգերի ներկայացուցիչներ, բերանաբաց հետաքրքրվելով ու աղբատներ, ճեղքվեց ու բաժանվեց երկու մասի, որ ճանապարհ տա եկողներին։ Եվ երբ կարճ ձևականությունից հետո հայոց թագավորի թափորը շարժվեց՝ Վաղես կայսեր ներկայիչ Վենետոս կոմսը, կայազորի գլխուկ

պետը, որ լցված տիկի պես լխլխում էր թամբի վրա և սպիտակագեմ ու բարեկազմ քաղաքապետը իրենց ձիերի վրա միանալով Գապի չքախմբին՝ ուղևորեցին նրան քաղաք, որի պարըսպատները բացվում էին հենց կամուրջի վրա:

Երբ Թազավորն իր չքախմբով անցավ պարսպատունից ներս՝ հետաքրքիրները խայտաբղետ ամբոխն աշխատեց ետ չմնալ նրանից և նույնպես խուժեց քաղաք. նրանք վազում էին իրար առաջելով, իրար հրմշտելով, իսկ քաղաքի փողոցներում շատ մարդիկ, կանայք, երեխաներ, չքեղ հագնված ձիավոր օտարականների թափորը տեսնելով, կանգնում–նայում էին հետաքրքիր. և Գապի չքախմբի անդամները և դինվորները, ովքեր, հարկավ, դիտեին հունարեն, աջից և ձախից շարունակ հարցումներ ու ենթադրություններ էին լսում.

— Թազավո՞ր է, թե դեսպանություն:

— Թազավոր է. կարծես Անտիոքի տերը:

— Ո՛չ. ավելի շուտ Լիբանանի:

— Ոչ. արմենների թազավորն է, արմենների թազավորը,— ասավ մեկը բարձրաձայն:— Նրանց տեսքից ճանաչեցի:—Կուզեք դրազ գամ:

— Տեսնես ինչի՞ է եկել,— հետաքրքրվեց մեկը:

— Երևի կեսարին տեսնելու:

— Գուցե և սրբազնական տնից կին առնելու,— ծիծաղեց մի ուրիշը:

— Ոչ, ավելի շուտ, երևի, օգնություն և շնորհ խնդրելու:

— Վա՛յ, փղեր էլ կան, ուղտեր էլ,— բացականչեցին մի քանի ձայներ ու ետ վազեցին զարդարված փղերին տեսնելու. իսկ մի քանի մուրացիկներ և հաշմանդամներ այդ միջոցին առաջ նետվեցին փողոց և կանգնեցին–սպասեցին, որ հայոց թազավորը ողորմություն տա իրենց. բայց հույն մի պաշտոնյա ձին անմիջապես քշեց նրանց վրա՝ խարազանը ցույց տալով:

— Հեռո՛ւ ճանապարհից,— ապտռնաց նա, ձայնը խեղդելով:

Մուրացիկները կծկվեցին՝ ետ քաշվեցին, աղերսող հայացքները եկողներից չկտրելով:

Եվ թափորը դանդաղ էր գնում՝ այնքան ավելանում էր բազմությունը, և այնքան ավելի էին հետաքրքրվում, թե ո՛վ

է եկողը, և լսանալով հայոց թագավորն է՝ չգիտես ծաղրում էին թե զարմանում։

— Իսկ հետի զորքն ինչո՞ւ համար է. հյո՞ւր է եկել թե կռիվ։

— Երևի, շատ է գնահատում իր անձը...

Մինչ այդ, երբ թաւիրը մոտենում էր քաղաքի կենտրոնին՝ բաթը, ծնկներով ձին խրախուսելով, արագ մոտեցավ գալին և նորից նրան հավասարվելով ու ձիու վրա թեքվելով՝ չընկաց.

— Աբգա, մեր զորքը, բեռնակիր կենդանիները և փղերը անջատեցին մեզնից և տարան կողքի փողոցով. մեզ հետ մնաց թնդնատահ զորքի առջևի խումբը և քո չքախումբը։

— Անհանգստանալու կարիք չկա,— ասավ թագավորը։— Ամենքիս, երևի, մի չենքում բնակեցնել չեն կարող...

Բայց բաթը չհանդստացավ. նա կարծես նկատում էր ձիու վրա, շարունակետ ու առաջ նայելով, և մտածում էր, թե ինչո՛ւ իրեն չհարցրին այդ մասին, ինչո՛ւ առանց իր գիտության ու թույլտվության զորքն ու պաշարը անջատեցին թաւիրից։

«Արդյո՞ք մի չար մխում չկա այստեղ»։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Թիկնապահ զորքին առանձնացնելով և տանելով հատուկ մի զորանոց, որ գտնվում էր քաղաքի հարավային մասում, հուշն պաշտոնյաները թագավորին իր չքախմբով առաջնորդեցին քաղաքի դրեթե ծայրում գտնվող մի երկհարկանի շենք, որ չրջապատված էր քարե բարձր պարսպով և ընդարձակ մի պարտիզով, ուր երկար շարքեր էին կազմում թզենիները, ձիթենիները և նարնջի ու կիտրոնի ծառերը, ու այդ ամենը եզերված էր նրբատեռև թթենիներով, որ պարիսպների երկարությամբ կանոնաձև, կարծես պաշտոն ունեին պղնիվ, նուրբ ծառերը դրսից պաշտպանելու։ Իսկ այդ պարտիզի ներսում տիրում էր կարգ, մաքրություն։ Տունը, որ շինված էր ճերմակավուն քարից, բազմաթիվ լուսամուտներով և քարե պատշգամներով, թվում էր էշխանական դղյակ, որի նմանը Պապը, Երեմիան ու Բաթը շատ էին տեսել Բիզանդիոնում, բայց, ինչպես հետո պարզվեց, դա եղել էր Հուլիանոս Ուրացողի պալատը, ուր նա, մայրաքաղաքի աղմկալի կյանքից հետո, գալիս էր մեկ-երկու ամսով հանգիստ առնելու։ Հիմա թևպատ թողնված ու նախկին հիասքից ընկած, ուր այլևս կայսրներ չէին լինում, նա այնուհանդերձ պահպանել էր իր նախկին շուքն ու վեհությունը, ինչպես պատռված մի զեղեցկուհի, որ չի կորցնում ազնիվ ձևերն ու դեմքի նուրբ գծերը։

Թագավորն իր չքախմբով, տեղավորվելով այդտեղ, գոհ մնացին հարմարություններից։ Պապին իրեն հատկացրին վերին սմբողջ հարկը, որ կահավորված էր բիզանդական գործվածքներով, վարագույրներով, արևելյան գորգերով, բազմաստեղ ջահերով, աշտանակներով։

Բացի հարմարություններից կային այդտեղ և բազմաթիվ հուշն սպասավորներ, որ շատերին զարմացրեց, թե ինչո՞ւ համար են դրանք և այդքան շատ։

— Սրանք ո՞վքեր են,— հարցրեց մեկը մի հյուրընկալ հուշիկի։

— Սպասավորներ ձեր թագավորի համար։

— Մեր թագավորի հետ եկել է սակայն նրա սպասավորների մի մասը։

— Իսկ մեր հյուրասիրությունը պարտավորեցնում է, որ մեզ մատղցել նույնպես սպասավորների արքային։

Սակայն երկու ժամ հետո, երբ ամենքը լռանել էին լրենց տեղերը պալատում, որի դլխավոր մուտքի առջև, սանդուղքի երկու կողմը քարե առյուծներ էին նստած ետին թաթերի վրա, Բաթը դուրս եկավ այդ մուտքը, կանգնեց սանդուղքի դլխին՝ շրջապատը դիտելու՝ թե ուսումնասիրելու, բայց հենց այդ միջոցին նրան մոտեցավ հյուրընկալ հուշներից մեկը՝ կարճահասակ, լեցուն և սպիտակ դեմքով մի հուշն դինվորական և, պատիվ տալով, հարցրեց քաղաքավար ձևով.

— Հարգելի, կուզեի իմանալ ո՞վ է ձեր կարգադրիչը։

— Ե՛ս եմ,— ասավ Բաթը հետաքրքիր և ուշադիր նայելով այդ կարճ ու սլինդ երկտասարդի չարժուն աչքերին։— Խնդրեմ, ի՞նչ եք բարեհաճում։

— Ուրեմն ինձ ճիշտ էին ասել, որ կարգադրիչը դուք եք։ Շատ ուրախ եմ,— աշխուժացավ հուշնը ձեռը Բաթին մեկնելով։— Ծանոթ լինենք և բարեկամ։ Անունս Անարաս է։ Ես նշանակված եմ ձեր թագավորին և նրա չքախմբին օգնելու, ծառայելու։— Եվ հուշնը սիրալիր ժպտալով շարունակեց ավելի դործնական։— Նկատ առնելով, որ հարմար չէ թագավորին, նրա չքախմբի անդամներին ու դինվորներին տեղավորել միևնույն չինքում մանավանդ որ դինվորների թիվը շատ էր, մենք բարվոք համարեցինք թագավորի թիկնապահ գունդը և նրանց դեկավարներին բնակեցնել այլ տեղ։ Դուք դեմ չե՞ք, հարգելի։

— Այդ ես տեսա,— խոսեց Բաթը աչքերը չհեռացնելով հուշնի չարժուն ու տարօրինակ ժպտուն աչքերից։— Բայց ո՞ր տեղ է այդ չինքը. հեռո՞ւ է արդյոք,— հետաքրքրվեց նա։

— Ոչ բոլորովին։ Քաղաքի հարավային մասում, մի շատ հարմար և ընդարձակ տեղ,— ասավ հույնը արագախոսությամբ ու հաճելի ժպիտներով, որոնց ժամանակ նրա վերին շուրթը բարձրանում էր ավելի, քան պետք էր և երևան էր հանում ճերմակ ու սուր առամների մի սեղմ շարք։

Զլմանալով որքան է հեռու դա, Բաթին այնուամենայնիվ դիտեց.

— Գիտեք, ցանկալի էր մոտ լիներ։ Թադավորը երբեմն կուզեր տեսնել նրանց։

— Ցանկացած ժամին, հարգելի, ցանկացած ժամին կարելի է նրանց տեսնել կամ բերել այստեղ,— ասավ մարդը նորից ժպտալով։

Բաթը հեռաքրքրվեց.

— Իսկ ե՞րբ կարող եմ տեսնել այդ շենքը, ուր տեղավորված են մեր զինվորները ու բեռները։

— Երբ կամենաք, հարգելի։ Թեկուզ այսօր։

Եվ Բաթին, առանց ժամանակ կորցնելու, գնաց տեսնելու զինվորներին հատկացրած շենքը։ Նրան առանձնապես հետաքրքրում էր, թե ո՛րքան հեռու է դա իրենց բնակած տեղից, և արդյո՞ք չի կարելի մի պատճառաբանությամբ՝ զորքը տեղափոխել իրենց տան մոտերքը։— «Թիկնապահ զորքն ու բնակվի թագավորից հեռո՞ւ... մի՞թե այս հոռոմներն այդ չեն հասկանում»,— մտածում էր նա։— Թե՞ հասկանալով են արել այդ»... Ու կասկածը նորից հուզեց Բաթին։

Թիկնապահ զորքին հատկացված տունը, որ զորանոց էր, բավական մեծ էր և ընդարձակ. բացի զինվորներին հարմար սենյակներից՝ ուներ նաև ձիերի ախոռ, բաղանիք, ուներ լայն հրապարակ, ուր զինվորները կարող էին կազմակերպել ամեն տեսակ խաղեր չձանձրանալու համար։ Սակայն այդ շենքը շատ հեռու էր իրենց տնից։

«Ինչո՞ւ այսքան հեռու,— մտածեց Բաթը։—Արդյոք հատուկ նպատակով չե՞ն բնակեցրել այսքան հեռու»։ Եվ, վերադառնալուն պես, իր այդ կասկածը հայտնեց Պապին՝ տնից ստացած տպավորությամբ հետ միասին։

— Երևի սրանց հարմարությունն այդքան է, ինչ կարող

ենք անել,— ասաց Պապը և, թեև մտածեց, սակայն չուզեց նկատողություն անել Բաթին իր չափազանց կասկածների համար:

Իսկ Բաթին այսուամենայնիվ շարունակեց.

— Եթե մոտիկ հարմար չենք լինի, թույլ տուր ինձ քո անունից խնդրել, որ տեղափոխեն մեր պինվորներին:

— Բաթ, դարձյալ կասկածներ:

— Այո, արքա: Մենք դունավում ենք Բիզանդիայում:

— Հույժ կասկածամիտ ես, Բաթ,— ժպտաց Պապը:

— Կասկածը ճշմարտության մայրն է, արքա:

— Բայց կարող է լինել և ճշմարտության մահը: Ավելի լավ է՝ թող այդ կասկածը. դա կարող է իզուր տանջանք պատճառել քեզ:

— Դժբախտաբար, չեմ կարող, Պապ: Աստված արդեն այսպես է ստեղծել ինձ:

Պապը ծիծաղեց Բաթի անկեղծության վրա և հետաքրքրվեց՝ արդյոք հյուրընկալները չե՞ն հայտնել, թե կայսրը ե՛րբ է նշանակել իրենց ընդունելությունը:

— Առայժմ՝ ոչինչ, արքա:

— Ընդունելությունը կլինի, հավանորեն, վաղը կամ մյուս օրը:

— Գուցե՝ այո, գուցե՝ ոչ,— նորից կասկածեց Բաթը:

Չնայած ստիավին պարզ չէր ընդունելության օրը՝ այսուամենայնիվ Պապը մտածում էր, որ պետք է պատրաստ լինել ամեն ժամ: Եվ այդպես էլ կարգադրեց Բաթին, որ նա, որպես կարգադրիչ, պատրաստ վիճակում պահի թե չքախմբի անդամներին, թե կայսեր համար բերված նվերները:

Սակայն անցավ երեք օր՝ դեռ խոսք չկար ընդունելության մասին. այն ինչ չքախմբի անդամները շարունակ չէնքում, ստանց քաղաք դուրս գալու, սպասում էին, թե կարող է ամեն հանկարծ կայսեր կողմից մարդ գալ և թագավորին հրավիրել պալատ—պետք է ուրեմն մի տեղ հավաք և պատրաստ լինել: Որոշված էր, որ թագավորին, կայսեր պալատ դնալիս, ուղեկցեն պետի չքախմբի բոլոր անդամները և, շուքի համար; դնացե պինվորների մի մասը... Դրանից էր, որ բոլորն սպասո-

ղական վիճակի մեջ էին այդ օրերը: Պապն ինքը առավոտները հազնվում էր և սպասում. նրա օրինակին հետևում էին և չքաղխմբի բոլոր անդամները, չուզելով հանկարծակի գալ և պատճառ դառնալ ուշանալու... Իր արտաքինի վրա հատուկ ուշ էր դարձնում առանձնապես Զենոն Գնունին, սենեկապետի օգնությամբ նա խնամքով հազնում էր իր մետաքս հագուստները, հարթել տալիս նրանց ծալքերը, վեշերն ու թևքերը, լսկ մխրճքին ու դվին մազերին վայելուչ տեսք տալու համար՝ ժամերով կանգնում էր արծաթ հայելու առաջ: Սենեկապետը զարմանում էր ծերունու այդ ջանասիրության վրա և, ի վերջո, այդ ամենը բացատրում էր նրանով, որ կայսեր ներկայանալը հասարակ բան չէ... Զենոն Գնունուց ետ չէր մնում և նրա մտերիմ Օտա Պահունին. բայց լինչ էլ անում էր՝ լրեն չէր բավարարում. գիրությունը խանգարում էր, որ տեսքը տպավորիչ լինի, մանավանդ չատ դժգոհ էր իր կունդ գլխից, որ կարծես առանց վզի բարձրանում էր ուսերի վրա, և մանավանդ այն բանից, որ մորուսը նոսր էր ու կարճ. ուստի և ակամա նախանձում էր Զենոնին, որ թե սարթիևահասակ էր; թե երկար վիզ ուներ և թե կլոսով չափ ճերմակ, արծաթափայլ ու երկար մորուս, որ ըստ ամենայնի հաճելի էր դարձնում նրա արտաքինը:

Չի կարելի ասել, թե մյուսները չէին հետաքրքրվում լրենց հագուստներով, արտաքինով. նրանք նույնպես աշխատում էին հագնվել ճաշակով ու վայելուչ, որ լավ տպավորություն թողնեն բիզանդական արքունիքում: Բայց դրանից զատ արքայազուկը Երեմիային հետաքրքրում էր և մի այլ բան. երկար տարիներ Բիզանդիայի մայրաքաղաքում ապրած լինելով՝ նա գիտեր լավ հագնվելու և հարդարվելու ձևերը, սակայն առանձին մի հաճույքով էր սպասում ընդունելությանը, որ անձամբ տեսնի վաղուս կայսեր, նրա ավագանիներին, նրա արքունիքը և այդ ամենը նկարագրի իր մատյանում, ինչպես արել են Յակիտոս և Պլուտարքոս: Եվ հիմա նրան մտահոգում էր, թե կարող կլինի արդյոք մի առ մի հիշել ընդունելության մանրամասնությունները և իր՝ վաղեսի բոլոր խոսքերը, որովհետև պալատում անհարմար է մոմատուխտակ հանել և նշումներ անել. մինչդեռ նա

կուզեր ամեն ինչ և յուրաքանչյուր մի բառ գրի առնել և թողնել գալոց սերունդներին հիշատակ:

Բայց ընդունելությունը, անհայտ էր ինչու, ուշանում էր:

Անցան առաջին երկու–երեք օրերը, և կայսեր կողմից հրավեր չեկավ: Պապն ինքը առայժմ չուզենալով դուրս գալ քաղաքը կամ նրա շրջակայքը դիտելու, թեկուզ և ծպտյալ, որովհետև կարդ չէր, որ հյուր թագավորը շրջի առանց հյուրընկալ չքախմբի, ուստի կարգադրեց, որ չքախմբի անդամները միակված չմնան, կարող են գնալ և զբոսանքի, միայն կարճ ժամանակով:

— Մենք այդ կանանք հերթով, արքա,— ասաց Բաթը:

«Դարձյալ կասկած» մտածեց Պապը և, չուզենալով առարկել, ասաց.

— Ինչպես կուզեք:

Եվ չքախմբի անդամները, ազատություն ստանալով, սկսեցին մի քանի հոգով կամ երբեմն մեծ խմբով դուրս գալ երթեկ մեծ քաղաքը շրջելու, նրա տեսարժան վայրերը դիտելու.— ինչպես քաղաք մտնելիս՝ այնպես էլ հիմա նրանց զարմացնում էր խայտաբղետ բնակչությունը. սերիական ու երբայեցական լայն, երկարաքղանց հագուստները խառնվում էին բիզանդացիների կարճ թիկնոցներին, որ մեծ մասամբ ճերմակ ու մանիշակագույն էին՝ գաղանների ոսկեգույն նկարներով կամ ոսկեթել գարդերով: Եգիպտացի և հրեա վաճառականների կողքին պատահում էին հեթուպացի մաղախով ու սևամորթ գերիներ, որ բեռներ էին կրում մի քար գլխարաց ու կիսամերկ. Բիզանդիայի մայրաքաղաքից հնած պերճասիրտ պատրիկների հետ միասին երևում էին անախոհեմ վհուկներ ու կախարդներ, որ երեսներն ու մասների եղունգները տարբեր գույներով ու վառ ներկած, վիզները, մանյակի փոխարեն, ճկան կամ այլ կենդանու աստանների շար քցած՝ դուշակություններ էին անում փողոցների անկյուններում ու ծածկերի տակ, և կամ, անցորդներին կանգնեցնելով, առաջարկում էին իրենց ծառայությունն ու մարմինը: Քաղաքի բոլոր փողոցներում թշվառության հետ, գեռևատարած հաշմանդամների և անբուժելի հիվանդների կողքին, երևում էին խայտաճամուկ հագուստներով ճեռնածուներ ու ծաղրածուներ, որ հետաքրքիր ամբոխին զբաղեցնում էին իրենց խաղերով ու

մարմնի ծամածռություններով։ Երևում էին նաև շպրտված, շուրթերն ու աչքերը ներկած կաքավող կանայք, որ, հագուստներնի լայն թևքերին ու փեշերին զանգուլակներ կարած, կա՛մ ոլորում էին ծննդյա խփելով ու ծղրտալով, կա՛մ՝ անցորդներին, մանավանդ հարուստ անցորդներին առաջարկում էին իրենց ծառայությունն ու մարմինը։

Այս ամենը ավելի շատ երևում էր, իհարկե, քաղաքի շուկաներում, որ հռում էին այլազան բազմություններով, ուր խառնված էին ամեն գույնի ու կերպի մարդիկ, ամեն տեսակ ձայներ ու կանչեր, որոնք մերթ հիշեցնում էին տավարի բառաչ, մերթ արծվի կռինչ կամ ծովացուլի ճիչ, որովհետև այդ տեղերում, իրոք, հավաքված էին լինում տարբեր ազգեր ու լեզուներ —Թխադեմ ու նիհար եգիպտացիներ, ծովի ալիքների պես դյուրաշարժ ու ճկուն կիպրոսցիներ, ասորեցի դանդաղ առևտրականներ, որ ծնկները ցցած նստում էին իրենց ապրանքների մոտ. ճարպիկ ու միշտ ուշիմ հույներ, հաստաշուրթ ու սևամորթ աֆրիկացիներ և շատ ուրիշ-ուրիշ ցեղեր՝ կիսամերկ, դիմաները, ոտաբոբիկ, այրված, անապատային խանձված դեմքերով ու հիվանդոտ աչքերով։ Ոմանք ղրաղված էին առևտրով ու պես-պես արհեստներով, իսկ ոմանք պարզապես կեր էին վընասում կամ ձեռ մեկնում անցորդներին։ Մի տեղ ծախում էին ձկներ, մի այլ տեղ՝ ուղտեր, որոնց հպարտ գլուխները երևում էին ամեն կողմից, ամբոխից վեր. մի երրորդ տեղ ծախում էին ոչխար ու տավար, մի չորրորդ տեղ գերի տղաներ ու աղջիկներ, որ արցունքոտ կամ արցունքից զաղված աչքերով, հուսաբերքությամբ ու վերկությյան հույսով նայում էին յուրաքանչյուր մի լավ հագնված անցորդի։ Շուկայի մի հատուկ շարքում ձրդներ ու պտուղներ էին ծախում կողովների մեջ, մի այլ շարքում ճենճերահոտ բարձրացրած, յուղը շարունակ կրակին կաթեցնելով՝ խորոված էին անում և ուտողներ հրավիրում ամենատարբեր եղանակներով ու կանչերով։ Իրար խառնված այդ ամբոխների մեջ պատահում էին և աստվածարուժներ, որ հանած աստվածների մի շարան, որպես արհեստի նշան, վիզները քցած, աստվածալ ունեցող էին կանչում. պատահում էին և ծաղկող կիսամերկ, թխամորթ եգիպտացիներ, որ ծովախոտից հյուսած

ձիավորների վրա մերկ մարմիններ պատկերված՝ նախշում էին իրանց, մաշկի տակ ինչ-որ գունավոր հեղուկներ սրսկելով, և նախշվողը թեև ցավեր էր զգում և ձիչեր արձակում, բայց աչքառատում էր չչարժվել, որ նախշերն անկարգ ու ծուռ չլինեն:

Շուկաներից զատ՝ հայ իշխանները գնում էին քրիստոնեական տաճարները, որոնց դռներին առաջ ու բակերում միշտ խմբված էին լինում մուրացիկներ ու հաշմանդամներ, իսկ ներսը հոգևորականները կամ պաշտամունք էին կատարում կամ քարոզ կարդում Քրիստոսի առաքինի գործերի մասին և կամ վիճաբանում հավատացյալի կրքոտ մոլեռանդությամբ: Այդտեղ պատահում էին սիրիացի և աֆրիկացի մազապարտ, թխադեմ ու տենղավառ աչքերով եպիսկոպոսներ, որ իրենց մոտ էլ արտաքինով անմիջապես տարբերվում էին ուրախադեմ ու զվարթ հույն եպիսկոպոսներից, որոնց մի մասը հագնված էր զարմանալի շքեղ ու շողշողուն. մետաքս, կերպաս, մատանիներ. իսկ մյուս, ավելի մեծ մասը, թվում էին սարերից, ճգնարաններից եկած կմախքներ՝ ուսներին մորքիներ քցած, մի կավե ջրամանի պոտիներից կախ և մի ցուպ ձեռներին... Ի տարբերություն հայ հոգևորականների՝ վերջինները թվում էին ավելի խստակյաց, մոլեռանդ ու վիճասեր: Մյուս կողմից՝ դրանցից շքեղ հագնվածներն էլ հայ նախարարներին թվում էին չափազանց պճնված ու ամբարտավան, որ ոչ միայն չէին հարգում իրենցից ցած դասվողներին ու դիմացինին, այլև արհամարհում էին նրանց վեճերի մեջտեղին: Իսկ թե ինչ էին ուզում ապացուցել այդ վեճերով— հայ իշխանները չէին ուզում ժամանակ կորցնել խմանալու, գնում էին ուրիշ մի բան նայելու. սակնք այնքան էլ լավ չէին տիրում հունարենին, որ վերահասու լինեին իրենի բանավեճերի էությանն, բացի Երեմիայից, որ սակայն ձանձրանում էր այդ կրոնական վեճերից, համարելով այդ «սպարդյուն խոսքերի վերուրց»...

Պետք է ասել, սակայն, որ այդ պտույտների ժամանակ՝ քաղաքի փողոցներում թե շուկաներում հայ նախարարներն արժանանում էին հատուկ ուշադրության. առանձին հետաքրքրությամբ ու հարգանքով էին նայում մանավանդ Զենոն Գնունու երկար արծաթ մորուսին ու պարթև հասակին:

Շքախմբի անդամների օրինակով մեկ-մեկ չրջապատքյան էր եղնում և Գնել Անձևացին՝ Հրահատի և իր ավազակ զինվորների մեկ-երկուսի հետ: Գնելին առանձնապես զարմացնում էին սիրիկյան աղջերի դունավոր մարդիկ և հույն զորականները՝ իրենց գեղեցիկ հագուստներով ու զենքերով: Իսկ Հրահատը չրջում էր միշտ համարյա առանձին և այն էլ հուկաներում. իմանալով որ Տարսոնի հուկաներում ստրուկներ ու գերիներ են վաճառում, նա մտածում էր՝ գուցե և Նազենին միախուստի ժամանակ անցել է հույների կողմը և ընկել ստրկավաճառների ձեռքը: Թեև դժվար էր հավատում, որ Նազենին հասած լինի այդ հուկաները, բայց ներքին մղումով գնում էր մարդկային այդ թշվառության վայրերը և, տեսնելով թե ինչպես են մերկացնում դժբախտ ստրուկ երիտասարդներին, աղջիկներին և անգամ ծերերին ու, ինչպես անասուններին, շոշափում նրանց մարմնի մասերը,— նա միայն մի բան էր մտածում,— այնքան ոսկի ունենա, որ կարողանա այդ բոլոր աղջիկներին ու տղաներին գնել և արձակել, որ նրանցից յուրաքանչյուրը գնա դառնի իր հարազատներին ու սիրածին... Եվ չգիտես իր այդ ցանկությունը իրագործել չկարողանալո՞վ թե սիրածին չգտնելով—նա վերադառնում էր խորին տխրության մեջ և առանձնանում անմիջապես:

Շքախմբի անդամների նման հայ զինվորները նույնպես, պարապուքյունից ձանձրացած, երբեմն դուրս էին գալիս իրենց զորանոցից և խմբերով չրջում քաղաքում, զարմանալով տարբեր ցեղերի մարդկանց օտարոտի հագուստների, դեմքերի ու սովորույթների վրա:

Որքան էլ Բաթը և Գնել Անձևացին կարգադրել էին զինվորներին հավաք մնալ և հեռուները չգնալ—չէր լինում. դժվար էր ողջ օրը մնալ զորանոցում կամ նրա բակում փակված: Նրանց նույնպես հետաքրքրում էր քաղաքը իր բոլոր կողմերով՝ իր տներով, փողոցներով, շուկաներով, մարդկանցով, և ուզում էին ամեն ինչ տեսնել, որ վերադարձին պատմեն յուրայիններին: Նրանց հետաքրքրում էր մանավանդ բիզանդական կայսրն իր պալատով, ուր, ասում էին, դրված է համակ ոսկուց շինած մի գահ, որի աջ և ձախ կողմը ոսկե առյուծներ էին, գլխավերևը՝

ոսկեձույլ երգեցիկ թռչուններ: Ընդունելության ժամերին, ասում էին, երբ կայսրը ժժդոհ էր լինում կամ բարկացած— առյուծները մռնչում էին՝ երախները բանալով ու պոչները պարկում հատակին: Իսկ երբ կայսրն ուրախ էր լինում կամ դոհունակ—ոսկե սոխակներն ու դեղձանիկները երգում էին գահի վերին թևերին:

— Երանի՛կ նախալսարններին, որ պիտի տեսնեն այդ ամենը, ասում էին դինվորները ափսոսանքով, որ իրենք զրկված են այդ դահը դիտելու հնարավորությունից, ուստի և գնում էին տեսնելու այն բանները դոնե, ինչ մատչելի էր իրենց:

Ինչ վերաբերում է Բաթին՝ նա համարյա չէր հեռանում թագավորին ու նրա շքախմբին հատկացված տնից—նախ այն պատճառով, որ իրրև կարգադրիչ, պարտավոր էր զգում պատրաստ լինել միշտ թագավորի կարգադրության, հետո կարող էին այցելուներ գալ, ով գիտե, ուրիշ ինչեր կարող էին պատահել...

Մյուս կողմից նա կարծես ուսումնասիրում, հսկում էր հուն սպասավորներին, որ թողել էին հայոց թագավորին և նրա շքախմբին ծառայելու: Բաթին զրանց պարզապես կասկածում էր. նրան թվում էր, որ զրանք բոլորը գող են. մյուս կողմից՝ նկատել էր, որ անվայել են պահում իրենց: Թեև ընդունված էր, որ հյուր եկած թագավորին կամ դեսպանությանն չեն այցելում ոչ պաշտոնական մարդիկ, բայց այդ հուն սպասավորները հաճախ կողմնակի մարդիկ էին թողնում բակը: Մի անգամ տան մուտքը նա նկատեց ինչ-որ կասկածելի անձեր, որ խոսում էին նույն սպասավորների հետ:

— Ովքե՞ր են զրանք,— հետաքրքրվեց Բաթը մի օր:

Հուն սպասավորներից մեկը խուսափեց պատասխանից ու լռեց, իսկ մյուսը խոնարհում արավ քծնաժպիտ:

— Ավնավաճառներ են, տեր: Ուզում են ձեր թագավորին և ձեղ ընտիր բաներ վաճառել: Կցանկանա՞ք տեր իմ:

— Ավնավաճառնե՞ր,— ասավ Բաթը:

— Այո, տեր իմ: Երանք ձեզ նվերներ կտան, եթե հաջողեցնեք, որ թագավորը կամ նրա պալատականները դնեն զրանց

ապրանքը,— չարունակեց Հուլյը ձայնն իջեցնելով ու նրան քծնական ձևերով:

— Լավ է,— դառաց Բաթը:— Մյուս անգամ դրանց չտեսնեմ այստեղ:

Հուլյը վեր թռավ և նորից խոնարհում արավ:

— Լսում եմ, տեր իմ, լսում եմ...

Հետո պարզվեց, որ դրանք վաճառականներ են, Հուլյն ապատավորներին կաշառք տալով՝ գալիս են հայոց թագավորին և նրա մարդկանց ապրանքներ վաճառելու: Հուլյն, եգիպտացի և ուրիշ վաճառականներ, իմանալով արմենների թագավորի դալը —մինչորդներ էին ուղարկում ապրանքներ առաջարկելու, գովելու և ասելու, որ հայոց թագավորի պատվին կարող են արժան տալ: Բացի դրանցից՝ գալիս էին և անորոշ զբաղումի տեր մարդիկ և իրենց ծառայությունն էին առաջարկում թագավորի չքախմբի մարդկանց՝ թե գնումներ անելու գործում և թե դրսանքների առաջնորդելու, ինչ համարում էին իրենց մասնագիտությունը:

Ոլքան էլ Բաթը կարգադրում էր հուլյն ապատավորներին ներս չթողնել տղպխինների, բայց դրանք, կաշառներով հրապուրված, նորից էին թողնում նրանց զանազան անհայտ կամ մխայն իրենց հայտնի ճանապարհներով: Եվ Բաթը չդիտեր այդ վաճառականների անհետության վրա զարմանա թե հուլյն ապատավորների անատնթության, երբ մի օր էլ այդ վաճառականներից թե նրանց մինչորդներից մեկը հենց պալատի մուտքի առաջ կտրեց Բաթի ճանապարհը և, սիրալիր ողջունելով, առաջ հրավիրեց,

— Ազնիվ տեր. թույլ տուր մի խոսք:

— Խոսի՛ր,— դեմքը խոժոռեց Բաթը:

— Եթե դու, ազնիվ տեր, բարի լինես, իսկ ես կարծում եմ, որ դու անպայման բարի ես. այդ երևում է քո ազնիվ դեմքից...

— Ասելի՛ք:

— Ասելիքս սա է, ազնիվ տեր: Եթե դու հաճություն կամ ունես, որ ձեր թագավորին ակնաքարեր վաճառեմ՝ ես քեզ

խոստանում եմ քանի ոսկե դրահմ և մի զմրուխտ մատանի քո ամենիվ տիկնոջը:

Բաթի արյունը երեսը խփեց. նա կարմրեց, գունատվեց կանգնած, ասես մի քայլ անելով և առանց մի բառ ասելու, ձեռը բարձրացրեց հանկարծ ու՝ շառաչուն մեկ–երկու ապտակ այդ մրսաղու լիքը երեսին:

— Ահա՛ քեզ քարեր, դրահմներ և զմրուխտ մատանի...

Վաճառականը ձեռն այտին դնելով՝ կռացավ նոր հարվածից խուսափելու, և այդպես կռացած, գրեթե կուզե–կուզ հեռացավ Բաթիից ու լրեն նետեց փողոց:

Դրանից հետո այլևս վաճառականներ ու մինչևորդներ չէին նկատում, սակայն հուշն ապտակների էին տհաճ թվում Բաթին. ինչ անում էին՝ վարձատրություն էին ապատում, և մյուս կողմից նկատում էր, որ դրանք ամեն բանում հետևում են չքաղմբի անդամներին, տեսնելու կարծես ով ո՛ւր է գնում, ի՛նչ է անում, ի՛նչ բան որսել է գնում... Եվ դա զայրացնում էր Բաթին: Սակայն նրանց հեռացնելը համարելով անհարմար՝ նա քաջալոք համարեց զորանոցից մի երեսուն հայ զինվոր բերել և բակի ու պալատի հսկողությունը հանձնել նրանց:

— Ուշիմ եղեք և զգաստ,— կարգադրեց նա,— և հիշեցեք, որ մենք գտնվում ենք օտար երկրում...

***

Մինչ այդ օրերն անցնում էին և կայսեր ընդունելության մասին չէիր մի խոսք: Ինչո՞ւ էր ուշանում ընդունելությունը —ոչ–ոք չէր կարողանում բացատրել. հյուրընկալ Ամարասն ինքը ոչինչ չգիտեր: Անցել էր արդեն տաս–տասներկու օր և տակավին ոչ մի լուր չկար, թե ե՛րբ է վերջապես կայսրը բարեհաճելու ընդունել լրեն: Երբ Երեմիան մի օր հետաքրքրվեց հյուրընկալ Ամարասից իմանալ մի բան՝ նա շատ սիրալիր ու քաղաքավար ժպտաց.

— Շուտո՛վ, շուտո՛վ, հարգելի:

Երեմիան այդ խոսքերը հայտնեց Թագավորին, և Պատը, որ օրեցօր անհամբեր սպասում էր կայսեր ընդունելության, նե–

քաղցեց, թե ուրեմն մոտ է ընդունելության օրը. ու թեև շատ էր խորհել իր ասելիքների վրա, այդ օրվանից նորից սկսեց մտածել, թե ի՛նչ լանդիրներ կարող է չոշափել կայսրը, որ ըստ այնմ պատրաստի իր պատասխանները: Պապին թվում էր, թե վաղն ամենից առաջ կխոսի, երևի, քաղաքների մասին, որոնց մաքրելու խնդիրը Տերենտը դրել է մի քանի անգամ... Ապա նրան թվում էր, թե կայսրը դուցե խոսի նաև պարսից մուսուլմանների կամ նրանց դեմ պատերազմ սկսելու մասին... Բայց կարող է պատահել պատերազմ ծրագրում է ուրիշ մի պետության դեմ և խնդրելու է հայերի օգնությունը...

«Եթե նա խոսի մեր քաղաքների ու գավառների մասին,— մտածում էր Պապը մեն-մենակ երթևեկելով իր հարկաբաժնի մի սրահում,— ես վաղեսին կասեմ հետևյալը»...

Եվ նա մտքում կրկնում էր այն ամենը, ինչ մտածում էր դեռ Հայաստանում, Դվինի իր պալատում, ինչ խորհել էր այդ մասին երկար ճանապարհին. այսինքն՝ կասի, թե ո՛րքան ծանր է հայ բնակչության համար պահել հույն զորքը իր սահմաններում. կասի, որ բնակչությունը ենթվում է և պատգամավորների միջոցով խնդրում է չարունակ, որ իրեն թեթևացնեն հույն զորքի ծախքերից ու նեղություններից... Այո, պետք է համարձակ ասել «նեղություններից»...

Եվ Պապը հույս ուներ, որ վաղեսը կհասկանա իրեն, մեղքը կդնի իր զորավարների վրա և խնդիրը կլուծվի առանց դժվարության:

«Իսկ եթե պարսից դեմ պատերազմ սկսելու լինի»—չարունակում էր մտածել Պապը, և զգում էր, թե նրան պետք է խորհուրդ տալ, որ այդ արշավանքը կատարի Միջագետքի վրայով... Թող հեռու անցնի իմ երկրից, որ շատ է տուժել և վնասվել պատերազմի արհավիրքներից... Նա կասի, որ Հայաստանի լեռներն ու լեռնակիրճերը մեծ դժվարություններ կարող են հանել հույն զորքի առաջ, կդժվարացնեն նրա շարժումն ու գործողությունները... Թող հեռու՛ անցնեն հայ երկրից... Իսկ եթե խոսք լինի Հայաստանի օգնության մասին՝ նա դարձյալ կասի այն, ինչ մտածել է վաղուց. այն, որ Հայաստանը շատ է տուժել վերջին պատերազմից, կորցրել է թե իր կռվող ուժերի

մեծ մասը, թե իր ձիերի ու անասուններուն զգալի թիվը և հիմա հալիճ է կարողանում վերականգնել քայքայվածն ու ավերվածը... Իսկ ևթե ուրի՞շ մի երկրի դեմ լինի այդ պատերազմը և ոչ պարսից—ինքը դեմ չի լինի այդ պատերազմին, բայց հայ երկրի վիճակը կնկարագրի այնպես, որ կայսրն ղզա, թե նա իրոք հնարավորություն չունի պատերազմելու... Կասի, որ իր երկիրը Բիզանդիայի բարեկամն է և շատ կուզեր օգնել նրան, սակայն, դժբախտաբար ի վիճակի չէ... Եվ նա զարճյալ հույս ուներ, թե վաղեմին կհամոզեր, որ իր երկիրը հնարավորություն չունի զորք հանելու և հույներին օգնելու... Լավագույն դեպքում՝ կարող է թերևս տալ որոշ քանակ ձիեր, բեռնակիր անասուններ. բայց զորք—հազիվ...

Եվ այսպես Պապը մերթ մտածում ու խորհում էր մենակ երթևեկելով իր հարկաբաժնի սրահներում, մերթ զրուցում չքավոր անդամների հետ կամ հիշելով երկիրը, թագուհուն ու որդիներին՝ ապաստում էր կայսեր ընդունելության:

— Ինձ տարօրինակ է թվում, սակայն, թե ինչո՛ւ է կայսրը մեզ ապասեցնում այսքան,— ասավ Պապը մի օր Երեմիային:

— Ես նույնպես զժվարանում եմ հասկանալ,— պատասխանեց Երեմիան տարակուսով:— Թերևս ցանկանում է զգացնել տալ իր անհատնչելիությունը:

Սակայն օրեր էին անցնում զարճյալ և ընդունելության մասին ոչ մի խոսք: Սկզբում ասում էին, թե կայսրն զբաղված է չոսրով մի դործով, որն ավարտելուց հետո կընդունի: Մի այլ անգամ հայտնեցին, թե քանի մի օրով կայսրը մեկնել է մոտիկ քաղաքը՝ կզա և անմիջապես կընդունի: Սակայն երկու օր անց ասացին, թե զինվորական կարևոր դործով գնացել է մոտիկ դտնվող բանակը, երևի, վերադառնալուն պես կընդունի: Եվ այսպես օրերն անցնում էին, ընդունելությունն ուշանում էր, և այդ ուշացումն սկսում էր տարօրինակ թվալ ոչ միայն Պապին, այլև չքավոր անդամներին: Մի օր դեր Օաա Ապահունին պալատի միջանցքում բռնելով Զենոն Գնունու թևը առաջարկեց դնալ պարտեզ: Իսկ երբ մտան տունը չրջապատող պարտեզի ծառուղիներից մեկը, զգույշ Օաան, շուրջը նայելով, գլուխը մոտեցրեց Զենոն Գնունու մի րոպե.

— Տեր Գնունի, ի՞նչ է նշանակում ընդունելության այս ձգձգումը:

— Ես բացատրել չեմ կարողանում, տեր Ապահունի,— ասավ նա ղպուշությամբ մխրուքը բռնելով:— Համենայն դեպս որպի դնալը պատճառ չի կարող լինել ընդունելությունը ձգձգելու: Դասեները օրն է արդեն:

— Այստեղ ուրիշ մի հանգամանք չկա՞ արդյոք,— շարունակեց Ապահունին, դարձյալ ղպուշությամբ նայելով շուրջը, ուր միայն ծառեր էին և թփեր:

— Դժվարանում եմ կռահել, տեր Ապահունի, դժվարանում եմ,— պատասխանեց Զենոն Գնունին:— Ջատրվինք վաղաժամ կասկածներով:

— Ուրեմն՝ դու նույնպես կասկածներ ունես, տեր Գնունի,— հետաքրքրվեց Օտան: Ինձ թվում է՝ կայսրն ուզում է, երևի, ստուգացնել մեզ: Այս ձգձգումը նման է սրհամարհանքի: Երևի, ցանկանում է՝ խնդրենք, որ ընդունի:

— Եթե հրավիրել է՝ էլ ինչո՞ւ խնդրել: Պետք է ընդունի, եթե չունի վատ մի խորհուրդ:

Ընդունելության ուշացումը նույնպիսի անհանգստություն ու կասկածներ էր առաջ բերում և չքախմբի մյուս անդամների մեջ, որ զգում ու ենթադրում էին շատ բան, բայց չէին արտահայտում ոչինչ:

Սակայն այդ բոլորից ավելի անհանգիստ էր Պապն ինքը: Ամեն տեսակ ենթադրություններ անելուց հետո, վերջապես, նա մի օր կանչել տվեց իր մոտ զվխավոր հյուրընկալ Անաբասին և հետաքրքրվեց, թե կայսրը գիտի՞ արդյոք իր գալու մասին: Նա այդ ասավ դիտմամբ:

— Հարկավ, արքա,— թեթև խոնարհում արավ կարճ ու պինդ Անաբասը, ապա ավելացրեց յուղով օծած մազերը շոշափելով.— մեր Օգոստոս կայսրը գիտի ոչ միայն քո ցանկալի ժամանումը, այլև հետաքրքիր է իմանալ քո առողջությունը...

Պապը գլուխը խոնարհեց, ինչպես ընդունված էր կայսեր անունը տալիս կամ նրա մասին խոսելիս պալատականների շրջանում:

— Շնորհակալ եմ կայսեր հոգածության համար,— ասավ նա:— Իսկ ի՞նչպես է կայսեր առողջությունը:

— Դժբախտաբար, կայսրը իրեն մի փոքր տկար է զգում, այսինքն՝ փոքր ինչ հիվանդ է և այդ պատճառով առայժմ, արքա, ուշանում է քո ընդունելությունը:

— Հիվա՞նդ,— զարմացավ Պապը:— Եթե այդպես է՝ ես կուզեի տեսնել կայսեր և անձամբ առողջություն ցանկալ նրան:

— Այդ, դժբախտաբար, հնարավոր չէ, արքա, որովհետև բժիշկները կատարյալ հանգիստ են պատվիրել կայսեր: Մյուս կողմից՝ մեր Օգոստոս կայսրը չէր ցանկանա քեզ նման մեծարժան հյուրին ընդունել անկողնում:

— Ուրեմն կայսեր հիվանդությունն այնպես է, որ նա մինչև իսկ պառկած է անկողնում,— հարցրեց Պապը կասկածով նայելով հյուրընկալ Անաբասին, կամենալով կարծես նրա աչքերի խորքում տեսնել ճշմարտությունը կամ իր սուր հայացքով չվհատեցնել նրան:

Բայց Անաբասը մնաց անայլայլ. նա չշփոթվեց և շարունակեց նույն եղանակով.

— Այո, դժբախտաբար, պառկած է:

— Շատ ցավում եմ,— ասավ Պապը:— Ուրեմն ընդունելությունը կուշանա:

— Իսկ ինչո՞ւ հեք չտապում, արքա,— ժպտաց Անաբասը:— Մթթե ձանձրանո՞ւմ եք դեղեցիկ Տարսոնում, կամ գուցե դժգո՞հ եք մեր հյուրընկալությունից:

— Ոչ, բարեկամ, բայց ունենք գործեր և անելիքներ մեր երկրում,— ասավ Պապը ակամա:

Անաբասի աչքերում քմծիծաղ երևաց.

— Ուրիշները կարող են անել այդ գործերը...

Այնքան անտարբեր ու համարձակ ասվեցին այդ խոսքերը, որ Պապը զարմացավ, և որովհետև երկիմաստ էին, բացատրեց նրանով, որ հույնն ուզում է հանգստացնել իրեն, թե երկրում մնացողները կանեն:

Սակայն Երեմիան, որ ներկա էր այդ խոսակցության, հյուրընկալ հույնի համարձակության մեջ զգաց մի այլ բան, ուրիշ մի տրամադրության անզգուշ արտահայտություն, բայց,

Ինաբասի գնալուց հետո, իր այդ զգացածի մասին չխոսեց Պապի հետ, այլ միայն իր զարմանքը հայտնեց կայսեր հիվանդության առթիվ:

— Ինձ տարօրինակ է թվում այդ հիվանդությունը,—դիտեց նա:— Երեկ առում էին գնում է որսի, իսկ այսօր հիվանդ է:

— Կարող է պատահել և այդ,— ասավ Պապը մտախոհ,— մարդը ենթակա է ամեն տեսակ պատահարի և անակնկալի, և թագավորները բացառություն չեն կազմում: Սակայն օտարոտին այն է, որ հրավիրել է և սոխակում է այսքան սպասել...

Եվ նա այլևս չշարունակեց: Իսկ Երեմիան, որ սովորություն ուներ ամեն մի կարևոր դեպք և զրույց գրի առնել, գնաց այդ զրույցը ևս իր հիշատակարանում գրելու:

Պապը սակայն, որ մինչ այդ, ընդունելության սպասելով, չէր ուզում դուրս գալ և իր զբոսանքները հետաձգում էր ընդունելությունից հետո,— հիմա, կայսեր հիվանդության լուրն առնելով, ավելի շուտ՝ տեսնելով, որ այդ ընդունելությունը դարող է ուշանալ կայսեր հիվանդության պատճառով— որոշեց ինքն ևս գնալ զբոսանքի: Ջնայած կարգ էր, որ օտար երկրից եկած իշխանը, թագավորը կամ դեսպանը, մինչև կայսեր ընդունելը, չպետք է դուրս գար շրջելու, բայց Պապը խախտեց այդ կարգը և ինքն էլ սկսեց զբոսանքի դուրս գալ իր շքախմբի անդամների հետ, սակայն ծպտյալ, հասարակ հագնված, որ ուշադրություն չգրավի, և այն ժամերին, երբ փողոցներում մարդ սակավ էր լինում: Եվ ամենից առաջ նա գնաց այն զորանոցը, ուր տեղավորված էր իր թիկնապահ գունդը: Գնդի վոխապետը՝ Երիտասարդ, վառվռուն աչքերով Գնել Անձևացին նրան ընդունեց ուրախությունից չիմնելով ու ժպտալով և գոհ, համարձակ դուրս տվեց զորանոցի սրահները, ուր զինվորները դիմավորում էին նրան ակնածանքով, ժպիտներով... Պապն զգում էր, որ նրանք ուրախ են իր այցելությամբ և միաժամանակ նկատում էր, որ հետաքրքրված էին լինչ-որ բանով. թե լինչով—նա սկզբում չհասկացավ. բայց հետո՝ մի սրահից մյուսն անցնելիս՝ լսեց, թե լինչպես զինվորներից մեկն ասում էր. «լինչպես իմանանք ե՞րբ է կայսրն ընդունում»:—«Հարցնելը հարմար չէ» ասավ մի ուրիշը:— «Ոլբեմն դեռ պիտի մնա՞նք այստեղ»...

Պապն այլևս ոչինչ չլսեց և մտածեց, որ զինվորները նույնպես անհանգիստ են: «Սրանք էլ, երևի, զզում են մի բան,— ասաց նա մտքում, զորանոցից դուրս գալիս:— Անհասկանալի է, թե ինչո՞ւ է վաղեմը ձգձգում այսպես»... Այնուհետև Պապը գնաց և այլ տեղեր, որ համարում էին հետաքրքրական ու տուրժան: Ի շարս այլ վայրերի՝ նա չքախմբի մի մասի և մի խումբ զինվորների հետ գնաց տեսնելու նաև Կյուչնոսի մեծահամբավ Ջրվեժը, որի տարերային ու խոլական թափը զարմանք պատճառեց բոլորին, չնայած քիչ Ջրվեժներ չէին տեսել Հայաստանում: Փրփրապեզ ալիքները գալով մատնախլատատ հոլիզոնից, ահեղ մի որոտումով և շուրջն ամեն ինչ խլացնելով՝ գրեթե վաթսուն կանգուն բարձրությունից գահավիժում էին ցած անվերջ ու միակտուր ժանեկազարդ հսկա մանվածքի նման, որ գալիս-վարագուրում էր շարունակ լալծուն ժայռերը, որոնք թվում էր, թե ահա կլացվեն մի վայրկյան, գունե մի վայրկյան, սակայն ջրերի վարպետությը չէր ընդհատվում երբեք և նրանց ալեկոծ ու հախուռն որոտը լեցնում էր շուրջն ու մէջտեղը և խլացնում ամեն ինչ: Դիտողը զոլորթյան հետ միասին զգում էր և խոնավություն. թվում էր ձեռներ ու երես թրջվում են ջրի ցայտերից, չնայած կանգնած էին ջրվեժից շատ հեռու—այնքան ուերական էր ջրերի թափը... Դրանից էր թեև, որ գետի և Ջրվեժի շուրջը երկար տարածվում էին կարճ թփանման ծառեր, վայրաթափ ուռիներ, բոցավառ դափնեվարդեր, նարնջենիներ, որոնց պտուղները պայծառ արևի տակ ընդունել էին ոսկե խնձորների տեսք: Եվ առհասարակ կանաչն ու բուսականությունը գետափերին և Ջրվեժի շուրջն այնպիսին էր որ առատությունից ու փարթամությունից կարծես տեղ չգտնելով՝ բարձրացել էր միայն, որքան կարողացել էր:

— Եթե բանակ անգամ թաքնվի այս խոտերի մեջ՝ էլ նկատվի,— ասաց Պապը, զարմանալով խոտերի բարձրության վրա:

Բաթը, որ չքախմբի մեջ էր, վրա բերավ քմծիծաղ:

— Գուցե և թաքնվել են, արքա, բայց չեն երևում:

— Ինչպե՞ս: Ի՞նչ ես կամենում ասել, Բաթ,— հարցրեց Պապը:— Ովքե՞ր կարող են թաքնվել:

— Նրանք, որ միշտ հետևում են մեզ:

— Դարձյալ կասկածնե՛ր,— ժպտաց Պապը:

— Ոչ, այբա, կասկածներ չեն, այլ ճշմարտություն: Մեզ հետևում են:

Եվ ոտքովհետև այդ պահին նրանք առանձին էին և ջրվեժի աղմուկը պատճառով մյուսները նրանց չէին կարող լսել՝ Պապը հարցրեց.

— Պարզ խոսիր, Բաթ: Ո՞վ կամ ո՞վքեր են հետևում մեզ:

— Կայսեր լրտեսները:

— Ձե՞ս սխալվում արդյոք:

— Համոզված եմ, այբա: Վաղուց նկատել եմ, որ մենք հատուկ հսկողության տակ ենք, նույնիսկ մեր գալու օրից:

— Իսկ ինչո՞ւ այդ հսկողությունը համարում ես լրտեսություն: Եթե մեզ հետևում են՝ դա կարող է լինել և մեր ապահովության համար. որ մեզ, որպես կայսեր հյուրերի, այստեղ՝ օտարության մեջ չվնասեն:

— Թույլ տուր, Պապ,— շարունակեց Բաթը ավելի մտերմաբար,— թույլ տուր ասել, որ այդ միայն ես չեմ նկատել. իմ գինվորներից մեկն ինձ ասավ երեկ, որ մեզ լրտեսում են և այն ժամանակ, երբ տանն ենք և քնած. լրտեսում են մեր զրույցները դռների և լուսամուտների ետևից:

— Այդ դուցե քեզ թվում է, Բաթ: Դավադիրներ չենք, որ մեզ լրտեսեն, և ոչ էլ հանցագործներ, որ հետևեն:

— Սակայն այդպես է, Պապ: Մեզ հետևում են... Այստեղ գալու միջոցին իսկ նկատեցի, որ հետևում են...

— Թո՛ղ, Բաթ, թող այդ կասկածները,— ընդհատեց Պապը նրան բարեհոգությամբ ժպտալով: Ճշմարիտն ասած՝ նա չէր հավատում, որ այդպիսի բան լիներ. եթե անգամ լիներ—հետևելն ու լրտեսելը նրան առանձին վտանգավոր ինչ չէր թվում: Սակայն կայսեր վարմունքը, որ շտապ հրավիրել էր և հիմա ձգձգում էր ընդունելությունը, գնալով մի օր ոտքի, մյուս օրը քանակ, երրորդ օրն ինչ-որ քաղաք, և քսանուհինգ օրվա մեջ դեթ մի օր չէր հատկացնում ընդունելու—դա ոչ միայն տարօրինակ ու զարմանալի էր թվում Պապին, այլև վիրավորական, շատ վիրավորական: Հրավիրել այդքան հեռվից, մինչև իսկ շտապեց-

նել, թե քանի Տարսոնումն եմ—թող գա, և հանկարծ, երբ եկել է այդ հրամիրվածը—չընդունել 25 օրվա մեջ և անգամ լուր չտալ, թե ե՛րբ է ընդունելու—սա մի բան նշանակում է ուշաշ: Մի՞թե վաղեսի գոլոր օրերն ղրաղված էին: Մի՞թե տեսակցության համար՝ չգտալ մի օր... ավելի շուտ՝ օրվա մեջ մեկ-երկու ժամ:

Այս մտքերը ոչ միայն վիրավորում էին Պապին, այլ նա իրեն զգում էր ծանրագես անպատված, ստորացված: Մի կողմից վիրավորում էր նրան ընդունելության ուշացումը և ընդունելու օրվա մասին լուր չտալը, մյուս կողմից այն, թե ինչո՛ւ մինչև հիմա մեկը չի ասում դոնե, թե ի՛նչի համար է կանչված կամ ի՛նչ խնդիրների առթիվ... Մենակ մնացած միջոցին թե մարդկանցով շրջապատված սահին նա վերջերս շարունակ մտածում էր այս հարցերի մասին, բայց և երբեք զգացնել չէր տալիս իր դժգոհությունն ու անհանգստությունը: Սակայն բաթի հետ ունեցած զրույցը նորոգեցին նրա մեջ այդ մտքերը. և ահա այդ խակ օրը, կյուղնոսից վերադառնալուց անմիջապես հետո, երբ անցավ իր հարկաբաժինը, նա կանչել տվեց Երեմիային:

— Դու այս ամենից հասկանո՞ւմ ես ինչ,— հարցրեց նա խոշոր խաժ աչքերը կկոցելով և Երեմիայի երեսին նայելով:

Երեմիան կես խոսքից հասկացավ Թագավորի ակնարկը, և նրա հարցումի մեջ զգաց բացահայտ տարակուսանք ու կասկած:

— Ձշմարիտն ասած, Պապ, ինձ էլս տարօրինակ է թվում այս վերաբերմունքը. չտալ կանչել և չընդունե՛լ այդքան ժամանակ... Մինչև հիմա խորհում էի, թե դուցե կայսրը ցանկանում է չքեղ մի ընդունելություն կազմակերպել, կամ, երևի, կարծում է՝ պետք է հանդստանաս երկար. ճանապարհի հոգնությունից, դուցե և կարծում է, թե այստեղ մնալը մեծ պատիվ է քեզ համար և ուրեմն որքան շատ մնաս՝ այնքան դո՛հ կլինես:

— Բայց և չի հայտնում, թե ինչո՛ւ համար է կանչել կամ ե՛րբ է ընդունելու:

— Այո, այդ էլ օտարոտի է, Պապ:

— Ել ընդունված էլ չէ, որ հարցնես,— չարունակեց Պապը հուզված:— Անհարմար է: Հյուր ես, քեզ կերակրում են, ուրեմն դո՛հ եղիր այդ չնորհից և սպասիր... Սակայն մինչև ե՞րբ...

Պապի այս խոսքերի վրա սրահի կարմիր ու պինդ դուռը բացվեց հանկարծ և, ինչպես միշտ, թափով ներս մտավ Բաթը՝ դուռը պատին շրխկացնելով, հուզված և այլայլունած:

— Դուք գիտե՞ք, որ այս վայրկյանին լրտեսում են ձեզ:

Պապը ձեռը թափ տվեց:

— Դու միշտ միևնույն բանն ես կրկնում, Բաթ, հետևում են, լրտեսում են... Որքան կուզեն հետևեն և լրտեսեն: Մենք ոչոքեղ դավադրություն չենք կազմակերպում կայսեր դեմ:

— Բայց իրենք կազմակերպում են, Պապ: Բաթը չեն հոտառություն ունի և բաղեի աչքեր,— հևալով ասավ Բաթը կարմրած:— Ես կարծում եմ, Պապ...

— Դադա՛լ, Բաթ:

— Ապացո՞ւյց է հարկավոր, Պապ,— ասավ Բաթը և, առանց իր հարցումին պատասխան լսելու, դուրս եկավ արագ,— Այս հիմա ապացույց կբերեմ քեզ:

Ջանցավ երկու վայրկյան՝ նա նորից եկավ՝ քաշքշելով հետը բերելով մի վոխտ հույն, ձեռով նրա վիզն ու կոկորդը բռնած:

— Արի խոստովանիր, որիկա, եթե ոչ խեղդում եմ քեզ:

Այդ տեսնելով՝ Պապը զարմացած պոռաց վրդով.

— Թո՛ղ, Բաթ, թո՛ղ... Դու մահացել ես քեզ: Թո՛ղ...

Երեմիան նույնպես, առաջ գալով, խնդրեց թողնել: Բայց Բաթը զայրույթից, բարկությունից կարծես իրոք մոռացել էր իրեն. նրա աչքերը, թվում էր, ուզում էին դուրս գալ ակնակապիչներից. նա հևում էր ու չէր կարողանում իրեն հավաքել, որ խոսի: Իսկ նրա բերած մարդը՝ մի վոքրամարմին հույն՝ կարմրել էր, կծկվել և նույնպես հևում էր, չկարողանալով վիզն ազատել Բաթի պինդ մատների պրկումից:

— Սա ի՞նչ է նշանակում, Բաթ,— ձայնը բարձրացրեց Պապը:— Խոսի՛ր:

Բաթը մի ձեռով իր ճակատի քրտինքը սրբելով, մյուսը թուլացրեց, ազատելով հույնի վիզն ու կոկորդը պրկումից:

— Թող սա խոսի, արքա, սա՛, որ լրտեսում է մեզ:— Խո՛սիր,— դարձավ նա վախից թե կոկորդի ցավից չշմած հույնին:— Պատմի՛ր անմիջապես, թե ինչո՞ւ էիր ականջ դրել այս դռների

տա, ինչո՞ւ ես մեզ հետևում, ինչո՞ւ մեր հետևից եկար մինչև Կյուլնոսի ափը և թաքնվեցիր թփերի մեջ: Շո՛ւտ, պատմիր ամենը...

Մարդը դողում էր՝ չէիտես վախից թե այն բանից, որ Բաթը սաստիկ սեղմել էր կոկորդը: Մի փոքր շունչ առնելով և ձեռով, ակնարկ խղճահարություն հարուցանելու նպատակով, կոկորդը զգուշ ու ցավի արտահայտությամբ շփելուց հետո՝ նա խոսեց ընդհատվող ձայնով.

— Ինձ մի սպանեք... խնդրում եմ: Ես երեխաների տեր եմ...

— Ինչ ոչ–ոք չի սպանել, եթե ասես ինչ գիտես,— ասավ Բաթը:

— Կասեմ. միայն թե, արքա,— հույնը խոնարհում արավ պապին,— խնդրում եմ խնայել:

— Խոսիր, խոսիր, ոչ–ոք քեզ չի վնասի,— ասավ պապը հետաքրքրված:

— Մարդկային թուլություն, արքա,—խոսեց հույնը:— Ես այդ բոլորն արել եմ հետաքրքրությունից: Ջեմ ուրանում, արել եմ հետաքրքրությունից դրդված...

— Հետաքրքրությունի՞ց,— քմծիծաղով ընդհատեց նրան Բաթը:— Ի՞նչն է քեզ հետաքրքրում այստեղ, Թշվառական: Մենք կրկեսի դազաննե՞ր ենք քեզ համար թե խեղկատակներ,— բռունցքով հույնի վրա վազեց Բաթը:— Հետաքրքրությունի՞ց: Մի՛ սուս: Ասա՛: Խոստովանիր...— թափ տվեց Բաթին իր բռունցքը հույնի շլմորած աչքերի առջև:

Հույնը վախից աչքերը փակեց և ապա նորից բանալով՝ երկյուղով շուրջը նայեց.

— Ես, ընտանիքի տեր եմ, արքա, ընտանիք պահելու համար...

— Դու այդ թող. քո ընտանիքը չի հետաքրքրում մեզ: Խոստովանիր ինչ գիտես,— նորից վրա դնաց Բաթը:— Խոստովանի՛ր, եթե ուզում ես ապրել ընտանիքիդ համար:

Նվ փոքրիկ մարդը, կուչ գալով և կարծես ամենի փոքրանալով, պատմեց, որ, այո, ինքը, ընտանիք պահելու համար, ստիպված է անել ամենևին բան, որ պատիվ չի բերում,

աչքինքն՝ ինքը կարգված է, այո, հետևելու, թե ո՛ւր է գնում Թագավորը, ո՛վ է գալիս նրա մոտ և, որովհետև հայերեն գիտի, կարգադրված է նաև՝ լսել, թե ի՛նչ են խոսում արմեննները:

Այս ամենը թե Գասպին և թե Երեմիային թվացին բիզանդական սովորական բաներ, սակայն նրանց մտքով մի կասկած անցավ, թե հուլյոը գուցե ուրիշ դեր ևս ունի. իսկ Բաթը չդուրեկեց ավելի տագնապած.

— Ասա՛, ուրիշ ի՞նչ է հանձնարարված քեզ:

— Ոչինչ, տեր— և հուլյոի չուրթերը նորից դողացին:

— Ասա՛. ես քո դեմքից, քո աչքերից տեսնում եմ, որ շատ բան գիտես և թաքցնում ես,— նորից սպառնաց Բաթը բռունցքով:— Եթե չասես՝ վատ կլինի. պիտի հրաժարվես կյանքից:

Վերջին խոսքերը Բաթն ասավ այնպիսի սպառնալի շեշտով, որ մարդը, որ զգացել էր Բաթի ձեռների ուժն իր կոկորդի վրա՝ փղձկաց հանկարծ ու արտասվեց, ոչ թե դերասանական այն կեղծ արցունքով, որ հատուկ է այդ տեսակ մարդկանց, այլ թշվառ մարդու մի հեկեկանքով, որ ցնցում է նրա ողջ էությունը: Բայց և այնպես նա անմիջապես սթափվելով և արցունքը մատներով սրբելով՝ կրկնեց, որ ինքը չգիտե ոչինչ. իրեն ասել են միայն, որ արմեննների Թագավորը դերվի է այստեղ, հետևիր տես ո՛ւր է գնում, ո՛վ է գալիս մոտը...

— Այսքա՛նը, տեր, այսքա՛նը,— վերջացրեց հուլյոը տակավին դողալով:

Գերվի՛... Գասպը, Երեմիան և Բաթը իրար նայեցին ոչ միայն զարմացած, այլև զունատված ու չփոթված:

— Դու ասում ես «գերվի՞», — չհամբերեց Բաթը:— Ինչո՞ւ...

— Ես չգիտեմ, տեր, ես չգիտեմ,— կրկնեց հուլյոը, և կարծես ինքնապաշտպանության համար դուրգ ձեռները շարժեց դեմքի առջև:— Ես միայն լսել եմ: Ինձ ասել են, որ կայսրը վշտացած է Թագավորից, որ սրտով իր կողմը չէ... և ուրիշ ոչինչ...

— Բավական է,— ասավ Բաթը և նրա թևքից բռնելով, այս անգամ հանգիստ տարավ դեպի կից սենյակը:— Դու մի փոքր մնա այստեղ, ես քո ասածները պիտի ստուգեմ հիմա...

Ու դուրը նրա վրա փակելով՝ հետ եկավ և ասավ՝ ձայնը իջեցնելով.— Գնանք մյուս սրահը:

Եվ երբ անցան վիշտը՝ Բաթը շարունակեց.

— Հիմա, կարծում եմ, պարզ է, Պապ: Ես շարունակ զգում էի, որ մենք տարօրինակ պայմաններում ենք, և մեզ չեն նայում իբրև հյուրի: Հիմա պետք է մի ելք մտածել:

— Այո, պարզ է, ամեն ինչ պարզ է: Այստեղ մնալն ավելորդ է այլևս,—ասաց Պապը խորին տրտմությամբ, բայց չուզելով կարծես արտահայտել այն ամենը, ինչ զգում էր և մտածում. սակայն սեղմած ձեռներն ու ծնոտները մատնում էին նրան:— Իսկ ո՞րն է քո ելքը,— դարձավ նա Բաթին մի վայրկյան լռելուց հետո:

— Իմ ելքը, սրքա, նույնն է, ինչ առաջիը. հեռանալ այստեղից:

— Այո, հեռանալ, հեռանալ,— կրկնեց Պապը:— Միակ հնարավոր ելքը դա է: Սակայն ի՞նչպես. ահա խնդիրը: Անվնաս հեռանալու համար պետք է խորհել, Բաթ, անվտանգ միջոցներ:

— Ես արդեն խորհել եմ, Պապ,— ասաց Բաթը:— Քանի մի օր ևս խորհում եմ այդ մասին: Պարզ է, որ քեզ բերել են այստեղ զերելու, ուստի պետք է հեռանալ միտքով, և ահա ինչպես: Սրան,— նա ձեռը մեկնեց դեպ այն անկյունը,— բանտարկում ենք այստեղ և անմիջապես կարգադրում մեր դինվորներին՝ դուրս գալ զորանոցից և դնալ դեպի գետը, այնինքն իբրև ձկներ լվալու–լողացնելու կամ շոգի պատճառով այդտեղ վրանները–րում ապրելու. իսկ մենք երկու խմբով տարբեր ուղղությամբ դուրս ենք գալիս, իբրև զբոսանքի: Ես այս մասին շատ եմ մտածել և եկել եմ այս եզրակացության:

Եվ Բաթը աչքերի ու ձեռների առանդուն շարժումներով բացատրեց, թե ի՛նչպես շքախմբի անդամները տարբեր կողմերից գալիս միանում են գետի մոտ. ու բոլորը, անշուշտ կլինեն ձիերով: Եվ այդպես, երբ բոլորը հավաքված կլինեն՝ միանդամից կհեռանան:

— Եվ այդ ամենն այսօ՞ր,— զարմացավ Երեմիան.—

— Ոչ, վաղը,— շարունակեց Բաթը:— Ես այսօր կերթամ զորանոց և կխոսեմ Գինելի հետ,— նա խելացի երիտասարդ է, անմիջապես կըմբռնի գործը,— և կասեմ, որ հույն վերաբերմունքն հայերի, թե անհրաժեշտ է...

Եվ Բաթը նորից բացատրեց, թե այդ ինչպես կարելի է անել։— Եվ որպեսզի այդ վերակացուն չիմանա և չկասկածի ոչինչ—նրան կտա այն, ինչի համար նա հոգի է տալիս—հայկական դինի... Ու հետները կտանեն, ի՛նչ անհրաժեշտ է... կամ՝ կարելի է ասել,—արտահայտությամբ շարունակեց Բաթը,— որ հայ գինվորներն իրրև լեռնային երկրի բնակիչներ չեն դիմանում քաղաքի չոգին, ուղում են ապրել դետափին, բացօթյա վրաններում... Դա հույներին դուր կգա անպայման. թող գինվորներն ապրեն քաղաքից դուրս, և չեն կասկածի,— ավարտեց Բաթը և հերթով նայելով Պապին ու Երեմիային հարցրեց.— ի՞նչ կասեք այժմ։

— Պետք է լուրջ խորհել,— նկատեց Պապը։— Ամեն ինչ դյուրին չի վինում այնպես, ինչպես ասվում է։ Պետք է խորհել և հշտադատել ավելի, Բաթ։

— Ժամանակը կարճ է, արքա։

— Մենք էլ կաշխատենք երկար ժամանակ չվատնել,— ասավ Պապը, և կարգադրեց չքախմբի անդամներին անմիջապես կանչել խորհրդի։

Բայց մինչ նրանք կհավաքվեին՝ նա մտքերի մեջ սկսեց երթևեկել։ Հիմա, հույնի ասածներից հետո, Պապի համար պարզվում էր, թե ինչո՛ւ իր դիմավորումն անշուք էր, ինչո՛ւ է իր ընդունելությունը ուշանում, ինչո՛ւ չկա բիղանդացիներին հատուկ սիրալիրությունը իր շուրջը, իր նկատմամբ, ինչո՛ւ կայսրը չի բարեհաճում անգամ հայտնել, թե ե՛րբ կընդունի կամ ի՛նչ խնդիրների համար է կանչել իրեն... Պապը մտածում էր նաև, թե ահա ինչու Անաբասան անպատկառ էր պահում իրեն, ահա ինչո՛ւ ասավ այն խոսքերը, թե «ուրիշները կանեն» իր գործերը...

Հիմա Պապը ոչ միայն զգում, այլ բոլոր նշաններից տեսնում էր, որ հույնի ասածը կամ պատահաբար բերանից թռցրածը ոչ միայն հավանական էր, այլև իրողություն։ Բոլոր նշաններն այդ էին վկայում։ Ուստի և Տարսոնում մնալն այսուհետ նա զանում էր ավելորդ... Պետք էր անմիջապես մի ելք գտնել... և Բաթի առաջարկը նրան անմիտ չէր թվում։ Պետք էր շուտով հեռանալ...

Եվ փոքր անց, երբ չքամքի անդամները հավաքվեցին խորհրդի, նրանք, կատարվածը լսելով գտան, որ կայսեր վերաբնմունքն իրոք կասկածելի էր, և մխակ ելքը իսկապես հեռանալն է: Միայն Զենոն Գնունին էր, որ հրավիրեց զգույշ լինել, հետաքրքրվել ավելի ստույգ բան իմանալու և հավատ չընծայել այդ հույնի ասածներին:

— Տեր Գնունի, ստույգն այն է, որ մի ամսվա մեջ ոչինչ չէր խանգարում վաղեսին մեզ ընդունելու,— ասավ Պապը վրդովացած:— Կամ դռնե հայտնելու, թե ե՛րբ է ընդունելու, եթե չի հայտնում լինչի՛ է կանչել: Բոլոր նշաններից երևում է, որ մեզ պատվի համար չեն բերել այստեղ, այլ անպատվության, դիրության, եթե ոչ ավելի վատ բանի համար:

— Բայց մենք կարող ենք սխալ տպավորություն ունենալ, արքա,— սմոլեց Զենոն Գնունին:

— Տեր Գնունի, դու սպասում ես, որ արո՞վ ապացուցեմ այդ:

Զենոն Գնունին դլուխը կախեց: Նա ինքն էլ ճշմարիտն ասած, կասկածների մեջ էր, ուստի և չուզեց առարկել Թագավորին: Մյուսներն արդեն ուրիշ ելք չէին դտնում, քան հեռանալ: Սակայն հետանալն ուներ իր վտանգները. հայոց սահմանը բավական հեռու էր և Բանասպարհը դրեթե անծանոթ,—հայտնեց Զենոնը իր այս կասկածները ևս:

Սակայն բաթն անմիջապես աշխատեց փարատել նրա կասկածները.

— Տեր Գնունի, դու խոսում ես վտանգների մասին: Անշուշտ, վտանգ պետք է նախատեսել: Բայց եթե կարծում ես, որ հույները մոտիկ զորքեր ունեն և մեզ կարող են վնասել՝ այդ չի լինի: Ես տեղեկություն ունեմ, որ այդպիսի զորքեր չկան մեր Բանասպարհի վրա, իսկ այստեղի կայազորը կամ բերդապահ զորքը այնքան փոքրաթիվ է, որ մեր հազարը կարող է չափվել նրա հետ...

— Զգուշությունը պատիվ է բերում քեզ, ազնիվ Զենոն,— ասավ Պապը,— բայց չի՞ս կարծում, որ հեռանալու վտանգն ավելի քիչ կլինի, քան այստեղ մնա՞լը:

Զենոնը չգիտեր ինչ ասել. նա անհարմար զգաց իրեն, բայց

լավ էր, հուսով անհարմար զգուշությունից նրան վրկեց մեկը, որ հարցրեց, թե՞ կայսեր համար բերած նվերները՝ փղերը, ուժուդները նույնպե՞ս պետք է տանել:

— Մեզ պետք է վրկել մեր թագավորին ու մեր մարդկանց և ոչ թե փղերը կամ նվերները,— նկատեց Երեմիան հուզված, որ մինչ այդ լուռ էր անխոս և ինքնամփոփ:

— Ուրեմն վա՞ղը,— հարցրեց Տրունի Տաճատը, որ ամբողջ ժամանակ նույնպես լուռ էր և կարծես կշռադատում էր իրենց անելիքի ծանր լրջությունը:

— Այո, բոլորդ պատրաստ եղեք բաթի կարգադրության,— ասավ Պասը, բառերը հատ-հատ շեշտելով:— Մեր մնալն այլևս ավելորդ է այստեղ: Իսկ հայոց սահմանը հեռու չէ... Երկու, երեք օրվա ճամապարհ...

Երբ շքախմբի անդամները տխուր, մտահոգ ու ծանրաքայլ դուրս եկան մեկը մյուսի ետևից՝ Պասը նորից անճնաոուր եղավ իր մտքերին: Նա կարծում էր, որ Վաղեսն իրեն զերելով՝ նպատակ ունի, անշուշտ, գրավել ոչ միայն հայ քաղաքները, այլև երկիրն ամբողջ: Վաղեսը, հավանորեն, դժգոհ է, որ ինքը քաղաքներն ազատելու պահանջ է դրել... Եվ եթե հիմա ինքը մնա այստեղ՝ նա կանի այն, ինչ ցանկանում է: Այո, կտիրի ոչ միայն քաղաքները, այլև երկիրը: Իսկ եթե գնա,— այդ չի կարող լինել: Ինքն այդ թույլ չի տա...

— «Պետք է, պետք է գնալ և չթողնել այդ» ասավ նա մըտքում:

«Բայց գուցե և չտիրեն» ասում էր մի ձայն նրա ներսը: «Գուցե և դժգոհ են քեզնից և ուզում են զերել միայն քեզ»:

— «Միա՞յն ինձ... Եթե իմանամ՝ իմ զերությունը շահ կբերի երկրին՝ ես կմնամ. կմնամ զերի... Բայց այդպես չէ: Մնալ՝ նշանակում է՝ ես իմ ձեռքով քաղաքները և երկիրը հանձնեմ հոռոմներին» մտածում էր նա, և նրան թվում էր, թե ոչ—ոք այդ չի ների իրեն:

Նրան առանձնապես մոտ կում էր այն միտքը, թե ինչ կասի Թեղովուրդը, ինչ կասեն հետևորդները, եթե վախից կամավոր մնա զերի... Նրան թվում էր, որ ամենքը կդատապարտեն իրեն, որ չկարողացավ պահել—պահպանել հայոց աշխարհը, նրա

Թագավորությունը և, հոռոմներից խաբվելով, դերի ընկավ, մնաց իր կամքով և փորձ անելամ չարավ հեռանալու:

— «Ոչ, ես չեմ մնա այստեղ. չեմ մնա դերի: Ես կերթամ նորից իմ աշխարհը պաշտպանելու... Մեր նախնիները, մեր հայրերը մեզ թողել են երկիր, քաղաքներ, ժողովուրդ՝ ես իմ կամքով ու բաց աչքով տամ, հանձնեմ հոռոմներին: Երբե՛ք... Ես կերթամ և կխրատեմ բոլոր նախարարներին, ոտքի կհանեմ Հայոց աշխարհի ամբողջ զորությունը, ես կդաշնակցեմ անգամ պարսիկների հետ և թույլ չեմ տա, որ հոռոմները հասնեն Երենց նպատակին»...

«Իսկ եթե փախչելու ժամանակ վրա հասնեն և ապտնեն քեզ» ասաւ նույն ձայնը:

— «Եվ դա ավելի լավ կլինի, քան խաբված դերությունը, քան կամավոր դերությունը. դոնե չեն ասի, որ ստրկի նման խոնարհից դլուխը...» ասաւ Պապը ինքն Երեն, միաժամանակ մոածելով, թե որքան պատվաբեր կլինի՝ եթե ինքը ոչինչ չանի իր մարդկանց ու իր անձը ազատելու, երբ բացահայտ վտանգ է սպասում Երենց բոլորին: Այո, նա կերթա. եթե ապանվի—ոչինչ, դա լավ է դերությունից. իսկ եթե ազատվի՝ նա կպաշտպանի իր երկիրը: Եվ նա հույս ուներ, վստահ էր, որ իր նախարարները պատրաստ կլինեն Երեն. դորք կտան՝ բանակը մեծացնելու: Ձտան՝ լուռ կանի և հրամեր կկարդա ամենքին, որ ոտքի ելնեն, զենք առնեն, ինչպես Շապուհի արշավանքի օրերին, և կրծքով, սրտով պաշտպանեն հայրենի երկիրը...

«Ես ոչ մեկին հրամեր կկարդամ, այլև կաղերսեմ բոլորին, որ պաշտպանեն հայրենիքը... Եվ թող ես ընկնեմ, միայն թե երկիրը մնա... Ո՛չ. ես բաց աչքով հոռոմներին քաղաքներ ու երկիր չեմ տա... Վաղեսը գործում է Շապուհի օրինակով... Բայց ես հույս նման դերի չեմ մնա... Ո՛չ...»:

Դերի՛... Պապը մոածում էր միաժամանակ, թե արդյոք Տերենսը դիտե՞ր այս, թե ոչ: Եվ նրան թվում էր, որ—ոչ: Որքան էլ բիզանդացի և դիվանագետ—նա այս խորհուրդը չէր կարող ունենալ. նա, որ մևհնելիս՝ խորհուրդ տվեց մոեմմաթար—պահանջել քաղաքները...

Բայց Պապի միտքը երկար կանգ չառավ դրա վրա. նա նորից դարձավ իրենց մտադրությանը—կհաջողվի՞ արդյոք, թե ոչ... անվտանգ կհասնե՞ն արդյոք սահմանը հայոց, թե կհանդիպեն ծանր փորձանքների...

***

Երբ Բաթը հեռանալու որոշումը դինվորներին հայտնելու համար դուրս եկավ զորանոց գնալու, բակում հանդիպեց հյուրընկալ Անաբասին, որ գլխարկը վերցրած ճակատի քրտինքը սրբելով գալիս էր պալատ: Բաթին տեսնելով՝ նա կանգ առավ կես ճանապարհին:

— Ո՞ւր, հարպեվի, այդպես չտապ և անհանդիստ,— ասավ նա ժպտալով:

— Ա՛հ, շատ ուրախ եմ, որ ձեզ հանդիպեցի,— ասավ Բաթը:— Գնում եմ մեր զինվորների մոտ:

— Զինվորների՞ մոտ: Եվ ինչո՞ւ,— ու Անաբասը զարմացած նայեց Բաթին:

— Գիտեք, նրանք շատ դժգոհ են ինձնից:

— Եվ ինչո՞ւ, հարպեվի:

— Նրա համար, որ թերել ենք զորանոցում թողել: Իրրև յեռնայինն երկրի քնակիչներ՝ նեղվում են քաղաքում, շոգը տանել չեն կարողանում: Պահանջում են, որ իրենց թույլ տանք դնան դաշտում՝ վրաններում ապրելու, կամ որևէ դետի մոտ, որ կարողանան իրենց ձիերը շուտ-շուտ լողացնել և իրենք լողանալ:

— Եվ դնալով՝ ի՞նչ եք ուզում անել, հարպեվի,— հետաքրքրվեց Անաբասը:

— Գնամ հանդստացնեմ, որ դա անհարմար է:

— Ինչո՞ւ է անհարմար,— ասավ Անաբասը ուսերը վեր քաշելով:

— Անհարմար այն իսկ պատճառով, որ իրրև հյուր, մենք չպետք է պահանջկոտ լինենք, այլ պետի ենթարկվենք եղած պայմաններին:

— Գիտեք ինչ, հարպեվի,— դլուխը ծածկեց Անաբասը մտա-

խոհ,— պնդվողներն էլ այդ ցանկությունը կարելի է հարգել: Դա, իմ կարծիքով, վատ ցանկություն չէ:

— Ես նույնպես կարծում եմ՝ վատ ցանկություն չէ. բայց անպատշաճ է դիմացավանք պատճառել մեր հյուրընկալներին:

— Այդ ոչինչ, հարգելի: Ի՞նչ դիմացավանք: Ինձ թվում է, որ այսօր խնդիր կարելի է ընդհատվել նրանց ցանկության: Ես կարող եմ կարգադրել, որ ինձ տան նրանց քաղաքից դուրս գալու: Անգամ, եթե ցանկանում են հայրենիք գնալ՝ մենք կարող ենք օգնել նրանց:

«Հայրենիք ուղարկել առանց թափավորի՛... Սա ասում է միանամայն, թե բերանից թույրից» մտածեց Բաթը և ասաց հանդիսատ.

— Ոչ, առայժմ նրանք ուզում են ապրել բացօթյա: Եթե դուք դեմ չեք, ես այդպես էլ կարող եմ ասել նրանց:

— Ես լինքս կարող եմ գալ ձեզ հետ և այդ բանը թույլատրել նրանց,— պատրաստակամություն հայտնեց Անտրասը աչխուժով:

— Դուք շատ բարի եք, ազնիվ Անտրաս. ես չէի ուզի ձեզ նեղություն տալ: Ինքս արդեն կհայտնեմ ձեր թույլտվությունը:

— Այդ դեպքում՝ իմ մատանին կամ մի նրկատող այնտեղի մեր վերակացուին, որ ինքն էլ օգնի այդ բանին,— ասաց հուշն պաշտոնյան:

— Կարծում եմ մատանին բավական է,— նկատեց Բաթը անտարբեր:

Եվ մինչ Անտրասը հանում էր մատանին՝ Բաթին թվում էր, թե իր ձեռնարկության մեծ մասը հաջողում է, բայց թե ինչ կլինեն հետո՝ առայժմ չէր մտածում: Զգում էր, որ վատնդավոր ձեռնարկություն է սկսել, բայց պետք էր. թափառելից դուրս գալու հարմար ուրիշ ճանապարհ չէր տեսնում. կամ պետք է մնային դերի ու մնռնեին անպատիվ մահով, կամ հետևային ուղտատերի ճանապարհին մեռնեին ազատասերի մահով: Մյուս կողմից նա արտում չարախնդում էր Անտրասի վրա, որ խաբեց նրան. «Բայց վերջն է գովելի» ասում էր նա մտքում մխիթարանակ. «կամ կընկրչենք կամ կազատվենք»... «Չէիմա տեսնենք ի՞նչպես կվերաբերվեն դինվորները... Կցանկանո՞ն

վտանգի ենթարկել իրենց, թե մնալ այստեղ դերի» մտածում էր Բաթը:

Բայց Բաթի կասկածը զինվորների մասին ի զուր էր. երբ նա Գինեի ու Հրահատի ուղեկցությամբ մտավ զորանոց և տատնապետներին հավաքելով, հայտնեց, թե ինչ դավ է լարված Թոդավորի և իրենց դեմ— նրանք քարացան, հետո հանկարծ հայհոյանքներ ու անեծքներ թափեցին միանգամից: «Թո՛ւ... խարդա՛խ... նզովյա՛լ հոռոմներ»... Իսկ երբ հայտնեց, թե ինչ են որոշել այդ դրությունից դուրս գալու համար՝ նա ապաստում էր, թե շատերը կհրաժարվեն վտանգի ենթարկվելուց, ասկային հզավ հակառակը. բոլորը թեթևացած չունչ քաշեցին և բացականչեցին.— Հիմա խոկ, տեր Սահառունի, տեղափոխվենք հիմա խոկ...

— Ոչ,— ասավ Բաթը;— տեղափոխությունը հիմա կարող է կասկածելի թվալ: Այս գիշեր մնացեք այստեղ, խոկ առավոտյան վաղ տեղափոխվեք դեպի մյուս ափը. բայց առանց աճապարելու և հանգիստ: Զգուշությամբ նախապատրաստեք ձեր զինվորներին,— ավելացրեց Բաթը:— Ձեզ հետ պետք է տանեք նաև ձեր պաշարն ու ձեր վրանները:

— Պաշարը՝ հասկոնալի է, տեր Սահառունի;— ասավ մի համարձակ զինվոր,— խոկ վրաններն ինչո՞ւ համար:

— Ներա համար, որ կասկած չծագի, որ ամեն ինչ բնական թվա:

Տատնապետները լռեցին. բոլորի դեմքին ծանր մտահոգության հետ միասին նկատվում էր զուսպ մի ոգևորություն և մի կատաղի վճռակամություն:

— Այդպե՛ս. ուզում են ուրեմն մեզ դերի պահել... Իմի՛ծ ծնունդներ...

Այդ գիշեր ոչ-ոք չքնեց ոչ զորանոցում, ոչ հայոց Թագավորի պալատում. բոլորից առանձնապես անհանգիստ էր Բաթին ինքը. նրան թվում էր, թե հոռոմները հանկարծ կարող են խմանալ իր ծրագիրը կամ կռահել թե ինչո՛ւ համար է զինվորների այդ տեղափոխությունը: Նրան թվում էր, թե բանտարկված հուն լրտեսը կարող է հանկարծ փախչել անկյունից կամ ոտքում բարձրացնել և, այդպիսով ազատ բերել իրենց վրա:

Այդ պատճառով նա դիշերով գնաց ստուգեց դռան փակը և նույնիսկ ասաց, որ նա հանգիստ լինի, առավոտը քաց կթողնի... Անհանգստությունից՝ բաթը շքախմբի անդամներից մոտից անցնում էր թագավորի մոտ, թագավորի մոտից նորից նախարարների մոտ և նրանց հանգստացնելով ու սիրտ տալով՝ կարծես հանգստացնում էր և իրեն։ Նրան պաշարում էր մերթ անաչողության երկյուղը, մերթ էլ թվում էր, թե ամեն ինչ լավ կլինի, վաղն անտեղի է և լղոզը, ու այդ ժամանակ նորից զբաղում էր մյուսներին հուսադրելու...

Շքախմբի անդամներից չատերը հավաքվել էին մեկ մոտ, կենչակս մի մեծ արհավիրքի կամ վճռական ելույթի սպասելով. և ամեն անգամ, երբ բաթը մտնում էր նրանց սրահը և հուսադրելով՝ դուրս գալիս, գեր Օտա Ալահունին քունը հալվել հաղթահարելով, Զենոն Գնունուն քաշում էր մի անկյուն և շշնջում. «Սա մեզ կործանելու է, տեր Գնունի»... «Ինչ կարող ենք անել, տեր Ալահունի. թագավորն ինքը նույն կարծիքի է։ Թագավորն է կարդադրել».. «Բայց մեզ բոլորիս, իհարկե գերի չենք պահելու»... Այս խոսքերի վրա Զենոն Գնունին ձեռն անխոս տանում էր դեպի բերանը, հասկացնելով, որ այդ մասին խոսելն ավելորդ է. պետք է լռել... Մյուսներն անհամբեր սպասում էին լուսանալուն. ինքը բաթը մի քանի անգամ դուրս եկավ աստղերով որոշելու կամ իմանալու՝ գիշերվա ո՛ր ժամն է։

Իսկ երբ առավոտը հազիվ լուսացավ՝ պապը կարդադրեց բաթին չտապել զորանոց և տեսնելու ի՛նչ է կատարվում այնտեղ։ Բաթը, որ ինքն էլ դրա համար անհանգիստ էր—չտապեց անհամբեր և մասամբ հանգստացավ, երբ տեսավ բոլոր գիշերվընները տաքի վրա պատրաստություն են տեսնում տեղափոխվելու. ամանք ձիու սարքերն են հագցնում, ամանք պաշարի բեռներ են կապում, ամանք վրաններ են կապկպում մի անկասկած հանգիստ հոգածությամբ, որ բաթը մեկ ուղեց չտապեցնել նրանց, բայց դուռ չտապելը կանգնած տեղից կատր հուշն վերակացուին, որ բանակում կանգնել էր տեղափոխությունը ղեկավարող Գնել Ալճևացու և Հրահատի կողքին և բավականությամբ դիտում էր հայ գինվորների աշխատանքը. բաթին թվաց, որ նա մինչև կոկ ուրախ է, որ հայ գինվորներն սպասում են զորանոցը և, կենչակս

հետո պարզվեց, նա Գնել Անձևացուն ասել էր, թե «լավ կը անում, որ տեղափոխում եք զինվորներին. քաղաքում մնալով՝ նրանք կարող էին թերևս վատ ախտերով վարակվել կամ անկարգություններ անել»:

Երբ բաթը տեսավ սմեն ինչ լավ է ընթանում՝ Գնելին կանչեց մի կողմ և ասավ.

— Երբ մինչև վերջին մարդը ճանապարհ ընկնենք՝ հայտնիր ինձ:

Ու ինքն չտապից պալատ՝ այնտեղ ևս պատրաստություն տեսնելու: Ամենք պալատում պատրաստություն տեսնելու առանձին կարիք էլ չկար. նրանք պատրաստ էին երեկվանից: Բոլորն սպասում էին հարմար ժամի, որ ճանապարհ ընկնեն: Ու քանի մոտենում էր այդ ժամը՝ այնքան դառնում էին անհամբեր...

Եվ ահա, երբ սովորական ժամին, կեսօրից հետո, հյուրընկալ Անաքսան եկավ հայոց թագավորի տունը՝ նա տեսավ բոլորը՝ թագավորն իր ամբողջ շքախմբով ձիեր հեծած պատրաստվում են բանակից դուրս գալու:

— Այս ո՞ւր, հարցրեց նա զարմացած իր դեմն եկող բաթին, որ նույնպես ձի նստած՝ առաջինն ուղում էր դուրս գալ բանակից:

«Անպատեհ ժամի եկավ անակնկալը, մտածեց բաթը.— Հասկացե՞լ է, որ ձեռնարկում ենք ինչ-որ, թե եկել է պատահաբար: Բայց եթե եկել է այս ժամին՝ նշանակում է գիտե ինչ, դուցե և մի բոլոցներ է ձեռք առել»... Մտածելով այս, ստիպեց ամենայնիվ բաթը պատասխանեց հանգիստ.

— Առանձին ոչինչ, բարեկամ: Թագավորն ուզում է զննել տեսնել, թե զինվորներն ի՛նչպիսի տեղ են ընտրել բանակելու, վրան խփելու համար:

— Այո՞: Եթե այդպես է, ես էլ կուզեի գալ-տեսնել, թե որքան հարմար տեղ են ընտրել,— ասավ հյուրընկալ Անաքսը այլևս ձիուց չիջնելով:

— Ես չէի ուզի նեղություն տալ ձեզ,— հարեց բաթը:

— Ի՛նչ նեղություն, հարգելի. դա իմ պարտականությունն է, որպես հյուրընկալի... Պարտավոր եմ տեսնել ի՛նչպես են ապրում իմ հյուրերը...

«Միամի՞տ է, թե մխամտությունն է կևղծում» նորից մտածեց Բաթը ու, ձին քշելով դեպի Պապը, հայտնեց նրան հյուրընկալի ցանկությունը և իր կասկածը:

— Թող գա,— ասաց Պապը,— ալդեվել չենք կարող...

Ու չքախումբը, տաս-տասնուհինգ մարդ, նրանց հետ և պատսում եղած հայ զինվորները, թաղամասին շրջապատած, ճանապարհ ընկան ակդրում ձիերի հանդարտ քայլքով, ապա ավելի ուժեղ ոռնոտոցով, դրավելով քաղաքացիների ուշադրությունը:

Անտրան իր ձին քշում էր Բաթի ձիու կողքին, նրան համընթաց և ասում էր ընդհատումներով:

— Ինչպես երևում է ձեր թագավորը չատ է սիրում իր զինվորներին, որ այդպես մտահոգված է նրանց բանակատեղով:

— Ամեն մի թագավոր պարտավոր է սիրել իր զինվորներին,— ասաց Բաթը և նորից մտածեց. «Խորամանկությո՞ւն է անում սա, թե միամիտ է»:

— Զինվորներն առհասարակ տաբօրինակ մարդիկ են,— շարունակեց Անտրանը,— սիրում են միշտ ազատ-արձակ տեղեր: Նվ դրա համար մեր կայսրը նրանց պահում է քաղաքից դուրս պրոնոցներում:

— Այդպես ավելի լավ է, հարկավ,— համաձայնեց Բաթը, մտածելով, թե ինչո՛ւ է այդքան չատ խոսում հունը. դիտի՞ մի բան, թե չատախոսում է աննպատակ:

— Իսկ նրանք տեղափոխվե՞լ են արդեն,— հարցրեց հունը:

— Կարծեմ այսօր առավոտից:

— Ա՛, հիմա, երևի, վրանները խփած՝ լողանում են,— շարունակեց Անտրանը:

— Երևի,— վրա բերավ Բաթը մեքենայաբար:

Սակայն մեծ եղավ հյուրընկալ հունի զարմանքը, երբ տեղ հասնելով, նկատեց, որ զինվորները տակավին բանակելու, վրան խփելու պատրաստություն չէին տեսել. թեև վրաններ և այլ բեռներ թափված էին գետնին, բայց զինվորներից չատերը կապա-պատրաստ նստած էին ձիերի վրա, նույնիսկ բեռնավորված ձիերից մի քանիսը դեռ կանգնած էին իրենց բեռներով... և Անտրանին այնպես թվաց, թե նրանք, երևի, սպասում են Բա-

դավորին ու չքախմբի անդամներին, որ նրանք որոշեն բանակատեղը: Բայց երբ Պապը հասավ գետափը՝ զինվորները տեսնելով իրենց թագավորին, աշխուժացան ձիերի վրա և ուրախ բացականչություններ արին, որին Պապը պատասխանեց ձեռի ողջույնով, մեծ սպիտակ ձեռը թիկնոցի տակից բարձրացնելով՝ տատանեց օդում:

Այդ ժամանակ զինվորներից բաժանվելով՝ ոտները ճերմակ մի կարմիր նժույգի վրա նստած առաջ եկավ և թագավորին մոտեցավ երիտասարդ Գնել Անձևացին. տենղամաու աչքերով նա թագավորին լինչ-որ բան ասավ, որից հետո Պապը ձին քշեց դեպի արևելք. նրան հետևեց և չքախումբը: Նրանց հետ սկսավ գնաց և հյուրընկալ Անաբասը, մտածելով, երևի, թե որոնում են բանակելու ավելի հարմար տեղ, բայց երբ տեսավ չատ են առաջ գնում—նա զգուշացրեց Բաթին.

— Դուք սխալ ճանապարհով եք գնում, հարգելի:

— Ոչ, քարևկամ. թագավորն ուզում է ծանոթանալ վրանատեղի շրջապատին, թե որքան է լավ և ապահով:

— Օ՛, հարգելի, այստեղ առհասարակ ավելի լավ և ապահով վայր է, քան Տարսոնի որևէ կողմը,— ասավ Անաբասը, որպես լավատեղյակ մեկը. բայց հանկարծ ետևից ձիերի ոռնոցուկի լսելով՝ կանգ առավ զարմացած:— Իսկ ղորքն ինչո՞ւ է գալիս,— դիմեց նա Բաթին:

— Ցանկանում են, երևի, պատիվ տալ թագավորին և մի փոքր ուղեկցել նրան,— պատասխանեց Բաթը:— Մեր զինվորները, գիտեք, շատ են սիրում թագավորին, ինչպես և թագավորը զինվորներին:

Անաբասը նորից ետ նայեց:

— Բայց նրանք... կարծես բոլորն են գալիս, և իրենց իրերով, նույնիսկ բեռնակիր անասուններով,— ասավ հույնը զուսպ:— Սա ի՞նչ է նշանակում, հարգելի: Մի՞թե հեռանալ են ուզում, և ո՞ւր...

Գանի որ բավական հեռացել էին քաղաքից՝ Բաթին այլևս չուզեց թաքցնել:

— Հայրենիք, հարգելի, հայրենիք,— ասավ նա հնչեղ խառը:

— Ի՞նչպես,—զարմանքից ձին կանգնեցնել ուզեց Աֆաբատը։

— Այնպես։ Հյուրանիրությունից հոգնած՝ գնում են հայրենիք,— պատասխանեց Բաթը, մի ժամանակ մտրակելով նրա ձիուն։

— Դուք կատա՞կ եք անում, հարցրեք,—չհավատաց հույնը։

— Ինա՛վ. կատակ անելու ժամանակ չունեմ...

— Բայց... բայց, եթե դա ճիշտ է, դուք... դուք ինձ մատնում եք դըժ... դժբախտության,— կակազեց Աֆաբատը շփոթված, լսածից կարծես շշմած։

— Ո՛չ, ոչ մի դժբախտություն... մենք քեզ կտանենք մեզ հետ,— ասավ Բաթը,— ու ձեռը մեկնեց հույնի ձիու սանձը բռնելու։

Բայց հույնը մեկնեց, լցվելով մի բուռն վճռակամությամբ, ֆիու դլուխը թևքից—վախցրեց նրանից ու սլացավ դեպի դաշտը։ Պարզապես նա չուզեց ետ դնալ, որ ետևից եկող հայ զորքին չհանդիպեի, այլ խույս տվեց փախչելու կամ քաղաքը լուր տանելու դիտավորությամբ։ Նա գնում էր քառատրոփ, մի այլ պահի ընթացքով՝ կարծես փախչում էր կրնկակոխ հետապնդումից. ձիու ոտների թափից հողի կտորներ էին թռչում այս ու այն կողմ։

Բաթը մեկ մտածեց ձին քշել—բռնել նրան և տանել հետևը, որ իրենց հետապնդու լուրը չհասցնի քաղաք, բայց միայն վտանգ նրա ուշացած եռանդի վրա և ինքն էլ, ետ դառնալով, չտապեցրեց զինվորներին։

— Քշի՛ր քառատրոփ,—հրամայեց նա, դպա դիմելով նրանց առաջնորդ Գնել Աֆեվացուն՝ ավելացրեց.— Նետաձիգները՝ հետևի շարքերը, Գնել. պատրաստ պահիր դիմադրելու իր դեպք վտանգի։

— Այդպես էլ կարդադրված է, տեր Սահատունի,— չիկացած դեմքով ու վառվող աչքերով մոտեցավ Գնելը ձիով։ Ապա ետ դառնալով՝ չտապեցրեց զինվորներին, ինքն իր ճերմակատա ձին վազեցնելով նրանց առջևից, կարծես նրանց օրինակ տալու համար։

Ճանապարհը հարթ էր, և նրանք, ձիերը բարձրացնելով, աշխատում էին այդ ճանապարհով, որ ուղիղ գնում էր դեպ հա-

ողջ, ուր քարակ չամանդաղի մեջ կապուլյային էին տալիս ցածր տեսողական լեռները, կարծես թեթև ծխով սարսուռված:

Կեսօրվա արևը մաքուր կապույտ երկնքից ողողում էր նրանց ճանապարհը առատ լույսերով, և նրանք գնում էին սկզբում համաչափ վարժով, ապա հետզհետե արագացրին ձիերի ընթացքը, ու հին հռոմեական քարած ճանապարհը կարծես կարկատվում էր նրանց սմբակներով:

Գնելի կողքին իր ձին քշում էր Հրահատը՝ պինված մխիթարի թրով և աչքերը հառած կապույտին տվող այդ լեռներին, որ հիշեցնում էին նրան իր առաջին ճանապարհորդությունը, որ այնպես հանգիստ էր և հաճելի: Իսկ նրանց առջևից՝ թիկնեպ մարմինը իր ձիու վրա առաջ թեքած՝ սլանում էր Բաքը՝ մի աչնպիսի լարումով, որի մեջ Գնելն զգում էր և նպատակասլաց կամք և մի հոգացողություն, որ իր թագավորին, ընկերներին ու զինվորներին շուտ, որքան կարելի է շուտ հետացնի վտանգից: Իսկ թագավորը գնում էր Բաքի առաջ, մի մեծ խումբ նետաձիգ և նիզակավոր զինվորներ առնից, իր լրիվ չքախմբով շրջապատված, որոնք հիմա զինվորներից չէին տարբերվում, որովհետև բոլորն էլ վերցրել էին լրենց թիկնոցները և մնացել նախապես հաղնված զինվորի հագուստներով: Նուիրը արել էր և Պապը: Այնպես, որ կողմնակի մարդը նրանց տեսնելով՝ չէր կարող տարբերել հասարակ զինվորից, մի բան, որ նրանք մտածել և արել էին դեռ գիշերը:

Ու բոլորը՝ թե առջևից գնացող նետաձիգներն ու նիզակավորները, թե թագավորն իր չքախմբով, թե ետևից եկող նիզակավորներն ու վերջապահ նետավորները՝ լրենց ձիերը քշում էին աչնպես զգաստ ու արընթաց, կարծես գնում էին հետապնդելու ինչ-որ թշնամու. իսկ երբ երբեմն ետ էին նայում՝ տեսնում էին նախ փոշու մի երկար ամպ լրենց անցած ճանապարհի վրա և ապա հեռվում՝ ծառերի մեջ երևացող Տարսոնի տանիքը, որտեղից տեղ-տեղ խազաղ ծուխ էր ոլորվում դեպի վեր:

Թե որքան ճանապարհ կտրեց-անցավ Պապն իր չքախմբով ու քիչնապահ գնդով՝ որոշել դժվար էր, բայց արդեն, կարելի է ասել, ժամեր էին անցել, երբ ետևից եկող նետաձիգները, ետ նայելով, նկատեցին հեռվում, քաղաքի կողմը փոշու մի ամպ,

որ պնդում էր մոռանում էր: Հետզհետե պարզվեց, որ դա ձիավորների մի մեծ խումբ էր, որ գալիս էր քաղաքի կողմից՝ վոլոկի ուղեւորընթաց, ավելի արընթաց, քան գնում էին իրենք:

— Հետապնդո՞ւմ... Հետապնդո՞ւմ է... այս լուրը մի վայրկյանում անցավ-հայտնի դարձավ բոլորին՝ զինվորներին ու նրանց ղեկավարներին, և ինքը կարգադրեց՝ առաջ գնալ, առանց ընթացքին դանդաղեցնելու, իսկ ինքը, ձին կանգնեցնելով, մնացավ վերջապահին:

Նրա օրինակին հետևեցին Գնեզն և Հրահատը:

Հույները մոռանում էին ավելի արագընթաց, ձիերի կարկլատային ռահատուրուխով, որից զետինը դողում էր կարծես:

Մոռնալով մի նետորնկեց տարածություն՝ հեռվից նրանցից մեկը կանչեց հունարեն. «կացե՛ք, կացե՛ք»... Ու ձեռքով արավ, որ կանգնեն, այն ձևով, կարծես ետ էին մնացել՝ ուզում էին դալ միանալ իրենց ընկերներին:

Բայց վերջապահ հայ նետաձիգներից մեկ-երկուսը հանաքով պատասխանեցին միաժամանակ.

— Ե՛տ դարձեք, ե՛տ դարձեք...

Ու ձեռքով նշան արին, որ ետ դառնան:

Սակայն հույները չարունակեցին առաջանալ նույն ընթացքով:

Պարզվեց, որ դա քաղաքի կայազորի սեփն էր մի խումբ զինվորներով: Նա ոչ թե հրամայում էր կամ սպառնում, այլ խնդրում էր ետ դառնալ և չենթարկել իրեն կայսեր բարկությանը:

Բայց հայերը, առանց նրան պատասխանելու, չարունակեցին իրենց ընթացքը՝ ամբողջ ճանապարհն ու միջոցը լեցնելով ռահատուրուխով ու զենքերի շրխկոցով:

Տեսնելով իր կանչերն ու հորդորները ապարդյուն են անցնում՝ նա երկու ձիավոր ուղարկեց դեպի քաղաք: Հայերը հասկացան, որ դրանք գնում են օգնություն կանչելու համար: Այդ նկատելով հանդերձ՝ նա չարունակեց հետևել և խնդրել, որ կանգնեն, ետ դառնան:

— Արմեն զինվորներ, հայանեցիք ձեր թագավորին, որ սխալ քան է անում. հետևանքը վատ կլինի: Թող ետ դառնա.

մեկնում է, Արմենիա հասնել չի կարող... Ասացեք, թող կանգնի, ետ դառնա...

Նրա խոսքերը վերջապահ նետաձիգները, աղեղները պատրաստ բռնած հայտնում էին առջևից գնացողներին, սրանք, իրենց հերթին, մյուսներին և այդպես խոսքերը հաղորդվում էին մինչև շքախմբի անդամները: Սկզբում Պապը, խմանալով հետապնդում են իրենց, կարգադրեց՝ ոչ մի նետ չարձակել հետապնդողների վրա, մինչև որ հույներն իրենք չարձակեն. «Ո՛չ մի նետ» կրկնեց նա: Իսկ հիմա լսելով կայազորի պետի առաջարկը՝ «ետ դառնալ»— նա հրամայեց.

— Հառա՛ջ, առանց կանգ առնելու...

Ու հիմա ձիերը քշում էին ավելի արագ ու ճեպով, որպեսզի կայազորի պետի կանչած օգնությունը չհասած՝ հեռանան ավելի մեծ տարածություն: Գնում էին այնպիսի թափով, որ հեծվորները լսում էին միայն իրենց ձիերի ոռնատրոփը և զենքերի ու ապարանջանների շրխկոցը:

Արևը, դեմից լուսավորելով, խաղում էր նրանց նիզակների ու ձիասարքերի վրա: Եվ այնպես էր թվում, թե նրանք արևով հարբած գնում էին դեպի արևը. ոչ թե գնում, այլ ճախրում են թևաբաց ու մրրկասլաց:

Նորից դժվար է ասել՝ որքան տարածություն անցան կամ քանի ժամ էր գնում էին այդպես ձիերը չափ քցած՝ հանկարծ վերջապահի դեռները, որ պատահականություն ունեին չարունակ ետ նայելու և եկող հույների մասին առաջին շարքերին կամ պարզապես իրենց առաջնորդներին՝ Գնելին, Բաթին ու Հրահատին իմացնելու, կրկին փոշու ամպեր նկատեցին ճանապարհի վրա, որ գնալով մոտենում էին: Կամաց-կամաց պարզվեց, որ դա կայազորի մյուս մասն էր, դատելով նրա շատությունից՝ ավելի մեծ մասը, որ սպատազեն գալիս էր յուրայիններին օգնելու:

Երկու մասերն իրար միանալով՝ սկսեցին առաջանալ ավելի մեծ թափով ու աղմուկով: Թվում էր այդ աղմուկը բարձրացնում են հարթերին վախեցնելու, ահաբեկելու:

Բայց հայերը գնում էին դարձյալ նույն ընթացքով ու նույն դասավորությամբ, դարձյալ զենքերը պատրաստ, և Բաթը մերթ

ձին քշում էր մինչև առաջին շարքերը, մերթ կանգնում-մխանում էր վերջապահին ու կրկնում.

— Եղբ՛ք հանգիստ. ներանք մեղնից շատ չեն...

Թաղավորը նորից հրամայեց.

— Բաթ, կարգադրիր ոչ մի նետ չարձակել մինչև ներանք չսկսեն:

Բաթը թեև կուզեր (նույնն ուզում էին և զինվորները), որ հարձակվեին և նետահարեին այդ ապիկարար հույներին, բայց հնազանդվեց թաղավորի հրամանին: Եվ մինչ նա թաղավորի հրամանը հայտնում էր վերջապահին, նկատեցին, որ հունական զինվորներից մի քանիսը, իրենց խմբից պոկվելով, ամենայն համարձակությամբ առաջացին առաջ: Ներանք գալիս էին ձիերը չափ քցած, քամու պես: Գալիս էին բարձր աղաղակով: Իսկ երբ ներանցից մեկը, ըստ երևույթին ամենից խիզախը մոտեցավ—գոռաց բամբ մի ձայնով.

— Անձնատո՛ւր եղեք, կեղտոտ արմենններ, անձնատո՛ւր,— և լարեց աղեղը:

Նետը վղղալով եկավ ու կպավ վերջապահի զինվորներից մեկի թևին:

Դա բավական եղավ: Վերջապահի հայ նետաձիգները մեկեն կանգ առան ու մխանպամից ավելին նետեր արձակել դեպի աղմուկով առաջացող հույները:

Ընկավ «անձնատուր եղեք» գոռացող և առաջին նետ արձակող հույնը:

Ընկավ նրա հունից եկողն էլ, որ նույնպես պատրաստվում էր արձակել իր նետը, ապա երրորդը կախվեց սրընթաց եկող ձիու թամբից:

Սա ըստ երևույթին, կատաղեցրեց հույներին. ներանք ավելի արագացրին ձիերի ընթացքը և մոտեցան նետեր արձակելով: Հայ զինվորները չվհատեցին իրենց դիրքը. ներանք կանգնած նետահարում էին եկողներին:

Հույները շարունակում էին գոռալով առաջանալ անվախ: Բայց հայերը դարձյալ դիմավորում էին նրանց նետերով: Իսկ երբ տեսան հույները բավական մոտեցել էին և կարող էին մեծ վնասով նետեր արձակել՝ հայերը մի ակնթարթում ևս իրար հունից

արձակեցին նետերը և նորից սլացան առաջ՝ ձիերի վրա կուռացած:

Հուները փորձեցին հաանել:

Հայերը կրկնեցին նուլնը. նորից անապատելի կանգ առան ու թափով–աղմուկով եկող հուներին դիմավորեցին նետերով, անակնկալի բերելով նրանց. և մինչև նրանք կսթափվեին ու նետեր կարձակեին՝ հայ նետաձիգները նորից կուռացան ձիերի վրա ու սուրացին առաջ:

Ու այս կրկնվեց մի քանի անգամ: Եվ հուն զինվորները, որ չտապելուց արդեն հևասպառ էին, տեսնելով այդ անապատ դիմադրությունը, կանգ առան, իսկ ոմանք ձիերի գլուխը դարձրին կարծես ետ գնալու: Դրանից օգտվեցին հայ նետաձիգները և դրոհեցին նրանց վրա: Հուները փախան ավելի արագ, քան եկել էին, մոռանալով տեսնելով իրենց փոքրաթիվ լինելը:

Հայ նետաձիգները հետապնդեցին նրանց մի փոքր տեղ ու նորից ետ դարձան:

Մինչ այդ մութն ընկնում էր: Հայերը ճանապարհը շարունակեցին դեպ անծանոթ հեռուն, դեպի մութ, անտառոտ լեռնները, մոռանալով, որ ամեն վայրկյան հուները կարող են կարել իրենց առաջը, կարող են մինչև՝ իսկ բանակ հանել–բերել իրենց ետևից:

ԳԼՈՒԽ ՋՈՐՐՈՐԴ

Ամբողջ դիշերը, առանց սրունկ տեղ կանգ առնելու, հայ հեծելազորը իր թագավորին ու նրա շքախումբը մեջ առած, դնում էր մի անգամ ընտրած ճանապարհով, առջևից ուղեկցող հետախույզներ ու դիտեր, հետից ունենալով որատես հետախնդներ, որ մի բան լինելու դեպքում իմացում տան։ Բայց թախտրևանը՝ առտուցայս դիշեր էր, և ճանապարհը հարթ։ Դա Տարոնի դյխավոր ճանապարհն էր, որ այդ վաճառաշահ հարուստ քաղաքը կապում էր արևելյան գավառների ու երկրների հետ, մի ճանապարհ, որով արևելքից միշտ ուղտերի բեռնատարժ կարավանները էին գալիս՝ զանազանների ղողանջով կիլիկիայի տրե հռչակավոր մայրաքաղաքը, որ առևտրի կենտրոն լինելուց զատ՝ նաև կրոնավորների հավաքատեղի էր, ուր տարեկան մի քանի անգամ լինում էին կրոնական ու դավանաբանական բուռն վեճեր հույն և սիրիացի եկեղեցականների միջև Քրիստոսի ծննդյան և տասնաժամյին քնության մասին... այնպես որ այդ ճանապարհին հաճախ, շինականների ու ռամիկների հետ, կարելի էր տեսնել և շատ, սևեռատարբեր տեսքի, հետևակ ու ձիավոր հոգևորականների, որ կա՛մ շտապում էին Տարոն, կա՛մ դառնում էին այնտեղից։

Մի տեսակ տագ՝ այդ իսկ ճանապարհով էին եկել հայկազ հայ պետերն ու նախարարները լուսնոց թագավորի հետ՝ մեծ պատիվների և հյուրասիրության ակնկալությամբ, շտապը կայսեր հրամերով ոգևորված, մեծ երազներով, անգամ հպարտանքով... Բայց հիմա հարկադրված էին հետառնալ, հետառնալ ժամ առաջ և շուտ, որքան կարելի է շուտ հասնել տահմանը հայոց... Ու այդ ընթացքի մեջ, այդ ճանապարհին ոչ մի պին-

վոր, ոչ մի առաջնորդ, թագավորի չքախմբի և ոչ մի անդամ չէր փոխում իր տեղը, չէր ասում և ոչ մի խոսք, ավելորդ մի քար. միայն ձիերի, հազարի չափ ձիերի համաչափ ոտնաձայնին էր, որ, ինչպես կարկաի տարափ, թնդացնում էր դիշերը, ըղջաստան խոր լռությունը: Եվ չէր պատահում ոչ անցորդ, ոչ տեսուն. գուցե և կային դրանք, գուցե և հեռու էին փախչում ոտի ոտակ չընկնելու համար, բայց հայ հեծյալները նրանց չէին նկատում մութի մեջ. բոլորին համակել էր մի մղիչ միտք, մի անհեռատես ցանկություն՝ գնալ որքան կարելի է զգուշ և արագ:

Ու գնում էին ձիերը չափ քցած, իրաններով առաջ թեքված, չռած աչքերով մութը խուզարկելով... և դիշերը թվում էր անվերջ ու անվախճան. կարծես միտք չուներ այլևս լուսանալու... Գնում էին, և ամեն տեղ նրանց թվում էր սիոկ հանդիպելին դարանի կամ արգելքի, բայց միայն թվում էր: Մյուս կողմից նրանց թվում էր՝ գիշերը քողարկում է իրենց օտար հետախույզ աչքերից և հեծելազորի թնդյուն ոտնաոտրուկը կարող է ահաբեկել ամենքին, թե հետապնդողներին և թե դարանածներին...

Վերջապես, երբ սկսեց լուսանալ՝ Գասպն իր զորքով մի խիտ անտառի մեջ էր արդեն, ուր բարձր ծառերը հովանի էին լինում ճանապարհին, և այդ պատճառով առավոտյան լույսն ավելի աղոտ էր ղղացվում, բայց մեծ ու փոքր թռչուններն արդեն սկսել էին իրենց առօրյան.—մի տեղ, լսո երևույթին անհոգ մի թռչուն դվարթ մի երգ էր դեղդեղում թաքնված, ձյուռները հոգալով տարված սլանում էին անհայտ ուղղությամբ, ուրիշները՝ ավելի մեծ թևավորներ լայն թևաբախումներով սավառնում էին դեպի վեր կարծես ձիերի ոտնաոտրուկից վախեցած, կային նաև տեռակի թռչուններ էլ, որ համարձակ իջնում էին ճանապարհի վրա, լսո երևույթին, կեր փնտրելու, բայց ձիերի մոտեցումը տեսնելով՝ սոսալով հեռանում էին մի կողմ, որ հետո նորից սկսեն իրենց ապրուստի հոգսը:

Բայց հեծյալ արշավախումբը հետաքրքրություն ոչ էր դարձնում դրանց վրա. նրանք արդեն հոգնած, նույնիսկ քրտնամխած սլանում էին առաջ՝ միշտ շուտ հետանալու մտքին անձնատուր, միշտ վերահաս վտանգի երկյուղը սրտներում:

Փոքր էլ գնալով՝ շուտով նրանք այդ անտառում հասան մի

ոնց, ուր ճանապարհը բաժանվում–գնում էր երկու ուղղությամբ։ Այստեղ Պապը ձին կանգնեցրեց և ասավ կողքից գնացող Բաթին ու Երեմիային.

— Հանգիստ առնենք մի փոքր և պարզենք, թե ո՛ր ճանապարհն է ավելի սպահով և ավելի մոտ։

Որովհետև դա իրոք անհրաժեշտ էր վտանգի մեջ չընկնելու համար՝ չքախմբի անդամները համաձայնեցին, և իջևանելու համար անտառի մեջ ընտրեցին հարմար մի տեղ, ճանապարհից փոքր ինչ հեռու՝ հետապնդող և խուզարկու աչքերից մասամբ անտես մնալու, թեև այնքան երկար ճանապարհ էին անցել և այնքան էին հեռացել Տարսոնից, որ հետևից եկող հետապնդումը հազիվ թե շուտ հասներ. սակայն երկու կողմի վրա գնացող ճանապարհները կարող էին վտանգավոր լինել։ Ուստի և, ձիուց իջնելուն պես, Պապը կանչել տվեց իրենց միակ իրազեկ առաջնորդ Հրահատին, որ այդ միջոցին Գնելի հետ միասին կարպատրում էր դրքի տեղը, այսինքն՝ թե ձիերից իջնող ղինվորներին իրենց ձիերով ինչպես տեղավորեն մոտիկ բացատում ու ծառերի տակ, որ վտանգի դեպքում պատրաստ լինեն դիմադրելու կամ չուտ հեռանալու։

Հրահատն եկավ անքնությունից հոգնած աչքերով, աղեղն ուսը քցած, կապարճը թրի հետ ձախ կողքից կախ։ Թագավորին մոտենալով՝ նա ձեռը սրտին դրած խոնարհում արավ ու մնաց կանգնած, մտածելով, թե ինչպես դինվորի հագուստը փոխել է Թագավորի դեմքը։

— Ասա ինձ, Հրահատ,— սկսեց Թագավորը՝ ոտից–գլուխ զննելով երիտասարդին,— ո՞ր ճանապարհով պետք է գնալ և ո՞րն է դրանցից ավելի կարճն ու սպահովը։

— Առավել կարճը, արքա, աջակողմի ճանապարհն է, որով մենք եկանք,— ասավ Հրահատը,— բայց թե ո՞րքան սպահով է հիմա...

— Հասկանալի է,— դվխով արավ Պապը, մտածելով, որ հիմա իրոք, իրենց փախուստից հետո երկու ճանապարհն էլ կարող են բռնված լինել, հետևաբար և անսպահով, ուստի Պապը կամենալով պարզել այդ հանգամանքը՝ կանչել տվեց հունաբին իմացող մի զինվորի։

Նկավ երկար դեմքով, երկար բարակ քթով ու խոշոր աչքերով երևտասարդ մի զինվոր՝ Գնելի ուղեկցությամբ. նա աչխույժ խոնարհում անելով՝ ուղիղ կանգնեց Թագավորի ու նրան շրջապատողների առջև, որոնցից չատերը, ինչպես և Թագավորն իր հագարակ հագուստով նստել էին խոտերի վրա:

— Անունդ ի՞նչպես է, տղաս,— հարցրեց Պապը:

— Իմ անո՞ւնս,—չփոթվեց զինվորը և իսկույն էլ սթափվեց:—Իմ անունը Զորա է, սրբա,— ասավ նա, կարծես զարմացած, թե Թագավորն ինչո՛ւ է հարցնում իր անունը, ու կարծելով, երևի, Թագավորը լավ չլսեց այն, թեպես և չփոթություն կրկնեց:— Անունս Զորա է, սրբա:

— Լսիր, Զորա սիրելի, քեզ մի փոքրիկ հանձնարարություն,— ասավ Պապը մտերմաբար ու մտախոհ:— Ձիդ հեծիր և դնա այն ճանապարհով,— և նա մեծ սպիտակ ձեռը մեկնեց անտառի միջով դեպ ալ դնացող լայն ուղին,—եթե հույն զորք տեսնես՝ վերադարձիր. եթե ոչ՝ հասիր դյուղ, այնտեղ կերիր և խարի պատրաստություն տես մեզ համար և անմիջապես վերադարձիր ու մեզ առաջնորդիր այնտեղ: Կարո՞ղ ես:

— Պատրաս եմ հրամանիդ, սրբա,— դլուխ խնդրեց զինվոր Զորան:

— Գնա ուրեմն հաջողությամբ, և չուտ դարձիր:

Զինվորը նորից խոնարհում արավ և, իր սեռ Գնել Անձևացուն թողնելով, վազեց դեպի ընկերները, որոնց մոտ էր ձին: Նրա ուրախությանը չափ չկար, որ Թագավորից հանձնարարություն է ստացել, որ Թագավորը չատերի մեջ ընտրեց իրեն:

Մի քանի վայրկյան հետո նա արդեն ձիու սանձը թողած ոլանում էր անտառի ճանապարհով, որ դնում էր դեպի ալ:

Նրա դնալուց հետո՝ Պապը կանչել տվեց մի ուրիշ հունաբեն լմացող զինվորի, որի անունը Վահան էր, և նույնպիսի հանձնարարությամբ ու նույն խորհուրդներով ուղարկեց ձախ ճանապարհով:

— Եթե տեղ հասնեն ու վերադառնան՝ ուրեմն ճանապարհները աղատ են,— ասավ Պապը չուրջը նստած չքախմբի անդամներին,— իսկ եթե ոչ, ստիպված պիտի լինենք ընտրել երրորդ մի ճանապարհ, որ՝ մեզ տեղ հասցնի անվտանգ: Ես չէի

կամենա կորցնել և ոչ մի պինդոր, բայց այս փորձն անհրաժեշտ է: Շատ եմ ցավում այդ պինդորների համար, բայց...— Պապի ձայնը բեկվեց,— ուրիշ ելք չկա...

— Կյանքը, ավաղ, միշտ զոհ է պահանջում,— ասաց Երեմյան, որ ձիուց իջնելուց հետո կարգի էր բերում իր կաշեպարկը, որի մեջ էր նրա կիսատ մատյանը:

Եվ ամենքը, որ կապմ-պատրաստ, ղենքերը վրաները, ապառոպին ու սթափ հետապնդում էին ապատամ՝ այդ վայրկյանից սկսեցին ապահել նաև հենց նոր գնացած պինդորների վերադարձին: Թվում էր նրանց այդ վերադարձից կամ նրանց բերած յավ լուրից է կախված լրենց վերկությունը: Եվ ապատելով՝ պինդորներից շատերը թամբերին կապած, պարկերից ու պայուսակներից հաց և այլ բաներ հանելով սկսեցին նախաճաշել, ոմանք կանաչներին նստելով, ոմանք պարսիս եռ ու առաջ քայլելով, որ բաց անեն համարյա օր ու գիշեր ձիու վրա ծալած-ծռած լրերից ոտները: Բոլորը գրեթե մի ամբողջ օր՝ երեկ առավոտից մինչև այդ ժամը ոչինչ չէին կերել և, մյուս կողմից, անքուն ճանապարհորդությունն ավելի էր սրել նրանց քաղցը: Հոգնած, քրտնած, փոշոտները փոս ընկած ձիերն էլ, ոտնձգ գլուխներին և անդամ լկամբ բերաններին՝ սկսեցին եռանդով արածել կանաչը, որ առատորեն բուսել էր նոսր ծառերի տակ, մանավանդ վտքրիկ բացատներում. չաները դրոնցից, կանաչով չզոհանալով կամ կանաչից վերադառս համարելով, ուտում էին ծառերի նորելուկ ճղներն ու տերևները: Ջաղցած ձիերին կարեկցելով՝ պինդորների մեծ մասը լկամները հանեցին նրանց բերաններից, և լրենք ղգաստ ու պատրաստ, սկանջները միշտ ոտնաձայնի, ակնդետ նայում էին ճանապարհներին, սպասելով լինչ է լինելու— վտանգ է գալու թե վերկություն:

Եվ, իրոք, կացությունը շատ ծանր էր: Բիզանդական զորքերն ամեն վայրկյան կարող էին երեք ճանապարհով էլ վրա հասնել, շրջապատել և բոլորին կոտորել: Այդ գրում էր յուրքանչյուր պինդոր ու նախապատր, և ոչ-ոք քնած չէր կարծում թե վտանգն անցել է գեթ մասամբ կամ վերկությունը մոտ է: Ընդհակառակը, ամենքն էլ ոչ միայն գգում, այլև կարծում էին,

թե հոտոմներն այդպես հեշտությամբ չեն թողնի իրենց հետևնալ։ Կհետևեն անպատճառ և այն էլ մեծ ուժերով։ Դուրս և մի քանի կողմից, այդ իսկ երևացող ճանապարհներից... Ուստի և լարումից ու անքուն պահերից հոգնած զինվորները, խմբերի բաժանված, ծառերի տակ խոսում էին, թե լավ կլիներ առաջ գնայինք և հույսները չղնեին գնացած զինվորների վրա. չէ՞ որ հոտոմներն ո՛ւր որ է կգան-կհասնեն։ Շատերը հիշում էին իրենց տունը—ընտանիքները և առաջ գնալու, շուտ սահմանին հասնելու ցանկությունը աստիճանում էր ավելի։ Կային այնպիսիներն էլ, որ չգիտեին ինչո՛ւ են սպասում, ինչ հանձնարարությամբ գնացին ընկերները... Երանք, թեև հոգնած ու քաղցած, ցանկանում էին, ձիերին մի փոքր հանգիստ տալուց հետո՝ անմիջապես շարունակել ճանապարհը։

— Մեկ էլ հոտոմը կարող է գալ ու հարձակվել երկու կողմից. դա ևս հոգնած ճակատիր,— ասում էր մի զինվոր մի խմբում։

— Որքան շուտ հեռանանք, եղբայր, այնքան ապահով,— ասում էր մի ուրիշը։

— Եվ վտանգից այնքան հեռու։

— Բայց ձիերը, որ հոգնած են շատ, նրանց էլ հանգիստ է պետք, որ գնան ավելի արագ։

— Այդ էլ ճշմարիտ է։

Զինվորներից ոմանք էլ անհանգիստ անցնում էին խմբից-խումբ, լսմնալու, թե ո՛րքան են մնալու կամ ե՛րբ են շարժվում։ Սրանք չգիտեին կանդնելու պատճառը և նույնպես անհամբեր էին համարում սպասելը, քանի դեռ գտնվում էին հոտոմների հողի վրա։

Բայց ամենից ավելի անհամբեր էր Պապը ինքը։ Նա, որ դեռ Տարսոնում՝ ճանապարհվելուց առաջ, արքայական զրնեստների միտքերն հայտել էր հասարակ զինվորի հագուստներ և ծածկվել մխայն թիկնոցով, հիմա, թիկնոցը վերցնելուց հետո, դարձել էր բոլորովին անճանաչելի, այնպես որ այդ առավոտ զինվորներից շատերը հարցնում էին իրար, թե ո՛ւր է Թագավորը։ Եվ երբ խմացողները մատնացույց էին անում մեծ կաղնին, որի տակ հավաքված էին չքախմբի անդամները, որ նույնպես

պղեստափոխ էին,— պինվորները ճանաչում էին նախ նախարար Զենոն Գնունու արծաթ մխրուքը, և դրանով գոնում էին Պապի տեղը, տալա և տեսնում էին նրան, որ կանաչներին նստած, ծանոթ սովորական դեմքը այս ու այն կողմ թեքելով մերթ նայում էր ճանապարհներին մտախոհ սպասողական մի հայացքով, կամ խոսում շրջապատողների հետ: Բաթը, Երեմիան և շքախմբի մնացած անդամները, դրանց հետ և Զենոն Գնունին, որ իր բարեկամ Օտտա Ալահունու հետ այս ամենը համարում էր վտանգավոր ձեռնարկություն,—դարձել էին համակ ուշադրություն ու լսողություն: Ծառերն էին տեսանում անտառում թե չոր ճղավայտերն էին կոտրտվում արածող ձիերի ոտների տակ,— նրանց թվում էր, թե չի՞ պալիս արդյոք մի ոք, գուցե և վերադառնում է դնացած պինվորներից մեկը, գուցե և հետապնդող հսումների հետապնդյալը...

Բայց ոչինչ չկար առայժմ: Այդ մի քանի թեթև կամ պատահական ձայներից հետո՝ երբեմն այնպիսի մի լուրթյուն էր իջնում, որ թվում էր այդ ճանապարհներով հավիտյան մարդ չի անցել, այնպիսի մի անդորը, որի մեջ լսվում էր անգամ, թե ինչպես են ձիերը սրսկում խոտը կամ ղռնդացնում ծառերի դալար ճղները:

Եվ Պապը չարունակում էր նայել ու սպասել: Երբեմն նա ինը էր կենում նստած տեղից և, ձեռները հասը, մի քանի քայլ անում՝ նայում ճանապարհներին, նայում ծառերի տակ ցրված ինպինվորներին ու նրանց ձիերին, դարձյալ ճանապարհներին ու նորից նստում: Այդ վայրկյաններին նրա գլխով անցնում էին ամեն տեսակ մտքեր ու հուշեր, բայց ամենից շատ նրան. դրաղեցնում էր մի մխոք, թե արդյոք տխալ չարաշ, որ հեռացավ ու այսպիսի ծանր կացության մեջ դրեց բոլորին, որ կարող են վտանգել ենթարկվել իր պատճառով և տուժել չարաչար... Սակայն խղուն էլ իրեն մխիթարում էր այն .հուսյով, թե ամեն ինչ գուցե լավ վերջանա...

Պակաս անհանգիստ չէին և շքախմբի անդամները. Բաթը, որ չէր կարողանում մի տեղ նստել կամ կանգնել, չարունակ դնում-նայում էր պինվորներին կամ, թափավորին մոտենալով, ասում էր ինչ-որ: Երեմիան որ մերթ մտախոհ մի բան էր նը-

շում մոմատախտակի վրա, մերթ կանգնում ականջ դնում հեռավոր ձայների, Զենոն Գնունին կամ ճմռում էր արծաթ-երկար մչրուքը կամ կնճռացուկ դրուցում իր քարեկամ Օտայի հետ, որ անքանքում էր զգուշությամբ և կրկնում: «Չէ, ինչպես տեսնում եմ, տեր Գնունի, մեր ոսկորները փտելու են օտար հողում»... Անհանգիստ էին երևում մանավանդ Գնելն ու Հրահատը, որ անդադար խմբից-խումբ էին անցնում և, ղինվորներին կարծես սիրտ տալու համար, մեկին մի խոսք էին ասում, մյուսին ժպտում, որ չընկճվելին կամ հոգնած չքնեն հանկարծ, այլ մնան մշտ սթափ ու պատրաստ: Երկուսն էլ թևև զգում էին՝ դրությունն այնպիսին է, որ ղինվորներից յուրաքանչյուրը դիտակցում է դրա լրջությունը և դրա համար աշխատում է բարձր չխոսել, անգամ հետամուտ է, որ ձիերն անզգուշ շարժում չանեն, որ կարող է լսել հոում հետախույզը,— այնուամենայնիվ իրենց պարտքն էին համարում զգուշության մեջ պահել նրանց և ոգով բարձր:

— Շուտով, եղբայրներ, շուտով կընկնենք ճանապարհ, և ամեն ինչ կվերնի լավ,— ասում էր Գնելը՝ իր վառվռուն դեմքով ու աչքերով ժպտալով:

— Մանավանդ սահմանը չատ հեռու չէ,— ավելացնում էր Հրահատը:

Բայց և այնպես՝ ոտաստղականությունն այդ պայմաններում ավելի ծանր էր թվում և երկար, որովհետև եռվից սպասվում էր անսպասելի հետապնդում, իսկ առջևն անստույգ էր. ոչ-ոք չէր կարող ասել ճանապարհները քաղց են, թե ոիակ:

Արևն ելավ անտառի եռվից և իր շեկ նիզակներն ու սլաքները ծառերի արանքով մեկնեց դեպի բացատը, ճանապարհները, հանդստացողներն ու նրանց ձիերը. անտառը լեցվեց զրնգոցիացող ցողերի զարդ բուրմունքներով, և ձիերն սկսեցին ինչացնել և պոչով պավակներին խփել, որ նշան էր թե կշտանում են, բայց պնացած ղինվորները տակավին չկային. իսկ առաջ պնացած զինորը վերադարձան և հայտնեցին, թե ոչինչ չի երևում, ոչինչ առայժմ չի լսվում:

Դա արդեն վատ նշան թվաց Պատին:

— Ինչ ես կարծում, Բաթ, ինչը կարող էր խանգարել նրանց գալուն:

— Այն, որ նրանց բռնեին,— պատասխանեց Բաթը հուզված:

— Ո՞ւրեմն,— շարունակեց Պապն իր տարակույսները:

— Ես ենթադրում եմ, Պապ,— ասաց Բաթը,—որ այս երկու ճանապարհն էլ, հավանորեն, բռնված են հոռոմ զորքերով: Երևի՝ հետապնդելու միտքն էլ չեն կորցրել մեր ետևից: Հետևաբար, ինձ թվում է, մենք պետք է մի փոքր էլ հանգիստ տանք ղինվորներին ու ձիերին և թաքցած ուժով դնանք ամենակարճ ուղիով և արագշարժ, որ թրի պես ճեղքենք նրանց շղթան ու անցնենք,— շարունակեց Բաթը հետզհետե բորբոքվելով հոռոմների դեմ և հուզվելով կարծես կռվի-ճակատելու հեռանկարից:— Ես ուրիշ ելք չեմ տեսնում,— ավարտեց նա:

Նույն կարծիքի էր Երեմիան. այո, պետք է ճեղքել հոռոմ զորքի շղթան, եթե կա, և անցնել Եփրատը, առանց որևէ տեղ կանգ առնելու:

— Սակայն չե՞ք կարծում, որ հոռոմ զորք լինելու դեպքում՝ մեծ կորուստ կունենանք,— նկատեց Պապը,— զուտ և շատ ազնաավոր:

— Կարող է պատահել և այդ, բայց ուրիշ ելք չկա,— նորից խոսեց Բաթը, այս անգամ առանձին մի եռանդով:— Քանի որ մեր ղինվորներից ոչ մեկը չդարձավ և հետապնդում չկա, ուրեմն պետք է ենթադրել, որ հոռոմները, իրոք, կտրել են ճանապարհները. մնում է զրոհել և անցնել:

Պապը զլուխն օրորեց ափսոսանքով:

— Իսկ ես չէի ցանկանա որևէ կորուստ ունենալ, բացի այդ երկու դժբախտ զինվորից, եթե իրոք կորան:

— Այդ պարագային ի՞նչ անել, ասքա:

— Գտնել մի երրորդ ճանապարհ:

— Բայց կա՞ արդյոք:

Պապն անխոս ցույց տվեց անտառը:

— Գնալ անտառո՞վ,— զարմացավ համարձակ Բաթը:— Բայց այտտեղ երրորդ ճանապարհ չի երևում, Պապ:

— Եվ դժվար կլինի հազարի չափ ձիավորով,— դիտեց Երեմիան:

— Ծառերը, արքա, ծառերը չեն թողնի,— խոսեց հանգարտ Զևոն Գնունին:

— Այո, արքա, ճիշտ է ասում Գնունյաց տերը,— միջամտեց Օտա Ապահունին հևալով:— Ծառերը հիանգարեն անշուշտ:

Վեճը լուծվեց ինքնաբերաբար:

Խոսակցությունը շարունակվում էր, երբ հանկարծ ուրախ և միաժամանակ երկյուղած ձայներ լսվեցին.

— Զորան եկավ, Զորան եկավ...

Եվ իրոք. մի քանի վայրկյան հետո ծառերի եռևից դուրս եկավ անտառի աջ ճանապարհով գնացած գինվոր Զորան՝ մի հոռոմ չինականի հետ:

Տեսնողները լարվեցին հետաքրքրությունից: Ինչո՞ւ վերադարձավ Զորան, և ո՞վ էր այդ հոռոմը, որ բերել էր: Լրտե՞ս էր, թե ծպտյալ հետախույզ...

Զորայի վերադարձն իմանալով՝ Գնելը վազեց ընդառաջ և ինչ-որ բաներ հարցնելով Զորային՝ հոռոմ չինականին անմիջապես բերեց Թագավորի մոտ: Դա միջին տարիքի, հետաքրքիր ու զարմացած աչքերով մարդ էր՝ մազմազոտ ու արևաո դեմքով: Հագինը կարճ կապա էր, ծնկները կարկատած ջարսիի, ոտներին՝ երեսը բաց ոտնաման էր, որ երևան էին հանում նրա բրդե փոշոտ դուլպանները:

— Ո՞րտեղից ես գալիս,— հարցրեց Պապը հունարեն:

Հոռոմ չինականը ինչ-որ դյուղի անուն տվեց և ավելացրեց, թե գալիս է իր դյուղից, որ գտնվում է անտառի մյուս ծայրում (նա ձեռը մեկնեց դեպի եկած ճանապարհը), գնում է մոտիկ դյուղը (նա ցույց տվեց հակառակ կողմը): Թագավորի այն հարցին, թե ինչ է տեսել ճանապարհին, նա առանց տատանվելու պատասխանեց, «զորք», հունական զորք:

— Հեռո՞ւ է,— հարցրեց Պապը:

— Ոչ, մի փարսախի վրա, մեր դյուղի մոտ,— պատասխանեց հոռոմը առանց քաշվելու, չիմանալով հարկավ, որ հետը

խոսում է մի ղեկտաստիոս Թռչավոր։— Առաջ այդ ղորքը չկար, քիչ առաջ եկավ։

Թռչավորին շրջապատողներն իրար նայեցին բաղմախոհ-հուզված, իսկ Պապլե ղեմքով մի ստվեր անցավ. կասկածը ճշմարտում էր. ուրեմն դեպի Եփրատը տանող այդ ճանապարհը, որով եկել էին իրենք և որն ամենակարճն էր՝ փակ էր։ Ուրեմն դրանով դնալ հնարավոր չէր։ Իսկ այն հարցին, թե այդ ղորքի թիվը մի՞ծ է, փո՞քր— հույն դյուղացին անորոշ պատասխան ավեց. նա դժվարանում էր ասել՝ շատ է թե քիչ, բայց բազմաքանակ էր։

— Իսկ դու ո՞վ ես,— հարցրեց Բաթը, կասկածելով, որ դա ուղարկված լրտես լինի։

Հույն չինականն այս անգամ ավելի զարմացավ իրեն ուղղված հարցից և ուշադիր, զննաբար նայեց նախ իրեն հարցաքննող Պապլեն, ապա մյուսներին, և զառնալով տարիքավոր ու տեսքով պատկառելի և բոլորից լավ հագնված, մխրճքավոր Զենոն Գնուենուն՝ ասավ շեշտելով.

— Ես՝ այս մոտիկ գյուղից եմ, տեր,— ու նորից կասկածով, վախով նայեց մյուսներին, չիմանալով ինչո՛ւ են այդպես մանր հարցաքննում իրեն։

— Դու ճիշտ չես ասում,— հարեց Բաթը,— դու այստեղից գյուղացի չես։

— Մեր գյուղն այստեղից կես փարսախ է, տեր։ Կուզես՞ գնա հարցրու մեր քահանային կամ մեր գյուղապետ Մելխոհին, թե ո՛վ է Քսանթոն։

— Լավ,— ընդհատեց նրան Պապլը։— Եթե դու այստեղացի ես՝ ասա տեսնենք՝ ինչպես կարելի է գնալ այս անտառի միջով և դուրս գալ Եփրատի ափը։ Կա՞ այդպիսի մի ճանապարհ։

— Կա,— պատասխանեց չինական հույնը,— բայց նրանով դժվար է գնալ. նեղ է և անցնում է շարունակ ծառերի միջով։

— Այսինքն՝ ձին կարո՞ղ է անցնել։

— Կարող է, անշուշտ, կարող է,— ասավ չինականը,— բայց ձեզ նման պատվական մարդկանց համար վայել ճանապարհ չէ. ծառերի ճղները կվնասարեն,— և հույնը նորից հարդանքով նայեց Զենոն Գնուենու կողմը։

— Կարո՞ղ ես ցույց տալ այդ ճանապարհը,— հարցրեց Պապը:

Հույնը տակավին չհասկանալով ո՛վքեր են նրանց հարցաքննողները, քայց դիմել ընդունելով, որ բոլորը հույներ չեն, այսուամենայնիվ սկզբում պատրաստակամություն հայտնեց առաջնորդել նրանց դեպի այդ կածանը, և Պապը, տակավին չհավատալով նրան, կարգադրեց, որ Գնելը մի երկու զինվորով գնա հույնի հետ արահետը տեսնելու: Եվ երբ նրանք ծածկվեցին ծառերի մեջ՝ Պապը կասկած հայտնեց, թե կարող է պատահել դա ուզածիված լինի նրանց տեղը պարզելու:

— Հիմա կերևա, արքա,—ասավ Բաթը:— Ես այդ մտածեցի նրան տեսնելուն պես: Եթե անգամ դա ճանապարհ ցույց տա, ես վստահ եմ՝ նրան այստեղ չենք կարող թողնել: Ես նրան պիտի տանեմ մինչև Եվրատի ափը:

— Իսկ եթե սխալ ճանապարհ ցույց տա՞ և տանի ուղիղ հոտոմ ղրքի մեջ,— նկատեց Երեմիան:

— Այդ դեպքում՝ ես նրան կխեղդեմ,— բռունցքները սեղմեց Բաթը:

— Բայց կարող է ճանապարհը վատ լինել,— տխրությամբ միջամտեց Զենոն Գնունին, մտածելով որ իր հասակում այդպիսի ճանապարհով գնալը վտանգավոր է մեզ համար:

— Վատը ոչինչ,— խոսեց Տաճատ Տրունին,— կարող է բոլորովին չլինել:

Այդ կասկածները տակավին դուր էին: Փոքր անց Գնելը վերադարձավ և հայտնեց, թե անտառի մեջ, իրոք, կա մի արահետ, որով, որքան այժմ երևում է, կարելի է անցնել ձիով, բայց մինչև նեղ է, որ պետք է գնալ իրար հետևից,—ինչպես որսի կամ ուղտերի քարավանի պես: Առայժմ՝ տեսած մասը կարելի է անցնել ձի նստած, իսկ հետո, նա դժվարանում է ասել, ինչպես կլինի:

— Հույնը դրանե հավատացնում է, որ մինչև վերջին այդպես է,— ավելացրեց Գնելը, ըստ սովորության, չտատանվով ու կարմրելով, ինչպես պատահում էր միշտ թագավորի հետ խոսելիս:

Այդ բանում կատարելապես համոզվելու համար Պապն ինքը՝ Բաթի ու Երեմիայի հետ, նույն Գնելի առաջնորդությամբ,

գնաց տեղեկու արահետը, ուր այդ ժամանակ երեք նիզակավոր հայ զինվորի հետ կանգնած սպասում էր հոռոմ գյուղացին, որ ինչպես աչքերից երևում էր, կասկածների մեջ էր:

Արահետն, իրոք, այնպիսին էր, որ հեծյալը կարող էր գնալ, իսկ թե ինչպես կլիներ շարունակությունը՝ դուշակել դժվար էր:

— Եվ սա դո՞ւրս է գալիս ուղիղ Եփրատի ափը,— հարցրեց Պողոսը, թաքուն մի կասկածով նայելով տարակուսած հոռոմ չինականին, որ կարծես ուզում էր հասկանալ, թե ինչ մարդիկ են սրանք և ո՛ւր են գնում, բայց հարցնել չէր համարձակվում:

— Այո, տեր, ուղիղ Եփրատի վրա,— ասավ նա վստահ:— Բանի՛ անգամ եմ գնացել:

Պողոսը, որ շարունակ մտածում էր, թե ինչպես անվտանգ տանել հասցնի իր մարդկանց և թե ինչպես անել, որ դրանք ամենքը հանկարծ չկործանվեն իր պատճառով,— այդ արահետը նրան թվաց փրկարար մի ճանապարհ, այն եզերը, միակ եզերը, որ թեև նեղ էր, բայց ապահով:

Ու իրոք անց նա կարգադրեց, որ զինվորները պատրաստվեն ճանապարհվելու, իսկ ինքը իր նժույգը քշեց արահետով, չկարենալով սուզվելու թե ուղղակի առաջ գնալու համար: Բայց նախ անմիջապես խնդրեց Թադավորին՝ սպասել զինվորների գալուն, որ առջևից գնան նրանք. նա չէր ուզում Թադավորին թողնել մենակ առաջ գնալու: Իսկ երբ զինվորները եկան ձիեր հեծած ու խմբվեցին արահետի մոտ՝ Բաթը, որպես ճանապարհորդության կարգադրիչ, Պողոսին խորհուրդ տվեց—առջևից ուղարկել զինվորների մի մասին, որից հետո միայն Թադավորն իր չքախմբով, ապա զինվորների մնացած մասը, որպես վերջապահ:

— Իսկ դու,— դարձավ Բաթը չկորած կանգնած հոռոմ չինականին հունարեն,— դու կերթաս առջևից գնացող զինվորների հետ՝ ճանապարհ ցույց տալու համար:

Եվ հույնը, որի համար անակնկալ էր այդ հրամանը, առանց որևէ խոսքի, ենթարկվեց նրա թող, հեղինակավոր ձայնին, ավելի շուտ դուցե Բաթի խոշոր աչքերի հրամայական ուղղությունը, նշմարելով նրանց մեջ ինչ-որ սպառնալից ու վոտնդա-

վոր մի բան: Նա զգաց, որ առարկել, հրաժարվել չի կարող: Իսկ բաթը պարզապես կասկածում էր նրան, թե մնալով՝ հետապնդողներին լուր էր տալու իրենց մասին: Բայց կասկածում էր նաև, թե գալով էլ՝ կարող էր տանել թակարդի մեջ գցել,— այդ պատճառով ծածուկ կարգադրեց, որ ղինվորներից մեկը նրան պարանով կապի իր ձիուց:

Այդպես էլ արին: Եվ շարժվեցին հույնի առաջնորդությամբ:

Աբրահամը, որ սկզբից գնում էր նոսր ու բարձր ծառերի միջով, առայժմ դժվար չէր. պետք էր երբեմն ձիու վրա գլուխ թեքել կախված ճղներին չդիպչելու համար: Բայց հետզհետե առաջ գնալով՝ արահետը մտավ խիտ ու համեմատաբար կարճ ծառերի արանքը, որոնց ճղներն արդեն ավելի հաճախ էին դիպչում հնձվորների դլխին, ուսերին, երեսին և կրծքին, այնպես որ նրանք ավելի հաճախ էին ստիպվում գլուխները իջեցնել կամ թեքել: Եղան դինվորներ, որ շատ չկռանալու համար, իջան ձիերից և առաջ գնացին նրանց սանձը բռնած: Ինչ հետո նույնն արավ և Պասլը: Նրան հետևեցին և չքախմբի անդամները՝ ոչ այնքան հարկից դրդված, որքան հարգանքից. Թաքավորը գնում էր ուռով, իրենք ձիով—անհարմար էր: Մեծ դժվարությամբ ու տնքալով ձիերից իջան նաև Զենոն Գնունին և Օտա Ապահունին, որ արդեն ամեն ինչ համարում էր անհույս ու կորած, բայց ոչ մի խոսք չէր ասում դժգոհության, վախենալով հանկարծ բարկանան և իրեն թողնեն այդ օտար ու վայրի անտառում մենակ: Նա հիշում էր իր տունը, ընտանիքը, կալվածները և այդ հուշերով սփոփում իր տխուր սիրտը: Զենոնն ավելի անտարբեր էր կարծես. թվում էր նա իրեն հանձնել է բախտին. ինչ լինելու է, թող լինի:

Մի տեղ, բավական գնալուց հետո, արահետը հարթ ընթացքը փոխեց և սկսեց բարձրանալ, վերելք կազմել այնպես, որ թե մարդիկ, թե ձիերն ստիպված էին լարվել, ճիգ գործադրել բարձրանալու:

— Այստեղ դինվորների համար դժվար կլինի,— ասավ Օտա Ապահունին ծանր տնքալով ու այնպես բարձր, որ Թաքավորը լսեց:

— Ոչինչ, հայը լեռների սովոր է,— վրա բերավ Պասլը:—

Նրա համար դժվար չեն անհաղթելի ճանապարհները։ Այնտեղ, որտեղից անցել է քարայծը՝ կարող է անցնել և հայ մարդը։ Իսկ այնտեղ, ուր հովազն է բարձրանում, այնտեղ կարող է մագլցել և հայ դինվորը։

— Ուրեմն բարձրանանք ինչպես դինվոր,— համաձայնեց Օտան, որ դժվարությամբ էր քայլում տարիքի և իր թանձր մարմնի պատճառով։

Բայց մյուսները գնում էին առանց տրտունջի, դրանց թվում և Երեմիան, որ առանձին դժվարություն չէր զգում, որովհետև շարունակ զբաղված էր իր մտքերով, թեև ինչպես ձևակերպել իրենց ճանապարհորդության մանրամասնությունները՝ գրի առնելու, ինչպես պատճառաբանել իրենց հեռանալը Տարսոնից, ինչ խոսքերով դատապարտի Վաղեսի դավը. նրա միտքն զբաղված էր մանավանդ այն խնդրով, թե կարո՞ղ են արդյոք անվտանգ հասնել Եփրատի ափը, արդյոք հոռոմ զորքը չի՞ կորի իրենց ճանապարհը և չի՞ արգելի առաջ գնալ։ Նա մինչև խոր մտածում էր, թե հոռոմները հիմա, անշուշտ, բռնած կլինեն դեսի ափը. բայց միևնույն էր՝ պետք էր գնալ, առվնից շարունակ դեսուդեն ու հետախույզներ ուղարկելով։ Նրա միտքը գնում էր ավելի հեռուն. նա մտածում էր, որ եթե նույնիսկ անվտանգ անցնեն Եփրատը և ապահով հասնեն Դվին, արդյոք Վաղեսը, նենգ և խարդախ այդ կայսրը հանդիսատ կթողնի՞ իրենց, հայ երկիրը... արդյոք վրեժխնդիր չի՞ լինի այս համարձակ քայլի համար... Բայց նա առայժմ չէր ուզում երկար մտածել այդ մասին. պետք էր շուտ և անվտանգ հասնել երկիր և ազատվել անպատիվ գերությունից... Այդպես էլ մտածում էր դրել իր մատյանում։

Իսկ Գնել Անձևացին գնում էր դրեթե բոլորից առաջ, մի քանի հետախույզ դինվորի և Հրահատի հետևից, մտոք ունենալով հոռոմ չինականին, որի հետ խոսակցում էր երբեմն իր թերի հունարենով, որ սովորել էր սրան-նրան լսելով և հոռոմ դինվորականների հետ շփվելով։ Նրա խոսքը, ավելի շուտ հարցումները վերաբերում էին ճանապարհին, (թե ո՛րքան երկար է այն, ինչ դժվար տեղեր ունի) և հոռոմ այդ չինականի իր անձնական-ընտանեկան կյանքին։ Եվ հույնը սիրով, պատրաստակամ

պատասխանում էր նրա հարցումներին թե ճանապարհի, թե անտառի և թե առհասարակ իր դրության մասին: Ներա ասելով՝ ճանապարհը շատ երկար չէր, բայց ուներ մի քանի դառիվեր ու-ղեր ու վայրէջքներ: Ինչ վերաբերում է իրեն՝ հինգ երեխա ունէի և իրճիթի հետ մի կուռ հող, որ հաղիվ է ապահովում իր ապրուստը:

Նրանք հանդարտ խոսակցում էին և հանդարտ էլ գնում լծաչարուկ գնացող ղինվորների ետևից. և կանաչով ծածկված փափուկ ճանապարհը ոլորվում էր նրանց առաջ, թեքվելով մերթ դեպի աջ, մերթ դեպի ձախ, բայց միշտ ծառերի տակով. երբեմն բարձրանում էր թեթև մի դառիվեր կամ իջնում՝ հետը մի ձո-րակ, ուր համեստաբար խոխոջում էր մենավոր մի առվակ, որ կարծես անտառի կյանքին անտարբեր երգում էր իր համար, կամ դուրս չրջապատի լռությունից ու մութից վախեցած՝ չտապում էր դուրս գալ բաց մի տեղ, որ կապույտ երկինք տեսներ ու արև: Ձիերը հասնելով այդպիսի վտակներին՝ անտառի տոթից ծարաված, գլուխները անմիջապես իջեցնում էին խմելու. բայց հաղիվ հասած շուրթերը ջրին մոտեցրած՝ հեծվորները խթանում էին նրանց, որ կանգ չառնեն, որովհետև ետևներից եկողները սուսլված սլիտի կանդնեին և ամբողջ քարավանը խանգարվեր, իրար դիպչեր:

— Հույս ունեմ, տեր, իմ ծառայությունն անվարձ չեք թողնի, այնպես չէ՞,— հետաքրքրվեց հուդան, երբ բավական տեղ խոսելուց հետո մոտեցել էր Գնելին:

— Անշուշտ, եթե ապահով հասնենք Եփրատի ափը,— հա-վաստիացրեց Գնելը:

— Այդ կողմից հանդիստ եղեք, տեր. առաջին անգամը չեմ գնում այս ճանապարհով,— ասավ հուդան և, մի փոքր լռելուց հետո, շարունակեց.— Որքան հասկանում եմ, տեր, դուք ար-մեններ եք և, Տարսոնից վերադառնալով, գնում եք Արմենիա, այնպես չէ՞:

— Այդպես է,— հաստատեց Գնելը:

— Բայց ինչո՞ւ լալ, հիմա ճանապարհը թողած՝ այսպես եք գնում,— շարունակեց հուդան, կարծես գլխի ընկնելով, որ մի բան կա այս օտարոտի վարմունքի մեջ:

Գնելը չզարմացավ հասած դյուզացու այդ հարցումից վրա և ասավ անմիջապես:

— Որովհետև չտապում ենք շուտ տեղ հասնել:

— Ա՛խ, այդ դեպքում ճիշտ եք, տեր: Այսպես երկու օրով կաբճանում է ճանապարհը,— ասավ նա և լուռ մի առժամ:

Եվ այսպես հայ դինվորները, նիզակներն ու աղեղները թիկը թոնած, որ ծառերին չդիպչեն, լրենց թագավորին մեջ առած, ժամերով, անհայտ է քանի ժամ, գնում էին երկարաձիգ մի շղթա կազմած, միշտ նույն սրահետով, որ ոչ լայնանում էր, ոչ նեղանում և ոչ էլ վատանում էր, այլ մեօրինակ ու մխտեսոակ ձգվում էր միշտ ծառերի տակով, որ երբեմն նոսրանում էին ճանապարհի երկու կողմը, ցույց տալով երկինքի կապույտ կտորներ կամ արևի առատ, տերևատեղիկ ճառագայթներ, երբեմն էլ խառնում էին այնպես, որ սաղարթն անթափանց էր դարձնում արևի շողերը: Եվ տվելորտ այդ ուղին ավելի հաճելի էր նրանց, որովհետև արևի անգամ թույլ ճառագայթները քրտինք էին բերում անտառի դրեթե անշարժ օդի մեջ: Դա ավելի դժալի էր դառնում, երբ հեծյալները հանկարծ դուրս էին գալիս արևով ողողված մի որևէ բացատ, ուր կանաչն անգամ թալկացած էր լինում տապից: Այդ բացատները տհաճ էին և այն պատճառով, որ խակուլն կտակած էր ծագում, թե որևէ տեղից կարող են նկատել լրենց, ու չտապում էին՝ նորից, որքան կարելի է շուտ մտնել անտառ:

Առջևից գնացողներին կամ առաջապահներին, նաև հետևից և կողներին՝ վերջապահներին կարգադրված էր՝ որևէ կասկածելի բան նկատելուն պես կանգ առնել և պարտադրական սուրդով—թուչնի ձայնով—լռացնել: Այդ խակ պատճառով գնում էին մեծ մասամբ անխոս, իսկ եթե խոսակցում էին, ապա կամացուկ, դրեթե չշուկով. երբեմն ձիերի փնչոցն անգամ անհանդստացնում էր դինվորներին, թե անհարմար է, թագավորը կխմռնա, և մյուս կողմից՝ կխմացվի հեռվում, ուր հոտոմները, երևի, որոնում են լրենց հետքերը: Քարափանվի մեջ ոչ-ոք մի վայրկյան անգամ չէր մոռանում այս հանգամանքը, և եթե որևէ մեկը, ինքնամոռացության՝ մեջ, ձայնը բարձրացնում էր՝ նրան անմիջապես կսպգի էին հրամիրում. «ՀՐ՛ՍՍ»...

Եվ այսպես զգաստ ու զգույշ շարունակում էին առաջանալ անտառի նույն արահետով, որի վայելուչ հողը և կանաչը խլացնում էր ձիերի ու մարդկանց ոտնաձայնը. ու բոլորին զարձյալ առաջ էր մղում միևնույն միտքը, միևնույն նպատակը— հեռանալ այս օտար, թշնամի երկրից և ոտ դնել հայրենի հողի վրա: Սկզբում նրանց թվում էր, թե ահա կերթան մի փոքր, մի քանի ժամ, մի կես օր և դուրս կգան անտառից, կհասանեն Եփրատին: Բայց գնում, գնում էին անվերջ և անտառը չէր վերջանում. շատերը մինչև իսկ մտածում էին, թե չլինի հոռոմ գյուղացին խաբում է իրենց և, առաջ տանելու փոխարեն ետ է տանում: Ոստի և գնալով անհամբեր էին դառնում, թե ե՛րբ պիտի վերջանա անտառը, երբ պիտի դուրս գան, վերջապես, Եփրատի խաղաղ ափը, ուր հույս ունեին հանգստանալ և հանդիպած ու կեր տալ ձիերին, ապա, դեռն անցնելով, մտնել հայոց նվիրական ու ապահով աշխարհը:

Թե քանի ժամ էր ինչ ճանապարհ էին ընկել կամ քանի ժամ էին գնում այսպես՝ ոչ-ոք չէր կարող ասել, բայց արևն արդեն թեքվում էր դեպ արևմուտք, երբ անտառն սկսեց նոսրանալ և վերջանալ, այսինքն՝ մեծ, խոշոր, հասուստրուն ու բարձրաբուն ծառերին փախարինեցին փոքր ու ցածրիկ ծառեր, ապա և թխուտներ, թխուտներ ու թխուտներ, որ բռնում էին տափարձի տարածություններ:

— Անտառը վերջացավ, տեր,— ասավ հույնը,— հիմա պիտի գնանք թխուտների միջով:

— Իսկ ո՞րքան մնաց մինչև Եփրատը,— հարցրեց Գնելը, մտածելով, որ եթե ճանապարհը շատ մնացած լինի՝ կհոգնեն, չարունակել չեն կարող առանց հանգստի, իսկ եթե պիտի հանդիպան առնեն՝ դերադասելի է հանգստանալ անտառում:

Հույնը պատասխանեց, որ մնում է տակավին մի կեսօրվա և ավելի ճանապարհ: Գնելն այդ մասին հայտնեց Բաթին, որպես ճանապարհորդության կարգադրիչի, և նա, թաղավորի հետ խորհրդակցելով, որոշեցին հանգստանալ թխուտների մեջ և կեսգիշերին կամ առավոտը վաղ ճանապարհը շարունակել դեպի Եփրատ:

Այդպես էլ արին: Բոլորը ձիերից իջնելով՝ հոգնած կենդա-

նիններին թողին արածելու, իսկ իրենք խմբերով նստեցին հայել։ Ցուրաքանչյուր դինվոր երկու–երեք օրվա պաշար ուներ իր քամրին կապած, ինչպես կարգադրել էր Բաթը, և հիմա, թեև հոգնած, բայց ախորժակով ուտում էին իրենց պաշարը, ականջ–ներըչուլունակ ձայնի, թե չէ լսվում արդյոք վտանգ ազդարա–րող մի նշան՝ թռչնի կանչ կամ այլ մի բան, ու միաժամ մտա–ծում էին, թե երբ կհասնեն, վերջապես, Եփրատին, որ նրանց թվում էր ազատարար մի սահման, ուր պիտի վերջանար իրենց անհանգստությունը։ Թեև պահակները ու դեսերը էին նշանակ–ված հանգստացող զորքի հուրջը, բայց յուրաքանչյուրը, դրու–թյանը դիտակ, պահակի արթնություն ուներ և վտանգից ազատ մնալու մտահոգություն. սակայն կային զինվորներ էլ, որ նա–խորդ գիշերվա անքնությունից և ճանապարհի հոգնածությու–նից թուլացած՝ ննջում էին նստած տեղերում և անհոգ ու ան–զգամորեն ցանկություն ունեին մեկնվել կանաչների վրա, քնել այդ պահ թեկուզ տակ, թեկուզ ինչ էլ լիներ, ինչ վտանգ էլ գար։ Սակայն այդպիսիներին զգուշացնում էին անմիջապես.— «Էյ, բարեկամ, հորենական հարկէ տակ կարծեցիր քեզ»... Նիրհողն սթափվում էր խոհուն, ճակատը տրորում և, վոքը անց, ննջում նորից։

Թունն ավելի հաղթահարում էր Զենոն Գնունուն։ Ծերունին շատ էր հոգնել իր համար անսովոր ճանապարհից. առանց որևէ բան ճաշակելու՝ նա թուլություն խնդրեց Թաղավորից՝ «քնալ հանգստանալ», և դա ասավ այնպես, պատշաճավորու–թյան այնպիսի շեշտով, կարծես զոնվում էր սալատում և սեփա–կան իր ննջարանը՝ անկողնում հանգստանալու։ Մինչդեռ տեղն այնքան վայրի էր և մերկնված, հանգստացող զինվորներով լցված, որ ծերունին իր թիկնապահների օգնությամբ հազիվ գտավ հարմար մի տեղ՝ թեկի ետև ու մեկնվեց աչ կողքի վրա։

— Գնալին ինձ չմոռանաք,— ասավ նա իր թիկնապահնե–րին, և քիչ հետո լսվեց նրա համաչափ քնաձայնը, որ երբեմն խախտվում էր քթի սուլոցով կամ կոկորդի խռռոցով։

Նրա օրինակին հետևեց և իր բարեկամ Օտա Ապահունին։

Մինչ այդ երեկոն գալորովին մթնեց. աստղերը ոսկու պայտերի պես չողացին երկնքում և հետզհետե այնքան առատա–

ցան ու բազմացան, երկինքն ասես հյուսված էր միայն աստղերից, որ լուսեղեն անհուն ցանցի պես ծավալվում էր նրանց դլխավերև: Թագավորին ու նրա շքախմբին սպասավորող զինվորները լինչ-որ մի բեռից խուսն մի դորգ բերին ու փռեցին կանաչների վրա: Պապը նույնպես թիկն տվեց հանգստանալու. բայց ներսում չէր կարողանում կենտրոնանալ մի մտքի վրա. նրան զբաղեցնում էին ոչ միայն վտանգը, ոչ միայն դրության անորոշությունը, թե ինչ կարող է պատահել մինչև սահմանը, այլև այն, թե ի՞նչ եղավ արդյոք այն զինվորներից մեկը, որ ուղարկեց հոռոմ զորքի ներկայությունը պարզելու— դերի՞ ընկավ, սպանվե՞ց թե ուշ վերադառնալով՝ իրենց չդտավ. միաժամանակ նրան զբաղեցնում էին նաև, թե արդյոք քանի՞ դնտու պահակ է կարդված բանակատեղի շուրջը... Թեև բաթը հիմա շրջում էր այդ թիւուսների արանքում՝ ստուդելու զինվորների տեղն ու վիճակը և հարկ եղած դեպքում նրանց խրախուսելու, որ քիչ մնաց մինչև սահմանը, որ նրանց աչալրջությունից է կախված ամենքի վերկուրյունը: Նրա հետ շրջում էր և Գնելը, և սա նույնպես, իր հերթին, բացատրում էր, թե վերջին անցումն է մնում, վաղը կլինեն Եփրատի ափին, լինչպես հավատացնում է հոռոմ դյուղացին, որ հիմա մի խումբ զինվորների մոտ նստած՝ մատներով լինչ-որ բան էր հասկացնում նրանց, որովհետև հունարեն չէին հասկանում. զինվորները լավ չէին բռնելով նրան կամ նրա մատների լեզուն՝ ծիծաղում էին նրա ճիպերի վրա, որովհետև այդ ամենը երեկոյան մութի մեջ թվում էին տարօրինակ ծամածռություններ:

Երեկոն սկզբում խաղաղ էր, այնքան խաղաղ, որ ոչ միայն ձիերի վնչոցը, այլև զինվորների չչուվով զրույցը լսվում էր այս ու այն կողմից, բայց հանկարծ թիւուսների այդ ընդարձակ տարածությունը ալեկոծվեց մեկեն. լինչ-որ մի հով, ավելի շուտ հանկարծահաս մի քամի, կարծես հենց նոր շղթայազերծ եղած, ներքևից, Եփրատի կողմից եկավ ու հարձակվեց այդ մանր ծառերի ու թիւուսների վրա, և այնպես ուժգին, որ շատ ձիեր դադարեցրին արոտը ու ականջները խլշեցին, շատ զինվորներ վեր կացան իրենց չուրջը նայելու, թե ի՞նչ պատահեց արդյոք... Իսկ Պապը, որ այդ ժամանակ զրուցում էր Երեմիայի

հետ՝ մեկին վեր թռավ ու առաջ գնաց: Նրան թվաց հոտում հետախույզներ են ու, մտածելով, թե բոլորը քնած կլինեն և ինքն է միայն արթուն՝ գնաց նայելու և հսկելու:

— Ո՞ւր, Պապ... Սպասիր,— ելավ Երեմիան:

Պապը չկանգնեց, և Երեմիան չտապեց հասնել նրա եռևիթց, մութի մեջ ոտները հաղիվ փոխելով: Անելով մի քանի-երեսուն քայլ՝ Պապը կանգ առավ և առաջ նայեց այնպես սևեռուն, որ թվում էր մարդ է տեսնում հեռվում և ուզում է ճանաչել:

— Ի՞նչ է, Պապ, ինչի՞ ես նայում,— հասնելով հարցրեց Երեմիան:

— Ինձ թվաց ձիու ոտնաձայն լսեցի,— ասավ Պապը, շարունակելով առաջ նայել:—Պետք է հետախույզներ ուղարկել առաջ, որ տեսնեն ինչ կա, և եթե հնարավոր է գնան մինչև գյուղ և լուր բերեն, թե արդյոք անվտանգ է ճանապարհը...

Փոքր անց, բաթի կարգադրությամբ, մի հինգ զինվոր, Հրահատի առաջնորդությամբ, գնացին առաջ՝ շրջապատը ղեկտելու և ստուգելու: Բայց Պապն այնուամենայնիվ շտապում էր, անդամ արտնեղում, որ մութը չարունակվում է և չի լուսանում, որ ճանապարհ ընկնեն և շուտ հասնեն ու անցնեն Եփրատը, այլապես հետապնդող զորքը կարող է հասնել և ստիպված պետք է ընդհարվել, կռվել. իսկ նա չէր ուզում գոհ տալ. ուզում էր բոլորին անցկացնել գետը. բավական էր այն մեկ զինվորը, որ ուղարկվեց գյուղ և չվերադարձավ, բավական է երկուսը վերադրվեցին ճանապարհին. պետք է բոլորին անվնաս հասցնել հայրենիք... Այս էր թերևս պատճառը, որ հիմա ավելի էր անհանգիստ, քան նախորդ երկու օրը: Երկու օր անվնաս, անվտանգ անցնելուց հետո՝ վերջին օրը հանկարծ ընկնել վտանգի մե՛ջ— Պապն թվում էր աններելի հանցանք. պետք էր անել ամենը, զործադրել մեծ զգուշություն՝ վտանգից զերծ մնալու: Այսքան նեղություններից հետո այնպես պետք էր անել, որ պատվով դուրս գան այդ ամենից և պատվով մտնեն հայրենիք...

Քամին նորից խաղաղեց և վտանգի երկյուղը առես մեղմացավ բանակատեղում: Նորից լսվեցին արածող ու հանգստացող ձիերի ինչոցը, Զենոն Գնունու քնաձայնը, արթուն զինվորների խոսոցը և երբեմն այն, թե ինչպես Բաթին ու Գնելը շարունա-

կում էին անցնել խմբից-խումբ և խրախուսել նրանց ոչ թույլ ձայնով:

Ջնայած դրան՝ պապը դարձյալ անհամբեր էր. նրան մերթ թվում էր, թե գիշերը դանդաղ է անցնում, մերթ էլ կարծում էր, թե առաջ ուղարկված հետախույզները երկար մնացին, այն ինչ պետք էր շտապել, շտապել և շտապե՛լ...

Իսկ գիշերը, անծանոթ վայրի այդ գիշերը դնում էր անտարբեր ընթացքով. երբեմն ծառերի մեջ ինչ-որ թռչուններ էին մնչում, ինչ-որ միջատներ էին երգում և թեթև հովն օրորում էր ծառերն ու թփերը, որոնց առասպը հանգստացնող տրամադրություն էր բերում մանուկ, բայց երբեք պապին, որ ականջը չարունակ ոտնաձայնի՝ սպասում էր, թե ե՛րբ պիտի վերադառնան հետախույզները:

Եվ այդպես ժամեր անցան, երբ վերջապես լուր բերին, թե հետախույզները վերադառնում են: Ու քիչ հետո Բաթը Հրահատին բերեց թաղավորի մոտ:

— Ի՞նչ տեսաք,— հարցրեց պապը:

— Առանձին ոչինչ, արքա,— մութի մեջ խոնարհում արավ Հրահատը:— Հասանք մինչև գյուղի սահմանը՝ չերևաց ոչինչ:

— Ուրեմն հոտում զորք չկա՞:

— Այդ դժվարին է ասել, արքա: Գյուղը քնած էր: Երևաց մխացն, որ չներքի հալոցի վրա մարդ չելավ ի դուրս: Մակաբերում եմ՝ եթե զորք լիներ—անպայման կերևներին նայելու: Բայց չելավ ոչ-ոք:

— Բարի: Այժմ գնա հանգստացիր, պետք է շուտով ճանապարհվել,— կարգադրեց պապը, և երբ Հրահատը դարձավ գնալու, նա կանչեց.— Սպասի՛ր, տղաս, աքլորի ձայն չլսեցի՞ր:

— Ոչ, արքա, բայց թվում է հավախոսը մոտ է:

— Ուրեմն եթե հիմա ճանապարհվենք՝ առավոտը կհասնե՞նք գյուղ:

— Հրամայել ես, արքա:

— Լավագույն է ուրեմն ճանապարհվել, Բաթ:

Եվ կարճ մի ջոգում թաղավորի հրամանը հայտնվեց բոլորին. չմոռացան նույնը հայտնել և Ջենոն Գնումնուն ու նրա բարեկամ Օտային, որ իրենց քաղցր քնից զարթնեցին տհաճությամբ ու

անքալով, և ամենքը նորից ճանապարհ ընկան նույն արահետը բռնած, հոտում դյուզացու ու Հրահատի առաջնորդությամբ:

Սկզբում առաջ էին գնում զգուշությամբ ու դանդաղ, աչք խաուելով ձայն, աղմուկ չլսվի. սակայն քիչ հետո, երբ ջրի ձայն լսեցին՝ ուրախության մի ալիք անցավ մարդկանց շարքերով.

— Եվրատն է, Եվրա՛տը,— լսվեցին հրճվանքի ձայներ:

Իրոք մութի մեջ լսելի էր ջրերի համատարած, տարերային մի ընթացք: Հույսը հավատացնում էր, որ Եվրատն է: Բայց թե որքան մոտ էր—դժվար էր իմանալ, համենայն դեպս՝ դա առանձին աշխույժ նեղչնչից բոլորին և ճկավորների երթն արագացավ: Շուտով լսվեց և աքլորների կանչ, որ դնալով հաճախացավ, կարծես մրցություն կար մեջները, թե ո՛վ կկանչէ ավելի դիր ու երկար: Եվ աքլորների այդ կանչը, ջրի պատճառած աշխուժին ավելացրեց մի վստահություն, թե ամեն ինչ խաղաղ է և հանգիստ: Ու մարդիկ առաջ գնացին արագացած ընթացքով:

Արևելքը կամաց-կամաց գունատվում էր, աստղերը մարում էին մեկը մյուսի ետևից և դեսի ձայները դնալով ուժեղանում էր. ջրերի շառաչն ու խշշոցի մեջ ուրիշ ձայն չէր լսվում:

Փոքր էլ դնալով՝ հասան մի դյուղ, որ գտնվում էր հենց Եվրատի ափին, և որը, ինչպես հետո պարզվեց, հունական աղքատիկ դյուղ էր: Հասնելով դյուղ և գետափ՝ զինվորներից ոմանք ուրախացան, որ կարող են հանգիստ առնել այդտեղ, բայց Թադավորը կարգադրեց՝ անմիջապես անցնել դեպը և հանգստանալ մյուս ափին՝ հետապնդումից և հետապնդողներին դիմադրելու հոգսից ազատ:

Մինչ այդ նոր զարթնած հոտում չինականները, տնանելով թաղամասի այդ ձկավորներին,—մարդ, կին, երեխա,— տներից դուրս թափված, շտապը լրիվ չհագնված, հետաքրքիր նայում էին արտասովոր այդ երևույթը, կամենալով իմանալ, թե ո՛վքեր են դրանք, ո՛ւր են գնում, և չէ՞ն եկել արդյոք իրենց դյուղում մնալու: Դրանց մեջ հայտնվեցին հոտում չինականի ծանոթները, որ հարցնում էին նրան, թե ո՛վքեր են դրանք և ո՛ւր են գնում: Նա նրանց հայտ էր և դեսն անցնելու էն՝ նրանք զարմացան.

— Օ՛, դեսը ձկով դժվար է անցնել:

Իրոք, գետն անցնելը շատ դժվար էր. Եփրատն այդտեղ շատ խորն էր, անհյուրընկալ ու սրընթաց: Ձիերը կարող էին խեղդվել կամ, հոսանքով տարվելով, ժայռերին դիպչել, և մարդիկ նրանց հետ:

— Լաստե՛ր, լաստե՛ր են պետք,— լսվեցին ձայները:

Եվ իրավ. միայն լաստերը կարող էին փոխադրել այդքան մարդ ու ձի անվնաս: Մի քանի հոգի ձիերը քշեցին գետափ՝ լաստեր որոնելու: Զգտնելով ոչինչ՝ սկսեցին հարց ու փորձել չինականներին, թե ո՛ւր են նրանց լաստերը. բայց նրանք, ինչպես երևում է, շատ զգուշ էին կամ զգուշացված, խուսափողական պատասխաններ էին տալիս, թե շատ լաստեր չունեն, եղած մի երկու քելլեքն էլ ապրանքով զնացել են ներքև:

Այդ ժամանակ Բաթը կարգադրեց բակերից գերաններ բերել և լաստեր կապել: Զինվորների մի մասը, ձիերի սանձը ընկերներին հանձնելով՝ խմբերով զնացին այդ պատվերը կատարելու. և որովհետև դա անտառամոտ գյուղ էր—բոլոր բակերում էլ գտնվեցին թե գերաններ, թե մեծամեծ փայտեր և թե տախտակներ: Բայց մինչ զինվորները բակերում գտած այդ գերաններն ու տախտակները կբերեին գետափ՝ մի քանի անհամբեր, խիզախ զինվորներ ձիերով մտան գետը: Ափամոտ ջուրը հասնում էր ձիերի ծնկներին, բայց առաջ զնալով՝ մեկեն ընկան խոր տեղեր. ջուրը հասավ մինչև ձիերի թամբը և, մյուս կողմից, սրընթաց հոսանքը հանկարծ քշեց-տարավ նրանց ցած... Ու մի առժամ միայն կանգնած և նստած մարդիկ էին երևում ջրի երեսին և ձիերի գլուխները: Լսվեցին ափսոսանքի ու հանդիմանության ձայներ: Թվում էր այդպես պիտի տարվեն հոսանքով ու խեղդվեն, բայց հանկարծ, չգիտես ինչպես, ճեղքեցին ալիքները և դուրս եկան հորդ ջրերի սրընթաց տեղից և ելան մյուս ափը:

— Ա՛խ ելան, ա՛խ ելան,— բացականչեցին ափսոսանքով նրանց հետևողները հանգստացած:

Ու մի առժամ Եփրատի ափը կենդանացավ շինարարական ազմուկով, եռ ու գոռով. զինվորներից ոմանք սկսեցին կացնով ականջներ շինել գերանների ծայրերին, թոկերով կապկպել ու լաստեր շինել: Այդ բանում առանձնապես աչքի ընկան հյուսնության իմացողները. մի մասը թիեր շինեցին տախտակներից,

մյուսները զբաղմունքների վրա ամրացրին տախտակները, որ ձիերը կարողանան կանգնել... Հույն չինականները հեռվից՝ իրենց քաղքից ու կտուրներից մոտից նայում էին այդ աշխատանքներին և անբարյացակամ լռում:

Երբ լաստերի շինութիւնը, որ տևեց մի երկու ժամ, վերջացավ—սկսեցին դեռևս անցնել. այսինքն՝ ո՛ր լաստը պատրաստ եղավ՝ սկսեց անցնել: Ամենից առաջ, բաթի կարգադրութեամբ, անցավ Դինելը, Հրահատն և մի խումբ զինվորների հետ, որ ուսումնասիրեն մյուս ափի հարմարութիւնները, թե որտեղ ափ դուրս գան: Ապա հմուտ թիավարը զինվորներն անցրին Թագավորին իր չքախմբի ու ձիերի հետ միասին:

Այստեղ կատարվեց մի փոքր դեպք, որ արժե հիշել: Լաստ նստելուց առաջ բաթը կանչեց հոռոմ գյուղացուն, որ հեռվից դիտում էր լաստերի անցումը, և մի քանի ոսկի ընծայեց նրան:

— Ձո ծառայութեան համար՝ հայոց Թագավորից:

Հույնի աչքերը չռվեցին. նա այնքան չուրախացավ ոսկիների համար, որքան զարմացավ, որ այդտեղ Թագավոր կա. այդ լսելով՝ նա ապշած նայեց, թե որն է դրանցից Թագավորը. արդյոք իրեն ոսկի տվո՞ղը թե մյուսներից որևէ մեկը, և նրա հայացքը կանգ առավ Զենոն Գնունու վրա, որ պատկառելի մխրուք ուներ, որ ամենքից հանգիստ էր ու խաղաղ: Բայց և այնպես, երբ նա իր տարակուսանքը պարզելու համար, ափին գտնվող հայ զինվորներից հարցրեց, թե ո՛րն է Թագավորը, և երբ զինվորները մատնացույց արին Պապին, հույնն ավելի զարմացավ.

— Ուրեմն ձեր՝ արմեններն Թագավորը զինվորի պես հագա՞կ է հագնվում,— ասավ նա:

— Այո, մեր Թագավորը հանդերձ չունի,— հանդգնությամբ պատասխանեց հայ զինվորներից մեկը կիսատ-պռատ հունարենով և իր հպարտությունը ցույց տալով:

Մինչ այդ լաստերն սկսեցին իրար ետևից անցնել դեպի, տեղափոխելով զինվորներ, ձիեր, ջորիներ իրենց բեռներով: Լաստերը, որ հինգ-վեց հատ էին, մի քանի անգամ գնալով ու դառնալով՝ հազիվ կարողացան բոլորին փոխադրել մյուս ափը: Անցումն ավարտելով՝ լաստավար զինվորները լաստերը չհանձնեցին

հոսանքին, այլ բաթի կարգադրությամբ կապեցին ափի քարե-
րից, որ հետապնդողների ձեռը չընկնի:

Երբ բոլորն անցել էին և հետապնդելու վտանգ չկար՝ սկսե-
ցին նախաճաշել այնպիսի ախորժակով, որ կարծես՝ շարաթներով
հաց չէին կերել:

Բայց հազիվ սկսել էին ճաշը, երբ զինվորներից մեկը, որ
չգիտես ինչո՛ւ բարձրացել էր նստած տեղից, հանկարծ գոռաց.

— Հոռոմների զորքը՛... հոռոմների զորքը գալի՛ս է...

Ամենից առաջ տեղից վեր թռավ Գնելը և ձեռը դրեց ճակա-
տին. նրան հետևեցին ուրիշ շատերը, ապա համարյա բոլորը և
տեսան, իրոք, դյուղի ճանապարհին, ոչ այն ճանապարհին,
որով եկել էին իրենք, այլ հակառակ կողմում ահագին մի փոշի,
ավելի շուտ փոշու մի մեծ ամպ, որ վազում էր դեպի դյուղը:
Սկզբում չէր նկատվում, թե ինչ կա այդ փոշու մեջ կամ ներս
նուռ. բայց լեռնային բնակիչների սրատես աչքերը շուտով այդ
փոշու մեջ նկատեցին զինվորներ, որ սրարշավ գալիս էին առաջ:
Իսկ երբ դրանք մոտեցան գյուղին՝ բոլորը ճանաչեցին հունական
այրուձին, որ դյուլամիջով շտապում էր դեպի:

Հայերն այդ տեսնելով, առանց հավաքելու իրենց հագ-
ուստեղենի բացած պաշարները, նետ-աղեղները վերցնելով՝ դիրք
մտան ափի ժայռերի ու թփերի ետև:

Իսկ հոռոմներն ափին մոտենալով՝ սկսեցին նետեր արձակել
դեպի հայ զինվորները: Ու գետի երկու կողմից սկսվեց հետա-
դուն նետաձգություն: Նետերը մյուս ափը չհասնելով՝ ընկնում
էին ջուրը, կամ եթե հասնում էին՝ դիպչում էին ժայռերին.
երբեմն օդի մեջ իրար դիպչելով՝ նույնպես ընկնում էին գե-
տը... Տեսնելով ապարդյուն նետաձգությունը՝ հույները ձիերի
վրայից բռունցքներ թափ տվին դեպի հայերը: Հայերը պա-
տասխանեցին նույն ձևով. և այդ սպառնական մնջախոսությունը
տևեց բավական երկար, մինչև հոռոմները ետ դարձան դյուղ,
ուր շինականները չդիպատեցին նրանց՝ ինչ-որ պատմություն-
ներ անելով:

Իսկ հայերն այլևս չշարունակեցին իրենց կիսատ թողած
նախաճաշը, ձիեր հեծնելով, ճանապարհ ընկան արդեն հարթ
մարգագետինների միջով, որոնց մի շատ կանաչ են պահում Եփրա-

ան ջրերը: Թե այդ կանաչները և թե այն ղեսցումը, որ հայրենի հողի վրա էին, նրանց մոռացնել տվեց հոռոմներին և իրենց կրած նեղությունները, ու բոլորն սկսեցին հիշել իրենց հարազատներին ու բարեկամներին: Միայն Պապը, Բաթը և Երեմիան պես տպրում էին այն վիրավորանքը, որ պատճառել էր Վաղես կայսրը իրենց: Ու հիշում էին նման դեպքեր պատմություններից, թե ինչպես կարոկալա կայսրը կանչեց Սանատրուկին՝ գահից գրկելու և Հայաստանն իսպառ նվաճելու, ինչպես Անտոնիոսը խաբեց հայոց արվեստասեր Արտավազդ թագավորին և չղթայերով՝ տարավ Եգիպտոս ու հանձնեց անառակ Կլեոպատրա թագուհուն, որպես տորուկ ընծա, թե ինչպես, վերջապես, Շապուհը, սեր խոստանալով, կանչեց Արշակին և բանտարկեց Անհուշ բերդում... և այս ամենը նրա համար, թե ինչո՛ւ են ուզում հայերն ինքնուրույն լինել, իրենց երկրի գործերն իրենք տնօրինել... ինչո՛ւ չեն ենթարկվում իրենց...

Հիշում էին ընկերներն այս ամենը և վրդովվում Վաղեսի ենթադրյան վրա:

— Դու լրտվացի էիր, Բաթ,— ասում էր Պապը,— ես այդքան տորություն չէի սպասում: Ինքս թեև տեղյակ բնդհանրական խարդախությանդ՝ չէի կարծում բնավ, թե մենք ևս, այնինքն՝ ես նույնիսկ կհանդիպեմ այդօրինակ ենթադրյան: Եվ չգիտեմ ինչո՞ւ. նրա համար արդյոք, որ մեր տան գործերն ուզում ենք ինքներս կարգադրել, թե պահանջում ենք մեր քաղաքները:

— Իսկ այդ հաճելի չէ Վաղես աղվեսին,— ասավ Բաթը բարկացած:— Ինչպես եք համարձակվում կաթողիկոս ճեղնադրել, քաղաքներ պահանջել:

— Այո, ես հիմա եմ հասկանում, որ նրանք չհեռանալով մեր քաղաքներից, ուզում են վերացնել մեր ազատությունը: Իսկ մենք... մենք, բարեկամներս,— Պապը հանկարծ հառաչեց այնպես սրտախոր, որ Բաթն ու Երեմիան ակամա նայեցին նրան, և Պապի աչքերում արցունքներ տեսան:— Իսկ մենք պահենք, սիրե պահենք մեր երկիրը ամեն գնով...

Պապի ձայնը նորից բեկվեց, և նա լռեց:

Այնուհետև որքան էլ նրանք խոսում էին ուրիշ նյութերից՝

Ներանց վրդովմունքը վազեսի դեմ—չէր անցնում. նորից էին հիշում նրա դավը և նորից վերադառնում դրան:

— Իսկ Տերենտը, զարմանում եմ,— ասում էր Պապը,— ինչո՞ւ Տերենտն ինձ չզգուշացրեց, որ այսպիսի բան կարող է լինել: Նա, եթե ինչպես հավատացնում է, բարեկամ է և գիտեր ինչ՝ պետք է զգուշացներ ինձ:

— Նա իր կայսեր բարեկամն է, Պապ, և ոչ թե քո,— նկատեց Բաթը:— Մի մոռանար՝ նա հոռոմ է, բիզանդացի:

— Այո, բիզանդացի, բայց ինձ այնպես է թվացել, որ նա բնավ նման չէ մյուս հոռոմներին,— ասավ Պապը:— Տերենտը միշտ բարյացակամ է դեպի մեզ: Մի անգամ նա մինչև խոկ ասավ, թե մեր երկիրն ավելի է սիրում, քան իր հայրենիքը:

— Եվևի նրա համար, որ միացնի իր հայրենիքին,—նկատեց Բաթը դառը հեգնանքով:

— Այդքան ստորություն ես այդ մարդուց չէի կարող սպասել: Նա ինձ միշտ հավատացնում էր, թե իմ կյանքը շատ թանկ է իր համար և միշտ ուսանեն դեպքում պիտի բարեխոսի իր կայսեր առաջ իմ օգտին: Եվ, վերջապես, հիշիր թե Նախկևանի և Զիրավլի ճակատամարտերին ինչպես էր արգելում, որ մասնակցեմ կռվին, իսկ Տարսոն մեկնելիս՝ մտերմաբար խորհուրդ տվեց, որ պնդեմ քաղաքներն ազատելու վրա:

Այս խոսքերի վրա Բաթը ձին կանգնեցրեց:

— Գիտես, Պապ,— ասավ նա,—ես կոպիտ դինվորական եմ. պալատական և դիվանագիտական նրբություններից քիչ բան եմ հասկանում, բայց ընդհանրապես չեմ հավատում քաղաքական մարդկանց, առանձնապես բիզանդացի մարդկանց անկեղծությանը: Այդ թվում և Տերենտին:

— Սակայն, կրկնում եմ, Բաթ, նա թե իմ և թե մեր երկրի նկատմամբ միշտ բարյացակամ էր թվում ինձ: Անգամ իմ գալու օրը, երբ նա եկավ ինձ «բարի ճանապարհ» մաղթելու, խնդրեց, որ լավ պահեմ ինձ, չհիվանդանամ, չշտապեմ և Արմենիայի չափերը համարձակ պաշտպանեմ, որովհետև ինքը գտնում էր, որ մեր պահանջներն արդար են և ինքն այդ մասին միշտ գրել է իր կայսեր: Ուրեմն կե՞ղծ էր այդ ամենը:

— Սխալվիլ Պապ, սխրելի արքաս,— ձին նորից կանգնեցնելու

վորձ արավ Բաթը, դինվորականի իր խոսածևը փոխելով մտերմականի, եղբայրական եղանակի, որի մեջ կար և աղաչականի մի բան։— Ես քեզնից մեծ եմ մի երկու տարով, հետևաբար թուլլ տուր մի խորհուրդ տալ քեզ.— մի՛ հավատա անկեղծ խոսող մարդկանց։ Դրանց անկեղծությանն դիմակի տակ երբեմն սհասվոր բաներ են լինում, ինչպես լինում են ծաղիկներով ծածկված անդունդները։ Մի՛ հավատա...

— Իսկ դու, Երեմիա, դու ի՞նչ կարծիքի ես Տերենտի մասին,— դարձավ Պասլը դեպի իր դպիրը, որ Բիկնոցն ուսերին ձին քշում էր նրա ալ կողմից։— Դո՞ւ նույնպես կասկածում ես նրան։

— Ես, Պասլ, միշտ այն սպասվորությունն ունեի, թե նա բարյացակամ է դեպի մեզ։ Բայց գուցե և այդպես է...

— Տա ասուված, որ սխալված լինեմ,— ասավ Բաթը և լուռ։

Խոսակցությունն ընդհատվեց. և նրանք ձիերն արագացրին՝ առջևից գնացողներից ետ չմնալու և ետևից եկողների ընթացքը չխանգարելու համար... Հայրենիքի օդը վերակենդանացնում էր նրանց առաջ և շոյում նրանց դեմքը։ Ու ամբողջ այդ ապագաղութը առաջ էր գնում առանձին մի աշխուժով. թվում էր ձիերն անդամ զվարթացած են փոխում իրենց ոտները և խաղացնում բաշիները...

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Դվինը հևում էր տապից: Օդի մեջ ծանր մի հուրք կար, որ անդադար տարածվում էր փողոցներում, այգիներում, մտնում էր տները և դժվարացնում մարդկանց շնչառությունը: Միջօրեի արևը կանգնել էր միջնաբերդի դվինին և անխնա այրում էր նրա հատատաքատ, բարձր աղյուսե պարիսպները, ծառատտանները, ծաղկոցները, պալատն ու հարակից շենքերը: Աղբյուրներն ու առուներն անդամ թվում էր նեղվում, շնչահեղձ էին լինում: Պահակներն իսկ իրենց կեսօրից քաշվել էին սավերները և ոմանք նիզակներին հենած, ոմանք գետնին նստած՝ մնացել էին կիսանինջ վիճակի մեջ:

Լուռ էր և անշարժություն: Պալատում ամեն ոք քաշվել էր իր օթևանը և սպասում էր երեկոյան զովին: Իսկ Զարմանդուխտ Թագուհին այդ ժամին ձեռները կրծքին խաչած՝ անխոս գնում–գալիս էր իր մենարանում և երբեմն, կանգ առնելով, անշարժ նայում էր մի կետի: Պատին կախված խաչելության առաջ ծխում էին զույգ արծաթ խնկամանները. և իրենց բուրմունքը փոքրիկ երերուն սյուներով ծավալում վեր, դեպ առաստաղը:

Մի առժամ շրջելուց հետո՝ Թագուհին հանկարծ նորից կանգ առավ և թափով ծունկի եկավ խաչելության առաջ ու սկսեց եռանդով խաչակնքել:

— Տե՛ր, դու ողորմա... Ծախանիլը, տեր, չարը և հեռացրու ՙիմ ձանքները հայոց աշխարհից և իմ Պապից... Տե՛ր...

Աղոթում էր Թագուհին ծայր տխրության մեջ և մեջընդմեջ խաչակնքում նորից: Նա տագնապած էր: Ամեից ավելի լուր չուներ Թագավորից և օրեցօր սպասում էր սուրհանդակի, որ

խմանա, վերջապես, Պապն ապահով տեղ հասե՞լ է արդյոք, և նրան հասել է՝ ընդունվե՞լ է կայսեր կողմից կամ ի՞նչը կվերապահեն... Ջնայած Թագավորի մեկնելուց անցել էր արդեն ամիս ու կես, սակայն տակավին և ոչ մի սուրհանդակ, որ լուր բերեր նրա տեղ հասնելու կամ վերադառնալու մասին... Ու թեև ոչինչ չդիտեր Թագուհին, բայց երբ երեխաները հարցնում էին, թե «ի՞նչ պիտի դա Պապը» (նրանք հորը կանչում էին մորնման— անունով)— պատասխանում էր. «չուտով, չուտով»... բայց անմիջապես էլ հուզվում ու տագնապում էր ավելի և օրը մեկնելու անգամ մոռնալով իր մենարանը աղոթում էր խաչելության առջև:

Թագուհին առանձնապես տագնապած էր այսօր: Նրա ականջին լինչ-որ կասկածներ ու տարակուսանքներ էին հասնում Պապի մասին. պալատականները արտահայտվում էին կիսախոսքերով, մինչև իսկ չվերթված. զգում էր, որ դիտեն լինչ-որ, բայց երեսին չեն ասում. չէր հասկանում՝ խուսափո՞ւմ են, թե թաքցնում: Մյուս կողմից ծանր երազներ էր տեսնում դիշերները, և որքան էլ զայրակը, իշխանուհիները՝ այրի Սահառունին, Բաթի և Երեմյայի տիկինները դրանք մեկնում էին լավ իմաստով և աշխատում էին հանգստացնել նրան, բայց նա չէր հանգստանում: Պապի ուշացումը և սուրհանդակ չուղարկելն արդեն նրան մտածել էր տալիս, որ ծանր մի բան կա... Սուրհանդակի սպասելով նա մինչև իսկ հրաժարվեց գոմ Գառնի տեղափոխվելուց, չնայած երեխաները նեղվում էին Դվինի տաքից:

— Տեր, դու ողորմաս,— կրկնում էր նա ծնկաչոք ու բազկատարած, խորանուղված ու ներքահայաց, և իր այդ դիրքով հիշեցնում էր ապաշխարող մի կույսի, որ աշխարհ մոռացած՝ Թողութիւն է հայցում երկնավորից:

Երկար աղոթում էր նա այդպես, երբ հանկարծ դուռը բացվեց և իր թուխ ոտներով ներս վազեց նրա պատառ դայակը.

— Թագուհիս, Թագուհիս,— ասում նա գրեթե հևասպառ:— Թագավորից սուրհանդա՛կ...

Թագուհին վեր թռավ:

— Ո՞ւր է, ո՞ւր է,— ուրախությունից դողաց նա:

— Տեր Հայրապետի մոտ:

— Եվ ի՞նչ լուր։ Թագավորն առո՞ղջ է։ Գա՞լիս է։

— Ջհմացա՛, Թագուհիս։ Սուրհանդակն եկավ այնպես արագ ու անմիջապես գնաց Հազարապետի մոտ։

— Հազարապետի մո՞տ... Կանչիր Հազարապետին... Բայց առավել լավ է՝ ինքներս գնանք... Գնանք...

Բայց մինչ դայակը կերթար կամ ինքը Թագուհին դուրս կգար սենյակից՝ կենան Ամատունին ինքը եկավ.

— Ուրախ լուր, Թագուհի,— սեպաճև մորուքը բռնելով՝ ուրախաղեմ խոնարհում արավ նա։— Թագավորը գալիս է։

— Ա՜հ, վերջապես, վերջապես,— ասավ Թագուհին։— Ուրա՛խ եմ շատ... Հիմա ի՞նչ ես մտադիր անելու, իշխան։

— Պատրաստվել և գնալ ընդառաջ, Թագուհի։

— Իսկ ե՞րբ կլինի այստեղ. ի՞նչ ասավ սուրհանդակը։

— Հավանորեն մի երկու օրից, եթե ճանապարհին կանգ չառնի։

— Իսկ ինչո՞ւ պիտի կանգ առնի,— տարակուսեց Թագուհին։

— Սուրհանդակի ասելով՝ չհներում, քաղաքներում կանգնեցնում են, դիմավորում. ուզում են պահել-հյուրասիրել։

— Դա ինձ ուրախացնում է, տեր Ամատունի, որ ժողովուրդը սիրում է նրան։

— Անշուշտ, ուրախալի է, Թագուհի, և քնական, տուրքերը վերացնելուց հետո...

— Ուրեմն, տեր Ամատունի, արագ նկատեց Թագուհին,— այդ ի՛նչ ցանկալի ես համարում, իսկ ես գնամ հայտնեմ իշխանուհիներին և դավակներիս...

Թագավորի գալու լուրը կարճ միջոցում տարածվեց ոչ միայն միջնաբերդում, այլև քաղաքում, և մյուս օրը մայրաքաղաքը, մանավանդ Ավագ դուռը, որտեղից պիտի մտներ Թագավորը, զարդարվեց դրոշներով, կանաչիներով, իսկ քաղաքացիները, ինչպես Զապէ առաջին դարուստին, երբ նա Բիզանդիայից եկավ հորը վերադրնելու, այնպես էլ հիմա, առավոտից մինչև երեկո լցված էր հրապարակը, Վաղարշապատի ճանապարհը և Ավագ դռան մոտերքը և սպասում։ Լինում էին հետաքրքիրները, որ դարձյալ բարձրանում էին պարիսպները, բուրգերը, և ձեռները

Ճակատներին նայում այդ ինքներից դինը, ճանապարհի հեռուն, կարծելով արդեն մոտենում է: Բայց ոմանք, ավելի իրազեկները, դղրուշացնում էին. «Երկու, երեք օրից հազիվ գան»...: Ամբոխի մեջ էր մի չար և Մեղավոր Մաղքոսը, որ եզան մազափունջը ձեռին խմբից-խումբ էր անցնում և ասում. «Թագավորը գալիս է... հոգևորները տխուր են»... Այստեղ երևում էր և ոսկերիչ Գազավոնը և Ծերունի Ջաքարեն, որ ապրում էր մի հեռու ազգականի մոտ: Այդ տեղերում խմբվում էին ոչ միայն Դվինի քաղաքացիները, արհեստավորներ, այլև գործով մայրաքաղաք եկած շինականները, ու բոլորի խոսակցության, զրույցի նյութը դրնթե մեկ էր—Թագավորի վերադարձը:

— Հասպա խոսում էին, թե Թագավորը չի՞ գալու,— ասում էր մեկը հրապարակում՝ շուրջը խմբված քաղաքացիներին:— Ա՛հա՜մասիկ. գալիս է և, հավանաբար, մեծ պատիվների արժանացած:

— Հարկա՛վ. Թագավորին առանց պատիվների ճանապարհ չեն դնի,— նկատեց մի ուրիշը թուլլ ձայնով:— Բայց ես լսել էի, որ կայսրը նրան կանչել է պատժելու:

— Ոչ թե պատժելու,— խոսակցությանը միջամտեց մի երրորդը, ավելի տարեց մի մարդ:— Ոչ թե պատժելու, այլ խրատելու, թե ինչո՛ւ է հոգևոր հայրերին նեղում, ինչո՛ւ է կաթոլիկոս ձեռնադրել այստեղ... Ես այդպես եմ լսել...

— Այդ չէ, այդ չէ,— գլուխն օրորեց ունկնդիր քաղաքացիներից մեկ:— Ասում են՝ կայսրը կանչել է Թագավորին, թե այսուհետ ինչպես անեն, որ պարսից չթողնեն իրենց սահմաններից դուրս գալու և...

— Իսկ քաղաքների մասին ի՞նչ, քաղաքների՞,— խոսողին ընդհատեցով՝ հետաքրքրվեց մի արհեստավոր:— Քաղաքները մաքրո՞ւմ են, թե ոչ...

— Այդ մասին էլ, երևի, կարգադրություն կլինի արված,— պատասխանեց առաջին խոսողը և հանկարծ ինքն իրեն ընդհատեց ու երեսը շրջեց:— Այ սրանք, ասում են, տխուր են, որ Թագավորը վերադառնում է,— մտածեց սրտով նոր հրապարակով անցնող երկու արեղայի, որ քայլում էին անհանդարտ ու մոայլ:

— Հարկավ՝ տխուր կլինեն: Գիտեն, որ եթե գա՝ նորից,— նկատեց մեկը խոսքը չավարտելով:

— Բայց հազիվ,— հեղինակավոր նկատեց մի թավ ձայն:— Կայսրը, երևի, խրատած կլինի, որ այլևս չնեղի հոգևորականներին:

— Խրատա՞ծ,— ինքն իրեն լսելով մի քաղաքացի թե արհեստավոր, որ նոր էր մոտեցել զրուցողներին:— Ի՞նչ խրատ... Գազան, ասում են, թողել-փախել է: Չի էլ ցանկացել խոսել կայսեր հետ...

Ոստակիցները զարմացած իրար նայեցին:

— Փախե՞լ,— բացականչեցին մի քանիսը դրեթե միաժամանակ:

Իսկ մեկը նկատեց բարկացած.

— Այդ ի՞նչպես կարող է փախչել, մարդ ասուածո: Թուչո՞ւն էր, թևավո՞ր: Հազար մարդով փախչե՞լ...

— Ասո՛ւմ են,— չփոթվեց փախչելու մասին խոսողը և փորձեց արդարանալ կարծես:— Ասում են...

— Շա՛տ բան կասեն: Պատրելի՞ է հավատալ ամեն ասածի:

— Ես մի վարդապետից եմ լսել:

— Այո, վարդապետները, երևի ուրիշ բան չէին ասելու,— ասաց նույն հուզված մարդը:

— Եվ քանի որ իրենց ասածը չի կատարվել՝ ահավասիկ տարածում են լուրեր ստահոդ,— ավելացրեց մի ուրիշը:— Նույնպես նրանք էին ասում, թե Թագավորն այլևս չի վերադառնալու, կայսրը նրան չի թողնելու...

Այդ ճիշտ էր. վաղուց քաղաքում, չգիտես որտեղից և ինչպես սկիզբ առած, լուրեր էին շրջում, թե Թագավորը այսուհետ չի դառնալու, և այդ ասում էին ոչ միայն քաղաքում, այլև գավառներում, ու այն ասուիճան որոշ, որ գործով քաղաք եկած շինականները հետաքրքրվում էին հրապարակի արհեստավորներից, թե «ճշմարիտ է, որ Թագավորը չի գալու... Ասում են՝ հոռոմների կայսրը կանչել է նրան պահելու, որ էլ եկեղեցու հողերը, տուրքերը չվերցնի»... Արհեստավորները, որ իրենք էլ լսել էին այդ ամենը, պատասխանում էին, թե այդպիսի բան չկա, որ դրանք սուտ լուրեր են, և իրենց հերթին հետաքրքր-

վում էին, թե ո՞րտեղից են լսել այդ: «Աքեղաներից» լսել էր պատասխանը: «Աքեղանե՛րը»... երկարացնում էին արհեստավորները, դլուխները օրորելով: Եվ չինականները հեռանում էին ինչ-որ կասկածներով:

Անհայտ է ինչպես, բայց Դվինի հոգևորականների մեջ, իրոք տարածված էր այն կարծիքը, թե Պապ Թագավորն այլևս չի վերադառնա, ու դրանում այնպես էին համոզված, որ մինչև մոտածում, ոմանց ասելով՝ անգամ ծրագրում էին հեռացնել նոր Հուսիկ կաթողիկոսին և նրա տեղ ընտրել Պապ արքայազնին (որ օրինական հաջորդը պիտի լիներ մեռած հայրապետի, որպես նրա երկարամյա տեղակալ ու աջակից) և հավաքել երկու տարվա տուրքերը—տասանորդն ու պողին... Բայց հանկարծ Թագավորը վերադառնո՞ւմ է: Այդ էր պատճառը թերևս, որ հիմա նրանք վանքից դուրս էին գալիս տխուր ու մռայլ: Համենայն դեպս, երբ Թագավորի վերադարձի լուրը հասավ Դվինի վանքը՝ Պապը գլուխն օրորեց.

— Ուրեմն դևը նորի՞ց գալիս է,— ասավ նա զուսպ և չուրթները սեղմեց ամուր, կարծես ավելի խոսք չասելու համար:

— Եվ հիմա, արքայազն հայր, առավել մոլեգին կվրաժարձի իր մտադրություններից,— հոգոց քաշեց երկար Սողոմոն հայր տուրքը:

— Սակայն կարո՞ղ է արդյոք,— ասավ մի մազախուխվ վարդապետ տարօրինակ ինքնավստահությամբ:— Հուսանք Տարոնում խրատված կլինի և այսուհետ եկեղեցու դեմ չէ՛ անի ոչինչ...

— Եվ ինչո՞ւ չի կարող,— հետաքրքրվեց հայր Սողոմոնը, հոնքերի տակից նրան նայելով:—Ո՞վ կարող է այժմ դեմ կանգնել նրան և արգել լինել:

— Եթե նա իրոք փախել է, ինչպես խոսում են, կայսրը նրան կպատժի և թույլ չի տա չարունակել իր չար գործը,— նկատեց մազմազոտը:

Հայր Սողոմոնը հառաչեց և գլուխը շարժեց թերահավատ:

— Սակայն նա գալիս է արդեն: Եթե կայսրն անելու էր ինչ-իաներ, երբ նա տակավին Տարոն էր...իսկ քանի որ գալիս

է՝ ուրեմն նրան արգել չէ կարող լինել ոչ-ոք: Այդպե՞ս է, սրբազան,— դարձավ նա ակնածանքով տխուր նստած Խադին:

Խադը լուռ նայեց սրահի տարածության մեջ և պատասխանեց կարծես ինքն իրեն.

— Այո: Ինչպես օձը չի թողնի իր թույնը, կարիճն իր խայթը, այնպես էլ մոլին Պապը՝ իր դիվական բնույթը:

Եվ Խադի խոսքերից հետո ծանր լռություն իջավ:

Ու մի քանի օր հետո Թաղավորն իսկապես եկավ: Իսկ մինչ այդ՝

— Թաղավորը՛... Թաղավորը դալիս է... կանչում էին Դվինի փողոցներում և բոլորը վազում էին դեպի Սվազ դուռը:

Վազում էին քաղաքացիներ, արհեստավորներ, կանայք, աղիներից եկած մշակները՝ թևերև հագուստներով, քաղաք եկած չինականները՝ իրենց ձեռքի իրերով, և երեխաներ, երեխաներ, որ ուզում էին ետ չմնալ մեծերից:

Թաղավորին դիմավորելու համար դուրս էր թափվել մայրաքաղաքի ողջ բնակչությունը և, ինչպես առաջին անգամ, այնպես էլ հիմա, բռնել էր քաղաքադռնից մինչև հրապարակը: Ժողովուրդը, որ միշտ հետաքրքրվում էր Թաղավորի երթերով, հիմա սակայն, երբ նա վերադառնում էր երկու ամսվա բացակայությունից հետո, երբ մանավանդ շատերը լսել էին, թե կայսրը ցանկացել է բանտարկել և նա փախել է,— ավելի անհուսալի էին դարձել իրենց հետաքրքրության մեջ: Նույնիսկ մոտիկ գյուղերից շինականներ էին եկել Թաղավորի վերադարձը դիտելու: Ուզում էին տեսնել իր՛նչ տրամադրության մեջ կլինի, իր՛նչպես հանդիպած, իր՛նչ ձի հեծած, որ կարողացել է փախցնել նրան և, վերջապես, տեսնել իր՛նչ է բերում հետը և, ո՛վքեր են ուղեկցում նրան:

Թաղավորին ընդունելու համար՝ Մուշեղ սպարապետի և հազարապետ Կենան Ամատունու գլխավորությամբ ընդառաջ էին դնացել շատ պալատականներ ու նախարարներ, դրանց թվում իրենց պաշտոնավայրերից եկած Բագրատունի Սմբատ ասպետը և իշխան Սյունյաց կամսարականը՝ իր Գագավոն և Շալարջ որդիներով, որ, ինչպես միշտ, իրենց ձիերը վարում էին հոր ոչ

և ձախ կողմից և մի երկու քայլ առ՝ իրենց հարգանքը պահելու համար։

Իսկ այժմ, երբ ժողովուրդը դալիս կուտակվում էր գլխավոր փողոցում և Ավագ դռան մոտ՝ մնացած պալատականների ու նախարարների հետ թագավորին դիմավորելու գնաց և կոմս Տեքենտը՝ իր հույն քարտուղարի և մի քանի թիկնապահի հետ, որ ձիերը քշում էին իրենց պետի ետևից տարօրինակորեն ձիեր նստած և մի տեսակ վերից նայելով հավաքված բազմությանը։ Նրան տեսնելով՝ մեկն ասավ ժողովրդի միջից.

— Տեսե՛ք, սա էլ է գնում...

— Եվ ինչո՞ւ չպիտի գնա։ Թագավոր է ժամանում և ոչ թե հասարակ նախարար։

— Սակայն... չեմ հասկանում...

Խռնակցությունն ընդհատվեց նվագածուների բարձր ձայներից և ողջույնի աղաղակներից, որ դալիս էին քաղաքադռնից։ Ժողովուրդն իրար անցավ ու մեկեն հորձանք տվեց այն կողմը։ Բայց առաջ գնալ դժվար էր, իսկ բան տեսնել—անկարելի՝ այնպես բազմությունը խտացել բռնել էր փողոցն ու քաղաքադուռը։ Պատերի և պարիսպների վրա դանվողները միայն տեսան, որ Գասը գալիս էր իր թիկնապահ զորքի ու չքախմբի առաջին ընկած՝ իր բաշը սև ոսկեդույն նժույգի վրա։

Մեկեն լսվեցին ցնծության աղաղակներ՝ «Ապրի թագավորը», «Երկար կյանք», որ արձագանքներով կրկնվեց երկար։ Բայց երբ ձայները լռեցին և թագավորը մոտեցավ պարսպադռան՝ այդտեղ ոպասող նախարարներն ու պահակազորը՝ թագավորին ողջունեցին սրեր մերկացնելով ու բարձրացնելով և դարձյալ «Ապրի թագավորը» բացականչությամբ, որ նորից արձագանքելով կրկնեց ամբոխը։ Թագավորն առաջ գալով՝ ձեռը չարունակ շարժում էր օդում այնպես զվարթ ու խնդերես, որ թոլորին թվաց, թե այն՝ ինչ ասում են Գասի փախչելու մասին, հերյուրանք է սուտ. սակայն, երբ թագավորը դիմավորող նախարարների, ավագանիների, սեպուհների մեջ նկատեց Տերենտին՝ նա մեկեն լրջացավ, նույնիսկ մոայլվեց և կարծես ինչ-որ անհարմարություն զգաց—այդ նկատեցին չատերը—և Տերենտ

բարձրացրած ձեռի բարևին՝ պատասխանեց դվխի թեթև շարժումով:

Տերենտն անշուշտ զգաց այդ սառնությունը և այնուամենայնիվ մինչև պալատ չվոխեց վայրկյանին հարմար իր գվարթ տեսքը և դեմքի հեզ արտահայտությունը: Ճանապարհին նա մի երկու անգամ փորձ արավ մոտենալ թագավորին, բայց այդ դժվար էր չլքապատող նախարարների և չքախմբի անդամների ճիերի պատճառով: Սակայն, երբ հասան պալատ և, ճիերից իջնելով, մարմար աստիճաններով բարձրանում էին վեր՝ Տերենտը հարմար մի վայրկյան գտավ թագավորին մոտենալու և նախարարներից մի քանիսի ներկայությամբ հետաքրքրվեց.

— Հուսով եմ, արքա, իմ օգոստափառ տերը բարեհաճ ընդունելության արժանացրեց քեզ:

Պապի խաժ աչքերը, որոնց գույնն ավելի նկատելի էր հիմա ապևից ու քամուց այրված դեմքին, մի ակնթարթ լայնացան, ապա սառան, և նա առավ անչարժ բնրերով ու վրդով չեշտով.

— Ոչ, հարգելի կոմս: Պարզվեց, որ քո կայսրն ինձ անարգելու համար էր կանչել Տարսոն:

— Այդ ինչպե՞ս,— զարմացավ Տերենտը:

Թագավորն ուզեց պատասխանել, բայց այդ միջոցին սանդուղքի գլխին, պալատի առջև նկատեց թագուհուն, որ նայում էր իրեն, պալատական տիկիններով շրջապատված, գույդ որդինները աջ և ձախ կողմը, ուստի պատասխանի փոխարեն՝

— Այդ մասին հետո, կոմս. կխոսենք հետո,— ասավ Պապը և անսպասելի աշխուժով և պատշաճության ամեն կարգ մոռացած, լայն քայլեր անելով, արագ, փութիկոտ դնաց դեպի թագուհին ու գույդ որդինները, որ ժպտում էին նույնպես կատուի և ուրախության ժպիտներով:

Պապը մոտենալով՝ նախ համբուրեց երեխաներին, մեկ-մեկ նրանց գետնից կորելով-բարձրացնելով, ապա ողջագուրվեց թագուհու և պալատական տիկինների հետ: Առանձին հարգանքով ողջագուրվեց այրի Սահառուհու՝ բաթի մոր հետ: Իսկ երբ ողջագուրանքի վայրկյանները անցան՝ թագուհին ասավ.

— Ես այնպես անհանգիստ էի, Պապ: Այնպիսի կասկածներ էին պաշարում ինձ: Քո ժամանելու լուրը կենդանացրեց մեզ...

Արշակն ու Վաղարշակը այնպես էին կարոտել, որ շարունակ հարցնում էին. «Ե՞րբ պիտի գա Պապը, ե՞րբ պիտի գա»... Ահա նկատ,— ժպտաց մայրը երեխաներին։— Ահա՛ եկավ...

Պապը ձեռով չոքեց երեխաների գլուխը և երբ թագուհուն, իշխանուհիներին և երեխաներին ուղեկցել էր ներանց հարկաբաժինը՝ ասավ.

— Ես գնամ։ Նախարարներն սպասում են ինձ,— ասավ նա ու դուրս գնաց նորից երեխաներին ժպտալով։

Թագուհին ցնծում էր։

***

Երբ թագավորը մտավ ընդունելության սրահը՝ այնտեղ հավաքված էր պալատականների ու նախարարների բազմությունը։ Ոմանք նստած էին բազկաթոռներին, ոմանք զրուցում էին կանգնած։ Այդտեղ էր և Տերենտը, որ գնում-գալիս էր մտահոգ ու մեկուսի։

— Շնորհակալություն, իշխաններ և տեր նախարարներ ձեր պատվի համար։ Կարծում եմ՝ ամենքդ կարող եք հանգստի երկար ճանապարհի հոգնությունից հետո։ Գնացեք խաղաղությամբ։

Նախարարներն ու իշխանները սկսեցին մեկը մյուսի հետևից դուրս գալ՝ գլուխ խոնեցնելով։

— Խաղաղությո՛ւն արքային... խաղաղությո՛ւն արքային...

Երբ նախարարների ու իշխանների մեծագույն մասը դուրս գնաց և մնացին մի քանի մարդ, դրանց թվում Մուշեղ սպարապետը, իշխան Կամսարականը, Բագրատունին և ուրիշ մի երկուսը, Տերենտը մոտեցավ թագավորին և սկսեց վշտացած.

— Ես զարմացած եմ, արքա, իմ լսածից. թե ինչպես կարելի...

— Այո, այդպես,— ընդհատեց նրան Պապը։— Սպասեցրեց ինձ մի ամսից ավելի և չհաճեց ընդունել։

— Եվ ուրի՞մն,— չհամբերեց Տերենտը։

— Եվ ուրեմն՝ ես ստիպված եղա հեռանա՛լ, կոմս։ Հեռանա՛լ...

Տերենտը, որ մի քանի օր առաջ իրենց գինվորական սուրհանդակի բերած լուրերից արդեն գիտեր, թե ինչ է կատարվել, հիմա, Պապին լսելով ճնացավ ոչ միայն զարմացած, այլ և վշտացած։

— Արքա, ես դժվարանում եմ, հասկանալ, թե ինչո՛ւ կայսրը չպետք է ընդուներ քեզ, երբ հրավիրել էր ինքը, իր սեփական նամակով... Այստեղ, արքա, անշուշտ, մի թյուրիմացություն կա, և անհրաժեշտ է պարզել այդ...

— Եվ ո՛չ մի թյուրիմացություն, կոմս,—նկատեց Բաթը տեղից և վեր կացավ տաքացած։—Ո՛ կայսրը, կոմս, ոչ միայն չընդունեց, այլ պարզապես վատ խորհուրդ էր խորհում քաղաքի դեմ...

— Կայսրը վատ խորհի՞ արքայի մասին,— ուռերը բարձրացրեց Տերենտը։— Այդ չի կարող լինել, երևաստող և հարգելի զորավար,— ասավ կոմսը հեզահնչյուն ձայնով և խաղաղ, տարակուսած նայվածքը հառեց Բաթի տենդավառ աչքերով երեսը։— Եվ ինչո՞ւ պիտի խորհեր, երևաստող իշխան։

— Այդ թերևս դուռ իմանաս, կոմս,— նետեց Բաթը՝ երեսը չբևելով։— Միայն դո՛ւ կարող ես իմանալ քո կայսեր մտադրությունները։

— Տեր Սահառունի,— ասավ Պապը աստող չեչտով։— Դո՛ւ վիրավորում ես կոմսին։

— Ես ասում եմ ճշմարտությունն, արքա,— նոքից չբևվեց Բաթը։— Թող կոմսն իմանա, որ մենք չենք ուզում վիրավորել և զրպարտել ոչ-ոքի, որ մենք, բացի այն փաստից, որ կայսրը չընդունեց մեզ՝ ամենից ավելի հիվանդությունն ու զբաղվածությունն պատրվակելով, ունենք նաև հավաստի տեղեկություններ կայսեր չարախորհուրդ մտադրության մասին։

— Հավաստի՛... Չարախորհո՛ւրդ,— կրկնեց Տերենտը զարմացած ու վշտացած միանգամայն։— Եվ ո՞վ կարող է իմանալ կայսեր մտադրությունը...

— Անշուշտ նրանք, որոնց հանձնված էր մեր հսկողությունը և կամ այդ մտադրության իրագործումը։

Տերենտը շուրթերը սեղմեց, նայեց հավաքված-նստած նախարարներին, սպարապետին և ասավ հանդարտ.

— Եթե հայտնել է հակողներից մեկը, զորավար, նա անշուշտ եղել է անապրիճ. այդ արել է կամ շահի ակնկալությամբ կամ ձեղ վտանգի մեջ ձգելու դիտավորությամբ...

Նախարարներն անխոս իրար նայեցին, կարծես ճշմարտությանը վերահասու լինելու ցանկությամբ։ Իսկ Պապը, որ զուսպ հուզումով և աչ երեսի թեթև կծկումներով հետևում էր այդ խոսակցության, Տերենտի վերջին խոսքերի վրա ակամա մտածեց, թե չլինի՛ իսկապես ամենը թյուրիմացություն էր, որին հավատացին իրենք անվերապահ, բայց և անմիջապես հիշեց վոխտ հուշն սպասավորի խոստովանության և այն, թե ինչպես կայսրը չէր հաճում անգամ հայտնել ընդունելության օրվա մասին, և թե ինչ ջանասիրությամբ նա զորամասեր էր ուղարկել իրեն հետապնդելու և իր ճանապարհը մի քանի կողմից վանկելու։ Հիշեց, բայց ավելորդ համարեց ասել իսկույն։ Սակայն նրա վոխարեն այդ ասավ Նորից անհամբեր բաթը, որ կանգնած տեղը չէր կարողանում հանգստանալ և կարծես եռում էր հուզմունքից ու կրքից։

— Այդ դևալքում, կոմս,— հեևաց նա,— եթե կայսեր սըրտում կար բարի մտադրություն՝ ինչո՞ւ էր հապա զորքով հետապնդում մեզ, ինչո՞ւ էր վտակում մեր վերադարձի ճանապարհները։

Տերենտի հեգահամբույր դեմքը երկարեց և տխրեց ավելի։

— Բայց ինչո՞ւ այդ ամենը համարել կայսեր գործ, երիտասարդ բարեկամ,— ասավ նա ցավելով ու ղլուխը թեթև չարժելով։— ինչո՞ւ չենթադրել, զորավար, որ դա կատարվել է թյուրիմացության հետևանքով... Ես շատ ցավում եմ, արքա,—հարգանքով դարձավ նա Պապին,—շատ ցավում եմ այս ամենի համար։ Եվ. կուզեի, արքա, որ Ավստրիայի ժողովուրդը առայժմ չիմանա այդ, մինչև դրեմ իմ կայսեր և պարզեմ ճշմարտությունը։ Վերստահեցեք ինձ, արքա,— ձեռը դեպի կուրծքը տարավ կոմսը,—ես վզրխեմ իմ կայսեր և, հույս ունեմ, թյուրիմացությունը շուտով կպարզվի։ Վատահ եմ, որ կայսրն անտեղյակ է այս ամենին։

Եվ Տերենտը տխրած հրաժեշտ առավ ու դուրս եկավ։

Նրա գնալուց հետո խոսակցությունը չարունակվեց.

— Գուցե և իրոք թյուրիմացություն է, արքա,—ասավ Մու-

չեղ սպարապետը։—Եվ եթե այդպես է՝ կարելի է ուղղել... Պետք է ուղղել...

Բաթը զարմացած, իսկ իշխան Կամսարականը, Սմբատ սպասպետը և հաղարապետ Ամատունին մտահոգ նայեցին Մուշեղին, սպասելով նրա խոսքի շարունակությանը։ Բայց նրա փոխարեն խոսեց Պապն ինքը.

— Ի՞նչը ուղղել, սպարապետ,— հարցրեց նա սևեռուն նայելով Մուշեղին։— Կարծո՞ւմ ես՝ հիմա իսկ առաջարկում եմ պատերազմ հայտարարել վաղեսին։ Բնավ։ Ես այդպիսի խոհուրդ չունեմ, սպարապետ։ Սակայն, ինձ թվում է, պատրաստ պիտի լինենք ամեն անակնկալի, որովհետև ես համոզվեցի, որ հռոմեները նույնքան ծարավի են մեր ինչքին ու մեր արյան, որքան և պարսիկները, և մենք պետք է լինենք արթուն և թույլ չտանք մեզ կողոպտեն։ Ես պատերազմ չեմ ցանկանում, սպարապետ, բայց պաշտպանվել պարտավոր ենք։ Ես գիտեմ՝ կայսրը չի ներել, որ դերի չմնացի Իրեն... Նա այժմ, երևի, կմտածի ուժով տանել ինձ դերի ու հին քաղաքների հետ դրավել և նորերը, թերևս ամբողջ երկիրը։ Հարկավ, նա չի ասի, թե պատերազմ է սկսում նրա համար, որ ես, հայոց թագավորս, չմնացի դերի։ Նա կվճռնի, անշուշտ, ուրիշ մի պատրվակ, ուրիշ մի պատճառ։

— Ինձ թվում է, արքա, կայսրն այդ բանն առայժմ չի անի,— խոսեց իշխան Կամսարականը նստած տեղը շտկվելով։— Որովհետև արդեն հարևան երկրներին ու աշխարհին հայտնի դարձավ, որ նա կամենում էր կալանել քեզ, բայց չհաջողեց։ Այժմ կվախենա, որ դու անցնես պարսից կողմը կամ պարսիկներին կանչես օգնության։ ԵՒ այս հանգամանքը, թվում է, նրան թույլ չի տա պատերազմ սկսելու քո դեմ։

—Եվ ուրե՞մն,— ու Պապը հարցական նայեց իշխան Կամսարականին։

— Ես համամիտ եմ, արքա, քո ձեռնարկումին, քո մտադրության,— հարեց անմիջապես իշխանը։— Զգուշությունը ոչ միայն ցանկալի, այլև անհրաժեշտ է։ Պետք է պատրաստ լինել ամեն անակնկալի։

— Իշխանը իրավացի է, արքա,— հանդարտ սկսեց բացատ-

տունի Սմբատը՝ գլուխն ուսին թեքած։—Չպետք է մոռանանք երբեք, որ մենք հոռոմներին հետ գործ ունենք։

Իսկ Մուշեղ սպարապետը մտածելով, թե Պապը վիրավորանքից դրդված կարող է անցնել պարսից կողմը՝ նկատեց.

— Սակայն, արքա, պետք չէ լարել հարաբերությունները։ Շատերը կարող են կարծել, որ դա արվում է վիրավորանքի հետևանքով։

— Այդ մասին խոսք չկա, սպարապետ,— ասավ Պապը։— Ժողովրդի համար մենք պետք է մոռանանք մեր վիրավորանքները, քանի որ մենք չենք պատկանում մեզ։ Բայց, խմացիր, որ վաղհան իմ դեմ չէ, այլ իմ երկրի։ Նա կամենում է պարզապես վերացնել ինձ, որ կլանի մեր աշխարհը. նրան հաճելի չէ, որ ես պահանջում եմ իմ քաղաքները, որ զորք եմ կազմում, որ հայոց եկեղեցին հանում եմ հռոմ գտնող միտրոպոլիտների դերիշխանությունից... խակ նա ցանկանում է, որ ես դառնամ իրեն հարկատու և ամեն քանում ենթարկվեմ իրեն, կամ առնվազն ոչինչ չանեմ առանց իր խորհրդի։ Եթե խնդիրը վերաբերվեր ինձ, սպարապետ, ես կմնայի դերի։ Բայց ինձ դերելով՝ նա կամենում է դերել ամբողջ հայ երկիրը։ Եթե մնայի՝ նշանակում է քաց աչքով թույլ տայի, որ հռոմկներն անեին, ինչ կամենում են։ Ու պիտի ծաղրեին, որ խաբեությամբ բերինք և դերեցինք։ Բայց ստրուկը միայն կմնա կամավոր դերի... Ոչ, ամեն առթիվ և ամեն քանում պետք է ցույց տալ հայ երկրի արժանապատվությունը, և թույլ չտանք, որ հռոմները քանանեն մեր կամքն ի վրա... Հիմա թող վաղհան գա, եթե իրեն արդար է զգում, և մենք կերթանք նրա դեմ և չենք ենթարկվի կամովին...— Այստեղ Պապը լռեց մի պահ, երկար չունչ առավ և մատիտն նայեց նախարարներին, որ իրեն լսելով՝ նույնպես խորհում էին ստեղծված դրության մասին։— Ոմանք ասում են՝ չենք կարող դիմադրավել մեծ Բիզանդիային։ Մեղուն նույնպես փոքր է, բայց մենք վախենում ենք նրա խայթից և անպատժ չենք կարող ձեռք տալ նրան... Ճշմարտությունը, ինչ ձևով էլ լինի, կործանում է... Մյուս կողմից՝ ես կուզեի, որ վաղհան զգա իր վատությունը։

Պապը խոսում էր, կարծես զգացնել տալու և հասկացնելու,

որ պատերազմը Բիզանդիայի կողմից կարող է անխուսափելի լինել, հետևաբար պետք է պատրաստ լինել։ Նա, որ Տարսոնից մինչև Եփրատ, մինչև հայոց սահմանը մտածում էր ապահով տեղ հասնելու մասին, իսկ սահմանն անցնելուց հետո, թե հայրը կգա պատերազմով, այդ միտքը հիմա ավելի էր զբաղեցնում նրան։

— Եվ հիմա ավելի՝ քան երբևէ հրամայական է մեծացնել արքունի բանակը,— շարունակեց Պապը։— Պատրաստ լիննենք և պահենք մեր երկրի արժանապատվությունը, տեր նախարարներ։ Իսկ առայժմ գնացեք խաղաղությամբ,— ասավ Պապը տեղից մեկնելով։

Երբ զորավարները դուրս էին գալիս՝ երանելից յուրաքանչյուրն զգում էր, որ մի ծանր վտանգ է կախված հայոց աշխարհի գլխին։

— Ինձ այնպես է թվում, սպարապետ, որ Վաղեսը վրեժխնդիր է լինելու մեզ,— ասավ Զևոն Գնունին, որ Տարսոնում խակ համակիր չէր վախուտաուին, դրա մեջ մեծ վտանգ տեսնելով։

— Նրանից սպասելի է,— համաձայնեց Մուշեղը և լռեց ծանր խոհերի մեջ։

Պալատից դուրս գալով՝ երեք զորավարները, նրանց հետ և Զևոն Գնունին ու հազարապետ Ամատունին խոսակցելով ինքնաերթը գնացին, ավելի շուտ՝ մտահոգ գլուխը նրանց տարավ գնալ սյունազարդ ճեմելիքը, ինչպես սովոր էին գնալ հաճախ խոսելու և երկրի վիճակի մասին խորհելու։

— Կացութ յունը, տիրոջ, ծանր է,— ասում էր վոքրամարմին սպարապետը այդ թիկնեղ և անճկյա տղամարդկանց մեջտեղը քայլելով։— Հարկ է շուտափույթ միջոցներ խորհել վտանգը կանխելու կամ ստեղծված այս կնճիռը հարթելու։— Ու մի երկվայրկյան անխոս քայլելուց հետո՝ նա ավելացրեց.— Իսկ վտանգը կանխելու լավագույն միջոցը, ըստ իս, կլինի այն, որ Պապը պահպանի վիրավորված լռությունն։ Սակայն նա անըզգույշ է և կարող է անել ավելի անզգույշ քայլեր։ Նկատեցիք, ասիշուտա, որ Տերենտի հարցին պատասխանեց կրքով, թե կհյորը չպարեհաճեց ինձ ընդունել։ Այս եղանակը հարիր չէ իր դիրքին։

— Դա ապացույց է, որ Պապը հուզված է հույժ վազեմ վիրավորանքից—նկատեց Սմբատ սպասուհը։— Երիտասարդ աքյուռը դիվանագիտական ներքնքյանց չի ենթարկվում։

Ներանք հասան այունապարզ ճեմելիքը և նստեցին քարե նստարաններին, որ դրված էին ճեմելիքի երկարությամբ։ Կես պիշնը էր համարյա. ներանց վերև տարածվում էր չողուն աստղերի շեղջով լեցված երկինքը, դեմը՝ քնած մայրաքաղաքը, խակ հեռուն՝ լեռները, հավիտյան անշարժ ու անթարթ լեռները, և դրանց մեջ ճյունակատար Ավադ Մասիսը, որ աստղացոլքով վեր էր խոյանում, կարծես երկինք հասնելու միտումով։

— Դու ճշմարիտ ես, տեր Բազրատունի, դյուրաբորբ է, տաքարյուն, չարունակեց սպարապետը նստելուց հետո։—Պետք է սակայն ներչնչել նրան՝ լինել չրջահայաց։ Լարվել միաժամանակ երկու հարևանի դեմ՝ հնարավոր չէ։

— Սակայն այդ ամենից հետո կարելի է մի՞թե սիրել հոռոմներին,— անքաց իշխան Կամսարականը։

— Սիրե՛լ։ Երբե՛ք,— տաքացավ հանկարծ Սմբատ սպասուհը։— Մեր երկրի պատիվն ամենից առաջ։ Թագավորն իրավացի է, ախորք, իրավացի։

— Սակայն, ոչ չրջահայաց,— վրա բերավ սպարապետը։— Ելանել երկու տերությանց դեմ՝ անկարող ենք, մանավանդ որ մեր նախարարները սեփական անվտանգությունը գերադասում են երկրի պատահությունից։ Դժվարինս է պատվիրել նրանց, քանզի նրանք զորք չեն տա դյուրությամբ և...— Սպարապետը ձեռը թափ տվեց անհույս։— Լուր ունեմ ահավասիկ, որ Կորդվքի Դրիդորիոսը պատասխանություն է խորհում հարևան նախարարների հետ և դերադաս է համարում պարսից իշխանության տակ լինել, քան մարդ ու երիվար տալ արքունի բանակին։ Ծովից իշխանները երկյուղ ունեն, որ եթե զորք տան՝ իրենք սահմանապվին կմնան անպաշտպան...

— Ուրեմն հնարավո՞ր չէ, սպարապետ, միաբանել դրանց և կազմել մշտական մի բանակ, ինչպես ցանկանում է Պապը,— հարցրեց Բագրատունի Սմբատը։

— Պետք կլինի մեծ ջանք,— ասավ սպարապետը ոչ անմիջապես և ծանր մտախոհության մեջ։

— Համենայն դեպս, տեր սպարապետ,— խոսեց նորից էջմիածնի համատարականը,— պետք է զորավիգ կանգնենք մեր Թագավորին իր ձեռնարկի մեջ. ապահով լինենք նախարարներին ճնշելուն և մշտական բանակ կազմելուն, քանզի երկրի փրկությունը կախված է մեր զորությունից և մեր խելամտությունից: Օտարը երբեք չի պաշտպանի մեզ... ինքներս պետք է լինենք մեր պաշտպանը և մեր հույսը...

— Բայց մինչ այդ, տիրոջ, ես խորհում եմ, որ պետք է նախ հարթել այս կնճիռը,— հարեց սպարապետը:— Պետք է պարզել Կատարվածը Թյուրիմացությո՞ւն է արդյոք, ինչպես Տերենտն է ասում, թե...

— Հնարավո՞ր է սակայն հարթել, տեր սպարապետ,— հեռացքերվեց հազարապետը, որ մինչ այդ լուռ էր:— Ջի՞ որ կայսրը ցանկացել է կալանել Թագավորին...

Նրան ոչ ոք չպատասխանեց: Բոլորը լուեցին և ընկան խոհերի մեջ:

. . . . . .

Այդ նույն միջոցին Գագը, մենակ մնալով, նույնպես մտածում էր կատարվածի մասին, և այժմ նա ավելի խորն էր դրում վաղեմի դեպքն ու վիրավորանքը, քան ճանապարհին, ու միաժամանակ մտածում էր թե արդյոք Տերենտը գիտե՞ր կայսեր այդ մտադրությունը թե ոչ: Այս պարագան նույնպես մտատանջում էր նրան և թվում էր, թե կոմսը չգիտեր ոչինչ, այլապես չէր վշտանա այդքան. մյուս կողմից՝ Տերենտի խոսքերից երևում էր պարզ, որ նա չի ցանկանում լարված տեսնել հայերի հարաբերությունները իր երկրի հետ:

«Բայց և այնպես մենք պետք է պատրաստ լինենք,— ասաց Գագն ինքն իրեն:— Սակայն ի՞նչպես...»

Նա, որ ամբողջ ճանապարհին մտածում էր միայն բիզանդական հողից անվնաս դուրս գալու և իր մարդկանց երկիր հասցնելու, հիմա, երբ հասել էր իր երկիրը, երբ զտնվում էր իր մայրաքաղաքում—թվում էր նրան, թե այն վտանգը, որ սպասում էր իրեն ու իր թիկնապահ զնդին՝ ամբողջ ճանապարհին, սպառնում է այժմ ամբողջ երկրին. և հիմա նա այդ տեսնում էր ավելի պարզ, քան առաջ: Ու ոչ միայն այդ: Նա տեսնում էր

ավելին: Տեսնում էր ահա՝ մի կողմից Պարսկաստանը, մյուս կողմից Բիզանդիան երախաբաց ատամ են սրում իր երկրի դեմ, ինչպես գիշատիչ գազաններ մի եղնիկի դեմ, որ ոչ-ոքի չվնասելով ուզում է միայն ապրել ազատ՝ ստեղծո ազատ աշխատանքում...

— Այո, մի կողմից Շապուհն է կորստյան սպառնում այս երկրի համար, մյուս կողմից Վաղեսը... Բայց ինչ պետք է անել դրա դեմ... Կա՞ արդյոք մի ելք, մի ճանապարհ,—մտածում էր Պապը:— Եվ մի՞թե պետք է թուլ տալ, որ այս երկիրը կլանեն գիշատիչները... Մի՞թե չի կարելի ստեղծել այնպիսի ուժ և զորություն, որ երկիրը չմնա անպաշտպան:

Եվ նրան թվում էր, որ կարելի է. թվում էր, որ դրա համար կա մի ելք, մի ճանապարհ— միաբանել նախարարներին, նրանց ուժերը և կազմել մեծ մի բանակ՝ վտանգներին դիմագրավելու: Նաև կառուցել ամրոցներ...

Մինչև Տարսոն գնալը Պապն սպասում էր, թե նախարարներն ինքնաբերաբար կանեն այն, ինչ առաջարկել էր: Ճշմարիտ է, ինքը չէր նշել ժամկետ, բայց տակավին նշան չկար, թե նրանք ցանկություն ունեն իր առաջադրանքը կատարելու: Ուստի և Պապը խորհում էր՝ ինչպես անել, որ նախարարները չարժվեն: Միաժամանակ մտածում էր վտիտագով՝ երկիրը տեսնել իր սահմաններում մեջ վերականգնված և զինվորապես այնքան զորացած, որ դրսի օգնության կարիք չզգա և կարողանա պաշտպանել իրեն:

— Եվ դրա համար, այո, կա մի ելք— միաբանել և կազմել մեծ բանակ,— կրկնեց նա մտքում մի քանի անգամ:— Մե՛ծ բանակ... Եվ այդ պետք է անել շուտ, այլապես ուշ կլինի...

Պապին թվում էր, թե վաղեսը վտիտ, մյուս օրը կարող է զորք ուղարկել իր վրա, պետք է լինել պատրաստ...— Քանի որ չկարողացավ կալանել ինձ՝ կուզի, երևի, զենքի ուժով գլուխ բերել հայ երկիրը գրավելու գործը:

Միաբանե՞լ... Բայց արդյոք կհամաձայնե՞ն նախարարները...

Նա կարծես հիմա էր զգում, տեսնում և հասկանում, որ հայ նախարարների ցրված, անմիաբան կամքից է, որ հոռոմը նսեմել է հայոց քաղաքներում ու գավառներում, ուռում է նրանց քսքեքը և ծիծաղում նրանց վրա...

«Պարթևներին վտարենք, որ հոռոմին մնանք դերի՛... երբ՛ք: Այս անպատվաբեր վիճակը պետք է հասկանան, վերջապես, մեր նախարարները... Բայց արդյո՞ք կհասկանան»...

Մտածելով՝ Պապը որոշեց առավոտը կարգադրել հազարապետին, որ անմիջապես սուրհանդակներ ուղարկի նախարարական ամրոցները՝ հիշեցնելու իր առաջարկը, որ արտավ իշխանաժողովում—տալ մարդիկ և ձիեր մշտական բանակ կազմելու:...

. . . . . .

Հետևյալ օրը, առավոտյան, երբ Պապը սպասցապետի և մի քանի ավագանիների ներկայությամբ կարգադրում էր հազարապետին, որ սուրհանդակներ ուղարկի նախարարական ամրոցները, որ երեկոյ զորքերը պատրաստ պահեն Թագավորի առաջին կոչին,—Տերենտը եկավ հուզված:

— Գիտեք, արքա, ես շատ անհանգիստ եմ,— սկսեց նա դեռ չեմքից:— Գիշերս նամակ ստեցի կայսեր՝ կատարվածի էությունը պարզելու: Մյուս կողմից՝ սուրհանդակ եկավ առավոտս և հայտնեց, որ կայսրը շատ ցավում է և վշտացած է: Համոզված եմ, որ եղածը պարզ թյուրիմացություն է, արքա, թյուրիմացություն...

Տերենտը խոսում էր ընդհատ և նյութից-նյութ անցնելով.

— Դա կարող է լինել սխալ տպավորություն, արքա, դեպքերի ու երևույթների տարօրինակ զուգադիպություն: Միով բանիվ՝ ցավում եմ և հույս ունեմ, որ կայսրը կպատասխանի շուտով և ճշմարտությունը երևան կգա: Իսկ առայժմ ես չէի ցանկանա, որ Արմենիայի ժողովուրդը լսի այդ ամենը, արքա:

— Արդեն լսել է, կոմս,— ասավ Պապը չեչտելով:— Լսել է մինչև իմ դալը, և շատ դառնացած է:

— Ցավալի է, որ այդպես է,— հառաչեց Տերենտը:— Ինձ մնում է ուրեմն ճշմարտությունը երևան հանել և թյուրիմացությունը պարզել. և որքան կարելի է շուտ:

Երբ Տերենտը գնաց՝ Պապն առավ ընդունելության ներկա Մուշեղ սպարապետին, Հազարապետին, Բութին և Երեմիային:

— Կոմսն, ինչպես երևում է, շատ է ցավում կատարվածի համար:

— Նա կամենում է պարզապես արդարացնել իր կայսեր, ու—

րիչ ոչինչ,— նկատեց Բաթը։— Նա իր կայսեր ծառան է և հպատակ է միայն նրա համար։ Բայց գուցե և ուզում է հանդստացնել մեզ, որ չձեռնարկենք ոչինչ։

— Ինչ և լինի, նկատելի է սակայն, որ իրեն վատ է զգում։ Զգում է, որ կատարվածը անպատվաբեր, ամարգի գործ է և ցանկանում է մեղմել...

Մուշեղը, որ մինչ այդ նստած էր անխոս, իր մանր ու խոհուն աչքերը ավելի փոքրացնելով նայեց Բաթին, թագավորին և ոտքի կանգնեց հանկարծ։

— Թուլլ տուր, արքա, խոսել։

— Խոսիր, սպարապետ,— ասավ Պասլը ուշադիր։— Հույժ ցանկալի է քո կարծիքը։

— Ես, արքա,— սկսեց Մուշեղը՝ կողքից կախած թուրն ուղղելով,—ըստ ամենայնի հավան և համամիտ եմ, որ պետք է դրացնել մեր բանակը՝ երկրի ապահովության և պաշտպանության համար։ Դա համապատասխանում է իմ ցանկությանը, և ես, իբրև զորական, պատրաստ եմ քո ամեն կարգադրությանց։ Հրամայես՝ այսօր իսկ կմեկնեմ մահ տալու և մահ առնելու։ Սակայն ելանել հռոմեների դեմ՝ ցանկալի չէ թնավ։ Զգետք է թշնամանալ, կրկնում եմ, երկու տերությանց հետ մաժամանակ։..

— Եվ ես, սպարապետ, չեմ էլ մտածում ելանել Բիզանդիայի դեմ,— ընդհատեց Պասլը։— Ցանկանում եմ միայն պատրաստ լինենք ամեն պատահարի։

— Այդ ըստ է, արքա,— վրա բերավ Մուշեղը։— Սակայն որպեսզի չկանդնենք անակնկալության առանդի հանդեպ, լավագույնն է, արքա, թուլլատրիր ինձ՝ դնալ Տարսոն՝ կայսեր մոտ և հաստել այդ թյուրիմացությունը, որի մասին խոսեց քիչ առաջ կոմս Տերենտը։

Պասլը զարմացած նայեց սպարապետին և՝

— Գնալ կայսե՞ր մոտ,— ասավ նա զարհուրած։—Ես կարծում եմ, սպարապետ, ավելորդ է այդ։ Կատարվածը թյուրիմացություն չէ, ավազ և կարիք չկա, որ փորձության ենթարկես քեզ։ Վաղեսը նույն կամ մի նոր խարեությամբ կվարվի քեզ։ Դա ուղղ է և ավելորդ, սպարապետ,— կրկնեց Պասլը հստակ։

Մուշեղը, որ համոզված էր, թե իր առաջարկը կընդունվի անկասկած՝ հուզվեց Թագավորի կտրուկ մերժողական խոսքից:

— Ես, արքա, մտածում եմ մեր երկրի ապահովության մասին:

— Իսկ ես նրա արժանապատվության մասին,— տաքացավ Գագը:— Գնալ Վաղեսի մոտ նրա խարդախությունից հետո՝ պատվաբեր չէ, ապարդապես:

— Սակայն, արքա, պարզվեց, որ կա թյուրիմացություն: Եվ ես կուզեի, որ այդ թյուրիմացությունը չդառնա պատճառ քշնամության: Այդ է մտահոգում ինձ: Իսկ եթե քեզ հաճո չէ լսել իմ խորհուրդը՝ ես այլևս անելիք չունեմ այստեղ...

Այս ասելով՝ Մուշեղը հուզված ելավ գահասրահից:

Եվ նույն օրը մեկնեց Ողական:

Գագն իմանալով այդ՝ զարմացավ:

— Ի զուր է ապարդապես կարծում, թե ես քշնամության եմ լարում Բիզանդիայի դեմ,— ասավ նա Երեմիային:— Ի զուր է կարծում նույնպես, թե ինքը Բիզանդիա գնալով՝ Վաղեսը կդարձնա բարի և չի ցանկանա վնասել նախ իրեն... Այնու, կարծում եմ, որ Մուշեղը երկար չի վիրավորվի ինձնից. նա երբեք չի թողնի ինձ՝ իր քաղաքորին: Համոզված եմ, որ նա նորից կգա, երբ երկիրը վտանգի մեջ լինի... Վաղեսը՝... Սակայն թողնենք Վաղեսին և զբաղվենք մեր երկրի գործերով,— ասավ Գագը ձեռը թափ տալով:

Գործ ասելով՝ նա հասկանում էր ուժեղացնել նրա բանակը, որ պետք է մեծացներ նախարարներից զորք հավաքելով, մի բան, որ մնացել էր իր Տարոնն մեկնելու պատճառով... Նախարարներն իրենք չէին անում կամ դժվարանում էին— մեռում էր ղեմել կարուկ միջոցներին, հասկացնելով հայ երկրի շահը և ապահովությունը: Գագը գործ ասելով՝ հասկանում էր նաև քաղաքների, գյուղերի բարեկարգություն, նրա նպատակների մեջ մտնում էին շատ և շատ անելիքներ, որ թշվառությունն ու կաթոտությունը վերանար երկրից, իսկ առայժմ նա ցանկանում էր ամենից առաջ ընդարձակել զինագործարանները և ուժեղացնել բանակը, բանակը, հայ երկրի միակ ապավենը...

Բայց այնպես պատահեց, որ նրա առաջին գործը եղավ ամուսնական մի խնդիր:

Հետևյալ օրը երեկոյան, երբ Պապն իր փոքրիկ հքաշմամբ Արտաշատի դինագործարանից վերադառնալիս անցնում էր Դվինի մեծ փողոցով՝ մեկնաբերդ գնալու— պատահեց օտարոտի մի բան, որ զոլորին շատ զարմացրեց... Այնժամ, երբ մեն մի անցորդ քաշվում–հեռանում էր փողոցի ափերը՝ թագավորին ու նրա հքախմբին ճանապարհ տալու, հանկարծ սևեր հագած մի կին եկավ–կանգնեց փողոցի մեջտեղը և անմիջապես ծունկի եկավ գետնին՝ փոշիների մեջ ու, ձեռները վեր պարզելով՝ գլուխն իջեցրեց մի դիրքով, որ կարծես երեն ուզում էր քցել ձիերի ոտների տակ կամ աղերսում էր՝ կանգնել:

Եվ Պապը, որին շատ օտարոտի թվաց այդ, նժույգը կանգնեցրեց՝ սանձը ձիգ տալով և ասավ.

— Ի՞նչ է ուզում այդ կինը: Թող առաջ գա:

Երբ թիկնապահ երիտասարդներից մեկն առաջ վազելով՝ կինոջը բարձրացրեց և թևից բռնած բերեց թագավորի մոտ— կինը նորից անխոս ծունկի իջավ՝ երկար ու լայն շրջազգեստը գետնին փռելով:

— Ուզածդ ի՞նչ է, կին,— հարցրեց թագավորը՝ ձիու գլուխը մի կողմ թեքելով, որ կինոջը լավ տեսնի. բայց որովհետև կինը չխոսեց, նա կրկնեց հարցը:— Ուզածդ ի՞նչ է, կին:

— Քո դիատրուԹյունը, արքա,— ասավ կինը վշտահար ձայնով.— Քո դիատրուԹյունը...

— Ե՛լ և խոսիր ավելի պարզ,— ասավ թագավորը:

— Ես մի դժբախտ կին եմ, արքա,— սկսեց կինը առանց տեղից երևնելու,— և աղերսում եմ քո օգնությունը:

— Եվ ի՞նչ օգնություն է ուզածդ,— հարցրեց թագավորը, համոզվելով, որ նա մուրացիկ չէր, հագնված էր վայելուչ, ի՞նչ օգնություն էր ուզում ուրեմն:

Այդ ժամանակ կինը գլուխը բարձրացրեց և նայեց թագավորի ոսկեզուն նժույգին. նա կարծես չհամարձակվեց ավելի վեր նայելու:

—Ես դժբախտ ամուսնության մեջ եմ, արքա,— խոսեց կինը հառաչանքի ու վշտի ձայնով:— Ձեն օրնում

ինձ ոչ քահանա, ոչ եպիսկոպոս: Աղերսում եմ,— կնոջ համեստ ձայնը կերկերաց:— Աղերսում եմ, տրքա. հրամայիր՝ կա՛մ սպանեն ինձ կա՛մ տուր աղատություն...

Կնոջ համարձակությունը զարմացրեց բոլորին՝ թե թագավորին իրեն, թե նրա չքախմբի անդամներին և թե քաղաքացիներին, որ մայթերին խմբված նայում էին այդ տեսարանին: Ոչ ոք տակավին՝ թե մայրաքաղաքում, թե այլուր չէր տեսած այդ ձևի խնդրանք, այն էլ վոդոցում, ծնկաչոք, ու այդպիսի մի նուրբ խնդրի—ամուսնության մասին: Եվ չնայած կնոջ վարմունքը համարձակ էր, բայց նրա դեմքն արտահայտում էր տանջանք ու հուսահատություն. նրա պարանոցի երակներն այնպես էին լարվել, նրա սև աչքերն այնպես վշտահար արտահայտություն ունեին, որ, թվում էր, մի վոքր էլ՝ նրա համարձակությունը պիտի վոխվեր լացի կամ հեծկլտանքի,— այդ էր պատճառը գուցե, որ Պաոլն այլևս նոր հարցեր չտալով, դարձավ անմիջապես իր դպրին.

— Իմացիր, Երեմիա, ի՞նչ է ուզում այդ կինը և այնօր իսկ հայտնիր ինձ:— Ապա թեքվելով վոքր ինչ դեպի՝ տակավին ծունկի եկած կինը՝ ավելացրեց.— Եվ, կին, և դնա վերջոդ պատմիր արքայադպրին:

Վերջին խոսքերի վրա կինը ելավ, կանգնեց մի կողմ՝ գլխահակ ու ձեռները սրտին դրած, և թագավորն իր չքախմբով շարունակեց ճանապարհը:

Եվ նույն այդ օրը երեկոյան, երբ Երեմիան եկավ թագավորի մոտ՝ Պաոլն առաջինն ինքը հետաքրքրվեց.

— Ի՞նչ պատմություն ուներ այդ կնոջ աղերսանքը, Երեմիա: Ի՞նչն է նրան հարկադրում հեռանալ իր ամուսնուց...

— Ըստ ամենայնի լուրջ պատճառներ, արքա,— ասավ Երեմիան և պատմեց թե ինչպես ամուսինները ապրում են տանջալից մի կյանք, որ զավակ չունեն, և թե ինչպես կինը շարունակ արժանանում է ամուսնու անարգանքին այդ իսկ պատճառով:— Իմ առած տեղեկությանց համաձայն,— շարունակեց Երեմիան,— տեղեկություն, որ ես հավաքեցի կողմնակի ճանապարհներով, թե ամուսինը թե կինը ցանկանում են բաժանվել և նոր ղույգ

կաղմել, որովհետև երկուսն էլ ցանկանում են պաշտպանել զավակց տեր լինել, սակայն եկեղեցին չի թույլատրում։

— Եվ ինչո՞ւ չի թույլատրում,— հետաքրքրվեց Պապը։

— Կարդ է, ասում են, մի անգամ ամուսնացածները պետք է հավատարիմ մնան սուրբ պսակին և ցմահ ապրեն անբաժան։ Եկեղեցու, Սուրբ հայրապետաց օրենք է, ասում են։

— Տխուր օրենք,— ասաւ Պապը քայլերը անելով կանգնած տեղից։— Ուրեմն այդ կինը ցմահ պիտի ապրի անարգանքի մեջ, տառապի և մնա անպատմ։

— Այդպես է երևում, արքա.

— Իսկ դու ի՞նչ ես կարծում, Երեմիա։

— Ես, Պապ, կարծում եմ, որ այդպես ապրել ավելի վատ է, քան մահը։ Չի եթե զուգությունը բարիք է, սրանց համար դառնում է երիցս չարիք և տառապանք տևական։

Պապը լուեց մտախոհ, նայեց կամաքակաս լուսամուտից դուրս, ուր չինչ կապույտ երկնքի երեսով ճերմակ ամպեր էին անցնում, և դարձավ Երեմիային.

— Ուրեմն՝ դրիր, Երեմիա, որ թույլատրում եմ այդ կնոջը նոր զույգ կազմելու. նուչնը և նրա ամուսնուն... Թող զավակնեը ունենան՝ որքան կամենան։

— Սակայն, արքա, նկատ առնք, որ եկեղեցու հայրերը կարող են նորից հուզվել,— խոսեց նեղկա գտնվող Չենոն Գնունին։

— Հուզվել։ Եվ ինչո՞ւ։ Որ ես անում եմ իրենց գործը,— պարմացավ Պապը։

— Այո, արքա, որ միշտամուտ են իրենց սահմանած կարգերին ու օրենքներին։

— Ես կարծում եմ, տեր Գնունի, մի երկրի թագավոր համենայն դեպս իրավունք ունի մի քիչ կնոջ ազատել տառապանքից։

Գնունին չառարկեց. նա գլուխն անխոս կախեց մերուքի վրա, չդիտես համաձա՞յն լինելով թագավորի ասածին թե առարկելն ավելորդ համարելով։

Ու մի քանի օր հետո Դվինում և Հայաստանի մյուս քաղաքներում ու գյուղերում խոսում էին թագավորի այդ նոր հրամանի մասին. տներում, շուկաներում, այգիներում ամենքի խո-

սակցության առարկան այդ էր. ոմանք հիանում էին այդ կնոջ խիզախության վրա, մյուսները, ընդհակառակը, դատապարտում էին անամոթությունը, ուրիշները զարմացնում էր թագավորի հրամանը, որ չտեսնված նորություն էր. խոսում էին, որ այն, ինչ չէր անում և չէր ուզում անել եկեղեցին—արավ թագավորը մի հրամանով:

— Հիմա ի՞նչ են անելու մեր հոգևոր հայրերը:

— Ոչինչ: Ի՞նչ կարող են անել թագավորի հրամանի դեմ:

Ոմանք խղճում էին եկեղեցականներին, ոմանք հեգնում էին նրանց, թե թագավորն ամուսնության գործն այսուհետ առնելու է իր ձեռը և հոգևոր հայրերին այնժամ կմնա միայն ճգնել և աղոթել... Սակայն հոգևորականներն իրենք, մանավանդ Դվինի հոգևորականները, որ առաջին իսկ օրն իմացան այդ հրամանի մասին՝ շատ զարմացան նախ, որ թագավորն արձակել է մի այդպիսի հրաման, զբաղվել է մի խնդրով, որ բնավ վայել չէ թագավորին, մի բան, որով չէ զբաղվել հայոց և ոչ մի թագավոր. ապա վշտացան, նույնիսկ զայրացան, որ նա, իր պետական գործերը թողած, խառնվում է իրենց, եկեղեցուն վերապահված գործերին, այն էլ ամուսնական գործերին:

— Ինչո՞ւ է թագավորը միջամտում ամուսնական խնդիրներին: Ինչո՞ւ է ուզում խախտել սուրբ հայրապետների ճահճացած կարգը,— ասում էին ոմանք:

— Դա մխայն եկեղեցուն և նրա սպասավորներին վերապահված խնդիրը է և ոչ մի աշխարհական, թեկուզ նա լինի և թագավոր, իրավունք չունի միջամտելու,— ասում էին համբերատար հոգևորականները:

— Կարծում էինք Տարսոն գնալով խրատներ կառնի, բայց ոչինչ չի սովորել: Բավական չէ եկեղեցու տուրքերը կտրելը, հիմա էլ կամենո՞ւմ է ամուսնական խնդիրներն ինքը կարգադրել,— ավելացնում էին անհամբերները:

— Բայց արժի՞ կարևորություն տալ,— ասում էին վերջը ինչ անտարբերները: Մի եզակի դեպք է. կանցնի— կմոռացվի:

— Ոչ, ոչ, սուրբ հայրեր,— առարկում էին առաջիններն, որոնց մեջ էր և հայր Սողոմոնը:— Օրինակները վատ՝ չեն մոռացվում: Դա կդառնա սխուր մի նախադեպ, որ իրար չսի-

ղոդ ամուսիններըը չարունակ դիմեն թագավորին, և թագավորը, ինչպես այս անգամ, հրաման կտա և մյուսների համար:

Բայց Դվինի հոգևորականների մեջ ամենից ավելի հուզված էր Մաշտ եպիսկոպոսը: Լսելով թագավորի հրամանի մասին՝ նա ձեռը թափով դարկեց ընթրիքի սեղանին և մեկեն ոտքի կանգնեց:

— Այդ դեռ տակավին շատ չարիքներ է բերելու մեզ,— ասավ նա հուզված քայլերը անելով ճաշասրահի երկայնքով: Նրա սեղանակիցները (նա, Քրիստոսի օրինակով, մենակ չէր ընթրում, այլ մի քանի մխիթարանության հետ), որոնց մեկ-երկուսը նրա հյուրերն էին՝ Վանանդի Կյուրեղ եպիսկոպոսը, Արագածոտնի մհնասատանի վանահայր Դանիել արքեպիսկոպոսը և մյուսները— նույնպես ընդհատեցին ընթրիքը և մնացին անխոս, չկամենալով որևէ հարցումով կամ խոսքով ավելի հուզել առանց այդ էլ հուզված Մաշտ արքեպիսկոպոսին, լավ իմանալով նրա դյուրաբորբ բնությունը: Բայց արքեպիսկոպոսն ինքը չկարողացավ երկար անխոս մնալ: Մի քանի ակնթարթ անհամաձայնությունից հետո՝ նա հանկարծ կանգ առավ և ասավ Թորին սրտմտությամբ.

— Ներիր ուրեմն ասածընդդեմ և անբարիշտ գործ է տեսնում թագավորը: Պիտո է խաղաղությունս հանդիմանել տղայական այդ գործը չար, ինչպես անում էին հանգուցյալ հայրապետները...

Եվ հյուրերը նկատեցին, թե ինչպես հուզումից ու բարկությունից նրա գլուխը դողաց մի քանի հետ միասին: Դա ակնհայտ նշան էր նրանց համար, որ սրբազանը շատ էր հուզված: Ուստի ցանկացան միջամտել եղածը և հանգստացնել նրան: Բայց մինչ կանխեին այդ՝ Մաշտը հայտնեց, թե ուզում է գնալ պալատ և անձամբ-անձին հանդիմանել արքային և՝ պահանջել, որ նա չխառնվի աստծու և եկեղեցու գործերին, այլապես երեք հարյուր յոթանասուն հայրապետի նզովքը կիջնի նրա գլխին:

Բայց Կյուրեղ եպիսկոպոսը և Դանիել վանահայրը մեծ դժվարությամբ ետ պահեցին նրան այդ մտքից:

— Զարժե, սրբազան եղբայր, չափվել հանդուգն պատանու հետ,— ասավ Կյուրեղ սրբազանը արհամարհանքով:

— Թող, սրբազան Հոր այր, և վայելիր ընթրիքդ,—ավելացրեց Դանիել վանահայրը:

Եվ Նազը թեև լուռ ու թողեց պալատ գնալու մտադրությունը, սակայն չհանգստացավ ոչ այդ երեկո, ոչ հետևյալ օրերը:

Մի փոքր այլ էր Թագավորի հրամանի տպավորությունը վաղարշապատի վանքում. արդյոք հեռավորությա՞ն պատճառով թե նոր կաթողիկոսի երկյուղից, որ համարվում էր Թագավորի բարեկամ, առանձնապես չհուզվեցին: Ճշմարիտ է, խոսեցին, պարմացան, որ Թագավորն ղրաղվել է իրեն չվերաբերող դործով, բայց չուտով էլ լռեցին: Միայն փալատոս հայր սուրբը, որ նոր կաթողիկոսի օրով թողել էր ատենադպրի պաշտոնը և իր խցի մեջ մեկուսացած զբաղվում էր միայն իր մատյանով, այսինքն՝ Ինչպե՞ս և առաջ մի առ մի դրի էր առնում հայոց աշխարհի զրույցներն ու անցքերը,— որոշեց մատյան մուծել և այդ դեպքը: Ու դրեց.

«Ներսես հայրապետի օրով ո՛չ-ոք չէր համարձակվում հայոց աշխարհում հեռացնել կամ թողնել իր կինը... Իսկ նրա մահից ետ մարդիկ հրաման առան Թագավորից՝ թողնել իրենց կանանց»...

Նա ուզում էր ավելացնել, թե դրանք սրբապիղծ և արհնապիղծ գործեր են, բայց ավելորդ համարեց ծանրաբեռնել մատյանը և Ներսեը խաչակնքեց միայն ու մրմնջաց.

«Դու ազատվեր, ոեր, աշխարհս հայոց ամեն չարիքից և չար գործից»...

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Ողջան էլ Պապը մտահոգված ու զբաղված էր բանակը մեծացնելու գործով և այդ նպատակով մտադիր էր գնալ մինչև Ակ քանի կարևոր նախարարներին, բայց և այնպես չէր կարող և չէր կարողանում կտրվել երկրի ամենօրյա խնդիրներից։ Ինչպես առաջ, այնպես էլ հիմա՝ նա դրեթե ամեն օր առավոտները լսում էր պալատի կառավարչին, արքայադստեր Երեմիայի և պարսպապետ հաղորդումները, թե ի՛նչեր են անցել-դարձել երկրում, ինչ պատահարներ են եղել կամ ի՛նչ խնդրանքներ կան։

Եվ ահա մի օր,— դա Պապի վերադարձից հինգերորդ թե վեցերորդ օրն էր, երբ հազարապետ Սմատունին պատմում էր, թե ինչեր են կատարվել երկրում, այլ դեպքերի շարքում հայտնեց, թե հուսանոցներից մեկում կախվել է մի բոլորովին դեռատի կույս։

— Կախվե՞լ,— զարմացավ Պապը։ Նա առաջին անգամն էր լսում այդպիսի բան, ուստի և հետաքրքրվեց իմանալ պատճառը։— Իսկ ի՞նչն է հարկադրել նրան այդ անելու։

Եվ Սմատունին պատմեց ինչ գիտեր, ավելի շուտ՝ ինչ լսել էր մի օր առաջ։ Նրա ասածից պարզվեց, որ կախվածը Շերակի նահապետ Բ-ի դուստրն է, հազիվ տասնյոթ-տասութ տարեկան, որ մի ամիս առաջ, հակառակ իր կամքի, բռնությամբ տարվել էր հուսանոց։ Իսկ տարվելու պատճառը, որքան կարողացել էր իմանալ Սմատունին, եղել է այն, որ այդ իշխանադուստրը սիրահարվել է հոր թիկնապահներից մեկին՝ մի չինական ճիավորի։ Հայրը լսելով այդ՝ բարկացել-զայրացել է դստեր վրա և հրամայել՝ մոռանալ այդ սերը ու ընտրել իր ազնվականի դիրքին վայել ամուսին։ Դուստրը դվահակ հնազանդությամբ լսել է

հոր հանդիմանությունն ու հրամանը և ոչ խոսքով, ոչ իսկ մի շարժումով չէր ընդդիմացել նրան, և հորը թվացել է, թե դուստրը ոչ միայն համաձայն է, այլև ղջում է ասածը... Սակայն երկրորդ թե երրորդ օրը տեսնում են նրան վիշտուստի պատրաստության մեջ: Այդ ժամանակ իշխանը զայրանում է սաստիկ և անմիջապես կարգադրում՝ Թիկնապահին նետել ըղձյակի խավար զնդանը, իսկ դստերը տանել կուսանոց...

— Այնուհետև՞վ,— հարցրեց Թագավորը, երբ հաղարապետը կանգ առավ, հարցրեց լարված, սպասելով, որ նա պատմությունը պիտի շարունակի հետաքրքրական դեպքերով:— Այնուհետև ի՞նչպես:

— Այնուհետև՝ ամիս չանցած կախվում է, արքա,— ասավ Ամառունին համառոտ:— Այսինքն՝ մի առավոտ գտնում են իր խցում կախված...

— Ասացիր՝ վանք տարվում է իշխան հոր կարգադրությա՞մբ:

— Այո, արքա:

— Եվ կախվո՞ւմ:

— Այդպես, արքա:

— Կախվո՞ւմ,— ասաց Պապը և լռեց ու սկսեց մոայլ անցնել դահասրահի երկայնքով:

Կախվո՞ւմ... Մինչ այդ Պապը այն համոզումն ուներ, թե բոլոր կուսերը—դեռահաս թե տարեց— կուսանոց մտնում են հոգևորականների քարոզի ազդեցությամբ՝ աչխարհային կյանքի մեղքերից և հանդերձյալ կյանքի տառապանքներից զերծ մնալու: Սակայն հիմա, պարզվում էր և այլ բան: Ուրեմն կուսերին վանք տանում են նաև բռնությա՞մբ: Այս պարագան նա առաջին անգամն էր լսում, և դա նրան տարօրինակ թվաց. նշանակում է կուսանոցը և ոչժամավայր է: Նա առաջ զարմացել էր մի քիչ, թե ինչո՛ւ են դեռահաս աղջիկներն լրենց զրկում աչխարհային կյանքից, զուրկ, ընտանիք կազմելու, մայր դառնալու, զավակ ունենալու բնական հաճույքից... իսկ հիմա դըժբախտ դեպքը նրան մոայլեց, հանկարծ. և նա մտածեց, թե ո՛վ և ինչո՛ւ է սահմանել այդ անբնական կարգը, որ աղջիկներին զրկում են կյանքից և վախում, դժբախտացնում... Ուրեմն

ծնողները իրենք են անում այդ բանը. այլապես նրան անհավատալի էր թվում, թե ինչպես մանկահասակ աղջիկները իրենց կամքով թողնելին հայրենի տունը և ցանկանային ընդմիշտ ցմահ փակվել կուսանոցի պատերի մեջ: Փակում են սիրելու համար, իրրև պատիժ,— մտածեց նա և ակամա հիշեց, որ հայ եկեղեցի շատ կողմերում ու անկյուններում քանի՛ կուսանոցներ կան և դրանց յուրաքանչյուրի մեջ քանի՛սն են արդյոք տառապում այդպես և մեռնում այս դեռահաս կույսի նման:

— Եղե՞լ է կախվելու այլ դեպք, թե սա առաջինն է,— դարձավ Պապը հանկարծ անշարժ կանգնած հազարապետին:

— Կախվելո՞ւ,— հոնքերը բարձրացրեց Ամատունին, թաղումերի հարցն ինձ դարմացած:— Որքան հիշում եմ՝ ոչ: Բայց ժայռից նետվելու և փախչելու դեպքեր եղել են: Իսկ կախվելու —ոչ: Ես դոնե չեմ լսել, արքա:

Պապը նորից լռեց: Ուրեմն ոչ միայն կախվում են, այլև ժայռից նետվում, փախչում: Նշանակում է այդ կուսանոցները միայն աղոթքի և ապաշխարության վայր չեն, այլև բանտեր ու գնդաններ, ուր ակամա տառապում են բռնությամբ տարված դեռահաս աղջիկները՝ խստականոն մայրապետների հսկողության ներքո... Կույսերի մենաստաններին պատկերացնելով այդպես տխուր՝ Պապն ավելի մռայլվեց. նրան թվաց, որ մեղավոր է և ինքը, որ իր երկրում, իր թագավորության մեջ այդպիսի տանջարաններ կան: Ի՞նչպես ինքը մինչ այս չէր իմացել այդ... որքա՜ն տակավին անծանոթ է իր երկրին,— մտածում էր նա, հիշելով չարունակ կախված կույսին. չգիտես նրա սիրո պատմությունը, բռնությամբ կուսանոց տարվելը թե կախվելը, գուցե այս ամենը միասին հուզում էր Պապին, և նա միաժամանակ դառնություն ու կշտամբանք էր զգում, որ իր իշխանության օրոք այդպիսի բան է կատարվում:

«Ի՞նչպես իմ նախնիները թույլ են տվել այդ» ասավ նա մտքում:

— Ելի հիմա, տեր Ամատունի,— դարձավ նա հազարապետին,— կարո՞ղ ես ասել ո՛վ է մեղավոր այդ սպանության համար:

Հազարապետի բարակ հոնքերը վեր բարձրացան. երևում

ձեր՝ նա չէր ապատում մի այդպիսի հարց, ուստի և ասալ չփոթվեց.

— Այդ դժվար է ասել, արքա:

Ներկաները նույնպես օտարոտի թվաց այդ հարցը. նրանք նույնպես չփոթված ու տարակուսած նայեցին թագավորին:

— Իսկ ես, հազարապետ, կասեմ ո՛վ է մեղավորը,— ասավ Պապը աչքերուն ջղաձգումով:—Մեղավորը մե՛նք ենք. իմ նախնիները, ե՛ս...

Նա կանգ առավ և նայեց անորոշ տարածության մեջ: Իսկ ներկաները տարակուսանքի հետ համակեց և մի տեսակ դուսպ զարմանք:

— Ես միշտ խորհում էի, որ այդ կույսերը դժբախտ են և մեղք,— խոսեց Պապը առժամ լռելուց հետո,— իսկ այժմ, կարծում եմ, նրանց այլևս չպետք է թողնել այդպես...

Ու Պապը նորից լռեց՝ ինչ-որ մտքերի մեջ:

— Բայց ի՞նչ կարելի է անել, արքա,— տակավին տարակուսած հետաքրքրվեց հազարապետը:

— Ազատե՛լ նրանց... Փակել կուսանոցները, որ չկրկնվեն այդ դեպքերը,— ասավ Պապը դրեթե ինքն իրեն, առանց որևէ մեկին նայելու:

— Բայց, արքա,— և զարմացած հազարապետն ուզեց ինչ-որ բան ասել, թե հիշեցնել ինչ, սակայն ներկա գտնվող թագուհին կանխեց նրան:

— Այդ մի անել, Պապ,— ասավ նա վախեցած,— առանց այդ էլ մեր հռչակավոր հայրերը վրդով են քո դեմ: Թո՛ղ. մի մեջամտիր, խնդրում եմ, նրանց գործերին...

— Դա միայն հռչակավոր հայրերի գործը չէ, թագուհիս, այլև թագավորի. նա՛ևս թագավորի: Դու կուզեիր, այդ ամենը տեսնեի և մնայի անտարբեր... դիտակցարար թույլ տայի այդպիսի ոճիրներ: Կարծում եմ՝ երկրի թագավորն ունի իրավունք մտածելու իր հպատակների մասին:

— Ունի, հարկավ: Սակայն...

— Քանի որ ունի, հետևաբար կարող է և թույլ չտալ, որ կուսանոցներում բռնի պահեն նրանց, ո՛վքեր չեն ցանկանում... Կարծում եմ, այո, լավագույնն է, որ կուսանոցում սահմանվելու

և մեռնելու փոխարեն այդ դեռահաս աղջիկները գնան—ամուսնանան և բազմացնեն հայոց աշխարհը,— շարունակեց Պապը ասես ինքն իր հետ խորհրդածելով:— Թվում է ինձ՝ բարի գործ արած կլիներ իմ հայրը, եթե Արշակավան կառուցելու փոխարեն՝ փակեր այդ կուսանոցները,— չեշտեց նա վերջին բառը:— Գրիր, Երեմիա, հրաման,— մեկեն դարձավ նա իր դպիրին, որ ինչպես միշտ, երկար մազերը ետ սանրած ու կոկ պատմուճան հագած կանգնած էր այդտեղ:— Գրիր, որ կուսանոցները փակվում են, և թող ուրհանդակները տանեն ամեն կողմ...

Հայրապետն աչքերը թարթեց և զարմացած նայեց Երեմիային, նրանից կարծես օգնություն ապասելով, որ նա բացատրի Թագավորին դրա դժվարությունը: Սակայն Երեմիան համամիտ էր Թագավորին, բայց նրա կարզադրության մեջ նա տեսնում էր չտապողականություն. նա մտածում էր, որ Պապը, հավանորեն, նկատ չէ առնում, որ այդ կուսանոցներում միայն դեռահաս աղջիկներ չեն, որ այնտեղ կան նաև պառավ, զառամ կույսեր: Կուսանոցների փակումով՝ երիտասարդ կույսերը կարող են դուրս գնալ իրենց ծնողների մոտ, կարող են ամուսնանալ, իսկ ինչ պիտի անեն տարեց կույսերը, որ ամուսնանալ չէլին կարող և, հավանորեն, զրկված պիտի լինեին ծնողներից— մտածեց Երեմիան և չուզեց իր այդ մտքերը թագցնել Թագավորից:

— Բայց, արքա, ինչո՞վ պիտի ապրեն այդ տեղերից դուրս նկող տարեց կույսերը,— ասաց Երեմիան իր խոհուն աչքերը հառելով Թագավորի երեսը:

— Այդ ինքդ ճևակերպիր, Երեմիա, ինչպես հարկն է,— ասաց Պապը:— Հետո կխորհենք...

Եվ մի քանի օր հետո կուսանոցները փակելու հրամանը՝ Թագավորի ինքնին և կարմիր աստրագրությամբ հաստատված՝ արքայական ուրհանդակները տարան այն գավառները, ուր կուսանոցներ կային: Բայց հրամանները դեռ տեղ չհասած ամեն կողմ՝ թե քաղաքներում, թե հեներում սկսեցին խոսել կուսանոցները փակելու մասին:

— Փակում են, որ կույսերին ամուսնացնե՞ն...

— Թագավորը կույսերին ամուսնացնո՞ւմ է,— կատակում

էին քաղաքի երիտասարդները:— Ամեն ոք պարտավոր է մի կույս առնել...

Եվ այս հրամանը երեք քաղաքացիների ու չինականների համար հետաքրքրական, գուցե և զարմանալի նորություն էր, հոգևորականների համար եղավ երկրաշարժի պես բան:

Երբ Թագավորի հրամանի լուրը հասավ Դվինի եկեղեցին— այնքան զարմացան այնտեղ, որ շատերը չհավատացին, համարելով դա կատակ իրենց վախեցնելու համար կամ ծաղր Թագավորի հասցեին, որ կարող է մինչև իսկ այդպիսի բան անել, բայց երբ լուրը կրկնվեց ավելի լուրջ անձերի կողմից, քան լուր բերող աբեղաները էին, այն ժամ ոչ միայն վախ, այլև ցասման նման մի բան համակեց հոգևորականներից շատերին:

— Այսահար, դիվահա՞ր է Թագավորը,— բացականչեց մի եպիսկոպոս:— Ի՞նչ է ուզում անմեղ կույսերից: Քրիստոսի անարատ հարսնացուներին տալ պղծությա՞ն, ամուսնացնե՞լ:

— Տեր, դու փրկիր, աղատիր ամենայն չարից և չար փորձությունից,— խաչակնքեցին մյուսները:

Իսկ հայր Սողոմոնը, որ հայտնի էր իր պերճախոսությամբ ու խայթող լեզվով և դրա համար կոչվում էր «խայթալեզու», հայտարարեց բարձր.

— Թագավորը ցանկանում է, երևի, կույսերին ևս դինվորագրել իր գահը պահելու համար:

Ներկաները մռայլ ժպտացին:

Բայց այդ լուրն ամենից շատ հուզեց դարձյալ Ներսես եպիսկոպոսին, որ հրամանի մասին լսելուն պես այնպիսի զայրացավ, թողեց ժամերգության դնալու մտադրությունը և կանգ առավ եկեղեցու բակում:

— Բերեք իմ զավազանը և վեղարը,— հրամայեց նա մի այնպիսի արտակարգ հուզված և անհամբեր ձայնով, որ երկու-երեք աբեղա միաժամանակ վազեցին դեպի սրբազանի խուցը:

Եվ երբ բերին՝ նա սրածայր վեղարն չտասղ դրեց գլխին, արծաթաթույլ երկար զավազանը ձեռն առավ և հագի Հաստրակ կապարով ուղղվեց դեպի դուռը մի փութկոտությամբ, որ հազիվ ժամանակ ունեցավ ասելու:

— Երկու եղբայր հետևեն ինձ:

— Ամենակը, հայր սրբազան, ամենակը թերևնք,— ասավ պատրաստակամ աթեղաներից մեկը:

— Պետք չէ՛,— նետեց սրբազանը:— Թո՛ղ երկու եղբայր հետևին ինձ:

Ու առանց շուրջը նայելու դնաց դեպի դուռը: Միաբաններն անխոս, քարացած քաղմուքյունից զառվեցին երկու հոգի և հետևեցին նրան— մեկը Սողոմոն հայր սուրբը, մյուսը մի թիկնեղ հոգևորական, որի մորուսը բուսել էր վայրի թփի պես յայն և այնպես փռված, որ ետևից էլ երևում էր: Դա Մաղաքիա սարկավագն էր:

— Դե՛, դե չարտղեա,— կրկնում էր Ղազը ինքնին:— Տարօրինակ դարձավ, որ նորից կատարի գործեր սրբապիղծ:

Անցորդները տեսնելով միջնաբերդ տանող վողոցով, ավելի շուտ՝ այդ վողոցի ուղիղ մեջտեղով գնացող երեք բարձրահասակ ծանոթ ևկեղեցականներին, որոնց մեջտեղինը զավազանով էր, մյուսները մոայլ ու տխուր, ակամա քաշվում էին մի կողմ, կանգ առնում և մտածում, թե արդյոք ո՛ւր են շտապում դրանք այդպես փութկոտ, վճռաքայլ ու զայրացած: Լինում էին և մարդիկ, որ խոնարհելու համար թե ո՛ւր են գնում— հետևում էին հեռվից, ինչպես Մեղավոր Մաղքոսը, որ եզան մազափունջ պոչը ձեռին վազում էր նրանց առջևից և կրկնում բարձր.

— Ճանապարհ սրբազանին, ճանապարհ...

Անցորդները նորից մի կողմ էին քաշվում և զարմացած նայում հոգևոր հայրերի երթը:

Երեք մոայլադեմ հոգևորականների այդ վճռական ընթացքը տեսնելով՝ միջնաբերդի առաջին պարսպադռան զրահ հագած ու սաղավարտ դրած պահակները նույնպես ետ կանգնեցին և ճանապարհ տվին, մտածելով, երևի, կանչված են պալատ կամ գնում են կարևոր մի գործով: Նրանք այդ տրին՝ Ղազին ճանաչելով և մի հարգանքով, որ ցույց էին տալիս միայն կաթողիկոսին:

Նույնն արին երկրորդ պարսպադռան պահակները, որով-հետև նրանք էլ ճանաչում էին Ղազ եպիսկոպոսին. իսկ պալատի մուտքի առջև նրանց ընդառաջ եկավ պահակախմբի հսկիչը՝ մի աչխույժ երիտասարդ և հարցրեց խոնարհումով.

— Հայտնե՞լ արարողապետին կամ դռնիր սեպուհին ձեր ժամանումը:

— Պետք չէ,— ասավ Նաղը խոստովեմ, առանց երիտասարդ զորականին նայելու:— Մենք գնում ենք Թագավորի մոտ:

Ու էլ չսպասելով, անգամ չունչ չառնելով վերելքից հետո, նրանք նույն վճռական քայլերով բարձրացան պալատի մարմարաստիճանները և մտան արքայի ընդունարանը, ուր անմիջապես նրանց դեմն ելավ արքայադռիր Երեմիան՝ ամառային երկար պատմուճան հագած, երկար մազերով գլուխը բաց, և ծերունի արարողապետը՝ ամբողջովին ճերմակ հագած:

Մինչև նրանք հարգալիր խոնարհում կանեին և կհարցնեին, թե ինչ են ուզում կամ ո՛ւմ են ցանկանում տեսնել սուրբ հայրերը՝ Նաղ սրբազանը կանգ առավ, գավազանը հատակին զարկելով.

— Ո՞ւր է Թագավորը,— հարցրեց նա հևաձայն:

Երեմիան նրա բարկությունն ու հուզումն ղգաց ոչ միայն նրա ձայնից, այլև նրա կոշտամատ մորուսից, որ դողում էր կրծքին և նրա կարմրած աչքերից, որ տենդախտյալ էին և կարծես հուր էին ցայտում. իսկ հետև վարդապետները, որ գուշակահի պես կանգնել էին նրա ոչ և ձախ կողմը, ամբանմոռայլ էին և այնպես հուզված՝ կարծես նկել էին թշնամու մոտ՝ վրեժխնդիր լինելու:

Երեմիան կռահեց կարծես մի բան, բայց այլևս չհարցնելով ոչինչ— անցավ մյուս սրահը, ետևից քաշելով քանդակազարդ և ոսկեզօծ դուռը:

Վարդապետները նայեցին ծածկվող դռանը, նայեցին իրենց սրբազանին և նկատեցին, որ գավազանը դողում է նրա ձեռին: Նույնը նկատեց և ուշիմ արարողապետ ծերունին և նրան այնպես թվաց, թե Նաղը վիրավորվեց արքայադռիրի վարմունքից, որ, չնայց առանց խոսք ասելու և դուռը դրեց ամուր: Սակայն նրա տարակուսանքը սպրդվեց, երբ արքայադռիրը, դուռը բանալով, ասավ.

— Հաճեցեք, հայրեր հոգևոր...

Նախ քան ներս մտնելը՝ Նաղ սրբազանը երկու ձեռքով բռնեց խաչագլուխ գավազանը, բռնեց բարձր, ինչպես խաչն են

բռնում, ու առաջ գնաց նույն խստահայաց տեսքով: Իսկ զահավարժ մոնելով և թագավորին նկատելով մի խումբ պալատականների հետ՝ նա, առանց շուրջը նայելու, գնաց դեպի թագավորը և սկսավ հևաձայն.

— Եկել եմ, Պապ թագավոր, նզովելու քեզ երեք հարյուր յոթանասուն հայրապետների անունով, նաև վախճանած և սիրոյ զոգը գնացած Գրիգոր, Ներսես մեծ քահանայապետների անունով, սուրբ Հակոբ Մծբնա եպիսկոպոսի անունով և բրածեծ նահատակ Հուսիկ հայրապետի անունով...

Նա այնպես արագ էր խոսում, թվում էր՝ վախենում է անուններ մոռանալ, և այնպես բարձր, որ շուտով շնչարգել եղավ կարծես և խոսքն ընդհատեց՝ նոր շունչ առնելու:

Իսկ թագավորը, որ մինչ այդ զարմացած հետևում էր նրա խոսքին—այդ հապաղումից օգտվելով՝ նկատեց քմծիծաղ:

— Կան կարծեմ և ա՛յլ հայրապետներ, Ամդ սրբազան... Նզովի՛ր և նրանց անունով...

Դահի մոտ կանգնած պալատականներից ոմանք ժպտացին թե թագավորի հեգնանքի և թե Ամդ եպիսկոպոսի բորբոքված ու շնչարգել տեսքի վրա, իսկ ոմանք զարմացած և վախեցած էին թվում նզովքից, ու սպասում էին իմանալ դրա առիթը կամ պատճառը:

Ամդը, վերջապես, շունչ առավ և շարունակեց.

— Դու ինձ հեգնո՞ւմ ես, քրիստոսադավ թագավոր,— բռնկեց նա, ձայնը բարձրացնելով:— Եթե այդպես է՝ նզովում եմ նորից, որ դարձել ես նախնյաց կռապաշտության, սուության ու մոլորության... որ մոռացել ես ճշմարիտ աստծուն և պաշտում ես չարին ու սատանային... Նզովում եմ անարատ կուսերի համար, որ կամիս տալ պղծության... Եվ թո՛ղ, և թո՛ղ,—կրկնեց նա դարձյալ շնչարգել լինելով,— և թո՛ղ, փառքից ընկնելով, մատնվես թշնամիների գերության և սարկության ձանր լուծը իջնի քո պարանոցին... Դու որ Թունավորեցիր Ներսես հայրապետին...

Բառը գայրացած երեսը դարձրեց թագավորին՝ հրամանառնելու, որ հեռացնի նզովախոս եպիսկոպոսին, բայց Պապն ինքը ելավ մինչ այդ և առաջ եկավ:

— Ուրեմն դո՞ւ ես հրահանգել, որ ինձ հայրապետական հուշակե՛ն,— ասավ Պապը տարօրինակ հանգիստ և հանկարծ ոտը զարկեց հատակին։— Հեռացիր, ցնորված ծերունի,— գոռաց նա, և նրա աչ երեսը կծկվեց ու խաղաց ջղաձիգ, բայց նա անմիջապես շուրթերը սեղմեց, որ ուրիշ բան չասի։

Այդ ժամ Բաթն իսկույն նետվեց առաջ, որ Խաղին դուրս հանի գահասրահից. բայց մինչ կմոտենար—Խաղն ինքը չըջվեց՝ այս անգամ գավազանը մի ձեռով բռնած, և այդպես էլ ուղղվեց դեպի դուռը, ասելով.

— Եկա նղովելով, հեռանում եմ նզովելով, մինչև չվերանա կուսանոցները փակելու քրիստոսանենգ հրամանը քո...

Ու գնաց գայրացած, ինչպես եկել էր, նրա հետ և իր անխոս, ըմբշակերպ ու մեծամարմին ուղեկիցները։

. . . . . .

Կուսանոցների փակման հրամանը հուզում ու տրտունջ հարուցեց նաև Վաղարշապատի մխիթարեբյան մեջ. սակայն հուզումն այդտեղ այնքան մեծ և ցասումնալից չէր, ինչպես Դվինում, կամ ինչպես կալվածների և տուրքերի վերացման ժամանակ։ Վարդապետները, սարկավագները ու աբեղաները խմբերով բաժանված՝ խոսում էին, զարմանում, վրդովվում, բայց իրենց վիշտը, դժգոհությունը հայտնում էին կամաց, չչուկով՝ ընկերների կամ մտերիմների չրջանում, զարմանալով, որ նոր կաթողիկոսը էի բողոքում թագավորի այդ հրամանի դեմ։

Միայն փավստոս հայր սուրբն էր որ չէր մասնակցում այդ ամենին, չէր խոսում մյուս եպիսկոպոսների ու աբեղանների պես. նա, ինչպես միշտ, մենակ դնում էր երեկոյան ու առավոտյան ժամերգության և նորից դառնում իր խուցը. հիշում էր Ներսես քահանայապետի օրերը, հայոց երկրի անցքերը, իսկ երբ երեկոն իջնում էր՝ վառում էր ձեթի ճրագը և մատյանը դնում առաջը։ Այս անգամ նա խորհում էր դրել կուսանոցների փակման մասին և ժամանակ առ ժամանակ խաչակնքում էր երեսը, որ աստված զերծ պահի հայոց աշխարհը ավելի վատթար դեպքերից և Տերն իմաստություն շնորհի հայոց մանուկ թագավորին...

***

Այն ժամանակ, երբ Դվինի և Վաղարշապատի վանքերում գոյություն ունեցող դժդոհությունները ու արտունչները էին—կուսանոցներում տեղի էին ունենում այլ տեսարաններ: Արքայական սուրհանդակների բերած հրամանները նրանց մեջ առաջացրել էին այնպիսի իրարանցում, որի մեջ դժվար էր տարբերել վիշտն ուրախությունից, ուրախությունը դժդոհությունից: Ամենից ավելի վշտացած և զայրացած էին մայրապետները. մի քանի-սը նրանցից, կարդալով Թագավորի հրամանը, նեռեցին այն, ասելով թե չեն կարող կատարել այդ կարգադրությունը. բայց Նոյան և այնպիսիները, որ կուսակրին հավաքելով՝ հրամանը գոյդացին նրանց, որ մերժողը մենակ իրենք չլինեն, այլ ամենը-քը, բոլոր կուսակրը միասին:

Առաջին կուսանոցն, օրինակ, ուր ամենից շուտ հասավ Թագավորի հրամանը—Եղվարդա կուսանոցն էր, որի մայրապետը ուներ հազած մի լեցուն կին, երբ կուսակրին սեղանատուն հավաքելով՝ բարձր, բայց ընդհատվող ձայնով կարդաց Թագավորի հրամանը՝ բոլոր կուսակրը մնկեն լաց եղան ու անմիջապես ծունկի եկան: Բայց այդտեղ էլ դժվար էր տարբերել ո՛վ է արտասանում վշտից, ո՛վ ուրախությունից: Իսկ երբ ընթերցումն ավարտվեց և մայրապետը, դուրս չգալով, ասավ «խորհեցեք քույրեր» և ամենքը ոտքի եկան՝ այդ ժամ սրահը լցվեց խոսակցող ձայներով. մի տեղ բարձրաձայն արտունչ էր, մի այլ տեղ հազիվ լսելի շշունչ:

— Ես չեմ ամուսնանա,— ասում էր մի տարիքոտ կույս,— չեմ ուզում երեխա ունենալ, որ տառապի աշխարհի ցավերի մեջ:

— Հրամանը չի՞ ասում ամուսնացիր, երեխա ունեցիր, քույր Մարիամ: Դու կարող ես ապրել հարազատներիդ մոտ և աշխատել նրանց համար: Թագավորը թողնում է մեր կամքին: Հրամայում է, որ երիտասարդները դուրս գան, իսկ ծեր կույսերը մնան, եթե ցանկանում են:

— Իսկ եթե չեմ ցանկանո՞ւմ բեռ լինել հարազատներիս:

Մի այլ տեղ դեռահաս մի կույս արտասուքն աչքերին

ասում է իր նման մի կույսի, որ միասին կանգնել էին սրահի մի անկյունում, բոլորից զատված:

— Բայց հիմա կարո՞ղ եմ գտնել իմ Աբրամին, թե նա արդեն ամուսնացած կլինի: Ինձ այնպես է թվում, թե նա ամուսնացած չի լինի: Նա ինձ խոսք է տվել, որ երբեք չի ամուսնանա, քանի ողջ եմ...

— Մարդկանց խոսքերին դու մի հավատա, քույր Շուշանիկ: Իմն էլ խոստացավ ինձ, բայց ամուսնացա՛վ. առաջին իսկ տարում, ասելով թե՝ միևնույն է, իմ հայրն ինձ երբեք չի հանի կուսանոցից... Մարդկանց խոսքին չպետք է հավատալ:

— Իմն այդպես չի անի,— և կույսը մատի ծայրով թոցրեց արցունքները թարթիչներից:

— Բոլոր տղամարդիկ մեկ են, քույր Շուշանիկ:

— Ինչո՞ւ: Մի՞թե տարբեր չեն լինում:

— Անուններով... միայն անուններով:

Իսկ սրանցից փոքր հեռու խոսում էին մի խումբ պառավ կույսեր՝ երկար մի նստարանի շարված, ինչպես ևս հոգնած թռչուններ մի ճողի թառած:

— Ես դնալու և ոչ մի տեղ չունեմ,— ասում էր մի պառավ կույս:— Ես ոչ հայր ունեմ, ոչ մայր: Իմ վանն ու օթևանը կուսանոցն է, կուսանոցն էլ կմնա: Ես ապրել եմ ու պիտի մեռնեմ այս պատերի մեջ և ոչ մի թագավոր չի կարող ինձ հեռացնել այնտեղից: Այդպես էլ ասացեք Պասլ թագավորին, որ քույր Գայանեն չի թողնի իր կուսանոցը: Ասացեք նրան, որ քույր Գայանեն ոչ մի թագավոր չի ճանաչում, բացի երկնային թագավորից...

Եվ նա ևս հազուստների մեջ ծունկի գալով՝ սկսեց աղոթել՝ ստեպ-ստեպ խաչակնքելով: Մյուս պառավ կույսերը հետևեցին նրա օրինակին, և սեղանատան լուռ թյան մեջ բարձրացավ աղոթողների չշունչը այն ժամանակ, երբ դեռատի կույսերը գնում էին իրենց խուցերը՝ մտածելու ինչ անել կամ ինչպես գնալ իրենց հարազատների մոտ...

. . . . . .

Այդ նույն ժամանակ մի ձիավոր էր գնում դեպի Վարաժնունիք՝ արքայական սուրհանդակի նշանը ալ թևին: Նա տխուր

էր և ձին վարում էր ակամա, առանց որևէ աշխույժի, առանց շուրջն ու հեռուն նայելու: Ջնայած արև օր էր և լեռնային գոլ հովը ալիք էր տալիս լեռնադաշտերի վրա և անվերջ համբուրում–դղվում նրա դեմքը, խաղում դվխարիկի տակից դուրս եկած ոսկե մազերի հետ, բայց նրա երեսը չէր պարզվում: Նա թվում էր ընկճված ու հուսահատ: Դա Հրահատն էր, որ թագավորի հրամանն առած՝ գնում էր վարաժնույթյաց դավառի կուսանոցը: Նա չուներ կարծես առաջվան աշխույժն ու եռանդը: Նա, որ մի քանի տարի առաջ սիրով և հաճույքով էր կատարում ամեն մի հանձնարարություն և մինչև իսկ առիթ էր փնտռում այս կամ այն վայրը, անգամ վտանգավոր տեղեր գնալու, հիմա սակայն, Տարսոնից դառնալուց հետո, երբ տեսավ Նազենին այս անգամ էլ չի վերադարձել,— նա այլևս հաճույք չէր ղգում իր պաշտոնից, հաճույք չէր ղգում ձի հնծնելուց, ճանապարհներից: Եվ առհասարակ այժմ ամեն ինչ նրան թվում էր ձանձրալի ու տխուր, և կուզեր բոլորովին չգնար այդ վայրից ծանոթ ճանապարհներով, որ տխուր հուշեր էին արթնացնում միայն: Մյուս կողմից ղղում էր, որ հոդնել է արդեն. չարունակ ճանապարհներ չափել, հանձնարարություններ կատարել՝ երեկ սպարապետի համար, այսօր թագավորի, և չգիտեր մինչև ե՞րբ պիտի չարունակվի այս ստամոքսական ու թափառ կյանքը: Կյանքում այլևս չէր տեսնում մի նպատակ, որին կարելի լիներ ձգտել, որով կարողանար ոգևորվել: Նա պարզապես լքված էր: Այլևս հույս չուներ, թե երբևէ կգտնի իր Նազենուն, տարբերելի իր սերը, որ չքացավ հանկարծ պատերազմի փոթորիկների մեջ... Իր սե՛րը... որ առաջ այնպես լցնում էր իր սիրտը և աշխարհը գարձնում սիրելի... Հիմա էլ Հրահատը երբեմն հիշում էր նրան, բայց խոհուն էլ վանում էր իրենից, որ նոր ցավեր չպատճառի իր հոգուն, նոր հույսերով, զուր հույսերով չտոգորի իրեն... Ու առաջ, երբ նա ճանապարհը գնում էր գվարթ և հաճախ կատակում հանդիպող ուղևորների հետ, հիմա անցնում էր անտարբեր, անգամ չէր նայում ո՛վ է հանդիպում, ո՛վ է անցնում–դառնում, և ձին վարում էր ակամա, նույնիսկ չէր նկատում կարծես, որ նա դանդաղում է... Սակայն, երբ հիշում էր, որ արքայական տուրհանդակ է, հրամանն է տանում և

պետք է մինչև երեկո տեղ հասնի՝ սթափվում էր անմիջապես և արագացնում ձիու ընթացքը:

Օրը երեկոյանում էր, երբ նա ճանապարհի ոլորանից թեքվելով՝ մի դահավանդի վրա նկատեց վարժունայց կուսանոցը. այն կուսանոցը, որ իր շրջապատության միջոցին տեսնել ցանկացավ Պապ Թադավորը, բայց նրան դնելով արկածասեր ոեպուհի տեղ— չքողին ներս: Կուսանոցը ողողված էր մայր մտնող արևի աստո ճառագայթներով, այդ պատճառով պայծառացած էին երևում թե նրա առամնավոր պարիսպը, թե մարտկոց-բուրգերը և թե ներսը դտնվող սրագմբեթ եկեղեցին: Ջորում տարածվող անտառը մթնում էր՝ արդեն և ծածկվում բարակ մուժով. իսկ ճանապարհի երկու կողմը ցանքսեր էին, որոնց մոտ՝ ճահճային մարգերում արածում էին պարարտ կովեր:

«Երևի, կուսանոցի կովերն են» մտածեց Հրահատը և ձին արագացրեց:

Երբ մոտեցավ պարսպի երկաթագամ դռներին և դարկեց աչնտեղ կախված թակիչը— նա փափուկ քայլերի ձայն լսեց և քիչ հետո մեկը՝ կանացի մի ձայն հարցրեց դռան ետևից.

— Ո՞վ է:

— Արքայական սուրհանդակ,— պատասխանեց Հրահատը հոգնած ձայնով:

— Եվ ո՞ւմ է ցանկանում տեսնել արքայական սուրհանդակը:

— Մայրապետին:

— Եվ ի՞նչ կա այս տարաժամին:

— Արքայական հրաման,— ասավ Հրահատը, մտածելով, որ կույսերը և ինքը մայրապետը, երևի, պիտի զարմանան կամ վախենան իր խոսքի վրա:

Եվ նա չէր սխալվում:

— Արքայական հրամա՞ն,— զարմացավ կանացի ձայնը և ասավ.— Սպասիր մի փոքր...

Եվ Հրահատը լսեց, թե ինչպես մեկը փափուկ քայլերով գնաց դեպի բակի խորքը, ու մի քանի վայրկյան չանցած՝ նորից ոտնաձայներ լսվեցին, բայց այս անգամ ոչ թե մի, այլ մի քանի

հոգու, որ չտապում էին դեպի դուռը: Ու քիչ անց բևեռապիրդ այդ դռան վրա բացվեց մի փոքրիկ երկաթե դռնակ. նրա անցքից հագիվ երևաց սև գլխանոցով մի դունատ դեմք, որի վրա փայլում էին երկու սևորակ հետաքրքիր աչքեր:

— Դու մենա՞կ ես, սուրհանդակ,— հարցրեց նա և, գլուխը դռնակից հանելով՝ նայեց աջ ու ձախ: Համոզվելով, որ նա մենակ է և թևին լրջագրքայական սուրհանդակի նշան՝ կույրը դուրս նորից եկավ քաշեց և երկաթե փոքրիկ դռնակը փակեց սմուռը, որից հետո երկաթադամ մեծ դուռը եկավ գնաց ծանրաձոնչ. երևացին չորս՝ ամրողջովին սևեր հագած կույրեր՝ մի-մի նիզակ բռնած:

Դուռն այնքան ցածը էր, որ ձիու վրա անկարելի էր մըտնել, և Հրահատան, իհարկե, ձիու սանձը քաշելով, մոտավ բակը: Նրա հանից դուռը նորից փակելով՝ չորս կույրերը նրան առաջնորդեցին բակի խորքը, ուր շարքով երևում էին մանր, երկաթամանոթակ լուսամուտներ և այնտեղից նայող ագահ հետաքրքիր աչքեր: Ընդարձակ բակում նույնպես երևում էին կույրեր, որ անդադար նոր դուրս գալով, ծանրաքայլ գնում էին իրենց խուցերը, ամանք էլ պատավ կույրերի թևը բռնած՝ ուղեկցում էին նրանց:

Բակի մեջտեղը հասնելով՝ Հրահատը, առաջնորդ կույրերից մեկի խորհրդով, ձին կապեց այդտեղ գտնվող ծառերից մեկից և նորից, նույն կույրերի առաջնորդությամբ, գնաց-մոտավ մայրապետի խուցը, որ պարտրված էր գորգերով ու երկու օթոցով: Հրահատին նստրս թողնելով նիզակավոր կույրերը մնացին դուրսը կանգնած:

Հրահատն անմիջապես չնկատեց ո՛վ կա նստրը. մի երկայնչքյան կիսամութին ընտելանալուց հետո միայն տեսավ օթոցին նստած սև նախուրան լայն վեղերը փռած մայրապետին, որի դեմքը թվում էր կաթնահունց խմորից չինած՝ սպիտակ ու փափուկ, որ կարծես ոսկոր չուներ տակին. բերանի աջակողմը՝ ծնոտին մի մեծ սև ծիլը կար՝ վրան մազեր բուսած, որ չէր կըտրում, երևի, մեղք համարելով: Սևահատիկ վարդապետը ձեռին նա հենվել էր մի բարձի: Այդ դիրքում նա իշխանական կեցվածք ուներ և տպավորիչ նայվածք: Մի հայացքով Հրահատն ղրաց այդ

և, ձեռը կրծքին դնելով, խոնարհում արավ չեմքից, ապա հանդարտ մոտենալով, ընդունված կարգի համաձայն, համբուրեց նրա, դարձյալ կաթնահունց խմոր հիշեցնող սպիտակ ու փափուկ աջը:

— Ի՞նչ բարի լուր ես բերել մեզ, սուրհանդակ,— հարցրեց մայրապետը հանդարտ, առանց դիրքը փոխելու, բառերը հատհատ արտասանելով:

— Թագավորի հրամանը, բարեպաշտոն մայրապետ:

Եվ Հրահատը թիկնոցի ներսի գրպանից հանեց գլանած մագաղաթը ու հարգանքով պարզեց այդ վեհապանծ կնոջը, որ, հրամանն առնելով, տակավին նրա կապը չբացած, դրեց ճակատին, ինչպես անում էին արքայական հրամանն առանձին, ապա հանդարտ հետաքրքրությամբ բաց արավ նրա կապը և սկսեց կարդալ: Նա* կարդում էր հոնքերը բարձրացրած՝ բարեպաշտ դեմքով ու ակնածանքով, բայց փոքր անց նրա ուսերով կարծես սարսուռ անցավ, շարժվադիր հոնքերը ցածրացան, իրար եկան հանկարծ և նրա սպիտակ դեմքը մթնեց մեկեն:

— Ի՞նչպես,— վեր թռավ նա կարծես խոցված:— Երկտասարդ կուսերին արձակի՞լ... ու չընդունե՞լ... Եվ ինչո՞ւ... Ո՞ւմ են վնասել կուսանոցները: Ո՞վ է արքային ներշնչել այդ մխքը... Մի՞թե նրա համար, որ մենք արքային չենք ընդունել, չճանաչելով... Ոսկեր, սուրհանդակ, ի՞նչ բան է սա...

— Ես այդ, դժբախտաբար չգիտեմ, մայրապետ, և չեմ կարող՝ իմանալ, ասավ Հրահատը հարգանքով:— Միայն այսքանս կարող եմ ասել, որ այսպիսի հրամաններ տարված են բոլոր կուսանոցները...

Այդ վայրկյանին պատահեց անսպասելի մի բան:

Հազիվ Հրահատն ավարտել էր իր խոսքը՝ հանկարծ բացվեց մայրապետի խուցի երկրորդ դուռը և այնտեղից՝ կողքի անձյակից թե խցից ներս վազեց սրընթաց մի կույս և «Հրահատ» ասելով փարվեց արքայական սուրհանդակին:

— Դու այստե՞ղ... Դու ո՞ղջ,—ասավ նա չնչահեղձ:

— Նազենի՛,— բացականչեց Հրահատը կարծես երազի մեջ, չհավատալով աչքերին ու ականջներին:— Նազենի՛... դու այստե՞ղ,— կրկնեց նա կարծես լսած խոսքերը ու, երկտասարդ

Հուլյեի ուսերը գրկելով, համբուրեց նրա ճակատը, մազերը:— Նապենի՛... Ես քեզ համարում էի կորած...

Ու այնուհետև մայրապետի աչքերի առաջ ամեն ինչ կարծես խառնվեց իրար. նա զարհուրած նստեց, ավելի շուտ ընկավ օթոցի վրա, ապա վեր թռավ, մոռանալով իր տարիքը, իր ծանրամեծար դիրքը և Թախավորի հրամանը:

— Ի՞նչ է նշանակում սա,— ասավ նա զայրացած, երիտասարդներին շուրջը դառնալով:— Դու Թախավորի անունով մտար իմ կուսանոցը, որ...

Բայց երիտասարդներն անակնկալ հանդիպման, զարմանքի ու հափշտակության մեջ նրան չէին լսում և իրար ձեռ բռնած իրար փարված՝ կիսախոսքեր էին շշնջում:

— Իսկ դու ի՞նչպես ընկար այստեղ,— սթափվեց, վերջապես, Հրահատը:

Նապենին չկարողացավ այլևս պահել իրեն. նրա ուրախությունն ու վիշտը արտահայտվեցին արցունքներով, որոնց միջից նա աննուսմենայնիվ փորձում էր խոսել՝ արվեն սթափ ու ակնածանքով նայելով մայրապետին: Նապենու կցկտուր խոսքերից պարզվեց որ Դվինից փախչելիս մայրը մեռել է ճանապարհին, Հուսանոցին մոտիկ և մայրապետը կարեկցելով պատսպարել է իրեն, զարձնելով իր անձնական սանը՝ վանական դաստիարակություն տալու համար:

Երբ հանդիպման առաջին բուռն, ամեն ինչ մոռացնել տվող ոգևորությունն անցել էր՝ մայրապետը վշտացած զարճավ Նապենուն.

— Հապա, աղջիկս, առում էիր, թե չունե՞ս ոչ հղբայր, ոչ հարպատառ:

Նապենին բռնկեց շառագույն և խոնարհեց գլուխը:

— Սա իմ եղբայրը չէ, մայրապետ... իմ... իմ...

— Ջո ի՞նչը,— նայեց մայրապետը ամոթից ակնկոր Նապենուն, որի բարեձև հասակը և բարակ մեջքը դողում էր սև հոպուստի մեջ:— Ջո ի՞նչն է ուրեմն...

— Իմ վեհացուն, մայրապետ,— դժվարությամբ արտաբերեց Նապենին:

Մայրապետի զարմանքը կրկնապատկվեց. նրա սև աչքերը

կլորացան կարծես ու սևեռուն նայեցին մերթ Նազենուն, մերթ Հրահատին: Թվում էր նա լրեն խաբված է զգում և հիմա մի որոշում է խորհում, զայրացած մի որոշում, այնպես էր այդ մինչեռ նրա բարձր կուրծքը արագ ելևէջում ան հաշտուսուտակ: Բայց հետզհետե նրա հայացքը մեղմացավ և նա, լայն չունչ առնելով, նստեց մեկեն օթոցի վրա և ասավ բոլորովին փոխված, բայց ընդհատվող ձայնով.

— Եվ որ այդպես է՝ գնացեք խաղաղությամբ, դավակներս... Իսկ ես... կդրաղվեմ այս հրամանով...

Հրահատն ու Նազենին համբուրեցին մայրապետի ոսկոտակ ու փափուկ ձեռը և դուրս եկան: Հրահատը գնաց բակը, Նազենին՝ դարձյալ կից սենյակը:

Երբ փոքր անց Նազենին, իր իրերը հավաքելուց հետո, եկավ հրաժեշտի համար մայրապետի ձեռն առնելու, նկատեց, որ մայրապետը, այդ ուրախան ու խրոխտ, այդ հրամայող ու անզիջում կինը արտասվում էր, և նրա արցունքները թափվում էին թագավորի հրամանի վրա:

Նազենին չհամակցավ մայրապետն իրենից անջատվելու համար է լալիս, հիշե՞լ է մի բան իր սեփական կյանքից, թե լալիս է պարզապես թագավորի հրամանի առթիվ...

***

Դեռ կուսանոցների աղմուկը չլռած՝ Պապը հրաման տվից վանել Ներսեսի հիմնած անձնելանոցները, որոնք նա համարում էր «ծուլանոցներ», ու կարգադրեց ինամել միայն զառամ ծերունիներին, իսկ մյուսներին, որ հիվանդ չէին, տանել «օգտակար աշխատանքի»: Դա էլ չավարտած, հրամանագրեց, որ չինների երկու-չորս քահանայի փոխարեն լինի մեկը, որ ամենայն ծանրութիւն չլինեն չինականների վրա. իսկ պաշտոնից արձակվածներին ընդունել արքունի ծառայության մեջ կամ զինվորագրել:

Տարօրինից վերադառնալուց հետո Պապը թվում էր ավելի անհանգիստ, քան առաջ. թվում էր՝ կամենում է չուտով իրականացնել այն ամենը, ինչ մտադրել էր վաղուց:

— Պապն այդ ամենն անում է Ներսեսի չինածը քանդելու, —ասում էին եկեղեցականներից ոմանք, իսկ մյուսները կրկնում էին դարձյալ այն, ինչ ասում էին առաջ, թե թագավորն այդպիսով ուզում է փոքր այս փոքր քրիստոնեությունը վերացնել և հեթանոսությունը վերականգնել, և զարմանում էին, որ բիզանդական դեսպանը, կայսրն ու մետրոպոլիտը տեսնում-լսում են այս ամենը և չեն անում ոչինչ:

Լինում էին սակայն մարդիկ էլ, որ կարծում էին, թե Պապն այդ բոլորն անում է կյանքը դյուրացնելու, հայ բանակը զորացնելու: Սակայն Պապն ինքը՝ ինչ էլ անում էր—չէր մոռանում Տարոնում ստացած վիրավորանքն ու նվաստացումը, և քաղաքները, որ մնում էին տակավին բյուզանդացիների ձեռին: Թվում էր նրան, թե ամենքը՝ հարազատ թե օտար, մերձավոր թե հեռավոր, պալատական թե նախարար ծածուկ ծաղրում են իր անզորությունը, որ չկարողացավ այսքան ժամանակ քաղաքներն անդամ ազատել բիզանդացիներից, որ եկան իրեն բարեկամ, նամուսին որպես թշնամի: Նա առանձնապես վշտանում էր, երբ հիշում էր այդ քաղաքների պատգամավորներին ուղած խոստումը: Հիշում էր ու մտայլվում.— Ի՞նչ կմտածեն նրանք... Որ թագավորը խաբե՞ց իրենց... Հարազատ թագավորը խաբե՞ց...

Ու շարունակ միջոցներ էր խորհում քաղաքներն ազատելու: Զգում էր սակայն, որ հիմա մենակ եղնել Բիզանդիայի դեմ չի կարող, դաշնակցել պարսից—վատ է. նրանք նույնքան խարդախ են ու նենգ. ազատել, որ Բիզանդիայի գլուխը խառնվի—զուցե և չխառնվի երկար ժամանակ: Ի՞նչ պիտի անել ուրեմն... Մինում է տալիներ անվախան ուժին: Իսկ դրա համար նա ինչպես առաջ, այնպես էլ հիմա, դառնում էր պետք է չահագրգռել հայոց նախարարներին, միաբանել նրանց և ստեղծել ուժեղ մի բանակ: Թշնամին կպատահարի միայն ուժից, նա տեղի կտա միայն ուժի առաջ:

Երբեմն նա այնքան էր տարվում քաղաքների հոգսով, որ սկսում էր դառնապարտել իրեն, որ չի կարողանում միջոց ու ելք դտնել նրանց ազատելու համար: Իսկ երբեմն, առանձնապես գիշերները, այդ մտքերն այնպես էին պաշարում նրան, որ նա

երիտասարդ էր իր ննջարանում կամ հին սովորությամբ, գնում էր Երեմիայի մոտ:

Այսօր Գադը նորից մտահոգ էր:

Գիշեր էր. նա մենակ, ամառային տունիկով ու սանդալներով իր ննջարանում նստած նայում էր անկյունում վառվող հնդաստեղ աշտանակի թարթիող մոմերին, նայում էր և կարծես չէր տեսնում: Նրա դեմքը մռայլ էր և լարված, իսկ հայացքը ներսուլլ: Դուրսը և ներսը՝ պալատում լռել էր ամեն ձայն ու շարժուձև. քայլ թվում էր, որ եթե աղմուկ էլ լիներ— նա չէր լսի երևի, այնպես ինքնամփոփ էր երևում ու մտատար: Սակայն մի առժամ այդպես մի կետի նայելուց հետո՝ նա վեր կացավ, դանդաղաքայլ մոտեցավ բաց լուսամուտին ու նայեց նախ Մասոի ճերմակ գլխին իջած աստղալի երկնքին, ապա քնած Դվիրնին ու ղրուխն օրորվող հատաչաճաչին.

— Իմ նախնիները քաղաքներ են կառուցել, բարեկարգել պարտեզով, լցրել բնակիչներով, իսկ ե՞ս...— և նա ժպտաց դառն մի քմծիծաղով.— իսկ ես թույլ եմ տվել, որ ագահ ու անառակ հոտմը գլուխը դրանք և Քշվառության ու նվաստացման ենթարկի դրանց բնակիչներին:

Նա լռեց մտածմունքի մեջ: «Ի՞նչ սխալ ասեն իմ հետնորդները,— հարցրեց նա մտովի:— Ինչո՞ւ հետնորդները... Այժմ իսկ, այժմ ի՞նչ կասի ժողովուրդը հայոց, մանավանդ այդ քաղաքների բնակիչները, որ ծնկաչոք աղերսեցին վերկել իրենց պատիժը, աղջիկներին ու հարսներին հոտմների մշտական անարգանքից... իսկ իրենց՝ չարունակական ծաղրից ու նվաստացման առտապանքից»...

Գադը մի երկու քայլ արավ և նորից կանգ առավ:

«Այո, Վաղեռն անչուշտ իմ վախճանը չի ների ինձ. նրան հաճո չէ, որ ես այահանջում եմ իմ քաղաքները, և նա, երևի մի օր—եթե ոչ հիմա, դուցե մի տարի հետո ցանկանա գալ պատերազմով նոր գավառներ ու քաղաքներ տիրելու... Ի՞նչ անել, ինչով պիտի դիմագրավել նրան... Դաշնակցե՞լ պարսից— երբե՛ք: Կարելի էր, եթե լիներին ազնիվ դրացիներ: Բայց բարեկամանալ Շապուհի՞ն— երբե՛ք: Ուրեմն ոչ մի հույս դրսի օգ-

նությո՞ն: Մե՛նք, մե՛նք ինքներս պիտի պահենք մեր երկիրը... մեր ոչ մե՛նք...

Եվ Պապը հիշեց նախարարներին ու դլուխն օրորեց նորից: Ընտյած տաս և ավելի օր առաջ նա սուրհանդակներ էր ուղարկել, սակայն տակավին ոչ մի լուր, պատրաստակամություն ոչ մի արտահայտություն. չէր տեսնում նրանց մեջ անհանգստության մի նշան, մտահոգություն երկրի, նրա սահմանների, նրա արժանապատվության նկատմամբ: Միայն արքունիքի հետ կապված նախարարներն էին, որ ապրում էին հայ երկրի վիճակով—սպարապետը, իշխան Համամարականը, բագրատունի Սմբատը և մի քանի այլ նախարարներ... իսկ մյուսները, մեծամասնությունը՝ ինչ է մտածում. մի՞թե չեն զգում հայոց աշխարհին սպառնացող վտանգը... Եվ Պապին թվում էր, որ ինքը մենակ է փոքրաթիվ նախարարների հետ, իսկ Բիզանդիան հիմա դավեր է նյութում իր սահմանների վրա, շար ծրագրներ է կազմում... նրան նույնիսկ թվում էր, թե հիմա իսկ՝ մուրթի մեջ բիզանդական բանակները լուռ ետևից շարժվում են դեպի հայոց սահմանը. թվում էր՝ Դարանաղիից, Սալերքից ու Կարինից շարժվում են նրանք դեպի Տայք, դեպի Տարոն ու դեպի Բասեն:

«Ի՞նչ պիտի անել այս ամենի առաջն առնելու համար,— ասում էր ինքն իրեն,— ի՞նչ պիտի անել... ոչ միայն հին քարտաքները ապատելու, այլև մյուսները նոր վտանգից փրկելու համար»... Այստեղ նա կարծես կարիք զգաց իր մտքերը մեկին հայտնելու, մեկի հետ խոսելու, ու հիշեց Երեմիային...

Եվ վոքր անց՝ երկար մի ձիանոցքով նա գնում էր դեպի Երեմիայի հարկատրաժինը:

Թեև ուշ էր, բայց Երեմիան, ըստ սովորության, զբաղված էր իր մատյանով: Գրում էր խորասուղ ուշադրությամբ, ձախ ձեռի մատներով մազապաթը սեղմած: Լսելով դռան բացվելը՝ ցրված հետ նայեց, ու Պապին նկատելով՝ վեր թռավ և գնաց ընդառաջ:

— Պատահե՞լ է ինչ, Պապ,— հարցրեց նա վախեցած ձայնով

— Ոչ, Երեմիա, բայց կարող է պատահել ավելին, քան կարծում ենք,— ասաց Պապը դանդաղ, բառերը հատ-հատ արտասանելով ու չեշտելով:

— — Դու հուզվա՞ծ ես, Պապ։

— Այո, ճշմարիտ գուշակեցիր. և՛ հուզված և՛ զայրացած... Ի՞նչ է լինելու հայ երկրի վիճակը, ի՞նչ են մտածում նրա նախարարները։ Զգիտեմ... Մտածում էի զարձյալ մեր քաղաքների մասին... Զգիտեմ, Երեմիա, ալևոր կարողանա՞նք երբեք եւս առնել զրանք և սրբել այս ամոթը...

— Դեռ ամեն ինչ կորած չէ, Պապ,— ասաւ Երեմիան ակնարկ հանդստացնելու նպատակով։— Դա, անշուշտ խարդախություն և զողություն էր հռոմեների կողմից, բայց պիտի չանանք, հարկավ, եւս առնել։

— Սակայն ի՞նչպես և ի՞նչ միջոցներով, Երեմիա, երբ այնքան անտարբեր են մեր նախարարները... Նրանք, որ պիտի լինեին մեր երկիրը շինողներն ու պահողները, նրանք դառնում են հայ երկրի ավերիչները... Ես նրանց կանչեցի իշխանաժողովի, բացատրեցի, թե ի՛նչ է անհրաժեշտ մեր երկրի ապահովության համար, բայց տրեցին մխրան ուժերի կարևորությունը, խնդրեցին օգնել ինձ՝ երկիրը խաղաղության մեջ պահելու. խնդրեցին զորք՝ արքունի մշտական բանակը զորացնելու... ուղարկեցի սուրհանդակները, որ սթափվեն գոնե այժմ. սակայն ոչ մի նշան անհանդստության, սակայն...—Պապը ձեռը թափ տվեց հուսահատ և լռեց։— Ինձ այնպես է թվում, Երեմիա, շարունակեց նա վոքը հետո,— որ պարսից վտանգն անցնելուց հետո, նրանք բոլորը հանգստացել են և չեն մտածում, որ Բիզանդիան նուընքան թշնամի է մեզ և ծարավի մեր արյան ու հողին, որքան և Պարսկաստանը։ Թվում է նրանցից յուրաքանչյուրը խորհում է իր կալվածի, իր դղյակի համար, բայց երբեք երկրի... նրանցից ոմանք լրենց խելքը, լրենց արյունը սիրով տալիս են օտարին, բայց երբեք լրենց երկրին... մի բարձի, մի պատվի համար նրանք կվաղեն Պարսկաստան ու Բիզանդիա, բայց պահել լրենց երկիրը, հոգալ նրա ամրողջության, նրա խաղաղության մասին—այս ըմբռնումը չունեն, Երեմիա... Զունե՛ն... Հիշո՞ւմ ես դրանցից քանիսը կամենում էին Հայաստան հետ անցնել պարսից հպատակության, ընդունել նրանց դիրքերը, որ զորք չտան մեր մշտական բանակին՝ երկիրը պահելու և պաշտպանելու... Եվ սա՛ է հայոց աշխարհի

բանիմաց դառը... Սա՞ է նախարարությունը հայոց...— Պապը նորից դլուխն օրորեց ու լռեց:— Նրանք չեն ըմբռնում, երևի, որ այս երկիրը կարող է և պիտի ապրի ամենքի միասին ջանքերով... Չե՛ն ըմբռնում... Աստ, Երեմիա, կարո՞ղ ենք արդյոք դոյությունն պահել և հարատևել այսպես...

— Երթ՛ք, Պապ, երթ՛ք,— ասավ Երեմիան, վարակվելով կրծեու Պապի տրամադրությունից:— Ցրիվ ծառերը փոթորկից ընկնում-ոչնչանում են, իսկ այն ծառերը, որ անտառ են կազմում և ճյուղերով հենվում իրար՝ ապրում են երկար...

— Բայց մեր նախարարները այսքան ժամանակ ահա չըմբռնեցին այդ,— նկատեց Պապը տրտնջոց:— Չեն ըմբռնում, որ այս երկիրը երկու հզոր հարևանների արանքում պահելու համար, նրանց երանը չընկնելու համար պետք է անտառ կազմել, ճյուղերով հենվել իրար կամ մագիլներ ու առամներ սրել... Մեր դժբախտությունն այն է, որ յուրաքանչյուրը խորհում է իր մասին, իր բույնի, իր դղյակի և կալվածի մասին: Թռչունի դիտակցությո՛ւն, Երեմիա, Թռչունի խելք և դիտակցությո՛ւն:

Եվ Պապը հուզված ու տրտնջոց նստեց վագրի մորթով ծածկված բազմոցին՝ ձեռը ճակատին դնելով: Մոմերի երերուն լուսերի տակ նրա դեմքն ավելի մռայլ էր թվում ու ջղաձիգ:

Երեմիան վեր կացավ և մոտեցավ նրան, կարծես մխիթարելու:

— Ճշմարիտ է, Պապ, խոհապուրիկ և անձնապաշտ են մեր նախարարներից շատերը: Չեն ըմբռնում, այո, որ իրենց բունեներն ու դղյակները մոխիր կդառնան, եթե չպահեն ամբողջը: Չեն տեսնում, այո, բացված երախները, որ պատրաստվում են կլանել մի օր իրենց, չեն նկատում պատրաստվող հեղեղները, որ պիտի դան-խորտակեն իրենց, եթե հիմա իսկ պատվար չկանգնենք նրանց դեմ... Բայց, Պապ, չկա ղրուիթյուն, որից չլինի մի ելք,— շարունակեց Երեմիան, հուզված ձայնը փոխելով մեղմ ու հանդարտ եղանակի:— Թվում է ինձ, Պապ, պետք է անել այնպես, ինչպես մոտոդրել էիր. դնալ և անձամբ յուրաքանչյուրին հասկացնել, ըմբռնել տալ, որ...

— Այդ է մնում, Երեմիա,— գլուխը բարձրացրեց Պապը:— Ես միշտ այն եմ խորհում, որ մեր նախարարներին պետք է

խելամտության հրավիրել կամ դավաճանավ երիտթյա կամ հրեղեն խոսքերով: Ես չեմ ցանկանա անել այդ հորս նման բռնի, սպառնալիքով ու ազդատուսմով. ես խորհում եմ, որ այդ պետք է անել համոզելով, խոսքով, որ հայ նախարարն ըմբռնի իր երկրի շահը և նրա ամբողջության համար չխնայի իր մարդիկն ու իր միջոցները: Եթե չօգնեց այս—այնժամ պետք է երկաթով հավաքացնել նրանց այդ ամենը... Եթե այդ էլ չօգնեց, Երեմիա, ուրեմն դատապարտվելու. ենք հավերժ ստրկության. դառնալու ենք ստրուկ և մուրացիկ օտար դռներում,—վերջացրեց Պապը՝ ձեռը ճակատին դնելով, կարծես այնտեղ այրվում էր մի բան և ուզում էր հանգցնել այն:

Այնուհետև նրանք խոսեցին մի ուժամ էլ, որից հետո Պապը մեկնեն գալով բազմոցից ու գնաց դեպի դուռը:

— Ուշ է արդեն, առավ նա:— Ես գնամ: Իսկ դու, Երեմիա, դրի՛ր, դրիր այս դժբախտ երկրի պատմությունը: Գրիր, թե որքան ծանր է նրա վիճակը և ո՛րքան տկարամիտ են նրա նախարարները,— չեշտեց նա դառնությամբ և ավելացրեց.—Ներող եղիր, Երեմիա. ես միշտ խանգարում եմ քո հանգիստը, աշխատանքը... Վաղն ևեթ պատրաստվենք մեկնելու...

Ու դուրս եկավ արագ: Երեմիան ուղեկցեց նրան երկար մի-ջանցքով, որի ծայրում մի աղոտ կանթեղ էր առկայծում արցունքոտ աչքի նման:

Երբ Պապը վերադարձավ ննջարան՝ աքլորներն արդեն կանչում էին Դվինի տարբեր կողմերում, կարծես միմյանց ինչ-որ կարևոր բան հաղորդելով:

— Վա՛ղը,— մտածեց նա թեթևացած:—Վաղը պետք է կարգադրել, որ պատրաստություն տեսնեն մեկնելու:

Եվ հետևյալ օրն իրոք նա հրաման տվեց հազարապետին ու թիկնապահ գնդի պետ Բաթ Սահառունուն՝ պատրաստ լինել մեկնելու, իսկ ավագանիներին և զորավարներին կանչեց հայտնելու, թե ո՛ւր և ի՛նչ նպատակով է հեռանում մայրաքաղաքից:

Ամբողջ ավագանիները նոր միայն հավաքվել էին պահասրահ, երբ սպարապետը ներս գալով հայտնեց, թե Հոմս Տերենոը չատ ժամանելով՝ ցանկանում է արքայի տեսությունը:

Պապը դեմքը խոժոռեց:

«Սկսել է նորից, երևի, նույն հավատխաղությունները կրկնելուց»—մտածեց նա, հիշելով, որ Տերենտը իր՝ Տարտոնից գալուց հետո հաճախ, ավելի հաճախ՝ քան առաջ, գալիս էր և չարունակ հավատախոսում, թե կատարվածը թյուրիմացություն է, կայսեր վերաբերմունքը հայտնի է իրեն, որ նա ցավում է և այլն։ «Այդ միայն դու ես ասում, կոմս,—ասում էր անգամ Պապը հուզված.— կատարվածը թյուրիմացություն չէ, դժբախտաբար։ Եթե այդ պես է և կայսրը ցավում է՝ ինչո՞ւ անձամբ չի գալիս ինձ»։ Կոմսը վիրավորվեց, բայց ոչինչ չասաց, և Պապին թվաց՝ նա այլևս չի գա։ Բայց ահա նորից...

— Եվ ի՞նչ է ուզում,— ասաց Պապը կարծես ինքն իրեն։— Նորից, երևի, հավատախոսություններ է բերել ինձ։

— Իմանալ է միճակի չեմ, արքա,— խոնարհում ասաց արտաքինապետը։— Հրամայեց՝ անմիջապես հայտնել իր ժամանումը։

— Հրաշքներ,— ասաց Պապը։— Թերևս դա միակ հոգումն է, որ ուզում է բարեկամ մնալ և մեզ հաչու պահել իր երկրի հետ,— ավելացրեց նա, և տեսնելով ավագանիներից ոմանք եղնում են հետևակաց, ձեռք բերձրացրեց.— Մնացեք, սխալ է։ Ես պատանիքներ չունեմ Տերենտի հետ...

Հարկ էր Պապն ավարտել խոսքը, երբ, ինչպես միշտ, ժամահ ու բարձրագլուխ, բայց բարեհամբույր դեմքի պահանջով (որ քիչ էր պատահում վերջերս) ներս մտավ Տերենտը՝ մանիշակագույն թիկնոցն ուսերին և պլանած մի մոգական ձեռին։

Գլուխ տալով նախ Թագավորին, ապա ավագանիներին՝ նա հարգանքով մոտեցավ Պապին և՝

— Ա՛հ, սիրելի, արքա,— ասավ նա ուրախ ձայնով, ոլորած մագաղաթը ճակատին տանելով ու Պապին մեկնելով։— Ուրախ եմ, արքա, որ իմ ենթադրությունը լիովին ճշտվեց։— Ահա՛ կայսեր նամակը...

Ավագանիները չարժվեցին տեղներում. հետաքրքրությունը յարեց բոլորին. ոմանք նայեցին իրար, ապա հայացքները սևեռեցին կայսեր նամակին, ինչպես մի հրաշքի։

Պապը, թեև կայսրից ակնածած, բայց մասամբ կարծես

Տերենտին չվիրավորելու համար, մասամբ և դուցե հետաքրքրությունից, նամակն առնելով՝ բայց արագ ոլորուն ու ժապավինակապ մաշտաղաթը, որ կնքված էր բիզանդական կայսեր ծանոթ կնիքով և գրված իրեն ծանոթ կարմիր թանաքով: Մաշտաղաթի ճակատը, ինչպես միշտ, զարդարված է ոսկի և կապույտ գրանդ մանրանկարով, որ ներկայացնում էր բիզանդական թագը, գահն ու գայլոնը:

Նամակը բանալով ու վերից-վար նայելով՝ տվեց արքայադուստրին:

— Կարդա՛, Երեմիա,— ասավ նա իաժ աչքերը փոքր ինչ կիսոցելով:

Ու մինչ Երեմիան կարդում էր՝ ամենքը շնչազուրկ նայում էին մերթ նրան, մերթ Պասլին, աչխատելով կարծես մի բան հասկանալ նրա դեմքի արտահայտությունից, և այդ ոչ թե նրա համար, որ չդիտեին հունարեն, այլ նրա համար, որ իմանան թագավորի տրամադրությունը: Պասլի դեմքի արտահայտությունը հետևում էր առանձնապես Տերենտը՝ գոհունակ ու մեղմ մի ժպիտով:

Իր նամակում կայսրը նախ ողջունում էր Պասլ թագավորին, ապա գրում էր, թե շատ ցավում է կատարվածի համար, և ամենը, ինչ տեղի էր ունեցել, համարում էր դժբախտ թյուրիմացություն: Ինդրում էր ապա—ևղբայրաբար ներել իրեն, որ հիվանդության և այլ անհետաձգելի գործերի պատճառով չէր կարողացել ընդունել նրան շուտ, լավ իրազեկ չլինելով, որ եղբայրակից Պասլ թագավորն շտապում է եղել... Մինչդեռ նա կարծել է, թե արմենների արքան, իր սիրելի բարեկամը հանդուգնով կուզեր հյուր մնալ բիզանդական մի քաղաքում, որը շատ հին լինելով՝ ունի և շատ տեսարժան վայրեր ու հուշարձանները... Վերջապես, գրում էր նաև, թե բիզանդական սովորության համաձայն, հյուրը կարող էր մնալ մի քանի ամիս, քանի որում չէին պակասի արժանի պատիվներն ու հարգանքը:

Վերջում կայսրը կրկին ցավ էր հայտնում կատարված թյուրիմացության համար և խնդրում էր հավատալ իր եղբայրական սիրուն ու բարեկամության:

Երբ նամակի ընթերցումն ավարտվեց՝ թեթևության հոգոց

ջվից ավազանինների շարքից. նրանց լարումը անցավ. նրանք շարժվեցին նստած տեղներից, դիրքները փոխեցին և ամանք հանդիստ մաքրեցին կոկորդները: Երևում էր՝ նամակը հաճո եղավ նրանց. այդ նկատելի էր նաև նրանց դեմքի, աչքերի արտահայտությունից: Թվում էր՝ ամենքն ուրախ են, որ անհարմարությունները և պատերազմի վտանգը վերանում են, քանի որ կայսրը մինչև իսկ ցավում է ընդունելությունն ուշացնելու համար և շարունակում է մնալ բարեկամ: Այդ էր կարդացվում կարծես թե Ջենոն Գնուսու, թե հաղարապետի, թե կամսարականի և թե մնացյալ մյուսների դեմքերին: Մեկը նրանցից նույնիսկ ասաց. «Հարկ նամակ է, արքա»... Բաթին էր միայն, որ մռայլ էր. նստել էր երեսը մի կողմը թեքած և թվում էր չէր ուզում մասնակցել ոչնչի:

Պատը նույնպես լուռ մնաց մի առժամ: Նա չգիտեր հավատա՞ կայսեր նամակի անկեղծության թե ոչ: Նա մի վայրկյան մտածեց, թե չի՞ սխալվել արդյոք Տարսոնից հեռանալով, նկատված կասկածելի փաստերը չափազանցնելով, դուցե և լսեոս հույնի խոսքը՝ դերության մասին— սուտ էր, կամ կասկածամիտ բաթին ստեղծեց մի այդպիսի կասկածելի մթնոլորտ... Սակայն անմիջապես էլ սթափվեց, հիշելով ընդունելության մանրամասնությունները և այն, որ կայսրը չէր հաճում անձամբ հայտնել, թե երբ պիտի ընդունի իրեն. այն, որ հետապնդում էին իրեն՝ իրրև Թշնամու և վերադարձի ճանապարհները բռնել էին զորքով, որի մի մասը նկավ մինչև Եփրատ՝ իրենց կալանելու կամ ոտոտակելու... Ու նամակը նրան թվաց արդարացման համար գրված: Բայց և այնպես նա ևս ուրախ եղավ նամակի համար.— եթե վաղեմն աշխատում է արդարանալ, և այդպես հանդամանորեն,— ուրեմն մեղավոր է...

Պատկին այս մտքերն ցրաղեցրին մինչև Եվկվայրկյան, որից հետո նա ելավ տեղից և նայից ուղիղ Տերենտին:

— Սակայն, կոմս, կայսրը ոչինչ չի գրում մեր քաղաքների մասին,— ասավ նա կարծես դիտավորյալ, մի բան իմանալու ցանկությամբ:

— Այո, արքա, առայժմ ոչինչ,— ասավ Տերենտը մի տե-

ոակ չփոթված թե անակնկալի եկած.— բայց հույս ունեմ, որ չուտով այդ ևս լինի... Անշուշտ՝ կլինի...

— Գիտես, հարդելի կոմս,— և Պապը սևեռուն նայեց Տերենտին,— որպեսզի հավատամ, թե այդ ամենը իրոք թյուրիմացություն է և անկեղծ, ազատեցեք մեր քաղաքները,— ասավ նա հայացքը չհեռացնելով Տերենտի հեզաբարո դեմքից, որի վրա մինչ այդ մի մկան անգամ չէր շարժվում, բայց Պապի խոսքերից հետո՝ նրա արտահայտությունը մեկեն փոխվեց զարմանքի, իսկ հանդարտ աչքերում կասկածներ չողացին:

— Քաղաքները՞,— երկարեց նա:—Դու իրավացի ես, արքա: Ես, իբրև Արմենիայի բարեկամ և նրա բարօրության նախանձախնդիր, իմ սեպուհ պարտքը պիտի համարեմ հիշեցնել կայսեր, որ քաղաքների հարցը մնում է տակավին չլուծված և Պապ արքայի վախազն է՝ չուտով տեսնել դրանք իր երկրին միացած, որ մենք բռնել ենք ռազմավարական նկատառումներով:

— Եվ պետք է այդ անել չուտ,— վրա բերավ Պապը,— այլապես կծագեն անհարմարություններ:— Պապն այստեղ մոտածեց, որ Տերենտին պետք է վախեցնել պարսից անունով և հարեց.— Գիտես, կոմս, պարսիկներն արդեն հեգնում են մեր բարեկամությունը, թե ահավասիկ հռոմեները բարեկամ են ձևանում հայերին և գրավել են նրանց քաղաքները: Մենք, ասում են, հայերի բարեկամության համար քաղաքներ կտայինք...

Ներկա ավազանիներն ու պալատականները նորից լարվեցին. մեկի դեմքը զարմանք էր արտահայտում, մյուսներինը հետաքրքրություն կամ անհարմարություն, իսկ Բաթը գլուխն այժմ դեպի Պապը՝ նայում էր հետաքրքրված, և նրա աչքերը փայլում էին: Այն ինչ Տերենտի բարակ հոնքերը վեր բարձրացան: Թագավորի ուշադրությունը նա մեկնեց այն մտքով, թե Պապն ուրեմն բանակցության մեջ է պարսից հետ: «Եթե այդպես չլիներ՝ նա այդպես չէր խոսի,— մտածում էր նա:— Իսկ այսպես պարզ խոսում է, որ չկարծեմ թե բանակցության մեջ է: Պարսիկներն ուրեմն սրան խոստանում են քաղաքներ»...

— Եթե Շապուհն այդչափ առատաձեռն է, արքա, հապա ինչո՞ւ է ձգտում մինչ նվաճել Արմենիան,— ժպտաց Տերենտը

քմծիծաղ։— Նրանք ցանկանում են պարզապես լարել մեր հարաբերությունները։ Բորբոքել թշնամություն...

— Եվ կայսրը, դժբախտաբար, առիթ է տալիս նրանց այդպես անելու,— ասաց Պապը, հայացքը դարձյալ չհեռացնելով Տերենոի դեմքից։

Տերենոը չշփոթվեց, բայց և իրեն իրավունք չհամարեց խոսել կայսեր մասին։

— Ես, սրբազան, իբրև Արմենիայի բարեկամ, վաղն իսկ կդրեմ կայսեր քո ցանկությունը քաղաքների մասին և պիտի կանամ՝ բարեհաճող լուծում տրվի այդ խնդրին,— ասաց նա և անմիջապես հրաժեշտ առավ կիրթ, վայելուչ շարժուձևերով, բյուզանդական արքունիքում ընդունված պատշաճ ձևերով. ձեռը բարձրացնելով ու ապա համեստ դեպի սիրտը տանելով՝ դվին թեթև խոնարհում արավ ու դնաց դեպի դուռը։

Նա, որ այցելություններից միշտ հեռանում էր գոհ ու ժպտուն, այս անգամ զարմացած էր. զարմանում էր, որ Պապը տակավին չէր հրաժարվել քաղաքներն ետ առանալու մտքից, ու ցավում էր, որ չէր հասկանում, թե այդ քաղաքներն ու գավառները պիտի դիջի Բիզանդիային՝ նրա արած օգնության դիմաց։ Միաժամանակ միջնարերդից իր տուն դնալիս մտածում էր, թե Պապն այդ քաղաքների համար կարող է մինչև իսկ անցնել պարսից կողմը, եթե արդեն չէ անցել։

«Ի՜նչ համառություն» մտածում էր նա. «Տարսոնն իսկ չի դիմաստացրել նրան... Պետք է ենթադրել, որ հավանորեն հարաբերություն է սկսել պարսից հետ... Ինչպես խմանալ այդ»— ասաց նա մտքում, ցավելով, որ վերջերս արմեն եպիսկոպոսները չեն այցելում իրեն։ Նա պատճառը չգիտեր, բայց ենթադրում էր, որ եպիսկոպոսները, երևի, դժգոհ են իրենից, որ ինքը չէր կատարել նրանց ցանկությունը— Պապը Տարսոնից դարձել էր ողջ և շարունակում էր միջամտել եկեղեցու գործերին։

«Ախտա՛ս. եթե եպիսկոպոսները այցելեին՝ կարելի էր խանգնալ Պապ Թագավորի թե՛ տրամադրությունը և թե նպատակները»։

Տուն գալով՝ Տերենոը տակավին զարմացած էր. նա մտածում էր, որ Պապի խոսքերի և վերաբերմունքի մեջ չկար առաջվան արտաքացությունն ու անմիջականությունը, այլ դրանց

փոխարինել է վերապահ մի բան: Ու նրան թվում էր, որ դա նշան է, թե Պապը ծածուկ մի խորհուրդ ունի Բիլանդիայի դեմ:

«Այո, նա փոխված է. դարձել է զուսպ, ծանկամիտ ու կորուկ,— մտածում էր Տերենտը.— «կհավատա՞մ այնժամ, երբ իմ քաղաքներն ազատեք»... Այսպես կարող է խոսել մեկը, որ արդեն ամուր է զգում իրեն և թիկունք ունի... Այո. հավանորեն անցել է կամ խորհում է անցնել պարսից կողմը, այլապես այդպես համարձակ չէր խոսի կայսեր մասին»— եզրակացրեց նա:

— Սակայն, թվում է, միայն կայսրից չէ դժգոհ, այլև ինձնից,— ասավ քիչ հետո Տերենտն ինքն իրեն:— Իմացե՞լ է մի բան, կասկածո՞ւմ է, թե պարզապես կամենում է հարաբերությունը խզել մեզ հետ և բարեկամանալ պարսից...

Եվ Տերենտը մտքում որոշեց ինչպես և լինի, մի կերպ, որևէ ձևով իմանալ Պապ Թագավորի որոշմադրությունը կամ այն, թե չի՞ անցել արդյոք նա պարսից կողմը՝ նրանց հետ դաշնակցելու:

Բայց մինչ նա կաներ այդ՝ մյուս օրն իմացավ, որ Պապը թեթև մի չքախմբով և թիկնապահ զորքով մեկնել է մայրաքաղաքից: Ասում էին, որ դնացել է երկրի աղեցիկ նախարարներին այցելելու: Նրա հետ մեկնել էր և Սմբատ սպասես բագրատունին:

«Ա՛ա, մտածեց Տերենտն այս լսելով:— Պապը դնացել է անշուշտ իր հին նպատակն իրագործելու. մեծ բանակ կազմելու համար նախարարներին միաբանելու և... երևի քաղաքներն առնելու... կամ գուցե պարսից կողմն անցնելու»...

— Պետք է շտապել, շտապել կանխել այդ ամենը,— ասավ նա մտքում, ու անմիջապես շտապեց ամառային իր նստավայրը, որ ինչպես ասել ենք, գտնվում էր Կարինի գավառում:

Ինչպես մի քիչ, այս անգամ էլ նրան ուղեկցում էր իր հույն թիկնապահների խումբը:

ԳԼՈՒԽ ՅՈՔԵՐՈՐԴ

Դեղեցիկ են Կարնո լեռնաղաչտերը ամառ ժամանակ իրենց թավիշ կանաչով, բուրավետ ծաղիկներով և մանավանդ բազմատեսակ հովիկ թռչուններով, որ անլռելի երգում են այնտեղ օդում, թիթեռում, և կամ լողում են լճակներում, ինչպես վայրի բադերը, սագերը և հպարտ ու վեհապանծ կարապները: Բայց լեռնաղաչտերից ավելի դեղեցիկ են Կարնո անտառները՝ իրենց զարավոր, երկնահաս ծառերով, այծյամներով ու եղջերուներով, որ մեծ խմբերով զալիս են դաշտերում արածելու կամ աղբյուրներից ջուր խմելու: Սակայն դաշտերից ու անտառներից ավելի դեղեցիկ են Կարնո լեռները՝ իրենց ջերմուկներով և պաղպաջուն առատաջուր աղբյուրներով, որ գոչով-շառաչով վազում են ցած և ներքևում իրար զալով՝ կազմում են հայոց աշխարհի երեք մեծ գետերը—Ճորոխ, Եփրատ ու Արաքս:

Եվ ահա այնտեղ, ուր Եփրատը Մաղկանց լեռներից իջնելով և Կարնո Շամբը կամ Մորը թրի պես կտրելով՝ շտապում է դեպի հարավ—այդտեղ մեծածառ ու մթին անտառի եզրին, կանաչատարած մի բարձրավանդակի վրա կանգնած էր պարսպապատ ու քարաշեն մի դղյակ, որ հեռվից նայողին, առաջին հայացքից թվում էր մռայլ ու ամայի: Սակայն դա երևութական էր: Արտաքս աչքն այնտեղ կարող էր տեսնել և՛ մարդկային հերպարանքներ և՛ աղավնիներ, որ ճերմակ ու մոխրագույն խմբերով կամ բարձրանում են այդտեղից կամ իջնում են ամրոցի առանձնավոր պատերին:

Դա Հայկունյաց իշխաններից հնօրյա ամրոցն էր, որ շատ աղետ ու փոթորիկ էր տեսել իր գոյության ընթացքում, ավերվել էր շատ անգամ, բայց և միշտ կառուցվել էր ու մնա-

ցել կանգնուն, մի ամրոց, որ և չատ հարգված էր հարևան նա-
խարարներից՝ իր տերերի հյուրասիրության շնորհիվ:

Զով երեկոնագեմ էր. Հալմունի ծեր Մանասպ իշխանը, ըստ
հեռաշյա իր սովորության, ամրոցի վերնահարկի քարե պատըշ-
գամում կանգնած՝ դիտում էր առջևը տարածվող դաշտը, ուր
իր դրան մարդիկ մի տեղ ցորեն էին հնձում, մի այլ տեղ խուր-
ձեր կապում կամ կապած խուրձերը կրում էին դեպի ամրոցը
ձիերով ու ջորիներով, որոնց միայն պլլուկն ու ոտներն էին
երևում—այնպես խուրձերը պատռում էին նրանց մարմինը: Իսկ
դաշտից վեր՝ բլուրներին և լեռնալանջերին արածում էին իշխա-
նի ոչխարի հոտերը և տավարի նախիրները ցրված, երբեմն
կարծես դեռևին կպած ու անշարժ:

Ծերունի իշխանը մերթ նայում էր հեռու դաշտում աշխա-
տողներին, մերթ բարձունքներում արածող իր անասուններին,
մերթ էլ ցած՝ ամրոցի ընդարձակ բակին, ուր մեծ ու փոքր
շենքեր էին՝ մառաններ, ամբարներ, ախոռներ, հավաքներ և
չգիտես էլ ինչեր ու ինչեր, որոնց առաջ աշխատում էին սպա-
սավոր տղաներ, աղջիկներ, կանայք՝ բոլորը թևքները քըշ-
ած, փեշերը հավաքած ու լարված եռանդով. ոմանք խոտ ու
հարդ էին կրում մարագները, ոմանք ցորեն ու կաթնամթերք
էին տանում ամբարներն ու մառաններ, ոմանք մի-մի դլուխ
փայտ դեպի թոնրատունն, մի քանիսը սագերին ու հավերին հա-
վաքել՝ գիշերվա կեր էին տալիս, մի այլ կողմ երկանքներ էին
աղում ծալապատիկ նստած պառավներ, իսկ մի վիթխարի
սպասավոր դուրգի չափ կացինը ձեռին փայտ էր ջարդում բա-
կի մեջտեղը մի այնպիսի եռանդով ու աղմուկով, որ փայտերը
կարծես հանցանք էին գործել և նա վրեժխնդիր էր լինում
նրանցից:

Այդ իշխանի տան դրեթե ամենօրյա տեսարանն էր, որ
կրկնվում էր անխախտ ծիսակատարության պես: Իշխանը վե-
րևից նայում էր այդ ամենին և հասկանում էր իր մարդկանց
ամեն մի շարժուձն ու արածը. դիտեր, որ փայտը պատրաստում
են վաղվա թոնրի համար, կաթնամթերքը մառան են տանում՝
աղելու, իսկ երկանքներով ալյուր էին աղում կամ ձավար:

Իշխանը նայում էր վերևից և մտածում ուրախությամբ,

որ նորից վերջապես, կարդի է ընկել իր տունն ու տնտեսությունը, որ երեք-չորս տարի առաջ, պատսից արշավանքի հետևանքով, քայքայվել էր խոպան և ինքը՝ ընտանիքով մնացել աստանդական. նա կորցրել էր ոչ միայն հոտերի, նախրի ու ձիերի մի մասը, այլև տան հարստության կեսը, շինականներից շատերին, որ ընկել էին կռվի ժամանակ: Այժմ արդեն իշխանը գոհ էր, որ տունը վերադարձնել է նորից. նրա երկար ճերմակ բեղերն անգամ, թվում էր, գոհունակություն են արտահայտում...

Եվ իշխանն, իրոք, հիմք չուներ դժգոհելու, որովհետև բոլոր որդիները ողջ-առողջ էին, հարսները, թոռները տանը, ու բոլորը հարգում, սիրում էին իրեն... Ամեն ինչ կարծես լավ էր, և իշխանը գանգատ չուներ ոչ մի բանից, երբեմն միայն մի անորոշ վիշտ էր ճմլում նրա սիրտը, մի անհարատև վիշտ, որ ծերանում է, ուժերը պակասում են և երկար չի կարող վայելել այն ամենը, ինչ կյանքը տվել է իրեն: Այդ ղժում էր նա մանավանդ այն ժամանակ, երբ նայում էր դեպի անտառ, ուր մի բլուրի վրա շարված էին իր նախնիների՝ Հավնունի իշխանների դերեզմանները: Ամեն անգամ, երբ նա ճաշից առաջ դուրս էր ելնում այս քարե պատշգամբը՝ հանգստանալու և նայում էր նախնիների հիմնադրերին՝ այդ տխուր մտքերը միշտ պաշարում էին նրան: Սակայն միշտ էլ չքանում էին դրանք, երբ նայում էր ծփուն, ալեծածան դաշտին, ուր աշխատում էին իր մարդիկ, կամ դաշտերին ու սարալանջերին, ուր արածում էին իր խաշներն ու նախիրները:

Այժմ էլ, երբ նա դերեզմաններին նայելուց հետո՝ խոր մի հոգոց հանելով՝ երեսը շրջեց դեպի դաշտը—նա ճանապարհի հեռվում նկատեց մի մեծ առպախումբ, որ ամպակուտակ վոշի բարձրացրած գալիս էր դեպի ամրոցը:

Այդ տեսնելով՝ նա, հայացքը առանց եկողներից կտրելու, բացականչեց զարմացած.

— Մեզ մոտ մարդիկ են գալիս, դստրիկ սիրելի,— դիմեց նա իր դստեր, որ նստած էր ներսը՝ իշխանի օթևանում:

Դուստրը, մոտ տասութ տարեկան մի դեռատի, վազեց

պատշգամ՝ իր մետաքս հագուստի ոսկի ու արծաթ ղարդերը ղրնգացնելով։

— Ո՞վքեր կարող են լինել, հայր, այսպես անակնկալ, այսպես անժամանակ,— հևաց իշխանադուստրը հայացքը լարելով հեռուն։

— Կամ հյուրեր, դստրիկս, կամ...

Եվ իշխանը հապաղեց. թվաց չուզեց ասել այն, ինչ պղտմ էր կամ մտածում. և դուստրը հարցրեց վախեցած.

— Կամ թշնամինե՞ր, հայր...

— Ես չասի «թշնամիներ», դստրիկս,— դիտեց ծերունին հանգստացնող ձայնով։— Բայց եթե հյուրեր են՝ այդքան շատ չպիտի լինեն։

— Ուրեմն՝ եթե հյուրեր չեն, թշնամիներ են, հայր,—համառ չարունակեց իշխանադուստրը։— Եվ ինչո՞ւ պետք է թշնամիներ լինեն, հայր, և ո՞րտեղից...

Դստեր հարցումին պատասխանելու փոխարեն՝

— Կանչիր սենեկապետին, դստրիկս,— ասավ։— Կանչիր շուտ։

Ծերունու խոսքերի մեջ կար և՛ հուզմունք և՛ տարակուսանք, իսկ երբ պատշգամ եկավ սենեկապետը, հիսունի մոտ մի մարդ, որ իշխանի թիկնապահներից մեկն էր, նա կարգադրեց.

— Օրոնտ, հավաքիր ամրոցի բոլոր պահակներին և թող պատրաստ լինեն։ Մեզ մոտ բազմամարդ մի ասպահում է պալիս, որ անհայտ է ո՛վքեր են։

Օրոնտը ձեռը ճակատին դնելով՝ նայեց եկողներին.

— Սակայն շատ խաղաղ են գալիս, տեր իմ։

— Այո, խաղաղ,— ասավ ծերունին կասկածով։—Բայց լավ է՝ անմիջապես ձիավոր ուղարկիր ընդառաջ։ Թող իմանա ո՛վքեր են և լուր բերի մեզ։ Եթե հյուրեր են՝ պետք է դիմավորել պատշաճ ոե վայել. իսկ եթե...—իշխանը չուզեց շարունակել և միայն ասավ.— Այնուհանդերձ՝ երկու դեպքումն էլ պետք է պատրաստ լինել։ Գնա և կարգադրիր շուտափույթ։

— Պատրաստ եմ, տեր։

Երբ սենեկապետը գնաց ուսը մեկը ցածր, մյուսը բարձր, որ անրակը կոտրելու հետևանք էր, իշխանը չարունակեց նայել

Եկողներին ավելի սևեռուն ու հետաքրքրված, ըստ որում նրա երկար ճերմակ բեխերը մերթընդմերթ ցնցվում էին դարձյալ՝ չիմանս հուզումից թե ինքզինքը խոսելուց: Նրա հետ պատշգամբ մի ծայրում, նրա կողքին կանգնած նայում էր և նրա նորատի դուստրը՝ կրծքի բուռն հևքով, համակ հետաքրքրություն դարձած:

Եկողները, երեք, չատվոր էին, և բոլորը ճիպոտը ու գլխաված: Մայրամուտը դիմող արևի թեք ճառագայթները ցոլցլում ու խաղում էին նրանց սաղավարտների, նիզակների և կողքերից կախած սրերի վրա. այդ էր պատճառը, որ որոշակի երևում էին թե մարդիկ թե ձիերը, որ առաջ էին գալիս կարծես գլուխները խաղացնելով և ոտները լրաբար խառնած: Իսկ նրանց բարձրացրած փոշին ոսկեզօծվում էր նրանց գլխավերև ու նրանց հետև: Բայց տարօրինակն այն էր, որ գալիս էին շատ դանդաղ ու հանգիստ լրենց շուրջը նայելով. հանդգնանք, որ հատուկ չէր կարող լինել ոչ բարեկամի:

«Գուցե և կարինի կողմից եկող, ճանապարհը մոլորած հոռոմներ են»—մտածեց Իշխանը:

Սակայն նրա մտածումները ընդհատեց մի հեծյալ, որ այդ իսկ վայրկյանին ամրոցի դարպասից դուրս գալով՝ ճիպոտը պնդեց եկողներին ընդառաջ: Ծերունի Իշխանն աչքերով հետևեց իր հեծյալին ու եկողներին, աշխատելով հասկանալ, թե ինչ փոխաբերմունք ցույց կտան եկողները նրան: Բայց որքան էլ հետևեց՝ չնկատեց որևէ փոփոխություն եկողների մեջ ի տես իր ճիպոտի. նրանք առաջանում էին դարձյալ հանգիստ ու անշտապ... Բայց ամրոցի հեծյալը բավական տեղ գնալուց հետո՝ հանկարծ նո դարձավ սրարշավ, մի այնպիսի արագությամբ՝ կարելի էր կարծել ահաբեկ է, աշխատում է ժամ առաջ հասնել ամրոց՝ վերահաս աղետը գուժելու:

— «Ովքե՞ր են, տեր աստված» մտածում էր Իշխանը դարձյալ զարմացած: Դեպքն արտասովոր էր այնքան, որ նա չէր կարողանում սառնասիրտ, անտարբեր մնալ մինչև մի քան կպարզվեր, ուստի և երբ իր ճիպոտը սպասավորը մոտենում էր ամրոցին՝ Իշխանն ուզեց կանչել սենեկապետին, որ հեծյալին ան-

մինչ ապես բերի իր մոտ: Սակայն մինչև նրան կանչելը՝ սենեկապետն ինքն եկավ հետապատ վազելով:

— Տեր իշխան, թագավորը՛... թագավորը ժամանում է մեր ամրոցը...

— Թագավո՞րը,— զարնատվեց իշխանը, և նրա ճերմակ քեխերը ցնցվեցին. ոչ թե դողացին, այլ պարզապես ցնցվեցին ու կարծես կախ ընկան նրա ծնոտներին ի վար:— Ձե՞ս սխալվում:

— Ոչ, տեր իմ. Դանիելը՝ պահակը լուր բերեց. թագավորը ժամանում է, ասում է, իր հքախմբով և, կարծյոք թիկնապահ դնդով:

Իշխանը նորից նայեց եկողներին և նոր միայն կարծես հասկացավ, թե ինչո՛ւ են բազմամարդ, ինչո՛ւ են զալիս անշտապ ու հանդիսավոր: Եվ նա մեկեն պոկվեց տեղից՝ պատշգամից, ներս վազեց ու հրամայեց.

— Կարդի՛ բերել ամրոցը... Դրոշներ կախե՛լ... Գորդիր վռնե՛լ մինչև պարսպաշուրջը...

Եվ սենեկապետը այն է վազել-հեռացել էր՝ ուսի մեկը բարձր, մյուսը ցածր, երբ իշխանը կանչեց նորից.

— Օրոնտ, հազուստներս. առնական հագուստներս, նո՛ր...

Իսկ դու, դստրիկ, հայտնիր մորդ, հարսներին, եղբայրներիդ... Հագնվեցե՛ք բոլորդ: Ես գնամ ընդառաջ...

Ու փոքր անց՝ նա իր որդիների ու թիկնապահների գլուխ անցած դուրս եկավ ամրոցից թագավորին դիմավորելու: Ծերունին հուզված էր. չգիտեր և չէր հասկանում ինչո՛ւ է թագավորը գալիս. բայց միաժամանակ և ուրախ էր, անչափ ուրախ, որ արժանանում է մի այնպիսի պատվի, որին չէր արժանացել երբեք, ոչ մի թագավորի կողմից: Այս հանգամանքը նրա սիրտը լցնում էր խանդաղատանքով, և նա խթանում-խրախուսում էր ձիուն, որ նա արագ սլանա, որպեսզի որքան կարելի է հեռու դիմավորի թագավորին: Որդիներն ու թիկնապահները հապիլ էին հառնում ծերունու հետից: Որքան քիչ տարածություն էր մնում իր և եկողների միջև՝ այնքան ավելանում էր նրա հուզումը, իսկ երբ տեսավ, վերջապես, ճանաչեց երիտասարդ թագավորին իր ձքախմբի առջև՝ մի թիկնոց ուսերին, թևին

մի սպասավոր ղրած՝ արևից պաշտպանվելու համար—նրա աչքերում արցունքներ երևացին. մեկ ցանկություն ունեցավ իմանալ նժույգից և ուրախությունից ճերմակ գլուխը խոնարհել մինչև ճանապարհների փոշին, սակայն ինչ-որ բան մղեց նրան առաջ, և նա շարունակեց իր ընթացքը, և թիկնապահներն ու որդիները նրա հետից:

Վերջապես, երբ այնքան մոտացան իրար, որ իշխանը ճանաչեց և չքախմբի անդամներին՝ նա արտորանքով, որքան թույլ էր տալիս իր տարիքը, իջավ նժույգից, ճերմակ գլուխը բաց արավ ու խոնարհեց երկար (նրա օրինակին հետևեցին որդիները ու թիկնապահները), ապա ձեռը բարձրացնելով՝ ասավ ղպացված.

— Բարի գալո՛ւստ իմ թագավորին... Ես՝ քո ծառան, արքա... իմ ամրոցը և կալվածները քոնն են, արքա...

— Շնորհակալ եմ, իշխան,— բաշը սև ոսկեզույն նժույգի վրա մոռեցավ նրան թագավորը և բարևեց, սպիտակ ձեռը մեկնելով:— Ես մի գիշեր միայն պիտի հյուր լինեմ քեզ, իշխան: Հնծիր նժույգդ և առաջնորդիր մեզ քո հյուրընկալ դղյակը:

Ուրախությունից չվոթված իշխանը չգիտեր ձի նստի թե չքախմբի ծանոթ անդամներին բարևի: Վերջապես, թիկնապահներից մեկ-երկուսի օգնությամբ նա ձի նստեց և գնաց թագավորի կողքից, չիմանալով ի՛նչ ասել կամ ի՛նչ հարցնել: Իսկ նա կուզեր իմանալ ի՛նչն է արդյոք թագավորին բերել իր մոտ այդքան հեռվից: Ինչ էլ լիներ սակայն, նրա երկար ճերմակ բեխերը գոհունակություն էին արտահայտում:

— Ես երանիկ և երջանիկ եմ, արքա,— կրկնում էր նա չուտ-չուտ, ինքը լցված մարդու նման, որ ուրիշ բան չի կարողանում ասել:

Ու վոքր հետո նրանք արդեն ամրոցումն էին:

Երբ թագավորը մտավ ամրոցի պարիսպներից ներս— հավնուն դինվորներն ու դարպասի մարդիկ աչ և ձախ կողմը շարք կազմած խաչակնքեցին երեսները և խոնարհումներ արին, հետո հանկարծ մեկը բացականչեց.

— Ապրի՛ թագավորը...

Ամենքը կարծես դրան էին սպասում. բակն ու օդը թնդացրին բացականչություններով, որից հետո իշխան Մանասպը իր բարձր հյուրին, նրա չքախմբի անդամներին (որոնց մեջ էին Բաթը, արքայադպիրը, Գնել Անձևացին և երիտասարդ Զյունականը, որ նրանց միացել էր հոր կալվածում) դորգերի վրայով, որ փռված էին պարսպադռնից մինչև ամրոցի վերնահարկը, առաջնորդեց դղյակի ամենաչքեղ հարկաբաժինը, որ նոր մեյան զարդարել էին ընտիր կարասիներով, օթոցներով, բարձերով, աշտանակներով և սես-սես փռվածքներով, կերպաս ու բեհեզ վարագույրներով: Այստեղ, այդ հարկաբաժնի մուտքի առաջ թագավորին դիմավորեց Թուխ Հաշնված, բայց կուրծքն ու թևքերը արծաթ ու ոսկի զարդերով եղուզած պատասխանուհին՝ իր հինգ չքեղ հագնված հարսների ու նորատի դստեր հետ, որ առանձնապես ճառագայթում էր ուրախությունից. նա առաջին անգամն էր թագավոր տեսնում, և ուզում էր որ թագավորը նայի իրեն, տեսնի իր գեղեցկությունն ու զարդերը:

— Արևշատություն արքային,— ասավ պատասխանուհին՝ ձեռները կրծքին խաչելով:—Իմ գերդաստանը երջանիկ է քո տեսությանը արժանանալու:

Իսկ երբ ամենքը գնացին ներս՝ ծեփունի իշխանն համակակնածանքի ու հարգանք կտրած՝ դառնում էր թագավորի հուրջը, կամ գնում էր դուրս, նորից վազում ներս, ու դարձյալ կարծես խոսք չէր գտնում արտահայտելու իր հրճվանքը, որ թագավորը այդպիսի մեծ պատիվ է արել իրեն, այցելելով իր ամրոցը, որ դիշերելու է իր հարկի տակ: Ու պարզապես չգիտեր թագավորի մոտ նստի, թե կարդալ-գրություններ անի պատվի, ընթրիքի համար. կամ՝ մերթ մոտածում էր, թե պետք է մենակ թողնել նրան, որ հանգիստ առնի ճանապարհի հոգնությունից, մերթ գտնում էր, թե հետևանալը և թագավորին մենակ թողնելը՝ կլիներ մեծագույն անքաղաքավարություն և անպատվություն, ուստի և, ինչպես ճանապարհին, կրկնում՝ էր շփոթված.

— Ես, արքա, երանիկ և երջանիկ եմ, որ պատիվ ես արել ծերունուս քո արքայական այցելությամբ: Իմ կայքը, գույքը քոնն են: Հրամայիր՝ ինչ կցանկաս...

Երբ մի քանի անդամ նա կրկնեց այդ խոսքերը՝ թագավորը ժպտաց.

— Շնորհակալություն, իշխան, քո պատրաստակամության համար: Դու շատ բարի ես: Այդ ամենը քոնն է, քոնն էլ պիտի մնա: Այդ բոլորից ինձ կտաս միայն մի հազար մարդ, արքունի բանակի համար:

Իշխանը դրեթե վեր թռավ զարմանքից:

— Նո՛ր պատերազմ, արքա...

— Ոչ, իշխան սիրելի: Առայժմ պատերազմ չկա,— ասավ Պապը:— Բայց կարող է լինել: Պատրաստ լինենք մեր երկրի ապահովության և խաղաղության համար,— շարունակեց թագավորը դանդաղորեն, կարծես խուսափելով պարզել իր միտքը, ինչ որ չէր կրկնում ամեն իշխանի հետ քրքիր, ազատ հայացքից:

— Պատրաստ լինելն իմաստուն բան է, արքա: Վտանգը կանխվում է զգուշությամբ,— խոսեց իշխանը զգացված:— Ոչ միայն հազար մարդ, իմ ամբողջ զինական ուժը, իմ ողջ ռազմն ու արծաթը քեզ, մեր երկրի ապահովության համար: Պատրաստ եմ՝ ինչ հրամայես, արքա:

— Շնորհակալություն, իշխան,— ասավ Պապը:— Այդ պահին է բերում քեզ: Իսկ քո հարևան նախարարները, հետաքրքրում է ինձ, ի վիճակի կլինե՞ն նույնքան մարդ տալու:

— Անկասկած եմ, արքա: Մանավանդ դու անձամբ գնաս նրանց ղեկավարները, և նրանք մերժե՞ն—երբե՛ք: Բոլորը՝ թե Վահևունի իշխանները, թե Ծոփաց տերերը, թե Տրունիները, վստահ եմ, կարող են նույնքան մարդ տալ, որքան ես, եթե ոչ ավելի: Եթե դու հրամայես՝ նրանք լրջենց զնդերով մեկտ պատրաստ կլինեն քեզ համար: Դու գնաս նրանց ամրոցը և քեզ մերժե՞ն: Երբե՛ք...

— Իսկ ամրություններ, իշխան, շա՞տ կան այս կողմերում,—հարցրեց Պապը:

—«Այս ինչո՞ւ է հարցնում» մտածեց Ծերունին, բայց և անմիջապես պատասխանեց պատրաստակամ:

— Դաշտերում, արքա, չկան: Բայց լեռնակողերին և ձորաքերաններում կան բավական: Ծուրաքանչյուր նախարար և իշխան իր ղեկավի հետ ունի և ամրոց, որ ի դեպս, վտանգի՝

պահում է միշտ պատրաստ վիճակում: Ճշմարիտ է, պարսից աքշամանքից վնասվեցին սակավ մի, բայց ամենքը նորոգեցին կրկին:

— Բարի՛, բարի,— կրկնեց Թագավորը մտախոհ:

Թագավորի այդ հարցումները և մտահոգությունը այնքան խորհրդավոր թվացին ծեր Հավնունուն, որ նա չկարողացավ պահել իր հետաքրքրությունը:

— Իսկ այդ ինչո՞ւ է հարցնում իմ արքան,— ասավ նա անհամարձակ ու խոնարհությամբ, որ ուզում է Թագավորի դաղտնիքն իմանալ:

— Ծածուկ ոչինչ չկա, իշխան,— ասավ Պապը պարզ:— Մանավանդ քեզնից ծածկելու առիթ չունեմ: Մենք, իշխան, պետք է պատրաստ լինենք ամեն վտանգի և անակնկալի,— շարունակեց Պապը մտերմաբար, և այնուհետև խոսակցության ընթացքում պարզեց իր այցելության նպատակը: Այն, ինչ ինքն ասել և առաջարկել էր իշխանաժողովին— ուզում է իրագործել հիմա: Բավական է հայոց աշխարհը մնա անպաշտպան, երբ այնքան նախախարներ ունի զորավոր: Ցրիվ ուժերը պետք է միացնել և հարկ եղած դեպքում՝ դեմ դնել թշնամիներին, որ կամենում են մի՛շտ իրենց կամքը, օրենքը թելադրել մեզ և կամ ուզում են իրենց մագիլներով խեղդել մեզ, թե ինչո՛ւ ցանկանում ենք մեր կյանքը, մեր կամքը և մեր օրենքն ունենալ:

— Քանի որ կարող ենք լինել, իշխան, ազատ, անկաշկանդ, ինչո՞ւ դառնանք ստրուկ: Ապրենք մեր լեռների վրա ազատ՝ մեր կյանքով, մեր կամքով ու մեր օրենքով:

Լսելով՝ ծեր իշխանը հրճվում էր, և չէր համարձակվում անգամ չունչ քաշել, որ չընդհատի նրան:

Մինչև Հավնունու դղյակը գալը՝ Թագավորը եղել էր Բասենի Մանակ իշխանի մոտ, եղել էր Զյունական նախարարի կալվածում և Պալունիների ամրոցում: Եղել էր նաև Բագավանում, ուր տարել էր նրան Սմբատ սպասատը, որ առայժմ սիրտ մնար այդտեղ, ապա մեկներ Վան՝ ռազմական իր պաշտոնակատարը:

Երբ Հավնունին իմացավ, որ ամեն տեղ Թագավորին ընդառաջել են սիրով և խոստացել են կատարել նրա ցանկությունը

—Ձեր իշխանը վազակաց նորից. նրա աչքերում արցունքներ երևացին, որոնցից մեկ-երկուսը ցլորվեցին դեպի նրա երկար ճերմակ բեխերը, որ դողում էին այդ ժամանակ:

— Ես երջանիկ եմ, արքա, ինձ արած պատվի համար,— ասաց նա հեկեկանքը հազիվ զսպելով:—Ձո ձեռնարկը սիրելի է ինձ, քո նպատակը համբուրելի՛... Հավիտենյաց այս հին դղյակը դեռ երբեք չէր արժանացել արքայի այցելության: Ես երջանիկ եմ, և պատրաստ եմեն հրամանիդ,— ավելացրեց նա խոնարհում անելով, որի ժամանակ նրա երկար ու ճերմակ բեխերը բաժանվեցին այտերից ու կախվեցին վզի կեռիքների պես:

Այդ միջոցին հանկարծ սրահի դուռը ետ գնաց և նորից բևնաց պատառ իշխանուհին՝ իր վեհ կեցվածքով, նույն թուխ մետաքս հագուստներով և կրծքի ու թևքերի նույն ոսկի արծաթ զարդերով: Հանդարտ առաջ գալով՝ նա կանգնեց Թագավորի դիմաց և ձեռները կրծքին դրած խոնարհում արավ թեթև:

— Արքա, ճանապարհի հոգնությունից հետո՝ չնորհ արա ընդունել քո աղախնի պատրաստած սեղանից,— ասաց նա իրրև տանտերուհի, ընդունված կարգի համաձայն, հյուրին հրավիրելով հացի:

— Բարի է, իշխանուհի, քո ցանկությունը,— ասաց Պապը և այն է՝ ուղում էր նստել, երբ ներս մտավ Երեմիան տարակուսած ու զարմացած տեսքով:

— Արքա, հայտնեցին, որ ժամանել է կոմս Տերենտը և այժմ սպրոցի առջև կանգնած քո տեսությունն է ցանկանում:

Տերենտը՞... Ներկաները զարմացած նայեցին Պապին և Երեմիային:

— Տերե՞նտը,— բղավեց ավելի զարմացավ Պապը,— և ո՞րտեղից իմացավ, որ ես այստեղ եմ:

Երեմիան ուսերն ու հոնքերը վեր քաշեց, որ նշանակում էր, թե ինքն էլ զարմացած է:

— Դժվարին է իմանալ, արքա,— ասավ նա:—Ի՞նչ կհրամայես:

— Բայց ի՞նչն է արդյոք նրան բերել այստեղ,— շարունա-

կեց Պապը իր դժկրկի հարցին պատասխանելու փոխարեն, կարծես ինքն իրեն:

— Իմացել է, երևի, այսքան մոտ ես իր նստավայրին, սկսել է նորից հավաստիացումներ անելու,— հեգնեց Բաթը:

— Հազիվ թե, Բաթ:— Թվում է՝ ավելի արտակարգ մի բան է նրան բերել այստեղ,— ասաց Պապը:— Ընդունել չեմ ժլատող: Հրավիրի՛ր. երեմիա:

Թագավորի մոտ եղած մարդիկ դուրս եկան՝ ոմանք, լինչպես պատած իշխանուհին ու որդիները նրա՝ համար, որ չխանգարեն ընդունելությունը, մյուսները զնացին անակնկալ հյուրին ընդառաջ, բացի Բաթից, որ քաշվեց սրահի մի անկյունը:

Եվ չտևեց մի քանի վայրկյան՝ ներս մտավ Տերենտը՝ մի մոտազուլն թիկնոց ուսերին և, ինչպես միշտ, ձիզ մարմնով ու դեմքի սիրալիր արտահայտությամբ: Նա իր թիկնապահներին թողել էր դուրսը. բայց նրա հետ, նրան ուղեկցելով, ներս մտան Երեմիան, իշխան Հալինունին, երիտասարդ Զյունականն ու Գնել Ամեհացին, որ իր դունդը տեղավորելուց հետո հետաքրքրությունից միացել էր նրանց:

Ներս մտնելով՝ Տերենտն, ըստ սովորության, նախ ձեռը բարձրացրեց և թեթև խոնարհեց գլուխը:

— Ողջո՛ւյն, արքա,— ասաց նա հարդալիր ձայնով:— Ներիր, իմ այս անպատեհ այցելությունը, որ, հավանորեն, պիտի զարմացնի քեզ, թե ո՞րտեղից և ինչպես հայտնվեցի:

— Ջես սխալվում, կոմս. ինձ համար, այո, անսպասելի է այս այցելությունը,— հարեց Թագավորը:

— Այո, ինձ այդպես էլ թվում էր, արքա,— ժպտաց Տերենտը զուսպ,— դրում էի, որ իմ երևումը շատ օտարոտի պետի թվա առաջին պահ: Սակայն, արքա, չէի կարող չայցելել քեզ մի այնպիսի ուրախառիթ հանդամանքից հետո...

— Եվ ո՞րն է այդ հանդամանքը, կոմս,— հարցրեց Պապը հետաքրքրված, հրավիրելով հյուրին նստել:

— Իմանալով այսքան մոտիկ ես, արքա,— շարունակեց Տերենտը՝ Թագավորի դիմաց մի օթոցի նստելով,—փութացի ուրախացնել թե քեզ և թե քո չքախմբի պատվարժան անդամներին,

—և Տերենտը նայեց սրահում դանվողներին։—Իմանալով եկել ես կարինի դավառը և դանվում ես Պալունի իշխանների տանը՝ ես նախ գնացել ներանց ղղյակը, սակայն քեզ այնտեղ չգտնելով՝ իմացա հասնել ես պատվել հարգո իշխանին,— Տերենտը ձեռը հարդանքով մեկնեց դեպի Համլունին,—ուստի և չուսպեցի գալ և ուրախացնել քեզ և քո շքախմբի անդամներին,— կրկնեց Տերենտը հեղաժպիտ։

— Բարի է, կոմս,— ասավ Պապը։— Բայց ո՞րն է այդ ուրախությունը։

— Իմ Օդոստոս կայսեր հրամանը, սրբա,— Տերենտը նորից դլուխ իջեցրեց, որ սակայն վերաբերում էր իր կայսեր։— Մի հրաման, որի դորությամբ բիզանդական դորքերը հեռանում են քո դավառներից ու քաղաքներից, մի բան, որ այնպես ցանկանում էիր դու, քո իշխանները, նաև ես՝ նվաստս։ Հիմա արդեն ամեն ինչ լուծված է քո ցանկության համաձայն...

Դարձյալ ինչ-որ խոսքեր ասավ Տերենտը, բայց Պապը նրան կարծես չէր լսում այլևս։ Ուրախությունից նրա խոշոր խաժ աչքերը բոցավառվեցին, դեմքը լուսավորվեց հանկարծ. այդ մայրկյանին նա այնպես էր դգում իրեն, ասես մի ահագին, ծնշող բեռ ընկավ կրծքից։ Կատարվել էր նրա իղձն ու բաղձանքը... Բայց այդ ուրախությունը տևեց՝ մի վայրկյան միայն, և նա մոռացավ, թե ի՛նչն է արդյոք հարկադրել Վաղեսին այդ կարգադրությունն անելու. արդյոք այն, որ մոռացել է, թե ինքը կանցնի պարսից կողմը, թե դգացել է իր անարդարությունը և ուղում է քավել իր մեղքը... Ինչ էլ լինի՝ թվում էր Վաղեսը ցանկանում է, իրոք, հաշտվել... Ուրեմն էլ պատերազմ, արյունհեղություն չէ լինելու... Ուրախությունից Պապը մինչև իսկ վեր կացավ, շտկվեց և, ձեռները տարածելով, ուղեց դրկել Տերենտին, ինչպես կարոտած մի մարդու, բայց բռնեց միայն նրա ձեռները և թոթվեց ջերմորեն։

— Ուրախ եմ, կոմս, ուրախ եմ,— կրկնեց Պապը։— Դու բարի լուր բերիր ինձ։ Իսկ ե՞րբ, ե՞րբ ես ստացել, կոմս, այդ հրամանը,— հարցրեց նա։

— Երկու օր առաջ, սրբա, և իմանալով որ այստեղ մոտ ես, չուսպեցի հայտնել անձամբ,— ասավ Տերենտը իր կիրթ

ձայնով։— Միաժամանակ, արքա, իմ Օգոստոս կայսրը իր եղբայրական ողջույնն է հղում քեզ։

— Շնորհակալություն Օգոստոս վաղես կայսեր,— հարցց Պաղը մեքենայորեն, ակամա, հիշելով մի վայրկյան կատարված–անցածը, բայց իսկույն էլ մոռացավ ու ժպտաց։—Այդ ինձ ուրախացնում է մեծապես։ Դա ավելի կամրապնդի մեր եղբայրության բարեկամությունը, կոմս, ավելի՛։

— Անշուշտ եմ, արքա,—դվխով արավ կոմսը։— Անշուշտ եմ։

— Ուրեմն ե՞րբ է հեռանալու ձեր զորքը,— հետաքրքրվեց Պաղը։

— Շուտով, արքա։ Եվ պիտի աշխատեմ շուտ լինի, որպեսզի մեկ–երկու շաբթից ձեր կայազորները փոխարինեն մերին...

Պաղը հիացած էր. նա հափշտակված, հաղթանակ տանողի նման, ավելի շուտ պատանու խանդավառությամբ նայում էր մերթ Տերենտին, մերթ սրտհուռ գտնվող իր զբաղմունքի անդամներին, ծեր Հալինոսի իշխանին, և նրան թվում էր, անգամ նկատում էր, որ նրանք նույնպես ուրախ են, նույնպես մտածում են, երևի, որ էլ պատերազմ չի լինի, որ թշնամությունը վերանում է առանց արյունհեղության։

— Այդպես, կոմս, շատ ուրախ եմ,— ասավ Պաղը նորից նստելով և հյուրին նույնպես հրավիրելով նստել։— Քո բերած լուրը իրոք ուրախություն է։ Ուրիշ ի՞նչ հաճելի բան կասեիր, կոմս։

— Ուրիշ, արքա...— ասավ Տերենտը դիք նստելով։— Ես միայն մի բան կցանկանայի, սակայն չգիտեմ որքան հաճո կլինի։

— Ասա, կոմս։ Ես կլսեմ սիրով։

— Կխնդրեի, արքա, որ ինչպես այցելում ես ահա քո հարգոյապատիվ նախարարներին, բարություն արա այցելել և իմ՝ պինեմրաականիս համեստ օթևանը, երբ ձյաքան մոտ ես։

Պաղն իսկույն չկմացավ ինչ ասել. դա չէր մտնում նրա չրջագայության ծրագրի մեջ և ակամա նայեց սրտհուռ գտնվողներին ու ասավ.

— Սիրո՛վ, կոմս, սիրո՛վ: Դու ինձ այնպես ուրախացրիր...

— Շնորհ արա, արքա, շքախմբիդ անդամներով հանդերձ... Ով դու, իշխան, եթե դժվար չի լինի,—դարձավ նա Ծեր Համնունուն ու, մինչ Ծեր իշխանը շնորհակալություն հայտնելով՝ հրաժարվում էր՝ Տերենտը վեր կացավ.

— Վաղը ուրեմն, հույս ունեմ, կարժանանամ, արքա, քո այցելության,— ասավ նա:

Երբ փոքր հետո Տերենտը, մուքը պատճառ բերելով, հրաժեշտ առավ ու մեկնեց՝ Բաթը հուզված մոտեցավ Պապին.

— Ես կարծում եմ, արքա, չպետք է գնալ այդ մարդու մոտ,— ասավ նա:

— Ինչո՞ւ,— զարմացավ Պապը:— Խոսք տալ և չգնա՞լ... Տերենտը կարող է կարծել՝ արհամարհում եմ իրեն կամ վախենում անձիս համար: Մյուս կողմից նրա բարեկամության չպետք է պատասխանել սպեր ախտությամբ: Ի՞նչն է քեզ դրդում այդպես մտածելու:

— Ես, ճշմարիտ, չեմ սիրում այդ Տերենտխոսին,— ասավ Բաթը:— Հետևաբար նրա հրավերը... ես դոնե չէի...

— Դու մոռանում ես, Բաթ, որ լավ հարաբերությունները պահպանվում են ոչ միայն լավ խոսքերով, այլև այցելությամբ ու ճաշերով,— ընդհատեց նրան Պապը:— Մեր նախնիները ասել են, որ սառանալի մոտ էլ պետք է մարդ ունենալ: Վաղեմի մոտ դոնե մի Տերենտ...

— Հռոմեացիների լավը ես չեմ սիրել,— գլուխն օրորեց Բաթը:—Նրանց լավը թերևս նա է, որ մեռած է:

Պապը ժպտաց, նրա հետ և սրահում գտնվողները:

***

Հետևյալ օրը, երբ Պապը պատրաստվում էր գնալ Տերենտի դղյակը՝ եղանակը հանկարծ փոխվեց. պարզ երկինքը ծածկվեց մթին, ուժգնությը ամպերով. քամի բարձրացավ և ամպերն սկսեցին որոտալ, ապա կայծակներ փայլատակեցին հեռվում: Համնունի իշխանը խորհուրդ տվեց ճանապարհ չընկնել և այցելությունը հետաձգել վաղվան: Նրան միացան Երեմիան ու Բաթը: Բայց Պապը չհամաձայնեց:

— Ոչ: Նա կոպասի,— ասաւ:— Քանի որ խոսք եմ տուել՝ պետք է գնալ:

Իսկ երբ դուրս եկան ճանապարհվելու և Պապը տեսաւ թիկնապահ զորքը կազմ-պատրաստ կանգնած է իրեն ուղեկցելու՝ նկատեց.

— Որքան հարմար է, Բաթ, այս այցելութիւնը կատարել թիկնապահ գնդով: Դա կնշանակի՝ զորքիս նուիրեսս հիւրասիրեք: Բաւական է մեզ ուղեկցի մի տաս զինուոր Գնելի հետ միասին:

Բայց Բաթը գտաւ, որ ցանկալի է թիկնապահ գունդը դա ոչ թէ հիւրասիրութեան ու շուքի, այլ ապահովութեան համար: Մանաւանդ,— բացատրեց նա,— իշխանի տանը ևս թողնել հարմար չէ, քանի որ իրենք ճանապարհը շարունակելու են դիմի հարաւ:

— Գունդը կուղեկցի մեզ, բայց դրյակ չի դա,— ասաւ Բաթը:

— Այդ ինչպես դիտես,— հարցը փակեց Պապը:

Եվ Բաթը կարգադրեց Գնելին՝ զորքով ուղեկցել իրենց անտառի միջով մինչև դրյակի մոտերքը, ապա գունդը թողնել անտառում՝ այնուհետև ճանապարհը շարունակելու համար:

Թագաւորին ճանապարհ դնելու համար՝ դուրս էր թափվել իշխանական դրյակի ամբողջ բնակչութիւնը՝ ծեր իշխանի և պատուաւ իշխանուհու գլխաւորութեամբ: Երբ Թագաւորը հրաժեշտ տուեց իշխանին ու նրա գերդաստանին և նժոյգը շարժեց առաջ, բոլորը միաբերան կանչեցին.

— Բարի՛ ճանապարհ արքային... Բարի ճանապա՛րհ...

Հաւլունին իր որդիների հետ, ճիւաղորմած, ուղեկցեց Թագաւորին մինչև անտառ և հրաժեշտին տուաւ.

— Երջանիկ կլինեի, արքա, եթե վերադարձիդ նորից ինձանեիր իմ հարկի տակ:

— Շնորհակալութիւն, իշխան: Եթե վերադարձիս ուղին անցնի այստեղով՝ սիրով ալիտի գամ քո հիւրընկալ տունը:

Ճանապարհն սկզբում գնում էր հարթ դաշտով, ցորենի հասած ու մասամբ հնձած արտերի արանքով, ապա մի քանի բլրակներից վեր ու վար անելով՝ մտաւ անտառ, ուր նրանց դի-

մավորեց անուտաւյին հաճելի բուրմունքը, չնայած այնտեղ ալևհոծութիւն էր տրվեն. քամին մերթ հանդարտ օրորում, մերթ զայրացած խարոյկ էր տալիս ծառերի կատարները և մերթ սուլում կամ բվվում նրանց արանքում, մերթ էլ դազազած՝ ուզում էր կարծես դղրդել նրանց: Իսկ վերև՝ որտան ու վայրկյանները շարունակվում էին ընդմիջումներով, և ճանապարհը, թևև ստղերթափառ ծառերով հովանավորված, ժամանակ առ ժամանակ լուսավորվում էր արտակարգ ուժեղ, կուրացուցիչ լուսերով: Թվում էր տեղատարափ հեղեղ է լինելու, բայց անձրև չէր գալիս, ոնգամ կաթիլներ չկային:

Պապը գնում էր Բաթի ու Երեմիայի հետ խոսակցելով, մերթ անտառի ձայներին ականջ դնելով, որ երբեմն դառնում էին ոարերային ու դիվական և ակամա ուշադրություն էին դրավում: Թիկնապահ դունդը հետևում էր նրանց որոշ տարածություն, մի տաս-քսան քայլ հեռու, երկար շարք կազմած, ինչպես միշտ նիզակներով և աղեղներով զինված:

Քանի առաջ էին գնում և մտնում անտառի խորքը՝ քամին այնքան նվազում էր և անտառային բուրմունքները դառնում էին ավելի զգալի. վայրի ծաղիկների սուր հոտի հետ զգացվում էր մերթ խոնավություն, մերթ տերևների նեխահոտ, կամ լսելի էր լինում թե ինչպես փոքրիկ անտես կենդանիները մի տեղից փախչում են այլ տեղ...

Բավական տեղ այդպես գնալուց հետո՝ նրանք նկատեցին, որ անտառը նոսրացավ. հանկարծ և ծառերի արանքով երևաց դաշտը, ավելի հետ մի մարգագետին՝ տեղ-տեղ թփերով ծածկված:

— Այդտեղ է Տերենտի նստավայրը,— ասավ Բաթը:—Գնել, կարգադրիր, որ դունդը մնա այստեղ հանգստանալու, իսկ մի տաս ընտրված թող հետևեն մեզ:

— Բարի,— և Գնելը ձիու գլուխը շրջեց պետի հրամանը կատարելու:

Փոքր անց երևաց լայն Տերենտի դղյակը, որ նախարարությանն մի դատաստակերտ էր, ուր ապրում էր նա ամառվա ամիսներին՝ իր գործերին մոտ լինելու և ջերմուկ ջրերով բուժվելու համար: Տունը քարաշեն էր, երկհարկանի և ծառաստանով շրջապատ-

ված. կային և հարակից շենքերը, բայց հատարակ ու աննշան, որ հաղիվ էին նկատվում ծառերի ետև: Տան մի կողմը կանգնած էին մի խումբ ձիեր, որ պոչերի ու գլուխների շարժումով պաշտպանվում էին ճանճերից:

Գապոն իր ուղեկիցներով անտառից նոր էր դուրս եկել, երբ Տերենտը և մի քանի հոտոմ զորականներ, որոնց մեջ էր և հայերեն ծանոթ Ադդե զորավարը, ձիերով եկան նրանց դիմավորելու:

— Բարի գալուստ, արքա,— ողջունեց Տերենտը ձեռը բարձրացնելով:

Նուլինն ասին և մյուս զորականները, ապա միացան թադավորի ուղեկիցներին, ձիերը հարդանքով վարելով:

Տան պատշգամում, սանդուղի վրա, ծառերի տակ խմբված-հետաքրքրված եկողներին էին նայում հոտոմ սպասավորներ ու գինվորներ:

Հյուրերին տեսնելուն պես հոտոմ գինվորները վազ վազեցին բակում՝ ծառերի տակ և ապա նվագեցին աշխույժ մի եղանակ, որ ներդաշնակում էր կարծես ձիերի քայլքին:

Մտնելով ծառերով ծածկված բակը՝ Գապը և նրա ուղեկիցները իջան ձիերից և տանտիրոջ առաջնորդությամբ գարե աստիճաններով բարձրացան դղյակը: Լայն միջանցքի վրա բացվում էին մի քանի դռներ: Տերենտը հյուրերին առաջնորդեց մի ընդարձակ սրահ, որ կահավորված էր բիզանդական փափուկ, երկար բազմոցներով և օթոցներով, որ շարված էին պատերի տակ, իսկ պատերի վրա կախված-ամրացված էին զենքի տեսակներ, պլխավորապես տարբեր չափի, ձևի թրեր ու նրաններ և որսի կենդանիների՝ մասնավորապես եղնիկի, եղջերուի, քարայծի գլուխներ՝ մեծամեծ եղջյուրներով, և վարազի մի գլուխ՝ երկար ժանիքներով: Հատակին՝ օթոցների առաջ և մասամբ օթոցների ու բազմոցների վրա փռված էին վագրի, ընձի և արջի մորթիներ... Ահագնաչափ սրահը լեցուն էր պես-պես իրերով: Երևում էր, որ տերը հատուկ սեր ունի զեղեցիկ իրերի և գաղդերի, բայց ավելի աչքի էին ընկնում որսի կենդանիների եղջյուրներն ու մորթինները:

— Ինչպես երևում է, հոմսը որս շատ է սիրում,— ասավ

Պապը՝ Տերենտի մատուցած բաղկաթոռում նստելով։— Այս աղջյուրներն ու մորթիները այլ են վկայում։ Այդպե՞ս է, Հոմա։

— Երբեմն, սրքա, զբաղվում եմ և որսով,— ժպտաց Տերենտը,— կարծես նյութից խուսափելով։ Բայց սրանք մեծ մասամբ նվերներ են իմ պինդորներից, որ որսացել են նրանք Կարինի անտառներում։

Հյուրերին տեղավորելով՝ Տերենտը նույնպես նստեց և, քաղաքորի տաղտկությունը հարցնելով, հետաքրքրվեց, թե նա չրջապտույթյան է եկել, անշուշտ, երկրին ծանոթանալո՞ւ նպատակով։

— Այո, ճշմարիտ դուշակեցիր, Հոմա. ծանոթանալո՛ւ,— ասաց Պապը, մտածելով, որ Տերենտն, ըստ երևույթին, լմացել է մի քան իր չրջապտույթյան նպատակի մասին։

— Գերազանց միտք է,— հավանեց Տերենտը հին դեմքի սիրալիր արտահայտությամբ։— Եվ պետք է ասել՝ շատ քիչ թագավորներ են այդպես վարվում։

Խոսելով մի փոքր էլ նա հանկարծ, ներողություն խնդրելով, վեր կացավ և դուրս գնաց, հյուրերի մոտ թողնելով Աղդի զորավարին և մյուս երկու երիտասարդ զորականին, որոնք սկսեցին զբաղեցնել հյուրերին։ Գնելը հետաքրքրված լսում էր զրույցները, նայում էր սրահի կահերին, զարդերին. պատից կախված եղջյուրներին ու զենքերին։ Այդ զբաղումի մեջտեղին՝ նա նկատեց, թե ինչպես Տերենտը մի ակնթարթ՝ երևաց դռան մեջ, նորից, ասես մի բան հիշելով՝ ետ դնաց։ Թվաց նրան՝ կարզագրություններ է անում, որ ճաշին ամեն ինչ լավ լինի և վայելչ։ Ալեւ փոքր անց, նա նորից ներս եկավ, նստեց նախկին տեղը և սկսեց խոսել բարձր նյութերից, մոտիկ մի պահարանից մատաղաթյա մատյաններ հանելով ու ցույց տալով։

— Դու, սրքա, գիտեմ, մատյաններ շատ ես սիրում։ Ահա՛ մատիկ... Սա ես ստացել եմ մի ամիս առաջ,— ասաց նա մի փոքրիկ կաշեկազմ մատյան թերթելով։— Այստեղ մատենագիրը ճառում է աստղերի և երկնային մյուս մարմիններուն մասին և գտնում է, որ արևը երկնային ամենամեծ մարմինն է, որի ջերմությամբ և ապրում է մեր երկիրը... Իսկ սա,— բացեց նա

ավելի փոքր, դարձյալ կաշեկապմ մի մատյան,— ճառում է, չորս տարերքի մասին և ասում է, որ արևը, լուսինը և մյուս լուսատուները ծնվել են երկրից: Արևին նմանապես համարում է հող, բայց շատ արագ շարժվելու հեռևանքով չիկացած: Հնարավո՞ր է արդյոք այս,— հարցրեց Տերենսը՝ հյուրերին նայելով:

— Դա վաղհմի հայացք է, կոմս,— նկատեց Երեմիան,— վաղուց դրա դեմ հակաճառել և հաստատել են, որ...

Առաջադրությունը շարունակվում էր այսպես և դուցե շարունակվեր երկար, եթե ներս չմտներ մի երիտասարդ, դրեթե պատանի դորակատն, որ Տերենտին մոտենալով՝ ինչ-որ չշնչաց, որից հետո Տերենտն անմիջապես վեր կենալով՝ դուրս իջնեցրեց Պապին:

— Հաճիր, արքա, ճաշակելու մեր պինավորական համեստ ճաշը,— ասավ նա ձեռի մի վայելուչ շարժումով, որ շատ դուր եկավ Գնելին. ապա դառնալով սրահում գտնվող մյուս հյուրերին ու իր դորականներին և, դլուխը թեթևակի ուսին ծռելով՝ ցույց տվեց դուռը, որ նշանակում էր «հրամեցեք»:

Բոլորը եկան տեղներից, և ամենից առաջ քայլեց Պապը:

Ճաշասրահն ավելի ընդարձակ էր, քան առաջինն սրահը. հատակին փռված էին դորդեր, դրանց վրա՝ կար ցածր ու երկար մի սեղան՝ լիքը ամեն տեսակ խորտիկներով ու ըմպելիներով, որ առաջինն հայացքից դժվար էր որոշել ինչ, բայց աչքի էին ընկնում բիզանդական կարտապավիզ դինու սափորներ՝ կտուցները աչ ու ձախ թեքած: Երևում էին նաև էրեի մոխ մեծամեծ կտորներ՝ սկուտեղների մեջ: Սեղանի շուրջը շարված էին դորգապատ բազմոցներ, որ, ինչպես երևում էր, նոր էին հարմարեցրել: Իսկ ուղղանկ այդքան ցած էր ատրքված, որ հարմար լինել ուտել բազմոցին թեք պառկած, ինչպես սովոր էին բիզանդացիք:

Հազիվ թագավորը ներս էր մտել՝ հնչեց մեղմ մի նվագածություն, որ գալիս էր սրահի խորքից: Իսկ պատերի տակ անշարժ կանգնած էին հոտոմ զինվորներ՝ ոմանք նիզակներ, ոմանք լայնաբերան տապարներ գռնած, ինչպես լինում են կայսերական թիկնապահները մեծ ընդունելության ժամանակ:

Եվ այդ ամենը, որ Պապին թվաց պատվի և ապահովության

համար կարդված, հիշեցրին նրան Բիզանդիայում ապրած օրե-
րը, պատանությունը, երբ աշխարհը թվում էր վայելքի վայր,
երբ ոչ ծանր մտքեր կային, ոչ ծանր հոգսեր:

Նվաստացուցչության ճաշների ժամ Տերենտը մեծ հոգածու-
թյամբ Պապին նստեցրեց հատուկ մի դեղեցիկ բազմոցի, որ
դրված էր սեղանի դլխին, ապա ինքը տեղ բռնեց սեղանի այ
կողմը, թաղամերին մոտիկ, որպես հյուրընկալ և հուշն զգա-
լականներից առատճանով բարձր, այնուհետև նստեցին մյուսները
իրենց դիրքի և աստիճանի համեմատ. Աղդե զորավարը՝ Պապի
ձախ կողմը, նրանից հետո Բաթը, մի հոռոմ զորական և ուրիշ-
ներ, սեղանի մյուս կողմից՝ Տերենտից այ՝ դարձյալ մի հուշն
զորական, ապա Ելենիան և էլի հոռոմ զորականներ, իսկ սեղա-
նի վերջում՝ ուղիղ Պապի դիմաց, որպես կրտսեր հյուրեր,
նստեցին Գնելն ու երիտասարդ Ջյունականը, աշխատելով վա-
յելչաճեմության մեջ ևս չմնալ հուշներից:

Բայց և այնպես Գնելը, ինչպես առաջին սրահը մտնելիս,
այնպես էլ այստեղ հետաքրքիր նայում էր ամեն ինչի, թե նվա-
զողներին, թե պատռտուս կանգնած դինվորներին և թե մանա-
վանդ սեղանին, որ լեցուն էր բազմատեսակ ուտելիքներով. կային
այլտեղ թարմ դետաձկներ, էրեխ և ամիճի միս, պտուղներ,
դինիներ և շատ այլ բաներ: Տանտերը, ըստ երևույթին, սեղանը
ճոխ դարձնելու համար չէր խնայել ոչինչ: Ուտելիքների արան-
քում դրված էին բուրավետ ծաղկեփունջեր ու կանաչ համեմունք-
ներ, որ սիրում են բիզանդացիք:

Երբ բոլորը նստեցին՝ տանտերը, նախ քան հայկերությին
սկսելը բիզանդական սովորության համեմատ խաչակնքեց սեղա-
նը ու ձեռը բարձրացրեց, որ նվագածուները լռեն: Եվ երբ նը-
րանք լռեցին, սրահում տիրեց մի այնպիսի խաղաղություն, որ
թոց վստահություն լսվեցին թռչուններն երդ և մի ձիու ոլրնչյուն,
որ կարծես կարոտով կանչում էր մեկին:

— Աբքա,— խոսեց հանկարծ Տերենտն այդ լռության մեջ,
դինու դավաթը Պապին մատուցելով:— Ճաշակիր մեր համեստ
սեղանից և թուլլատրիր խմել կյանքի կենաց համար:

Ամենքին բոլորը միասին, որից հետո Տերենտը նորից նշան
արավ նվագողներին, և սրանք անմիջապես նվագեցին բիզանդա-

ման մի եզանակ. իսկ դրանից հետո սրահի մի այլ անկյունում՝ այգեպետ իմբաման մխաուհասակ հագնված երիտասարդ մարդիկ երգեցին ինչ-որ մի երգ:

«Ահա էլ, երևի, Թագավորի պատվին է կազմակերպված» մտածեց Գնելը՝ երգիչներին նայելով, որ հոտոմ զինվորներ էին: Նրանք երգում էին բարձր և երիտասարդական ալյունով, իսկ սրինգը, վիոնն ու թմբուկը միմյանց ձայնակցելով, թվում էր ոգևորում, խրախուսում էին նրանց, և ղեկավարում միաժամանակ:

Եվ այդ ոչ այնքան մեղմ, բայց ներդաշնակ երգ ու նվագը նեքջո հացկերույթին սկսվեց: Սեղանակիցները մեկը մյուսին ուսերից ու գլխի առաջարկելով՝ ուտում-խմում էին հանգստատու կերթի չարժուհներով, իսկ տապարներով ու նիզակներով գինված և պատնեշում կանգնած զինվորները ասես քարացել էին իրենց դիրքում: Գնելը նայում էր այդ զինվորներին, և տեսնում էր, թե ինչպես նրանք երբեմն թարթում էին աչքերը ապտակատուհնդկի տակից կամ լեզվով թրջում չորացած, դուրս ու ծարավ շուրթերը: Եթե չլինեին նրանց այդ չարժուհները՝ կարելի էր կարծել, թե խրամիլակներ էին նրանք կամ արձաններ՝ այնքան անշարժ ու աներևը էին:

«Գոնե մեկը հազար կամ հոգով հաներ» մտածում էր Գնելը՝ զարմանալով նրանց կարգապահության վրա, որ կատողանում էին մնալ այդպես անշարժ ու անձայն: Եա միևնույն ժամանակ խղճում էր նրանց, չհասկանալով, թե ինչո՞ւ են ստիպել այդ խեղճերին արձանանալ պատերի մոտ: «Երևի ի հպատակս Թագավորի. երևի, այդպես է պետք կարգը Թագավորներ ընդունելու» դարձյալ մտածում էր Գնելը, և հպարտություն էր զգում, որ բնիկ ազգակից այդպես պատվում են իր Թագավորին. ու նրան թվում էր, որ երգողներն ու նվագողները նույնպես բերված են անչուշտ Թագավորին պատվելու համար:

Մինչ սրահի մի անկյունում երգում էին ու նվագում մերթ բարձր, մերթ ցածր՝ հոտոմ զորականները անխոս ուտում էին և խմում, սեղանի վրա խոսելու իրավունքը վերապահելով իրենց մեծերին՝ Տերենտին և Աղդե զորավարին, որ երբեմն-երբեմն, հյուրընկալին հատուկ սիրալիրությամբ ասում էին Թագավո-

րին. «Հաճելը, արքա»... ու մոտեցնում էին նրան այս կամ այն խորտիկն ու գինին: Երբեմն էլ Տերենոը ձեռով նշան էր անում, որ նվագածուներն ու երգիչները լռեն: Իսկ մնացած ժամանակ նրանք նվագում ու երգում էին ուրախական երգեր, երբեմն ս՛նքան հաճելի ու աշխույժ ձևերով, որ Պապը մի քանի անգամ նայից նրանց ակնոցի միջով դոհունակությամբ:

— Հաճելի է քեզ նվագը քո երգը,— ասում նա, երբ երգն ու նվագը լռել էին մոժամ:— Եվ ո՞րտեղից սրանք, կոմս:

— Նվագողների և երգիչների այս խումբը, արքա, կազմված է մեր գինվորներից՝ զորավարի հանձնարարությամբ,— մատնացույց արավ Տերենոը Սդդն զորավարին, որ կարծես, նուրբ մի քաղաքավարության հետևելով, քե դուրս է հարդանս թագավորի, յուրաքանչյուր պատահ ծամում էր հանդարտ և խմում չափավոր:

Մյուս հոտոմ զորականները, ասես նրան հետևելով, նույնպես ուտում էին դանդաղ և խմում չափավոր, լինչ որ Գնելին թվում էր դարձյալ հարդանքի նշան:

Տերենոը նմանապես խմում էր, բայց ամեն անգամ մի քանի կում, և աշխատում էր ավելի ուշադիր լինել դեպի թագավորը, սերտելով գինի կամ ուտելիք մատուցելով նրան.

— Հաճելի, արքա...

Գնելը, որ ուր էլ նայում էր, բայց աչքը միշտ դեմը՝ թագավորի վրա էր, նկատում էր, որ Պապն զգույշ է պահում իրեն. ոչ շատ ուտում է, ոչ շատ խմում. և Գնելը չէր հասկանում՝ դա քաղաքավարություն է, պատշաճավորություն, թե սովորական զգուշանում է շատ ուտելուց և ըմպելիներից: Ուստի նա հետաքրքրված նայում էր և մյուսներին, ու տեսնում էր, որ Բաթն ու Երմեխան նույնպես պատշաճի սահմաններում են պահում իրենց. Բաթը մինչև իսկ կարծես նեղվում էր սեղանի մոտ. նա աչնպես ինքնամփոփ նայվածք ուներ, թվում էր նստել է ակամա, թվում էր անգամ երգն ու նվագը չէին գրավում նրան: Թագավորը, ընդհակառակը, Գնելին թվում էր, մեծ բավականություն է ղղում այդ երգից ու նվագից, և հաճախ նայում էր նվագախմբին ու երգչախմբին, աշխատելով կարծես թափանցել նրանց երգերի խորքը կամ որսալ նվագի հնչյունները:

— Հաճելի է, հաճելի— ասում է նա հուսարին, խոսքն

ուղղելով ոչ միայն Տերենտին, այլև սեղանակիցներին: Կամենալով կարծես իր պատվին սրած նվաղը չթողնել առանց դնահատության:

Եվ հայկերույթը չարունակվում էր այդպես մերթ երգով, նվագով, մերթ քանի մի խոսքերի փոխանակումով ու դինեխումով: Սակայն Տերենտն իր բարձր հյուրին զբաղեցնում էր ոչ այնքան խոսքով, որքան երաժշտությամբ, որ նրա ձեռի մի նշանով կամ ընդհատվում էր կամ վերսկսվում, ու սրահը ողջ լցվում էր նրա ձայներով ու եւևէթներով. մերթ դեղդեղում էր որինդը, մերթ բարձրանում էր վճռի հնչեղ ձայնը, ապա կարծես օգնության էր հասնում երգչախմբի երգը, դրանց ընդմիջումները ասես ծածկելու և դրանց նվագը ավելի խորացնելու համար:

Ու այդպես երկար, երկա՛ր...

Անհայտ է՝ որքան ժամանակ անցավ, մի պահի, երբ Պապը հիացած ունկնդրում էր նվագը, Տերենտը հանկարծ, կարծես մի բան հիշելով, ելավ տեղից:

— Ներիր, արքա, ես մի քանի վայրկյան,— ասավ նա դիմելով նուրբ շարժումով, ու դնաց դեպի դուռը:

Սակայն դռանը չհասած, Գնելը նկատեց, որ նա կանգնեց մի ակնթարթ ու ետ նայեց, ապա դուռը բանալով՝ անհետացավ նրա հետև: Փոքր ինչ, նույնպես ներում խնդրելով, նույն կողմը գնաց և Աղդե զորավարը՝ իր հասու ուսերը ճոճելով:

Երբ Գնելը՝ դրան ևս հայացքով ուղեկցելուց հետո՝ դլուխը դարձրեց դեպի Թագավորը՝ նկատեց հանկարծ, որ պատնեշում կանգնած՝ հոտում զինվորներից մեկը, մինչահասակ ու բարակ մի երիտասարդ, պատեց առաջ գալով՝ կանգնեց Թագավորի հետև ու հանկարծ... Գնելը նրա ձեռին սուր տեսավ...

— Պաշտպանվի՛ր, արքա,— պոռաց նա ու տեղից պոկվելով՝ վազեց դեպի Թագավորը:

Նրան հետևեց երիտասարդ Զյունահանը:

Բայց մինչև տեղ կհասնեին՝ երկուսն էլ նկատեցին, որ Թագավորն ընդոստ վեր թռավ բազմոցից, կանգնեց ամբողջ հասակով ու ձեռը դժվարությամբ տարավ դեպի մեջքը՝ Թիկունքը խրված սուրը քաշելու...

— Ծարդա՛ի... այո էր...— լսեց Գնելը Թագավորի ձայնը

և իր զարմանքի, հուզմունքի ու վաղքի մեջ էլ չտեսավ, թե ինչպես Թագավորը պաղած հայացքով ընկավ ճաշի սեղանին՝ կտրքից թե ուսից բխող արյունը խառնելով հյուրասիրության գինուն: Զռնապահ և այն, որ սեղանի շուրջը խառնվեցին իրար... Նա, նրանը հանած, դնաց դեպի Թագավորին հարվածողը, որ այն է՝ շրջվել էր հեռանալու, Գնելը մոտեցավ, ավելի շուտ՝ մի երկու ցատկումով հասավ նրան և, աչքերը փակելով, նրանը բարձրացրեց... Ու ապա զգաց, թե ինչպես ծանր մի բան թրըմփաց ու Թափով դիպավ իր ոտներին...

Այդ ժամանակ Գնելը վախեցած աչքերը բաց արավ և տեսավ Թագավորին հարվածողն ընկած իր առաջ ու սրահում ամենքն իրար անցած...

Այն պահին, երբ Գնելը ճչաց ու վազեց առաջ դեպի Թագավորը և երբ Թագավորը հանկարծ ընկավ սեղանի վրա—ամենքը մեկին զարմանքից քարացան մի վայրկյան, ապա հուսմ զրահաններից մի երկուսը վեր կացան ու չտապեցին դուրս, իսկ Բաթը առաջին իսկ վայրկյանին, սուրը մերկացնելով, ուզեց խոյանալ Թագավորին պաշտպանելու, բայց չկարողացավ առաջ դնալ.— հսում զինվորները խռնվել էին առաջին... և հիմա նա արդ ուզում էր ճանապարհ բանալ ու գնալ դեպի Թագավորը... Սուր էր հանել և Երեմիան...

Գնելն այդ տեսնելով՝ վազեց դեպի Բաթն ու Երեմիան:

— Վրե՛ն, օդնի՛ր,— գոռաց նա երիտասարդ Զյունականին ու նետվեց առաջ: Սակայն մինչև տեղ հասնելը՝ ծանր մի հարված զգաց ալ ուսին և ընկավ, մոռածելով, որ դա երազ է կամ պատահմունք, որ ինքը նորից կբարձրանա, կպաշտպանի Թագավորին, իր սեռ Բաթին, Երեմիային և Զյունական Վրենին...

Այդ իսկ վայրկյանին, չդիտեց Գնելի ճիչը թե բարձրացրած սրմուկի վրա, ճաշասրահի դուրդ փեղկերը բացվեցին, ներս եկավ Տերենտը իր դիք հասակով և հուզված:

— Ո՞վ էր այդ,— գոռաց նա պայրատին:— Վերավորե՞լ Թագավորին... իմ հարկի տա՞կ... Ո՞վ համարձակվեց...

Նրա ձայնի վրա հսում զինվորները կանգ առան, իսկ Բաթը նրան տեսնելով՝ նա դարձավ և, Տերենտին մոտենալով՝ սուրը բարձրացրեց հանկարծ:

— Ահա քեզ, խարդախ արքայասպան,— մռնչաց նա ոչ մարդկային ձայնով, ապա մի քանի քայլ մեջ դնելով կարծես տարիների իր ուժը, առնականությունն ու զայրույքը:

Եվ մինչ Տերենտը կընկներ տապալվող ծառի պես՝ բաթը սուրն առաջ ճոճելով, լաց դռնից նետվեց դուրս:

— Բռնե՛լ: Չթողնել փախչի,— լսեց նա հետևից:

Եվ, իրոք, ապավորությունն այն էր, թե նա փախչում է զլուխն ազատելու: Բայց մինչ կփորձեին հետևել՝ նա դիմաբաց վազեց թուրմ ծառերի տակ կապված ձիերից մեկի մեջքը և սուրց առաջ:

Եվ ոչ-ոք չհետևեց նրան. նույնիսկ փորձ չարին. բոլորը խառնվել էին իրար, խառնվել էին Տերենտի չուրջը: Իսկ նա՝ բաթը ձին վոխորկի պես քշից դեպի անտառ: Ինչից ինքն էլ չիմանալով որքան (նրան թվացին ժամեր), վերջապես, երբ մոտեցավ անտառին և ծառերի տակ չկատեց թիկնապահ դնդի դինվորներին, որ խումբ-խումբ նստոտած ու պառկած զրուցում էին հանգիստ, նա դուրց ամբողջ կոկորդով, մի ձայնով, որ դուրս էր պալիս ոչ միայն նրա կրծքից, այլ ամեն նրա սրտի խորքից, ներսի բոլոր նյարդերից:

— Զինվորնե՛ր... զինվորնե՛ր... հուսմներն ապանեցին մեր թագավորին... Զա՛րկ հուսմներին: Զա՛րկ հուսմներին,— կրկնեց նա հևասպառ:—Մեկը լուր տանի Թող Հավկունու դղյակը, մյուսը Սմբատ ասպետին... Իմացնել բոլորի՛ն... Թող գան պնդերով... Եվ օ՛ն... հետևեցեք ինձ...

Եվ նա նժույգի զլուխը դարձրեց նորից ու սրամերկ սուրց առաջ:

Թիկնապահ դունդը ցնցվեց նրա խոսքերից, նրա ձայնից, նրա տարօրինակ մազախուխվ տեսքից, և մի ակնթարթում բոլորն անմիջապես ձիեր հեծած ու, կարծես մտրակված, հետևեցին նրան մրրկի պես, վարակվելով իրենց պետի օրինակից:

Բոլորը սլանում էին նրա պես սրերը մերկացրած, ձիերի վրա կռացած, արձակված նետերի պես ուղիղ. թվում էր հալածում են Բաթին, որ սուրում էր իր ձիուն ճոլվված, մի քսան-երեսուն քայլ նրանցից առաջ:

Ամենքը ձգտում էին հասնել նրան, առաջել նրան: Ու մի քանի վայրկյան հետո նրանք արդեն Տերենտի դղյակի մոտ էին:

***

Հասնելով դղյակին՝ Բաթը նորից սուրը գլխից բարձր բռնելով, դոռաց թխկնապահ դնդին. «Ջա՛րկ նեննք հոռոմներին... Մա՛հ հոռոմներին»... Ու մեկեն հարյուրի հասնող ձիերի սոնատրոփին խառնվեց մի բարձրագոչ աղաղակ, որ նման էր ամեհի բազմաձայն ոռնոցի: Այդ ձայներից թե հեծյալների մրրկաբշավը տեսնելով— դրսում՝ տան բակում դանվող հռոմ դինվորներն ու սպասավորները ներս վազեցին, իսկ ներսում գտնվողները նիզակներով դուրս նետվեցին քարե սանդուղի գլուխը, նայեցին լուսամուտներից... ու հանկարծ մի նետ նկատ դեպի հայ ձիասաթ դինվորները: Այդ նետը և հռոմների համարձակ տեսքը կարծես ավելի կատաղեցրեց դաշտացած հայ դինվորներին. սրանցից մի քանիսն անմիջապես ձիերի վրա՝ աղեղներ առնելով՝ նետեր արձակեցին դեպի լուսամուտները ու սանդուղի գլուխը, ոմանք, ձիերից իջնելով, սրեր հանած ու նիզակներով վազեցին առաջ, իսկ ոմանք իրենց ձիերը քշեցին մինչև տան մուտքը, մի երկուսը նույնիսկ ձիերով խոյացան դեպի քարե սանդուղը, որի դլխին կանգնած էին նիզակավոր հռոմները: Մեկի ձին, չդիտես թափից թե տիրոջ կամքով բարձրացավ սանդուղի քարե աստիճանները, բայց կես ճանապարհին նիզակի հարված ստանալով՝ ընկավ քարերի վրա:

Դա կարծես առավել բորբոքեց հայ դինվորների կատաղությունը: Ու սկսվեց մի մոլեգին, տարերային բան. ոմանք դռռալով, նիզակներով վազեցին դեպի սանդուղը, մյուսներն սկսեցին նետեր տեղալ սանդուղի գլխին և լուսամուտներում կանգնած հռոմների վրա:

— Ջա՛րկ, ջա՛րկ,— դոռում էր Բաթը խռպոտած ձայնով, և նրան մռնչալով ձայնակցում էր դինվորների մեծ մասը:— Ջա՛րկ, ջա՛րկ...

Ու այդ ձայներով լցվեց բակն ու միջոցը:

Հռոմներն սկզբում թվում էին անվախ, և պատրաստվել էին կարծես դիմադրել, բայց նետերի տարափը թե նիզակավորների վեր խոյացումը տեսնելով՝ հանկարծ ներս քաշվեցին և փակեցին տան դռներն ու լուսամուտները:

Դա ոգևորեց թիկնապահ զինվորներին. նրանք աղեղները թողած՝ նիզակներով հոսեցին դեպի վեր, դեպի վակ դուռը:

— Քարերո՛վ, զարկ քարերո՛վ,— գոռաց Բաթը, և ժուլդն անհանգիստ խաղաց նրա տակ. թվում էր նա էլ է ուզում բարձրանալ սանդուղը:

Գետի հրամանը լսելով՝ հայ զինվորները հիմա էլ, նետերի փոխարեն, սկսեցին քարերով զարկել փակ լուսամուտներին. ոմանք ահագին քարեր վերցրած բարձրանում էին աստիճաններով և ամբողջ թափով զարկում փայտե դռներին: Ու այդ քարերից, աքացիներից դուռը ճռնչում էր, ընդդում, բայց կարծես չէր ուզում տեղի տալ... Սակայն մի քանի վայրկյանից հետո նա խորտակվեց, և հայ զինվորները միահամուռ «ո՛ւռ՛ւ» անելով՝ ներս խուժեցին առանց վտանգի մասին մոռանալու, կարծես կատաղությամբ հարբած:

Բայց հենց մի ջանք արած սկսվեց նիզակների ու թրերի բախում: Հայ և հռոմ զինվորները խառնվեցին իրար: Նիզակաբախումը դնալով սաստկանում էր, որքան նոր զինվոր էր մըտնում ներս: Սակայն գոռոցները, հրամաններն ու հայհոյանքները խլացնում էին զենքերի զնդոցը: Հռոմները դիմադրում էին կատաղի՝ նիզակներով, սրերով ու տապարներով, իսկ հայերը հարձակվում էին միայն նիզակներով ու թրերով, և ուզում էին շուտ մտնել կարծես այն սրահը, ուր սպանվել էր թագավորը. ու թվում էր նրանք այլևս չէին վախենում ոչ սրից, ոչ նիզակներից, ոչ տապարից, որ գործադրում էին լինքնապաշտպանության մոլուցքով բռնված հռոմները:

Եվ այդ պահին ահա, երբ ներսը նիզակահարում ու սրատում էին միմյանց մի լարված կատաղությամբ և դուրսը մնացած հայ զինվորները արանք էին փնտռում ներս խուժելու...— հանկարծ լսվեց հայերեն մի գոռոց.

— Հռոմները փախչո՛ւմ են... փախչո՛ւմ են ետևի դռնից...

Հայ զինվորների մի մեծ խումբ պոկվեց սանդուղներից ու հատ-հատ նետվեց ցած և, բաթի գլխավորությամբ, անցավ տան հետը:

Եվ իրոք. հռոմեները տան հետից, ցածրիկ մի դռնից դուրս գալով, վազում էին տանը դեպի դաշտը, տանը դեպի ծառաստանը, տանը դեպի այնտեղ կապված ձիերը:

Փախչողների մեջ էր և գլխարաց մի զորական:

Երբ բաթը նկատեց նրան՝ նժույգը լարեց ու գոռաց աղչից վազող իր զինվորներին.

— Հասնե՛լ և ձերբակալել նրան...

Մի քանի զինվոր արեցը հասած վազելին զորականի հետից և ոտնակոխ ձերբակալեցին, ջանացին առաջը կտրել: Սակայն զորականն ու այլ հռոմեները, առանց նա նայելու, վազում էին դեպի ձիերը, և այն է՝ մոտենում էին կապած ձիերին՝ հայ զինվորները հասան նրանց ու մի մասին բռնեցին, բայց եղան հռոմեներ, որ կարողացան ձի նստել ու փախչել:

Զինվորները թրերը հանած ընկան նրանց հետից:

— Ջիոդնե՛լ մեկը ողջ հեռանա... Ողջ չթողնե՛լ մեկին...— գոռչաց բաթը նրանց հետից և կարգադրեց.

— Պահակներ դնել: Դուռը փակել և փախչել ցանկացողին տտուկել անմիջապես:

Այս կարգադրությունն անելով՝ նա չտապեց ներս:

Տան մեջ կռիվն արդեն ավարտվել էր: Գլխավոր միջանցքում, առաջին սրահում ընկած էին հռոմ և հայ զինվորների դիակները: Բայց նա չտապեց դեպի ճաշասրահը, ուր ընկել էր Թագավորը, հասկանալով, թե նա դուցե վիրավոր լինի միայն կամ ուշակորույս:

Բայց Պապն անշունչ ընկած էր իր բազմոցին. ոչ թե առաջվա պես սեղանին, այլ բազմոցին. ըստ երևույթին հռոմեները տտուկել էին նրա մեռած կամ ողջ լինելը և թողել՝ բազմոցի վրա: Բաթը կատաղությամբ դրկեց Պապին, և երբ տեսավ նա անկենդան է և արյունով շաղախված՝ հրամայեց ներսը գտնվող իր զինվորներին.

— Կոտորել բոլորին... ողջ չթողնել մեկին...

Ապա նայելով սեղանի չուրջն ընկած դիակներին՝ նա ճանաչեց

խոսքն Գնելին ու Երեմիային, որ մեռնելուց առաջ, ինչպես երևում էր, ասելիք էին մի քանի հոգու: Գնելն ընկած էր արյունոտ սուրը ձեռին, իսկ Երեմիան, որ ընկել էր երեսն ի վար, երկու ձեռքով ամուր գրկել էր իր մատյանը: Երբ Բաթը նրան ուղղեց և, դժվարությամբ նրա պինդ մատներից աղատելով՝ ձեռն առավ հայոց պատմությունը՝ նրա բոլոր էջերն արյունոտ էին:

Բաթը հուզվեց: Այդ պաղարյուն մարդը, որ երբեք լրևն չէր կորցնում և այնքան բան էր տեսել հենց այսօր՝ հուզվեց այդ պատկերից: Երեմիայի, մտերիմ ընկերի երկար տարիների աշխատանքը ներկվել էր նրա արյունով:

Բաթի աչքերը թրջվեցին:

— Խարդախնե՛ր... խարդախնե՛ր,— կրկնեց նա և հանկարծ լուռ. մեկը կանչեց նրան նվազ ձայնով.

— Տեր Սահառունի...

Բաթը նա նայից զարմացած:

Ձայնը գալիս էր սեղանի տակից: Բաթը կռացավ ու նայից ուշադիր. կանչողը երիտասարդ Ձյունականն էր, որ վիրավորված էր: Նա, ինչպես երևաց, ուշակորույս էր եղել. հիմա, երևի, հայերեն խոսակցություն լսելով՝ ուշքի էր եկել:

— Վրե՛ն,— առանձ քաշեց նրան Բաթը,—դու ո՞ղջ ես, վիրավորվա՞ծ,— առավ նա ու նորից դռռաց.— Ձթողնե՛լ ոչ մի հոգում... ողջ չթողնել մեկին...

Սակայն առանց նրա ասելու էլ վինավորները գայլի հայացքով չրջում-մտնում էին տան բոլոր անկյունները և թաքնված հոգումներին հանելով՝ նիզակահարում էին կամ թրատում.

— Դեհ, գոհ եղիր Պաղին... գոհ եղիր թագավորին...

Հոգում վինավորների ու զորականների մի մասին կոտորելով և մյուս մասին վտակելուց հետո՝ Բաթը կարգադրեց կապել Ձյունականի վերքերը և թագավորի, Երեմիայի ու Գնելի դիակները տեղափոխել առանձին սենյակ: Իսկ ինքն անցավ աշխատասենյակ, ուր առաջին անգամ հրավիրեց լրենց Տերենտը:

Հազիվ ներս մտած՝ նա զայրույթով գետին գլորեց սեղանին դրված ինչ-որ անդրիներ, պատից պոկեց Վաղես կայսեր պատկերը ու հատակին քցելով՝ տրորեց, ապա սուրը հանելով՝

սկսեց վրթիլ Տերենտի հագուստները, որ կախված էին պատից... Դրանով էլ նրա գայլությունը կարծես չդժոհացավ. մի պատուհան ժամանակ հանկարծ նկատեց մի փակ պահարան, որի փակ լինելը ասես զրդռեց նրան և նա թրով ու աքացիով ջարդեց նրա դուռը, որ պոկվեց տեղից՝ հետը ինչ-որ իրեր թափելով: Նկերը զանազան գինվորներից մեկը կռացավ ընկած իրերը վերցնելու, և նրա աչքովն ընկավ մի ոլոր փաթեթ, որ անմիջապես տվեց Բաթին:

Բաթին առնելով՝ բաց արավ զարմացած:— Վաղես կային նամակին էր՝ արքայական կնիքով դրոշմված:

Երբ Բաթը սկսեցավ ու հևքով կարդաց մինչև վերջը՝ նրա ձեռները ծալվեցին բռունցքի և նա մռնչաց խոսելու փորձարին.

— Ա՛խ, Պապ, Պապ... Ողջ չես, ավա՛ղ, որ կարդայիր այս ամենը և տեսնեիր թե ո՛վ էր սիրելդ Տերենտը, որին դու համարում էիր բարեկամ... ո՛րին... ուրախացար, որ քաղաքները, գավառները ազատում է... Ա՛խ, Պապ, Պապ...— և նա հառաչանքով նստեց առաջին պատահած բազմոցին՝ մագաղաթը ձեռում ճմրթելով:

Վաղեսը մագաղաթյա իր նամակում, ի թիվս այլ բաների, գրում էր.

«Պետք է վերացնել ամբարիշտ և հանդուգն արմեն Բագրատունուն, որ գործում է Բիզանդիայի հակառակ, համարձակվում է քաղաքներ պահանջել, խորհում է մեծ բանակ կազմել և բացարձակ անկախ լինել: Այդ թողնում եմ, կոմս, քեզ և քո հնարամտությանը»...

Բաթը մի ուժամ մնաց այդպես, ապա մագաղաթը բոլորվելով ճմռելով՝ ուզեց նետել մի կողմ, սակայն պահեց և ձեռում սեղմեց ամուր:

— Ա՛խ, Պապ, երդվում եմ դիակիդ առաջ—ոչ մի հոտոմ չթողնել հայոց աշխարհում... ո՛չ մի հոտոմ:

. . . . . .

Մի ժամ հետո, երբ ամեն ինչ խաղաղել էր չենքում և դուրսը, հայ գինվորները նկատեցին, թե ինչպես հանկարծ անսովոր դուրս եկավ մի բազմամարդ այրուձի, որ ոտնատրոփով թնդյունով գալիս էր դեպի դղյակը: Սկզբում կարծեցին հոտոմներն են,

դալիս են յուրայիններին օգնելու. բայց շուտով պարզվեց, որ դա իշխան Հավնունու հնծյալներն են, որոնց առաջնորդում էր ծեր իշխանն ինքը՝ ամբողջապես զրահին և նիզակով զինված: Նրան, ինչպես հետո պարզվեց, լուր էին տարել Թաղավորի սպանության մասին և նա շտապել էր օգնության՝ իր ողջ մարդկանց և որդիներին հետն առնելով:

— Ավա՛ղ... Ի՞նչ դժբախտություն, տեր Սահառունի,— ի՞նչ դժբախտություն,— ասում ծերունին ներս մտնելով: Նրա աչքերում զայրույթի, կատաղության հետ երևում էին արցունքներ.— Ավա՛ղ... Մարդա՛կ և անիրավ հոռոմներ... Երկաթ խարդախ հռոմներ...

Մինչ ծերունին մոտենում էր սպանված Թագավորին և նրա մոտիկներին, դուրսը լսվեց մի նոր թնդյուն ձիատրոփ:

Դա մի նոր այրուձի էր, որ դալիս էր հյուսիսից և նույնպես արընթաց, ինչպես Հավնունու հնծելախումբը, բայց ավելի բազմամարդ, քան առաջինը:

Դարձյալ եղան կարծողներ, թե հոռոմներ են, բայց որոտաց մեկը բացականչեց.

— Սմբատ սպասան է... Բագրատունյաց տերը...

Իրոք. եկողը Սմբատ սպասալար Բագրատունին էր՝ իր հնծյալներով:

Երբ երկու այդ հնծյալ խմբերը միացան իրար և թիկնապահ զինվորներից իմացան կատարվածը՝ բոլորին համակեց ինչ-որ այրող անհանգստություն ու եռացող կսկիծ. ոչ-ոք չէր կարողանում մի տեղ կանգնել ու բոլոր խոսքերի մեջ կրկնվում էր դրեթե միևնույնը.

— Գա՛ն, նատեն մեր երկրում և խաբեությամբ սպանեն մեր Թագավորին...

— Ղողվից սրմատնե՛ր... Իժի ծնունդնե՛ր... Պիղծ խաբեբանե՛ր...

Ու շատերի աչքում երևում էր արցունք. և դրանք ցավի, վիրավորանքի ու զայրույթի արցունքներ էին:

Երբ փոքր անց Սմբատ սպասալարը (որ բարձրացել էր Թագավորի դիակը տեսնելու) իր ընթացն ամբողջով դուրս եկավ սան-

դուքի դլուխը—նրա ձեռները դողում էին և նա կարծես խոսք չէր գտնում խոսելու: Բայց նրա հետ դուրս եկած բաթը, որ նիհարել ու փոխվել էր մի քանի ժամում, ճչաց.

— Չինովնիկը, դուք արդեն դիտեք, որ նենգ հոռոմները սպանեցին մեր թագավորին...— Նրա ձայնը բեկվեց և նա, հնքից ուռերը վեր քաշելով, շունչ առավ ու շարունակեց դեմքը կծկելով.— Չմոռանա՛նք մեր երկրում ոչ մի հոռոմ... Ջնենք նրանց մեր քաղաքներից... մեր գավառներից...

— Այդ Թող լինի,— խոսեց վերջապես Սմբատ ասպետը նրա թևը բռնելով:— Այդ Թո՛ղ լինի, տեր Սահառունի...

Ու վոքր անց նա իր հնձյալների դլուխ անցած սլանում էր կարինի և Սպերքի ճանապարհով: Նրան մխացավ և Հայկունի Մանասով իշխանի այրուձին: Սպա և բաթը՝ թագավորի թիկնապահ դնդով:

Նվ ձիերը սլանում էին դաշտով, քաշները հովին տված. ոչ թև սլանում, այլ Թռչում էին քառասմբակ ու սանձակոծ:

ՎԵՐՋԱԲԱՆ

Եվ ամենը կատարվեց այսպես:

Սակայն ի՞նչ եղավ հետո:

Թագավորի ապանութիւնը, հարկավ, ցնցեց ողջ հայոց աշխարհը և ամենքին համակեց սուգ ու տխրութիւն. իշխան, ամիրկ, թե չինական—ամենքը մխաուսակ զգում էին իրենց վիրաւորված, անպատուված:

— Հոռոմ մի զորավար հայ երկրում սպանի հայոց թագավորի՛ն,— ասում էին նրանք զայրութով ու ցաւով:

Ցաւում էին ոչ միայն նրանք, որ մոտ էին և տիրում էին Պապին, այլև նրանք, որ զժգոհ էին նրանից, ինչպես մի քանի նախարարներ ու իշխաններ, որ դեմ էին արքունի մշտական բանակին մարդ ու ձի տալու նրա պահանջին. ինչպես փավստոս հայր սուրբը, որ չէր հաւանում եկեղեցու դեմ արած նրա գործերը, սակայն լսելով Պապի սպանութիւնը՝ նա արտասուքն աչքերին՝ ձեթի ճրագի երեսուն լուսյսե տակ դրեց իր մատյանում «ցավալի կորուստը հայոց երիտասարդ մեծ թագավորի»...

Իսկ մի քանի օր հետո, երբ կատարվեց թագավորի թաղումը— եկան հայոց աշխարհի գրեթե բոլոր նախարարները, իշխանները ու սեպուհները: Եկան նաև բոլոր կողմնապահ զորավարները՝ սպարապետի և իշխան կամսարականի գլխավորութիւնը: Բոլորի մեջ աչքընձնապես լուռ ու տխուր էր Մուշեղ սպարապետը: Երբ դագաղն իջեցնում էին գերեզմանը՝ ամենքը նկատեցին, որ սպարապետը՝ այդ վրսսպ ու կորովի մարդը լալիս էր:

Իսկ հետո՞... Ի՞նչ եղավ հետո. ո՞ւր մնացին այն գնդերը, որ Սմբատ Բագրատունու և Թաթ Սահառունու գլխավորութիւնը

այնպիսին հայ պալատներն ու քաղաքները հռոմեներից ապառնելու:

Շարունակելով իրենց արշավը՝ նրանք գնացին առաջ. ճանապարհին նրանց թիվը գնալով բազմացավ հայ շինականներով, որ գյուղերում պատահած դրծիքներով զինվելով՝ միացան հայ զորքին և ձիերով, հետևակ վազեցին նրա նախից: Ու կարճ միջոցում բազմաթուն և բաթի զորքը մեծացավ այնքան, որ մի քանի շաբաթվա մեջ նրանք բիզանդական կայսրությունը վտարելով՝ մաքրեցին Կարնո, Սպերքի գավառները, ապա մտան Դարանաղիի հովիտը, եկեղյաց գավառը, գրավեցին Սնի ամրոցը, վանելով հռոմեներին Եփրատի մյուս ափը:

Եվ երբ այս ամենը կատարվեց՝ երկրում ամենքը համարյա ապահով էին, թե վաղեսը հիմա արդեն, անկասկած և անշուշտ, պատերազմով կգա հայոց վրա. սակայն դրա փոխարեն բիզանդական կայսրը ցավ հայտնեց Պապի սպանության համար, ասելն լինչ համարելով ժամանակ թյուրիմացություն Ն. Տերենոի հանցանքը, իսկ երբ Պապի հորեղբոր որդի Վարազդատն եկավ հայերի վրա թագավորելու՝ կայսրը, որպես բարեհաճության նշան, ուղարկեց նրան արքայական թագ և ծիրանի:

Սակայն ժողովուրդը հայոց թե այդ ժամանակ և թե տարիներ անցնելուց հետո՝ չէր մոռանում Պապին, մանավանդ շինական և ռամիկ ժողովուրդը, որ չէր տեսել նրա թագումը, չէր հավատում թե նա սպանվել է կամ մեռել: Շատ տեղեր՝ հենց գյուղում թե քաղաքներում կարծում էին, և նույնիսկ պատմում, թե նա ընավ չի մեռել, այլ իր ամբողջ սպառազինությամբ, մի րոպե առաջ ձեռին, մարտական սաղավարտը գլխին պահվել է, սպասում է, մի տեղ, անտես մի վայրում, որ հայոց աշխարհի նվաստության օրերին դուրս գա և վրեժի նրան օտար նեղիչներից ու թեթևացնի ծանր հարկերից...

ՎԵՐՋ

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ[1]

Աղձնիք — պատմական Հայաստանի 15 նահանգներից մեկը, որ կառավարվում էր Բզեշխի միջոցով։ Կոչվում էր նաև Արձն, իսկ օտարազգի մատենադիրների՝ Արզանենե, երբեմն էլ հայերը կոչել են՝ «կողմն Ասորեստանի», Ասորեստանին սահմանակից լինելու համար։ Ուներ տաս գավառ, որոնք համապատասխանում էին այժմյան Սասուն, Մոկրդ, Բաղեշ և այլ վիճակներին։ Բզեշխանիստն էր Արզան (այժմ Խարզան քաղաք)։

Ադովնից ազատ — պատմական մի երկիր, որ ընկած էր Անդրկովկասի հյուսիս-արևելյան մասում և Կովկասյան լեռնաշղթայի հարավ-արևելյան լեզերին։ Բռնում էր մոտավորապես Ներկա Ազերբայջանի տեղը։ Հարևան էր Հայաստանին և Վրաստանին։ Մերթ դաշնակցել է Հայաստանին, մերթ միացել նրա թշնամիներին, ինչպես վեպում նկարագրված ժամանակ։ Բայց հետագայում՝ մանավանդ հայերի միջոցով քրիստոնեություն ընդունելուց հետո, աղվանները մոտեցան հայերին, վայելելով միշտ սրանց օգնությունն ու հովանավորությունը, իսկ մի քիչ դարերում նրանց մեծ մասը ձուլվեց հայերին։

Այրարատ — հին Հայաստանի կենտրոնական նահանգներից մեծագույնը։ Արշակունիների ժամանակ Այրարատ հասկացվում էր Երասխի հովիտը (Այրարատյան դաշտ), Ախուրյան գետախառնուրդից սկսած մինչև Գաբեղեան (Արևելյան Արփաչայ) և Արագածից մինչև Մասիսները և հայկական սարերը։ Հայկական թագավորության կենտրոնավայրը։ Այստեղ են եղել հայոց երբեմն փոխադրվող մայրաքաղաքները՝ Արմավիր, Արտաշատ, Վաղարշապատ, Դվին և այժմ Երևան։

Ալբիանոսյան տոհմ — հեթանոսության շրջանում հայաստանին տվել է քրմեր և քրմապետներ, իսկ քրիստոնեության ընդունելուց հետո՝ եպիսկոպոսներ և կաթողիկոսներ, որ բիզանդասեր չէին։ Սրանց կալվածքները գտնվում էին Հարք (Բուլանըխ) և Ռշտունիք (Ալաթ) գավառներում։

Անձևացիք — հնում վասպուրական աշխարհի գավառներից մինը, որ

---

1) Ամբաժեղել է պատմական գիտությունների թեկնածու Սուրեն Երեմյան։ Հեղինակ։

կայսում էր առանձին՝ Անձևացյաց Նախարարություն։ Այժմյան Վանա վիլայեթի նորդուզ շրջանը։

Ա ն ի— ամրոց Դարանագի գավառում, (հոչվել է նաև Համախ՝ Երզնկայի շրջանում)։ Այդտեղ էին դանվում Արշակունի թագավորների գանձատունները. այդտեղ էին պահվում և նրանց դանձերը։ Ձգտեր է շփոթել Բագրատունյաց մայրաքաղաք Անիի հետ, որ դանվում է Շիրակի գավառում։

Անտիոք—մայրաքաղաք Սիրիայի։

Ապահունիք—գավառ Տուրուբերանի. պատկանում էր Ապահունի իշխաններին։ Դանվում էր Մանազկերտ քաղաքից արևելք։

Ասրպատական—նահանգ հյուս. Պարսկաստանում։ Սրա արևմտյան մի քանի գավառը 4-րդ դարում պատկանում էին հայ Արշակունիներին (այժմ Մարագա, Թավրիզ, Սոգիան և այլն)։

Արագած—Հայաստանի 2-րդ մեծ լեռը, Ավազ Մասսից հետո։

Արագածոտն—գավառ հին Հայաստանի, որ տարածվում էր Արագած լեռան հարավային և արևելյան փեշերին։ Դրա մեջ էին մտնում Թալին, Աշնակ, Օշական, Բյուրակն, Աշտարակ և այլն։

Արաս կամ Երասխ—Հայաստանի մեծ գետերից մեկը, որ սկիզբ է առնում Կարինից հարավ-արևելք դանվող Բյուրակնյան (Բին-գյոլ) լեռներից։

Արածանի—արևելյան եփրատն է. այժմ կոչվում է Մուրադ-Չայ։ Ըստ ավանդության՝ հայերը քրիստոնեություն ընդունելիս միրուզ են այս գետում, Հնագույն, գեռ նախաքրիստոնեական շրջանից համարվել է սքողական գետ։

Արծրունի—հնագույն նախարարական նշանավոր տոհմերից մեկը Հայաստանում։ Վասպուրականի մեծ մասը պատկանում էր այդ տոհմին, որ օտար նվաճողների ձեռնտվությամբ միշտ ձգտում էր թագավորության, որին և հասավ մասամբ։ 908 թվին իշխան Գագիկ Արծրունին ճարպկությամբ և քաղաքական ոչ պատվաբեր խաղով հիմք դրեց Վասպուրականի հայկական թագավորության՝ Վան քաղաքում։ Արաբները հայոց ուժերը չյուսելու համար աջակցում էին նրան։ Բայց այդ թագավորությունը երկար չտևեց։ 1021 թ. Սենեքերիմ Արծրունի թագավորն ստիպված եղավ թողնել իր երկիրը Բիզանդիային և տեղափոխվել Փոքր Հայք—Սեբաստիան գարձնելով իր մայրաքաղաքը։

Արտակ Բ.—(350—368)—ձգտել է ստեղծել կենտրոնական ուժեղ իշխանություն և նախարարներին ենթարկել երկին։ Այդ նպատակով էլ հիմնում է Արշակավան ապատ քաղաքը, որտեղ կարող էին ապրել անգամ հանցագործները, նախարարների մոտից փախչողները։ Դժգոհ նախարարները փախան Պարսկաստան, լավ համարելով ենթարկվել Շապուհին, քան երբեք աքքային, որ ձգտում էր թուլացնել նրանց իշխանությունը։ Նախարարների ամբաստանությամբ՝ Շապուհը խաբեությամբ կանչեց Արշակին և բանտարկեց Անհուշ բերդում, ուր և նա անձնասպան եղավ։

Արծակունի—թագավորական դինաստիա Հայաստանում, Պարթև Արշակունիների մի ճյուղը։ Մեր թվ. 64 թ. հաստատվեցին Հայաստանում,

Հռոմին Ծրգատ 1-ի Նէռանց իշխանութիւնը վերջացավ 428 թ., այդ տան վերջին Արտաշէր (Արտաշես) թագավորով, որից հետո Հայաստանն ընկավ Պարսկաստանին, Բիզանդիայի և ապա արաբների իշխանութեան տակ։

Աբջակավան—ազատ քաղաք. հիմնեց Արշակ Բ.՝ նախարարների իշխանութիւնը թուլացնելու համար, արտոնութիւններ տալով այնտեղ ապրողներին։ Նախարարներից փախչող հպատակներին։ Ազատ քաղաքը փախչողների քիչ քան երեսուբին չատ մեծ էր և դա վնասում էր նախարարներին. այդ պատճառով և արքունական կոմիսներ ծագեցին թագավորի և նախարարների միջև, որոնք իրենց վորքերով հարձակվեցին քաղաքի վրա՝ կոտորեցին մոտ 20 հազար բնակիչ և քաղաքը կործանեցին հիմնահատակ։

Աբտարուճիհ—Արաբատյան նահանգի գավառներից մեկը, որ բռնում էր Երասխաձորի ձախ մասը (այժմյան Կաղզվանից հյուսիս) և պատկանում էր Դաճատրական նախարարներին։ Այս գավառի մեջ էր գտնվում նրանց ոստանը՝ Երվանդաշատ քաղաքը։ Այս գավառում հայտնի էին Երվանդաքար կամ Երվանդակերտ և Արտագերս ու Կապուտ բերդերը։

Արմենիա—Թե հնումը, թե այժմ օտար ազգերը այս անունն են տալիս Հայաստանին։

Արտագերս—նշանավոր ամրագուշն բերդ։ Պատկանում էր Կամսարական նախարարներին։ Մեր Թվակ. 3 Թվին հռոմայեցիք պաշարեցին այս բերդը և չկարողացան վերցնել։ Պաշարման ժամանակ վիրավորվեց Օգոստոս կայսեր Թոռ Գայոս Կեսարը և մեռավ։ IV դարում, Շապուհի արշավանքի միջոցին, Փառանձեմ Թագուհին արքայական գանձը և 17 հազար այր ու կին վերցրած ամրացավ այս բերդում և 13 ամիս կռվեց պարսից դեմ։ Բայց սովը և հիվանդությունները ընկճեցին բերդականներին, և բերդն ընկավ պարսից ձեռքը։

Արտավազդ Բ. (55—33) Հայոց Թագավոր, բանաստեղծ և դրամատուրգ, որդի Տիգրան Բ. Մեծի։ Պաշտպանելով հայրենիքը՝ դոն դարձավ հռոմայեցինների նենգության։

Բագրատունիք—հնագույն նախարարական տոհմերից մեկը, որ Արշակունի Թագավորների օրով (61—428 թ. թ. մեր Թվ. հ.) խաղալ էին մեծ դեր։ Նրանց շնորհված էր Թագավորների գլխին (գահ դնելու իրավունքը, և այդ պատճառով նրանք կոչվում էին «Թագադիր ասպետներ»։ Բագրատունիները եղել են և Թագավորի առաջին խորհրդականները։ Գահնամակում նախարարական տոհմերի մեջ նրանք գրված են երկրորդ տեղը։ Արշակունիների իշխանության անկումից հետո (428 թ.), երբ Հայաստանն ընկավ նախ պարսից, ապա արաբների իշխանության ներքո, Բագրատունիները, չորս դարից ավելի անընդհատ, մեծ գոհեր տալով, ձգտում էին վերականգնել Հայաստանի ինքնուրույնությունը, ձգտում էին Թագավորական իշխանության, որը և, վերջապես, ձեռք բերին X դարի կիսին։ Մի փոքր ուշ նրանց մի ճյուղը Թագավորեց և Վրաստանում։

Բագրատունի Սմբատ—նշանավոր զորավար Պապ Թագավորի օրով։

Բագրեւանդ—Այրարատ նահանգի հարավային գավառներից մեկը,

ամենից ընդարձակը, որին համապատասխանում է այժմյան Ալաշկերտի հովիտը (Թյուրքիայում)։ Բաժանված է երկու դաշտագետիններից—արևելյանը՝ Ջիրավի դաշտ, որի միջից հոսում է Արածանին։ Բազմանդը հաճախ է հիշվում հայոց պատմության մեջ, որովհետև եղել է քաղաքական և պատմական շատ դեպքերի թատերաբեմ։

Բասեն—Արարատյան նահանգի ընդարձակ գավառներից մեկը, որ բաժանված էր երկու գավառների՝ Վերին և Ստորին Բասենի։ Վերջինս կոչվում էր նաև Անփայտ Բասեն կամ Վանանդ։

Բդեշխ—այսպես էին կոչվում հին Հայաստանի այն նախարարները, որ Հայաստանի չորս սահմանամերձ նահանգները (Գուգարք, Աղձնիք, Մոփք, Նոշիրական) կառավարում էին մյուս նախարարներից ավելի մեծ լիրավունքներով և միաժամանակ համարվում էին փոխարքաներ։

Բզնունյաց ծով—Վանա լիճը։

Բիզանդիոն—Կ. Պոլիսի հին անունը՝ բիզանդական կայսրության ժամանակ։

Գաբեղյանք—նախաարաբական տոհմերից մեկը, որի ոստանն էր Այրարատ նահանգի Գարեղյանք գավառը (այժմ Կաղզվանի շրջան)։ Ըստ Ինճիճյանի, Գաբեղյան տոհմը գոյություն է ունեցել մինչև 12-րդ դարը, ապա դադիկ են Լեհաստան և իրը ներկայիս լեհական Սապեգա իշխանները դրանց շառավիղներն են։

Գաղձի—Կուարք գավառի հնագույն բնակիչներից մեկը, ներկայիս նույնանուն գյուղի մոտ, Երևանից 24 կիլոմետր հեռու։ Մեր թվ. 1-ին դարում բնակը վերակառուցեց և բարեկարգեց Տրդատ 1-ին, Այդտեղ կար և դիցակ Անահտի, Ստատյում էր իրրև քահանապետական սամարանոց։ Այստեղ է գտնվում հռչակավոր տաճարը՝ «Սարավույք Տրդատա»։

Գնբունի—նախաարաբական տուն։ Տիրում էին Նիգ գավառին (այժմյան Ալաշկերտի շրջան)։ Նրանց ոստանը գտնվում էր Քասաղ ավանում (այժմյան Ալաշկերտի շրջանային կենտրոնը)։ Սրանց՝ IV դարում կատարված բազիլիկան մինչև այժմ էլ կանգուն է։ Գնբունիները համարվում էին քահանայական դասակարգ։

Գնունի—նախաարաբական տուն, տվել է մի շարք պետական գործիչներ և զորավարներ։ Կալվածներ ունեին Տուրուբերանի Առբերանի գավառում (այժմյան Բերկրի), Վանա լճից հյուսիս։

Գուգարք—կամ Գուգարաց աշխարհ—Հայաստանի 15 նահանգներից մինը, որի սահմաններն էին հյուսիսից Վրաստան, արևելքից Ուտի, հարավից Այրարատ և արևմուտքից Տայք։ Եղել է մերթ վրաց, մերթ հայոց տիրապետության ներքո, երբեմն էլ կազմել է անկախ իշխանություն կամ նախարարություն։ Հայերին պատկանած ժամանակ Գուգարքն ուներ 9 գավառ։ Նրա մեջ մտնում էին այժմյան Լոռու գավառը, Ղազախի գավառի մի մասը և Ախալքալաքի ու Ախալցխայի գավառները։ Կենտրոնն էր Ծուրտավ քաղաքը (այժմ Ղազաքիլիսա՝ Բորչալուի շրջանում)։

Գրիգոր Լուսավորիչ—III դարի վերջերում և IV-ի սկիզբներում քրիստոնեություն էր քարոզում Հայաստանում։ Քրիստոնեությունը երկրում ընդուն-

վելուց հետո՝ Տրդատ թագավորի հետ միասին սրով և հրով կործանեց հեթանոսական բոլոր տաճարները ու մեհյանները՝ հին աստվածների արձաններին հետ միասին, կառուցելով նրանց տեղ նոր տաճարներ ու մենաստաններ։ 298—335 թթ. եղել է հայ եկեղեցու առաջին պատրիարքը։ Նրա հիմնած կաթողիկոսությունը դառնալով ժառանգական պատիվ՝ տևեց մինչև Սահակ Պարթևի մահը (439 թ.)։ Լուսավորչի տոհմը հարգված էր և հարուստ. ուներ տեխական 18 գավառ։

Դարանաղի—Բարձր հնյոց նշանավոր գավառներից, որ մասնատվեցավ հետագայում։ Դարանաղյաց երկիր կամ աշխարհ. այժմ հայտնի է բեմական անունով։ Այստեղ էին գտնվում Անի ամրոցը և Թորդան ավանը, որ Լուսավորչի տոհմի դերեզմանատունն էր։

Դարույնք կամ Դար-նիվ—նշանավոր բերդ Այրարատի Կոգովիտ գավառի մեջ։ Պատմության մեջ հիշվում է իբրև հզոր ամրոց և արքայական գանձատեղի, իսկ հետո իբրև Բագրատունյաց պայազատների ոստան։ Վերջին անգամ այդ բերդը հիշվում է Թոմա Մեծոփեցու պատմության մեջ, 15-րդ դարից կրում է Բայազիդ անունը։

Գ վ ի ն—մայրաքաղաք IV—IX դարը։ Հիմնել է Մեծ Տրդատ որդի Խոսրով Բ. Կոտակ (330—342), ավելի հին Արտաշատ մայրաքաղաքի մոտ։ Ավերակները գտնվում են նույնանուն գյուղի մոտ, Ղամարլուի շրջանում։

Եգերացիք—կամ Եգերացվոց աշխարհ. միջին դարերում կոչվում էր նաև Ափխազաց աշխարհ։ Այժմյան Արևմտյան Վրաստանը։

Երջակ—գավառ Սյունյաց աշխարհի, Գողթանի և Նախիջևանի արանքում։ Բռնում էր Երնջակ գետի (Ալինջա-չայ) հովիտը։ Հայտնի էր իր ամուր բերդով։ Ավերվեց արաբական Ծուռաֆ ամիրայի և Լենկթեմուրի սպատակությունների ժամանակ։

Սփրաս—Հայաստանի և Առաջավոր Ասիայի գլխավոր գետերից մեկը։ Ամենահին ժամանակներից եղել է նավարկելի, ինչպես հիշում են Հերոդոտ, Պլինիուս և Ստրաբոն։

Չարեհաղ—քաղաք և գավառ հին Պարսկահայք նահանգում. այժմ Սալմաստի վիճակ։

Չարեհավան—քաղաք Բագրևանդի գավառում, Բուզավանի մոտ։ IV դարում, Արշակ Բ. բանտարկելուց հետո պարսիկները գրավեցին և կործանեցին հիմնահատակ։ Պտղոմեոսը հիշում է իր աշխարհագրության մեջ Զարուանա անունով՝ իբրև առևտրական քաղաք։

Էջմիածին—վանք, որ ըստ ավանդության հիմնվել է մոտ թվ. 301—303 թթ. Գրիգոր Լուսավորչի և Տրդատ մեծի ձեռքով, իր մայրաքաղաք Վաղարշապատում։

Ն ա դ—Նեղսես Մեծի անդաստանը. խստաբարո եկեղեցական. հանգիմանում էր անգամ թագավորներին։

Ոսփ կա։ Ոսփաց ձախարհ—Հայաստանի հարավ-արևմտյան գավառ։ Արշակունիների ժամանակ Հայաստանի չորս բդեշխություններից մեկը։ Հուստինյանոս I ժամանակից կոչվում է նաև Զորրորդ Հայք. համապատասխանում է այժմյան Վարդերդի և Դիարբեքիրի վիլայեթներին։ Բդեշխանիստ քաղաքն էր Արշամաշատը՝ Վարդերդի մոտ։

Կարին—հնագույն հայկական բերդ և քաղաք, որ տարբեր ժամանակներ կրել է տարբեր անուններ. այժմ կրում՝ Թյորքիայում։

Կամսարական—նախարարական մեծ տոհմ. որոնց էին պատկանում Արշարունիք և Շիրակ գավառները՝ իրենց քաղաքներով ու բերդերով։ Այս տոհմը տվել է նշանավոր հայրենասեր գործիչներ։

Կամրջածար—հռչակավոր մենաստան Արշարունիք գավառի մեջ՝ այժմյան Կաղզվանի մոտերքը։

Կեսարիա—Կապադովկիայի նշանավոր քաղաքներից մեկը, կոչվում էր Մազակ, որ Տիբերիոս կայսեր վերակառուցումից հետո, ի պատիվ նրա, կոչվեց Կեսարիա։ Նշանավոր գրիչ և քրիստոնեության առաջին դարերում, որպես եպիսկոպոսանիստ, ուր մինչև Պապի Թագավորելը ձեռնադրվում էին հայոց կաթողիկոսները։

Կեսար—(հունարեն Kaisar) այսպես էին կոչվում ինչպես Արևմտյան, նույնպես Արևելյան հռոմ. կայսրները։

Կոզովիտ—Այրարատի նահանգի գավառներից մեկը, որ համապատասխանում է այժմյան Բայազիդի գավառին (Թյուրքիա)։

Կորդուք կամ Կորճայք—Մեծ Հայաստանի Կորճայք աշխարհի գավառներից մեկը, որ կոչվում էր նաև Տմորիք. այժմ՝ Բոհտան շրջան (Թյուրքիայում)։

Կուր գետ—սկիզբ առնելով Հայաստանի Տայոց նահանգի Կող գավառից, Վրաստանի և Ադրբեջանի երկրի միջով անցնելով, թափվում է Կասպից ծովը։

Կիլիկիա—հնագույն ժամանակներում ընկել է շատ պետությունների իշխանության ներքո. երբեմն եղել է և անկախ։ IV դարում գտնվում էր Բիզանդիայի ձեռքում, որը և կառավարեց նրան մինչև X դարի վերջերը, երբ հայերը այրեցին և հաստատեցին Ռուբինյան Թագավորների հարստությունը, որ տևեց շուրջ երեք դար (1080—1375 թ. թ.)։

Հավնունիք—Նախաշեմական տոհմ, որի նախնյայացուցիչները համարվում էին Թագավորի որդեհանները։

Համհարզ—Քիկնական բոյց ազնվական ծագումով, ինչպես ենթադրում է Ն. Ադոնցը։

Հ ն ր—քաղաք Գաբաոնացոց հանդուն գավառում։ Այժմ Հոյ—

Հովիանոս—կայսր Բիզանդիայի (363 364)։ Գարնից հետ ստանալուց, ըստ Ամմիանոսի, մի ամսվա հաշտություն, որով վերադարձրեց Տիգրիսի ձախ ափին գտնվող բիզանդացիների գրաված բոլոր հողերը և պարտավորվեց, որ Բիզանդիան երբեք չի օգնի հայերին։

Հոռոմ—բառացի հունական. IV դարից սկսած հայերն այսպես են անվանում բիզանդական պետությունը (Հոռոմոց աշխարհ) և բիզանդացիներին, Մինչև դարերում այդ անունով կոչում էին բոլոր հունադավանիներին։

Հուլիանոս Ուրացող—բիզանդական կայսր (361—363). քրիստոնեությունն ուրանալով՝ աշխատեց վերահաստատել հռոմայեցիների նախկին հեթանոսական կրոնը, բայց հազիվ թագավորեց երկու տարի և սպանվեց պարսից դեմ ուղած պատերազմում։

Ջյուճական—երկրորդական նախարարություն։

Զարեհոր—հին Զորոց աշխարհ և կամ՝ Զոր գավառ—Դուռբերի գավառներից մեկը։ Վրաստանին սահմանակից։ Համապատասխանում է Ալավերդու շրջանին։

Զիրավի դաշտ—գտնվում է Բագրեւանդի գավառում, նպատ սրբատաղ լեռան տակ։ Այստեղ էր գտնվում հայոնի Բագավանը։

Մամիկոնյաներ—նախարարական մեծ, ազդեցիկ տոհմ, որ տալիս էր նշանավոր սպարապետներ և սպարապետներ, ինչպես Վաչե, Արտավազդ, Վասակ Մուշեղ, Մանուել, Մեծ Վարդան, Մեծ Վահան և այլն։ Արշակունի թագավորների օրով և հետագայում կատարում էին առաջնակարգ դեր, որպես սպարապետներ, մարզպաններ, Հայոց իշխաններ։ Նրանց ժառանգական կալվածքն էր Տայք նահանգը՝ իր Երախանի ոստանով և իշխանաց դյուղով։ Հաքսվային Հայաստանում նրանց էր պատկանում Տարոն գավառը՝ իշխանանիստ Ողական ամրոցով։

Մանանաղի—Բարձր Հայքի գավառներից մեկը, Կարինից հարավ։

Մարդպես—Վասպուրական նահանգում ապրող մարդ ցեղի սեպի տոհմական տիտղոսը։ Արշակունյաց արքունիքում խաղում էին մեծ դեր, ունենալով «մարդպետության» պատիվը, որպես արքունի կալվածների և թագավորի կանանոցի կառավարիչներ։ Սրանց ոստանը գտնվում էր Մարդաստան գավառում (Վանից դեպի արևելք)։

Միծամոր—այսինքն մեծ ճահիճ. Արաքսի ձախ բազուկներից մեկը, որ րղխում է Կարկառն գյուղից ոչ հեռու։ Այժմ կոչվում է Սև ջուր։ Հնումը սրա մի ճյուղը միանում էր Ազատ գետին (Գառնի գետին)։

Մերուժան Առծրունի—ապստամբեց Արշակ Բ. թագավորի դեմ, չցանկանալով հնազանդվել նրան, որ ձգտում էր թուլացնել նախարարների իշխանությունը և դրանց բոլորին հնազանդել կենտրոնական իշխանության։ Նախարարական մի քանի մեծ տներ դեմ կանգնեցին թագավորին, կռվեցին, ընկան, բայց Մերուժանը փախավ-գնաց պարսից արքունիքը և ուրացավ քրիստոնեությունը ու պարսից բանակի գլուխ անցած հետ իր երկրի վրա, ավերեց շատ քաղաքներ ու աշխատեց քրիստոնեությունը վերացնել Հայաստանից՝ հայ հոգևորականներին աքսորելով, եկեղեցիներում սուրուշաններ կանգնելով և քրիստ. գրքերը վառելով։ Զգտում էր Շապուհի ձեռնավորությամբ գահնալ թագավոր։ Սպանվեց Զիրավի ճակատամարտում՝ Մամիկոնյաների ձեռքով։

Մծբին—քաղաք Միջագետքում։

Մոկի կամ Մոկաց ափխարհ—Հայաստանի 15 նահանգներից մեկը. լեռնոտ և դժվարամատչելի երկիր՝ Վանա լճի հարավակողմը։ Բաժանվում էր 9 գավառների։ Պատկանում էր Մոկաց նախարարական տանը։

Մուշեղ Մամիկոնյան—Նշանավոր և ազդեցիկ սպարապետ Պապ թագավորի օրով։

Նախարար—հնումը և միջին դարերում այսպես էին կոչվում Հայաստանի խոշոր ֆեոդալները, թագավորի վասալները։ Ժառանգաբար տիրում էին մեծամեծ կալվածների։ Մասնակցում էին թագավորի խորհրդին և, ըստ

ավագության ու առաքինության, նստում էին նրա կողքին։ Պարտավոր էին թագավորին տալ դորբ, գլխավորապես հնձելադորբ։ Ծաղրագուշները սքանչից ինքնիշխան էին և հաճախ չէին ուզում ենթարկվել կենտրոնական, այսինքն՝ թագավորի իշխանությանը, նույնիսկ պատերազմների ժամանակ և այսպիսով թուլանում էր երկրի ինքնապաշտպանությունը, պատահում էր նաև, երբ փորձ էր լինում նրանց կենտրոնական իշխանության ենթարկելու, ինչպես այդ արին Ծիրան և Արշակ Բ. թագավորները, նրանք ապրատամբում էին կամ անցնում հարևան երկրները՝ Պարսկաստան կամ Բիզանդիա և այդտեղից թշնամություն հրահրում իրենց թագավորի ու երկրի դեմ։

Նախիջևան (հնում՝ Նախճավան)—պատմական Հայաստանի հնագույն քաղաքներից մեկը՝ Արաքսի ափին։

Ներսես Ա. Մեծ—կաթողիկոս (351—373) նշանավոր հոգևոր և քաղաքական գործիչ, դեմ էր դուրս գալիս Արշակ Բ. կենտրոնացման քաղաքականությանը, իբրև բիզանդասեր և Բիզանդիային կողմնակից նախարարներն ու հոգևորականության շահերի պաշտպան։

Նոշիրական կամ Նոր Շիրական—Հայաստանի հարթավայրին զավառ, որ ընկած էր Ախուր գետի հովտում, և սահմանակից էր Ադիաբենին։ Արշակունյաց ժամանակ Հայաստանի չորս բդեշխություններից մեկը։

Նպատ—լեռ Բագրեւանդի զավառում։ Ավանդաբար ասվում է, թե այս սարի վրա է թաղված Նոյ Նահապետը—Նոյան-պատ։ Մեր պատմիչների ասելով, Զիրավի ճակատամարտի ժամանակ այս սարի վրա աղոթում էր Ներսես Մեծը հայերի հաղթության համար։

Նապուհ II—որ կոչվում է Երկարակյաց, երկար ժամանակ (309—380) թագավորելու համար։ Մի շարք անդամներ կռվել է Բիզանդիայի դեմ և հաղթել է Հուլիանոս Ուրացող կայսեր կատաղի կռիվներ է վարել և Հայաստանի դեմ՝ նրան նվաճելու և իրեն ենթարկելու։ Դավերով և շատ նախարարների խոստումներ անելով՝ կամենում էր քանդել հայ երկրի միաբանությունը, և որոշ չափով հասավ իր նպատակին։ Արշակ Բ. թագավորի օրով նախարարներից ոմանց հանելով նրա դեմ, ապա ինքը դրանց օգնությամբ զորով ճանկռտում էր ամեն գնով Հայաստանը հանել Բիզանդիայի ազդեցությունից և քաղաքականապես ու կրոնապես ենթարկել իրեն։

Շարուր—հին Հայաստանի Այրարատ նահանգի զավառներից մեկը։ Հայտնի է նաև Շարուր գաշտ անունով։ Այժմյան Արազդայանի շրջանն է։

Շիրակ—հին Հայաստանի Այրարատ նահանգի զավառներից մեկը։ Սկզբում պատկանում էր Կամսարականներին, հետագայում VIII դարի վերջում գնեցին Բագրատունիները, որ թագավորելով՝ դարձրին իրենց իշխանության կենտրոնը՝ նախ Բագարան և Երազգավորք (Շիրակավան) բերդերը, ապա Անի քաղաքը։

Ողական—Մամիկոնյան նախարարների տոհմական ոստանը՝ Տարոնում։ Այժմ Ագկան՝ Արածանիի ձախ ափին։

Ոստան—այսպես էին կոչվում առաջ Արշակունի թագավորներին պատկանող հողերն ու քաղաքները. թագավորության անկումից հետո այդպես կոչվեցին առանձին նախարարների նստավայրերը (ռեզիդենցիա)։

Տեռնայր—Աղվանից թագավոր, որի ժամանակ տղվաններն ընդունեցին քրիստոնեությունը։

Ուտիք—Աղվանից աշխարհի գավառներից մեկը, (այժմյան Բարզայի շրջանը), որ երկար ժամանակ եղել է Հայաստանի իշխանության ներքո։ Ուտիքի տերերն էին հայ իշխանները։ Այդտեղ բնակվում էին գլխավորապես ուտիացիները—ազվան ցեղերից մեկը։ Ներկայումս այժմ ապրում են Նուխու գավառի (Աղբրայլան) նիժ և Վարդաշեն գյուղերում։ Պահպանել են իրենց հատուկ լեզուն, որը, ամանց կարծիքով, աղվանական լեզվի մնացորդն է։

Սահառունի—Նախարարական տուն հին Հայաստանում։ Այս տոհմից առաջել հայտնի է Դավիթ Սահառունին, որ կառուցել է Մրենի տաճարը VII դարում։

Սանատրուկ—Հայոց թագավոր՝ մեր թվ. I դարում։ Նստում էր Մծուռն քաղաքում, որ նորոգել էր ինքը։

Սեպուհ—այսպես էին կոչվում նախարարական տոհմի ոչ ավագ անդամները, իշխանների որդիները։ Սեպուհների հողատարածությունները կոչվում էին սեպհական։

Սյունիք կամ Սիսական—հին Հայաստանի նահանգներից մեկը, որի մեջ էին մտնում այժմյան լեռնային Ղարաբաղի մասերը, Զանգեզուրը և Սևանա լճի ավազանը։ Սյունյաց աստանն էր անմատչելի Բաղաբերդ ամրոցը (այժմ Բաղաբուրդ)։ Սյունյաց նախարարական տունը թե հնում, թե միջնադարում մեծ դեր է խաղացել Հայաստանի քաղաքական կյանքում, հաճախ ձգտելով նաև արքայական գահին։ 963 1170 թ. թ. կազմում էր առանձին թագավորություն, որ կոչվում էր Բաղաց կամ Կապանի թագավորություն։ Մայրաքաղաքն էր Կապանը, այժմյան Ղափանը։

Սպարապետ—այսպես էր կոչվում հնումը հայոց զորքերի գլխավոր հրամանատարը։ Վաղուց ի վեր այդ պաշտոնը ժառանգաբար պատկանում էր Մամիկոնյան տոհմին, որ տվեց շատ նշանավոր սպարապետներ։ Սպարապետներ տվել են երբեմն նաև Բագրատունի, Գնունի, Սահառունի, Ռշտունի և այլ նախարարական տներ։

Սպեր—հնումը Բագրատունի նախարարների տոհմական կալվածք, որ գտնվում էր Կարինից հյուսիս-արևմուտք։ Այժմ Իսպիր՝ Ծորոխի ավազանում։

Սիրիա—(Ասորիք) երկիր Միջերկրական ծովի արևելյան ափին, Կիլիկիայի և Պաղեստինի միջև։

Պ ա պ—(369—374), նշանավոր թագավոր Արշակունյաց դինաստիայից։

Պոմպեոս—հռոմ. նշանավոր զորավար։ Հաղթեց Միհրդատ Պոնտացուն և Պոնտոսն ու Հրեաստանը դարձրեց հռոմեական պրովինցիաներ, իսկ Հայաստանը, ըստ 65 թ. (մեր թ. ա·) պայմանագրի, ենթարկեց Հռոմի ազդեցությանը։

Պլուտարքոս—հույն մատենագիր։ Ծնվել է մեր թվ. I դարի կիսին։ 300-ի հասնող նրա աշխատություններից հայտնի են հույն և հռոմայեցի քաղաքական և պետական գործիչների կենսագրությունները (թվով 46) և փիլիսոփայական երկերը Պլատոնի ոգով։

Իբերիա—տես Վրաց աշխարհ։

Վաղարշապատ—հիմնել է հայոց Վաղարշ 1-ին թագավորը (117—140)։ Շնումը ընդմիշտ ամրոցով այստեղ էին նստում և հայոց կաթողիկոսները։

Վաղես—կայսր Բիզանդիայի (364—378). հաղթեց գոթերին և ենթարկեց իրեն, բայց շուտով հաղթվեց նրանցից և սպանվեց Ադրիանապոլսում։

Վայոց Ձոր—այժմ Դարալագյազ—Սյունյաց նահանգի գավառներից մեկը։

Վ ա ն—Հայաստանի հնագույն քաղաքներից մեկը, որ իր գոյությունը պահպանում է շուրջ 3000 տարի, նույնանունն լճի եզերքին։ X դարում դարձավ Արծրունի թագավորների մայրաքաղաքը։

Վանանդ կամ Անփայս Բասեն—Այրարատ նահանգի գավառներից մեկը՝ Վերին Բասենից և Տայքից դեպի արևելք, Շիրակից դեպի արևմուտք։ Գլխավոր քաղաքը Կարս։

Վասպուրական—պատմական Հայաստանի հարավային նահանգը՝ Վան քաղաքով։ Եղել է Արծրունի և Մարդպետական նախարար. տոհմերի ապրանքություն։ X դարում դարձավ Արծրունյաց թագավորության հիմնական տերիտորիան։

Վարաժնունիք—այժմ Ծաղկաձորի գավառամասը։

Վրաց աբխարի կամ Վիրք—այժմյան Արևելյան Վրաստանը, որը հնում պատկանել է հայ մասնատիրներին կոչում էին Վրաց տուն կամ Վրաստան։ Մայրաքաղաքն էր սկզբում Մցխեթան և ապա Թբիլիսին։

Տակիտոս—հռոմ. պատմագիր։ Մնացել է մ. թ. I դարում գլխավոր աշխատություններն են «Պատմությունը» 14 գիրք և «Տարեգրությունները»՝ 16 գիրք։ Նրա բոլոր երկերից մեզ հասել են միայն 10 գիրք։

Տ ա յ—հին Հայաստանի հյուսիս-արևմտյան նահանգներից մեկը։ Մամիկոնյան տան ժառանգական կալվածն էր. VIII դարից Բագրատունյաց տան սեփականություն։ Վտանգների ժամանակ հայ թագավորները հաճախ, ինչպես վերում նկարագրված միջոցին, ապաստանել են այդտեղ և, լեռնոտ, անմատչելի վայրի շնորհիվ, թույլ չեն տվել թշնամուն առաջ գնալու։ Տայքը բանում էր ձորոխ գետի ավազանը։

Տաճուտեր կամ Ճահապետ—այսպես էր կոչվում նախաթաթարական տան ավագը, տոհմապետը, հանդուգն սեպուհներին, որ տոհմի կրտսեր անդամներն էին։

Տարոն—նշանավոր գավառ Տուրուբերան նահանգում՝ Վանա լճից արևմուտք։ Այժմյան Մշո դաշտը։ Հայկական հին ավանդությանց համաձայն՝ եղել է հայ ժողովրդի օրրանը, Հայկի առաջին բնակավայրը։ Այստեղ են գտնվել հեթանոս հայերի տաճարները, այստեղ է կառուցվել և քրիստոնեական առաջին եկեղեցին՝ Աշտիշատում, որը և առաջին հայ կաթողիկոսների նստավայրն էր։ Մինչև VIII դարի վերջը Տարոնը Մամիկոնյան տան սեփականությունն էր, ապա անցնում է Բագրատունիներին։

Տարսոն—քաղաք Կիլիկիայում։ Մնքատրվում է, որ հիմնվել է 14-րդ դարում մ. թ. առաջ։ Իր գոյության ընթացքում ընկել է տարբեր նվաճողների ձեռքը։ IV դարում մերում էին բիզանդացիք։ X դարի վերջերում

բիզանդացիներից խլեցին Ռուբինյան հայ իշխաններից Տարսոնում 1198 թ. հունվարի 6-ին մայր եկեղեցում տեղի ունեցավ Կիլիկյան Հայաստանի առաջին թագավոր՝ Լևոն Բ. Մեծագործի թագադրությունը

Տեռնես—բիզանդական արևելյան բանակի հրամանատար: Ըստ Ամմիանոս Մարկելլինոսի՝ արտաքուստ «համեստ մարդ, բայց իր ամբողջ կյանքի ընթացքում ամեն տեղ զրպռում էր երիտասարդություններ՝ նաբեռությամբ ընթրելի կանչելով՝ սպանեց Պապ թագավորին՝ վաղես կայսրի հրահանգի համաձայն

Տմորիմ—տես Կորդուք

Տրդատ Մեծ (III)—հայոց թագավոր (276—330) որը օրով Հայաստանն ընդունեց քրիստոնեություն, և այդ առթիվ նա մեծամեծ կալվածներ ու արտոնություններ տվեց եկեղեցուն ու վանքերին

Տիգրանակերտ—հին հայկական քաղաք, որ հիմնել է Տիգրան Մեծը: Գտնվում է Տիգրիս գետի հյուսիսակողմը, այժմյան Ծարկին քաղաքի տեղում: Եղել է հարուստ, բարեկարգ քաղաք: Բազմիցս ենթարկվել է պարսիկների և հռոմայեցիների հարձակումներին ու ավերանքին: Միջին դարերում կոչվում էր նաև Նիրկերտ կամ Մարտիրոպոլիս—Մարտիրոսաց քաղաք. արաբները կոչում էին Միափարեկին

Տիգրոն—Պարթևական և Սասանյան Իրանի մայրաքաղաքը. գտնվում էր Տիգրիսի ձախ ափին, Բաղդադից ոչ հեռու

Տիրան—հայոց թագավոր (342—350): Սկզբում ուներ սասանյան օրիենտացիա, հետագայում փոխում է իր քաղաքական գիծը և որդեգրում է բիզանդական օրիենտացիա, որի համար և Շապուհը, խարեությամբ հյուր կանչելով, կուրացրեց նրան

ԳԼՈՒԽՆԵՐԻ ՑԱՆԿ

Մասն առաջին

Գլուխ առաջին 3
» երկրորդ 26
» երրորդ 51
» չորրորդ 97
» հինգերորդ 128
» վեցերորդ 173
» յոթերորդ 253

Մասն երկրորդ

Գլուխ առաջին 271
» երկրորդ 304
» երրորդ 330
» չորրորդ 374
» հինգերորդ 407
» վեցերորդ 425
» յոթերորդ 461

Մասն երրորդ

Գլուխ առաջին 488
» երկրորդ 513
» երրորդ 534
» չորրորդ 575
» հինգերորդ 604
» վեցերորդ 631
» յոթերորդ 661

Վերջաբան 694
Ծանոթագրություններ 696





[Հր-104-]

Գլխ. խմբագիր՝ Հր. Գրիգորյան

Վէ 00866։ Պատվեր 398։ Տիրաժ 6000։ Տպագրական 4 1/4 մամ։ Մեկ մամուլում 35520 տպ. նիշ. Հեղինակային 37,5 մամ.։ Մտրտագրված է տպագրության 20/XII—44 թ.

Հայկհրատարի տպարան, Երևան, 1945.



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0508291

Ն6Հ6
Կ2Կ4Կ